ԻՍԿ ԴՈ՞ՒՔ ՈՐՏԵՂ ԷԻՔ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Նա կանգնել էր փոքրիկ հրապարակում, փոքրիկ հյուրանոցի շենքի անկյունում փակցված փոքրիկ տախտակի առաջ և ուշի-ուշով կարդում էր հայտարարությունները: Ամեն տեսակ հայտարարություններ կային: Մեկը տուն էր վաճառում, մյուսն առաջարկում էր փոխանակել իր երեք սենյականոց բնակարանը մայրաքաղաքի նոր թաղամասում գտնվող որևէ երկու սենյականոց բնակարանի հետ, երրորդը համոզում էր, թե հինգ ամսում կարող է անգլերեն սովորեցնել ուզածդ մարդուն, չորրորդը պարզև էր խոստանում նրան, ով կգտնի իր կորած ազնվական շնիկին, տասնյակ մարդիկ վարձով սենյակներ էին առաջարկում, իսկ մեկն էլ…

Զավեն Շարաֆյանը ակամա ծիծաղեց: Կասկած չկար, որ կամ խենթ էր եղել գրողը, կամ հարբած: Այդ խենթ կամ հարբած մարդը սովորական գրիչով, ծուռտիկ-մուռտիկ տառերով գրել էր. «Կորցրել եմ հավատս: Գտնողներին խնդրում եմ վերադարձնել, առանց պարգևատրություն սպասելու: Ես ոչինչ չունեմ: Արմեն Զատիկյան, Մայիսմեկյան փողոց N 2»:

Իհարկե, սուտ հասցե է, մտածեց Զավեն Շարաֆյանը: Ո՞վ նման հայտարարություն տալուց հետո իր հասցեն կնշի:

Հետո նա հայտարարությունների տախտակից երեք հասցե գրեց իր փոքրիկ ծոցատետրում ու, ինչպես միշտ, նման պայմաններում, ամաչելով որևէ մեկին հարցնել, պատերին նայելով, հասցեները կարդալով գնաց իր համար սենյակ վարձելու:

* * *

Հենց առաջին տունը դուր եկավ նրան: Հրապարակից ոչ այնքան հեռու, երկհարկանի փոքրիկ մի շենք էր՝ խնամքով մշակված բակ-պարտեզով: Զավեն Շարաֆյանը սեղմեց փայտե դարպասի աջ կողմում գտնվող էլեկտրական զանգի կոճակը, բայց զանգի ղողանջը լսելու փոխարեն կանացի բավականին հրամայական մի ձայն լսեց.

Դուռը բաց է:

Զավեն Շարաֆյանը զգուշորեն հրեց ճռնչացող դուռը և հայտնվեց պարտեզում: Եվ անմիջապես էլ նկատեց միջահասակ, բավականին սիրունատես մի կնոջ, որն ինչպես երևում է՝ հենց նոր էր բարձրացել մարգից: Նա ձեռքին փոքրիկ, ցեխոտ դանակ ուներ և համեմի մի փունջ:

- Ես ձեր հայտարարությունը կարդալով եմ եկել,- ակամա շփոթվեց տղան:

Նախքան պատասխանելը՝ կինը, չգիտես ինչու, ուշադիր նայեց Զավեն Շարաֆյանին.

- Ընտանիքո՞վ եք,- հարցրեց նա՝ դանակն ու փունջը դնելով հենց բակի մեջ, ծաղկավոր մոմլաթով ծածկված սեղանին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ոչ, ոչ- շտապեց հանգստացնել նրան Զավենը, դեռ Երևանից իմանալով, որ տնատերերը դժկամությամբ են վարձու սենյակ տալիս ընտանիքավոր մարդկանց: - Ես ամուսնացած չեմ:

Կինը ձեռքերը սրբեց գոգնոցով:

- Ինձ հարմար չէ,- ասաց նա:

Զավենը մնացել էր կանգնած՝ չկարողանալով թաքցնել զարմանքը: Ի՞նչը հարմար չէ: Ինչո՞ւ հարմար չէ: Ոչ կին ունի, ոչ երեխա, որն ասենք թե կարող է ձայնը գլուխը գցել ու խանգարել մարդկանց: Բայց նա վճռեց այլևս չխոսել այդ մասին: Հարմար չէ, թող հարմար չլինի: Սա դեռ ցուցակի առաջին տունն է:

- Կներեք,- ասաց նա:

Շրջվեց ու արդեն ձեռքը դարպասի բռնակին էր տարել, երբ նորից լսեց կնոջ ձայնը:

- Ուսանո՞ղ եք:

Զավենը հասցրեց նկատել, որ ուսանող բառը կինը մի տեսակ քնքշությամբ ասաց:

- Ոչ, ավարտել եմ, աշխատանքի են ուղարկել:

- Իսկ որտե՞ղ եք աշխատելու:

- Խմբագրությունում:

Կինը նորից գոգնոցով սրբեց մաքուր ձեռքերը:

- Գիտեք ինչ, իմ սենյակը երևի հարմար չլինի ձեզ: Հաստատ հարմար չի լինի:

- Ինչ էլ լինի, մեր տնից լավը կլինի,- ծիծաղեց Զավենը՝ հիշելով իրենց մի սենյականոց բնակարանը, որտեղ ապրում էր մոր և քրոջ հետ:

Կինը կարծես թե շարունակում էր տատանվել: Նույնիսկ շարժեց շրթունքները՝ ասես թե մտքում մերժումը ձևակերպելով, բայց նորից ուշադիր նայեց տղայի գրեթե մանկական դեմքին, հավանաբար առաջին անգամ հագած լայնեզր գլխարկին և թեժ արևի տակ անհեթեթ փայլող սև, անջրանցիկ անձրևանոցին ու ասաց.

- Դե տեսեք, եթե հարմար է…

Նա առաջ ընկավ ու բացեց հենց առաջին հարկում գտնվող նեղլիկ դուռը: Փոքրիկ սենյակ էր: Երկաթե մի մահճակալ կար ու մի սեղան տախտակե կարմիր ներկված հատակի վրա: Իսկ անկյունում նավթի վառարան էր դրված և մի փոքրիկ, սպիտակ համարակալված պահարան:

- Թագավորի ապարանք է,- ասաց Զավեն Շարաֆյանը պատուհանին մոտենալով և նայելով արևոտ փողոցին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Կինը կարծեց, թե նա ծաղրում է: Բայց տղան իսկապես գոհ էր, նա ամբողջ կյանքում երազել էր, որպեսզի իր անկյունն ունենա:

- Եթե խմբագրությունը գրասեղան տա, թույլ կտա՞ք որ այստեղ տեղավորեմ:

Կինը թոթվեց ուսերը:

- Ինչ իրեր ուզում եք՝ բերեք:

- Ես ուրիշ ոչինչ չունեմ,- ասաց տղան և ավելացրեց գրեթե շիկնելով.- Ներեցեք, իսկ որքա՞ն պետք է վճարեմ:

Տանտիրուհին հոգոց հանեց,

- Ինչ անեմ- Ուրիշ միջոց չունեմ… Ուղիղ այնքան, որքան իմ տղան է վճարում Երևանում չորս հոգով մի սենյակ վարձելու համար: Ձեզանից վերցնելու եմ և նույնությամբ ուղարկեմ տղայիս: Ուսանող է տղաս: - Նա ձեռքը կոկորդին տարավ ու հարցրեց կամացուկ.

- Հարյուր հիսուն ռուբլին շատ չէ՞:

- Չէ,- ասաց Զավեն Շարաֆյանը: - Ես երեկոյան կգամ:

- Ես ձեզ համար ափսեներ, դանակ-պատառաքաղ կբերեմ, - ասաց կինը: - Կարող եք վառարանն օգտագործել, ճաշ եփել ձեզ համար…

- Շատ շնորհակալություն,- ասաց տղան:

Նա դուրս եկավ նեղլիկ փողոցը, որն անտարակույս հեռանկարային էր և պետք է վերակառուցվեր ու ընդարձակվեր, որովհետև «Ապագայի» անունն էր կրում և շտապեց խմբագրություն՝ մտքում վերլուծելով գործարքը և հաշվելով միջոցները: Խմբագրությունում ստանալու է ինը հարյուր ռուբլի աշխատավարձ: Ուղիղ կեսը, իհարկե, տուն կուղարկի՝ հիվանդ մորն ու ուսանող քրոջը, հարյուր հիսուն ռուբլի էլ տան վարձ կտա: Կմնա երեք հարյուր ռուբլի: Երևի մի կերպ կարելի է ապրել, եթե մի քիչ էլ հոնորար գա: Կարելի է, կարելի է, ինքն իր վրա ծիծաղեց Զավեն Շարաֆյանը: Մանավանդ որ խանութներում ոչ ուտելու բան կա և ոչ էլ հագնելու:

* * *

Քաղաքային «Լուսաբաց» թերթի խմբագիր Մկրտիչ Զուլոյանը, մենակ էր իր առանձնասենյակում և հազիվ էր երևում գրասեղանի թափթփված հին լրագրերի դեղնած կապերի, գրքերի ու տեղեկատուների ետևից: Նա լայն ճակատ ուներ և խոսելիս ձախ ձեռքի մատներով անընդհատ տրորում էր քունքը:

- Հը, որևէ բան գտա՞ր,- հարցրեց նա ծխից խռպոտած ձայնով:

- Գտա, ընկեր Զուլոյան,- ասաց Զավեն Շարաֆյանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ո՞ւմ տունն է:

- Ապագայի Փողոցի վրա է:

- Տանտերն ո՞վ է…

- Չտեսա- Ինձ հետ տանտիրուհին խոսեց:

- Անունն ի՞նչ էր.

Զավեն Շարաֆյանը շփոթվեց:

- Չիմացա;

- Կեցցես: - Խմբագիրը վեր կացավ տեղից, քայլեց սենյակում, ու միանգամից ավելի ընդգծվեց նրա կարճ հասակը: - Ուրեմն չիմացար- Համա թե Համալսարանը ժուռնալիստներ է արտադրում, հա- Սիրելի ընկեր, դու հիմա պետք է անգիր իմանայիր այդ տնեցիներից յուրաքանչյուրի կենսագրությունը ամենայն մանրամասներով: Չիմացա… Ժուռնալիստը, բարեկամս, հատկապես այնպիսի մի քաղաքում, ինչպիսին մերն է, որտեղ բոլորն իրար քավոր-սանահեր են, իրավունք չունի ամեն մի պատահական տան մեջ ապրելու: Դա անմիջապես կարող է ստվեր գցել նրա հեղինակության վրա…

Զավեն Շարաֆյանը ժպտաց,

- Ինչ ասեմ, համակրելի կին էր երևում: Տղան էլ ուսանող է Երևանում:

- Ալվարդն է,- կանգ առավ խմբագիրը:

- Անունը չիմացա:

- Ալվարդն է, Ալվարդը,- գլուխը թափահարեց խմբագիրը: -Խեղճ աղջիկ, ուրեմն ստիպված վարձով է տալիս: Հեյ, Աշոտ Բարսեղյան, որտե՞ղ ես- Ով մարդկային արդարություն, թող որ թքնեմ քո ճակատին-- Հանկարծ արտասանեց նա և մոտենալով գրասեղանի անկյունին, իրոք որ թքեց թղթերով լեփ-լեցուն զամբյուղի մեջ:

- Իսկ ո՞վ է Աշոտ Բարսեղյանը, ընկեր Զուլոյան:

- Ալվարդի ամուսինն էր,- իր տեղում նստելով, դեռևս բարկացած ասաց խմբագիրը: - Մեր իրոք անվանի քիմիագործներից մեկը: Ամիս չկար, որ լուսանկարը չտպագրեինք թերթում: Տաղանդավոր մարդ էր: Առողջ, ջահել, գեղեցիկ: Իսկ հիմա չկա: Շուկայի մոտ գլխարկ կարող ու վաճառող երկու եղբայրներ կան, հասարակության խոց, տականք, չարիք: Ամբողջ օրը հարբում են ու կռվում կամ ուրիշների հետ, կամ իրար հետ: Մի օր Աշոտը միջամտում է, փորձում է բաժանել նրանց, հարվածում, գետին են գցում, գլուխը դիպչում է քարին ու, մի խոսքով- Սրիկաները հանգիստ ապրում են, իսկ աշխատավոր, ազնիվ մարդը չկա- Տղան որբացավ, իսկ կինն էլ, ինչպես տեսնում ես հարկադրված վարձով է տալիս սենյակը…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Իսկ ի՞նչ է, չպատժեցի՞ն նրանց,- զարմացավ Զավենը: Մկրտիչ Զուլոյանը ձախ ձեռքով արագ-արագ տրորեց ճակատը:

- Նրանք պնդեցին, թե Աշոտ Բարսեղյանն ինքն է սայթաքել ու ընկել: Եվ իբրև իրեղեն ապացույց դատախազություն էին ներկայացրել ձմերուկի տրորված մի կեղև: Եվ հետո ի՞նչ կարելի է անել նրանց, երբ երկուսն էլ գժի թուղթ ունեն:

- Թող հոգեբուժարան տանեն,- սրտդողեց Զավենը: - Բա ինչպես են նման մարդկանց թողնում ազատության մեջ:

Խմբագրի աչքերն ասես թե խամրեցին մի տեսակ:

-Նրանց համար ի՞նչ մի բարդ բան է տարին մի անգամ բժիշկներից տեղեկանք գնել առ այն, որ իրենց հոգեկան խանգարվածության մակարդակով իրավունք ունեն ապրելու հասարակության մեջ:

- Եվ դուք գիտեք այդ բոլորն ու հաշտվո՞ւմ եք,- տեղից հուզված վեր թռավ Զավեն Շարաֆյանը: - Ինչու ֆելիետոն չէիք տպագրում, ընկեր Զուլոյան:

Խմբագիրը բարձրացրեց գլուխը, կկոցած աչքերով նոր աշխատակցին նայեց և ուզեց ինչ-որ բան ասել, երբ հեռախոսը զնգաց,

- Լսում եմ,- լսափողը վերցրեց Մկրտիչ Զուլոյանը, և նրա դեմքը միանգամից պայծառացավ: - Ես եմ, Գառնիկ Վարդանիչ խորին հարգանքներս: Իսկապե՞ս, վատ էր, հա- Ի՞նչ անեմ, գրող չունենք, Գառնիկ Վարդանիչ, գրող… Տեղարդկոմբինատը ե՞րբ է մշակույթի օջախ եղել, ստեղծված օրից խաբեբաների ու սպեկուլյանտների բուն է, էլի: - Նա գրիչը ձեռքն առավ ու սկսեց արագ, արագ ինչ-որ բան գրել թղթի փոքրիկ կտորի վրա: - Կանդրադառնանք, անպայման կանդրադառնանք- Չորս ամիս է բաժինը վարիչ չունի- Հիմա նոր ուղարկել են մի լավ տղայի… Դիմացս նստած է, խոսում ենք- Երևանից- Անպայման, Գառնիկ Վարդանիչ, հենց այդպես էլ կասեմ: Ցտեսություն:

Խմբագիրը ցած դրեց լսափողն ու հառաչեց.

- Ահա մեր քաղաքի ամենա-ամենախոշոր ուղեղը… Հա, ի դեպ, ցանկություն հայտնեց ծանոթանալ քեզ հետ,.,

- Ինձ հե՞տ,- զարմացավ Զավեն Շարաֆյանը: - Իսկ ո՞վ է Գառնիկ Վարդանիչը:

- Գառնիկ Վարդանիչը…- ժպտաց խմբագիրը: - Մեր քաղաքի ամենախոշոր ձեռնարկության դիրեկտորն է, Զավեն:

- Քիմիական կոմբինատի՞ …

- Խոսքը մեր մեջ, լուրեր են պտտվում, թե շատ շուտով նրան մեր քաղկոմի առաջին քարտուղար են դարձնելու: Հրաշալի բան կլինի: Խելացի է, ձեռներեց, հոգի է տալիս բանվորի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

համար…ինքն էլ բանվոր է եղել, իր աշխատանքային գործունեությունը իբրև սևագործ է սկսել…

«Հաստատ դու նրա մասին ակնարկ ես գրել՝ «Բանվորից դիրեկտոր» վերնագրով», մտքում քմծիծաղ տվեց Ջավեն Շարաֆյանը:

- Ես նրա մասին մի քանի ակնարկ ունեմ- Իմ ամենալավ ակնարկները: Մի օր կտամ, կկարդաս,- ոգևորված շարունակեց խմբագիրը: - Ժամանակակից ղեկավարի իսկական կերպար է, Ջավեն: Գիտե՞ս, օրինակ, թե ինչու էր զանգահարում: Մեր բանվորներն, ասում էր, տրտնջում են, թե կենցաղսպասարկման կետերը իրենց ընդմիջման ժամանակ են հանգստանում և աշխատում են առանց գնացուցակի, խաբում են մարդկանց: Մի լավ հուպ տվեք նրանց, ասաց, ես էլ ձեզ պահապան: Մեր ամենաառաջին ընթերցողն է Գառնիկ Վարդանիչը: Եվ ինչքան պարզ մարդ է, գիտե՞ս: Անպայման եղիր մոտը, թեև համոզված եմ, որ ինքը քեզ կգտնի: Օգտվիր առիթից, հենց կենցաղի օբյեկտներով էլ հետաքրքրվիր… Դա էլ է քո բնագավառը:

-Առաջին հերթին ես այդ գլխարկ կարողներով կզբաղվեմ,- ասաց Ջավեն Շարաֆյանը,

Խմբագրի աչքերը նորից խամրեցին մի տեսակ: Նա կրկին բարձրացավ տեղից ու սկսեց քայլել սենյակում, ամեն պտույտի հետ չգիտես ինչու սևեռուն նայելով լուսամուտից դուրս փոքրիկ հրապարակին; Հետո կանգ առավ նոր աշխատակցի դիմաց,

- Քո դրությունը, Ջավեն, մի կողմից լավ է, մյուս կողմից՝ վատ,- ասաց նա: - Վատ է, որ մենակ ես: Բայց շատ լավ է, որ նոր մարդ ես մեր քաղաքում, քեզ կաշկանդող, խանգարող ոչ մի հարազատ ու բարեկամ չունես, ոչ ոքի չես ճանաչում ու այդ պատճառով էլ չես վախենում կամ քաշվում ոչ մեկից: Դրսից, այն էլ մայրաքաղաքից ես եկել, ջահել ես և ուզածդ ժամանակ նորից կարող ես ետ գնալ- Դու գնալու տեղ ունես, բարեկամս: Իսկ ես ուր կարող եմ գնալ: Ես այստեղ ծնվել եմ ու ամենայն

հավանականությամբ այստեղ էլ կմեռնեմ:

Ջավեն Շարաֆյանը շատ ջահել էր տարեց խմբագրի կեղևի մեջ մտնելու, նրան մինչև վերջ հասկանալու համար: Բայց ինչ որ բան, այնուամենայնիվ, հասկացավ, որովհետև հարցրեց գրեթե կարեկցանքով.

- Փորձեցիք գրել ու… չթողեցի՞ն:

Խմբագրի աչքերը փայլեցին:

- Չթողեցին- ճիշտ բառն է, չթողեցին, տղաս: Մի կողմից ազգականներ հայտնվեցին, մյուս կողմից՝ սպառնալից զանգեր, քաղսովետի գործկոմի նախագահն ինքը խնդրեց… «Ձեռք քաշիր դրանցից, այ տղա, ամեն առավոտ հենց դուրս եմ ելնում տնից՝ այդ երկու անասունները գալիս, պառկում են ավտոմեքենայիս առաջ: Հո խայտառակ չենք լինելու»: Բայց ես պակաս համառը չէի: Աշոտի անհեթեթ մահը ահավոր էր ազդել ինձ վրա: Ասես հենց ինձ ոտքի տակ գցած, տրորած լինեին: Եվ վճռեցի, որ ինչ էլ պատահի՝ գրելու եմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Որպեսզի որևէ խանգարող չլինի, երեկոյան խմբագրություն եկա, թուղթը սեղանին դրեցի, ձեռքս առա գրիչս ու հենց նույն վայրկյանին էլ տեսա, թե ինչպես ներս մտավ եղբայրներից փոքրը՝ Վաղոն:

-Ուրեմն որոշեցիր գրել, էլի, մորքուրի տղա, -հարցրեց կանգնած դռան առջև:

Չեմ թաքցնի, շատ շփոթվեցի:

- Ի՞նչ գրել, ո՞ւմ մասին -կմկմացի ես:

- Բա ես էլ, որ տեղը գալիս է, ասում եմ՝ մորքուրիս տղան ես, չեմ թողնում, որ ամեն լակոտ-լուկուտ նեղացնի քեզ, իսկ դու…

- Ես ի՞նչ- կամ թե այդ ո՞վ պետք է նեղացնի ինձ…

- Քի՞չ կան, քանի անգամ ուզեցել են Մարիամին փախցնեն, մեջ եմ ընկել- Ամեն ինչ հո քեզ չէի ասի: Էս դանակի տեղը տեսնո՞ւմ ես,- նա մերկացրեց արմունկը ու մի սպի ցույց տվեց: Մեր Մարիամի համար խփեցին: Մինչև հիմա ցավում է: Բայց ի՞նչ անեի, հո չէի՞ թողնի տանեն եսիմ ինչ անեն անմեղ, անարատ աղջկան…

Ես նոր միայն հասկացա ամեն ինչ ու ինձ թվաց, թե խելագարվում եմ…

- Դե դուք էլ ախր շատ դինջ եք, է,- ասաց այդ սրիկան: - Էդպիսի լույս աղջկան թողնում եք կեսգիշերին մեն-մենակ լողի գնա-Ինչ ասես կպատահի, էլի, մորքուրի տղա…

Ու ես ետ կանգնեցի: Դա իմ ուսերից վեր էր, Զավեն: Դա իմ երևի միակ խոցելի տեղն էր: Եվ նրանք հիանալի գիտեին, թե ինչ են անում: Թե որտեղ են ուղղում հարվածը… Ու ես խեղճացած, թքելով ինքս իմ հոգու մեջ, նրան խնդրեցի իբր թե հետևել, որ իմ աղջկան հանկարծ որևէ վտանգ չսպառնա…Կարծես չգիտեի, թե որտեղից է գալիս միակ,իրական վտանգը: Բայց ես մարդ եմ, հայր եմ, չէ…Ես ի՞նչ կարող էի անել այդ տականքների դեմ, որոնք գրպանում իրենց անբարոյականությունը և հանցագործ վարքը կանխապես արդարացնող բժշկական վկայական ունեն:

Երիտասարդ ժուռնալիստի հոգում փոթորիկ էր: Նույնիսկ զգաց, որ խառնում է սիրտը: Նա էլի էր խմբագիրներ տեսել, թե Համալսարանի իր դասախոսներին, թե հանրապետական ու քաղաքային թերթերում: Բայց նրանք բոլորովին ուրիշ էին, հպարտ, ինքնավստահ, անմատչելի…Իսկ սա չի էլ խուսափում իր խեղճությունը, իր անճարակությունը ցուցադրելուց…Ընկրկում է շանտաժի առաջին իսկ փորձի առաջ: Այսպիսի խմբագի՞ր կլինի: Էլ ի՞նչ մակարդակ պիտի ունենան այս Մկրտիչ Զուլոյանի հոդվածները: Հավանաբար միայն առաջնորդողներ է գրում՝ թոցրած այս ու այն թերթերից և քաղցրմեղցր ներբողներ՝ նվիրված արտադրության առաջավորներին և ինչ-որ Գառնիկ Վարդանիչի, որի մասին խոսելիս բերանը բաց էր մնացել: Ամենա-ամենա…Զավեն Շարաֆյանը խմբագիրներ էր տեսել, որոնք իր աչքի առաջ սկզբունքային կռիվ էին մղում Կենտկոմի քարտուղարի հետ և ասում. «Իսկ իմ կարծիքով՝ այսպես պետք է լինի»: Իսկ սա երևի ամեն շաբաթ վազում է քաղկոմ՝ թերթի հերթական համարի նյութերը գաղափարական բաժնի հրահանգչի հետ համաձայնեցնելու,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

-Ընկեր Զուլոյան,- ասաց Զավեն Շարաֆյանը: - Ես փաստորեն ընդամենը մեկ օր է, ինչ գտնվում եմ ձեր քաղաքում, բայց արդեն առիթ ունեցա ծանոթանալու երեք հոգեկան հիվանդի հետ: Կներեք, իհարկե, բայց մի քիչ շատ չէ՞ այս փոքրիկ քաղաքի

համար:

- Երե՞ք,- դեպի նա թեքվելով, խռպոտած ձայնով հարցրեց խմբագիրը- Երրո՞րդն ով է…

- Հյուրանոցի շենքի պատին, հայտարարությունների տախտակի վրա մեկը մի թուղթ էր փակցրել ու վրան գրել. «Կորցրել եմ հավատս: Պատահաբար գտնողներին խնդրում եմ վերադարձնել ինձ, առանց պարգևատրություն սպասելու: Ես ոչինչ չունեմ»:

Խմբագիրը ծիծաղեց.

- Սրամիտ է, աստված վկա, սրամիտ է: Ես էլ դրա տակ կստորագրեի: Ստորագրություն չկար, իհարկե:

- Կար,- ասաց Զավեն Շարաֆյանը: - թեև համոզված եմ, որ կեղծ է: Արմեն Զատիկյան: Հասցե ևս կար՝ Մայիսմեկյան փողոց N 2:

Մկրտիչ Զուլոյանի դեմքին անսքող զարմանք նկատվեց:

- Չե՞ս կատակում, - հարցրեց նա, և ձայնն ասես թե ավելի խռպոտվեց:

- Իսկ ինչ է, կա՞ այդպիսի մեկը,- հարցրեց Զավեն Շարաֆյանը:

- Կա,- ասաց խմբագիրը: - Տաղանդավոր գյուտարար է և դժբախտ մարդ, բայց մտքովս ամենևին չէր անցնի, թե այդտեղ է հասել: Մենք նրա մասին մի քանի անգամ գրել ենք…

- Եվ ի՞նչ:

- Անհաշտ, անզիջում բնավորություն է- Առեղծված է, գիտե՞ս: Որքան տաղանդավոր գյուտարար է, այնքան էլ տաղանդավոր ձևով կարողանում է իր դեմ հանել բոլորին, ում հանդիպում է: Նրա հետ ոչ ոք երկու անգամ խոսել չի կարող: Նյարդերի կծիկ է: Հարձակվում է անգամ նրանց վրա, ովքեր ուզում են օգնել իրեն: Ապշելու մարդ է: Նույնիսկ Գառնիկ Վարդանիչը չկարողացավ խելքի

բերել նրան:

- Իրո՞ք հոգեկան խանգարում ունի,- հետաքրքրվեց երիտասարդ լրագրողը:

Մկրտիչ Զուլոյանը մտքերի մեջ ընկավ:

- Գիտե՞ս ինչ, ճշգրիտ ձևակերպումը թերևս հենց ինքն է տվել, ուղղակի հավատը կորցրած մարդ է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավեն Շարաֆյանը նույնիսկ ֆիզիկապես զգաց, որ ջահել ու խենթ արյունը եռում է երակների մեջ…

- Եվ ոչինչ հնարավոր չէ անել նրա համար, ընկեր Զուլոյան…

Խմբագիրը կծկվեց նորից.

- Հարցն այն է,- ասաց նա,- որ նրա օգտին որևէ էական բան անելու համար պետք է դիմագրավ լինես ոչ միայն տեղական, բավականին հզոր ուժերին, այլև բարձրանաս վեր մինչև մայրաքաղաք, մինչև մինիստրություն: Իսկ դրա համար ամեն մարդու շունչ չի հերիքի…

- Իսկ մինիստրությո՞ւնն ինչ կապ ունի:

- Ամենաուղղակի,- ասաց խմբագիրը: - Նա պիտակներ դրոշմող մի մեքենա է հնարել, որն ստեղծելու համար մինիստրությունում արդեն քանի-քանի տարի աշխատում է մի ամբողջ լաբորատորիա՝ տեխնիկական գիտությունների ամենաիսկական դոկտորի գլխավորությամբ:

- Եվ նրանց մեքենան պատրաստ չէ՞ :

- Չէ: Բայց նրանք գտնում են, որ Արմեն Զատիկյանի մեքենան իր տեխնիկական տվյալներով իրավունք չունի աշխատելու:

- Բայց աշխատո՞ւմ է:

- Մակետն աշխատում է-Իսկ իսկական մեքենայի ստեղծման համար փաստաթղթեր կազմելու և մեքենան ստեղծելու թույլտվություն միայն մինիստրությունը կարող է տալ:

- Բայց դա իսկական ֆելիետոնի փաստ է…

- Է, տղաս,- հառաչեց խմբագիրը,- չե՞ս տեսնում, որ ինչի ձեռք ենք տալիս՝ ֆելիետոնի փաստ է դառնում: Այդպես որ գնանք ուր կհասնենք: Թերթը հո երգիծական հանդես կդառնա:

- Չգիտեմ,- մռայլ ասաց Զավեն Շարաֆյանը ու թեև զգաց, որ մեծավարի է խոսում, բայց այլևս կանգ առնել չկարողացավ: - Չգիտեմ, ընկեր Զուլոյան, բայց այսպես ապրել չի կարելի: Ազնիվ խոսք:

Խմբագիրը տարածեց ձեռքերը և ժպտաց՝ ավելի շատ կարեկցանքով, քան հեգնորեն:

* * *

Քաղաքն անծանոթ չէր Զավեն Շարաֆյանին: Մեկ-երկու առիթով նա ավտոմեքենայով անցել էր այդ փոքրիկ քաղաքի միջով, որը սփռված էր լեռնային գետի երկարությամբ, ափերին ու մերձակա բլուրների վրա: Գետը խոշոր չէր, բայց քաղաքի միջով անցնում էր աղմուկով ու փրփրակալած, ասես շտապելով պահ առաջ դուրս պրծնել նեղ ու անդնդախոր ձորից և գնալ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հանդարտվել, տարածվել հարթությունների վրա: Ահա հենց այդ գետի ափերն իրար կապող հին քարե կամրջի վրա, արմունկներով քարե լայն բազրիքին կռթնած, սև հաց ու խաշած կարտոֆիլ էր ուտում երիտասարդ լրագրող, քաղաքային թերթի տնտեսության և կենցաղի բաժնի նոր վարիչ Զավեն Շարաֆյանը:

Գետն իր որոտով ու շառաչով ամբողջովին խլացրել էր շրջապատի ձայները, բայց որքան էլ կատաղեր, հո չէր կարող խլացնել նաև այն մտքերն ու ձայները, որ հնչում էին լրագրողի ուղեղում, պտտվում- պտտվում, ոստոստում այս ու այն կողմ, մեկ Երևան հասնում, թափառում փողոցներով ու մտնում համալսարան, մեկ հայտնվում հեռավոր այս քաղաքի խեղճուկրակ խմբագիր Մկրտիչ Զուլոյանի առանձնասենյակում, իսկ հետո իջնում բուֆետ և ամաչելով, կուչ ու ձիգ անելով ներկայանում.

- Շարաֆյանը ես եմ:

Բուֆետապանը դեղնած աչքերով, գունատ ու փոքրամարմին մի կին էր:

- Հա,- ասաց նա: - Ընկեր Զուլոյանը զանգ տվեց: Կես բոքոն սև հաց պահել եմ քեզ համար:

Նա կռացավ, վաճառասեղանի տակից հանեց ճակատագրի ինչ-որ քմահաճ խորհրդով հենց քաղաքային «Լուսաբաց» թերթի մեջ նախօրոք փաթաթած սև հացը և մեկնեց լրագրողին:

Զավեն Շարաֆյանը վերցրեց, վճարեց ու չդիմացավ, հարցրեց կարծես թե անփութորեն.

- Ուտելու ուրիշ բան չունե՞ք:

- Չէ ,- ասաց կինը,- ոչ մի բան: Առավոտը մի կտոր պանիր էին տվել, պրծավ: Էգուց որ տան, քեզ համար կպահեմ:

- Շնորհակալություն,- հնարավորին չափ զվարթ ձայնով ասաց Զավեն Շարաֆյանը,- շատ շնորհակալություն:

Նա արդեն դռանն էր մոտեցել, երբ նորից լսեց կնոջ ձայնը.

- Տղա ջան, որ խաշած կարտոֆիլ տամ, կուտե՞ս:

Զավեն Շարաֆյանը անմիջապես ետ դարձավ:

- Տնից էի բերել, խաշել էի ինձ համար: Էս երեք հատը մնացել է…

- Չի խանգարի,- առույգ ասաց Զավեն Շարաֆյանը: - Որքան պե՞տք է վճարեմ…

Կինը վիրավորվեց,

- Վայ, բա ամոթ չի: Ասում եմ՝ ինձ համար էի բերել- Մարդ ենք, չէ՞…

Եվ հիմա քարե կամրջի քարե լայն բազրիքին կռթնած, Զավեն Շարաֆյանը, շտապելուց առանց կեղևը մաքրելու, մեծ ախորժակով ուտում էր խաշած կարտոֆիլները, կծում սև հացը

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

և ստեպ-ստեպ գլուխը բարձրացնելով դիտում այն քաղաքը, որտեղ ճակատագիրը համալսարանի աշխատանքի նշանակման հանձնաժողովի կերպարանքով, նետել էր նրան:

Երբ տարիներ առաջ անցնում էր այս քաղաքով, մտքով կանցնե՞ր երբևէ, թե նրա բնակիչն է դառնալու: Նա ավտոբուսի լուսամուտից նայում էր վազող տներին, դիտում ճանապարհի եզրերին չգիտես ինչու այս ու այն կողմ գնացող մարդկանց, մի ակնթարթ ժպտալով հետևում լախտի խաղացող տղաներին, մի ակնթարթ գետի քարերի վրա շորերը շրխկացնելով լվացք անող կանանց, ընդամենը մի-մի ակնթարթ, իսկ հետո նրա աչքերը դիտարժան նոր պատկերներ էին որոնում ճանապարհի վրա:

Որովհետև նա ընդամենը անցորդ էր, միայն անցորդ, որը ոչ մի կապ չուներ մտահոգ դեմքով այս ու այն կողմ գնացող տեղացիների, լախտի խաղացող երեխաների, լվացք անող կանանց հետ: Նրանց կյանքն ուղղակիորեն նրա կյանքի հետ չէր առնչվում և ոչ էլ հոգսերն ու ուրախություններն էին վերաբերում նրան: Նրանք ուրիշ աշխարհի մարդիկ էին:

Իսկ հիմա… Իսկ հիմա սա նաև քո աշխարհն է, Զավեն Շարաֆյան, քո քաղաքը: Եվ ինչ որ կա այստեղ՝ և լավը, և՛ վատը, քոնն էլ է: Եվ հիմա քեզ համար սոսկ անուններ չեն «Լուսաբացի» խմբագրությունը, Մկրտիչ Զուլոյանը, ամենա-ամենա- Գառնիկ Վարդանիչը, շուկայի ամբողջ շրջապատը տեռորի ենթարկած եղբայրներ Աղոն ու Վաղոն, քո տանտիրուհի տիկին Ալվարդը, իր կորցրած հավատը փնտրող Արմեն Զատիկյանը, գունատ ու տխուր դեմքով այն բուֆետչան կինը, որ տնից իր համար բերած խաշած կարտոֆիլները կիսեց քեզ հետ և բոլոր-բոլորը, որոնց հետ առնչվելու ես և որոնց հետ հանդիպելուց չես կարող խուսափել, Զավեն Շարաֆյան, որովհետև նույն քաղաքի բնակիչներ եք, նույն աշխարհի մարդիկ:

Նա ափսոսանքով նայեց վերջին կարտոֆիլին: Մի պահ որոշեց փաթաթել լրագրի մեջ, հացի մնացած կտորի հետ տուն տանել և ուտել գիշերը: Բայց անմիջապես էլ կծեց կարտոֆիլի կողքից, որպեսզի այլևս այդ մասին չմտածի, մինչև վերջ կերավ նաև հացը և թերթը թափահարելով՝ փշուրները թափեց գետի մեջ: Հետո բնազդով վախեցավ, թե աստված կնեղանա, որ ինքը ցած թափեց փշրանքները ու միանգամից տեսավ իր դեմքը հայելու մեջ, այնպես ինչպես տասնմեկ տարի առաջ, երբ բերանից արյուն էր ծորում ծնոտին ու աչքերից արտասուքներ էին թափվում…

Պատերազմի երրորդ ձմեռն էր: Սառնամանիք ու սով: Հուսահատեցնող, նվաստացնող, մինչև սիրտն ու ոսկորները թափանցող ցուրտ ու սով, երբ ձնաբքի հետ կռվելով, օրորվելով, սայթաքելով, ընկնելով ու ցավից տնքալով բարձրանալով նորից, դպրոցից տուն էր վազում համոզված, որ այնտեղ իր տառապանքների վերջն է: Հենց որ ներս մտավ դրախտ կլինի: Որովհետև տանը մայր կա: Իսկ որ մայր կա, ուրեմն տաք կլինի տանը: Մայրը ախ ու վիշ անելով, նրան կնստեցնի թախտին, արագ-արագ կհանի կոշիկներն ու տաք ձեռքերով կշփի որդու սառած, կապտած ոտքերը, կտրորի ու հանգստացնող անուշ խոսքեր կասի: Իսկ հետո ինչ-որ բան, միևնույն է, թե ինչ, բայց տաք ինչ-որ բան, թեկուզ եռացրած ջուր կբերի ու կդնի սեղանին, որդու առաջ նրա իբր աշակերտական օրաբաժին մի կտոր հացի հետ, երբ Զավենը հո լավ գիտեր, որ իր օրաբաժինը դեռևս առավոտ շուտ է կերել, դպրոց գնալուց առաջ, խնդրելով ու շողոքորթելով:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Իսկ այդ օրը կատարվեց մի սարսափելի բան: Երբ Զավենը տուն մտավ, մայրը չկար: Ծեծեց հարևան դռները, ոչ մի տեղ չկար: Իրեն խոհանոց նետեց, բայց ոչ նավթավառն էր վառվում, ոչ ինքնաեռը և կաթսաների մեջ էլ ոչինչ չկար: Քաղցից չհուսահատված Զավենը տակնուվրա արեց ամբողջ տունը ու թեև մեծ վարպետ էր մոր պահած «հոգեպահուստները» գտնելու հարցում, բայց չգտավ բացարձակապես ոչ մի այնպիսի բան, որ հնարավոր լիներ կուլ տալ ու պրծնել, ազատվել ստամոքսի ահավոր ցավից: Նա նորից բացուխուփ արեց կաթսաները, քանդեց բոլոր կապոցները, նույնիսկ շորերի պահարանը նայեց և հանկարծ բոլորովին անսպասելի, ուղղակի հրաշքի նման՝ պահարանի ամենացածր դարակի մեջ, հին ու մին շորերի տակ, գտավ երևի պատերազմի առաջին օրերից պատահաբար մնացած չոր, չորությունից նույնիսկ ծռված մի կտոր սև հաց: Ուրախությունից ու քաղցից խենթացած, նա նույնիսկ չմտածեց հացը ջրի ծորակի տակ թրջելու, փափկացնելու մասին ու հենց այդպես էլ պահարանի մոտ կանգնած բերանը տարավ ու սկսեց ագահաբար կրծոտել պողպատի պես կարծրացած կտորը: Պահարանի դռան վրա հայելի կար, Զավենը ուտելու հետ միաժամանակ պատահաբար հայելուն նայեց և հանկարծ նկատեց, որ հայելուց իրեն նայող տղայի բերանից արյուն է ծորում ծնոտի վրա: Ու նոր հասկացավ, որ հացի չորացած կտորը ծվատել է լնդերը, շրթունքներն ուռցնելով նայեց իր ողորմելի պատկերին ու լաց եղավ անձայն, արտասուքներն արյանը խառնելով, խղճալով ինքն իրեն:

Ու նա այլևս երբեք չմոռացավ հացի այդ սև, չորացած կտորը:

Զավեն Շարաֆյանը հառաչեց, ուղղեց լրագիրը և արդեն մարող արեգակի վերջին շողերի տակ կարդաց անունը՝ «Լուսաբաց»: «Լուսաբաց»: Սա արդեն իր թերթն է: Մինչև տուն գնա, Մկրտիչ Զուլոյանը մեկն ու մեկի միջոցով երևի ուղարկած կլինի թերթի վերջին տարիների կոմպլեկտը: Պետք է կարդալ, որպեսզի առայժմ գոնե մոտավորապես իմանաս, թե ինչ է ներկայացնում իրենից այն քաղաքը, որի բնակիչը դարձար: Իմանաս, թե ինչով է ապրում, ինչ ձեռնարկություններ ու հիմնարկներ ունի, մշակույթի ինչ օջախներ, և ամենակարևորը, ամենակարևորը, որպեսզի պարզես, թե ինչպես և ինչով են ապրում քաղաքի մարդիկ:

Եթե ճիշտ էր ասում իրենց սիրելի դասախոսը, թե քաղաքային թերթը քաղաքի հայելին է, ուրեմն այդ հայելու մեջ պետք, որ հստակորեն երևա այն ամենը, ինչ կա քաղաքում, հստակորեն և ճշմարիտ, որքան էլ դառը լինի այդ ճշմարտությունը: Եվ որքան էլ դաժան ու տխուր լինի պատկերը՝ հեռավոր այն օրերի հին պահարանի հայելու արտացոլանքի նման:

* * *

Արդեն տանտիրոջ պես ուշադիր շուրջը նայելով, Զավեն Շարաֆյանը կտրեց

անցավ կամուրջը և արդյունաբերական ու մթերային փակ խանութների լուսավորված, գրեթե դատարկ ցուցափեղկերի կողքով ուղղվեց դեպի իր՝ Ապագայի նեղլիկ փողոցը: Դեռ փողոցին չհասած, նա աջ կողմում, միահարկ մի տան ներքնահարկում դեղատուն նկատեց, որը բաց էր: Զավեն Շարաֆյանը անմիջապես վանեցու հին անեկդոտը հիշեց, որը վառելափայտը խնայելու նպատակով, չմրսելու համար գերադասում է էժան ասպիրին խմել և մտածեց, որ չէր խանգարի տանը մի քանի դեղամիջոց ունենալ: Տուն է, էլի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ասպիրին ունե՞ք,- հարցրեց նա ծեր, ակնոցը թելերով ականջներին կապած դեղագործին:

- Քառասունհինգ կոպեկ,-ասաց դեղագործը:

- Իսկ գլխացավի համար ի՞նչ ունեք:

- Մեկ ռուբլի երեսուներեք կոպեկ,- ասաց դեղագործը:

Երիտասարդ լրագրողը ժպտաց.

- Իսկ ի՞նչ դեղ է:

- Պիրամիդոն:

- Ցիտրամոն չունե՞ք:

Դեղագործը ակնոցի վրայից անծանոթ հաճախորդին նայեց:

- Ում համար ես ուզում, տղա ջան:

- Ինձ համար,- ասաց Զավենը:

Դեղագործը օրորեց գլուխը:

- Բա քո տարիքին դեղ կխմե՞ն,- ասաց բարկացած:

- Բա ի՞նչ անեմ, գլուխս մեկ-մեկ ցավում է,- զարմացավ լրագրողը,

- Հետո ինչ, թող ցավա: Թող ցավա, իսկ դու նստիր ու մտածիր թե ինչից է, որ քո ջահել, առողջ գլուխը ցավում է: Թե էդ ինչն է ցավեցնում: Ու դրա դեմ մի հնար գտիր: Թե չէ խեղճ գլուխդ քեզ զգուշացնում, ասում է թե իմացիր՝ քո մարմնի մեջ մի բան պակաս է, իր տեղում չէ, իսկ դու փայտով խփում ես գլխիդ, թե սուս մնա, քո գործը չէ: Եղա՞վ:

Զավեն Շարաֆյանը ծիծաղեց: Երևի ճիշտ է ասում այս ծերուկը՛ հաստատ ճիշտ է ասում:

- Էդ փողերը, որ դեղերի ես տալու, չէ՞, դրանով գազար առ ու կեր: Գազար հո ճարվում է: Հավատա ինձ, քանի տարի է էստեղ նստած եմ: Եթե ջահել մարդու գլուխը ցավում է, ուրեմն սովից է Ու մեծերինն էլ, իհարկե, սովից ու մեկ էլ անճարակությունից ու սրտնեղությունից, որ չեն կարողանում երեխաներին պահեն: Պատերազմը տասը տարի է ինչ վերջացել է, բայց էլի հաց չկա: Դե

գլուխ բեր, որ դիմանա: Կցավա, բա ի՞նչ կանի: Իսկ դուք փոխանակ հացի մասին մտածեք, որ շատ լինի, գլխացավի դեղ եք ուզում: Եղա՞վ:

- Չեղավ,- կրկին ծիծաղեց Զավեն Շարաֆյանը: - Հիմա հասկացա, որ չեղավ: Շատ շնորհակալություն, հայրիկ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Շարունակելով ծիծաղել ու զարմացած օրորելով գլուխը, երիտասարդ լրագրողը դուրս եկավ դեղատնից ու քայլեց իրար հենված երկհարկանի ու միահարկ տների կողքով: Իսկ երբ արդեն ծանոթ տանն էր հասնում, նկատեց, որ փայտե նեղ դարպասի առաջ կանգնած է տանտիրուհին:

- Բարի երեկո, տիկին Ալվարդ,- ողջունեց նա, հանելով լայնեզր գլխարկը:

Կինը չթաքցրեց զարմանքը:

- Դուք իմ անունը որտեղի՞ց գիտեք:

- Մեր խմբագիրը ճանաչում է ձեզ:

- Մկրտիչ Զուլոյա՞նը,- ժպտաց տանտիրուհին,- իսկ նա չասա՞ց, որ ձեր անունն էլ ինձ հայտնեք:

- Զավեն- Զավեն Շարաֆյան,- շփոթված ասաց լրագրողը:

- Դուք գրեթե իմ որդու տարիքին եք: Եթե թույլ տաք, ես ձեզ Զավեն կանվանեմ:

- Իհարկե, իհարկե,- անմիջապես համաձայնվեց տղան: Կինը կարծես թե չէր շտապում հեռանալ դռնից:

- Ձեզ մոտ մարդիկ են եկել, հեռախոս են անցկացնում:

- Հեռախո՞ս, ո՞ւմ համար:

- Ձեզ համար, ո՞ւմ համար,- կրկին ծիծաղեց Ալվարդը: - Մենք դեռևս տասը տարի առաջ ենք դիմում տվել և չորս-հինգ անգամ գրավոր պատասխանել են, թե համար չունենք: Իսկ երկու ժամ առաջ եկան, թե այստե՞ղ է ապրում թերթի նոր բաժնի վարիչը և անմիջապես սկսեցին լարեր անցկացնել:

«ՉԷ, Մկրտիչ Զուլոյանը, ինչպես երևում է, այնքան էլ խեղճուկրակ մարդ չէ»- ժպտալով մտածեց լրագրողը:

- Մեկն էլ աշխարհի չափ թերթեր բերեց ձեզ համար:

- Այդ մասին գիտեի,- ասաց Զավեն Շարաֆյանը: Կինը շարունակում էր կանգնած մնալ տեղում, և Զավենը հասկացավ, որ նա էլի ինչ-որ բան ունի ասելու:

- Ես ձեզ ուզում եմ մի բան խնդրել, Զավեն,- վերջապես ասաց նա,- Առիթ է, եթե կարելի է ասեք, որ մի ապարատ էլ վերևում՝ իմ սենյակում տեղադրեն: Ես հեռախոսի ապարատ ունեմ-ավելացրեց նա շտապով, - միայն թե հաստատ գիտեմ, որ առանց ձեր թույլտվության չի լինի:

-Հենց հիմա կասեմ, ի՞նչ խոսք- ասաց տղան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես ձեզ երբեք չեմ խանգարի,- երախտագիտությամբ ժպտաց տանտիրուհին: - Կզանգահարեմ միայն այն ժամանակ, երբ տանը չեք լինի: Ավելի շատ տղայիս համար եմ խնդրում, որ կարողանա մեկ-մեկ զանգ տալ ինձ, իմանամ, թե ոնց է- Վատ երազներ եմ տեսնում, կորցնում եմ գլուխս: Ամուսնուս հետ պատահած դժբախտության մասին երևի պատմել է Զուլոյանը- Այդ դեպքից հետո շատ վախկոտ եմ դարձել… Նույնիսկ երբ պատկերացնում եմ, թե հենց այնպես, նույնքան անհեթեթ ու անմիտ ինչեր կարող են պատահել Միքայելիս հետ, քիչ է մնում խելագարվեմ:

Լրագրողը լուռ էր, որովհետև իսկապես չգիտեր ինչ ասել: Ի՞նչ կարելի է ասել, ի՞նչ խոսքեր գտնել- Կամ մի՞թե այս դժբախտ կնոջը որևէ խոսք պետք է…

Մի՞թե այլևս որևէ բան կարող է մխիթարել նրան:

* * *

Զավեն Շարաֆյանը երեք օրում գրեթե ծայրեծայր կարդաց «Լուսաբաց» թերթի մի քանի տարվա հավաքածուները և եթե հարկ լիներ՝ հանգիստ կարող էր ասել, թե բավականաչափ պատկերացում ունի փոքրիկ այդ քաղաքի անցյալի, ժամանակակից կյանքի և նույնիսկ հեռանկարների մասին: Թեև տարիներ շարունակ թերթը լույս էր ընծայվել ընդամենը երկու էջով և հինգ տարի առաջ էր չորս էջանոց դարձել, այնուամենայնիվ փորձել էր կատարել հայելու իր պարտականությունը, հատկապես չորս էջանոց դառնալուց հետո, երբ խմբագիր էր նշանակվել Մկրտիչ Զուլոյանը և երբ «Կոմունիզմի ուղիովը» դարձել էր «Լուսաբաց»:

Ուսանողական առաջին տարիներին, երբ սովետահայ մամուլի դասախոսը իր սաներին ծանոթացնում էր այս կամ այն շրջանում լույս տեսնող թաշկինակաչափ փոքրիկ լրագրերին, ուսանողները ժպտում էին ներողամտորեն կամ արհամարհանքով: Իրը թե՝ դրանք էլ թերթեր են: Իսկ երբ երրորդ կուրսում ուսանողական պրակտիկայի ժամանակ Զավեն Շարաֆյանը պարզապես հետաքրքրասիրության համար թերթեց Շամշադինի շրջանային թերթի 1930-40 թվականների համարները, բառացիորեն ցնցվեց: Ինչպե՞ս թե: Ամենուրեք անվերապահորեն հայտարարվում էր, թե 1941 թ. հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան անակնկալ է հարձակում գործել Ռուսաստանի վրա: Այնինչ հենց թեկուզ միայն Շամշադինի շրջանային թերթը կարդալով կարելի էր վստահորեն ասել, որ անակնկալի մասին խոսք լինել անգամ չի կարող: Ուխտադրուժ, այո, հարյուր անգամ ուխտադրուժ, բայց ոչ անակնկալ: Որովհետև համարից-համար ակնհայտորեն աճում, ահագնանում էր տագնապը, իրական ու շոշափելի էր դառնում՝ արևմուտքից հոսող դարչնագույն հեղեղի կուտակումն ու տարածումը գրեթե ողջ Եվրոպայում: Իսկ 1941 թվականի համարներից մեկում Շամշադինի շրջանային թերթը տպագրել էր ՏԱՍՍ-ի ինֆորմացիան, թե հավաստի տվյալներով Գերմանիան մեծ քանակությամբ զորքեր է կուտակում Սովետական Միության պետական սահմանի մոտ և թե այդ կապակցությամբ Սովետական կառավարությունը անհանգստացած է և բողոքի նոտա է ուղարկել

Գերմանիայի կառավարությանը: Էլ ի՞նչ անակնկալ, ի՞նչ հանկարծակի- Ուղղակի հազար ու մի ներքին ու արտաքին պատճառներով մեր երկիրը պատրաստ չի եղել նման պատերազմի և ամեն կերպ աշխատել է ձգձգել, հեռացնել, հետաձգել անխուսափելի դարձած օրհասը, ձևացնել, թե հավատում է նույնիսկ ֆաշիստական Գերմանիայի՝ իրը չհարձակվելու

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հեղհեղուկ խոստումին: Ահա մոտավոր ճշմարտությունը, որն անզեն աչքով անգամ երևում էր նույնիսկ մեր փոքրիկ հանրապետության հեռավոր շրջաններից մեկի երկու էջանոց լրագրում:

Եվ թերթելով «Լուսաբացի» հավաքածուները, Ջավեն Շարաֆյանը կրկին համոզվեց, որ դրանց մեջ ահագին օգտակար տեղեկություններ կան և որ դրանցով նույնիսկ քաղաքի պատմությունը կարելի է կազմել:

Հեղափոխությունից առաջ փոքրիկ մի գյուղ է եղել, միակ երկհարկանի ընդարձակ շինությամբ, որը իջևանատեղի է ծառայել անցնող-դարձողների համար: Ունեցել է նաև հինավուրց, փառահեղ մի եկեղեցի, որը երիտասարդ անաստվածների միությունը փորձել է քանդել, բայց չի կարողացել, դրա համար էլ վերանորոգել է կիսատ-պռատ ու վերածել պահեստի: Գետափին, հանքային ջրի աղբյուրի մոտ միահարկ, բայց տասնյակ կացարաններով հյուրանոց է եղել, որտեղ ապրել ու ջրաբուժում են ընդունել հեռու…

հեռուներից եկած հիվանդները: Ըստ որում, ասում են, թե այդ ժամանակներում հանքային ջուրը բուժել է գրեթե բոլոր հիվանդությունները՝ չբերությունից սկսած մինչև անկելություն և ընկնավորություն: Սակայն հետագայում, երբ փորձել են քանդել եկեղեցին, միանգամից պակասել է ջրի զորությունը: Ճիշտ է, հիմա նախկին խղճուկ շինության տեղում քառահարկ առողջարանի մի սքանչելի շենք է բարձրանում՝ քանդականախշ սյուներով ու կամարներով, և գեղեցիկ ու ճաշակով կահավորված միջանցքներով ու հիվանդասենյակներով անցուդարձ են անում սպիտակ խալաթ և սպիտակ գլխարկ հագած տասնյակ լուրջ բժիշկներ, սակայն հանքային ջուրը բուժում է աղեստամոքսային որոշ հիվանդություններ միայն:

Այդ ամենից բացի, փոքրիկ քաղաքն ունեցել է իհարկե նաև մանր արհեստավորական զանազան կետեր, ջրաղաց, որից հիմա միայն մի պատ ու գետն ի վար կախված նովի մի մասն է մնացել, փոստի բաժանմունք՝ հավանաբար հեռագրային գյուտի հենց առաջին սարքով և տարօրինակ ձևով մինչև օրս անաղարտ մնացած մի բրուտանոց, որտեղ ավելի քան մի դար շարունակ սերնդե-սերունդ աշխատում և մուգ կարմիր գույնի կավե կուժ ու կուլա են պատրաստում Բրուտյան ազգանունով մարդիկ:

Իսկ հիմա, ինչպես թերթում տպագրված «Հոկտեմբերից հոկտեմբեր» վերնագրով իր զեկուցման մեջ նշել է կուսքաղկոմի առաջին քարտուղար Ղուկաս Լալայանը, հիմնովին փոխվել է քաղաքի տեսքը: Գործում են արդյունաբերական այնպիսի խոշոր

ձեռնարկություններ, ինչպիսիք են Քիմիական կոմբինատը, Կահույքի կոմբինատը, Տրիկոտաժի ֆաբրիկան, Յուղի-պանրի գործարանը: Մեծ վերելք է ապրել մշակույթի, ժողովրդական կրթության, առողջապահության ցանցը: Քաղաքն ունի մշակույթի պալատ, եր-կու միջնակարգ և երեք ութամյա դպրոցներ, առողջարան, հիվանդանոց՝ հարյուր մահճակալով, ծննդատուն և ատամապրոտեզական պոլիկլինիկա: Արմատապես փոխվել է քաղաքացիների կենցաղը, նրանց պահանջները բավարարում են կենցաղ սպասարկման կոմբինատը և նորակառույց բաղնիքը, նրանց տրամադրության տակ են տաքսի ավտոմեքենաները, իսկ ավտոկայանը շուրջ տարի անխափան կապ է պահպանում մայրաքաղաքի և մյուս քաղաքների հետ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Կուսակցական քաղկոմի առաջին քարտուղարը այնուհետև ոգևորված խոսում է քաղաքի անվանի մարդկանց մասին և շեշտը դնում այն փաստի վրա, որ եթե առաջ քաղաքի կուսակցական, խորհրդային կադրերը դրսից էին ներմուծվում՝, ապա այսօր

ղեկավար կադրերի մեծամասնությունը տեղացիներ են, և դա կարելի է քաղաքի նվաճումը համարել:

Ղուկաս Լալայանը արդարացի էր: Բավական էր թեկուզ այն փաստը, որ ընդամենը չորս տարի առաջ նա «Լուսաբացում» երկչոտ ինֆորմացիաներ էր տպագրում քաղաքի մշակութային կյանքի մասին՝ որպես մշակույթի տան դիրեկտոր, երկու տարի առաջ՝ իբրև կոմերիտմիության քաղկոմի քարտուղար երիտասարդությանը կոչ էր անում քայլել ամեն նորի և առաջավորի ավանգարդում, իսկ հիմա ղեկավարում էր կուսակցության քաղկոմը: Տեղական կադրերի այդ սրընթաց առաջխաղացումը հիրավի կարելի էր վերագրել երիտասարդության առջև բացված լայն հնարավորություններին, եթե արձակուրդի մեջ գտնվող խմբագրին փոխարինող պատասխանատու քարտուղար Միհրան Գալստյանը, ինչպես ասում են, արջի ծառայություն չմատուցեր կուսքաղկոմի առաջին քարտուղարին: Ղեկավարությանը հաճելի անակնկալ բերելու միանգամայն բարի դիտավորությամբ, առանց որևէ մեկի հետ հարցը համաձայնեցնելու, նա մի լուսանկար է տպագրում թերթում՝ «Սիրելի ակադեմիկոսը հայրենի հարկի տակ» մակագրությամբ: Լուսանկարում ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Երվանդ Լալայանը նկարված էր իր կրտսեր եղբայր Ղուկասի հետ գրկախառնված, ծանր ու ազդեցիկ ձեռքը նրա վտիտ ուսին:

«Լուսաբացի» համարներից պարզ երևում էր նաև թերթի խմբագրի գործունեությունը: Կուսակցական դպրոցն ավարտած Մկրտիչ Զուլոյանը անկասկած աշխատանքի էր անցել ոչ միայն թերթում, այլև քաղաքում նոր ժամանակներին վայել անհրաժեշտ կարգ ու կանոն ստեղծելու մտադրությամբ: Բավական էր թեկուզ կարդալ նրա առաջին հոդվածների վերնագրերը, «Քաղաք կա, իսկ որտե՞ղ է քաղաքացին», «Քաղխորհրդի նախագահի ընդունարանում», «Առևտրի տեսուչները շորթողների դերում», «Որտե՞ղ են ագիտատորները», «Գյուտարարը օգնություն է սպասում»: Հոդվածը գրված է տրիկոտաժի ֆաբրիկայի անվանի փականագործ Արմեն Զատիկյանի մասին: Եվ անմիջապես էլ հրատարակվել է հաջորդ հոդվածը «Գյուտարարը բյուրոկրատական պատնեշի առաջ»: Դրանից հետո մի քանի համարում Մկրտիչ Զուլոյանը լռում է և ուղիղ երկու ամիս անց իր ձեռքով տպագրում քաղկոմի բյուրոյի որոշումը. «Գյուտարարը օգնություն է սպասում» և «Գյուտարարը բյուրոկրատական պատնեշի առաջ» հոդվածները քննության առնվեցին կուսքաղկոմի բյուրոյում: Բյուրոն գտավ, որ իրոք քաղաքի առանձին ձեռնարկություններում ինչպես հարկն է չեն խրախուսվում գյուտարարներն ու նորարարները, պայմաններ չեն ստեղծվում նրանց ստեղծագործ աշխատանքի համար: Ինչ վերաբերվում է փականագործ Արմեն Զատիկյանի գյուտին, բյուրոն գտնում է,որ խմբագրությունը ավելորդ շտապողականություն է հանդես բերել պիտակներ դրոշմող մեքենայի մակետը գնահատելու և արժեքավորելու հարցում: Հոդվածագիր Մ. Զուլոյանը մասնագիտական անհրաժեշտ գիտելիքներ չունենալով հանդերձ, անտեսել է մասնագետների բացասական կարծիքն այդ հայտնագործության մասին, որի համար և նրան հայտարարվեց կուսակցական նկատողություն՝ գրանցելով անձնական քարտում»:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բայց ինչպես վկայում են հետագա հոդվածները, խմբագիրը հեշտ ընկճվողներից չէր և վերքերը լիզելով ու արագորեն ուշքի գալով շարունակում է իր մարտական, կրքոտ հրապարակախոսությունը, «Ուշադրություն, մարդ է ձեր առջև», «Թող հողն այրվի խուլիգանների ոտքի տակ», «Պատիվդ բարձր պահիր, բժիշկ», «Նվե՞ր, թե ծաղկեփունջ», «Բանվորական ճաշարանը դարձնել պետական»…

Զարմանալի է, իհարկե, որ նման վերնագրով հոդված տպագրելուց հետո քաղկոմի բյուրո չի հրավիրվում: Բայց այդ զարմանքը փարատվում է հենց հաջորդ համարում, որտեղ ելույթ է ունենում Քիմիական կոմբինատի դիրեկտոր Գառնիկ Բադալյանը: նա սրտանց ողջունում է խմբագրությանը՝ գործարանի ճաշարանում տիրող խայտառակ վիճակը բացահայտելու և պատկերելու համար, ընդունում, որ փաստերը լիովին համապատասխանում են իրականությանը և տեղեկացնում, որ դիրեկտորի տնտեսական գծով տեղակալը, ճաշարանի դիրեկտորն ու շեֆխոհարարը հեռացված են աշխատանքից և նրանց չարաշահումների վերաբերյալ նյութերն ուղարկված են դատախազություն՝ քրեական գործ հարուցելու համար:

Ահա թե ինչու է Գառնիկ Վարդանիչը խմբագրի համար ամենա… ամենա…

Եվ ոգևորված խմբագիրը ավելի է ծավալվում: Իրար են հետևում քննադատական-վերլուծական մի շարք նյութեր, բավականին խոսուն վերնագրերով՝ «Քաղաքը մաքրել հանցագործ տարրերից», «Դատախազի օգնականը անօգնական վիճակում», «Դեպուտատները դափնիների վրա», «Յուղոտ աթոռներ»,,.

Յուղի-պանրի գործարանի արտադրության ղեկավարների ապօրինի գործողությունները մերկացնող այդ հոդվածի տպագրությունից հետո Մկրտիչ Զուլոյանի ստորագրությունը կրկին անհետանում է թերթի հաջորդ էջերից, իսկ հոդվածը մնում է անպատասխան, եթե բավարար պատասխան չհամարվի այն, որ դրանից հետո տեղի ունեցած քաղխորհրդի ընտրություններում յուղի-պանրի գործարանի դիրեկտոր Սահակ Միրզոյանը ընտրվում է քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ:

Եվ Մկրտիչ Զուլոյանը, ինչպես երևում է, հանձնվում է հետզհետե, որովհետև թերթի էջերից անաղմուկ անհետանում են քննադատական հոդվածները, իսկ ֆելիետոնները հիմնականում միջազգային թեմաներ են ընդգրկում՝ ընդդեմ անգլո-ամերիկյան իմպերիալիզմի սկսած սառը պատերազմի:

Զավեն Շարաֆյանը ծալեց, ցած դրեց «Լուսաբացի» վերջին՝ 1954 թվականի անավարտ կապը, հոգնած, ծանրացած ուսերը սեղմեց աթոռի թիկնակին և փակեց աչքերը:

«Էհ, տեսնենք դո՞ւ ինչ ես անում, ախպերս»- ասաց նա ինքնիրեն, բայց ոգևորություն առանձնապես չէր զգում:

Եվ մտածեց, որ դա մենակությունից է: Եթե կողքին գոնե մայրը լիներ, ինքը կրնկակոխ կքայլեր տան այս ու այն կողմում գործ անող մոր ետևից ու ականջին թեքված նրան իր ապագա անելիքների մասին կպատմեր: Իսկ մայրը կծիծաղեր անօգնական ու կասեր. վերջ տուր, հերիք է, այ բալա, ախր ես քո ասածներից ոչինչ չեմ հասկանում: Իսկ ինքը կշարունակեր հետապնդել նրան ու պատմել, պատմել… Հիմա ոչ մայրը կա, ոչ ընկերները, ոչ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

որևէ ծանոթ: Ոչ ոք: Գոնե Երևանի տանը հեռախոս լիներ, զանգ տար խոսեր մոր հետ: Տեսնես ի՞նչ են անում հիմա:

Նա նույնիսկ մի պահ հեռախոսին նայեց, սպասելով, որ հրաշք լինի ու քիչ մնաց վեր ցատկեր աթոռից, որովհետև պարզ լսեց, որ հեռախոսը ծնգծնգաց: Բայց դա զանգ չէր, ծնգծնգոց էր միայն: Ո՞վ գիտե, երևի տիկին Ալվարդը փորձում է Երևան միանալ, խոսել իր Միքայել որդու հետ: Բայց հեռախոսը շարունակում էր ծնգծնգալ, և Զավեն Շարաֆյանը վճռեց այնուամենայնիվ վերցնել լսափողը:

Գծի մեջ ձայն չկար:

- Ալո,- թեթևակի փչեց ու հենց այնպես հարցրեց նա:

- Զավեն, դո՞ւք եք,- լսվեց հանկարծ լսափողի միջից:

- Ես եմ: Ո՞վ է,- իր հերթին հարցրեց Զավենը:

- Ալվարդն է,- ասաց ձայնը: - Ամբողջ օրը տնից դուրս չեք գալիս: Գուցե քաղցած եք, տղաս:

- Ոչ, ոչ- անմիջապես հրաժարվեց լրագրողը,- շատ շնորհակալ եմ:

- Գուցե թեյ բերեմ ձեզ, ախր այդպես չի կարելի: Կներեք,իհարկե, բայց ախր ես գիտեմ ձեզ: Միքայելս էլ նույնն է, մինչև չհիշեցնես…

- Ոչ, ոչ - ասաց Զավենը: - Ես թեյ ունեմ, շատ շնորհակալ եմ…

- Դե ինչ ասեմ-- կինը հառաչեց լսափողի մեջ ու անջատեց հեռախոսը:

Իսկ Զավեն Շարաֆյանը ժպտաց.

Նա, իհարկե, քաղցած էր գայլի նման, որովհետև օրվա միակ ուտելիքը՝ բադրիջանի խավիարի պահածոն դեռևս ցերեկն էր կերել: Եվ մեծ ախորժակով կխմեր ոչ իր պատրաստած տաք, անուշաբույր, քաղցր թեյը: Բայց թույլ չտվեց իրեն:

Եվ զարմանալի բան. հանկարծ զգաց, որ տաքացել է մի տեսակ և քաղց էլ առանձնապես չի զգում:

* * *

Բավականին հեռվից, ձորի կողմից գալիս, պատուհանից ներս էր թափանցում գետի որոտը: Խուլ մի աղմուկ էլ ցածից էր գալիս, շենքի ներքնահարկից, որտեղ տպարանն էր գտնվում: Եվ այդ ծանոթ, սովոր, արդեն չզգացվող և չխանգարող աղմուկի տակ «Լուսաբաց» թերթի խմբագիր Մկրտիչ Զուլոյանը իր խուլ-խռպոտ ձայնով թռուցկաժողովի արդյունքներն էր ամփոփում:

Փոքրիկ սենյակում հավաքված էր ողջ կոլեկտիվը: Խմբագրի սեղանի աջ կողմում նստած էր պատասխանատու քարտուղար Միհրան Գալստյանը, որը հիմա երեխայի նման խռոված

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ուռցրել էր շրթունքները և արագ-արագ թարթում էր սպիտակավուն թարթիչները, նա մինչև հոգու խորքը վիրավորված էր: Գնացել Կիրովական էր հասել, ծանոթների միջոցով տպարանից հաստ և ծուռտիկ մուռտիկ զանազան գծեր էր բերել ու թերթը ձևավորել այդ գծերով: Իսկ խմբագիրը զարմանալու և գովաբանելու փոխարեն, քննադատեց, թե առանց այդ էլ տեղ չունենք նյութերը տպագրելու համար, իսկ քարտուղարը էջերը գծերով է լցրել և սև շրջանակներով այնպես է պատել նյութերը, ասես դրանք ոչ թե հոդվածներ, այլ մահախոսականներ լինեն:

Խմբագրի սեղանի ձախ կողմում նստած էր ինֆորմացիայի և մշակույթի բաժնի վարիչ Մարո Մելիքյանը: Նա աչքերը լայն բացած, նվիրված նայում էր խմբագրի շրթունքներին և արագ-արագ արտագրում նրա մտքերը դիմացը դրված հաստ տետրի մեջ:

Մեծ գրասեղանին կից սեղանիկի մոտ նստած էին արդյունաբերության բաժնի վարիչ Ջիվան Ենգոյանը և իլյուստրացիայի բաժնի վարիչ ու համատեղության կարգով լուսանկարիչ Քաջիկ Սահառունին:

Ջիվան Ենգոյանը բարձրահասակ ու նիհար, տարեց մարդ էր, որն իր ամբողջ կյանքը թերթում էր անցկացրել, նույն այդ արդյունաբերության բաժնում: Նա անգիր գիտեր իր գործը, արդյունաբերական կյանքի մասին գրում էր արդեն առանց խմբագրությունից դուրս գալու, հեռախոսով մի երկու թիվ ու անուն վերցնելով և ընդամենը մի անգամ էր սխալվել ու նկատողության արժանացել, երբ «Հավասարվենք առաջավորներին» առաջնորդող հոդվածում տարիներ շարունակ արտադրության առաջավոր մարդկանց անունների շարքում սովորականի պես հիշատակել էր նաև կահույքագործ Մարտին Իփեկչյանի անունը, տեղեկություն չունենալով, որ այդ խեղճ մարդը մահացել է գրեթե երկու ամիս առաջ:

Իհարկե, նրան կարելի էր որևէ կերպ ներել, որովհետև հարբած էր եղել այդ օրը: Ներել, հաշվի առնելով, որ Ջիվան Ենգոյանը երեք տարվա մեջ ընդամենը երկու անգամ է հարբում, այս օրը, երբ նրա ընտանիքում ծնվում է հերթական աղջիկը: Ութ աղջիկ ուներ Ջիվան Ենգոյանը և հանելուկային ձևով ութ աղջիկները տեղավորվում էին երեք սենյականոց մի փոքրիկ բնակարանում: Երբ լրացուցիչ բնակարան էին առաջարկում, հրաժարվում էր.

- Որ էդպես է՝ լրացուցիչ կին էլ տվեք… նոր տան մեջ ո՞վ է երեխաներին պահողը:

Համոզում էին, հոգու հետ խաղալով ասում էին, թե մի հրաժարվի, աճող ընտանիք ես, եթե աստված կամենա՝ բարով-խերով կարող է դեռ մի քանի աղջիկ էլ ունենաս, մինչև տղա ունենալը: Իսկ նա ժպտում էր անչար ու գլուխը թափահարելով ասում՝ աղջիկ ունեցողների ինքնամխիթարանքով.

- Սուտ է, սուտ, ես ձեզ օրինակ, տղան մի մարդու բան չի…

Իլյուստրացիայի բաժնի վարիչ Քաջիկ Սահառունին, որ համատեղության կարգով նաև լուսանկարիչ էր, տեղացի չէր: Ըստ չար լեզուների, հանրապետության բոլոր բարձրագույն հաստատություններում քննություններից կտրվելուց հետո, պտտվելով-պտտվելով այս քաղաքն էր հասել և վերջապես ընդունվել գյուղատնտեսական տեխնիկում: Եվ այն էլ ոչ թե իր գիտելիքներ համար, այլ որովհետև իբր համաձայնվել էր ամուսնանալ տեխնիկումի դիրեկտոր Կայծակ Չոփուրյանի տանը մնացած դստեր հետ: Այդպես էր եղել թե չէ, ո՞վ կարող

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

էր ստույգ իմանալ: Բայց փաստն այն էր, որ նրա աներն իրոք Կայծակ Չոփուրյանն էր, ողջ քաղաքի համար հասարակական կարգով անստորագիր նամակներ գրողը, իսկ կինն էլ Կայծակ Չոփուրյանի միակ աղջիկն էր՝ Մարգուշա անունով, որին չորս անգամ անհաշտ բնավորության պատճառով տարել, հետ էին բերել, և հավանաբար հինգերորդ անգամ կտաներ ու հետ կբերեր նաև Քաջիկ Սահառունին, եթե տանելու տեղ ունենար: Բայց նա տանելու տեղ չուներ, ինքն էր տնփեսա մնացել Կայծակ Չոփուրյանի տանը և գոնե արտաքնապես խոնարհ ու անմռունչ տանում էր աներոջ արհամարհական դիտողությունները և նրա տարեց դստեր կամակորություններն ու չարաճճիությունները: Բայց ինչպես իմաստուն կերպով նկատել է ժողովուրդը, չկա չարիք առանց բարիքի: Համատեղ կյանքի առաջին իսկ ամիսներին, համոզվելով, որ աները շատ է սիրում խաչբառ լուծել, աներոջ անտանելի ուշադրությունն իրենից շեղելու համար Քաջիկ Սահառունին սկսում է խաչբառեր կազմել հատուկ նրա համար: Որպեսզի տանջվի: Ավելի ու ավելի հետաքրքիր ու բարդ խաչբառեր: Եվ այնքան է վարպետանում այդ մասնագիտության մեջ, որ սկսում է խաչբառ կազմել նաև թերթի համար: Ու երբ խմբագիր Մկրտիչ Զուլոյանը ձախ ձեռքով ճակատը տրորելով հարցնում էր պատասխանատու քարտուղարին, թե ի՞նչ անենք չորրորդ էջը հետաքրքիր դարձնելու համար, բոլորը գիտեին, որ հիմա ուր որ է կհնչի Քաջիկ Սահառունու աղաչական ձայնը…

- Ես խաչբառ ունեմ, ընկեր Զուլոյան…

Այնպիսի մի զարմանալի կարեկցանք և համակրանք կար ՔԱՋԻԿ Սահառունու նկատմամբ, որ երբ նա նույնիսկ կոպիտ սխալ էր թույլ տալիս, խառնում, շփոթում էր մակագրությունները ու ասենք քիմիագործ վետերան բանվորների լուսանկարների տակ գրում՝ Ամեն օր այ այսպես ուրախ թռչկոտում են N3 մանկապարտեզի սաները, դարձյալ նրան չէին պատժում: Միշտ գտնվում էր մեկը, որ հիշեցնում էր.

- Մեղք է, էլի, նրան ինչ պատիժ, երբ մարդը ցմահ կրում է իր պատիժը Կայծակ Չոփուրյանի ընտանիքում:

- Հա, հա, առանց այդ էլ կայծակի խփած է…

Խմբագրության մյուս աշխատակիցներից առանձնացած, գրասեղանի դիմացի բազմոցին միայնակ նստած էր թերթի կուսակցական կյանք բաժնի վարիչ և խմբագրության կուսակցական բջջի քարտուղար Նիկողայոս Սևյանը: Նրան խմբագրություն էին բերել քաղկոմից, որտեղ գրեթե մեկ տարի ղեկավարել էր պրոպագանդայի բաժինը և այդ ժամանակամիջոցում, ինչպես խմբագիրն էր սրամտում, փորձել էր սիրային խաղի միաժամանակյա սեանս անցկացնել մեքենագրուհու, գրադարանավարուհու և հավաքարարուհու հետ: Մրցամարտը ավարտվել էր խոշոր սկանդալով, վերոհիշյալ կանանց ամուսինները մի օր նրան դիմավորել էին մութ զբոսայգում, որից հետո շտապ օգնության մեքենան նրան հիվանդանոց էր տարել:

Ու թեև նա ուշքի գալուց հետո հիվանդանոցում խոհեմաբար հայտարարել էր, թե դեմքի կապտուկները, մարմնի վնասվածքներն ու դուրս ընկած աջ ձեռքը ոչ թե ինչ որ մարդկանց ծեծի արդյունք են, այլ հետևանք մութ զբոսայգում ինչ-որ փոսի մեջ ընկնելուն, բայց դա չէր փրկել նրան: Թերթի կուսակցական կյանք բաժնի զարմացած վարիչին ուղարկել էին

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

կուսդպրոց սովորելու, իսկ Նիկողայոս Սևյանին խորհուրդ տվել անաղմուկ գրավել նրա տեղը:

Ո՞վ գիտե, երևի այնքան էլ ճիշտ չէ, երբ ասում են, թե ծեծից օգուտ չկա: Համենայնդեպս անհատական մոտեցում է պետք: Որովհետև մութ զբոսայգում տեղի ունեցած մութ պատմությունից հետո Նիկողայոս Սևյանը կերպարանափոխվեց: Նա այնքան էր սարսափում որևէ կնոջ հետ մենակ մնալուց, որ խմբագրին աղերսեց իր սենյակից տեղափոխել ինֆորմացիայի և մշակույթի բաժնի վարիչ Մարո Մելիքյանին- Եվ փոխարենը բերել ում ուզում է՝ թեկուզ Ջիվան Ենգոյանին, թեկուզ Միհրան Գալստյանին կամ թեկուզ երկուսին էլ միասին:

Իսկ թռուցկաժողովների ժամանակ նա միշտ միայնակ նստում էր խմբագրի դեմ դիմաց, բազմոցին և ինչ հարց էլ որ քննարկելիս լինեին, ասում էր.

- Քաղկոմում մենք այդ հարցը բոլորովին այլ կերպ էինք լուծում:

Խմբագիրը խուլ ու խռպոտ ձայնով թռուցկաժողովի արդյունքներն էր ամփոփում, իսկ Զավեն Շարաֆյանը պատուհանի մոտ նստած նայում էր փոքրիկ հրապարակին, որտեղ արդեն տիրություն էր անում աշունը: Խեղճացած նոսրացած ծառերից օրացույցի թերթիկների նման պոկվում, դանդաղ-դանդաղ ցած էին թափվում դեղնած տերևները և օջախի շեղջեր դառնում մայթերի վրա:

Դեպի ձորը տանող ճանապարհի եզրերին, դեմ-դիմաց երկու նոր տներ էին բարձրանում և բանվորներն, ինչպես մանկական բանաստեղծներն են գրում, իրոք որ ժրաջան մեղուների նման շտապ-շտապ կարմիր կղմինդրներն էին շարում տանիքների վրա: Մեկ էլ տեսար անձրևը վրա տվեց: Արևը տաք էր դեռ ու հաճելի: Մի քանի ծերունիներ, ձեռնափայտերը ոտքերի արանքում, գլուխները կախ արևկող էին անում Լենինի արձանի պատվանդանի ցածրիկ աստիճաններին նստած:

- Ես ուրախ եմ և ուզում եմ բոլորդ ինձ հետ ուրախանաք, որ մեր կոլեկտիվում իր հաստատուն տեղն է գրավում Զավեն Շարաֆյանը,- հանկարծ լսեց Զավենը: - Եվ կարող եմ ոչ միայն իմ անունից ասել, որ նրա մուՏքը թարմ հոսանք էր մեր խմբագրությունում: Արդեն պարզ երևում է, որ թերթը քաղաքային տնտեսության և կենցաղի բաժին ունի: Զավեն Շարաֆյանը բարեխիղճ ու կարգապահ աշխատող է: Բոլորովին չէր խանգարի, որ մեր որոշ ընկերներ նմանվեին նրան:

- Զավենին ի՞նչ կա,- գլուխը բարձրացրեց պատասխանատու քարտուղար Միհրան Գալստյանը,- ոչ սիրած աղջիկ ունի…

- Ոչ աներ-- ավելացրեց արդյունաբերության բաժնի վարիչ Ջիվան Ենգոյանը:

- Եվ ոչ էլ գոնե ութ աղջիկ,- անմիջապես խայթեց նրան իլյուստրացիայի բաժնի վարիչ Քաջիկ Սահառունին:

Խմբագիրն իր խոսքը շարունակեց այնպես, ասես չէին եղել ոչ ռեպլիկները, ոչ էլ դրանց հաջորդած քրքիջը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Թեև Զավեն Շարաֆյանը նոր մարդ է մեր քաղաքում, բայց անկեղծորեն պետք է ասեմ, որ նա շատ ավելի լավ է տեսնում և վեր հանում քաղաքային տնտեսության թերություններն ու բացթողումները, քան մենք՝ այսպես ասած, հնաբնակներս: Նրա գրելու ոճը պարզ է, գեղեցիկ, հարցադրումները ուղղամիտ և սուր: Ուզում եմ կանգ առնել հենց այս համարում տպագրված նրա «Լուսանկարչության պատմությունից» ֆելիետոնի վրա…

Ավելի քան մի ամիս շարունակ ամեն օր, աշխատանքից հետո, իսկ կիրակի օրերին առավոտից երեկո, Զավեն Շարաֆյանը քաղաքային շուկայում էր անցկացնում: Նրան հանգիստ չէին տալիս տանտիրուհու ամուսնու փաստորեն ողբերգական և անհեթեթ մահը, հարբեցող և խուլիգան եղբայրներ Աղոն ու Վաղոն, նրանց անպատիժ դուրս պրծնելն այդ պատմությունից, նրանց սանձարձակ ու լկտի շանտաժը խմբագրի նկատմամբ: Եվ նա ուզում էր առայժմ գոնե իր համար պարզել, թե իրականում ինչ են ներկայացնում իրենցից Աղոն ու Վաղոն, այսինքն Աղաբեկ և Վաղարշակ Տիտանյանները: Ինչով են զբաղվում, ինչով են ապրում, գլխարկ կարողնե՞ր են միայն, թե գլխարկ կարելը սոսկ վարագույր է նրանց համար: Անհավատալի էր թվում, թե միայն գլխարկ կարելով նրանք կարող են հովփանալ ու տեռորի ենթարկել իրենց ողջ շրջապատը և նույնիսկ համարձակվել օրը ցերեկով, ողջ, շուկայի աչքի առաջ, միլիցիայի տեղամասային տեսուչ Սիմոն Հալաբյանի գլխից քաշքշելով հանել նրա համազգեստի գլխարկը և նետել ոտքերի տակ, հռհռալով, թե,

- Դու մենակ մեր կարած գլխարկը պետք է հագնես:

Այդ և նմանատիպ ուրիշ փաստերի մասին Զավեն Շարաֆյանը իմացավ երկու անստորագիր նամակներից, որոնք մի քանի այլ նամակների հետ միասին նրան ժառանգություն էին մնացել խմբագրության քաղաքային տնտեսության և կենցաղի բաժնի նախկին վարիչից:

Աղո և Վաղո եղբայրների լկտիությանը իրոք որ սահման չկար: Նամակի հեղինակներից մեկը պատմում էր հենց իր հետ կատարված դեպքի մասին:

«Անցնում էի շուկայի դիմացի մայթով, մեկ էլ հանկարծ զգացի, որ գլխարկ կարողների կրպակի մոտ կանգնած երկու մարդ իմ մասին են խոսում.

- Էդ ո՞նց է քայլում, արա, Վաղո, տեսնո՞ւմ ես դրան…

- Ոնց որ հնդուհավ լինի,- քրքջաց Վաղոն:

- Դրա ման գալու ձևն ինձ դուր չեկավ, արա, գնա մի հատ հասցրու վզակոթին:

Ու մեկ էլ հանկարծ սարսափահար նկատեցի, որ մի մեծ մկրատ ձեռքին չխկչխկացնելով ինձ է մոտենում այդ Վաղո կոչվածը: Նա բռնեց իմ ձեռքն ու ասաց.

- Քո ման գալը ոչ ինձ է դուր գալիս, ոչ էլ Աղոյին, մեկ էլ էս կողմերով չանցնես:

- Բայց ինչի՞ համար, ի՞նչ եմ արել,- զարմացա ես:

- Մի երկարացրու,- հեռվից բղավեց Աղոն: - Հասցրու…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ Վաղոն հենց մկրատը մատների մեջ, խփեց իմ գլխին: Ես ցած ընկա, իսկ նա հայհոյելով ոտքերով հարվածում էր ինձ: Ես օգնություն էի կանչում, բայց ոչ ոք չմոտեցավ: Նույնիսկ նկատեցի, թե ինչպես էր շուկայից շտապով հեռանում միլիցիայի համազգեստ հագած մի մարդ: Բոլորը վախենում էին նրանցից:

Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ… ինչպե՞ս են անպատիժ մնում այդ խուլիգանները: Մի՞թե անտեր է մեր քաղաքն ու տերը նրանք են դարձել»:

Ահա թե ինչու էր օրեր շարունակ շուկայի այս ու այն կողմում հայտնվում Զավեն Շարաֆյանը, զրույցի բռնվում մարդկանց հետ, և ավելի շատ ականջ դնում ուրիշների խոսակցությանը, երկար նստում կեղտոտ քյաբաբանոցում՝ մի բաժակ պղտոր ու անհամ գարեջրի բաժակի առջև:

Հենց այդ ժամանակ էլ նա, ինչպես ասում են ձեռքի հետ, որոշեց ֆելիետոն գրել շուկայի մի անկյունը զբաղեցրած լուսանկարչի մասին: Նման լուսանկարիչներ նա էլի էր տեսել թե Երևանում, թե Լենինականում և թե ընդհանրապես ամենուրեք, որտեղ շուկա կա: Նրանք աշխատում են պատրաստի դեկորներով: Փայտե շրջանակին ձգված քաթանի վրա հասակով մեկ նկարված է մի լեռնական չերքեզ՝ փափախով ու յափնջիով, աջ ձեռքը դաշույնի բռնակին դրած: Ամեն ինչ նկարված է, բացի դեմքից: Դեմքի փոխարեն կլոր անցք կա և երբ պաստառի ետևում թաքնված հաճախորդը գլուխը դուրս է հանում անցքից ու նկարվում, դառնում է ահարկու չերքեզ:

Տարբեր պաստառներ կան: Մեկն էլ կործանիչ ինքնաթիռ է պատկերում և եթե գլուխդ ներս ես մտցնում անցքից, անմիջապես վերածվում ես ռազմական օդաչուի: Ըստ որում օդանավի վրա սովորաբար պահեստի մի անցք էլ է լինում և ամուսինների հետ շուկա եկած կանանցից շատերն են ուզում նույն օդանավում լինել իրենց ամուսինների հետ՝ թեկուզ հրաձիգ-կապավորի դերում:

- Մեկ ուրիշը կգրեր՝ խայտառակություն է, նման լուսանկարչի գոյությունը պատիվ չի բերում մեր քաղաքին,- ոգևորված շարունակում էր Մկրտիչ Զուլոյանը - Բայց Զավեն Շարաֆյանը տեսեք ինչ նրբությամբ է մոտենում խնդրին: Ես կարդում եմ. “Պետք է ուրախանալ, որ մեր շուկայի նկարիչ Պետրոս քեռին ու նրա գործընկերները այլ քաղաքներում, նրանց անդրջրհեղեղյան լուսանկարչական սարքերն ու դեկորատիվ միջոցները, որ ժպիտ են հարուցում հիմա, դարձել են պատմություն և էկզոտիկա: Եվ նրանց պետք է հենց այդպես էլ պահպանել՝ իբրև թանգարանային նմուշ, իբրև հուշ անցյալի, ինչպես կառքերն են պահպանվում Երևանում և Լենինականում, սահնակները՝ Լենինգրադում և ուղտերը եգիպտական բուրգերի մոտ: Սակայն դրանց կողքին, դրանց հետ միաժամանակ պետք է կառուցել այսօրվա քաղաքացուն վայել լուսանկարչական սրահ, որը հագեցած լինի ժամանակակից առաջնակարգ տեխնիկայով և կարողանա՝նույն պատմության համար այսօրվա քաղաքացու իրական ու ճշմարիտ պատկերը թողնել: Եթե նախկինում, մի կարգին շոր չունենալով հագին, մարդը ուզում էր թաքնվել ներկված պաստառի ետևում և գոնե նկարում վայելուչ հագուստ ունենալ, ապա նա այսօր ամաչելու հարկ չունի: Ուրեմն լուսանկարեք նրան այնպես, ինչպես ինքը կա, ինչպես աշխատում ու ապրում է կյանքում: Իսկ ի՞նչ է անհրաժեշտ դրա համար: Անհրաժեշտ է, որ քաղխորհրդի կենցաղսպասարկման կոմբինատի ղեկավարները ևս վարդագույն հեռաստաններ պատկերող և նորի ու

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

առաջավորի համար կոչ անող պաստառների անցքերի միջից հեռացնեն իրենց ժպտացող ու գոհ դեմքերը, դուրս գան նկարների ետնից և հասարակության առջև հայտնվեն այնպես, ինչպես կան՝ իրենց անտարբերությամբ և անհեռատեսությամբ:

Այնժամ, ով գիտե, գուցե թե նրանք կարմրեն մի քիչ և վերջապես ձեռնամուխ լինեն քաղաքային լուսանկարչական սրահի շենքի շինարարությանը»:

- Ահա թե ինչպես պետք է գրել, ընկերներ,- ավարտեց իր խոսքը խմբագիրը:

Մարո Մելիքյանը, որ խմբագրի վերջին խոսքերն էր արտագրում իր հաստ տետրի մեջ, բարձրացրեց գլուխն ու Մկրտիչ Զուլոյանին նայեց՝ սպասելով, թե նա էլի ինչ կասի, Եվ խմբագիրը չդիմացավ ու ասաց նյարդայնանալով,

- Այ աղջիկ, ես այնքան չէի խոսում, ինչքան դու գրում էիր: Մարդ իմանա, թե իսկապես ինչ ես գրում շարունակ…

Մարո Մելիքյանը շիկնեց, գլուխը տետրի վրա դրեց ու լաց եղավ: Իսկ երբ թռուցկաժողովի մասնակիցները խմբագրի ձեռքի շարժումով լուռ խնդմնդալով ու բավարարություն ստացած վրիժառությամբ դուրս եկան սենյակից: Մարոն բարձրացրեց գլուխը, Մկրտիչ Զուլոյանին նայեց խռոված, արցունքակալած աչքերով ու մրմնջաց,

- Ես ի-ի՞նչ, ի՞նչ անեմ, ասեք, ես ի-ի՞նչ մեղավոր եմ, որ ձեր բ-բոլոր մտքերը իմաստուն են…

Ու տետրը արագորեն վերցնելով՝ դուրս փախավ առանձնասենյակից:

* * *

Դեռ հեռվից նկատելով, որ սոսնձի դույլը ու մեծ վրձինը ձեռքին մի տղա մշակույթի տան ազդագիրն է փոխում, տարօրինակ մի զուգորդությամբ: Զավեն Շարաֆյանը փոքրիկ այն հայտարարությունը հիշեց հյուրանոցի պատին, որտեղ գյուտարար Արմեն Զատիկյանը տեղեկացնում էր աշխարհին, թե կորցրել է հավատը: Տուն վարձելուց հետո հենց հաջորդ օրը երեկոյան Զավեն Շարաֆյանը գնաց ու գտավ Մայիսմեկյան փողոցի N2 շենքը, որտեղ գյուտարարն էր ապրում: Բայց պարզվեց, որ նա տանը չէ: Ստիպված սեղմեց հարևանի զանգի կոճակը: Հարևանը, որն ատամնատեխնիկ էր և այցելուների սովոր, առանց Զավենի դեմքին նայելու, կիրովաբադցու առոգանությամբ ասաց.

- Կոշիկներդ հանի, ըստեղ տապչկեք կան, վեններդ գցի- յե…

Զավեն Շարաֆյանը ժպտաց.

- Ես ձեր հարևանին եմ ուզում, բայց դուռը փակ է: Չգիտե՞ք երբ կգա…

Ատամնատեխնիկը նրան նայեց զարմացած.

- Պույ,- քրթմնջաց նա: - Ման կյալի մարթ ես քթալ- Կապովի գիժ ա, է, գիժ- նեսչաստնի պսիխ- Հո՞վ գիդա թե երբ կկյա- նրա ոչ կյալն ա մեզ պետք, ոչ քնյալը…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մյուս օրը տրիկոտաժի ֆաբրիկա զանգահարեց: Կադրերի բաժնի վարիչը երկար ժամանակ հետաքրքրվում էր, թե ո՞վ է Արմեն Զատիկյանին հարցնողը և Զավենի ներկայանալուց հետո միայն դժկամությամբ ասաց, որ արձակուրդ է վերցրել ու մեկնել Երևան:

- Կորցրած հավատի ետևի՞ց,- հարցրեց Զավեն Շարաֆյանը:

-Ի՞նչ,- չհասկացավ կադրերի բաժնի վարիչը:

Զավեն Շարաֆյանը ցած դրեց լսափողը:

Տղան փակցրեց նոր ազդագիրը, ձեռքը սահեցնելով հարթեց այն ու ետ քաշվելով այնպիսի մի կեցվածք ընդունեց, ինչպես նկարիչներն են նայում իրենց ստեղծագործություններին:

Զավենը մոտեցավ, կարդաց նրա թիկունքից ու հանկարծ զգաց, թե ինչպես է հուզված, տագնապով բաբախում սիրտը: Ազդագրի վրա գրված էր, որ կիրակի օրը ցերեկվա ժամը երկուսին դպրոցական ֆիլհարմոնիայի ծրագրով ելույթ են ունենալու Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի մենակատարներ Էմմա Ալիքյանը և Կարլոս Մավրիկյանը: Ծրագրում՝ Սեն Սանս, Պրոկոֆև, Սպենդիարյան, Խաչատրյան:

Էմմա Ալիքյանը: Էմման… Զավեն Շարաֆյանի առաջին ընկերուհին:

Նրանք նույն մանկապարտեզն էին հաճախում Աբովյան փողոցի վրա, կառուցողների տանը: Նստում էին նույն փոքրիկ , սեղանի մոտ, փոքրիկ աթոռներին, կակաոյի մեջ թաթախած սպիտակ հաց էին ուտում, նայում էին իրար ու երջանիկ էին: Նրանց ուրիշ ոչինչ պետք չէր: Իսկ երբ ընկեր Անիկը շարք էր կանգնեցնում երեխաներին, որպեսզի զբոսանքի տանի, Էմման ու Զավենը միշտ հայտնվում էին իրար կողքի, իրար ձեռք բռնած: Մանկապարտեզի վարիչ ընկեր Արուսը նայում էր նրանց ու ծիծաղում էր.

- Ըհը, էլի գտան իրար:

Մի անգամ, երբ լուսանկարիչ էր եկել, երեխաներին ինքը դասավորեց երեք շարքով, ըստ հասակի: Էմման պստիկ-մստիկ էր, առաջին շարքը ընկավ, իսկ Զավենին լուսանկարիչը տարավ ու երրորդ շարքի ծայրին կանգնեցրեց: Արդեն ուզում էր լուսանկարել, նույնիսկ ասաց. «Տեսեք, հիմա ծիտիկ է թռչելու այս խողովակից, այստեղ նայեք, երեխաներ, ու ժպտացեք»: Բայց ժպտալու փոխարեն Էմման լաց եղավ:

Լուսանկարիչը զարմացավ:

- Ինչո՞ւ ես լաց լինում, բալիկս- ծիտիկի՞ց ես վախենում:

- Չէ,- աչքերը տրորելով ասաց Էմման,- ուզում եմ Զավենի կողքին լինեմ:

Բոլորը ծիծաղեցին, նույնիսկ երեխաները:

- Զավենն ո՞վ է,- հարցրեց լուսանկարիչը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես եմ,- անկյունից առաջ եկավ շրթունքները ուռցրած տղան,- ես էլ եմ ուզում Էմմայի կողքին լինեմ…

Ընկեր Անիկը ինչ-որ բան շշնջաց լուսանկարչի ականջին, ու նրանք ուրախ փռթկացին՝ ձեռքի ափերով բերանները փակած: Իսկ հետո լուսանկարիչը մի փոքրիկ աթոռ բերեց, դրեց առաջին շարքի կենտրոնում, Էմմային կրկին իր տեղում կանգնեցրեց, իսկ Զավենին էլ նստեցրեց կողքին, աթոռի վրա:

- Հիմա գոհ եք,- հարցրեց նա:

Լուսանկարում Էմման ու Զավենը ժպտում էին որպես պատասխան:

Հետագայում Զավեն Շարաֆյանը լուսանկարների ալբոմը թերթելիս հաճախ էր նայում այդ լուսանկարին և զարմանքով տեսնում, որ Էմմայից գեղեցիկ շատ աղջիկներ են եղել մանկապարտեզի իրենց խմբում: Այդ ինչպե՞ս է, որ ինքը չի նկատել: Այդ ինչպե՞ս է, որ միայն պստիկ ու սևուկ այդ աղջկա ձեռքն է ցանկացել բռնել, նրա կողքին լինել, նրա աչքերին նայել: Նույնիսկ տուն էր ուղեկցում: Երբ դուրս էին գալիս

մանկապարտեզից ու բարձրանում Աբովյանով, Կնունյանց փողոցի անկյունում պետք է բաժանվեին: Զավենը աջ կողմում էր ապրում, տպարանի դիմացի շենքում, իսկ Էմմայենց տուն հասնելու համար պետք էր խաչմերուկից ձախ թեքվել ու բավականին քայլել Պուշկինի փողոցով:

Եվ ամեն, ամեն օր, աջ թեքվելու փոխարեն Զավենը ձախ էր թեքվում և Էմմային ուղեկցում մինչև նրանց շենքը: Հետո կանգ էր առնում ու սպասում այնքան, մինչև որ Էմման չորրորդ հարկ բարձրանա ու պատշգամբից ձեռքով անի թե գնա, կարող ես ապահով լինել արդեն, ես տանն եմ:

Երբեմն իհարկե անհարմար էր զգում Զավենը, երբ Էմմայի հետ նրանց շենքի անկյունը հասնելով, տեսնում էր, որ իրենց դստեր ուշանալուց անհանգստացած, պատշգամբից կախված ցած էին նայում Էմմայի հայրն ու մայրը: Հենց տեսնում էին Էմմային ու նրա կողքից անբաժան Զավենին, ծիծաղում էին ուրախ և չգիտես ինչու տարուբերում գլուխները: Իսկ Էմման, ասես դիտավորյալ, ձեռքով էր անում նրանց, շարունակում զրուցել Զավենի հետ: Եվ նրանք դեռ երկար-երկար կանգնում ու խոսում էին: Ախր այնքան բաներ ունեին ասելու իրար:

Հետո ակամա բաժանվեցին: Էմմային ծնողներն ընդունեցին դպրոց՝ օպերայի մոտ, իսկ Զավենը սկսեց հաճախել իրենց տան մոտ գտնվող դպրոցը:

Իհարկե, հետագայում Զավենը ուրիշ ընկերուհիներ ունեցավ: Հենց առաջին դասարանում Էմմայի նման մի փոքրիկ, սևուկ աղջիկ կար՝ Ռոզալիա անունով: Զավենը նրա կողքին էր նստում, աշակերտական նստարանին: Երբ նրա գրիչի ծայրը ջարդվում էր, իր գրիչն էր տալիս նրան ու ինքը «երկու» ստանում, ամեն օր ուղեկցում նրան ու խոստանում, որ հենց մեծանա, «պուդրի ու կրասկա» է առնելու նրա համար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սակայն չթողեցին, որ նրանք միասին մեծանան: Սկսվել էր Հայրենական պատերազմը: Նրանց դպրոցը օդաչուների ռազմական դպրոց դարձավ և երեխաներին ցրեցին, բաժանեցին ուրիշ դպրոցների վրա: Ո՞ւմ պետքն էր, թե Զավենն ու Ռոզալիան ուզում են իրար կողքի լինել: Նրանց տարբեր դպրոցներ տեղափոխեցին: Բայց կյանքը կյանք է, և ինչպես իմաստուններն են համոզում՝ ժամանակը բուժում է վերքերը: Իսկ ո՞ւմ հայտնի չէ, որ երեխաների ոչ միայն ոտքերի ու ձեռքերի վերքերն են շատ արագորեն բուժվում ու սպիանում, այլև սրտի վերքերը: Եվ բաժանվելը այնքան մեծ ցավ չի պատճառում նրանց, ինչպես մեծերին, Երևի հենց դա է պատճառը, որ երրորդ դասարանում Զավենն արդեն նոր ու սրտամոտ մի այլ ընկերուհի ուներ՝ այս անգամ շեկ մազերով ու բաց կապույտ աչքերով, որի հետ նստում էր նույն նստարանին, նրա ծանր պայուսակը ինքն էր երջանկացած տանում տուն և հենց նրանց տանն էլ միասին պատրաստում էին հաջորդ օրվա դասերը:

Քանի որ Զավեն Շարաֆյանը քրոջ ու ծնողների հետ մի սենյակում էր ապրում, Աստղիկենց երեք սենյականոց բնակարանը հեքիաթի պալատ էր թվում նրան: Հատկապես ապշեցնում էր այն, որ Աստղիկը առանձին սենյակ ունի, իր սենյակը, իսկական գրասեղանով ու բազմոցով, որի վրա պատից ծաղկազարդ գորգ էր իջնում, գրապահարաններով ու բազկաթոռներով, որոնց արանքում ցածրիկ մի սեղան էր դրված, իսկ սեղանի վրա ծաղկաման՝ միշտ թարմ ծաղիկներով:

Աստղիկն ու Զավենը նստում էին գրասեղանի մոտ և լուծում խնդիրները, անգիր անում ոտանավորները, կատարում գրավորները, և Զավենին շատ էր դուր գալիս, որ Աստղիկը լսում ու ենթարկվում էր նրան աշակերտի պես և աշակերտի նման էլ պատասխանում նրա հարցերին և նույնիսկ շիկնում գովասանքից: Մեղմ ու հաճելի էր Աստղիկի ձայնը, բայց հոգու խորքում հո Զավենը կարող էր խոստովանել իրեն, որ շատ ավելի հաճելի էր հնչում Աստղիկի մոր ձայնը, երբ կանչում էր,

- Աստղիկ, Զավեն, հայրիկը եկել է: Արագ-արագ լվացվեք և եկեք ճաշելու:

Ի պատիվ իրեն, Զավենը ամեն անգամ կարողանում էր գոնե ձևականորեն հրաժարվեր

- Ոչ, ոչ, Սաթիկ տյոտյա, ես ուշանում եմ, մայրիկս կսպասի ինձ:

- Կճաշենք, նոր կգնաս,- ամեն անգամ փաղաքշաբար ժպտում էր Աստղիկի մայրը:

- Մոտ եկ, տղաս, մոտ եկ,- իր հերթին ձայն էր տալիս Աստղիկի հայրը: - Ինձ ևս հաճելի է տղամարդու հետ սեղան նստելը: Մ՞ի-մի բաժակ չխմե՞նք,- կատակով աչքով էր անում նա, կոնյակ լցնելով իր բաժակը:

Զավենը սովոր էր, որ ճաշին մի տեսակ կերակուր մայրը դնի սեղանին: Ասենք՝ սպաս, մակարոնով ապուր կամ տոլմա: Կամ-կամ: Եվ պատճառն այն չէր, որ պատերազմ էր աշխարհում և հետզհետե շատ ու շատ ավելի մեծ հոգս էր դառնում մոր համար, թե ինչ գտնի ու դնի սեղանին: Չէ, նույնիսկ պատերազմից առաջ, առատ տարիներին ճաշը մի տեսակ էր լինում Զավեն Շարաֆյանի ընտանիքում:

Իսկ այստեղ ուրիշ էր: Տիկին Սաթիկը նախ ջրալի ապուր էր մատուցում, արտակարգ համեղ ու հոտավետ որևէ բան, հետո սեղանին էր դնում փլավը, տոլման, իշխան ձուկը կամ կճուճով

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

չանախը և վերջում անպայման միրգ էր տեղավորում սեղանին՝ զարմանալի գեղեցիկ դեղձեր, տանձեր ու խաղող: Իսկ ամենավերջում Աստղիկի հայրիկն ասում էր ամեն անգամ.

- Իսկ հիմա մի լավ ձմերուկ կտրի, Սաթիկ ջան, որ ես ու Զավենը պանիրով մի-մի կտոր ուտենք: Ձմերուկից ու պանրից լավ բան աշխարհում չկա: Կտրի, կտրի, կնիկ ջան, պատերազմ է, ո՞վ գիտի, թե վաղն ինչ կգա գլխներիս: Քանի կա՝ ուտենք…

Եվ Զավեն Շարաֆյանը մտածում էր ինքն իրեն, որ եթե կա էլ պատերազմը, ապա իրենց տանն է, որ այս տանը հաստատ պատերազմ չկա:

Հետո նա ամեն անգամ խղճի խայթ էր զգում՝ հիշելով իր մտքերը, որովհետև երկու թե երեք ամիս հետո պատերազմը Աստղիկենց տուն էլ մտավ: Բանակ կանչեցին նաև նրա հորը, որին մինչ այդ չէին զորակոչում շինարարության ղեկավար լինելու համար, իսկ հետո երևի մտածել էին, թե պատերազմ է, ի՞նչ շինարարություն, ինչ բան, երբ եղածն էլ քանդվում է, ու տարան նաև նրան:

Եվ Աստղիկենց տանն էլ ճաշը մի տեսակ դարձավ:

Ու թեև Զավենն ու Աստղիկը որոշել էին մինչև իրենց կյանքի վերջը միասին պատրաստել դասերը ու նույն նստարանին նստել, բայց դա էլ չհաջողվեց նրանց: Ռուսաստանից գնացք-գնացքի ետևից վիրավորներ էին բերում, տեղ չկար, այդ էր պատճառը, որ նրանց դպրոցը քաղաքի ուրիշ շատ դպրոցների նման դարձրին զինվորական հոսպիտալ, իսկ աշակերտներին նորից ցրեցին քաղաքով մեկ:

Բայց դա էլ համարելով քիչ, չգիտես ինչու, հանուն ինչի վճռվեց, թե պատերազմի ժամանակ հարմար չէ, որ տղաներն ու աղջիկները նույն դասարանում իրար հետ սովորեին և երեխաներին ընդմիշտ բաժանեցին իրարից:

Ու այդպես էլ ընդմիշտ բաժանվեցին նաև Զավենն ու Աստղիկը:

Որքան էլ տարօրինակ թվա, կարծես թե առանց սրտամոտ աղջկա կյանք չունեցող Զավենը, տղաների դպրոցն ավարտեց առանց որևէ մտերիմ ընկերուհու: Եվ համալսարանում սովորելու տարիներին նույնպես չհանդիպեց որևէ մեկի, որին ուզենար ուղեկցել տուն, Տերյան կարդալ միասին Ղուկասյանի այգում՝ կամ իբրև թե պատահաբար կինոնկարի տպավորության տակ շոյեր նրա ուսը կինոթատրոնի մթնած սրահի մեջ:

Արդեն վերջին կուրսում էր, երբ մայրը մի օր հիշեցրեց նրան.

- Այ տղա, ուր որ է ավարտելու ես համալսարանը, բա էդքան աղջիկների մեջ մեկը չկա , որ թևիցը բռնես տուն բերես:

Զավենը ծիծաղեց.

- Որտե՞ղ բերեմ, մամ ջան, դե թող մեկը Սիրանին տանի, ես էլ մեկին բերեմ:

Սիրանը կաս-կարմիր կտրեց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես քո կարմիր լույսն եմ, հա՞ ,- փնչացրեց նա:

- Կարմիրն էլ, կապույտն էլ, դեղինն էլ- Դու իմ ծիածանն ես, Սիրան ջան:

- Կեղծավորություն մի արա, մայրիկից երբեք չեմ բաժանվելու:

Զավենը կեղծ հառաչեց:

- Քննարկումը համարենք ավարտված: Առաջարկություն կա, կոմունալ կենցաղային ծանր պայմանների պատճառով որևէ մեկին տուն բերելու հարցը օրակարգից հանել: Ովքեր համաձայն են, թող ձեռք բարձրացնեն:

Բայց մայրը համաձայն չէր:

- Աղջիկ է՛ խոսում է, էլի, այ բալա, հո ես գիտեմ քանի ուզողներ ունի: Դու քո մասին մտածի, քո~ …

Զավենը գրկեց մորը և ծիծաղելով որդուց ազատվելու զուր ջանքերի վրա, նրան վեր բարձրացրած մոտեցրեց զգեստապահարանի հայելուն.

- Մամ ջան,- ասաց հևալով,- դու գոնե մի անգամ ինձ կարգին նայե՞լ ես: Չէ, ասա, նայե՞լ ես: Դե հիմա նայիր ուշադիր, ինչպես շուկայում ես սոխ ընտրում: Ինձ ո՞վ աղջիկ կտա, այ մեր: Քիթս մեծ, աչքերս մեծ, բեղերս ցանցառ, մազերս զզզված, գրպանս դատարկ…

Մայրը անօգնական ծիծաղեց:

- Բաց թող, այ կրակ, բաց թող, այ գիժ…

- Գժությունը դեռ մի կողմ, դա իմ ամենամեծ արատը չէ. դու մի շորերիս նայիր, մեր ջան, ոնց որ բանջարանոցի ծտերին վախեցնող խրտվիլակի վրայից թռցրած լինեմ: Ինձ ո՞վ պիտի հավանի, այ քո ցավը տանեմ:

Ու նա քնքշությամբ ցած իջեցրեց մորը:

Բայց մայրը մինչև հոգու խորքը վիրավորված էր:

- Ով որ քեզ չհավանի, ուրեմն աչք չունի,- կտրականապես հայտարարեց նա: - Ամեն տեղ քեզ մատով են ցույց տալիս:

- Ու փոթկացնում են,-- հեռվից նետեց Սիրանը:

- Դու ձենդ կտրիր,- ավելի զայրացավ մայրը: - Կարծում եք, տիկին Եսթերն ու հացի խանութի Վարդուշը վերջերս հենց էնպե՞ս են շուտ-շուտ մեր տուն գալիս- Մատս որ բարձրացնեմ երկուսի աղջիկներն էլ մեր տանը կլինեն:

- Չբարձրացնես, ցավդ տանեմ,- սարսափահար բղավեց Զավենը: - Սիրան ջան, գոնե հանուն տանը մնացած աղջիկ դառնալու քո պայծառ ապագայի, մամայի մատը պինդ բռնիր…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ջրիկ - ճչաց Սիրանը:

Ծիծաղեցին, ծիծաղեցին ու լռեցին հոգնած: Ու մեկ էլ որտեղից որտեղ մայրը հարցրեց հանկարծ,

- Զավեն, Էմմային իսկի տեսնո՞ւմ ես…

- Ի՞նչ Էմմա,- անկեղծ զարմացավ Զավենը…

- Հիշո՞ւմ ես,- ասաց մայրը,- մանկապարտեզում միշտ իրար ձեռք էիք բռնում, Մի քանի անգամ էլ մեր տուն ես բերել: Շատ համով աղջիկ էր:

Եվ Զավենը զգաց, որ սրտում ինչ-որ բան շարժվեց:

- Այ թե հիշողություն ունես, մեր ջան,- ասաց նա ծիծաղելով և միաժամանակ զարմանալով, որ հուզվում է:

- Գիտե՞ս որտեղ , ի՞նչ է անում,- շարունակեց մայրը:

Սիրանը հեգնորեն ժպտաց.

- Հիմա ամբողջ քաղաքը գիտի, թե նա որտեղ է և ինչ անում:

Չնայած իր հեգնական տոնին, Սիրանն այս անգամ չէր չարախոսում: Քաղաքի որ անկյունում ասես՝ ազդագրերի վրա Էմմայի անունն էր: Էմմա Ալիքյան: Զավենը էլի էր կարդացել այդ անուն-ազգանունը զանազան ազդագրերի վրա, բայց երբևէ մտքով չէր անցել, թե դա պստիկ ու սիրունիկ այն սևուկ աղջիկն է, որին ինքը մանկապարտեզից տուն էր ուղեկցում և որի ձեռքը բռնելը հպարտությամբ էր լցնում նրա սիրտը: Իսկ մի անգամ, երբ Սիրանի հետ ինչ-որ տեղ էին գնում, Օպերայի այգին շրջափակող երկաթի բարձր ճաղերին փակցված մեծ պաստառի վրա նա նորից կարդաց այդ աղջկա անուն- ազգանունը խոշոր լուսանկարի տակ. Հետո լուսանկարին նայեց ու ցնցվեց ակամա:

- Քեզ ի՞նչ պատահեց, այ տղա,- հարցրեց Սիրանը:

- Էմման է,- շշնջաց Զավենը՝ հայացքը չկարողանալով կտրել լուսանկարից: - Մեր մանկապարտեզի Էմման է, Սիր:

- Նա, որ մանկապարտեզի լուսանկարում քո կողքի՞ն է,- զարմացավ Սիրանը:

- Նա է,- ասաց Զավենը: - Ինչքան սիրուն է, չէ՞ …

- Նկարներում նրանք բոլորն էլ սիրուն են,- մի տեսակ խանդոտ ձայնով, արհամարհանքով նետեց Սիրանը: - Ի՞նչ է, դու չգիտեիր, որ նա պարուհի է դարձել:

- Մանկապարտեզից հետո ոչ մի անգամ նրան չեմ տեսել,- ասաց Զավենը,- Զարմանալի է, չէ՞ :

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ձեզ ի՞նչ կա,- անմիջապես ընդհանրացրեց քույրը: Հենց այդ օրն էլ Զավենը մտածեց, թե ի՞նչ կլինի, եթե գնա ու հանդիպի Էմմային: Հետաքրքիր է, հաստատ շատ հետաքրքիր է, թե Էմման ինչպես կդիմավորի: Կճանաչի անմիջապես, թե զարմացած կթոթվի ուսերը- Ի՞նչ մանկապարտեզ, ինչ Զավեն, ինչ բան: Մանավանդ որ նշանավոր պարուհի է դարձել, սովորել ծափերի ու ծաղկեփնջերի:

Մյուս կողմից էլ մտածում էր, թե ազնիվ բան չէ, որ երկար տարիներ կորցնելուց հետո գտնում ես մանկությունդ և չես ուզում հետը հանդիպել: Ի վերջո դրա մեջ ի՞նչ կա, հո պարտադիր չէ, որ առաջվա նման գնաս բռնես թաթիկը և ուղեկցես տուն: Մոտեցիր, շնորհավորիր հաջողությունների համար, ասա, որ ուրախ ես կրկին տեսնելով նրան, ուրախ ես, որ նրա լուսանկարներն ու անունը ազդագրերի վրա է…

Իսկ նա չի՞ ասի, թե որտեղ էիր այսքան ժամանակ, սիրելի ընկեր, կամ ինչպես Պուշկինը, չի՞ հարցնի, «Որտեղի՞ց ես դու հրաշալի մանուկ»: Հա, բայց նույն ձևով էլ ինքը կարող է հարցնել, թե դո՞ւ որտեղ էիր, սիրելի ընկերուհի, չէ՞ որ ասում էիր, թե մինչև մեր կյանքի վերջը մանկապարտեզից իրար հետ տուն կգնանք:

Թե պատահաբար հանդիպեցինք՝ հանդիպեցինք, իսկ եթե չէ՝ հաստատ չեմ գնա, վճռեց Զավեն Շարաֆյանը, թեև շատ էր ուզում, անտանելի, անսահման շատ էր ուզում տեսնել աղջկան, գոնե հեռվից, բայց տեսնել:

Իսկ հիմա մայրը.

- Գնա տես էդ աղջկան,- ասաց նա: - Էդ աղջիկն իմ սրտի մեջ մնացել է:

Ու Զավենը մի հաճելի դողով մտածեց, որ ինչքան էլ տարօրինակ թվա, «էդ աղջիկն» իր սրտի մեջ էլ է մնացել:

Նրան ընդամենը մի փոքրիկ մղում էր պետք, մի փոքրիկ, թեթևակի հրում:

Եվ որովհետև նա հարազատ որդին էր իր հոր, որի մասին ասում էին, թե նա առաջ գործ էր անում ու հետո միայն մտածում այդ գործի մասին, հաջորդ օրը Զավեն Շարաֆյանը իր ունեցած-չունեցած լավագույն շորերը հագին հայտնվեց օպերայի ծառայողական մուտքի մոտ:

- Ներեցեք, Էմմա Ալիքյանը թատրոնո՞ւմ է,- հարցրեց նա ամաչելով ու հուզմունքից խռպոտած ձայնով:

- Փորձի է, - ասաց տարիքավոր կինը՝ ուշադիր ուսումնասիրելով նրան:

- Իսկ փորձը ե՞րբ կավարտվի:

- Ժամը երկուսին,- ասաց կինը:

Զավենը նայեց ժամացույցին: Ընդամենը տասնմեկն անց էր հիսուն րոպե:

“Որ գնացի, էլ չեմ գա»,- մտածեց նա հուսահատությամբ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ով գիտե երևի նրա մտքերը ճակատին գրված էին, որովհետև պառավ կինը անմիջապես ասաց,

- Տասներկուսին ընդմիջում է: Եթե շտապ է գործը, կասեմ, որ իջնի:

- Թող իջնի, - խնդրեց Զավենը:

Կինը բարձրացրեց հեռախոսի լսափողը և, առանց որևէ համար հավաքելու, ինչ-որ բան ասաց լսափողի մեջ ու դարձավ Զավենին:

- Հիմա կիջնի, տղաս…

Զավեն Շարաֆյանը զգաց, որ ոտքերը թուլանում են: Մինչև վերջին վայրկյանը նա ինչ-որ հույս ուներ, թե հանդիպումը չի կայանալու: Թե ինչու՝ չգիտեր, բայց համոզված էր, որ չի ստացվելու և վերջ: Իսկ այս կինն ասում է, թե հիմա կիջնի:

Զավեն Շարաֆյանը երկար ու բարձր սանդուղքին նայեց, որտեղից իջնելու էր Էմման, հետո կռացրեց գլուխը, կոշիկներին նայեց, որոնք այնքան էլ նոր չէին, ավելի ճիշտ՝ բոլորովին նոր չէին, բայց մայրը խնամքով մաքրել ու ներկել էր, հետո տաբատին նայեց, որի գծերը ուղիղ էին, և ընդհանրապես մի առանձին թերություն չուներ սրճագույն տաբատը, բայց ով չէ, հո գոնե ինքը տեսնում էր, որ ձախ գծի մոտ սիգարետի վառած հետք կա և թեև մայրն ամեն ինչ արել էր, որ հետքը չերևա, բայց երևի հենց այդ պատճառով էլ երևում էր: Իսկ դեղին վերնաշապիկը առաջին անգամ էր հագնում: Վերնաշապկի մասին խոսք լինել չէր կարող:

Զավեն Շարաֆյանը մի անգամ էլ նայեց սանդուղքին և տեսավ նրան: Նա կյանքում, իհարկե, հրեշտակ չէր տեսել, բայց համոզված էր, որ եթե տեսներ՝ հենց այդպիսին էր լինելու հրեշտակը և հենց այդպես էր վերևից իջնելու: Էմմայի հագին սպիտակ պարազգեստ էր, որն օրորվում էր նրա յուրաքանչյուր քայլի հետ, մազերը ետ էին սանրված և կապված մի հսկայական սպիտակ թիթեռնիկով: Նա ոչ թե իջնում, այլ ասես ճախրում էր՝ սպիտակ մաշիկների թաթերից հրվելով և լայն բացած, խոշոր, սև աչքերով ծանոթի էր փնտրում կիսախավար սրահում:

- Ինձ ո՞վ էր հարցնում, Թաքուշ ջան,- հարցրեց նա մի ձայնով, որից ալեկոծվեց տղայի հոգին:

Կինը հայացքով Զավենին ցույց տվեց:

Էմման կանգ առավ ու կկոցեց աչքերը, իսկ հաջորդ վայրկյանին երեխայի նման ուրախացած ու զարմացած ճչալով ցած նետվեց սանդուղքից, մոտ եկավ, նորից նայեց ու միանգամից տղային մեկնեց երկար, սպիտակ ձեռքերը,

- Զավեն, սիրելիս, Զավեն ջան, իմ կորած ընկեր, Զավեն ջան, դու ես …

- Ես եմ,- խեղդվելով ասաց տղան: - Ես եմ, Էմմա…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սկզբում նույնիսկ մտածեց, թե Էմման շփոթում է, թե ուրիշի տեղ է դրել իրեն, լավ ծանոթ ու հարազատ որևէ մարդու տեղ, և ամաչում էր, որ ուրիշին ուղղված խոսքերն ինքն է ընդունում: Թե հիմա սարսափելի բան կկատարվի, եթե աղջիկն զգա իր սխալը:

- Որտե՞ղ էիր, ի՞նչ էիր անում, ես քեզ միշտ հիշել եմ, գիտես, մաման ու պապան էլ են միշտ հիշում: Բա որտե՞ղ էիր, որ չէիր գտնում ինձ: Իսկ հիմա ո՞նց գտար, Զավեն- Չէ՞, ինչ սխալ:

- Քեզ գտնելը հիմա այնքան էլ բարդ բան չէ, Էմմա,- ասաց Զավենը: - Ես քեզ ամբողջ սրտով շնորհավորում եմ՝ փառքի համար և փառքի մեջ էլի Էմմա մնալու համար:

Էմման ծիծաղեց երջանիկ:

- Թաքուշ, Զավենը իմ մանկապարտեզի ընկերն է, գիտես,- դու ինձ տեսե՞լ ես բեմի վրա, Զավեն: Չե՞ս տեսել: Ուզո՞ւմ ես տեսնել, հենց այսօր, ես քեզ համար դրամարկղում հրավիրատոմս կթողնեմ:

- Էմմա, ես ուզում եմ խոսել քեզ հետ:

- Խոսե՞լ,- ասես թե զարմացավ աղջիկը: - Երբ-- նա նայեց պահակի գլխավերևում կախված ժամացույցին: - Օյ, ես ուշանում եմ- Հիմա ի՞նչ ես ասում, կգա՞ս ներկայացմանը…

- Իսկ ներկայացումից հետո կարո՞ղ ենք խոսել:

- Ինչքան ուզում ես,- ծիծաղեց աղջիկը,- տասնհինգ տարվա փոխարեն միանգամից,- ետ-ետ գնաց մանրիկ ոտքերի վրա, հետո շրջվեց միանգամից ու արագ սահելով, ճախրելով վեր բարձրացավ, հասավ սանդուղքի ծայրը, շրջվեց նորից ու ձայն տվեց,

- Ազգանունդ էլի Շարաֆյա՞ն է, Զավեն:

- Հա,- ասաց Զավենը,- դեռ չեմ ամուսնացել:

Էմման ծիծաղեց ու աներևույթացավ, համբարձվեց ասես, իսկ պահակ կինը շարունակում էր ծիծաղել, չէր ծիծաղում, քրքջում էր, և երբ Զավենը դուրս եկավ շենքից, նրա քրքիջը դեռ հնչում էր տղայի ականջների մեջ:

* * *

- Զավեն:

- Ինչո՞ւ ոչ մի անգամ իմ կողմը չնայեցիր, Էմմա, հո գիտեիր որտեղ եմ նստած:

- Դահլիճում նստած որևէ մեկին նայել չի կարելի: Դա արտիստներին տրվող առաջին դասն է:

- Բայց ես որևէ մեկը չեմ, ես քո մանկության ընկերն եմ, Էմմա…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դրա համար էլ ես հիմա քո կողքին եմ:

Նրանք քայլում էին օպերայի այգու ծառուղով, որի երկու կողմերում նստարաններ կային:

- Նստենք, հա, Զավեն, պիտի խոստովանեմ, որ շատ հոգնած եմ:

Զավենը սպասեց մինչև նստի աղջիկը ու նոր միայն տեղավորվեց նրա կողքին:

- Հոգնած եմ,- կրկնեց տղան,- այդքան որ դու էիր պարում, այդքան որ դու էիր շարժվում, տառապում բեմի վրա…

- Տառապանքը երևո՞ւմ էր,- իմիջիայլոց հարցրեց Էմման:

Զավենը թափահարեց գլուխը:

- Չէ, բայց ես հո գիտեմ, թե այդ թեթևությունը բեմում ինչ տառապանքով է ձեռք բերվում…

Աղջիկը հանգստացած շունչ քաշեց:

- Ես բալետից, ճիշտն ասած, քիչ բան եմ հասկանում,- անկեղծ խոստովանեց տղան: -Բայց երբ նայում էի քեզ, սիրտս ուռչում էր մի տեսակ, չէ, ոչ թե քեզ, այլ այն աղջկան, որի դերը դու կատարում էիր: Ապշելու բան է, թե շարժումները ինչ ազդեցություն կարող են գործել մարդու վրա: Հանկարծ զգացի, որ լացս գալիս է գեղեցկությունից- Դու այնքան գեղեցիկ էիր, Էմմա, և քո շարժումները այնքան էին ներդաշնակ, կատարյալ ու ճիշտ…

- Ճի՞շտ..,

- Ճիշտ, հասկանալի, անկեղծ- Ուրիշ ի՞նչ բառ ես ուզում: Գուցե քեզ ծիծաղելի թվա, բայց ինձ համար արվեստի չափանիշը ճիշտն է, ճշմարտությունն է, անկեղծությունն է, որտեղ էլ լինի այն՝ գրականության մեջ, կտավի վրա, երաժշտության մեջ թե բեմում: Ըստ որում ինչը ինձ այնքան էլ չի հուզում, ինչպեսն է հուզում: Կինոնկարում, բեմի վրա անտարբեր կարող եմ դիտել, թե ինչպես են դանակահարում, մարդ սպանում, նույնիսկ թե ինչպես է որբանում երեխան և ներսումս ոչինչ չի շարժվի, իսկ բավական է մայրը որդուն ճիշտ, անկեղծ ասի ամենասովորական բառերը, ասենք թե՝ «Տաք հագնվիր, տղաս, հանկարծ չմրսես», որ զգամ, թե աչքերս ինչպես են արցունքով լցվում:

- Դու դեռ այն ժամանակ էլ լացկան էիր, չե՞ս հիշում, թե ինչպես էիր ձայնդ գլուխդ գցել, երբ լուսանկարիչը մեզ տարբեր տեղեր կանգնեցրեց,- ծիծաղեց Էմման:

- Ե՞ս- տեղից վեր թռավ Զավենը: - Հենց դու էիր տզզում:

- Բոլորովին, այնքան արեցիր, մինչև որ ընկեր Արուսը քեզ բերեց ինձ մոտ նստեցրեց:

- Լավ, լավ, թող քո ասածը լինի,- համաձայնվեց Զավենը: - Քեզ հետ այն ժամանակ էլ վիճել չէր լինում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Այ այդպես, - գոհունակ ժպտաց աղջիկը: - Իսկ ընկեր Անիկին, ընկեր Արուսին երբևէ տեսե՞լ ես, Զավեն:

-Ընկեր Անիկին չէ, բայց ընկեր Արուսին հաճախ եմ տեսնում, նա էլի մանկապարտեզի վարիչ է, գիտե՞ս, բայց շատ է ծերացել: Միանգամից կոտրվեց, երբ պատերազմում զոհվեց նրա որդին:

- Ռոբերտը՞ …

- Ռոբերտը: Հիշո՞ւմ ես նրան:

- Ինչ սիրուն տղա էր,- տխրեց աղջիկը:

Նրանք երկար լռեցին, և տղան փորձեց փոխել խոսակցության նյութը:

- Ես մինչև հիմա քո ելույթի տպավորության տակ եմ, Էմմա, ասես հենց նոր հեքիաթ տեսած լինեմ: Շատ գեղեցիկ էր ամեն ինչ: Երանի թե կյանքն էլ այդքան գեղեցիկ լիներ:

Էմման բռնեց նրա ձեռքը:

- Հիմա իմ կյանքը, հեքիաթը, երազը միայն ու միայն բեմն է: Դու գիտես, դու հասկանում ես, Զավեն, որ դա նաև ամենածանր ֆիզիկական աշխատանքն է, բայց ես տասնապատիկ ծանր աշխատանքի ու տառապանքի եմ համաձայն, միայն թե երբ բեմ դուրս գամ՝ դահլիճը պահի շունչը: Գիտե՞ս դա ինչ զգացողություն է:

- Պատկերացնում եմ:

- Իսկ հիմա չգիտեմ ինչ անել,- մտածկոտ ասաց Էմման: -- Լենինգրադ են հրավիրում՝ Կիրովի անվան օպերայի և բալետի թատրոնում աշխատելու: Դա գիտե՞ս ինչ պատիվ է, գիտե՞ս ինչ թատրոն է դա- Բայց հազար ու մի հարց կա, ընտանեկան խնդիրներ կան, և ամենակարևորը՝ ասես թե դավաճանում ես քո ուսուցիչներին, ընկերներին, որոնք հույսեր են կապել քեզ հետ: Մի խոսքով, իսկական երկընտրանքի մեջ եմ, չգիտեմ որ ճանապարհով գնամ…

Բայց հո զուր չէր, որ Զավենը իր հոր հարազատ որդին էր.

- Ես քեզ մի ուրիշ ճանապարհ եմ առաջարկում, Էմմա,- շշնջաց ժպտալով, ասես միանգամից թոթափելով ուսերի ծանրությունը:

- Ի՞նչ ճանապարհ,- դեռևս իր մտքերի մեջ, զարմացած նրան նայեց աղջիկը,

- Մեր տան,- ասաց Զավենը- ճանապարհ դեպի մեր տուն…

- Ինչո՞ւ,- դեռևս ոչինչ չհասկանալով, հարցրեց Էմման հետո հասկացավ միանգամից, տղային նայեց տարակուսանքով և ցնցվելով բաց թողեց նրա ձեռքը:

Զավենին այլ բան չէր մնում, քան շարունակել հարձակումը.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Երևի տասնհինգ տարի առաջ շատ մեծ բան է եղել, որ մնացել է մինչև հիմա ու ինձ քեզ մոտ է բերել: Եկ նորից չկորցնենք իրար, հա՞, եթե հակառակը լինի, հետո ո՞վ գիտե երևի շատ ափսոսանք: Դու գիտե՞ս, որ մայրս էլ է հիշում քեզ: Ես ամաչում էի, չգիտեի ինչ անել, որ տեսնեմ քեզ: Իսկ մայրս ինձանից անկախ, երդվում եմ, ես նրան ոչինչ չէի ասել, բացարձակապես ինձանից անկախ ասաց՝ գնա ու գտիր Էմմային: Ու գիտե՞ս էլի ինչ ասաց, իր լեզվով, «էն աղջիկն իմ սրտի մեջ մնացել է»:

Աղջիկը հանկարծ ժպտաց, երևի Զավենի մորը հիշեց և այդ ժպիտը քաջալերեց տղային:

- Ես քեզ իմ մասին դեռ ոչինչ չեմ հասցրել պատմել, Էմմա: Այս տարի ավարտում եմ համալսարանը, ժուռնալիստ եմ դառնալու: Դեռ չգիտեմ, իհարկե, թե որտեղ աշխատանքի կնշանակեն: Հավանաբար շրջան, բայց դա ի՞նչ նշանակություն ունի… Կարևորն այն է, որ իմ սիրած աշխատանքով եմ զբաղվելու… Արդեն մի քանի անգամ տպագրվել եմ թերթերում, ռադիո են հրավիրել…

- Ես շատ ուրախ եմ քեզ համար, Զավեն,- նորից ժպտաց աղջիկը: - Հիանալի մասնագիտություն է: Եվ անուն-ազգանունդ էլ սազում է, գիտե՞ս: Զավեն Շարաֆյան: Ոնց որ գրական կեղծանուն լինի:

- Էմմա,- չդիմացավ, տեղից բարձրացավ Զավենը և կանգնեց աղջկա դեմ-դիմաց: - Ես քո պատասխանին եմ սպասում, Էմմա, որպեսզի աշխարհի ամենաերջանիկ մարդը դառնամ:

Աղջիկը այլևս չէր ժպտում:

- Ես հազար պատճառաբանություն կարող էի բերել, որոնք անհնար են դարձնում քո առաջարկը, Զավեն:

- Ի՞նչ, ի՞նչ,- անհամբեր հարցրեց տղան, ցավագնորեն զգալով, որ հողը փախչում է ոտքերի տակից:

- Կարող էի ասել, որ առանց բեմի ապրել չեմ կարող: Եվ դա քո սիրած ճշմարտությունն է: Կարող էի ասել նաև, թե ինչպե՞ս ես պատկերացնում իմ կյանքը շրջանում, որտեղ գուցե նշանակեն քեզ: Ես տանը պետք է նստեմ, իսկ դու քո սիրած մասնագիտությա՞մբ զբաղվես: Իմ մասնագիտությունը հարգանքի արժանի չէ՞: Ես այլևս ոչինչ չունե՞մ տալու բեմին: Ի վերջո կարող էի ասել, թե ես բոլորովին այլ պայմաններում եմ ծնվել ու մեծացել և գոնե առաջիկայում դու չես կարող ինձ համար քիչ թե շատ տանելի մթնոլորտ ստեղծել:

- «Ես և նա՞» -հարցրեց Զավենը, զգալով, որ շունչը կտրվում է

- Չեղավ, Զավեն,- նույն մեղմությամբ շարունակեց աղջիկը, - Նար-Դոս ես էլ եմ կարդացել: Ես այդ բոլոր պատճառաբանությունները մեջտեղ եմ բերում և կարող եմ քեզ համար վիրավորական շատ ուրիշ պատճառաբանություններ բերել, միայն ու միայն ասելու համար, որ էականը դրանք չեն: Դու զարմանալիորեն չես հարցնում ամենակարևորի մասին: Թե՞ դա հիմա այնքան էլ կարևոր չէ…

- Սերը՞- հարցրեց տղան,- միթե դա հասկանալի չէ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չէ- ասաց Էմման,- եթե դա լիներ, ես պատճառաբանելու ոչինչ չէի ունենա: Ես կասեի, գնանք, Զավեն, ուր ուզում ես: Շրջա՞ն: Գնանք, ի՞նչ կա որ, ի՞նչ պարտադիր է, որ միշտ բեմում լինեմ, հիմա էլ կաշխատեմ, որ իմ սաները բեմ բարձրանան: Կասեի ի՞նչ պայմաններ, կաշխատենք ու կապրենք ինչպես բոլորը, սիրելի մարդ, որտեղ էլ գտնվենք, ինչ պայմաններում էլ ապրենք, մենք երջանիկ կլինենք, քանի որ սիրում ենք իրար: Մեզ ուրիշ ոչինչ պետք չէ: Բայց ես հիմա այդ ասել չեմ կարող.

- Ինչո՞ւ, ախր ինչո՞ւ,- հուսահատ մրմնջաց տղան:

- Որովհետև ես ուրիշի եմ սիրում, փոքրիկ Զավեն,- նորից ժպտաց Էմման:

- Ո՞ւմ, նրա՞ն, որ անընդհատ պարում էր քեզ հետ, գրկում ու բարձրացնո՞ւմ էր…

- Չէ, - այս անգամ ծիծաղեց աղջիկը: - Իմացիր, որ որպես կանոն՝ բալետի պարողները հազվադեպ են ամուսնանում իրար հետ: Իմ ասածը ուրիշ մարդ է: Այ, եթե նա ասի՝ թող բեմը, որքան էլ ծանր լինի ինձ համար, կհեռանամ թատրոնից: Իմ փառքը, իմ պատիվը, իմ այսպես կոչված բարեկեցությունը, ամեն-ամեն ինչ կզոհեմ նրա համար: Եթե նա ասի գնանք թեկուզ ամենահեռավոր, սարերի մեջ կորած գյուղը, անտրտունջ կհետևեմ նրան: Բայց նա ինձ ոչինչ չի ասում, հասկանո՞ւմ ես, իմ ցավն էլ այն է, որ նա ինձ ոչինչ չի ասում:

Տղային մեծ ջանքեր էր պետք արժանապատվությամբ հեռանալու համար,

- Որե՞մն…

- Ուրեմն աշխատենք այլևս չկորցնել իրար, հա՞, Զավեն: Իմացիր, սրանից հետո ես ամենուրեք փնտրելու եմ քո անուն- ազգանունը՝ թերթերում և ամսագրերի մեջ: Եվ հպարտությամբ ասելու եմ բոլորին, «Զավեն Շարաֆյա՞նը, Զավեն Շարաֆյանը իմ ընկերն է»: Ես քեզ կտամ իմ հեռախոսի համարը և միշտ ուրախ կլինեմ, եթե քո ձայնը լսեմ: Իսկ դու քո հեռախոսի համարը տուր, հա՞ …

- Ես հեռախոս չունեմ,- հեռախոսի և մնացած ամեն ինչի համար հառաչեց Զավենը:

* * *

Նա նորից նայեց ազդագրին: Ուրեմն կիրակի օրը ցերեկվա ժամը երկուսին: Անպայման կգա ու ծաղիկներ կբերի: Մի լավ ծաղկեփունջ: Եվ դա նրա կյանքում կլինի առաջին դեպքը, երբ ձեռքին ծաղկեփունջ կունենա: Եվ Էմման էլ կլինի առաջին աղջիկը, որին նա ծաղկեփունջ կմատուցի: Ճիշտ է, չգիտի նույնիսկ, թե ինչ ձևով պետք է բռնի ծաղիկները և ինչպես մատուցի, բայց դա հավանաբար կստացվի ինքնին:

Ինչպես ինքն էր հետագայում ծիծաղելով հիշում՝ գրեթե մի տարի առաջ սիրո նրա «բլից» խոստովանությունը և Էմմայի նույնքան «բլից» մերժումը զարմանալիորեն դառը նստվածք չէին թողել տղայի սրտում: Ինչ որ բան կար, իհարկե, ինչ-որ ցավ մնացել էր, բայց դա ոչ թե վիրավորվածության, ոչ թե նվաստացման հետևանք էր, այլ ավելի շուտ՝ հուսախաբության:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երբ վստահ ես, որ ձեռքդ կհասնի, բայց չի հասնում և դու զուր, ապարդյուն ջանքեր ես գործադրում դեպի վեր ձգվելու:

Բայց եթե անկեղծ լինենք, դա ի՞նչ ավելորդ ինքնավստահություն էր, Զավեն Շարաֆյան, այդ ինչո՞վ էիր լցնում այն տասնհինգ տարիները, որ մշուշով ծածկված անդունդի նման ընկած էին ձեր միջև ե դու ոչ միայն տեղեկություն չես ունեցել, այլև գոնե չես էլ փորձել իմանալ, թե կա՞ արդյոք այդ աղջիկը ե եթե կա՝ ի՞նչ է անում, ինչպե՞ս և ինչով է ապրում: Եթե դու տասնհինգ երկար ու ձիգ տարիներ, եթե չասենք չես հիշել, ապա գոնե անվրդով ու հանգիստ նույն քաղաքում ապրել ես առանց նրա, այդ ի՞նչ պատահեց հանկարծ, որ մի օրում փոխվեց ամեն ինչ: Որ հանկարծ մտածեցիր, թե մնացած ողջ կյանքդ առանց նրա ապրել չես կարող: Ուրեմն Էմման, նույնիսկ եթե ազատ լիներ, անմիջապես պետք է համաձայնվեր նստարանից վեր կենալ ու ձեր տուն գալ: Ինչո՞ւ, որովհետև ավարտում էիր համալսարանը, և դիպլոմ ձեռք բերելու հետ միասին չէր խանգարի նաև կին ձեռք բերել ու միանգամից լուծել բոլոր հարցերը: Ինչո՞ւ, որովհետև մայրդ շտապեցնում էր քեզ և հիշեց մանկապարտեզի քո ընկերուհուն: Չեղավ, չէ, Զավեն Շարաֆյան, իսկապես չէր խանգարի, եթե դիպլոմիդ հետ մի քիչ էլ խելք ու նրբանկատություն ձեռք բերեիր: Բայց դրանց համար ոչ մի տեղ քննություն չեն պահանջում: Դեռ շնորհակալ եղիր, որ այդ ամենը Էմման ուներ և քեզ մեղմ ու քնքշորեն մի այնպիսի դաս տվեց, որ դու մինչև կյանքիդ վերջը չմոռանաս: Եվ բախես միայն այն տան դուռը, որտեղ սպասում են քեզ:

- Բարև, որդի…

Զավենը շրջվեց ու զգաց, որ կարմրում է՝ հանցանքի վայրում բռնված տղայի պես: Նրան մի պահ թվաց, թե այդ մտքերը բարձրաձայն է ասել և դիմացը կանգնած ծեր կինը լսել է ամեն ինչ:

- Բարև ձեզ, Անուշ մորաքույր,- ժպտաց նա, անմիջապես ճանաչելով նրան:

- Ապրի արևդ, տղա ջան, թող քո սրտի բոլոր ցանկությունները կատարվեն,-ձեռքերը կրծքին դրած մաղթեց ծեր կինը: - Ուր ոտք դնես, կանաչի, փրկվեցին թոռներս-Դպրոց կանչեցին, ոտքից գլուխ հագցրին բալեքիս…

- Իսկ վերանորոգումը լրիվ վերջացրի՞ն,- ուրախացած հարցրեց Զավենը:

- Լրիվ, մինչև վերջ, գնալիս էլ ներողություն խնդրեցին, ցավդ տանեմ…

- Շատ ուրախ եմ, Անուշ մորաքույր: Եթե հանկարծ էլի որևէ բանի կարիք ունենաք, համարեք, որ ձեր տղան եմ՝ խմբագրությունում նստած:

Ծեր կինը ուզեց ինչ-որ բան ասել, չկարողացավ, փղձկաց ու գնաց մանրիկ քայլերով՝ կռացած իր տարիքի ու հոգսերի բեռի տակ:

Նրա միակ որդին անհետ կորել էր պատերազմում, տանը երեք մանրիկ զավակներ թողնելով: Պատերազմի հենց առաջին տարում կույր աղիքի բորբոքումից մահացել էր նաև հարսը, և երեք որբեր էին տատի հույսին: Երկու տարի շարունակ տարաբախտ տատը սրա-նրա տանը գործ էր անում և նույնիսկ ստիպված ճանապարհի կողքին կանգնում, անցորդներին էր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

մեկնում ձեռքը, որպեսզի կարողանա մի կերպ պահել թոռներին: Մինչև պարզվեց, որ ոչ թե անհետ կորել, այլ զոհվել է որդին, և որբերին թոշակ նշանակեցին: Եվ կարծես թե քիչ էր ճակատագրի անգութ հարվածը, մնացածն էլ թոշակի թղթերը ձևակերպող քարսիրտ կինն ավելացրեց:

- Կարող ես ուրախանալ: Զոհվել է տղադ, երեխաներին թոշակ ենք նշանակում:

Եվ Անուշ մորաքույրը, որի շուրթերից օրհնանքից բացի ոչ ոք որևէ ուրիշ բառ չէր լսել, չդիմացավ, հեծկլտաց.

- Աստված չանի, որ քո տունը էդպիսի ուրախություններով լցվի…

Երբ հարևանների նամակի հիման վրա Զավեն Շարաֆյանը գնաց գտավ այն տունը, որտեղ Անուշ Թագվորյանն ու իր թոռներն էին ապրում, բառացիորեն մնաց ափիբերան, աչքերին չէր հավատում: Այդպիսի աղքատություն ու թշվառություն նա ոչ մի տեղ չէր տեսել:

- Ամեն ինչ էլ ունեինք,- լաց եղավ Անուշ մորաքույրը,- ծախեցի, որ երեխաներս չմեռնեն սովից:

Տանը երկու թախտից և մի երկար չոր սեղանից բացի ուրիշ ոչինչ չկար: Սենյակի հենց մեջտեղում հավանաբար գիշեր-ցերեկ վառվում էր փայտի վառարանը: Այլ կերպ հնարավոր չէր, որովհետև մի կողմում քանդված էր տանիքը, գերաններից երկուսը կախվել էին ցած և դրանց արանքից երևում էր կապույտ երկինքը:

- Ինչո՞ւ զինկոմիսարիատ չեք դիմել,- զարմացավ, ցավ զգաց երիտասարդ լրագրողը: - Չէ՞ որ դուք զոհվածի ընտանիք եք:

- Բա չե՞մ դիմել, տղա ջան,- մղկտաց տանտիրուհին, - ասում են ի՞նչ անենք, հիմա ո վ չէ զոհվածի ընտանիք:

- Իսկ քաղխորհո՞ւրդ…

- Երկու անգամ ես եմ գնացել, թոռներիս էլ տարել եմ հետս՝ խոսք են տվել, թե կզբաղվենք: Բայց ոչ մեկն էլ մինչև հիմա չերևաց:

Եվ Զավենը գրեց կյանքում իր առաջին դաժան ու միաժամանակ սրտաճմլիկ հոդվածը: Գրեց այնպես, ինչպես ոխերիմ թշնամու դեմ կգրեն: Գրեց մարդկային անգթության և երախտամոռության մասին: Այն մասին, թե ինչպես, երբ հայրենիքը վտանգի մեջ էր, քսանհինգամյա Պետրոս Թագվորյանը առանց զորակոչի սպասելու, ժամ առաջ կամավոր մեկնեց ռազմաճակատ, կռվեց և հերոսաբար ընկավ Կերչի գեհենում, հանուն հայրենիքի: Իսկ նրանք, ում ապրելու համար զոհվել է մարտիկը, զինկոմիսարիատի և քաղխորհրդի գործկոմի սոցապ բաժնի փափուկ աթոռներին նստած, այսօր խաղաղ պայմաններում հարկ չեն համարում օգնության ձեռք մեկնելու ընկած զինվորի մորն ու զավակներին: Երբ նրանցից զոհողություն և մարտիրոսություն չի պահանջվում, այլ ընդամենը մի բան, որ բարեխղճորեն կատարեն իրենց պարտականությունները, որոնց համար պետությունը վճարում է նրանց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Անուշ մայրիկի երկաթապատ հին սնդուկի մեջ պահված նամակների միջից Զավեն Շարաֆյանը գտավ զարմանալիորեն այդ վիճակը կանխատեսող համապատասխան տողեր: Զինվորին այնուամենայնիվ շատ էր մտահոգել ընտանիքի ճակատագիրը:

«Իմ չքնաղ զավակներ, սիրելի Քնարիկ, սիրելի Մեսրոպ, և սիրելի Մուշեղ և իմ անուշ Անուշ մայրիկ ջան, և իմ կյանքի տանջված ընկերուհի Մանուշակ ջան, սուտ չեմ ասի, տեղներս դժվար է, զենքի նեղություն ենք քաշում, բայց կռվում ենք ճակատներս բաց, որովհետև գիտենք, թե ում և ինչի համար ենք կռվում: Որովհետև հույս ունենք, որ եթե, աստված չանի, մեզ մի բան պատահի, հայրենիքը անտեր չի թողնի իր զինվորի ընտանիքին»:

Ընդգծված սև տառերով մեջ բերելով այս տողերը, հոդվածագիր Զավեն Շարաֆյանը հարցնում էր հուզված.

«Հայրենիքի զինվոր Պետրոս Թագվորյանը տարիների հեռվից, 1942 թվականի նոյեմբերի 15-ին, թշնամու մահացու կրակի տակ այդ նամակը ձեզ է հասցեագրել զինկոմիսարիատի և սոցապբաժնի ընկերներ, և պատասխանի է սպասում: Ի՞նչ եք պատասխանելու զոհված մարտիկին»,

«Լուսաբացի» խմբագիր Մկրտիչ Զուլոյանը կարդում էր հոդվածը՝ գլուխը էջերին հակած, երբեմն-երբեմն ինչ-որ խուլ ձայներ հանելով ու հարբուխ ընկածի նման վեր քաշելով քիթը, Հետո հոդվածը մի կողմ հրեց, բարձրացրեց գլուխն ու խռպոտ ձայնով ասաց.

- Առանց որևէ բան փոխելու տպարան եմ ուղարկում: Ապրես, Զավեն: Հուզվեցի: Ապրես: Այնպես ես գրել, ասես այդ ընտանիքի ցավը քո միջով է անցել:

Զավեն Շարաֆյանը կնճռոտեց ճակատը…

- Այդ ցավը իմ միջով էլ է անցել, ընկեր Զուլոյան, իմ հայրն էլ է զոհվել Կերչում, 1942 թվականին, և ես ու իմ քույր Սիրանը նույնպես անհայր ու անտեր ենք մեծացել:

-Զավեն Շարաֆյանը խոր շունչ քաշեց ու սովորականի պես քայլերն ուղղեց դեպի շուկա: Ընդամենը տասնհինգ օրվա մեջ վերանորոգեցին Անուշ Թագվորյանի տունը, մտածում էր նա: Անմիջապես միջոցներ գտան, օգնություն ձևակերպեցին, երեխաներին հագուստներ նվիրեցին: Բա մինչև հիմա որտե՞ղ էիք, մարդ աստծո, անպայման ստիպվա՞ծ պիտի կատարեք այն, ինչը ձեր առօրյա աշխատանքը պետք է լինի: Պարտադի՞ր է, որ որևէ մեկը հրի, ցնցի ձեզ, արթնացնի, հուշի, հիշեցնի ձեզ, որ մարդ մնաք: Մարդ եղեք, էլի…

Շուկային դեռ չէր հասել, երբ տեսավ տեղամասային միլիցիայի տեսուչ Սիմոն Հալաբյանին, որը զրուցում էր երիտասարդ մի կնոջ հետ՝ համազգեստի գլխարկը ձեռքին ամուր բռնած:

Երիտասարդ լրագրողը քմծիծաղ տվեց: Երևի վախենում է, թե Աղոն ու Վաղոն նորից կձգեն, կհանեն գլխից ու ոտքերի տակ կգցեն, մտածեց նա:

Կանգ առավ, սպասեց այնքան, մինչև որ կինը ձեռքով անելով ու ծիծաղելով հեռացավ ու նոր միայն մոտեցավ միլիցիայի կապիտանին.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ընկեր Հալաբյան…

- Ես եմ,- շիկավուն հոնքերի տակից կապույտ աչքերով նայելով լրագրողին, զարմացած արձագանքեց կապիտանը:

- Ես ուզում եմ, որ մենք մի անկյուն գտնենք ու զրուցենք մի քիչ:

- Իսկ դու ո՞վ ես:

- Ձեր թերթում եմ աշխատում, լրագրող եմ:

- Ո՞նց թե, բա ո՞նց է, որ քեզ չեմ ճանաչում:

- Նոր մարդ եմ,- ասաց Զավենը:

- Փաստաթուղթ ունե՞ս,- վճռեց զգոնություն հանգես բերել կապիտանը:

Զավեն Շարաֆյանը նրան մեկնեց վկայականը: Սիմոն Հալաբյանը ձեռքերի մեջ շուռումուռ տվեց այն, բացեց, մեկ նկարին նայեց մեկ էլ լրագրողին ու բարձրաձայն հեգելով կարդաց. «Զավեն Աշոտի Շարաֆյան: Քաղաքային տնտեսության և կենցաղի բաժնի վարիչ»: Ծալեց, տղային մեկնեց վկայականն ու ծիծաղեց,

- Հումորո՞վ էր գրված,- ժպտաց Զավեն Շարաֆյանը:

- Տո չէ, հա- նորից ծիծաղեց կապիտանը: - Ախր քիչ էր մնում բռնեի քեզ,- Հա տեսնում էի, որ պտտվում ես բազարում, ծակուծուկ ես մտնում, մտածեցի, թե գաստրոլյոր-գրպանահատ ես: Կներես, չէ՞…

- Եթե գրպանահատները այդքան հետաքրքրում են ձեզ,- չդիմացավ, ծաղրաբար ասաց լրագրողը,- ես կարող եմ մեկ-մեկ մատնացույց անել նրանց: Բայց երևի միտք չունի, որովհետև դուք նրանց լավ եք ճանաչում, սիրով կանգնում ու երկար զրուցում եք նրանց հետ:

Միլիցիայի կապիտանը ակնհայտ վախեցավ:

- Ո՞ւմ հետ,- չորս կողմը նայելով, շշուկով հարցրեց նա: - Ասելը հեշտ է, մինչև ձեռքին չբռնես, ո՞նց կարող ես ապացուցել: Հետո, լրագրող մարդ եք,- հանկարծ միանգամից «դուք»-ի անցավ կապիտանը,- ես ձեզ կարող եմ ասել՝ մեկ-մեկ պետք է լինում օպերատիվ նպատակներով, ավելի խոշոր հանցագործություններ բացահայտելու համար: Մեր աշխատանքի բնույթն այդպես է, տականքների հետ գործ ունենք:

Լրագրող չնահանջեց:

- Եթե դուք ինձ թույլ եք տալիս ասել, ես կարող եմ պատասխանել ձեզ, որ ոչ մի բացահայտ կամ ներքին կանոնադրությամբ դուք իրավունք չունեք գողերին ձեզ օգնական ընտրել:

Սիմոն Հալաբյանը ծիծաղեց նորից, բայց այս անգամ արդեն շողոքորթ էր նրա ծիծաղը և հաշտարար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Է , ասում եք, էլի… Կանոնադրությունը մի բան է ասում՝ պետդ մի ուրիշ բան: Բայց ինչո՞ւ ենք փողոցում կանգնել, գնանք նստենք մի տեղ,- հանկարծ իրար խառնվեց կապիտանը: - Ուզո՞ւմ եք շուկայի ճաշարանը մտնենք, կասենք՝ վարիչի առանձնասենյակում սեղան կգցեն, համ հաց կուտենք, համ էլ զրույց կանենք մի քիչ: Շատ-շատ ուրախ եմ, որ ծանոթացա ձեզ հետ: Փայլուն բան էիք գրել որբերի մասին: Կարդացի ու լաց եղա, գիտե՞ք…

- Չէ: - ասաց Զավեն Շարաֆյանը: - Որքան գիտեմ, շուկայում դուք էլի մի տեղ ունեք, գնանք այնտեղ նստենք:

- Դե դա ինչ նստելու տեղ է,- ժպտաց կապիտանը,- դա եթե կուզեք իմանալ նստեցնելու տեղ է:

Նա բարձր ծիծաղեց իր սրամտության վրա և առաջ ընկնելով ասաց.

- Դե ես շուտ գնամ, մի քիչ կարգի բերեմ, դուք եկեք մի քանի րոպեից հետո:

“Չի ուզում, որ մեզ միասին տեսնեն,-- մտածեց Զավենը: - Ավելի ճիշտ՝ վախենում է, թե հանկարծ Աղոն ու Վաղոն կհանդիպեն ու մի այնպիսի բան կանեն, որից ինքը հիմար վիճակի մեջ կընկնի, կվարկաբեկվի լրագրողի աչքին»:

Երբ նրբանկատորեն, պայմանավորվածից բավականին ուշ Զավեն Շարաֆյանը բացեց միլիցիայի տեղամասային տեսչի սենյակի դուռը, զարմանքով տեսավ, որ կապիտանի սենյակում ոչ միայն ամեն ինչ կարգին է, այլև գրասեղանին կից դրված սեղանի վրա, ափսեների մեջ խնամքով դասավորված են աշխարհի լավագույն ուտելիքները՝ հորած պանիրը, պոմիդորը, վարունգը, բիբարը, շուշանի թթուն, խաշած մսի կտորներ…

- Ի նշանավորումն մեր ծանոթության,- հյուրասեր տանտիրոջ նման ձեռքերը տարածեց միլիցիայի կապիտանը: - Համեցեք, նստեք:

Զավեն Շարաֆյանի գլուխը պտտվեց.

- Չէ, ինչ եք ասում, գործնական հանդիպում է,- հրաժարվեց նա, աշխատելով չնայել սեղանին: - Ես ընդամենը մի քանի րոպեով…

- Ընկեր Շարաֆյան,- ասաց Սիմոն Հալաբյանը: - Առաջին անգամ հանդիպում ենք, հայ ենք, չէ՞… Հացը մեզ ի՞նչ պիտի խանգարի: Հո քեֆ չենք անում:

Զավեն Շարաֆյանը այնուամենայնիվ փորձեց առարկել, նույնիսկ ետ գնաց մի քայլ, բայց նույն վայրկյանին բացվեց դուռը և հայտնվեց շուկայի խորտկարանի հավաքարարուհի Բերսաբեն: Նա եզրերից բռնած բերում էր մի խոր ափսե, որի միջից գոլորշի ու ախորժելի հոտ էր արձակում՝ լավաշի տակ թաքնված քյաբաբը:

- Կարագ դրե՞լ ես վրան,- հոնքերը խոժոռելով հարցրեց կապիտանը:

- Դրել եմ, ցավդ տանեմ,- ասաց Բերսաբեն:

- Բա խորոված պոմիդորն ու բադրիջա՞նը որտեղ են:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Բերում եմ, կապիտան ջան, բերում եմ.

- Դե շուտ, մաքուր կլպի, բեր ու դուռը քո ետևից ծածկի:

Զավենը չգիտեր ինչ անել:

- Ընկեր Հալաբյան,- ասաց նա, թեև արդեն գիտեր, որ չի գնալու: - Խնդրում եմ, մի ուրիշ անգամ…

Սիմոն Հալաբյանն էլ գիտեր, որ ջահել լրագրողը չի կարող հեռանալ՝ հիմա ո՞վ է նրան այսպիսի հաց տվողը, բայց խաղը շարունակելով, վշտացած օրորեց գլուխը.

- Է, մարդկությունը կորավ, պրծավ: Այ ընկեր Շարաֆյան, այ ես քո հոգուն մեռնեմ, մենք հո իրար թշնամի չենք: Եթե ես էգուց ձեր տուն գամ, դուք ձեր տան ունեցածը առաջս չեք դնելու: Դե սա էլ իմ տունն է, էլի, ինքներդ էլ գիտեք, գիշեր-ցերեկ շուկայում եմ… Նստեք, անհարմար է, ընկեր Շարաֆյան, մինչև հոգուս խորքը կվիրավորվեմ…

Քյաբաբի հոտը տարածվել, բռնել էր ամբողջ սենյակը, և Զավեն Շարաֆյանը զգաց, որ այլևս դիմադրել չի կարող քաղցին: Քաղաքավարությունից դրդված մի քիչ չեմ ու չում անելուց հետո, նա նստեց կապիտանի դեմ-դիմաց, թուլության համար ինքն իրենից վրեժ առնելով հայտարարեց, թե քյաբաբ ընդհանրապես չի սիրում և սկսեց պանիր, հաց ու պոմիդոր ուտել այնպիսի մի հանգստությամբ, ասես հենց նոր էր ճաշասեղանից վեր կացել:

Բայց Սիմոն Հալաբյանը, միևնույն է, համարեց, որ առաջին արգելքը հաղթահարված է և վճռեց շարունակել հարձակումը: Նա ձեռքը ծուլորեն սեղանի տակ մեկնեց, դուրս բերեց և սեղանին դրեց օղու մի շիշ…

- Սուտ բան է, առանց սրա կուլ չի գնում,- անփութորեն ասաց նա: - Մաքուր հոնի օղի է, գիտե՞ք: Հիմա որ մի հարյուր- հարյուր խմենք…

Բայց լրագրողը կտրականապես հրաժարվեց.

- Չեղավ, ընկեր Հալաբյան, իսկապես կթողնեմ կգնամ: Ես մի քանի լուրջ հարցեր ունեմ ձեզ տալու և ուզում եմ, որ դուք ինձ ամենայն լրջությամբ պատասխանեք: Հոնի օղին մի ուրիշ անգամ:

Միլիցիայի կապիտանը վատ չէր ճանաչում մարդկանց և գտավ, որ ստիպելն ավելորդ է:

- Թող ձեր ասածը լինի,- անմիջապես համաձայնվեց նա: - Չէ՛, ուրեմն չէ՛: Մանավանդ որ ես էլ մի առանձնապես գլուխ չունեմ սրա հետ և, չեմ թաքցնում, ձեր խաթեր մեջտեղ հանեցի: Բայց մի քիչ ուտելը չի խանգարի, չէ՞:

- Չի խանգարի,- հանգստացավ լրագրողը:

Բայց այլևս ոչինչ չստացվեց: Եվ երբ Բերսաբեն բերեց նաև խորոված պոմիդոր ու բադրիջանը, միլիցիայի կապիտանը կարգադրեց ետ տանել ափսեն և արագորեն հավաքել սեղանը: Իսկ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

երբ նրանք մենակ մնացին, շեկ հոնքերի տակից բարյացակամությամբ նայելով Զավեն Շարաֆյանին՝ ասաց.

- Ուրեմն գործի անցնենք: Ձեզ հետաքրքրում է շուկան:

- Այո,- ասաց լրագրողը,- ես մտադիր եմ հոդված գրել շուկայի մասին:

- Օհ,- ծիծաղեց կապիտանը,- պատկերացնում եմ թե ոնց կգրեք: Գրիչ հո չունեք: Քարը քարի վրա չեք թողնի: Էդ ոնց էիք գրել զինկոմիսարիատի ու սոցապի դեմ- Իսկականից լաց եղա, գիտե՞ք: Շատ համարձակ եք, շատ, առաջին անգամ էր, որ ես քննադատական նյութ էի կարդում զինկոմիսարիատի մասին…

Լրագրողն ակամա շոյված զգաց իրեն և ժպտաց.

- Ես ուզում եմ, որ դուք օգնեք ինձ,- ասաց նա:

- Ամեն ինչում,- գլխով արեց Հալաբյանը և առաջ մեկնեց բաց ափը: - Շուկան այ, Էս իմ ափի մեջ է: Ես կարող եմ մեկ-մեկ ձեզ ցույց տալ սպեկուլյանտներին, բայց ի՞նչ կարող ենք անել նրանց: Մեծ մասամբ հարևան ադրբեջանական շրջաններից են՝ Ղազախից, Թովուզից, Կիրովաբադից: Թղթեր էլ ունեն: Ես գիտեմ, որ կեղծ են էդ թղթերը, մի երկու տեղացի հայեր էլ կան: Նրանց թղթերն էլ են կեղծ: Բայց նորից եմ կրկնում՝ ի՞նչ կարող ենք անել: Քանի անգամ փորձել եմ՝ հենց դրանց դուրս եմ վռնդում շուկայից, շուկան դատարկվում է: Մարդիկ գալիս են՝ ապրանք չկա: Է, հետո

- Բայց ի՞նչն է գաղտնիքը,- իրոք հետաքրքրվեց Զավենը: - Ինչո՞ւ մեր գյուղացիները ապրանք չեն բերում շուկա: Ունեն, չէ՞…

Կապիտանը ժպտաց,

- Իհարկե ունեն: Բայց ամբողջ հարցն այն է, ընկեր Շարաֆյան, որ մեր գյուղացին սովոր չի, դեռ առևտուր անել չի իմանում, ամաչում է: Պապերից էդպես է եկել: Նա կարող է հյուրասիրել, կարող է փոխանակել ապրանքը, ասենք թե խաղող տալ ու փոխարենը կարտոֆիլ կամ ձուկ վերցնել: Բայց վաճառել չի կարող: Չե՞ք հիշում Թումանյանի գրածը, գյուղացին ասում է, որ կաթը ծախեմ, աստված կբարկանա, կովս կցամաքի: Հիմա ճիշտ մերոնք են: Էդ մի երկու հոգին էլ որ կան, չէ՞, պատերազմից եկած հաշմանդամ մարդիկ են՝ աշխատել չեն կարողանում, ապրելու հնար չունեն, հարևանների ապրանքը հավաքում, բերում են շուկա, որ մի քիչ փող աշխատեն, պահեն երեխաներին: Ախր ի՞նչ ձեռքով բռնես նրանց, մարդ ենք, չէ՞:

- Իրոք, որ դժվար է,- մտածեց ու համաձայնեց Զավեն Շարաֆյանը:

- Դժվար ասացիք ու թողի՞ք,- ոգևորվեց կապիտանը: - Էն օրը մեկը պարկով արևածաղկի սերմ էր բերել, ուզում էր բաժակով ծախել: Իսկ մեր օրենքով շուկայում բաժակով վաճառել չի կարելի: Սովորաբար բռնում, հենց շուկայի մեջ թափում ենք արևածաղկի սերմը, որ խիստ լինի, էլ չբերեն: Մոտեցա էդ մարդուն ու ասացի՝ դե շուտ պարկդ վերցրու ու գնա էստեղից, թե չէ շուռ կտամ հողի մեջ: Ու մեկ էլ ինչ արեց, գիտե՞ք, նստեց հենց գետնին, քանդեց ոտքերը և

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

պրոտեզները ինձ մեկնեց. «Ոտքերս տուր, գնամ, տուր գնամ՝ շան որդի, ես արյուն եմ թափել, զրկվել եմ ոտքերից, իսկ դու թիկունքում վիզդ ես հաստացրել»: Ասեք՝ ի՞նչ կարող էի անել: Ծիծաղեցի, այ հենց էսպես քանդեցի կիտելիս կոճակները և երկու մատով բռնեցի վիզս՝ էդ որ ասում ես վիզս հաստացրել եմ, է՞ս վզի մասին էր, հարցրեցի:

Պատմելու հետ միաժամանակ, երևի ակամա Սիմոն Հալաբյանը քանդեց օձիքը և մատներով գրեթե օղակեց բարակ, երկար վիզը:

- Կորյուն Մխեյանն ի՞նչ մարդ է,- հարցրեց լրագրողը:

- Խորտկարանի վար՞իչը ,- ձգեց, մտածեց կապիտանը,- իմ կարծիքով վատ տղա չի:

- Բայց այդ ոչ վատ տղան շատ վատ է պահում խորտկարանը,- ասաց Զավենը: - Լրիվ կեղտի բուն է: Սեղանները ժամերով չեն մաքրվում, ափսեները կուտակվում են իրար վրա, գարեջրի բաժակները չեն լվացվում: Ոչ դանակ կա, ոչ պատառաքաղ, ոչ անձեռոցիկ…

- Ինչ ճիշտ է, ճիշտ է,- համաձայնեց կապիտանը: - Թերություններ շատ կան, բայց անիրավները լավ քյաբաբ են տալիս:

- Ձեզ,- հեգնեց լրագրողը: - Ձեզ, իհարկե, լավ քյաբաբ են տալիս, բայց եթե տեսնեք, թե ինչ և ինչքան են մատուցում սեղաններին: Մարդիկ հինգ բաժին են պատվիրում, որ մի բան հասկանան: Բողկն ու սոխը ավելի շատ է լինում, քան միսը…

- Է , ընկեր Շարաֆյան, հաստատ չափազանցնում եք,- բարեհոգաբար ծիծաղեց Հալաբյանը: - Հիմա սոխն ավելի թանկ է, քան միսը: Ինչի՞ պիտի սոխը շատ անեն: Բայց ձեզ հետ լրիվ համաձայն եմ ու լրիվ հասկացա, թե ինչի քյաբաբից հրաժարվեցիք: Ուրեմն կարծեցիք, թե նույն քյաբաբն է, որ սեղաններին են դնում: Հոգուս մեղք չեմ անի, ես գիտեմ, որ ինձ համար հատուկ են սարքում: Մեր մյուս հանդիպմանը խոսք եմ տալիս-

- Բերսաբեն որպես ի՞նչ է ձևակերպված:

- Հավաքարարուհի:

- Բա ինչո՞ւ է կանգնում վաճառասեղանի ետևում ու առևտուր անում: Ի՞նչ իրավունքով…

Կապիտանը տարածեց ձեռքերը…

- Ի՞նչ ասեմ, դե մի ընտանիքի պես բան են: Մեկ բուֆետապան Սերոբն է կանգնում, մեկ Բերսաբեն, մեկ-մեկ էլ նույնիսկ վարիչ Կորյունն է առևտուր անում: Վստահում են իրար…. Ի վերջո մի ամանից են հաց ուտում:

- Իսկ որ օղին տնական ծագում ունի և հենց վաճառասեղանի տակ մեծ-մեծ անոթներից են շշերի մեջ լցնում, դրա՞նք ինչ կասեք :

- Չի կարող պատահել, դա հանցագործություն է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Իսկ հանցագործություն չէ , որ գարեջրի տակառի մեջ հենց ծորակից ջուր են ավելացնում և նոր միայն տալիս հաճախորդներին:

Տեղամասային տեսուչը տրորվեց տեղում.

- Դե առևտուր է, էլի, էն էլ բազարում: Տորգի տեսուչներ ունեն, դիրեկտոր ունեն, բժիշկներ ունեն, թող հետևեն, ե՞ս ինչ անեմ: Ես հո չեմ կարող հազար կտոր լինել: Իմ գործն այն է, որ անհրաժեշտ կարգուկանոն լինի շուկայում…

- Ես էլ այդ եմ ասում,- գլխով արեց լրագրողը: - Ընկեր Հալաբյան, իսկ բուֆետապան Սերոբը Բերսաբեի ի՞նչն է:

- Ամուսինն է, ի՞նչն է,- ասաց տեսուչը:

- Իսկ վարիչ Կորյո՞ւնը…

- Կորյունն ի՞նչ..,

- Բերսաբեի ի՞նչն է…

- Քրոջ տղան է:

Զավենը ժպտաց.

- Ես այնպիսի տպավորություն ստացա, որ թեև Բերսաբեն իր հարազատների մեջ ամենահամեստ պաշտոնն է գրավում, բայց խորտկարանի տերն ու տիրականը ինքն է:

Կապիտանի կապույտ աչքերը ասես թե մթնեցին մի տեսակ:

- Ինչի՞ց եք ենթադրում,- փորձեց ժպտալ նա:

- Նրանք ինչ անում են՝ Բերսաբեին են նայում: Եվ ի վերջո Բերսաբեի մոտ են կուտակվում խորտկարանի փողերը:

- Դե կին է, լավ է հաշվում, դրա մեջ ի՞նչ կա,- փոքր-ինչ ջղայն ասաց կապիտանը: - Եվ վերջապես, հոգուդ մեռնեմ, ձեր տանը ո՞նց է, մեր տանն, օրինակ, նույն ձևի տեր ու տիրական է կինս և փողերն էլ ի վերջո նրա մոտ են կուտակվում:

Զավեն Շարաֆյանը ծիծաղեց ու Էմմային հիշեց:

- Բարեբախտաբար թե դժբախտաբար, ես դեռ կին չունեմ:

- Որ ունենաք, նոր կիմանաք,- կեղծ հոգոց հանեց կապիտանը:

Լրագրողը մի հայացք նետեց փոքրիկ ծոցատետրին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ընկեր Հալաբյան, իսկ ճի՞շտ է, որ Կորյուն Մխեյանն ու պարենային խանութի վարիչ Եփրեմ Ծատինյանը եղբայրներ են:

Կապիտանը օրորեց գլուխը.

- Դուք պիտի միլիցիայում աշխատեիք, ընկեր Շարաֆյան: Համարյա եղբայրներ են, էլի: Մորից մեկ են, հորից տարբեր:

- Եթե ես միլիցիայում աշխատեի,- ժպտաց Զավեն Շարաֆյանը,- հենց միայն այն փաստի համար, որ եռամսյակի մսի ֆոնդի ուղիղ կեսը պարենային խանութի վարիչ Եփրեմ Ծատինյանը խորտկարանի վարիչ իր եղբորն է նվիրել, քրեական գործ կհարուցեի նրանց նկատմամբ: Բանվորական հսկիչ հանձնաժողովը բացահայտել է այդ խարդախ գործարքը, արձանագրություն է կազմել, նյութերը հանձնել միլիցիա, բայց…

Սիմոն Հալաբյանը ընդհատեց նրան.

- Ախր դուք մի կողմը գիտեք, մյուս կողմը չէ: Նախ դա համարյա մի տարի առաջ է եղել: Իսկ հետո՝ միսն այնքան անորակ է եղել, և դրա մասին էլ համապատասխան արձանագրություն կա, որ անխիղճ բան են համարել խանութում վաճառելը: Եվ եղբայրն իրոք օգնության է հասել եղբորը, միսը գնել է ու խառնելով իր ստացած լավորակ մսին, կոտլետ է սարքել: Մի կողմից, իհարկե, խախտում կա, բայց մյուս կողմից՝ ինչ աներ, թողներ որ փչանա մթերքը:

- Բայց բանվորական հանձնաժողովը գտել է, որ…

- Հո նորություն չէ, ընկեր Շարաֆյան, բանվորներին թվում է, թե ով բանվոր չէ, ուրեմն գող է: Գառնիկ Վարդանիչն էլ նրանց խելքին է ընկել և որտեղ ամբիոն է բարձրանում, վարկաբեկում է բոլորին: Չգիտեմ ով է նրա կնոջը շուկայում նեղացնել, հիմա որտեղ կանգնում է, հայտարարում է, թե շուկան բանդիտների բուն է թե շուկայում կողոպտում են բանվորներին: Մի հարցնող լինի, թե բանվորն ինչ է անում շուկայում: Մի հարցնող լինի, թե դու, ընկեր Բադալյան, էդ ինչքա՞ն ես վճարում բանվորիդ, որ նա համարձակվի շուկա մտնել: Խոտից բացի ի՞նչ կարող է առնել: Շուկա է, էլի, ոնց որ ամեն տեղ, մեզ մոտ էլ են գիպսից արձաններ, շվիներ, գույնզգույն շնիկ-գանձատուփեր վաճառում: Զանգ է տվել քաղխորհուրդ, թե վերացրեք դրանք, անճաշակություն են տարածում: Տո, մի հարցնող լինի, թե, եթե անճաշակություն են, ժողովուրդն ինչո՞ւ է առնում: Դու ո՞վ ես, որ քո ճաշակը փաթաթում ես բոլորի վզին:

- Հա, ի դեպ ո՞վ է այդ գիպսե և կավե առարկաների հեղինակն ու վաճառողը, այն նշանավոր Բրուտյաններից հո չէ,- հարցրեց լրագրողը, թեև պատասխանը լավ գիտեր:

- Չէ, ինչ եք ասում,- դեռ Գառնիկ Բադալյանի վրա զայրացած պատասխանեց կապիտանը: - Կարո է անունը, Կարո Խալաթյան: Հենց իր տան նկուղում մի փոքրիկ ցեխ ունի, սարքում է, իսկ կինն ու տղան էլ շուկա են բերում:

- Բայց հետաքրքիր է, թե Բրուտյաններն ինչու չեն օգտվում շուկայից: Ես տեսել եմ նրանց պատրաստած կուլաներն ու սափորները: Մեծ պահանջարկ կունենային:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ճիշտ է,- չառարկեց կապիտանը: - Մեծ պահանջարկ կունենային, բայց հարցն այն է, որ նրանք քաղաքում, հենց տանն են վաճառում: Մի ժամանակ շուկայում էլ տեղ ունեին, բայց անկեղծ որ ասեմ, յոլա չգնացին Կարո Խալաթյանի հետ, երևի խանգարում էին իրար, թե ինչ- Մի խոսքով, թողեցին գնացին:

- Իսկ ո՞վ է Կարո Խալաթյանը,- հարցրեց լրագրողը:

- Ասացի՝ չէ , շնիկ-մնիկ վաճառողը:

- Այդ հասկացա, ասում եմ՝ Բերսաբեի ի՞նչն է:

Կապիտանի կապույտ աչքերը մթնեցին նորից: Նա արդեն հազիվ էր պահում իրեն:

- Հորեղբայրն է: Բայց Բերսաբեն ի՞նչ կապ ունի, հո ինքը չի սարքում էդ ապրանքները:

- Իսկ Պարգև Միքայելյա՞նը ով է,- ասես չնկատելով դիմացինի վիճակը, ծոցատետրին թեթևակի մի հայացք նետելով հարցրեց Զավեն Շարաֆյանը:

Նրան թվաց, թե կապիտանը իսկապես սեղմեց բռունցքները:

- Պարգև Միքայելյանը կտորեղենի խանութի վարիչն է: Իսկ ի՞նչ կա:

- Բերսաբեի ի՞նչն Է…

- Քեռին է , -կտրեց կապիտանը:

- Իսկ Պետրոս քեռին:

Սիմոն Հալաբյանը խոր շունչ քաշեց.

-Դուք եք թերթում գրել նրա մասին, չգիտե՞ք, ինչ է, հիմար լուսանկարներ է անում ու ձեր գրելուց հետո էլ ման է գալիս հպարտ-հպարտ, թե ինձ լավ պահեք, ես պատմություն եմ, էկզոտիկա…

Զավենը ծիծաղեց.

- Իսկ նա Բերսաբեի ի՞նչն է…

- Հարգելի ընկեր Շարաֆյան,- ատամները սեղմած շշնջաց Հալաբյանը: - Իմ կարծիքով դուք բացարձակ սխալ ճանապարհով եք գնում: Ես պարզ տեսնում եմ: Նա էլ Բերսաբեի եղբոր աներն է: Դրա մեջ ի՞նչ կա: Նա դեռ էն ժամանակ էր մարդկանց գլուխները դուրս հանում անցքի միջից ու նկարում, երբ Բերսաբեն սեղանի տակ էր քայլում: Եվ վերջապես ի՞նչ եք ուզում Բերսաբեից: Նրա մեղքն այն է, որ ձեզ դուր չի՞ եկել: Շուրջբոլորը նրա բարեկամներն են ու հարազատները: Հետո՞ ինչ: Մեր քաղաքում ո՞վ ում բարեկամը չէ կամ հարազատը: Կոշիկի արհեստանոցի վարիչ Գասպարն էլ իմ աներձագն է, նրա պատճառով դո՞ւրս գամ գործից: Շրջանի դատախազն էլ քաղկոմի երկրորդ քարտուղարի հորեղբոր տղան է, դե թող երկուսն էլ դիմում տան ու ազատվեն: Այդպես հո չի կարելի, սիրելի ընկեր Շարաֆյան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երիտասարդ մարդ եք, որտեղի՞ց ձեր մեջ այդ, ներեցեք, չարությունը: Մարդիկ են, աշխատում, ապրում են մի կերպ, տուն են պահում: Եվ եթե մեկ-մեկ էլ խախտումներ են թույլ տալիս, դուք հո լավ գիտեք, թե պատճառը որն է, պետության տվածը հերիք չի անում: Ահա թե ինչ: Հիմա ինչ անենք, բռնենք կոտորե՞նք բոլորին: Թուրքն ու գերմանացին քիչ են կոտորել, հիմա էլ մե՞նք ավելացնենք: Հայ ենք չէ՞, մեր ժողովուրդն են, եղբայր- Իսկ դուք, թե՝ Բերսաբե: Բերսաբեն ո՞վ է, խեղճուկրակի մեկը: Էդ ո՞ր կինը կհամաձայնվի աման լվանալ ոլ քյաբաբ մատուցել խուժանանոցում, եթե ապրելու ուրիշ հնարավորություն ունենար:

- Մի բան ասեմ, չնեղանաք, ընկեր կապիտան,- ասաց Զավենը՝ սրտնեղած, որ Հալաբյանը համառորեն և բավական համոզիչ դեմագոգիայի է անցել: - Երբեք չեք մտածել դատապաշտպան դառնալու մասին:

Միլիցիայի կապիտանը նկատելիորեն խոցվեց և երբ սկսեց խոսել, արդեն այն բարեհամբույր ու պատրաստակամ զրուցակիցը չէր…

- Մի բան էլ ես ասեմ՝ չնեղանաք, ընկեր լրագրող,- ասաց նա, թափով ոտքի կանգնելով: - Դուք համարյա իմ որդու տարիքին եք և ձեր առջև ոչ թե ձեր ուսանող ընկերն է նստած, այլ ռազմաճակատների բովով անցած, պատերազմում վիրավորված մի սպա, որը գումարտակ է ղեկավարել Օդերի անցման ժամանակ: Ձեզ ով է իրավունք տվել հեգնանքով ու ծաղրաբար խոսել ինձ հետ:

Զավեն Շարաֆյանն, իհարկե, զգաց, որ չափն անցել է, բայց որովհետև իր հոր տղան էր, չկարողացավ ետ կանգնել: Դե,եթե կռիվ է, թող կռիվ լինի:

- Իսկ ռազմաճակատի բովով անցած, պատերազմում վիրավորված սպան, որ գումարտակ է ղեկավարել Օդերի անցման ժամանակ, ինչպե՞ս է թույլ տալիս, որ երկու ստահակներ, երկու հարբեցողներ ու խուլիգաններ նրա գլխից հանեն միլիցիայի կապիտանի համազգեստի գերբավոր գլխարկը, շուկայի աչքի առջև տրորեն ոտքերի տակ ու մնան անպատիժ,- հանգիստ հարցրեց նա:

Սիմոն Հալաբյանը գունատվեց: Մի պահ թվաց նույնիսկ, թե կտրվում է շունչը, որովհետև ջղաձգվեց, համարյա ընկավ աթոռին ու հանկարծ ծիծաղեց թույլ-թույլ: Նրա ծիծաղն այնքան անսպասելի էր ու անհեթեթ, որ Զավեն Շարաֆյանը երկյուղ զգաց նույնիսկ:

- Էդ էլ են տեղ հասցրել, հա՞,- գլուխը թափ տալով, ծիծաղի միջից հարցրեց կապիտանը: - Այ քեզ ժողովուրդ:

- Հասցրել են,- գլխով արեց լրագրողը: - Նամակ են գրել խմբագրությանը:

- Հա, բայց ի՞նչ են գրել,- ուսերը թոթվեց Սիմոն Հալաբյանը: Այնինչ դեմքը դեռ գունատ ու ջղաձիգ էր: - Տրամադրությունները մի քիչ բարձր էր, կատակ էինք անում իրար հետ, գլխարկս հանկարծ ընկավ…

- Ճիշտ է,- ասաց Զավեն Շարաֆյանը,- հենց նույնատիպ պայմաններում, դրանից առաջ՝ ձեր գլխարկի նման, պատահաբար Աշոտ Բարսեղյանն էր ընկել կատակասեր եղբայրների

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ոտքերի տակ, շուկայում տիրող ապօրինությունների մասին բանվորական ստուգող հանձնաժողովի արձանագրությունը որպես հանձնաժողովի նախագահ ստորագրելուց հետո:

Միլիցիայի կապիտանը ահաբեկված էր:

- Սուտ է, այդպես չի եղել, ընկեր Շարաֆյան, ամբողջ շուկան էր վկա, պատահական զուգադիպություն էր: Աղոն ու Վաղոն կռվում էին իրար հետ, Աշոտ Բարսեղյանը մեջ ընկավ, բայց մեկ էլ հանկարծ ոտքը ձմերուկի…

- Իսկ դատախազության քննիչին տված ձեր առաջին ցուցմունքում ինչի էիք գրել, թե Վաղոն հարվածեց Աշոտ Բարսեղյանին:

- Ասեմ, ասեմ, ընկեր Շարաֆյան, դուք ամեն ինչ գիտեք և ես այլևս թաքցնելու ոչինչ չունեմ, Այդ եղբայր կոչվածներն իրենց հարբեցողությամբ և տուրուդմփոցներով այնպես էին զզվեցրել ինձ,որ ես որոշեցի սուտ ցուցմունք տալով ազատվել գոնե մեկից:

- Իսկ հետո ի՞նչը փոխվեց:

- Խիղճս տանջեց, ազնիվ բան չէր արածս: Մարդ պետք է իր մեղքի համար պատժվի: Իսկ աստված արդեն պատժել է երկուսին էլ: Հոգեկան խանգարումներ ունեն, ինչպես ասում են՝ այսօր կան, վաղը չկան…

- Բայց հո կա՞ն այսօր,- ասաց լրագրողը: -Կան և որքան հասկանում եմ՝ նրանք են շուկայի իրական տերն ու տիրականը: Հենց այդպես էլ գրված է նամակում:

Չնայած զով եղանակին, կապիտանի ճակատը քրտինքի մանր կաթիլներով էր ծածկվել:

- Չեղավ-, ասաց նա, նայեց լրագրողին ու հանկարծ պոռթկաց: - Տո, ինչը չեղավ, է, շատ լավ էլ եղավ: Ինչ որ ասում եք՝ բացարձակ ճշմարտություն է, ընկեր Շարաֆյան: Աղաբեկ և Վաղարշակ Տիտանյանները քաղցկեղի նման տարածվել, բռնել են ամբողջ շուկան: Դուք ինձ հարցեր էիք տալիս, զանազան, թե այստեղ ով ում ինչն է, բայց չհարցրեցիք ամենակարևորը, որը երևի չգիտեք: Դա էլ ես եմ ասում, որովհետև բավական է, ինչո՞ւ պետք է ես պատասխան տամ գողերի ու ավազակների փոխարեն: Մեկն էլ կկարծի, թե վախենում եմ, կամ թե մերվել եմ այդ սրիկաների հետ: Ես՝ մարտական սպաս: Առանց այդ էլ տականքների պատճառով հերթական աստիճան չտվեցին, թե փոխել ես ցուցմունքդ: Եվ ահա ես ձեզ ուզում եմ ասել, որ…

- Որ Բերսաբե Մինասյանը Աղաբեկ և Վաղարշակ Տիտանյանների հարազատ քույրն է- և նրանց դրածոն խորտկարանում:

Կապիտան Հալաբյանը ձեռքի ափով սրբեց ճակատի քրտինքը: Նրա ձեռքը դողում էր.

- Ես հանձնվում եմ,- ասաց նա: - Չեմ քաշվում ասել, որ հանձնվում եմ և ինձ դնում ձեր տրամադրության տակ, ընկեր Շարաֆյան: Ես հասկացա, որ վերջնականապես որոշել եք մաքրել շուկան աղբից: Ես ձեզ հետ եմ: Փառք աստծո, ես միշտ կարողացել եմ ընդունել ու գնահատել դիմացինի խելքը և ուժը: Դրա համար էլ անկեղծ սրտով ասում եմ՝ իմ ամբողջ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

փորձը, իմ բոլոր գիտելիքները ձեզ օգնական և ենթակա: Կասկած չունեմ, որ մենք միասին կքանդենք ավազակների այդ որջը: Չնեղանաք, իհարկե, բայց շատ բաներ կան, որ դուք դեռ չգիտեք, շուկան մի ուրիշ աշխարհ է և գաղտնիքներն ավելի շատ գետնի տակ են, քան թե երեսին: Ես ձեզ կօգնեմ բացահայտելու բոլոր թաքստոցները: Ինձ միայն երեք օր ժամանակ տվեք: Այդ երեք օրում ես մի մանրամասն զեկուցագիր կկազմեմ շուկայում տիրող բարքերի մասին, որի մի օրինակը ձեզ կտամ, իսկ մյուս օրինակը մեր պետին, որպեսզի հանկարծ որևէ թյուրիմացություն չլինի Թ՞ե չեք ուզում, որ պետն իմանա: Եթե դեմ եք…

- Բոլորովին,- ասաց Ջավեն Շարաֆյանը,- ինչո՞ւ պիտի դեմ լինեմ: Նույնիսկ ավելի լավ: Փաստաթուղթ է:

- Այդ դեպքում ահա ձեզ իմ ձեռքը,- տեղից բարձրացավ միլիցիայի կապիտանը:

Ջավեն Շարաֆյանը ժպտաց, անկարող թաքցնելու հաղթանակի բերկրանքը՝ այդ տարեց ու փորձված մարտիկի, միլիցիայի կապիտանի հետ մղած դիվանագիտական դժվարին մենամարտում և վեհանձնաբար սեղմեց նրա մեկնած ձեռքը:

* * *

Միհրան Գալստյանը կոճացրած գլուխը տարուբերելով ու հետն էլ կամացուկ սուլելով «Լուսաբացի» հաջորդ համարի մակետն էր կազմում: Մակետ գծելը նրա կոչումն էր ու տարերքը: Հանուն այդ գործի նա լքել էր ճարտարապետի իր մասնագիտությունը: Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը մի կերպ ավարտելուց հետո նա հայրենի քաղաք էր վերադարձել և աշխատանքի անցել քաղխորհրդի գործկոմի ճարտարապետության բաժնում, և շատ արագորեն համոզվել, որ իրենից ճարտարապետ դուրս չի գա: Որովհետև ինչ փորձել էր նախագծել, պարզվել էր, որ մի երեսուն-քառասուն տարի առաջ, ինչ-որ մեկը ստորաբար նախագծել էր արդեն: Քաղաքի գլխավոր ճարտարապետ Խոսրով Նշանյանը մի այնպիսի ֆանտաստիկ հիշողություն ու հոտառություն ուներ, որ հենց նայում էր Միհրանի սևագրությանը, ժպտում էր ներողամիտ.

- Սիրուն տղա,- ասում էր,- հեծանիվը արդեն կա, նորից մի հնարի:

Ու գնում ինչ-որ տեղից հանում, Միհրանի առջև էր դնում վաղուց հնարված «հեծանիվը»: Իսկ մի անգամ էլ ասաց.

- Սիրուն տղա, դու հրաշալի գծում ես, միայն թե չգիտես ինչ ես գծում: Իմ հայրական անկեղծ խորհուրդը քեզ. ափսոս ես, կյանքդ զուր մի անցկացնի, քանի ջահել ես, շուրջդ նայիր, տես ուրիշ ինչ կա-չկա հոգուդ հարազատ:

Այդ ժամանակ արդեն Միհրան Գալստյանը «Լուսաբացի» ակտիվ թղթակից էր:

Գրում էր այն ամենի մասին, ինչ տեսնում էր ու հատկապես ինչից զարմանում էր: Իսկ շրջապատում գրեթե ամեն ինչ զարմացնում էր նրան: Միամիտ, դյուրահավատ ու թեթև բնավորություն ուներ Միհրան Գալստյանը, այդ պատճառով էլ նրա լսած համերգը «ցնցող» էր լինում, տեսած ծաղիկը՝ «ահավոր գեղեցիկ», հանդիպած մարդը՝ «խորախորհուրդ ու առինքնող»: Եվ նա գրում էր ցնցողի, ահավոր գեղեցիկի ու խորախորհուրդի մասին և բերում

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

խմբագրություն: Մկրտիչ Զուլոյանը սկզբում նույնությամբ ետ էր վերադարձնում ճարտարապետի գրվածքները, բայց տղան նորից էր բերում, և Մկրտիչ Զուլոյանը նրան սկսեց բացատրել, թե խմբագրությանն ինչ նյութեր են պետք: Եվ իրոք զարմանալի համառություն. ճարտարապետը բերեց հենց խմբագրի ասած անհրաժեշտ նյութերը: Խմբագիրը դիտողություններ արեց և մյուս օրը ստացավ խմբագրված ու նորից խնամքով մեքենագրված ինֆորմացիաներն ու ակնարկները: Միհրան Գալստյանը ամենևին չէր նեղանում դիտողություններից, չէր նեղանում նույնիսկ, երբ խմբագիրը անխիղճ ջնջում էր նրա բոլոր բացականչական նշանները, կախման կետերն ու ածականները:

Եվ սկսեց տպագրվել: Ոչ միայն տպագրվել, այլև փնտրված թղթակից դարձավ: Ինչի մասին էլ շտապ արձագանք պետք լիներ կամ տեղեկություն, խմբագիրը Միհրան Գալստյանին էր հիշում, որովհետև գիտեր, վստահ էր, որ հաջորդ օրը սեղանին կլինի եռանդուն երիտասարդի խնամքով մեքենագրված թղթակցությունը:

Իսկ մի անգամ, երբ պատասխանատու քարտուղարը հիվանդ էր և Մկրտիչ Զուլոյանն էր կազմում թերթի մակետը, նայելով նրա ձեռքի տակից դուրս եկած ծուռումուռ գծերին, Միհրանն ասաց.

- Ընկեր Զուլոյան, նյութերը տվեք ես մակետավորեմ, հա՞ …

- Կարո՞ղ ես,- թերահավատ հարցրեց խմբագիրը:

- Ես ճարտարապետ եմ,- հպարտությամբ ասաց Գալստյանը:

Իսկ երբ մի ժամ չանցած խմբագրի առջև դրեց ճաշակով ձևավորված, անթերի գծագրված, խելացի ու խնամքով կազմված մակետը, Զուլոյանը ակամա հարգանքով նայեց նրան.

- Եղբայր, դու պատրաստի պատասխանատու քարտուղար ես:

Միհրան Գալստյանի դեմքը շառագունեց:

- Դա իմ վաղնջական երազն է,- ասաց նա կակազելով:

- Ածականը հանիր,- բարկացավ խմբագիրը,- խոսիր ընդհանրապես առանց ածականի, հասկանո՞ւմ ես: Ածականը խեղճության նշան է: Եվ եթե նյութի կամ խոսքի մեջ զգացվում է ուրեմն պետք չէ: Իմ մտածողությունն արդեն կարծրացած է, ինձանից օրինակ մի վերցրու

- Կհանեմ,- առանց մազաչափ իսկ վիրավորվելու, խոստացավ Միհրան Գալստյանը:

- Եվ հանուն խմբագրությունում աշխատելուն, կթողնե՞ս ճարտարապետի գործը:

- Հենց վաղը,- ասաց Միհրանը:

Եվ երկու ամիս անց նշանակվեց «Լուսաբացի» պատասխանատու քարտուղար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երբ քաղկոմի բյուրոյից, որտեղ հաստատում էին նրա թեկնածությունը, Միհրան Գալստյանը ճարտարապետական բաժին վերադարձավ, գլխավոր ճարտարապետ Խոսրով Նշանյանը հարկ համարեց դիտողություն անել նրան,

- Սիրուն տղա,- ասաց նա: - Եթե մեկ-մեկ էլ աշխատանքի գաս, վատ չի լինի, հավատա ինձ:

Միհրան Գալստյանը մոտեցավ գլխավոր ճարտարապետին.

- Դուք ինձ դառը խոսքեր շատ եք ասել, մաեստրո, բայց ես չեմ վիրավորվել ձեզանից, որովհետև արդարացի եք եղել: Ու հիմա եկել եմ շնորհակալություն հայտնելու, որ ինձ ստիպեցիք փնտրել ու գտնել իմ տեղը:

Գլխավոր ճարտարապետը զարմացած նայեց նրան.

- Ես հասկացա, որ իմ կոչումը ոչ թե շենք նախագծելն է, այլ թերթ նախագծելը, ընկեր Նշանյան: - Նա ուզեց ավելացնել, որ վերջապես կզբաղվի իր բաղձալի և նվիրական աշխատանքով, բայց խմբագրին հիշելով, մտքում արագորեն կրճատեց ածականները: - Այնպես որ դառնում եմ լրագրող, մաեստրո,- ասաց նա:

- Ճիշտ ես անում,- առանց սեթևեթանքի հավանություն տվեց գլխավոր ճարտարապետը:

Եվ հիմա «Լուսաբացի» պատասխանատու քարտուղար Միհրան Գալստյանը, գունավոր մատիտները հաջորդաբար փոխելով ու հմտորեն տեղաշարժելով քանոնը, զարմանալի գեղեցիկ գծեր էր անցկացնում մակետի վրա ու հետն էլ սուլում: Նա իհարկե խմբագրությունում հիմնավորվելուց հետո, վաղուց էր մոռացել ածականների խնայողության և ընդհանրապես բնաջնջման վերաբերյալ խմբագրի հրահանգը, դրա համար էլ երբեմն-երբեմն գլուխը թեքում էր դեպի հարևան սեղանի մոտ նստած Ջավեն Շարաֆյանը և բացականչում.

- Ջավեն, մի շշմելու ռադիոընդունիչ եմ գնել, երբ բերեմ ձեր տուն՝ լսենք:

- Ինչո՞ւ,- ասում էր Ջավենը,- ձեր տանը չի լսո՞ւմ:

- Մեր տանը այնքան ձայներ կան, Ջավեն ջան, որ նույնիսկ իմ ձայնը չի լսվում:

- Դե ուրեմն՝ երբ ուզում ես, բեր:

Լռություն էր տիրում, այսինքն Միհրանը գծում էր և սուլում:

- Ջավեն, մի բան ասեմ, բայց հավատա ինձ:

- Լսում եմ:

- Ջավեն, այսինքն ուզում ես հավատա, ուզում ես, չէ, բայց ես դեռ շատ առաջ, 53 թվականից էլ առաջ, գիտեի, որ Բերիան ստոր մարդասպան է և հենց նա է մեր ամբողջ ժողովրդի դժբախտության պատճառը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ինչի՞ց էիր ենթադրում:

- Ակնոցից: Ճիվաղ ֆաշիստի ակնոց էր, բայց հիմնականն, իհարկե, աչքերից: Շահմար օձի աչքեր էին՝ դաժան ու սառը: Այդ մարդը չէր ժպտում: Ժպտալ չգիտեր կամ երևի չէր կարողանամ: Մի նկար տեսե՞լ ես, որտեղ նա ժպտա:

- Չեմ տեսել:

- Բա՞ :

- Հետո՞ ինչ,- Հենց այնպես վիճում է Զավենը: - Շեքսպիրն էլ ասում է մարդը կարող է ժպտալ և սրիկա լինել…

- Կարող է,- անմիջապես համաձայնում է Միհրանը,- բայց երբ չի ժպտում, երևի ավելի սարսափելի է…

Միհրանի ռեպլիկները միշտ անսպասելի են: Գծում, գծում է ու հետն էլ զանազան մտքերի մեջ ընկնում: Իսկ ընկնում է թե չէ՝ անմիջապես հարկ է համարում կիսվել Զավենի հետ, անկախ այն բանից՝ Զավենը զբաղված է, թե ոչ, գրում է, թե կարդում:

Լսվում է միայն մատիտի խզզոցող ձայնը և Միհրանի սուլոցը: Հիմա ուր որ է կխոսի, մտքում ժպտաց Զավեն Շարաֆյանը:

- Զավե՞ն:

Լսում եմ:

Մի անհամեստ հարց. Ինչո՞ւ չես ամուսնանամ:

- Տանող չկա- ասաց Զավենը:

Միհրանը ծիծաղեց, հետո չգիտես ինչու, դռան կողմը նայեց ու շշնջաց.

Իսկ ես սիրահարված եմ, գիտե՞ս…

- Ո՞ւմ,

- Խոսք տալի՞ս ես, որ ոչ ոքի չես ասի:

- Ազնիվ պիոներական,- ասաց Զավենը:

Միհրանը նորից ծիծաղեց:

- Գրադարանի Սեդային ճանաչո՞ւմ ես:

- Չէ:

- Չէ մի ասա, Զավեն, տեսած կլինես:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չեմ տեսել, չգիտեմ, Միհրան:

Ո՞նց չես տեսել,- հուզվեց Միհրան Գալստյանը,- ախր նա աշխարհի ամենասքանչելի արարածն է:

- Ես միշտ էլ կարճատես ու դժբախտ եմ եղել, Միհրան:

- Միակ դեպքն է, որ քեզ չեմ առարկում,- խռոված ձայնով ասաց Միհրանը: - Նա այնքան գեղեցիկ է, Զավեն, որ հնարավոր չէ անտարբեր անցնել կողքով: Գնում եմ գրադարան, գիրք եմ ուզում, նայում-նայում եմ, չեմ կշտանում, աչքերս չեմ կարողանում կտրել…

- Գրքի՞ց

- Կներես, բայց անհամ մարդ ես, Զավեն: Ես քեզ մոտ եղբոր պես սիրտս եմ բացում, իսկ դու…

- Ներիր,- սուտ խեղճացավ Զավենը,- պատահաբար ստացվեց: Բայց ախր դու էլ տարօրինակ մարդ ես, Միհրան: Ամենակարևորը չես ասում- իսկ այդ աղջիկն ինչ կարծիքի է- դեմ չէ՞:

- Կարծես թե չէ: Միայն քեզ եմ ասում, Զավեն: Հիմա մենք երբեմն հանդիպում ենք, զբոսնում իրար հետ-Դե դու պատկերացրու, էլի- աննման, լույսի պես աղջիկ է…

- Բա էլ ի՞նչ ես ուզում,- զարմացավ Զավենը,- Ինչու չես առաջարկում ամուսնանալ:

Միհրան Գալստյանը հառաչեց.

- Էհ, կարծում ես հե՞շտ է…

- Իսկ քեզ ի՞նչն է խանգարում, տուն ունես, տեղ ունես, աշխատանք ունես…

- Էհ, Զավեն ջան, չգիտեմ էլ, թե ինչպես ասեմ- ահավոր վիճակի մեջ եմ.:

- Հա, բայց ինչո՞ւ…

- Խմբագիրը չի հավանում:

- Ո՞վ,- ապշեց Զավենը:

- Ընկեր Զուլոյանը- Չգիտեմ ինչու, Սեդային չի հավանում:

Զավենը քիչ էր մնում փռթկար, բայց այնքան զարմացած ու զայրացած էր, որ չծիծաղեց.

- Խմբագիրը չի հավանո՞ւմ: Լո՞ւրջ ես ասում, Միհրան: Լսիր, դու հո, դու հո- Քո սիրած աղջիկը մակե՞տ է թե հոդված, որ խմբագիրը հավանի կամ չհավանի: Նրա՞ ինչ գործն է: Իսկ դու նրա կնոջը հավանո՞ւմ ես…

Դուռը ճռռոցով բացվեց և Միհրանը գրեթե սարսափահար դարձավ ձայնի կողմը հավանաբար մտածելով, թե ներս մտնողը խմբագիրն է: Բայց դեմքը փոխվեց միանգամից,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

վերածվեց լայն ժպիտի: Նա ոտքի կանգնեց անմիջապես և սեղանի ետևից դուրս նետվելով դիմավորեց այցելուին:

- Բարով եք եկել, մեր թանկագին բարեկամ: Խորին, խորին հարգանքներս: Ցավոք սրտի, խմբագիրը քաղկոմ է գնացել, բայց հիմա ուր որ է՝ կգա: Եթե ես կարող եմ…

- Ես նրան տեսա,-- ասաց այցելուն, որ քունքերի մոտ արդեն ճերմակած մազերով, ճերմակ, փոքրիկ բեղերով, համակրելի դիմագծերով մի մարդ էր: - Ուղղակի ազատ ժամանակ ունեի և եկա ծանոթանալու Զավեն Շարաֆյանի հետ:

Զավենը զարմացած բարձրացավ տեղից.

- Գառնիկ Վարդանիչ Բադալյան,- կրկեսի ադմինիստրատորի խանդավառ ձայնով հայտարարեց Միհրանը:

- Ժամանակ ունե՞ք, որ զրուցենք մի քիչ,- Զավենին դարձավ Բադալյանը: - Ճիշտն ասած՝ վաղուց էի ուզում հանդիպել ձեզ: բայց չէր ստացվում:

- Խնդրեմ,- փոքր-ինչ շփոթված նրան աթոռ առաջարկեց Զավենը:

Գառնիկ Բադալյանը նստեց.

- Դուք ո՞ր Շարաֆյաններից եք,- հարցրեց նա՝ կկոցելով աչքերը, - Լենինականի…

- Ծնողներս Ղարսից են,- ասաց Զավենը:

- Դե եթե ձեր ծնողները Ղարսից են, ուրեմն դուք էլ եք ղարսեցի: Մի հրաժարվեք: Պատերազմի վերջում ընդամենը մի հրաման էր պետք, որպեսզի ձեր ծնողները կարողանային վերադառնալ իրենց լքված տները, և պատմական անարդարությունը վերականգնվեր: Ես դա լավ գիտեմ, տղաս: Բայց այդ հրամանը չեղավ:

- Իմ հայրն արդեն վերադառնալ չէր կարող,- համակրանքով լցվելով այդ բարեհամբույր մարդու նկատմամբ, ակամա սիրտ բացեց Զավենը: - Հայրս զոհվել է 42 թվականին:

Գառնիկ Բադալյանի դեմքը խստացավ. նա բարձրացրեց գլուխը ու մնաց անշարժ՝ ասես սգո լռության րոպեի խորհուրդն էր կատարում: Իսկ հետո հարցրեց կամացուկ.

- Հարցս անտեղի չհամարեք, խնդրում եմ, իսկ ի՞նչ մասնագիտություն ուներ ձեր հայրը:

- Բանվոր էր,- ասաց Զավենը: - Փականագործ էր հաստոցաշինական գործարանում:

Գառնիկ Բադալյանը ժպտաց.

- Ես այդպես էլ կարծում էի,- ասաց նա: - Այդպես էլ համոզված էի:

Զավեն Շարաֆյանը անհարմար զգաց հարցնել, թե ինչու էր նա այդպես կարծում և թե ընդհանրապես մի՞թե որևէ նշանակություն ունի դա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ Գառնիկ Բադալյանն ինքը բացատրեց.

- Ձեր հոդվածներից երևում է,- ասաց նա զարմացած լրագրողին: - Հարցերին մոտենալու, հարցեր բարձրացնելու ձեր ոճը բանվորական է: Պարզ, անկեղծ, ուղղամիտ: Ես կարդացել եմ «Լուսաբացում» տպագրված ձեր բոլոր հոդվածները: Եվ դա նկատելի է: Եվ ես շատ ուրախ եմ դրա համար: Ամեն ինչի մասին չի կարելի քաղցր-մեղցր, հորթի հրճվանքով, վերամբարձ ու փքուն ոճով գրել: Այդ քաղցրությունից սիրտ է խառնում: Դա սախարինային քաղցրություն է: Թվում է, թե անուշ է, բայց համ չունի, մեջը բան չկա: Ես Զուլոյանին էլ եմ ասում, թերթում տպագրված ակնարկների սկիզբն ու վերջը ես չեմ կարդում ընդհանրապես: Բնության այդ սուտ, անկապ ու անհեթեթ նկարագրությունները… Եվ վերջապես ում եք խաբում, չէ՞ որ դուք գրում եք այն մասին, ինչ մարդկանց հետ է կատարվում: Մարդիկ ապրում են այդ բանի մեջ, սեփական աչքով տեսնում և սեփական մաշկի վրա զգում այդ բաները: Իսկ դուք նայում եք մարդկանց աչքերի մեջ ու խաբում եք:

Միհրան Գալստյանը բարձրացավ աթոռից ու ասաց ամաչելով.

-Ինձ կներեք, գործ ունեմ, պետք է մենակ թողնեմ ձեզ:

- Ներում ենք,- գլխով արեց Գառնիկ Բադալյանը: - Բայց ձեր կոմբինատի արտադրական ժողովի մասին քո գրած ինֆորմացիայի համար քեզ չեմ ների: Չեմ կարող ներել: Միհրան ջան, եղբայրս, հնարավո՞ր բան է, որ բոլոր ելույթ ունեցողները՝ բանվոր թե ինժեներ, հաշվապահ թե դիրեկտոր նույն բառերով խոսեն ու նույն մտքերն արտահայտեն: Նույն: Ինչո՞ւ մարդկանց ոճը չեք պահպանում: Ախր ով էլ կարդա՝ չի հավատա ձեր գրածին: Ամոթ է, չէ՞

Միհրան Գալստյանը կաս-կարմիր կտրեց, ինչ-որ բան մրմնջաց ու շտապեց դուրս գալ:

- Իսկ ձեր հոդվածները, ընկեր Շարաֆյան…

- Խնդրում եմ, ինձ Զավեն անվանել, հա՞,- իսկապես խնդրեց լրագրողը: - Եվ եթե կարելի է՝ «դու»-ով:

Գառնիկ Բադալյանը ժպտաց,

- Այդ դեպքում ես էլ խնդրում եմ, որ թույլ տաս ծխեմ:

Նա գրպանից հանեց սիգարետի տուփը, և Զավեն Շարաֆյանը զարմանքով տեսավ, որ «Ավրորայի» տուփ է դա: «Ավրորա՞ »: Հսկա կոմբինատի դիրեկտորը ամենահասարակ, աշխատավորական սիգարե՞տն է ծխում: Երբ նույնիսկ ինքը՝ անտուն-անտեր Զավենը կոպեկները խնայելով ու հաշվելով, այնուամենայնիվ «Կազբեկ» է պահում գրպանում:

- Միտքս ամփոփեմ, սիրելի Զավեն, քո գրածները հենց նրանով են դուր գալիս ինձ, որ բանվորավարի են, պարզ են ու մարտական: Դու հարցի կոկորդից ես բռնում: Միայն թե ժամանակն է, որ ծավալվես ու բարձրանաս: Ոչ մի բանից մի վախեցիր, տղաս: Անխնա ու անզիջում եղիր, որովհետև նրանք, ում դեմ պայքարում ես՝ քո հոր թշնամիներն են, բանվորների թշնամիները: Ով հեղաշրջեց երկիրը, ո՞վ արյուն թափեց՝ բանվորներն ու չքավոր գյուղացիները, Իսկ ո՞վ է վայելում նրանց հաղթանակի պտուղները՝զանազան

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

բյուրոկրատներ, օսլայած օձիքով ու փողկապով ինտելիգենտիկներ, որոնք կուսակցական ապարատն են սողոսկել խորհուրդների մեջ: Ահա փաստը: Եվ նրանց պետքը չէ, որ բանվորներն ու գյուղացիները նույն խեղճ վիճակի մեջ են: Նրանց թողտվությամբ ասպարեզը մնացել է սպեկուլյանտներին, գողերին խաբեբաներին, որոնք տզրուկների նման կպել են երկրի արյունատար անոթներին, վխտում են առևտրի ցանցում և կենցաղսպասարկման բնագավառում: Շուկա մտած կա՞ս : Դա բանվորի՞ համար է, Զավեն…

Զավեն Շարաֆյանը, կոմբինատի դիրեկտորի ուշադրությունից և գովասանքից շփոթված, գրեթե կակազելով պատմեց այն ամենի մասին, ինչ կարողացել էր տեսնել ու հայտնաբերել շուկայում:

Գառնիկ Բադալյանը ոտքի կանգնեց՝ շրթունքները զայրալից սեղմած.

- Գրիր- ասաց նա ատելությամբ: - Անմիջապես: Եվ միլիցիայի այդ կապիտանին մի հավատա: Նա նրանց հացն է ուտում և անպայման ծախու մարդ է: Գրիր և ոչնչից մի վախենա: Բանվորները քեզ հետ են: Եթե իմ կարիքն ունենաս անմիջապես զանգ տուր: Գուցե պետք է որ գոնե մի քանի օր տղաներ լինեն կողքիդ: Ասա ինձ: Գիտե՞ս ինչ բանվոր տղաներ ունեմ, իսկական կորյուններ են:

- Շատ շնորհակալություն,- ժպտաց Զավեն Շարաֆյանը: - Բայց չեմ կարծում, թե հարկ լինի: Իմ կարծիքով, նրանք միայն իրենց նմանների համար են սարսափելի…

- Է , մի ասա, մի ասա, երբ մարդը ամոթ չունի և գողանալով ու խաբեությամբ է ձեռք բերում իր ամենօրյա հացը, նրանից ամեն տեսակի ստորություն կարելի է սպասել: Այնպես որ զգույշ եղիր, տղաս: Մի վախենա, բայց զգույշ եղիր:

Նա հրաժեշտ տվեց, սեղմեց լրագրողի ձեռքը, քայլեց դեպի դուռը, բայց ճանապարհին կանգ առավ ու շրջվեց:

- Եթե,- ասաց նա,- եթե խմբագիրը վախենա տպագրել, ինձ զանգ տուր:

Զավեն Շարաֆյանը շնորհակալությամբ գլխով արեց:

* * *

Գիշերը անհանգիստ քնեց ու արդեն առավոտվա կողմ մի անհեթեթ, խառնիճաղանջ երազ տեսավ: Իբր Սիրանը լեզու էր ցույց տալիս, որից ինքն արթուն վիճակում էլ նյարդայնանում էր, իսկ հետո ցատկեց սեղանի վրա ու սկսեց պարել: Բայց, չէ, սեղան չէր, այլ բեմ, ու Սիրանը պարում էր բեմի վրա՝ մանրիկ-մանրիկ զցելով ոտքերը, ու պտտվում էր և յուրաքանչյուր պտույտի ժամանակ լեզու էր ցույց տալիս Զավենին: Հետո երաժշտությունը խորհրդավոր ու տագնապալի դարձավ և անկյունից հայտնվեց Էմման՝ սպիտակ «պաչկա» պարազգեստով և սպիտակ ժապավենով: «Ելույթ է ունենում բալետի մենակատար Մկրտիչ Զուլոյանը»,- դահլիճով մեկ տարածվեց պատասխանատու քարտուղար Միհրան Գալստյանի հանդիսավոր ձայնը: Զավենը շրջվեց ձայնի կողմը՝ ինչ Զուլոյան, պարողը Էմման է: Ու երբ նորից հայացքը Էմմային դարձրեց՝ քար կտրեց զարմանքից: Իրոք որ խմբագիրն էր՝ սպիտակ «պաչկայով» ու մեծ սպիտակ ժապավենով: Նա մեռնող կարապի նման ծածանում էր ձեռքերը,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

կաքավում էր մազմզոտ ոտքերի վրա, իսկ հետո, իբր մեռնելով, կռացրեց գլուխը և Զավենին աչքով անելով, ծխից խռպոտած ձայնով ասաց. «Այդպես է պետք, դու չես հասկանում»: Ու մեկ էլ Զավենն զգաց, որ կողքին՝ ոտքը ոտքին գցած, նստած է թերթի կուսակցական բաժնի վարիչ Նիկողայոս Սևյանը և ասում է գլուխը տմբտմբացնելով. «Իսկ մենք քաղկոմում հարցերն ուրիշ ձևով էինք լուծում»:

Զավեն Շարաֆյանը վեր թռավ քնից, ծիծաղելով՝ ինչ հիմար բաներ ասես, որ մարդ չի տեսնում երազում: Եթե մորը պատմեր՝ մայրը սովորականի նման կծիծաղեր ու կասեր, ինչ-որ տեղդ բաց ես քնել, տղա ջան: Շարունակելով խնդմնդալ ինքն իրեն ու երազից մանրամասներ հիշելով, Զավենը հագնվեց արագորեն ու բակ դուրս եկավ՝ լվացվելու: Ծորակի տակ պահելով ափերը, նա ջուրն արագ-արագ դեմքին ու գլխին էր լցնում ու ծիծաղում:

- Բարի լույս, Զավեն,- լսեց նա տանտիրուհու ձայնը և գլուխը դարձնելով տեսավ, որ նա մկրատը ձեռքին վարդեր է քաղում բարձր թփերի վրայից:

- Բարի լույս, տիկին Ալվարդ: Միքայելից ի՞նչ լուր:

- Զանգահարում է, արձակուրդներին կգա,- պայծառացավ տանտիրուհին, - իսկ այդ ո՞ւմ հետ էիր խոսում ու ծիծաղում:

-Չէի խոսում, միայն ծիծաղում էի, տիկին Ալվարդ,- ամաչեց տղան, -Հիմար-հիմար երազներ էի տեսել:

- Իսկ ես այս տարվա վերջին վարդերն եմ կտրում: Տարօրինակ կթվա, բայց չեմ սիրում, երբ վարդը թառամում է թփի վրա: Դրա մեջ տխուր բան կա, կարծես թե մոռացված լինի, ոչ ոքի պետք չէ, ոչ ոք նրա կարիքը չունի:

Զավենը վայրկենապես հիշեց, որ այսօր կիրակի է, որ մշակույթի տուն է գնալու և ինքն իրեն խոստացել է ծաղիկներ տանել Էմմային:

-Տիկին Ալվարդ, միայն թե անամոթություն չհամարեք, դուք որ չխոսեիք ՝ չէի ասի: Որովհետև չգիտեմ ով ինչպես, բայց ես հիմա դրանց կարիքը զգում եմ: Եվ եթե երեք հատ վարդ տաք ինձ, ստիպված չեմ լինի շուկա հասնել:

- Այդ արդեն չեղավ, տղաս,- գլուխը նախատինքով օրորեց տանտիրուհին: - Բակը վարդերով լցված է, իսկ դու շուկայի՞ց ես ուզում առնել: Վերցրու, վերցրու այս ամբողջ փունջը:

- Ի՞նչ եք ասում, այդքանն ինձ պետք չէ, տիկին Ալվարդ…

- Ում որ նվիրում ես, նրան պետք կլինի: Վերցրու, ասում եմ…

- Փրկվեցինք,- երջանիկ ծիծաղեց Զավենը: - Շատ, շատ շնորհակալություն…

Նա կնոջ ձեռքից վերցրեց վարդերի փունջը, հոտ քաշեց ու գլուխը շարժեց երանությամբ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ճիշտ են ասում, էլի, որ ծաղիկների թագուհին է: Տիկին Ալվարդ,- հարցրեց նա, - ամբողջ գրականության մեջ հատուկ նշված է, և ես ինքս էլ հիշում եմ, որ մի ժամանակ վարդը միայն մայիսին էր լինում: Հիմա ի՞նչ է պատահել՝ նոյեմբերն է արդեն, բայց վարդը տեղեկություն չունի այդ մասին: Նրա համար ասես թե դեռ մայիս է:

Ալվարդը ծիծաղեց:

-Ես դրանից բան չեմ հասկանում: Բայց, ո՞վ գիտի, երևի ինչ-որ բան է պատահել, լավացել է վարդի կյանքը, փոխվել է, ցավ չունի, կամ կարողանում է մոռանալ ցավը, տարիքը չի զգում, դրա համար նոյեմբերին էլ կարծում է, թե մայիս է- Երանի մարդիկ էլ կարողանային այդպես ապրել…

Զավենը զարմացած նայեց տանտիրուհուն և վարդի փունջը առաջ պարզած, կոմիկական հանդիսավորությամբ գլուխ տվեց նրան:

- Բրավո, տիկին Ալվարդ: Դուք իսկական փիլիսոփա եք, ազնիվ խոսք:

- Է, տղաս, ի՞նչ ասեմ,- հանկարծ հառաչեց տանտիրուհին և սկսեց դանդաղ բարձրանալ փայտե աստիճաններով:

Իսկ տղան, շարունակելով զարմացած վերլուծել տանտիրուհու բավականին հետաքրքիր միտքը, մտավ տուն, պահածոյի թիթեղյա տուփը ջուր լցրեց, դրեց նավթավառի վրա, երկու հատ ձու իջեցրեց ջրի մեջ և սկսեց անհամբերությամբ սպասել, որ պինդ խաշվեն ձվերը: Հետո մի շերտ հաց կտրեց սև բոքոնից, որ գործկոմի բուֆետապան կինը ամեն օր բարեխղճորեն պահում էր նրա համար: Ու այն է, մտածում էր, թե կյանքն այնքան էլ տխուր չէ, որքան երբեմն թվում է, երբ հեռախոսը զնգաց:

- Լսում եմ,- լսափողը վերցնելով ասաց Զավենը:

Հեռախոսալարի մյուս ծայրում մեկն ասես թե տնքաց:

- Ալո, - ձայնը բարձրացրեց լրագրողը: - Լսում եմ:

Ինչ-որ մեկը շարունակում էր տնքալ: Կամ գուցե թվո՞ւմ էր:

- Ես ձեզ լսում եմ,- գրեթե բացականչեց Զավենը: - Դուք ինձ չե՞ք լսում:

Հեռախոսալարի մյուս ծայրում լսափողը ցած դրեցին:

Զավեն Շարաֆյանը թոթվեց ուսերը: Տարօրինակ մարդիկ են: Եթե զանգ եք տալիս, ինչո՞ւ չեք խոսում: Ու անմիջապես էլ մտածեց թե հեռախոսային ցավ է, խառնված գծերն են մեղավոր: Օր չկար որ նա բողոքներ չստանար հեռախոսային ցանցի վատ աշխատանքի մասին: Սկզբում տպագրեց նամակներից մի քանիսը: Անմիջապես պատասխանեցին, թե անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկված, նոր սարքեր են տեղադրվում և շատ շուտով բողոքներ չեն լինի: Սարքերն իրոք տեղադրվեցին, մի ամբողջ թաղամաս ապահովվեց հեռախոսով, սակայն բողոքների թիվն ավելի մեծացավ: Հիմնական տրտունջն այն մասին էր, որ երբեք վստահ չես,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

թե քեզ օտար մարդիկ չեն լսում: Հենց վերցնում ես լսափողը ու հավաքում համարը, անմիջապես ընկնում ես ուրիշների խոսակցության մեջ:

Մի նամակում էլ, երևի հեռախոսացանցից ազատված մեկը, համոզում էր, թե գծերի խառնվելու պատճառը այն է, որ հեռախոսային ցանցի աշխատողները գողանում են հեռախոսալարերն իրար կապող արծաթե մասերը:

Հեռախոսը զնգաց նորից:

- Լսում եմ,- անմիջապես արձագանքեց Զավենը:

Գծի մեջ՝ ոչ մի ձայն:

- Լսում եմ, ալո,- ակամա նյարդայնացավ լրագրողը:

Նրա ձայնը կարծես թե նոր միայն հասավ զանգահարողին:

- Ալո ,- ասես բոլորովին մոտերքից լսվեց կանացի մի ձայն: -Ընկեր Շարաֆյան, դո՞ւք եք:

- Ես եմ, լսում եմ,- ասաց Զավենը շտապով:

- Դե եթե լսում ես,- ասաց մեկը տղամարդու բամբ ու խեղված ձայնով,- ականջիդ օղ արա: Մեկ էլ որ բազար ես մտել, ոտքերդ կջարդեմ, լակոտ:

Դա այնքան անսպասելի էր, որ Զավեն Շարաֆյանը մի պահ կանգնած մնաց լսափողը ձեռքին, որից անջատման ազդանշաններ էին հնչում:

Սա ինչ բան է, ո՞վ կարող է լինել այդ կինը և հետո այդ տղամարդը: Թե զանգողը միևնույն տղամարդն էր, բայց սկզբում կանացի ձայնով էր խոսում: Եվ ի՞նչ ասաց: Եվ ի՞նչ ասաց “Մեկ էլ որ բազար ես մտել»- Ուրեմն շուկայից է, կասկած չկա: Բայց ո՞վ կարող է լինել: Որտեղի՞ց է իմացել, որ ինքը շուկայի հարցերով է զբաղվում: Մի՞թե միլիցիայի կապիտան Սիմոն Հալաբյանն է մատնել: Բայց դա որքա՞ն է ձեռնտու նրան: Եվ հետո մարդն ասաց, «Ահա իմ ձեռքը: Ես քեզ օգնական»: Այդպես ոնց կլինի, անհնարին բան է: Հավանաբար տեսել են, որ միլիցիայի սենյակ մտավ ու երկար ժամանակ այնտեղ էր: Հավանաբար ինչ-որ մեկը ճանաչել է: Մի՞թե հնարավոր չէ: Ավելի քան մի ամիս գրեթե ամեն օր շուկայում էր: Հատկապես լուսանկարիչ Պետրոս քեռու մասին գրելուց հետո դժվա՞ր էր, ինչ է, պարզելը, թե ով է այդ թղթակիցը: Դե իհարկե, սխալն այդտեղից է գալիս: Եթե մտադիր էիր լուրջ բաներ գրել ավազակաբնի մասին, ինչ միտք ուներ թեթևամտորեն հենց սկզբից ի ցույց դնել քեզ:

Նա թշշոց լսեց և գլուխը շրջելով տեսավ, որ թիթեղյա տուփից թափվում է փրփրակալած եռացող ջուրը: Ուրեմն դարձյալ ձվերից մեկը ջարդվել է, սրտնեղած մտածեց նա: Լավ, այդ ինչպե՞ս է պատահում, որ ձվերից մեկն անպայման ճաքած է լինում: Նա երկաթե աքցանով բռնեց տուփի եզրից, տարավ դուրս ու պահեց ծորակի տակ: Տուփի միջից ջրի հետ սպիտակուցի մնացորդներ էին թափվում, և նա զգաց, որ այլևս ուտել չի ուզում: Ու անմիջապես էլ մտածեց, որ պատճառը ճաքած ձուն չէ: Առաջի՞ն անգամ էր, ինչ է…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Զավեն, - լսեց նա վերևից, - ես էլ կարծում էի, թե արդեն դուրս եք եկել: Քեզ հեռախոսի մոտ են կանչում:

Հեռախոս, հեռախոս..

- Իսկ ո՞վ է հարցնում, տիկին Ալվարդ:

- Չգիտեմ, - ասաց տանտիրուհին, - ինձ անծանոթ ձայն է:

Հարկավոր է սուտ-մուտ ինչ-որ բան ասել, ձգձգել խոսակցությունը և աշխատել ձայնից այնուամենայնիվ կռահել, թե ով է:

Զավեն Շարաֆյանը տուն մտավ, սեղանին դրեց սառած թիթեղյա տուփը, զզվանքով, ասես գորտի է մեկնում ձեռքը, վերցրեց լսափողը, բայց ձայն չհանեց: Թող առաջինը նա խոսի: Լարի մյուս ծայրում ինչ-որ երաժշտություն էր լսվում, երևի ռադիոն էր միացրել գծին: Հետո մեկը խուլ ձայնով, ասես թե ինքն իրեն, զարմացած քրթմնջաց.

- Վայ, անջատվեց երևի- Ալո…

Ձայնը կարծես թե ծանոթ էր: Ահա, դե խոսիր, խոսիր- խոսիր, տեսնենք ով ես…

- Լսում եմ, - որքան հնարավոր է հանգիստ ասաց Զավենը:

- Վա՞յ, Զավեն ջան, դու ես… Ես էլ կարծեցի տանտիրուհին մոռացել է կանչել քեզ:

Զավենը հանգստացավ միանգամից ու ակամա ժպտաց՝ ճանաչելով Միհրան Գալստյանի ձայնը: Խնդրեմ, դե եկ ու երազներին մի հավատա:

- Ես եմ,- ասաց նա,- լսիր, գիշերն այդ ի՞նչ ելույթներ էիր ունենամ:

- Ե՞ս, որտե՞ղ,- զարմացավ Միհրանը:

- Իմ երազի մեջ:

Միհրան Գալստյանը երկար ծիծաղում էր, հետո կարծես թե ցած դրեց լսափողը ու Զավենի ասածը կրկնեց տնեցիներին, որովհետև ծիծաղն ավելի բարձրաձայն դարձավ:

- Հիմա ի՞նչ ես ասում,- հարցրեց Միհրանը:

- Ինչի՞ մասին: `

- Ռադիոընդունիչս չբերե՞մ ձեր տուն, միասին լսենք:

- Միհրան,- ասաց Զավենը,- կհավատա՞ս, որ իմ տանը էլեկտրական խրոց չկա:

- Ոչինչ, ես լապտերի լարից ասեղներով կմիացնեմ:

Զավեն Շարաֆյանը մի հայացք ձգեց լուսամուտի գոգին դրված վարդերի փնջին.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Մի ուրիշ օր, հա, Միհրան ջան,- խնդրեց նա: - Այսօր ես բալետ եմ նայելու մշակույթի տանը,

- Բալե՞տ, - հիասթափված հարցրեց Միհրանը: - Ի՞նչ բալետ է, ո՞վ է պարելու:

- Մեր խմբագիրը, - ասաց Զավենը:

- Ո՞վ, ո՞վ, - ապշեց Միհրանը,- Ընկեր Զուլոյա՞նը-Գժվել ես, ինչ է…

- Հետաքրքիր մարդ ես, Միհրան, դու չէի՞ր հայտարարում:

- Ես, - կակազեց պատասխանատու քարտուղարը: - Լսիր, դու հո հարբած չես…Դա ինչ պրովոկացիա է: Ես որտեղ եմ այդպիսի բան ասել:

- Երազիս մեջ, - ասաց Զավենը: - Իմ ականջով լսեցի:

Միհրանը մի պահ լռեց, իսկ հետո սկսեց քրքջալ, քրքջում էր ընդհատ-ընդհատ, երևի պատմում էր տնեցիներին ու քրքջալով ցած դրեց լսափողը:

Իսկ Զավենն այդպես էլ ձեռք չտալով հացին ու սեղանին թողնելով սառած ձվերը, վերցրեց վարդերի փունջը, նայեց իրեն պատից կախված հայելու մեջ, լեզուն հանեց Սիրանի նման, ծռմռեց դեմքը, ձեռքի ափով սղալեց մազերը և քայլերն ուղղեց դեպի մշակույթի տուն:

Դեռ մշակույթի տանը չհասած, նա տեսավ, որ հրապարակը գրեթե լեփլեցուն է աշակերտներով: Ըստ որում՝ բոլորը կարծես թե խոսում էին միաժամանակ, ոչ մեկը մյուսին չէր լսում, ամբողջ հրապարակը բզզում էր փեթակի պես: «Ես ինչ պետք է անեմ սրանց մեջ,- անհանգստացավ Զավենը,- ես ո՞նց կարող եմ այսքան երեխաների ներկայությամբ ծաղիկներով դահլիճ մտնել ու կարծես դա քիչ է՝ ծաղիկներն էլ նվիրել պարուհուն»: Նա անօգնական այս ու այն կողմ էր նայում, երբ տեսավ խմբագրության ինֆորմացիայի բաժնի վարիչ Մարո Մելիքյանին, որն իր անբաժան հաստ տետրով մշակույթի տուն էր մտնում:

- Մարո՞:

- Զավե՞ն: Դու է՞լ ես ուզում տեսնել: Բոլոր դեպքերում մեր քաղաքի համար երևույթ է, չ՞է :

- Ինչ խոսք,- ասաց Զավենը:

- Խմբագրին զանգ տվեցի, տանը չէր: Ուզում էի համաձայնեցնել: Չի բարկանա, չէ՞: - Ընդհակառակը,- խրախուսեց Զավենը: - Կարծում եմ, որ շատ գոհ կլինի: Երկուսն էլ մեր բալետի բարձրացող աստղերն են:

- Իսկապե՞ս, քեզ ծանո՞թ են: Կարելի է վերնագիրը հենց այդպես էլ դնել, չէ , «բարձրացող աստղեր»:

- Իհարկե, կարելի է, Մարո ջան, ես հենց ուզում եմ քեզ խնդրել, որ համերգի վերջում մոտենաս այդ աստղերից մեկին ու նվիրես այս փունջը:

- Որի՞ն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Պարզ չէ՞ որ աղջկան,- ժպտաց Զավենը:

- Իսկ դու նրան անձամբ գիտե՞ս:

- Այնպես, էլի,- ծամծմեց Զավենը:

- Հաճույքով կնվիրեմ՝,- ասաց Մարոն: - Առիթ կդառնա, մի փոքրիկ հարցազրույց էլ կանցկացնեմ…

- Շատ խելոք բան ես մտածել,- գլխով արեց Զավենը:

Հետո ինչ-որ բան մտածեց ու ավելացրեց: - Մի կտոր թուղթ չե՞ս տա, Մարո ջան: - Թո՞ւղթ,- հարցրեց աղջիկը: - Թուղթ չունեմ:

- Ինչպես թե չունես, բա դա ի՞նչ է,- տետրը ցույց տալով, զարմացավ Զավենը:

Մարոն վախեցած ետ քաշեց տետրը:

- Ի՞նչ ես ասում, տետրը հո չեմ պատռելու: Հազար տեսակ գրառումներ կան…

Զավենը ժպտաց: Քիչ էր մնում ասի. «Ինչ է, վախենում ես խմբագրի իմաստուն մտքերը աղճատվե՞ն»: Բայց անմիջապես զսպեց իրեն: Մեկ էլ տեսար հրաժարվեց ծաղկեփնջից:

- Դե լավ,-- ասաց նա: Գրպանից հանեց «Կազբեկի» տուփը, պատռեց մի կողքը, այցեքարտի նման դարձրեց ու գրեց վրան, «թյու զափսեղ», ծալեց ու մեկնեց աղջկան: - Սա էլ վարդերի հետ կտաս նրան, հա՞ …

Մարո Մելիքյանը կամացուկ, դավադիր ծիծաղեց:

- Բոլորովին չէի սպասի: Խմբագրությունում այնքան սուսիկ- փուսիկ ես:

- Վախեցիր մարմանդ գետերից, Մարո,- լրջորեն ասաց Զավենը:

Նա մտածեց, որ առնվազն մի ժամ կտևի համերգը և դանդաղ քայլեց դատարկված հրապարակով՝ ուշադրությամբ նայելով շուրջը: Անկյունում, վերարկուի վրա սպիտակ խալաթ հագած, երկար բեղերով մի տղա մսով կարկանդակ էր վաճառում փոքրիկ սայլակի միջից: Կողքին ափսեներով աղ ու պղպեղ էր դրված: Սայլակի վրայից գոլորշի էր բարձրանում, և դա էլ վճռեց ամեն ինչ: Ուրեմն տաք են կարկանդակները: Զավենը երբեմն-երբեմն կարկանդակ էր գնում երկար բեղերով այդ տղայից, և վաճառողը ճանաչում էր նրան:

- Կերեք, ընկեր Շարաֆյան, նոր բերեցի, տաք-տաք են:

Զավենը մի կարկանդակ վերցրեց, ամաչելով նայելով չորս կողմը, աղ ու կարմիր բիբար լցրեց վրան և կծեց կողքից: Միս, իհարկե, չկար: Կծեց մի անգամ էլ, նայեց տարակուսանքով, բայց միս դարձյալ չկար: Պատռեց մեջտեղից, նայեց- բրնձի մի քանի հատիկներ կային: Ուրիշ ոչինչ: Նա թեքեց գլուխը ու տառ-տառ կարդաց սայլակից կախված թղթի վրա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

«Մսով պերաշկի»:

- Ի՞նչ է, ընկեր Շարաֆյան, տառասխա՞լ եք ման գալիս, - ժպտաց վաճառողը:

- Չէ, ախպեր ջան,- ասաց Զավենը,- միս եմ ման գալիս: Տառասխալն ի՞նչ եմ անում, մեր թերթում էլ շատ կա:

Վաճառողը կարծես թե ամաչեց.

- Ի՞նչ անեմ, ընկեր Շարաֆյան, հո ես չեմ միս լցնողը: Ինչ որ տալիս են, բերում եմ,հոգուդ մեռնեմ:

- Իսկ որտեղի՞ց ես բերում,- հարցրեց լրագրողը:

- Շուկայի ճաշարանի շրջիկ կետն եմ:

- Վարիչն ո՞վ է:

- Բերսաբեն- այսինքն՝ Կորյունը:

- Հիմա ինչ, Բերսաբե՞ն, թե Կորյունը:

Վաճառող տղան շփոթվեց:

- Դե ինչ տարբերություն, ընկեր Շարաֆյան… Բերսաբեի հետ գործ ունեմ: Ապրանքը նա է հաշվում տալիս, փողերն էլ ինքն է վերցնում: Ինձ համար ինչ տարբերություն, ընկեր Շարաֆյան,- հանկարծ խնդրեց տղան,- մի հատ էլ վերցրեք, էլի-- նրա խիղճը տանջում էր:

- Չեմ ուզում,- ասաց Զավենը:

- Ինչի՞, վերցրեք, էլի, ձեր բախտից կարող է էդ մեկի մեջ միս լինի, ո՞վ գիտի: Վիճակախաղի պես բան է- Դրանց մեջ էլ փուչը շատ է լինում:

Զավենը սրտանց ծիծաղեց: Համեմատությունը շատ սրամիտ թվաց, ու նա ծիծաղում էր երկար, անկեղծ, ինչպես վաղուց չէր ծիծաղել: Իսկ հետո ասաց.

- Եթե հանկարծ որևէ տեղ օգտագործեմ քո սրամտությունը, նշե՞մ, թե հեղինակն ով է: Անխիղճ բան կլինի, եթե չնշեմ…

Վաճառողը անհանգստացավ.

- Միանգամից տուներս քանդեք, պրծեք: Անխիղճ բանն այն կլինի, եթե անուներս տաք, ընկեր Շարաֆյան, ոտքով գլխով կկորչեմ: Մի նայեք, որ ջահել եմ, երկու երեխա ունեմ…

- Համոզեցիր,- ծիծաղեց Զավենը-- Պայմանավորվեցինք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նա հրապարակում շրջեց ու սպասեց այնքան, մինչև տեսավ. որ երեխաները ճիչ-աղաղակով, իրար հրմշտելով դուրս են թափվում մշակույթի տնից: Հետո դարձյալ սպասեց բավականին երկար՝ մտքում ոչ այնքան բարի խոսքերով հիշելով Մարո Մելիքյանին և նրա հարցազրույցը, համոզված, որ Մարոն է Էմմայի ուշանալու պատճառը: Եվ չէր սխալվում: Երբ Էմման հայտնվեց՝ վարդերի փունջը ձեռքին, նրա կողքը հայտնվեց նաև Մարո Մելիքյանը, որը հենց ընթացքի ժամանակ հարցեր էր տալիս և պատասխաններն արագ-արագ գրում իր նշանավոր տետրի մեջ:

Զավենը կանգնել էր ճանապարհի մեջտեղում, և Էմման անմիջապես տեսավ նրան,

- Զավեն,- սրտանց ուրախացած բացականչեց պարուհին՝ առաջ նետվելով և Մարոյի զարմացած հայացքի առաջ՝ գրկելով նրան: - Դու էիր չէ՞, դու էիր, «թու խասգեղը» քոնն էր, չէ՞:

-Իմն էր, Էմմա ջան,- ծիծաղեց Զավենը: - Իսկ դու գիտե՞ս, միայն վերջերս եմ գլխի ընկել, որ մեր տապկնոցիի «թյու խասգեղը» ընդամենը ռուսերեն «զա վսեխն» է եղել:

- Չծիծաղես, բայց ես էլ բավականին ուշ հասկացա,- քրքջաց Էմման:

Մարո Մելիքյանը կանգնել էր շփոթված, չգիտեր ինչ անել:

- Ես հո չխանգարեցի,- իրար անցավ Զավենը: - Հարցազրույցն ավարտեցի՞ր, Մարո ջան:

- Այո, այո,- նրա փոխարեն անմիջապես պատասխանեց Էմման: - Դուք գոհ եք, չէ, ջանիկս:

- Մարո Մելիքյանը իմ աշխատանքային ընկերուհին է,- ասաց Զավենը:

- Հիանալի աշխատող է երևում,- ասաց Էմման,- ինձ ստիպեց պատմել ողջ կենսագրությունս:

Մարո Մելիքյանը ժպտաց.

- Ոչ ամբողջը,- ասաց նա,- Զավենի մասին, օրինակ, դուք ոչինչ չասացիք,

- Բռավո,- սրամտությունը գնահատեց Էմման,-- շատ-շատ խորհրդավոր պատմություն է: Մի օր Զավենը կպատմի: Ես թույլ եմ տալիս,

Մնամ այդ օրին սպասող Մարո Մելիքյան,- ծիծաղեց Մարոն և տետրը թևի տակ ամուր սեղմած, հրաժեշտ տվեց նրանց:

-Զավեն, - անմիջապես տղային թևանցուկ արեց Էմման,- նա, ի՞նչ է , քեզ խանդելու իրավունք ունի՞:

Լրագրողը ծիծաղեց.

Այնքան, որքան աշխարհի բոլոր աղջիկները՝ առանձին-առանձին և միասին վերցրած: Կհավատաս, այս ամիսների ընթացքում առաջին անգամ զգացի, որ նա հումոր ունի: Հա, Էմմա, իսկ այն տղան ո՞ւր է…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Որ ինձ գրկած մա՞ն է գալիս:

- Ըհը:

- Ելույթից հետո նա անմիջապես հյուրանոց է գնում: Եթե աշխարհին էլ քանդվի, նա իր ռեժիմը չի խախտի:

Զավենը մտքում հաշվեց գրպանի դրամները՝ աշխատավարձի կեսին գումարած թերթից ստացած աղքատիկ հոնորարը:

- Ուրեմն քո շրջանը սա՞ էր,- հարցրեց Էմման: - Հիմա այստե՞ղ ես աշխատում:

- Ըհը,- ասաց Զավենը: - Սա իմ քաղաքն է, Էմմա…

- Շատ գողտրիկ քաղաք է, ես առաջին անգամ եմ այստեղ, գիտե՞ս- Ինձ դուր է գալիս…

- Իսկ ինձ էլ շատ է դուր գալիս, որ այսպես քայլում եմ քո կողքով: Քայլում ու ափսոսամ եմ, որ փոքրիկ է մեր քաղաքը:

- Իսկ եթե այսպես գնանք ու գնանք, ո՞ւր կհասնենք:

- Մեր քաղաքի միակ ամենակարգին ռեստորանը:

- Չէ, չէ,- ետ քաշվեց Էմման: - Այս ժամին ի՞նչ ռեստորան: Ես քեզ ռեստորան կհրավիրեմ երեկոյան:

- Դու ի՞նձ,- վիրավորվեց տղան: - Քո այն համար մեկ ընկերոջը հաճա՞խ ես ռեստորան հրավիրում, ինչ է:

Էմման բաց թողեց նրա ձեռքը:

- Հաճախ,- ասաց չարությամբ: - Իսկ դրա մեջ ի՞նչ կա:

Զավենը վատ զգաց իրեն.

- Դե լավ,- ասաց նա,- եկ չկռվենք, հա՞ - Երկու օր է անհամբեր սպասում էի մեր հանդիպմանը: Դե ասա, ո՞ւր գնանք, ո՞ւր ուղեկցեմ քեզ…

- Ձեր տուն:

- Մեր տո՞ւն- իմ տունը տուն էլ չէ, Էմմա ջան, վարձով սենյակ է:

- Իսկ ես ուզում եմ տեսնել քո վարձով սենյակը:

Զավենը հիշեց, որ սև հացն ու խաշած ձվերով թիթեղյա տուփը սեղանին է թողել ու սարսափեց այն մտքից, որ Էմման կարող է տեսնել իր խղճուկ, թափթփված կացարանը:

- Իմ տանը ոչինչ չկա, Էմմա, մենակ մարդու տունն ի՞նչ կարող է լինել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Իսկ ինձ ի՞նչ է պետք,- համառեց աղջիկը: - Թե՞ այնտեղ մեկը կա, որից վախենում ես- վախենում ես, որ տեսնի ինձ:

- Ինչեր ես ասում, վախենալու ի՞նչ ունեմ:

- Դե ուրեմն գնացինք…

Ոչ մի պատճառաբանություն չազդեց: Զավենը խնդրեց, բարկացավ, ծիծաղեց, հեգնեց և- և հարկադրված քայլերն ուղղեց դեպի տուն՝ բարձրաձայն իր կարծիքը հայտնելով աղջկա քմահաճության, կամակորության, անտանելի բնավորության և այն մասին, թե ում էր մի կտոր հաց տվել, որ գրեթե մի տարի առաջ Էմման մերժեց նրա ավելի քան թեթևամիտ առաջարկությունը: Էմման ամբողջ ճանապարհին ծիծաղում էր, բաց չթողնելով նրա թևը, իսկ երբ տեղ հասան, առաջինը ներս մտավ փայտե նեղլիկ դարպասից: Ներս մտավ, կանգնեց, շուրջը նայեց ու հառաչելով ասաց,

- Ինչ սքանչելի անկյուն է: Եվ այս բոլոր ծաղիկները քո՞նն են:

- Բա ինչ ես կարծում,- համոզված, որ աղջիկը կատակում է, հպարտ-հպարտ ժպտաց տղան:

- Եվ այս բոլոր խնձորենինե՞րն էլ քոնն են:

Զավենը վախեցած չորս կողմը նայեց ու ծիծաղելով, շշուկով ասաց.

- Այ Էմմա ջան, ես հո Չախ-չախ թագավորը չեմ: Ընդամենը մի համեստ վարձակալ եմ:

- Ուզում ես ասել, որ ինձ խնձոր չե՞ս հյուրասիրելու:

Զավենը մի պահ մտածեց.

- Դա կախված է նրանից՝ տանտիրուհին տանն է թե ոչ,- շշնջալով ասաց նա:

Էմման վարդերի փունջը այգու սեղանին դրեց ու հաճույքով շփեց ձեռքերը:

- Ուխ, հիմա կհամոզվեմ, թե արգելված պտուղն իրոք քաղցր է:

- Դու ինձ գող էլ կդարձնես,- հառաչեց Զավենը և վճռական ձայնով ասաց,- դե լավ, քանի որ գտնում ես, թե սքանչելի անկյուն է, դու մի քիչ սքանչացիր այստեղ, իսկ ես մի քանի րոպեով փորձեմ կարգի բերել սենյակս…

- Ես վարդերս ծորակի տակ եմ դնում, հետդ մի ծաղկաման բեր, Զավեն,- նրա ետևից ձայն տվեց աղջիկը:

Զավենը քմծիծաղ տվեց: Ծաղկաման- Տանը գտնվող միակ հարմար ծաղկամանը պահածոյի նույն թիթեղյա տուփն է, որի մեջ ձվեր է խաշում: Նա արագորեն սենյակ մտավ, փոքրիկ պահարանի մեջ թաքցրեց սև հացն ու խաշած ձվերը, հարդարեց անկողինը, բերեց անկողնու վրա նետեց ծածկոցը, որն օրեր շարունակ մի անկյունում ընկած էր, մաքրեց սեղանը, մի քանի անգամ շրջելով և վերջնականապես համոզվելով, որ համեմատաբար մաքուրը

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

նախնական վիճակն էր, նա սփռոցի բծերը ծածկեց «Լուսաբացի» համարներով, իբր թե իր նյութերն է ուզում ցույց տալ աղջկան և նոր միայն բակ դուրս եկավ: Դուրս եկավ ու կանգ առավ զարմացած: Այգու սեղանի մոտ դրված թախտին նստել ու ջերմ-ջերմ զրուցում էին Էմման ու տիկին Ալվարդը: Ըստ որում Էմմայի առջև, սեղանին ընտիր խնձորներով լի մի թաս կար:

- Արգելված պտուղը փորձել չհաջողվեց,- ծիծաղեց Էմման՝ դառնալով Զավենին: - Տես Ալվարդն ինչ խնձորներ է հյուրասիրել ինձ:

Ալվարդը.. գոնե «տիկին» բառը չի ավելացնում:

- Ուրեմն միտք չունի այլևս ձեզ ծանոթացնելը,- հարցրեց նա:

- Բոլորովին միտք չունի,- ժպտաց տանտիրուհին: - Այն էլ ասեմ, որ ես վաղուց եմ ճանաչում Էմմային: Մի քանի անգամ բախտ եմ ունեցել բեմում տեսնելու տարիներ առաջ,- ակամա հառաչեց նա:

- Ոչ թե մանկության որոշ ընկերների նման,- անմիջապես խայթեց պարուհին: - Ծաղկամանը մոռացար, Զավեն,- ավելացրեց նա հանդիմանությամբ:

- Վերևում է: Ես հիմա կբերեմ,- տեղից վեր կացավ ու արագ-արագ սանդուղքով բարձրացավ Ալվարդը:

Էմման մի պահ աչքերով հետևեց նրան՝ ասես գնահատելով տանտիրուհու քայլվածքը, ապա Զավենին դարձավ:

- Ինչ հետաքրքիր կին է…

- Եվ դժբախտ,- ավելացրեց Զավենը: - Մի տարի առաջ…

- Գիտեմ,- տխրությամբ ընդհատեց նրան աղջիկը- գիտեմ նաև, որ տղան համալսարանում է սովորում, որ Միքայել է անունը, որ ինքն էլ բուժքույր է աշխատում առողջարանում..

- Իսկ ես մինչև հիմա չգիտեի,- զարմացավ Զավենը, -այդ երբ հասցրեցիք:

- Հինգ րոպեն էլ բավական է, որ կանայք հասկանան իրար, -մի տեսակ մտազբաղ ասաց Էմման, հետո թափահարեց մազերն ու բարձրացավ թախտից:

Երբ Զավենն ամաչելով բացեց դուռն ու նրանք ներս մտան, Էմման հայացքով մի վայրկյանում ընդգրկելով սենյակը, ուրախ բացականչեց.

-Հենց սա է որ կա: Այսպիսի տունը կոչվում է հանճարանոց: Բոլոր մեծ մարդիկ այսպես են սկսել իրենց կյանքը, Զավեն: Ոչ մի ավելորդություն՝ ինձանից բացի:

Երբ մարդիկ շուրջը նայելու բան չունեն, առաջ են նայում: Այդպես է: Մի օր այս տան պատին հուշատախտակ կփակցվի: «Այս տանը ապրել և ստեղծագործել է Զավեն Շարաֆյանը»:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դժվար թե, տունը պլանի տակ է - ծիծաղեց Զավենը:

- Քաղաքի ողջ մտավոր հասարակությունը իրար կխառնվի, ցուցարարներ կանցնեն այս փողոցով, թերթերում հոդվածներ կտպագրվեն. «Պահպանենք մշակույթի և պատմական հուշարձանները»: Եվ այս տունը կդառնա Զավեն Շարաֆյանի տուն-թանգարան:

- Խիղճ ունես, վերջացրու, գլուխս պտտվեց փառքից, Էմմա,-խնդրեց Զավենը: - Եվ թույլ տուր ի նշան երախտագիտության թեյ պատրաստեմ քեզ համար կոնֆետով:

- Կոնֆետո՞վ,- ծափ զարկեց աղջիկը,- հիանալի է:

- Ինքնատիպության համար,- ասաց Զավենը նավթավառը գործի գցելով: Նա հո չէր կարող խոստովանել, որ շաքար չունի: - Միայն ինքնատիպության համար: Հիմա պատերազմի մասին մի նյութ եմ գրում, և որպեսզի ինձ զգամ պատերազմական իրադրության մեջ, երբեմն առաջվա նման թեյը փշատով եմ խմում, չամիչով և նույնիսկ առանց քաղցրի:

Աղջիկը հանկարծ կծկվեց, ասես ցրտից՝ երկար ձեռքերով գրկեց ուսերը, և Զավենը զարմանքով նկատեց, որ նրա աչքերը արցունքով լցված են,

- Ե՞րբ պիտի մարդավարի ապրենք, Զավեն,- պոռթկաց նա: -Անիծյալ պատերազմը տասը տարի է, ինչ ավարտվել է, բայց մարդիկ կիսաքաղց են դեռ: Ես իմ մասին չեմ խոսում, ծնողներս փառք աստծո կան, ու նրանք են մտածում տան մասին: Ինքս էլ վատ չեմ վաստակում և ամենակարևորը՝ մեր բուֆետը որոշ մթերքներ բաժանում է մեզ: Բայց ես այդ մթերքները գողի նման եմ տուն տանում, Ինձ թվում է, թե մարդիկ տեսնում են, որ իմ զամբյուղի մեջ երշիկ կա, ապուխտ ու շաքար և դատապարտելով, նախատինքով են ինձ նայում: Հատկապես չեմ կարողանում բարձրանալ մեր շենքի մուտքով: Առաջին հարկում մի ընտանիք է ապրում, որտեղ տասը երեխաներ կան, ով անցնում է՝ տխուր-տխուր քաղցից փայլող աչքերով են նայում նրա ձեռքի փաթեթներին: Չեմ կարողանում, չեմ դիմանում, գրեթե դատարկ եմ հասնում տուն: Ինչքա՞ն կարելի է այսպես ապրել, Զավեն: Դու կարո՞ղ ես բացատրել, թե ինչ է կատարվում: Պատերազմից անմիջապես հետո կյանքը կարծես թե ավելի լավ էր, քան հիմա: Գաղտնիքն ի՞նչ է:

Զավենը միանգամից մոայլված ու հուզված քայլում էր սենյակում՝ հինգ քայլ մինչև դիմացի պատը, շրջվում էր, նորից էր քայլում հինգ քայլ՝ մինչև դիմացի պատը: Հետո կանգ առավ աղջկա առաջ.

- Ես էլ շատ բան չեմ հասկանում, Էմմա,- ասաց նա: - Բայց իմ կարծիքով մենք մի քիչ չափազանցնում ենք: Ավելի ճիշտ՝ ինձ ու քեզ դա երկի թվում է: Ուղղակի պատերազմի ժամանակ մենք համակերպվում, հաշտվում էինք ամեն ինչի հետ, նախ որովհետև ուրիշ որևէ ելք չունեինք և հետո՝ որովհետև գիտեինք. պատերազմ է: Եթե պատերազմ է, ուրեմն չի լինելու, չկա: Իսկ հիմա չենք հաշտվում. ասում ենք ինչպես թե չկա, չէ որ պատերազմն ավարտվել է: Եվ հաստատ մոռանում ենք, որ տարիներ են պետք, որպեսզի արկերից ու ականներից բզկտված հողը ուշքի գա, մաքրվի երկաթից ու վառոդից, հանգստանա, կարողանա ծլել ու բերք տալ: Հետո մոռանում ենք, որ քսան միլիոն մարդ է զոհվել, այն էլ հիմնականում ովքեր՝ հողագործները, մեխանիզատորները, անասնապահները- Ո՞վ պետք է վերականգնի հողը: Ո՞վ պետք է կաթ ու պանիր արտադրի: Աշխատավոր երկու սերունդ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

միանգամից չկա: Եվ ճիշտ նույն վիճակն է ամենուրեք, բոլոր բնագավառներում: Քաղաքներ են հիմնահատակ կործանվել, բնակավայրեր են հավասարվել հողին: Պե՞տք է վերականգնել այդ բոլորը, թե չէ: Ո՞վ պիտի անի, ինչո՞վ: Դրա համար էլ չկան շարունակում է իր գոյությունը: Չկա: Չկա և վերջ՝ որքան էլ հասկանալի կամ անհասկանալի լինի դա:

Հետո իմ կարծիքով մի ուրիշ պատճառ էլ կա: Երբ հացի ու մթերային քարտեր ունեինք, վստահ էինք, որ ինչ էլ պատահի, մեզ կտան մեր մի կտոր սև ու թաց հացը, ամիսը մեկ մի կիլոգրամ մակարոնը և կես կիլո պանիրը: Գոնե քաղցից չենք մեռնի: Եվ հիշում եմ, ինչ մեծ ուրախություն էր, երբ քարտերը վերացրեցին: Մտածեցինք, թե վերջ՝ հիմա ամեն ինչ առատ կլինի, առանց սահմանափակումների, առանց սահմանված չափի: Բայց ինչ քարտերը որ վերացրեցին, հացը դրանից հո չշատացավ և մնացած ամեն ինչը նույնն էր: Միայն թե այս անգամ արդեն դրության տերը սպեկուլյանտները դարձան, սննդի գործակալների, մթերային բազաների ու խանութների աշխատողները և նրանց հետ գործարքի մեջ մտած մարդիկ: Եվ օրեր էր պատահում, որ խանութների մոտ գիշեր-ցերեկ հերթ կանգնած մարդիկ ու հենց մեկը ես՝ լաց լինելով, դատարկ ձեռքով էինք վերադառնում տուն: Որովհետև այն, ինչ խանութը պետք է ստանար, սպեկուլյանտներն արդեն տարել էին: Եվ շուկայում քո հացը քեզ էին վաճառում տասն անգամ ավելի թանկ գնով:

Ու հիմա էլ նույնն է: Մի ամիս է, ինչ այս քաղաքի շուկայով եմ հետաքրքրվում, Էմմա: Որ տեսնես ինչեր են կատարվում: Քո աչքի առաջ խանութից դուրս են բերում ապրանքը ու վաճառում շուկայում, տասնապատիկ թանկ: Պիտակներն էլ վրայից չեն պոկում, գիտե՞ս, ժամանակ չունեն և վախ չունեն:

Զավեն Շարաֆյանը հանկարծ ինչ-որ բան հիշեց ու ծիծաղեց: Դա այնքան անսպասելի էր, որ Էմման զարմացած նայեց նրան:

- Մորս հիշեցի,- շարունակելով ծիծաղել բացատրեց լրագրողը: - Հարյուր անգամ ասում էի՝ մամ, էդ խոսքերը մի ասա: Էլի ասում էր…

- Ի՞նչ խոսքեր,- ակամա հետաքրքրված հարցրեց աղջիկը:

- Ասում էր տեր աստված, թող սոված մնանք, թող ծարավ մնանք, թող հագներս բան չունենանք, միայն թե պատերազմ չլինի: Մի քանի ամիս առաջ, երբ ինձ ճանապարհ էր դնում, լաց եղավ ու տրտնջաց, թե մի կարգին բան էլ չկա, որ հետս դնի: Ես էլ ասացի չխոսես, մամ, դու խոսելու իրավունք չունես, որովհետև աստված լսել է քո ձայնը և այս վիճակը փաստորեն քո աղոթքների հետևանքն է: Ի՞նչ աղոթք, զարմացավ մայրս: Ինչպե՞ս թե, մոռացել ես, ու ասացի, դու չէ՞իր ասում, թե տեր աստված, թող սոված մնանք, թող ծարավ մնանք…

Էմման հանդիմանությամբ շարժեց գլուխը:

- Վայ Զավեն, Զավեն, բա դա կատակի թեմա՞ է: Ինչ անուղղելի մարդ ես: Ես, ազնիվ խոսք, մայրիկիդ հետ լրիվ համաձայն եմ, միայն թե պատերազմ չլինի: Ինչ ուզում է լինի, միայն թե պատերազմ չլինի…

- Տեսա՞ր, - հաղթական ժպտաց Զավենը, - ուրեմն եկ չբարկացնենք

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

աստծուն, որովհետև նա առանց այդ էլ ուղղակիորեն կամ ավելի ճիշտ բառացիորեն է հասկանում մեր ասածները և հուսանք, որ կամաց-կամաց ամեն ինչ կարգի կընկնի, Էմմա ջան: Եվ ցանկանք, որ մի օր էլ մեր սեղանին…

Նրա խոսքը կիսատ մնաց, որովհետև հենց նույն վայրկյանին բախեցին դուռը, և սենյակի մեջ հայտնվեց Ալվարդը՝ մի մեծ սկուտեղ ձեռքին, որի եզրին բյուրեղապակյա մի ծաղկաման կար: Զարմացած հայացքների տակ նա վարդի փունջը դրեց ծաղկամանի մեջ, սկուտեղը տեղավորեց սեղանին և չի կարելի ասել, թե առանց հանդիսավորության, բարձրացրեց այն ծածկող թեյի սրբիչը:

- Սա էլ ձեզ Ջմեռ տատիկի նվերը,- իր արարքից գոհ, գրեթե շառագունած ասաց նա:

Ջավենը ետ քաշվեց շփոթված, իսկ Էմման իրեն հատուկ անմիջականությամբ ծափ տվեց:

- Տեր աստված, պատերազմը վերջացավ:

- Ի՞նչ պատերազմ,- զարմացավ տանտիրուհին:

- Ախր այս բոլորը պատերազմի հետ կապ չունի,- հառաչեց Էմման: - Ջավեն, տես, մի տես, տես շրջանակով մեղր, քամած մածուն, անքաշ պանիր, թանոտ կարագ, խաշած հավ, կանաչի, լավաշ- Ախր ես այսպիսի բաներ միայն պատերազմից առաջ եմ տեսել- Ալվարդ ջան, եթե թույլ տաս, ես ամեն ինչից մի քիչ կփորձեմ, հա՞ - Իսկ դու պատմիր, թե ո՞վ է այդ կախարդական Ջմեռ տատին:

- Իմ մայրն է,- երջանկացած՝ իր սկուտեղի թողած տպավորությունից, ժպտաց Ալվարդը: - Երեկ բերեց գյուղից: Մեր գյուղը հեռու սարերում է, ամպերից էլ վեր: Հենց որ ձյուն է գալիս, ճանապարհները փակվում են մինչև գարուն: Դրա համար էլ մայրս բերեց, ինչպես ինքն է ասում, մեր «բաժինքը», քանի դեռ ճանապարհները բաց են:

- Հիմա տա՞նն է,- հարցրեց Ջավենը,- գոնե շնորհակալություն հայտնենք Ջմեռ տատիկին:

- Չէ,- ասաց Ալվարդը,- առավոտ վաղ գնաց: Նա ամբողջ կյանքում ամեն անգամ մի օրից ավել չի բացակայել իր տնից: Հենց գալիս է, թե չէ, ձեռքերը ծնկներին է խփում, թե հավ ու ճիվս անտեր մնացին: Դե դուք անուշ արեք: Էմմա, հետևեք, որ Ջավենը ուտի- նա ընդհանրապես ոչինչ չի ուտում, գիտեք…

Նա շրջվեց դեպի դուռը: Էմման վեր թռավ տեղից.

- Միայն միասին, Ալվարդ:

- Չեմ կարող,- ժպտաց. տանտիրուհին ու երևի մոր ձայնով ասաց,- հավ ու ճիվս անտեր եմ թողեր

Ծիծաղեցին: Իսկ հետո Էմման ու Ջավենը միանգամից վրա ընկան սկուտեղին: Ուտում էին՝ հաճույքից ճպճպացնելով շրթունքները ու գլուխները օրորելով, շատախոսում էին, հենց

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ձեռքով հյուրասիրում միմյանց ու քիչ հետո պատառ խլում իրարից: Զավենն ուտում էր գերագույն բավականությամբ և հետն էլ լոզունգներ էր հրապարակում.

- Կորչի պատերազմը- Բոլորս դեպի ընտրություններ… Սովորել, սովորել, սովորել- Գարնան օրը տարի է կերակրում- Մի եղիր ուրագի պես…

Վերջին լոզունգը արտասանելիս նա Էմմայի ձեռքից փախցրեց հավի թևը: Էմման ծիծաղեց, ուզեց մի կտոր էլ վերցնել, բայց հետո վախեցած ձեռքը ստամոքսին տարավ, սկսեց շոյել ու հետն էլ լացակումած քրթմնջալ.

- Էս ի՞նչ արեցի: Բա ես իրավունք ունեի այսքան ուտելու: Վաղը Կարլոսը կփնթփնթա, թե ծանրացել ես:

- Կարլոսի հերն էլ անիծած,- բղավեց Զավեն Շարաֆյանը:

- Ճիշտ է,- ճչաց Էմման՝ մի կտոր պանիր թռցնելով:

- Չի կարողանում, թող մի կողմ քաշվի: Սրանից հետո ես քեզ կգրկեմ,- հայտարարեց Զավենը, ձեռքի ափը պահելով դեմքի մոտ իբր աղջկա ապտակից խուսափելու համար:

Բայց խուսափել չհաջողվեց:

- Իմ կարծիքով, դու իմ կարիքը շատ շուտով չես ունենա,- հանկարծ ասաց Էմման:

- Ի՞նչ իմաստով,- ժպտաց Զավենը:

- Տանտիրուհուդ իմաստով:

- Ի՞նչ-- հավի թևը ընկավ տղայի ձեռքից:

- Դե լավ, ի՞նչ ես քեզ միամիտի տեղ դնում,- խանդախառն քմծիծաղով ասաց Էմման: - Իրը չես նկատում, հա՞, թե ինչ աչքներով է քեզ նայում: | - Էմմա,- տղան զգաց, որ խեղդվում է: - Էմմա, դու հո չես խելագարվել- ինչեր ես ասում: Նա իմ մոր տարիքին է:

- Ինչո՞ւ, ընդամենը երեսունվեց տարեկան է: Դա, եթե կուզես իմանալ, կնոջ ամենաճաղկուն հասակն է, - սադիստի համառությամբ շարունակեց աղջիկը: - Եվ նա քեզանից ընդամենը տասներկու տարով է մեծ:

Զավենի դեմքը աղավաղվել էր զայրույթից, և երբ խոսեց, զգաց որ ծնոտը դողում է:

- Լսիր,-ասաց նա,- դու ոչ մի արբություն չունես:

- Չգիտեմ,- կտրեց աղջիկը,- բայց աչք ունեմ:

Զավեն Շարաֆյանին թվում էր, թե քիչ առաջ կոպտորեն անդունդ են նետել իրեն: Ողջ մարմինը ցավում ու տնքում էր, ներսում ահավոր մի դատարկություն էր տիրում: Նա ատելությամբ ու արհամարհանքով նայում էր աղջկան և հազիվ էր զսպում նրան ապտակելու

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ահավոր ցանկությունը: Այլևս չէր ուզում տեսնել նրան, միայն ցանկություն ուներ, որ աղջիկը վեր կենա ու կորի գրողի ծոցը, ուր կամենա, միայն թե չերևա աչքին:

Եվ Էմման վեր կացավ: Վեր կացավ ու հանկարծ ծիծաղեց կամացուկ:

- Լսիր, դու այստեղ լրիվ կորցրել ես հումորդ, հա՞,- ասաց նա քնքշանքով: - Լավ, չէի՞ր զգում, որ կատակում էի: Ի՞նչ ես ողբերգություն սարքում, իմ սիրելի լրագրող:

Ջավենը ցնցված, զարմացած, թերահավատությամբ նայեց նրան:

- Հիմա՞ ես կատակում, թե սրանից առաջ,- ասաց նա սրտդողած: - Եվ քո կարծիքով դա կատա՞կ էր:

- Իսկ քո կարծիքով ի՞նչ էր,- կրկին ծիծաղեց Էմման: Ջավենը պատասխան չգտավ:

- Կներես, Էմմա,- ասաց տղան,- Բայց եթե դա կատակ էր, ուրեմն անհամ կատակ էր, իսկ եթե հումոր էր, ավելի սև հումոր չէի լսել:

Աղջիկը կիտեց հոնքերը, բայց աչքերը ծիծաղկոտ էին: - Դու արդեն վիրավորում ես ինձ, ընկեր լրագրող, և այնքան բուռն ես արտահայտում քո զգացմունքները, որ ես կարող մտածել, թե իմ կատակն իրականությունից այնքան էլ հեռու չէ:

- Դե լավ, էլի, Էմմա, գոնե հիմա վերջ տուր,- աշխատեց ժպտալ Ջավենը: -Այդ ի՞նչ հաճույք է, որ մարդուն հանում է հունից:

- Կանացի քմահաճույք,- առիթից օգտվեց Էմման: - Մեկընդմիշտ իմացիր, որ յուրաքանչյուր կին այսպես թե այնպես փորձում է դիմացի տղամարդուն հանել իր հունից և տանել իր հունով: Հասկացա՞ր:

- Փորձելու հարկ չկա,- թեթևացած սրտով խաղի մեջ մտավ Ջավենը: - Ես հիմա էլ պատրաստ եմ սլանալ քո հունով: Ինձ միայն մի խոսք ասա և…

- Վաղը երեկոյան ժամը ութին, հյուրանոցի ռեստորանում,-ասաց աղջիկը: - Եվ խնդրում եմ, որ հիմա ինձ չուղեկցես: Ագահ շատակերությունից հետո ուզում եմ մենակ ու հանգիստ զբոսնել քո քաղաքում:

- Ինչպես կամենում ես,- չառարկեց Ջավենը: - Միայն թե որքան հիշում եմ՝ հին, բարի ժամանակներում տղաներն էին աղջիկներին հրավիրում ռեստորան: Ինչ չէինք տեսել, տեսանք…

- Ինչ ուզում է լինի, միայն թե պատերազմ չլինի,- ծիծաղեց աղջիկը:

Նա ծաղկամանի միջից հանեց իր վարդերի փունջը, սրբիչով չորացրեց ցողունները և, սեղանին փռած լրագրերը ցույց տալով, դարձավ Ջավենին.

- Այս թերթերից մեկը կարո՞ղ եմ վերցնել վարդերս փաթաթելու համար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Պայմանով, որ հետո կարդաս,- ժպտաց Զավենը: - Հոդված ունեմ դրա մեջ…

- Այս բոլոր թերթերի մե՞ջ:

- Բոլոր:

- Եվ ուրեմն այդքան հոնորա՞ր ես ստացել:

- Անսահման,- ասաց Զավենը:

- Այդ դեպքում գուցե հյուրասիրության հեղինակի հարցը տեղում քննարկենք:

- Եղավ:

- Ուրեմն ես բոլոր թերթերը վերցնում եմ ինձ հետ: Վաղը երեկոյան կվերադարձնեմ:

- Կարող ես պահել իբրև հիշատակ, ես էլի օրինակներ ունեմ,- ասաց Զավենը:

- Դե ուրեմն ցտեսություն, սիրելի լրագրող, շնորհակալություն հետաքրքիր հարցազրույցի համար: Եվ խնդրում եմ իմ կողմից իբրև երախտագիտության նշան, համբուրես տանտիրուհուդ:

- Գնա գրողի ծոցը, Էմմա,- հուսահատ ծիծաղեց տղան:

* * *

Զավեն Շարաֆյանը մի անգամ ևս համոզվեց, որ երկուշաբթին ծանր օր է: Առավոտյան միշտ մեկը պատահում է, որ փորձում է ողջ օրվա համար զցել տրամադրությունդ: Հենց նոր էր խմբագրություն մտել, երբ տեսավ քաղաքային բաղնիքի նախկին դիրեկտոր Հեղինե Բլբուլյանին, որը մի ծրար ձեռքին կանգնած էր նրա սենյակի դռան մոտ:

- Ուշանում եք, ընկեր Շարաֆյան,- ներողամիտ ժպիտով նայելով ժամացույցին, ասաց կինը…

Նա հագնվել էր առնվազն մայիսմեկյան շքերթի դուրս գալու համար՝ բաց դեղնավուն կոստյում, նարնջագույն սվիտեր և շագանակագույն բարձրակրունկ կոշիկներ: Ականջներին փայլում էին ադամանդե օղերը: Ներկված կարմրավուն վարսերը թափված էին ուսերին: Դեմքը շպարված էր չափից ավելի ու փայլում էր: Փայլում էին նաև վառ կարմիր ներկված շրթունքները:

- Ես ձեզ նամակ եմ բերել,- ասաց նա՝ ներս մտնելով լրագրողի բացած դռնից ու նստելով աթոռին:

- Նամակը հանձնեք նամակների բաժին,- ասաց լրագրողը: - Ամեն երկուշաբթի մի նոր նամակ եք բերում, չգիտե՞ք կարգը, ինչ է…

- Ուզում եմ կարդամ լսեք, նոր հանձնեմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես հիմա ժամանակ չունեմ,- սրտնեղությունը հազիվ զսպելով, ասաց Զավեն Շարաֆյանը: - Մանավանդ որ ինձ չի վերաբերում:

Հեղինե Բլբուլյանը ցնցեց ուսերին թափված մազերը…

- Ո՞նց չի վերաբերում, ընկեր Շարաֆյան, հենց ձեզ է վերաբերում: Այս անտեր քաղաքում մենակ դուք կարող եք պաշտպանել իմ իրավունքները: Եթե մի ֆելիետոն գրեք, իմ հարցը միանգամից կլուծվի: Ես հո գիտեմ: Մեղք եմ, չէ , բա ես աշխատելու իրավունք չունեմ: Ես իմ սահմանադրական իրավունքներն եմ պահանջում, հո ուրիշ բան չե՞մ ուզում: Երեք ամիս է անգործ եմ, երեխաներս մեռնում են սովից, ի՞նչ անեմ, թքեմ պատվիս վրա ու փողոցներն ընկնեմ:

- Ընկեր Բլբուլյան,- շրթունքները սեղմեց լրագրողը,-- ձեզ աշխատանք են առաջարկում, ինչո՞ւ չեք համաձայնվում…

- Վայ, դա աշխատանք է, հա՞…

- Իսկ ինչ վատ աշխատանք է- երեխաների հետ գործ կունենաք, գրքեր կբաժանեք…

- Իսկ իմ երեխաներին ինչո՞վ պահեմ, գրադարանավարուհու չոր ու ցամաք աշխատավարձով: Զավենը ժպտաց-,

- Բաղնիքն էլ հո ձեր ուզած թաց տեղն էր, կարգին աշխատեիք չհեռացնեին:

- Վա՞յ,- նորից զարմացավ Բլբուլյանը: -Մեղավորը ե՞ս էի, որ լողացողներին առանց տոմսի էին ներս թողնում:

- Բա ո՞վ էր մեղավորը: Պետք է հսկեիք:

-Ինչո՞ւ, ես վարիչ էի, ոչ թե հսկիչ: Պետք է դռան մոտ կանգնեի մեկ-մեկ ստուգեի՞ լողացողներին: Իմ գործը մազութ ապահովելն էր, ջուրը ապահովելն էր, ապահովում էի: Բաղնիքում եղե՞լ եք

- Եղել եմ:

- Տեսա՞ք ինչ նկարներ էի փակցրել պատերին, տեսա՞ք ինչ լոզունգներ էի գրել տվել:

- Տեսա՝ «Սովետական լողացողը ամենաակտիվ և ամենամաքուր լողացողն է աշխարհում»:

- Իսկ ինչո՞ւ եք հեգնանքով ասում, ամենաակտիվը չէ՞:

Զավենը չկարողացավ զսպել քմծիծաղը:

- Իսկ դուք ամբողջ աշխարհում եղե՞լ եք, որ համեմատում եք:

Հեղինե Բլբուլյանը բարձրացրեց աջ ձեռքը և մատանիները շողացնելով մատնացույց արեց պատին կախված քարտեզը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես չեմ եղել,- ասաց նա,- բայց Կայծակ Եփրեմիչը եղել է: Կայծակ Եփրեմիչը պատերազմի ժամանակ ոտքով է անցել ամբողջ Եվրոպան և ասում է, որ ոչ մի տեղ բաղնիք չկար:

- Խեղճ Եվրոպա,- ծիծաղեց Զավենը: - Իսկ Կայծակ Եփրեմիչը չէ՞ր ասում, որ այնտեղ բաղնիք ամեն տան մեջ կա:

Ծիծաղեց նաև Հեղինե Բլբուլյանը, բայց նրա ծիծաղը սպանիչ էր.

- Դա էլ եղավ բաղնի՞ք: Շատ եք ջահել, ընկեր Շարաֆյան, թե չէ այդ խոսքերը ես ձեզ չէի ների: Ուրեմն մեզ կարելի՞ է համեմատել նեխած արևմուտքի հետ: Այնտեղ ամեն մարդ իր համար է ապրում, նրանք ի՞նչ գիտեն, թե ինչ բան է կոլեկտիվը, կոլեկտիվիզմի զգացումը, նրանք ի՞նչ գիտեն, թե ինչ բան է իսկական բաղնիքը: Նրանք չեն ուզենա, իհարկե, որովհետև նրանց համար խորթ է դեմոկրատիան: Հա, հա, եթե կուզեք իմանալ, բաղնիքն ամենադեմոկրատական հիմնարկությունն է: Մտար թե չէ՝ էլ ոչ պետ կա, ոչ ստորադրյալ, բոլորն էլ մերկ ու հավասար մարդիկ են, բոլորն էլ լողացողներ են…

- Չեղավ, ընկեր Բլբուլյան,- ընդհատեց նրան լրագրողը- Ինչպես թե հավասար, դուք հո բոլորի համար նվագ չէիք հրավիրում և սեղան բացում լյուքսում:

Բաղնիքի վարիչը ցնցվեց ասես օձից խայթված:

- Եթե բոլոր ղեկավարների համար անեի, այս օրը չէի ընկնի,- ասաց նա չարությամբ: - Ի՞նչ էր պատահել: Հազարից մի անգամ իմ պետն իր ընկերների հետ լողանալու էր եկել, ես էլ վերաբերմունք ցույց տվեցի: Քեֆները մի քիչ լավ էր, նվագ ուզեցին, չկանչեի՞ : Սեղան-Տաբուրետկայի վրա մի երկու շիշ բան

էի դրել ու մի քանի կտոր խորոված: Դա էլ սեղա՞ն եղավ: Ղուկաս Լալայանը կամ թե նրա էն-էն լպստան երկրորդ քարտուղար Գրետան մենակ էդպիսի՞ սեղաններ են տեսնում: Եթե ես էդ-էդ Գրետային հրավիրեի իր սիրածի հետ գիշերը բաղնիք գար, իմ հարցը կքննեի՞ն: Բայց դե նա ինչի՞ պիտի տաբուրետկայի վրա քեֆ անի, սիրածի ձեռքն է տվել քաղաքի բոլոր ռեստորաններն ու ճաշարանները, տեղ չունի, հա՞ …

Զավեն Շարաֆյանը կնճռոտեց ճակատը.

- Վերջ տվեք,- ասաց նա նողկանքով: - Այդ բամբասանքներն ինձ չեն հետաքրքրում: Ի՞նչ եք ուզում ինձանից…

Հեղինե Բլբուլյանը կրկին սեթևեթանքով ծածանեց կարմրավուն վարսերը և առաջ թեքվելով ու կուրծքը սեղանին հենելով, ասաց.

- Ուզում եմ մի ֆելիետոն գրեք, թե ինչու է ինձ նման վաստակավոր կադրը հալածվում այսօր, ինչո՞ւ ինձ գոնե կարի արտելի վարիչ չեն նշանակում, երբ վարիչի տեղն ազատ է…

- Իսկ դուք կարի մասնագե՞տ եք,- հարցրեց Զավենը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Մասնագետս ո՞րն է, իմ երեխաների կարն ուրի՞շն է անում,- զարմացավ Բլբուլյանը: - Եվ հետո ես հո չեմ ասում, ոք ինձ ձևարար-վարպետ նշանակեն: Ես վարիչի տեղն եմ ուզում: Վարիչը կտրելու հետ ի՞նչ գործ ունի- Հը, ընկեր Շարաֆյան, մինչև կյանքիս վերջ պարտք կմնամ ձեզ, տունս կծախեմ, ձեր լավության տակից դուրս կգամ: Հը, դե ասեք, ֆելիետոն կգրեք ինձ համար:

Զավենը հիմնավորապես հոգնած ու գրգռված էր:

- Եթե ֆելիետոն գրեմ, ընկեր Բլբուլյան, ձեզ համար չեմ գրի, այլ ձեր մասին կգրեմ,- ասաց նա:
- Կգրեմ, որ քաղխորհրդի նախագահի տեղակալ եք եղել, հեռացրել են…

- Վա յ- Չեն հեռացրել: Նոր ընտրությունների ժամանակ անունս չտվեցին:

- Կգրեմ, որ դրանից հետո կինոթատրոնի դիրեկտոր եք եղել. հեռացրել են..

- Թաղեմ իրենց բոյը,- թաշկինակն աչքերին տարավ Հեղինե Բլբուլյանը:

- Ճաշարանի վարիչ եք եղել, հեռացրել են: Մթերման գրասենյակի պետ եք եղել, հեռացրել են: Մշակույթի տան դիրեկտոր եք եղել, հեռացրել են: Բաղնիքի վարիչ եք դարձել, հեռացրել են…

Բաղնիքի նախկին վարիչը լաց եղավ:

- Բա… հիմա տեսնում եք, թե երբվանից են հեռացրել, հետևիցս ընկել- Ուր գնացել եմ, չեն թողել աշխատեմ, փորել են ոտքիս տակ, թունավորել են կյանքս: Գետինը մտնեն դրանք:

- Այնպես որ չեմ կարող ձեզ համար ֆելիետոն գրել և գոհ եղեք, որ ձեր մասին էլ չեմ գրում: Վերջացնենք,- կտրեց լրագրողը՝ տեղից բարձրանալով:

Տեղից բարձրացավ նաև Հեղինե Բլբուլյանը:

- Դե լավ,- ասաց նա: - Թող այդպես լինի: Դուք իմ մասին չեք գրում, բայց ես կգրեմ ձեր մասին: Մենք էլ գրել գիտենք: Եվ կգրենք՝ Եվրոպայի և մնացած ամեն ինչի մասին, ընկեր Շարաֆյան:

- Չմոռանաք բարևներս հաղորդել Կայծակ Եփրեմիչին,- բացահայտ հեգնեց լրագրողը: - Կարծեմ նա ձեր հարազատ քեռին է:

- Այո,- մազերը ցնցեց Հեղինե Բլբուլյանը: - Եվ հենց նրանից էլ պատասխանը կստանաք: Մինչև նոր հանդիպում:

Զավեն Շարաֆյանը հառաչեց ու փակեց նրա բաց թողած դուռը:

* * *

Բարակ անձրև էր մաղում և շաղի նման իջնում շրջապատին: Դա այն անձրևն էր, որ կարող էր ձյուն դառնալ անմիջապես, եթե ցրտեր սկսվեին: Այդ անձրևի մեջ արդեն մի քիչ ձյուն կար, բայց քանի որ տաք էին օրերը, թափվում էր ձյան հանդարտությամբ, սակայն շաղի նման աննշմար ու մանրիկ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավեն Շարաֆյանը քայլում էր Ապագայի փողոցով, գոհ, որ անձրև է գալիս, և ինքը ստիպված չէ թևին գցել անձրևանոցը կամ հագնել ամաչելով՝ արևի տակ: Եվ այնուամենայնիվ սրտում ինչ-որ անհանգստություն կար: Երբ դուրս էր գալիս դարպասից, նրան թվաց, թե հետևում են իրեն: Արագորեն վրա հասնող իրիկնային խավարի մեջ նա մի ստվեր նկատեց, որը կարծես թե շարժվեց ու անջատվեց դիմացի պատից: Բայց երբ կանգ առավ և ուշադիր նայեց այն կողմը, չնկատեց ոչինչ ու քմծիծաղ տվեց: Չեղավ, ընկեր Շարաֆյան, աչքիդ արդեն սատանաներ են երևում: Գրեթե փողոցի ծայրն էր հասել, երբ նրան թվաց, թե խուլ ոտնաձայն է լսում թիկունքում, շրջվեց արագորեն, բայց փողոցն առաջվա պես ամայի էր և մութ: Գոնե լույսերը վառեին, մտածեց նա ապշելու բան է, ամբողջ ցերեկը վառվում են փողոցի էլեկտրական լապտերները, իսկ հենց մութն ընկնում է՝ լույս չկա: Փողոցի ծայրում ինչ-որ տան պատշգամբից լույսի ուժեղ մի շերտ էր ընկել սալահատակի վրա: Պատշգամբում մի տղա էր նստած ու բարձրաձայն սերտում էր դասը՝ գիրքը ծնկներին դրած և աչքերը հառած երկինք: Ասես թե աղոթում էր: Ինձ հետևողը ով էլ որ լինի, իր մտքերի հետ եզրակացրեց Զավեն Շարաֆյանը, աննկատ չի կարող անցնել լույսի այս շերտի տակով:

Նա կտրեց անցավ խաչմերուկը և թաքնվեց մայթեզրի ծառի բնի ետևում և նույն վայրկյանին նկատեց, որ մեկը գլուխը ցած թեքած, վազքով անցավ լույսի տակով, գրեթե պատին քսվելով: Դա մի վայրկյան տևեց, ոչ ավելի, բայց այդ մի վայրկյանն էլ բավական էր, որպեսզի Զավեն Շարաֆյանը զգար, որ ինչ-որ տեղ տեսել է այդ կերպարանքը: Մարդը կարճահասակ էր, լայնաթիկունք ու կեպի ուներ գլխին և շատ էր հիշեցնում շուկայի խորտկարանի բուֆետապան Սերոբին, Բերսաբեի ամուսնուն: «Լավ -ասաց ինքն իրեն Զավեն Շարաֆյանը,- ասենք թե նման չէր Սերոբին, այլ հենց ինքը Սերոբն էր: Դրա մեջ ի՞նչ կա: Նա իրավունք չուներ հայտնվելու Ապագայի փողոցում: Հա, բայց ինչո՞ւ է գողեգող քայլում, ինչո՞ւ է խուսափում լույսից: Ինչու… Քի՞չ պատճառ կա: Գուցե սիրուհի ունի մոտերքում որևէ տեղ և դրա համար է քայլում պատերին քսվելով: Նման վիճակում ո՞վ կուզի, որ տեսնեն իրեն»:

Մարդը, որ բուֆետապան Սերոբին էր հիշեցնում, ասես թե ձուլվեց խավարին, աներևույթացավ, և Զավեն Շարաֆյանը որքան էլ լարեց տեսողությունն ու լսողությունը, այլևս ոչինչ չլսեց և չտեսավ: Նա ոչինչ չտեսավ նաև այն ժամանակ, երբ ասես նրան համբերությունից չհանելու համար՝ վառվեցին փողոցի աղոտ լապտերները: Այնուամենայնիվ ստեպ-ստեպ հետ նայելով, Զավեն Շարաֆյանը շարունակեց ճանապարհը և քայլելով արդեն լուսավորված փողոցներով, հատուկենտ ծանոթների բարևելով հասավ քաղաքի երկրորդ հրապարակ, որի կողքին բարձրանում էր նորակառույց հյուրանոցի շենքը: Այդ շենքը կառուցվել էր քաղաքի գլխավոր ճարտարապետ Խոսրով Նշանյանի նախագծով և հիրավի ինքնատիպ շինություն էր: Ճարտարապետը կարողացել էր իրար զուգակցել ավանդական ազգային և ժամանակակից ճարտարապետական ոճերը և այնպիսի մի նուրբ ներդաշնակության էր հասել, որ հնարավոր չէր առանց հիացմունքի դիտել այդ կառույցը: Եվ բոլորովին էլ պատահական չէր, որ քաղաքի բնակիչները հիացմունքով և հպարտությամբ էին եկվորներին ծանոթացնում իրենց հյուրանոցին, շենքի բոլոր բարեմասնությունները ամփոփելով մի հատիկ նախադասության մեջ «Վերելակ էլ ունի»: Որովհետև դա միակ շենքն էր քաղաքում, որ վերելակ ուներ: Թեև եթե մինչև վերջ անկեղծ լինենք, վերելակից քչերն էին օգտվում: Այն աղմկոտ էր, հետո, ինչպես տեղացիներն էին ասում, լռվում-մնում էր հարկերի արանքում: Այնպես որ մարդիկ գերադասում էին փորձության չենթարկվել և ոտքով բարձրանալ հյուրանոցի չորս հարկը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավեն Շարաֆյանը էլեկտրական ջահերի պայծառ լույսից աչքերը կկոցած, հյուրանոցի ընդարձակ ու շքեղ սրահի ուղեգորգի վրայով ադմինիստրատորին մոտեցավ:

- Ներեցեք ,- ասաց նա,- Էմմա Ալիքյանը ո՞ր համարում է բնակվում:

- Պարուհի՞ն,- մրսած ձայնով հարցրեց գլուխը շալով փաթաթած կինը:

- Այո:

- Դուք ընկեր Շարաֆյա՞նն եք,- ընդգծված հարգանքով կրկին հարցրեց կինը, - Այո:

Նա ռեստորանում ձեզ է սպասում:

Զավեն Շարաֆյանը ժպտաց: Այնուամենայնիվ վճռել է առաջինը ռեստորան մտնել, որպեսզի ինքը պատվերներ տա, մտածեց նա: Տարօրինակ աղջիկ է:

Հանդերձարանում նա ափսոսանքով բաժանվեց իր անձրևանոցից ու լայնեզր գլխարկից, որոնք նրան իր կարծիքով պատկառելի տեսք էին տալիս, մեծ ձվաձև հայելու առջև ձեռքով հարթեց մազերը, ուղղեց փողկապը՝ աշխատելով չնայել կոստյումին և բացեց ռեստորանի սրահի դուռը: Անկյունում, փոքր-ինչ բարձրության վրա նվագում էր ժողովրդական գործիքների նվագախումբը՝ թառ, քամանչա, դհոլ, գումարած կենցաղ մտած ժամանակակից կլարնետը: Բավականին գիրուկ ու սիրունատես, թավ ու փափուկ ձայնով մի կին Սայաթ-Նովա էր երգում: Նվագախմբից ոչ հեռու, իրար միացրած սեղանների կողքին հանդիսավոր հագնված մի մեծ խումբ էր նստած, ըստ որում տղամարդիկ ու կանայք տեղավորված էին մեկընդմեջ, իսկ սեղանի ծայրին, բարձր թիկնաթոռի մեջ, փոքրիկ մի ծերունի էր բազմել՝ հեքիաթի կախարդ ծերունիների երկար ճերմակ մորուքով: Սրահը գրեթե լի էր հաճախորդներով, որոնցից հատուկ զանազանվում էին պատի երկարությամբ նստած պատանիներն ու աղջիկները: Հավանաբար մարզիկներ էին նրանք, վոլեյբոլի փնջային մրցումների մասնակիցները, որովհետև ուտում էին արագ- արագ, մեծ ախորժակով և նրանց առջև լիմոնադի շշեր էին միայն: Հակառակ նրանց, մուտքի ձախ կողմում գտնվող սեղանը ուղղակի ծանրաբեռնված էր կոնյակի, օղու և շամպայնի շշերով: Շշերը ոչ միայն սեղանի վրա էին, այլև թափված էին սեղանի ու աթոռների տակ, ասես թե խնջույքի մասնակիցները անպայման ցանկանում էին ցուցադրել իրենց հնարավորությունները և դիմացկանությունը: Տեսնելով սրահի ամենաձայրից ձեռքով անող Էմմային, Զավեն Շարաֆյանը արագորեն անցավ խմիչքով ծանրաբեռնված սեղանի մոտով, հասցնելով նկատել, թե ինչպես միանգամից լարված լռություն տիրեց այդ սեղանի շուրջը, և թիկունքին ու ծոծրակին գրեթե ֆիզիկապես զգալով սեղանակիցների անբարյացակամ, թշնամական հայացքները:

- Տեսա՞ր դու-- նրա ականջին հասավ ինչ-որ մեկի զարմացած-հեգնախառն ձայնը:

- Բա որ ասում էի…-- նրան միացավ մի ուրիշ ձայն:

Բայց Զավեն Շարաֆյանը ոչ կանգ առավ և ոչ էլ շրջվեց ձայների կողմը, այլ հանգիստ շարունակեց ճանապարհը ե ժպտացող Էմմայի սեղանին մոտեցավ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Բարի երեկո, Էմմա,- ասաց նա նստելով աղջկա դիմաց: -Մտքովս չէր անցնի, թե այդքան համարձակ ես: Ո՞նց ես մենակ ռեստորան մտել: Բա չվախեցա՞ր, այ ընկերուհի:

- Ինչպես տեսնում ես,- ժպտաց Էմման: - նույնիսկ վիրավորական է. սա ինչ քաղաք է, պարի անգամ չեն հրավիրում:

- Քեզ հետ պարե՞լ կլինի,- ծիծաղեց Ջավենը:

- Ուրեմն քո կարծիքով այստեղ գիտե՞ն, թե ես ով եմ:

- Իմ կարծիքով այստեղ ամեն ինչ գիտեն,- ասաց Ջավենը թռուցիկ մի հայացք նետելով մուտքի ձախ կողմում շշերով ծանրաբեռնված սեղանին:

Եվ քիչ մնաց բացականչեր զարմանքից: Այնտեղ ոչ ոք չկար:

- Ի՞նչ պատահեց քեզ, Ջավեն,- հարցրեց Էմման: - Քեզ ինչ-որ բան է անհանգստացնում:

Երիտասարդ լրագրողը ձեռքը աղջկա դաստակին դրեց.

- Ինձ ոչինչ չի անհանգստացնում, Էմմա,- ասաց նա,- Հիմա ինձ ոչինչ չի անհանգստացնում: Դե պատմիր, պատմիր տեսնեմ, թե այսօր ինչպես անցավ ելույթդ:

Աղջիկը պայծառ ժպտաց.

- Ինչ լավ ժողովուրդ ունեք,- ասաց նա՝ ակամա Ջավենին ևս տեղացի համարելով.- ինչքան խելացի ու կազմակերպված են, նույնիսկ երեխաները: Ես ուրիշ շրջաններում ու քաղաքներում էլ եմ ելույթ ունեցել: Ոչ մի համեմատություն: Նախ՝ հիանալի լսողություն ունեն և ռիթմի զգացում, իսկ հետո ամբողջ համերգի ժամանակ ոչ մի ավելորդ ձայն ու ծպտուն: Երբ նման դահլիճ է լինում, ես չեմ հոգնում, գիտե՞ս: Անընդհատ կարող եմ պարել: Ինչ վերաբերում է ընդհանրապես այս քաղաքի բնակիչներին, ավելի հյուրասեր, համեստ, մեղմ ու քաղցրալեզու մարդիկ չեմ տեսել: Ամեն մեկն ուզում է մեզ իր տուն հրավիրել և դիմում է այնպիսի խոսքերով, որ ակամա զգացվում ես, «ցավդ տանեմ», «քեզ մատաղ»- Երանի քեզ, որ այդպիսի մարդկանց մեջ ես ապրում:

Այո , մտածում էր լրագրողը, իրոք որ այդպիսի մարդկանց մեջ եմ ապրում: Բայց ես ի՞նչ անեմ, որ ինչպես միլիցիայի աշխատողներին, ինձ ևս դժբախտաբար առավելապես հանդիպում են այդ համեստ ու ազնիվ մարդկանց մեջ ապրող տզրուկները, բյուրոկրատները, բանսարկուները, խաբեբաները, հանցագործները: Ովքե՞ր էին, օրինակ, նստած մուտքի ձախ կողմի սեղանի մոտ և ինչու ինձ տեսնելուն պես շտապեցին չքանալ: Իհարկե, ոչ կարգին մարդիկ:

- Հետո, եթե այս ռեստորանով դատելու լինենք, ժողովուրդն այստեղ վատ չի ապրում,- իր ինչ որ միտքը շարունակելով, ասաց Էմման՝ աչքերով ցույց տալով տարեց մատուցողուհուն, որը կարծես թե նրանց կողքի սեղանին էր մոտենում երկու ձեռքով սկուտեղը, բռնած, որի վրա շամպայնի արծաթապատ մի շիշ կար, վառվռուն մրգերով լի մի թաս և շոկոլադի սալիկներ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բայց չէ, մատուցողուհին միայն գլխով արեց. լսելով կողքի սեղանի մոտ նստած մարդու պատվերը և սկուտեղը բերելով, տեղավորեց Էմմայի առջև:

- Սա քո՞ պատվերն է,- զարմացավ Զավենը:

- Ես ոչ մի պատվեր դեռ չեմ տվել,- ուսերը թոթվեց աղջիկը: - Քեզ էի սպասում:

Մատուցողուհին շարունակում էր ժպտալ:

- Սա ձեզ հյուրասիրում են, ընկեր Շարաֆյան:

- Ո՞վ,- ետ քաշվեց լրագրողը:

Մատուցողուհին գլխով ցույց տվեց խնջույքի մեծ սեղանը, որի ծայրին երկար ու ճերմակ մորուքով ծերունին էր նստած: Զավեն Շարաֆյանը ուշադրությամբ դիտեց սեղանակիցներին:

- Բայց ես նրանցից ոչ մեկին չեմ ճանաչում:

- Իզուր,- ասաց մատուցողուհին,- արժի ճանաչել նրանց՝ մեր քաղաքի երևի ամենալավ ընտանիքն է հավաքվել, պապի ծննդյան ութսունամյակն են տոնում:

- Բայց ի՞նչ ընտանիք է, ովքեր են,- չէր հանգստանամ լրագրողը:

- Բրուտյաններն են,- ասաց մատուցողուհին,- բրուտագործ Բրուտյանները:

- Ահա թե ինչ,- հուզվեց, ալեկոծվեց Զավեն Շարաֆյանը: - Դե ի՞նչ արած, մեզ ուտելու որևէ բան բերեք: Ի՞նչ կուզենայիր, Էմմա:

Աղջկա դիմախաղից հասկանալով, որ նա ընդհանրապես ոչինչ չի ուզում, մատուցողուհին թեքվեց դեպի նա:

- Ես մի էնպիսի բան կբերեմ, որ կուզես, աղջիկ ջան:

- Դրանից ինձ էլ, հա՞ ,- անմիջապես միջամտեց Զավենը: - Մենք էլ մարդ ենք:

- Անպայման, տղա ջան,- ծիծաղեց մատուցողուհին:

Էմման չթաքցրած հետաքրքրությամբ դիտում էր մանկության ընկերոջը:

- Դու ինձ զարմացնում ես, Զավեն,- ասաց նա: - Մի քանի ամսվա մեջ օտար քաղաքում այդ ինչ ես արել դու, որ նույնիսկ քեզ անծանոթ մարդիկ այդքան շռայլ հյուրասիրում են:

Զավենը ծիծաղեց կամացուկ, գոհ:

- Քիչ առաջ դու չէի՞ր ասում, թե հյուրասեր ժողովուրդ է:

- Իսկ եթե անկեղծ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ի ամոթ ինձ, առանց հետները ծանոթանալու, մեր քաղաքային թանգարանում ցուցադրված նրանց կավե ստեղծագործությունների հիման վրա մի փոքրիկ ակնարկ եմ գրել ու տպագրել հանրապետական թերթում: Իսկ դու գիտե՞ս, թե ինչ է այդ ծերունու անունը: Նահապետ: Ծնված օրից ճակատին գրվել է:

- Ինձ թվում է, թե երջանկությունը դա է,- կկոցած աչքերով ծերունուն նայելով, ասաց Էմման: - Երբ տեսնում ու վայելում ես քո արդար ապրած կյանքի, քո ստեղծածի արդյունքը: Ու փնտրում ես քեզ, քո գեները քո որդիների, քո թոռների ու ծոռների շարժումների, արարքների և աչքերի մեջ:

- Չգիտեմ,- ասաց Զավենը: - Ինձ թվում է, թե ես երբեք երջանիկ չեմ եղել: Կամ եթե եղել եմ՝ միայն օրորոցում: Երբ մայրս երգում ու օրորում էր ինձ:

- Ծույլի երազ,- ծիծաղեց Էմման, ետ ընկնելով աթոռին ու լարված հետևելով, թե ինչպես է Զավենը բացում շիշը:

Իսկ երբ տղան գրեթե անաղմուկ բացեց շամպայնի շիշը և լցրեց բաժակները, աղջիկը հանգստացած ասաց.

- Իսկ Ռուբենը անպայման պիտի աղմուկով բացի շիշը և խցանը շրխկոցով դիպցնի առաստաղին:

- Ռուբե՞նն ով է,- հարցրեց Զավենը և կռահեց անմիջապես: - Ախ, հա -- Լռեց, լռեց ու ավելացրեց, կարծես թե հենց այնպես: - Ո՞նց ես, Էմմա:

- Էհ,- ասաց աղջիկը: - Չգիտեմ ..

- Ինչո՞ւ…

- Չգիտեմ, չի ստացվում: Չեմ հասկանում, Զավեն: Տաղանդավոր քանդակագործ է, գիտե՞ս: Բայց ահավոր ծույլ ու ծանրաշարժ, իր կավի նման: Միայն խմելուց հետո է բացվում և աշխուժանում մի քիչ: Ոչ մի հետաքրքրություն չունի: Ոչնչով չի հրապուրվում, ոչնչի չի ձգտում: Եվ նույնիսկ չի խանդում, գիտե՞ս: Հազար ու մի տեղ հյուրախաղերի ենք գնում, անընդհատ սպասում եմ, թե մի անգամ ասի՝ ես էլ եմ գալիս, կամ ասի՝ մի գնա, Էմմա…

Զավենը շամպայն գինու պղպջակներին էր նայում, որոնք հետզհետե օդով էին լցվում բաժակի հատակում, ապա սրընթաց բարձրանում ու պայթում էին մակերեսին:

- Եվ ամեն անգամ ասես թե հյուր է գալիս ինձ: Ես սպասում եմ, որ մի օր նա որպես տանտեր մտնի: Իսկ նա հյուր է գալիս-նստում, խմում է ու գնում: Այդքանը բավարարում է նրան: Իսկ ես չգիտեմ եմ ինչ անել, որքա՞ն կարելի է շարունակել այդպես, ի՞նչ անեմ, Զավեն…

- Քո կենացը,- ասաց Զավենը ու խմեց շամպայնը:

Աղջիկն ուշքի եկավ:

- Ներիր ինձ,- մրմնջաց նա շփոթված,- ներիր, հա : Ես հիմարի մեկն եմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Էմմա,- ասաց Զավենը,- ես մի առաջարկ ունեմ,- ու նկատելով, որ աղջիկը ցնցվեց ու լարվեց միանգամից ավելացրեց շտապով: - Եկ վերցնենք մեր բաժակներն ու գնանք շնորհավորենք Նահապետ հայրիկին:

- Ճիշտ է,- թեթևացած շունչ քաշեց աղջիկը,- և պետք է շնորհակալություն հայտնել:

Նրանք սպասեցին, մինչև որ նվագողները ցած դնեն գործիքներն ու գնան ընդմիջման, հետո բարձրացան տեղից ու մոտեցան Բրուտյան գերդաստանի սեղանին: Այնտեղ անմիջապես լռություն տիրեց: Բոլորը, տղամարդ թե կին՝ միևնույն աչքերով ջահել զույգին էին նայում բարյացակամ և ժպիտով:

Էմման, ասես թույլտվություն խնդրելով, նախ Զավենին նայեց, ապա հայացքը դարձրեց ծերունուն.

- Ձեր կենացը, հայրիկ, երբ նայում եմ ձեզ, ինձ թվում է, թե դուք Նոյ նահապետն եք և Արարատից եք իջել՝ աշխարհում նոր մարդկություն և կյանք ստեղծելու համար:

Զավենին թվաց, թե հիմա Նահապետ հայրիկը կկնճռոտի ճակատը, ձեռքն ականջին կտանի ու կողքը նստածներին կխնդրի բարձրաձայն կրկնել աղջկա խոսքերը: Բայց ծերունին, հանգիստ շոյելով երկար մորուքը, երկնագույն վճիտ աչքերով նայեց աղջկան ու բավականին առույգ ձայնով ասաց.

- Աղջիկ ջան, իսկ երբ քեզ եմ նայում, ինձ թվում է, թե դու նավից իմ թոցրած աղավնին ես…

Սեղանի շուրջը գտնվողները ծիծաղեցին ու ծափահարեցին ոգևորված: Ծիծաղեցին նաև Էմման ու Զավենը՝ հիացմունքով ու զարմացած:

- Նստեք մեզ հետ,- իրար խառնվեցին, հրավիրեցին Բրուտյանները, բայց Զավենը շնորհակալությամբ հրաժարվեց ու ասաց.

- Նահապետ հայրիկ, հարգելի Բրուտյաններ, մեզ համար մեծ պատիվ էր ձեր ուշադրությունը: Դուք նշանավոր մարդիկ եք, որովհետև կարողանում եք ոգի տալ կավին, ու եթե ճիշտ է, որ աստված կավից է ստեղծել մարդուն, ուրեմն բոլորս էլ ինչ-որ չափով աստծո և ձեր զավակներն ենք: Եվ զավակների նման էլ ձեր կենացն ենք խմում ու հեռանամ, որովհետև այսօր ձեր գերդաստանի տոնն է:

Ծերունին փակել էր աչքերը, և Զավենին մի պահ թվաց, թե ննջում է, բայց երբ ավարտեց խոսքը, Նահապետ հայրիկը բացեց աչքերը ու ժպտալով ասաց.

- Իմ գերդաստանը վկա, որ այսօր մի գրամ չեմ խմել: Վերջանում է ինձ բաժին տրված գինին, խնայողաբար եմ օգտագործում: Բայց ինչ-որ մնացել է, դրանով ձեր կենացն եմ խմում, մոտ եկեք: Իրեն-իրեն մեր սեղանը բարի խոսքերի մեջլիս դարձավ: Ես էլ եմ մեջլիս մտնում և ուզում եմ օրհնել ձեզ ու ասել, որ երկուսդ էլ ազնիվ կավից եք հունցված ու ձեզ կրակ ու շունչ տվողը նույն արդար ձեռքն է: Երջանիկ լինեք ու այնքան համերաշխ, որ ձեր կապը ոչ ցրտից ու ոչ էլ շոգից ճաք չտա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Դե հո չէին կարող կանգնել ու բացատրություն տալ: Իրար ձեռք բռնած, ծիծաղելով ու ամաչելով իրարից, Էմման ու Զավենը ոչ այնքան խմիչքից, որքան ընդունելությունից արբած իրենց սեղանի մոտ վերադարձան և զարմանքով տեսան, որ սեղանին շամպայնի կիսատ շշից բացի, մի շիշ շամպայն էլ է դրված և սափորով օղի: Իսկ մեջտեղում, հենց թասի մեջ ձվով տապակած գետի մանրիկ կարմրախայտ ձկներ էին:

Մատուցողուհին անմիջապես մոտեցավ.

- Ի՞նչ ես կարծում, չի՞ ուտվի, աղջիկ ջան:

Էմման կանխակալ հաճույքից օրորեց գլուխը:

- Հեքիաթային բան է, մտքովս չէր անցնի: Ինչ բարի եք,- ասաց նա ժպտալով:

Մատուցողուհին ծիծաղեց գոհ և արդեն ուզում էր հեռանալ, երբ Զավենը ձայնեց նրան.

- Բարի ընկերուհի, իսկ չէի՞ք ասի, թե ով է այս նոր, բարի շշերի հեղինակը:

- Ինչը՞- զարմացավ մատուցողուհին: - Ախ, հա, մոռացա ասել, ձեզ հյուրասիրում են, ընկեր Շարաֆյան:

Էմման ծափ զարկեց ուրախությունից:

- Չէ, բայց դու իրոք որ Չախ-չախ թագավորն ես, Զավեն:

Բայց Զավենը մտահոգ էր:

- Ո՞վ է հյուրասիրում:

- Խնդրեց, որ ձեզ չասեմ, ընկեր Շարաֆյան, անուշ արեք:

- Բայց նա որտեղի՞ց գիտի, որ մենք ալկոհոլիկներ ենք,- հեգնեց Զավենը:

Մատուցողուհին շփոթվեց.

- Չէ, ինչ եք ասում, ուղղակի շատ է հարգում ձեզ:

- Զավեն, պատմություն մի սարքիր, չենք խմի և վերջ - միջամտեց Էմման:

Սակայն երիտասարդ լրագրողը ետ չկանգնեց.

- Ինձ հարգող մարդը կներկայանար: Ետ տարեք անմիջապես, խնդրում եմ:

Մատուցողուհին անօգնական ետ նայեց: Եվ Զավենը նկատեց, որ նվագախմբի մյուս ծայրի մոտ գտնվող սեղանից բարձրացել և դեպի իրենց է գալիս նիհար, բարձրահասակ, պատկառելի արտաքինով մի մարդ, հետ տված սև փայլուն մազերով, որոնք մեջտեղից կիսված էին սպիտակ մազափնջով:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ինչպես տեսնում եմ՝ հարգանքի իմ փոքրիկ ցույցով անհանգստություն եմ պատճառել ձեզ,- գյուղական մտավորականի վերամբարձ, պաճույճ ոճով, բայց մեղմ ու հաճելի ձայնով ասաց նա: - Ես անմիջապես չներկայացա, որովհետև չէի ուզում խանգարել ձեզ և իմ ժամին էի սպասում: Սակայն օղու այս սափորը վկա, ներկայանալու էի: Որովհետև ինձ գինի չի կարելի, բայց ես անասելի ցանկանամ էի ծանոթանալ ձեզ հետ և խմել ձեր կենացը:

Զավենը ծիծաղեց ականա, իսկ Էմման ժպտաց բարեհամբույր:

- Նստեք մեզ հետ, խնդրում եմ: Իմ անունը Էմմա է: Զավենին արդեն գիտեք: Իսկ ինչպե՞ս դիմել ձեզ:

- Գիտեք ինչ,- ասաց անծանոթը հառաչելով,- մարդ կարող է պատասխան տալ իր մեղքերի համար, կարող է և արդարանալ, բացատրելով իր մեղքը, բայց հավատացնում եմ, ես մազաչափ իսկ մեղավոր չեմ, որ հայրս իմ անունը Կայծակ է դրել: Դուք ասացեք, ես ի՞նչ կարող էի անել:

- Կայծա՞կ,- պայծառ ժպտաց Էմման: - Հիանալի է և համապատասխան: Կներեք, բայց ձեր սպիտակ մազափունջը իրոք ասես կայծակ լինի մութ երկնքում:

- Ուրեմն դուք Կայծակ Չոփուրյա՞նն եք,- ականա տագնապով հարցրեց Զավենը:

- Այո ,- ասաց մարդը,- և համարձակվում եմ մոտենալ ձեր սեղանին երեք հիմնական դրդապատճառներով: Նախ՝ ինձ համար մեծ պատիվ է դեմ-դիմաց նստել նշանավոր, հրաշալի պարուհի Էմմա Ալիքյանի հետ: Եվ ես հենց այս գիշեր գրելու եմ իմ հուշատետրում:

- Ուրեմն դուք ճանաչո՞ւմ եք ինձ,- ուրախությունը չթաքցրեց աղջիկը:

- Ես բախտ եմ ունեցել տեսնելու ձեր Գայանեն, ձեր Օդետան, ձեր Մարմարը, ձեր Կարապը՝ Սեն Սանսի մանրապատկերում:

- Բայց ես հիմնական պարողը չեմ եղել և ընդամենը փոխարինել եմ երբեմն…

- Ես սկզբում կարդում եմ ազդագրերը ու նոր ես տոմս գնում,- ծիծաղեց Կայծակ Չոփուրյանը:

- Ձեր կենացը,- գրեթե շառագունած առաջարկեց աղջիկը,- մտքովս չէր անցնի, թե այսպիսի մի հեռավոր անկյունում բալետի իսկական երկրպագու կգտնեմ:

- Ես այսօր էլ մշակույթի տանն էի և բերել էի մեր տեխնիկումի ողջ պարի խումբը, որպեսզի տեսնեն ձեզ:

- Ձեր կենացը,- կրկնեց Էմման: - Զավեն, դու էլ պետք է խմես ընկեր Կայծակի կենացը:

- Գուցե մենք որպես տղամարդիկ օղի խմենք,- իր բաժակը լցնելուց հետո, սափորը դեպի լրագրողի բաժակը տարավ Կայծակ Չոփուրյանը:

Զավենն ուզում էր առարկել, ասել, որ դրանից առաջ շամպայն է խմել, բայց ամաչեց ու ճակատը կնճռոտելով խմեց օղին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Մնաց երկու դրդապատճառ,- խաղի մեջ մտած հիշեցրեց Էմման:

- Ճիշտ է,- տղայի և աղջկա ափսեների մեջ տապակած ձուկ դնելով, համաձայնվեց Կայծակ Չոփուրյանը: - Երկրորդ դրդապատճառն այն է, որ Զավեն Շարաֆյանը փեսայիս ընկերն է և գործընկերը: Նրանք միասին են աշխատում նույն թերթի խմբագրությունում և փեսաս՝ Քաջիկ Սահառունին, ամեն անգամ դրվատանքի և հիացմունքի խոսքերով է նկարագրում մեր սիրելի բարեկամ Զավեն Շարաֆյանին: Այդքանից հետո ես ինչպե՞ս կարող էի անտարբեր անցնել նրա կողքով: Մանավանդ որ Զավեն Շարաֆյանը այսօր մեր քաղաքի ամենաակնառու ժուռնալիստն է: Ազնիվ, համարձակ, անվեհեր: Եվ գրում է այնքան գեղեցիկ, ճմարիտ ու պարզ, որ ընթերցողին թվում է, թե ինքն էլ կարող էր ճիշտ այդպես գրել… Ի սեր աստծո, դուք իրավունք և հիմք չունեք ինձ մեղադրելու շողոքորթության մեջ, բայց ես կասեի, որ նա Թումանյանի պարզությունն ունի- Մի ծիծաղեք, բայց երբ ես Թումանյան եմ կարդում, ինձ էլ է թվում, թե ես կարող էի այդպես գրել- Այ: այդ «թվալը» գրողի մեծության մասին է խոսում…

- Ուրեմն խմում ենք Զավեն Շարաֆյանի կենացը,- բացականչեց Էմման, որն արդեն ակնհայտ խմիչքի ազդեցության տակ էր: - Ողջ լինես, սիրելի Զավեն: Ես հպարտանում եմ քեզանով: Իմ մանկության ընկերոջ կենացը:

- Ընդամե՞նը,- զարմացավ Կայծակ Չոփուրյանը:

Նա այնքան անկեղծ զարմացավ, որ Զավենը և Էմման քրքջացին սրտանց, նայեցին իրար, նորից քրքջացին ու մինչև հատակը դատարկեցին բաժակները: Նրանց տրամադրությունն այնքան բարձր էր, Կայծակ Չոփուրյանը մի քանի րոպեում կարողացել էր մի այնպիսի հաճելի մթնոլորտ ստեղծել, որ նրանք միմյանցից բացի ոչինչ չէին տեսնում և չէին լսում ոչինչ: Զավեն Շարաֆյանը երբեք Էմմային այդքան ոգեշնչված չէր տեսել և նույնիսկ չզարմացավ, երբ նա դարձավ տեխնիկումի դիրեկտորին ու նրան մեկնեց ձեռքը:

- Գնանք պարենք, հա՞, ընկեր Կայծակ:

Կայծակ Չոփուրյանը վախեցած դեմք ընդունեց.

- Չեզ հե՞տ: Խայտառակ կլինեմ, սիրելի Էմմա: - Բայց որովհետև աղջիկը շարունակում էր պարզած պահել ձեռքը, բռնեց նրա արմունկն ու ասաց,- Դե լավ, ինչ ուզում է լինի: Կպարեմ թեկուզ միայն հուշատետրիս մեջ գրելու համար:

Նվագախումբը հայկական պար էր կատարում: Մի քանի հոգի, հիմնականում տղամարդիկ պարում էին հենց նվագախմբի դեմ- դիմաց՝ ոտքերը լայն-լայն գցելով ու գլխից վեր թափահարելով ձեռքերը: Էմման, արմունկն ազատելով ու բռնելով Չոփուրյանի ձեռքը, նրան հրապարակի կենտրոն տարավ, կանգնեց նրա դիմաց ու բարձրացրեց ձեռքերը: Նա այնքան գեղեցիկ, այնքան նազանքով էր պարում, որ մի քանի շարժում անելուց հետո Կայծակ Չոփուրյանը ծիծաղելով ետ կանգնեց ու սկսեց ծափահարել աղջկան: Անմիջապես դադարեցրին իրենց պարը նաև տղամարդիկ ու սկսեցին ծափ զարկել և բոլորի հայացքերն ուղղվեցին դեպի Էմման, որը գլուխը խոնարհած, մանրիկ-մանրիկ կաքավում, ասես սահում, ճախրում էր մանրատախտակի վրայով: Թվում, էր թե աղջկա ոտքերը չեն դիպչում գետնին, իսկ ձեռքերը մոմեղեն են…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բրուտյան գերդաստանը, որ բարձրացել էր աթոռներից և պատրաստվում էր տուն գնալ, նույնպես կանգնել ու հմայված ծափահարում էր աղջկան, իսկ երբ Էմման մի լայն շրջան կատարեց, Բրուտյանները ետ-ետ գնացին, որպեսզի տեղ տան պարուհուն: Այնինչ Էմման ուղիղ Նահապետ հայրիկին մոտեցավ, բարձրացրեց խոնարհած գլուխը ու նրան նայեց կանչող- հրավիրող հայացքով: Բոլորը ծիծաղեցին, ձեռքերը թափահարելով ծիծաղեց նաև ծերունին, բայց աղջիկը համաչափ ծափի տակ շարունակում էր անշարժ մնալ,և կատարվեց անսպասելին: Նահապետ հայրիկը ձգվեց, թափահարեց ուսերը, ուղղեց թիկունքն ու ձայն տվեց նվագողներին:

- Հը, փոխեք նվագը:

Նվագախումբը մի այլ պար սկսեց, որի ռիթմը համեմատաբար հանդարտ էր, և ծերունին սկսեց պարել, լայն տարածեց ձեռքերը, հետո թեքվեց մի կողմի վրա և սկսեց փոքրիկ-փոքրիկ քայլերով պտտվել պարուհու շուրջը, ուղիղ նրան նայելով, հոգնած թիթեռի նման, ճրագով հմայված: Իսկ աղջիկը պտտվում հա պտտվում էր տեղում, ամեն անգամ հայացքը շեղակի դարձնելով նրան, մինչև ծերունին կանգ առավ, ընդհանուր ծափի ու ծիծաղի տակ մոտեցավ աղջկան, համբուրեց նրա ճակատն ու ասաց.

- Ես սխալվել եմ, աղջիկ ջան, դու ոչ թե կավից, այլ կրակից ես ստեղծված…

Զավեն Շարաֆյանն իր տեղից դիտում էր այդ ամբողջ տեսարանը, ծափ տալիս և օրորում գլուխը, զարմացած համոզվելով, որ իր տրամադրությունն էլ բարձր է, մտածելով, որ եթե հրավիրող լիներ, ինքն էլ հրապարակ դուրս կգար պարելու: Գլխում հաճելի մշուշ էր և թեթև-թեթև էր մարմինը: Ծափ էր տալիս, բայց այնուամենայնիվ չէր կարողանում իրենից հեռացնել անորոշ տագնապի զգացումը: Եվ եզրեր չէր գտնում լսածի ու տեսածի միջև: Գյուղատնտեսական տեխնիկումի դիրեկտորի մասին միայն վատն էր լսել շրջապատից: Ինչ ասես ասում էին՝ զրպարտիչ է, վտանգավոր մարդ է, ավելի լավ է հետը գործ չունենալ, իր նպատակին հասնելու համար միջոցների մեջ խտրություն չի դնում, Հենց երեկ չէր դիրեկտորական նոր աթոռ փնտրող Հեղինե Բլբուլյանը իր քեռի Կայծակ Չոփուրյանով էր սպառնում- Բայց մյուս կողմից էլ՝ եթե սա նույն Կայծակ Չոփուրյանն է, ապա բոլորովին կապ չունի իր շուրջը ստեղծված լեգենդի հետ, պարզ, համակրելի, լուրջ, զարգացած և նույնիսկ ամոթխած մարդ է…

- Զավեն, կհավատա՞ս, վաղուց այսքան ուրախ չէի եղել, - աթոռին նստելով թույլ-թույլ ծիծաղեց Էմման: -Այս ի՞նչ հրաշք օր էր: Ես այս օրը երբեք չեմ մոռանա: Ինչո՞ւ չեք նստում, ընկեր Կայծակ: Թե՞ արդեն ձանձրացաք մեզանից:

- Ի՞նչ եք ասում, - անմիջապես նստեց Կայծակ Չոփուրյանը: - Ուղղակի չէի համարձակվում չարաշահել ձեր հյուրընկալությունը:

- Երրորդ դրդապատճառը-- աշխատելով համոզել, որ ինքը բոլորովին էլ հարբած չէ և հիշում է ամեն ինչ՝ վանկերը հատ-հատ արտասանեց լրագրողը:

- Իսկ ես առաջարկում եմ ընկեր Կայծակի կենացը,- ինքն էլ ծիծաղելով իր վրա, որ լեզուն ինչպես հարկն է իրեն չի ենթարկվում, տեղից բարձրացավ Էմման: - Վայ, ես հարբած եմ,-

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

կրկին ծիծաղեց նա, ընկնելով աթոռին: - Այս ինչ է, դատարկ բաժակո՞վ եմ խմելու, իմ բաժակը լցնող չկա՞, տղամարդիկ…

- Ով ասում է, թե ինքը հարբած է, ուրեմն հարբած չէ-նրա բաժակը շամպայն լցրեց Կայծակ Չոփուրյանը:

- Ճիշտ է,- ճչաց Էմման: - Ձեր կենացը: Դուք միակ կայծակն եք, որից ես չեմ վախենում:

- Երրորդ դրդապատճառը-- համառեց Զավեն Շարաֆյանը, զգալով, որ անհեթեթ դրության մեջ է, բայց ի վիճակի չէ ոչինչ անելու, այդ դրությունից դուրս գալու համար:

- Չէ, նախ կենացը,- պնդեց Էմման ու խմեց շամպայնը:

- Եթե չեք կարողանում, մի խմեք,- փաղաքուշ ձայնով Զավենին ասաց Կայծակ Չոփուրյանը:

Զավենը ցուցադրաբար, մի ումպով դատարկեց իր բաժակը և ինքն էլ նողկալով իրենից, կրկնեց,

- Երրորդ դրդապատճառը…

Էմման անօգնական ժպիտով, ասես ներում հայցելով դարձավ իր սեղանակիցներին.

- Տղաներ, ես հիմա կգամ, հա …

Տեխնիկումի դիրեկտորը արագորեն բարձրացավ տեղից:

- Զավեն, եթե թույլ տաք, ես կուղեկցեմ Էմմային:

Սակայն աղջիկը չթողեց, որ Զավենն իր կարծիքը հայտնի:

- Ինձ ուղեկիցներ պետք չեն: Ես հիմա կվերադառնամ -ասաց նա՝ բարձրանալով տեղից և տղամարդկանց լարված հայացքի ներքո, առանց մազաչափ իսկ ճոճվելով, հանդարտ քայլերով դուրս եկավ ռեստորանից: Ելքի մոտ կանգ առավ, շրջվեց, հաղթական ժպիտով նայեց իր սեղանակիցներին, կարծես ասելով՝ տեսեք ինչ հանգիստ անցա, ապա ձեռքով արեց ու անհետացավ դռան ետևում:

- Ուրեմն ձեզ հետաքրքրում է երրորդ դրդապատճառը, - ժպտաց Կայծակ Չոփուրյանը: - Ասեմ՝- Ես ուզում էի մոտենալ ձեզ, տեղեկացնելու համար, որ սաստիկ զայրացած եմ իմ քրոջ դստեր՝ Հեղինե Բլբուլյանի վրա: Անասելի զայրացած: Եվ նրան ինչպես պետքն է՝ շշպռեցի: Դու ի՞նչ իրավունքով ես ընկեր Շարաֆյանի մոտ հիշատակել իմ անունը, ասացի ես: Բավական չէ՞ : Քո նմանների պատճառով խայտառակ եմ եղել քաղաքում: Չնայած քո թույլ տված հազար ու մի տեսակ կեղծիքներին ու զանցանքներին, քեզ նորից մարդավայել աշխատանք են առաջարկում: Էլ ի՞նչ ես ուզում: Անպայման վարի՞չ պետք է լինես: Ո՞ր առավելություններիդ համար: Այլևս աչքիս չերևաս, ասացի-Եվ հիմա առիթից օգտվելով հայտնում եմ ձեզ, որ այդ խնդրում ես համաձայն չեմ նրա հետ և ձեր կողմն եմ… ինչ որ ասել եք նրան՝ ճիշտ եք ասել-Եվ շնորհակալություն, որ նրա մասին ֆելիետոն չեք գրում…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավեն Շարաֆյանը հուզվեց.

- Իրոք ֆելիետոնի հիանալի փաստ է, գիտեք,- գլուխը թափահարեց նա: - Իմ փոխարեն եթե ուրիշ լրագրող լիներ,.,

- Ձեր փոխարեն և այն էլ ձեր գրչով-- քրքջաց Կայծակ Չոփուրյանը: - Գիտե՞ք սոցապի և զինկոմիսարիատի աշխատողների մասին ձեր գրած ֆելիետոնից հետո ինչ են ասում:

- Ի՞նչ են ասում,- հետաքրքրվեց լրագրողը:

- Ասում են՝ ավելի լավ է մարդ տասը տարի բանտ ընկնի, քան թե Զավեն Շարաֆյանի գրչի տակ- Ձեր կենացը, սիրելի ընկեր Շարաֆյան, ձեր մարտական ու սուր գրչի կենացը:

Զավենը կարողացավ հրաժարվել.

- Այլևս օղի չեմ ուզում…

- Շամպայն խմեք,- անմիջապես համաձայնվեց Կայծակ Չոփուրյանը,- Շամպայնը թեթև է- Բայց եկեք ձեր կենացը տղամարդավարի այս արդեն լցրած օղիով խմենք ու նոր անցնենք շամպայնի: Եղա՞վ: :

- Մի բան էլ ավել եղավ,- ծիծաղեց Զավեն Շարաֆյանը: Նա խմեց օղին, վրայից էլ շամպայն խմեց և հարցրեց ուղղակի՝ իր հոր հարազատ զավակի նման,- Կայծակ Եփրեմիչ, ինչո՞ւ էր Հեղինե Բլբուլյանը ձեզանով վախեցնում ինձ, հը…Եվ ընդհանրապես…

Կայծակ Չոփուրյանը վշտացած օրորեց գլուխը.

- Հեղինեի մասին արդեն ասացի: Նա իր պատասխանը ստացավ: Հիմա դառնանք ընդհանրապեսին- Ներողամիտ եղեք, բայց դուք նոր մարդ եք այստեղ և լավ չեք ճանաչում քաղաքի տերերին: Հիմնականում պատահական մարդիկ են և պաշտոն են ստացել միայն այն պատճառով, որ տեղացիներ են: Նրանք իրենք էլ զարմացել իրենց տրված իշխանությամբ և որովհետև չեն համապատասխանում գրված աթոռներին, իրենց ուժն ընդգծելու, իրենց բարձրացնելու համար, նվաստացնում, ստորացնում, հալածում, աշխատանքից հանում են, ով ձեռքներն ընկնի: Հատկապես մանր-մունր սեղանավորներին, մարդկանց, ովքեր չեն կարողանում, ի վիճակի չեն պաշտպանելու իրենց իրավունքները: Պարզ ասած՝ գրեթե չորան Չատիի նման՝ հիշո՞ւմ եք. «Բերանը կապած սարի անասուն»: Իսկ ես ի ծնե, ի բնե մարտնչող բնավորություն ունեմ, տանել չեմ կարողանում անարդարությունը և երբ հանիրավի հալածված, դատապարտված մարդիկ իմ օգնությունն հայցում, ինձ իրավունք չեմ վերապահում մի կողմ կանգնել: Խիղճս թույլ չի տալիս: Ես նրանց բացատրում եմ իրենց իրավունքները, դիմումներ եմ գրում նրանց համար, որովհետև մարդիկ գրել չգիտեն, բողոքով մտնում եմ շրջկոմ, շրջխորհուրդ, մյուս հիմնարկները- Սիրելի ընկեր Շարաֆյան, մի՞թե տարօրինակ է,որ հանուն արդարության, միայն թե հասկանալիորեն, չեմ կարողանում այնպես լավ գրել, որ տպագրության արժանանամ:

- Միանգամայն հասկանալի է,- համաձայնվեց Զավենը

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Շնորհակալություն, ընկեր Շարաֆյան,- հուզվեց տեխնիկումի դիրեկտորը: - Անհամեստություն չհամարեք, բայց իմ գործունեությամբ ես ձեր կրտսեր զինակիցն եմ- Ես էլ եմ կռվում հանուն արդարության, միայն թե հասկանալիորեն չեմ կարողանում այնպես լավ գրել, որ տպագրության արժանանամ:

- Ձեր կենացը,- բացականչեց Զավենը: - Այս մեծ բաժակով ձեր կենացն եմ խմում, Եփրեմիչ, ես խորապես հասկանում ու գնահատում եմ ձեզ- Սրանից հետո ինչ ուզում են ասեն, ես գիտեմ, թե ով եք դուք:

- Եթե չամաչեի, լաց կլինեի,- մրմնջաց Կայծակ Չոփուրյանը: - Այս ինչ փառահեղ օր էր: Ամբողջ գիշեր գրելու եմ հուշատետրիս մեջ:

Հուշատետր բառը Զավեն Շարաֆյանին որտեղից-որտեղ Էմմային հիշեցրեց և նա բղավեց հանկարծ.

- Էմման ո՞ւր է- Էմման չեկավ, Եփրեմիչ…

Նա փորձեց բարձրանալ տեղից, բայց չկարողացավ: Տեխնիկումի դիրեկտորը մեղմ խոսքերով հանգստացրեց նրան, մատուցողուհուն ուղարկեց Էմմային կանչելու և երբ վերադառնալով մատուցողուհին հայտնեց, որ պարուհին «մուշ-մուշ-անուշ» քնած է իր համարում, քնած էր արդեն նաև Զավեն Շարաֆյանը, գլուխը սեղանին հակած:

* * *

Կոկորդը չորացել էր: Լեզուն խարտոցի նման էր շարժվում բերանի մեջ: Զգաց, որ խեղդվում է ծարավից: Երազում էլ ջուր էր տեսել. ինքը պապակվում, տոչորվում էր ծարավից, իսկ դիմացի ժայռից փրփրակալած ջրվեժ էր թափվում ցած: Ուզում էր նետվել դեպի ջրվեժը, բայց ներքևում խոր անդունդ էր, անհատակ խոր: Նա վախենում էր ցած նայել, բայց ծարավն այնպես էր տանջում, որ վճռեց ցատկել անդունդի վրայով, հասնել ջրին, որ թափվում էր աղմուկ-շառաչով: Ամուր փակեց աչքերն ու թռավ- Բայց միանգամից հասկացավ, որ անդունդն է գլորվում և սարսափած արթնացավ քնից:

Կոկորդն իրոք չորացել էր ծարավից և ջրվեժն ինչ-որ տեղ մոտերքում էր, դե իհարկե՝ հենց գլխի մեջ: Ահավոր խշշոց էր ու խելագար տրոփում էին քունքերը:

Զավեն Շարաֆյանը հառաչելով ու տնքալով բարձրացավ տեղից և զարմացած ու սարսափով նկատեց, որ կոստյումով ու կոշիկներով է քնել: Միայն փողկապը չկար: Ոտքի վրա հազիվ կանգնելով, օրորվելով սեղանին մոտեցավ, ջրամանը բերանին տարավ ու խմեց արագորեն, անհագ՝ ջուրը թափթփելով պիջակին ու հատակի վրա: Խոր շունչ քաշեց, ընկավ աթոռին, ցավոտ գլուխն ափերի մեջ առավ ու աշխատեց հիշել, թե ինչ է կատարվել իր հետ և ամենակարևորը, ամենակարևորը՝ ախր հիանալի էր զգում իրեն, տրամադրությունը բարձր էր, խոսում էին Կայծակ Չոփուրյանի հետ: Հետո, հա հետո հիշեց, որ Էմման գնաց ու չվերադարձավ և ինքը ձայն տվեց՝ Էմման ո՞ւր է, Էմման չեկավ, Եփրեմիչ…

Հետո ի՞նչ եղավ, Էմման եկա՞վ թե չեկավ, Խելագարվել կարելի է, ի՞նչ եղավ հետո, Ինքը ռեստորանում էր, հա, բայց ինչպե՞ս է տուն հասել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նա նորից ջուր խմեց հենց ջրամանից, որովհետև կոկորդը կրկին չորացել էր, և քանի որ այրվում, վառվում էր գլուխը, ջուրը հենց գլխին լցրեց,հանգցրեց կրակն ու աշխատեց հիշել, թե ինչ եղավ հետո: Մտածեց, մտածեց ու համոզվեց, որ այլևս ոչինչ չի հիշում…Չէ, բայց էլի ինչ որ բան եղավ- Դե իհարկե- Ուղեղում մշուշ էր, շփոթ,բայց նա էլի ինչ որ բան հիշեց. Կայծակ Չոփուրյանը սխալմամբ ենթադրում էր, թե Զավենը հարբած է և ուզում էր գրկած դուրս բերել… Բայց ինքը հո գիտեր, որ հարբած չէ, հենց այդպես էլ գոռում էր՝ թե հարբած չէ և ապացուցելու համար, որ հարբած չէ, էլի խմեց, մեծ բաժակով, մինչև հատակը: Խմում էր ու գրկում Կայծակ Չոփուրյանին: Բայց միայն նա չէր: Հետո ովքե՞ր մոտեցան. հումորով, հաճելի, ազնիվ մարդիկ էին, իրար հետ «բրուդերշաֆթ» էին խմում ու համբուրվում:

Հա, բայց ինչպե՞ս է տուն հասել: Ինչո՞վ է եկել: Ի՞նչ եղավ Էմման: Նրա շիկացած ուղեղը չէր կարողանում պատասխանել այդ հարցերին: Բայց եթե չի հիշում և ինչ-որ ժամանակ անջատվել է գիտակցությունը, ով գիտե, թե ինչեր է ասել ու արել: Ամոթ ու խայտառակություն: Ինչպե՞ս պիտի երևա ռեստորանում, աշխատողները, մատուցողները հո ամեն ինչ տեսել են: Ինչպե՞ս պիտի նայի Կայծակ Չոփուրյանի աչքերին: Բայց ե՞րբ հարբեց, ե՞րբ…

Զավեն Շարաֆյանը հանեց պիջակը, նետեց անկողնին, վերցրեց սրբիչն ու օրորվելով բակ դուրս եկավ՝ ծորակի սառը ջրով հիմնովին լվացվելու համար: Նա գլուխը ուժեղ շիթի տակ դրեց ու մնաց անշարժ այնքան, մինչև որ սառնությունը ուղեղին հասավ ու պարզվեց միտքը: Հետո լվացվեց չփչփացնելով, հառաչելով ու տնքալով, իսկ երբ մարմինն էր չորացնում սրբիչով, հանկարծ տեսավ տանտիրուհուն: Ալվարդը սանդուղքի բազրիքին հենված իր կենվորին էր նայում՝ անսքող ատելությամբ ու արհամարհանքով:

Զավենն ամաչեց սաստիկ ու մտքում հայհոյեց իրեն: Ուրեմն տիկին Ալվարդը տեսել է, թե ինչ վիճակում է տուն հասել ինքը: Ինչ ամոթ- Բայց այնուամենայնիվ ինչ-որ բան տեղը չէ ընկնում: Լավ, լավ, ասենք թե շան նման հարբած է եղել, ասենք թե քարշ գալով է տուն հասել: Սակայն չէ՞ որ սա առաջին դեպքն է մի քանի ամիսների ընթացքում: Կարելի էր զարմանալ, կարեկցել, ծիծաղել, ծաղրել ի վերջո, և ոչ թե նայել սպանիչ արհամարհանքով:

Եվ Զավեն Շարաֆյանը չդիմացավ:

- Շատ, շատ ներողություն, տիկին Ալվարդ, երեկ կորցրել էի ինձ, չեմ էլ հասկացել, թե ինչպես եմ հարբել: Այնպիսի մի շրջապատ էր:

- Ես չեմ ուզում խոսել ձեզ հետ,- հանկարծ ատելությամբ շշնջաց կինը: - Եվ կարծում եմ, որ գոնե այնքան ինքնասիրություն կունենաք, որ անձայն կհեռանաք իմ տնից:

Զավեն Շարաֆյանը ապշած նայեց տանտիրուհուն:

- Բայց ես ի՞նչ եմ արել, տիկին Ալվարդ: Չէ, հասկանում եմ և ինքս էլ ինձ չեմ ներում: Բայց ես առաջին անգամ…Երդվում եմ, ուղղակի չեմ զգացել:

- Չեք զգացել, որ սեղան եք նստել մարդասպանների հե՞տ…

Հարբածությունը միանգամից անցավ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ե՞ս, - շնչահեղձ լինելով հարցրեց լրագրողը,- Մարդասպանների հե՞տ: Սխալվում եք, տիկին Ալվարդ: Իմ կողքին եղել են Էմման և Կայծակ Չոփուրյանը: Նրանցից որի՞ն եք դուք մարդասպան համարում:

- Իսկ ովքե՞ր են ձեզ տուն բերել:

- Մի՞թե ես չեմ եկել,- սարսափեց լրագրողը,

Ալվարդը քամահրանքով տարուբերեց գլուխը,

- Ուրեմն չեք հիշում,- դառը քմծիծաղ տվեց նա,- Չեք հիշում, որ տուն եկաք, ավելի ճիշտ թևերից բռնած ձեզ տուն բերին իմ ամուսնուն սպանողները:

Զավենին թվաց, թե խելագարվում է կամ խելագարվել է արդեն:

- Ովքե՞ր,- խեղդվեց նա:

- Աղոն ու Վաղոն,- պոռթկաց տանտիրուհին,- Աղաբեկ և Վաղարշակ Տիտանյանները, որոնց հետ մի ժամ շարունակ համբուրվում էիք դարպասի մոտ և ստիպում, որ ձեզ հետ տուն մտնեն:

Զգալով, որ ոտքերը թուլանում են, Զավեն Շարաֆյանը ընկավ նստարանին:

- Բայց դա անհնարին է,- մրմնջաց նա: - Ես ոչինչ չեմ հիշում:

- Ինչը չեք հիշում:

- Ոչինչ, ոչ մի բան: Ես նրանց երեկ չեմ տեսել, երդվում եմ: Իմ զոհված հոր արև,- հանկարծ տղայավարի բղավեց նա: - Մայրիկիս արև, քրոջս արև…Ես նրանց չեմ տեսել…

Ալվարդը նրան էր նայում արդեն ոչ ատելությամբ, բայց թերահավատ:

- Հնարավո՞ր բան է դա: Իմ աչքի առաջ բերեցին քեզ:

- Չգիտեմ,- կործանված շշնջաց տղան: - Սարսափելին այն է, որ ես ոչինչ չեմ հիշում…

Նա լսում էր,որ իր սենյակի կիսաբաց դռնից հեռախոսի զանգեր են հնչում, բայց չէր

հասկանում, որ դրանք վերաբերում են իրեն և գրեթե ցնցվեց, երբ տանտիրուհին ասաց.

- Հեռախոսն է:

Զավեն Շարաֆյանը ոտքերը քարշ տալով սենյակ մտավ, սրբիչը ուժգին շպրտեց մահճակալին և վերցրեց լսափողը:

- Բարի լույս, ընկեր Շարաֆյան,- լսեց նա տղամարդու մի ձայն:

- Ո՞վ է - հարցրեց Զավենը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Սիմոնն է, կապիտան Հալաբյանը, ձայնս չճանաչեցիր…

- Այո, այո, -ուշքի եկավ լրագրողը: - Այո, ընկեր Հալաբյան, զեկուցագիրն ի՞նչ եղավ, արդեն պատրա՞ստ է:

- Պատրաստը պատրաստ է, բայց հիմա քո ինչի՞ն է պետք:

- Ինչպե՞ս թե, - զարմացավ լրագրողը: - Չէ որ պայմանավորվել էինք:

- Պայմանավորվելը պայմանավորվել էինք, բայց հիմա ինչքան է հարմար: Քիչ էր մնում մեջտեղը ես հիմար դրության մեջ ընկնեի: Հետաքրքիր մարդ ես, ինձ ասում ես զեկուցագիր պատրաստիր նրանց դեմ, իսկ դու հետները նստում քեֆ ես անում «բրուդերշաֆթ» ես խմում-.

Զավեն Շարաֆյանը արյունոտելու աստիճանի կծեց բռունցքը, որպեսզի հուսահատությունից չաղաղակի:

- Բայց խոսքը մեր մեջ, լավ ես արել,- կրկին ծիծաղեց կապիտանը: - Տղերք են, էլի, աշխատում են իրենց համար: Սկզբում որ ասացին, չհավատացի, բայց հետո որ- Մի խոսքով, ուրախ եմ, որ հաշտվել եք, հասկացել եք իրար: Հայ մարդիկ ենք, էլի,

մի բուռ ժողովուրդ, որ իրար չպահենք, մեզ ո՞վ պիտի պահի: Ճիշտ չէ՞: Հը՞: Դու ինձ լսո՞ւմ ես:

- Լսում եմ,- խորտակված մրմնջաց Զավեն Շարաֆյանը:

Նա չէր ուզում միջամտել կամ ընդհատել խոսակցությունը. որպեսզի իմանա, թե էլի ինչ է արել այդ անիծյալ գիշեր:

- Ձայնդ դուրս չի գալիս, հա՞, ուրեմն էդքան շատ ես խմել: Այ տղա, բա որ էդպիսի կարգին խմող ես, ինչո՞ւ էիր էն օրը կոտրատվում ինձ մոտ: Ինձ հետ վա՞տ կլիներ- Դե ոչինչ, տղերքի հետ այս երկու օրը կհավաքվենք:

Արդեն ծաղրում է, սրտում ծակոց զգաց Զավեն Շարաֆյանը: Ի՞նչ կարող եմ ասել, դրա իրավունքը ունի սրիկան:

- Մենակ թե ես չգիտեմ իմ անելիքը: Եթե հաշտվելու էիր, ի՞նձ ինչու էդքան չարչարեցիր: Հիմա էդ զեկուցագիր կոչվածն ի՞նչ անեմ: Թեյի մեջ գցեմ խմե՞մ, Դե լավ, լավ, կատակ եմ անում, - դարձյալ ծիծաղեց կապիտան Հալաբյանը: - Կպահեմ հիշատակ, ոնց որ Վաղոն է քո նվիրած փողկապը հիշատակ պահում, ասում է մինչև չմաշվի, վզիցս չեմ հանելու- Հենց հիմա էլ վզին է…

Փողկապը, իմ փողկապը- ահա թե որտեղ է, մտածեց Զավեն Շարաֆյանը, հազիվ զսպելով փղձկոցը, որ կուտակվել էր կոկորդում ու խեղդում էր: Հիմա ես ի՞նչ պետք է անեմ, ի՞նչ կարող եմ անել…

-Ասացի, այ Վաղո, բա դու խիղճ չունե՞ս, տղան հարբած է եղել՝ տվել է, պետք է վերցնեի՞ր, Չէ, ծիծաղեց Վաղոն, չէի վերցնում, զոռով գլխիս հագցրեց: Ընկեր Շարաֆյան,- շարունակում էր իր ծաղրուծանակը կապիտան Հալաբյանը: - Եթե փոշմանել ես, ձեռքից վերցնեմ քեզ բերեմ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավեն Շարաֆյանը դիմացավ և դրան.

- ՉԷ,- ասաց նա որքան հնարավոր է հանգիստ,- թող կապի: Նվերը ետ չեն վերցնում:

Նա ցած գրեց լսափողը և բակ դուրս եկավ: Տանտիրուհին նույն տեղում, նույն դիրքով կանգնած, կարծես սպասում էր նրան:

- Տիկին Ալվարդ,- ասաց Զավեն Շարաֆյանը: - Արդեն ենթադրում էի, բայց այս զանգից հետո լիովին համոզվեցի, որ այս ամբողջ պատմությունը սարքել են ձեր ամուսնուն սպանողները…

Տանտիրուհու աչքերում սարսափ հայտնվեց.

- Ինչի համար,- շշնջաց նա:

Տղան չպատասխանեց:

* * *

«Լուսաբաց» թերթի խմբագիր Մկրտիչ Զուլոյանը խոսում էր հեռախոսով՝ բարձրացրած ձախ ուսով լսափողը ականջին սեղմած: Նրա արտասանած մի քանի բառն անգամ բավական էր, որպեսզի Զավեն Շարաֆյանը հասկանար, որ նա տպարանի դիրեկտոր Գարեգին Չալյանի հետ է խոսում: Խմբագիրն իր ամենօրյա զրույցները տպարանի դիրեկտորի հետ անվանում էր «առավոտվա լեզվական մարմնամարզություն»,

-Ինչ ես խորհուրդ տալիս, ձեռագի՞ր հրապարակենք: Մեծարգո Գարեգին Սարիբեկովիչ, ընթերցողին չի հետաքրքրում դուք ներկ ունեք թե չէ: Նա իր թերթը պետք է ստանա: Եվ այդ թերթի տառերը սև պետք է լինեն, որպեսզի կարողանա կարդալ: Բա ինչու են ասում՝ սևով սպիտակի վրա: Հենց դրա համար: Երկու անգամ երկու: Եվ հետո, բարեկամս, շարվածքին ուշադրություն դարձրեք, ես մի տառասխալ ուղղում եմ տողում, տպարանից նույն տողը վերադարձնում են երեք տառասխալով: Հասկացանք, գրաշարը անգրագետ է, բայց հո կո՞ւյր չի: Տառապատկերը չի՞ տեսնում:

Մկրտիչ Զուլոյանը Զավենին մատնացույց արեց աթոռը:

- Ուրեմն տառարկղները մաքրեք: Դե տառարկղն էլ կասսան է, էլի, գերապատիվ Գարեգին Սարիբեկովիչ: Ամեն օր տեսնում եք, հենց գրաշարի գլխի վերևում լոզունգ կա փակցված. «Մաքուր ցրեք կասսաները»: Մինչև հիմա կարծում էիք, թե խոսքը դրամարկղների՞ մաքրության մասին է: Է, մինչև այդ բոլորը սովորի, կտեղափոխեք այլ աշխատանքի: Այդպես է, բա ինչ է, հենց տեսնում են, որ գործը գիտես և քո տեղում ես, անմիջապես այլ աշխատանքի են տեղափոխում: Ի՞նձ… Չէ, ուրիշ միամիտ չկա, որ իմ տեղում նշանակեն: Գիտես, չէ՞, անցյալ տարի ցանկացել են պատժել ինձ և բյուրոն հավաքվել է, որ որոշի, թե ինչ պատիժ տա: Ամեն մեկը մի բան առաջարկել է՝ հեռացնել, խիստ նկատողություն հայտարարել նոր հեռացնել, գրանցել անձնական քարտում և նոր հեռացնել և այլն, և այլն- Իսկ Ղուկաս Լալայանն ասել է՝ ամենամեծ պատիժն այն կլինի, որ թողնենք թերթում: Այդպես է, Գարեգին Սարիբեկովիչ, սա պաշտոն չէ- Սա, բարեկամս, վառոդի պահեստ է, որտեղ թղթակիցները վառվող ջահերով են մտնում: Հենց հիմա մեկն էլ դիմացս նստած է…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Խմբագիրը նայեց Զավեն Շարաֆյանին և երևի անմիջապես նկատեց բաժնի վարիչի վիճակը, որովհետև «առավոտվա լեզվային մարմնամարզությունը» ավարտված համարեց ու ցած դրեց լսափողը:

- Զավե՞ն,- հարցրեց նա՝ աթոռից ելնելով,- ի՞նչ է պատահել, տղաս…

Երիտասարդ լրագրողը չէր կարողանում խոսել: Նրա շրթունքները դողում էին: Դողում էին նաև գրասեղանին դրված մատները;

- Դե խոսիր,- ձեռքը նրա ուսին դրեց խմբագիրը: - Ի՞նչ է պատահել: Տնից վատ լուր հո չկա՞:

Զավեն Շարաֆյանը տարուբերեց գլուխը:

- Ուրեմն մնացածը ինչ էլ լինի լուծելու հարց է: Լսում եմ Զավեն,- նրա ուսը ցնցեց Մկրտիչ Զուլոյանը: - Եկել ես, ուրեմն խոսիր…

Եվ Զավենը պատմեց: Պատմեց ամենայն մանրամասնությամբ, ոչինչ չթաքցնելով, պատմեց առանց խնայելու ոչ ուրիշներին, ոչ իրեն: Դատապարտելով, ծաղրելով իր միամտությունը, դյուրահավատությունը, մեծամտությունը, շողոքորթության առաջ ծնկի գալը: Իսկ երբ նկարագրեց, թե ինչպես հանկարծ հայտնվեց Կայծակ Չոփուրյանը և ինչպես էր առատորեն հյուրասիրում, խմբագիրը քմծիծաղ տվեց.

- Դետեկտիվը սկսվում է այդտեղից:

- Չէ, չէ,- աշխատելով մինչև վերջ արդարամիտ լինել, առարկեց լրագրողը: - Կայծակ Չոփուրյանը շատ կարգին էր պահում իրեն:

- Տղաս,- ասաց խմբագիրը,- Կայծակ Չոփուրյանին ես ճանաչում եմ ավելի քան քսան տարի, հանգամանքների բերումով տասնյակ անգամ նրա հետ նույն սեղանի շուրջն եմ հայտնվել: Բայց երբեք, գոնե մի անգամ տեսած չկամ, որ նա ձեռքը գրպանը տանի: Ուրեմն դրանք ուրիշի փողեր են եղել…

Իսկ երբ Զավենը պատմեց, թե ինչեր են կատարվել այնուհետև, երբ ինքը փաստորեն կորցրած է եղել գիտակցությունը, թե ինչպես չի զգացել, որ Աղոն ու Վաղոն են տուն հասցրել իրեն և ամոթից գետինը մտնելով հայտնեց միլիցիայի կապիտան Սիմոն Հալաբյանը հեռախոսի զանգի և չարաբաստիկ փողկապի հետ կապված պատմության մասին, Մկրտիչ Զուլոյանը անասելի մռայլվեց:

- Ահա թե ում փողերն են եղել Կայծակ Չոփուրյանի գրպանում,- ասաց նա:

Խմբագիրը կատաղորեն շփեց քունքը:

- Ես քեզ ի՞նչ ասեմ: Ի՞նչ ասեմ, քեզ, Զավեն Շարաֆյան, որ սիրտս հանգստանա: Ես քեզ չե՞մ զգուշացրել, չե՞մ ասել, թե ինչ տականքներ են այդ գլխարկ կարողները, չեմ պատմել ինձ հետ կատարված դեպքերի մասին…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Բայց ես նրանց չեմ տեսել,- գրեթե հեկեկաց լրագրողը: - Ես ոչինչ չեմ հիշում: Եթե ես իմ կամքով նրանց հետ սեղան նստեի, եթե ես ի վերջո ցանկանայի ծածկել այս ամբողջ պատմությունը, հիմա ինչո՞ւ պետք է դատապարտեի ինձ ու խոստովանեի իմ մեղքերը:

- Մեղքեր,- անգթորեն խայթեց խմբագիրը,- դրանք մեղքեր չեն, ընկեր ժուռնալիստ, դա հանցագործություն է:

- Ճիշտ է,- անմիջապես համաձայնվեց Զավենը: - Հանցագործություն է: Բայց տրամաբանություն չկա, ընկեր Զուլոյան, եթե ես գիտակցաբար եմ գործել այդ հանցագործությունը, ապա ամեն ինչ կանեի, որ դուք ոչինչ չիմանայիք այդ մասին, ճի՞շտ է: Բայց հիմա ինչու եմ այստեղ:

- Իսկապես,- կանգ առավ խմբագիրը: - Ինչո՞ւ ես այստեղ, Զավեն Շարաֆյան:

- Ընկեր Զուլոյան, խնդրում, աղաչում եմ ձեզ, փրկեք իմ պատիվը: Չեմ չափազանցնում, ես չեմ կարողանա այլևս ապրել, չեմ կարողանա նայել տիկին Ալվարդի աչքերին: Նա ինձ ասաց. դու մարդասպանների ընկերն ես: Ասաց եթե մազաչափ ինքնասիրություն ունենաս, պետք է անձայն հեռանաս իմ տնից:

Մկրտիչ Զուլոյանը ձեռքերի մեջ էր առել խոշոր գլուխը:

- Բայց ես ի՞նչ կարող եմ անել, Զավեն,- հարցրեց նա սրտնեղելով- Դու քեզ այնպիսի հիմար վիճակի մեջ ես դրել,որ….

- Թերթը վաղը չէ մյուս օրն է տպվելու, չէ՞ …

- Թերթն ի՞նչ կապ ունի,- չհասկացավ խմբագիրը:

- Պետք է տեղ թողնեք ֆելիետոնի համար…

Մկրտիչ Զուլոյանը բարձրացրեց գլուխն ու բաժնի վարիչին նայեց ակնհայտ զարմանքով:

- Եվ դու չե՞ս վախենում,- հարցրեց նա:

- Չէ: - ասաց Զավենը:

- Եվ չե՞ս պատկերացնում, թե ինչ կլինի դրանից հետո:

- Պատկերացնում եմ,- ասաց Զավենը:

- Չես պատկերացնում,- գլուխը թափահարեց խմբագիրը: - Նրանք գայլերի ոհմակի նման կհարձակվեն քեզ վրա: Նրանք իրար կխառնեն քաղկոմն ու քաղխորհուրդը, բողոքներով կողողեն Կենտկոմն ու հանրապետական մամուլը: Մի՞թե մինչև հիմա չես հասկանում, թե միլիցիայի կապիտան Սիմոն Հալաբյանը ինչու էր ձգձգում զեկուցագիրը, թե ինչու էր բուֆետչան Սերոբին հիշեցնող մարդը պատերին քսմսվելով հետևում քեզ, թե ինչու անմիջապես ցրվել են ռեստորանում քեֆ անող մարդիկ, թե ինչպես է հանկարծ հայտնվել Կայծակ Չոփուրյանը…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Բայց Կայծակ Չոփուրյանը…

- Ինձ մի բարկացրու,- բարկացավ խմբագիրը,- դա նույն շրջանն է: Բա ի՞նչ պատահեց, որ ինչպես հանկարծ հայտնվել էր, այնպես էլ հանկարծ անհայտացավ: Ինչո՞ւ քեզ նա չուղեկցեց տուն, այլ այդ գործը հանձնարարեց նույնպես չգիտես որտեղից հայտնված Աղաբեկ ե Վաղինակ եղբայրներին: Ես բոլորովին էլ չեմ զարմանա, եթե ֆելիետոնի տպագրելուց հետո քաղկոմում հայտնվեն նաև լուսանկարներ, որոնցում դու գրկախառնված «բրուդերշաֆթ» ես խմում Աղոյի, Վաղոյի և շուկայի մյուս ավազակների հետ: Ասենք լուսանկարը նրանց ինչին է պետք, երբ փողկապդ նույնպես պակաս ապացույց չէ:

Զավեն Շարաֆյանը հառաչեց:

-Դե, տեսնում եք, որ իմ միակ փրկությունը ֆելիետոնն է:

Խմբագիրը նրան նայեց զարմացած:

- Իսկ իմ ի՞նչն է: Ես ինչպես պետք է արդարանամ, որ տեղեկություններ եմ ունեցել այդ սկանդալի մասին ու դրանից հետո տպագրել եմ ֆելիետոնը: :

- Դուք տեղեկություն չեք ունեցել - շտապով ասաց լրագրողը: -Դուք ոչինչ չեք իմացել: Ես ներկայացրել եմ ֆելիետոնը և հետն էլ փաստերը, բայց անազնվորեն, ստորաբար, հանցագործ կերպով, ինչ անուն ուզում եք դրեք, թաքցրել եմ ձեզանից, չեմ պատմել ռեստորանում տեղի ունեցած դեպքերի մասին:

Մկրտիչ Զուլոյանը կրկին բարձրացավ աթոռից և քունքը շփելով սկսեց քայլել սենյակում:

Զավեն Շարաֆյանը հասկանում ու, ինքն էլ կարեկցանքի արժանի, յուրովի կարեկցում էր նրան: Նա գիտեր, թե տպագրելով ֆելիետոնը՝ խմբագիրը ինչ բեռ է վերցնում իր ուսերին: Շուկայի մարդկանց դավադրությունը դեռ մի կողմ, ռեստորանային այդ ամբողջ նողկալի ներկայացումն էլ մի կողմ: Նա իրոք կարող է ասել, թե ինքը չի իմացել այդ մասին, և դա հազիվ թե առաջին սուտը լինի, որ նրա շուրթերից հնչել է: Առանց խաբելու, առանց խորամանկելու խմբագիր չես կարող աշխատել: Այդ բոլորը ոչինչ: Դա հարցի միայն բարոյական կողմն է, բայց չէ որ ողջ այդ ավազակախումբը կարող է ուղղակի ֆիզիկական իմաստով թիրախ դարձնել խմբագրին: «Մորքուրի» տղաները սարսափի տակ կպահեն, տեռորի կենթարկեն խմբագրի ընտանիքը- Մարիամը այլևս չի կարող ապահով դուրս գալ տնից: Չէ որ ամեն ինչ կարելի է սպասել նրանցից և ոչ միայն նրանցից, այլև նրանց ազգականներից ու հովանավորողներից, որոնք ամենուրեք են և անկասկած փոքր թիվ չեն կազմում քաղաքի ղեկավար մարմիններում:

Այնպես որ Զավեն Շարաֆյանը հիանալի էր հասկանում խմբագրի վիճակը, գիտեր թե հիմա ինչպես է տանջվում ու տառապում նա, ինչեր է տեսնում իր կկոցած, բորբոքված աչքերի առաջ, բայց ուրիշ ելք չուներ:

- Ընկեր Զուլոյան, հավատացեք, որ ես հասկանում եմ ձեր դրությունը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ինչ դրություն, ինչ դրություն,- ջղայնացած ասաց նա: - Իմ դրությունը միշտ էլ սա է եղել: Մի խանգարի ինձ, ես մտածում: Ես իրավունք չունեմ մտածելու…

Զավեն Շարաֆյանը հենց դրանից էր վախենում և շշուկով ասաց. - Ընկեր Զուլոյան, եթե այդ ֆելիետոնը չտպագրվի, ես կթողնեմ կհեռանամ քաղաքից- Ավելի ճիշտ, ոչ թե կհեռանամ, այլ գլուխս կառնեմ ու կփախչեմ անմիջապես, որովհետև դրանից հետո իմ աշխատելը ձեր խմբագրությունում ոչ մի իմաստ չունի: Ոչ մի իմաստ չունի, ընկեր Զուլոյան, որովհետև ամեն մի թափթփուկ կարող է մատով ցույց տալ ինձ ու ասել՝ այ սրան մի բաժակով կարելի է առնել…

- Ո՞վ է մեղավորը,- գոռաց խմբագիրը: - Ո՞վ:

- Ես,- ասաց Զավենը: - Ես: Անկախ եղածից, սա մեծ դաս էր ինձ համար, շատ դաժան դաս: Դրա համար էլ, խնդրում եմ, թույլ տվեք մասամբ քավել մեղքս: Թույլ տվեք ապացուցեմ, որ ժուռնալիստին գնել չի կարելի: Եվ վերջապես սա կյանքում իմ առաջին աշխատանքն է, առաջին խմբագրությունն է, թույլ տվեք որ իմ առաջին խմբագրին միշտ, ամբողջ կյանքում հպարտությամբ և երախտագիտությամբ հիշեմ:

Եվ Մկրտիչ Զուլոյանը հանկարծ ծիծաղեց: նա հազում_հազում ու ծիծաղում էր իր խուլ ու խռպոտ ձայնով, իսկ հետո թանաքոտ մատը թափահարեց երիտասարդ լրագրողի վրա,

- Կեղծավոր,- ասաց նա ծիծաղի միջից,- ինչ զենքով, որ հաղթել են քեզ, հիմա այդ զենքը իմ դե՞մ ես ուղղում, շողոքորթ…

- Ընկեր Զուլոյան…

- Լավ,- ասաց խմբագիրը: - Լինելու բանը պետք է լինի: Անմիջապես տուն գնա ու գրիր ֆելիետոնը: Վաղը առավոտյան սպասում եմ: Ոչ ոքի ցույց չտաս: Ոչ ոքի: Խմբագրությունում որևէ մեկը չպետք է իմանա, պա՞րզ է: Մեքենագրելու չհանձնես: Տառերը հատ-հատ գրիր: Եթե հավանեցի՝ տպարանում գրաշարը քո ձեռագրով կշարի: Հասկացա՞նք իրար: Եթե մեզ հետ դետեկտիվ են խաղում, մենք էլ դետեկտիվ կխաղանք: Միայն թե փաստերը, փաստերը- Մեր հոգսը քիչ չի լինելու, աստված չանի, որ նաև սխալներ լինեն:

Զավեն Շարաֆյանը հազիվ զսպեց իրեն, որպեսզի չգրկի խմբագրին: Բայց ամաչեց:

- Եթե ես կյանքում երբևէ, որտեղ էլ լինեմ, գիտակցաբար թե անգիտակցաբար առիթ տամ ձեզ, ինձ հիշեցրեք այս օրը, որպեսզի ամաչեմ,- ասաց նա:

- Կհիշեցնեմ, կհիշեցնեմ, կասկած չունենաս,- հազաց ,գլխով արեց խմբագիրը: - Ես հիշեցնող եմ: Իսկ հիմա տուն գնա, լսում ես, ուղիղ տուն:

* * *

Բայց Զավենը ուղիղ տուն չգնաց: Սիրտը շատ էր անհանգիստ Էմմայի համար: Ի՞նչ կատարվեց նրա հետ, Բարձրացավ իր համարն ու չվերադարձավ այլևս: Իսկ գուցե վերադարձել է հենց ժամանակ, երբ Զավենը կորցրած է եղել գիտակցությունը, Եվ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ականատես է եղել այդ ամբողջ խայտառակությանը: Իսկապես ցնորվել կարելի է: Կամ ով գիտե, գուցե այդ անասունները նրան ևս հանգիստ չեն թողել: Օգտվել են առիթից, որ աղջիկը բարձր տրամադրության մեջ է և- Չէ՞ որ նրանք սրբություն չունեն: Նա քիչ էր մնում գոռար հուսահատ կատաղությունից: Այս ի՞նչ արեց,

ի՞նչ արեց…

Նա կթքեր ամեն ինչի վրա և առաջինը հյուրանոց կգնար, բայց երբ պատկերացնում էր հյուրանոցի ու ռեստորանի աշխատողների հայացքները- Հետո միայն մտածեց, որ փոխված կլինի կազմը և գրեթե վազքով հյուրանոց հասավ: Ճանապարհին երկու-երեք հոգի բարևեցին նրան, բայց կարծես թե ուրիշ տեսակ էին բարևում: Կարծես թե արդեն գիտեին կատարվածի մասին, որովհետև մեկը ընդգծված ջերմ, ասես ծաղրանքով բարևեց, ու նույնիսկ հանեց գլխարկը, իսկ մյուսը չափազանց անտարբեր ու թեթևակի, միայն շրթունքներով…

Ադմինիստրատորը չսպասեց, որ նա խոսի:

- Դուք նամակ ունեք, ընկեր Շարաֆյան:

- Նամակ,- Նա գրեթե խլեց ծրարը, ակամա դողացող ձեռքերով ծրարի միջից հանեց քառածալ մի թուղթ և կարդաց. “Զավեն, սիրելի, ներիր, հա, Ես այնքան երջանիկ էի քեզ հետ, որ հարբեցի: Թե ինչպես եմ քնել, չեմ էլ զգացել: Հենց նոր արթնացրին ինձ ու ես պետք է Երևան մեկնեմ: Ափսոս: Շնորհակալություն, շնորհակալություն, շնորհակալություն- Սպասիր իմ զանգին: Էմմա»:

Զավեն Շարաֆյանը թեթևացած շունչ քաշեց:

- Շնորհակալություն,- ասաց նա տարեց, զարմացած կնոջը: - Շատ շնորհակալություն:

* * *

Վարար անձրև էր գալիս: Դեռ տպարանի ներսում Զավեն Շարաֆյանը գիտեր այդ մասին, որովհետև շենքի կից կառույցում, որտեղ տպագրող մեքենան էր, առաստաղից ջուր էր կաթում հատակին դրված լայն թասի մեջ: Անձրևի ձայնը չէր լսվում մեքենայի աղմուկի տակ, բայց նայելով կաթոցին, Զավենը ամուր կոճկեց անձրևանոցը, ծածկեց լայնեզր գլխարկը, մի քանի թերթ վերցրեց և դուրս եկավ շենքից: Շքամուտքի մոտ նա նորից քանդեց անձրևանոցի կոճակները, թերթերը տեղավորեց ծոցում, հենց սրտի վրա ու մութի մեջ լայն-լայն ցատկելով փայլող ջրափոսերի վրայով, ուրախ ու տագնապած սրտով մտավ Ապագայի փողոցը:

Երբ ձեռքը դռան բռնակին էր տանում, հանկարծ մտածեց,թե ինչ կանի, եթե տանտիրուհին իրագործած լինի իր սպառնալիքը և դարպասը փակ լինի: Հետո ծիծաղեց իր մտքի վրա: Եթե փակեր, երեկ կփակեր: Դարպասն, իհարկե, բաց էր, և Զավեն Շարաֆյանը կողպելով այն՝ արագ-արագ անցավ ասֆալտե արահետով ու մոտեցավ սանդուղքին: Բայց ճանապարհը չշարունակեց դեպի իր սենյակը, այլ կենվորության ընթացքում առաջին անգամ բարձրացավ փայտե սանդուղքով և ծալած ցուցամատով թեթևակի բախեց տանտիրուհու դռանը: Ներսում շարժում լսվեց, դուռը կիսաբաց եղավ և հայտնվեց Ալվարդի զարմացած դեմքը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Բարի երեկո,- ասաց լրագրողը:

- Ի՞նչ եք ուզում,- առանց դուռը լայն բացելու, սառնությամբ հարցրեց Ալվարդը:

Զավեն Շարաֆյանը ծոցից հանեց ու նրան մեկնեց «Լուսաբացի» համարը:

- Խնդրում եմ կարդաք, տիկին Ալվարդ:

- Ես ստանամ եմ այդ թերթը,- ուսերը թոթվեց տանտիրուհին,- վաղը կբերեն կկարդամ:

- Ուզում եմ, որ հիմա կարդաք,- ասաց տղան, մեկնեց լրագիրն ու շտապով իջավ աստիճաններով:

Փոքրիկ պահարանում հաց կար և մի կտոր պանիր: Երբ երկու օր առաջ բուֆետում պանիր տեսավ, քիչ մնաց չհավատար աչքերին:

- Մորաքույր,- հարցրեց,- պանի՞ր է:

- Պանիր է, պանիր է,- ժպտաց գլուխը շալով կարած, մրսած դեմքով բուֆետապան կինը, որ առաջին օրը տնից բերած խաշած կարտոֆիլից բաժին էր հանել Զավենին:

- Ուրեմն կյանքը լավանում է,- ձեռքերն իրար շփեց լրագրողը:

- Մինչև երշիկ էլ չստանամ, չեմ հավատա,- հառաչեց կինը: -Ինձ համար առատությունն այն է, երբ խանութում երշիկը ազատ դրված է լինում: Աչքիս առաջ է, նախքան պատերազմը այդպես էր:

Զավեն Շարաֆյանը սեղանին, իր առջև փռեց «Լուսաբացի» նոր համարը, որից տպարանային ներկի հաճելի հոտ էր գալիս, շրջեց, բացեց չորրորդ էջը, հարյուրերորդ անգամ կարդաց վերնագիրը՝ «Անմաքուր ձեռքեր», և սկսեց ուտել հացն ու պանիրը:

Խմբագիրը նյութը շարել չտվեց, սպասեց այնքան, մինչև պատասխանատու քարտուղար Միհրան Գալստյանը և օրվա հերթապահ, իլյուստրացիայի բաժնի վարիչ Քաջիկ Սահառունին գնացին տուն: Մի պահ նույնիսկ Զավենին թվաց, թե Մկրտիչ Զուլոյանը փոխել է մտադրությունը: Որովհետև թերթն արդեն լրիվ պատրաստ էր և կարդացել էր նույնիսկ գլավլիտի լիազորը: Սովորական, ոչնչով աչքի չընկնող համար էր, քիչ թե շատ հետաքրքիր, կամ ինչպես խմբագիրն էր ասում սովորաբար՝ կծող կամ խուտուտ տվող նյութ չկար: Այնինչ պատասխանատու քարտուղար Միհրան Գալստյանի թղթապանակում բավականին արժեքավոր թղթակցություններ կային, և նա մի քանի անգամ դրանց մասին հիշեցրեց խմբագրին: Նրան առանձնապես դուր չէր գալիս, որ խմբագիրը չորրորդ էջի վերևի աչքի ընկնող մասից հանել էր աշխատավորական նամակները և փոխարենը էջով մեկ դրել ՀՀԳ-ից ստացած մի բավականին անհամ նյութ՝ ճակնդեղի վնասատուների մասին: Երբ ոչ քաղաքում և ոչ էլ քաղաքամերձ շրջաններում ճակնդեղ աճեցնող չկար:

Միհրան Գալստյանը նյարդայնացած կամացուկ սուլում-սուլում էր իր անկյունում, հետո չդիմանալով կրկին դիմում խմբագրին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ընկեր Զուլոյան, չեմ հասկանում, ախր ճակնդեղը մեր ինչին է պետք: Նամակները չեք ցանկանում տպել, գոնե քաղաքի սանէպիդ կայանի գլխավոր բժշկի հոդվածը տպագրեք, շրջապատի մաքրության հարցերն է բարձրացնում: Կամ էլ «Խայտաբղետ փաստեր» դնենք՝ ահագին կուտակվել է:

- Խաչբառ բերե՞մ, առիթից օգտվում էր Քաջիկ Սահառունին: Դատարկ քառակուսիները որ լրացնում եք, կարդացվում է "Պրոլետարիատի բոլոր երկրներ, միացեք»:

Իսկ երբ Գալստյանն ու Սահառունին հուսահատված հեռացան տպարանից, Մկրտիչ Զուլոյանը ծոցագրպանից հանեց Շարաֆյանի ֆելիետոնը և մոտեցավ գրաշարին.

- Գեղամ,- ասաց նա խռպոտ շշուկով,- պարգևատրում եմ, եթե շարես առանց տառասխալի:

Բայց նրա խռպոտ շշուկը հասավ էջկապ Վահանին, որը սպառնալիորեն վեր բարձրացրեց բիզը

- Է, եղա՞վ, ընկեր խմբագրապետ, թերթը կապված-պատրաստ է: Ես կբողոքեմ:

- Չորրորդ էջը քանդիր ու ճակնդեղը դեն նետիր, եղբայր Վահան,- հազաց խմբագիրը: - Պարգևատրում եմ:

- Անշուշտ, եթե պետք է, պիտի քանդենք,- անմիջապես համաձայնվեց Վահանը:

Իսկ երբ շարված ու տեղադրված էր ֆելիետոնը և էջկապ Վահանը մամլիչի տակից հանեց ու խմբագրի սեղանին փռեց չորրորդ թաց էջը, Զավենը հուզմունքից կակազելով ասաց.

- Ախ, ընկեր Զուլոյան, այն, ինչ արեցիք ինձ համար…

Խմբագիրը էջից բարձրացրեց գլուխը.

- Միայն քեզ համար չէ սա, Զավեն: Առաջին հերթին երևի ինձ համար է: Համարյա թե մոռացել էի, գիտե՞ս: Այսօր ես դարձյալ ինձ իսկական խմբագիր զգացի:

- Ախր որ պատկերացնում եմ, թե ինչ աղմուկ կբարձրանա…

- Առանց աղմուկի ի՞նչ թերթ,- ծիծաղեց, հազաց Մկրտիչ Զուլոյանը, բայց Զավենը հո տեսնում ու հասկանում էր, որ սրբագրատան լապտերի դեղին ու աղոտ լույսը չէ խմբագրի դեմքի գունատության պատճառը:

- Հեռախոսը ծնգծնգաց, և Զավենը շտապով, անհամբերությամբ խլեց լսափողը:

- Զավեն,- լսվեց Ալվարդի ձայնը,- Զավեն, ոտքերս ինձ չեն ենթարկվում, վերև բարձրացիր, հա …

Նոր էր բացվել դուռը, երբ Ալվարդը գրկեց նրան ու համբուրեց ճակատը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Սա իմ կողմից: - Հետո ձախ այտը համբուրեց: - Սա էլ Միքայելի կողմից: - Եվ աջ այտը համբուրեց: - Սա էլ իմ Աշոտի կողմից: Դու ինձ կենդանացրիր, տղաս: Դու ինձ թույլ տվեցիր ապրել ու հավատալ, որ ի վերջո արդարությունը հաղթում է:

Նա լրագրողի ձեռքը բռնած նրան մոտեցրեց սեղանին, որի վրա զանազան ուտելիքներ, թթու և խմիչք կար:

- Այսօր իմ տոնն է, իմ Աշոտի ծնունդն է: Ես ու դու իրավունք ունենք նշելու և խմելու այսօր:

Զավենը սարսափահար ետ քաշվեց:

- Ես… Դուք հո տեսաք, թե ինչ է անում ինձ խմիչքը, տիկին Ալվարդ:

- Ինձ Ալվարդ ասա, դու իրավունք ունես ինձ Ալվարդ ասելու, Զավեն: Դու գիտես, որ Միքայելն էլ է ինձ Ալվարդ կանչում: Մայրիկ բառը քեզ չի սազում, ասում է: Դու ավելի շուտ իմ քույրիկն ես: Այնպես որ ինձ քույրիկ համարի ու Ալվարդ ասա: Եվ բոլորովին մի վախեցիր խմիչքից: Նախ սա թույլ գինի է: Նրանք անպայման նենգության են դիմել, երևի ինչ-որ հաբ են գցել բաժակիդ մեջ: Համոզված եմ: Բայց եթե չես ուզում՝ մի խմիր, իսկ ես ուզում եմ խմել քո կենացը, Զավեն, սիրելիս, ես համոզված էի, թե ոչ ոք չի կարողանա առնել Աշոտի վրեժը, չի կարողանա պատռել այդ Աղո և Վաղո կոչված սրիկաների դիմակները: Բայց դու ինչպես ես կարողացել, տեր աստված, ինչպես չես վախեցել Զավեն: Եվ հիմա՞ էլ չես վախենում, ասա, իսկապե՞ս չես վախենում: Ախր նրանք իսկական մարդասպաններ են:

- Չեմ վախենում, տիկին Ալվարդ…

- Ալվարդ,- խնդրեց կինը:

- Չեմ վախենում, Ալվարդ- Ի վերջո ովքե՞ր են նրանք, հո անտեր երկիր չէ:

- Դու այդպե՞ս ես կարծում,- կնոջ սև աչքերը փայլատակեցին հանկարծ: - Եթե անտեր չլիներ երկիրը, մի՞թե այդ վիժվածքները տեր ու տիրական կդառնային: Ֆելիետոնի մեջ դու հենց նույնը չե՞ս ասում: Այդ ինչպե՞ս պատահեց, որ դատախազությունը նախ սկսեց, իսկ հետո արագորեն կոծկեց գործը, և մարդասպաններին դատարանում ներկայացրեց իբրև խուլիգանների: Ինչո՞ւ առաջին փորձագետի կարծիքը մի կողմ դրեցին և հենվեցին շրջանի փորձագետի եզրակացության վրա, որը ոչ դեպքի վայրում էր եղել և ոչ էլ մասնակցել դիահերձմանը: Եվ վերջապես դա հո Տիտանյանների առաջին հանցագործությունը չէր, Քանի-քանի հոգու են դանակահարել նրանք և մնացել անպատիժ՝ իրենց բժշկական տեղեկանքներով: Ինչո՞ւ դատաբժշկական լուրջ փորձաքննության չեն ենթարկվում նրանք, այլ ամեն անգամ հիմք են ընդունում նրանց հին տեղեկանքները: Այդ ի՞նչ հոգեկան խանգարումներ ունեն նրանք, որ ոչ մի օր ստացիոնար բուժման չեն ենթարկվել, Մի՞թե կարծում ես, որ ես լռել եմ: Ոչ միայն ես, այլև կոմբինատի ողջ կոլեկտիվն է բողոքներ ուղարկել քաղկոմ,հանրապետական դատախազություն, Գերագույն դատարան: Բայց ի՞նչ, բոլոր բողոքներն էլ ի վերջո հավաքվել են մեր քաղաքի դատախազությունում, հենց նրանց մոտ, ովքեր հովանավորում են հանցագործներին: Այդքանից հետո ես ինչպե՞ս հավատամ մեր արդարադատությանը: Միայն Սիմոն Հալաբյանի փաստը բավական չէ: Ինչպե՞ս անպատիժ մնաց միլիցիայի կապիտանը, որը դատախազությունում մի բան է ասում, իսկ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

դատարանում այլ բան: Ինչ է քննիչը նրան է՞լ էր վախեցրել: - Նա մայորի կոչում պետք է ստանար, չեն տվել, - ասաց Զավենը:

Տանտիրուհին արհամարհանքով տարուբերեց գլուխը.

- Մայոր… իսկ ընդհանրապես նման մարդուն կարելի է միլիցիայում թողնել:

- Ինչ ասեմ տի… Ալվարդ, այդ հարցը թերթում ես էլ եմ տվել: Տեսնենք, թե ինչ են պատասխանելու:

Ալվարդը քնքշորեն նայեց նրան.

- Չեմ կարծում, թե քո ֆելիետոնից հետո նրանց հաջողվի խուլ ձևանալ: Դու հարցերն այնքան ուղղակի ես տվել, այնքան որոշակի ու համարձակ… Ներիր ինձ, Զավեն, բայց ես չգիտեի, որ դու այդքան լավ գրող ես: Իմ կարծիքով, սա առայժմ քո գլուխգործոցն է:

- Տեսնենք քաղկո՞մն էլ նույն կարծիքին կլինի,- քմծիծաղ տվեց լրագրողը:

- Քաղկոմը չգիտեմ, բայց ամբողջ ժողովուրդը քո կողմը կլինի,- ջերմությամբ ասաց Ալվարդը:
- Ես պատկերացնում եմ, թե ինչ է կատարվելու վաղը, երբ թերթը կրպակները հասնի…- և հանկարծ անհանգստացավ: - Զավեն, հնարավոր է, որ խանգարեն, որ չթողնեն թերթը լույս տեսնի…

- Բացառված է,- ասաց Զավենը և ինչպես սովորեցրել էին նրան Համալսարանի ժուռնալիստիկայի բաժնում, այնպես էլ բացատրեց: - Տպաքանակը լրիվ տպագրված է: Միայն ու միայն Կենտկոմի բյուրոն կարող է որոշել՝ արգելել թերթի վաճառքը:

Նա պարզապես չգիտեր, թե քանի-քանի տպաքանակներ են կրակի մատնվել և այն էլ ինչ վիթխարի տպաքանակներ և ինչ թերթերի, ընդամենը քաղկոմի կամ Կենտկոմի մի քմահաճույքով: Նրան այդ մասին չէին ասել Համալսարանում:

- Սրտիցս մի ծանր քար ընկավ,- ժպտաց Ալվարդը: Բայց, միևնույն է, ամբողջ գիշեր չեմ կարողանալու քնել: Իսկ առավոտ շուտ կվազեմ կրպակ ու մի հարյուր հատ կգնեմ:

- Ինչո՞ւ այդքան շատ, - ծիծաղեց լրագրողը:

- Դու նրանց դեռ չգիտես, Զավեն: Շուկայի այդ ավազակները հենց իմանան, բոլոր թերթերը կառնեն: Նրանց համար ի՞նչ մեծ բան է ամբողջ տպաքանակը գնելը: Կվերցնեն ու կվառեն:

- Չեն կարողանա, -հանգստացրեց նրան լրագրողը: - Տպաքանակի մեծ մասը բաժանորդագրվածներինն է:

- Ճիշտ որ, -ասես նոր միայն խաղաղվեց տանտիրուհին:

Նա Զավենի ափսեն ուտելիքներ լցրեց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ինչո՞ւ չես ուտում, ինչո՞ւ չես խմում, - ասաց նա: - Դու այսօր հերոս ես, հաղթող ես… Ուղղակի զարմանում եմ, Զավեն, ինչպես ես կարողացել բացահայտել շուկայի աշխատողների ազգակցական և ոչ միայն ազգակցական , այլև հանցագործ կապերը, ինչպես ես ծանոթացել միլիցիայում և դատախազությունում եղած նյութերին…

-Չեմ թաքցնի, -հաճելիորեն շոյվեց լրագրողը: -Ձեր տուն մտնելու հաջորդ օրվանից սկսած ես այս գործով եմ զբաղվել:

- Ինչ հաջողություն էր, որ դու հենց մեր տունը ընտրեցիր Զավեն,- շշնջաց տանտիրուհին,

Տարօրինակ բան է կյանքը, մտածում էր Զավեն Շարաֆյանը: Ինչպես ասում են՝ սարի պես ամուսին է կորցրել, ջահել-ջահել այրիացել է, որբացել է որդին, բայց եկ ու տես, թե ինչով է ուրախանում Ալվարդ Բարսեղյանը: Թե ինչն է հաջողություն համարում: Տես թե կյանքն ինչպես է ստիպում մարդկանց վերանայել տխրության և ուրախության չափանիշները, ինչպես է հարկադրում բոլորովին այլ աչքերով ու այլ տեսանկյունով դիտել և գնահատել երևույթները:

Երկու տարի առաջ մահացավ ընկերներից մեկի հայրը: Ահավոր ողբերգություն էր, Ավտովթարի էր ենթարկվել: Բավականին երիտասարդ էր դեռ և բոլորը սրտանց ցավում, սգում էին կորուստը: Երբ գերեզմանատանը վերջին արարողություններն էին կատարում, հանկարծ զոհվածի որդին, Զավենի ընկերն ասաց,

- Լավ էր, որ գոնե գերեզմանի համար հաջող տեղ ճարեցինք, կենտրոնում: Լավ տեղ է, չէ՞, Զավեն:

Եվ Զավենը չիմացավ ինչ ասել…

Սա իհարկե նույն դեպքը չէր, բայց էության մեջ այնուամենայնիվ նույնից ինչ-որ բան կար: Եվ Զավենը վատ զգաց իրեն: Ոչ թե Ալվարդի այդ արտահայտության համար: Չէ, ինչ մեղավոր էր Ալվարդը: Այլ որովհետև երբեմն անհեթեթ ու անհասկանալի է դառնում կյանքը: Եվ անիմաստ:

- Ես անզորությունից խելագարվում էի,- շարունակում էր Ալվարդը: - Դու ինձ երևի մի փոքր արդեն ճանաչում ես և կզարմանաս, եթե ասեմ, որ այդ խայտառակ դատավարությունից հետո, երբ տեսա, թե իրենց ընտանիքներով ու ընկերներով շրջապատված, հաղթական ու լկտի ինչպիսի դեմքերով դահլիճից հեռացան մարդասպանները- Ես ամեն օր վրեժխնդրության մասին եմ մտածել

Զավեն: Եվ հիմա մի քիչ հանգստացա:

Նա երկար նայեց սև շրջանակի մեջ պատից կախված մեծ նկարին, որ հավանաբար տարել էին սգո թափորի առջևից և որի վրա սև, առատ մազերով, խոշոր աչքերով, արծվաքիթ ու առնական տեսքով ամուսնու դիմապատկերն էր:

- Ես ամաչում եմ ասել, բայց քեզնից չեմ թաքցնի, որովհետև սրանից հետո իմ հարազատն եմ համարում: - Նրա սև, խոնավ աչքերը արցունքով լցվեցին: - Վաղը գերեզմանոց եմ գնալու և

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Աշոտին կարդալու եմ քո ֆելիետոնը: Թող նրա հոգին էլ խաղաղվի: Ինձ թվում է, թե նա կլսի: Ես համոզված եմ, որ նրանք լսում են

* * *

Խմբագրության շենքի մուտքի մոտ գրեթե ընդհարվեց Մարո Մելիքյանին: Ինֆորմացիայի և մշակույթի բաժնի վարիչը թափ տվեց ձեռքին բռնած «Լուսաբացի» համարը:

- Տեսա, դեռ չեմ կարդացել: Վայ, ուշացա:

Իննից մեկ րոպե էր պակաս, և Մարո Մելիքյանը սրտապատառ սլացավ բետոնե սանդուղքով: Խմբագրությունում աշխատելու երկու տարիների ընթացքում նա ոչ մի անգամ չէր ուշացել, որով նվաճել էր Մկրտիչ Զուլոյանի համակրանքը և խմբագրության մյուս աշխատողների ատելությունը: Նա օրինակ էր, իսկ օրինակից ոչ ոք օրինակ չի վերցնում: Նրան կամ նախանձում են, կամ՝ ատում: Իսկ որովհետև Մարոն նախանձելու առանձնապես բան չուներ՝ ատում էին:

Զավեն Շարաֆյանը հոգու խորքում հիասթափված էր: Նա լավ գիտեր, որ խմբագրության աշխատողները սովորաբար միմյանց գործերը չեն կարդում: Իսկ թե կարդում են՝ միայն ստիպված, եթե զեկուցող ես լինելու թռուցկաժողովում: Բայց չգիտես ինչու համոզված էր, որ այս մեկը կարդացած կլինեն բոլորը: Ամեն համարում չէ, որ ֆելիետոն է լինում և այն էլ այդպիսի ֆելիետոն: Սակայն խմբագրությունն ապրում էր իր սովորական կյանքով, ամեն ինչի մասին խոսում էին, բայց ոչ ֆելիետոնի, նույնիսկ տնեցիների մասին էին հետաքրքրվում, ֆուտբոլից էին վիճում, համոզված պնդում էին, թե ֆուտբոլի նոր մեկնաբան Նիկոլայ Օզերովը կանխակալ կարծիք ունի Երևանի «Սպարտակի» խաղի մասին և ակնհայտ տխրում է, երբ հայ ֆուտբոլիստները գոլ են խփում:

- Ես ձեզ բան եմ ասում,- տաքացած բղավում էր Քաջիկ Սահառունին: - Հարյուր տոկոսով գիտեմ, Օզերովի կնոջ նախկին ամուսինը հայ է եղել, այդ է պատճառը, որ Օզերովը հայ ֆուտբոլիստներին տանել չի կարողանում:

- Ոչ թե կնոջ, այլ քրոջ- առարկում էր արդյունաբերության բաժնի վարիչ Ջիվան Ենգոյանը: - Եվ ոչ թե ամուսինն է հայ եղել, այլ սիրածը: Անցյալ տարի Սոչիում իրար հետ էինք հանգստանում:

Մի խոսքով, ոչ ոք չէր խոսում ֆելիետոնի մասին, և Զավեն Շարաֆյանը զուր էր փորձում իմանալ գործընկերների կարծիքը: Մի քանի անգամ խմբագրի առանձնասենյակի դռանը մոտեցավ, բայց ապարդյուն; Մկրտիչ Զուլոյանը աշխատանքի չէր եկել; Եվ Զավենը հուսահատված իր սենյակը գնաց: Թերթի պատասխանատու քարտուղար Միհրան Գալստյանը նյութեր էր կարդում, բայց չէր սուլում սովորականի պես: Զավենը չդիմացավ:

- Ֆելիետոնը կարդացի՞ր,- հարցրեց նա:

- Եթե ես արժանի լինեի կարդալու, երեկ պիտի կարդայի և ինքս պիտի ուղարկեի տպարան,- առանց գլուխը բարձրացնելու ասաց նա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Եվ ուրեմն խռովել ու չե՞ս կարդացել:

- Չէ:

- Եվ չե՞ս էլ կարդալու:

-Չէ,- ասաց պատասխանատու քարտուղարը: - Եթե տեր խմբագիրն ու դու չեք վստահում ինձ ու մտածում եք, թե ես ընդունակ եմ հրապարակելու խմբագրության գաղտնիքները…

- Պատմություն մի սարքիր, Միհրան: Խմբագիրը չէր ուզում տպագրել և միայն վերջին րոպեին փոխեց մտադրությունը:

Միհրան Գալստյանը փնչաց.

- Քրդի տղին՝ լո-լո, կամ ինչպես գյումրեցիներն են ասում՝ եկել սատանի մայլեն քյանդրբազություն կանես- Սիրելի եղբայր, մի՞թե դեմքիս վրա այդքան ակնհայտ գրված է, որ ես բթամիտ եմ:

- Չէի ասի, թե այդքան ակնհայտ է,- ասաց Զավենը: - Եթե ակնհայտ լիներ, գրադարանի չքնաղ Սեդան ի՞նչ գործ ուներ քեզ հետ:

Միհրան Գալստյանը վեր ցատկեց տեղից:

- Ահա, տեսա՞ր, որ վերջիվերջո իմ կարծիքին եկար: Իսկապես չքնաղ է, չէ՞:

- Շատ գեղեցիկ է,- ասաց Զավենը: - Եվ ես միշտ էլ նույն կարծիքին եմ եղել: Ինձ խմբագրի հետ մի խառնիր:

- Դու էլ ինձ մատնիչի հետ մի խառնիր,- պոռթկաց Միհրանը,- եթե հորեղբորս մասին էլ գրած լինեիր, ես նրան չէի ասի: Ուր մնաց թե շուկայի սրիկաներին:

- Բռնվեցիր, ուրեմն կարդացել ես,- ծափ զարկեց, ծիծաղեց Զավենը:

Միհրան Գալստյանը լրջացավ:

- Կարդացել եմ, Զավեն, ու շատ անհանգիստ եմ: Դու մեծ պատմության մեջ ես խրվել: Գիտե՞ս, թե դրանք ինչ դրության մեջ գցեցին խմբագրին:

Հեռախոսը զնգաց: Միհրան Գալստյանը վերցրեց լսափողը և անմիջապես էլ գլխով արեց Զավենին, որպեսզի նա վերցնի զուգահեռ սարքի լսափողը:

- Լսում եմ,- ասաց լրագրողը:

- Ընկեր Շարաֆյան, ձեզ հետ քաղաքի դատախազ Միսակյանն է խոսում: Կարդացի ձեր ֆելիետոնը:

- Եվ ի՞նչ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Իհարկե, ճիշտ կլիներ, եթե սկզբից խորհրդակցեիք ինձ հետ,- ասաց դատախազը: - Ես էլ ձեզ նման նոր մարդ եմ քաղաքում: Եվ այդ պատմությունից տեղեկություն չունեի: Եթե ամեն ինչ եղել է այնպես, ինչպես դուք եք նկարագրում…

- Կասկած չունենաք, բոլոր փաստերն ստուգված են , -ակամա գլխով արեց լրագրողը:

- Առավոտվանից զանգահարում եմ խմբագրին: Նա տեղում չէ,- շարունակեց դատախազը: - Խնդրում եմ պաշտոնական գրություն կազմել և ֆելիետոնն ուղարկել դատախազություն: Մենք պարտավոր ենք քրեական նոր գործ սկսել Աղաբեկ և Վաղինակ Տիտանյանների նկատմամբ, միլիցիային հանձնարարել ենք քննություն կատարել շուկայի փաստերի հիման վրա:

- Քանի դեռ կապիտան Սիմոն Հալաբյանն այնտեղ է, դժվար թե որևէ բան ստացվի,- կասկած հայտնեց Զավենը:

-Դատախազությունը կզբաղվի նաև նրա անձնական գործով, -ասաց Միսակյանը: -Իմ կարծիքով, նա միլիցիայում չի մնա: -Նա լռեց մի պահ: - Բոլոր դեպքերում շնորհակալություն ձեզ՝ համարձակության համար: - Դատախազը նորից լռեց: - Ձեզ դեռ ոչ ոք չի՞ անհանգստացրել:

- Ոչ ոք:

- Եթե հարկ զգացվի, անմիջապես զանգահարեք ինձ: Աշխատեք անձնական փոխհարաբերությունների մեջ չմտնել ձեր «հերոսների» հետ:

- Իսկ եթե խմբագրություն գան,- անհանգստությունը չթաքցրեց Զավեն Շարաֆյանը:

- Չեմ կարծում, թե դրա համար նրանք ժամանակ ունենան,- ասաց Միսակյանը: - Իսկ եթե այնուամենայնիվ հայտնվեն, աշխատեք կոնֆլիկտի մեջ չմտնել: Պատասխանեք, որ ինչ ունեիք ասելու՝ ֆելիետոնի մեջ գրել եք: Զավեն Շարաֆյանը թեթևացած շունչ քաշեց.

- Իրականում հենց այդպես էլ կա:

Նա ցած դրեց լսափողը և անմիջապես էլ վերցրեց նորից, որովհետև հեռախոսը կրկին զնգաց:

- Զավեն, դո՞ւ ես…

Հետաքրքիր մարդ է: Զավենը համոզված էր, որ եթե լռող կամ ահաբեկող մեկը չլինի, ապա միայն նա կլինի:

- Ես եմ, Գառնիկ Վարդանիչ:

- Կեցցես, տղաս,- ասաց գործարանի դիրեկտորը: - Սա հենց այն է, ինչ ուզում է իր թերթում կարդալ բանվոր մարդը: Սա ճշմարիտ խոսք է: Տղաներին հանձնարարել եմ արտադրամասերում ընդմիջմանը ընթերցել ֆելիետոնը: Մենք մեր կարծիքը կուղարկենք խմբագրություն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Շնորհակալություն, Գառնիկ Վարդանիչ:

- Մենք ենք շնորհակալ,- կտրեց գործարանի դիրեկտորը: - Եվ սպասում ենք քո նոր, համարձակ պրոլետարական ելույթներին:

Հեռախոսը չէր լռում: Զանգահարում էին ծանոթ և անծանոթ մարդիկ, տարբեր բառերով, տարբեր խոսելաձևով, բայց նույն շնորհակալությունն էին հայտնում: Մի քանի հոգի էլ պատրաստակամություն հայտնեցին շուկայի բարքերի և Աղաբեկ ու Վաղինակ Տիտանյանների կատարած չարագործությունների մասին նոր փաստեր ուղարկել խմբագրություն: Թվում էր, թե ամեն ինչ կարգին է, մանավանդ որ ոչ մի տհաճ զանգ չեղավ, բայց տարօրինակն այն է, որ հենց այդ հանգամանքն էլ անհանգստացնում էր երիտասարդ լրագրողին: Ինչո՞ւ ոչ մի անախորժ զանգ չեղավ: Ինչո՞վ բացատրել այդ արտառոց լռությունը: Չէ որ հիմա Աղոն ու Վաղոն, Բերսաբեն և նրանց արբանյակները պետք է որ իրար խառնված լինեն: Ի՞նչ է անում հիմա կապիտան Սիմոն Հալաբյանը: Ինչո՞վ է զբաղված Կայծակ Չոփուրյանը: Եթե կապ չուներ ռեստորանային այդ ամբողջ պատմության հետ, ինչին շատ էր ուզում հավատալ Զավենը, ինչո՞ւ հաջորդ օրերին չերևաց, չբացատրեց իր հանկարծակի հեռանալու պատճառը: Իսկ եթե նրանց կողմից է, դարձյալ ինչո՞ւ չի զանգահարում, որպեսզի փորձի ահաբեկել ու շանտաժի ենթարկել:

Հեռախոսը զնգաց նորից, և Միհրան Գալստյանը թափահարեց ձեռքերը՝ հասկացնելով, որ լսափողն այլևս չի վերցնի, միևնույն է, Զավենին են ուզելու: Զանգը սովորական չէր, հնչում էր երկար ու անընդմեջ, և Զավեն Շարաֆյանը մի քանի վայրկյան չէր կարողանում հասկանալ, թե որտեղից է այն և ինչ են ուզում: Ի վերջո աղմուկի և տրաքտրաքոցի միջից լսվեց հեռախոսավարուհու ձայնը:

- Պատասխանեք Երևանին:

Երևանին- Համարյա թե մոռացել էր Երևանը…

- Ալո, Զավեն Շարաֆյանին եմ խնդրում,- հանկարծ պարզ, ասես շատ մոտիկից լսվեց կանացի մի ձայն:

- Ես եմ,- ասաց Զավենը: - Դո՞ւ ես, Սիրան:

- Ես եմ, շնորհավորում եմ,-- ասաց Սիրանը:

Դո՞ւ որտեղից գիտես:

- Ի՞նչը…

- Բա ի՞նչն ես շնորհավորում:

- Ինձ տանում են,- ծիծաղեց Սիրանը: I

- Ոչինչ չեմ հասկանում,- բղավեց Զավենը: - Ո՞ւր են տանում: Սիրանը կրկին ծիծաղեց:

- Վաղը գալու են խոսք ուզելու:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավենին նոր միայն տեղ հասավ քրոջ խոսքերի իմաստը:

- Ճի՞շտ: Եվ ո՞վ է այդ դժբախտը:

Քեզ նման սիրուն մի տղա:

- Կարեկցում եմ,- գոռաց Զավենը: - Գուցե մերժե՞ս…

- Հո գիժ չես, այ տղա,- ձայնը շշունկի իջեցրեց Սիրանը: - Մեռա սպասելով, արդեն կտրել էի հույսս…

- Կողքիդ է՛ հա՞,- քրքջաց Զավենը:

- Համարյա թե,- դարձյալ շշունկով ասաց Սիրանը: - Ուրեմն՝ վաղը Երևանում կլինես:

- Վա՞ղը…

- Կսազի , որ ախպերս կողքիս չլինի:

- Չի սազի,- ասաց Զավենը: - Ինչ էլ լինի՝ կգամ, Սիրան ջան: Մայրիկս ո՞նց է:

- Համ լաց է լինում, համ էլ ծիծաղում է:

Զավենը լսեց, թե ինչպես հեռախոսավարուհին անհամբերությամբ անջատեց ու նորից միացրեց կապը և շտապով ասաց,

- Կգամ, Սիրան ջան:

- Արի, եղբայրիկ…

Գիծն անջատվեց, և Զավեն Շարաֆյանը ցած դրեց լսափողը: Միհրան Գալստյանն իր անկյունում հառաչեց.

- Վախ, վախ, բոլորը պսակվեցին, մնացի ես…

Ուրեմն Սիրանը նշանվում է: Մի քանի ամիս հետո ամուսնու տուն կգնա, և մայրիկը կմնա մենակ: Ինչպե՞ս պետք է ապրի խեղճ կինը: Ո՞վ պիտի մի բաժակ ջուր տա նրան, եթե հանկարծ հիվանդանա: Ո՞վ պիտի նրա փոխարեն հերթ կանգնի հացի ու մթերային խանութներում: Ո՞վ պիտի շուկա գնա: Գոնե համաձայնվեր գալ այս փոքրիկ քաղաքը ու ապրել որդու հետ, որդու կողքին: Բայց չի գա, չէ: Զավենը հաստատ գիտեր, որ չի գա: նա չի հեռանա իր տնից, որովհետև դեռ սպասում է: Կարելի է զարմանալ այդ հավատի վրա, համարել միամտություն, անմտություն, տարօրինակություն, երևի նույնիսկ թաքուն կարելի է ծիծաղել ու ծաղրել: Բայց ինչ ուզում ես արա՝ ուզում ես ծիծաղիր, ուզում ես լաց եղիր բայց այդ կինը համառորեն սպասում է իր ամուսնուն և դռան յուրաքանչյուր թակոցի հետ վեր է թռչում տեղից: Նա նույնիսկ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հյուր չի գնում, կամ եթե ստիպված գնում էլ է, անմիջապես տուն է շտապում, որովհետև վախենում է, թե Աշոտը հանկարծ կգա ու իր տան դուռը փակ կգտնի: Եվ վատ բան կստացվի, շատ վատ բան: Ըստ որում նա ամուսնուն Եվրոպայից կամ Ամերիկայից չի սպասում, այլ միայն Սիբիրից: Համոզված է, թե գերի է ընկել պատահաբար և անպայման վիրավոր վիճակում, իսկ հետո մերոնք ազատել են նրան համակենտրոնացման ճամբարից ու մեր ճամբարն են ուղարկել Սիբիրում: Եվ սպասում էր: Նրա հույսն ավելի մեծացավ, երբ մեռավ Ստալինը: Նա համոզված էր, թե Ստալինի մահից հետո կբացվեն բոլոր փակ դռները, կազատվեն անմեղ մարդիկ և մեղավորներն էլ ներում կստանան: Որովհետև անհնարին է, որ երկրի գլուխ նորից «էն բեղավորի» նման դաժան ու անխիղճ մարդ կանգնի, մի մարդ, որ իր հարազատ որդուն չխնայեց: Իսկ եթե նա իր հարազատ որդուն չխնայեց, ինչո՞ւ պիտի խնայի ուրիշների որդիներին, եղբայրներին ու ամուսիններին: Ինչու պիտի խնայի Աշոտին: Զավենը զգուշորեն վիճում էր մոր հետ, բացատրում, որ Ստալինն այլ կերպ վարվել չէր կարող: Նա իրավունք չուներ փրկելու իր որդուն, երբ միլիոնավոր մարդկանց էր դեպի մահ ուղարկում: Բայց մի՞թե որևէ խոսքերով կարելի է համոզել մեկին, որի հորն ու մորը թուրքերն են սպանել Ղարսում, եղբորը գնդակահարել են 37 թվականին, Երևանի բանտում, իսկ ամուսինը անհետ կորած է:

Հեռախոսը զնգաց նորից, և Զավեն Շարաֆյանը լսափողի մեջ ինչ-որ խռպոտ ձայն լսեց: Ահա , սկսվում է, շատ էիր անհանգստանում, մտածեց նա, բայց հաջորդ վայրկյանին իսկ հասկացավ, որ խոսողը խմբագիրն է: Նա հազաց-հազաց ու ասաց.

- Եկ ինձ մոտ, Զավեն:

Մկրտիչ Զուլոյանը չգիտես ինչու հանդիսավոր էր հագնված: Սև կոստյումով էր և սև փողկապով:

- Հը, ի՞նչ կա, չկա, զեկուցիր:

Եվ Զավեն Շարաֆյանը պատմեց օրվա բոլոր զանգերի մա՛սին, չմոռանալով ավելացնել, թե որքան ջերմ են ընդունել դրսի ընթերցողները: Նույնքան էլ սառն է խմբագրության աշխատողների վերաբերմունքը: Միհրան Գալստյանից բացի, որն իր հերթին ուզում էր թաքցնել այդ, մնացած ոչ ոք չի կարդացել ֆելիետոնը: Խմբագիրը քմծիծաղ տվեց.

- Զգուշանում են, կասկած չունենաս, կարդացել են, բայց զգուշանում, սպասում են- նույնն էլ քաղկոմում էր,- ասաց նա: - Սկզբում ձևացնում էին, թե դեռ չեն կարդացել, բայց երբ հարևանցիորեն որոշ հարցեր տվեցի, տեղն ու տեղը մատնեցին իրենց: Երկրորդ քարտուղար Գրետա Սուրենյանը, որն ի դեպ քո Բերսաբեի հարևանուհին է և այդ հանցագործ շղթայի կուսակցական օղակը, ասաց, որ չի կարդացել, բայց բոլոր դեպքերում ճիշտ կլիներ, եթե այդ հարցերը քաղկոմի բյուրոյում քննվեին և նոր միայն արտացոլվեին թերթում:

- Է, թող քննվեին մինչև հիմա,- ակամա զայրացավ Զավենը:

- Ճիշտ նույնն էլ ես ասացի,- ժպտաց խմբագիրը: - Բայց դե նրանց բոլորի հերն էլ անիծած, կարևորն ինձ համար Ղուկաս Լալայանի կարծիքն էր: Իսկ նա շնորհավորեց մեզ և ասաց, որ ֆելիետոնն անպատճառ քննության կդրվի քաղկոմի բյուրոյում: Եվ հենց իմ ներկայությամբ էլ զանգահարեց դատախազին: - Ուրեմն առայժմ ամեն ինչ կարգին է…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Թյու, թյու, թյու- ձախ ուսի վրայից երեք անգամ թքեց ու ծիծաղեց խմբագիրը: - Սնոտիապաշտ չեմ, բայց աչքով տալուն, սև կատվին, երազին ու անեծքին հավատում եմ:

Անմիջապես օգտվելով առիթից, որ խմբագրի տրամադրությունը բարձր է, Զավենը խնդրեց նրան թույլ տալ երկու օրով մեկնել Երևան, քրոջ նշանադրությանը մասնակցելու: Մկրտիչ Զուլոյանին դա մի առանձին խանդավառություն չպատճառեց:

- Չէի ցանկանա, որ այս օրերին բացակայես քաղաքից, Զավեն,- ասաց նա: - Բայց խնդրո առարկան այնքան հարգելի է, որ…

Իսկ երբ տղան շնորհակալություն հայտնելով շրջվեց, որ հեռանա, ձայն տվեց.

- Իսկ փող ունե՞ս:

- Ի՞նչ իմաստով,- ժպտաց Զավենը:

- Նվերի իմաստով, ի՞նչ իմաստով:

- Չէ,- անկեղծորեն խոստովանեց լրագրողը:

Մկրտիչ Զուլոյանը «Լուսաբացի» մի համար դրեց սեղանին և ֆելիետոնի այունյակների վրա մի այնպիսի թիվ գրեց, որը հավասար էր ամբողջ թերթի հոնորարին:

- Տուր հաշվապահին ու ստացիր,- ասաց նա: Հետո հեռախոսով մի համար հավաքեց: - Ընկեր Քաջբերունի, Զուլոյանն է. կարծեմ ձեր պահեստից մենք երբեք չենք օգտվել: Ճի՞շտ է: Դե եթե ճիշտ է, հիմա ձեզ մոտ կգա մեր քաղաքային տնտեսության և կենցաղի բաժնի վարիչ Զավեն Շարաֆյանը: Նա է, նա է: Վախից չթաքցնես ապրանքը: Ընդհակառակը: Մի հարմար բան տուր՝ քրոջ նշանդրեքն է: Եղա՞վ: Եվ հետևիր, որ ավել գումար չվերցնեն: Ձեռքները սովոր է…

Նա ցած դրեց լսափողը ու ինքն էլ ակնհայտ գոհ իր արարքից, ժպտաց. - Բարի ճանապարհ քեզ, Զավեն, Իմ կողմից շնորհավորիր քրոջդ:

Բայց զուր չէր, որ Զավենն իր հոր հարազատ որդին էր:

- Շնորհակալություն, ընկեր Զուլոյան, Իսկ հիմա թույլ տվեք մի հարց տալ:

- Ինչ հարց,- մի նոր սիգարետ վառեց խմբագիրը:

- Ախր ինչքան ճանաչում եմ ձեզ, դուք Էությամբ շատ բարի մարդ եք…

- Դա հարց չէ,դա բացականչություն է,- նկատեց խմբագիրը:

- Անցնում եմ հարցին՝ ինչո՞ւ չեք թողնում, որ Միհրան Գալստյանը ամուսնանա գրադարանավարուհի Սեդայի հետ:

- Ե՞ս չեմ թողնում,- զարմացավ խմբագիրը: - ինչպե՞ս չեմ թողնում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չեք հավանում Սեդային:

- Ի՞նքն ասաց,- գլուխը բարձրացրեց խմբագիրը:

- Հա:

Մկրտիչ Զուլոյանը ամբողջ մի րոպե հազում ու հազի մեջ ծիծաղում էր.

- Նրան չեմ ասի, բայց քեզ կասեմ,- ձայնն իջեցրեց խմբագիրը: - Նախ՝ Սեդային եմ ափսոսամ: Անլուրջ մարդ է մեր Միհրան Գալստյանը, նրանցից, ում պարանին, ինչպես ժողովուրդն է ասում՝ լվացք չեն փռի: Եվ հետո, եթե նա ուրիշի կարծիքով է ամուսնանալու կամ չամուսնանալու, ուրեմն դեռ հասունացած չէ ամուսնության համար: Համաձայն չե՞ս:

* * *

Երևանը հաճելիորեն զարմացրեց Զավեն Շարաֆյանին: Փաստորեն կոմունիզմ էր մայրաքաղաքում, միայն թե մայրաքաղաքից դուրս այդ մասին տեղեկություն չունեին, Խանութներում նույնիսկ ազատ դրված միս կար: Այնքան ազատ, որ մարդիկ միայն օրվա ճաշի համար էին գնում, ասենք՝ կես կիլոգրամ, համոզված,որ վաղն էլ կլինի,.Ազատ ու գրեթե անհերթ վաճառում էին պանիր, կարագ… և նույնիսկ երշիկ, որի առկայությունը քաղկոմի բուֆետապան կինը առատության վկայությունն էր համարում: Նկատելիորեն փոխվել էր նաև մարդկանց արտաքինը: Ոչ միայն արտաքինը, այլև կեցվածքը, շարժուձևը: Մարդիկ քայլում էին ասես անհամեմատ ազատ, հանգիստ ու արժանապատվությամբ: Եվ դեմքերին էլ ժպիտ կար, իհարկե ոչ շատ ուրախ, բայց ժպիտ, որ սովորաբար ծանր հիվանդությունից հրաշքով փրկված, ապաքինվող մարդն է ունենում:

Երբ Զավենն իր այդ մտքերը կիսեց մոր հետ, մայրն ասաց.

- Էն բեղավորը որ շուտ սատկեր, կյանքն ավելի շուտ կլավանար:

Զավենը ձեռքը թափ տվեց: Անհույս բան էր մոր հետ վիճելը: Այդ կինը ահ չուներ, կամ կարծում էր, թե կորցնելու այլևս ոչինչ չունի: Նա հավատացյալ էր, երկրպագում էր աստծուն և երևի ճիշտ էր անում, որովհետև այն դժնդակ տարիներին աստված միայն կարող էր նրան փրկել կործանումից՝ «Բեղավորի» և «Ակնոցավորի» հասցեին ուղղված անլուր անեծքների համար: Այն տարիներին, երբ Առաջնորդի նկարով թերթը գետին նետելու համար ձերբակալում էին մարդկանց: Երբ Առաջնորդի ելույթի ժամանակ ռադիոյի մոտից հեռացողի հարցը լուծվում էր տեղնուտեղը, «Տեսնո՞ւմ եք, նա ընկեր Ստալինի ձայնը չի ուզում լսել»:

Եվ այդ պայմաններում Զավենի մայրը փնթփնթում էր.

Հողս նրա գլխին: Թաղեմ էդ բեղով թուրքի արևը:

Նույնիսկ այդ վերջին հարցում հնարավոր չէր վիճել Զավենի մոր հետ: Նա խորապես համոզված էր, որ հայերին ճնշողը, հայերին հալածողն ու Սիբիր ուղարկողը միայն և միայն թուրք կարող է լիներ: Նա գերմանացիներին էլ թուրք էր համարում, և երբ խոսք էր բացվում, վճռականորեն եզրակացնում էր.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Նույն շներն են:

Իսկ Ստալինի մահվան լուրը մեծ ուշադրությամբ լեսելուց հետո, հարևանների ներկայությամբ խաչակնքեց նախ ռադիոն, հետո իրեն ու ասաց.

- Օխայ, սիրտս հովացավ-- ու մարգարեաբար ավելացրեց: - Հիմա տեսեք, թե ինչքան անհետ կորածներ կգտնվեն…

Նրան կամ խղճում էին, կամ էլ հաշվի չէին առնում, որովհետև հարևաններից ոչ ոք չմատնեց Զավենի մորը: Իսկ Զավենն անընդհատ ահ ու դողի մեջ էր: Եվ հենց հաջորդ օրը, երբ մենակ մնացին, արդեն որերորդ անգամ խիստ վիճեց մոր հետ: - Դու մեզանից ի՞նչ ես ուզում, - ասաց: - Մի խոսիր, էլի, մեր ջան, դու չես վախենում, իսկ ես վախենում եմ, Սիրանը վախենում է: Մենք կոմերիտականներ ենք, չէ՞, մայրիկ…

- Ուրեմն բեղավորի սատկելուց հետո է՞լ եք վախենում, - զարմացավ մայրը:

- Հա, - ասաց Զավենը: - Ամբողջ աշխարհը լաց է լինում իսկ դու «օխայ» ես կանչում, ուրեմն ամբողջ աշխարհը սխալ է մենակ դո՞ւ ես ճիշտ: Հետո՝ ճիշտ ես, թե սխալ, սուս մնա, էլի, այ մեր: Ինչո՞ւ ես ուզում փորձանք բերել գլխներիս: Մեղք էնք չէ: Գիտե՞ս, որ երեկ կուսակցական խիստ նկատողություն են հայտարարել Եպրաքսիային:

Եպրաքսիան Զավենենց հարևանուհին էր և կուսակցության շրջկոմում հրահանգիչ էր աշխատում:

- Եպրաքսիայի՞ն, ինչի՞ համար,- հետաքրքրվեց մայրը:

- Որովհետև Ստալինի մահվան օրը շրթունքները ներկած է աշխատանքի գնացել: Բա ո՞նց պատահեց, հիմա էլ հո Ստալինը չկա:

Մայրը լռեց, լռեց, հետո ասաց…

- Դիակը դեռ կա և դեռ ինչքան ժամանակ է պետք, որ նեխահոտն անցնի…

Եվ Զավենը շատ բարկացած, դուռը շրխկացնելով դուրս եկավ տնից:

Մի քանի տարի առաջ դուռն այդպես շրխկացնելն էժան չէր նստի նրան: Մայրը որքան բարի ու արդարամիտ, այնքան էլ խիստ էր: Ոչ մի կոպիտ սխալ չէր ներում և նույնիսկ երբեմն-երբեմն ծեծում էր երեխաներին: Ծեծում էր ու նստում լաց էր լինում: Լաց էր լինում ու խրատներ տալիս: Իսկ երբ խրատներ էր տալիս ակամա քարոզչի էր նմանվում:

- Էն, ինչ ուրիշներին կարելի է, ձեզ չի կարելի, զավակներս, որովհետև դուք հայր չունեք ու աղքատ եք: Ուրիշներին կներեն, բայց ձեզ չեն ների, որովհետև դուք տեր չունեք և սխալվելու իրավունք չունեք: Դրա համար էլ դուք շատ ավելի լավ պետք է սովորեք, քան թե ձեր տիրավոր ընկերները, շատ ավելի խելոք կարգապահ պետք է լինեք, որովհետև ձեզ առաջ տանող մեկը չունեք և ձեզ առաջ պիտի տանեն ձեր խելքն ու խելոքությունը: Չլինեմ չիմանամ, որ անարդար կռվի մեջ մտնեք: Չլինեմ չիմանամ, որ թամահ անեք ուրիշի ունեցվածքի վրա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Չլինեմ չիմանամ, որ գողություն անեք: Կսպանեմ, աստված վկա, որովհետև մի օր գալու է ձեր հայրը, և ես պատասխան եմ տալու նրան: Մենք իրավունք չունենք գողություն անելու, որովհետև չքավոր ենք և մեր միակ հարստությունը՝ ազնվությունն է: Էդ էլ որ կորցրեցինք, էլ ինչով ապրենք, ինչի՞ համար ապրենք: Դուք ինձ հասկանում եք, չէ, իմ բալիկներ…

Երեխաները ինչ-որ բան հասկանում էին և ինչ-որ բան էլ երևի չէին հասկանում, որովհետև, չնայած մոր խրատներին, Զավենն այնուամենայնիվ մի անգամ գողություն կատարեց:

Դեպքն այսպես պատահեց:

Պատերազմի երկրորդ տարվա ձմեռն էր: Զավենը բակի իր ընկերներ Կոլյայի, Լևոնի և Իգորի հետ փալաս-փուլուսներից կապած գնդակով ֆուտբոլ էր խաղում բակում, ձների մեջ, երբ շենքին մոտեցավ հաց տեղափոխող ձիասայլը: Սայլապանը, որ տարեց մի մարդ էր, հագից հանեց քուրքը, գցեց նստատեղին ու թերթի մեջ փաթաթած ծխախոտը փստացնելով, հացի խանութ մտավ:

- Ա՜խ, մի հատ պապիրոս լիներ, ոնց կքաշեի,- սայլապանի թողած ծխի քուլաներին հետևելով հառաչեց Իգորը, որը չնայած իր տասներեքամյա հասակին, իսկական ծխող էր:

- Բա ե՞ս ոնց կքաշեի,- հառաչեց նաև տասնամյա Լևոնը, որն ամեն ինչով աշխատում էր նմանվել Իգորին:

- Արա, տո դու ի՞նչ ծխող ես,- նրա գլխին բամփեց Կոլյան: - Մի դուլաբ որ տվեցիր, ուշաթափ կընկնես գետնին:

- Ես,- վիրավորվեց Լևոնը,- դե բեր, տես ոնց եմ քաշում:

Կոլյան քմծիծաղ տվեց,

- Գիտես, որ չկա, դրա համար ես մեծ-մեծ խոսում, փսլնքոտ:

Եվ հանկարծ Լևոնն ասաց.

- Շատ լավ էլ կա, բայց ո՞վ ռիսկ կանի բերի:

- Որտե՞ղ է,- «ռիսկ» բառը լսելով, հետաքրքրվեց Զավենը:

- Սայլապանի քուրքի գրպանում: Ես տեսա: Ալյումինից սարքած սպիտակ ծխախոտատուփ է:

Բոլորն ասես հմայված սայլապանի քուրքին նայեցին:

- Զավեն,- ասաց Իգորը,- մեր մեջ ամենափոքրը դու ես: Քեզ չեն տեսնի: Հը՞:

- Եվ որ ճիշտն ասենք, ամենահամարձակը,- ավելացրեց Լևոնը:

- Բեր, - ասաց Կոլյան,- մի-մի հատ կքաշենք ու տուփը նորից կտանենք կդնենք տեղը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավենը ընկերների մեջ ոչ ամենափոքրն էր, ոչ էլ ամենահամարձակը, բայց հաստատ ամենահիմարն էր, որովհետև ինքը չէր ծխում, բայց ընկերների գովեստներից ոգևորված՝ վայրկենապես նետվեց դեպի սայլը, անցավ հանդարտ կանգնած ձիերի կողքով, մի ոտքը սայլի աստիճանին դրեց, մեկնեց ձեռքը, քուրքի գրպանից հանեց ալյումինե ծխախոտատուփն ու ետ՝ դեպի ընկերները վազեց: Իսկ հետո չորսն էլ սլացան շենքի հակառակ կողմը, առաջին մուտքի սանդուղքներով

զույգ-զույգ աստիճան ցատկելով երրորդ հարկ բարձրացան, մագլցեցին երկաթե թեք սանդուղքով և հայտնվեցին շենքի կտուրին, տանիքի տակ:

- Տուր տեսնեմ,- շնչակտուր ասաց Իգորը:

Տուփն իրոք ալյումինից էր և հավանաբար ռազմաճակատից էր եկել հասել Երևան, որովհետև վրան ինչ-որ սուր գործիքով աստղ էր փորագրված և զանազան ծուռումուռ գծեր: Իգորը նախ հոտ քաշեց տուփից, հետո բացեց այն: Եվ բոլորը զարմացած մնացին: Տուփի մեջ ծխախոտ չկար: Փոխարենը հացի քարտեր էին: - Այ քեզ բան,- հիասթափված ու վախեցած շշնջաց Կոլյան,- բա հիմա ի՞նչ անենք:

- Տանենք տանք իրեն,- ասաց Զավենը: -Ու թող Լևոնը տանի, նրա պատճառով չեղավ:

- Չեմ տանի,- ետ քաշվեց Լևոնը,- կծեծի:

- Բա ի՞նչ անենք,-- մոլորված, տագնապահար հարցրեց Զավենը:

- Եկեք թաղենք հողի մեջ,- առաջարկեց Իգորը,- ոչ տեսել ենք, ոչ լսել:

Այդ միտքը բոլորին դուր եկավ: Իգորը հենց կանգնած տեղում ետ տվեց գետնին փռված ավազը, որը գերմանական ֆուգասային ռումբերը հանգցնելու նպատակով կիտել էին տանիքին և որը ցրիվ էր եկել ամբողջ օրը տանիքում վազվզող երեխաների ոտքի տակ, փոս փորեց ու ալյումինե ծխախոտատուփը փոսի մեջ դնելով, կրկին ավազով ծածկեց:

- Ոչ տեսել ենք, ոչ լսել,- Իգորին կրկնեց Լևոնը:

Բայց Կոլյան կասկածներ ուներ:

- Տղերք,- ասաց նա,- եկեք երդում տանք, որ ոչ ոքի ոչ մի բան չենք ասելու: Բռնեն, չբռնեն՝ չենք ասելու: Ծեծեն էլ՝ չենք ասելու: Երդվում ենք: - Ով որ ասի Հ. Մ. Զ. - ասաց Իգորը:

- Ով որ ասի՝ հորից մորից զրկվի: - թարգմանեց, կրկնեց Լևոնը: - Դո՞ւ ինչի չես երդում ուտում, Զավեն:

-Ես ինձ պիտի մատնեմ, հա, -ծիծաղեց Զավենը, թեև լացն էր գալիս:

Հետո նրանք ցած իջան, բայց տները ցրվելու փոխարեն, հետաքրքրասիրությունից մղված, նորից շենքի բակ մտան, որպեսզի տեսնեն, թե ինչ է կատարվում, հաջո՞ղ է ամեն ինչ, թե սայլապանը հայտնաբերել է կորուստը: Իսկ սայլապանը բակում իսկական ցույց էր սարքել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

-Ողջ-ողջ մորթեցին, սպանեցին իմ երեխաներին, ժողովուրդ ջան, - գոռում էր նա բակով մեկ: - Հացի քարտերս են գողացել: Հենց նոր՝ քուրքիս գրպանից: Տասը երեխա ունեմ, ձեր ցավը տանեմ: Ի՞նչ երեսով եմ տուն գնալու, ի՞նչ պատասխան եմ տալու նրանց, ձեր հոգուն մեռնեմ: Բա էս մեծ շենքից մի մարդ չտեսա՞վ, թե ով փախցրեց քարտերս…

Փոքրիկ գողերի խումբը հանցագործությամբ միավորված, սարսափահար կուչ էր եկել շենքի պատի տակ: Եվ հանկարծ պառավ մի կին ձեռքը դեպի այդ խումբը մեկնեց.

- Էս լակոտներն էին ֆոֆռում սայլի չորս կողմը, ես իմ աչքով տեսա…

Հաջորդ վայրկյանին սայլապանը հայտնվեց տղաների առջև…

- Ձեզանից ո՞վ է իմ ծխախոտատուփը վերցրել, հը՞, երեխեք ջան,- հարցրեց նա մեղմ, քնքույշ ձայնով: - Խոստովանեք, հա՞, երեխաներիս արև ձեզ ոչ մի վատ բան չեմ անի: Ո՞վ է վերցրել:

Եվ հանկարծ Իգորը մատը դեպի Զավենը մեկնեց: - Նա վերցրեց, քեռի…

Ընկերոջ մատնությունից քար կտրած Զավենը չզգաց էլ, թե ինչպես սայլապանը ամուր ճանկեց նրա ձեռքը:

- Ես կարծում էի, թե ծխախոտ է, ազնիվ պիոներական…

- Որտե՞ղ ես պահել- գող պիոներիս տեսեք…

- Ես ձեզ ցույց կտամ տեղը,- առաջ ընկավ Իգորը:

-Ես էլ - պատրաստակամություն հայտնեց Լևոնը: - Մենակ թե մամայիս չասեք, էլի…

Կոլյան չկար: Ծլկել էր երևի: Իգորն ու Լևոնը սլացան դեպի առաջին մուտքը, և սայլապանն ու Զավենը դեռ չէին էլ հասցրել երկրորդ հարկ բարձրանալ, երբ վերևից հայտնվեցին նրանք: : Իգորը սայլապանին մեկնեց ծխախոտատուփը ու շողոքորթությամբ ասաց.

- Տեսեք ձեռք տված չի:

- Ձեռք տված չի, -կրկնեց Լևոնը: - Մամայիս արև:

Բայց սայլապանը անհավատ էր: Նա մի ձեռքով շարունակելով ամուր բռնել Զավենի արմունկը, մյուսով բացեց ծխախոտատուփն ու ճարպկորեն մեկ-մեկ հաշվեց հացի քարտերը, որոնք ոչ թե տաս, այլ տասնութ հատ էին: Հետո ծխախոտատուփը ծոցի գրպանը դրեց ու արմունկից բռնած քաշ տվեց տղային:

- Հիմա քեզ միլիցիայի ձեռքը կհանձնեմ, նոր կիմանաս:

- Քեռի ջան,- խնդրեց, լաց եղավ Զավենը: - Բա դու ասացիր- Ախր չեմ իմացել, որ հացի քարտեր են, բաց թող, հա՞…

Բայց սայլապանն անհողդողդ էր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Գողը իրավունք չունի արևի տակ ապրելու: Քո տեղը մութ բանտն է:

Նա իրագործեց իր սպառնալիքը և հացի խանութի առջև հավաքված հետաքրքրասերների ու հերթի աչքի առաջ, երևի հենց հերթը պաշտպանելու նպատակով հայտնված միլիցիայի թաղայինին հանձնեց Ջավենին:

- Գող է,- ասաց: - Այ, էսքան մարդն էլ վկա…

Միլիցիոները մեկ հերթին նայեց, մեկ Ջավենին:

- Ո՞վ է ճանաչում այս տղային: Ո՞ւմ տղան է:

Մի քանի ձայն միանգամից հնչեցին, և Ջավենը նոր միայն հիշեց մոր խրատները:

- Նազիկի տղան է- գետինն էլ չի մտնում- Հրեն ինքն էլ եկավ…

Մայրը տան կողքի զինվորական հոսպիտալում լվացարարուհի էր աշխատում: Նրան տեղեկացրել էին արդեն, ու նա հայտնվեց այնպես, ինչպես թխսկանն է հայտնվում՝ իր ճուտին ուրուրի հարձակումից պաշտպանելու համար:

- Ո՞ւր է, որտե՞ղ է, ի՞նչ է պատահել,- շշնջաց նա գունատված, ինչի՞ եք բռնել իմ տղին:

- Քո տղան գող է,- գոռաց սայլապանը: - Ու մինչև նստեցնել չտամ, սիրտս չի հովանա:

Նազիկը զարմանալիորեն կարծես թե հանգստացավ:

-Ես էլ կարծում էի՝ կռվել է… Գո՞ղ- Անհնարին բան է իմ տղան ընդունակ չէ գողության,-ասաց նա հպարտությամբ բարձրացնելով գլուխը:

-Իրեն հարցրու,- ասաց միլիցիոները:

- Ջավե՞ն,- բարձրաձայն հարցրեց մայրը, բայց դեռ ժպտում էր: - Դու ինչ-որ բա՞ն ես գողացել…

Ջավենը կգերադասեր մեռնել:

- Մամ ջան,- լաց եղավ նա,- կարծեցինք ծխախոտ է…

- Դու ինչ-որ բա՞ն ես գողացել,- այս անգամ շշնջաց մայրը և նրա շշունջը ավելի ահալի էր:

Ջավենը գլխով արեց խորտակված:

- Տեսա՞ք,- հաղթական բացականչեց սայլապանը ու միլիցիոներին դարձավ: - Ո՞ւմ ես սպասում, ընկեր միլիցիոներ…

Միլիցիոները չգիտեր ինչ անել…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դե գնանք քաղմաս,- ասաց նա,- դու էլ արի և էն տղաներին էլ հետդ բեր,- դարձավ նա սայլապանին: - Եկեք, որ արձանագրություն կազմենք, տեսնենք ինչ ենք անում:

- Ի՞նչ պիտի անեք, գող է, պիտի բանտարկեք…

Եվ մայրը հանկարծ պոռթկաց.

- Էն կյանքը, որ մենք ենք ապրում, բանտից էլ վատթար է: Որովհետև բանտում գիտես, իսկ էսպես չգիտես, որ բանտում ես: Հորը տարել եք, ուրեմն հիմա ԷԼ տղիս եք տանում, հա:

- Ափեղ-ցփեղ դուրս մի տա,- գոռաց սայլապանը:

- Իսկ որտե՞ղ է հայրը,- հարցրեց միլիցիոները:

- Կերչում,- ասաց մայրը: - Բայց դե դա ձեզ համար ի՞նչ նշանակություն ունի- Տարեք, տարեք, աչքիս լույսն էլ չէ…Մեկ է, որ տուն տարա, ես եմ սպանելու…

Միլիցիայի աշխատողը տանջվում-տատանվում էր, և նրա համբերության թասը իր ձեռքով սայլապանը լցրեց:

- Կտանենք, բա ի՞նչ… բա որ տասը երեխաներս սոված կոտորվելու էին… Շարժվեցինք, ընկեր միլիցիոներ…

Միլիցիայի աշխատողը երկար, սևեռուն նայեց նրան.

- Դու բաղնիքի մոտ չե՞ս ապրում,- հանկարծ հարցրեց նա սայլապանին:

- Հա, հետո ինչ:

- Քո անունը Հովհաննես չի՞… Բա դու գետինը չե՞ս մտնում,մեծ մարդ ես, բա դու երեխա ունե՞ս- Բա դու որ երեխա ունենայիր՝ սիրտդ չէ՞ր ցավա էս երեխայի համար: Ես որ նայում եմ, լացս գալիս է-.

Սայլապանը կորցրեց իրեն:

- Ախպորս երեխաները իմը չե՞ն, քրոջս երեխաները իմը չեն:

- Չգիտեմ,- ասաց միլիցիայի աշխատողը,- բայց հարյուր տոկոսով համոզված եմ,որ այդ քարտերը քոնը չեն: Հաստատ արժի հետաքրքրվել, թե որտեղից ես թռցնում և ինչ ես անում էդ քարտերով առած հացը: Ու ես կհետաքրքրվեմ, խոսք եմ տալիս…

Նրա այդ վերջին խոսքերը իսկական խուճապի մատնեցին սայլապանին, քիչ մնաց կտրվեր շունչը:

- Ուզում ես բաց թողնել էդ լակոտին, բաց թող, ի՞նչ ես կպել ինձանից,- խռխռաց նա, իր տարիքին անհամապատասխան թեթևությամբ դեպի սայլը վազեց, ձեռքն առավ երասանները, մտրակեց ձիերին ու բղավեց,- գնացեք, ինչ կեղտոտ աշխարհ է տո…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Այդ ամբողջ ժամանակ մայրը կանգնած էր գլխահակ, որդու դողացող ձեռքը բռնած:

-Դե գնացեր տուն, ո՞ւմ եք սպասում,- կամացուկ ասաց միլիցիոները:

Մայրը բարձրացրեց գլուխը:

- Բա գոնե չե՞ք տուգանում,- ասաց նա շրջվելով, ձեռքը ծոցը տանելով ու միլիցիոներին մեկնելով մի կարմիր երեսնանոց:

- Չէ,- ասաց միլիցիոները,- չեմ տուգանում: Որ պատերազմ է, ուրեմն բոլորս էլ տուգանված ենք, էլի: Ու հանկարծ չմտածես, թե թիկունքում մնացած վիզ հաստացնողներից մեկն եմ: Թոքերս հիվանդ են, բանակ չեն տանում, քույրիկ:

Մայրը խաչակնքեց միլիցիոներին:

- Ես հավատացյալ եմ,- ասաց նա ջերմեռանդորեն, -ամեն կիրակի ոտքով Սուրբ խաչ եմ գնում: Մեռնեմ իրա զորությանը: Էս կիրակի մոմ կվառեմ քեզ համար ու կաղաչեմ աստծուն, որ առողջություն տա քեզ, բարի մարդ…

Չնայած աստծո անունը տալուն, մայրը չխնայեց ու չներեց Զավենին: Տուն մտցրեց, ամուր փակեց դռները, որպեսզի ձայնը չլսվի ու ծեծեց դաժան, անգթորեն, ասես միանգամից վրեժ լուծելով թուրքերից, գերմանացիներից, սայլապան Հովհաննեսից, հացի հերթում չարախնդացող հարևաններից, իր անբախտ կյանքից: Ծեծում էր ու լաց էր լինում բարձրաձայն, մորմոքալով…

Հետո Զավենը մի անկյունում ընկած նվվում էր ցավից, ամոթից ու խայտառակությունից, մտածում էր, թե ինչ ձևով ինքնասպան լինի, որպեսզի այլևս երբեք չտեսնի հարևաններին և իր երդմնազանց դավաճան ընկերներ Իգորին ու Լևոնին: Իհարկե, առաջին հերթին Իգորին, որը «հըմըզը» ասաց և տեղնուտեղը, առանց աչքը թարթելու, դավաճանեց թե իր ծնողներին, թե իր ընկերներին: Բա հիմա որ նրա ծնողները մեռնեն՝ ո՞նց կլինի, խիղճը չի՞ տանջի:

Նա խղճում էր իր ընկերոջ ուխտադրժորեն մահվան դատապարտված ծնողներին և հետն էլ իրեն էր խղճում: Նայում էր իր յ վտիտ մարմնին, բարալիկ ոտքերին, ծակ կոշիկների պատճառով ցրտից կապտած, ուռած ճկույթներին, որոնց ցավը որևէ կերպ մեղմելու նպատակով ամեն անգամ ծակում էր ասեղով ու սև արյուն հանում, նայում էր իր սմքած, ներս ընկած կրծքին և լաց էր լինում սրտամորմոք:

Հայրը բանակից նամակ էր գրել, թե երեխաներիս նկարները ուղարկի, Նազիկ, որ կարոտս առնեմ: Մայրը Սիրանին ու Զավենին հագցրեց, սանրեց մազերը և նկարչատուն տարավ, հառաչելով ու մղկտալով ահագին փող տվեց ու երեխաների նկարներն ուղարկեց ռազմաճակատ: Իսկ երկու ամիս հետո պատասխան նամակ ստացան մի ինչ որ համարի դաշտային փոստից: Հայրը գրում էր ծանր ու թեժ մարտերի մասին, հավատացնում, որ միևնույն է, ինչ էլ լինի հաղթելու են անիծյալ թշնամուն, իսկ վերջում զարմանք էր հայտնում, թե ինչու է Նազիկը այդքան վատ նկար ուղարկել: «Մի անգամ էլ նկարի, մի ուրիշ տեսակ, Նազիկ ջան, երեխաները այդքան վատ վիճակի մեջ են, թե նկարում են այդքան նիհարած

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

դուրս եկել: Ոնց որ ուրվականներ լինեն: Մի ուրիշ նկար ուղարկիր, Նազիկ ջան, սա ամաչում եմ ընկերներիս ցույց տալ»:

Բա քո ձեռքը ո՞նց է բարձրանում ինձ վրա, այ մեր, ասես կողքից իրեն նայելով՝ մղկտում էր Զավենը: Բա որ ծեծում ես էդպես, որ էս օրն ես գցում, վաղն ի՞նչ նկար ես ուղարկելու հայրիկին: Կամ որ հիմա գնամ ու ինձ ցած գցեմ պատշգամբից, մենակ Սիրանի՞ նկարն ես ուղարկելու հայրիկին- Բա հայրիկս ի՞նչ կասի- Չի՞ հարցնի, թե էս որտեղ է իմ Զավենը: Դե, ասա, դրան ի՞նչ պատասխան ես տալու, մեր ջան…

* * *

Նա վաղուց էր արթնացել, բայց տեղից չէր ելնում ու փակ աչքերով վայելում էր իր հին ու հարազատ անկողնու ջերմությունը: Նրան թվում էր, թե անցած գրեթե մի տարվա ընթացքում առաջին անգամ է կարգին քնել: Մայրը ներս ու դուրս էր անում, չխկչխկացնում էր խոհանոցում, գալիս կանգնում, նայում էր որդուն ու նորից խոհանոց գնում չխկչխկացնելու: Սենյակի բաց դռնից ներս էր թափանցում տապակած կարտոֆիլի խենթացնող հոտը, միակ բանը, որ կարող էր ստիպել Զավենին լքելու անկողինը: Մայրն ուրիշ տեսակ էր տապակում կարտոֆիլը, շատ համեղ, դա ընկերներն էլ էին նշում: Երբ հյուր էին գալիս, կամ հավաքվում էին պարապելու և մայրը հարցնում էր, թե ինչ սարքի նրանց համար, բոլորը միահամուռ բացականչում էին.

- Կարտոֆիլ չկա՞ - կարտոֆիլ տապակի, էլի, Նազիկ մորաքույր:

Եվ տունը լցվում էր անուշ հոտով:

Հիմա այդ հոտը հրում, ցնցում էր Զավեն Շարաֆյանին, և նա հանձնվելով, ոտքերը ցած իջեցրեց մահճակալից:

- Վե՞ր կացար, տղա ջան,- ափսեն ձեռքին հայտնվեց մայրը:

Զավենը փնթփնթաց.

- Էդ կարտոֆիլի հոտը…

- Գիտեի, որ կարոտած կլինես,- ծիծաղեց մայրը:

- Բա Սիրանն ո՞ւր է:

- Ո՞վ կարող էր Սիրանին պահել. քո նվիրած շորը վերցրեց ու վազեց ընկերուհու մոտ, որ վրան հարմարեցնի:

Զավենը քաղաքի պահեստում մի քանի զգեստների մեջ այդ շորը ընտրեց: Շատ հաճելի կապույտ գույնի, բրդե տաք հագուստ էր՝ սպիտակ օձիքով ու սպիտակ գոտիով: Իհարկե, անմիջապես նկատեց, որ Սիրանի վրա մեծ կլինի, բայց այնքան լավն էր, որ գնեց անմիջապես: Իսկ երեկ երեկոյան Սիրանը հրճվագին աղաղակներով գրկեց եղբորը, շորն առավ ու խոհանոց վազեց հագնելու: Ու վերադարձավ արցունքակալած աչքերով.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Բա դու աչք չունե՞ս, այ ախպեր, ինչի ես այսքան մեծն առել:

-Աչք էլ ունեմ, հեռատեսություն էլ- անմիջապես ելքը գտավ Զավենը: - Դե որ ամուսնանում ես- Մի խոսքով, գիտեմ, որ ամուսնանալուց հետո, որոշ ժամանակ անց, նախկին աղջիկները որպես կանոն չաղանում են…

- Այլանդակ,- ճչաց Սիրանը,- բա ես այդքան համբերությո՞ւն ունեմ:

Այ քեզ Սիրան: Ուրեմն առավոտ շուտ արդեն դերձակի մոտ է սլացել:

Գերագույն երանությամբ ուտելով մոր տապակած կարտոֆիլը, Զավենը իր հիմնական թեմային անցավ.

-Մայրիկ ջան,- ասաց նա,- ինչպես տեսնում եմ՝ Սիրանին անգիտակցաբար լրջորեն տանում են… Էլ ի՞նչ միտք ունի Երևանում քո մնալը: - Արի ինձ մոտ, առողջարանային քաղաք է, մաքուր, անտառը ծով, ջուրը՝ համով…

- Սիրանին ո՞ւր են տանում,- ձեռքերի արմունկներով սեղանին կոթնած, բավականությամբ դիտելով, թե ինչ ախորժակով է ուտում որդին, հարցրեց մայրը:

- Ոնց թե ուր- բա չե՞ն տանելու, պրծնենք…

Մայրը տխուր ժպտաց.

- Գևորգն էլ մեզ նման խեղճ ու անտեր մեկն է, թեև ավարտել ու աշխատում է, բայց էլի Համալսարանի հանրակացարանում է ապրում, տղա ջան: Այնպես որ մի կողմից էլ լավ է, որ քեզ շրջան ուղարկեցին: Կապրեն մեր տանը, մինչև տեսնենք խոստացել են վեց ամսից բնակարան տալ:

- Վեց ամսից ոչ մի օր ավելի,- գոռաց Զավենը: - Ես Սիրանի պատճառով ամբողջ կյանքս աքսորում չեմ անցկացնելու:

- Տեղդ դժվար է, հա՞,- անմիջապես անհանգստացավ Նազիկը:

Զավենը թափ տվեց ձեռքը:

- Չէ, հա- ի՞նչ դժվար… Երևի շուտով ինձ էլ բնակարան տան. Տան թե չէ գալու եմ ու քեզ գրկած գոռով տանեմ…

Մայրը օրորեց գլուխը:

- Ես այս տնից միայն մի ճանապարհ ունեմ…

- Երկու,- կատակով անմիջապես խոսքը շեղեց Զավենը,- Զամբյուղներդ վերցնում ես ու գնում ենք շուկա: Սիրանին հո չոլից չենք գտել: Գնանք մի քիչ բան-ման առնենք, այս նշանավոր օրը մի լավ տոլմա եփի ուտենք, մեր ջան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նրանք թուրքական մզկիթի կողքով, կավաշեն տների արանքով շուկա հասան: Զավենը հպարտությամբ և մինչ այդ չզգացած խանդաղատանքով մոր թևը բռնած անցնում էր շարքից շարք ու մորն ասում.

- Ինչ ուզում ես, վերցրու, մեր ջան:

- Վայ, այ տղա, թանկ ու կրակ են,- ետ-ետ էր քաշվում Նազիկը:

- Սիրանը թող ուրախանա:

Նրանք կարտոֆիլ, կաղամբ, գազար ու բազուկ գնեցին, մի մեծ կտոր իսկական տոլմացու միս և մի հսկայական թոք ու սիրտ:

- Տժվժիկ էլ սարքի, մամ ջան, թող հոտը աշխարհը բռնի: Հարյուր տարի է չեմ կերել:

Երբ վերադառնում էին ծանրաբեռ ու երջանիկ, և «Գժանոց անունով հայտնի հոգեբուժական հիվանդանոցի սև շենքի մոտ կանգ առան հանգստանալու, Զավենը հանկարծ ինչ-որ բան հիշեց:

-Մեր ջան, շուկայում շատ նայեցի այս ու այն կողմ՝ Մանուշակին չտեսա:

Մանուշակը նրանց հարևանուհին էր: Պատերազմի ժամանակ մանր-մունր հինգ երեխաներին պահելու համար չոր լոբի էր առնում, խաշում էր, աղ էր գցում մեջը ու գդալով վաճառում շուկայում: Իսկ լոբու ջուրն էլ իր երեխաներին էր տալիս և մեկ-մեկ էլ Նազիկին: Եվ ինքն իրեն խաբում էր, այնպես էր անում, թե իբր ինքը չի նկատել, որ մի քանի հատ լոբի էլ ջրի հետ է տվել: Մայրը օրհնում էր Մանուշակին, տաքացնում էր լոբու ջուրը, սոխ էր կտրատում մեջը ու դնում սեղանին: Ու թվում էր, թե աշխարհում այլևս սոված մարդ չկա և աշխարհի ամենահամով կերակուրը լոբաջուրն է:

- Չէ, հիմա լավ են,- հիշողությունների հետ ժպտաց մայրը, ու նրա ձայնը դողաց: Ամուսինը եկավ թե չէ՝ շուկայից հանեց Մանուշակին: - Նա լռեց ու հանկարծ բարկացավ: - Ես ինչ եմ պատմում, կարծես թե դու չգիտես: Կարծես թե տասը տարի է, ինչ հեռացել ես տնից…

- Տասը տարուց շատ կլինի,- հառաչեց Զավենը ու նորից հառաչեց: - Մի բան էլ հիշեցի, մամ…

- Ի՞նչ,- հարցրեց մայրը:

- Ինչի՞ այն օրը ինձ չծեծեցիր, մամ…

Պատերազմի վերջին էր: Մեծացել էին Սիրանն ու Զավենը և օրապահիկ չորս հարյուր գրամ հացը այլևս բոլորովին չէր կշտացնում նրանց: Նազիկը ստիպված մեկ-մեկ շուկայից էր հաց առնում: Այսինքն՝ ինչ մեկ-մեկ, միայն աշխատավարձի օրը: Որովհետև հեշտ չէր առնել այն մի բուխանկա սև հացը, որ շուկայում յոթանասուն-ութսուն ռուբլի արժեր: Եվ երբ յոթանասուն-ութսուն ռուբլին նրա աշխատավարձի գրեթե մեկ քառորդն էր կազմ ում:

Մայրը հոսպիտալ պիտի գնար վիրավորների շորերը լվանալու, բոլորովին ժամանակ չուներ, բայց քանի դեռ փող կար ձեռքին, շատ էր ուզում երեխաների համար մի բուխանկա հաց գնել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ի՞նչ անեմ,- մորմոքած նա առավոտյան:

- Ես կառնեմ,- անմիջապես մեջ ընկավ Սիրանը:

- Պահ, դո՞ւ,- արհամարհանքով ասաց Զավենը,- աղջիկ չես, գլխիդ կտան, կփախցնեն:

Այդ տարիներին շուկան լի էր զանազան քաղցած ու անտեր տղաներով, որոնք անդադար, ուշադիր հետևում էին առևտրին, ընտրում իրենց ապագա անուժ և միամիտ զոհերին և հետապնդում նրանց՝ պատրաստ ամեն վայրկյան թռցնելու անուշադրությամբ վաճառասեղանին դրված զամբյուղը կամ ծեր կնոջ թույլ բռնած տոպրակը: Եվ շուկայի տարածքում մեկ այստեղ, մեկ այնտեղ հանկարծ հնչում էր կողոպտվածների սրտաճմլիկ, հուսահատ աղաղակը:

- Տարա~ն, ձեզ մատաղ, հասե՞ք, տարան…

Ահա թե ինչու բավականին երկար քննարկվեց, թե ով է հացն առնելու: Մայրը առավելությունը տվեց Զավենին, բայց հետն էլ մանրամասն հրահանգներ կարդաց.

- Զգույշ կմնաս, տղա ջան, հացը անմիջապես տոպրակի մեջ կդնես, պինդ կսեղմես կրծքիդ ու վազելով տուն կգաս: Ոչ մի տեղ կանգ չառնես, լսո՞ւմ ես: Ծանոթի էլ հանդիպես, ցույց տուր թե չես տեսել ու վազի:

Զավենը ամեն ինչ արեց այնպես, ինչպես մայրն էր պատվիրել: Նա հացը տոպրակի մեջ դրեց, երկու ձեռքով կրծքին սեղմեց ու բերանին այդքան մոտ գտնվող հացի անուշ բուրմունքից խելագարված, վազեց Կրիվոյի նեղլիկ փողոցով, հողաշեն տների կողքով: Նա նույնիսկ իր տան փայտե դարպասի առաջ ծալապատիկ նստած կույր թուրք կնոջ մոտ կանգ չառավ, որպեսզի սովորականի պես հետևի, թե նրա մուրացիկի ալյումինե թասի միջից ինչպես են փոքրիկ տղաները փորձում անշշուկ թռցնել անցորդների նետած պղնձե կոպեկները և ձայնի, իմաց տա պառավին: Այսօր նա դրա ժամանակը չուներ ու երկու ձեռքով հացը կրծքին սեղմած, վազեց անցավ թուրք կույր պառավի կողքով, դուրս եկավ Գնունի փողոց ու վազեց, վազեց այնքան, մինչև հասավ մզկիթի մոտ: Եվ այստեղ միայն իրեն թույլ տվեց կանգ առնել ու շունչ քաշել մի պահ, որովհետև տունը բոլորովին մոտիկ էր, հինգ քայլի վրա: Կանգ առավ, շունչ քաշեց ու շնչի հետ հացի անուշ բույրը- Եվ այլևս չդիմացավ գայթակղությանը, տոպրակը հեռացրեց կրծքից, բացեց, ձեռքը մեկնեց, որպեսզի մի պատառ պոկի կողքից, որովհետև այլևս անհնար էր դիմանալը: Բայց հացի սև պատառը դեռ բերանը չէր տարել, երբ ինչ-որ ձեռք, բոլորովին անսպասելի, խլեց, պոկեց, տարավ տոպրակը… "՛

Տղան ճչաց, աղաղակեց խենթացած ու վազեց գողի ետևից: Բայց գողը, որ շուկայից էր հետևել նրան և որսացել հարմար պահը, ինչ խոսք, որ փախչելու անհամեմատ մեծ փորձ ուներ և ծլկեց, անհետացավ հողաշեն տների արանքում:

Իսկ Զավենը լալով և ակամա կատաղությամբ ծամելով փոքրիկ պատառը գնաց տուն:

Նա համոզված էր, որ մայրը կծեծի և այս անգամ լիովին արդարացի էր համարում նրան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բայց որքան էլ տարօրինակ թվաց նրան, մայրը չծեծեց, Ոչ միայն չծեծեց, այլև զարմանալիորեն ծիծաղեց հանկարծ: Եվ Զավենը հետո, շատ հետո հասկացավ, որ այդ ծիծաղը լացի փոխարեն է եղել և ավելի դառն ու սարսափելի է եղել, քան լացը: Մայրը ծիծաղեց, բարձրացրեց ձեռքը և տեսնելով, որ Զավենը կծկվեց անմիջապես, քնքշորեն շոյեց նրա գլուխը:

- Ե՞րբ պիտի մեծանաս, տղա ջան…

Ու միայն իրեն հատուկ տարօրինակ մի փիլիսոփայությամբ ավելացրեց.

- Ուրեմն աստված չի կամենում, որ դու ժամանակից շուտ մեծանաս ու փոխարինես հորդ: Եթե դեռ խեղճ ես ու էս կեղտի մեջ միամիտ ես մնում, ուրեմն աստծո կամքով հայրդ կա ու կգա…

* * *

Մինչև երեկո, այսինքն մինչև փեսացու Գևորգի այցը, դեռ շատ ժամանակ կար: Զավենը կարոտած մի լավ թափառեց քաղաքում և առաջին իսկ հեռախոսի խցիկից զանգահարեց Էմմային: Նա այնքան վստահ էր, թե Էմման է վերցնելու լսափողը, որ զարմացավ, երբ տղամարդու ձայն լսեց,

- Էմմային եմ խնդրում, ասաց նա:

- Էմման տանը չէ,- պատասխանեց տղամարդը:

Տեսնես ով կլինի, մտածեց Զավենը, Էմման ասաց, որ մենակ է ապրում:

- Իսկ երբ կգա, չե՞ք ասի:

- Երևի մի շաբաթից: Նա հյուրախաղերի է մեկնել Լենինական:

Ամեն ինչ պարզ էր, և Զավեն Շարաֆյանը ակամայից հեռու տարավ լսափողը՝ լծակից կախելուց համար,

- Ալո, - լսեց նա հեռվից ու կրկին ականջին դրեց լսափողը -եթե հանկարծ շուտ գա, ի՞նչ ասեմ: Որևէ բան ունե՞ք հայտնելու: Ես կփոխանցեմ:

- Ոչ, ոչ: Եթե կարելի է, ասեք միայն, որ Զավենն էր զանահարում:

- Զավե՞նը.- Ախ հա դուք եք: Էմման ինձ պատմել է ձեր մասին: Շատ ուրախ եմ: Իմացա, որ միասին լավ օրեր եք անցկացրել ձեր գյուղաքաղաքում: Իսկ հիմա Երևանո՞ւմ եք: Եթե ժամանակ ունեք, եկեք այստեղ, հա՞, հասցեն գիտե՞ք, կնստենք, կզրուցենք, մոտիկից կճանաչենք իրար- կզբաղվենք մի քիչ…

- Իսկ ո՞վ է խոսում,- այլևս չհամբերեց Զավենը, կռահելով, որ զրուցակիցը հարբած է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Էմմայի ամուսինն է: Նա ձեզ չի՞ պատմել իմ մասին:

- Պատմել է,- ասաց Զավենը չորացած կոկորդով:

- Պատկերացնում եմ, թե ինչ պատմած կլինի,- բարձրաձայն ծիծաղեց տղամարդը: - Հիմա ի՞նչ եք ասում, չե՞ք գալիս:

- ՉԷ,- ասաց Զավենը,- կներեք, բայց հիմա բոլորովին ժամանակ չունեմ:

- Ափսոս,- արտիստիկ հառաչեց մարդն ու ցած դրեց լսափողը:

Տրամադրությունը միանգամից ընկավ: Ուրեմն՝ Էմման ամուսնացած է: Իսկ այնպես էր խոսում, ասես ընկերություն են անում միայն և դեռ ոչինչ պարզ չէ: Զարմանալի աղջիկ է, գրել էր, թե երջանիկ էի քեզ հետ: Այդ ինչպե՞ս են ամուսնացած լինում մեկի հետ, իսկ երջանիկ՝ մյուսի հետ: Այսինքն, ինչո՞ւ է զարմանում, նման փաստեր քի՞չ գիտի, ինչ է: Ուրեմն՝ սովորական մի դեպք է: Իսկ եթե այդպես է, ինքը շատ ավելի համարձակ կարող էր լինել Էմմայի հետ: Գուցե աղջիկը հենց այդ էլ ակնկալում էր, և հիմա ծիծաղում է Զավենի վրա: Ի՞նչ իմանաս:

Նա այնքան էր դառնացած, որ երբ մի տղա ժամը հարցրեց, ասաց, թե ժամացույց չունի: Եվ երկու անգամ վեր ու վար արեց Աբովյանով, որպեսզի հանգստանա ու նոր միայն գտնի Կիրովի փողոցի N 21 տունը, որտեղ Ալվարդի որդի Միքայելն էր սենյակ վարձել երեք այլ ուսանողների հետ: Կիրովի փողոցին ու Բժշկական ինստիտուտին նայող եռահարկ սև շենքի բակը ասես Կոնդի թաղամասը լիներ, որտեղ ցածրիկ, միահարկ հողաշեն տները կիտված էին իրար վրա և միմյանց էին միացած ծուռտիկ-մուռտիկ, ցեխոտ ու աղբարկղներով լի արահետներով: Զավենից երկար ժամանակ պահանջվեց, մինչև ընկավ այն ծակուռը, որտեղ Միքայելն էր ապրում: Ուղղակի իրար կպած չորս ծալովի մահճակալ կար սենյակում և մի սեղան: Կոտրված ու թերթի շերտով սոսնձված միակ լուսամուտից գրեթե լույս չէր թափանցում: Ծալովի մահճակալներից մեկին քնած գյումրեցի մի պատանի, աչքերը տրորելով բացատրեց, որ Միքայելը հանրային գրադարանի ընթերցասրահում է: Եվ քիչ անց Զավենը արդեն զրուցում էր տղայի հետ՝ Ղուկասյանի այգու նստարանին: Բավականին ջահել ու ամաչկոտ տղա էր Միքայելը: Նա նման չէր Ալվարդին, ավելի շատ հորն էր հիշեցնում, որի մեծադիր նկարը փակցված էր նրանց տան պատին: Խոսելիս գլուխը չէր բարձրացնում ու նայում էր մի կողմ: Զավենը նրան մեկնեց Ալվարդի տված դրամը: Միքայելը մի քանի րոպե սրտանց հրաժարվում էր.

- Թոշակ եմ ստանում, իմ ինչի՞ն է պետք:

Բայց Զավենը հո գիտեր, թե ինչքան փող է պետք ուսանողին և թերթի մեջ փաթաթած դրամը ստիպողաբար տղայի գրպանը դրեց:

- Որ գնամ, մայրիկիդ ի՞նչ ասեմ, ինչպե՞ս ես,- հարցրեց Զավենը:

- Լավ եմ,- մի կողմ նայեց տղան: - Հետո ավելացրեց շտապով: - Ասեք, որ փող չուղարկի: Իրեն ավելի է պետք, ասեք, որ գերազանցիկի թոշակ եմ ստանում: Փողն ի՞նչ եմ անում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավենը ոտքի կանգնեց, բայց քանի որ տղան շարունակում էր անշարժ մնալ նստարանին, նայեց նրան:

- Մայրիկս ո՞նց է,- կամացուկ հարցրեց Միքայելը:

- Լավ է,- ասաց Զավենը:

Միքայելը առաջին անգամ բարձրացրեց գլուխը, և Զավենը նկատեց, թե որքան տխուր են նրա աչքերը:

- Է , ասում եք, էլի,- հառաչեց տղան:

Զավենը ետ դարձավ, նորից նստեց տղայի կողքին, ձեռքը ուսին դրեց ու պատմեց նրա բացակայության ժամանակ կատարված դեպքերի մասին: Պատմեց ամեն ինչ, որ տղայի հոգին մի քիչ թեթևանա: Այդ ամբողջ պատմության մեջ միայն իր մասնակցությունը թաքցնելով, նա Միքայելին ասաց, որ նորից բացել են քրեական գործը, խիստ քննություն է գնում, և շատ շուտով Աշոտ Բարսեղյանին սպանողները կկանգնեն դատարանի առաջ: Նա պատմում էր ու նայում տղային, անընդհատ սպասելով, որ մոր նման նա էլ կոգևորվի, կալեկոծվի, կուրախանա և վրիժառությամբ կփայլատակեն աչքերը: Բայց Միքայել Բարսեղյանը լռում էր: Դեմքը անշարժ էր ու մռայլ և միայն սեղմված բռունցքներն էին մատնում հոգու խռովքը: Հետո նա թուլացրեց բռունցքները, բարձրացրեց գլուխը, Զավենին նայեց անսահման թախծով ու մրմնջաց.

- Իսկ իմ հայրը ետ կգա՞…

Զավեն Շարաֆյանը վաղուց էր իջել Տերյանով, Կիրովի փողոց թեքվել, դիրեկտորի անունով Համոյի կոչվող մթերային խանութի մոտով մտել Աբովյան, բայց չէր կարողանում մոռանալ տղայի տխուր աչքերը և ականջի մեջ հնչում հա հնչում էր նրա հուսահատական շշուկ-ճիչը.

- Իսկ իմ հայրը ետ կգա՞ :

Աբովյանով իջնելիս հին սովորությամբ, գրեթե բնազդով, միայն մի վայրկյան Մեսրոպի կրպակին նայեց: Եվ նրան թվաց, թե աշխարհում ոչինչ չի փոխվել: Էլի գարեջուր և իբր մսով կարկանդակ էր վաճառում Մեսրոպը և նրա կրպակի մոտ ուսանողներ էին խռնված: Ոչ մի դեկան, ոչ մի դասախոս չէր ճանաչում իր ուսանողներին այնպես, ինչպես Մեսրոպ քեռին էր ճանաչում գարեջուր խմող իր ուսանող-հաճախորդներին: Գիտեր, թե որտեղացի են, ով ունեն, ով չունեն, ինչ մասնագիտություն են ձեռք բերում, մեկ-մեկ անուններն ու ազգանունները գիտեր: Եվ հաճախ նկատելով, որ կրպակի մոտ կանգնած որևէ ուսանող անհույս քրքրում է գրպանները՝ հայացքը չկտրելով գարեջրի փրփրապատ կեսլիտրանոց բաժակից, Մեսրոպ քեռին ձայն էր տալիս անմիջապես.

- Տիգրան: Մելքոնյա՞ն: Այ տղա, մենք նո՞ր ենք իրար ճանաչում: Կեր-խմի, թոշակ որ ստանաս, կբերես կտաս, տղա ջան: Չբերես էլ ջանդ սաղ լինի,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ չէր լինում մի դեպք, որ տղաները չվերադարձնեին իրենց պարտքը: Երևի ոչ միայն ազնվությունից դրդված: Ախր նրանք լավ գիտեին, որ փառահեղ հիշողություն ունի Մեսրոպ քեռին: Չի հիշեցնի, իհարկե, բայց հո հիշում է:

Ջավենը կտրեց անցավ Աբովյանը լայնքով ու մոտեցավ կրպակին: Մի քանի հոգի կային կանգնած, ու նա համեստորեն տեղ գրավեց վերջում: Եվ անմիջապես լսեց Մեսրոպ քեռու ձայնը:

- Ջավե՞ն: Ինչ ես հեռու կանգնել, մոտ արի: Դու իրավունք ունես առանց հերթի, որովհետև նախ՝ արդեն ավարտել ես, և հետո արդեն մի տարի կլինի, որ չեմ տեսել քեզ:

- Չէ, չէ,- իրեն ուղղված հայացքներից շփոթված, կմկմաց Ջավենը.- ես չեմ շտապում, Մեսրոպ քեռի:

- Իսկ ես շտապում եմ,- ափսեի մեջ երկու կարկանդակ և գարեջրով լի թասը նրան մեկնեց Մեսրոպ քեռին: - Ո՞նց ես, Շարաֆյան…

- Լավ եմ,- մի կողմ քաշվեց Ջավենը:

- Կուրորտում ես, էլի: Դեռ խմբագիր չե՞ն նշանակել,- հարցրեց նա շարունակելով ճարպկորեն սպասարկել ուսանողներին:

- Չէ, - ասաց Ջավենը:

- Ձեր տղերքն ինձ չեն մոռանում, հավաքվում են մեկ-մեկ,- իր տեղյակությունը բացատրեց Մեսրոպ քեռին: - Գիտե՞ս, որ Համբոն «Սովետական Հայաստանում» է: Էդ ո՞նց եղավ, այ տղա, նա ձեր կուրսի ամենաբութն էր, չէ՞:

- Երևի հենց դրա համար,- ակամա ծիծաղեց Ջավենը:

- Չէ: Ջավեն, չէ, նրա առավելությունը մենակ դա չէր: Թերթի խմբագիրն ու նրա հայրը ընկերներ են:

Այդ մարդը ամեն ինչ գիտեր, ամեն ինչ:

Ջավեն Շարաֆյանը հետագա հարցաքննությունից խուսափելու համար, արագորեն կերավ կարկանդակները, խմեց գարեջուրը ու վճարեց՝ պատրաստվելով հեռանալ:

- Մի թաս էլ չե՞ս խմի, Ջավեն:

Ջավենը հրաժարվեց:

- Ասենք դու մի թասից ավել ե՞րբ ես խմել,- ժպտաց Մեսրոպ քեռին,- շաբաթ օրը, թե էստեղ լինես, երևա, ձեր տղերքը միշտ ժամը երկուսին հավաքվում են:

Ծնկները ցավում էին, կարող էր քիչ վեր բարձրանալ ու Շրջանայինից տրամվայով գնալ տուն, բայց մտածեց, թե ով գիտե, մեկ էլ երբ է Երևանում լինելու և ոտքով ճանապարհ ընկավ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գետառի ափով գնաց-գնաց, հետո քայլեց Ալավերդյան դարձած նախկին Լենինի փողոցով, լուսամուտներին նայելով ու փնտրելով իրենց դասարանի պատուհանը, անցավ Գորկու անվան դպրոցի մոտով, որտեղ սովորում էր մինչև որ դպրոցը զինվորական հոսպիտալի վերածեցին ու ակամա կանգ առավ գյուտարար Արամի տան մոտ:

Նա քաղաքի նշանավոր խենթերից մեկն էր: Ըստ որում խենթ էին համարում միայն այն պատճառով, որ այնպես չէր մտածում, ինչպես սովորական մարդիկ: Եվ այնպես չէր ապրում, ինչպես սովորական մարդիկ: Նա երբեք հյուր չէր ընդունում և հետաքրքրասերների հարցերին պատասխանում էր մռայլ դեմքով և գրեթե միավանկ բառերով՝ կանգնած տան կողքով հոսող հորդառատ առվի եզրին:

- Չէ: Չկա: Աշխատում եմ: Տեսնենք: Ցույց կտամ, երբ ժամանակը գա…

Նրա տունը խորհրդավորության քողով էր ծածկված: Բարձր պարիսպը թույլ չէր տալիս տեսնելու նույնիսկ բակը, և մարդկային երևակայությունը ինչ մութ պատմություններ ասես չէր հորինում այդ տան վերաբերյալ: Ասում էին, թե ցերեկները սովորաբար ամայի, լուռ ու անմարդաբնակ այդ տունը գիշերները կերպարանափոխվում ու շնչավորվում է: Խոսակցության բարձր ձայներ, ճիչեր ու աղաղակներ են լսվում, կահկարասին աղմուկով տեղից տեղ է փոխադրվում և ինչպես «Կախարդական վարպետը» հեքիաթում լեզու են առնում ու խոսում գյուտարար Արամի գործիքները:

Բայց դրանք ենթադրություններ և ասեկոսեներ էին միայն: Որևէ փաստ չկար: Արամի կախարդանքի միակ տեսանելի փաստը փայտե հսկայական թիապատ անիվն էր, որ տեղադրված էր պարսպից դուրս և թիերով խրվում էր հորդահոս առվակի մեջ: Ցերեկներն այդ անիվը չէր գործում: Իսկ գիշերները պտտվում էր: Զավեննն ինքը մի քանի անգամ առիթ էր ունեցել համոզվելու դրանում, երբ թաղի յոթ-ութ տարեկան տղաներով, վճռելով ինչ կերպ էլ լինի թափանցել գյուտարար Արամի տան գաղտնիքների մեջ, անքուն էին մնացել ու առվի մոտ կուչ եկած հետևել խորհրդավոր տանը: Նրանք տեսել էին, թե ինչպես է աղմուկով ու ճռնչալով պտտվում հսկայական անիվը և զգացել, թե ինչպես նրա պտույտներին համապատասխան ուրիշ ինչ-որ առնիներ ու անիվներ են պտտվում բակում ու թափանցում տան մեջ: Բայց թե տանն ինչ էր կատարվում, ինչպես կարող էին իմանալ, երբ գյուտարար Արամը նույնիսկ տարեց, փողկապներով, ցիլինդրներ դրած մարդկանց տուն չէր թողնում և նրանց հարցերին ի պատասխան ասում էր.

- Երբ որ ժամանակը գա ցույց կտամ:

Բայց նրա ժամանակը այդպես էլ չեկավ: Արամն իր գյուտը պատրաստ համարեց և որոշեց ցույց տալ մարդկանց դժբախտաբար այն ժամանակ, երբ նրա հայտնագործությունը այլևս ոչ ոքի պետք չէր և միայն տխուր ժպիտ էր հարուցում: Պարզվեց, որ նա շարժական ճաշարան է ստեղծել իր տանը: Առվակի վրայի մեծ թափանիվը պտտվելով գործի էր գցում հազար ու մի տեսակ այլ անիվներ ու առնիներ, որոնք մի աննկյունում մաքուր լվանում ու չորացնում էին շարժական սեղանի վրայով դողդողալով հոսող ափսեները ու տանում խոհանոց: Խոհանոցում ինչ-որ կաթսաներից հավասարապես ուտելիքներ էին լցվում ափսեների մեջ և ափսեներն այս անգամ ճանապարհ էին ընկնում դեպի ճաշասենյակ, պտտվում էին հսկայական սեղանի վրա և անշարժանում մարդկանց դիմաց: Իսկ երբ նրանք ավարտում էին

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ճաշը, դատարկ ափսեները կրկին լվացքասենյակ էին վերադառնում՝ մաքրվելու ու չորանալու: Եվ այդ ամբողջ սարքի վրա միայն մի մարդ էր աշխատում գյուտարար Արամը, որին այսօր անկասկած հայկական ինքնաշեն սարքերի ռահվիրան կարելի էր համարել և նրա հայտնագործությունն ու լուսանկարը հպարտությամբ ցուցադրել հայ ժողովրդի պատմության թանգարանում, եթե ժամանակները չփոխվեին:

Այնինչ փոխվել էին ժամանակները և այն էլ ինչպես էին փոխվել: Սկսվել էր Հայրենական մեծ պատերազմը: Ուտելու ոչինչ չկար: Նույնիսկ այնքան չկար, որ ամբողջ կարողությամբ գործարկվեր Արամի ինքնաշարժ ճաշարանը: Արամը մի քանի գազար ու բազուկ էր կտրատել մանրիկ-մանրիկ, որոնք ափսեների մեջ էին գլորվում հատիկ-հատիկ ու գնում պտտվում հսկայական սեղանի շուրջը:

Այցելուները նայում էին թաքուն քմծիծաղով, հեգնախառն լրջությամբ հարցնում, իսկ եթե ափսեները լիքը լինեն կպտտվե՞ն դարձյալ, թե՞ գյուտը հենց այսպիսի նեղ օրերի համար էլ նախատեսված է: Իսկ գյուտարար Արամը, որը եթե նույնիսկ ունեցել, ապա իր մեծ ցավի մեջ կորցրել էր հումորը, ասում էր խեղճացած, բայց լավատեսորեն, համոզված, երկար նախադասություններով:

- Ռուս զինվորի դեմ գերմանացին ի՞նչ է: Երկու-երեք ամիս էլ չի անցնի, պատերազմը կվերջանա, իհարկե, խանութները կլցվեն նորից, և դուք կտեսնեք, թե ինչեր է անում իմ ճաշարանը:

Բայց պատերազմը քանի գնում՝ ծանրանում ու երկարում էր այնքան ե ծայրը բոլորովին չէր երևում: Թափանիվը պտտվեց մի քանի անգամ, և քանի որ հնարավորություն չկար սեղաններին նույնիսկ գազար ու բազուկ մատուցել, կանգ առավ վերջնականապես: Կանգ առավ ու չորացավ, ճաքճքվեց, ծռմռվեց արևի, անձրևի ու ձյան տակ: Իսկ գյուտարար Արամը նույն մռայլ ու սակավախոսը դարձավ և անհետացավ իր խորհրդավոր տան պատերի ետևում:

Ասում էին, թե հիմա էլ չորս պատերի մեջ փակված, պատերազմի դեմ զայրացած, նա նոր գյուտ է հորինում, այնպիսի մի զենք, որի նմանը աշխարհը չի տեսել: Որը մի րոպեում կարող է հողին հավասարեցնել Բեռլինը: Իսկ որ Բեռլինը ընկավ, էլ ի՞նչ Ֆաշիզմ, էլ ի՞նչ կռիվ: Պատերազմը կվերջանա, խանութները նորից հազար տեսակ ապրանքներով կլցվեն և Հայաստանի բոլոր ճաշարաններում գյուտարար Արամի ստեղծած եղանակով, իրենք-իրենց կշարվեն առատորեն ծանրաբեռնված ափսեները:

Այդպես էին ասում և հավատում էին: Երբ որոշ ժամանակ անց լուր տարածվեց, թե ռազմաճակատներում նոր տեսակի հզոր հրանոթներ են հայտնվել՝ Կատյուշա անունով, երևանցիներից շատերը համոզված էին, թե դա գյուտարար Արամի ձեռքի գործը կլինի: Հարյուր տոկոսով: Եվ այդ միտքն ամրապնդում էին նրանով, թե նա մի աղջիկ է ունեցել Կատյա անունով: Եվ ապա նրանով, որ Արամը բոլորովին չի երևում: Եթե չի երևում, ուրեմն Մոսկվա է գնացել և այնտեղ գաղտնի աշխատանք է տանում, որպեսզի զենքի նոր ահավոր տեսակներ ստեղծի ու սպանի պատերազմը, որը նրա մեծ մտահղացումը սպանեց:

Այդպես էր, թե չէ, ո՞վ կիմանար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բայց փաստն այն էր, որ գյուտարար Արամն անհետացավ տեսադաշտից՝ իր մասին իբրև հուշ թողնելով փայտե հսկա թափանիվը, որը դեռ երկար ժամանակ, երբ բարձրանում էր երևանյան իրիկնային քամին, օրորվում ու ճռնչում էր անտեր ու որբացած:

Զավեն Շարաֆյանը հայացքը հեռացրեց գյուտարար Արամի ավերված թափանիվից ու շարունակեց ճանապարհը դեպի տուն: Նա նայեց ժամացույցին, դեռևս ժամը չորսն էր: Դժվար թե հյուրերը եկած լինեին:

Բայց նա այս անգամ սխալվում էր: Երբ սենյակ մտավ, սեղանին արդեն գոլորշի էր արձակում տոլման: Սիրանի խեթ հայացքի տակ, բարձրահասակ, հաղթանդամ մի տղա, բարձրանալով աթոռից, Զավենին մեկնեց լայն ափն ու որոտաց.

- Գևորգ:

Այնպես ասաց, կարծես թե միակ մարդն էր աշխարհում, որ այդ անունն ուներ,

* * *

Նա, իհարկե, մազաչափ իսկ մեղավոր չէր, որ երկու օր ուշ հասավ աշխատանքի: Ավտոբուսը տեղ չհասավ: Անակնկալ թափված առատ ձյունը և մոլեգին բուքը ամբողջովին փակել էին լեռնանցքը: Ավտոմեքենաները մնացին ճամփեզրի հեղեղատների մեջ թեք խրված: Ուղևորների մի մասը ցրիվ եկավ մոտակա գյուղի տներում, իսկ մեծ մասը կծկվեց, պատսպարվեց ակումբի ցուրտ շենքում: Զավեն Շարաֆյանը ակումբի շենքում պատսպարվողների թվում էր, և կյանքում արդեն որերորդ անգամ համոզվեց, թե որքան ավելի բարի, մեծահոգի ու առատաձեռն են դառնում մարդիկ, երբ ընդհանուր ցավի մեջ են: Առանց խնայելու ուղևորները իրար հետ կիսում էին մի կտոր հացը, գիշերն անքուն հսկում հիվանդներին, իրենց միակ վերարկուներով ծածկում օտար երեխաներին և քայլում շարունակ, որպեսզի չցրտահարվեն: Միթե հենց այդպես չէր պատերազմի ժամանակ: Հենց որ դժբախտություն էր պատահում մարդուն՝ հիվանդանում էր կամ կորցնում հացի քարտը, հարևաններն անմիջապես հավաքվում էին, նույնիսկ տարիներ շարունակ իրարից խռով մարդիկ: Մեկը մի կտոր հաց էր բերում, մեկը մի բուռ ոսպ, մեկը մի խնձոր… նստում զրուցում, մխիթարում, սփոփում էին իրար… Զարմանալի բան է, թե մարդիկ ինչպես են գտնում, պահում իրար,երբ նեղության մեջ են, և կորցնում թեթևորեն, երբ լավ են ապրում:

Այնպես որ մազաչափ իսկ մեղավոր չէր Զավեն Շարաֆյանը, որ հարկադրաբար երկու օր ուշացումով էր ներկայանում աշխատանքի: Բայց, միևնույն է, ինչ- որ չափով անհարմար էր զգում իրեն, երբ բացեց խմբագրի առանձնասենյակի դուռը: Բացեց ու կանգ առավ զարմացած, խմբագրի գրասեղանի ետևում նստած էր Միհրան Գալստյանը:

- Միհրա՞ն, ի՞նչ ես անում այստեղ:

- Ի՞նչ է, չե՞մ սազում,- հարցրեց Գալստյանը:

- Չէ,- ասաց Զավենը: - Իհարկե չես սազում:

Միհրան Գալստյանը ծիծաղեց,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ստիպված ես մեկ ամիս դիմանալ: Խմբագրին Բաքու են ուղարկել՝ սեմինարի:

Չգիտես ինչու, Զավենն անհանգստություն զգաց:

- Ե՞րբ: Ինքը գիտե՞ր այդ մասին:

- Չէ, - ասաց Միհրանը-- Ուրիշ քաղաքային թերթի խմբագիր պետք է գնար, հիվանդացել էր, ընկեր Զուլոյանին ուղարկեցին: Այնպես որ, ինչպես պատի թերթի տակ է գրվում՝ նյութեր հասցրեք համարիս:

- Թղթապանակս լիքն է, ապահով եղիր,- ժպտաց Զավեն Շարաֆյանը,սակայն ժպիտը շատ արհեստական ստացվեց: Անհանգստության զգացումը չէր թողնում նրան: Այդպիսի պատահականությունները հենց այնպես չեն լինում:

- Հա, Զավեն, չմոռանամ ասել՝ քեզ Իգիթյանն էր հարցնում:

- Իգիթյա՞նն ով է:

Միհրան Գալստյանը նրան նայեց զարմացած:

- Քաղկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչը:

- Իգիթյա՞նը: Ի՞նչ է ուզում:

- Չգիտեմ,- ասաց Միհրանը, բայց պարզ զգացվում էր, որ գիտի: - Զանգեց ասաց՝ հենց որ հայտնվի, թող գա քաղկոմ:

Զավենը կնճռոտեց ճակատը:

- Երևի ֆելիետոնի առթիվ կլինի:

- Երևի,- ծիծաղեց Միհրանը: - Մեր ամբողջ քաղաքը իրար ես խառնել, իսկ դու հանգիստ ման ես գալիս մայրաքաղաքում:

Նույն բառերով, նույն ինտոնացիայով նրան քաղաքային կոմիտեի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ Նշան Իգիթյանը դիմավորեց.

- Այ տղա, մեր ամբողջ քաղաքը իրար ես խառնել, իսկ դու քեզ համար հանգիստ ման. ես գալիս մայրաքաղաքում:

Առանց այլևս սպասելու հրավերի, Զավենը նստեց նրա դիմացի աթոռին:

- Ես խմբագրից թույլտվություն էի վերցրել:

- Իսկ ես չգիտեի…

- Ես էլ չգիտեի, որ ձեզանից նույնպես պետք է թույլտվություն խնդրել, ընկեր Իգիթյան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Իգիթյանի դեմքը սկսեց կարմրել:

- Ձեզ երկու օրով են թույլ տվել,- ակամա մատնեց իրեն բաժնի վարիչը, -իսկ դուք մի շաբաթ է, չկաք:

Անկախ ամեն ինչից, Զավենը հարկ համարեց բացատրություն տալ:

- Ճանապարհը փակ էր. ավտոբուսը ձյուների մեջ էր մնացել, ընկեր Իգիթյան…

- Իսկ եթե պատերազմ լիներ, ձեզ էլ հանձնարարեին տեղ հասցնել շտաբի ծրարը, ձյունը կարող էր արդարացուցիչ հանգամանք ծառայել:

Զավենը բարձրացրեց գլուխը և չթաքցրած հետաքրքրությամբ նայեց Նշան Իգիթյանին: Նա շատ էր լսել պրոպագանդայի բաժնի վարիչի մասին, բայց առաջին անգամ էր խոսում նրա հետ: Նրա մասին շատ արտառոց բաներ էին պատմում, բայց Զավենին միշտ թվում էր, թե դրանք հնարովի անեկդոտներ են: Պատերազմի ավարտին նրան դասակ են վստահում: Եվ նորաթուխ սերժանտը, խելագարվում է՝ տեսնելով իր իշխանության ուժը: Էությամբ խեղճուկրակ մարդ լինելով, նա ապշում է, երբ իր նման ,մարդկանց հրամայում է պառկիր, և նրանք ցած են նետվում անմռունչ: Հրամայում է փորսող տալ, և նրանք փորսող են տալիս ցեխերի մեջ: Հրահանգում է վազել, և նրանք խոնարհ ու լուռ վազում են այնքան, մինչև որ Նշան Իգիթյանը խղճա ու ասի՝ կանգ առ:

Այդ մարդը երևի միակն էր աշխարհում, որ պատերազմ էր տենչում: Որովհետև իրեն հզոր ու երջանիկ էր զգացել միայն պատերազմի ժամանակ: Երբ անվերապահորեն կատարվում էին նրա հրահանգները: Նշան Իգիթյանը պատրաստ էր սողալ, ցատկել, կրակել ում հրամանով ուզում է լինի, միայն թե ինքն էլ հրամայելու գոնե մի քիչ, մի մատնաչափ իրավունք ունենա: Բայց այնպիսի հրամանի իրավունք, որին առարկել չի կարելի, պատասխանել չի կարելի: Իսկ այդպիսի իրավունք միայն բանակում են տալիս, հատկապես երբ բանակը պատերազմական վիճակում է: Հրամայեցիր, վերջ: Թեկուզ և սխալ է հրամանը, թեկուզ հիմարություն է: Հետո՞ ինչ, հրամայեցիր և վերջ: Ահա թե ինչու էր Նշան Իգիթյանը պատերազմ երազում և դժգոհ էր իր գրաված բոլոր պաշտոններից: Երբ զորացրվեց բանակից և հեռակա կարգով ավարտեց մանկավարժական ինստիտուտը,

նրան դպրոցի դիրեկտոր նշանակեցին: Մեծ թվով աշակերտներ և ուսուցիչներ կային, կարելի էր հրամայել, որքան ուզեր սիրտը: Բայց ի՞նչ: Մի՞թե կարելի է բանակը համեմատել դպրոցի հետ: Հենց որևէ հրաման էր տալիս՝ ուսուցիչները հրամանի քաղվածքը վերցնում ու տանում էին ժողկրթբաժին, արհմիության կոմիտե, դատարան: Ըստ որում ամեն ինչ սկսվեց հենց առաջին ժողովից: Ժողովը դեռ չէր սկսել, երբ տեսավ,թե որքան հանգիստ ու անփույթ են կանգնած են ուսուցիչները: Նշան Իգիթյանը մոռացավ ամեն ինչ ու բղավեց.

- Շարվի՞ր…

Իսկ հետո ինքն էլ էր ծիծաղում ուսուցիչների հետ և նրանց համոզում, թե դիտմամբ արեց:

Բայց դա դիտավորյալ չէր: Վերոհիշյալ հրահանգից մեկ տարի անց, երբ արդեն քաղաքային ժողկրթբաժինն էր ղեկավարում, և դպրոցի մի քանի դիրեկտորներ հրաժարվեցին կատարել

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

նրա հերթական հիմար կարգադրություններից մեկը, Նշան Իգիթյանը կարմրատակեց, հառաչեց ու ասաց.

- Ախ, էլ ուրիշ բան չեմ ուզում գոնե մի շաբաթ պատերազմ լիներ, ու դուք իմ դասակում լինեիք- Մի շաբաթ, հա…

Հետո աշխատողները, նրան ճանաչողները անընդհատ սպասում էին, թե Նշան Իգիթյանին կհեռացնեն աշխատանքից: Բայց նրան չէին հեռացնում, ընդհակառակը, ճիշտ է, ծիծաղում, ծաղրում էին, անեկդոտներ էին պատմում, բայց առաջ էին քաշում շարունակ, և հիմա նա ահա քաղկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչն է: Նրա հետ աշխատողները, նրան ճանաչողները հաշվի չէին առնում մի անչափ կարևոր հանգամանք: Որ ղեկավարներից շատերին հենց նման մարդիկ են պետք, որոնք ոչ խելք ունենան, ոչ կամք ու ոչ էլ արժանապատվություն, որ իրենց փոքրիկ տեղերում հրամայեն ու անեն ինչ ուզում են, բայց փոխարենը սողան, երբ սողալ է պետք, կրակային դիրք ընդունեն, երբ ցույց են տալիս թիրախը և կրակեն, երբ հրամայում են:

Եվ ահա այդ մարդը թավ հոնքերի տակից նայում էր Զավեն Շարաֆյանին ու հարցնում.

- Իսկ եթե պատերազմ լիներ և ձեզ էլ հանձնարարեին տեղ հասցնել շտաբի ծրարը, ձյունը կարո՞ղ էր արդարացուցիչ հանգամանք ծառայել:

- Ոչ, - կտրիճաբար պատասխանեց Զավեն Շարաֆյանը,- ոչ ձյունը, ոչ անձրևը, ոչ փշալարերը, ոչ ականները- Ինչ խոչընդոտ էլ հանդիպեր իմ ճանապարհին, ես ձեզ կհասցնեի շտաբի ծրարը:

Նշան Իգիթյանը կասկածամտորեն նայեց լրագրողին. Ծաղրո՞ւմ է այս տղան, թե չի ծաղրում: Բայց Զավենի դեմքը անսահման լուրջ էր, և պրոպագանդայի բաժնի վարիչը հանգստացավ:

- Ուրեմն հիմա, եթե ձեր կարծիքով պատերազմ չկա, ինչ ուզեք կարող եք անե՞լ: Չի կարելի, ընկեր Շարաֆյան: Մի մոռացեք, որ պատերազմ միշտ էլ կա: Ուղղակի առաջ տաք պատերազմ էր, իսկ հիմա սառը պատերազմ է, ուրեմն պետք է ապրենք և գործենք պատերազմական ժամանակների օրենքներով: Պա՞րզ է:

- Ավելի պարզ հնարավոր չէ,- համաձայնեց Զավեն Շարաֆյանը: - Կա, լսում եմ, գործել միայն պատերազմական ժամանակների օրենքներով:

Նշան Իգիթյանը կրկին կասկածամտությամբ նայեց լրագրողին, բայց Զավենի լրջությունն անթերի էր:

- Բանակում ծառայե՞լ ես,- արդեն որպես հարազատ «դու»-ի անցավ Իգիթյանը:

Զավենը վշտացած թափահարեց ձեռքը.

-Ամոթ էլ է դա ծառայություն համարել, ընկեր Իգիթյան: Երկու ամիս զինվորական ուսանողական ճամբարում եմ եղել Քանաքեռում: Դա ի՞նչ ծառայություն է, ի՞նչ բանակ: Ոչ կարգ կա, ոչ կանոն: Ուսանողները գիտեն, որ ինչպես էլ պահեն իրենց, մի ամիս հետո

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

համալսարանում են լինելու: Եվ չեն ենթարկվում ոչ սերժանտներին, ոչ էլ նույնիսկ սպաներին: Սերժանտը մի ժամ գոռում է՝ «Վեր կաց», իսկ նրանք վրանի տակ քնած են: Գոռում է՝ «Շարվիր», իսկ նրանք գոտիները քանդելով նոր-նոր զուգարան են գնում: Բա մի՞թե դա կհանդուրժեին իսկական բանակում, այն էլ պատերազմական իրադրության մեջ…

Պրոպագանդայի բաժնի վարիչի աչքերը շողացին.

- Պատերազմ- պատերազմ-- մրմնջաց նա չթաքցրած երանությամբ: - Չէին հանդուրժի, իհարկե, չէին հանդուրժի: Ըստ կարգի մի թեթև հրաման, և վերոհիշյալ ընկերները տասն օր շարունակ կոացած կմաքրեին նույն այդ զուգարանները:

Նա բարձրացավ տեղից, մի քանի անգամ ետ ու առաջ գնաց իր առանձնասենյակում, համեմատաբար հանգստացավ ու դարձավ լրագրողին.

- Առաջին տպավորությունս դրական է… Անցնենք գործի:

- Անցնենք,- գլխով արեց լրագրողը:

- Առաջիկա բյուրոներից մեկում քննության է դրվելու քո ֆելիետոնը: Քաղաքային կոմիտեն հանձնաժողով է ստեղծել, որը մանրամասն ստուգելու է ֆելիետոնում բերված փաստերը: Եթե քո ձեռքի տակ ուրիշ այնպիսի փաստեր կան, որ նյութի մեջ չես օգտագործել, ներկայացրու հանձնաժողովին:

- Լսում եմ: Կա: Կներկայացնեմ,- հատու պատասխանեց լրագրողը: - Իսկ ո՞վ է հանձնաժողովի նախագահը:

- Նյութերը կտաս ինձ,- ասաց բաժնի վարիչը,- և հետն էլ մանրամասն մի զեկուցագիր, թե ինչի հիման վրա է գրվել ֆելիետոնը:

- Դա՞ ինչի համար է:

- Չգիտեմ,- խոստովանեց Իգիթյանը: - Ինձ հրամայել են, ես թեզ եմ փոխանցում;

- Բայց չէ որ ֆելիետոնի փաստերն իրենք ասում են, թե ինչի հիման վրա է գրվել - այնուամենայնիվ վճռեց համառել լրագրողը, որպեսզի լրացուցիչ որոշ տեղեկություններ իմանա:

Նշան Իգիթյանը նորից տեղավորվեց իր աթոռին:

- Թողնել,- բացականչեց նա և անմիջապես էլ ուղղեց իրեն,- դու ինձ սխալ հասկացար՝ պետք է գրես, թե այդ փաստերն ով է տվել քեզ, ով է եղել շահագրգռված, ով է խնդրել գրելու այդ ֆելիետոնը:

- Բայց դա ի՞նչ նշանակություն ունի: Չէ՞ որ կարևորը հրապարակված փաստերն են,- սկսեց Զավեն Շարաֆյանը, բայց նայելով Նշան Իգիթյանի ասես իրոք հրամանով միանգամից փակված, անթափանց դարձած դեմքին, փոխեց մտադրությունն ու բարձրացավ տեղից: - Թույլ տվեք հեռանալ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Թույլատրում եմ,- ակամա պատասխանեց բաժնի վարիչը, բացահայտ համակրանքով ազատ արձակելով լրագրողին:

Բայց երբ փակվեց դուռը, ի պատիվ իրեն՝ հանկարծ այնուամենայնիվ կասկած ապրեց, իսկապե՞ս այդքան լուրջ ու անկեղծ էր Ջավեն Շարաֆյանը: Թե՞ ծաղրում էր:

* * *

Աշխատանքային ընդմիջմանը Ջավեն Շարաֆյանը բուֆետ գնաց, բայց ոչ սովորականի պես մի բաժակ տաք թեյ խմելու: Նա թևի տակ մի փաթեթ ուներ, որը մեկնեց բուֆետապան տարեց կնոջը:

Կինը վերցրեց փաթեթն ու հարցրեց.

- Կշռե՞մ, Ջավեն ջան:

- Չէ, ինչ եք ասում,- ժպտաց լրագրողը: - Դա ձերն է: Ձեզ համար Երևանից մի կտոր առատություն եմ բերել:

- Ինձ համա՞ր-- կինը բացեց փաթեթը, զարմացավ, ուրախությամբ նայեց ապխտած երշիկին, հոտ քաշեց երանությամբ ու քիչ մնաց լաց լինի: - Ինձ համա՞ր- Ուրեմն Երևանո՞ւմ էլ ինձ հիշել ես, տղա ջան: - Մինչև կյանքիս վերջը չեմ մոռանա ձեր նվիրած խաշած կարտոֆիլները,- ասաց Ջավենը: - Ինչ վերաբերում է առատությանը, արդեն կա, երևում է, ուղղակի լեռնանցքը փակ է, մորաքույր, բացվի թե չէ, այստեղ էլ կհասնի:

Նա արագորեն դուրս եկավ բուֆետից, որպեսզի չլսի տարեց կնոջ հուզված, շնորհակալ խոսքերը, բարձրացավ խմբագրություն և տեսավ, որ իր սենյակի դռան մոտ նիհար, բարձրահասակ մի երիտասարդ է կանգնած: Դեմքն անծանոթ էր:

- Ի՞նձ եք սպասում:

- Եթե Ջավեն Շարաֆյանը դուք եք:

Լրագրողը բացեց դուռը, սպասեց մինչև այցելուն ներս մտնի ու տեղավորվի և նոր միայն նստեց նրա դիմաց:

- Ես ձեզ լսում եմ:

- Լսելու բան չկա,- ասաց այցելուն,- կարդացի ձեր ֆելիետոնը ու եկա տեսնելու ո՞ղջ եք, թե հաջորդ համարում ձեր մահախոսականն ենք կարդալու:

- Ողջ եմ,- ժպտաց լրագրողը:

- Շատ տարօրինակ է և զարմանալի,- ասաց անծանոթը:

Հեռախոսը զնգաց: Հայացքով ներողություն խնդրելով արտասովոր այցելուից, Ջավեն Շարաֆյանը վերցրեց լսափողը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Բարև ձեզ, ընկեր Շարաֆյան,- լսեց նա քաղաքի դատախազի ձայնը: - Միսակյանն է: Կարծում եմ, գոհ կլինեք, այսօր առավոտյան կալանավորեցինք Աղաբեկ և Վաղինակ Տիտանյաններին:

Զավենն զգաց, որ դեմքը այրվում է:

- Նախկի՞ն վկայությունների հիման վրա, թե նոր վկաներ են հայտնվել:

- Նոր, նոր,- ձայնը բարձրացրեց դատախազը: - Գաղտնիք չկա, մարդիկ հենց այդպես էլ հայտարարում են, ասում են, թե մինչ այդ վախենում էին Աղոյի և Վաղոյի վրեժխնդրությունից, իսկ ֆելիետոնը կարդալուց հետո ամաչել են և վճռել են ասել ողջ ճշմարտությունը: Լրագրողը չգիտեր ինչ անել: Նա ուզում էր շնորհակալություն հայտնել, բայց տատանվում էր, մտածում էր, թե որքան հարմար է այդպիսի լուրի համար շնորհակալություն հայտնելը: Նրան դատախազը փրկեց.

- Կներեք, Երևանից են զանգահարում- Կհանդիպենք…

Զավենը ցած դրեց լսափողը և այցելուին դարձավ.

- Մի ուրիշ շատ տարօրինակ ու զարմանալի բան էլ ասեմ: Աղոն ու Վաղոն կալանավորված են:

Մարդը քմծիծաղ տվեց.

- Նրանց մի անգամ էլ էին կալանավորել…

Զավեն Շարաֆյանը այլևս անկարող էր դիմանալ.

- Մեծ անտակտություն չե՞ք համարի, եթե հարցնեմ՝ դուք ով եք:

- Բոլորովին: Մանավանդ որ ինձ գիտեք և փնտրել եք: Ես Արմեն Զատիկյանն եմ:

- Գյուտարա՞րը:

- Նախկին գյուտարարը:

- Մարդը, որ փնտրում է կորցրած հավա՞տը,- ժպտաց լրագրողը:

- Այլևս չեմ փնտրում,- ասաց Արմեն Զատիկյանը: -Ուրեմն իմ հայտարարությո՞ւնն է հետաքրքրել ձեզ…

- Իսկ ինչո՞ւ չեք փնտրում: Արդեն գտ՞ել եք:

Արմեն Զատիկյանը կրկին քմծիծաղ տվեց և նայելով նրա թեև ջահել, բայց արդեն կնճռապատ ու մռայլ դեմքին, լրագրողը մտածեց, որ լիովին իրավացի է Մկրտիչ Զուլոյանը: Այս մարդը ում ասես կարող է հանել համբերությունից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես չեմ տեսել մեկին, որ ընդհանրապես իր կորցրածը գտած լինի: Ծնված օրից կորցնում են, առանց գտնելու- Սկզբում պապին-տատին են կորցնում, հետո ծնողներին, հետո առողջությունը, հետո երազները, հետո հավատը, հետո հույսը, հետո կյանքը… Ով է, որ դրանցից մեկնումեկը կարողացել է գտնել նորից ու ետ բերել:

Զավեն Շարաֆյանը մտածեց.

- Բայց դուք դեռ ջահել եք,- ասաց նա,- նույնիսկ ձեր փիլիսոփայական հաջորդականությամբ՝ հերթը դեռևս հավատին հասած չպետք է լինի:

- Ջահելը դուք եք, եթե այդպես եք մտածում, - հեգնեց Արմեն Զատիկյանը: - Մոռանում եք, կամ ավելի ճիշտ՝ չգիտեք, թե ովքեր ենք մենք, որտեղից ենք եկել, և որտեղ ենք ապրում:

- Իսկապես, չգիտեմ,- համաձայնվեց լրագրողը: - Ես ձեր սահմանած հերթը նկատի ունեցա:

- Նկատի չեք ունենում, որ այդ հերթը արագացնողներ կան: Դե ուրեմն լսեք: Թե հոգնեցիք արդեն, և ես խլում եմ ձեր թանկագին ժամանակը:

Զավենը տարուբերեց գլուխը:

- Հա՞, դե ուրեմն լսեք: Ես պապ ու տատ ընդհանրապես չեմ տեսել: Ես նրանց կորցրել եմ դեռ չծնված: Նրանց սպանել են թուրքերը: Դուք գիտե՞ք, թե ովքեր են թուրքերը, թե ընդհանրապես ինչ ասել է թուրք…

- Ինչո՞ւ չգիտեմ,- զգալով, որ նյարդայնանում է, ուսերը թոթվեց լրագրողը:

- Չգիտեք: Որտե՞ղ եք ծնվել:

- Երևանում:

- Երևանում,- քահ-քահ ծիծաղեց Արմեն Զատիկյանը,- ուրեմն կիմանաք, թե ովքեր են թուրքերը: Հաստատ: Սայլով շուկա ձմերուկ բերողներին նկատի ունեք, չէ՞, կամ էլ ձեր հարևաններին որոնց այգուց միրգ եք թռցրել ժամանակին: Ձեր իմացած թուրքերը դրանք են, չէ՞…

Արմեն Զատիկյանը բարձրացել էր տեղից, քայլում էր սենյակում, երկու ձեռքով ստեպ-ստեպ ետ նետելով աչքերին թափվող երկար, սև մազերը և ասես ներքին տենդից վառվող աչքերով, ցավ ու կրակ արտաշնչող շուրթերով պատմում էր, թե ովքեր են իսկական թուրքերը, ովքեր են 1915 թվականին բանակ կանչել հայ տղամարդկանց և հանգիստ, հաճույքով, կազմակերպված կոտորել նրանց անտեր մնացած ծնողներին ու երեխաներին, մորթել մի ամբողջ ժողովուրդ, որպեսզի տեր դառնան նրանց հայրենիքին, նրանց ունեցվածքին, նրանց պատմությանը:

Զավենն, իհարկե, որոշ բաներ լսել էր այդ մասին և մոր անեծքներից տեղյակ էր, թե ովքեր են իսկական թուրքերը: Բայց միայն տեղյակ էր: Իսկ նրա շրջապատում, նրա դասարանում ու դպրոցում և նույնիսկ հետո՝ Երևանի պետական համալսարանում շատ-շատերը նույնիսկ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

տեղյակ էլ չէին: Ընդհանրապես չգիտեին, որ եղեռն է եղել, և սպանդի է ենթարկվել մեկուկես-երկու միլիոն հայ:

Չգիտեին նույնիսկ, որ 46-47 թվականներին աշխարհի տարբեր անկյուններից քարավան առ քարավան հայրենիք վերադարձող հայերը հենց այդ թուրքական կոտորածներից հրաշքով փրկված մարդիկ ու նրանց տարագիր զավակներն են: Չգիտեին: Եվ որտեղի՞ց պիտի իմանային, երբ պատմության դասագրքերում, նույնիսկ հայ ժողովրդի պատմության վերաբերյալ աղքատիկ կտորների մեջ

Այդ ժամանակահատվածը չկար: Ոչ մի խոսք: Ոչ մի բառ: Եվ ոչ էլ գրականություն կար: Ոչ մի պատմավեպ, ոչ մի բանաստեղծություն, որը պատկերեր ու նզովեր մարդկության պատմության մեջ պետականորեն գործված այդ առաջին ցեղասպանությունը: Նման գործեր չէին տպագրվում և նրանց հեղինակները արգելվածների սև ցուցակում էին: Իսկ նախկինում կամ աշխարհի տարբեր քաղաքներում տպագրված գրքերը, որոնցում հայ ժողովրդի կրած անլուր տառապանքներն էին նկարագրվում օտար բռնակալների լծի տակ և հայ ժողովրդի օրհասական պայքարն էր պատկերվում՝ հանուն իր գոյության, կալանքի և աքսորի սպառնալիքի տակ այրվում էին հրապարակայնորեն: Զավեն Շարաֆյանը պարզ հիշում էր, որ երբ վեց տարեկան էր, մի օր ինքն ու իր ընկերները հրճվագին աղաղակներով ուրախ ցատկոտում էին իրենց շենքի բնակարաններից դուրս բերված և բակում կիտված գրքերի խարույկների վրայով: Եվ հետո, շատ հետո միայն իմացավ, որ այդ խարույկներում վառվում էին Պատկանյանի, Րաֆֆու, Շանթի, Վարուժանի, Սիամանթոյի, Զոհրապի, Ահարոնյանի, Լեոյի, Չարենցի, Բակունցի գրքերը:

- Իսկ դո՞ւք որտեղից գիտեք այդ բոլորը,- տակնուվրա եղած սրտով հարցրեց Զավենը:

- Ե՞ս,- ծիծաղեց Արմեն Զատիկյանը: - Օրորոցից: Մայրս օրորում էր և երգելով, լալով պատմում էր: Հետո որ մեծացա մի քիչ, հայրս ծնկին էր դնում, սեղմում էր բռունցքները, հայհոյում ու պատմում էր: Իսկ երբ դպրոց գնացի՝ ուսուցիչներն էին պատում: - Քարտեզի վրա փայտիկը սահեցնելով՝ ցույց էին տալիս կարմիր-կարմիր շրջանակներ ու գծեր ու ասում էին, որ այդ շրջանակները հայոց երբեմնի շեն քաղաքներն ու գյուղերն են՝ Զեյթուն, Վան, Բիթլիս, Մարաշ, Սասուն, Երզնկա, Կիրզա, Կարս… և հարյուրավոր այլ նվիրական անուններ: Իսկ գծերն էլ այն արյունոտ ճանապարհներն են, որոնցով թուրքերը տանում էին իրենց զոհերին՝ անապատների մեջ ոչնչացնելու: Եվ ասում էր՝ ուշադիր նայեք ու հիշեք այդ շրջանակներն ու գծերը, որպեսզի չմոռանաք, թե ովքեր եք դուք, որտեղից եք եկել և որտեղ պետք է վերադառնաք դուք կամ ձեր զավակների զավակները, եթե մարդկային ամոթ ու արժանապատվություն ունեք և հարգանք՝ անմեղ նահատակների, անթաղ շիրիմների հանդեպ:

- Բայց դուք ո՞ր դպրոցում եք սովորել, որտե՞ղ էին նման դասեր տալիս:

- Թավրիզում,- ասաց Արմեն Զատիկյանը:

- Պարսկաստանո՞ւմ: Դուք Պարսկաստանի՞ց եք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Այո: Հայրենիք եկանք: Հայրս բերեց, ընկեր Շարաֆյան: Հայրս ասաց՝ այստեղ որ մնանք, կձուլվենք, կոչնչանանք: Հայրենիք, Խորհրդային Հայաստանը բացել է դռները, կանչում է մեզ, գնանք, միասին լինենք, միավորվենք, ո՞վ գիտե, գուցե թե մեր տները տանող ամենահուսալի ճանապարհը Երևանի միջով է:

- Ճիշտ եք արել,- սրտանց ասաց Զավեն Շարաֆյանը: -Իսկ հիմա որտե՞ղ են ձեր ծնողները, Երևանո՞ւմ են:

- Սիբիրում:

- Սիբիրո՞ւմ, ինչպես թե Սիբիրում: Ինչի՞ համար:

- Եթե միայն կարողանայի իմանալ-- հանկարծ բռունցքով գլխին խփեց Արմեն Զատիկյանը: - Գոնե ասեին, թե ինչի համար: Ինչ ասեին, կհավատայի, գիտե՞ք: Տաքարյուն մարդ էր, չափից դուրս էր ոգևորվել, որ հայրենիք է եկել, որ ամեն տեղ հայերեն կխոսեն ու կերգեն: Եվ ինքն էլ էր ամենուրեք խոսում ու երգում՝ զորավար Անդրանիկի, Սերոբ փաշայի, Սմբատ Սպարապետի, հայ ֆիդայիների մասին, խմում էր, աչքերն արյունով էին լցվում, սեղմում էր բռունցքներն ու գոռում. «Եթե հայ ենք, մեր քաղցր էրգիր չպիտի թողնենք թուրք շան բերանում»: Ու երգում էր՝ «Հայ ենք մենք, հայ ենք մենք»: Նա չէր լսում, թե ինչ են երգում ուրիշները, կարծում էր, որ եթե թույլատրում են հայերեն երգել, ուրեմն կարելի է երգել ինչ ուզում ես:

- Ու դուք չիմացա՞ք, թե ինչի համար են աքսորում:

Արմեն Զատիկյանը քմծիծաղ տվեց նորից, իր զայրացնող, դիմացինին հունից հանող քմծիծաղը:

- Ի՞նչ է, ձեր կարծիքով դատ արեցին և ինձ էլ հրավիրեցին դատի , որպեսզի իմանայի… Հետաքրքրվեի… Եթե ես հետաքրքրվեի, ինձ էլ անմիջապես կուղարկեին ծնողներիս ետևից: Ինձ փրկել էր միայն այն հանգամանքը, որ ես այդ գիշեր տանը չէի եղել: Գործուղման մեջ էի Երևանում: Այս փոքրիկ գյուղաքաղաքից նույն գիշեր հարյուր քսանչորս ընտանիք աքսորեցին: Առանց դատ ու դատաստանի: Լցրել էին բեռնատարներն ու հասցրել երկաթուղային կայարան: Իսկ այնտեղ պատրաստ կանգնած են եղել բեռնատար գնացքները: Բա՞ , սիրելի ընկեր Շարաֆյան, կարո՞ղ եք բացատրել ինձ, թե ինչպես է լինում, որ տարիների փափագով ու երազանքով մարդիկ աշխարհի ծայրերից Հայրենիք են գալիս, իսկ Հայրենիքը նրանց աքսոր է ուղարկում:

- Դա 1949 թվականի՞ն էր:

- Դե տեսնում եք, դուք էլ գիտեք,- ծիծաղեց Արմեն Զատիկյանը:

Այնինչ Զավեն Շարաֆյանը ոչինչ չգիտեր: Եվ շատ-շատերը ոչինչ չգիտեին: Դա կատարվել էր մի օրվա մեջ, նույն օրվա գիշերը, ամենուրեք նույն ժամին, նախապես կազմված ցուցակով: Բեռնատարը մոտեցել է հասցեում նշված տանը: Ավտոմեքենայից ցած են իջել մի զինվորական և քաղաքացիական հագուստով երկու հոգի, մտել են տուն և կարգադրել հագնվել, վերցնել թանկարժեք իրերն ու դրամը և անշշուկ, անաղմուկ նստել ավտոմեքենա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ոչ մի կահույք, ոչ մի անկողին, ոչ մի առարկա: Միայն թանկարժեք իրերն ու դրամը: Իսկ առավոտյան կյանքն ընթացել է սովորականի պես, մարդիկ աշխատանքի են գնացել ու դասի: Տանը մնացածները հերթ են կանգնել խանութների դռների մոտ: Եվ ոչ ոք չի նկատել, որ հերթերը մի քիչ նոսրացել են: Մեկ-երկու հոգու պակասը հսկայական հերթում ի՞նչ պիտի երևա: Իսկ ով նկատել է, խոհեմաբար ձայն-ծպտուն չի հանել: Մարդիկ արդեն փորձ ունեին, գիտեին, որ պետք է խոսեն այն ժամանակ, երբ նրանց ձայն են տալիս: Գիտեին, որ առանց ձայն ստանալու, իրենց ձայնով խոսելու իրավունք չունեն: Իսկ մի մասն էլ թերթերից ու ռադիոյից գիտեր, որ ծանր ժամանակներ են, թշնամին ամեն տեղ աչք ու ականջ ունի և երկրում վխտում են միջազգային իմպերիալիզմի գործակալներն ու նրանց տեղական ձայնափողները: Դրա համար էլ, երբ մարդկանց կողքից տանում էին մեկին, մարդիկ մտածում էին, որ նա կամ մերկացված գործակալ է, կամ էլ ձայնափող: Ուրեմն մի բան արել է: Անմեղ մարդկանց հո հենց այնպես չեն տանի: Եվ իրար ականջի փսփսալով ասում էին, թե իրենք էլ էին զգում, որ այդ հարևանը կամ գործակալ է, կամ ձայնափող…

Իսկ Զավեն Շարաֆյանը այդքանն էլ չգիտեր: 1949 թվականի այդ մղձավանջային գիշերը նրան միայն մի շատ ծիծաղաշարժ պատմությամբ էր հայտնի: Անչափ ծիծաղելի պատմություն էր: Նրանց փողոցի ծայրում ապրող հացթուխ Մելիքսեթը ընկերոջ խնդրանքով փոխարինում է նրան և գիշերը անակնկալ գնում

աշխատանքի: Օգտվելով հարմար առիթից, նրա կինը սիրածին տուն է կանչում: Եվ ահա գիշերվա կեսին հայտնվում են մի զինվորական և երկու քաղաքացի:

- Մելիքսեթ Օհանյան, Պարզիկ Օհանյան,- դիմում են նրանք անկողինը հենց նոր լքած, սարսափահար եղած տղամարդուն և կնոջը,- անմիջապես հագնվեք և անաղմուկ նստեք մեքենա:

Տղամարդն ուզում է ձայն հանել, ասել, որ ինքը բոլորովին էլ Մելիքսեթը չէ, բայց կինը պաղատանքով նայում է նրան ու սեղմում ձեռքը՝ իբր թե ինձ մի խայտառակի, ցավդ տանեմ, կտանեն քաղմաս, այնտեղ մի բան կմտածենք: Բայց նրանց ուղիղ երկաթուղային կայարան են տանում ու լցնում վագոնները: Իսկ այնտեղ դժբախտ սիրահարի ձայնը լսող չկար: Բոլորն էլ լալիս ու գոռում էին:

Առավոտյան հայտնվում է հացթուխ Մելիքսեթը ու տեսնում, որ ոչ կինը կա, ոչ էլ տան եղած՝չեղած ոսկեղենն ու դրամը: Մտածում է, թե Պարզիկը կողոպտել է իրեն ու փախել տնից և վազում է միլիցիա: Եվ այնտեղ ի վերջո իմանում է, որ Մելիքսեթ և Պարզիկ Օհանյաններին աքսորել են Սիբիր: Մելիքսեթը գոռում-գոռգոռում է, թե ինքն է Մելիքսեթը, բայց նրանով արդեն ոչ ոք չի զբաղվում, որովհետև գիշերային օպերացիան չափազանց հաջող էր անցել, ամեն ինչ կատարվել էր ըստ կարգի ու անաղմուկ, ապահովվել էր աքսորյալների գլխաքանակը, իսկ աքսորողները պարգևատրվել էին արդեն ու աշխատանքից տուն գնացել հանգստանալու:

Ահա թե այդ լուրջ «օպերացիայից» որքան ծիծաղաշարժ պատմություն էր մնացել Զավեն Շարաֆյանի հիշողության մեջ: Եվ նայելով գյուտարար բանվորի բորբոքված, վերապրած ցավից աղավաղված դեմքին, լրագրողը մտածեց, թե տեսնես ում են տարել այդ գիշեր Արմեն

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զատիկյանի փոխարեն: Չէ որ անպայմանորեն պետք է ապահովված լիներ աքսորյալների գլխաքանակը:

- Դե պատասխանեք, է , ընկեր Շարաֆյան,- չէր հանգստանում գյուտարարը: - Ի՞նչ էին արել ձեզ աշխարհով մեկ փռված, առանց այդ էլ դժբախտ հայերը, որ խաբեցիք, հրապուրեցիք, հրավիրեցիք Հայրենիք ու անմիջապես էլ վռնդեցիք Հայրենիքից անասունների համար սարքած վագոններով:

- Վերջ տվեք, բավական է,- ակամա դռան կողմը նայելով, շշուկի անցավ լրագրողը: - Խելագարվեցի՞ք, ինչ է…

Արմեն Զատիկյանը կանգ առավ ու քրքջաց.

- Վախեցա՞ք, ընկեր լրագրող: Ջուր խմեք, ջուր: Գունատվեցիք միանգամից: Իսկ ինչո՞ւ էիք կարծում, թե ես խելագար չեմ և հիմա միայն պիտի խելագարվեի: Այն, ինչ ես եմ տեսել- անհնարին է, որ որևէ մեկը տեսներ ու չխելագարվեր:

Զավեն Շարաֆյանը իրոք որ վախենում էր: Ինչե՞ր է ասում այս տղան: Եթե մեկնումեկը լսի- կամ լսում է- Անպայման ինչ-որ կերպ պետք է պատասխանել նրան: Անպայմա՞ն…

- Ուրեմն ձեր հայրը անմեղ մարդ էր ու հենց այնպե՞ս տարան ասաց նա հեգնանքով: - Ուրեմն ոչ մի մեղք չունե՞ր:

- Ինչո՞ւ չուներ: Հարևաններից մեկը նրա վրա, ինչպես այստեղ են ասում՝ մատերիալ էր գրել, թե տեռորիստ հնչակյանների երգերն է երգում: Մի օր կաշվե թղթապանակները թևերի տակ երկու հոգի եկան մեր տուն, խուզարկեցին ինչ կար-չկար, իրենց համար հետաքրքիր ոչինչ չգտան ու հարցրեցին հորս.

- Ճի՞շտ է, որ դու տեռորիստական երգեր ես երգում:

- Ոչ, ճիշտ չէ,- ասաց հայրս:

- Բա ինչո՞ւ ես երգում՝ «Պատից կախված իմ ջութակը ընկավ կոտրվեց»: Դու չգիտե՞ս, որ դա հնչակյանների երգն է:

- Երգի հնչակյանն ու դաշնակցակա՞նը որն է, եղբայր,- զարմացավ հայրս,- այդ երգը սիրո մասին է…

- Բայց հնչակյաններն են երգում:

- Եթե հնչակը հաց է ուտում, մենք հացից պետք է հրաժարվե՞նք,- անկեղծ վշտացավ, ուսերը թոթվեց հայրս,-եթե հնչակը քնում է, մենք անքո՞ւն պիտի մնանք:

- Դե քեզ հիմարի տեղ մի դնի,- ոտքը գետնին խփեց խուզարկուներից մեկը: - Թե չէ էնքան անքուն կպահենք՝ մինչև որ խելքի գաս:

Զավեն Շարաֆյանին թվաց, թե դրությունից դուրս գալու ելքը գտավ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Տեսնո՞ւմ եք, որ մի բան եղել է,- ասաց նա: - Խոսել է, երգել է… Զրպարտագիր է գրվել- վիճել է օրգանի աշխատողների հետ…

- Լավ,- ասաց Արմեն Զատիկյանը: - Լավ: Նա խոսել է, երգել է, վիճել է- իսկ մա՞յրս, ինչ էր արել, որ նրան էլ տարան: Ե՞ս ինչ էի արել, որ ինձ էլ էին ուզում տանել,,.

- Չգիտեմ,- կտրեց Զավենը: - Այդ հարցերին ես գիտակ չեմ և դրանց պատասխանելը իմ ուժերից վեր է:

- Ահա,- հաղթական բացականչեց Արմեն Զատիկյանը: -Ուրեմն ձեր ուժը միայն գլխարկ կարող խուլիգանների վրա է պատում, ընկեր Շարաֆյան: Մանր-մունր պտուտակների վրա՞: Եվ դուք հիացած եք ձեզնով, չէ՞ , հպարտ եք, որ մեծ գործ եք կատարում: Արդարության պաշտպան եք: Ձեր արածը գիտ՞եք ինչի նման է, չէ, գիտե՞ք ինչի նման է- Երբ ինքնասիրահարված միամիտի մեկը բանտը քանդելու, պայթեցնելու փոխարեն փորձում է սպիտակ ներկել իր խուցը…Ըստ որում՝ միայն փորձում է…

Զավեն Շարաֆյանը սարսափելի ահ զգաց:

- Լսեք,- ասաց նա զունատված,- հեռացեք անմիջապես: Համբերությունն էլ սահման ունի: Ես չեմ ուզում այլևս լսել ձեզ… Հասկացա՞ք:

- Հասկացա,- հանկարծ միանգամից խաղաղված ու ասես իր թողած տապավորությունից չափազանց գոհ, ժպտաց Արմեն Զատիկյանը: - Ես հենց դրա համար էլ եկա- Երբ իմացա, որ հետաքրքրվել եք ինձնով և կարդացի ձեր ֆելիետոնը, մտածեցի, որ կոգևորվեք, դրա համար էլ անմիջապես ձեզ մոտ եկա, որոշեցի տեսնել ձեզ ու խնդրել, որպեսզի ինձնով չզբաղվեք: Դա էլ ձեր ուժերից վեր է: Իմ գյուտի և իմ մասին երկու անգամ գրել է ձեր խմբագիր Մկրտիչ Զուլոյանը: Առաջին անգամ գրելուց հետո ինձ խիստ նկատողություն հայտարարեցին, զրկեցին պարգևատրությունից և ավելի ցածր վարձատրվող աշխատանքի իջեցրին: Երկրորդ անգամ գրելուց հետո ուղղակի հեռացրին աշխատանքից, և արդեն մի տարի է, ինչ դռնեդուռ եմ ընկել արդարություն գտնելու համար: Ուրեմն բարի ու մեծահոգի եղեք, ոչ մի բան մի գրեք իմ մասին, որովհետև համոզված եմ, որ այս անգամ արդեն ինձ ուղիղ իմ ծնողների մոտ կուղարկեն: Ինձ մեծ լավություն արեք, մի գրեք, հա՞ …

Զավեն Շարաֆյանը չէր հասկանում, թե ինչ է կատարվում իր հետ: Չգիտեր, հիմա, հենց այս վայրկյանին ատում է այդ մարդուն, թե խղճում:

- Իսկ եթե այդպես է,- ասաց նա, անկարող թաքցնելու չարախնդությունը: - Եթե իրոք այդպես է, ինչո՞ւ եք խղճալի հայտարարություններ փակցնում այստեղ ու այնտեղ, թե խնդրում եմ կարեկցեք, օգնեք ինձ, որպեսզի գտնեմ իմ կորցրած հավատը- Ինչո՞ւ…

- Որովհետև ես խելագար եմ,- ծիծաղեց Արմեն Զատիկյանը: - Մի՞թե այսքանից հետո էլ չհամոզվեցիք, որ ես խելագար եմ…

* * *

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ուղեղը տնքում էր ցավից: Գրասեղանին թեքված նա երկու ձեռքով այնքան ամուր էր բռնել գլուխը, ասես իրոք վախենում, թե հիմա կպայթի ուր-որ է, ցրիվ կգա: Ինչի՞ համար էր եկել Արմեն Զատիկյանը: Իսկապե՞ս խելագար է, թե ձևացնում է միայն:

Եկավ, թունավորեց, գնաց: Եվ ինչեր էր խոսում- Ինչեր էր խոսում… Իսկապես տարօրինակ է, որ մինչև հիմա նա ազատության մեջ է: Կամ գուցե լսողները համոզված են, որ նա հոգեկան խանգարում ունի- Կամ հաշվի չեն առնում, ինչպես իր մորը: Չէ, սա այն դեպքը չէ: Ի՞նչ են մոր ասածները սրա մտքերի համեմատ: Միայն անչար անեծքներ- Իսկ սա ծիծաղում է: Տարբերությունն այն է, որ սա ծիծաղում է:

Զավեն Շարաֆյանը մի առած հիշեց, որ կարդացել էր կազմը պոկված մի հին գրքում: Պարսից շահը վճռում է բարձրացնել իր հպատակ հայերի տուրքը: Իսկ հետո լրտես է ուղարկում հայերի մոտ, որ տեսնի, թե նրանք ինչպես են ընդունել հարկերը բարձրացնելու լուրը: Լրտեսը վերադառնում է ու վախեցած հայտնում, թե հայերը սաստիկ զայրացել են, բարձրագոչ անիծում են շահին: Գնացեք ու ավելի բարձրացրեք հարկերը, ժպտում է շահը: Իսկ հետո կրկին իր մոտ է կանչում լրտեսին: Հը՞, հարցնում է, իսկ հիմա ինչ են անում հայերը: Լաց են լինում, ասում է լրտեսը, ողբ ու կական են բարձրացրել, հող են լցնում գլխներին ու մղկտում են: Շահը նորից է ժպտում: Ուրեմն էլի տեղ կա, ասում է, գնացեք ու դարձյալ բարձրացրեք հարկերը: Իսկ երբ լրտեսը վերադառնում է, հարցնում է նրան. հը՞, իսկ հիմա ի՞նչ են անում: Ծիծաղում են, զարմացած հայտնում է լրտեսը, ծիծաղում ու քրքջում են բարձրաձայն: Չեղավ, անհանգստանում է շահը, չափն անցանք: Գնացեք ու իջեցրեք հարկերը, թող լացի վրա էլ մնան: Ծիծաղն արդեն վտանգավոր է:

Ահա, ըստ երևույթին Արմեն Զատիկյանինը հենց այդ ծիծաղն է: Մարդն անցել է նզովքի ու լացի միջով և արդեն ծիծաղում է; բայց ո՞վ կարող է իջեցնել նրա վրա դրված ծանր հարկը, թեթևացնել ուղեղի և ուսերի բեռը: Ո՞վ և ինչպե՞ս…

Երբ Զավեն Շարաֆյանը դուրս եկավ խմբագրության շենքից, քիչ մնաց աչքերին չհավատար. առատ ձյուն էր եկել ու ճերմակով ծածկել ամեն ինչ՝ զարմանալիորեն փոխելով ծանոթ շրջապատը: Ասես բոլորովին ուրիշ քաղաք լիներ: Նույնիսկ Լենինի արձանն էր ուրիշ՝ ձնե իր հսկայական կեպիով ու Ջմեռ պապիի թավ բեղերով: Երեխաները ճիչ-աղաղակներով թավալվում էին ձյունների մեջ, ձնագնդիներ սարքում ու հալածում, հարվածում միմյանց: Համատարած այդ սպիտակ մաքրության մեջ, երեխաների անհոգ հրճվագին ձայների ներքո չափազանց անհեթեթ էին թվում թե ձախորդ գյուտարար Արմեն Զատիկյանի կիսախելագար մենախոսությունը և թե ահավոր գլխացավը, որ բռնել էր Զավեն Շարաֆյանին ու բաց չէր թողնում:

Նա բռով ձյուն վերցրեց հենց ոտքի տակից ու շփեց ճակատը: Բայց տաք էր ձյունը, հալվեց միանգամից ու երանությունը շատ կարճ տևեց: Նա նորից մի բուռ ձյուն վերցրեց, բայց մտածեց, որ դրանով գլխի ցավը միևնույն է չի անցնի և մտավ դեղատուն:

- Բարև ձեզ,- դիմեց նա ծեր, ակնոցը թելերով ականջներին կապած դեղագործին: - Ասել եք, գիտեմ, որ գլխացավի դեղ խմելը միամտություն է: Գիտեմ, որ պետք է գլխացավ հարուցող պատճառների դեմ պայքարել: Բայց քանի որ ինձ չի հաջողվում ինչպես հարկն է պայքարել այդ պատճառների դեմ, կամ գոնե խուսափել դրանցից, գլխացավի հաբեր տվեք, հա՞:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Դեղագործը ծիծաղեց:

- Տղա ջան,- ասաց նա,- բոլորովին չի երևում, որ դու իբրև թե փորձում ես խուսափել գլխացավանքից: Ինչքան ժամանակ է, որ ճանաչում եմ քեզ ու կարդում քո հոդվածները: Լրիվ հակառակը, դու քեզ, քո ձեռքով անընդհատ գլխացավանքների մեջ ես գցում: Էդ թերթում ուրիշ գրող չկա՞: Էդ թերություններ ուրիշ տեսնող չկա՞: Բա ոնց է, որ բոլորը ժողով-մողովների, մարդկանց ուրախ ու երջանիկ կյանքի, սոցիալիստական մրցության հաղթողների, փոխանցիկ դրոշների մասին են գրում, իսկ դու անպայման, ինչպես ասում են, մութ ու ստվերոտ կողմեր ես գտնում, անխիղճ ու անհոգի մարդկանց ես մերկացնում, թալանչիների ու խաբեբաների դեմ ես ելույթ ունենում, հանցագործների որջն ես մտնում: Քեզ ո՞վ էր ստիպում շուկա մտնել, Աղոյին ու Վաղոյին կպչել: Չգիտե՞ր, որ Դա պատրաստի գլխացավանքի բուն է:

- Գիտեի,- ժպտաց Զավեն Շարաֆյանը:

- Բա որ գիտեիր, ինչու՞ մտար:

- Մեկնումեկը պե՞տք է որ մտներ, հորեղբայր: Դուք էլ հո Նշան Իգիթյանը չեք: Ինչ որ գրել էի, ճիշտ չէ՞ր: Հարցը դա է:

- Մինչև հիմա ինչ գրել ես, բոլորը կարդացել եմ ու բոլորն էլ ճիշտ են,- գլխով արեց դեղագործը: - Իմ ասածն այն է, թե ինչո՞ւ ես զարմանում, որ գլուխդ ցավում է: Այդքանից հետո՞ էլ չցավա: Ի՞նչ տամ, պիրամիդոն ուզո՞ւմ ես:

- Ցիտրամոնն ավելի լավ չէ,- հարցրեց լրագրողը:

- Նայած գլուխ,- ծիծաղեց դեղագործը: Հետո թեքվեց վաճառասեղանի վրա ու ձեռքով մտերմաբար լրագրողին էլ հրավիրելով թեքվի ասաց. - երկուսից էլ կտամ, ընկեր Շարաֆյան…

Երկուսն ի՞նչ եմ անում,- հրաժարվեց Զավենը:

- Մի բան եմ ուզում քեզ խնդրել, տղա ջան, և քանի որ համոզված եմ, որ դրանից էլ է ցավելու գլուխդ, գլխացավի դեղը նախօրոք եմ տալիս: Իմ կողմից:

Զավեն Շարաֆյանին դուր էր գալիս դեղագործ ծերունու աշխույժ միտքն ու հումորը, դրա համար էլ հաճույքով զրույցի բռնվեց:

- Ի՞նչ հարց է, հորեղբայր: Բայց լավ կլինի, որ նախ դեղը տաք, հետո սկսեք:

Ծերունին գտավ, որ լրագրողի առաջարկն արդարացի է, փոքրիկ թղթի վրա դրած մի ղեղահաբ մատուցեց Զավենին և մի բաժակ թան, համոզելով, որ թանն ավելի է արագացնում դեղի ներգործությունը:

Սպասեց այնքան, մինչև որ լրագրողը խմի հաբը ու նոր միայն հարցրեց.

- Ի՞նչ կարծիք ունես քիմիական կոմբինատի մասին, տղա ջան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Քիմիական կոմբինատի,-վերահարցրեց լրագրողը,-փառահեղ կարծիք:

- Իսկ ի՞նչ գիտես կոմբինատի մասին: Մի նեղացիր, խնդրում եմ: Անմիջապես կասեմ, թե ինչու եմ տալիս այդ հարցը:

Զավենը ժպտաց, ցույց տալով, որ ընդունում է խաղը:

- Գիտեմ, որ նա մեր քաղաքի պարծանքն է, հանրապետության քիմիական արդյունաբերության ամենախոշոր ձեռնարկություններից մեկը: Գիտեմ, որ քաղաքը շատ է պարտական կոմբինատին քաղաք դառնալու համար: Որ բնակելի ամբողջ մի թաղամաս կոմբինատի միջոցներով է կառուցվել: Որ կոմբինատն է կառուցել մշակույթի պալատը, նոր հիվանդանոցի շենքը, բացել երկու դպրոց և երեք մանկապարտեզ- Եվ վերջապես գիտեմ, որ կոմբինատի դիրեկտորը բոլորի կողմից հարգված Գառնիկ Վարդանիչ Բադալյանն է: Այսքանն առայժմ բավակա՞ն է:

- Ոչ, բավական չէ,-գլուխը տարուբերեց ծերունին: - Իսկ եթե ես ավելացնեմ, որ քիմիական այդ կոմբինատը՝ իր բոլոր բարի գործերով ու առավելություններով հանդերձ մեր քաղաքի ու ոչ միայն քաղաքի, այլև ամբողջ շրջապատի դժբախտությունն է, ի՞նչ կասես:

- Շատ կզարմանամ,- իսկապես զարմացավ լրագրողը:

Դեղագործը քմծիծաղ տվեց:

- Չնեղանաս, իսկ ես ձեր կարճատեսության վրա եմ զարմանում: Համար չկա, որտեղ ուրախ-ուրախ չգրեք կոմբինատի տված օգուտների մասին: Լավ եք անում: Բայց տված վնասնե՞րին ինչու չեք նշում: Ով է հաշվել՝ կոմբինատի տված օգուտն է շատ թե վնաս: Հո թիթեռ չենք: Հո մի օր չենք ապրում: Բա վաղվա մասին մտածող չկա՞: Ինձ համար ինչ կա, ես իմ կյանքն ապրած մարդ եմ, բայց երբ երեխաներիս եմ նայում սիրտս մղկտում է, իսկ երբ թոռներիս եմ նայում՝ լացս է գալիս:

- Բայց ինչի՞ համար:

- Երկու տղաս ու աղջիկս այդ կոմբինատում են աշխատում, Զավեն ջան: Ջահել մարդիկ են,համարյա երեխաներ, բայց գլխներին արդեն մազ չկա, բուռ-բուռ թափվում է: Այդ մազերը ո՞ր օգուտներով կարելի է վերականգնել: Կոմբինատում աշխատող կանանցից շատերը կամ երեխա չեն ունենում, կամ էլ արատավոր են լինում ծնված երեխաները: Վնասները այսօրվա՞ հաշվին գրենք, թե վաղվա:

- Չե՞ք չափազանցում, հորեղբայր:

- Դուք եք չափազանցում, դուք՝ գրողներդ ու ժուռնալիստներդ: Հպարտ-հպարտ գրում եք՝ «Հայաստանը դարձնենք քիմիայի երկիր», «Քիմիան հրամայում է», «Քիմիային լայն ճանապարհ»: Իսկ որ այդ լայն ճանապարհը ուղիղ գերեզման է տանում ոչ ոք չի տեսնում կամ ձևացնում է, թե չի տեսնում…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Հորեղբայր,- ընդհատեց նրան Զավենը,- դուք էլ ինձ կներեք, բայց շատ հին ձևով եք մտածում: Հացահատիկի, բանջար- բոստանային կուլտուրաների բերքն այսօր այսքան բարձր կլինե՞ր առանց քիմիական պարարտանյութերի:

- Այսօ՞ր,- փնչաց դեղագործը,-իսկ վա՞ղը:

- Վաղն ի՞նչ…

- Ինչքա՞ն կարելի է թույն լցնել հողի մեջ: Դրա վերջն ի՞նչ է լինելու: Այդ թույնը որտե՞ղ է գնալու:

- Որտե՞ղ է գնալու- վնասատուներին է ոչնչացնում, քի՞չ չէ:

- Իսկ թույնը ինչպե՞ս է ընտրելու վնասատուն և օգտակարը: Նույնն է, թե մարդու ճակատին կանգնած ճանճը փախցնելու համար՝ կրակես մարդու ճակատին: Ու դուք հենց այդպես էլ անում եք…Մեր գետը հո տեսել ես, Զավեն, ամբողջ գյուղին այդ գետն է պահում: Գիշերը քթոցները տանում կախում էինք ջրի մեջ, իսկ առավոտյան գնում տեսնում, որ քթոցները լիքն են կարմրախայտ ձկներով: Իսկ հիմա թեկուզ դինամիտ պայթեցրու, մի հատ ձուկ կգտնե՞ս: Ի՞նչ եղան ձկները…

- Դա ինչ կապ ունի ձկների հետ,- հարցրեց լրագրողը, որովհետև իրոք չգիտեր:

- Իսկ որտե՞ղ են թափվում ձեր այդ փառաբանված կոմբինատի կեղտաջրերը, անձրևաջրերի ու առուների հետ որտեղ են հոսում դաշտերի քիմիական պարարտանյութերն ու թույնը, որն իբր միայն վնասատուներին պետք վերացնի,- չարացավ դեղագործը: - Գիտե՞ս թե առաջ ժողովուրդը ոնց էր պահում-պահպանում գետը, նույնիսկ չէին թողնում, որ արտաքնոց սարքեն գետի կողքին: Կամ Սևանը- շրջապատի բնակիչները Սևանի ջուրն էին խմում: Իսկ հիմա դե գնա խմի- Ռուսները մի լավ խոսք ունեն, ասում են՝ քո սեփական ջրհորի մեջ մի թքի: Իսկ մենք թքում ենք ու դեռ հպարտանում, որ ժամանակակից հզոր միջոցներով ենք թքում:

Զավեն Շարաֆյանի գլխի ցավն անցել էր կարծես, բայց հիմա էլ սիրտն էր տնքում մի տեսակ: Եվ նա մտածեց, որ սովից է, առավոտվանից դեռ ոչինչ չէր կերել: Եվ անմիջապես էլ առարկեց իրեն, սովն ի՞նչ կապ ունի, սրտնեղությունից է, որ չի կարողանում պատասխանել այդ զայրացած ծերուկին:

- Հորեղբայր,- այնուամենայնիվ ասաց նա,- այդ հարցերով մեծ ուղեղների տեր մարդիկ՝ ակադեմիկոսներ ու պրոֆեսորներ են զբաղվում: Նրանք չե՞ն հասկանում, ինչ է:

Դեղագործը փնչացրեց արհամարհանքով.

- Ինչո՞ւ չեն հասկանում, բայց ուզում են աչքի ընկնել, փառքի տիրանալ, անուն հանել, թե տեսեք-տեսեք, ինչքան արագ ենք զարգացնում գիտությունն ու արդյունաբերությունը: Թույնն արտադրում են առանց հակաթույնի մասին մտածելու: Բայց այդպես չի կարելի, չէ՞: Գյուղացին երբ ջուրը մարգերն է ուղղում, առուն այնքան է բացում, որ ջուրը հանկարծ սածիլները չքշի տանի ու հետն էլ չտանի հողը: Իսկ քո այդ գիտնականները միանգամից բաց

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

են թողնում ամբողջ ջուրը, առանց հետևելու, թե հեղեղն ինչ ավերածություններ է կատարում իր ճանապարհին:

Դուք էլ ոգևորում, թևեր եք տալիս նրանց:

- Ինչո՞վ ենք ոգևորում, հորեղբայր,- արդեն անզոր ծիծաղեց Զավենը:

- Ասեմ, ասեմ, հենց այս վերջին համարում ձեր Միհրան Գալստյանն ի՞նչ էր գրել; Սպասիր, սպասիր կարդամ: Նա վաճառասեղանի տակից հանեց «Լուսաբացի» համարը: - Դե լսիր. «Ամեն անգամ, երբ մի նոր ծխնելույզ է բարձրանում մեր քաղաքում և մխրճվում ամպերի մեջ, սիրտս խանդաղատանքով և օրինական հպարտությամբ է լցվում: Եվ ինչպես չհպարտանաս՝ տեսնելով, թե նորակառույց ցեմենտի գործարանի հզոր ծխնելույզներից ինչպես է ելնում ծուխը պալան-պալան և գնում եղբայրաբար խառնվելու քիմիական կոմբինատի ծխին, մեր մյուս ձեռնարկությունների արձակած ծխին իբրև արդյունաբերական առաջընթացի, նոր, բարեկեցիկ կյանքի խորհրդանիշ ու վկայություն»:

- Օֆ, այդ Միհրանի ճոռոմ լեզուն-- ծիծաղեց Զավենը:

- Լեզվի հերն անիծած,- բղավեց դեղագործը: - Բա մտածողությո՞ւնը: Միայն ապուշը կարող է հպարտանալ ծխով: Մեղուն որ մեղու է, գլուխն առնում, թողնում փախչում է ծխից: Բա մարդն այդքանը չի հասկանում: Տանդ ծխնելույզը որ մի օր չի քաշում, թունավորվում ես, հավար ես տալիս, լայն բացում ես դռներդ ու պատուհաններդ- Բա էս քաղաքը մեր տունը չի՞: Բա էս աշխարհը մեր տունը չի՞: Որ ծխով լցնում եք, ո՞ւր պիտի փախչեք գնաք : Քիմիան ոնց որ իմ ճակատին գրված լինի, Զավեն ջան, մեծ տղաս էլ Երևանի կաուչուկի գործարանում է աշխատում: Տունն էլ հենց գործարանի մոտ է: Մի գիշեր մնացի՝ խեղդվում էի, թողեցի փախա…

- Հորեղբայր,-ընդհատեց լրագրողը: - Ախր ինչ ուզում եք ասեք՝ առաջընթացը առանց դրանց չի լինի: Հիմա ինչ եք ասում՝ օդը մաքուր պահելու համար ոչնչացնենք շոգեքարշները, ավտոմեքենաները, գործարանները, ֆաբրիկաները: Առանց հացի, կոշիկի, հագուստի ապրե՞նք:

- Չէ,- ասաց դեղագործը,- բայց այդ բոլորի հետ նաև խելքով ապրենք, վաղվա մասին մտածենք, տղա ջան: Ոչ թե ծխի առատությամբ ուրախանանք, այլ մտածենք, թե ինչ անենք, որ պակասի ծուխը, որ մաքրենք ծուխը, չթողնենք, որ ծխի հետ մեր քիմիական կոմբինատի ծխնելույզից թույն թափվի էս սիրուն աշխարհի վրա: Տեսնո՞ւմ ես, թե ինչ դեղին ուխ է բարձրանում: Դա ծուխ չի, թույն է.. Մի անգամ կոմբինատ գնա, տես թե ոնց են դեղնել ու չորանում դիմացի անտառները, տես թե ոնց է անմիջապես սևանում նոր ծլած խոտը: Բա դու մե՞ղք չես, Զավեն բա իմ թոռնիկները մե՞ղք չեն, որ այդ ծուխն են շնչում: Բա մարդ իր աչքով տեսնի, թե ինչպես են թունավորվում իր երեխաները և ուրախանա՞ դրանով:

Ծեր դեղագործի ծնոտը մանրիկ դողում էր, քիչ էր մնում լաց լինի, և Զավեն Շարաֆյանը չգիտեր ինչպես օգնել և մխիթարել նրան:

- Բայց ի՞նչ կարելի է անել, հորեղբայր,- հարցրեց նա: - Անձամբ ես ի՞նչ կարող եմ անել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ասեմ,- անմիջապես աշխուժացավ ծերունին: - Ասեմ դու շատ բան կարող ես անել- Եվ քո ընկերները: Օրինակ օգնիր ինձ, որ ինչ ասացի քեզ, տպագրենք թերթում: Ուզում ես՝ դու գրիր, ուզում ես՝ իմ ստորագրությամբ տպագրիր: Ժամանակին ես բժշկական ինստիտուտ եմ ավարտել, սանիտարական բաժինը և երկար տարիներ սանիտարական բժիշկ եմ աշխատել: Այնպես որ այդ հարցերով իրավունք ունեմ զբաղվելու և պարտավոր եմ զբաղվել: Հետո հարկավոր է ժողովրդին հասկացնել, վախեցնել, բացատրել վտանգը և հարց բարձրացնել, որ այսուհետև քաղաքի մեջ գործարաններ չկառուցվեն և հատկապես մեր քաղաքի նման առողջարանային վայրում, և հատկապես քիմիական գործարաններ: Գոնե թույլ չպետք է տանք, որ մեր կոմբինատի նոր մասնաշենքեր կառուցեն…Ինչո՞ւ ենք ինքնասպան լինում և սպանում մեր զավակներին:

-Պետք է մտածել,- մտահոգ ասաց Զավեն Շարաֆյանը:

-Եվ ամենահիմնականը,- ոգևորվեց ծերունին: -Ես հենց այնպես չէի ասում, որ ամեն թույն իր հակաթույնն ունի: Կենտրոնական մամուլում կարդացի, որ քիմիական գործարանների թունավոր ծուխը մաքրելու համար հատուկ զտիչներ են արտադրվում: Չդիմացա, զանգեցի Գառնիկ Բադալյանին ու ասացի այդ մասին: Ասացի ինչու այդ զտիչներից չեք գնում, բա մեղք չի ժողովուրդը:

- Հետո՞, Գառնիկ Վարդանիչն ի՞նչ ասաց.

- Ասաց շատ թանկ արժեն: Մենք այդքան միջոցներ չունենք: Պատկերացնո՞ւմ ես:

- Ի՞նչ ասեմ,- հառաչեց լրագրողը: - Մտածել է պետք: Նախ կտպագրեն թե չէ: Եվ վերջապես ինչ կասեն տպագրելուց հետո- Մտածել է պետք, հորեղբայր…

- Ուրեմն առանց գլխացավի դեղի չի լինի,- պահարանից երկու տուփ հանելով, տղային մեկնեց ծերունին: - Վերցրու:

- Ինչ արժեն,- հարցրեց լրագրողը:

- Ոչ մի կոպեկ,- կտրուկ ասաց դեղագործը: - Գլխացավը ես եմ տալիս, ուրեմն գլխացավի դեղն էլ ես պետք է տամ:

* * *

Խմբագրությունն ասես դատարկ լիներ: Այնինչ պակասում էր միայն խմբագիրը: Մինչ այդ Զավենը երբեք չէր մտածել, թե ինչպիսի տեղ է գրավում իր կյանքում Մկրտիչ Զուլոյանը: Իսկ հիմա կարոտում էր անգամ նրա հազին, խռպոտած ձայնին, կծու դիտողություններին և օրերն էր հաշվում, թե երբ պիտի վերադառնա: Խմբագրության կյանքն ընթանում էր ասես թե սովորականի պես, թռուցկաժողովներ էին լինում, թերթի հաջորդ համարի մակետն էր կազմվում, հանձնարարություններ էին տրվում, խմբագրվում էին նյութերը, բայց Զավեն Շարաֆյանը հո լավ էր տեսնում, որ այդ բոլորն իրոք որ «ասես թե» է, նման է, բայց այն չէ: Բացակայում էր թերթի մարտական ոգին, նյութերի մեջ «աղ» չկար, համ ու հոտ չկար, ինչպես

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հերթական հեռախոսային տեսության մեջ ընդգծեց «Լուսաբացի» ամենա- մոլեռանդ ընթերցող, քիմիական կոմբինատի դիրեկտոր Գառնիկ Բադալյանը: Նա հենց այդպես ուղղակի հարցրեց Միհրան Գալստյանին.

- Ձեզ ի՞նչ է պատահել…

- Խմբագիրն այստեղ չէ,- ասաց Միհրանը:

- Հետո ինչ,- զարմացավ Գառնիկ Բադալյանը: - Եթե խմբագիրը բացակայում է, դուք չե՞ք կարող ատամով, կարգին թերթ հրատարակել: Թվում էր, թե հակառակը պետք է լիներ: Երբ, օրինակ, ես տեղում չեմ լինում, իմ աշխատողներն ամեն ինչ անում են, որպեսզի իմ բացակայությունն աննկատ մնա: Ավելի ուշադիր ու սրտանց են աշխատում :

Միհրան Գալստյանը պատասխանեց այդ հարցին, լսափողը ցած դնելուց հետո միայն:

- Հետաքրքիր մարդ է,- ասաց նա Զավենին: - Ասում է, որ խմբագիրը բացակայում է, դուք չ՞եք կարող ատամով թերթ հրատարակել:

- Իսկապես,- իր հերթին խոցված հետաքրքրվեց Զավենը: - Չենք կարող, ինչ է: Միհրան Գալստյանը ծիծաղեց.

-Փորձել եմ: Մի անգամ, երբ փոխարինում էի, մի այնպիսի համար պատրաստեցի, որ- Եկավ, կարդաց ու քմծիծաղ տվեց: Ասաց՝ այ տղա, բա որ էսքան շնորհք ունես, ինչո՞ւ միայն իմ բացակայության ժամանակ ես ցուցադրում: Այնպես որ, գործ չունես: Ու մի բան էլ ասեմ, Զավեն, այսքան ժամանակ չեմ տեսել, որ միջակ կամ շատ թույլ թերթ տալու համար ղեկավարներից մեկնումեկը խոսի ինձ վրա: Երբեք: Այդպիսի թերթը նրանց էլ է ձեռնտու: Որքան քիչ քննադատություն, այնքան քիչ հոգս: Որքան քիչ ատամ, այնքան քիչ ատամնացավ: Լավ գտա, չէ՞: Քանի որ փոխարինում եմ խմբագրին, Մարոյին ասեմ, թող իր նոթատետրում գրի:

- Է, հետո՞,- գլուխն օրորեց Զավենը: - Մինչև ե՞րբ..

- Մինչև խմբագիրը գա,- ժպտաց Միհրան Գալստյանը: - Թող ինքը ստորագրի, ինքն էլ պատասխան տա: Ես աչքի ընկնել չեմ ուզում:

Թող խմբագիրը գա- Ուր էր, թե գար; Թե հայտնվեր հանկարծ: Հատկապես հիմա: Ինչ լավ կլիներ, եթե Միհրան Գալստյանի փոխարեն հիմա նա քայլեր իր կողքով, մտածում էր Զավեն Շարաֆյանը քաղաքային կոմիտեի շենքի մարմարե աստիճաններով բարձրանալով:

Երբ նրանք գրեթե մութ միջանցքից քաղկոմի առաջին քարտուղարի ընդարձակ ընդունարանը մտան, դիմացի պատուհանից ընկնող արևի ուժգին լույսի տակ Զավենը կկոցած աչքերով մի պահ չտարբերեց ընդունարանում գտնվող մարդկանց դեմքերը,բայց քանի որ նկատել էր ու համոզված էր, որ մարդիկ կային, բարևեց քաղաքավարությամբ,ընդհանուր կարգով: Եվ շատ զարմացավ,որ չպատասխանեցին, իր բարևին: Ընդհակառակը, տհաճ մի լռություն տիրեց, և Զավեն Շարաֆյանը նոր միայն տեսավ նրանց, ովքեր կանգնած էին մի կողմ, պատի տակ, և նոր միայն հասկացավ: թե ինչու

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

չարժանացավ նրանց բարևին: Անկյունում, միակ աթոռին նստած էր միլիցիայի կապիտան Սիմոն Հալաբյանը, իսկ նրա շուրջը խմբված էին շուկայի խորտկարանի վարիչ Կորյուն Մխեյանը, Բերսաբեն, նրա ամուսինը՝ բուֆետապան Սերոբը, պարենային խանութի վարիչ Եփրեմ Ծատինյանը, էլի ինչ-որ մարդիկ:

Միհրան Գալստյանը բացեց առաջին քարտուղարի կաշեպատ դուռը և ներս մտավ, իսկ Զավեն Շարաֆյանը կանգնած մնաց ընդունարանում՝ բացահայտ թշնամական հայացքների տակ; Նրա սիրտը տրոփում էր ուժգին ու ցավեցնելով արձագանքում քունքերի մեջ: Ով ինչ ուզում է ասի, միշտ էլ ահավոր տհաճ բան է, երբ հանդիպում ես այն մարդկանց, որոնց դեմ ֆելիետոն ես գրել: Երբ նստած ես թղթի առջև՝ ուրիշ է: Իսկ երբ այ այսպես կանգնում են դիմացդ… Հազար անգամ էլ իրավացի լինես և բացարձակ ճշմարտություն լինի գրածդ, միևնույն է, անհարմարության զգացումը պատում է քեզ: Ե՞րբ պիտի վերջապես ներս կանչեն, քննարկեն, վերջացնեն այս պատմությունը:

- Երես էլ ունի, եկել, կանգնել է անամոթը,- ատելությամբ շշնջաց Բերսաբեն:

Միլիցիայի կապիտանը սաստեց նրան,

- Պրովոկացիայի առիթ մի տուր,- ասաց նա:

- Ի՞նչ, ի՞նչ,- չհասկացավ Բերսաբեն:

Զավեն Շարաֆյանը այլևս չլսեց, թե ինչ բացատրություն տվեց Սիմոն Հալաբյանը, որովհետև կաշեպատ դուռը բացվեց և հավանաբար հրահանգիչներից մեկը ներս հրավիրեց լրագրողին:

- Բարև ձեզ,- ասաց Զավենը:

Օրն էր այդպիսին, թե ինչ, բայց նրա բարևին այստեղ էլ չպատասխանեցին:

- Նստեք,- գլխով արեց քաղկոմի առաջին քարտուղար Ղուկաս Լալայանը:

Զավենը շուրջը նայեց: Միակ աթոռը, որ զբաղված չէր, դռան կողմը, երկար սեղանի ծայրին էր դրված: Նա նստեց անվճռականորեն, հետն էլ անհանգստացած մտածելով, թե որտեղ պիտի նստեն ընդունարանում սպասողները,երբ ներս հրավիրեն նաև նրանց:

- Զեկուցիր, Իգիթյան,- ձայն տվեց Ղուկաս Լալայանը:

Ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչը ոտքի կանգնեց:

- Լսում եմ,- ասաց նա: - Ընկերներ, ինձ հանձնարարված էր ճշտել, թե ինչ աղբյուրների հիման վրա է Զավեն Շարաֆյանը գրել իր «Անմաքուր ձեռքեր» ֆելիետոնը, որը տպագրվել է քաղաքային «Լուսաբաց» թերթում: Ես հեղինակին առաջարկեցի իմ հարցաթերթիկի հիման վրա մանրամասն զեկուցագիր ներկայացնել քաղաքային կոմիտե: Այգ զեկուցագիրը հիմա իմ ձեռքին է;

- Գուցե կարդա՞ք,- հնչեց հանկարծ բյուրոյի անդամ Գառնիկ Բադալյանի ձայնը: - Շատ հետաքրքիր է, թե ինչ զեկուցագիր է դա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավեն Շարաֆյանը բարձրացրեց գլուխը, նայեց քիմիական կոմբինատի դիրեկտորին, ուրախացավ, որ գոնե իրեն համակրող մի մարդ կա բյուրոյի անդամների թվում և ամաչեց, որ հիմա նա լսելու է իր զեկուցագիրը:

- Լսում եմ,- գլխով արեց Նշան Իգիթյանը, հետո դարձավ առաջին քարտուղարին, ու թեև Ղուկաս Լալայանը ոչինչ չասաց,կրկնեց նորից,- լսում եմ:

Նա դրեց ակնոցը, բացեց ձեռքին բռնած գալարաձև թուղթը և կարդաց.

- Ձեր հարցերին պատասխանում եմ հետևյալը: Նյութը նամակի ձևով, ծրարի մեջ, որի վրա նամականիշ չկար, խմբագրություն բերեց միջահասակ, գիրության հակված, շագանակագույն կոստյումով և սև, կիսամաշ կոշիկներով մի մարդ, որը բարակ բեղեր ուներ, սև, խորն ընկած աչքեր և կզակին նույն գույնի խալ: Մարդը լայնեզր գլխարկ ուներ հագին և երբ հանեց գլխարկը, պարզվեց, որ նա լրիվ ճաղատ է, եթե հաշվի չառնենք ականջների վրա ընկած մի քանի ցանցառ մազերը…

Գառնիկ Բադալյանը փռթկաց:

- Այդ ինչ ես կարդում, Իգիթյան,- հոնքերը կիտեց Ղուկաս Լալայանը:

- Զեկուցագիրն է,- շփոթված ակնոցը հանեց ու կրկին քթին դրեց ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչը: - Զավեն Շարաֆյանն է գրել «Ձեր այն հարցին, թե եթե մի անգամ էլ տեսնես կճանաչե՞ս արդյոք, պատասխանում եմ՝ կճանաչեմ, եթե տեսնեմ նույն շագանակագույն կոստյումով, սև, կիսամաշ կոշիկներով…»:

Գառնիկ Բադալյանը անզուսպ քրքջում էր, և քաղկոմի առաջին քարտուղարը բռունցքը թափով սեղանին խփեց:

- Բավական է,- բղավեց նա զեկուցողի վրա: - Քեզ ծաղրում են, ծաղրուծանակի են ենթարկում, իսկ դու գլխի չե՞ս ընկնում, Իգիթյան:

- Ով է ծաղրում,- սրտանց զարմացավ ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչը:

Բայց Ղուկաս Լալայանը այլևս նրա կողմը չէր նայում: Գլուխը թեքած դեպի քաղկոմի երկրորդ քարտուղար Գրետա Սուրենյանը, որը շշուկով արագ-արագ ինչ-որ բան էր ասում նրան, քաղկոմի առաջին քարտուղարը սևեռուն հայացքով դիտում էր երիտասարդ լրագրողին, վրդովվում ու զարմանում նրա անպատկառությամբ: Հետո հավանաբար չիմանալով առայժմ ինչ ասել և ինչ անել Ղուկաս Լալայանը լրագրողին տվեց այն հարցը, այն միակ հարցը, որը սովորաբար հունից միանգամից հանում, ընկճում է քաղկոմի բյուրոյում հայտնված մարդկանց.

- Լսիր, դու գիտե՞ս, թե որտեղ ես գտնվում: Չէ, դու գիտե՞ս, թե որտեղ ես գտնվում:

Զավեն Շարաֆյանը լուռ էր:

- Լսիր, քո կարծիքով դա զեկուցագի՞ր է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես կետ առ կետ պատասխանել եմ ինձ տրված հարցերին,- ասաց Զավենը:

- Եվ այդ խորհրդավոր անծանոթը ձեր միա՞կ թղթակիցն էր,- չդիմացավ, հարցրեց Գրետա Սուրենյանը:

- Ոչ,- ասաց լրագրողը: - Ես մյուսներին հարկ չհամարեցի նշել, որովհետև նրանց մասին գրված է ֆելիետոնում: Եվ գրված է նաև, որ ես ավելի քան մեկ ամիս շուկայում եմ անցկացրել՝ տեղի բարքերը ուսումնասիրելու համար:

Յուղի-պանրի գործարանի նախկին դիրեկտոր, իսկ Մկրտիչ Զուլոյանի նշանավոր ֆելիետոնից հետո քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ դարձած Սահակ Միրզոյանը, որն ամեն առիթ օգտագործում էր թերթից իր վրեժը լուծելու համար, քմծիծաղ տվեց.

- Երևում է՝ շուկան շատ է դուր եկել մեր ժուռնալիստ ընկերոջը, որ մի ամսից ավելի նստել, մնացել է այնտեղ:

Զավեն Շարաֆյանը կարմրատակեց.

- Եթե դուք, ընկեր Միրզոյան, կատարեիք ձեր պարտականությունները և իբրև շուկայի աշխատանքները հսկող ղեկավար ամիսը գոնե մի օր լինեիք շուկայում, հարկ չէր զգացվի, որպեսզի լրագրողները ամիսներ անցկացնեին այնտեղ:

- Պահ,- կարկամեց նախագահի տեղակալը: - Տեսա՞ք: Չէ, դուք տեսա՞ք- Իսկույն երևում է, որ Մկրտիչ Զուլոյանի կադրն է:

- Դա մեծ պատիվ է ինձ համար,- ասաց Զավեն Շարաֆյանը:

Աղմուկ բարձրացավ, բոլորը խոսում էին միաժամանակ, այդ պատճառով էլ լրագրողը ոչինչ չէր հասկանում, նա միայն որսում էր կանաչ մահուդով ծածկված երկար սեղանի շուրջը գտնվող մարդկանց հայացքները, որոնք շատ գրգռված և անբարյացակամ էին, և զարմանում էր, թե ինչն է այդպես զայրացրել նրանց, քանի որ Գառնիկ Բադալյանից և Ղուկաս Լալայանից բացի, ոչ մեկը չկռահեց, թե ինչ է նշանակում նրա զեկուցագիրը: Չհասկացան նույնիսկ այն բանից հետո, երբ քաղկոմի առաջին քարտուղարն ասաց, թե դա ծաղր է ու ծանակ ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչի հասցեին: Բայց ինչո՞ւ միայն նրա, ինչո՞ւ միայն այդ խեղճուկրակ նախկին զինվորականի հասցեին: Միթե քաղաքի կյանքը ղեկավարող այս մարդկանց մեջ չկա մեկը, որ հասկանա ու հարցնի, թե այս ի՞նչ եք անում, ինչո՞վ եք զբաղված, ինչ հարցաթերթիկի, ինչ զեկուցագրի մասին է խոսքը, երբ ֆելիետոն է գրված ձեր առջև: Մի՞թե հիմա ամենակարևորն այն է, թե ով է թղթակցի ականջին հուշել այդ ֆելիետոնի թեման: Մի՞թե կարևորը բերված փաստերը չեն:

- Գուցե Միհրան Գալստյանը պատմի մեզ, թե ինչպես է ծնվել այդ ֆելիետոնը,- երբ աղմուկը փոքր ինչ լռեց, հարցրեց Գրետա Սուրենյանը: Հարցրեց այնպես, որ միանգամից պարզ դարձավ, նա մինչ բյուրոն արդեն տվել է այդ հարցը թերթի պատասխանատու քարտուղարին և հրաշալի գիտի պատասխանը: Որովհետև հարցրեց ու առանց պատասխանի սպասելու,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

տարուբերելով գլուխը, քմծիծաղով նայեց բյուրոյի անդամներին: Միհրան Գալստյանը բարձրացավ տեղից:

- Ես այդ ֆելիետոնից տեղեկություն չունեմ,- խուլ ձայնով ասաց նա: -Ինչպես թե,- իբր սաստիկ զարմացավ երկրորդ քարտուղարը: - Լավա՞ծ բան է, որ թերթի պատասխանատու քարտուղարը չիմանա, թե ինչ է տպագրվում իր թերթում:

Նա այնքան սաստիկ զարմացավ, որ Միհրան Գալստյանն էլ ակամա իր հերթին զարմացած նայեց երկրորդ քարտուղարին, հետո երևի ինչ-որ պայմանավորվածություն հիշեց, որովհետև ավելացրեց շտապով.

- Դա առաջին դեպքն է: Համարը լրիվ կապված ու սրբագրված էր, երբ ես տպարանից հեռացա: Իմ գնալուց հետո են նյութերը .փոխել:

- Ո՞վ,- հարցրեց Ղուկաս Լալայանը:

- Տպարանում մնացին Զավեն Շարաֆյանը և խմբագիրը:

- Ուրեմն ինչ ուզենան, կանեն, էլի,- փնչացրեց քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալը:

Քաղկոմի առաջին քարտուղարը կրկին սևեռուն հայացքով ֆելիետոնի հեղինակին նայեց:

- Դե հիմա դու պատմիր, թե ինչպես է եղել,- ասաց նա: Դե հիմա դու պատմիր, Շարաֆյան, թե ինչպես է լինում, որ նյութ ես տեղադրում թերթում՝ խմբագրության կոլեկտիվից թաքուն: Թերթը քո սեփակա՞նն է, ընդհատակյա՞ է, թե ինչ է…

Միլբաժնի պետը, որը կապիտանի ուսադիրներով մի երիտասարդ էր, ժամանակից շուտ ճերմակած մազերով, միջամտեց կամացուկ.

- Դե հո առանց խմբագրի գիտության չի եղել:

Գրետա Սուրենյանը խեթ-խեթ նայեց նրան:

- Ի՞նչ իմանաս, հիմա խմբագիրն այստեղ չէ, որ հարցնենք: Թող ինքը պատասխան տա:

- Բա ի՞նչ, գրելը հե՞շտ է,- կրկին փնչացրեց Սահակ Միրզոյանը: - Հիմա թող պատասխան տան:

- Լսում ենք, ընկեր Շարաֆյան,- ձայնը բարձրացրեց քաղկոմի առաջին քարտուղարը: - Բայց հանկարծ մտքովդ չանցնի, որ մեզ էլ կարող ես համոզել, թե քեզանից ու խմբագրից անկախ ֆելիետոնը տպագրել է միջահասակ, շագանակագույն կոստյումով մի ուրվական…

- Որը շրջում է Եվրոպայում…- կուսդպրոցը հիշեց քաղխորհրդի նախագահի տեղակալը:

Ծիծաղ բարձրացավ: Եվ բոլորից ուժգին ծիծաղում էր Սահակ Միրզոյանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Քիմիական կոմբինատի դիրեկտոր Գառնիկ Բադալյանը, որն ասես այդ բոլորին անհաղորդ իր «Ավրորան» էր ծխում, բարձրացրեց կարճ խուզած, ալեխառն մազերով գլուխն ու հարցրեց.

- Ես չհասկացա, մենք այսօր ֆելիետո՞նն ենք քննում, թե Զավեն Շարաֆյանի անձնական գործը: Որոշման նախագծում պարզ գրված է, որ քննարկման է դրվում ֆելիետոնը: Ուրեմն ի՞նչ միտք ունի պտտվել հարցի շուրջը, երբ հարցի մեջ խորանալ է պետք: Ֆելիետոնը կարդալուց հետո ես առաջիններից մեկն եմ զանգահարել Շարաֆյանին և շնորհակալություն հայտնել փայլուն ելույթի համար: Եվ այստեղ նույնպես, քաղաքային կոմիտեի բյուրոյի նիստում ուզում եմ կրկնել, որ ֆելիետոնը գրված է սուր, մարտական դիրքերից և համարձակորեն վեր է հանում այն ամբողջ տիղմը. որ տարիներով կուտակվել է շուկայում և գարշահոտություն է տարածում: Շուկան վերածվել է հանցագործների որջի, որտեղ տեր ու տնօրեն են սպեկուլյանտները, գողերը, դրամաշորթները: Ինչպես ֆելիետոնում է բացահայտված, ընդամենը մի ընտանիք քաղցկեղի նման ճյուղավորումները տարածած, իր բուռն է հավաքել ամբողջ առևտուրը, չի թողնում, որ հողի աշխատավորի ստեղծած բարիքները շուկա հասնեն, հափշտակում է ճանապարհին և իր գներն է թելադրում ու պարտադրում քաղաքի բնակիչներին, բանվորությանը: Եվ այդ ամենը շուկայի ղեկավարության և առևտրի վարչության աչքի առաջ: Եվ այդ ամենը միլիցիայի տեղամասային տեսուչ Սիմոն Հալաբյանի հովանավորության ներքո: Քաղխորհուրդն ու քաղաքային կոմիտեն չգիտե՞ն այդ մասին: Չգիտե՞ն, որ Վաղարշակ և Աղաբեկ Տիտանյանները, խենթի կեղծ վկայականներով զինված, ահաբեկում են, տեռորի են ենթարկում բոլոր նրանց, ովքեր փորձում են մտնել շուկա, բացահայտել հանցագործ խմբի գաղտնիքները: Պատահաբա՞ր զոհվեց մեր գործարանի հիանալի բանվոր, ստուգող հանձնաժողովի նախագահ Աշոտ Բարսեղյանը, թե նույն Աղաբեկ և Վաղարշակ Տիտանյանները սպանեցին նրան, դա դատախազությունը կպարզի, դա դատախազության գործն է: Բայց մնացածը հո մեզ է վերաբերում:

Եվ այսօր լրագրող Զավեն Շարաֆյանին շնորհակալություն հայտնելու փոխարեն, նրա մատնանշած, սկուտեղի մեջ մեզ մատուցած հանցագործների և նրանց հովանավորողների հարցը ըստ էության քննելու փոխարեն՝ մենք նրա՞ հարցն ենք քննում: Հարցաթերթիկ եք ներկայացնում նրան, բացատրություն եք պահանջում: Միայն այն պատճառով, որ խմբագրության որոշ աշխատողներ տեղյակ չե՞ն եղել ֆելիետոնի մասին: Իսկ նույն այդ փաստն ինչի՞ մասին է խոսում, ընկերներ, չի խոսում այն մասին, որ խմբագրությունում ևս բարվոք չէ վիճակը, որ խմբագիրը և հեղինակը վստահ չեն եղել, թե խմբագրական գաղտնիքը նույն շուկայի մարդկանց ականջին չի հասնի և ֆելիետոնի հրապարակումը չի կանխվի նրանց հովանավորների միջամտությամբ: Ինչպես ցավոք սրտի երբեմն լինում է:

Քաղկոմի առաջին քարտուղարը ընդոստ բարձրացավ աթոռից.

- Դուք չափն անցնում եք, ընկեր Բադալյան,- ատամների արանքից շշնջաց նա: - Մենք կոմունիստներ ենք և պարտավոր ենք պատասխան տալ մեր արտասանած յուրաքանչյուր խոսքի համար: Այդ ի՞նչ ակնարկներ եք անում: Այդ ի՞նչ հովանավորների մասին է խոսքը:

- Ես այդ տապավորությունը ստացա,- ժպտաց կոմբինատի դիրեկտորը,- որովհետև այստեղ ոչ թե ֆելիետոնի բերված փաստերն են քննության դրվում, այլ հեղինակի հարցը: Մի՞թե ես

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

սխալ եմ: Մինչև հիմա մենք ինչի՞ մասին ենք խոսում: Եվ ինչու՞ է ֆելիետոնի հեղինակը նստած մեղադրյալի աթոռին:

-Սա դատարան չէ, ընկեր Բադալյան,- ուսերը բարձրացրեց Գրետա Սուրենյանը:

- Սա դատարան է, ընկեր Սուրենյան, և մեզ համար բարձրագույն դատարան է: Եվ ես հարցնում եմ ձեզ ինչո՞ւ թերթի ելույթը ըստ էության չի քննվում: Ինչո՞ւ է քննվում հեղինակի անձնական հարցը: Մի՞թե այդքան էական է, թե ով է նրան առաջարկել ձեռքը վերցնելու գրիչը:

Քաղկոմի առաջին քարտուղարը ժպտաց որպես մի մարդ, որը ուր որ է անակնկալ է մատուցելու և հիմա պարզապես երկարաձգում է հաճույքը:

- Խոսիր, Պողոսյան,- գլխով արեց նա պատի տակ նստած մարդուն, որն առանց ուսադիրների զինվորական բաճկոն ուներ հագին և գալիֆե անդրավարտիք, որի նեղ փողքերը խրված էին երկարաճիտ, սև ներկից փայլող կոշիկների մեջ:

Ղուկաս Լալայանի հայացքի ուղղությամբ Զավեն Շարաֆյանը ևս նայեց այն մարդուն, որին քաղկոմի առաջին քարտուղարը Պողոսյան անվանեց և քիչ մնաց բացականչեր զարմանքից, տեսնելով, որ նրա կողքին գլխահակ նստած է գյուղատնտեսական տեխնիկումի դիրեկտոր Կայծակ Չոփուրյանը: Այ քեզ բան, ինչպես է, որ մինչև հիմա չէր նկատել: Ի՞նչ գործ ունի այստեղ Կայծակ Չոփուրյանը: Նա ինչու է եկել:

Առանց ուսադիրների զինվորական համազգեստով մարդը բարձրացավ տեղից, բացեց կաշվե թղթապանակը և կարդաց՝ մատը սահեցնելով տողերի վրայով:

- Հարգելի բյուրոյի անդամներ, հարգելի ընկերներ, բյուրոյի հանձնարարությամբ ստեղծված հանձնաժողովը ուսումնասիրել է այն բոլոր աղբյուրները, որոնք հիմք են ծառայել լրագրող Զավեն Շարաֆյանի համար՝ «Անմաքուր ձեռքեր» ֆելիետոնը գրելու: Հանձնաժողովը եկավ այն եզրակացության, որ խմբագրությունը ոչ մի նամակ էլ չի ստացել այն թղթակցից, որի արտաքինը մանրամասն նկարագրում է Զավեն Շարաֆյանը իր զեկուցագրի մեջ: Մեր քաղաքում այդպիսի մարդ չկա:

Գառնիկ Բադալյանը չդիմացավ ու ծիծաղեց նորից: Զեկուցողը գլուխը բարձրացրեց թղթից ու նրան նայեց նախատինքով:

- Ձուր եք ծիծաղում, ընկեր Բադալյան, մանրամասն ստուգել ենք: Չկա: Սա մեկ: Երկրորդը: Զավեն Շարաֆյանին դրդել է գրել նրա վարձակալը՝ վաղամեռիկ Աշոտ Բարսեղյանի կին Ալվարդ Բարսեղյանը, որի հետ ֆելիետոնի հեղինակը բավականին ինտիմ կապերի մեջ է:

Զավեն Շարաֆյանը վեր թռավ տեղից՝ օձից խայթվածի պես:

- Դա՞ ինչ զրպարտություն է,- բղավեց նա միանգամից չորացած կոկորդով: - Ինչպե՞ս չեք ամաչում: Դուք նույնիսկ այդ բառը չեք կարողանամ արտասանել… Ուրեմն չեք էլ հասկանում , թե ինչ եք ասում: Ի՞նչ կապեր, ի՞նչ կապեր- նա ազնիվ, պատկառելի տարիքի կին է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Լրագրողից ձախ ու աջ, երկար սեղանի ծայրի աթոռներին հրահանգիչներ էին նստած: Զավենը կյանքում առաջին անգամ էր ներկա լինում քաղկոմի բյուրոյի նիստի և չգիտեր, տեղեկություն չուներ, որ այդ հրահանգիչները ներկա են միայն այն նպատակով, որպեսզի զսպեն «մեղադրյալի» աթոռին հուզմունքից վեր-վեր թռչող մարդկանց: Ահա թե ինչու նա զարմացած մեկ ձախ նայեց, մեկ աջ, երբ երկու կողմերից բռնեցին նրա ձեռքերը և ստիպեցին նստել, հետն էլ հորդորելով.

- Նստիր:

- Զսպիր քեզ:

- Ոչ մի խոսք, հասկանո՞ւմ ես:

- Երբ որ քեզ ձայն տան, կպատասխանես:

Բայց Զավեն Շարաֆյանը կյանքում առաջին անգամ էր ներկա քաղկոմի բյուրոյի նիստի, ու չէր հանգստանում և միաժամանակ չէր հասկանում, թե ինչ են ուզում իրենից սեղանի ծայրի աջ ու ձախ կողմերում նստած մարդիկ: Այդ էր պատճառը, որ նորից ընդոստ բարձրացավ տեղից ու բղավեց՝ թափահարելով ձեռքերը.

- Ես ձեզ դատի կտամ, դա լկտի, լպիրշ զրպարտություն է, դա ստորություն է: Բա դուք ձեր տարիքից չե՞ք ամաչում:

Երկու կողմից կրկին հարձակվեցին նրա վրա, սաստեցին պարզ հնչող շշուկով.

- Վերջ տուր, սուս:

- Չափդ ճանաչիր, դու քաղկոմի բյուրոյում ես:

- Նստիր, նստիր, ասում եմ:

- Լռիր, էլի, այ տղա, համբերությունից մի հանիր մարդկանց:

Քաղկոմի երկրորդ քարտուղար Գրետա Սուրենյանը կրկին ինչ-որ բան շշնջաց առաջին քարտուղարի ականջին, և Ղուկաս Լալայանը առաջ թեքվեց սեղանի վրա:

- Շարունակիր, Պողոսյան:

- Ճշմարտության դեմ չմեղանչելու համար պետք է ասեմ, -մատը տողերի վրայով տարավ նախկին զինվորականը,- չնայած Ալվարդ Բարսեղյանի հոր… հոր- հոր… Էս ի՞նչ ես գրել, այ մարդ,- ձայնը իջեցնելով, սրտնեղած դիմեց նա գլխահակ նստած Կայծակ Չոփուրյանին:

-…դորներին,- առանց գլուխը բարձրացնելու փսփսաց Կայծակ Չոփուրյանը… …դորներին, հորդորներին…

Երիտասարդ միլպետը փռթկաց և երկու ձեռքով ծածկեց դեմքը: Իսկ Գառնիկ Բադալյանը ասաց բացահայտ հեգնանքով.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Կարդա, Պողոսյան, կարդա, լավ էլ գրել է, էլի… ի՞նչ ես ուզում:

Պողոսյանը մատը ետ տարավ տողի վրայով, նորից կարդաց և ի վերջո հաղթահարեց բառը:

- -Չնայած Ալվարդ Բարսեղյանի հորդորներին, Զավեն Շարաֆյանը սկզբում հակված չի եղել նյութ տպագրել նրա ամուսնու նկատմամբ իբր թե մահափորձ կատարած մարդկանց մասին: Այդ է վկայում այն փաստը, որ նա շուկայում մոտենում է միլիցիայի տեղամասային տեսուչ Սիմոն Հալաբյանին և փորձում է հող նախապատրաստել Աղաբեկ և Վաղարշակ Տիտանյանների հետ բանա… բանա… կցությունների մեջ մտնելու համար:

- Ե՞ս,- ապշած տեղից վեր ցատկեց լրագրողը:

Եվ ամեն ինչ կրկնվեց նույնությամբ: Զավեն Շարաֆյանը իրեն կորցրած, վիրավորական ինչ-որ բառեր էր բղավում, մինչ հրահանգիչները խնդրելով, սաստելով, սպառնալով նրան ստիպում էին հանգիստ նստել տեղում և չխանգարել զեկուցողին:

- Այդ փաստը հաստատում են Բերսաբե Լուսինյանը, որն անձամբ իր ձեռքով է քյաբաբ մատուցել Զավեն Շարաֆյանին և Սիմոն Հալաբյանին՝ վերջինիս առանձնասենյակում, բուֆետապան Սերոբ Լուսինյանը, խորտկարանի վարիչ Կորյուն Մխեյանը…-զեկուցողը մատը պահելով հաջորդ բառի վրա, բարձրացրեց գլուխն ու ասաց: - Նշածս ընկերները ընդունարանում սպասում են, ուզում եք, կանչեք հարցրեք…

- Դրանք հենց ֆելիետոնի հերոսները չե՞ն,- միամիտ դեմք ընդունելով, հարցրեց Գառնիկ Բադալյանը: -Այդ ազգանունները ես կարծես թե կարդացել եմ ֆելիետոնում:

- Նրանք են, ընկեր Բադալյան, նրանք են,- ձայնեց լրագրողը:

Քաղկոմի երկրորդ քարտուղարը սեղմեց շրթունքները:

- Նրանք են,- ասաց նա: - Եվ կպատժվեն իրենց մեղքերի համար: Բայց մի՞թե դա նշանակում է, որ նրանք զրկված են վկայություն տալու իրավունքից:

- Բայց սա հո դատարան չէ, ընկեր Սուրենյան, ինչպես քիչ առաջ իմաստուն կերպով նկատեցիք դուք,- քմծիծաղ տվեց կոմբինատի դիրեկտորը:

Ղուկաս Լալայանը բարձրացրեց ձեռքը: Բյուրոների ընթացքում դա նրա ամենաերջանիկ պահն էր: Երբ բյուրոյի անդամներին թույլ էր տալիս թեթևակի հարձակվել իրար վրա, զզել միմյանց, իսկ հետո ձեռքի մի շարժումով ընդհատում էր նրանց և դառնում դրության տերը:

- Շարունակիր, Պողոսյան,- ասաց նա:

Եվ Պողոսյանը առաջ տարավ մատը:

- Ինչ-ինչ պատճառներով կողմերը հաշտության չեն հասնում: Եվ վճռվում է բանակցությունները շարունակել մի քանի օր անց, նոր հյուրանոցի ռեստորանում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Որտեղ Յագոյի հաջող, փայլուն դերակատարությամբ հանդես է գալիս Կայծակ Եփրեմի Չոփուրյանը,- արդեն ամեն ինչ հասկանալով, նյարդայնորեն ծիծաղեց Զավենը:

Գրետա Սուրենյանը չկարողացավ զսպել իրեն.

-Վերջ տուր,- բղավեց նա: Նրա գեղեցիկ դեմքն աղավաղվեց և կոկորդի վրա պրկվեցին երակները: - Սա ձեր թռուցկաժողովը չէ: ընկեր Շարաֆյան:

- Տեսնում եմ, տեսնում,- պատասխանեց լրագրողը: - Պարզ տեսնում եմ: - նա շրջվեց դեպի զեկուցողը: - Շարունակիր, Պողոսյան:

- Այս ժուռնալիստների լկտիությունը սահման չունի,- ընդհանրացնելով, բարկացած փնչացրեց քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալը:

Ղուկաս Լալայանը բռունցքը սեղանին խփեց.

- Բյուրոն ես եմ ղեկավարում,- պոռթկաց նա: - Վերջին անգամ եմ զգուշացնում, ընկեր Շարաֆյան, եթե նույնիսկ մի անգամ էլ փորձես խանգարել նիստը, քեզ դուրս կհրավիրենք և քո հարցը կքննենք քո բացակայությամբ:

- Հանգիստ մնա,Զավեն, - գլխով արեց Գառնիկ Բադալյանը:

Ղուկաս Լալայանը այնուամենայնիվ խուսափեց ասել՝ «Շարունակիր, Պողոսյան», և միայն անհամբերությամբ զեկուցողին նայեց: Պողոսյանի մատը անմիջապես սահեց տողերի վրայով:

- Վկաները բազմաթիվ են: Հանձնաժողովը մեկ-մեկ բացատրություններ է վերցրել ռեստորանի և հյուրանոցի աշխատողներից: Սկզբում Զավեն Շարաֆյանը, Վաղարշակ և Աղաբեկ Տիտանյանները շատ ջերմ և սրտառուչ բաժակաճառեր են փոխա… փոխանակել: Ըստ որում Զավեն Շարաֆյանը հանել է իր փողկապը, նվիրել Վաղարշակ Տիտանյանին և ստիպել, որ նա անմիջապես հագնի այն: Հետո նրանք Էլի են խմել, գրկախառնվել են ու փառա… փառաբանել են իրար: Բայց երբ գործը հասել է գումարի չափին…

- Ինչ գումար, ընկեր Պողոսյան: - հարցրեց Գրետա Սուրենյանը շուրջը նայելով:

- Պարզ չէ , ընկեր Գրետա,- զարմացավ Պողոսյանը: - Զավեն Շարաֆյանը պետք է նշեր, թե որքան դրամ է ուզում ֆելիետոնը չտպագրելու համար: Հանդիպման նպատակը դա էր:

Սեղանի ծայրի ձախ ու աջ կողմերում նստած հրահանգիչները անմիջապես շրջվեցին դեպի լրագրողը ու բնազդաբար մեկնեցին ձեռքերը նրան զսպելու համար, բայց Զավեն Շարաֆյանը այս անգամ չշարժվեց տեղից: Նա արդեն անցել էր այդ շրջանը և հիմա պարզապես, ասես թե մեծ հետաքրքրությամբ դիտում էր մեկ Պողոսյանին, մեկ Կայծակ Չոփուրյանին, մեկ Ղուկաս Լալայանին, մեկ Գրետա Սուրենյանին:

Նրանցից յուրաքանչյուրն, իհարկե, համոզված է, գիտի, որ այդպիսի բան չի եղել: Անհնարին է, որ չիմանան: Ուրեմն ինչի համար է այս ամբողջ բեմադրությունը: Նրանք գիտեն նաև, որ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ինչքան էլ սրտանց ցանկանան, չեն կարողանա հերքել ֆելիետոնի փաստերը, չեն կարողանա արդարացնել ոչ Տիտանյան եղբայրներին, ոչ էլ նրանց արբանյակներին, որ խռնվել են այնտեղ, ընդունարանում: Ուրեմն ի՞նչ նպատակ են հետապնդում: Ինչո՞ւ է այդքան բացահայտ ատելությամբ լցված իր նկատմամբ քաղկոմի երկրորդ քարտուղար Գրետա Սուրենյանը: Զավենը, ճիշտ է, հիշում է, որ դիրեկտորական աթոռ երազող Հեղինե Բլբուլյանը նրա մասին ասաց, թե քաղաքի ամբողջ առևտուրը իր սիրածի ձեռքն է հանձնել: Դե, եթե այս Գրետայի սիրածն է ղեկավարում առևտուրը, ուրեմն նա Ասքանազ Պեպանյանն է և ղեկավարում է նաև շուկան: Բայց նախ՝ Ասքանազ Պեպանյանի անունը ֆելիետոնում հիշատակված չէ: Եթե նույնիսկ հիշատակված լիներ, միթե քաղկոմի երկրորդ քարտուղարը կհամարձակվեր բացահայտ պաշտպանության տակ առնել իր մտերիմին և նրա ղեկավարած բնագավառը, երբ հիանալի գիտեր, որ Ղուկաս Լալայանից սկսած մինչև Կայծակ Չոփուրյանը տեղյակ են առևտրի բաժնի վարիչի հետ նրա կապի մասին: Չէ, չէ, մտածում էր Զավեն Շարաֆյանը, այստեղ ոչ ոք անձամբ իր հետ գործ չունի: Նրանց փաստորեն միավորել է ընդհանուր բնազդական երկյուղը մի մարդուց, որը չգիտես թե որտեղից է հայտնվել և գրում է՝ ինչ ուզում է:

Նա դեռ ջահել է, միամիտ է և իր ոտքերով թակարդն է ընկել: Ուրեմն ինչո՞ւ չօգտվել առիթից ու մի լավ դաս տալ նրան: Մի այնպիսի դաս, որ կայանքում չմոռանա: Որ միշտ հիշի, թե որտեղ է գտնվում և երբևէ ցանկություն չունենա կրկին հայտնվելու քաղկոմի բյուրոյում: Դրանից հետո նա գառնուկի նման հեզ կդառնա և երբ գրելու որևէ բան ունենա, նախ քաղկոմ կվազի՝ հրահանգիչների կարծիքն իմանալու համար, պատերազմ երազող բաժնի վարիչի համաձայնությունը կխնդրի և մանրամասն կհետաքրքրվի,թե քաղկոմի ղեկավարներից ով ում բարեկամն է, ազգականն ու մտերիմը, ով ում հետ ինչ հարաբերությունների մեջ է ու նոր միայն կհամարձակվի մտնել որևէ հիմնարկ կամ ձեռնարկություն: Ահա թե ինչն է նրանց նպատակը: Ահա թե ինչն է այսօր միավորել Ղուկաս Լալայանին և Գրետա Սուրենյանին, Նշան Իգիթյանին, Կայծակ Չոփուրյանին, Սահակ Միրզոյանին և Պողոսյանին, որի անունն այդպես էլ չիմացավ: Եվ էլ ինչ ստեր է հորինում զինվորական հագուստը հենց նոր հանած այդ մարդը, որը փաստորեն հասարակական պարտականություն է կատարում, ոչ մի կոպեկ օգուտ չունի իր աշխատանքից, բայց անընդհատ ցանկանում է քաղկոմի մոտերքում լինել, ղեկավարների կողքին, ստուգող լինել, հանձնաժողովի նախագահ կամ անդամ, իրավունք ունենալ մի փոքր վեր բարձրանալու իր նման մյուս մարդկանցից, մտնելու նրանց տները, աշխատասենյակները, խոհանոցները, հարցեր տալու և ղեկավարների ուզած պատասխանները գրելու իր կաշվե թղթապանակի մեջ:

- Ֆելիետոն գրելու մտքից հրաժարվելու համար Զավեն Շարաֆյանը պահանջում է քսան հազար ռուբլի,- շարունակում Պողոսյանը: - Տիտանյան եղբայրներն ասում են, թե տասը հազարից ավել չեն կարող տալ: Տասը հազարը մենք կտանք, իսկ տասը հազարն էլ Բերսաբեն ու մյուսները թող հավաքեն ու տան, առաջարկում են նրանք:

Առանձնասենյակի դուռը բացվեց, ու ներս մտավ քաղաքի դատախազ Գագիկ Միսակյանը: Նա մոտեցավ քաղկոմի առաջին քարտուղարին, ինչ-որ բան շշնջաց նրա ականջին, ըստ երևույթին ներողություն խնդրեց բյուրոյի նիստից ուշանալու համար և աչքերով աթոռ փնտրեց, որպեսզի նստի: Զավեն Շարաֆյանից դեպի աջ նստած հրահանգիչն անմիջապես բարձրացավ աթոռից և, տեղ՛ս առաջարկելով դատախազին, դուրս եկավ իր համար նոր աթոռ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

բերելու: Եվ քաղաքի դատախազը հայտնվեց Զավեն Շարաֆյանի կողքին, նստեց ու հարցրեց շշուկով,

- Այս ինչե՞ր են ասում, ընկեր Շարաֆյան:

- Հավատացեք, խնդրում եմ, ոչինչ չեմ հասկանում, - մրմնջաց Զավենը՝ ակամա թեթևացած շունչ քաշելով, որ դատախազը նստեց իր կողքին:

- Զավեն Շարաֆյանը չի համաձայնվում: Ես նրանց հետ գործ չունեմ, ասում է: Դուք իմ քսան հազարը կբերեք, իսկ հետո ումից ուզում եք վերցրեք: Վաղն առավոտյան բերեցիք, բերեցիք, չբերեցիք, նստում եմ ու գրեմ:

Քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալը փնչաց.

- Դրանց ի՞նչ կա- Կնստեն ու կգրեն, բա ի՞նչ…

Գրետա Սուրենյանը նախ առաջին քարտուղարին նայեց, ապա Պողոսյանին.

- Սպասիր, սպասիր, Պողոսյան… Եվ այդ փաստերը ստուգվա՞ծ են:

- Իհարկե, ստուգված են, Գրետա Հակոբովնա: Բոլորից մեկ-մեկ բացատրություն եմ վերցրել: Խնդրեմ,- ավելացրեց Պողոսյանը՝ ոտքերի մոտ դրված կաշվե պայուսակը ցույց տալով:

Քիմիական կոմբինատի դիրեկտոր Գառնիկ Բադալյանը նրան նայեց թերահավատությամբ:

- Ուրեմն այդ ամբողջ խոսակցությունը տեղի է ունեցել հյուրանոցի և ռեստորանի աշխատողների ներկայությա՞մբ,- հարցրեց նա:

Լռություն տիրեց:

- Չէի ասի,- հանկարծ չգիտես ինչու ամոթ զգաց Պողոսյանը: - Հյուրանոցի և ռեստորանի աշխատողները բացատրություն են տվել, որ դեպքի վայրում տեսել են Զավեն Շարաֆյանին, իսկ Կայծակ Չոփուրյանը և Սերոբ Լուսինյանը մանրամասն նկարագրում են Տիտանյան եղբայրների և ժուռնալիստի զրույցը գումարի վերաբերյալ:

Գրետա Սուրենյանը ծածանեց և ուսերին նետեց երկար վարսերը՛

- Հենց այդպես էլ եղե՞լ է, ընկեր Չոփուրյան:

Գյուղատնտեսական տեխնիկումի դիրեկտորը բարձրացրեց սպիտակ մազափնջով հավասար կիսված գլուխը և տխրությամբ ասաց,

- Այո, որքան էլ ցավալի լինի ասելը: Անկեղծ կլինեմ, ամենևին չէի սպասի, որ շնորհալի լրագրողը բարոյապես այդ աստիճան կիջնի: Ամենամեծ խայտառակությունն այն էր, որ նա առևտուր էր անում, ընկերներ…

- Մի բան, որ դու երբեք չէիր անի,- ձայնեց Գառնիկ Բադալյանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Իհարկե,- անմիջապես համաձայնեց Կայծակ Չոփուրյանը, բայց քանի որ մի քանիսը ծիծաղեցին, հասկացավ անմիջապես և նախատինքով տարուբերեց գլուխը: Միթե սա կատակի վայր է, ընկեր Բադալյան: Մենք քաղկոմի բյուրոյում ենք գտնվում: Ես մինչև հիմա ուշքի չեմ գալիս: Վիրավորված է իմ մարդկային և կուսակցական արժանապատվությունը: Այս ի՞նչ է կատարվում մեր շրջապատում: Կուսակցական թերթի աշխատողը բանակցությունների մեջ է մտնում առևտրի, շուկայի աշխատողների հետ, նժարի վրա է դնում իր պատիվը, խիղճը, սկզբունքը, իսկ մյուս նժարին…

- Իսկ դո՞ւք ինչպես հայտնվեցիք այդ առևտրի կենտրոնում, ընկեր Չոփուրյան,- հարցրեց դատախազը:

- Պատահականորեն, միանգամայն պատահականորեն, թոռնիկիս ծիրանի հյութ էր ուզում- Դրա համար էլ ռեստորան մտա: Զավեն Շարաֆյանը նստած էր մեր քաղաք հյուրախաղերի եկած մի պարուհու հետ- Ես մոտեցա, որպեսզի իմ հարգանքը մատուցեմ: Մի՞թե իմ մտքով կանցներ…

- Այդպե՞ս է եղել, ընկեր Շարաֆյան, - լրագրողի կողմը դարձավ Գրետա Սուրենյանը:

Զավեն Շարաֆյանը գլխով արեց:

- Սկիզբը այդպես է եղել:

Նա աչքի պոչով նկատեց, թե ինչպես քիմկոմբինատի դիրեկտորը զարմացած ու հիասթափված ետ ընկավ աթոռին և փութով ավելացրեց. - Իսկ մնացածը սուտ է, զրպարտություն է, կեղծիք է: Ախր պարզ երևում է և դուք էլ գիտեք, որ սուտ է:

Ղուկաս Լալայանը կիտեց հոնքերը:

Ի՞նչ է, այստեղ տուն-տո՞ւն ենք խաղում, Շարաֆյան:

- Չէ,- պոռթկաց լրագրողը, կրկին բարձրանալով տեղից և ձախ կողմի հրահանգչի ձեռքը ետ մղելով: - Չէ, ընկեր Լալայան, տուն-տուն չէի ասի, բայց ինչ-որ ստոր խաղ կա: Դուք չգիտեք երևի, բայց կա: Եվ այդ խաղը քննադատության ճնշում է կոչվում:

Նա ջահել էր, անփորձ էր և միամիտ: Նա չէր հասկանում, նման ղեկավարներն ամեն ինչ կարող են տանել, բայց չեն հանդուրժի, որ որևէ մեկը նրանց ասի, թե նրանք չգիտեն, թե նրանք տեղյակ չեն, թե նրանց խաբում են:

- Էս տղան ինձ համբերությունից կհանի,- դարձավ նա քմծիծաղ տվող Գրետա Սուրենյանին: - Իսկապես որ ճիշտ էիր ասում, էլի: - Ու բարձրացրեց ձայնը: - Լավ, հիմա պատասխանի իմ հարցերին: Դու ռեստորանում եղե՞լ ես:

- Եղել եմ: Հյուր ունեի, գնացինք…

- Կարճ: Եղե՞լ ես:

- Այո:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Խմե՞լ ես ռեստորանում:

- Մեզ շամպայն հյուրասի…

- Կարճ: Խմե՞լ ես:

- Այո:

- Կայծակ Չոփուրյանի հետ է՞լ ես խմել: Սեղա՞ն եք նստել…

- Մի բաժակ…

- Կարճ: Խմե՞լ ես:

- Այո:

- Ո՞նց էր այդ լակոտների անունը- Հա, Աղաբեկ Վաղարշակ Տիտանյաններին հանդիպե՞լ ես ռեստորանում:

- Ոչ, ոչ:

- Բա եթե չես հանդիպել, ինչպե՞ս ես փողկապդ նվիրել նրանցից մեկին:

- Չեմ հիշում:

- Հանդիպելդ չես հիշում, թե փողկապ նվիրելը:

- Ես նրանց չեմ տեսել:

- Իսկ մի քանի հոգի և նրանց թվում հարգարժան Կայծակ Չոփուրյանը պնդում են, որ սեղան ես նստել նրանց հետ, խմել ու գրկախառնվել ես և նրանցից մեկին ես նվիրել փողկապդ…

- Որքան էլ ցավալի լինի, - սպիտակ մազափնջից աջ ու ձախ մազերը սղալելով, տխրությամբ ասաց Կայծակ Չոփուրյանը:

- Ես ոչինչ չեմ հիշում,- հուսահատ պոռթկաց Զավեն Շարաֆյանը: - Երևի թունավորված եմ եղել, երևի հարբած եմ եղել, երևի կորցրել եմ գիտակցությունս: Ես ոչինչ չեմ հիշում, ընկեր Լալայան:

Քաղկոմի առաջին քարտուղարը իր հաջողությունից գոհ, ետ ընկավ աթոռին:

- Դե ուրեմն շատ բնական է, որ չես հիշի նաև, թե ինչպես էիր նրանցից քսան հազար ռուբլի պահանջում ֆելիետոն չգրելու համար: Միանգամայն հասկանալի է: Չես հիշում, չէ՞:

- Չեմ հիշում,- խորտակված շշնջաց Զավեն Շարաֆյանը:

- Չի՞ եղել այդպիսի գործարք, թե չես հիշում,- կինոնկարներում տեսած քննիչի նման կրկին միանգամից առաջ թեքվեց և սևեռուն հայացքով լրագրողին նայեց Ղուկաս Լալայանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երկրորդ քարտուղարը չթաքցրած հիացմունքով նայեց առաջին քարտուղարին, և Զավեն Շարաֆյանը հասկացավ, որ այլևս փրկություն չունի:

- Չի եղել այդպիսի բան: Դա բացառված է: Անհնարին է,- ասաց նա հոգնած:

- Դու անհնարին ես համարում նաև այն, որ քո փողկապը հայտնվել է ֆելիետոնի հերոսներից մեկի վզին: Եղե՞լ է այդպիսի բան, թե ոչ: Կարճ:

- Դե եթե բոլորն ասում են:

Ղուկաս Լալայանը գոհ ժպտաց.

- Ահա, հասանք ընդհանուր հայտարարի: Ճիշտ նույն ձևով բոլորն ասում են, թե դու ցանկացել ես գործարքի մեջ մտնել շուկայի աշխատողների հետ: Բայց քանի որ գնի հարցում համաձայնության չեք եկել, ի վերջո գրել ես գրել ֆելիետոնը, Այդպե՞ս է, Պողոսյան:

- Այդպես է, ընկեր Լալայան,-- այս ամբողջ հարցաքննության ժամանակ շարունակելով կանգնած մնալ, հաստատեց նախկին զինվորականը: - Միանգամայն այդպես է: Այն էլ ասեմ Տիտանյան եղբայրները Զավեն Շարաֆյանին ուղեկցել են մինչև տուն՝ համոզելով իջեցնել գինը, բայց նա ոչ հա է ասել, ոչ էլ չէ, ասել է տեսնենք ու տուն է գնացել: Ենթադրում ենք, թե տանն էլ Ալվարդ Բարսեղյանը հազար ու մի միջոցներով ազդել է նրա վրա և նա էլ որոշել է գրել…

- Կգրեն, բա ի՞նչ,- փնչաց քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալը-- Փողի համար հարազատ հոր վրա էլ կգրեն:

Դատախազը շարժվեց տեղում:

- Ուրեմն մնացած ամեն ինչը հաստատել եք և միայն Ալվարդ Բարսեղյանի մա՞սն եք կասկածելի և ենթադրելի համարում, ընկեր Պողոսյան:

- Ինչ չգիտենք, չգիտենք,- ձեռքերը տարածեց Պողոսյանը: - Մեռնեմ փաստերին:

Քաղկոմի առաջին քարտուղարը հայացքը շրջեց բյուրոյի անդամների վրայով.

- Ովքե՞ր են ուզում ելույթ ունենալ:

- Ամեն ինչ պարզ է,- ասաց քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալը:

- Ինչ որ պարզ էլ չէր, լրիվ պարզ դարձավ,- հարկ համարեց անմիջապես ավելացնել ՀԼԿԵՄ քաղկոմի քարտուղար Մելս Իկիլիկյանը, որպեսզի հետո չասեին, թե նա ակտիվ չի պահել իրեն քաղկոմի բյուրոյում:

- Գուցե Զավեն Շարաֆյանին էլ լսենք և նոր անցնենք ելույթներին,- հարցրեց քաղաքի դատախազ Միսակյանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ամբողջ ժամանակ ինքն էր խոսում ու գոռգոռում, էլի,- վարսերը ծածանեց Գրետա Սուրենյանը:

Բայց Ղուկաս Լալայանը գտավ, որ Զավենը խոսելու իրավունք ունի:

- Խոսիր, Շարաֆյան,- ասաց նա: - Խոսիր տեսնենք ինչ ես ասում:

- Ես խոսելու բան չունեմ,- հայտարարեց լրագրողը: Եվ որովհետև քար լռություն տիրեց, ավելացրեց: - Եթե քաղկոմի բյուրոն նպատակահարմար է գտնում իմ հարցը քննել և ոչ թե ֆելիետոնը, ես այդ քաղկոմի բյուրոյին ասելու բան չունեմ: Արեք ինչ ուզում եք:

Նա չէր ձևացնում: Իրոք ասելու բան չուներ: Ներսում խախտվել- խորտակվել էր ինչ-որ շատ կարևոր մի լծակ, և նա ի վիճակի չէր դատելու և արտահայտելու իր մտքերը: Հոգում դատարկություն և ամայություն էր և նա ավելի շատ հիասթափություն էր ապրում, քան ցավ: Նա որոշ չափով առանձին-առանձին արդեն գիտեր, ճանաչում էր քաղկոմի բյուրոյի անդամներին և առանձնապես մեծ կարծիք չուներ նրանց մասին, բայց չգիտես ինչու մտածում էր, թե նրանք առանձին-առանձին ուրիշ են, իսկ երբ հավաքվում են, երբ ընդհանուր հարցեր են քննարկում, պետք է որ բոլորովին ուրիշ դառնան: Չէ՞ որ նրանք ճակատագրեր են վճռում: Իսկ սրանք, ահա, հավաքվել են և իրենք էլ չգիտեն ինչ անեն: Ժուռնալիստի հարցն են քննում՝ հիմք ընդունելով նրա ֆելիետոնի հերոսների վկայությունները: Եթե այսպիսի փաստ ընկնի «Ժուռնալիստ» ամսագրի ձեռքը, սրանցից ոչ մեկը տեղում չի մնա: Լավ, լավ, այդ բոլորը հասկացանք: Բայց «ժուռնալիստը» որտեղի՞ց իմանա: «ժուռնալիստին» գրողն ի՞նչ ասի, ինչպե՞ս բացատրի ռեստորանում կատարված խայտառակությունը, ինչպե՞ս ներկայացնի փողկապի հետ կապված այդ ամբողջ նողկալի ու անհեթեթ պատմությունը, ինչպե՞ս համոզի, որ Զավեն Շարաֆյանը «անջատված» է եղել, և ոչինչ, բացարձակապես ոչինչ չի հիշում, թե ինչ է ասել և ինչ է արել: Եվ արդյոք ո՞վ դա արդարացուցիչ հանգամանք կհամարի:

- Ուրեմն, հրաժարվո՞ւմ ես, Շարաֆյան:

Կանաչ մահուդով ծածկված սեղանի մյուս ծայրին Գառնիկ Բաղալյանը կարծես թե համաչափ գլխով էր անում:

- Այո,- ասաց Զավենը:

- Ովքե՞ր են ուզում ելույթ ունենալ,- հարցրեց Ղուկաս Լալայանը:

Եվ պարզվեց, որ բոլորը ուզում են ելույթ ունենալ: Առաջին հերթին պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ Նշան Իգիթյանը: Նա նոր էր հասկացել, որ Զավեն Շարաֆյանի զեկուցագիր կոչվածը փաստորեն ապտակ է եղել՝ ի պատասխան իր հարցաթերթիկին: Եվ ապշած էր մարդկային ապերախտությունից, ինքը որքան ուշադիր ու համբերատար էր լրագրողի նկատմամբ: Իսկ նա ծաղրել է- Այնինչ որ նայում ես՝ կարգին մարդու նման է: Ասում էր՝ «Կա», «Լսում եմ»: Ասում էր՝ «Թույլ տվեք հեռանալ»: Դերասան շան որդի: Քեզ նմանը իրոք որ բանակում պիտի ձեռքս ընկներ, որ իմանար իր տեղը: Նշան Իգիթյանը մինչև հոգու խորքը վիրավորված էր և այնքան հուզված, որ նույնիսկ չէր կարողանում խոսել: Ուզում էր, ձայն խնդրեց, բայց խոսել չէր կարողանում: Գրեթե մի բաժակ ջուր խմեց, մինչև որ կարողացավ ամփոփել իր միտքը: Թեև կյանքում երբեք հետախուզության չէր գնացել, բայց

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

վճռականապես հայտարարեց, որ Զավեն Շարաֆյանի հետ ինքը հետախուզության չի գնա և առաջարկեց նրան հեռացնել աշխատանքից:

Նրա հետ լիովին համաձայն էր նաև քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ Սահակ Միրզոյանը: Բայց Սահակ Միրզոյանի ելույթը միայն Զավեն Շարաֆյանի դեմ չէր, այլ բոլոր այն ժուռնալիստների դեմ, ովքեր կարծում են, թե ինչ ուզեն՝ կանեն և ում մասին ուզեն կգրեն: Նա հատկապես ընդգծեց, որ միայն Մկրտիչ Զուլոյանի ղեկավարած խմբագրությունում կարող են արմատակալել և ծաղկել այնպիսի ժուռնալիստներ, ինչպիսին Զավեն Շարաֆյանն է, որն իր մարդկային դեմքը կորցնելով, փորձել է հանցագործ կապերի մեջ մտնել առևտրի աշխատողների հետ: - Ես չէի ասի, թե առևտրի աշխատողները մեղք չունեն: Եվ չէի ասի, թե մենք էլ մեղքեր չունենք: Ունենք, ընկերներ, ունենք: Մենք էլ երբեմն աչք ենք փակում այս կամ այն մանր թերության վրա, հաշվի ենք առնում ընկերոջ, բարեկամի, ծանոթի խնդրանքը և մեղմ ենք մոտենում այս կամ այն աշխատողին: Մարդ ենք, էլի: Եվ պատահում է, որ մեզ դրա համար, գործը անելուց հետո, հա, ասենք թե պատիվ են տալիս, մի շիշ բան են բացում: Կամ մի գառ են մորթում: Հասկացանք: Բայց դեռ գործը չարած՝ քսան հազար ռուբլի պահանջել- Եղա՞վ: Եվ իր դրած գնից չի էլ իջնում, կարծես թե պետական սակագին է, կարծես թե քրտինք է թափել: Չեղավ, ընկերներ, մայրաքաղաքի մասշտաբները չի կարելի արհեստականորեն տարածել մեր փոքրիկ քաղաքի վրա: Իսկ եթե մեր հնարավորությունները նրան չեն բավարարում, թող էլի մայրաքաղաք վերադառնա: Անձամբ ես՝ դեմ չեմ…

Գառնիկ Բադալյանը սկսեց ծիծաղել, և Ղուկաս Լալայանը անհանգստացած մատիտով թխկթխկացրեց սեղանին.

- Առաջարկություն, առաջարկություն:

- Առաջարկում եմ, էլի,- զարմացավ ՍաՀակ Միրզոյանը: - Թող մայրաքաղաք վերադառնա:

- Այսինքն առաջարկում եք հեռացնել աշխատանքից, - ճշտեց Գրետա Սուրենյանը:

- Բա ի՞նչ եմ անում: Ու որպես հիշատակ մեր քաղաքից՝ առաջարկում եմ կուսակցական նկատողություն հայտարարել՝ գրանցելով անձնական քարտում:

- Իսկ նա կուսակցակա՞ն է,-- հարցրեց երիտասարդ միլպետը:

Նրա կողքին նստած ՀԼԿԵՄ քաղկոմի քարտուղար Մելս Իկիլիկյանը թոթվեց ուսերը.

- Որ կոմերիտական չէ, գիտեմ, կցման քարտերը անձամբ ես եմ ստորագրում:

Ղուկաս Լալայանը հոնքերը խոժոռած նայեց նրան.

- Փսփսալու փոխարեն ելույթ ունեցիր, ընկեր կոմսոմոլ- Վերջերս ես քո կարծիքը քիչ եմ լսում:

Մելս Իկիլիկյանը անմիջապես բարձրացավ տեղից: Նա խոսեց քաղաքի կոմերիտականների և երիտասարդների նոր նախաձեռնությունների մասին և հպարտությամբ նշեց, որ քաղկոմի ղեկավարությամբ շրջանը կատարել է մետաղի ջարդոնի հավաքման առաջադրանքը: Ըստ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

որում այդ մասին խոսելիս նա աչքերը հեռացրեց Քիմկոմբինատի դիրեկտոր Գառնիկ Բադալյանից, որովհետև կոմերիտմիության քաղկոմի քարտուղարի ելույթից խանդավառված պիոներ-դպրոցականները Քիմկոմբինատի շինարարական հրապարակից փախցրել էին մի գործող բուլդոզեր և իր ընթացքով տարել ու հանձնել մետաղի ջարդոնի հավաքակայան: Այնուհետև նա պատմեց քաղաքի կոմերիտականների և երիտասարդության հայրենանվեր, ազնիվ աշխատանքի մասին՝ բոլոր բնագավառներում և շատ ճարպկորեն խոսքը մոտեցնելով Զավեն Շարաֆյանի հարցին, ընդգծեց, որ մարդը որպես անձնավորություն ձևավորվում է կոլեկտիվում, կոմերիտական կազմակերպության մեջ և ուրեմն բարվոք չի եղել վիճակը այն կազմակերպությունում, որտեղից Զավեն Շարաֆյանի նման մարդիկ են դուրս եկել:

- Առաջարկություն, առաջարկություն, - ընդհատեց նրան Ղուկաս Լալայանը:

Մելս Իկիլիկյանը երկար չմտածեց.

- Եթե կոմունիստ է, առաջարկում եմ հայտարարել նկատողություն և հեռացնել աշխատանքից:

Քաղկոմի երկրորդ քարտուղար Գրետա Սուրենյանը ուսերի վրա ծածանեց վարսերը.

- Շատ հետաքրքիր է,- ասաց նա, հայացքը առաջին քարտուղարին: - Նրանք, ովքեր այս հարցում առաջինը պետք է խոսեին, չգիտես ինչու համեստորեն լռում են: Խոսքս վերաբերում է միլպետին և դատախազին:

- Մասիսյա՞ն,- միլպետին դարձավ Ղուկաս Լալայանը:

Միլիցիայի կապիտան Ռոբերտ Մասիսյանը, որը միլպետ նշանակվելու համար անձամբ Գրետա Սուրենյանին էր պարտական, որովհետև նրա մտերիմի՝ Ասքանազ Պեպանյանի ընկերոջ որդին էր, շփոթվեց.

- Թող առաջինը ընկեր Միսակյանը խոսի, նոր ես:

Դատախազը ժպտաց.

- Եթե ընդհանրապես այդ կարծիքին եք, ընկեր Մասիսյան, ես համաձայն եմ: - նա բարձրացավ տեղից, Գառնիկ Բադալյանին նայեց ու ասաց: - Քիմկոմբինատի հարգելի դիրեկտորը այստեղ մի հարց բարձրացրեց, որը զարմանալիորեն ուշադրության չարժանացավ: Նույն հարցը բարձրացրեց նաև լրագրող Զավեն Շարաֆյանը: Բայց նրան նույնպես ոչ ոք չպատասխանեց: Իմ կարծիքով, հարցը սխալ տեսանկյունից է քննվում, ընկերներ:

- Երևանցիներ՝ թիկունք թիկունքի,- հեգնեց Գրետա Սուրենյանը:

Քաղաքի դատախազը քմծիծաղ տվեց,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չէի համարձակվի, Գրետա Հակոբովնա,- ասաց նա: - Որովհետև ձեր թիկունքը անհամեմատ մեծ կլիներ: Այստեղ բոլորդ ոչ միայն համաքաղաքացիներ, այլև ազգականներ ու բարեկամներ եք:

Ղուկաս Լալայանը գտավ, որ ձեռքը բարձրացնելու ժամանակն է:

- Վերջ տուր, ընկեր Սուրենյան, թող խոսի- Թող խոսի, տեսնենք ինչ է ասում մեր դատախազը: Իմ կարծիքով, նա լավ պետք է հասկանա, թե ինչ է խոսում:

-Շնորհակալություն, ընկեր Լալայան,- գլուխ տվեց դատախազը: - Ես իրոք հասկանում եմ, թե ինչ եմ ուզում ասել: Իմ կարծիքով, սխալն այն է, որ չգիտես ինչպես փոխվել են մեր դերերը: Այն, ինչով դատախազությունը պետք է զբաղվի և զբաղվում է, տարօրինակ ձևով քննության առարկա է դարձել քաղկոմի բյուրոյի նիստում: Հարցն այն է, որ ձեր ստեղծած հանձնաժողովը իրավասու չէ և ի վիճակի չէ հետաքննություն կատարելու, քրեական գործ հարուցելու, զբաղվելու այնպիսի ծանր հանցագործության բացահայտմամբ, ինչպիսին հանդիսանում է կաշառակերությունը կամ կաշառակերության փորձը:

- Եթե դուք դրանով չեք զբաղվում, մեկն ու մեկը պ՞ետք է անի ձեր գործը, թե ոչ - վրդովվեց երկրորդ քարտուղարը:

- Այդ առթիվ մեզ ոչ ոք հայտարարություն չի տվել,- ասաց դատախազը- Արդեն երեք օր է, ինչ ես անձամբ մասնակցում եմ Աղաբեկ և Վաղարշակ Տիտանյանների հարցաքննությանը: Որքան էլ ձեզ տարօրինակ թվա, նրանցից ոչ մեկը դրամաշորթության կամ կաշառակերության փորձի մասին չի խոսել:

- Վա՞յ, բա ինչո՞ւ չեն խոսում,~ զարմացավ քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալը:

- Երևի դեռ չգիտեն, որ դրսում նման խոսակցություններ են կազմակերպվել,- ժպտաց դատախազը:

Հանձնաժողովի նախագահ Պողոսյանը խոցված էր:

- Իսկ իմ կարծիքով այդ մասին չեն խոսում, որովհետև լավ գիտեն, որ կաշառք տվողն էլ, վերցնողն էլ հավասար դատվում են: Ահա թե որն է գաղտնիքը:

Դատախազ Գագիկ Միսակյանը շարունակում էր ժպտալ հեգնորեն,

- Հարգելի ընկեր Պողոսյան, բայց առայժմ ոչ կաշառքը կա, ոչ տվողը կա և ոչ էլ վերցնողը: Համոզվա՞ծ եք, որ ձեր հավաքած թղթերը բավական են քրեական գործ հարուցելու համար:

Քաղկոմի առաջին քարտուղարը բարձրացրեց ձեռքը.

- Միսակյան,- ասաց նա,- քրեական գործը մեզ չի հետաքրքրում: Մենք կոմունիստներ ենք և մեզ առաջին հերթին հետաքրքրում է հարցի բարոյական կողմը: Եթե մենք համոզվում ենք… իսկ ես արդեն համոզված եմ, որ Ջավեն Շարաֆյանը ֆելիետոն գրելուց առաջ ռեստորան է

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

գնացել, հանդիպել է նրանց հետ, ում մասին ֆելիետոն էր գրելու, սեղան է նստել նրանց հետ, կերուխում է արել, իր սեփական փողկապը հանել նվիրել է նրանցից մեկին…

- Ցավալին հենց այդ է,- հառաչեց Կայծակ Չոփուրյանը:

- Ուրեմն մեզ ուրիշ ի՞նչ փաստեր են պետք,- շարունակեց առաջին քարտուղարը: - Մենք հո Զավեն Շարաֆյանին չենք մեղադրում ֆելիետոն գրելու համար: Ընդհակառակը, շնորհակալ ենք, որ մեր թերթն օգնում է բացահայտելու կենցաղում դեռևս գոյություն ունեցող այլանդակ երևույթները, որոնք անհիծյալ կապիտալիզմի մնացուկներն են: Ֆելիետոնում բարձրացված հարցերը հիմնականում ճիշտ են և մեղավորները պատժվում են և կպատժվեն օրենքի ամբողջ խստությամբ: Բայց կուսակցական օրենքի ամբողջ խստությամբ պետք է դատապարտվի նաև Զավեն Շարաֆյանը՝ հանցագործների հետ գործարքի մեջ մտնելու փորձ կատարելու համար, ժուռնալիստին և կոմունիստին անվայել վարքագծի համար: Ահա մեր խնդիրը:

Գրետա Սուրենյանը քնքշությամբ նայեց առաջին քարտուղարին,

- Ճիշտ գեներալի նման ասացիք, Ղուկաս Պապիկովիչ: Հիանալի էր: - Ի՞նչ գեներալ,- զարմացավ և հետաքրքրվեց Ղուկաս Լալայանը: - Վիկտոր Հյուգոյի «Իննսուներեքը» վեպի հերոսներից մեկն է, Ղուկաս Պապիկովիչ: Երբ փոթորկված ծովում նավաստիներից մեկի անփութության պատճառով նավի կողքից պոկվում է հրանոթը և ավերածություններ գործում տախտակամածի վրա, հանցավոր նավաստին գերմարդկային ջանքերով կարողանում է կրկին նավախելին կապել հրանոթը: Բոլորը հիանում են նրա քաջությամբ, գեներալը հուզված իր կրծքից պոկում է շքանշանը և ամրացնում նավաստու բաճկոնին: Եվ ասում է՝ «Այս շքանշանով ես քեզ պարգևատրում եմ հերոսության համար, իսկ այն բանի համար, որ անփույթ ես գտնվել քո նավաստիական պարտականությունները կատարելու մեջ, քեզ դատապարտում եմ մահապատժի: Գնդակահարեք նրան»: Հիանալի է, չէ՞ …

- Ճիշտ է, ճիշտ է, «Թշվառների» մեջ է, չէ՞: Ես Հյուգոյի բոլոր հատորներն ունեմ,- տեղեկացրեց Սահակ Միրզոյանը:

- «Իննսուներեքի» մեջ,- ուղղեց Գրետա Սուրենյանը:

Ղուկաս Լալայանը բարձրացրեց ձեռքը:

- Ես քո առաջարկությունը չլսեցի, Միսակյան,- ասաց նա դատախազին:

Դատախազը կրկին բարձրացավ տեղից.

- Ես գրեթե առաջարկեցի: Կարծում եմ, որ հարցի քննարկումը անհրաժեշտ է հանել օրակարգից, լավ նախապատրաստել և երկու մասի բաժանել: Նախ և առաջ պետք է քննության առնել ֆելիետոնը, որոշում ընդունել այդ առթիվ, պատժել մեղավորներին, շուկայից հեռացնել և ցրել իրար գլխի հավաքված ազգականներին, որոնք հանցագործ կապի մեջ են: Ինչ վերաբերում է լրագրողին, անձամբ ինձ հավատ չեն ներշնչում հանձնաժողովի հավաքած նյութերը և նման մակարդակով հիմք չեն կարող ծառայել նրան քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Եթե այդքանից հետո կրկին

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

անհրաժեշտություն զգացվի, հաջորդ բյուրոյում նոր միայն պետք է քննել լրագրող Զավեն Շարաֆյանի անձնական վարքագիծը այդ ամբողջ պատմության մեջ:

- Էլ ուրիշ բան ու գործ չունենք, էլի,- փնչաց քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալը:

- Եթե այդպես շարունակվի, հավանաբար անհրաժեշտություն կզգացվի հաջորդ բյուրոներից մեկում էլ դատախազի հարցը քննարկել,- շրթունքները սեղմելով ասաց Գրետա Սուրենյանը:
- Նրա ելույթից լիբերալիզմի հոտ է փչում:

- Եկեք իզմերի և հոտերի մասին չխոսենք,- չնահանջեց դատախազը,- որովհետև այս ամբողջ պատմությունից շատ ավելի վատ հոտ է փչում, Գրետա Հակոբովնա:

Ղուկաս Լալայանը բարձրացրեց ձեռքը:

- Քո կարծի՞քն ինչ է, ընկեր միլպետ:

Ռոբերտ Մասիայանը շիկնեց.

- Ես ձեզ հետ եմ համաձայն, ընկեր Լալայան:

- Այ տղա,- ասաց քաղկոմի առաջին քարտուղարը,- Բայց ես դեռ իմ կարծիքը չեմ հայտնել:

- Ես ձեզ հասկանում եմ,- ավելի շիկնեց միլպետը:

- Այսինքն…

- Զավեն Շարաֆյանին պետք է հեռացնել աշխատանքից և կուսակցական նկատողություն հայտարարել, եթե կուսակցական է:

- Որ դաս լինի նման վայ-ժուռնալիստներին,- եզրափակեց Սահակ Միրզոյանը:

Գրետա Սուրենյանը բարձրացավ աթոռից:

-Եթե թույլ կտաք, ընկեր Լալայան, հիմա ես կխոսեմ: - Նա սպասեց այնքան, մինչև որ քաղկոմի առաջին քարտուղարը գլխով արեց: - Չէի ցանկանա բառացիորեն կրկնել ձեզ, բայց ստիպված եմ, որովհետև ավելի պարզ ու հակիրճ ասել հնարավոր չէ: Ոչ թե մենք ենք խառնել դերերը, այլ մեր հարգելի երիտասարդ դատախազն է խառնում, և ես նրան չեմ մեղադրում, որովհետև կուսակցական աշխատանքի անհրաժեշտ փորձ չունի: Սա դատախազություն չէ, այլ կուսակցության քաղկոմի բյուրո: Մեզ փաստեր և հանցանշաններ պետք չեն: Մեզ բավարարում է համոզմունքը: Զավեն Շարաֆյանը կուսակցականին և լրագրողին անվայել արարք է թույլ տվել՝ հարբելով ռեստորանում և հանցավոր գործարքի մեջ մտնելով իր ապագա ֆելիետոնի հերոսների հետ: Սա ապացուցված է: Հենց այսքանն էլ բավական է, որպեսզի քաղկոմի բյուրոն ունենա իր որոշակի կարծիքը: Նման մարդիկ տեղ չպետք է գտնեն մամուլում: Առաջարկում եմ նրան հեռացնել աշխատանքից և հայտարարել կուսակցական նկատողություն:

Հենց որ երկրորդ քարտուղարը նստեց, տեղից բարձրացավ Ղուկաս Լալայանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ամփոփենք,- ասաց նա: - Երկու առաջարկություն է եղել, Զավեն Շարաֆյանին հեռացնել աշխատանքից, հայտարարելով կուսակցական նկատողություն, և հետաձգել հարցը՝ հաջորդ բյուրոյի օրակարգի մեջ մտցնելով միայն ֆելիետոնի քննարկումը: Քվեարկում եմ: Ովքեր են համաձայն, որպեսզի հետաձգվի հարցը, Ս եկ- մեկ հոգի: Ովքե՞ր են դեմ: Պարզ է: Հաջորդ առաջարկությունն եմ քվեարկում: Ովքե՞ր են համաձայն, որպեսզի Զավեն Շարաֆյանը հեռացվի աշխատանքից, ստանալով կուսակցական նկատողություն: Մեկ, երկու, երեք- Դուք համաձայն չե՞ք, ընկեր Բադալյան:

Քիմկոմբինատի դիրեկտորը աջ ձեռքի ափով շփեց կարճ խուզած, ալեխառն մազերը…

- Ես երրորդ առաջարկությունն ունեմ:

- Ի՞նչ առաջարկություն:

- Ես առաջարկում եմ Զավեն Շարաֆյանին հեռացնել ոչ միայն աշխատանքից, այլև կուսակցությունից,- հանգիստ ասաց նա մի նոր «Ավրորա» վառելով:

Նրա առաջարկությունն այնքան անսպասելի էր, որ ընդհանուր զարմանք հարուցեց: Բյուրոյի ընթացքում ընդգծված երևում էր, որ Գառնիկ Բադալյանի համակրանքը լրագրողի կողմն է: Ուրեմն ինչ պատահեց հանկարծ: Բոլորից շատ զարմացած ու վշտացած էր, իհարկե, Զավեն Շարաֆյանը, այնքան, որ նույնիսկ չդիմացավ ու «վահ» բացականչեց: Նա, որ ոչ մի ձայն ու ծպտուն չէր հանել, երբ ինչ մեղադրանք ասես բարդում էին նրա վրա, դատապարտում ու վիրավորում էին, հանկարծ զգաց, որ աչքերն արցունքով լցվեցին: Հեռացնել կուսակցությունից: Ինչի՞ համար: Մի՞թե Գառնիկ Բադալյանի նման փորձված ու խելացի մարդը նույնիսկ կարող է հավատալ այդ մերկապարանոց բամբասանքներին: Գոնե նա նոր հո չի ճանաչում՝ հո գիտե, որ Զավեն Շարաֆյանը ընդունակ չէ ստորության, ընդունակ չէ վաճառելու իր խիղճը, հավատը, լրագրողի պատիվը: Սա՞ ինչ անսպասելի դաժան հարված է:

Սեղանին դրված նրա ձեռքերը դողում էին, և նա հանկարծ զգաց, որ դատախազը սեղմում է աջ ձեռքը: Սա՞ ինչ է ուզում, սրտդողած մտածեց նա, հրահանգչի՞ն է փոխարինում, ինչ է: Հիմա հավանաբար կասի՝ համբերիր, զսպիր քեզ: Դատախազն իրոք ինչ-որ բան էր ուզում ասել նրան, որովհետև շրթունքներն արագորեն լրագրողի ականջին մոտեցրեց ու շշնջաց.

- Որևէ հիմարություն չանես: Նա ուզում է փրկել քեզ:

Դե եկ ու բան հասկացիր: Ինչպե՞ս թե ուզում է փրկել, նրանով, որ առաջարկում է հեռացնե՞լ կուսակցությունից: Նրանով, որ ամենածանր պատի՞ժն է պահանջում: Ղուկաս Լալայանին էլ հենց այդպիսի մարդ է պետք:

- Ես բանվոր եմ, բանվորական կոլեկտիվից եմ եկել և նրանց եմ ներկայացնում,- ասաց Գառնիկ Բադալյանը: - Եվ հարցը ուղղակի եմ դնում: Եթե հանձնաժողովը և քաղաքային կոմիտեի բյուրոն համոզված են, որ լրագրող Զավեն Շարաֆյանը մտադիր է եղել հանցավոր կապերի մեջ մտնել առևտրի մի խումբ անազնիվ ու խարդախ աշխատողների հետ, ուրեմն նա կուսակցությունում տեղ չունի: Եվ ավելին: Դատախազությանը պետք է հանձնարարել նշված նյութերի հիման վրա քրեական գործ հարուցել լրագրողի նկատմամբ: Կրկնում եմ՝ եթե քաղկոմի բյուրոն համոզված է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ղուկաս Լալայանը լրագրողի համար անբացատրելի վրդովմունքով սեղմեց բռունցքները:

- Իսկ դուք համոզվա՞ծ չեք, ընկեր Բաղալյան:

- Ես հավատում եմ ձեզ,- ասաց քիմկոմբինատի դիրեկտորը,- և վստահ եմ, որ դուք անմեղ մարդուն անհիմն պատժելու համար ձեռք չեք բարձրացնի: Իսկ եթե վստահ եք ու վճռել եք ձեռք բարձրացնել, ուրեմն բարձրացրեք մինչև վերջ ինչպես վայել է կոմունիստների ղեկավարին:

- Սա իհարկե դեմագոգիա է,- քմծիծաղ տվեց Գրետա Սուրենյանը:

- Ընկեր Սուրենյան,- Գառնիկ Բաղալյանի դեմքը խստացավ- Խորհուրդ եմ տալիս կուսդպրոցում ձեր անգիր արած երկու-երեք տերմինները տեղի-անտեղի չօգտագործել, շուտ կմաշվեն: Ես պնդում եմ իմ առաջարկությունը, Զավեն Շարաֆյանին պետք է հեռացնել կուսակցությունից՝ հիմնավորապես և հստակ ձևակերպելով այդ որոշումը: Որովհետև,- ավելացրեց քիմկոմբինատի դիրեկտորը,- եթե նկատողությունը քննության չի առնվում կենտկոմում՝, ապա հեռացումն անպայմանորեն քննարկվում է: Եվ ուրեմն հիմքը զորեղ պետք է լինի, համոզիչ և տրամաբանված: Եվ ոչ թե կազմված լինի ենթադրություններից և ֆելիետոնի հեղինակի դեմ ֆելիետոնի հերոսների տված չափազանց կասկածելի վկայություններից:

Քաղաքի դատախազ Գագիկ Միսակյանը ձեռքը ճակատին տարավ և մատների արանքից նայելով Զավեն Շարաֆյանին, խորամանկ ժպտաց,

- Հիմա տես թե քեզ ոնց են գովելու,- արագ շշնջաց նա:

- Իսկ իմ կարծիքով կարիք չկա ծայրահեղությունների դիմելու,- անմիջապես բռնկվեց Գրետա Սուրենյանը: - Եկեք չմոռանանք, որ Զավեն Շարաֆյանը երիտասարդ է, գրեթե պատանի, փաստորեն նոր է կյանք մտնում: Եկեք չմոռանանք և հաշվի առնենք, որ սա կյանքում նրա թույլ տված առաջին սխալն է և բավարարվենք նկատողությամբ:

- Տո ի՞նքն ինչ մեղավոր է,- փնչաց Սահակ Միրզոյանը: - Ջահել է, խմբագիրն ինչ ասել է, արել է, էլի: Նա մեր քաղաքում նոր մարդ է, շա՞տ գիտեր, թե ովքեր են Աղոն ու Վաղոն… Մկրտիչ Զուլոյանը ինքը չկարողացավ նրանց հախից գալ, էս միամիտ տղային մեջ գցեց: Պարզ չի՞… նկատողությունը լավ է, խղճով է…

- Կյանք նոր մտած մարդուն աշխատանքից հեռացնելն է՞լ է խղճով, ընկեր Միրզոյան,- հարցրեց դատախազը:

- Միսակյան ջան, սովորաբար ամենամեծ պատիժը դատախազն է պահանջում: Եթե գտնում ես շատ է, եկեք չհանենք գործից: Մեր ձեռքին չէ՞: Ճիշտ չ՞է, ընկեր Իգիթյան: Մանավանդ որ լավ ժուռնալիստ է:

Ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչը դեռ խոռված էր.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չէի ասի, թե անշնորհիք լրագրող է: Բայց անլուրջ է: Ես միևնույն է, նրա հետ հետախուզության չէի գնա,- ասաց նա այնպիսի տխուր վճռականությամբ, ասես Զավեն Շարաֆյանը նրան թախանձագին խնդրում էր հետախուզության տանել իր հետ: - Եվ այնուամենայնիվ ես համաձայն չեմ ընկեր Բադալյանի հետ: Նրա առաջարկը չափազանց դաժան է: Եվ համաձայն եմ ընկեր Միրզոյանի հետ: Քաղկոմի բյուրոյում լինելը արդեն դաս կհանդիսանա Զավեն Շարաֆյանի հետագա կյանքի համար: Կարծում եմ, որ նրան կարելի է թողնել աշխատանքում և հայտարարել խիստ նկատողություն:

- Որքան էլ ցավալի լինի,- պատի տակից հնչեց Կայծակ Չոփուրյանի ձայնը:

- Ի դեպ,- այդ ռեպլիկից անմիջապես օգտվեց Գառնիկ Բադալյանը: - Ես չհասկացա, թե Կայծակ Չոփուրյանը ինչ գործ ունի այստեղ: Մի՞թե նա քաղկոմի հանձնաժողովի անդամ է:

- Ոչ, ոչ - շփոթվեց հանձնաժողովի նախագահ Պողոսյանը:

- Բայց այստեղ մեզ պարզ դարձավ, որ նա է զեկուցագրի հեղինակը: Եթե անգամ դուք չակնարկեիք, ընկեր Պողոսյան, զեկուցագրի լեզուն, կուսակցական փաստաթղթին ոչ սազական քաղցր-մեղցր բառերն ու արտահայտություններն արդեն մատնում են հեղինակին: Ուրեմն ինչո՞վ եք ղեկավարվել, երբ զեկուցագիր կազմելը հանձնարարել եք մեկին, որը ըստ ձեր բերած փաստերի լրագրողի և առևտրի աշխատողների բանակցությունների կենտրոնում է եղել: Կամ ուղղակի միջնորդը:

- Հեղինակը ես եմ,- վրդովվեց Պողոսյանը: - Կայծակ Չոփուրյանը միայն խմբագրել է:

- Նա իրավունք չուներ նույնիսկ խմբագրելու,- պնդեց Բադալյանը:

Կայծակ Չոփուրյանր բարձրացավ տեղից.

- Սպասեք, սպասեք,- բղավեց նա: - Ե՞ս իրավունք չունեմ խմբագրելու: Ե՞ս իրավունք չունեմ գրելու…

Ղուկաս Լալայանը բռունցքը սեղանին խփեց.

- Նստեք, ընկեր Չոփուրյան: Նստեք, ասում եմ, թե չէ դուրս կհրավիրեմ ձեզ:

- Ո՞ւմ-,- բղավեց Կայծակ Չոփուրյանը: - Ես էլ ձեզ կենտկոմ կհրավիրեմ: Ուրեմն եթե ես քաղկոմի բյուրոյի անդամ չեմ, խոսելու իրավունք չունե՞մ: Ես կոմունիստ չե՞մ: Ե՞ս չեմ ընտրել ձեզ, մե՞նք չենք մոտեցել քվեատուփին, որպեսզի դուք մեր ղեկավարները դառնաք: Հիմա դուք ձեր ձայնր ժողովրդի՞ դեմ եք ուղղում: Ուրեմն բանից պարզվում է, որ ես խմբագրելու իրավունք չունեմ: Այնինչ դուք պետք է խնդրեք, աղաչեք, որպեսզի ես խմբագրեմ ձեր անգրագետ զեկուցումները: Եթե ես ձեր ելույթները խմբագրեի: ընկեր Գառնիկ Բադալյան, այդքան սխալներ թույլ չէիք տա: Մի ժամ առաջ չէիք հորջորջի մի բան, իսկ մի ժամ հետո միանգամայն այլ բան: Մեկ ասում եք, թե հավատ չեք ընծայում հանձնաժողովի նյութերին, մեկ էլ ասում եք, թե Զավեն Շարաֆյանին պետք է հեռացնել կուսակցությունից: Սա չէ՞ ձեր տրամաբանությունը: Այդ տրամաբանությունը խմբագրելու կարիք չունի՞:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Նստեք, ընկեր Չոփուրյան,- բռունցքը կրկին սեղանին խփեց Ղուկաս Լալայանը:

- Իսկ ես ասում եմ, որ ձեր տրամաբանությունը նույնպես խմբագրման կարիք ունի, մեծարգո ընկեր Լալայան, ակնբախ երևում է, որ ուզում եք ձեր հովանու տակ վերցնել Զավեն Շարաֆյանին: Վախեցնել ու ձեր հովանու տակ առնել, ծեծված թշնամին բարեկամից ձեռնտու է սկզբունքով: Լավ եք անում, ասելու բան չունեմ: Բայց եթե այդպես էր, Գրետա Հակոբովնան ինչո՞ւ էր կարգադրում հանձնաժողով կազմել, ինչո՞ւ էր պահանջում զեկուցագիր պատրաստել, ինչո՞ւ էր առաջարկում, որ ես խմբագրեմ զեկուցագիրը: Ու դուք այս բոլորից ոչ մի տեղեկություն չունեիք, հա՞: Դուք ձեզ համար խաղեր եք հորինում, ծրագրեր եք փոխում, իսկ մեջտեղը մենք ենք զոհ գնում, հա՞… Զինվորիկ ենք, հա՞… Այլևս պետք չենք, դեն եք նետում…

- Դուրս,- իրեն կորցրեց Ղուկաս Լալայանը:

- Դուրս եմ գալիս,- դերասանավարի ծիծաղեց Կայծակ Չոփուրյանը: - Ձեր ասելով չեմ դուրս գալիս: Իմ ուզելով եմ դուրս գալիս: Դուրս եմ գալիս, որպեսզի ուր հարկն է գրեմ այն ամենի մասին, ինչ կատարվում է այսօր այստեղ: Սա ձեզ վրա էժան չի նստի, ապահով եղեք: Հարգանքներս…

Երբ նա գլուխը բարձր պահած, հանդարտ ու ինքնավստահ քայլերով դուրս եկավ նիստերի սենյակից, քաղկոմի առաջին քարտուղարը պայթեց:

- Գրետա Հակոբովնա, այս ինչե՞ր են կատարվում իմ թիկունքում: Ո՞վ է ձեզ թույլ տվել այդ բրածո բանսարկուին հանձնարարություններ տալ: Պողոսյան: Պողոսյան, Պողոսյան.. օգ-նական ես գտել… զեկուցագիր ես կազմել- Այդ ոճով, Պողոսյան, հիմա նույնիսկ դիմում չեն գրում վառելափայտ ստանալու համար: Բավական է: Մնացածը հետո: Ես ուշադիր լսեցի բոլորիդ կարծիքներն ու առաջարկները: Եվ իմ կարծիքն եմ հայտնում: - Նա խիստ հայացքով նայեց ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչին: - Բյուրոն լավ չի նախապատրաստված: Մեղավորները կպատժվեն: Առաջարկում եմ օրակարգից հանել հարցի քննարկումը:

- Ուրեմն էսքան ժամանակ իզուր տեղը ջուր ծեծեցինք, - փնչաց քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալը:

- Սահակ Միրզոյան, որպեսզի մյուս անգամ ջուր չծեծես, ֆելիետոնը նախ քննության կդնեք քաղխորհրդի գործկոմում: Մեկիկ-մեկիկ կվերլուծեք բարձրացված խնդիրները, ընդհանուր գնահատական կտաք և կետ առ կետ կնշեք, թե քաղխորհրդի գործկոմը ինչ միջոցներ է ձեռնարկել ֆելիետոնում նշված թերությունները վերացնելու, հանցագործների խմբակը ցրելու համար: Ֆելիետոնում մերկացված առևտրի խարդախ և անազնիվ աշխատողները պետք է խստորեն պատժվեն: Նրանց պետք է զրկել առևտրի ցանցում աշխատելու իրավունքից…

- Դրսում սպասում են, կանչե՞մ,- պատրաստակամ վեր թռավ տեղից Պողոսյանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Կկանչեք քաղխորհուրդ: Որոշումը կներկայացնեք քաղաքային կոմիտե՝ կուսակցականներին պատժի ենթարկելու համար: Ինչ վերաբերում է միլիցիայի կապիտան Սիմոն Հալաբյանին…

Քաղաքի միլպետ Ռոբերտ Մասիսյանը կարմրեց և աշակերտի նման բարձրացրեց ձեռքը…

- Ընկեր Լալայան, շուկայում տիրող իրական վիճակը միլիցիայի բաժնից թաքցնելու և հանցագործներին հովանավորելու համար, դատախազի խորհրդով, նրա վերաբերյալ զեկուցագիր ենք ուղարկել ներքին գործերի մինիստրություն: Սիմոն Հալաբյանը առայժմ մեկուսացված է աշխատանքից:

Ղուկաս Լալայանը գլխով արեց:

- Հիմա դառնանք Զավեն Շարաֆյանի հարցին: Որ նա մեղավոր է, դա փաստ է:

Նա իրավունք չուներ ֆելիետոնը գրելու նախօրյակին հայտնվելու ռեստորանում և հարբեցողությամբ զբաղվելու՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Բայց մենք դեռ չգիտենք, թե իրականում ինչ է տեղի ունեցել: Առաջարկում եմ հանձնարարել քաղաքի դատախազին զբաղվելու այդ հարցով, ձեռքի տակ ունենալով հանձնաժողովի հավաքած նյութերը և կատարել օբյեկտիվ քննություն: Այդ քննության արդյունքներն էլ մեզ կհուշեն մեր հետագա անելիքները: Դեմ չկա՞:

Նա չհարցրեց, թե ովքեր են համաձայն: Նա ուղղակի հարցրեց. թե դեմ չկա, և առանց պատասխանի սպասելու, դուրս եկավ նիստերի սենյակից:

Քաղաքի դատախազ Գագիկ Միսակյանը ուրախ ժպիտով սեղմեց Զավենի ձեռքը:

- Տեսա՞ր, թե ինչ արեց,- ասաց նա՝ գլխով ցույց տալով Գառնիկ Բադալյանին,որ բանվորական սատինե կապույտ արտահագուստի գրպանից հանել էր «Ավրորայի» տուփը և նոր սիգարետ էր վառում: - Ապշելու մարդ է, չէ՞ - Այ թե ով պետք է լիներ մեր ղեկավարը…

Զավեն Շարաֆյանը ուզեց ինչ-որ բան ասել, բայց այնքան լիքն էր սիրտը, որ վախեցավ չդիմանա, լաց լինի: Նա միայն ի պատասխան տենդորեն, ամուր սեղմեց դատախազի ձեռքը ու արագորեն դուրս եկավ նիստերի սենյակից:

Աստիճաններով իջնելու պահին Միհրան Գալստյանը բռնեց նրա ուսը:

- Սպասիր, Զավեն,- հևաց նա: - Շունչս կտրվեց: Չե՞ս ուզում մի քիչ խոսենք:

- Չէ: - ասաց Զավենը,- չեմ ուզում:

* * *

Ավելի քան երկու ժամ թափառում էր ձյունոտ փողոցներում: Քայլում էր արագ-արագ, հևալով, խոսում էր ինքն իր հետ, պատասխանում էր զանազան հարցերի, որ ինքն սպասում էր, թե պետք է տային, բայց այդպես էլ ոչ ոք չտվեց: Եվ ինքն էր հարցեր տալիս, որ ուզում էր տալ, բայց այդպես էլ չհաջողվեց: Նա դեռևս բյուրոյում էր և չէր կարողանում ազատվել

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

մղձավանջային աղմուկից, անհեթեթ բացականչություններից, աղավաղված դեմքերից: Այդ դեմքերը մեկ մոտենում՝, մեկ հեռանամ էին, բայց դուրս չէին գալիս տեսադաշտից, գումարվում էին իրար, հրում էին իրար, ավելի էին աղավաղվում և խոսում էին, խոսում էին տարբեր ու միատեսակ բերաններով, բաց ու խուփ անելով կարմիր շրթունքները, վեր ու վար անելով մեծ ու փոքրիկ բեղերը, բայց թե ինչ էին ասում, ոչինչ չէր հասկացվում: Համատարած հոգեմաշ աղմուկ էր: Նա ամուր փակում էր ականջները, որպեսզի գոնե խլացնի այդ անտանելի ձայնը, բայց աղմուկը հալածում, հետապնդում էր նրան, կուտակվում էր ծոծրակի մեջ ու ճչում էր…

Նրան ցուրտը տուն տարավ: Հանկարծ զգաց, որ ոտքից գլուխ սառած է: Գրեթե հարբածի նման օրորվելով տուն հասավ,բացեց դարպասի դուռը, ներս մտավ ու հայտնվեց ընտանեկան անդորրի մեջ: Ձյունը հավասար սպիտակով ծածկել էր մարգերը: Երկու ճնճղուկ ձմեռային կարճ ցերեկվա քաշկռտուքից դեռ չհոգնած ծառից ծառ էին թռչկոտում, բարակ ձյուն մաղելով մարգերին, հետո ցած իջնում՝ թևիկները մանրիկ-մանրիկ թափահարելով լվացվում ձնափոշիով ու նորից թռչում, ճախրում էին օդում, իջնում ճյուղքերին, հրապուրում էին իրար, կանչում էին ճնճղուկավարի, շտապում ու շտապեցնում էին միմյանց շարունակել խաղը, որովհետև ուր որ է վրա էր հասնելու գիշերը:

Ջավեն Շարաֆյանը իր սենյակը մտավ և հաճելիորեն զարմացավ, զգալով, որ այն տաք է: Վառարանը երգում էր մեղմիկ, իսկ թիթեղը տեղ-տեղ նույնիսկ կարմրել էր: Շնորհակալություն, տիկին Ալվարդ, շնորհակալություն: Կարելի է թեյ դնել ու տեսնել, թե ուտելու ինչ կա տանը:

Նա ջրով լի թեյամանը դրեց վառարանի վրա, բայց անմիջապես էլ փոխեց մտադրությունը, թեյամանը ցած դրեց ու վերցրեց հեռախոսի լսափողը: Մի քանի անգամ սեղմեց լծակը և լսեց Ալվարդի ձայնը:

- Ջավե՞ն: Որտե՞ղ էիր, Ջավեն, մեռա քեզ սպասելով:

- Գործեր ունեի, տիկին Ալվարդ…

- Ջավե՞ն…

- Գործեր ունեի, Ալվարդ… - ակամա ծիծաղեց Ջավենը:

- Երեք ժամ է, ինչ ավարտվել է բյուրոն, ի՞նչ գործեր:

Ջավենը սրտանց զարմացավ:

- Դո՞ւք որտեղից գիտեք, որ բյուրո կար:

- Ամենատարբեր աղբյուրներից: Բարեկամներ էլ զանգահարեցին, չարակամներ էլ- Ես ամեն ինչ գիտեմ, Ջավեն:

- Ալվարդ,- համարձակություն առավ լրագրողը: - Խմելու բան չունե՞ս: Ես այսօր խմել եմ ուզում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես էլ եմ ուզում,- ծիծաղեց Ալվարդը: - Մինչև հարյուրը հաշվիր ու վերև բարձրացիր:

- Մեկ,- սկսեց Զավենը:

Ալվարդը ծիծաղեց ու ցած դրեց լսափողը:

Զարմանալի տանտիրուհի է Ալվարդը: Երբ պետք է, նրա տանը ամեն ինչ կա: Եվ դա ունենալուց չէ, չէ, շատերն ունեն և շատ ավելի շատ ունեն: Բայց այդ շատ ունեցողները երկու-երեք օրում վերջացնում են իրենց ունեցածը, ուտում, փչացնում, թափում են: Իսկ Ալվարդը, իհարկե, ամեն օր չի ունենում և շատ չի ունենում, բայց երբ պետք է՝ հինգ րոպեում կարող է հանել հոգեպահուստը և սեղան գցել: Ինչպես հիմա: Թթուն կա, ղավուրման կա, սոխը կա, պանիրը կա: Եվ ամենակարևորը՝ պղպջակների շղթան պարանոցին արքայավայել բազմել է օղու սափորը: Ուրիշ ի՞նչ է պետք մարդուն՝ երջանիկ լինելու համար: Այն էլ քաղկոմի բյուրոյից հետո:

Զավենը նստել, փակել էր աչքերը և մտքում կարծես թե ինչ-որ բան էր մրմնջում, որովհետև շարժվում էին շրթունքները:

- Այդ ի՞նչ մտքերի մեջ ես, Զավեն,- հարցրեց Ալվարդը տեղավորվելով նրա դիմաց:

- Գցում-բռնում եմ,- առանց աչքերը բացելու ասաց Զավենը:

- Ի՞նչն ես գցում և ինչը բռնում:

- Գցում-բռնում եմ, թե խմեմ՝ նոր ուտեմ, թե ուտեմ՝ նոր խմեմ: Ոնց գցում եմ՝ խմելն է ընկնում:

- Ուրեմն խմենք,- ասաց Ալվարդը: - Խմենք քո նոր հաղթանակի կենացը, Զավեն…

- Իմ հաղթանակի՞: Ե՞ս եմ հաղթել: Կյանքումս ավելի ողորմելի վիճակի մեջ չեմ եղել:

- Ճիշտ չէ, դու հաղթել ես,- պնդեց Ալվարդը: - Եթե չարակամ զանգահարողները ոչ թե ծիծաղում, այլ հայհոյում ու սպառնում են, ուրեմն դու հաղթել ես:

- Թող քո ասածը լինի, Ալվարդ: Բոլոր դեպքերում քո խոսքերն ինձ ավելի հաճելի են:

Նրանք զնգալով իրար խփեցին բաժակներն ու խմեցին:

-Դե հիմա կեր ու պատմիր,- ասաց Ալվարդը՝ բաժակները կրկին օղի լցնելով:

- Խնայիր ինձ, Ալվարդ,- աղաչեց Զավենը: - Ամոթ ինձ, թե որևէ բան հիշում եմ: Միայն աղմուկ էր: Ես արդեն ձեռք էի քաշել ամեն ինչից և նույնիսկ հաշտվել էի այն մտքի հետ, որ ինձ հեռացնելու են թե աշխատանքից, թե կուսակցությունից: Ինձ փրկեցին դատախազն ու Գառնիկ Բադալյանը: Առաջին հերթին իհարկե, Գառնիկ Բադալյանը: Եվ գիտե՞ս ինչով՝ նա առաջարկեց ինձ հեռացնել կուսակցությունից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Գիտեմ,- ասաց Ալվարդը: - Իմաստուն մարդ է Գառնիկ Բադալյանը: - Սա էլ թող նրա ու դատախազի կենացը լինի:

- Կհարբեմ,- ետ քաշվեց Զավենը, զգալով, որ օղին արդեն հաճելիորեն տաքացրել է ստամոքսը:

- Հարբիր,- ասաց Ալվարդը: - Դրա իրավունքն այսօր ունես:

Զավենը խմեց, մի կտոր թթու վարունգ կերավ ու հառաչեց.

- Իսկ մյուսները…Եթե միայն դու տեսնեիր նրանց դեմքերը… Եթե միայն լսեիր, թե ինչեր էին ասում: Առանց ամաչելու, ուղիղ աչքերիս նայելով ստում էին և մի վայրկյան հետո հրաժարվում իրենց ասածից: Եթե տեսնեիր ինչ թատրոն սկսվեց, երբ Գառնիկ Բադալյանն առաջարկեց ինձ հեռացնել կուսակցությունից… Բոլորը միանգամից հանկարծ իմ բարեկամները դարձան, նույնիսկ այդ ողորմելի Պողոսյանը, հանձնաժողովի նախագահը, որը հանել է զինվորական ուսադիրները, բայց դեռ քաղաքացիական անդրավարտիք չունի:

Երևի նրա խոսքը պատկերավոր ստացվեց, որովհետև Ալվարդը ետ ընկավ աթոռին ու սկսեց քրքջալ,

- Ի՞նչ, ի՞նչ…

-Նույնիսկ Կայծակ Չոփուրյանի գրածը չէր կարողանում կարդալ- ինտիմ բառն անգամ արտասանել չէր կարողանում-- նա կծեց լեզուն, կարմրեց սաստիկ ու շփոթությունը թաքցնելու համար արագորեն խմեց օղին:

Ալվարդը շարունակում էր ծիծաղել:

- Այդ բառն էլ իմ ու քո կապակցությամբ օգտագործեց, հա՞:

- Չէ, չէ,- հրաժարվեց լրագրողը: - Հիմար-հիմար խոսում էր ընդհանրապես…

- Եվ դու քեզ պաշտպանելու համար որոշեցիր վիրավորել ինձ: Իմացիր, կյանքում ինձ ոչ ոք այդքան անխիղճ ու դաժան չի վիրավորել, Զավեն:

- Ե՞ս,- ապշեց Զավենը,- քեզ վիրավորե՞լ: Ի՞նչ ես ասում, Ալվարդ…

- Մի՞թե հենց այդտեղ չես ասել, թե ես մի ծեր, անօգնական կին եմ…

Լրագրողը կորցրեց հումորը:

- Այդպես չի եղել,- ասաց նա վրդովված: - Ես ընդամենը ասել եմ, որ դուք- որ դու պատկառելի տարիքի կին ես:

-Խնդրեմ-- աչքերը չարաճճիորեն շողացնելով, գլուխը թափահարեց Ալվարդը: -Նույնիսկ կրկնում է: Իսկ դա նույնը չէ՞, ես ուրեմն պատկառելի տարիքի կին եմ, հա՞, Զավեն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավենը հասկացավ, որ Ալվարդը կատակում է: Նայեց նրան և նոր միայն տեսավ, որ իսկապես, ախր բոլորովին էլ տարեց չէ Ալվարդ Բարսեղյանը, այլ ջահել, գեղեցիկ, օգտագործած խմիչքից առավել ևս ջահել ու գեղեցիկ դարձած մի կին, որը հոլանի, սպիտակ բազուկները սեղանին հենած տղային էր նայում հեգնախառն ու ներողամիտ ժպիտով:

Զավեն Շարաֆյանը օղի լցրեց բաժակները, բարձրացրեց իր բաժակն ու խաղի մեջ մտնելով, ասաց.

- Ես ներողություն եմ խնդրում, Ալվարդ: Ես կույր եմ եղել և բթամիտ միաժամանակ: Ես խմում եմ աշխարհի ամենաջահել, ամենասիրուն և ամենահմայիչ կնոջ կենացը և խնդրում եմ,որ նա համաձայնվի պարել ինձ հետ, եթե պատեֆոնն աշխատում է:

Նա խմեց ու խոնարհեց գլուխը:

- Այ այդպես,- հաղթական ժպտաց տանտիրուհին, վեր կացավ, բացեց փոքրիկ պահարանի վրա դրված նվագարկիչի կափարիչը,փայլուն բռնակը տեղը դնելով լարեց զսպանակը, մի ձայնապնակ ընտրեց, դրեց սկավառակի վրա և ասեղը զգուշությամբ իջեցրեց ձայնապնակին:

Օդը լցվեց ակորդեոնի ծանոթ ելևէջներով: Այդ այն տարիներն էին, երբ յուրաքանչյուր բաց պատուհանից հնչում էր «Շամպայնի պղպջակները» տանգոն: Ալվարդը քայլեց դեպի տղան, բայց անմիջապես էլ ետ դարձավ, արագորեն մոտեցավ պատուհանին, իջեցրեց վարագույրն ու ժպտաց.

- Հիմա ամեն ինչ կարգին է:

Նրա քայլքը չափազանց թեթև էր: Զավենը վաղուց նման բավականություն չէր ստացել պարից: Ալվարդի իրոք աղջկական նիհար մարմինը ակնթարթորեն ենթարկվում էր տղայի ձեռքերի աննշմար հրահանգներին: Սկզբում նրանք պարում էին իրարից հեռու բռնած ձեռքերը, բայց մի պտույտի ժամանակ Ալվարդի կոշիկը սահեց տախտակի վրա, Ալվարդը քիչ էր մնում վայր ընկներ և ծիծաղելով ակամա հպվեց տղային: Հետո այդպես էլ մնացին իրար մոտ, առանց իրար նայելու և բացահայտ վշտացան, երբ նվագն ավարտվեց:

- Էլի պարենք,- դեպի նվագարկիչը նետվեց Զավենը: Բայց Ալվարդը ուշքի էր եկել արդեն և հրաժարվեց թափահարելով ձեռքերը:

- Ոչ, ոչ, բավական է, պտտվում է գլուխս,- հառաչեց նա: - Հարյուր տարի կլիներ, չէի պարել: - Նրա աչքերը արցունքով լցվեցին, բայց նա սեղմեց շրթունքները, հաղթահարեց լացը ու հանկարծ ժպտաց: - Հը, մեկ էլ կասե՞ս, թե նա տարիքն առած պատկառելի կին է…

Զավենը ծիծաղեց.

- Ոչ, կասեմ որ ջահել է, պատկառելի և անսահման հիշաչար: Պարենք, հա, Ալվարդ…

- Պատկառելին հանիր, տեսնենք: Բավական է, չեմ ուզում պատկառելի լինել:

- Հանեցի: Ջահել, գեղեցիկ և հիշաչար…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Համաձայն եմ:

Ալվարդը նորից նվագարկիչին մոտեցավ, լարեց զսպանակը և ձայնապնակը շրջելով՝ ասեղի ծայրն ակոսի մեջ դրեց: Փողային նվագախումբը «Ամուրի ալիքներ» վալսն էր կատարում: Զավենը շտապով մոտեցավ կնոջը, ձախ ձեռքով բռնեց նրա աջ ձեռքը, մյուս ձեռքը կոնքին դրեց և նրանք մեղմորեն և ակամա անշշուկ սկսեցին պտտվել սենյակում: Լրագրողի ձեռքը անընդհատ ցած էր սահում Ալվարդի մուգ կանաչ, թավշե զգեստի վրայով, և նա յուրաքանչյուր պտույտի հետ բարձրացնում էր ձեռքը և ավելի ամուր սեղմում նրա իրանը, այնքան, որ Ալվարդը ի վերջո թեթևակի հրելով ազատվեց նրանից:

- Խեղդեցիր, Զավեն,- ասաց նա քնքշությամբ և ուզում էր դարձյալ ինչ-որ բան ավելացնել, երբ հեռախոսը զնգաց:

Երկուսն էլ ցնցվեցին և ակամա նայեցին սարքի կողմը: Հեռախոսը շարունակում էր մի տեսակ չարագուշակ զնգալ: Ալվարդը անմիջապես անջատեց նվագարկիչը:

- Դո՞ւ ես վերցնում, թե ես վերցնեմ,-- ակամա շշուկով հարցրեց նա:

- Իսկ եթե երկուսս էլ չվերցնենք:

- Չի լինի,- գլուխը թափահարեց Ալվարդը և ակնհայտ տհաճությամբ վերցրեց լսափողը: - Ալո՞, լսում եմ- Ո՞վ է… Ապուշ,- հանկարծ ճչաց նա ու ցած նետեց լսափողը:

- Ո՞վ էր, ի՞նչ էր ասում,- անհանգստացավ Զավենը: - Ինչ էր ասում, Ալվարդ:

Կնոջ շրթունքները դողում էին…

- Ծանո՞թ ձայն էր, Ալվարդ:

- Չէ…

- Տղամա՞րդ էր, թե կին,

- Տղամարդու ձայն էր- Եթե միայնակ կնոջը սպառնացողը կարող է տղամարդ համարել իրեն:

Զավենը կատաղությունից սեղմեց բռունցքները:

- Ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ- եթե դիմացս հայտնվեր…

- Նրանք երբեք դիմացից չեն հայտնվում,- ասաց Ալվարդը: - Եվ հեռախոսը նրանց համար ամենահուսալի զենքն է:

Նա չէր կարողանում որևէ տեղ հանգիստ մնալ, նստում էր ու վեր էր թռչում անմիջապես, ասես ինչ-որ բան մտաբերելով պատուհանին էր մոտենում, բացում դռները, նայում ու անմիջապես էլ վերադառնում սեղանի մոտ: Օդի էր լցնում բաժակները ու մոռանալով, որ հենց քիչ առաջ է լցրել, նորից ձեռքն էր առնում սափորը և զարմացած նայում պռնկեպռունկ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

լցված բաժակներին: Ըստ որում ինչ գործողություն էլ կատարելիս լիներ հեռախոսին էր նայում տագնապահար:

- Գուցե անջատեմ հեռախոսը կամ լսափողը ցա՞ծ դնեմ,- չիմանալով ինչ անել, կամացուկ առաջարկեց լրագրողը:

- Չէ, չէ,- հրաժարվեց Ալվարդը,- հանկարծ ու մի կարևոր զանգ լինի: Չէ, չէ…

- Բայց դու շատ ես անհանգստացած,- նկատեց Զավենը: - Դա սովորական զանգ չէր: Հո առաջին անգամը չէ, որ զանգահարում, հայհոյում ու սպառնում են:

- Ճիշտ է,- ասաց կինը: - Ես մի փոքր վախեցա, Զավեն: Հիմա կխմեմ մի բաժակ ու անմիջապես կչքանա վախս: Դու չես ուզում խմել ինձ հետ:

- Ուզում եմ,- ասաց Զավենը, թեև իրականում չէր ուզում:

Չէր ուզում, որովհետև զգում էր, որ գրեթե հարբած է, որովհետև այն չի մտածում, ինչ պետք է մտածեր այդ պահին: Նա հասկանում էր, որ ուշ է, որ ժամանակն է տուն գնալու, բայց զարմանալիորեն չէր ուզում շարժվել տեղից: Նա տեսնում էր, որ կինն ահաբեկված է, բայց ինքը պարել էր ուզում: Ուզում էր ձեռքը դնել նրա թավշյա կոնքին, կրծքին սեղմել նրան ու պտտվել, պտտվել, պտտվել սենյակի մեջ, քաղաքի մեջ, աշխարհի մեջ, անհուն, անսահման տարածությունների մեջ:

- Ողջ լինես, Ալվարդ,- ասաց նա՝ զգալով, որ լեզուն ինչպես հարկն է չի ենթարկվում իրեն,- Ուրեմն, ինչպես պայմանավորվեցինք, աշխարհի ամենաջահել, չէ՞, ամենասիրուն… ճի՞շտ է…

- Իմ Միքայելի և քո կենացը, Զավեն,- հանկարծ հատ-հատ արտասանեց Ալվարդը,

- Չէ,- Զավենը զարմացած նրան նայեց: - Չէ: - Ու թեև գինով էր արդեն, բայց անմիջապես հասկացավ, որ Ալվարդը փորձում է օտարվել, հեռանալ իրենից: Հիմա այլևս ձեռքը նրա թավշե կոնքին չի հասնի իհարկե: - Չէ, իսկ ես ասում եմ՝ աշխարհի ամենասիրուն…

- Իմ Միքայելի և քո կենացը, Զավեն: Իմ զավակների կենացը, -համառեց, կրկնեց Ալվարդը, խմիչքը շուրթերին տարավ, տարօրինակ մի հայացքով նայեց տղային, հետո անմիջապես ցած դրեց օղիով լի բաժակը, գլուխը ձեռքին հենեց ու լաց եղավ:

Նրա ուսերը ցնցվում էին թավշե մուգ կանաչ զգեստի տակ, և Զավենը ինքն էլ զարմացած իրեն համակած զգացումից, բարձրացավ մոտեցավ հեկեկացող կնոջը ու շոյեց նրա ուսը:

- Լավ, Ալվարդ,- ասաց նա քնքշությամբ և կարեկցանքով: - Լավ, հա, թող լինի քո զավակների կենացը: Թող լինի Միքայելի ու իմ կենացը, Ալվարդ:

Անիծյալ հեռախոս: Նորից տհաճորեն ու չարագուշակ, ընդհատ-ընդհատ հնչեց զանգը:

- Հիմա ես կխոսեմ,- ձեռքն արագորեն կնոջ ուսից հեռացնելով, բարկացած հայտարարեց Զավեն Շարաֆյանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չէ, չէ,- առարկեց Ալվարդը: - Ես: Ես: - Նրա աչքերը արցունքոտ էին և իրոք շատ տխուր ու գեղեցիկ էր այդ պահին: Նա արագորեն մոտեցավ հեռախոսին, վերցրեց լսափողը ու ասաց բարձրաձայն, գրեթե մարտահրավերով: - Ասեք, լսում եմ- Լսում եմ- ի՞նչ- Ես ձեզանից չեմ վախենում, հասկանո՞ւմ եք- Ես թքել եմ ձեզ վրա- Այո, այո, ծիծաղում եմ- Դուք խղճալի եք և ողորմելի- Դուք այնքան սարսափած եք, որ քնել չեք կարողանում-Իսկ ես հիմա հանգիստ կքնեմ, որովհետև ձեզանից առա իմ վրեժը- Դե հիմա զանգահարեք որքան կարող եք, լսափողն այլևս վերցնող չի լինի, զանգահարեք թեկուզ մինչև առավոտ- Սկսեք…

Նա ցած նետեց լսափողը և սկսեց ծիծաղել: Ծիծաղում էր, բայց աչքերից շարունակում էին հոսել արցունքները, և Զավեն Շարաֆյանը հասկացավ, որ նա հարբած է.

- Նրանք ի՞նչ են ուզում ինձանից, է՞լ ինչ են ուզում,- հանկարծ միանգամից դադարեցնելով ծիծաղը, կամացուկ հարցրեց կինը:

Զավենը կնճռոտեց հոնքերը:

- Նրանք ինձ հետ են ուզում խոսել, ինձ են ուզում սպառնալ, բայց ամեն անգամ լսափողը դու ես վերցնում և հարվածը քեզ է հասնում, Ալվարդ: Միթե պարզ չէ՞:

Ալվարդ Բարսեղյանը ժպտաց գոհունակ:

- Եթե այդպես է, համաձայն եմ: Թող ինձ հասնի: Միայն թե քեզ, միայն թե ձեզ ոչինչ չպատահի, Զավեն- - Նա այնպես ասաց, ինչպես մայրերն են իրենց փոքրիկներին ասում «Ես ձեր ցավը տանեմ»:

Եվ Զավեն Շարաֆյանը մտածեց, որ տուն իջնելու ճիշտ պահն է: - Դե ես գնամ, շատ շնորհակալություն ամեն ինչի համար, Ալվարդ,- դեպի դուռը քայլելով ասաց նա:

- Բարի գիշեր,- պատասխանեց կինը: Նա Զավենին էր նայում ժպիտով, բայց դեմքը տարօրինակ ձևով լարված էր: - Բարի գիշեր, Զավեն, ու երանի ինձ համար էլ բարի լինի այս գիշերը:

Լրագրողը կանգ առավ ու ետ նայեց:

- Ալվարդ,- ասաց նա, հանկարծ ինչ-որ բան կռահելով: - Դու ինձ ամեն ինչ չես ասում, նրանք, ի՞նչ է, կոնկրետ սպառնալիքնե՞ր էին տալիս,

Կինը թափ տվեց ձեռքը:

- Էհ…

- Ալվարդ,,.

- Սովորական սպառնալիք էր, էլի… Ասում էին՝ դու այս գիշեր չես լուսացնի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես հիմա կիջնեմ ու ամուր կփակեմ դարպասը,- ասաց նա: Հետո մտածեց, որ երեխայի պես է խոսում, չարագործի համար ի՞նչ մի բարդ բան է պարսպի վրայից ցատկելը, և ավելացրեց: - Ուզո՞ւմ ես չքնեմ ու հսկեմ քեզ: Ուզո՞ւմ ես այստեղ մնամ, քո կողքին:

Կինը արագ-արագ թափահարեց գլուխը:

- Չէ, ի՞նչ ես ասում, չէ- Բարի գիշեր, Զավեն…

- Հա, բայց այդտեղ ի՞նչ կա,- վրդովվեց Զավենը և իր պոռթկումի մեջ նա ազնիվ ու անկեղծ էր: - Մենք տանն ամբողջ ընտանիքով մի սենյակում ենք քնում, Իսկ այստեղ երկու սենյակ կա, Չես ուզում, չեմ էլ քնի- Կնստեմ սեղանի մոտ ու կկարդամ մինչև առավոտ…

- Չէ, չէ, միտք չունի, կրկին հրաժարվեց Ալվարդը - Առաջին անգամ հո չէ, խոսում են հիմար-հիմար… Ո՞վ կհամարձակվի տուն մտնել, իմանալով, որ դու էլ ներքևում ես… Թեև իհարկե, այդ տականքներից ամեն ինչ սպասելի է, ոչ ամոթ ունեն, ոչ խիղճ…

Զավենը ետ դարձավ.

- Վերջ: - ասաց նա,- մնում եմ:

- Զավեն,- մի տեսակ անօգնական, թե անվճռական մրմնջաց կինը:

- Ես չկամ,- ասաց Զավենը: - Ես աներևույթ եմ: Կարող ես համարել, որ տանը մենակ ես: Ինձ ոչինչ պետք չէ՝ իմ պիջակից բացի: Եվ այս թախտն էլ այն արքայական թախտն է, որ լինում է հեքիաթներում: Կպառկեմ, մի քիչ կկարդամ ու կքնեմ: Սովոր եմ: Ես մեր տանն էլ թախտի վրա եմ քնում,Ալվարդ, ճակատիս գրված է:

Խոսելու հետ միաժամանակ նա հանեց պիջակը, մոտեցավ դրեց թախտի վրա, որը ծածկված էր պատից իջնող տեղական ծաղկավոր գորգով, մեջքի վրա պառկեց թախտին, գլուխը երկարավուն բարձին՝ մութաքային դրեց, ծածկվեց պիջակով, նայեց վեր՝ գորգին փակցված ձեռագործ շիկամազ կատուներին և ասաց քնկոտ ձայնով, կեղծ հորանջելով.

- Բարի գիշեր, փիսիկ-Այլևս ոչ մի ձայն-ծպտուն չլսեմ:

Ալվարդը ժպտաց: Նայեց տղային, նորից ժպտաց, մտավ ննջարան և քիչ անց դուրս եկավ մի անկողին գրկած:

- Դե լավ, աներես հյուր,թող տեղերը գցեմ: Ամոթ է:

- Ազնիվ խոսք՝չարժե,- սրտանց հրաժարվեց Զավենը: - Իմ տեղը շատ հարմար է:

- Ազնիվ խոսք՝ արժե,- ծիծաղեց Ալվարդը,- մանավանդ որ այսօր ես իսկապես վախեցա:

- Ուրեմն այնուամենայնիվ դարպասը ստուգեմ,- ասաց Զավենը:

Նա համոզված էր, որ դարպասը փակ է, որովհետև ինքն էր վերջինը բակ մտել ու գցել սողնակը; Բայց դուրս եկավ, որպեսզի Ալվարդը ազատ զգա իրեն և պառկի մինչև իր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

վերադառնալը: Ձմեռային տաք, խաղաղ գիշեր էր: Կտրվել էր քամին, և ձյունը նույնիսկ չէր ճռճռում ոտքերի տակ: Խաղաղ քնած էր նաև փողոցը: Նույնիսկ շնահաչ չկար: Հեռախոսով Ալվարդին սպառնացող մարդը, եթե միայն մոտիկ հարևան չլիներ, չէր կարող աննկատ անցնել փողոցով, որովհետև ձյունը լուսավորում էր ողջ շրջապատը: Իսկ գուցե նա արդեն դարպասի մոտ է, գուցե նույնիսկ անցել է պարիսպը:

Զավենը գրեթե չտրորված արահետով մտավ այգու ծայրին գտնվող փայտե խորդանոցը և բացվածքից երկար ժամանակ լուռ հետևում էր դարպասին ու պարսպին: Ոչ մի շարժում չկար,: Ոչ մի ձայն: Նա նայեց վեր ու նկատեց, որ հանգավ Ալվարդի սենյակի դռան վերին պատուհանիկից մինչ այդ երևացող լույսը: Ուրեմն Ալվարդը պառկեց: Հետաքրքիր է որտեղ է պառկել, իր ննջարանում, թե թախտի վրա է: Տղայի շունչը կտրվեց, և նա ինքն իրեն ասաց, «Լսիր, դու ինչեր ես մտածում: Դու իսկի մարդ չե՞ս: Գետինը չե՞ս մտնում, անամոթ, նա քեզնից տասնչորս տարով մեծ է»: «Հա, բայց ինքը չի ընդունում, վիրավորված է, որ տարեց կին ես անվանել նրան,- նրա ականջին շշնջաց մեղսամիտ հրեշտակը: -Հետո՝ տարիքն ի՞նչ կապ ունի, չե՞ս տեսնում, թե ինչ աչքերով է նայում քեզ»: «Թյու,- հայհոյեց առաքինի հրեշտակը: - Նա իրեն երախտապարտ է զգում ֆելիետոնի համար, ուրիշ ոչինչ»: «Երախտապարտ,- քրքջաց մեղսամիտ հրեշտակը,- լսիր դու իսկապե՞ս այդքան միամիտ ես, թե քեզ միամիտի տեղ ես դնում: Ախր նա սովորական կին է, ջահել կին, որի տանը մի տարուց ավելի է: ինչ տղամարդ չի եղել: Կին, որը զգվանքի է կարոտ, տղամարդու ձեռքի, շնչառության է կարոտ»: «Անասուն,-հայհոյեց առաքինի հրեշտակը,- հարբած անասուն և ուրիշ ոչինչ: Դրսից էլ կարգին մարդ ես երևում, գալիս խորհուրդ են հարցնում քեզանից, թե ինչպես ապրեն»: «Հա, բայց դա ի՞նչ կապ ունի, բա դու տղամարդ չե՞ս: Չէ: Դե որ այդպես է վերև մի բարձրացիր: Գնա տուն, քնիր, կարող ես,- չարախնդաց մեղսամիտ հրեշտակը »:

«Ինչո՞ւ չեմ կարող»:

«Դե գնա, գնա, ոտքերդ ո՞վ է բռնել»:

«Կմտածի, թե վախեցա»:

«Հեռախոսի զանգի՞ց, թե քո մտքերից»:

«Ի՞նչ ես խոսում, նա ի՞նչ գիտի, թե ես ինչ եմ մտածում»:

«Կի՞նը… Կինը չիմանա, թե ինչ է մտածում իր կողքին գտնվող տղամարդը: Մի ծիծաղեցրու, ուշքս կգնա: Դե շուտ արա, գնա: Հիմա նա թախտի վրա քեզ է սպասում: Շուտ արա, ես ինչ իմանամ ինչ կմտածի»:

Զավենը կանգ առավ իր սենյակի դռան մոտ, մտածեց, տատանվեց ու մինչ մեղսագործ ու առաքինի հրեշտակները կռվում էին նրա հոգում, ինքը դանդաղորեն վեր բարձրացավ փայտե աստիճաններով: Ոտքերը դողում էին, և դողում էր ողջ մարմինը: Բայց մի տեսակ տագնապալի ու հաճելի դող էր: Զգուշորեն բացեց դուռը,փակեց նորից՝ լսելով, թե սողնակը ինչպես կամացուկ չխկաց փականի մեջ, և մութի մեջ ձեռքերը պարզած մոտեցավ թախտին: Նա գիտեր, որ դա անհնարին է, բացառված է, որ Ալվարդը թախտին պառկած լինի և այնուամենայնիվ հիասթափություն ապրեց, երբ հանվելուց հետո բարձրացրեց վերմակի ծայրը: Պառկեց ու թեև մարմինը դողում էր դեռևս, բայց ամաչեց սաստիկ: Լսիր, ասաց ինքն

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

իրեն, իսկապես, ի՞նչ է կատարվում քեզ հետ: Այդ ինչ հիմար բաներ էիր մտածում: Նա քեզ որևէ առիթ տվե՞լ է: Երբ ծանոթացար, քիչ էր մնում տյոտյա անվանեիր, հետո տիկինի անցար, հիմա ի՞նչ է պատահել: Պատճառն ընդամենն այն է, որ նա քեզ խնդրեց ուղղակի Ալվա՞րդ ասել իրեն, որ կատակեց, թե այլևս չի՞ ուզում պատկառելի համարվել: Բայց դա ընդամենը կատակ էր, չէ՞: Դու, որ քեզ հումորի մասնագետ ես համարում, սովորական կատակը, բարյացակամ վերաբերմունքը չե՞ս հասկանում, ինչ է: Ամոթ է, ամոթ, քեզ մի խայտառակի, ասաց ինքն իրեն Զավեն Շարաֆյանը, ռեստորանում տված համերգդ էլ բավական է, որ դեռ հարց է, թե ինչով կվերջանա: Հրահանգիչները ինչպես էին ասում՝ զսպիր քեզ, հանգիստ մնա: Հանգիստ մնա, Զավեն Շարաֆյան, ու այլևս չխմես: Քեզ խմել չի կարելի, հասկանո՞ւմ ես, հասկացիր, էլի, և իմացիր ընդմիշտ քեզ խմել չի կարելի, որովհետև կորցնում ես գլուխդ և սատանան գիտի, թե մտքովդ ինչեր են անցնում: Վերջ տուր: Քնիր, Զավեն Շարաֆյան:

- Զավե՞ն,- հանկարծ լսեց նա և չհավատալով ականջներին պահեց շունչը:

- Զավ՞են,- կրկին լսեց նա:

Ի՞նչ անի, ձևացնի, թե քնա՞ծ է: Բայց ախր շատ հետաքրքիր է, թե ինչ է ուզում ասել:

- Լսում եմ,- կամացուկ ձայնեց նա:

- Եթե քունդ չի տանում, լույսը վառի ու գիրք կարդա: Լույսն այստեղ չի ընկնում,- նրան հասավ տանտիրուհու շշունջը:

- Չէ,- ասաց Զավենը,- երևի կքնեմ:

- Իսկ իմ քունը չի տանում,- հառաչեց Ալվարդը: - Ինչ անում եմ՝ չի տանում,

Զավենը չպատասխանեց: Մեղսամիտ հրեշտակը կրկին գլուխ բարձրացրեց նրա մեջ, հրեց կողքը,քրքջաց ականջին, բայց նա գազազած լռեցրեց նրան: Բավական է: Մի փորձությունը հերիք էր: Չի ուզում հիասթափություն ապրել, նորից տառապել, դատապարտել իր մեղավոր մտքերը,

- Զավեն,- լսեց նա տանտիրուհու անհանգիստ, տագնապալի կանչը: - Դու ոչ մի ձայն չե՞ս լսում, Զավեն:

Ահա, վախեցած է ընդամենը, իսկ ինքը քիչ էր մնում…

- Ի՞նչ ձայն,- սրտնեղած հարցրեց նա:

- Ես ներքևից չրխկոց լսեցի:

Զավենն ականջ դրեց: Ոչ մի ձայն չէր լսվում: Գիշերային. խորունկ լռության մեջ պատի ժամացույցն էր միայն թխկթխկում բարձրաձայն:

- Մի անհանգստանա, Ալվարդ,- խավ ձայնով, ձևացնելով թե քնում է արդեն, բառերը ձգելով, երկարացնելով ասաց լրագրողը: - Ոչ մի աղմուկ չկա: Հետո ես այստեղ եմ- չէ՞…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նա վճռեց, որ այլևս չի արձագանքելու Ալվարդի կանչերին և շնչեց քիչ ավելի համաչափ ու բարձրաձայն, իր կարծիքով քնած մարդու նման:

Բավական է, ասաց նա ինքն իրեն, բավական է, այլևս չփորձես քեզ ծիծաղելի վիճակի մեջ դնել: Սուս ու փուս քնիր, Զավեն:

- Զավե՞ն,- լսեց նա նորից:

Բայց այլևս չպատասխանեց և ավելի կարգավորեց խաղաղ շնչառությունը:

- Զավեն, քնա՞ծ ես…

Տղայի ողջ մարմինը լարված էր: Հիմա նրան թվում էր, թե ձայն է լսում: Բայց այդ ձայները ներքնից չէին գալիս: Մի՞թե Ալվարդն իջնում է մահճակալից, մի՞թե իրոք նրա զգույշ ոտնաձայնն է հնչում հատակի վրա: Է, հա, ինչ կա, քունը չի տանում, վճռել է վառել լույսը ու կարդալ: Բայց, չէ, ոտնաձայները թախտին են մոտենում, ահա հասավ, տարածվեց նաև նրա օծանելիքի խենթացնող հոտը:

- Զավեն,- լսեց նա կնոջ տաք, բորբ շշունջը: - Զավեն ջան, վախենում եմ, թող քեզ մոտ պառկեմ, հա՞…

Ու Զավեն Շարաֆյանը զգաց, որ խելագարվում է…

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Դրսում տիրություն էր անում գարունը: Օդում թեթև քամի կար և իրար էին միախառնվել ծիրանենիներից ու սալորենիներից թափվող սպիտակ ծաղիկները, սպիտակ թիթեռնիկներն ու մեղուները:

Դռնապանը երկար ցախավելով չորացած ծաղկաթերթիկներն էր հավաքում փոքրիկ հրապարակում, իսկ մի քանի բանվորներ ժամանակավոր տախտակամածի վրա կանգնած վերանորոգում, ներկում էին Լենինի արձանը: Քաղաքի գլխավոր ճարտարապետ Խոսրով Նշանյանը ներքնից հետևում էր վերանորոգողների աշխատանքին և հետն էլ միաժամանակ հրահանգներ տալիս հին վանեցի բրիգադիր Եփրեմին, որը թուղթն ու մատիտը ձեռքին գրի էր առնում օտար ականջի համար չափազանց տարօրինակ ու վտանգավոր հնչող նրա ցուցումները և ինքն էլ հարցեր էր տալիս, որոնք պակաս վտանգավոր չէին հնչում:

- Քաղբյուրոյի լրիվ կազմը կկախես քաղկոմի շենքի ճակատից- ասում էր Խոսրով Նշանյանը:

- Հապա Ստալի՞ն,- անհանգստացավ բրիգադիր Եփրեմը:

- Ստալինը թող մնա,- ասաց գլխավոր ճարտարապետը: - Դեռ կարգադրություն չկա: Կկարգադրեն՝ կկախենք:

- Խոսակցություն չի՞ լինի:

Խոսրով Նշանյանը բարկացավ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Մենք կատարողներ ենք, Եփրեմ, ինչ որ կարգադրում են, պիտի անենք:

- Եսի՞մ, քրթմնջաց Եփրեմը, -օղորմածիկ հերս կասեր՝ զգուշություն լավ պան ի: Հապա էն մյո՞ւս քաղբյուրոն,

- Մյուս քաղբյուրոն էլ կկախես նոր հյուրանոցի ճակատից:

- Հապա երկու մեծերը…

- Մալենկովին և Բուլգանինին կկախես մեջտեղում:

- Մալենկովի վրա մի քիչ գործ կա, ընկեր Նշանյան, նոյեմբերին գլուխը պտտվել էր: - Կարկատեք, կախեք,- ուսերը թոթվեց գլխավոր ճարտարապետը: - Հեռվից չի երևա: Ես ի՞նչ անեմ. նոր միջոցներ չեն տրամադրել: Ինչ որ կար՝ լոզունգների վրա գնաց:

- Սպիտակ ներկն էլ է պրծել, - տրտնջաց բրիգադիրը: -Ներողամիտ կլինեք, ընկեր Նշանյան,բայց ընկեր Ստալինի լոզունգներն ավելի կարճ չէի՞ն-Հիմիկվա լոզունգներն էլ ախր շատ երկար են, նե՞րկ կդիմանա…

Վանեցի բրիգադիրը թեև իր կարծիքով աշխատում էր թաքցնել, բայց ակնհայտ բավականություն էր զգում այդ երկխոսությունից և գլխավոր ճարտարապետը զգուշացավ.

- Իմ կարծիքով, Եփրեմ, քո լեզուն է բավականին երկարել… Օղորմածիկ հայրդ այդ կապակցությամբ որևէ իմաստուն միտք չի հայտնել:

- Ասել է,- վախեցած ժպտաց Եփրեմը- Կասեր լռություն ոսկի ի…

- Դե ավելի լավ է ոսկի կուտակես,- խստությամբ ասաց գլխավոր ճարտարապետը: - Անցիր գործի…

Զավեն Շարաֆյանը գլուխը առանձնասենյակի պատուհանից հանած, շնչում էր տաք գարնան բուրմունքը, ականջ լսում քաղաքի գլխավոր ճարտարապետի և բրիգադիրի խոսակցությունը և ծիծաղում սրտանց:

- Մակետից գո՞հ եք, Զավեն Աշոտիչ,- լսեց նա իր թիկունքում: - Դիտողություններ չկա՞ն:

Զավենը շրջվեց ու դեռ ծիծաղկոտ դեմքով նայեց պատասխանատու քարտուղարին:

- Նստիր: Դիտողություններ ունեմ, բայց դրանք ընդհանուր կարգի դիտողություններ են, Միհրան,- ասաց նա՝ տեղավորվելով գրասեղանի ետևում:

- Լսում եմ:

- Ոչինչ չունեմ ասելու, դու լավ մակետներ ես կազմում,- ասաց Զավենը: - Բայց երբ նույն լավը կրկնվում է ամիսներ շարունակ, դառնում է միապաղաղ, ձանձրալի: Ինչո՞ւ երբեմն-երբեմն բաժինների տեղերը չես փոխում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ընդհանուր կարգ է,- զարմացավ Միհրան Գալստյանը: -Ես կենտրոնական թերթերին եմ ընդօրինակում:

- Բայց կենտրոնական թերթերը ամեն օր են լույս տեսնում, իսկ մեր թերթը շաբաթական մեկ անգամ:

- Ինչպես ուզում եք, այնպես էլ կանեմ, Ջավեն Աշոտիչ, բայց դե առաջնորդողը հո չորրորդ էջ չեմ տանելու:

- Առաջնորդողը թող մնա: Բայց ասենք թե պրոպագանդիստական լավ հոդված ունեք և ուզում եք, որ մարդիկ անպայման կարդան, ինչո՞ւ չի կարելի այդ հոդվածը հենց քո ասած չորրորդ էջում տեղավորել, երբ գիտենք, որ ընթերցողի սիրած էջը չորրորդն է: Նա սովորականի պես բացելու է նախ չորրորդ էջը, որպեսզի մարզական լուրերին ծանոթանա և տեսնի, թե ինչ պատահարներ են եղել քաղաքում, և հանկարծ նկատելու է մեր հոդվածը: Պա՞րզ չէ, որ ընթերցողն անպայման կզարմանա ու կհետաքրքրվի, թե այս ինչ նյութ է, որ չորրորդ էջում են տպագրել…

- Հասկացա,- ծիծաղեց Միհրան Գալստյանը: - Ես ուղղակի կենտրոնական…

- Այդ միտքը ինձ հենց կենտրոնական թերթերը հուշեցին,- շարունակեց Ջավենը: - Ուշադրություն դարձրե՞լ ես, որ նրանք ֆելիետոնները չորրորդ էջից երրորդ էջ են տեղափոխել: Ինչո՞ւ: Որովհետև ֆելիետոնը որտեղ էլ տեղավորես՝ կկարդան: Եվ ընդհանրապես պետք է քանդել, փսխել քարացած կանոնները: Կարևորն այն է, որ նյութերը լավ լինեն, հետաքրքիր լինեն, մարդկանց սրտից խոսեն, տեղավորիր որ էջում ուզում ես՝ ընթերցողը կգտնի ու կկարդա: Ու հետն էլ ակամա կողքի նյութերը: Թե չէ ինչ է ստացվում: Առաջին էջը բացում են, նայում՝ առաջնորդող է, հասկացանք, հանրապետական լուրեր, հասկացանք: Երկրորդ էջը նայել չարժե՝ գիտեն, որ ճառեր են: Երրորդ էջո՞ւմ ինչ կա, բժշկական զրույց, ռեպորտաժ գործարանից, հանրապետական մամուլից վերցրած տեղեկանք՝ Չինաստանի տնտեսական զարգացման նոր ուղիները… Հասկացանք- Հիմա հանգիստ նստենք ու կարդանք չորրորդ էջը, որտեղ և թարմ տեղեկություններ կան արտասահմանից, և ֆելիետոն կա, և երգիծանք ու հումոր կա, և մարզական լուրեր, և միլիցիայի բաժնի տեղեկանքը քաղաքում վերջին շաբաթվա ընթացքում տեղի ունեցած հակահասարակական երևույթների պատահարների մասին: Այդ ամենին գումարած նաև՝ հայտարարություններ և մահազդեր: Եղա՞վ:

Միհրան Գալստյանը համարյա դռփում էր տեղում՝ մարտի նետվելու պատրաստ նժույգի նման:

- Հասկացա, Ջավեն Աշոտիչ, հենց հիմա կփորձեմ- Վաղը նույն նյութերով երկու մակետ կներկայացնեմ ձեզ…

- Փորձիր,- ասաց Ջավենը:

Միհրան Գալստյանը դեպի դուռը նետվեց, բայց կանգ առավ ձեռքը բռնակին և շրջվեց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Զավեն Աշոտիչ, մի մեծ խնդրանք ունեմ: Ավելի ճիշտ՝ մայրիկս է խնդրում: Ես նրան այնքան եմ պատմել ձեր մասին, որ- Մի խոսքով, շատ է ուզում ծանոթանալ ձեզ հետ…Երեկ երեկոյան ասաց՝ Միհրան, հարիսա եմ դնում, վաղը ընկեր Շարաֆյանին մեր տուն հրավիրիր…

Զավեն Շարաֆյանը ժպտաց.

- Իմ կողմից շնորհակալություն մայրիկիդ, Միհրան, բայց չեմ կարող գալ, շատ եմ զբաղված:

- Մայրիկս շատ կվշտանա,- ետ չկանգնեց, խնդրեց պատասխանատու քարտուղարը: - Ասաց մեր քաղաքում օտար մարդ է ընկեր Շարաֆյանը, թող գա տան ճաշ ուտի- Մայրիկս իսկապես աննման հարիսա է եփում, գիտե՞ք: Ուզո՞ւմ եք ընկեր Զուլոյանին հարցրեք: Նա շատ է եղել մեր տանը: Ուզո՞ւմ եք ընկեր Զուլոյանին էլ հրավիրենք, Զավեն Աշոտիչ- Եթե դեմ չեք…

Զավեն Շարաֆյանը թափահարեց գլուխը.

- Չի ստացվի, Միհրան: Ես իրոք շատ եմ զբաղված:

- Դե լավ, հետաձգենք վաղը: Վաղը կգաք, չէ՞ …

- Խոսք տալ չեմ կարող, Միհրան:

- Ափսոս,- ասաց Միհրանը, հասկանալով, որ պնդելը զուր է և բացելով դուռը: - Ափսոս- Մայրիկս այնպես էր ուզում ձեզ հետ ծանոթանալ…

Իրադրության էությունը ավելի շատ ծիծաղելի էր, բայց Զավեն Շարաֆյանը դառնություն զգաց: «Մայրիկս շատ է ուզում ծանոթանալ ձեզ հետ»: Բա մայրիկդ որտե՞ղ էր մինչև հիմա, Միհրան Գալստյան: «Մեր քաղաքում օտար մարդ է ընկեր Շարաֆյանը, թող գա տան ճաշ ուտի»: Մի՞թե ամիսներ շարունակ նույն սենյակում քո կողքին չեմ եղել, Միհրան Գալստյան, չէ՞իր տեսնում, որ հաճախ, շատ հաճախ բռունցքով սեղմում էի ստամոքսս, որովհետև քաղցից նվվում, ցավում էր անիծվածը, չէր թողնում մտածեմ: Իսկ դու ասում էիր, ըհը, ընդմիջման ժամն է, գնամ տուն նախաճաշեմ ու գամ: Ինչո՞ւ այս երկար ու ձիգ ամիսների ընթացքում գոնե մի անգամ չասացիր՝ գնանք մեր տուն, միասին նախաճաշենք ու գանք, մենակ տղա ես, Զավեն: Ի՞նչ կլիներ, մարդ աստծո: Կսնանկանայի՞ք, ինչ է: Մինչև հիմա ուտելու ոչինչ չունեիք, հիմա միանգամից եղա՞վ: Եվ պատճառը միայն այն է, որ ինձ խմբագի՞ր են նշանակել: Ամոթ է, չէ՞, Միհրան Գալստյան, ամոթ է, ճիշտ է, հիմա էլ քաղցած եմ, բայց եթե հանկարծ համաձայնեի ու գայի ձեր տուն՝ ես ի՞նչ կմտածեի իմ մասին: Կարո՞ղ էի ձեր տանը մի կտոր հաց տանել բերանս, իմանալով, որ այդ մի կտոր հացը դու և քո մայրիկը ոչ թե այս քաղաքում ոչ ոք չունեցող,

հացի և տաք ճաշի կարոտ Զավենին եք տալիս, այլ «Լուսաբաց» թերթի խմբագիր Զավեն Աշոտի Շարաֆյանին: Չէ, չէ, երևի դա մանրախնդրություն է, բայց ես ձեր տան հացը չեմ ուտի, Միհրան: Կներես:

- Կարելի է,- դուռը կիսաբաց արեց իլյուստրացիայի բաժնի վարիչ Քաջիկ Սահառունին:

- Ներս եկ, Քաջիկ,- հրավիրեց խմբագիրը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ընկեր Շարաֆյան, այլևս համբերել չեմ կարող,- հոնքերը երեխայավարի կիտած, պոռթկաց իլյուստրացիայի բաժնի վարիչը: - Միհրանը իմ խաչբառները չի ընդունում:

- Ինչո՞ւ:

- Դե ոնց ասեմ: Ասում է՝ խմբագրին դուր չեն գալիս:

- Ես այդ թեմայով նրա հետ չեմ խոսել,- զարմացավ Զավենը և սեղմեց զանգի կոճակը: - Միհրան,- դիմեց անմիջապես հայտնված քարտուղարին,- ես քեզ ասել եմ, որ խաչբառեր չընդունե՞ս:

Միհրան Գալստյանը կարմրեց:

- Ասել եմ, թե Սահառունու խաչբառները ինձ դուր չե՞ն գալիս:

- Ես ձեզ առանձին կասեմ, ընկեր Շարաֆյան,- կմկմաց պատասխանատու քարտուղարը,

- Ոչ, ասա Քաջիկի ներկայությամբ:

Միհրան Գալստյանը հանեց թաշկինակն ու սրբեց ճակատին հայտնված քրտինքը:

-Ես ենթադրում էի, թե ձեզ դուր չեն գա:

- Ինչո՞ւ:

- Դե- որովհետև նա Կայծակ Չոփուրյանի փեսան է:

- Ի՞նչ- իսկ- ի՞նչ կապ ունի, ընկեր Գալստյան:

- Դե- դե որ նա ձեր դեմ ստոր արարք է թույլ տվել, ես էլ մտածեցի, թե…

Զավեն Շարաֆյանը մի պահ լուռ նրան էր նայում.

- Ընկեր Գալստյան,- վերջապես ասաց նա: - Համեմատել չեմ ուզում, բայց քո արարքը ևս պակաս ստորություն չէ: Երեխա չես՝ որ ասեմ ներողություն խնդրիր: Բոլոր դեպքերում կարգին իրեն նման բաներ թույլ չէր տա- Գնա և մտածիր այդ մասին և ընդհանրապես, ընդհանրապես մտածիր, նախքան որևէ խաղի մեջ մտնելը…

Միհրան Գալստյանը գունատվեց.

- Ես այդպես էլ, գիտեի,- ասաց նա: - Ես գիտեի, որ խմբագիր դառնաք թե չէ՝ ինձ հեռացնելու եք աշխատանքից:

- Իմ խորհուրդը քեզ դեռևս տեղ չի հասել, ընկեր Գալստյան, - ավելի դառնացավ խմբագիրը: - Մեկընդմիշտ իմացիր՝ քանի դու լավ ես աշխատում, եթե նույնիսկ մտադիր էլ լինեմ քեզ չեմ հեռացնի: Իսկ ես առայժմ քո աշխատանքից գոհ եմ: Գնա մտածիր, Միհրան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երբ պատասխանատու քարտուղարը դուրս եկավ առանձնասենյակից, Քաջիկ Սահառունին ժպտաց մեղավոր.

- Ներողություն, Զավեն Աշոտիչ, սրտիցս բեռ ընկավ: Ես էլ կարծում էի, թե…

-Քաջիկ,- ասաց խմբագիրը: - Առիթը դու տվեցիր: Օգտվեմ և ասեմ, որ քո կազմած խաչբառերը ինձ իսկապես դուր չեն գալիս:

- Ճի՞շտ- շվարեց Սահառունին:

- Ճիշտ եմ ասում: Ես խաչբառի սիրահար եմ: Միայն խաչբառի համար «Օգոնյոկ» եմ բաժանորդագրվել, երբ գիտես ինչքան թանկ արժե- Եվ գիտե՞ս, թե ինչով դուր չեն գալիս: Ոչնչով չի երևում, որ քո խաչբառը մեր քաղաքում է կազմված, կամ գոնե Հայաստանում: Բոլորովին: Հարցերը վայրիվերո մեկ այստեղից են, մեկ այնտեղից: Ո՞ւմ է հետաքրքրում, ասենք, թե Հնդկական օվկիանոսում ձկան ինչ տեսակներ կան, կամ թե ինչ անուն ունի Մախրովկա գետի վտակներից մեկը, երբ քաղաքի խանութներում ձկան ոչ մի տեսակ չկա, և ընթերցողը ընդհանրապես չգիտի, որ Մախրովկա անունով գետ գոյություն ունի, ուր մնաց թե վտակի անունն իմանա: Այնպես որ, Քաջիկ եղբայր, որպեսզի արածդ գործը և հաճելի լինի, և օգտակար, մի քանի խաչբառ կազմիր հենց մեր քաղաքի վերաբերյալ նյութերով, Հայաստանի վերաբերյալ նյութերով, բնակավայրերի պատմական հին ու նոր անվանումները հիշեցրու,օգտակար հանածոները թվիր, աշխարհագրական տեղեկություններ հուշիր, նշանավոր մարդկանց անուններն ու տիտղոսները մեջտեղ բեր, նյութ շատ կա: Ով չգիտի, թող իմանա:

Քաջիկ Սահառունին գլխով էր անում շարունակ:

- Ուրեմն համաձայն ես,- հարցրեց Զավենը:

- Լրիվ,- նորից գլխով արեց տղան,- հենց այդպես էլ կանեմ, Զավեն Աշոտիչ:

Խմբագիրը չկարողացավ թաքցնել ժպիտը:

- Այնպես որ մնացած կասկածներդ մտքիցդ հանիր, և յուրաքանչյուր համարում խաչբառ տուր: Պայմանավորվեցի՞նք:

Քաջիկ Սահառունին գլխով արեց երջանկացած:

- Հա, Քաջիկ, ընկեր Զուլոյանից ինձ մնացած թղթապանակը նայելիս, բնակարանի կարիք ունեցող աշխատողների ցուցակում քո անունը չտեսա: Դու տուն չե՞ս ուզում, ինչ է…

Իլյուստրացիայի բաժնի վարիչը տխրեց միանգամից:

- Ինձ ով կթողնի, որ իմ տունն ունենամ,- հառաչեց նա:

Իմ տունը: Տուն: Սյունեցիներն ու ղարաբաղցիները տանը տոն են ասում: Տոն: Ճիշտ է, էլի, տոն է, երբ տուն ունես: Զարմանալի է, թե չորս պատերի մեջ գտնվող փոքրիկ տարածությունը ինչպես է դառնում մարդու համար ամենակարևորը, ամենանշանակալին: Իհարկե, երևի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

իդեալական տարբերակն է, երբ մարդ նույնն է լինում ամենուրեք: Բայց հիմնականում մարդիկ դրսում մի տեսակ են լինում, իսկ տանը՝ բոլորովին ուրիշ տեսակ: Օրինակ Զավեն Շարաֆյանի երևանյան տան հարևան Գերասիմ Տոնյանը: Ձիասայլակով նավթ է վաճառում: Ձին կանգնեցնում է որևէ տեղ, իջնում է սայլից, ձեռքն է առնում պղնձե զանգակն ու զնգացնում, հրավիրում գնորդներին: Նրա ամեն ինչը կեղտոտ ու սև է՝ ձեռքերը, դեմքը, վիզը, իսկ պիջակն ու շալվարը ուղղակի փայլում են նավթայուղից: Բնակիչները զանազան դույլեր ու ամաններ ձեռքներին մոտենում են նրան- և հենց առաջին գնորդի ու նրա միջև կռիվ ու աղմուկ է սկսվում: Անխիղճ, շատ անխիղճ ձևով նավթը պակաս է լցնում Գերասիմ Տոնյանը: Կարծես թե քիչ է, որ հսկայական բութ մատը անընդհատ իր լիտրանոց թիթեղյա ամանի մեջ է պահում և ուրեմն ամեն լցնելուց գողանում է մի հսկայական բթաչափ նավթ: Կարծես թե քիչ է, որ ամանն էլ կտրել է վերևից և պակասեցրել տարողություն: Դրա հետ միասին շիթն այնքան ուժեղորեն է բաց թողնում գնորդի ամանի մեջ,որ փրփուրը լցնում է ամբողջ պարունակությունը: Գնորդին թվում է,թե հիմա ուր որ է կթափվի նավթը, այնինչ տանը պարզում է, որ ամանի կեսն էլ չի լցվել: Ինչ ասես ասում են Գերասիմ Տոնյանին. էլ գող, էլ ավազակ, էլ անխիղճ ու անհոգի,էլ մուրացկան ու անպատկառ: Պետքն էլ չի: Ինքն ավելի շատ է գոռգոռում, ավելի շատ է հայհոյում, ձայնն էլ գլուխն է գցում ու բղավում հրապարակով մեկ:

- Տեսեք, մատիս վրա էլ են խոսում, մատս կտրեմ գցե՞մ:

- Բա որ քեզ լիքը լցնեմ, էս մարդիկ առանց նա՞վթ մնան:

- Բա նավթն առանց փրփուրի կլինի՞ , բա գարեջուրն առանց փրփուրի կլին՞ի, բա միսն առանց ոսկոր կլինի՞ :

- Կեղտ ու մրի մեջ աշխատում եմ, բա մի քիչ օգուտ չունենա՞մ: Իմ տակառն էլ են փրփուրով լցնում, ի՞նչ անեմ, փչեմ վրայից թափե՞մ…

Դա դրսում: Իսկ տանը: Տանը նավթավաճառ Գերասիմ Տոնյանի ձայնը գրեթե չի լսվում: Տուն է մտնում թե չէ՝ լողանում ու սանրվում է, օծանելիք է լցնում գլխին, որպեսզի նավթի հոտը հեռացնի, սպիտակ վերնաշապիկ է հագնում, փողկապ կապում, հագնում անթերի կարված կոստյումներից մեկը, նստում է փայտե պատշգամբում, թեյ խմում և պատշգամբից պատշգամբ խաղաղ զրուցում իր հարևան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Պարգև ժամկոչյանի հետ: Զանազան հարցեր է տալիս՝ մոտավորապես այս բնույթի. ի՞նչ ես կարծում, Պարգև, ճիշտ չե՞ն ասում, թե աշխարհը բեմ է, մարդիկ դերասան, կյանքը թատրոն է, մահը վարագույր: Կամ՝ ավելի ճիշտ չ՞էր լինի, Պարգև, եթե մարդ ոչ ծնվեր, ոչ էլ մեռներ: Լսում էր, տմբտմբացնում գլուխն ու ասում,

- Է, ճակատի գիր է, էլի: Ես ուր, նավթ ծախելն ո՞ւր: Ուր այ էսպես գլխիս մի քիչ զոռ տայի, ես էլ փիլիսոփա կդառնայի, չէ՞, Պարգև:

- Դու արդեն փիլիսոփա ես,- ասում էր Պարգևը:

- Է, բայց որ կոչում չունե՞մ…

- Կոչումն ինչի՞դ է պետք, փող ունես,- չէր դիմանում, խայթում էր Պարգևը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Հա, բայց աշխարհին ի՞նչ կպատահեր, որ փող էլ ունենայի, կոչում էլ:

- Դրանք իրար հետ չեն լինում,- ակամա զայրանում էր փիլիսոփան:

- Չեն լինում, չեն լինում, ինչի՞ ես ջղայնանում, հարևան,- իր հերթին նեղանում էր Գերասիմը: - Մարդ ենք, էլի, մեր տան մեջ նստած փիլիսոփայում ենք, հո նավթ չենք առնում-ծախում: - Ու բարկացած, փիլիսոփայից վրեժ լուծելու համար, ծուլորեն ձայն էր տալիս կնոջը: - Օվսաննա, ախորժակս բացվեց, սիրուն ջան, տոլման տաքացրու- գինին էլ սառեցրու…

Նավթավաճառ Գերասիմ Տոնյանի ճիշտ հակապատկերն էր մյուս հարևանը՝ ժամագործ Հրայրը, որի արհեստանոցը Աբովյան փողոցի վրա էր: Զավենն ապակե ցուցափեղկի ետևից ամեն անգամ տեսնում էր նրան, երբ անցնում էր Աբովյանով: Միշտ ճաշակով ու նրբագեղ հագնված, խողովակաձև խոշորացույցը այտով ու կոպով ճարպկորեն աչքին սեղմած, նա ժամացույցներ էր վերանորոգում, և հաճախորդների հետ խոսում էր այնքան քաղաքավարի, այնքան բարեկիրթ, որ նրան անծանոթ մեկը եթե բարձրաձայն չասեր էլ, անպայման կմտածեր ու մտքում կասեր երանի քո ընտանիքին:

Իսկ նրա ընտանիքը պատշգամբից ու պատուհանի վարագույրի ետևից ճանապարհին էր նայում, որ տեսնի, թե ինչ վիճակում է տուն վերադառնում ժամագործ Հրայրը: . Եվ հենց տեսնում էին, որ հայտնվում է օրորվելով, իրար ձայն էին տալիս սրտապատառ ու փախչում, թաքնվում հարևանների տներում: Որովհետև տուն մտներ թե չէ, ժամագործ Հրայրը գոռգոռալով լրացուցիչ խմիչք էր պահանջելու և գործի էր դնելու բռունցքները և այն ամենն, ինչ ձեռքն ընկնում էր: Որովհետև այլևս իրեն ձիգ պահելու, բարեկիրթ երևալու հարկը չուներ, օտար մարդիկ չկային, նա տանն էր, իր տանը և իրեն պահում էր այնպես, ինչպես իր իսկական էությունն էր թելադրում, ինչպես ուզում էր:

Իսկ Զավեն Շարաֆյանի համար տունը անկախության և երջանկության խորհրդանիշն էր: Նա ծնվել և ողջ կյանքը անց էր կացրել ընդհանուր կոմունալ բնակարանում, որտեղ երեք հարևաններով էին ապրում և ամեն ինչ երեքական էր: Խոհանոցում երեք նավթավառ էր դրված՝ երեք տարբեր սեղանների վրա, պատշգամբում երեք պարան էր կապված, միակ լվացարանի կողքին երեք օճառ էր դրված և երեք ավել՝ զուգարանում: Ճիշտ է, հաշտ ու խաղաղ էին ապրում, և շատ հաճախ միասին ճաշում էին պատշգամբում, իսկ երեկոները պարտադիր լոտո խաղում ատամներով կլիսելով չոր լոբիները ու դնելով թվերի վրա: Բայց առանձնանալու, ինքդ քեզ հետ մնալու հնարավորություն չկար, նույնիսկ միայնակ

մտածելու, տխրելու և ուրախանալու հնարավորություն չկար: Պետք է ապրեիր այն ամենով, ինչով ամբողջ ընդհանուր բնակարանն էր ապրում: Եթե մեկը ձուկ էր տապակում, ուզեիր թե չուզեիր՝ ամբողջ օրը պիտի շնչեիր այդ հոտը: Եթե մեկը լաց էր լինում, պարզ չէ՞, որ մնացած բոլորը սփոփելու էին: Եթե մեկը հիվանդանում էր, ով իրեն թույլ կտար նշելու իր ծնունդը: Իրար հետ էին ապրում մարդիկ, իսկ Զավեն Շարաֆյանը չէր էլ պատկերացնում, թե ինչպես կարելի է մենակ ապրել: Առանձին, առանձնացված: Եվ ընդհանուր հարմարություններով ապրելը նրան

միայն մի կողմով դուր չէր գալիս: Նա ըմբռնում էր, հասկանում էր, որ եթե մարդկանց մեջ ես ապրում, ապա բնականաբար ընդհանուր պետք է լինեն հացը, երգը, ցավը, ուրախությունը,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

տրտմությունը, հոգսը, գրեթե ամեն ինչ: Երազանքից բացի: Ընդհանուր կոլեկտիվ երազել չի կարելի: Դա մարդու անձնական գործն է: Երբևէ չի պատահել, որ տարբեր մարդիկ նույն երազը տեսնեն: Ուրեմն նույն երազանքն էլ ունենալ չեն կարող:

Այնպես որ իր դեմոկրատական դաստիարակության և դրանից բխող հայացքների հետ միասին, Զավեն Շարաֆյանը մասնավոր սեփականատիրական ընդգծված հակումներ ուներ, երբ խոսքը վերաբերում էր տանը, անկյունին, որտեղ կարող ես առանձնանալ, քո մտքերի հետ մնալ ու երազել առանց վախենալու, թե հիմա ուր որ է կհայտնվի մեկը, որպեսզի հարցնի,

- Ի՞նչ է պատահել, աչքիս մի տեսակ ես երևում:

- Ինչո՞ւ ես տխուր:

- Ինչո՞ւ ես ուրախ…

- Հո հիվանդ չե՞ս- Աչքերդ կարմրած են.

- Ի՞նչ ես քեզ ու քեզ ժպտում:

Իսկ նա հենց այդ էր ուզում; Ուզում էր ժպտալ ինքն իրեն ու դրա համար որևէ մեկի պատասխան չտար:

Եվ վերջապես ստացավ այդ հնարավորությունը քսանչորս տարեկան հասակում, երբ ուրիշները քառասուն տարեկանում անգամ դրան չեն արժանանում: Հեռու չգնանք, ինչպես, օրինակ, իր հայրը, մայրը, հարևանները: Արժանացավ, որովհետև նրան նշանակեցին «Լուսաբաց» թերթի խմբագիր: Գրեթե մի տարի նրա դիմումը Մկրտիչ Զուլոյանի թղթապանակում էր, բնակարանի կարիք ունեցող աշխատակիցների ցուցակում: Կարիքավորները շատ էին, բնակարանները՝ քիչ: Սովորական պայմաններում, ըստ հերթի, հաշվի առնելով, որ նա մայրաքաղաքից աշխատանքի նշանակված մարդ է, Զավեն Շարաֆյանը բնակարան կարող էր ստանալ առնվազն երեք տարուց հետո: Իսկ մի քանի օր առաջ քաղխորհրդի նախագահի տեղակալ Սահակ Միրզոյանը զանգ տվեց ու ասաց.

- Զավեն Աշոտիչ, երկու բնակարան ենք առաջարկում ձեզ: Մեկը հին շենքում է՝ երկու սենյականոց, իսկ մյուսը խմբագրության դիմացի նորակառույց շենքում, բայց մի սենյականոց: Գնացեք տեսեք՝ որը հավանում եք, վերցրեք:

- Կոմունա՞լ բնակարան է,- հարցրեց Զավենը: - Հարմարություններն ընդհանո՞ւր են:

- Չէ, ինչ եք ասում,- զարմացավ Միրզոյանը: - Ունեինք- չունենք, մի խմբագիր ունենք:

- Առանց տեսնելու՝ մի սենյականոցն եմ ուզում,- ասաց խմբագիրը:

Սահակ Միրզոյանը հեռախոսալարի ծայրում լռեց մի պահ:

- Մի փոքր բարդություն: Շենքում դեռևս հեռախոս չկա: Ստիպված պետք է լինենք ձեր նախկին համարը տեղափոխել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ոչ մի դեպքում,- հրաժարվեց Զավեն Շարաֆյանը: - Ես Ալվարդ Բարսեղյանին խոսք եմ տվել, որ հեռախոսը նրան եմ թողնելու: Տղան ուսանող է Երևանում: Նրանց հեռախոսը շատ է պետք:

- Դե լավ,- հառաչեց Միրզոյանը,- որ խոսք եք տվել, ի՞նչ կարող ենք անել: Մեր սիրելի խմբագիր:

* * *

Սիրելի խմբագիր:

Ո՞վ կսպասեր; Գոնե Զավենի մտքով երբևէ չէր անցնի, թե երկու տարի բաժնի վարիչ աշխատելուց հետո նրան միանգամից խմբագիր կնշանակեն: Եվ այն էլ ինչ պայմաններում, երբ մազ էր մնացել կուսակցական նկատողություն ստանար և հեռացվեր աշխատանքից; Երբ հանձնաժողովը Կայծակ Չոփուրյանի ջանասիրությամբ հավաքած նյութերը դատախազությանն էր հանձնել Զավեն Շարաֆյանին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Երբ քաղկոմի և քաղխորհրդի աշխատողները այնպես էին խուսափում նրանից, հանդիպելիս այնպես էին վայրկենապես անհետանում, ասես նա բորոտ լիներ: Երբ թերթի կուսակցական կյանք բաժնի վարիչ, փաստորեն անբարոյականության պատճառով քաղկոմից թերթ տեղափոխված Նիկողայոս Սևյանը ծանր-ծանր տմբտմբացնելով գլուխն, ասում էր.

- Կուսակցականի համար, Զավեն, քաղկոմը սրբության տաճար է: Եթե այնտեղ քո մասին բացասական կարծիք կա, դու այլևս անելիք չունես: Թող և խոհեմաբար հեռացիր անմիջապես:

- Մեփական փորձով է ասում,- ծիծաղում էր արդյունաբերության բաժնի վարիչ Ջիվան Ենգոյանը,- տո կթողնե՞ն, որ գնա: Էն անեկդոտի նման է, որ ասում է, ես մոթալին թողնում եմ, մոթալն ինձ չի թողնում: Հիմա նույնն է՝ մինչև գոնե մի նկատողություն չկպցնեն, բաց չեն թողնի: Դրանց տերը չմեռնի:

Անցած բան է, հո Զավենը կարող էր խոստովանել իրեն, որ ինքն էլ մի պահ մտածեց ամեն ինչ թողնելու և անմիջապես հեռանալու մասին: Իր բացակայությամբ թող ինչ ուզում են անեն, հերն էլ անիծած, որովհետև ինքն այլևս չի ուզում տեսնել այդ մարդկանց,այդ դեմքերը: Չի ուզում խոսել նրանց հետ:

Բայց միայն մի պահ:

Զավեն Շարաֆյանին երկու բան էր պահում քաղաքում:

Ամոթը և Ալվարդ Բարսեղյանը:

Ամոթը, որովհետև իսկապես ամոթ էր ընդունել պարտությունը առաջին իսկ դժվարության առաջ ընկրկել, նահանջել, թողնել փախչել, երբ անմեղ ես: Երբ իրավացի ես: Եթե դու հիմա փախչես, Զավեն, ասում էր իրեն Զավեն Շարաֆյանը, ամբողջ կյանքում փախչելու ես երկչոտ նապաստակի նման: Ամեն ինչից պիտի փախչես: Որովհետև փախչելը այլևս սովորություն է

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

դառնալու քեզ համար: Որովհետև դժվար թե երբևէ ավելի ազնիվ ու մաքուր լինի քո մղած կռիվը, որքան հիմա: Եթե հիմա չամաչեցիր, այլևս երբեք չես ամաչելու: Իսկ դու դեռ այնքան գործ ունես: Չէ՞ որ դու աշխարհ ես եկել ինչ-որ բան անելու համար և այնպիսի մասնագիտություն ունես, որ ի վիճակի ես, կարող ես ու նաև պարտավոր ես օգնել մարդկանց: Հո քեզ համար չես անում, որ մի օր քեզ իրավունք տաս ասելու՝ լավ, էլ չեմ ուզում, հրաժարվում եմ, կապրեմ, ինչպես ապրել եմ մինչև հիմա: Թեև քո կյանքն էլ մի կյանք չէ, բայց դու ուրիշների, ավելի կարիքավորների, քեզնից խեղճերի համար ես կոչված ապրելու և կռվելու, Զավեն Շարաֆյան: Դու էլ քո տեսակի մեջ ես բժիշկ: Իսկ բժիշկը կարո՞ղ է, իրավունք ունի՞ փախչելու հիվանդից, անօգնական վիճակում

թողնելով նրան, թե ինչ է, ինչ, նկատողություն են ուզում հայտարարել: Այդ նկատողությունը և հետագա կյանքում քո ստանալիք բոլոր նկատողությունները կարո՞ղ են համեմատվել Անուշ մայրիկի աչքից ցած ընկած երախտագիտական արցունքի մի կաթիլի հետ անգամ: Կարո՞ղ են խլացնել տրիկոտաժագործ բանվորուհիների ուրախության ճիչը, երբ Զավեն Շարաֆյանի հոդվածից հետո նրանց ստիպված լրիվ աշխատավարձ վճարեցին երկու ամսվա հարկադիր պարապուրդի համար: Կարո՞ղ են մթագնել այն տասնյակ ու տասնյակ նամակների տպավորությունը, որ խմբագրությունն ստացավ և որոնց հեղինակները՝ տարբեր ձեռագրերով, տարբեր գրելաձևով ու բառերով զարմացած ու հուզված իրենց շնորհակալություններն էին հայտնում «Անմաքուր ձեռքեր» ֆելիետոնի համար և հայտարարում, թե մի անգամ ևս համոզվեցին, որ արդարություն կա և այդ արդարությունը ի վերջո հաղթանակում է: Ճշմարտությունը հիվանդանում է, բայց չի մեռնում: Կարծես թե հասարակ ու պարզ միտք է: Բայց բոլոր մեծ մտքերն էլ հասարակ ու պարզ են լինում:

Մի՞թե այդ խոսքը նաև քեզ չի վերաբերում, Զավեն Շարաֆյան: Ճշմարտությունը հիվանդանում է, բայց չի մեռնում: Այդպես է: Այդպես պետք է լինի: Ուրեմն ոչ մի խուճապ, ոչ մի նահանջ: Մանավանդ որ դու մենակ չես: Նոր մարդ ես այս քաղաքում, բայց միայնակ չես: Համակիրներ ունես և այն էլ այնպիսի հզոր ու ազդեցիկ դեմքեր, ինչպիսիք դատախազն ու քիմկոմբինատի դիրեկտորն է: Համակիրներիդ թիվը իհարկե շատ ավելի մեծ է, առանց սնապարծության կարող ես ասել,որ ընթերցողների բացարձակ մեծամասնությունը: Բայց, դժբախտաբար, նրանք քեզ համար ոչինչ անել չեն կարող՝ հասկանալուց ու կարեկցելուց բացի, որովհետև իրենք են առաջին հերթին կարոտ հասկացվելու և օժանդակության: Եվ նրանց հույսը աշխարհում նաև դու ես:

Զավեն Շարաֆյանի համար այդ խրթին օրերին բոլորովին անսպասելի էր Արմեն Զատիկյանի այցը խմբագրություն: Ի վերջո նրանք այնպես էին բաժանվել, որ թվում էր, թե նոր հանդիպումը բացառված է: Բայց, չէ, ներս մտավ աղմուկով, մեկնեց ձեռքը և առանց Միհրան Գալստյանի կողմը նայելու,որն ինչ-որ թղթեր էր փնտրում՝ խմբագրի սենյակը տանելու համար, բացականչեց.

- Այ հիմա հասկանում եմ ձեզ, ընկեր Շարաֆյան:

- Ի՞նչ է պատահել,- զարմացավ լրագրողը:

-.. Իմացա բյուրոյի և մնացածի մասին ու շտապեցի գալ, անձամբ, սրտանց շնորհավորել ձեզ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ինչի՞ համար,- հարցրեց Զավենը, չհասկանալով՝ ծաղրում է այդ մարդը, թե լուրջ է խոսում:

- Սեփական մաշկի վրա զգալու համար, որ ոչ մի ազնիվ արարք, ոչ մի լավ բան անպատիժ չի մնում: Այ, հիմա համոզված եմ,ընկեր Շարաֆյան, որ կհասկանաք ինձ: Իհարկե,ոչ լրիվ,որովհետև առաջին անգամ եք դեռ զգում, թե ինչպես է օղակը սեղմում ձեր կոկորդը և առաջին անգամ եք տեսնում մարդկանց, որոնք պատրաստ են հոշոտելու ձեզ, որովհետև ինքնուրույն եք մտածում ու գործում: Այո, սիրելի ընկեր, սկզբում ես կարծեցի, թե ուղղակի հանձնարարություն եք կատարել՝ ջրի երես հանելով ավազակների մի խումբ, որպեսզի ղեկավարները ուրախ-ուրախ հեռացնեն նրանց և իրենց ուզած նոր ավազակներին տեղավորեն: Ինչպես անում են սովորաբար՝ թերթն օգտագործելով: Բայց եթե ձեզ զզզում են, ուրեմն դա հանձնարարություն չի եղել: Եվ ես եկել եմ ասելու, որ հարգում եմ ձեզ:

- Շատ շնորհակալություն,- ակամա ժպտաց լրագրողը: -Մտքովս չէր անցնի, թե պատժվելու համար գովասանքի կարժանանամ:

- Ես ձեզ շատ ավելի կհարգեի, եթե հեռացնեին աշխատանքից: Իսկ եթե կուսակցությունից էլ հեռացնեին, կհարգեի ամբողջ հոգով: Ավելի քան ինձ: Բայց դժբախտաբար դուք երևի դեռ այն ուժը չեք, այն անձը չեք, որը խանգարում է նրանց: Բայց ես հույսս չեմ կտրում:

Միհրան Գալստյանը վերցրեց իր թղթերն ու բացահայտ, խեթ-խեթ նայելով ձախորդ գյուտարարին, արագ քայլերով դուրս գնաց:

- Վախեցավ,- հանկարծ գոհ ծիծաղեց Արմեն Զատիկյանը: - Այ, ընկեր Շարաֆյան, գրելն էլ այդպես պետք է լինի: Այնպես պիտի գրես, որ Միհրան Գալստյանի նման հարմարվողները կարդան թե չէ՝ փախչեն սարսափահար:

Զավեն Շարաֆյանը չէր ուզում խոսել: Նա հո չէր կարող խաբել ինքն իրեն: Արմեն Զատիկյանի համարձակ, անկաշկանդ մտածողությունը դուրեկան ու միաժամանակ ահավոր էր նրա համար, ինչպես հեռու պահված, արգելված որևէ բան: Այդ էր պատճառը, որ նա միայն լսում էր, չէր խոսում:

- Բոլորը ձեր դե՞մ էին, պաշտպանողներ չեղա՞ն,- ձեռքերն իրար շփելով, անբնական գրգռված և ուրախ հետաքրքրվեց Արսեն Զատիկյանը:

- Եղան,- քանի որ առիթը ինքն իրեն վրա հասավ, ոչ առանց չարախնդության պատասխանեց լրագրողը:

- Ովքե՞ր էին, եթե գաղտնիք չէ:

- Քաղաքի դատախազը և քիմկոմբինատի դիրեկտորը:

Արմեն Զատիկյանը ավելի կնճռոտեց առանց այդ էլ կնճռոտ ճակատը:

- Քաղաքի դատախազը: Հա, հնարավոր է, նոր մարդ է, կատու է պատռում: Բայց միևնույն է, ի պաշտոնե նա օրինավոր մարդ լինելու իրավունք չունի: Երբ օրենքը օրենք չէ, օրենքի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

պահապա՞նն ինչ պետք է լինի: Եվ Գառնիկ Բադալյա՞նը: Այ ֆենոմեն- Եղած ղեկավարների մեջ ամենախելոքն ու ամենավտանգավորը:

- Ինչո՞վ է վտանգավոր,- չդիմացավ, հարցրեց լրագրողը:

- Որովհետև խելոք է: Նույնն է, նույնը, ինչպես մնացած բոլորը: Բայց խելոք է: Եվ հենց դրանով էլ ավելի է վտանգավոր: Եվ առավել վտանգավոր է նրանով, որ կոթը փայտից է: Նա ժողովրդի ծոցից է դուրս եկել, նա այն կացինն է, որի կոթը անտառում է ծնվել, դրա համար էլ լավ գիտի անտառը ու լավ գիտի, թե ինչպես պետք է անտառը կտրել: Ու նա կկտրի, դեռ կկտրի, հիշեցեք այս օրը:

Զավեն Շարաֆյանը զգաց, որ այլևս համբերել չի կարող: Ներսում բարձրանում, եռում էր կատաղությունը: Ի՞նչ նողկալի բնավորություն ունի, ինչքան քինոտ ու չարասիրտ է այս մարդը: Հասկացանք՝ դժվար մանկություն է ունեցել: Հասկացանք, իրավի թե հանիրավի նրան զրկել են ծնողներից: Հասկացանք՝ նրա հայտնագործությանը ճանապարհ չեն տվել: Հասկացանք: Բայց միտք ունի՞ դրանց պատճառով առհասարակ խտացնել գույները, սևացնել աշխարհը, ոչ մի լուսավոր հետք, բիծ չտեսնել շրջապատում, կյանքում, մարդկանց մեջ:

Բայց որովհետև արդարամիտ մարդ էր Զավեն Շարաֆյանը, կամ գոնե փորձում էր արդարամիտ լինել միաժամանակ էլ մտածեց, թե ինչ կաներ ինքը, եթե քաղկոմի բյուրոյում Գառնիկ Բադալյանն ու Գագիկ Միսակյանը չլինեին: Ի՞նչ կաներ: Չգիտեր: Ավելի ճիշտ՝ դժվար է ասելը: Որովհետև ամեն ինչ էլ կարող էր պատահել: Այնինչ դա մի հատիկ հարված էր: Անխիղճ, նենգ, ստորաբար սարքված, բայց ընդամենը մի հարված էր: Իսկ Արմեն Զատիկյանին կյանքը հարվածել է պարբերաբար, դաժան հաջորդականությամբ, շունչ քաշելու ժամանակ չտալով, տակնուվրա անելով հոգին ու խորտակելով հավատը:

Այդ էր պատճառը, որ Զավեն Շարաֆյանը աշխատեց հանդարտվել, խոր շունչ քաշեց ու ասաց.

- Նստիր, Արմեն, քո շարժումներից ու խոսքերից գլուխս պտտվեց, ազնիվ խոսք: Նստիր և եկ իրար հետ դու-ով խոսենք: Եթե կարելի է:

- Փորձենք,- լրագրողին նայելով զարմացած, այնուամենայնիվ աթոռին իջավ Արմենը: Բայց նստեց ծայրին, այնպես, որ կարծես թե հնարավորություն ունենա ուզած վայրկյանին վեր թռչելու:

- Արմեն, - ասաց լրագրողը: - Նույնիսկ քո համեմատությամբ ես շատ ջահել եմ ու անփորձ և մտադիր չեմ փոխադարձաբար իմ կրած տառապանքների ցուցակը ներկայացնել քեզ, որովհետև քո տառապանքների դիմաց իմ տառապանքները բարեբախտաբար շատ քիչ են:

- Առայժմ,- գլխով արեց գյուտարարը: - Բայց կգան, կասկած չունենաս: Եղանակը բարենպաստ է և ճանապարհները բացվել են: Կգան…

- Թող խոսեմ,- խնդրեց Զավենը: - Ես քեզ խրատներ ու խորհուրդներ չեմ կարող և չեմ ուզում տալ: Ծիծաղելի կլինի: Միայն մի բան եմ հարցնում. ի՞նչ վիճակի մեջ է քո մեքենայի գյուտը: Որևէ նորություն կա՞ …

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չէ:

- Չկ՞ա , թե չես հետաքրքրվել:

- Չեմ հետաքրքրվել,Զավեն: Այդ գյուտն ինձ այլևս չի հետաքրքրում, բոլորովին:

- Ուրեմն հրաժարվո՞ւմ ես հետագա պայքարից:

- Որքան հարցն է վերամբարձ, այնքան էլ կլինի իմ պատասխանը՝ այո, հրաժարվում եմ հետագա պայքարից:

- Հոգնե՞լ ես, թե հիասթափվել:

- Զզվել եմ:

- Արմեն,- ասաց Զավեն Շարաֆյանը,- մի՞թե ես որևէ ձևով քեզ օգտակար լինել չեմ կարող: Իմ կուրսեցի ընկերները հանրապետական մամուլում են աշխատում, խմբագիրներն իմ դասախոսներն են եղել: Գուցե փորձենք հանրապետական մամուլի միջոցով բարձրացնել այդ հարցը, ի՞նչ ես կարծում:

- Իսկ դու ո՞վ ես,- առաջ թեքվեց գյուտարարը:

- Ի՞նչ իմաստով:

- Կշռի իմաստով: Դու ո՞վ ես, Զավեն Շարաֆյան, որ ենթադրում ես, թե կարող ես օգնել ինձ; Եթե այսօրվա հասկացողությամբ դու որևէ կշիռ ունենայիր, ինքդ կաշխատեիր հանրապետական թերթում և ոչ թե քո կուրսեցի ընկերները: Եթե անպայման որոշել էին և ինքդ էլ խանդավառ պատանի՝ ցանկություն էիր հայտնել շրջանում աշխատել, կամ այնպիսի փոքրիկ մի քաղաքում, ինչպիսին մերն է, քեզ պարտավոր էին խմբագիր նշանակել միանգամից կամ գոնե պատասխանատու քարտուղար: Որովհետև դու միակն ես ամբողջ խմբագրությունում, որ ժուռնալիստական կրթություն ունես, պրոֆեսիոնալ ես: Այնինչ ինչ ես աշխատում՝ բաժնի վարիչ: Երբ մյուս բաժնի վարիչները մի կարգին միջնակարգ կրթություն էլ չունեն:

- Իսկ եթե փորձենք…

- Գյուտարարները, ընկեր Շարաֆյան, աշխարհի ամենահամառ, ամենաանհասկացող, ամենալկտի և ամենաաներես մարդիկ են: Ես էլ նրանցից մեկը: Ուրեմն չե՞մ փորձել: Տեղ չեմ թողել: Գրել եմ,պատվիրված նամակ եմ ուղարկել, հեռագրել եմ, դարանել եմ ղեկավար կոչվածներին սեփական տան շքամուտքերում, հիմնարկների միջանցքներում, սիրուհիների ամառանոցային տնակների մոտ, դիմում-բողոքներս գրեթե բոնի գրպաններն եմ մտցրել: Բայց ինչ, կամ չեն պատասխանել, կամ էլ գրություն են ուղարկել, թե ձեր հարցի պատասխանը կարող եք ստանալ մինիստրության գիտահետազոտական ինստիտուտից: Դուք-ով էլ գրում են, իբր թե շատ են հարգում: Իսկ այդ ինստիտուտը թե որն է՝ կռահում ես, չէ՞: Հենց նույն ինստիտուտն է, որի դեմ բողոքում եմ: Այն ինստիտուտը, որն իր տասնյակ գիտնականներով, կոնստրուկտորներով ու ինժեներներով չի կարողանում պիտակներ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

տպագրող սարք պատրաստել: Իսկ ես պատրաստել եմ, տալիս եմ նրանց, բայց նրանք չեն վերցնում: Չէ, դու հասկանո՞ւմ ես, թե ինչ է կատարվում, Զավեն: Պետական հիմնարկությունը չի ուզում, որ պետությունը հսկայական օգուտներ ստանա: Թե ինչ է, ինչ, մի երկու հոգի զրկվում են անձնական օգուտներից: Եվ սրանք են սոցիալիզմ կառուցողները: Ես ու իմ ծնողները կասկածելի, անվստահելի արարածներ ենք, ժողովրդի թշնամիներ, իսկ նրանք ժողովրդի բարեկամներն են և պետության հույսը: Ես բողոքում եմ նրանց դեմ, իսկ վերևներում նստածները, ժողովրդի ամենամեծ բարեկամները, իմ բողոքներն ուղարկում են հենց նրանց: Այսպիսի բան ես նույնիսկ գլխին շահ ունեցող Պարսկաստանում չեմ տեսել, Զավեն: Նույնիսկ թագուհի ունեցող անգլիացիների մոտ չեմ տեսել, որոնց ձեռքի տակ աշխատում էի:

- Որտե՞ղ,- կրկին անհանգստություն ապրելով հարցրեց Շարաֆյանը՝ մտադրվելով շեղել խոսակցությունը:

- Թավրիզում: Ավտոսպասարկման մեծ կայան ունեին անգլիացիները: Ես սովորում էի քոլեջում և միաժամանակ ավտոնորոգող էի…

- Արսեն,- ասաց լրագրողը: - Եկ այսպես պայմանավորվենք, շուտով իմ հարցում պարզություն կմտցվի՝կամ այս կողմ, կամ այն կողմ: Ինչ էլ որ պատահի, դու ինձ թույլ տուր զբաղվել քո գործով:

- Երբեք, - տեղից վեր թռավ Զատիկյանը: - Երբեք, ես չեմ ուզում:

Զավեն Շարաֆյանը զգաց, որ կարմրատակում է:

- Բա ի՞նչ ես ուզում,- բղավեց նա: - Ի՞նչ ես ուզում զարմանալի մարդ, ինչո՞ւ ես ի վերջո այստեղ եկել:

Արմեն Զատիկյանը ժպտաց խորամանկ, գաղտնիք հայտնող երեխայի նման:

- Քեզ համար եմ եկել, Զավեն:

- Ինձ համա՞ր:

- Հա, ես եմ քեզ գործ առաջարկում: Եթե հիմա չհանեն էլ՝ վաղը, միևնույն է, հանելու են, որովհետև դու ուրիշների նման չես և տեր չունես: Ես քեզ գործ եմ առաջարկում: Գործ,որը կապ չունենա ոչ քաղաքականության հետ, ոչ պրոպագանդայի հետ, ոչ գյուտարարության հետ, ոչ ղեկավարների հետ, ոչ հանցագործների հետ… աշխարհի ամենաազնիվ ու մաքուր գործը: Այն էլ ասեմ, որ ես արդեն սկսել եմ:

- Եվ ի՞նչ գործ է դա,- ծիծաղեց, ակամա հետաքրքրվեց լրագրողը:

- Ծաղիկ,- ձայնը շշուկի իջեցրեց Արմեն Զատիկյանը:

- Ի՞նչ ծաղիկ:

- Մեխակ, կարելի է նաև վարդ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ոչինչ չեմ հասկանում,- խոստովանեց լրագրողը ուշադիր նայելով Արմեն Զատիկյանի ժպտուն աչքերին ու տենդորեն մտածելով, թե նա իրոք հո խելագար չէ:

- Ես մի փոքրիկ հողամաս ունեմ,- զգուշությամբ շուրջը նայելով, ասաց գյուտարարը: - Սովետից դա է ինձ մնացել: Պարսկաստանում էլ մենք պարտեզ ունեինք: Ինչ պարտեզ,- հառաչեց նա: - Այնպես որ ծաղկի գործը գիտեմ: Արդեն լավ մշակել, պատրաստել եմ հողը և սածիլների տեղն էլ գտել եմ: Մնում է, որ սածիլենք ու ծաղիկ աճեցնենք: Դժվար բան չէ, ես գրքեր ունեմ, կտամ կկարդաս, կսովորես…

Զավեն Շարաֆյանը անսքող տարակուսանքով նայեց նրան.

- Եվ ուրեմն վճռել ես թողնել ամեն ինչ ու ծաղիկներ աճեցնել:

- Հա, թողնել ամեն ինչ և ծաղիկներ աճեցնել:

- Եվ ինձ էլ առաջարկում ես գործընկեր դառնալ:

- Ահա քեզ մոտ գալու իմ միակ նպատակը:

Նա դա չափազանց լուրջ ասաց և Զավենը չծիծաղեց, որպեսզի հանկարծ չվիրավորի նրան:

- Կարծում եմ, որ վաճառելու նպատակով ես ուզում ծաղիկ աճեցնել:

- Իհարկե, բա ինչո՞վ պիտի ապրենք:

- Եվ ծաղկի առևտուրը համարում ես աշխարհի ամենաազնիվ գործը:

- Իսկ դու կարո՞ղ ես ավելի ազնիվ գործ առաջարկել: Եվ ինչու ես ասում առևտուր: Մենք առևտրի հետ կապ չենք ունենա: Մենք ծաղիկ կաճեցնենք՝ շատ-շատ մեխակներ ու վարդեր: Եվ ձմռանն էլ մեխակներ ու վարդեր կաճեցնենք: Ես այդ գործը գիտեմ:

- Է: հետո, ի վերջո չե՞ս վաճառելու:

- Մենք աճեցնողն ենք: Իսկ վաճառողը կվաճառի, Զավեն: Կգան մեզնից անհամեմատ էժան արժեքով, ընդհանուր, մեծաքանակ գնումներ կկատարեն ու կտանեն վաճառելու: Դա արդեն վաճառողների գործն է:

- Եվ էժան գնով վաճառելով ապրե՞լ կլինի:

- Իսկ մեզ ինչքա՞ն է պետք,- հանկարծ տխուր ժպտաց գյուտարարը: - Մեր ուզածը մի կտոր հաց չէ՞- Ինչքա՞ն է պետք, որ մարդ կարողանա պահպանել իր գոյությունը:

- Հետաքրքիր մարդ ես,- իր կարծիքով խաղը շարունակելու համար սուտ բարկացավ Զավեն Շարաֆյանը: - Ուրեմն առաջարկում ես, որ մենք հրաժարվենք ժուռնալիստիկայից, հրաժարվենք գիտությունից՝ ընդամենը մի կտոր հացի՞ համար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Տեղերը փոխիր,- գլխով արեց Արմեն Զատիկյանը: - Ես քեզ ու ինձ մի կտոր հաց եմ առաջարկում և խորհուրդ եմ տալիս հրաժարվել քո ասած ժուռնալիստիկայից ու գիտությունից և զբաղվել ազնիվ ու արդար աշխատանքով: Որովհետև այսօրվա գիտությունը, ժուռնալիստիկան, և մնացած ամեն ինչը արդարությանը չեն ծառայում: Իսկ ծաղիկներ աճեցնելը հենց այդպիսի աշխատանք է, Զավեն: Հարցն այն է, որ ստիպված չենք լինի խոնարհվել, քծնել, ստորանալ, շողոքորթել, դավեր նյութել, դիմում-բողոքներ գրել ու ճակատներս փշրել ժայռերին: Եվ ամենակարևորը՝ ալիբի կունենանք:

- Ալիբի՞…

- Ալիբի, Զավեն,- գրեթե շշնջաց Զատիկյանը: - Ալիբին, գիտես չէ որն է,հիմք, որ դու հանցանքի վայրում չես եղել:

- Չեմ հասկանում:

- Ոչինչ, - ասաց Արմեն Զատիկյանը: - Ես էլ երկար ժամանակ չէի հասկանում: Հետո միանգամից հասկացա, Հիմա կբացատրեմ: Մեծ հանցագործություններ են կատարվում աշխարհում, Զավեն: Խոշոր չափերի հասնող, հասկանալի և անհասկանալի հանցագործություններ: Եվ նաև պետականորեն կազմակերպված գիտակցված ու մտածված հանցագործություններ: Ես գնացի իմ ծնողների հետքերով և այնպիսի բաներ տեսա, որ ծերացա մի քանի օրում և պարզ հասկացա, որ խելագարվում եմ: Ես տեսա այս երկրին նվիրված, այս կարգերի համար արյուն թափած այս իշխանության համար իրենց կյանքը չխնայած հազարավոր ու տասնյակ հազարավոր մարդկանց, որոնք իրենց ողորմելի գոյությունն էին քարշ տալիս Սիբիրի անտառներում և հանքախորշերի մեջ, սուր եղունգներով վարելով սառած գետինն ու արմտիքներ փնտրելով, որպեսզի չմեռնեն քաղցից: Ես տեսա մեր գիտության փառքն ու պատիվը հանդիսացող մեծահռչակ մարդկանց այնպիսի դժոխային պայմաններում, այնպիսի ստորացված վիճակում, որ դրանից հետո ապրել չէի ուզում: Հիմա նրանք այնտեղ են, իսկ նրանց այնտեղ ուղարկողները՝ այստեղ: Դու նրա՞նց ես ուզում ծառայել: Ես նրա՞նց պիտի ծառայեմ: Եվ այն էլ խնդրելով ու աղաչելով, նվաստանալով ու պնդերեսությամբ: Չեմ ուզում, չեմ ուզում: Հազար անգամ ավելի լավ է ծաղիկ աճեցնելն ու նույնիսկ վաճառելը: Որովհետև մի օր մարդկությունը պատասխան պիտի պահանջի այդ հանցագործությունների համար: Ահռելի դատ է լինելու, և մի օր մարդկության դատարանի առջև պիտի կանգնեն հանցագործությունների հեղինակները: Եվ ոչ միայն նրանք: Բոլորը, ովքեր ներկա են եղել, ովքեր իբր խոհեմաբար կամ սարսափից ձայն չեն հանել՝ տեսնելով այդ նախճիրը: Բոլորը պիտի պատասխան տան: Այ հենց այդտեղ է, որ պետք է գալու մեր ալիբին, Զավեն, հասկանո՞ւմ ես: Մենք իրավունք կունենանք գոնե ասելու, որ ալիբի ունենք, մենք չենք եղել հանցանքի վայրում: Մենք հանցագործների հետ չենք եղել: Կասենք, որ այդ ժամանակ մենք ծաղիկ էինք աճեցնում, Զավեն:

Հեռախոսն այնքան անսպասելի զնգաց, որ Զավեն Շարաֆյանը ցնցվեց:

Արմեն Զատիկյանը անմիջապես նկատեց դա:

- Քեզ թվաց, թե ահեղ դատաստանի զա՞նգը հնչեց: Մի օր հնչելու է, կտեսնես- հնչելու է…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավենը վերցրեց ընկալուչը, գլխով արեց, այո ասաց և անջատեց հեռախոսը: - Այսպես թե այնպես՝ դատաստանի գանգ էր, - ասաց նա մռայլ: - Քաղաքի դատախազն է շտապ իր մոտ կանչում:

- Դե տես,- ձեռքերն իրար շփեց Արմեն Զատիկյանը,- Եթե հնարավորություն լինի, ձեռքիցդ բաց մի թող: Աշխատանքից դուրս արի անմիջապես, լսո՞ւմ ես: Մեզ ալիբի է պետք:

* * *

Քաղաքի դատախազի տարեց քարտուղարուհին այնպես դիմավորեց Զավեն Շարաֆյանին, ասես առնվազն նրա կարոտած մորաքույրը լիներ:

- Բարով ես եկել, տղա ջան,- ասաց նա բացելով կաշեպատ ուռած դուռը,- ընկեր Միսակյանը քեզ է սպասում,ցավդ տանեմ:

Գագիկ Միսակյանը իրոք որ նրան էր սպասում բաց լուսամուտի մոտ կանգնած:

- Եկա՞ր, Զավեն,- ժպտաց նա մտերմաբար: - Նստիր: Ո՞նց ես,- հարցրեց դատախազը, տեղավորվելով լրագրողի դիմաց:

- Եթե ասեմ լավ եմ, կհավատա՞ք, ընկեր Միսակյան,- քմծիծաղ տվեց Շարաֆյանը:

- Կհավատամ,- գլխով արեց դատախազը,- որովհետև քո գործերը վատ չեն: Իսկ եթե ուղղակի Գագիկ անվանես ու դու-ով խոսես ինձ հետ, գուցե ասեմ, թե ինչու վատ չեն:

- Ես առանց այդ էլ ձեզանից շատ շնորհակալ եմ քաղկոմի բյուրոյում ինձ պաշտպանելու համար,- ասաց Զավեն Շարաֆյանը: - Չեմ թաքցնի, ապշեցի, երբ համարձակ ու անվախ առարկում էիք ոչ միայն Գրետա Սուրենյանին, այլև առաջին քարտուղարին:

Քաղաքի դատախազը թափ տվեց ձեռքը:

- Նրանք ստիպված են տանել ինձ, որովհետև գիտեն, թե ով է ինձ այստեղ նշանակել: Եվ գիտեն, որ ես այստեղ երկար մնացողը չեմ: Կարևորագույն գործերի քննիչի իմ տեղը, սիրելի Զավեն, պահպանվում է հանրապետական դատախազությունում: Ընդամենը պետք էր, որ իմ անձնական գործի մեջ նշված լիներ, թե ավարտելուց հետո աշխատել եմ գյուղական շրջանում որպես դատախազի օգնական, իսկ հետո դատախազ հեռավոր փոքրիկ մի քաղաքում: Այդքան բան: Այնպես որ մի քանի ամիս հետո ես հանրապետական դատախազությունում կլինեմ:

- Ափսոս, - անկեղծ հառաչեց Զավենը: - Բախտ չունեմ, էլի: Դուք որ գնաք, ի՞նչ կլինի իմ վիճակը:

Քաղաքի դատախազի համար ակնհայտ շոյիչ էին այդ խոսքերը, որովհետև ծիծաղեց.

- Եթե ես կարողանամ արդարացնել քեզ, որում չեմ կասկածում, քո հարցը երևի ավելի շուտ կլուծվի, քան իմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ի՞նչ իմաստով,- զարմացավ լրագրողը,- ինչ՞ու…

- Որովհետև առայժմ քո հարցը ընդամենը այս քաղաքի շրջանակի մեջ լուծվող հարց է, իսկ իմը՝ հանրապետական բնույթ ունի:

- Գագիկ ջան,- ասաց նա խնդրանքով: - Դուք ինձ թույլ եք տվել…

- Միայն դու-ով: - Թող այդպես լինի- Գագիկ ջան, ի՞նչ բավականություն ես ստանում տանջելով ինձ: Ես չեմ կարողանում կարգին աշխատել, չեմ կարողանում քնել գիշերները…

- Մենա՞կ թե երկուսով,- հարցրեց դատախազը, բայց անմիջապես էլ զղջաց, տեսնելով, թե որքան թունդ կարմրեց Զավեն Շարաֆյանը: - Լավ, լավ, ներիր, եղբայր, ներիր, հա՞, տրամադրությունս այնքան բարձր է, որ անընդհատ կատակել եմ ուզում:

Լրագրողը կուլ տվեց վիրավորանքը:

- Երանի քեզ,- շշնջաց նա:

- Քեզ էլ, քեզ էլ,- չէր կարողանամ լրջանալ դատախազը: - որովհետև տրամադրությունս բարձր է քեզ համար: Եվ այն բանի համար, որ կարողացա կատարել իմ բարեկամի, մեծ բարեկամի հանձնարարությունը:

Զավեն Շարաֆյանը հուսահատ տարածեց ձեռքերը:

- Դե լավ, - հանձնվեց Գագիկ Միսակյանը: - Երևի մինչև իմ դատախազական աթոռին չնստեմ, չեմ լրջանա:

Նա բարձրացավ տեղից, գնաց ու տեղավորվեց իր բազկաթոռին հենց այն ժամանակ, երբ հնչեց հեռախոսը:

- Լսում եմ: Չեմ կարող, բարեկամս, ես ստամոքսի խոց ունեմ,- ասաց նա աներևույթ զրուցակցին: - Հնարավոր չէ, ամեն ինչ փորձել եմ: Դա էլ եմ փորձել: Ինձ տեսած կա՞ք, որ որևէ մեկի հետ սեղան նստեմ: Չեք էլ տեսնի: Ահավոր ցավեր եմ ունենում: Կներեք: Հաջողություն:

- Իսկապե՞ս ստամոքսի խոց ունես, Գագիկ,- կարեկցանքով հարցրեց լրագրողը՝ զարմացած նայելով դատախազի ջահել, առողջ, գեղեցիկ դեմքին:

Գագիկ Միսակյանը ծիծաղեց.

- Քար էլ ուտեմ, կմարսեմ: Բայց եթե նույնիսկ մեռնեմ սովից, տեղացիների հետ հաց չեմ ուտի: Եվ ոչ թե այն պատճառով, որ նրանց մեջ քիչ են ազնիվ մարդիկ: Չէ, ազնիվ մարդիկ կան: Բայց ազնիվ մարդը ինչո՞ւ պետք է հաց տա դատախազին: Մեզ, ախպեր ջան, հիմնականում հյուրասիրության են կանչում կամ միջնորդներ, կամ հանցագործների հարազատները կամ պոտենցիալ հանցագործները, որոնք գիտեն՝ վաղ թե ուշ մեր ձեռքն են ընկնելու: Իսկ եթե մարդ այդքանը հասկանում է, ինչո՞ւ պետք է նրանց հետ սեղան նստի: Դրանք այն մարդկանց թվին են պատկանում, սիրելի ընկեր Շարաֆյան, որ մի կտոր հաց տալու հենց հաջորդ օրը

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հայտնվում են քո առանձնասենյակում և այնպիսի գործարք են առաջարկում, որից հետո միայն կինդ կարող է հաց բերել քեզ՝ նոր դատախազի թույլտվությամբ: Չուզեցինք այդ հացը: Դա մարսել չի լինի, ինչպես դու չես կարողանում մարսել Կայծակ Չոփուրյանի հյուրասիրությունը: Այդպես չէ՞ …

- Այդպես է,- գլուխն օրորեց լրագրողը: - Մինչև հիմա կոկորդումս կանգնած է:

-Թքիր,- ասաց դատախազն այնպես հանգիստ ու անփույթ, ինչպես ատամնաբույժներն են ասում հաճախորդի ատամը հեռացնելուց հետո: - Թքիր ու կարդա այս ցուցմունքը:

Զավեն Շարաֆյանը վերցրեց նրա մեկնած թուղթը ու կարդաց՝ հազիվ զսպելով ձեռքի դողը: Անճոռնի ձեռագրով, ահավոր տառասխալներով Վաղարշակ Տիտանյանը հայտարարություն էր տվել՝ թե իր եղբայր Աղաբեկ Տիտանյանն է Կայծակ Չոփուրյանին շահագրգռել և համոզել կազմակերպելու ռեստորանային ողջ բեմադրությունը:

- Ա յ քեզ բան,- մեկ թղթին ու մեկ դատախազի ժպտուն դեմքին նայելով, հառաչեց Զավենը: - Իսկ Աղո՞ն ինչ է ասում:

Դատախազը նրան մեկնեց ամրակով իրար միացված մի քանի թուղթ:

- Սա էլ Աղաբեկ Տիտանյանի խոստովանությունը: Իսկ սա նրանց միջև իմ կազմակերպած առերես հարցաքննության արձանագրությունն է: Կարդա, կարդա, Զավեն Շարաֆյան, և թքիր… Իսկ երբ որ վերջացնես, կարդա նաև այն վկաների հայտարարությունները,որոնք ցուցմունք էին տվել, թե իբր ռեստորանում ներկա են եղել այն պահին, երբ դու փող էիր պահանջում Տիտանյան եղբայրներից՝ ֆելիետոնը չտպագրելու համար:

- Նրա՞նք էլ են հրաժարվում:

- Բոլորը:

- Եվ ինչո՞վ են արդարացնում իրենց զրպարտությունը:

- Բոլորն էլ միաբերան պնդում են, թե Աղոն է սպառնալիքի տակ ստիպել իրենց՝ սուտ ցուցմունք տալ: Բայց խիղճը տանջում է իրենց և քանի որ Աղաբեկ Տիտանյանը ձերբակալված է այլևս չեն վախենում և հայտնում են ճշմարտությունը…

Զավեն Շարաֆյանը էջ-էջի ետևից կարդում էր նոր ցուցմունքներն ու հայտարարությունները, որոնք հասկանալիորեն մեծ ուրախություն էին պատճառում նրան: Բայց միաժամանակ տարակուսանք էր ապրում:

- Չեմ հասկանում,- ասաց նա անկեղծորեն: - Չեմ հասկանում և չեմ հավատում, թե իբր նրանք զղջացել են: Այստեղ ինչ-որ գաղտնիք կա, Գագիկ:

Դատախազը ժպտաց խորամանկորեն կկոցելով աչքերը:

- Իհարկե, կա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Հետո անհավատալի է, որ Աղաբեկ Տիտանյանը այդքան հեշտությամբ ողջ մեղքն իր վրա վերցնի:

- Ճիշտ է,- անմիջապես համաձայնեց դատախազը:

- Ուրեմն ի՞նչ է պատահել:

- Հանցագործ աշխարհի մեջ տարածված ու հայտնի մի խաղ: Փոքր հանցանքն ընդունում են, որպեսզի համոզիչ դառնա մեծ հանցանքից հրաժարվելը:

- Խոսքը վերաբերում է Աշոտ Բարսեղյանի սպանությա՞նը:

- Իհարկե: Նրանք մտածում են այսպես՝ ի՞նչ միտք ունի, որ դատապարտվեն երկուսը, երբ մեկը կարող է ազատության մեջ մնալ և ոչ միայն պահել մյուսի ընտանիքը, այլև ամեն ինչ անել եղբոր վիճակը հետագայում թեթևացնելու համար: Սա մեկ: Երկրորդը՝ նրանք գիտեն, որ նոր վկաներ են հայտնվել, որոնք ականատես են եղել, թե ինչպես են եղբայրները հաշվեհարդար տեսնում Աշոտ Բարսեղյանի հետ: Եվ նոր վարկած են մշակել, թե իբր Վաղարշակը ոչ թե եղբոր հետ ծեծել է Բարսեղյանին, այլ մեջտեղ է ընկել, որպեսզի նրանց բաժանի միմյանցից, և ինքն էլ է տուժել այդ ծեծկռտուքի մեջ:

- Բայց Աղոն, Աղոն ինչպե՞ս է համաձայնվել…

- Աղաբեկ Տիտանյանը վստահ է, որ ի վերջո դուրս կպրծնի այդ պատմությունից, որովհետև իրոք նա դեռ շատ վաղուց է գրանցված հոգեբուժական հիվանդանոցում և ժամանակին նույնիսկ ստացիոնար բուժում է ստացել:

- Եվ դու թույլ ես տալու, որ նրանց ծրագիրն իրագործվի՞,-սրտդողած հարցրեց լրագրողը:

- Այո,- ասաց Գագիկ Միսակյանը:

- Այո՞…

- Առայժմ,- ուղղեց դատախազը: - Իմ առաջին խնդիրն այն է,որ քեզ մաքուր դուրս բերեմ այդ նողկալի պատմությունից: Դրա համար էլ ինչ ասում են ձևացնում եմ, թե հավատում եմ նրանց: Իսկ նրանք իմ ձեռքից չեն փախչի, հավատա, ընկեր ֆելիետոնիստ; Ես իմ սկզբունքներն ունեմ…

Զավեն Շարաֆյանը անհանգիստ շարժվեց տեղում.

- Ախր դու էլ գիտես, որ նրանցից ամեն ինչ կարելի է սպասել, Գագիկ:

- Ինձնից էլ կարելի է ամեն ինչ սպասել, Զավեն,- ծիծաղեց դատախազը: - Երբ ես մի բան վճռում եմ՝ վերջ: Եթե քո այդ շուկայական բանդիտները և նրանց արբանյակները իրենց հանցանքների թեկուզ միայն մի տոկոսը գործեին, դարձյալ ինձնից փրկություն չէին ունենա: Որովհետև ես վճռել եմ և որովհետև ես հանձնարարություն ունեմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Չնայած դատախազի նկատմամբ երախտագիտության զգացումին, նրա խոսքերի թե ձայնի մեջ ինչ-որ բան դուր չէր գալիս Զավեն Շարաֆյանին, բայց թե ինչ՝ չէր կարողանում հասկանալ:

- Քիչ է մնում ասես, որ եթե ուզենաս՝ անմեղ մարդուն անգամ կարող ես դատապարտել,- իրենից էլ անկախ հանկարծ ասաց նա:

- Իհարկե, կարող եմ,- քմծիծաղ տվեց Գագիկ Միսակյանը: - Կարող եմ, որովհետև աշխարհում անմեղ մարդ չկա: Չի կարող լինել, ինչպես որ բնության մեջ մաքուր վիճակում գտնվող ոչ մի մետաղ չկա: Բոլորն էլ այս կամ այն չափով, այս կամ այն ձևով հանցանքներ գործում են: Կարևորն այն է, թե որ կողմից մոտենաս: Կարևորն այն է, թե ինչ հանձնարարություն և ցուցում է տրված օրինապահ մարմիններին: Այդպես է, այդպես է, Զավեն: Երեսնական թվականներին ով երկու-երեք կով և մի տասնյակ ոչխար ուներ՝ աքսորում էին: Իսկ հիմա պահանջում են, որ գյուղացիները կով ու ոչխար պահեն: Պատերազմի ժամանակ դաշտից մի դույլ կարտոֆիլ գողացողին հինգ տարվա կալանք էին տալիս: Մի դույլի համար: Իսկ հիմա քաղկոմի քարտուղարն ինձ չի թողնում քրեական գործ հարուցել պետական պահեստից երեսուն տոննա ալյուր գողացած մեկի նկատմամբ, բացատրելով, թե բավական է, որ կուսակցական նկատողություն են հայտարարում: Կամ վերցնենք թեկուզ քեզ հետ կատարված փաստը: Մի քանի հոգու ուղղակի և անուղղակի ցուցմունքները բավական չէ՞ին, որպեսզի քո դեմ քրեական գործ հարուցվեր՝ դրամաշորթության կամ կաշառք վերցնելու փորձի հոդվածներով: Մի բան էլ ավելի էին Տարիներ առաջ ընդամենը մեկ մարդու մատնագրով գնդակահարում էին մարդկանց: Իսկ հիմա… իսկ հիմա ես կանչել եմ քեզ, ընկեր Շարաֆյան, որպեսզի հայտնեմ, որ քո նկատմամբ հարուցված քրեական նյութերը մերժվում են և որ դու անմեղ ես: Եվ եթե ինձ թույլ տաս, այս նոր նյութերը հենց հիմա կտանեմ քաղաքային կոմիտե՝ զեկույցի,

Զավեն Շարաֆյանը զգաց, որ հուզմունքից շունչը կտրվում է, նա հառաչեց, տարուբերեց գլուխը, հանկարծ Արմեն Զատիկյանին հիշեց, որը քիչ առաջ աքսորական կյանքի սարսափների մասին էր պատմում և միլիոնավոր անմեղ մարդկանց մասին, որոնք գնդակահարվել կամ Սիբիր են ուղարկվել՝ իրենք էլ չիմանալով, թե ինչի համար, նորից տարուբերեց գլուխը և որովհետև իր հոր հարազատ զավակն էր, հարցրեց.

- Գագիկ, բայց դու ներքուստ համոզված էիր, չէ՞, որ ես անմեղ եմ:

- Իհարկե,- ասաց դատախազը: - Կարծեմ դեռ այն ժամանակ, քաղկոմի բյուրոյում խոսեցի այդ մասին:

- Այո,- ասաց լրագրողը,- և ես հազար անգամ շնորհակալ եմ քեզ: Շատ շնորհակալ եմ ու երախտապարտ: Բայց չեմ հանգստանա, մինչև մի նոր հարց չտամ:

- Տուր,- ժպտաց դատախազը:

- Խոսքի մեջ ասացիր, որ ինձ պաշտպանելով ու արդարացնելով, քեզ համար շատ մեծ ու շատ կարևոր մի մարդու հանձնարարությունն էիր կատարում: Ճի՞շտ է:

- Ե՞ս ասացի: Բերանբացություն է,- շփոթվեց դատախազը: - Բայց եթե ասել եմ՝ ճիշտ է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ուրեմն եթե այդ շատ մեծ ու շատ կարևոր մարդը քեզ հանձնարարեր դատապարտել ու պատմել ինձ, կանեի՞ր…

Գագիկ Միսակյանը ծիծաղեց.

- Դա պրովոկացիա է:

- Կանեի՞ր, Գագիկ,- համառեց Զավեն Շարաֆյանը: - Կկարողանայիր անել: Միայն թե անկեղծ:

Գագիկ Միսակյանը վեր կացավ աթոռից, ճմլկոտելով բարձրացրեց ձեռքերը, և Զավենը նկատեց նրա տաբատի գոտու միջից ցցված ատրճանակի կոթը:

- Անկե՞ղծ: Լավ, թող լինի անկեղծ: Կանեի թե չէ՝ չգիտեմ: Հիմա չեմ կարող ասել: Իսկ ինչ վերաբերում է կարողանալուն…կասկած չունենաս՝ կկարողանայի, ընկեր լրագրող- Եվ այնպես կկարողանայի, որ դու ինքդ կընդունեիր ամեն ինչ- Ես պրոֆեսիոնալ եմ, Զավեն, և իմ իրավաբան ընկերների հետ գրազի մեջ մտնելով, մի անգամ նույնիսկ անմեղ եմ դուրս բերել մի ակնհայտ հանցագործի, մի ավտովարորդի, որի անփութության պատճառով վրաերթ էր տեղի ունեցել: Ես այնպիսի հիմքեր սարքեցի, որ նրան տեղն ու տեղը ազատեցին դատարանի դահլիճից և վերադաս բոլոր օրգանները հաստատեցին դատարանի վճիռը:

Ուրեմն Արմեն Զատիկյանի ծնողներին, մեր հացթուխ հարևանի կնոջը, հազարավոր ու միլիոնավոր մարդկանց հենց այսպիսի քննիչներն են հանիրավի դատապարտել՝ կատարելով որևէ մեկի հանձնարարությունը, կամ հանուն գրազի, հանուն իրենց պրոֆեսիոնալ վարպետության ցուցադրման, հանուն սրամտության:

- Իսկ ո՞վ է իմ բարերարը,- հարցրեց նա խռպոտած ձայնով: - Ես գիտեմ, որ այդ իմաստով անտեր-անտիրական մարդ եմ: Եվ եթե մի հովանավոր ունեմ իմ խեղճ խմբագրից բացի, նա էլ ընդամենը այս քաղաքի քիմիական կոմբինատի դիրեկտոր Գառնիկ Բադալյանն է:

Քաղաքի դատախազը ձեռքը լրագրողի ուսին դրեց:

- Այդ ընդամենը քիմիական կոմբինատի դիրեկտոր Գառնիկ Բադալյանը մի ամիս էլ չանցած կուսակցության քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար կդառնա:

- Բայց առաջիկայում պլենում չի նախատեսվում:

- Նման հարցերը լուծվում են միայն արտահերթ պլենումներում, ընկեր լրագրող: Իսկ հենց որ նա առաջին քարտուղար դարձավ, երկու-երեք օր հետո քեզ կկանչի իր մոտ: Իսկ երբ դուրս գաս նրա առանձնասենյակից, կտեսնես, որ ընդունարանում քեզ է սպասում քաղաքի դատախազ Գագիկ Միսակյանը: Եվ նա քեզ ստիպելու է, որ քո հաշվին նրան ռեստորան տանես, ոչ մեր քաղաքում, չէ, միամիտ չկա, հարևան քաղաքներից մեկում: Այ, այդ ժամանակ անձամբ կհամոզվես՝ թե իրոք ստամոքսի խոց ունի քաղաքի դատախազը, թե ձևացնում է,որպեսզի հանցագործների հետ սեղան չնստի:

- Գագիկ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դե լավ, թող քո հաշվին չլինի: Թող լինի գրազով: Ես գրազի սովոր եմ: Բայց հիշիր, որ ես երբեք չեմ պարտվել ու այդ օրն այնուամենայնիվ փող ունեցիր գրպանումդ: Եղա՞վ…

Նա սեղանին թափված թղթերը կաշվե պայուսակի մեջ դրեց ու գրեթե հրելով առանձնասենյակից դուրս հանեց լրագրողին:

* * *

Քաղաքի դատախազը եթե նույնիսկ մարգարե չէր, ապա անկասկած շատ մոտ կապեր ուներ մարգարեների հետ: Որովհետև նրա գուշակությունը բառ առ բառ իրականացավ: Վերը նկարագրված հանդիպումից ուղիղ տասնհինգ օր հետո հայտնի դարձավ, որ հրավիրվում է քաղաքային կոմիտեի արտահերթ պլենում: Պլենումի օրակարգում դրված էր գաղափարական աշխատանքների վիճակը քաղաքի կուսակազմակերպություններում: Բայց այդ թեման գրեթե չքննարկվեց: Բոլորն անհամբեր սպասում էին օրակարգի երկրորդ՝ կազմակերպչական հարցին: Եվ վերջապես ամբիոն բարձրացավ մայրաքաղաքից ժամանած կուսակցության կենտկոմի կազմակերպական բաժնի վարիչը: Նա կամ ակնհայտ շտապում էր, կամ էլ բոլորովին նոր էր ժամացույցը, որովհետև ստեպ-ստեպ ժամացույցին էր նայում և հենց այդպես էլ շտապելով ու ժամացույցին նայելով, հայտնեց, որ կենտկոմը նպատակահարմար է գտնում. այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ Ղուկաս Լալայանին ազատել քաղկոմի առաջին քարտուղարի պարտականություններից և քաղկոմի նոր առաջին քարտուղար առաջարկել բյուրոյի անդամ Գառնիկ Բադալյանին:

Ղուկաս Լալայանը բեմում ցուցադրաբար տարածեց ձեռքերը ու ժպտաց, ասես ուզենալով հասկացնել, թե տեսնում եք, էլի, ինչ ուզում՝ անում են: Իսկ Գառնիկ Բադալյանը,որը պլենումին ինչպես միշտ իր բանվորական արտահագուստով, սատինե կապույտ պիջակով էր, ընդոստ բարձրացրեց գլուխը, և կազմակերպական բաժնի վարիչին նայեց այնպիսի անսքող զարմանքով, կարծես ինքը ամենևին տեղեկություն չուներ այդ առաջարկի մասին:

- Դեմ, ձեռնպահ չկա՞ ,- հարցրեց մայրաքաղաքից եկած մարդը:

Եվ պարզվեց, որ ոչ դեմ կա, ոչ էլ ձեռնպահ:

Եվ Գառնիկ Բադալյանը ընտրվեց քաղկոմի առաջին քարտուղար:

Իսկ դարձյալ մեկ շաբաթ անց քաղկոմի նորընտիր առաջին քարտուղարը իր ընդարձակ առանձնասենյակում ընդունեց Ջավեն Շարաֆյանին:

՛ Նա այլևս արտադրական սատինե կապույտ պիջակով չէր: Նրա հագին հիանալի կարված մոխրագույն կոստյում կար, իսկ սպիտակ վերնաշապկի օձիքից կախված էր մուգ կապույտ փողկապը: Բայց, դա միայն առաջին անակնկալն էր երիտասարդ լրագրողի համար: Գառնիկ Բադալյանի գրասեղանին «Ավրորայի» խունացած տուփի փոխարեն դրված էր ամերիկյան «Ֆիլիպ-Մորիս» ֆիրմայի սիգարետի մի դարչնագույն տուփ:

Գառնիկ Բադալյանը հավանաբար նկատեց լրագրողի զարմացած հայացքը, որովհետև ժպտաց ու ասաց,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Հիմա մտածում ես, թե, առանց «Կազբեկի» անցնելու ոնց «Ավրորայից» միանգամից «Ֆիլիպ-Մորիսի» հասա, չէ՞:

Զավենը կարմրեց, չհամարձակվեց հրաժարվել ու շարունակում էր լուռ կանգնած մնալ նրա դիմաց:

- Նստիր,- ասաց քաղկոմի առաջին քարտուղարը,- նստիր ու ասա ինձ, թե ինչ մտահղացումներ ունես:

Զավենը նստեց:

- Մայրս և քույրս մենակ են, ընկեր Բադալյան, եթե թույլ տաք, կխնդրեմ, որ ինձ Երևան տեղափոխեն:

- Թույլ չեմ տա,- ասաց Գառնիկ Բադալյանը: - Պայմաններ կստեղծեմ, որ կարողանաս հաճախ տեսնել նրանց կամ նրանց մեր քաղաք տեղափոխել, բայց թույլ չեմ տա, որ վերադառնաս: Եվ դու ինքդ քեզ թույլ չպետք է տաս, Զավեն: Ինչի՞ համար ես այստեղ հասել և որպես ո՞վ ես դու վերադառնալու: Քեզանից չեմ թաքցնի, ես ինքս ինձ խոսք էի տվել, որ այս քաղաքից կհեռանամ միայն այն ժամանակ, երբ դառնամ քաղկոմի առաջին քարտուղար: Ոչ շուտ: Եվ ինչպես տեսնում ես՝ դարձա: Դու ևս այստեղից կարող ես հեռանալ միայն ինչ-որ բան դարձած: Այն ինչ սովորեցնում է քեզ այստեղ կյանքը, ուրիշ ոչ մի տեղ այլևս չես սովորի: Դու հիմա չես էլ պատկերացնում, թե հետագայում քո կյանքում ինչ դեր են խաղալու այս քաղաքում անցկացրած տարիներդ: Դա փորձի, իմաստության պաշար է քո հետագա ողջ կյանքի համար: Ոստնակ, որտեղից ցատկելու ես ուր կամենաս: Եվ վերջապես մի՞թե դու չես ցանկանում, որպեսզի մենք միասին աշխատենք: Չեմ թաքցնի, ինձ համար անսպասելի ու վիրավորական է քո հայտարարությունը: Ես կարծում էի…

- Ներեցեք ինձ, Գառնիկ Վարդանիչ,- ամաչեց Զավենը, - բայց այդ ֆելիետոնի պատմությունից հետո…

- Առավել ևս,- բարկացավ քարտուղարը: - Այդ պատմությունից հետո առավել ևս իրավունք չունես փախչելու այստեղից: Դա նշանակում է ընդունել պարտությունը, ընկրկել շանտաժի առաջ: Իսկ դու ի՞նչ էիր սպասում: Այդ որտե՞ղ են ֆելիետոնիստներին ծաղիկներով դիմավորում: Եվ ի վերջո ինչ պատահեց: Մի՞թե մենք չհաղթեցինք:

- Մե՞նք…- ձգեց լրագրողը: - Դուք որ չլինեիք…

- Իսկ ինչո՞ւ ես չպետք է լինեի,- ուսերը թոթվեց քարտուղարը: - Ես կամ մեկ ուրիշը: Երբ անմեղ ես և ազնիվ է բռնածդ գործը, միշտ էլ քեզ համակրողներ ու պաշտպաններ կլինեն:

Զավեն Շարաֆյանը կրկին Արմեն Զատիկյանին հիշեց ու նրա սարսափելի պատմությունները Սիբիրի խորքերում տառապող անմեղ զոհերի մասին: Անմեղ… բա ինչո՞ւ են նրանք այնտեղ… ինչո՞ւ նրանց կողքին ոչ մի համակրող ու պաշտպան չհայտնվեց:

- Այսպիսի մի հասկացողություն կա, Զավեն, որ կոչվում է նպատակների միասնություն: Մենք հաղթեցինք, որովհետև մեր նպատակները նույնն էին: Քիմիական կոմբինատի միջոցներով

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ես այս գյուղը քաղաք դարձրեցի, ժամանակակից ինչ շինություն տեսնում ես՝ քիմիական կոմբինատի շնորհիվ է: Եվ քաղաքի հետագա զարգացումն ու բարգավաճումը ևս կոմբինատի հետ է կապված: Որովհետև երկրի տնտեսության առաջմղիչ ուժը քիմիան է: Այո, բարեկամս, ես քիմիայի շնորհիվ գյուղը քաղաք դարձրեցի: Բայց հազար անգամ ավելի դժվար է գյուղացուն քաղաքացի դարձնելը, քաղաքացի դաստիարակելը: Այ, հենց այստեղ է, որ առաջին պլան են մղվում գաղափարական աշխատանքը և մամուլը: Այն, ինչ ռադիոն ու լրագիրը կարող են անել, ոչ մի քիմիա ու ֆիզիկա ի վիճակի չեն անելու: Պետք է վերափոխել մարդուն, նրա միջից հանել եսապաշտությունը, ընչաքաղցությունը, վայրենի բնազդները: Հացից ավելի կարևոր է նրան հոգևոր սնունդով ապահովելը: Եվ դա արդեն միայն ես չեմ կարող անել: Դա առաջին հերթին դու պիտի անես: Ես քեզ քո սիրուն աչքերի համար չեմ հարգում; Ես քեզ հարգում և պաշտպանում եմ, որովհետև պրոլետարական ջիղ կա: Որովհետև քեզ համար ևս հավասարաչափ ատելի են հասարակության շնչափողին կպած տզրուկները, հղփացածները, անբարոյականներն ու խուլիգանները: Եվ կարևորն այն է, որ ոչ միայն դու ես ատում, այլև քո, ես կասեի տաղանդավոր գրչով կարողանում ես ժողովրդի ատելությունը հարուցել և բորբոքել հասարակության տականքների դեմ: Եվ այստեղ էլ մեր շահերը համընկնում են և մեր նպատակները դառնում են միասնական: Մաքուր քաղաքում մաքուր մարդիկ պիտի ապրեն: Ես քեզ արդեն ասացի, Զավեն, առանց թաքցնելու, որ կոմբինատի դիրեկտոր դառնալուց հետո, իմ նպատակն է եղել այս քաղաքի կուսակցական կոմիտեի առաջին քարտուղար դառնալը: Բայց հո չես ենթադրում, որ դա քմահաճույք է եղել: Կամ զուտ կարիերիզմ: Ոչ, իհարկե, ես եկել եմ գործ անելու: Ես եկել եմ այս քաղաքը օրինակելի դարձնելու հանրապետության մեջ: Եվ ինձ օգնականներ են պետք: Ինձ նման մտածող մարդիկ: Ես համոզված էի, թե նրանցից մեկը դու ես: Իսկ դու…դու ուզում ես փախչե՞լ…

Գառնիկ Բադալյանը վշտացած տարուբերեց գլուխը, և երիտասարդ լրագրողը այլևս չդիմացավ…

- Կրկին ներողություն եմ խնդրում, Գառնիկ Վարդանիչ, լեզվիցս թռավ, եթե ես պետք եմ՝ ի՞նչ խոսք կարող է լինել: Ես ոչ մի տեղ էլ չեմ գնա և ինչ ասեք՝ կանեմ, հանուն գործի: Հանուն մեր քաղաքի: Ախր ես իսկապես սիրում եմ մեր քաղաքը:

Քաղկոմի առաջին քարտուղարը մի սիգարետ հանեց դարչնագույն տուփից:

- Ահա այն, ինչ ուզում էի լսել քեզանից: Եկ աշխատենք,Զավեն:

- Աշխատենք, ընկեր Բադալյան: Շատ շնորհակալություն, որ վստահում եք:

- Մեծ փոփոխություններ են կատարվելու մեր քաղաքի կյանքում, Զավեն: Եվ դու պետք է իմ կողքին լինես:

- Կասկած չունենաք,- ամաչելով, որ ստիպված է պատասխանել, հավաստիացրեց լրագրողը:
- Կարո՞ղ եմ մի բան խնդրել ձեզանից,

Գառնիկ Բադալյանը բարյացակամորեն գլխով արեց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես երկու-երեք օրում մեր բաժնի համար աշխատանքային ծրագիր կկազմեմ: Խնդրում եմ ձեզ ծանոթանալ այդ ծրագրին և ձեր դիտողություններն ու առաջարկություններն անել, որպեսզի պատահաբար հակասություններ չլինեն: Ախր մենք չգիտենք ինչ է կատարվում քաղաքային կոմիտեում…

- Այսուհետև կիմանաս,- ժպտաց քարտուղարը: - Ես քեզ հետ համաձայն եմ, նոր պլան կազմիր: Բայց ոչ թե բաժնի, այլ ամբողջ խմբագրության համար:

- Ե՞ս,- ապշեց լրագրողը: - Ուրիշ բաժինների հետ ես ի՞նչ գործ ունեմ: Կնեղանան, Գառնիկ Վարդանիչ:

Գառնիկ Բադալյանը կիտեց հոնքերը:

- Ճիշտ որ,- ասաց նա,- Այդ մասին չէի մտածել:

Նա խաղում էր, նա ակնհայտ խաղում էր և ներքին խոր բավականություն էր ստանում իր խաղից: Նույնիսկ բարձրացավ տեղից ու շարունակելով ծխել, մտահոգ դեմքով քայլեց առանձնասենյակում, մոտեցավ, պատուհանից դուրս նայեց,շրջվեց ու ասես նոր էր տեսնում՝ սևեռուն հայացքով դիտեց լրագրողին:

- Ուրիշ ելք չկա,- ասաց նա: - Որպեսզի մյուս բաժնի վարիչները չնեղանան, ես քեզ ստիպված եմ խմբագիր նշանակել:

Զավեն Շարաֆյանը իբրև հումոր ընդունեց քարտուղարի խոսքը և ուրախ ժպտաց:

- Չեմ կատակում,- շարունակեց Գառնիկ Բադալյանը: - Ի՞նչ կարծիքի ես, եթե քեզ խմբագիր նշանակենք:

Լրագրողն զգաց, որ անկախ իրենից, արյունը ողողում է դեմքը:

- Ի՞նչ,- ականջներին չհավատալով, հարցրեց նա,- խմբագի՞ր:

- Այո:

- Բա ընկեր Զուլոյանը- նա հիանալի ժուռնալիստ է, Գառնիկ Վարդանիչ: Եվ ձեզ շատ է հարգում:

- Ես քեզ հետ լիովին համաձայն եմ,- ասաց քարտուղարը: - Որքան գիտեմ, շուտով նրան աշխատանքի կհրավիրեն հանրապետական թերթ, որպես պատասխանատու քարտուղար: Ի՞նչ վատ կլինի, եթե մենք մեր մարդն ունենանք նաև այնտեղ:

- Իսկ ինքը գիտի՞ այդ մասին:

- Ոչ, դեռևս չգիտի:

- Ուրեմն հնարավոր է, որ հրաժարվի…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չեմ կարծում,- ժպտաց քարտուղարը: - Ավելին համոզված եմ, որ չի հրաժարվի, որովհետև այստեղ նա այլևս անելիք չունի: Ինչ որ ուներ՝ նա արդեն տվել է այս թերթին, Զավեն, և տալու այլևս ոչինչ չունի: «Լուսաբացին» նոր խմբագիր, նոր ուղեղ է պետք…

Զավեն Շարաֆյանի գլուխը պտտվում էր: Հետաքրքիր է, հանկարծ մտածեց նա, քաղաքի դատախազը իրո՞ք սպասում է դռան ետևում: Ո՞ւմ մտքով կանցներ: Ինքը փախչելու մասին էր մտածում, իսկ, իսկ այս մարդը, այս աստվածը…

- Համաձա՞յն ես, Զավեն:

Եվ Զավեն Շարաֆյանը պատասխանեց գրեթե երեխայի նման կակազելով…

- Իհարկե համաձայն եմ, ընկեր Բաղալյան: Ո՞ր լրագրողը չի ցանկանա խմբագիր դառնալ: Բայց կկարողանա՞մ աշխատել: Չգիտեմ…

- Ես քեզ կաշխատեցնեմ,- գոհ ծիծաղեց քարտուղարը,-կասկած չունենաս, ընկեր Շարաֆյան: Ինչպես իմ ժամագործ հարևանն էր ասում ժամացույցի պես կաշխատեցնեմ:

- Գիտեմ,- ակամա ինքն էլ ծիծաղեց Զավենը,- այդ մեկը հաստատ գիտեմ: Դուք դեռ կոմբինատից էլ աշխատեցնում էիք մեզ:

- Դե ուրեմն երեք օրից իմ սեղանին կդնես խմբագրության աշխատանքային պլանը, իսկ ուրբաթ օրը կներկայանաս բյուրոյի նիստին:

- Գառնիկ Վարդանիչ, իսկ թույլ կտա՞ք, որ ընկեր Զուլոյանի հետ խոսեմ այդ մասին- որ միասին կազմենք- Ախր անհարմար է…

- Ոչ,- կտրուկ առարկեց քարտուղարը: - Դու նրա հետ այդ մասին կխոսես միայն այն ժամանակ, երբ ինքը քեզ կմոտենա-Այսինքն նրա հետ իմ զրույցից հետո: - Նա նայեց լրագրողի շփոթված դեմքին ու ավելացրեց: - Եվ ընդհանրապես պետք չէ այդքան զգացմունքային լինել, տղաս- Դու դեռ ինչեր ես տեսնելու… Իսկ հիմա գնա…

Զավեն Շարաֆյանը չզգաց էլ, թե ինչպես հասավ դռանը, թե ինչպես ընդունարան մտավ և սթափվեց միայն այն ժամանակ, երբ բախվեց Գագիկ Միսակյանին…

- Էդ ո՞ւր, ո՞ւր,- ծիծաղեց ու լրագրողի ականջին շշնջաց քաղաքի դատախազը:

- Գրազր, գրազը- Հը, գրպանումդ փող կա՞, ընկեր խմբագիր…

* * *

Ընկեր խմբագիր…

«Լուսաբաց» թերթի խմբագիր Զավեն Շարաֆյանը նայեց ժամացույցին ու հավաքեց իր տան հեռախոսի համարը: Ընկալուչի մեջ հստակ ու երկար հնչեցին զանգերը, բայց լսափողը վերցնող չեղավ: Ուրեմն Ալվարդը դեռ տուն չի եկել: Զավենը լավ գիտեր, որ այդ ժամերին Ալվարդը տանը չի կարող լինել և, այնուամենայնիվ, հենց մենակ էր մնում, հավաքում էր իր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

տան հեռախոսի համարը: Նրան հաճելի էր տուն զանգահարել, հաճելի էր Ալվարդին սպասելը, հաճելի էր Ալվարդի ձայնը…

- Նամակ ունեք ընկեր Շարաֆյան: Անձնական է, չբացեցի:

- Լավ ես արել, Մարո,- ժպտաց Զավենը, Մելիքյանի ձեռքից վերցնելով ծրարը:

- Իմիջիայլոց այդ նամակից ես էլ եմ ստացել:

- Նույն:

- Չէ,- ասաց Մարոն,- Բայց նույն հեղինակն է: Ընկեր Զուլոյանն է գրել:

Նամակը իրոք Մկրտիչ Զուլոյանից էր, բայց հեռագրի նման էր գրված. «Սիրելի բարեկամ, ողջույն քեզ: Ապրես: Լավ թերթ ես տալիս: Եթե ժամանակ գտնես՝ մեզ համար մի տեսություն սարքիր: Մենք լավ ենք: Երեխաները բարևում են: Մկրտիչ»:

* * *

Մկրտիչ:

Զավեն Շարաֆյանը այն օրը չլսեց քաղկոմի նոր առաջին քարտուղարին և նրա հետ ունեցած զրույցից հետո, երեկոյան խմբագրի տուն գնաց: Մկրտիչ Զուլոյանը այնքան սրտանց ուրախացավ, տեսնելով իր երիտասարդ աշխատակցին, այնքան ջերմորեն դիմավորեց նրան, որ Զավեն Շարաֆյանը մի անգամ ևս համոզվեց, թե իր քայլը ճիշտ է: Նա անկեղծորեն և ազնվաբար պատմեց խմբագրին՝ Գառնիկ Բադալյանի առաջարկի մասին, և վերջում ասաց.

- Ընկեր Զուլոյան, իհարկե ինձ համար շատ հաճելի էր այդ առաջարկը: Բայց ես այդ ամենի մասին ձեզ չասել չէի կարող: Ճմռանը մի անգամ, երբ փայտ չունեի վառելու, դուք, չգիտես որտեղից իմանալով այդ մասին, մի մեծ գիրկ փայտ բերեցիք ինձ, բերել էիք ոտքով, ձյուների միջով, գիշերը: Ես դեռ չգիտեմ ով եմ ու ինչ կդառնամ հետագայում, բայց հաստատ այն մարդը չեմ, որ աշխարհի թեկուզ ամենամեծ պարգևներից ավելի բարձր չգնահատեմ այդ մի գիրկ փայտը: Ես դա մինչև կյանքիս վերջ չեմ մոռանա և մինչև որ ինձնից ջահել ու աշխատանքային աստիճանով ցածր շատ-շատերի համար մոտավորապես նույն բանը չանեմ, ինձ մարդ չեմ համարի: Գառնիկ Վարդանիչը ինձ խնդրեց առայժմ չասել ձեզ իր առաջարկի մասին: Բայց դա իմ ուժերից վեր է: Եթե այդ որոշումից դուք դժգոհ եք, ուրեմն հաստատ համոզված եղեք, որ ես կհրաժարվեմ նրա առաջարկից,

Մկրտիչ Զուլոյանը, չնայած իր առաջացած տարիքին և անցած ճանապարհին, երեխայի նման զգայուն մարդ էր: Նա երկար, ժամանակ հազում էր, թաշկինակով սրբելով աչքերը: Հետո ասաց՝ սովորականից էլ ավելի խռպոտ ձայնով.

- Շնորհակալ եմ, տղաս: Մի օր դա պիտի լիներ: Պարզ է:

Նա մի սիգարետ վերցրեց սեղանին դրված Բուդդայի մարմարե արձանիկի ծակ գլխից, վառեց և խոր ներս քաշեց ծուխը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Պատմությունն ինքնին տխուր է, բայց ինձ համար երեք ուրախություն ունի իր մեջ: Մեկը և ամենակարևորն այն է, որ դու հարկ ես համարել գալ ինձ մոտ և ասել այն խոսքերը, որ ասացիր: - Խմբագիրը խոնարհեց գլուխը: - Կրկին շնորհակալ եմ, տղաս: Երկրորդ ուրախությունս այն է, որ ինձնից հետո դու ես մնալու խմբագրությունում: Իսկ երրորդ ուրախությունս էլ այն է, որ այս փոփոխությունների հետևանքով, քո շնորհիվ, որովհետև այս փոփոխությունները միայն քեզ հետ են կապված, լուծվում են նաև ինձ տանջող ծանր հարցեր: Կարո՞ղ ես բառ առ բառ կրկնել այն, ինչ իմ նոր աշխատանքի մասին ասաց Բադալյանը:

- Կարող եմ,- ասաց Զավենը: - Նա ասաց. որքան գիտեմ, շուտով նրան աշխատանքի կհրավիրեն հանրապետական թերթ, որպես պատասխանատու քարտուղար: Հա, նույնիսկ ասաց, թե ի՞նչ վատ կլինի, եթե մենք մեր մարդն ունենանք այնտեղ:

- Հենց այդպես էլ ասա՞ց:

- Այո: Բառ առ բառ:

Մկրտիչ Զուլոյանը հանգստացած ետ ընկավ աթոռին.

- Եթե նա ասել է, ուրեմն կլինի: Իսկ դա ինձ համար ելք է, - ասաց նա: - Դա ինձ համար փրկություն է, Զավեն;

- Իսկապե՞ս,- ուրախացավ Զավենը:

- Ախր երևի գիտես, որ երեխաներս Երևանի համալսարանում են սովորում: Մեկը առաջին կուրսում է, մյուսը՝ երկրորդ: Հանրակացարանում չուզեցի տեղավորել, որովհետև իրար հետ չէին լինի: Հետո՝ ասել եմ, վախենում էի Մարիամի համար: Ստիպված սենյակ վարձեցի: Թանկ ու կրակ: Կինս էլ չդիմացավ, վեր կացավ գնաց նրանց մոտ: Ես որ այնտեղ չլինեմ, ասաց, սովից կմեռնեն: Եվ հիմա այնքան նրանք չեն ուսանողի վիճակում, որքան ես: Խելագարվում եմ մենակ: Ճաշի մասին էլ չեմ խոսում: Ես ո՞ր օրվա ճաշ եփողն եմ: Ըհը, հյուր ես եկել, բայց ես մի կարգին բան էլ չունեմ, որպեսզի հյուրասիրեմ քեզ:

Զավենը ծիծաղեց.

- Կուշտ եմ, ընկեր Զուլոյան:

- Իսկ թեյ չե՞ս ուզում: Թեյը լավ եմ պատրաստում ու մեկ էլ ձվածեղ: Ձվածեղն էլ է ստացվում:

- Չեմ ուզում, - հրաժարվեց Զավենը: - Շատ-շատ շնորհակալ եմ:

- Երեխաներս կփրկվեն, - ասաց Մկրտիչ Զուլոյանը: - Եթե այդ գործը ստացվի, ինձ բնակարան էլ կտան, չէ՞ , ի՞նչ ես կարծում, Զավեն:

- Անպայման,- ասաց Զավենը,- առանց բնակարանի ո՞նց կլինի,

- Շնորհակալ եմ քեզ,- ասաց Մկրտիչ Զուլոյանը, մի նոր սիգարետ հանելով Բուդդայի գլխից: - Շնորհակալ եմ ամեն ինչի համար: Եվ որպեսզի պարտքի տակ չմնամ, շտապում եմ մի խորհուրդ տալ քեզ, տղաս: Կլսես՝ կլսես, չես լսի, աստված քեզ հետ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Լսում եմ:

- Դու գիտես, որ ես շատ բարձր եմ գնահատում Գառնիկ Բադալյանին: Ասել եմ, չէ՞:

-Այո,- ժպտաց Զավենը,- ամենա-ամենա…

- Ճիշտ է,- համաձայնվեց խմբագիրը: - նա կյանքում ինձ հանդիպած ամենախելացի, ամենավճռական, ամենասկզբունքային մարդկանցից մեկն է- Եվ ես ուզում եմ քեզ զգուշացնել այդ ամենախելացի, ամենավճռական, ամենասկզբունքային մարդուց:

- Զգուշանա՞լ:

- Զգուշանալ,- կրկնեց խմբագիրը: - Դու այսուհետև նրա անմիջական ղեկավարությամբ ես աշխատելու, և շատ կարևոր է, որ իմանաս, թե ով է նա ոչ միայն քո դիմացից, քո տեսանկյունից, այլև ընդհանրապես: Որովհետև, տղաս, նա լավ է ինձ համար, քեզ համար, իր բարեկամների համար, կամ նրանց համար, որոնց իր բարեկամն է համարում: Իսկ, նրանց համար, որոնց իր հակառակորդն է կարծում, կամ նրանք պարզապես նրա բարեկամները չեն, նա սարսափելի է: Ըստ որում միջինը չունի, դարձյալ ամենա-ամենա է, բայց ամենավտանգավորը, ամենադաժանը, ամենա…

Զավեն Շարաֆյանի համար չափազանց անսպասելի ու տհաճ էին խմբագրի խոսքերը: Ինչե՞ր է ասում- այն էլ հիմա, երբ իմացավ, որ Գառնիկ Բադալյանը մտահոգված է նրա հետագա ճակատագրով…Երբ նրան իր մարդն է համարում:

-Ես ձեզ հետ համաձայն չեմ, ընկեր Զուլոյան,- ասաց նա: - Իսկ ինչու պիտի հակառակորդների նկատմամբ անողոք չլինի: Եվ ինչո՞ւ պիտի ես զգուշանամ: Ես ոչ մի նպատակ չունեմ նրա հակառակորդների շարքում գտնվելու: Նա իմ սրտի ուզած ղեկավարն է: Որպեսզի համոզվեմ՝ բյուրոն բավական չէ՞ր: Ես ամեն ինչ կանեմ նրա բարեկամը մնալու պատվին արժանանալու համար և երբեք այնպիսի մի բան չեմ անի, որ հայտնվեմ բարիկադի մյուս կողմում:

Մկրտիչ Զուլոյանը ժպտաց, ժպտաց այնպես, ինչպես տարեց մարդիկ են ժպտում՝ մանուկների միամտության վրա: Ժպտաց բարի ու ներողամիտ:

- Իսկ եթե պատահաբար ինքդ հայտնվես, ինչպես դու ես ասում՝ բարիկադի մյուս կողմում:

-Դա անհնարին է:

- Իսկ եթե բարիկադի մյուս կողմում քո ընկերն է, բարեկամն է, որին Գառնիկ Բադալյանն ուզում է ոչնչացնել:

Զավեն Շարաֆյանը մտածեց:

- Եթե… եթե այդպիսի դեպք լինի, ես կաշխատեմ համոզել նրան:

- Իսկ եթե նա չհամոզվի՞-Ամբողջ հարցն այն է, Զավեն, որ նա այնքան վստահ է իր անսխալականության վրա, որ իր կարծիքից բացի որևէ այլ կարծիք չի հանդուրժում, չի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ընդունում: Նա էլ է մտածում այն միապետի նման, որն ասում է՝ ով ինձ հետ չէ, իմ դեմ է: Բայց այդպես չպետք է լինի: Բա էլ ի՞նչ ազատության մասին կարող է խոսք լինել, երբ մարդ նույնիսկ կարծիքի ազատություն չունի: Երևի շատ տարրական միտք եմ հայտնում, բայց մարդիկ կարող են նույն երգը երգել և արտասանել նույն բանաստեղծությունը, բայց նույն կերպ մտածել չեն կարող: Դա անհնարին է, իսկ նա ուզում է, որ բոլորը ճիշտ իր նման մտածեն և իր կարծիքների մեջ անվերապահ է:

Զավեն Շարաֆյանը աշխատում էր հասկանալ նրան:

- Չգիտեմ,- ի վերջո ասաց նա: - Բայց ինձ թվում է, թե դուք չափազանցնում եք, ընկեր Զուլոյան: Եթե կարծիքների ազատություն եք պահանջում, թույլ տվեք, որ ես էլ իմ կարծիքն ունենամ:

- Թույլ եմ տալիս,- հազաց, ծիծաղեց խմբագիրը: - Սուտ բան է,մինչև սեփական ոտքդ քարին չառնի՝ ուրիշի խորհրդով չես խուսափի քարից: Միայն թե երբ ոտքդ կարյունոտի՝ կհիշես ինձ:

- Ինչպես դուք եք ձեզ խորհուրդ տվողին հիշում:

- Ճիշտ է,- անմիջապես համաձայնեց խմբագիրը, ցավոք սրտի ճիշտ է, Զավեն:

Զավեն Շարաֆյանը իրոք շատ էր հարգում խմբագրին:

- Ընկեր Զուլոյան,- ասաց նա,- ձեր զգուշացման համար կոնկրետ որևէ հիմք ունե՞ք, թե կյանքի փորձից ելնելով, ընդհանրապես եք զգուշացնում:

Մկրտիչ Զուլոյանը լրջացավ և մի նոր սիգարետ վառեց:

- Դու Արմեն Զատիկյանին ճանաչո՞ւմ ես- մեր քաղաքում իր հայտարարությամբ կարծեմ առաջինը նա է զարմացրել քեզ:

- Այո:

- Եվ նկատում եմ, որ երբեմն-երբեմն գալիս է քեզ մոտ:

- Այո,- ասաց Զավենը: - Սակայն տարօրինակ մարդ է: Գալիս է, բայց ոչինչ չի ուզում, կարծես միայն մի նպատակ ունի՝ համբերությունից հանել ու թունավորել քեզ:

Խմբագիրը մռայլվեց:

- Նրան այնքան են թունավորել, որ թույնի կուտակիչ է դարձել, Զավեն…

- Ես կարդացել եմ նրա մասին գրած ձեր հոդվածները,- ասաց Զավենը:

Խմբագիրը թափ տվեց ձեռքը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դու կարծում ես, թե իրո՞ք անլուծելի էր նրա հարցը: Նրա գյուտը, Զավեն, այնքան պարզ ու մատչելի է, որ նույնիսկ բացատրության, պաշտպանության կարիք չունի: Այդ հոդվածներից մեկն էլ բավական էր, որպեսզի մեր փոքրիկ գործարանները, տրիկոտաժի, կարի արհեստանոցները ապահովված լինեին պիտակներ տպող մանրիկ մեքենաներով և ոչ թե, ինչպես հիմա, յուրաքանչյուր պիտակի համար Երևան հասնեին և հսկայական ծախսերով զբաղեցնեին հսկա մեքենաները:

- Բայց ի՞նչը խանգարեց, որ դուք ի վերջո չկարողացաք օգնել նրան:

- Ոչ թե ինչը, այլ՝ ով, տղաս: Գառնիկ Բադալյանը:

- Գառնիկ Բադալյա՞նը:

- Այո:

- Անհավատալի բան է: Չէ՞ որ դուք էիք ասում, որ նա ամեն նորի առաջավորի…

- Հարցը բարիկադն է…

- Ինչպե՞ս…

- Հարցն այն է, թե այդ նորն ու առաջավորը բարիկադի որ կողմում է գտնվում: Ինչպես ես եմ հեշտությամբ իրար վրայից նորանոր սիգարետներ ծխում, նույն հեշտությամբ նա կարող էր ճանապարհ հարթել այդ գյուտի համար: Ոչ միայն իբրև կոմբինատի դիրեկտոր և քաղկոմի բյուրոյի անդամ, այլև առաջին հերթին որպես գյուտարարների և ռացիոնալիզատորների քաղաքային խորհրդի նախագահ և նույն այդ գյուտարարների և ռացիոնալիզատորների հանրապետական խորհրդի նախագահի տեղակալ: Բայց նա ոչ միայն չհարթեց, այլև պատ կանգնեցրեց ճանապարհի մեջտեղում:

- Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ:

- Որովհետև տեխնիկական գիտությունների այն դոկտորը, որ մի ամբողջ ինստիտուտով տարիներ շարունակ ապարդյուն փորձում է ստեղծել այդ մեքենան, Գառնիկ ԲաԴալյանի ուսանողական ընկերն է: Մի կուրսում են սովորել: Եվ որովհետև նրանք միշտ գտնվել են բարիկադի նույն կողմում: Եվ որովհետև նաև նրա օգնությամբ է Գառնիկ Բադալյանը նշանակվել քիմիական կոմբինատի դիրեկտոր:

-Ու հենց դա էլ պա՞տ է դարձել գյուտի ճանապարհին…

- Այո: Բայց Գառնիկ Բադալյանը հո միամիտ մարդ չէ, որ հայտարարեր, թե ես դեմ եմ այդ գյուտի ներդրմանը, որովհետև իմ ընկերն աշխատում է նույն գյուտի վրա: Չէ, նա ուրիշ բան ասաց և արեց,

- Ի՞նչ,

- Նա ասաց, որ գյուտը նույնիսկ քննարկման չպետք է դնել, որովհետև այն ստեղծվել է հայրենիքի թշնամիների ժառանգի ձեռքով,և ուրեմն վստահելի չէ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Իսկ Արմեն Զատիկյանի ծնողներն իրո՞ք հայրենիքի թշնամիներ էին:

- Մինչև հիմա էլ նրանք Սիբիրում են: Եթե ողջ են, իհարկե:

- Հա, բայց Արմեն Զատիկյա՞նն ինչ մեղք ունի; Նրա գյուտն ինչ ընդհանուր…

- Ես դեռ չեմ լսել որևէ ժողովրդի թշնամու մասին, որին ձերբակալելուց կամ աքսորելուց հետո չզնդակահարեն կամ չաքսորեն նաև նրա զավակներին, որտեղ էլ գտնվեն նրանք, որ տարիքում էլ լինեն: Ծնողների մեղքը տարածվում է իրենց զավակների վրա մինչև երեք սերունդ, այդպես է գրված Աստվածաշնչում:

- Բայց հո մենք Աստվածաշնչով չե՞նք ղեկավարվում,- սարսափեց Զավեն Շարաֆյանը՝ հիշելով իր մոր հակաստալինյան ելույթները: - Իսկ նրանք ի՞նչ էին արել, ընկեր Զուլոյան, ձեզ հայտնի է…

- Մայրը բացարձակապես անգրագետ էր և տարան, որովհետև Հակոբ Զատիկյանի կինն էր: Կտանեին նաև Արմենին, բայց նա Երևանում էր, իսկ ծնողներն իրոք չգիտեին, թե որտեղ է: Երբ Արմենը տուն է վերադառնում և տեսնում, որ ծնողները չկան, անմիջապես ներկայանում է միլբաժին և պահանջում, որ իրեն էլ ուղարկեն ծնողների մոտ: Չեն տանում: Եվ նա ինքն է գնում Սիբիր ու գտնում իր ծնողներին: Խնդրում է, որ իրեն էլ գաղութում պահեն, չեն պահում: Եվ նա մի քանի օր անտառում ապրելուց հետո, ոտքով, պատահական բեռնատար մեքենաներով, գնացքների տանիքներին պառկած կամ անիվների սռնիների մոտ թաքնված մի կերպ հասնում է տուն: Միայն այդքանը բավական չէ՞ր թույն կուտակելու համար, ընկեր Շարաֆյան:

- Իսկ հո՞ր մեղքը որն էր:

- Հակասովետական պրոպագանդա՞ն:

- Հակասովետական պրոպագանդան: Որտե՞ղ էր աշխատում, ինչպե՞ս էր պրոպագանդում, ի՞նչ էր ասում…

- Հակոբ Զատիկյանն աշխատում էր ավտոպարկում, որպես մեխանիկ: Նրա նման վարպետ մեր քաղաքում չկար: Իսկապես ոսկի ձեռքեր ուներ: Բայց դժբախտաբար շատ միամիտ մարդ էր և չէր կարողանում բերանը փակ պահել: Հենց որ գովում էին նրա աշխատանքը, ասում էր՝ դուք իմ ի՞նչն եք տեսել: Թավրիզի գործիքներս տվեք, գործիքներս, անգլիական էին, բելգիական պողպատից, տվեք գործիքներս ու նոր միայն տեսեք, թե ինչ եմ անում: Թե չէ ձեր այս սովետական գործիքներով ընկույզ էլ չես ջարդի: Բա սա պողպա՞տ է: Սա նույնիսկ երկաթ էլ չէ: Շատ հետաքրքիր է, թե ձեր տանկերն ու թնդանոթնե՞րն էլ եք նույն այս երկաթից սարքում: Եթե այո՝ ուրեմն վայ մեզ…

- Հասկացա,- ասաց Զավեն Շարաֆյանը:

- Իսկ ես մինչև հիմա չեմ հասկանում,- հառաչեց Մկրտիչ Զուլոյանը: - Ասենք թե խոսում է հիմար-հիմար, բա արժե՞ր դրա համար…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Բայց նա հիմար-հիմար չի խոսել,- ընդհատեց նրան Զավենը,- նա ճշմարտությունն է ասել: Հայրս էլ էր ասում, որ մեր գործիքները ծաղրուծանակ են: Ու պողպատի որակը բարձրացնելու փոխարեն աքսորո՞ւմ են մարդկանց:

- Հայրդ երևի այդ մասին բարձրաձայն չի խոսել- Թե չէ նա էլ կհայտնվեր Սիբիրում:

-Ի՞նչ տարբերություն,- հառաչեց Զավեն Շարաֆյանը: - Ես ինչ իմանամ, թե նույն պողպատի որակը չի՞ եղել պատճառը, որ հայրս զոհվել է պատերազմում: Ես ի՞նչ իմանամ, ընկեր Զուլոյան:

Մկրտիչ Զուլոյանը չպատասխանեց, ավելի շուտ խուսափեց պատասխանից:

- Գուցե այնուամենայնիվ թե՞յ դնեմ,- հարցրեց նա: - Իրոք շատ լավ թեյ եմ սարքում, գիտե՞ս: Ուրիշները խնդրում են…

- Չէ,- հրաժարվեց Զավենը,- ես ուզում եմ ուրիշ բան խնդրել:

- Ասա:

- Եթե ամեն ինչ դասավորվի այնպես, ինչպես Գառնիկ Բադալյանը ծրագրել է, այսինքն, որ դուք «Սովետական Հայաստան» թերթի պատասխանատու քարտուղար դառնաք, իսկ ես էլ՝ «Լուսաբացի» խմբագիրը…

- Ենթադրենք, հետո՞…

- Եթե ես գրեմ Արմեն Զատիկյանի և նրա գյուտի մասին, կօգնե՞ք ինձ, որ այդ նյութը տպագրվի ձեր թերթում:

Մկրտիչ Զուլոյանը նրան նայեց կկոցած աչքերով.

- Եվ դու չես վախենո՞ւմ:

- Չէ ,- ասաց Զավենը:

- Բայց հասկանում ես, չէ , որ կհայտնվես բարիկադի մյուս կողմում:

- Մի փոքր խորամանկությունը չի խանգարի: Չէ՞ որ ես ոչ մի տեղեկություն չունեմ մինչ այդ եղած պատմությունների մասին,դոկտորի և Բադալյանի հարաբերությունների, ժողովրդի թշնամիների մասին:

- Բայց ես հո ունե՞մ…

- Մի բան կմտածենք, էլի, ընկեր Զուլոյան-ինչ է, իրավունք չունե՞ք երկու-երեք օր հիվանդանալու:

Մկրտիչ Զուլոյանը խռպոտ ծիծաղեց՝ բերանից ծուխ ու մուխ արձակելով:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գրիր տեսնենք:

Կո՞զնեք, որ տպագրվի:

- Գրիր տեսնենք, եղբայր:

Զավեն Շարաֆյանը խմբագրին մեկնեց ձեռքը:

- Վախենում եմ, որ դու սպասածից էլ շուտ հայտնվես ասած բարիկադի մյուս կողմում,- հառաչեց Մկրտիչ Զուլոյանը՝ ի պատասխան սեղմելով երիտասարդ լրագրողի ձեռքը:

* * *

Հեռախոսը զնգաց, երբ Զավեն Շարաֆյանը թերթի առաջիկա համարի վերջին նյութն էր ընթերցում: Երկու տող էր մնացել: Նա ձեռքը դրեց թեթևակի դողացող սարքին, կարդաց վերջացրեց, ստորագրեց էջի վրա ու նոր միայն վերցրեց ընկալուչը:

- Ես խմբագրին եմ ուզում,- լսեց նա:

- Խմբագիրն է,- պատասխանեց Զավենը՝ դեռ չվարժված դիմումի այդ ձևին և ակամա ամաչելով:

- Խաչիկն է,- ներկայացավ զանգահարողը: - Պրոպագանդայի բաժնի հրահանգիչը, ընկեր Շարաֆյան:

- Լսում եմ, Խաչիկ,- ժպտաց Զավենը, պատկերացնելով քաղկոմի նոր աշխատակցի ջահել, համակրելի դեմքը:

- Ընկեր Շարաֆյան, չգիտեմ էլ ոնց ասեմ, ընկեր Իգիթյանը խնդրում է, որ զանգահարեք իրեն:

- Իգիթյա՞նը…

Ինչպես ժողովուրդն է ասում, նրանց ջուրն այդպես էլ մի առվով չգնաց: Նշան Իգիթյանը չէր կարողանում մոռանալ Զավենի չարաբաստիկ զեկուցագրի պատճառով քաղկոմի բյուրոյում ստեղծված իր հիմար վիճակը: Եվ ոչ միայն դա: Թերթի կուսակցական բաժնի վարիչ Նիկողայոս Սևյանը գրեթե ամեն օր բարեխղճորեն զեկուցում էր Իգիթյանին, թե Զավեն Շարաֆյանը ինչ նոր անեկդոտներ է պատմում նրա մասին: Թե ինչպես է ամեն անգամ տարբեր գույներով նկարագրում իր առաջին հանդիպումը Իգիթյանի հետ և ռազմաշունչ ու ռազմատենչ ոգու տեսակետից շատ կասկածելի ու վիրավորական զուգահեռներ անցկացնում քաղկոմի պրոպագանդայի բաժնի վարիչ Իգիթյանի և ֆաշիստական վերմախտի պրոպագանդայի մինիստր Գեբելսի միջև:

Հիշարժան բյուրոյի նիստից հետո Նշան Իգիթյանը ռազմական բնույթի տակտիկական և ստրատեգիական լայն պայքար ծավալեց Զավեն Շարաֆյանի դեմ; Նա հատուկ թղթապանակում նյութեր էր կուտակում, որոնք կարող էին ինչ-որ չափով, ինչ-որ ձևով ստվեր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

գցել երիտասարդ լրագրողի հեղինակության վրա: Եվ քանի որ քաղաքում քիչ չէին Զավեն Շարաֆյանի համարձակ ու եռանդուն գործունեությունից դժգոհ մարդիկ, շուտով նոր թղթապանակի հարկ զգացվեց: Նշան Իգիթյանն արդեն պատրաստվում էր քաղկոմի առաջին քարտուղար Ղուկաս Լալայանի գրասեղանին դնել իր թղթապանակները, երբ անակնկալ կերպով այդ գրասեղանի մոտ Գառնիկ Բաղալյանը հայտնվեց և շատ ավելի անսպասելիորեն խմբագիր նշանակվեց նույն այդ անիծյալ Զավեն Շարաֆյանը:

Նշան Իգիթյանը սրտի խոր կսկիծով ստիպված էր հրաժարվել ճակատային բաց պայքարից և ժամանակավորապես ընդհատակ անցնել: Նա շարունակում էր նյութեր հավաքել, սպասելով լավ օրերի, բայց առիթը չէր փախցնում նոր խմբագրի կյանքը մանր- մունր հարցերում որևէ կերպ թունավորելու համար: Հիմնականում սխալներ էր փնտրում թերթում: Բայց քանի որ սեփական գրագիտության մակարդակը նրան թույլ չէր տալիս գտնել այդ սխալները, օգնության էր կանչել երկու-երեք ուսուցիչների և առաջինը Կայծակ Չոփուրյանին, որոնք ուշի-ուշով զննում էին «Լուսաբացի» յուրաքանչյուր նոր համարը և զեկուցում Իգիթյանին:

- Իգիթյանը՞, - հարցրեց խմբագիրը,- իսկ ինչո՞ւ ինքը չի զանգահարում:

- Ի՞նչ իմանամ,- ծիծաղեց Խաչիկը: - Ասում է, որ մենակ լինի, թող նոր զանգ տա…

Նախքան պրոպագանդայի բաժնի վարիչին զանգելը, Զավենը սեղանին իր առջև դրեց «Լուսաբացի» վերջին համարը: Տեսնես այդ ի՞նչ սխալ են գտել, մտածում էր նա, որ Նշան Իգիթյանը ինչ-որ խաղ է սարքում:

- Լսում եմ, ընկեր Իգիթյան:

- Զավեն Աշոտիչ,- հնչեց Իգիթյանի ձայնը,- առանձնասենյակում մենա՞կ եք:

- Մենակ եմ,

- Դե որ մենակ եք, խնդրում եմ ազնվորեն և անկեղծորեն ասեք ինձ, թե ինչ նպատակով եք չորրորդ էջում տպագրել այդ չստուգված, ապակողմնորոշող և փաստորեն պրովոկացիոն լուրերը…

- Ինչ լուրեր,- թերթը շրջելով, իրոք անկեղծորեն զարմացած հարցրեց Շարաֆյանը:

- Թեկուզ այն փաստը, թե Երևանի ժամացույցի գործարանի արտադրած նոր ժամացույցները ավելի արագ են աշխատում քան շվեյցարական և ճապոնական նմանատիպ ժամացույցները,

Զավեն Շարաֆյանը շատ ափսոսաց, որ առանձնասենյակում ուրիշ մարդ չկա:

- Բայց դա հումոր է,- ասաց նա ծիծաղելով:

- Ի՞նչն է հումոր…

- Այդ ամբողջ պատմությունը: Չե՞ք տեսնում՝ վերևում գրված է «Երգիծանք և հումոր»:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ինձ չի հետաքրքրում, թե վերևում ինչ է գրված: Ինձ հետաքրքրում է փաստը: Կոնկրետ գրված է՝ Երևանի ժամացույցի գործարան-Երևանի…

Զավեն Շարաֆյանը չգիտեր ինչ անել…

- Բայց դա հենց փաստ է,- ի վերջո ասաց նա: - Մեր ժամացույցները ավելի արագ են աշխատում…

- Էդ ո՞նց,- հարցրեց Իգիթյանը:

- Որովհետև սովետական են,- ասաց Շարաֆյանը: - Ինչո՞ւ պիտի ավելի արագ չաշխատեն, քան կապիտալիստական ժամացույցները:

Հեռախոսալարի մյուս ծայրում պրոպագանդայի բաժնի վարիչը երկար ժամանակ լուռ էր, հավանաբար մտածում էր և ինչ-որ արդյունքի հասավ, որովհետև հարցրեց կասկածով.

- Բա որ արագ աշխատեն, առաջ չ՞են ընկնի…

- Իսկ ինչո՞ւ պետք է առաջ չընկնեն,- արդեն բացահայտ ծաղրեց Շարաֆյանը: - Էլ ի՞նչ սոցիալիստական, որ կապիտալիստականից առաջ չընկնի…

- Բա ինչո՞ւ եք ասում, թե հումոր է…

- Որովհետև հումոր է,- հառաչեց Զավենը: - Հումոր է,ընկեր Իգիթյան, հումոր…

- Մենակ դուք եք հասկանում,- քրթմնջաց Իգիթյանը: ՞ Ուրեմն հաջորդ լուրն էլ է հումոր, թե՞ կոպիտ սխալ, երբ գրում եք, թե մեր քաղաքում երկվորյակ եղբայրներ են ապրում, որոնցից մեկը 14 տարեկան է, իսկ մյուսը՝ 52: Եթե երկվորյակ եղբայրներ

Են, ինչպե՞ս կլինի, որ մեկը 14 տարեկան լինի, մյուսը՝ 52: Բա սա կոպիտ սխալ չէ՞:

- Կոպիտ սխալ է,- ասաց Զավենը: - Երկրորդը ոչ թե 52 տարեկան է, այլ 25:

- Լավ է, որ գոնե այս մեկը ընդունեցիք,- փնթփնթաց Իգիթյանը, բայց ի պատիվ իրեն, անմիջապես էլ գլխի ընկավ;- Ասացեք, ի՞նչ տարբերություն: Եթե երկվորյակ են, երկուսն էլ 14 տարեկան պետք է լինեն կամ 25:

- Հումոր է, ընկեր Իգիթյան,- գրեթե հեծեծաց խմբագիրը:

- Ձեզ համար ամեն ինչ հումոր է,- չարացավ Նշան Իգիթյանը: - Իսկ այս հայտարարությունն էլ է հումոր, որ գրել եք, թե քաղխորհրդի գործկոմի աշխատանքի տեղավորման բաժինը մշտական աշխատանքի է հրավիրում առևտրի տեսուչներ, ճաշարանի վարիչներ, մթերային բազայի պահեստապետեր,շուկայի կշռավարներ…

- Բա հումոր չէ, ի՞նչ է,-- չարացավ նաև խմբագիրը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դե եկեք ու պատասխան տվեք մարդկանց: Առավոտվանից զանգ են տալիս. թե ուզում ենք ճաշարանի վարիչ ու կշռավար աշխատել- Սահակ Միրզոյանը եկավ ու բողոքեց: Ես կխելագարվեմ, ասում է, թողել փախել եմ քաղխորհրդից: Դուռս կոտրում են, գոռում-գոչում են, թե հայտարարությունը տվել եք, հիմա էլ աշխատանք տվեք:

- Լավ, այդ մարդիկ հումոր չե՞ն հասկանում,- զարմացավ Զավեն Շարաֆյանը: - Բթամի՞տ են, ինչ է…

Նշան Իգիթյանի ձայնը դողաց.

- Ուրեմն ով որ ձեր իբր հումորը չի հասկանում, բթամի՞տ է:

- Բա ի՞նչ է,-- պոռթկաց խմբագիրը՝ լսափողը ցած նետելով:

Իհարկե զղջաց անմիջապես, ինչ էլ լինի տարիքով մարդ է, չարժեր այդպես վիրավորել ու ցած նետել լսափողը: Բայց ի՞նչ անել, ի՞նչ, ինչպես հանգիստ խոսել մի մարդու հետ, որը ոչ միայն թերթից ոչինչ չի հասկանում, այլև կարծես թե ընդհանրապես ոչինչ չի հասկանում: Մի մարդ, որը չգիտե, թե ինչ բան է երգիծանքը և տպված յուրաքանչյուր բառին հավատում է: Մի՞թե ծաղր չէ, որ հենց այդպիսի մարդն է ղեկավարում մամուլը: Դիտավորյա՞լ են նշանակում նմաններին, թե ինչ- Սարսափելի բան է:

Նա սպասում էր, որ այս անգամ Իգիթյանն ինքը զանգ կտա և բացատրություն կպահանջի: Բայց հեռախոսը լուռ էր, և Զավեն Շարաֆյանը թափ տվեց ձեռքը: Բավական է, ինչ ուզում թող լինի: Վիրավորվում է, թող վիրավորվի ու այլևս երբեք զանգ չտա: Նրա հերն էլ անիծած:

- Կարելի՞ է, ընկեր Շարաֆյան:

Մարո Մելիքյանը կանգնել էր դռան առջև, ձեռքին բոլորաձև մի թուղթ:

- Լսում եմ, Մարո:

- Մի փոքր ինֆորմացիա ունեմ, ընկեր Շարաֆյան, գուցե տեղավորենք այս համարում:

- Այս համարում տեղ չկա:

- Շատ կարևոր լուր է: Գուցե տեղավորեք մի կերպ:

- Ընկեր Մելիքյան,- սրտնեղեց խմբագիրը,- նման պահերին ինչ էր ասում մեր հարգարժան ուսուցիչ ընկեր Զուլոյանը…

- Ի՞նչ էր ասում, գուցե հիշեցնեի՞ք, ընկեր խմբագիր:

Զավեն Շարաֆյանը զարմացած նայեց աղջկա ծիծաղկոտ աչքերին ու ավելի սրտնեղեց: Ի՞նչ է պատահել սրան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դու պարտավոր էիր հիշել, որովհետև բարեխղճորեն գրանցում էիր նրա իմաստուն մտքերը,- չդիմացավ, խայթեց Զավենը: - Նման դեպքերում նա ասում էր թերթը ռետին չէ, որ ձգենք… երկարացնենք…

Իրոք զարմանալի էր, վիրավորվելու փոխարեն Մարոն ծիծաղեց.

- Ճիշտ է,- ասաց նա,- բայց ընկեր Զուլոյանը մի ուրիշ իմաստուն միտք էլ էր ասում: Ես գրել եմ: Ասում էր, որ եթե մարդու մտքում տեղ լինի…

- Լսիր,- ընդհատեց նրան Զավենը,- կուսակցական հաղորդագրություն հո չէ՞ :

- Ոչ,- ասաց Մարոն,- կուսակցական չէ, բայց շատ արժեքավոր լուր է: Դե ոչինչ, եթե տեղ չկա… ի՞նչ կարող ենք անել:

Զավեն Շարաֆյանը անհանգստացավ:

- Ի՞նչ լուր է, Մարո, տուր տեսնեմ…

- Չէ, չէ,- ձեռքը ետ քաշեց աղջիկը,-: գուցե իսկապես մեծ բան չէ: Ուղղակի մեր ընթերցողներին երևի հետաքրքիր կլիներ իմանալ, որ մի քանի ամիս առաջ մեր քաղաքում ելույթ ունեցող պարուհի Էմմա Ալիքյանը դարձել է երիտասարդ պարուհիները համամիութենական մրցույթի հաղթող և արժանացել վաստակավոր արտիստուհու կոչման:

- Էմման,- տեղից վեր թռավ խմբագիրը,- մեր Էմմա՞ն, տուր տեսնեմ նյութը:

- Ոչինչ, ոչինչ, - դուռը բացեց Մարոն,-- թող մնա հաջորդ համարին:

- Մարո,- ձեռքը սեղանին խփեց Զավեն Շարաֆյանը:

- Լսում եմ, ընկեր խմբագիր…

Զավեն Շարաֆյանը ծիծաղեց.

- Դու հաղթեցիր, Մարո,- ասաց նա,- ներիր, հա, Իգիթյանի ետ խոսվելուց հետո լրիվ կորցրել եմ հումորս…

Նա վերցրեց նյութը, կարդաց, ստորագրեց էջի անկյունում, նայեց ժամացույցին ու զանգեց կապի բաժանմունք:

- Ինձ շտապ Երևան միացրեք,- խնդրեց նա՝ թելադրելով համարը:

- Երևանը զծի վրա է, ցած չդնեք լսափողը, ընկեր Շարաֆյան.- ասաց հեռախոսավարուհին: - Հիմա կմիացնեմ:

Տղան զգաց, թե ինչպես արագացան սրտի զարկերը: Տեսնես ի՞նքը կվերցնի, թե դարձյալ նա: Եթե տղամարդ վերցնի, ցած կդնեմ լսափողը, վճռեց Զավենը ու ցնցվեց՝ մոտիկից, շատ մոտիկից լսելով Էմմայի ձայնը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Լսում եմ:

- Ես եմ, Էմմա, Զավենը,- ալեկոծվեց տղան:

- Սիրելիս-- շշնջաց Էմման,- ես սպասում էի քո զանգին, սիրելիս…

- Շնորհավորում եմ, Էմմա,- ասաց տղան, ուրախացած, որ աղջիկը լավ լսում է և ինքը գոռալու հարկ չունի: -Շնորհավորում եմ: Ես շատ ուրախ եմ քեզ համար…

- Ես էլ քեզ համար, իմացա, որ խմբագիր ես դարձել,- ծիծաղեց ԷմմաՆ;

- Ո՞րտեղից ես իմացել,- ապշեց Զավենը:

- Կայծակ Չոփուրյանն էր եկել թատրոն: Ծաղկեփունջ մատուցեց ինձ, որի մեջ տոմսակ կար: Այ, հենց այդ տոմսակի մեջ էլ գրել էր քո մասին: Որքան բարեկիրթ մարդ է այդ սարսափելի անվան տերը, չէ՞, Զավեն…

- Շատ,- գլուխն օրորեց Զավենը:

- Հենց որ տեսնես, կրկին ներողություն խնդրիր իմ անունից…

- Ինչո՞ւ,- զարմացավ տղան:

- Նա ինձ ռեստորան հրավիրեց, բայց ես հրաժարվեցի… Անհարմար բան ստացվեց:

Զավենը սեղմեց ատամները: Այդ մարդու լկտիությունը սահման չունի:

- Իսկ այդ բարեկիրթ մարդը տոմսակի մեջ ուրիշ ոչինչ չէ՞ր գրել,- հեգնեց նա:

Լռություն տիրեց:

- Չէ,- վերջապես շշնջաց Էմման,- բանավոր ասաց:

- Ի՞նչ,- զարմացած հարցրեց տղան, տենդորեն մտածելով թե միթե Կայծակ Չոփուրյանը իրոք պատմել է ռեստորանային այն սկանդալի և բյուրոյի նիստի մասին:

- Որ դու ամուսնանում ես Ալվարդի հետ:

Զավեն Շարաֆյանը զգաց, թե ինչպես է արյունը ողողում դեմքը:

Լսափողը բռնած ձեռքը քրտնեց:

- Իսկ ի՞նչ կա որ,- աղջկա ձայնի մեջ ծաղր փնտրելով, բարկացած հարցրեց նա:

- Ոչինչ չկա, Զավեն,- կամացուկ ասաց Էմման,- ես քեզ այն օրն էլ ասացի, որ Ալվարդը շատ համակրելի կին է և վերջապես շատ հասկանալի ու բնական բան է, որ միայնակ մարդիկ ձգտում են իրար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ինչպես որ դու և քո քանդակագործ ընկերը: Հա, ի դեպ, մոռացա շնորհավորել- ձեր ամուսնությունը: Ինչպես ասում են՝ մի բարձի ծերանաք:

Կրկին լռություն տիրեց, իսկ երբ Էմման խոսեց, նրա ձայնն ասես շատ հեռվից էր գալիս…

- Զավեն ջան,- ասաց նա կարծես թե միանգամից հոգնած ու ընկճված,- կներես, իհարկե, բայց ես բոլորովին չէի ցանկանա, որ մենք իրար հետ այս տոնով խոսենք: Կարծում եմ, որ դրա համար ոչ մի հիմք չունենք: Ոչ դու, ոչ էլ ես: Շնորհակալություն զանգի համար: Իմ շնորհավորանքները հաղորդիր Ալվարդին, Զավեն:

- Անպայման,- սրտդողած բացականչեց տղան,- անպայման:

Նա, իհարկե, չգիտեր, թե ինչ է կատարվում Էմմայի հետ: Բայց չէր հասկանում, թե ինչ է կատարվում նաև իր հետ: Ինչո՞ւ է անմիջապես նյարդայնանում: Ի՞նչ է ուզում այդ աղջկանից: Որքան էլ ջանաց կողմնորոշվել՝ Էմմայի խոսքի մեջ ոչ հեգնանք կար, ոչ ցավ կար, ոչ էլ չարախնդություն: Բայց գուցե պատճառը հենց դա՞ է: Իսկ մի՞թե դա պատճառ է: Սատանան էլ գլուխ չի հանի: Փաստն այն է, որ այդ աղջկա հետ խոսել չի լինում: Սկիզբը միշտ ջերմ է ստացվում, անկեղծ ու նույնիսկ սրտառուչ: Իսկ մի քանի միտք փոխանակելուց հետո երկուսն էլ ցցում են փշերը՝ գազազած ոզնիների պես: Ինչո՞ւ, ինչի՞ համար… Շնորհավորանքներս հաղորդիր Ալվարդին… Ախր չես էլ հասկանում, ծաղրո՞ւմ է, թե…

Ու նա միանգամից մտածեց, թե որքան հանգիստ է զգում Ալվարդի հետ, որքան ապահով՝ նրա կողքին: Իսկապես որ գթության քույր է:

Նա նորից, արդեն որերորդ անգամ հավաքեց տան հեռախոսի համարը: Ոչ մի պատասխան: Բայց որտե՞ղ է Ալվարդը: Չէ որ նա տանը պետք է լիներ: Այսօր Ալվարդի հանգստյան օրն է: Շնորհավորանքներս հաղորդիր Ալվարդին… Իսկ ինչո՞ւ չէ: Հենց պետք է հաղորդել: Անպայման: Հենց պետք է փաղաքուշ և տաք խոսքեր ասել նրան: Աշխարհում բոլորից շատ նա է սպասում և նա է արժանի այդ խոսքերին…

* * *

Զավեն Շարաֆյանը իջավ սանդուղքով ու նախքան շենքից դուրս գալը, սովորականի պես մի պահ ներս նայեց տպարանի բաց դռնից: Ներսում ոչ ոք չկար, բայց նա հաստատ համոզված էր, որ Գարեգին Չալյանը ինչ-որ տեղ մոտերքում է: Տպարանի դիրեկտորը հազվադեպ էր տուն գնում և ասում էին, թե հաճախ նույնիսկ տպարանի իր փոքրիկ առանձնասենյակի մոմլաթածածկ, մրից սևացած բազմոցին է քնում՝ տպագրական թուղթն օգտագործելով իբրև սավան: Հիմնական պատճառը երևի այն էր, որ նա երեխաներ չուներ և առանձնապես չէր շտապում տեսնել լեզվանի, կռվարար կնոջը: Նա իրեն երջանիկ էր զգում տպարանում և տեր էր զգում: Նա տպարանի շենքն իր ձեռքով էր կառուցել, սևագործ բանվոր էր աշխատել՝ թուղթ մատակարարելով տպագրիչներին, և ձիասայլին բեռնելով հրատարակված թերթի կապերը: Հետո տպագրիչ էր աշխատել և գրաշար դարձել, մի խոսքով՝ մինչև ողն ու ծուծը խրվել տպարանի տնտեսության մեջ: Իսկ երբ մահացել էր դիրեկտորը, Թբիլիսիից հրավիրված Հավլաբարի նշանավոր տպարանի նախկին գրաշար Վազգեն Մանուչարովը, առանց որևէ քննարկման դիրեկտոր էին նշանակել Գարեգին Չալյանին: Տպարանի գործից հասկացող ուրիշ ոչ մի թեկնածու չկար: Գարեգին Չալյանը ամեն ինչ էր տպարանում: Ով

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հիվանդանում էր: անտրտունջ փոխարինում էր նրան՝ նյութեր էր շարում և 1848 թվականի հեղափոխության բուռն օրերին Ֆրանսիայում ծնված և չգիտես ինչ հրաշքով այս փոքրիկ քաղաքում հայտնված տպագրական հարթ մեքենայի վրա տպագրում էր թերթը, բանվորի փոխարեն տեղափոխում էր թերթի հսկայական փաթեթները, իսկ հետո ձեռքով կտրատում ու ծալում տպագրված էջերը: Վերջին աշխատանքներն, իհարկե, այնքան էլ ծանր չէին, որքան թվում էր դրսից, որովհետև թերթը լույս էր տեսնում ընդամենը ութ հազար օրինակ տպաքանակով:

Երիտասարդ խմբագիրը դուրս եկավ շենքից ու ակամա ժպտաց տեսնելով՝ տպարանի դիրեկտորին, որը սև ներկի տակառը գլորելով մոտենում էր նրան:

- Արդեն տո՞ւն,- կանգ առավ Գարեգին Չալյանը:

- Տուն:

- Ջավեն ջան,- ասաց դիրեկտորը՝ ձեռքերը գոտկատեղին սեղմելով և դժվարությամբ ուղղելով մեջքը,- մի մեծ խնդրանք ունեմ: Պիտի կատարես:

- Լսում եմ, Գարեգին Սարիբեկովիչ,- հիշելով, որ Զուլոյանը այդպես էր դիմում նրան, հարգանքով խոնարհվեց խմբագիրը:

- Խնդրում եմ, Միհրան Գալստյանին ասես, որ մի ֆելիետոն գրի իմ մասին:

- Ձեր մասի՞ն,- կասկածելով, թե սխալ լսեց, հարցրեց Շարաֆյանը:

- Իմ մասին, իմ մասին,- պնդեց տպարանի դիրեկտորը:

- Ինչի՞ համար,- ծիծաղեց խմբագիրը:

- Էդքան գործ եմ անում ձեզ համար, տեսնում ես, էլի թե ինչ թերթ եմ տալիս: Բա ես արժանի՞ չեմ, որ Միհրանը մի կարգին ֆելիետոն էլ իմ մասին գրի: Ես ուրիշներից, թեկուզ հենց սանէպիդ կայանի բժշկից ինչո՞վ եմ պակաս:

- Ի՞նչ է պատահել, Գարեգին Սարիբեկովիչ,- հասկանալով որ տպարանի դիրեկտորը կատակում է, ժպտաց Շարաֆյանը:

- Ի՞նչ պետք է պատահի, հոգուդ մեռնեմ: Միհրանը երկու տարի առաջ մի ֆելիետոն գրեց սանէպիդկայանի բժշկի մասին, թե կաշառակեր է, էս է, էն է- Հետո գիտե՞ս ինչ եղավ, այդ նույն բժշկին գլխավոր բժիշկ նշանակեցին, իսկ կնոջն էլ առաջադրեցին դեպուտատ: Հիմա ասում եմ, ես բոլոր տվյալները կտամ ու թերություններս մեկ-մեկ կասեմ,թող էդ տղան մի բան էլ իմ մասին գրի, գուցե թե առաջ քաշեն, տպարանից զզվել եմ, համ էլ քաղխորհրդի նախագահի տեղն ազատ է: Իսկ կինս էլ իսկական դեպուտատի թեկնածու է, դու էլ լսած կլինես, նրա նման շատախոս ամբողջ հանրապետությունում չկա: Ի՞նչ ես կարծում, Ջավեն ջան, ճիշտ չե՞մ, կասե՞ս Միհրանին:

- Կասեմ, կասեմ,- նայելով դիրեկտորի աղաչական դեմքին, քրքջաց Ջավեն Շարաֆյանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ասա, ցավդ տանեմ,- ձեռքը կրծքին տարավ Գարեգինը, - իրար հետ աշխատում ենք, մի անգամ մի օգուտ էլ ես ստանամ ձեզանից:

- Վայ, Գարեգին Սարիբեկովիչ, վայ,- աչքերի արցունքը սրբեց խմբագիրը: - Իսկապես ֆելիետոնի թեմա է: Իսկ Միհրանին չե՞ս ասել:

- Ոնց չեմ ասել, Զավեն ջան,- կրկին տակառի վրա կռացավ դիրեկտորը,- բայց ինձ տեսնում է, թե չէ՝ փախչում է…

* * *

Ծաղկել, հարսնացել էր այգին: Առաջինը հապճեպ հայտնվել էին սալորենու սպիտակ ծաղիկները և արդեն խամրել էին մի քիչ: Շքեղորեն բացվել էին ծիրանի ճերմակ ծաղկաթերթերը: Ուռել,փքվել, արդեն տրաքում էին դեղձի բաց վարդագույն և տանձի կարմիր ծաղկեպսակները: Գարնան գույների ու բույրերի խրախճանք էր այգում և հրավառություն:

Արեգակը մայրամուտ էր գնում, բայց դեռ տաք էր և գոլորշի էր բարձրանում հողից: Գոլորշի էր բարձրանում նաև ցինկապատ տաշտակից, որ Ալվարդը դրել էր ծորակի մոտ, սեղանին և լվացք էր անում: Ծառից ծառ կապված պարաններից կախված էին ձմեռային տաք հագուստները, որ շուտով տեղավորվելու էին ճամպրուկների մեջ: Գորգերն ու կարպետները արևահարվում էին պատշգամբի բազրիքներին գցված: Ինչպես տանտիրուհիներն են ասում՝ Ալվարդը մեծ «ուբորկա» էր սկսել: Զավենը, որ անաղմուկ ներս էր մտել դարպասից, հիմա դռան առջև կանգնած ակամա հիացմունքով դիտում էր Ալվարդի նուրբ, իսկապես աղջկական մարմնի հարազատ, գեղանի շարժումները, հոլանի բազուկների խաղը լվացքի տաշտակի մեջ ու նրա սիրտը մի զարմանալի խանդաղատանքով էր լցվում: Ես չգիտեմ՝ դու հեգնում էիր, թե չէ, բայց իրավացի ես, իրավացի ես, Էմմա այդ միայնակ, սիրելի ու դժբախտ կնոջ նկատմամբ:

- Ուրեմն դու տա՞նն ես եղել,Ալվարդ:

Ալվարդը շրջվեց ու տղային նայեց ուրախ, պայծառ աչքերով, աջ ձեռքը թափահարելով, մատների վրայից հեռացրեց փրփուրը ու զգուշությամբ ետ տարավ ճակատին թափված վարսերը:

- Իհարկե տանն եմ եղել: Չի՞ երևում:

- Քանի անգամ զանգ եմ տվել,- ասաց տղան,- արդեն անհանգստանում էի, Ալվարդ:

Տանտիրուհին ծորակի տակ լվաց ձեռքերը:

- Զանգի ձայնն այստեղ չի հասնում, ի՞նչ անեմ,- ասաց նա մեղավոր: - Իսկ ի՞նչ կար, կարևոր բա՞ն ունեիր ասելու:

- Աշխարհի ամենակարևոր բանը, Ալվարդ, կարոտում էի քեզ:

Ալվարդը ծիծաղեց երջանիկ ու գոգնոցով սրբեց ձեռքերը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ճաշդ սեղանին դրված է,- ասաց նա:

- Դու էլ արի ինձ հետ, Ալվարդ,- խնդրեց տղան:

- Ես քաղցած չեմ,- հրաժարվեց տանտիրուհին: - Հետո տեսնում ես, էլի, գործ շատ ունեմ, Զավեն:

- Ոչինչ,- ասաց Զավենը,- լվացքը միասին կանենք: Վաղուց լվացք չեմ արել:

Ալվարդը ծիծաղեց և հանեց գոգնոցը:

- Ախր, որ դու նստում ես իմ դիմաց, ախորժակս բացվում է,- ասաց տղան: - Թե չէ գիտես, էլի, կուլ չի գնում:

- Կեղծավոր,- կրկին ծիծաղեց տանտիրուհին ու նկատելով, որ Զավենը պատրաստվում է բարձրանալ սանդուղքով, ձայն տվեց: - Ո՞ւր ես գնում, իմ սենյակում ամեն ինչ թափթփված է, Զավեն, ես քո սենյակում եմ հաց դրել:

Նրանք ներս մտան: Զավենը նստեց թախտին, թեքվեց սեղանի վրա, բարձրացրեց ափսեները ծածկող փոքրիկ սփռոցը, ձեռքերն իրար շփեց ու ասաց.

- Նախքան այս սուրբ արարողությանն անցնելը, ես ուզում ես քեզ մի շատ ավելի սուրբ բան առաջարկել, Ալվարդ:

Ալվարդը նստեց նրա դիմաց աթոռին, արմունկները ծնկներին հենեց ու ձեռքերի ափերով այտերը սեղմած, սպասողական հայացքը հառեց տղային:

- Ալվարդ,- ասաց Զավեն Շարաֆյանը: - Ես քեզ սիրում եմ, Ալվարդ:

- Գիտեմ,- ժպտաց Ալվարդը: - Կեր, Զավեն ջան:

- Չէ: - ասաց Զավենը,- ես չվերջացրի: Ես ուզում եմ, որ մենք ամուսնանանք, Ալվարդ:

Ալվարդի ձեռքերը թուլացան ու ցած ընկան ծնկներին:

- Դու այդ լո՞ւրջ ես ասում,- հարցրեց նա ավելի շատ զարմացած, քան ուրախ:

- Ամենայն լրջությամբ,- ասաց տղան: - Ամենայն լրջությամբ. - կրկնեց նա այս անգամ կարծես թե ի հեճուկս Էմմայի: - Եթե մարդիկ սիրում են իրար և իրար հետ երջանիկ են, իսկ ես համոզված եմ դրանում, ուրեմն պետք է ամուսնանան: Այնպես որ

ես պաշտոնապես խնդրում եմ քո ձեռքը և խնդրում եմ, որ չմերժես ինձ: Մի մերժիր ինձ, Ալվարդ ջան: Համոզված եղիր, որ ես օրինավոր ամուսին կլինեմ քեզ համար ու մինչև կյանքիս վերջը կպաշտպանեմ ու կսիրեմ քեզ:

Ալվարդը նրան էր նայում լայն բացված, զարմացած աչքերով, որտեղից արտասուքներ էին գլորվում այտերն ի վար, և նա չէր էլ փորձում սրբել այդ արտասուքները:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Շնորհակալ եմ,- մրմնջաց նա, - աստված է վկա, թե ինչքան շնորհակալ եմ քեզ: Բայց դու անհնարին բան ես ասում, Զավեն:

- Ինչո՞ւ է անհնարին,- վիրավորվեց տղան:

Ալվարդը վեր կացավ տեղից, մեկնեց ձեռքը ու խառնեց նրա մազերը:

- Չեմ ասի,- արցունքի միջից ժպտաց նա: - Չեմ ասի, որովհետև ինչ որ ասեմ, իմ դեմ է լինելու: Ուրեմն դու իսկապե՞ս սիրում ես ինձ, Զավեն:

- Սիրում եմ,- ասաց տղան՝ ավելի ու ավելի համոզվելով դրանում: - Մի՞թե դու չես տեսնում, որ ես սիրում եմ քեզ:

- Տեսնում եմ,- ասաց Ալվարդը: - Եվ ինչ լավ է, որ դու այդ խոսքերը հենց այսօր ասացիր: Չեմ ձևացնի, Զավեն ջան, ինձ համար չափազանց անսպասելի ու չափազանց հաճելի էին քո խոսքերը, Դա անհնարին է, իհարկե, անհնարին է, անհնարին, բայց լավ է, որ ասացիր: Ինչ լավ է, որ ես լսեցի այդ խոսքերը: Հատկապես այսօր:

- Ի՞նչ է նշանակում հատկապես այսօր, Ալվարդ:

- Որովհետև վաղը Միքայելս տուն է գալու քննություններից առաջ և դու նրա ներկայությամբ չէիր կարող նույնը ասել:

- Ինչո՞ւ,- հոնքերը խոժոռեց տղան: - Մի՞թե ես ամոթալի բան եմ առաջարկում: Ընդհակառակը, ես ենթադրում եմ, կգտնվեն մարդիկ, որոնք Միքայելին կշտապեն տեղյակ պահել մեր… մեր կապի մասին, ինչպես Էմմային են տեղյակ պահել: Եվ ուզում եմ, որ մենք կանխենք բոլորին: Որ ինքներս Միքայելին հայտնենք մեր ամուսնության լուրը: Նա մեծ ու խելացի տղա է և կհասկանա մեզ…

- Էմմայի՞ն,- ասես ամեն ինչ մոռացած կծկվեց Ալվարդը,- Էմման գիտի՞…

- Ամեն ինչ,- ասաց տղան,- և խնդրեց իր անունից շնորհավորել քեզ մեր ամուսնության առթիվ:

- Դու… դու նրան ասացիր, որ մենք ամուսնանո՞ւմ ենք…

- Ինձնից առաջ նրան ասել էին արդեն: Ես միայն հաստատեցի:

- Դու խելագար ես,- թիկունքից նրա գլուխը կրծքին սեղմելով, հառաչեց Ալվարդը: - Դու խելագար ես, խելագար…

- Իհարկե խելագար եմ,- քմծիծաղ տվեց Զավենը,- որովհետև ամուսնության առաջարկ եմ անում մեկին, միամտաբար մտքովս չանցկացնելով, որ մերժում կստանամ:

Ալվարդը ծնոտը թաղեց տղայի մազերի մեջ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դա անհնարին է,- ասաց նա,- և դու էլ գիտես, որ դա անհնարին է: Ես չգիտեմ, կամ, ավելի ճիշտ, չեմ ուզում ասել, թե ինչու, որովհետև դու պետք է որ հասկանաս: Բայց ամոթ է, Զավեն:

- Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ,- ներքևից վեր նայելով պոռթկաց տղան: - Ամո՞թ է, որ ամուսնանում ենք: Իսկ ավելի մեծ ամոթ չէ՞,որ գողերի նման թաքուն ենք սիրում իրար, ամեն մի հիմարի զանգից վեր թռչելով ու կարմրելով, ամեն մի երկդիմի խոսքից թունավորվելով, ամեն մի երկիմաստ հայացքից շրջվելով ու տանջվելով: Ինչո՞ւ, ինչի՞ համար:

Ալվարդը հառաչեց:

- Վաղվանից այդ ամենին վերջ կտրվի:

- Ճիշտ է,- զարմացած նրան նայեց տղան: - Կարևորն այն է, որ մենք սիրում ենք իրար, այնպես չէ՞: Մենք Միքայելին կբացատրենք ամեն ինչ: Իսկ հետո ինքը կմնա այստեղ, իսկ մենք կտեղափոխվենք մեր նոր տունը: Ես քեզ ասել էի, չէ , որ ինձ բնակարան են տալու: Այսօր զանգահարեցին, թե կարող եք տեղափոխվել: Մի սենյականոց բնակարան է, բայց ի՞նչ անենք, ավելին մեր ինչին է պետք, այդպես չէ՞:

Նա շտապում էր, չէր ուզում ընդհատել խոսքը, հարցեր էր տալիս ու ինքն էլ պատասխանում իր հարցերին, վախենալով Ալվարդի պատասխանից: Եվ ճիշտ էր անում, որովհետև Ալվարդն ասաց.

- Զավեն, ես չեմ ուզում, որ Միքայելը որևէ բան իմանա մեր մասին: Եթե նա ինձ հետ խոսի այդ թեմայով, ես կմեռնեմ:

- Տարօրինակ մարդ ես,- ուսերը թոթվեց տղան: - Ուրիշները հո կասեն…

- Ով ինչ ուզում է թող ասի,- ասաց Ալվարդը:

- Է, հետո՞:

- Հետո այն, որ դու կտեղափոխվես քո նոր տուն, և մենք այլևս չենք հանդիպի: Մենք չպետք է հանդիպենք:

-Ալվարդ,- տեղից բարձրացավ Զավենը: - Ինչեր ես ասում, Ալվարդ:

Կինը հանկարծ լաց եղավ նորից:

- Դու ոչինչ չես հասկանում,- ասաց նա հեծկլտալով: - Ինչ լինելու է, ինձ է լինելու: Ինչո՞ւ ես ինձ ստիպում ասել այն ամենը, ինչ պարզից էլ պարզ է և ես չեմ ուզում ասել: Ես եմ կորցնողը, ես եմ իմ երջանկությունից փախչողը, ես եմ ինքնասպանը: Բայց ուրիշ ելք չկա: Ավելի լավ է չարախոսեն, քան ծիծաղեն ինձ վրա: Թող ինչ ուզում են մտածեն, բայց չասեն, թե ես խաբել եմ ու իմ թակարդն եմ գցել մի միամիտ, մի անմեղ պատանու…

- Հիմարություններ են, Ալվարդ, այդ բոլորը հիմարություններ են- Մի՞թե ես երեխայի նման եմ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դու երեխա չես: Դու մի շատ մեծահոգի ու ազնիվ մարդ ես, Զավեն: Բայց մեր ճանապարհներն ուրիշ են: Ինչ որ կատարվեց մեզ հետ՝ խելագարություն էր: Եվ բավական է: Համարենք որ փոթորիկ էր, անցավ:

- Եվ դու կարող ես այդքան հեշտությամբ բաժանվե՞լ ինձնից:

- Կարող եմ: Եկ այլևս չխոսենք: Վերջ:

Եվ Զավենը հասկացավ, որ դա իրոք վերջ է:

* * *

- Տղաներ, սեղանը պատրաստ է ,- պատշգամբ դուրս եկավ Մարո Մելիքյանը:

Պատշգամբում,երկար մի իշոտնուկի վրա իրար կողքի նստած էր ողջ խմբագրությունը՝ Զավենը, Միհրանը, Ջիվանը, Քաջիկը, Նրկողայոս Սևյանը:

- Վերջապես,- հառաչեց Ջիվանը,- կոտորվեցինք սովից: Ոչ մեկը հաշվի չի առնում, որ ես ութ աղջկա տեր եմ և ինձ առանձնահատուկ սնունդ է պետք:

- Իններորդ աղջկա համա՞ր,- հարցրեց Նիկողայոս Սևյանը:

Ջիվան Ենգոյանը նրան նայեց արհամարհանքով.

- Ավելի լավ է տասնութ աղջիկ ունենամ, քան թե քեզ նման ոչ ու փուչ մի տղա, որն իր առաջին ֆելիետոնը հոր վրա է գրում:

Բոլորը ծիծաղեցին: Զավենին թվում էր, թե Նիկողայոս Սևյանը կկորցնի իրեն, բայց նա աչքն էլ չթարթեց:

- Իրո՞ք ձեր հոր վրա ֆելիետոն եք գրել, թե՞ կատակում է - հարցրեց Զավենը:

- Գրել եմ,- չարացած ասաց Նիկողայոսը,- և հիմա էլ համոզված եմ, որ ճիշտ եմ վարվել: Պետք է ազնիվ ապրել…

- Իհարկե,- միջամտեց Միհրանը,- ինչո՞ւ պետք է ռուսները Պավլիկ Մորոզով ունենան, իսկ մենք Նիկողայոս Սևյան չունենանք: Ո՞ւմից ենք պակաս: Ազգային արժանապատվության հարց կա:

- Բայց դե հայրն էլ շատ դաժան է վարվել նրա հետ: Դա անելո՞ւ բան է, որ արել է,- ավելացրեց Քաջիկ Սահառունին՝ Զավեն Շարաֆյանին աչքով անելով:

- Բայց ի՞նչ է պատահել վերջապես,- չդիմանալով, հետաքրքրվեց Զավենը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Էհ,- ձեռքը թափ տվեց Նիկողայոս Սևյանը: - Շատ հին պատմություն է, ընկեր Շարաֆյան: Երեխա էի…

- Պատմեմ, պատմեմ,- իրար անցավ Միհրան Գալստյանը: - Բոլորդ էլ գիտեք, որ 1932 թվականը սովի տարի էր:

- Իբրև թե որ թիվը չէ սովի,- փնթփնթաց Ջիվանը:

- Չէ, դա սարսափելի բան է եղել: Ականատեսներն ասում էին, թե մարդիկ ուռել-փքվել ու մեռել են սովից: Ահա հենց այդ թվականին, որպեսզի երեխաները քաղցից չկոտորվեն, մեր Նիկողայոսի հայրը, որ ջրաղացպան էր աշխատում, ամեն օր մի երկու բուռ ալյուր է գողանում ու փափախի մեջ գլխին դրած բերում տուն: Հաց են թխում ու ապրում են մի կերպ: Իսկ մի երկու շաբաթ հետո գյուղ է հասնում շրջանային թերթը, որտեղ «Գող ջրաղացպանը» վերնագրով ֆելիետոնի մեջ Նիկողայոս Սևյանը մանրամասն նկարագրում է ալյուրի հափշտակության փաստը ջրաղացից և դատապարտում իր ջրաղացպան հոր ամոթալի վարքագիծը:

Զավեն Շարաֆյանը հազիվ էր զսպում փոթկոցը:

-Եվ ինքն էլ ստորագրե՞լ էր:

- Իհարկե,- գլխով արեց Ջիվանը: - Ես կարդացել եմ: «Պատանի գյուղթղթակից Նիկողայոս Սևյան»:

- Չէ, բոլոր դեպքերում հոր արածը արած չէր,- կրկին խմբագրին աչքով անելով, հառաչեց Քաջիկ Սահառունին: - Ահավոր բան է… Ուրեմն…

- Լավ, թող վերջացնեմ,- ընդհատեց նրան Միհրանը: - Դե պարզ է, որ կոլվարչության նիստ են անում և գող ջրաղացպանին հեռացնում աշխատանքից: Նա էլ տուն է գալիս մթնով, մեր էս խեղճ Կոլյայի թևից բռնում տանում անասունի գոմ, վիզը թոկ է գցում, կապում մսուրից, մի խտիտ ծղոտ է լցնում առաջը ու ասում՝ «Դե կեր, շան որդի, թե չէ կսատկացնեմ, ուզածդ սա էր»:

- Եվ տարաբախտ թղթակիցը ուտում է ծղոտը,- տնքաց Քաջիկ Սահառունին:

Ոչ մեկն այլևս չկարողացավ պահել իրեն, քրքջում էին բարձրաձայն և Զավեն Շարաֆյանն էլ նրանց հետ: Ու մեկ էլ այդ քրքիջի տակ Նիկողայոս Սևյանը խռոված ասաց,

- Սուտ են ասում, ընկեր Շարաֆյան, գցեցի բերանս, բայց չկերա…

Նորից քրքիջ բարձրացավ և Մարո Մելիքյանը, որպեսզի ձայնը լսելի դարձնի, ստիպված եղավ փակել ականջներն ու ճչալ.

- Ներս եկեք, ամեն ինչ սառեց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Տղամարդիկ ներս մտան աղմուկով, հրհրելով իրար ու արագորեն տեղավորվեցին երկարուկ սեղանի շուրջը: Նույն արագությամբ էլ լցվեցին բաժակները, և Ջիվան Ենգոյանը, տարեցի իրավունքով բարձրացավ տեղից.

- Շնորհավոր ձեր բնակարանը, Ջավեն Աշոտիչ:

Աղմկեցին ու բարձրացան տեղից բոլորը և ջերմ խոսքերով համերաշխ խմեցին Ջավեն Շարաֆյանի կենացը, մաղթելով նրան այն ամենը, ինչ բարեկամը կցանկանա բարեկամին: Նույնիսկ Մարո Մելիքյանը խմեց, նախապես հայտարարելով.

- Խմում եմ, բայց ինչքան ուզեմ ծիծաղելու եմ, չզարմանաք:

Չխմեց միայն Ջիվան Ենգոյանը: Ավելին՝ ցուցադրաբար ցած դրեց լի բաժակը:

- Ջիվան,- հարցրեց խմբագիրը,- ինչո՞ւ չես խմում:

Քաջիկ Սահառունին պատասխանեց նրա փոխարեն.

- Նա սկզբունքորեն տարեկան միայն մի անգամ է խմում, Ջավեն Աշոտիչ, իր հերթական աղջկա ծննդյան առթիվ: Եվ աստված ձեզ փրկի այդ օրը նրան հանդիպելուց:

Ինչպես երևաց, Ջիվան Ենգոյանը սազի միայն մի լարին էր տիրապետում:

- Ավելի լավ է տասնութ աղջիկ ունենամ, քան թե քեզ նման մի տղա, որն աշխարհում էլ մարդ չգտավ ու գնաց Կայծակ Չոփուրյանի տնփեսան դարձավ:

Նորից ծիծաղ բարձրացավ:

- Արգելված հարված էր,- բողոքեց Քաջիկը: - Գոտուց ցած հարվածել չի կարելի: Իմ աներոջը ձեռք չտաք:

- Չհասկացա,- ասաց Նիկողայոս Սևյանը,- իսկ Կայծակը գիտի , որ քո գոտուց ցածր է:

- Որ չիմանա էլ, այսօր կիմանա,- խմբագրին նայելով կամացուկ ասաց Միհրան Գալստյանը՝ քյուֆթա դնելով նրա ափսեի մեջ: -Այս քյուֆթան ես եմ բերել, Ջավեն Աշոտիչ, մայրիկիս պատրաստածն է:

- Այս սեղանին միայն իմ բերածը չկա,- ծիծաղեց Ջավենը:

Դա իրոք այդպես էր: Մարոն էր կազմակերպել ամեն ինչ: Նախ որ կոլեկտիվով հավաքվեն և օգնեն կահավորելու նոր բնակարանը և հետո ով ինչ ուտելիք կարող է՝ բերի իր տնից: Դրա համար էլ հարուստ ու խայտաբղետ էր սեղանը: Ինչ վերաբերում է կահույքին, ամեն ինչի վրա պետական համարներ կային սպիտակ յուղաներկով գրված: Գառնիկ Բադալյանի կարգադրությամբ մի գրասեղան հատկացրել էր գրադարանը, մի մահճակալ իր անկողնով և պահարան՝ քիմկոմբինատի հանրակացարանը: Իսկ աթոռները ակումբից էին բերել: Գրեթե նոր աթոռներ էին: Ակումբի տնտեսվարը շատ գծուծ մարդ դուրս եկավ, Միհրան Գալստյանի հոգին հանեց, մինչև որ բաց թողեց վեց աթոռը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Իմացիր, իմ բալանսում նստած են: Ոնց որ տվել եմ, այնպես էլ պիտի ետ ստանամ:

Եվ ամբողջ խնջույքի ժամանակ սեղանակիցները մեկ էլ զգուշացնում էին իրար:

- Կամաց, այ տղա, աթոռին բան չպատահի, բալանսում նստած է:

Մարո Մելիքյանը խմելուց հետո ծիծաղելու ցանկության ահից կախել էր գլուխը, կիտել հոնքերը և պատառաքաղի ծայրով քչփորում էր պնակի մեջ:

- Էդ ի՞նչ ես անում, այ աղջի, ուտո՞ւմ ես, թե սրբագրում,- հետաքրքրվեց Ջիվանը,

Մարոն փռթկաց, բայց չբարձրացրեց գուխը:

- Ճիշտ, հանկարծ հիշեցի, Մարո, քեզ այն ժամանակ պատմեցի՞ն, որ սրբագրիչ աշխատելու ժամանակ «քաղկոմ» բառի մեջ «ղ»-ի փոխարեն տառասխալ էիր բաց թողել,- միամիտ-միամիտ հարցրեց Քաջիկը:

Այդ տղան կարծես բավականություն էր ստանում գլուխը առյուծի երախը մտցնելով:

Մարոն կաս-կարմիր կտրեց ու անմիջապես էլ հարձակման անցավ:

- Դու ինձ հետ գործ չունես, Քաջիկ, գնա գրադարան ու Վրթանես Փափազյանի լուսանկարը բեր:

-Իմ խելքն ասա,- հառաչեց ու սկվեց Քաջիկը:

Բոլորը հռհռացին, բացի, իհարկե, Ջավեն Շարաֆյանից, որը ոչինչ չհասկանալով, մեկ սրան, մեկ նրան էր նայում:

- Այդ ի՞նչ լուսանկարի պատմություն է:

- Ասեմ, Ջավեն Աշոտիչ, Քաջիկը, երբ նոր էր լուսանկարիչ ընդունվել մեզ մոտ, ուղեղը հարթ ու անեղծ էր՝ ինչպես վայել է գյուղտեխնիկումի շրջանավարտին և Կայծակ Չոփուրյանի փեսային: Վրթանես Փափազյանի հոբելյանն էր, լուսանկարը չունեինք, ընկեր Զուլոյանն ասաց՝ Քաջիկ, գնա գրադարան, Վրթանես Փափազյանի նկարը բեր, տպագրենք: Մի քանի ժամ հետո եկավ, թե գնացի սպասեցի, սպասեցի, Վրթանես Փափազյանն այդպես էլ չեկավ:

- Բա որ հյուրանոցում Ռաբինդրանաթ Տագորին էր հարցրե՞լ,- ճչաց Մարոն:

- Իմ խելքն ասա,- տխրությամբ նրան նայելով, կոմիկի լրջությամբ մրմնջաց Քաջիկ Սահառունին,-որ քեզ հավատացի գնացի լուսանկարելու: Ես շա՞տ գիտեի,որ մեռած է:

Նիկողայոս Սևյանը հանկարծ չգիտես ինչու հարկ համարեց հարվածի տակից դուրս բերել Քաջիկ Սահառունուն և փողկապը ուղղելով դարձավ Մարոյին.

- Բա որ դու էլ սոցիալական անարդարության փոխարեն, սոցիալիստական անարդարություն էիր գրել, լա՞վ էր: Մեզ մոտ քաղկոմում արդեն քննում էինք հարցդ, Զուլոյանը փրկեց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մարոն, որ ծիծաղելուց էր վախենում, քիչ մնաց լաց լինի.

- Բա որ դու էլ…բա… դա սոցիալիստական անարդարություն չէ՞, որ քաղկոմից հեռացրած մարդուն խմբագրություն են բերում:

Զավեն Շարաֆյանն զգաց, որ իր միջամտելու ժամանակն է:

- Է, չեղավ,- ասաց նա: - Եկեք սխալների մասին չխոսենք: Եկեք աշխատենք, որ չլինեն այդ սխալները: Ամեն անգամ, երբ ընթերցողներից մեկը զանգահարում է ու մատնացույց է անում մեր բաց թողած տառասխալը, ամոթից գետինն եմ մտնում:

- Հետո էլ ասում են, թե մեր թերթը ընթերցող չունի: Էն էլ ի՞նչ ընթերցողներ ունի: Ինձ թվում է, թե բոլորը բան ու գործը թողած, մեր թերթում տառասխալներ են փնտրում՝ ընկեր Իգիթյանի իմաստուն ղեկավարությամբ,- նետեց Միհրան Գալստյանը՝ ժպտալով խմբագրին:

Նիկողայոս Սևյանը հազաց ու կրկին ուղղեց փողկապը:

- Եթե սխալ չլինի, չեն գտնի,- ասաց նա հանդիսավորությամբ: - Իմ հերթապահության ժամանակ դեռևս ոչ մի սխալ չի սպրդել:

Միհրան Գալստյանը աղաչանքով խմբագրին նայեց,

- Բա չասե՞մ, Զավեն Աշոտիչ, սիրտս կպայթի:

Զավեն Շարաֆյանը տարուբերեց գլուխը:

- Որքան կռահում եմ, ակնարկդ ինձ է վերաբերում, Միհրան Գալստյան: Ինչո՞ւ ես վախենում, ասա- Ի վերջո մենք կոմունիստներ ենք:

- Ընկեր Նիկողայոս Սևյան,- այլևս չհամբերեց պատասխանատու քարտուղարը,- եթե խմբագիրը չկանխեր քո բաց թողած սխալը, հիմա դու ոչ ընկեր կկոչվեիր, ոչ խմբագրությունում կլինեիր և ոչ էլ կոմունիստ: Ու մեզ էլ կտանեիր քեզ հետ: Անկասկած,

- Շատ հետաքրքիր է,- ձգեց Սևյանը: - Այդ ո՞ր մեղքիս համար:

- Որովհետև որպես պատասխանատու հերթապահ ստորագրել էիր այն էջի վրա, որտեղ այսպիսի ինֆորմացիա կար.«Սովետական ժողովուրդը մեծ խանդավառությամբ հանդիսավոր ժողովներում ամենուրեք դեպուտատության թեկնածուներ է առաջադրում մեր հայրենիքի փառապանծ զավակներին, կուսակցության և կառավարության մեծանուն գործիչներ ընկ. ընկ, Խրուշչովին, Մալենկովին, Բուլգանինին, Միկոյանին և ուրիշ- շների.. »

- Ի՞նչ,- վայրկենապես գունատվեց, օձից խայթվածի նման տեղից վեր թռավ Սևյանը: - Չի կարող պատահել…

- Պատահել է, պատահել է,- քմծիծաղ տվեց Միհրանը,- «ուրիշներին» բառը տողադարձվել էր, և «շ»-ն վերևում էլ էր մնացել, ներքևում էլ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նիկողայոս Սևյանը շնչահեղձ էր լինում:

- Ճի՞շտ է ասում, ընկեր Շարաֆյան:

- Ճիշտ է aՍում,- չկարողացավ հրաժարվել խմբագիրը: - Դրա համար եմ խնդրում՝ ուշադիր եղեք, ուշադիր եղեք, նախորդ ընթերցողին մի վստահեք, նյութը կարդացեք այնպես, ասես առաջինն եք կարդում, Մի մոռացեք, որ գրաշարը անգրագետ մարդ է և տառերը պատկերով է շարում: Ամեն ինչ սպասելի է- Քանի անգամ եմ ասել…

- Իսկ էջը պահե՞լ եք,- չէր հանգստանում Սևյանը:

- Ոչ,- ասաց Զավենը,- պատառոտեցի ու դեն նետեցի:

Նիկողայոս Սևյանի ձեռքը դողում էր, երբ բարձրացրեց բաժակը:

- Ես ներողություն եմ խնդրում ձեզանից, բոլորից, ներողություն, Մարո ջան: Հավատացեք, թյուրիմացաբար, պատահականորեն է ստացվել: Դուք ինձ գիտեք: Գուցե թե սխալներ շատ ունեմ, այսինքն ինչո՞ւ գուցե, ունեմ, բայց ես այն մարդը չեմ, որ գիտակցաբար այդպիսի սխալ թույլ տամ: Մեծապես շնորհակալ եմ ձեզանից, ընկեր Շարաֆյան, և ձեզանից, ընկեր Գալստյան, ձեր մեծահոգության համար, ձեր վեհանձնության համար- Որ տեղն ու տեղը ինձ պատասխանատվության չեք կանչել:

- Դու որ հաստատ կանեիր,- շշնջաց Միհրանը՝ խմբագրին նայելով:

Դու էլ, դու էլ, Միհրան, տխուր մտածեց Զավեն Շարաֆյանը՝ հիշելով քաղկոմի բյուրոն: Նա հերթով նայեց իր աշխատանքային ընկերների լարված ու վախեցած դեմքերին ու բարձրացավ աթոռից:

- Լավ,- ասաց նա,- նստիր, ընկեր Սևյան: Այստեղ ոչ ոք չի կասկածում քեզ: Եթե կասկածեինք, չէինք վերացնի էջը: Ես չէի ուզում անգամ, որ որևէ մեկն իմանար այդ մասին և Միհրանն էլ չէր ուզում: Որովհետև անկախ իր սարսափելի բնույթին, դա ընդամենը տառասխալ է: Մոռանանք, մոռանանք, բայց զգույշ լինենք: Ինչպես համալսարանի իմ սիրելի դասախոսն էր ասում, թերթը ական է, որի լարը գտնվում է գրաշարի ձեռքին: Ուրեմն պետք է միշտ ուշադիր հետևենք այդ ձեռքին: Եվ բավական է, սա խնջո՞ւյք է, թե արտադրական խորհրդակցություն: Մարո՞, մի երգ, Մարո փրկիր մեզ…

* * *

Ստալինյան տիրապետության տարիներին հիմնարկներ աշխատում էին նաև երեկոները: Որևէ գրավոր հրաման կամ կարգադրություն չկար այդ առթիվ, բայց այդպես էր ընդունված: Մարդիկ աշխատանքից հետո տուն էին գնում, ճաշում և երկու-երեք ժամ անց նորից վերադառնում աշխատանքի: Իհարկե, այնքան գործ չկար, որ թե ցերեկն անեին, թե երեկոները: Իհարկե, հիմնարկի պետերը մեծ մասամբ իրենց առանձնասենյակներում ռադիո էին լսում, թերթ կարդում, զանգահարում և զրուցում էին իրար հետ, կամ ի վերջո ննջում էին

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

փափուկ բազկաթոռների մեջ ընկղմված: Բայց տուն գնալու իրավունք չունեին, պարտավոր էին տեղում լինել, որովհետև հանկարծ կարող էին պետք գալ իրենց վերադասին, ասենք՝ մինիստրին, կամ շրջկոմի ու քաղկոմի քարտուղարներին: Մինիստրին ու շրջկոմի և քաղկոմի քարտուղարներն էլ ստիպված էին իրենց տեղերում լինել, որովհետև, ով գիտե, մեկ էլ տեսար զանգ տվեցին Մինիստրների խորհրդից կամ Կենտկոմից: Եվ արդեն միանգամայն հասկանալի պատճառով պարտավոր էին իրենց տեղերում լինել Մինիստրների խորհրդի ու Կենտկոմի ղեկավարները, քանի որ համոզված էին, ընկեր Ստալինը աշխատում է երեկոները և, ի՞նչ իմանաս, հանկարծ կարող է զանգահարել որևէ մեկին, որևէ հարցով:

Այդ շարժումը, սակայն, ներքևից չէր սկսվել, այլ վերևից: Փաստն այն էր, որ Ստալինը երեկոներն իր առանձնասենյակում էր լինում: Անքնությունից էր տառապում, թե ուղեղն ավելի պարզ ու սթափ էր աշխատում երեկոները, ստույգ հայտնի չէ՝ բայց նա աշխատում էր նաև երեկոները և շատ տարօրինակ կլիներ, եթե նա աշխատեր, իսկ նրա թիկնապահները, օգնականները, քաղբյուրոյի անդամները չաշխատեին: Եվ նույնքան տարօրինակ կլիներ, եթե քաղբյուրոյի անդամներն աշխատեին, իսկ նրանց ենթակայության տակ գտնվող միութենական ու հանրապետական զանազան մեծ ու փոքր քարտուղարներն ու մինիստրները քնած լինեին տանը: Պատկերացնելն անգամ սարսափելի է: Հանկարծ ու ընկեր Ստալինին այդ րոպեին որևէ տեղեկանք պետք եկավ կամ որևէ թիվ: Նա հո չպե՞տք է սպասեր մինչև առավոտ:

Եվ ահա առանց որևէ գրավոր հրամանի կամ կարգադրության, երեկոներն աշխատում էին, ավելի ճիշտ՝ աշխատանքի տեղում էին լինում երկրի ամեն կարգի մեծ ու փոքր ղեկավարները, և տուն էին գնում միայն ուշ գիշերին, մի վերջին անգամ հեռախոսով ստուգելով և համոզվելով, որ սեփական վերադասը գնացել է արդեն: Տուն էին գնում, քնում էին մի երկու ժամ և անքնությունից այրվող

աչքերով, բթացած ուղեղներով առավոտյան կրկին շտապում աշխատանքի:

Որովհետև ընկեր Ստալինը երեկոներն աշխատում էր:

Իհարկե, հետո, բավականին ժամանակ անց, երբ մարդիկ արդեն համարձակվում էին նույնիսկ անեկդոտներ պատմել նաև ընկեր Ստալինի մասին, լուր տարածվեց, թե ժողովուրդների հանճարեղ առաջնորդը պարզապես խաղ է խաղացել իր սիրելի ժողովուրդների գլխին: Թե իբր նա իրեն շատ նման մի խամաճիկ է սարքել տվել և կարգադրել է երեկոները տեղադրել իր առանձնասենյակում, բազկաթոռին: Ողջ գիշեր վառվում էր նրա առանձնասենյակի լույսը,և մարդիկ սրտաշարժված ու գորովանքով մրմնջում էին.

- Մեր հայրը աշխատում է:

Այնինչ հայրը իր փափուկ անկողնում քնած էր, իսկ աշխատում, ավելի շուտ ձևացնում էին, թե աշխատում են երկրի բազմազան ղեկավարներն ու ղեկավարիկները, նրա զավակները:

Դա անկասկած անեկդոտ էր:

Բայց փաստը մնում էր փաստ, որ Ստալինի մահից հետո անգամ, երբ նրա բազկաթոռին նստած էր Խրուշչովը և երեկոները չէր վառվում նրա առանձնասենյակի լույսը, երկրի բազմա-

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

զան ղեկավարներն ու ղեկավարիկները, Ստալինի զավակները ըստ սովորության իրենց տեղերում էին լինում:

Ո՞վ գիտե, մեկ էլ տեսար…

Երեկոները ամենայն բարեխղճությամբ իր առանձնասենյակում էր լինում նաև քաղկոմի առաջին քարտուղար Գառնիկ Բադալյանը: Եվ այդ օրը իր մոտ էր հրավիրել «Լուսաբաց» թերթի խմբագիր Զավեն Շարաֆյանին:

Երիտասարդ խմբագիրը բարձրանում էր քաղկոմի շենքի մարմարե աստիճաններով, մտածելով, թե տեսնես ինչի համար է քարտուղարը կանչել իրեն: Բայց երբ գրեթե ամայի միջանցքն անցնելուց հետո մտավ նույնքան ամայի ընդունարանն ու կրնկի վրա բաց դռնից մի հայացք նետեց առանձնասենյակին, ամեն ինչ հասկացավ:

Առաջին քարտուղարի սեղանին ուղղահայաց դրված երկարուկ սեղանի կողքին նստած էր պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ Նշան Իգիթյանը: Նստած էր գլուխը խոնարհած, վիրավորվածությունից ուռցրած շրթունքները, սպիտակ-փափլիկ թաթերը դրած սեղանին: Զավեն Շարաֆյանը նախքան այդ հոգու խորքում հույս էր փայփայում, թե Իգիթյանը ղեկավարությանը չի բողոքի իրենց վիճաբանության առթիվ: Թե ի վերջո կհասկանա, որ երգիծանքին չի կարելի մոտենալ այդքան անհամ լրջությամբ և դրանով իսկ ծիծաղելի դրության մեջ ընկնել: Բացի այդ, սեփական փորձից նա գիտեր, որ երբ մարդու հասցեին, առանց վկայի, վիրավորական խոսք են ասում կամ հայհոյում են, այդ մարդը չի շտապում ուրիշների ներկայությամբ կրկնել նույն խոսքերը՝ ավելի զավեշտական դրության մեջ չընկնելու համար: Եվ դրանից էլ ելնելով համոզված էր, թե ի վերջո Իգիթյանը Բադալյանին չի ասի, որ խմբագիրն իրեն բթամիտ է անվանել:

Բայց նա սխալվում էր:

Գառնիկ Բադալյանը նրան չհրավիրեց նստել, այլ ինքը բարձրացավ տեղից ու գլուխը թափահարելով մոտեցավ խմբագրին:

- Զավեն Աշոտիչ,- ասաց նա խստությամբ: - Ես քեզ մինչև այժմ հասուն, պատկառելի մարդու տեղ էի դնում: Եվ հիմա շատ զարմացած ու զայրացած եմ: Ինչո՞ւ ես ընկեր Իգիթյանին անվանել բթամիտ:

- Ես նրան բթամիտ չեմ անվանել, Գառնիկ Վարդանիչ,- բողոքեց Զավենը շփոթված:

- Ինչպե՞ս թե բթամիտ չես անվանել,- վրդովվեց քարտուղարը և դեպի բաժնի վարիչը շրջվեց,- նա քեզ բթամիտ չի՞ անվանել, ընկեր Իգիթյան:

- Անվանել է,- գլուխը բարձրացնելով, դեռ խռոված հայտարարեց Իգիթյանը:

- Ոչ, Գառնիկ Վարդանիչ, երբ նա ասաց…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես շատ լավ գիտեմ, թե նա ինչ է ասել,- ընդհատեց նրան քարտուղարը: - Երգիծանքի մասին նրա ասածը իհարկե հիմարություններ են: Բայց դա մի՞թե քեզ իրավունք է տալիս քեզանից տարեց մարդուն անվանել բթամիտ:

Զավեն Շարաֆյանը, որ մինչ այդ խոնարհել էր գլուխը, ուղղվեց ու զարմացած նայեց Բադալյանին, տեսավ նրա մանկականորեն չարաճճի ու ծիծաղկոտ աչքերը և նոր միայն հասկացավ, որ քարտուղարը խաղում է:

- Ենթադրենք, թե նրա տարիքը քեզ համար ոչ մի նշանակություն չունի,- ձևացնելով, թե չի հանգստանում, աչքերը փայլեցնելով շարունակեց Բադալյանը: - Բայց նա քաղխորհրդի դեպուտատ է: Քեզ ո՞վ է թույլ տվել ժողովրդի ընտրյալին անվանել բթամիտ…

Զավեն Շարաֆյանը կրկին կախեց գլուխը:

- Ենթադրենք- ենթադրենք, թե քաղխորհուրդն էլ քեզ համար հեղինակություն չէ, այսինքն ի՞նչ հեղինակություն պիտի ունենա մի քաղխորհուրդ, որի ղեկավարը Սահակ Միրզոյանն է: Բայց ընկներ Իգիթյանը դեպուտատ լինելուց բացի, քաղկոմի բաժնի վարիչ է և բյուրոյի անդամ, դու այդ ո՞ր իրավունքով ես բյուրոյի անդամին անվանում բթամիտ: Այդպես որ գնա, ո՞ւր կհասնի,- ասաց նա՝ մատը տնկելով վեր:

Զավեն Շարաֆյանը գերադասեց լռել:

- Մարդուն բթամիտ համարել միայն նրա համար, որ նա հումոր չի հասկանում: Եղա՞վ, ընկեր Շարաֆյան: Ինչպ՞ես է լեզուդ պտտվել, որ թեկուզ մի շաբաթ պատերազմի թոհ ու բոհով անցած և հոգով ու մարմնով հավետ զինվորական մնացած այս մարդուն անվանել ես ոչ ավել ոչ պակաս՝ բթամիտ:

Դե որ խաղ է, թող խաղ լինի: Զավեն Շարաֆյանը բարձրացրեց գլուխն ու վիրավորված բացականչեց.

- Լավ, էլի, Գառնիկ Վարդանիչ: Ես ընդամենը մի անգամ եմ ասել բթամիտ, իսկ դուք տասն անգամ ասացիք:

- Քո գործը չէ, թե ես քանի անգամ կասեմ բթամիտ,- ձայնը բարձրացրեց քարտուղարը: - Չափդ ճանաչիր և հիմա, հենց այստեղ ներողություն խնդրիր ընկեր Իգիթյանից:

- Ներողություն, ընկեր Իգիթյան,- շշնջաց խմբագիրը:

- Այ այդպես,- ուրախացավ Գառնիկ Բադալյանը: - Դուք բավարարվա՞ծ եք, ընկեր Իգիթյան,

- Բավարարված եմ,- գլխով արեց բաժնի վարիչը:

- Դե ուրեմն ձեռք մեկնեք իրար:

- Լսում եմ,- տեղից վեր կացավ Նշան Իգիթյանը և մեկնեց ձեռքը: - Թույլ տվեք հեռանալ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

-Գնացեք,- ասաց քաղկոմի քարտուղարը, և մատը մեկնեց խմբագրի կողմը: - Իսկ նրա հետ ես առանձին կխոսեմ:

Երբ Նշան Իգիթյանը դուրս եկավ առանձնասենյակից, Գառնիկ Բաղալյանը նրա ետևից ընդունարան մտավ՝ հավանաբար համոզվելու համար, որ նա հեռացել է, ետ եկավ, ծածկեց դուռը ու ծիծաղեց: -Կներեք, իհարկե, Գառնիկ Վարդանիչ, բայց դուք կերպարանափոխվելու մեծ տաղանդ ունեք,- ծիծաղեց նաև Զավեն Շարաֆյանը:

- Ուզում ես ասել, որ դերասա՞ն եմ,- մատը թափահարեց Բաղալյանը: - Այսինքն, չեմ հրաժարվում, խաղացել եմ մեր ինստիտուտի թատերական խմբակում: Եվ երբ Իգիթյանը ինձ մոտ եկավ ու շատ վիրավորված պատմեց ձեր վեճի մասին, հանկարծ չգիտեմ ինչու երեխայությունս բռնեց, և ես որոշեցի հավատացնել քեզ, որ չես սխալվել: Որ այդ մարդը բացարձակապես բթամիտ է:

Նա հանկարծ ծիծաղեց.

- Հետո մի ուրիշ նպատակ էլ ունեի: Լսիր, մի անեկդոտ պատմեմ: Հին առած է: Մեկը ստիպված է լինում երկար ժամանակով բացակայել քաղաքից, բայց չի ուզում իր ունեցած ոսկին տանել հետը: Գնում է ընկերոջ տուն և խնդրում նրան պահել իր ոսկին՝ մինչև իր վերադարձը: Ընկերը համաձայնվում է, բայց գտնում է, որ լավ կլինի, եթե այդ գործարքը կատարվի վկաների ներկայությամբ: Մեծ աշխարհ է, ասում է, ամեն ինչ կարող է պատահել: Նա խորհուրդ է տալիս վկա կանչել հենց իր հարևաններին: Եվ նրանց ներկայությամբ վերցնում է ոսկին՝ հայտարարելով, որ խոստանում է վերադարձնել քսակը, հենց որ ընկերը վերադառնա: Ժամանակ անց մարդը վերադառնում է, շնորհակալություն է հայտնում ընկերոջը և խնդրում է ետ տալ իր ոսկի: Ի՞նչ ոսկի, հարցնում է ընկերը: Դու ինձ ոչինչ չես տվել: Մարդը սաստիկ զարմանում ու վշտանում է ու հանկարծ հիշում, որ նաև վկաներ են եղել: Նա անմիջապես հրավիրում է հարևաններին, որոնք սակայն ձեռքները կրծքին դրած երդվում են, որ նման բան չեն հիշում: Եվ հեռանում են, ամոթանք տալով նրան:

Մինչ հոգու խորքը ցնցված ու հիասթափված մարդը մի քանի ծանր խոսք է ասում ընկերոջը, բայց ի՞նչ կարող է անել, շրջվում է, որ հեռանա, երբ ընկերը ձայն է տալիս նրան: Եկ, եկ, ասում է ու վերցրու քո քսակը: Մարդը մնում է ապշած: Եթե վերադարձնելու էիր, էլ ինչո՞ւ ստեղծեցիր այս ամբողջ խայտառակ պատմությունը, այ ընկեր, վրդովվում է նա: Ես ուզում էի, որ դու իմանաս, թե ինչ կեղտոտ մարդկանց մեջ եմ ապրում, այդքան բան, ասում է ընկերը:

Հիմա հասկացար ինձ: Այդ մարդու նման ես էլ էի ուզում, որ դու իմանաս , թե ովքեր են շրջապատում ինձ:

Ինչպես միշտ՝ Զավենը բնականորեն ազատ ու անկաշկանդ էր զգում իրեն Գառնիկ Բաղալյանի ներկայությամբ, այդ պատճառով էլ ծիծաղեց ու հարցրեց

- Գառնիկ Վարդանիչ, չէ՞ որ հիմա վճռողը դուք եք, ինչո՞ւ չեք ազատվում Իգիթյանից ու նրա նմաններից: Ինչո՞ւ չեք մաքրում ձեր շրջապատը:

Նախքան պատասխանելը, քարտուղարը մի սիգարետ հանեց «Ֆիլիպ Մորիսի» դարչնագույն տուփից, վառեց ու խոր ներս քաշեց ծուխը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Է՞, բարեկամս, դա այնքան էլ հեշտ բան չէ, որքան թվում է դրսից: Հարցը Իգիթյանը չէ, չէ, Իգիթյանից ազատվելը ամենահեշտն էր, և ես արդեն ազատվեցի նրանից:

- Ճի՞շտ, Գառնիկ ՎարԴանիչ, ինչպե՞ս…

- Շատ պարզ, ես նրան ասացի, որ կուսակցությունն այսօր նպատակահարմար է գտնում որպես կոփված մարտիկի նրան ուղարկել մեկ այլ դիրք ռազմաճակատի ամենաթեժ կետերից մեկը՝ պետական նոտարիատ: Եվ նա ասաց՝ կա, լսում եմ: Բայց հիմա էլ նստել մտածում եմ, թե նա ինչ պետք է անի նոտարական գրասենյակում: Իհարկե նա այնքան վնաս չի կարող հասցնել այնտեղ, որքան քաղկոմի բաժնում էր հասցնում: Բայց չէ որ կրկին մարդկանց հետ է գործ ունենալու: Իսկ ով նրա հետ գործ ունենա, նախապես դատապարտված է: Ես նրան միայն իմ աչքից եմ հեռացնում: Բայց մի՞թե դա հարցի լուծում է,

- Ինչ կարող եք անել, մի տեղ հո պիտի աշխատի,- ասաց խմբագիրը:

-Ահա հարցը հենց այդ է,- գլուխը թափահարեց քարտուղարը: -- Այ հենց այդ մտածողությամբ էլ տեղից տեղ են փոխադրում մարդկանց, որոնք ոչնչի պետք չեն: Որովհետև հաշվառում կա, աշխատանքային թերթիկ կա, որի մեջ գրված է, որ նա եղել է բանակում, կոմունիստ է, ինչ-որ դպրոց է ավարտել, ինչ-որ պաշտոններ է վարել: Բայց թե ինչպես է վարել, ինչ է արել այդ պաշտոնում, ո՞վ կիմանա: Հետո՞ ինչ որ բթամիտ է: Որտե՞ղ է գրված, որ նա բթամիտ է: Բթամտության համար մինչև հիմա ե՞րբ են հեռացրել աշխատանքից: Տեղափոխում են: Աչքից հեռու: Այդքան բան: Եվ ինչպե՞ս տեսնում ես՝ ես էլ եմ տեղափոխում: Այնինչ պետք է ասեի, որ դու իրավունք չունես մարդկանց ղեկավարելու: Ամենաշատը կարող ես օժանդակ բանվոր աշխատել: Կամ փարոսի պահակ: Բայց ես նրա համար որտեղի՞ց փարոս գտնեմ: Կամ կհամաձայնվի՞ արդյոք: Չէ՞ որ սովոր է միշտ պատասխանատու աշխատանք չ…կատարել:

Զավենը ծիծաղեց և օրորեց գլուխը:

- Իսկական ֆելիետոնի թեմա է:

- Բայց դժվարը Իգիթյանի հարցը չէ, այլ ինչպես դու ասացիր նրա նմանների: Որովհետև նա անտեր մարդ է և ի վերջո դա է պատճառը, որ խոնարհ պատասխանում է կա , լսում եմ: Իսկ ի՞նչ ասեմ մյուս բթամիտների մասին, որոնք տերեր ունեն: Դու գիտես, որ ում պոչը ուզում եմ սեղմել, ձայնը մայրաքաղաքից է գալիս: Ամեն մեկը Կենտկոմում, Մինիստրների խորհրդում կամ Գերագույն խորհրդում մի մարդ ունի, մի ընկեր, մի խնամի, մի եղբայր, մի բարեկամ…

- Գառնիկ Վարդանիչ, ես միայն մի բան գիտեմ, որ եթե դուք ուզենաք, ոչ ոք չի կարող ճնշում գործադրել ձեզ վրա:

- Ճիշտ է,- անմիջապես համաձայնվեց Բադալյանը,- բայց մեկ էլ տեսնում ես մթերքի ֆոնդը կրճատել են: Մեկ էլ տեսնում ես՝ արգելել են կուլտուրական օբյեկտների շինարարությունը: Մեկ էլ տեսնում ես՝ ստուգող հանձնաժողովներ են գալիս իրար ետևից, երբ դու դեռ որևէ բան չես արել, որ ստուգման արժանանա: Ես քեզանից թաքցնելու բան չունեմ: Իմ առաջին նպատակը Սահակ Միրզոյանից ազատվելն էր: Զուլոյանը մի փայլուն ֆելիետոն էր գրել նրա մասին, երբ Միրզոյանը յուղի-պանրի գործարանի դիրեկտորն էր: Թվում էր, թե հարցը լուծված է: Ու մեկ էլ Ղուկաս Լալայանը, հենց ֆելիետոնից հետո, նրան նշանակեց

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

քաղխորհրդի նախագահի տեղակալ: Ես բյուրոյում դեմ քվեարկեցի, ասացի, որ դա խայտառակություն է, որ նրան պետք է վտարել կուսակցությունից: Ղուկաս Լալայանը քվեարկման դրեց իր առաջարկը, և պարզվեց, որ միակ դեմը ես էի: Իսկ բյուրոյի նիստից հետո ինձ ասաց. Գառնիկ Վարդանիչ, այն մարդը, որ ինձ քարտուղար է դարձրել, ուզում է, որ Սահակ Միրզոյանը քաղխորհրդի նախագահ դառնա: Ես ի՞նչ կարող էի անել: Այդ էլ քիչ բան չէր, համոզեցի, թե տեղակալ կնշանակեմ, իսկ հետո կտեսնենք- Արդեն մի տարի է անցել, ում նախագահի թեկնածու ենք առաջարկում, մերժում են: Ասա, ես ի՞նչ անեմ, Գառնիկ Վարդանիչ…

- Սարսափելի է,- համաձայնվեց Զավեն Շարաֆյանը:

- Հենց որ քարտուղար դարձա, հաջորդ օրը կանչեցի Սահակ Միրզոյանին, նպատակ ունեի առաջարկել, որ թոշակի անցնի: Բայց դեռ չէի հասցրել խոսել, երբ նա ասաց. Գառնիկ Վարդանիչ, Մոսկվայում ես մի ընկեր ունեմ, մի քանի օր առաջ ինձ ասաց՝ Սերգեյ, մինչև հիմա տեղակալ ես: Հա, ասացի ես: Սերգեյ, ասաց, անգլիական գորգագործական մի կոմբինատ ենք գնել, Միության մեջ նմանը չկա, ձեր ղեկավարներին ասա, որ եթե քեզ նախագահ դարձնեն, այդ կոմբինատը ուղիղ ձեր քաղաք կուղարկեմ: Հիմա ի՞նչ եք ասում, Գառնիկ Վարդանիչ:

- Իսկ դո՞ւք ինչ պատասխանեցիք, Գառնիկ Վարդանիչ,- սրտնեղած հարցրեց խմբագիրը:

Քաղկոմի քարտուղարը չպատասխանեց նրա հարցին.

- Իսկ դու գիտե՞ս թե ինչ է նշանակում այդ կոմբինատը մեր քաղաքի համար: Մեր բնակչությունը լիուլի կապահովվի աշխատանքով: Կոմբինատի շինարարության ֆոնդից դուրս, հսկայական գումարներ են հատկացնում բանավանի կառուցման համար: Տասնյակ բնակելի շենքեր, ստադիոն, մշակույթի տուն, դպրոցներ ու մանկապարտեզներ, բաղնիք ու ջերմատներ…

- Պայմանով,որ Սահակ Միրզոյանը դառնա նախագահ,- հևաց Զավեն Շարաֆյանը:

- Այո:

- Ես չէի համաձայնվի,- զայրացած պոռթկաց Զավենը:

- Իսկ ես համաձայնվեցի,- ասաց Բադալյանը:

- Դո՞ւք:

- Ես,- ժպտաց քարտուղարը՝ մի նոր սիգարետ վառելով: - Ես: Ես պարտավոր եմ մտածել մեր քաղաքի մասին:

- Եվ դուք, որ ուզում էիք հանել Միրզոյանին քաղխորհրդի նախագահի տեղակալի պաշտոնից, հիմա նրան նախագա՞հ եք դարձնում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Անպայման,- Հիտլերի բեղը հիշեցնող փոքրիկ բեղի տակ ժպտաց քարտուղարը: - Մինչև որ կոմբինատի շինարարության պլանը հաստատվի և միութենական ֆոնդերը հատկացվեն մեզ…

- Իսկ հետո- կհանե՞ք նրան:

-Կասկած չունենաս… Քաղխորհրդի նախագահին հանելու համար բավական է նույնիսկ այն փաստը, որ նա քաղաքացիների ընդունելության ժամերը խախտում է: Կամ որ քաղաքում քիչ են ծառերը:

Զավեն Շարաֆյանը հիշեց Մկրտիչ Զուլոյանի զգուշացումը:

- Միթե դուք կկարողանաք այդպիսի բան անել, ընկեր Բադալյան: - Իհարկե,- քմծիծաղ տվեց քարտուղարը: - Մտքովդ չանցնի, թե սա անազնվություն է: Սա ուղղակի քաղաքականություն է կոչվում: - Բայց ո՞վ է նրա այդ ազդեցիկ ընկերը:

- Նա այնպիսի անուն տվեց, որ ես ակամա ոտքի կանգնեցի:

- Իսկ եթե խաբում է: Ուզում է ձգձգել իր հեռացումը:

- Երեկ ինձ զանգահարեց այդ մեծանուն ղեկավարի օգնականը և տեղեկացրեց, որ գործարանը ուղարկում են մեզ, մեր քաղաքի հասցեով: Տասը բեռնատար գնացք:

Զավեն Շարաֆյանը բարձրացրեց ուսերն ու տարածեց ձեռքերը:

- Ճիշտ քո այդ շարժումներն էլ ես կատարեցի՝ մոսկովյան զանգից հետո,- ծիծաղեց Գառնիկ Բադալյանը:

Նա մի սիգարետ հանեց դարչնագույն տուփից և տուփը սեղանի վրայով հրեց դեպի խմբագիրը:

- Ծխիր,

- Շնորհակալություն, Գառնիկ Վարդանիչ, ես շատ քիչ եմ ծխում և այն էլ միայն «Կազբեկ»:

- Էլ «Ավրորա» չեմ կարողանում ծխել: - Չգիտես ինչու արդարացավ քարտուղարը: - Սա թույլ է և կրկնակի ֆիլտր ունի: Այս սև շերտը տեսնո՞ւմ ես՝ ածուխ է: Անիծյալ կապիտալիստներ, ապրել գիտեն, էլի- Մտածում են իրենց առողջության մասին:

Նա բարձրացավ տեղից ու քայլեց սենյակում՝ ձեռքերը թիկունքին դրած:

- Հիմա անցնենք առաջ: Ես քո աշխատանքից գոհ եմ, Զավեն: Լավ գործեր եք սկսել և ամենակարևորը՝ կոնկրետ գործեր. «Լավագույն բակի» և «Լավագույն պատշգամբի» համար հայտարարված մրցանակաբաշխության գաղափարը հիանալի է: Ես արդեն նկատել եմ, որ արդյունք է տալիս: Ծառապատվում են բակերը, ծաղիկներով ձևավորվում են պատշգամբները: Ապրեք: Ամեն քաղաք իր տեսքը պիտի ունենա: Թող մեր քաղաքն էլ աչքի ընկնի իր ծաղկազարդ պատշգամբներով: Առաջիկա բյուրոներից մեկում քննության կառնենք

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

այդ հարցը և հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին կպարտադրենք միջոցներ առանձնացնել հատկապես «Խաղաղության ծառուղու» կառուցապատման և ձևավորման համար: Ես Խոսրով Նշանյանին հանձնարարել եմ հատակագիծ կազմել: Ոչինչ չենք խնայի: Մեր ժողովուրդն արժանի է, որ իրեն վայել մի ժամանակակից հանգստի վայր, զբոսայգի ունենա: Ինչու մեր բանվորների, մեր աշխատավորների երեխաներն էլ չունենան իրենց մարզահրապարակներն ու խաղահրապարակները, ատրակցիոն խաղերը, համերգային բաց դահլիճը…

Նա խոսում, ավելի ճիշտ երազում էր բարձրաձայն, և նայելով ներշնչված, ոգևորությունից գեղեցկացած նրա դեմքին, Զավեն Շարաֆյանը հուզված մտածում էր, որ ինքը ամեն ինչ կանի Գառնիկ Բադալյանի մտահղացումները իրականացնելու համար: Ամեն ինչ: Կյանքն էլ չի խնայի: Ինչպե՞ս կարելի է չսիրել, չմեծարել, չաստվածացնել մի մարդու, որն անանձնական կյանքով է ապրում ու ցավում, մտահոգվում է ժողովրդի մասին, իր բանվոր ընկերների մասին: Եվ մտածում էր ու երդվում էր անձայն, որ ինքը ամեն ինչ կանի Գառնիկ Բադալյանի հետ միևնույն բարիկադում գտնվելու համար: Թող ով ինչ ուզում է ասի, բայց ինքը սեփական աչքերով հո տեսնում է, թե ով է իր դիմաց: Ղեկավարի իսկական կերպար է այս մարդը:

- - Ես Խոսրով Նշանյանին հուշեցի, որ լավ կլինի եթե նախագծի մեջ մի մեծ անկյուն հատկացնի ժողովրդական արհեստներին: Յուցահանդեսի նման մի բան: Օրինակ՝ բրուտանոց, որտեղ Բրուտյաններից մեկը, երևի հենց պապին խնդրենք, ժողովրդի աչքի առաջ թրծի իր կուժն ու կուլան և տեղում էլ վաճառի: Եվ մի դարբնոց սարքենք, որտեղ մեր վարպետ դարբինները ցուցադրեն իրենց շնորհքը: Եվ փուռ կառուցենք ու թոնիր՝ հաց թխելու արարողությունը ցուցադրելու համար: Ու նաև հյուսնոց, թող հոլ սարքեն ու բաժանեն երեխաներին, փայտե շերեփներ ու գդալներ պատրաստեն և վաճառեն տանտիրուհիներին: Եվ տեղադրեն նաև գորգագործական դազգահներ: Պատկերացնում ո՞ւմ ես, որքան գեղեցիկ կլինի:

- Փառահեղ մտահղացում է,- ոգևորվեց Զավեն Շարաֆյանը: - Նախ երեխաների մեջ սեր կարթնացնի արհեստների նկատմամբ…

- Իհարկե:

- Հետո կարելի է տուրիստական գոտի դարձնել: Մայրուղու վրա մի վառ հայտարարություն փակցնել, թե եկեք, տեսեք մեր ժողովրդական արհեստների ցուցահանդես-վաճառքը:

- Անպայման,- արագ-արագ գլխով արեց քարտուղարը՝ ծոցատետրի մեջ ինչ-որ նշումներ կատարելով:

- Գառնիկ Վարդանիչ,- ասաց լրագրողը,- թո՞ւյլ կտաք մեր այս խոսակցությունը հարցազրույցի ձևով տպագրել թերթում:

- Ոչ,- կտրուկ մերժեց քարտուղարը:

- Ինչո՞ւ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չեմ սիրում, երբ օդային խոստումներ են տալիս: Այ, ձեռքիս կլինի հատակագիծը, գործը կսկսենք- հետո գրեք, որքան սիրտներդ կուզի: Կատակ բան չկարծես, Զավեն, Հսկայական միջոցներ են պետք: Իսկ մենք փող չունենք: Իմ հույսը, տղաս, գորգագործական կոմբինատն է, մենք այդ ամենը կանենք նրա միջոցներով: Եվ զբոսայգին կդառնա նոր բանավանի կենտրոնը: Իսկ դրա համար ոչ միայն Սահակ Միրզոյանին, ես Նշան Իգիթյանին անգամ նախագահ կդարձնեի իր ֆենոմենալ բթամտությամբ հանդերձ:

Զավեն Շարաֆյանը ծիծաղեց:

- Բթամիտ անունն այդպես էլ կպավ խեղճին:

Բայց Գառնիկ Բադալյանը չարձագանքեց: Նա դեռ իր մտքերի հետ էր…

- Շուտով պլենում ենք հրավիրելու, ելույթ պատրաստիր, Զավեն:

- Գառնիկ Վարդանիչ, ես ելույթ ունենալ չեմ սիրում:

- Ես էլ չէի սիրում: Սիրեցի: Պետք է: Հաշվետվության նման մի բան, թե ինչ եք արել անցած վեց ամսում և ինչ մտահղացումներ ունեք: Ծրագիրը: Եվ չխնայես ոչ ոքի: Հատկապես այն հիմնարկների ու ձեռնարկությունների ղեկավարներին, որոնք ուշացնում են թերթի ելույթների պատասխանները կամ խուսագրություններով են զբաղվում: Համարձակ ու անզիջում: Ես քեզ թույլ եմ տալիս: Թերթի ոչ մի ելույթ, ոչ մի հոդված անպատասխան չպետք է մնա:

- Գառնիկ Վարդանիչ, իմ կարծիքով լավ կլինի, եթե խմբագրությունը նոր զբոսայգու շինարարությունը հայտարարի համաքաղաքային և համաժողովրդական կառույց և ամենօրյա հսկողության տակ պահի…

- Համբերիր, տղաս,- տեղից բարձրացավ քարտուղարը, - համբերիր, այդ օրն էլ կգա: Իսկ հիմա մի երկու ժամով էլ տուն գնանք, հը : Կարծես թե լուսանում է:

* * *

Մարդիկ սովորաբար ուրախանում են, երբ առջևում կիրակի է: Ում հաճելի չէ մտածել, որ վեց օր պարտադիր աշխատանքից հետո կիրակի օրը կարող ես անել այն ամենը,ինչ մտքովդ կանցնի: Դուրս գալ զբոսնելու, գնալ բաղնիք, գրադարան մտնել, հյուր գնալ կամ հյուր ընդունել և ի վերջո՝ մի կուշտ քնել, հանգստանալ տանը:

Իսկ Զավեն Շարաֆյանի համար կիրակին պատիժ էր: Որովհետև չգիտեր ինչ անել, ինչով լցնել օրը: Նա այդպես էլ չսովորեց փոքրիկ հրապարակ գնալ, որտեղ սովորաբար հավաքվում էր քաղաքի «ակտիվը» և խումբ-խումբ պտտվում Լենինի արձանի շուրջը: Նրանք հենց այդպես էլ իրենց «ակտիվ» էին անվանում քաղկոմի ու քաղխորհրդի գործկոմի աշխատողները, դատախազն ու միլպետը, դպրոցների դիրեկտորներն ու հիմնարկների պետերը: ԶԱԳՍ-ի վարիչն ու շրջկոմի նախագահը, հրշեջ ջոկատի պետն ու ավտոտրանսպորտի կառավարիչը: Շաբաթ երեկոյան ձայն էին տալիս իրար, թե՝

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Վաղը դուրս գանք, չէ :

- Ո՞ւր:

-Ակտիվի տեղը, ո՞ւր:

Եվ պտտվում էին Լենինի արձանի շուրջը՝ աշխարհի հարցերը լուծելով, դատապարտելով Էյզենհաուերի ռազմատենչ քաղաքականությունը, մերկացնելով Չերչիլին, որպես սառը պատերազմի հրձիգի, Դը Գոլին հայտարարում երկերեսանի, Մաո-Ցզե-Դունին՝ ուխտադրուժ, հետո անցնում տեղական թեմաներին, և տաքացած քննարկում այն հուզիչ հարցը, թե ճիշտ է, որ ասում են, թե վարսավիր Գրիշի կինը կապված է միլիցիայի քրեական հետախուզության պետ Մարկոսի հետ:

Զավեն Շարաֆյանը ընդամենը մեկ անգամ հայտնվեց «ակտիվի» հավաքատեղում և մի քանի րոպեում բամբասանքի այնպիսի լիցք ստացավ, որ Լենինի արձանի շուրջը մի քանի պտույտ տալուց հետո փախավ հրապարակից երդվելով՝ երբեք այլևս ոտք չդնել այնտեղ:

Բայց ի՞նչ աներ,ի՞նչ: Ինչպե՞ս անցկացներ կիրակին: Շաբաթ երեկոյան զանգահարեց Ալվարդին, բայց որովհետև Միքայելը պատասխանեց, անձայն ցած դրեց լսափողը: Ուրեմն դեռ չի գնացել: Եվ Ալվարդն էլ հավանաբար դիտմամբ չի մոտենում հեռախոսին:

Նյարդայնացած սենյակի մի անկյունից մյուսն էր գնում, երբ հեռախոսը զանգահարեց:

- Ընկեր Շարաֆյան, դո՞ւ ես:

Ձայնը ծանոթ էր, բայց Զավենը չկարողացավ կռահել, թե ով է խոսում:

- Ես եմ:

- Բարի երեկո, Պողոս հայրիկն է: Հիշեցի՞ր ինձ:

- Հիշեցի, իհարկե,- ժպտաց Զավենը: - Ինչպե՞ս եք, Պողոս հայրիկ, Պարույրը, երեխաները ինչպե՞ս են:

- Լավ ենք, քե մատաղ,- ասաց Պողոսը: - Էնքան լավ ենք որ խաշ ենք դրել, էս տարվա վերջին խաշը: Ու Պարույրը շատ է խնդրում, որ առավոտը խաշի գաս:

- Իսկ ինչո՞ւ ինքը չզանգահարեց:

- Ամաչում է,- ասաց Պողոսը:

Մի քանի անգամ նրան հրավիրել էին այդ տուն, բայց Զավենը հրաժարվել էր: Պատճառաբանել էր, թե զբաղված է, հիվանդ է, հոգնած է, ժամանակ չունի: Այնինչ իրականում գաղտնիքն այն էր, որ եթե գնար՝ իր կարծիքով դուրս էր գալիս, որ հյուրասիրում են արած լավության փոխարեն: Առևտուր էր ստացվում մի տեսակ: Բայց հիմա ահագին ժամանակ էր անցել և դիմացն էլ սարսափելի կիրակին էր: Ու Զավեն Շարաֆյանը չդիմացավ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Սիրով կգամ,- ասաց նա: - Վաղուց խաշ չեմ կերել: Իսկ որտե՞ղ ենք հավաքվում:

- Նոր տանը: Տեղը հո չե՞ս մոռացել:

- Չեմ մոռացել,- ծիծաղեց Զավենը:

Նա փակ աչքերով էլ կգտներ այդ տունը, որովհետև առաջին անգամ այն գտել էր անցյալ տարվա աշնանը, մութ մառախլապատ մի օր, երբ տան պատերը նոր էին շարում: Բարակ, փոշիանման անձրև էր մաղում, և Զավենը նույնիսկ զարմացավ, որ մարդիկ այդ թոնի տակ շարունակում են աշխատել շինարարության վրա:

- Ձեզանից ո՞վ է Պարույր Պետրոսյանը,- բարևելով տեղեկացավ նա:

- Ի՞նչ կա,- հարցրեց բանվորներից մեկը,որ անձրևից պաշտպանվելու համար, գլխին պարկ էր գցել:

-Ես խմբագրությունից եմ,- ներկայացավ Զավենը: -Մի քանի հարց եմ ուզում տալ:

- Ես էլ կարծեցի մեզ օգնելու ես եկել,- բացահայտ ծաղրեց նույն բանվորը: - Բայց որ ցիլինդր ես դրել… քեզանից գործ անող դուրս չի գա:

-Վերջ տուր, Միսակ,- լսվեց պատի ետևից: - Սպասիր տեսնենք ինչ է պատահել:

Մոտենալու ընթացքում հանելով հսկայական ցեխոտ թաթմանները, Զավենի առջև կանգնեց միջահասակ, ջլապինդ մի տղա:

- Լսում եմ ձեզ,- ասաց, ցնցելով գլուխը ու մազերի վրայից թափ տալով ջրափոշին:

- Ես Պարույր Պետրոսյանն եմ:

Խմբագրությունը նամակ էր ստացել նույն այդ Պարույր Պետրոսյանի մասին: Նամակն անստորագիր էր: Անանուն հեղինակը տեղյակ էր պահում «Լուսաբացի» խմբագրությանը, որ քիմիական կոմբինատի տեխնոլոգ Պարույր Պետրոսյանը տուն է կառուցում Թումանյան փողոցի ծայրին՝ օգտագործելով գողացված շինանյութեր: «Նրան բռնելը դժվար չէ,- գրված էր նամակում,- բավական է պահանջել շենքի համար օգտագործվող ցեմենտի, ավազի, քարի ու փայտի անդորրագրերը: Նա ոչ մի փաստաթուղթ չունի: Մի՞թե անարդար բան չէ, որ այսօր, երբ նույն քիմկոմբինատի տասնյակ բանվորներ բնակարանի հերթի են կանգնած և հույսով լի աչքերը հառել են նոր կառուցվող շենքին, Պարույր Պետրոսյան կոչվածը դանակ է խրում իր ընկերների թիկունքը, հափշտակելով նրանց տան համար նախատեսված պետական շինանյութը, որպեսզի իր սեփական տունը կառուցի: Երբ դրա կարիքը չի զգում, որովհետև ապրում է հոր սեփական շենքում և նույնիսկ երեխա չունի: Խնդրում ենք մերկացնել նրան և հասարակության դատին հանձնել»:

-Խմբագրությունը մի նամակ է ստացել, որ ստուգման կարիք ունի, - ասաց Զավենը: - Ինձ հանձնարարել են ճշտել, թե ինչ շինանյութերով եք կառուցում ձեր տունը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չե՞ք տեսնում, ինչ է,- կրկին հայտնվեց գլխին պարկ հագցրած մարդը, -կիր ու ավազով, խիճ ու քարով- Քո տունն ինչով է սարքված, աղա…

-Միսակ,- նորից սաստեց Պարույրը: - Խոսում ենք, էլի, մի խանգարի:

- Շինանյութի փաստաթղթեր ունե՞ք:

- Չունեմ, - ասաց Պարույր Պետրոսյանը:

- Ոչ մի թո՞ւղթ:

- Ոչ մի թուղթ,

Միսակ անունով մարդը չէր հանգստանում:

- Իսկ էն ժայռին հարցրե՞լ ես, փաստաթուղթ ունի՞: Կամ գետի ավազը փաստաթուղթ ունի՞, որ ինքը ավազ է:

Լրագրողը բարկացավ:

- Ընկեր,- ասաց նա,- ես ձեզ հետ չեմ խոսում.. Ձեզ չեմ դիմում…

- Բա եթե ընկեր եմ ինչու չես խոսում ինձ հետ, - քմծիծաղ տվեց Միսակը: - Ախր դու ինձ հետ պիտի խոսես, որովհետև ես համ էլ Պարույրի ընկերն եմ: Գիշերային հերթափոխում ենք աշխատում: Գիշերն աշխատած կա՞ս: Ուրիշ մտքով չեմ ասում" Ըհը, գիշերն աշխատում ենք, իսկ առավոտները գալիս, որ օգնենք մեր ընկերոջը տուն սարքի: Տուն է սարքում, աղա ջան, հո տուն չի քանդում: Ի՞նչ եք ուզում էս մարդուց:

- Աղա՞ - Ի՞նչ աղա…- ափից ելավ, գրեթե գոռաց Ջավենը: - Դա՞ ինչ խուլիգանություն է:

Միսակը ծիծաղեց…

- Դե եթե տուն չես սարքում ու ցիլինդրդ դրած ուրիշների սարքածը ստուգող ես, ուրեմն աղա ես, էլի: Աղան հո պոզով-պոչով չի լինում, աղա ջան…

Ջավենը զգում էր, որ այլևս չի կարողանում զսպել զայրույթը, բայց չգիտեր ինչ անել: Կարծես քիչ էր այդ Միսակը. շենքի ներսից էլ մի գազազած ծերունի դուրս պրծավ ու գրեթե հարձակվեց նրա վրա:

- Ի՞նչ եք ուզում,- ասաց նա շնչահեղձ լինելով, բռունցք արած ձեռքը առաջ պարզած: - Արա, դուք հայ չե՞ք, արա, ինչի՞ չեք թողնում գործ անենք: Արա, ամեն օր ստուգել կլինի՞: Քարն ու ավազը հո գրպաններս չենք լցնելու փախչենք: Արա, դուք մարդ չե՞ք: Ձեզ մեր չի՞ բերել:

Պարույրի վիճակն էլ վիճակ չէր: Նա էլ չգիտեր ինչ անի՝ մեկ Միսակին էր սաստում, մեկ աղաչանքով բռնում ծերունու ձեռքը, խոսում կակազելով:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Գալուստ քեռի, այս մարդը ԲԽՍՍ-ից չի, խմբագրությունից է: Միսակ, հերիք է, ինչո՞ւ եք ինձ հիմար դրության մեջ դնում: Վերջ տվեք, թողեք խոսենք:

- Տո ինչ խոսես, է՞, դրանք մա՞րդ են, որ մարդու հասկանան: Արա, բա բանվորին կստուգե՞ն: Բոլոր գող ու ավազակներին բռնել եք, մենակ բանվորնե՞րն են մնացել: Տո կամ էլ ինչն ես ստուգում, արա: - Ինքն իր խոսքերից ավելի էր զայրանում ծերունին: - Թե ավազը որտեղի՞ց է: Գետի ափից է: Ինչքա՞ն ավազ ես ուզում, ասա բերենք. էնքան բերենք,որ բոլոր ստուգողներին թաղենք մեջը: Քարն էլ անտառից ենք կտրել բերել: Արա, բա Հայաստանում էլ քա՞ր կստուգեն՝ քարից բացի ի՞նչ կա: Հրեդ, ձեր սրտերն էլ են քար դարձել:

- Իսկ ցեմենտը, իսկ արմատուրան-- պարզ ըմբռնելով, որ հիմար դրության մեջ է ընկել, բայց ելք չգտնելով, իրեն կորցրած բղավեց լրագրողը: - Դրանք է՞լ եք ձորից ու անտառից բերել:

- Հա,- միաժամանակ հևացին Միսակն ու ծերունի Գալուստը:

- Լավ,- ասաց Զավեն Շարաֆյանը,- ես այստեղ անելիք չունեմ:

- Վաղուց պիտի գլխի ընկնեիր,աղա ջան,- փոթկաց Միսակը:

Պարույր Պետրոսյանը կրկին իր ընկերներին դարձավ, ինչ-որ խոսքեր ասաց շշուկով և շփոթված քայլեց լրագրողի ետևից, որը հեռանում էր զայրացած, արագ-արագ:

- Ընկեր- թղթակից,- ձայն տվեց նա:

Լրագրողը կանգ առավ:

- Ես չիմացա ձեր ազգանունը:

- Ձեր ընկերները թույլ տվեցի՞ն, որ ես ներկայանամ,- ատամների արանքից նետեց Զավենը-- Իմ ազգանունը Շարաֆյան է, Զավեն Շարաֆյան:

- Ընկեր Շարաֆյան,- նրան մոտեցավ Պարույրը: -Գիտեմ, որ չեք ների, բայց հաշվի առեք, խնդրում եմ, որ բանվոր մարդիկ են և իրենց կարծիքով պաշտպանում են ինձ:

- Հետո՞ ինչ, եթե բանվոր են, ուրեմն իրավունք ունե՞ն խուլիգանություն անելու, վիրավորելու ինձ: Ես էլ իմ աշխատանքն եմ կատարում:

- Նրանք խուլիգաններ չեն,- հանկարծ պոռթկաց Պարույրը, և նրա աչքերը սպառնալից փայլատակեցին: - Նրանք բարի ու ազնիվ մարդիկ են: Հենց հիմա եթե որևէ մեկը անարդար հարձակվի ձեզ վրա, կհամոզվեիք անմիջապես: Ուղղակի որ տեսնում են իմ վիճակը, այլևս չեն կարողանում զսպել իրենց:

- Իսկ ի՞նչ վիճակ է: Գողացված շինանյութերով տուն եք սարքում, էլի:

-Թողնո՞ւմ են, որ սարքենք: Ավելի շատ՝ հարցերի ենք պատասխանում:

-Ուրեմն ստուգողներ էլի՞ են եկել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ամեն օր,- ասաց Պարույր Պետրոսյանը: - Ամեն օր: Գերագույն խորհրդից, Մինիստրների խորհրդից, դատախազությունից, միլիցիայից, քաղխորհրդից, քաղկոմից: Մեկը նամակ է գրել և ուղարկել ամեն տեղ: Հիմա հերթով գալիս են:

- Պիտի գան, բա ի՞նչ պետք է անեն,- չէր հանգստանում լրագրողը: - Հո չի՞ կարելի անպատիժ թողնել պետական ունեցվածքի հափշտակությունը:

Պարույր Պետրոսյանը ուզեց ինչ-որ բան ասել, բայց փոխեց մտադրությունը և շրջվեց, որ հեռանա: Զավեն Շարաֆյանը նայեց նրա թաց թիկունքին և զարմացած նկատեց, որ սիրտը ճմլվում է: Չգիտես ինչու հորը հիշեց: Երբ հայրը տուն էր գալիս աշխատանքից, նրա թիկունքն էլ էր քրտինքից թաց լինում:

- Ընկեր Պետրոսյան- ձայն տվեց նա: - Կրկնում եմ, եթե որևէ փաստաթուղթ ունեք, բերեք խմբագրություն:

- Ասացի, որ չունեմ, - շրջվեց Պարույրը, հետո հարցրեց միանգամից: - Ուրեմն գրելո՞ւ եք:

- Իհարկե,- ասաց Զավենը:

- Առանց ինձ հետ խոսելո՞ւ:

Լրագրողը թոթվեց ուսերը,

-Եթե փաստաթուղթ չունեք,ուրեմն ինչ-որ գրել են, ճիշտ է: Էլ ի՞նչ խոսենք:

- Է՞հ,- ձեռքը թափ տվեց Պարույր Պետրոսյանը:

Զավեն Շարաֆյանը համոզված էր, որ Պարույրը խմբագրություն կգա: Եվ ուզում էր, որ գա: Որովհետև թեև այնտեղ, շինարարության վայրում զայրացած հայտարարեց, թե գրելու է, բայց երբ կրքերը հանդարտվեցին, մտածեց, որ իրավունք չունի շտապելու: Ճիշտ է, անզուսպ, սանձարձակ մարդ էր այդ Գալուստ քեռի կոչվածը, բայց մի հարցում իրավացի էր, շինանյութը հո չէին թաքցնելու: Փաստը աչքի առաջ էր: Շինանյութը կար, փաստաթղթերը չկային: Ուրեմն չէր խանգարի ավելի մանրակրկիտ ստուգել շինարարության հետ կապված բոլոր հարցերը, լինել Պարույրի հայրական տանը, տեսնել ինչպիսին են պայմանները, գնալ քիմկոմբինատ, խոսել մարդկանց հետ: Երբ ֆելիետոն ես գրում, ասում էր համալսարանի նրա դասախոսը, ինչքան փաստ ֆելիետոնի մեջ ունես, երկու այդքան էլ գրպանումդ պետք է ունենաս: Ճիշտ էր ասում:

Նա պատրաստվում էր դուրս գալ խմբագրությունից, երբ դուռը կամացուկ բացվեց և ինչ-որ մեկը մատով բախեց արդեն կիսաբաց դռանը:

- Կարելի՞ է:

- Ներս եկեք,- կրկին աթոռին իջավ լրագրողը:

Ներս մտավ տարեց, ինչպես ասում են՝ կլորիկ-թմբլիկ մի մարդ, բարի, աշխույժ աչքերով և դեռատի մի կին, որ լայն շրջազգեստի մեջ ապարդյուն ջանում էր թաքցնել իր մայրությունը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

-Ես Պողոս հայրիկն եմ, - ժպտաց մարդը,- սա էլ իմ հարսն է, Եսթերը:

Զավենը առաջարկեց նստել ու պրոֆեսիոնալ համբերատարությամբ նախապատրաստվեց լսել նրանց:

- Ես Գյուղտեխնիկումի խոհարարն եմ,- ասաց մարդը,- մեր սովորողներից սկսած բոլորն ինձ Պողոս հայրիկ են ասում: Դու էլ ինձ Պողոս հայրիկ ասա:

- Լսում եմ, Պողոս հայրիկ,- քաջալերեց նրան Զավենը:

- Դու մտադիր ես մի նյութ գրել,- ասաց մարդը: - Եթե գրես, ինձ էլ ես սպանելու, տանը երկու փոքրիկ երեխա ունենք, նրանց էլ ես սպանելու, հարսիս էլ ես սպանելու և սպանելու ես նաև այն երեխային, որը դեռ լույս աշխարհ չի եկել:

- Ի՞նչ նյութ,- զարմացավ ու ակամա ժպտաց Զավեն Շարաֆյանը: - Ես ձեռքիս տակ այդքան սարսափելի նյութ չունեմ:

- Ես Պարույր Պետրոսյանի հայրն եմ,- միանգամից տխրած ասաց մարդը:

Զավենը ձեռքին բռնած մատիտը նետեց սեղանին:

- Բայց ես ի՞նչ կարող եմ անել,- ասաց նա,- եթե տուն է կառուցվում, տանտերը պետք է անհրաժեշտ փաստաթղթեր ունենա: Իսկ ձեր որդին ոչ մի թուղթ չունի:

- Որտեղի՞ց ունենա,- հարցրեց մարդը: - Դու ինձ ցույց տուր, թե որ խանութում են շինանյութ վաճառում, գնամ առնեմ ու թուղթը բերեմ տամ քեզ:

Զավենը այդ մասին չէր մտածել ու անակնկալի եկավ:

- Իսկ, ինչ է, այստեղ շինանյութի խանութ չկա՞:

- Չէ, տղա ջան,- ասաց Պողոս հայրիկը: - Չկա, քեզ մատաղ:

- Բա մարդիկ ո՞նց են տներ կառուցում:

- Հենց այսպես, ճարում են դեսից-դենից: Դե քարի, ավազի հարցը հեշտ է՝ անտառում լիքը տուֆ ժայռեր կան, մարդիկ կտրում տեղափոխում են: Ավազն էլ ձորից են բերում: Թափված է, իսկ մնացածը առնում են սրանից-նրանից:

- Բայց սրանից-նրանից այդ առածը գողացված ապրանքներ են, հայրիկ:

- Բա ինչ են, քեզ մատաղ,- անմիջապես համաձայնվեց Պողոսը: - Բա հո ցեմենտն ու երկաթ-մերկաթը իրենց տանը չեն սարքում:

- Դե տեսնո՞ւմ եք: Դրա համար էլ օրենքն արգելում է: Դրա համար էլ մարդիկ գրում-բողոքում են: Եվ մենք էլ պարտավոր ենք արձագանքել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ինչ անե՞լ, քե մատաղ…

- Արձագանքել, պատասխանել…

Պողոս հայրիկի աչքերը հանկարծ արցունքով լցվեցին:

- Իսկ ո՞վ պետք է պատասխան տա, թե ում մեղքով հիվանդացավ, թոքախտ դարձավ իմ Պարույրի մայրը, որ քսան տարի քիմկոմբինատի թունավոր ցեխում էր աշխատում ու հիմա ապրելու մի անկյուն չունի: Վախենում է վարակել երեխաներին ու լաց է լինում գիշեր ու ցերեկ:

Պողոս հայրիկը հազաց ու փղձկաց միաժամանակ, ձեռքի կոշտացած ափով սրբելով արցունքը:

- Պետք չի, հայրիկ ջան, պետք չի,- ափի մեջ սեղմած թաշկինակը սկեսրայրի ձեռքը դրեց հարսը:

- Ինչպե՞ս թե անկյուն չունի: Չէ՞ որ դուք սեփական տուն ունեք,- տարակուսած հարցրեց լրագրողը:

- Ճիշտ չեն ասում,- միջամտեց հարսը, երևի որպեսզի Պողոս հայրիկը չպատասխանի: - Մենք իրար հետ տեխնիկումի հանրակացարանի մի սենյակում ենք ապրում:

- Մի սենյակի մե՞ջ: Վեց- յոթ հոգո՞վ,- էլ ավելի զարմացավ Զավենը~ ակամա Եսթեր հարսին նայելով ու ամաչելով դրանից:

- Այո: Մեկ սենյակ է:

- Եվ ուրիշ տուն չունե՞ք:

- Ոչ,- ասաց Եսթերը,- եթե մայրիկը չհիվանդանար ու երեխաների հարցը չլիներ, ես իսկի չէի էլ ուզի, որ մենք առանձին ապրենք:

- Ի՞նչ երեխաներ,- հարցրեց Զավենը: - Մեզ գրել են, որ դուք երեխաներ չունեք:

- Հո գրելով չի,- ժպտաց Եսթերը: - Մենք մի տղա ու մի աղջիկ ունենք:

- Ճիշտն ասա,- գլուխը բարձրացրեց Պողոս հայրիկը:

Մանկամարդ կնոջ այտերը շառագունեցին:

-Իսկ, ինչ է, նրանք իմ երեխաները չեն,- հարցրեց նա կամացուկ, ասես միայն սկեսրայրին՝ խռոված ու սրտդողած:

- Քոնն են, աղջիկ ջան, իմ էլ թոռներն են, բայց դու ճիշտն ասա: Ընկեր Զավենը եթե հետաքրքրվում է էս հարցով, ամբողջ ճշմարտությունը պիտի իմանա, ցավդ տանեմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ Զավեն Շարաֆյանը լսեց մի պատմություն, որը տակնուվրա արեց նրա հոգին: Նա էլի էր նման դեպքերի մասին լսել, բայց դրանք կատարվել էին ուրիշների հետ, ուրիշ ընտանիքներում, ուրիշ աշխարհում: Նա դրանց մասին միայն լսել էր: Իսկ ահա նրա դիմաց նստած է բոլորովին ջահել մի կին,ու հենց այդ կնոջ հետ է կատարվել այդ պատմությունը: Պարույրի հետ ամուսնանալուց հետո նրանք երեք տարի երեխա չեն ունեցել: Դիմել են քաղաքի բժշկին, նույնիսկ Երևան են հասել, բայց բոլոր բժիշկները միահամուռ այն կարծիքն են հայտնել, որ Եսթերը երեխա ունենալ չի կարող: Թշվառ կինը նույնիսկ ինքնասպանության փորձ է կատարել, իսկ հետո պնդել է, որ Պարույրը բաժանվի, ուրիշի հետ ամուսնանա: Ինչո՞ւ պետք է իր պատճառով անզավակ մնա: Իսկ Պարույրը հոր և մոր օրհնությամբ, փոխարենն առաջարկել է երեխա վերցնել մանկատնից: Ի՞նչ տարբերություն, ասել է, կպահենք, կդառնա մեր զավակը: Եվ հենց այդպես էլ Պետրոսյանների ընտանիքում հայտնվել է Աշոտիկը: Իսկ երկու տարի անց Պարույրը ասել է. ինչ է, Աշոտիկը մենա՞կ պիտի մնա ու գնացել մի աղջիկ էլ է բերել մանկատնից և նրան էլ մոր անունով Վարդանուշ կոչել: Եվ հենց դրանից հետո է կատարվել հրաշքը, որ բժիշկներից հիասթափված Եսթերը աստծուն էր վերագրում:

- Մեռնեմ իր զորությանը,- ասաց նա անսպասելիորեն,կարծես թե ջահել կնոջը չսազող ջերմեռանդությամբ խաչակնքելով: - Տեսավ, որ շատ եմ երեխա սիրում, մեկն էլ տվեց իր կողմից,

-Անունը հո Աստվածատուր չե՞ք դնելու,- կատակեց լրագրողը:

- Պողոս հայրիկը ինչ կասի, այն էլ կդնենք:

- Աստվածատուր չէ, բայց եթե տղա լինի, Աստատուր կդնենք: Նույն միտքն է, - ժպտաց ծեր խոհարարը:

Զավեն Շարաֆյանը զգաց, որ հոգում ամեն ինչ խառնվել է: Սկզբում որքան պարզ էր թվում, փաստաթղթեր չկան, վերջ: Հանգիստ խղճով կարելի է գրել ֆելիետոնը՝ զանազան ծիծաղելի մտքեր ու խոսքեր գտնել, դնել ծիծաղաշարժ ձևի մեջ, իսկ հետո լրջանալ միանգամից ու թունոտ սարկազմով հարցնել, ինչպես նամակագիրը՝ ով քեզ թույլ տվել, Պարույր Պետրոսյան, դանակ խրել քո բանվոր ընկերների թիկունքը, հափշտակելով նրանց տան համար նախատեսված պետական շինանյութը: Եվ այդքանից հետո ինչպե՞ս ես կարողանում հանգիստ քնել, Պարույր Պետրոսյան:

Չէ, այդպես չի կարելի, չէ, ամոթ է: Եթե գրվի անգամ, հարցը պետք է բոլորովին այլ կերպ դրվի, քաղխորհրդի գործկոմի ընկերներ, ինչո՞ւ չեք կազմակերպում շինանյութի վաճառքի գործը: Ինչո՞ւ եք մարդկանց հանցագործության մղում: Ահա թե ինչ հարց պետք է տալ:

Լավ, իսկ կոնկրե՞տ փաստը: Չէ՞ որ ակնբախ է,որ Պարույր Պետրոսյանը կամ ինքն է գողացել, կամ էլ գողացված շինանյութ է գնել: Ըստ որում նա չի էլ առարկում և չի առարկում նաև նրա հայրը:

Ուրեմն՝ գրե՞լ: Իսկ ի՞նչ կկատարվի հետո: Դա հո լավ գիտի Զավեն Շարաֆյանը: Տան կառուցումը կանգ կառնի: Անկասկած: Բայց դա դեռ ամենամեծ աղետը չէ: Ամենամեծ աղետն այն է, որ միլիցիայի քաղաքային բաժինը ֆելիետոնը հիմք ընդունելով, քրեական գործ կհարուցի քիմկոմբինատի տեխնոլոգ Պարույր Պետրոսյանի նկատմամբ՝ նրան մեղադրելով

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

պետական ունեցվածքի հափշտակության կամ լավագույն դեպքում գողոնի գնման մեջ: Եվ տեխնոլոգ Պարույր Պետրոսյանը կկանգնի դատարանի առաջ: Դա է պահանջում օրենքը:

Տունը կիսատ կմնա ու կփլվի, կավերվի անտերությունից, մի անգամ ևս կորբանան Աշոտիկն ու Վարդուշը, ով գիտի քանի տարի հորը չի տեսնի նորածին Ասատուրը, ընտանիքի ամբողջ հոգսը կծանրանա Պողոս հայրիկի ծերունական հոգնած ուսերին և նրա հիվանդ ու պառավ կնոջ աչքից չի ցամաքի արցունքը, որ մի անկյուն չունեցան՝ մանրիկ երեխաներին անտեր հիվանդությունից հեռու պահելու համար:

Դե եկ ու վճիռ կայացրու, Զավեն Շարաֆյան:

Բայց նա գիտեր, որ արդեն վճռել է: Եվ երբ Պողոս հայրիկը խեղճ-խեղճ նայելով լրագրողին ասաց.

- Էս է մեր վիճակը, քեզ մատաղ: Եթե էսքանից հետո քո ձեռքը կգնա, կբարձրանա մեզ վրա, աստված քեզ հետ…

Զավեն Շարաֆյանը այնժամ պատասխանեց անմիջապես, չուզենալով այլևս մտածել.

- Իմ ձեռքը ձեր ընտանիքի վրա չի բարձրանա, Պողոս հայրիկ: - Եվ խիղճը վերջնականապես հանգստացնելու համար ավելացրեց: - Եթե այն ամենը, ինչ այստեղ ասացիք, ճիշտ է:

Հավատա, ցավդ տանեմ,- պատանու աշխուժությամբ տեղից վեր թռավ երջանկացած ծերունին: - Հավատա, քեզ մատաղ:

Իսկ Եսթերը խոնարհեց գլուխն ու ասաց.

-Երկար կյանք ունենաք, մեծ եղբայր: Աստված էլ ձեզ կհասնի:

Նրանց հեռանալուց հետո Զավենն այնուամենայնիվ մտքերի մեջ ընկավ: Իսկ ինչպե՞ս կգնահատի իր արարքը խմբագիրը; Ի վերջո նա է պատասխանատու ամեն ինչի համար: Բայց ինքն ինչպե՞ս բացատրի, ինչպե՞ս համոզի նրան: Գրելուց հրաժարվել միշտ էլ կարող է, իսկ եթե Մկրտիչ Զուլոյանը գործը մեկ ուրիշի՞ն հանձնարարի: Նա այնպես էր ուզում վայրկյան առաջ հոգուց թոթափել այդ բեռը, որ երեխայի նման ուրախացավ, երբ տեսավ, որ խմբագրի դուռը բաց է:

Ի պատիվ իրեն, Մկրտիչ Զուլոյանը չթողեց էլ, որ նա բացատրություն տա:

-Ես քեզ հավատում եմ, տղաս,- ասաց նա իր խռպոտ ձայնով, որն այդ վայրկյանին Զավենին աշխարհի ամենահաճելի երաժշտությունը թվաց: - Արա այնպես, ինչպես սիրտդ է թելադրում: Դու դրա իրավունքը ունես: Ավելորդ չեմ համարում ասել նաև, որ անձամբ ճանաչում եմ Պողոս հայրիկին: Ազնվագույն մարդ է:

Պողոս հայրիկը…

Ահա թե ով էր զանգահարում Զավենին շաբաթ օրվա երեկոյան, որպեսզի կիրակի առավոտ խաշի հրավիրի: Այն էլ որտեղ՝ Պարույրի նորակառույց տանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Պողոս հայրիկը, ինչպես միշտ, քաղաքավարի մերժումի էր սպասում և այնպես ուրախացավ՝ լսելով խմբագրի պատասխանը, որ շփոթվեց ու որոշեց մի անգամ էլ կրկնել.

- Նոր տանը, հա: Ասում եմ՝ տեղը հո չե՞ս մոռացել:

* * *

Ամառը անսպասելիորեն ծանր շրջան դարձավ խմբագրության համար: Որքան էլ տարօրինակ թվա, հիմնական պատճառը մանուկներն էին: Դեռ գարնանամուտին Զավեն Շարաֆյանը մի քանի նամակ էր կազմակերպել և տպագրել թերթում, որոնց հեղինակները պահանջում էին Երևանի օրինակով իրենց քաղաքում ևս բակային ճամբարներ բացել: Դպրոցական ամառային արձակուրդներին երեխաները չգիտեին ինչով զբաղվել, ինչ անել, ուր գնալ և աննպատակ թափառում էին քաղաքում: Չգիտես ով, ինչ տրամաբանությամբ որոշել էր, որ եթե քաղաքում այգիներ կան և շրջապատում էլ կանաչ տարածություններ ու անտառներ, ապա միտք չունի տեղի երեխաների համար պիոներական ճամբարներ բացել: Իհարկե ղեկավարները հաջողացնում էին իրենց երեխաներին որևէ կերպ ուղարկել Ղրիմ կամ Ծաղկաձոր, բայց հազարավոր մանուկներ դատապարտված էին ձանձրույթի: Թերթը մեծ աղմուկ բարձրացրեց այդ առթիվ և հասավ նրան, որ ամենահարուստ կազմակերպությունը՝ քիմիական կոմբինատը, իր աշխատողների երեխաների համար մի ամբողջ վրանաքաղաք ստեղծեց Արևոտ լեռան անտառապատ լանջին: Բայց դա ևս հարցի լուծում չէր: Հարկավոր էր ճամբարներ բացել հենց քաղաքում, մեծ շենքերի բակերում, և ընդհանրապես այնտեղ, որտեղ հնարավոր է: Կազմակերպել մանուկների հանգիստը, նրանց սովորեցնել ճամբարային կարգ ու կանոնի, հազար ու մի տեսակ ինքնագործ խմբակներ բացել ճամբարներին կից, հատկապես երգ ու պարի, ասմունքի, թատերական: Թող երեկոյան ժամերին, պայծառ վառվող խարույկի շուրջը հավաքված, երգեն, պարեն, արտասանեն երեխաները: Թե իրենք ուրախանան, թե ուրախացնեն աշխատանքից վերադարձած իրենց ծնողներին:

Թերթի նախաձեռնությունը մեծ արձագանք գտավ, ալեկոծեց ամբողջ քաղաքը, ՀԼԿԵՄ քաղկոմը, դպրոցները, թաղային կոմիտեները գործի անցան և դեռ ամառ չեկած, իրար ետևից այստեղ ու այնտեղ հայտնվեցին կարմիր դրոշակիկներով շրջափակված փոքրիկ հրապարակներ, որոնց դռնակների աջ ու ձախ կողմերում կանգնում էին գունավոր թղթերից գլխարկ դրած, պիոներական վզկապ կապած երեխաները և հանդիսավորությամբ պատիվ բռնելով հրապարակ թողնում հանդիսատեսներին: Հնչում էր ուրախ նվագը, թառ ու քամանչա, դհոլ ու պարկապզուկ, ակորդեոն ու կլարնետ, որտեղ ինչ գտնվում էր, վառվում էր խարույկը, մասնակիցները

Ձիլ ձայնով երգում ու արտասանում էին և հանպատրաստից բեմադրում փոքրիկ, ուրախ պատմություններ: Ոգևորվել էին նաև մեծերը: Տեսնելով, որ լսող կա, հրապարակ էին ելնում պատերազմին մասնակցած մարդիկ ու պատմում իրենց ընկերների սխրանքների մասին: Արտադրության առաջավորները երեխաներին գործարան էին հրավիրում՝ բացատրելով, թե ինչ են արտադրում այնտեղ և ինչ օգուտ է տալիս իրենց արտադրանքը ժողովրդական տնտեսությանը: Մի խոսքով քաղաքն ապրում էր նոր կյանքով:

Դժվար էր խմբագրության աշխատողների վիճակը: Գրեթե ամեն օր ճամբարներից խմբագրություն էին գալիս կարմիր վզկապավոր երեխաներ և անվարժ շարժումներով

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

պատվի բռնելով, խմբագրին մեկնում փոքրիկ հրավիրատոմսեր, որոնց վրա մեկ ու մեջ գունավոր տառերով գրված էր լինում, որ այս կամ այն ճամբարի խորհուրդը «Լուսաբացի» խմբագրին հրավիրում է մասնակցելու հանդիսավոր տողանի:

Դե իհարկե, հնարավոր չէր միաժամանակ մի քանի տեղ լինել, դրա համար էլ Զավեն Շարաֆյանը հրավիրատոմսերը բաժանում էր աշխատողներին և պարտադրում, որ անպայման մասնակցեն և ինչ-որ ձևով տողանը արտացոլեն թերթում: Երեխաներ են, էլի, թող ոգևորվեն և ավելի լավ աշխատեն: Բայց պարզվեց, որ երեխաների ոգևորությունը չափ ու սահման չունի: Ուզում էին ամեն օր տողան կազմակերպել: Եվ ամեն օր խմբագրի դռանը շարվում էին պիոներական վզկապներով երեխաներ ու մեկնում իրենց զույնզգույն հրավիրատոմսերը: Բանն այնտեղ հասավ, որ մի օր Գառնիկ Բադալյանը զանգահարեց, թե՝ այ տղա, ձեր թերթը «Պիոներ կանչ» եք դարձրել,

Բայց միևնույն է, ոգևորված երեխաներին մերժել չէր կարելի, և Զավեն Շարաֆյանը նորանոր հրավիրատոմսեր էր հրամցնում իր աշխատողներին՝ հարուցելով նրանց դժգոհությունը: Նույնիսկ միշտ համբերատար, ութ աղջիկ պահող Ջիվան Ենգոյանը չդիմացավ և մի օր գյումրեցու առոգանությամբ բողոքեց. «Հըբը կըսեն, թե շունը սատկացնողի՞ն քաշ տալ կուտան»: Բայց նա անարդարացի էր, որովհետև օր չկար, որ խմբագիրն ինքը անձամբ չմասնակցեր որևէ հանդիսավոր արարողության:

Այնպես որ խմբագրության աշխատողները թեթևացած շունչ քաշեցին, երբ վերջապես անցավ ամառը: Զավենը այնքան հոգնած էր, որ վճռեց արձակուրդ վերցնել: Բայց ինչպես ասում են ուրբաթն ավելի շուտ եկավ: Պարզվեց, որ սեպտեմբերի սկզբին խմբագիրների հանրապետական սեմինար է անցկացվելու Երևանում: Այնպես որ Զավեն Շարաֆյանը հանգիստ խղճով Միհրան Գալստյանին հանձնեց խմբագրության կլոր կնիքը և մեկնեց Երևան:

Երբ ավտոբուսն անցավ Քանաքեռն ու իջավ Արարատյան դաշտավայր, երբ աշնանային լուսավոր մշուշի մեջ, բոլորովին մոտիկ հրաշքի նման հայտնվեց Երևանը՝ իր գունավոր շենքերով ու բարձրաբերձ բարդիներով, Զավեն Շարաֆյանի սիրտը ուռավ կարծես ու քաղցր հուզումով լցվեց, ինչպես լինում էր ամեն անգամ, երբ տուն էր վերադառնում:

Հարազատ քաղաք:

Այն ե՞րբ էր, որ առանց ծուլանալու ոտքով կտրում էին ամբողջ քաղաքը և գնդիկավոր առանցքակալներով ինքնաշեն ինքնագնացները քարշ տալով, տնքալով ու փնչալով բարձրանում Պլանի գլուխ և այնտեղից էլ վեր, վեր, հասնում Քանաքեռ, որպեսզի այդ բարձունքից ինքնագնացով գլորվեն դեպի տուն: Տաք քամին ֆոֆռացնում էր նրանց մայկաների փեշերը, շաչում ականջների մեջ, իսկ նրանք արցունքակալած աչքերով իջնում հա իջնում էին ոլոր-մոլոր ճամփաներով, առանցքակալների հանած զիլ աղմուկի տակ, ջահել, քաղցած ու երջանիկ:

Հարազատ քաղաք:

Ահա, այն շենքերի տեղում առաջ այգիներ էին և նրանց արանքով հոսում էր Մամուռը, Գետառից սկիզբ առած: Փոքրիկ, բայց ջրառատ առու էր, հոսում էր հանդարտ ու

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հանդիսավոր: Հիմա չկա: Իսկ այն ժամանակ հավաքվում էին թաղի տղաներով, գալիս, մի կողմ էին նետում մարմինը ծածկող միակ մայկան, փռվում էին Մամուռի ափին, արևկող անում շիկացած քարերի վրա, իսկ հետո չրմփալով նետվում սառը ջրի մեջ: Անպայման չրմփոցով, ջրի շիթեր բարձրացնելով շուրջը և թրջելով արևկող անողներին: Ու գրազ էին գալիս, թե ով քիթը բռնած ավելի երկար կմնա գետակի հատակին: Եվ գրազն էլ ինչ էր, ով տարվեր, պարտավոր էր միրգ գողանալ ընկերների համար՝ կողքի այգիներից: Երբ առանց գրազի էլ, միևնույն է, գողանալու էին և ծոցերը լցրած վազելու տուն:

Հարազատ քաղաք, հարազատ տուն:

Զավեն Շարաֆյանը բարձրացավ սանդուղքով, զգալով, թե ինչպես են արագանում սրտի զարկերը, ձգեց դռան բռնակից և ժպտաց հանգստանալով միանգամից, տեսնելով, որ դուռը բաց է: Զարմանալի մարդ է մայրը, այդպես էլ երբեք չսովորեց փակել տան դուռը: Ով հյուր էր գալիս, զարմանում էր, տեսնելով, որ դուռը բաց է: Զգուշացնում էին մորը, վախեցնում էին, հազար տեսակ գող ու ավազակ է շրջում քաղաքում: Բայց մայրը երևի բարձր կարծիք ուներ գողերի մասին, որովհետև ասում էր ժպտալով.

- Գողը մեր տուն չի մտնի: Գողը գիտի,թե որտեղ է մտնում: Ոչ ոք չգիտեր դուռը բաց թողնելու գաղտնիքը: Սիրանից ու Զավենից բացի: Մայրն ասաց մի անգամ: Ասաց.

- Մեր տան դուռը միշտ բաց Է եղել: Այդպես էր ուզում Աշոտս: Հիմա հանկարծ որ գա ու փակ տեսնի դուռը՝ կվախենա:

Նա դեռ սպասում էր ամուսնուն: Եվ այնպես էր հավատում, թե մի օր ամուսինը կգա, որ դրան հավատում էին նաև երեխաները: Իսկ հարևաններն ու բարեկամներն այլ կերպ էին մեկնաբանում մոր անօրինակ հաստատակամությունը, ենթադրում էին, թե Նազիկը ինչ-որ բան գիտի, գիտի, որ ամուսինը ողջ է, բայց ինչ-որ պատճառներով առայժմ նպատակահարմար չի համարում հայտնել այդ մասին: Թե չէ ինչպե՞ս կարելի է այդքան սպասել ու հավատալ:

Մայրը հավատացյալ էր: Պատերազմի ժամանակ քանի-քանի անգամ երեխաների ձեռքը բռնած եկեղեցի էր գնում, մեկ Սուրբ Սարգիս, մեկ Սուրբ Հովհաննես, մեկ Զորավոր ու մեկ էլ Լուսավորիչ, մոմ էր վառում ու Զավենին և Սիրանին ևս ստիպում մոմ վառել ու ծնկաչոք աղոթել աստծուն, որ իրենց հայրը ետ գա: Երեխաները վախենում էին, չէին ուզում եկեղեցի գնալ, բայց մայրը համառորեն տանում էր նրանց, հուսալով, որ եթե աստված տեսնի երեխաներին, կխղճա ու չի թողնի,որ որբանան նրանք:

Մայրը լսեց դռան չխկոցը, պատշգամբից տուն մտավ, ձեռքերը պարզած մոտեցավ որդուն և հալվեց, փլվեց նրա կրծքին; Ու Զավենը սրտի ցավով մտածեց, որ ընդամենը այդ մի քանի ամսվա ընթացքում փոխվել, փոքրացել է կարծես մայրը:

- Ո՞նց ես, տղա ջան:

- Լավ եմ,- ասաց Զավենը՝ քնքշորեն համբուրելով մոր արծաթած մազերը:

- Քո ավտոյով եկա՞ր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ի՞նչ ավտո,- զարմացավ տղան:

- Տղա ջան, համ սկսել ես շատ փող ուղարկել, համ էլ Սիրանն ասաց, որ մեծ պաշտոն ես ստացել, ո՞նց էր ասում հա, խմբագիր ես արդեն: Բա ավտո չե՞ն տվել:

- Չէ, մամ ջան, ձի տվեցին, բայց վախեցա ընկնեմ վրայից, խայտառակ լինեմ, հրաժարվեցի:

-Ուրեմն ես էլի պիտի սպասեմ,- ասաց մայրը:

- Ի՞նչ իմաստով:

- Երդվել եմ, մինչև չտեսնեմ, թե ոնց է քեզ աշխատանքի տանելու համար ետևիցդ ավտո գալիս, չեմ մեռնելու:

- Ուրեմն երկար կապրես, մամ ջան:

Մայրը հանկարծ ինչ-որ բան հիշեց, ախ քաշեց ու նետվեց խոհանոց որդու համար ուտելիք բերելու, իսկ Զավենը փոքրիկ ճամպրուկից հանեց ու սեղանին դասավորեց իր բերած նվերները՝ մոր համար ռեդիկուլ կոչվող շատ ինքնատիպ մի պայուսակ՝ երկու ոսկեգույն օձի գլուխներով, որոնք ռեդիկուլը փակելիս փաթաթվում էին իրար: Կարմիր քարով արծաթյա մի շատ գեղեցիկ ականջօղ՝ Սիրանի համար և մի զույգ բրդյա հաստ գուլպա փեսա Գևորգի համար, որ նրան նվեր էր բերել երեք որբեր պահող ու Զավենի ֆելիետոնի շնորհիվ զոհված որդու համար թոշակ ստացող Անուշ մայրիկը:

Մայրը հայտնվեց խոհանոցից՝ սկուտեղի վրա բերելով հացը, պանիր, պոմիդոր ու խաղող, դրեց սեղանին ու նվերները տեսնելով հառաչեց.

- Էս ինչե՞ր ես բերել, տղա ջան, բա էսքան փո՞ղ կծախսեն, ցավդ տանեմ: Էս սումկա՞ն ում համար ես բերել: Վայ, վայ վայ- տիկին Լիզան էլ սրանից ունի, գցում է թևը ու կոտրատվելով ման գալիս:

- Քեզ համար եմ բերել, մամ ջան, փողերդ կդնես մեջը ու դուրս կգաս… Դո՞ւ ինչով ես պակաս տիկին Լիզայից…

- Լավ ասացիր,- մայրը գնաց բացեց սպիտակեղենի պահարանը, ինչ-որ տեղից մի փաթեթ հանեց ու բերեց դրեց որդու առջև, սեղանին: - Էս էլ փողերը: Կվերցնես, կգնաս ու քեզ համար մի վերարկու կառնես:

- Ի՞նչ ես խոսում, այ մամ…

- Էլ ոչ մի խոսք: Ձմեռ է գալիս, ամոթ է: Էդ պլպլան բանն ինչքա՞ն պետք է հագնես: Մենակ մարդ ես՝ կմրսես, կհիվանդանաս, ով է քո տերը: Հենց հիմա կգնաս ու մի տաք վերարկու կառնես: Հենց հիմա…

-Մամ ջան…

- Կնեղանամ, Զավեն: Մոր խոսքը պիտի կատարվի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ Զավեն Շարաֆյանը հասկացավ, որ վիճելն իմաստ չունի: Նա հուզված համբուրեց մորը, փաթեթը գրպանը դրեց, նախաճաշեց շտապ ու վեր կացավ տեղից:

- Էդ ո՞ւր,- իրար անցավ մայրը,- կարտոֆիլ եմ խաշում:

- Ուշանում եմ,- ասաց Զավենը,- «Սովետական Հայաստանի» խմբագրություն պիտի գնամ: Ժողով է:

Ժամանակ դեռ շատ կար և նա ոտքով հատեց, անցավ Ալավերդյանը, հասավ Աբովյան ու դանդաղ իջավ փողոցով, քարե հունով հորդառատ հոսող բաց առվակի կողքով, ուշադիր շուրջը նայելով և որսալով յուրաքանչյուր նորը: Բայց նոր բան քիչ կար դեռևս: Պատկերասրահի շենքն էր հիմնական վերանորոգման ենթարկվում, որպեսզի ճակատային մասը համապատասխաներ Լենինի հրապարակի հոյակապ ոճին և աջ կողմում էլ բարձրանում էր Ժողտնտխորհի շենքը, որն ամբողջացնելու էր հրապարակի ճարտարապետական անսամբլը:

Զավենը շարունակեց իջնել Աբովյանով, մեծ ու մանրիկ խառնույթների կողքով, մտավ Մանկական այգի և երբ դուրս եկավ հակառակ ծայրից, հենց Կարմիր բանակի փողոցի անկյունում դեմ դիմաց հանդիպեց «Լուսաբացի» նախկին խմբագիր Մկրտիչ Զուլոյանին, որը դեպի խմբագրության շենքն էր քայլում արագ-արագ:

- Ընկեր Զուլոյան…

- Զավե՞ն:

Նրանք գրկախառնվեցին և մինչև խմբագրության շենքի երրորդ հարկ հասնելը Մկրտիչ Զուլոյանը հասցրեց հարցախեղդ անել Զավենին և իմանալ ինչ կա-չկա հայրենի քաղաքում:

- Վաղը քո թերթի մասին մամուլի տեսչություն ենք տպում,ընկեր, - ասաց նա՝ բացելով իր առանձնասենյակի դուռը և Զավենին ներս թողնելով:

Ի՞նչ տեսություն, ընկեր Զուլոյան:

- Բակային ճամբարների համար: Կեցցեք:

- Հոգիներս դուրս եկավ,- փնչաց Զավենը:

Զավենը զգում էր,որ Զուլոյանի հետ ինչ-որ բան է կատարվել, բայց թե ինչ, չէր կարողանում կռահել, մինչև որ նա դարակից հանեց ու սկսեց կատաղորեն քաշքշել տերողորմյայի հատիկները:

- Ընկեր Զուլոյա՞ն…

- Հա, ծխելը թողել եմ,- նույն խռպոտ ձայնով ծիծաղեց Զուլոյանը:

Զավենը նոր միայն հասկացավ, թե ինչ է կատարվել իր նախկին խմբագրի հետ: Նրա վրայից ծխահոտ չէր գալիս և ձեռքին էլ չկար անբաժան սիգարետը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դե պատմիր, պատմիր, ո՞նց ես, տղաները ոնց են, Մարոն չամուսնացա՞վ: Միհրանն ի՞նչ արեց, հիմա էլ ես հո չկամ, ինչո՞ւ Սեդայի հետ չի ամուսնանում-Ջիվանը վերջիվերջո տղա ունեցա՞վ, թե հայոց աղջիկների քանակն է ավելացնում…

Նա ավելի շատ հարցեր էր տալիս, քան լսում էր, իսկ աչքերի մեջ այնպիսի անսահման կարոտ կար, որ Զավենը չդիմացավ, ծիծաղեց.

- Թողեք շունչ քաշեմ,- ասաց նա՝ գրպանից «Կազբեկի» տուփը հանելով, և անմիջապես էլ հարցական նայելով Մկրտիչին:

- Ծխիր,ծխիր, տղաս, առիթից կօգտվեմ ու մի քիչ շունչ էլ ես կքաշեմ:

Նրանց զրույցի ընթացքում ներսուդուրս էին անում քարտուղարության աշխատողները, նոր նյութեր դնում պատասխանատու քարտուղարի սեղանին, բայց Մկրտիչ Զուլոյանը կարծես թե չէր էլ նկատում նրանց, նորանոր հարցեր էր տալիս և ուրախացած կամ վշտացած թափահարում գլուխը: Նա միայն մի անգամ բարձրացավ տեղից, երբ ներս մտավ գունատ դեմքով, միջահասակ, հին դեղնավուն անձրևանոցով և մաշված լայնեզր գլխարկով, մի ծերունի:

- Համեցեք, խնդրում եմ, նստեք,- առաջարկեց պատասխանատու քարտուղարը:

- Շնորհակալ եմ,- ասաց ծերունին,- ես տասնյոթ տարի նստել եմ:

- Երանի ձեզ, որ այդքանից հետո կարողանում եք կատակել,- տխուր ժպտաց Զուլոյանը:

- Դա էլ որ չլիներ, վաղուց սևահող դարձած կլինեի,- ասաց տարօրինակ ծերունին: - Հը, նյութս ի՞նչ արեցիք:

- Կարդացել, հանձնել եմ, վարպետ,- հարգանքով պատասխանեց Զուլոյանը:

- Ո՞ւմ:

- Խմբագրի տեղակալին:

- Ավելի լավ չէ՞ր աղբարկղը նետեիք: Աղբարկղն ավելի շուտ կհասկանար, քան թե քո այդ խմբագրի տեղակալը:

Մկրտիչ Զուլոյանը տարածեց ձեռքերը:

Կարգն այդպես է, ես ի՞նչ անեմ:

Ծերունին լուռ շրջվեց ու հեռացավ:

- Ո՞վ էր այդ մարդը, ընկեր Զուլոյան,- անկարող հետաքրքրությունը զսպել, հարցրեց Շարաֆյանը:

- Երգիծաբան Կամսարյանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

-Նա՞- բա ասում էին գնդակահարել են:

- Ինչպես տեսնում ես, չեն հասցրել: Անցյալ տարի է վերադարձել Սիբիրից:

- Եվ գրո՞ւմ է…

- Ամեն շաբաթ մի ֆելիետոն կամ երգիծանք է բերում: Ես էլ, ինչքան հնարավոր է խմբագրում եմ, հանում եմ շատ սուր տեղերը, որպեսզի մի կերպ տպագրվի և խեղճ մարդը մի քանի կոպեկ ստանա: Օրերով քաղցած է: Բայց ինչ անում եմ տեղակալից այն կողմ չեն անցնում նյութերը: Ամեն անգամ երբ գալիս է, քիչ է մնում թողնեմ-փախչեմ սենյակից: Բայց ի՞նչ անեմ… ի՞նչ անեմ- մի անգամ նույնիսկ կուչ ու ձիգ անելով, ինձ խեղդելով, մի քիչ դրամ առաջարկեցի: Այնպիսի հայացքով նայեց ինձ վրա, այնպիսի մի արհամարհանքով, որ ամոթից գետինը մտա: Ասաց, երիտասարդ, եթե ես կարողանայի հոնորար ստանալ մի հիմնարկությունից և հրաժարվեի տպագրել ֆելիետոններս, տասնյոթ տարի չէի նստի:

- Իսկ գրածները լա՞վն են, ընկեր Զուլոյան:

- Փայլուն,- բացականչեց պատասխանատու քարտուղարը, - աննման, երբ կարդում եմ, սկսում եմ մեն-մենակ քրքջալ գժի պես:

- Բա ինչո՞ւ չեն տպագրում:

- Հենց դրա համար,- տերողորմյան քաշքշեց Զուլոյանը: -Որովհետեւ շատ սուր են և սրամիտ: Իսկ մեր տեղակալը բացարձակապես հումոր չունի, հասկանո՞ւմ ես: Նույնիսկ երբ ակնարկի մեջ երկխոսություն է հանդիպում, հեղինակին կանչում, հարցնում է, թե դու որտեղ ես լսել այդ խոսակցությունը: Հորինել եմ, ասում է հեղինակը, դրությունն այնպիսին է, որ ես ենթադրում եմ, թե մոտավորապես նման խոսակցություն պետք է եղած լինի: Բա եղա՞վ, զարմանում է տեղակալը, այդպես որ լինի՝ հո ինչ ուզեք, կգրեք…

- Ուրեմն երևի պարտադիր է, որ ամեն հիմնարկ իր Նշան Իգիթյանն ունենա, - ծիծաղեց Զավենը:

- Ո՞ւր էր թե միայն մեկը լիներ: Բայց խղճի դեմ չգնալու համար մի բան էլ ասեմ, Զավեն, Կամսարյանի հարցում տեղակալը այնքան էլ մեղավոր չէ: Նորից եմ կրկնում՝ Կամսարյանի գրածները շատ սուր են և սրամիտ, բայց հին են, հնացած են, այսօրվա մեր կյանքին չեն համապատասխանում : Հասկանո՞ւմ ես, ահավոր ողբերգություն է կատարվել, մարդուն պոկել են իր հողից և տասնյոթ տարի գցել մի բոլորովին այլ միջավայր: Տասնյոթ տարի: Հիմա նա վերադարձել է, կարծում է, թե նույն տեղն է եկել: Այնինչ փոխվել է ամեն ինչ, հողն էլ, իրականությունն էլ, լեզուն էլ, մտածողությունն էլ: Էլ չեմ խոսում մարդկային փոխհարաբերությունների մասին: Ամենապարզ օրինակը՝ մի ընդարձակ ֆելիետոն էր բերել: Որպեսզի ծաղրեր քաղխորհրդի նախագահին և ցույց տար, թե որքան մանրոզի ու չկամ մարդ է բնակարաններ բաշխելու հարցում, գրել էր, թե ավելի ճիշտ կլինի թաղման բյուրոյի նախագահին դարձնել քաղխորհրդի նախագահ: Որովհետև թաղման բյուրոյի նախագահը տեղ է տալիս բոլորին, ով դրա կարիքն ունի: Իսկ անընդհատ մերժող քաղխորհրդի նախագահին էլ դարձնել թաղման բյուրոյի նախագահ, որն ըստ սովորության կասի՝ տեղ չունեմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավենը ծիծաղեց սրտանց:

- Շատ սրամիտ է, չէ՞, բայց հին է, հին է, հասկանո՞ւմ ես, որովհետև այսօրվա թաղման բյուրոյի նախագահը մինչև փող չվերցնի, կարգին տեղ չի տա: Իսկ ժողովուրդը դա հո լավ գիտի: Եվ ոչ թե կծիծաղի, այլ կզայրանա: Հիմա հասկացա՞ր, թե ակամա ինչ ողբերգական վիճակի մեջ է գտնվում մարդը: Կամսարյանի երգիծանքը չի անցնում, որովհետև նրան ծանոթ մթնոլորտն ու միջավայրն այլևս չկան:

Մկրտիչ Զուլոյանը նայեց ժամացույցին:

- Օհո, ուշանում ենք,- ասաց նա: - Գնանք, սեմինարը դահլիճում է: Գնանք, տեսնենք ի՞նչ է պատմելու Մոսկվայից եկած մարդը:

* * *

Նրանք մի փոքրիկ սեղան ընտրեցին Կենտրոնական հանրախանութի կողքին գտնվող «Կովկաս» ռեստորանում, փոքրիկ ջրավազանից քիչ հեռու:

Զավենը հին տանտիրոջ իրավունքով խորոված պատվիրեց և «Վերնաշեն» գինի, որն այն ժամանակ շատ հարգի էր, մի հայացք գցեց աջ ու ձախ ու սեղանների մոտ նստած մարդկանց, որոնք խմում ու խոսում էին անհոգ և գրեթե շշուկով հարցրեց.

- Բա հիմա ի՞նչ պետք է անենք:

Մկրտիչ Զուլոյանը չպատասխանեց:

- Չէ, բայց ուրեմն ի՞նչ է ստացվում, ուրեմն մինչև հիմա, ինչ եղել է, սո՞ւտ է: Ուրեմն ամբողջ կյանքում անխղճորեն, անամոթաբար խաբե՞լ են մեզ:

Մկրտիչ Զուլոյանը տենդագին շարժումով գրպանից հանեց տերողորմյան, արագ-արագ չխկչխկացնելով այս ու այն կողմ տարավ հատիկները, հետո հանկարծ բարձրացավ տեղից ու ամբողջ թափով ջրավազանի մեջ նետեց համրիչը:

- Մի հատ սիգարետ տուր:

- Ընկեր Զուլոյան…

- Մի հատ սիգարետ տուր, Զավեն:

Կողքի սեղաններից մարդիկ շրջվեցին ու զարմացած նայեցին նրանց, կարծելով, թե հարբած են, և Զավենը ամաչելով բացեց «Կազբեկի» տուփը:

- Ախր լեզուներս դեռ չբացված, մեզ սովորեցրել են արտասանել «Հայր Ստալին»,- շարունակեց Զավենը՝ մինչ Մկրտիչը դողացող մատներով պապիրոսն էր վառում: - Մեր մանկապարտեզը հենց այստեղ, անկյունում էր, հենց այստեղ, կառուցողների ակումբում: Ամեն առավոտ, նախաճաշից առաջ, մենք ոտքի էինք կանգնում և արտասանում՝ «Շնորհակալություն, հայր Ստալին՝ մեր ուրախ ու երջանիկ մանկության համար»: Ռադիոյով

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ամեն օր Ստալինին նվիրված բանաստեղծություններ էին կարդում և երգեր երգում. «ջան Ստալին, ջան Ստալին, պողպատի նման Ստալին» Մեր լավագույն պոետներն իրար հետ մրցում էին իրենց լավագույն գործերը Ստալինին նվիրելու համար. «Քեզ արևը պիտի լինի հաղթանակի շքանշան»: Մեր հայրերը, եղբայրները, իմ հայրը,-ձեռքը կրծքին խփեց Զավենը,- միլիոնավոր մարդիկ քաղցած ու անզեն կռվի են նետվել ու զոհվել են՝ գոչելով. «Հայրենիքի համար, Ստալինի համար»… Ու ոչ միայն իրենք են զոհվել, զոհել են նաև մեզ իրենց երեխաներին, սոված, որբ ու անտեր են թողել “հայրենիքի համար, Ստալինի համար»: Եվ այդ զոհողությունը ծիծաղելի, ավելորդ ու զո՞ւր է եղել: Ուրեմն բոլորն էլ խաբվա՞ծ են եղել: Դե ասեք, մեծ մարդ եք, ընկեր Զուլոյան, այդ ինչպե՞ս է պատահել, որ խաբվել է մի ամբողջ ժողովուրդ: Մեծից մինչև փոքր:

Որքան էլ տարօրինակ թվա, նրա վայրիվերո ու ցասումնալից մենախոսությունը կարծես թե հակառակ ազդեցություն թողեց Մկրտիչ Զուլոյանի վրա, որովհետև երբ խոսեց, ձեռքերը չէին դողում այլևս և ձայնն էլ հանգիստ էր.

- Բոլորը չեն, որ խաբվել են, Զավեն: Հենց թեկուզ այն փաստը, որ նա հրեշավոր կասկածամտությամբ և բերիական ողջ մեքենան գործի դնելով սկսել է ոչնչացնել իր շրջապատը, իր մանկության ու հեղափոխական ընկերներին և ապա գնդակահարել ու աքսոր է ուղարկել միլիոնավոր մարդկանց, հենց միայն այդ փաստը վկայում է, որ նրան ճանաչել են շատերը, որ կռահել են նրա էությունը, հասկացել են, թե նա ինչի է ձգտում: նա վճռել է աստված դառնալ և դարձել է՝ ոչնչացնելով բոլոր նրանց, ովքեր նրան որպես սովորական մարդ գիտեին: Գիտեին, որ հաց է ուտում, քնում է, որ դեմքը չեչոտ է ու հասակը կարճ է, որ կասկածամիտ է ու անզուսպ, որ սադիստի հոգի ունի և միահեծան լինելու մարմաջ: Չլսեցի՞ր, թե ինչ ասաց այդ դասախոսը Լենինի կտակի մասին: Պարզվում է, որ նա դեռ այն ժամանակ է տեսել նրա իսկական դեմքը:

- Զարմանալի բան է,- ասաց Զավենը,- մայրս երբեք չի ընդունել Ստալինին, անընդհատ անիծում ու թուրք էր անվանում: Ինչքան եմ կռվել խեղճի հետ: Հիմա հենց տուն գնամ՝ ներողություն եմ խնդրելու և համբուրելու եմ ճակատը:

- Տեսնո՞ւմ ես,- գլուխն օրորեց Մկրտիչ Զուլոյանը: - Նա էլ բնազդով է զգացել:

Մատուցողը բերեց խորովածը, բացեց գինին ու լցրեց բաժակները: :

- Եվ ի՞նչ հրեշավոր ծրագիր, գնդակահարել ու աքսորել հասկացող ու խելացի մարդկանց, ստորացնել, նվաստացնել, տեռորի ենթարկել մնացածներին, ահաբեկել, փակել բոլորի բերանը, որդիներին հանել ծնողների դեմ, եղբորը մատնության դրդել եղբոր նկատմամբ, ժողովրդին ժողովրդի թշնամի հռչակել և բոլորին ստիպել թշնամիներ փնտրել իրենց տանը, շրջապատում- փնտրել, հայտնաբերել ու մատնել…

- Ճիշտ է, ճիշտ է,- հանկարծ հիշեց Զավենը: - Երբ փոքր էինք, նույնիսկ խոշորացույցներով զննում էինք պատմության դասագրքերի լուսանկարները: Որովհետև տարածել էին, թե տպարանում աշխատող ժողովրդի թշնամիները Ստալինի աչքերի մեջ խաչ են նկարել:

- Կամ հենց մեր Նիկողայոս Սևյանի պատմությունը: Լսել ես չէ՞, որ ֆելիետոն է տպագրել հոր դեմ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Գիտեմ,- գլխով արեց Զավենը:

- Նույն ձեռքն է և նույն դաստիարակությունը,- ասաց Մկրտիչ Զուլոյանը: - Եվ նույն հեռավոր նպատակը: Նա գիտեր, որ նման երեխաներն են իրեն աստված համարելու: Նրա հույսը հենց մեր անգլուխ սերունդն էր:

- Հա, բայց որքան հասկացա, նա մատնողներին էլ է ոչնչացրել զոհերի հետ միասին:

- Դա արդեն մարդասպանի սովորություն է,- քմծիծաղ տվեց Մկրտիչ Զուլոյանը: - Որպեսզի մի սպանության հետքերը կորցնի, մարդասպանը ոչնչացնում է նաև ենթադրյալ վկաներին: Եվ այդպես շարունակ- Նա այլևս կանգ առնել չի կարող:

Նրանք երկար ժամանակ լուռ էին:

- Խմենք,- ասաց Մկրտիչը, բարձրացնելով բաժակը:

- Ճիշտը որ ասեմ, չեմ ուզում,- ետ քաշվեց Զավենը:

Զուլոյանը նրան մեկնեց կարմիր գինով լի բաժակը:

- Խմենք, խմենք,- ասաց նա,- խմենք, որ հասկանանք: Սա հեշտությամբ մարսելու բան չէ, տղաս: Տես, ես խոսում եմ, բայց ոչինչ չեմ հասկանում: Ոչինչ: Այնքան անհավատալի է ու անհեթեթ: Եթե ամեն ինչ այնպես է, ինչպես Մոսկվայից եկած մարդն էր ասում…

- Նա պարզ ասաց, որ շուտով համագումար է հրավիրվելու այդ առթիվ:

- Այո ,- ասաց Մկրտիչը,- կուսակցության XX համագումարը:

Զավենը վերցրեց ընկերոջ մեկնած բաժակը:

-Սարսափելի է,- ասաց նա,- ինչպե՞ս կընդունի ժողովուրդը: Ինչպե՞ս պետք է նրան ասեն, որ մինչև հիմա խաբված և ծաղրված է եղել:

Կողքի սեղանից մի մարդ բարձրացավ զինվորական հին կիտելով, որի կրծքին զանազան մեդալներ ու շքանշաններ կային: Նա վերցրեց աթոռի կողքին դրված հենակը, դրեց թևի տակ և հենակի օգնությամբ միակ ոտքի վրա ցատկոտելով, շքանշանները զնգզնգացնելով մոտեցավ ջրավազանին, կռացավ, դժվարությամբ գարեջրի երկու շիշ հանեց ջրավազանի միջից, որ դրել էր սառը պահելու համար, ու նորից կաղալով ետ դարձավ:

- Դե եկ ու պատերազմից հաշմանդամ վերադարձած այս մարդուն բացատրի, որ նրա աստվածը սուտ է եղել, և նա, ում անունը տալով կուրծքը հրակնատի դեմ է պահել, եղել է դահիճ, մարդասպան: Բացատրիր ու տես, թե ինչ կկատարվի այդ մարդու հետ- Տես, թե նա կուզենա՞ հասկանալ,- հարցրեց Զավենը:

- Չգիտեմ,- տնքաց Մկրտիչ Զուլոյանը: - Ի՞նչ ասեմ, երբ ինքս էլ ոչինչ չեմ հասկանում, տղաս:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավենը մինչև վերջ խմեց գինին և երկար ժամանակ բախտ գուշակողի նման սևեռուն նայում էր բաժակի հատակին:

- Իսկ Արմենը զարմանալիորեն հասկացել է:

- Ո՞վ,- հարցրեց Մկրտիչ Զուլոյանը:

- Արմենը, Զատիկյանը: Նա ինձ ասաց՝ թող աշխատանքդ ու եկ ծաղիկ աճեցնենք ու վաճառենք: Ասաց՝ պետական մակարդակի մեծ հանցագործություն է կատարվում երկրում և մի օր բոլորը պատասխան պիտի տան: Բոլորը, ովքեր ներկա են եղել: Հատկապես ղեկավարները: Ասաց՝ ծաղիկ վաճառիր, որպեսզի երբ պատասխան պահանջեն քեզանից, գոնե կարողանաս ասել, թե դու հանցանքի վայրում չես եղել, թե ալիբի ունես, որովհետև այդ ժամանակ ծաղիկ էիր ցանում ու վաճառում:

- Նրա ասածի մեջ մեծ ճշմարտություն կա,- խոպոտ շշնջաց Մկրտիչ Զուլոյանը: - Նրա ասածը հաստատվեց: Հո տեսար Կամսարյանին, ո՞ր մեղքի համար է գրող մարդը տասնյոթ տարի սառնամանիքի մեջ անտառ կտրել: Ու հիմա էլ եկել, ապրել չի կարողանում: Առավել ևս ո՞ր մեղքի համար են աքսոր ուղարկվել նույն այդ Արմեն Զատիկյանի ծնողները, որոնց դժբախտությունն այն է, որ օտար երկրներում չեն դիմացել հայրենիքի կարոտին ու Հայաստան են եկել: Խելագարվել կարելի է, եղբայր:

Զավեն Շարաֆյանը նորից գինի լցրեց բաժակները, և նրանք նորից խմեցին լուռ, առանց կենացի:

- Եվ ասում եք Գառնիկ Բադալյա՞նը պնդեց, թե գյուտի հաստատումը պետք է մերժել հենց միայն նրա համար, որ հեղինակը ժողովրդի թշնամու զավա՞կ է:

- Թշնամիների: Այո :

- Գիտեք, թե ձեզ ինչքան եմ հարգում, ընկեր Զուլոյան, բայց հավատալս չի գալիս:

- Իմ ականջով լսեցի և այդպես էլ գրված է որոշման մեջ: Իսկ Արմեն Զատիկյանին վերջերս չե՞ս հանդիպել: Ծնողներից լուր չկա՞: Գուցե նրանք էլ են վերադարձել:

-Չէ,- ասաց Զավենը: - Տեղեկություն չունի: Ասաց, որ հարցումներին ոչ ոք չի պատասխանում:

- Ո՞նց է:

- Է, - ձեռքը թափ տվեց Զավեն Շարաֆյանը,- ոնց պետք է լինի, ընկեր Զուլոյան: Տարբերությունն այն է, որ հիմա կատաղությունը փոխարինել է բացարձակ ապատիայով: Օրերով ոչ մեկի հետ չի խոսում: Քայլում է ասես թմբիրի մեջ: Այն օրն անցնում էի փողոցով, դիմացիցս գալիս էր, նայում էր ուղիղ աչքերիս մեջ ու չէր տեսնում: Իսկ երբ ձայն տվեցի, ցնցվեց…

- Մեր աչքի առաջ կործանվում է տաղանդը, և մենք որևէ բան անել անզոր ենք,- հառաչեց Մկրտիչ Զուլոյանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավենը բարձրացրեց գլուխը:

- Մեր պայմանը հիշում եք, չէ՞ , ընկեր Զուլոյան:

- Կարծում էի, թե դու արդեն մոռացել ես:

Զավենը տխուր ժպտաց.

- Չէ,- ասաց նա,- չեմ մոռացել: Ես պարտքերս չեմ մոռանում: Բայց որպեսզի կարողանամ հասնել նպատակիս, ինձ ձեր օգնությունն է պետք:

- Ասա:

- Նախ՝ եթե գրեմ նյութը, նույն այդ խմբագրի տեղակա՞լն է կարդալու:

- Կարայա՞նը-- Մկրտիչ Զուլոյանը խռպոտ ծիծաղեց: -- Վերջերս գիտե՞ս ինչ արեց: Ում պատմեմ չի հավատա: Ինչ որ մեկը լակոտություն էր արել, զուգարանի պատին գրել էր «Կարայանը էշ է»: Եվ ի՞նչ ես կարծում, ի՞նչ մեթոդի դիմեց գրողին

բռնելու համար: Խմբագրության բոլոր աշխատողներին, բոլորին առանձին-առանձին իր առանձնասենյակը հրավիրեց ու ստիպեց գրել՝ «Կարայանը էշ է», որպեսզի ձեռագիրը համեմատի պատին գրվածի լուսանկարի պատճենի հետ: Գոնե առանձին տառեր գրել տար: Ուրիշ նախադասություն, որտեղ այդ տառերը լինեին: Չէ: Բոլորը

պարտավոր էին գրել «Կարայանը էշ է»:

- Եվ դուք էլ գրեցի՞ք, - ծիծաղից խեղդվեց Զավենը:

- Ինձ նույնիսկ ստիպեց ձախ ձեռքով էլ գրել: Երբ բողոքեցի, թե ձախ ձեռքով գրել չեմ կարողանում, քմծիծաղ տվեց, “Իսկ ինձ թվում է, թե դու ամեն ինչ էլ կարող ես»,- ասաց նա:

- Դե ուրեմն էշ է, էլի, այլևս ինչ միտք ունի առարկելը, - քրքջաց Զավենը,- Եվ այդ- մարդն է կարդալու իմ ֆելիետոնը:

- Չէ, չէ,- հանգստացրեց նրան թերթի պատասխանատու քարտուղարը,- քո ֆելիետոնը մենք գիտության բաժնով կանցկացնենք: Եվ ի՞նչ օգնություն ես ուզում:

- Ինձ թույլ չեն տա ծանոթանալ մինիստրությունում գտնվող նյութերի և տեխնիկական գիտությունների դոկտոր Միտուշյանի լաբորատորիայի հետ: Ինձ փաստաթուղթ է պետք, որ ես ուսումնասիրում եմ ձեր հանձնարարությամբ:

- Ես քեզ կտամ մեր թերթի արտահաստիքային թղթակցի վկայական:

- Ձեր կենացը,- ասաց Զավեն Շարաֆյանը:

- Անցանք կենացների ,- ծիծաղեց Մկրտիչ Զուլոյանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Հայ ենք, չէ,- կեղծ ոգևորությամբ բացականչեց Զավենը: - Էլ ինչ հայ՝ սեղանի շուրջ, առանց կենացի:

Երբ Զավենը քիչ անց վճարելու համար ձեռքը գրպանը տարավ, մատները շոշափեցին նաև մոր տված փաթեթը: Նա մատուցողին մեկնեց նրա պահանջած գումարը և դարձավ Զուլոյանին:

- Մի բան էլ պետք է խնդրեմ: Մայրս փող է տվել, որպեսզի վերարկու գնեմ ինձ համար: Մտնենք ունիվերմագ, վերջացնենք այդ պատմությունը:

Նրանք հենց ռեստորանի կողքի փոքրիկ դռնակով հանրախանութ մտան: Սրահներում գրեթե գնորդներ չկային: Փակվելու ժամն էր: Բարձրացան երրորդ հարկ, երկար միջանցքով հասան ծայրը, որտեղ հագուստի բաժինն էր, նայեցին այս ու այն կողմ, բայց վերարկուներ չտեսան:

- Վերարկուները որտե՞ղ են լինում, - հարցրեց Զավենը տարեց վաճառողուհուն, որի քունն արդեն տանում էր երևի: Հորանջում էր անընդհատ ու շտապով փակում բերանը:

- Եթե լինում են, այստեղ են լինում,- ասաց վաճառողուհին:

- Ուրեմն՝ չունեք:

Վաճառողուհին թոթվեց ուսերը և պատասխանելու փոխարեն հորանջեց՝ ձեռքի ափով ծածկելով բերանը:

- Զուր բան է, Երևանում չես գտնի,- ասաց Մկրտիչ Զուլոյանը: - Այստեղ ինչ քեզ պետք է, երբեք չես գտնի:

Նրանք առաջին հարկ իջան և երբ անցնում էին տնտեսական ապրանքների բաժնի մոտով, Զավենը մի հրաշք վառարան տեսավ: Երեք օջախ ուներ տարբեր չափերի և թխվածքի համար էլ ներքին բաժին: Շատ գեղեցիկ վառարան էր, և ամենակարևորն այն էր, որ կարելի էր նավթով տաքացնել, իսկ եթե նավթ չլիներ, օգտագործել նաև ածուխ կամ փայտ: Զավենը նայեց պիտակին: Ճիշտ այն արժեքն ուներ, ինչքան դրամ կար փաթեթի մեջ:

- Ես այս վառարանը վերցրեցի,- վճռեց Զավենը:

- Բա վերարկո՞ւն, այ տղա,- զարմացավ Մկրտիչը: - Կգնայիր… քաղկոռպում մի բան կլիներ:

Բայց Զավենը արդեն վճարել էր գումարը և հիմա վառարանի մի կողմը բռնած, վիզը ծռած խնդրանքով Մկրտիչին էր նայում:

Մկրտիչ Զուլոյանը ծիծաղեց և քրթմնջալով, թե ինքը լավ գիտեր, որ Զավենի տված մի կտոր հացը իրեն էժան չի նստելու, բռնեց վառարանի մյուս կողմից, և նրանք հանրախանութից դուրս եկան:

- Հիմա մի մեքենա կգտնենք,- ասաց Զավենը:

Բայց Մկրտիչ Զուլոյանը թերահավատ օրորեց գլուխը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Նախ այս ժամին մեքենա չի լինի: Հետո չէի՞ր ասում, թե ձեր տունը մոտերքում է:

- Հա,- ասաց Զավենը: - Բայց դե…

Բայց Մկրտիչ Զուլոյանը արդեն առաջ էր ընկել վառարանի մի կողմը ձգելով:

Իսկ երբ տուն մտան և Նազիկ մայրիկի, Սիրանի և Գևորգի զարմացած հայացքների տակ տնքալով ու փնչալով ցած դրեցին փայլուն կողքերով վառարանը, Զավենն ուղղեց մեջքը, շունչ քաշեց ու ասաց.

- Մեր ջան, վերարկու որ առնեի, մենակ ես էի տաքանալու: Այնպիսի բան առա, որ բոլորս տաքանանք:

* * *

Դրսում շափշափում էր անձրևը: Զրհորդաններն այնպես էին աղմկում, որ Զավեն Շարաֆյանը նույնիսկ լսեց, թե ինչպես բացվեց դուռը:

- Շնորհավորում եմ, ընկեր Շարաֆյան, - ստիպված եղավ կրկնել Մարո Մելիքյանը,

Խմբագիրը բարձրացրեց գլուխն ու ժպտաց.

Ա, Մարո, շնորհակալություն: Հրես կարդում եմ:

Նա ցույց տվեց «Լուսաբացի» նոր համարը, որ փռել էր առջև, և որի ողջ ճակատով մեկ, խոշոր սև տառերով գրված էր. «Բաց նամակ հանրապետության Կապի մինիստր Գ. Ե. Պարսամյանցին»:

- Նորի՞ց եք կարդում, ընկեր Շարաֆյան,- զարմացավ Մարոն:

Զավենը ծիծաղեց,

- Սովորություն է, հիմա էլ կարդում եմ որպես ընթերցող: Կողքից: Իսկ դու նամակի կտրվածքն ուղարկեցի՞ր Կապի մինիստրություն:

- Ինչպես կարգադրել էիք. և Կապի մինիստրություն և Կենտկոմի ագիտացիայի ու պրոպագանդայի բաժին:

- Ապրես:

- Ուրեմն այսօր ձեր բենեֆիսն է, Զավեն Աշոտիչ:

- Ի՞նչ իմաստով, Մարո:

- «Սովետական Հայաստանում» ձեր ֆելիետոնն է տպագրվել՝ «Հայտնագործությունը փակի տակ» վերնագրով:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Խմբագիրը վեր թռավ աթոռից:

- Ճի՞շտ, Մարո, որտեղի՞ց իմացար:

- Ռադիոն առավոտյան մամուլի տեսության մեջ հաղորդեց:

- Շնորհակալություն, Մարո,- ձեռքը նրան մեկնեց խմբագիրը: - Իրոք ուրախ լուր էր ինձ համար:

- Ինչի՞ մասին է, Զավեն Աշոտիչ:

- Կկարդաս, կիմանաս…

- էհ, - բողոքեց Մարոն: - Դե եկ ու մինչև ժամը երկուսը դիմացիր:

Զավենը մտածեց, թե իր համար էլ է դժվար լինելու համբերելը, մինչև որ հանրապետական թերթերը այս քաղաքը հասնեն: Տեսնես ինչպես են տպագրել, ինչ են թողել, ինչ են հանել: Ճիշտ է, նա Մկրտիչ Զուլոյանին հատուկ խնդրեց տիրություն անել, բայց ի՞նչ իմանաս, մեկ էլ տեսար այդ օրը խմբագիրը հիվանդացավ ու նրան փոխարինեց տեղակալ Կարայանը: Ասենք, չէ, եթե նա լիներ, ֆելիետոնը հաստատ չէր տպագրվի: Մկրտիչ Զուլոյանն ասաց, որ այդ Կարայանը կյանքում ոչ մի հոդված չի գրել: Ոչ մի: Բա ուրեմն ի՞նչ սկզբունքով ու տրամաբանությամբ են նրան խմբագրի տեղակալ դարձրել: Ապշելու բան է: Բայց, չէ, Մկրտիչը պատմեց, որ խմբագրության ջահելները նրան այնուամենայնիվ ստիպել են մի բան գրել: Մի օր թռուցկաժողովում երկերեսայնորեն տրտնջացել են, թե ինչու ընկեր Կարայանը որևէ բան չի գրում, որ նրանից օրինակ վերցնեն, գրել սովորեն: Այնքան են պնդել, որ խմբագիրն իր տեղակալին ասելէ՝ այ տղա, դե դու էլ մի բան գրի, էլի: Եվ նա ստիպված գրել է: Ինֆորմացիա է գրել ու տպագրել Շահումյանի ջրանցքի շահագործման հանձնելու արարողության մասին և նշել, որ առաջին օրը ջրանցքը ոռոգեց ութ հարյուր հեկտար տարածություն: Հավանաբար տարեվերջի ձևական արարողությունում ելույթ ունեցողներից որևէ մեկն ասել է, թե ջրանցքը օրական կարող է ոռոգել այդքան տարածություն և Կարայանն էլ գրել է, առանց մտածելու և հասկանալու, թե ինչը պետք է ոռոգեր ջրանցքը դեկտեմբերյան բուք ու բորանին: Մի խոսքով, թերթը ծաղր ու ծանակի է ենթարկվել, և հաջորդ թռուցկաժողովին խմբագիրը կասկարմիր կտրած՝ տեղակալին ասել է, էլ չգրես, այ տղա: Շնորհակալ ենք:

Զավեն Շարաֆյանը հազիվ զսպեց իրեն Արմեն Զատիկյանին զանգ տալու գայթակղությունից: Հետաքրքիր է, թե ինչպես կընդունի: Շատ-շատ հետաքրքիր է, թե ինչպես կընդունեն ֆելիետոնը մինիստրությունում, Մինիստրների խորհրդում, կուսակցության Կենտկոմում: Կբացվի արդյոք գյուտի ճանապարհը, թե դոկտորներն ու ակադեմիկոսները ուս-ուսի կտան իրենց գործընկերոջ պատիվը պաշտպանելու համար մի անհայտ ու անդիպլոմ ինքնուս գյուտարարից և նրա գյուտի ոչ պակաս անհայտ ու անտիտղոս պրոպագանդիստից:

Նա նորից մի հայացք նետեց դիմացը փռված թերթի վերնագրին, «Բաց նամակ հանրապետության Կապի մինիստր ընկ. Գ. Ե. Պարսամյանցին»: Իսկ ա՞յս նամակն ինչպես կընդունվի: Երևի սովետական մամուլի պատմության մեջ առաջին դեպքն է, երբ փոքրիկ քաղաքային թերթը հանդես է գալիս հանրապետության մինիստրի դեմ: Այն էլ ոչ ավել, ոչ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

պակաս՝ խմբագրական հոդվածով, բաց նամակով: Ինչով և ինչպես կպատասխանի հանրապետության մինիստր Գ. Ե. Պարսամյանցը՝ դժվար է ենթադրել:

Ճշմարտության դեմ չմեղանչելու համար, սակայն, պետք է ասել, որ Զավեն Շարաֆյանին այնքան չէր անհանգստացնում «Բաց նամակը», որքան «Սովետական Հայաստանում» տպված ֆելիետոնն էր անհանգստացնում: Որովհետև ի տարբերություն ֆելիետոնի, «Բաց նամակը» գրվել էր քաղկոմի առաջին քարտուղարի Գառնիկ Բադալյանի հանձնարարությամբ:

Երկու օր առաջ, առավոտյան նա իր մոտ կանչեց խմբագրին ու մեկնելով մի թղթապանակ ասաց.

- Ես գնում եմ Երևան: Կվերադառնամ ժամը հինգին: Դու այս սենյակից դուրս չես գալու: Հեռախոսները կանջատեմ: Կնստես իմ գրասեղանի մոտ, կծանոթանաս այս թղթապանակի նյութերին ու մի ֆելիետոն կգրես: Քեզ նախաճաշ կմատուցեն և մեքենագրուհին էլ քո տրամադրության տակ կլինի: Պայմանավորվեցինք: Գամ թե չէ՝ ֆելիետոնը մեքենագրված սեղանիս պետք է լինի:

Զավեն Շարաֆյանին հաճելի էր, իհարկե, առաջին քարտուղարի վստահությունը, բայց նաև պարտավորեցնող:

- Իսկ եթե հանկարծ չկարողանամ գրել… եթե չհասցնեմ կամ…

- Պետք է գրես: Կյանքում ինձ ոչ ոք այնքան չի զայրացրել, չի վիրավորել, որքան այդ հղփացած Գ, Ե. Պարսամյանցը: Դրան տեսեք…Եվ կգրես անզիջում, առանց սեթևեթանքների, անխնա, քո ոճով: Թող հասկանա, որ եթե ոչ ավել, ապա գոնե բոլորովին էլ նրանից պակաս գործիչներ չենք, եթե ստիպված ենք առայժմ նստած մնալ ծայրամասում : Նրան պիտի հասկացնել, որ կուսակցության քաղկոմի հետ տապկնոցի խաղալ չի կարելի… Դե այլևս ժամանակ մի կորցրու: Ես գնացի:

Նա հեռացավ՝ արագորեն ամուր ծածկելով դուռը, իսկ Զավեն Շարաֆյանը տեղավորվեց նրա աթոռին ու բացեց թղթապանակը: Մի քանի պաշտոնական գրություններ էին, որոշման քաղվածքներ և Կապի մինիստրության ու քաղկոմի միջև կայացած նամակագրության պատճենները:

Իսկապես ֆելիետոնի նյութ էր:

Դեռևս յոթ տարի առաջ քաղկոմի բյուրոն որոշում էր ընդունել և կից գրության հետ ուղարկել ՀԽՍՀ կապի մինիստրություն, խնդրելով համաձայն հնգամյա պլանի դիրեկտիվների, փոքրիկ, բայց բուռն զարգացում ապրող այդ քաղաքում կապի նոր շենք կառուցել: Մի քանի ամիս անց Կապի մինիստրությունը մինիստր Գ. Ե. Պարսամյանցի ստորագրությամբ պատասխան է ուղարկել, թե կապի նոր շենքի կառուցման և տեխնիկայով զինելու հարցը քննության է առնվել մինիստրության կոլեգիայում: Կոլեգիան որոշում է ընդունել միջոցներ առանձնացնել և Մոսկվայից ստացված տիպային նոր նախագծով սկսել կապի հանգույցի շինարարությունը նոր տարվա առաջին ամսում, այն հաշվով, որ շենքը շահագործման հանձնվի տարեվերջին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ հենց այդտեղից էլ սկսվեց:

Փետրվարին քաղկոմը գրություն է ուղարկել մինիստրին, տարակուսելով, որ մինչև հիմա նախահաշիվը չկա և նույնիսկ չեն սկսել հողային աշխատանքները: Մայիսին մինիստրությունը պատասխանել է, թե օբյեկտիվ պատճառներով շինարարությունը ժամանակին չի ֆինանսավորվել և խոստացել է աշխատանքի անցնել օգոստոսին: Սեպտեմբերին քաղկոմը համառությամբ հիշեցրել է մինիստրին, թե դեռ ոչինչ չի արվում: Որին մինիստրը դեկտեմբերին պատասխանել է, թե գործի սկիզբը համարում է նոր տարվա առաջին եռամսյակը,

Եվ այսպես անվերջ:

Հինգ տարի շարունակ նամակներ ու գրություններ են ուղարկվել քաղկոմից մինիստրություն ու մինիստրությունից քաղկոմ, մինչև որ մինիստրը հանդիսավոր խոսք է տվել կապի հանգույցի և դրան իր կողմից լրացուցիչ ավելացրած ներքին ավտոմատ հեռախոսակայանի շինարարությունը սկսել և ավարտել նոր հնգամյակի առաջին տարում: Այնինչ նոր հնգամյակի առաջին տարում ոչ միայն ոչինչ չի արել, այլև չգիտես ինչու խռովել է կարծես ու դադարել պատասխանել քաղկոմի ուղարկած բոլոր տեսակի գրություններին ու ահազանգերին:

Խայտառակություն է, հո փաստ չէ:

Զավեն Շարաֆյանը ձեռքն առավ գրիչը ու երկար ժամանակ մտածում էր նյութի ձևի մասին: Ի՞նչ ժանր ընտրել՝ հոդված թե ֆելիետոն: Եթե այդ գրությունները թեկուզ միայն շարեր իրար ետևից՝ արդեն ֆելիետոն կդառնար: Բայց ֆելիետոնն էլ իր պակասությունն ունի՝ ինչ գրում ես, կարծում են չափազանցված է, հորինված է ծիծաղելի դարձնելու համար: Եվ վճռեց ընտրել «Բաց Նամակի» ձևը: Այն շատ հավաստի է և անմիջական:

Նա ոգևորված գործի անցավ, նույնիսկ հրաժարվեց քարտուղարուհու մատուցած նախաճաշից, և երբ միշտ ճշտապահ Գառնիկ Բադալյանը ուղիղ ժամը հինգին իր առանձնասենյակը մտավ, Զավեն Շարաֆյանը նրա առջև գրեց մեքենագրված «Բաց նամակը»:

- Ասում էի, չէ՞, որ կգրես,- գոհունակ ժպտաց քաղկոմի առաջին քարտուղարը՝ իր աթոռին նստելով:

Նա երկու ձեռքով բռնեց գլուխը և սկսեց խորասուզված կարդալ: Կարդում էր ու խնդմնդում ինքն իրեն, օրորում էր գլուխն ու ինչ-որ անհասկանալի խոսքեր մրմնջում քթի տակ, ձեռքը սեղանին էր խփում, ետ շրջում կարդացած էջը ու ընթերցում նորից: Իսկ երբ վերջացրեց, կրկին վերցրեց առաջին էջը և բարձրաձայն կարդաց վերնագիրը:

- «Բաց նամակ հանրապետության Կապի մինիստր ընկ. Գ. Ե. Պարսամյանցին»: Սա հենց այն է, ինչ ես ուզում էի: Կեցցես: Լակոնիկ, խոսուն, մարտական: Ոչ մի առարկություն չունեմ: Ու թեև շատ կիրթ է գրված, բայց հասկացվողը կհասկանա, որ սա զապորոժցիների մի նորօրյա նամակ է՝ուղղված թուրքի սուլթանին: Շնորհակալություն, ընկեր Շարաֆյան: Կտանես կտպագրես թերթի հենց այս համարում: Երբ է լույս տեսնելու թերթը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Վաղը չէ մյուս օրը,- ասաց Զավենը:

- Կտպագրես, իսկ հետո ինչպես կարգն է, մի օրինակ կուղարկես ընկ. Գ. Ե. Պարսամյանցին՝ խնդրելով քննության առնել նամակը և պատասխանել խմբագրությանը: Իհարկե, շատ կուզենայի ներկա լինել ու նամակն ընթերցելու պահին տեսնել ընկ, Գ. Ե. Պարսամյանցի տոռուզ դեմքը: Բայց ոչինչ, կպատկերացնենք: Հա, թերթի մի օրինակ էլ ուղարկիր Կենտկոմ:

- Նրանք ստանում են բոլոր թերթերը, ընկեր Բադալյան:

- Ստանում են, բայց չեն կարդում: Ինչքան եղել եմ պրոպագանդայի բաժնում, տեսել եմ որ բոլոր շրջաններից ու քաղաքներից ստացված թերթերը, առանց բացելու, գլանաձև փաթաթված թափված են այստեղ ու այնտեղ: Ուղարկիր առանձին ծրարով: Եղավ:

- Եղավ, Գառնիկ Վարդանիչ:

Եղավ, Գառնիկ Վարդանիչ, մտածում էր Զավեն Շարաֆյանը՝ ձեր ցանկացած «Բաց նամակը» եղավ: Հիմա մնում է սպասել ու տեսնել, թե ինչ կլինի հետո:

Նա մոտ բերեց թերթի հաջորդ համարի նյութերը ու սկսեց կարդալ: Բայց քիչ հետո զգաց, որ կարդացածը չի հասկանում: Միտքը Երևանում է ու ճանապարհ է ընկել «Սովետական Հայաստանի» օրվա համարի հետ: «Հայտնագործությունը փակի տակ»: Լավ վերնագիր է: Լավ վերնագիրը գործի կեսն է, սիրում էր ասել իրենց դասախոսը: Հիմա մնում է սպասել ու պարզել, թե ինչ վիճակում է երկրորդ կեսը:

Նա նորից ակամա մեկնեց ձեռքը՝ Արմեն Զատիկյանի տան հեռախոսի համարը հավաքելու նպատակով, բայց անմիջապես հրաժարվեց այդ մտքից, թող ֆելիետոնը տեղ հասնի, նոր…

* * *

Երբ դուրս եկավ խմբագրության շենքից, անձրևն արդեն դադարել էր: Ճնճղուկները հապճեպ կտցահարում էին հրապարակում թափված թաց տերևները, հետո ասես անտեսանելի վտանգից զգաստանալով, մի ընդհանուր հրամանով աղմուկով պոկվում էին գետնից ու թռչում, թաքնվում էին ծառերի սաղարթներում: Օդում մշուշ էր և աշնան հոտ: Անկյունի փոքրիկ շենքի բակում փայտահայտները համաչափ, եռանդագին շարժումներով գերան էին սղոցում, մեկն էլ կացնով ջարդում էր կտրատված գերանները, գիրկն առած տանում դարսում քիչ հեռու, ծածկի տակ: Ձմռանն այդ տանը տաք կլինի: Վառարանում կհուրհրա կրակը, երեխաները աղ կցանեն կարտոֆիլի բարակ շերտերի վրա, կկպցնեն վառարանի կողքերին ու ափից-ափ փոխադրելով կարմրած, փքված շերտիկները, փչելով այնուամենայնիվ այրելով շրթունքները, կուլ կտան տաք-տաք կարտոֆիլը հաճույքից փնչացնելով:

Զավեն Շարաֆյանը անասելի մենակ զգաց իրեն:

Ինչքան էր երազում իր տունն ունենալ, իր անկյունը: Իսկ հիմա այդ տունը չէր ձգում նրան: Նրան սպասող չկար: Վառարանը վառող չկար: Կրակին թեյ դնող չկար: Օրերով տաք ճաշ չկար: Տաք խոսքեր ասող չկար: Եթե տանը լիներ որևէ մեկը, Զավենը նրա համար հաճույքով

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

կվառեր վառարանը, թեյ կդներ, ճաշ կեփեր նույնիսկ: Բայց երբ այդ բոլորը միայն քեզ համար ես անելու, չես էլ ուզում շարժվել տեղից:

Տհաճ եղանակ է: Օդը թաց է ասես, շնչել չի լինում:

Թվում էր, թե սրանից էլ լավ օ՞ր: Եվ հանրապետական թերթում, և քո հրատարակած թերթում միաժամանակ տպագրվել են նյութերդ: Ձեր բենեֆիսն է, ասաց Մարո Մելիքյանը: Բայց տրամադրությունը չէր բացվում: Նա ուրախությունը դրսից էր սպասում, «Սովետական Հայաստանի» հետ: Ու թեև ֆելիետոնը տպագրվել էր առանց Կարայանի ձեռքն ընկնելու, ամբողջությամբ, բայց նրա բերած ուրախությունն էլ կարճ տևեց: Երբ կարդաց, վերջացրեց, զգաց, որ ավելի շուտ անհանգստացած է, քան ուրախ: Շատ խիստ էր ստացվել ֆելիետոնը, ավելի խիստ, քան նրան թվում էր: անողոք էր և նույնիսկ թունոտ: Զավենը վաղուց գիտեր այդ: Գիտեր, որ ձեռագիրը և անգամ մեքենագրված նյութը դեռևս այն տպավորությունը չեն թողնում, ինչ տպագրվածը: Տպագրվածը բոլորովին ուրիշ է՝ ազդեցիկ է և խոսուն: Գուցե գաղտնիքը երևույթի, կատարվածի անդարձության փաստի մեջ է: Երբ այլևս ոչ կարող ես ուղղել սխալդ, ոչ փոխել այս կամ այն գնահատականը և ոչ էլ կրճատումներ կատարել: Տպագրված է և վերջ: Ո՞վ գիտե, երևի հենց այդպես է, որովհետև թերթը կարդալուց հետո Զավեն Շարաֆյանը զգաց, որ անհանգստացած, ավելին՝ ահաբեկված է: Մինիստրությունից և ակադեմիայից նա երկյուղ չէր զգում: Տվյալները ճիշտ էին, երիցս ստուգված և ամրապնդված պաշտոնական փաստաթղթերով: Նա վախենում էր Գառնիկ Բադալյանից: Ճիշտ է, ֆելիետոնի մեջ նրա ազգանունը չկար, բայց պարզ գրված էր, որ այն քաղաքում, որտեղ ապրում և աշխատում է գյուտարար Արմեն Զատիկյանը, թերթի խմբագրությունից բացի նրան աջակցող, օգնող, սատար կանգնող ոչ մեկը չկար: Որ նրանք, ովքեր ի պաշտոնե պարտավոր էին ձեռք մեկնել գյուտարարին, հանցագործ անտարբերությամբ մի կողմ են քաշվել՝ թույլ տալով, որ տիտղոսավոր գիտնականներից ոմանք, անձնական շահի ետևից ընկնելով, հալածեն տաղանդավոր մարդուն և պատնեշ քաշեն նրա արժեքավոր հայտնագործությունների ճանապարհին:

Պարզ չէ՞, որ գյուտարարների և ռացիոնալիզատորների քաղաքային խորհրդի նախագահ Գառնիկ Բադալյանը անձնական վիրավորանք է համարելու ֆելիետոնը և դանակ իր թիկունքին:

Թերթի համարը ստանալուց հետո Զավեն Շարաֆյանը ամեն վայրկյան քարտուղարի զանգին էր սպասում: Եվ որքան էլ տարօրինակ թվա, ուզում էր, որ լինի և շուտ լինի այդ զանգը: Ինչ ուզում է թող ասի, թող անի ինչ ուզում է, որովհետև սպասումն ավելի դժվար է ու տանջալից:

Բայց զանգ այդպես էլ չեղավ: Այսինքն եղավ, բայց քարտուղարը ոչինչ չասաց ֆելիետոնի մասին: Գուցե դեռ չէր կարդացել: Նա զանգեց ուղիղ կապի հեռախոսով, և երբ Զավեն Շարաֆյանը, սրտի անկանոն տրոփյունով ու ստամոքսի ներսում ցավ զգալով, վերցրեց լսափողը, ասաց,

- Սառը պատերազմի դեմ նամակներ կազմակերպիր, Զավեն: Եվ թող բանվորները խոսեն:

Սառը պատերազմ: Իսկապես որ նողկալի բան է այդ սառը պատերազմ կոչվածը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավեն Շարաֆյանը գրեթե անկամ քայլերով իր շենքին էր մոտենում, երբ զարմանքով տեսավ, որ առմուտքի ծածկի տակ, քարե կարճ սանդուղքի վերին աստիճանին նստած է Արմեն Զատիկյանը:

-Արմե՞ն,- ուրախությունը չթաքցրեց խմբագիրը:

- Կարդացի, կարդացի,- քմծիծաղ տվեց տարօրինակ մարդը: - Եվ նույնիսկ հիմա վրան նստած եմ:

Զավենը հուսահատ օրորեց գլուխը:

- Ի՞նձ էիր սպասում:

- Քեզ:

Խմբագիրը ձեռքի շարժումով հյուրին հրավիրեց հետևել իրեն, բարձրացավ երկրորդ հարկ ու բացեց սենյակի դուռը:

- Համեցեք, ընկեր գյուտարար:

Զավեն Զատիկյանը ձեռքի լրագիրը ծալելով ներս մտավ, ուշադիր չորս կողմը նայեց ու ժպտաց.

- Ինչպես երևում է Պարոնյանից ու Նար-Դոսից հետո խմբագիրների վիճակը առանձնապես չի փոխվել:

- Յուրաքանչյուր վիճակի մեջ մայրս ասում է՝ էսպես էլ որ մնա, լավ է,- ծիծաղեց Զավենը:

- Ուրեմն քո մայրը ռեալիստ է և իմաստուն,- ասաց Արմեն Զատիկյանը՝ նստելով պատուհանի մոտ դրված աթոռին:

- Արմեն,- ասաց խմբագիրը,-- ես քեզ կարող եմ միայն սուրճ առաջարկել:

- Դա միակ բանն է, որ ես սիրով կընդունեմ,- հայտարարեց գյուտարարը: -- Իսկ սուրճ սարքել գիտես: Ի վերջո խմելը մեզանից սովորեցիք, չէ՞:

- Նախահայրերիս մասին չէի ասի, որովհետև նրանք էլ էին «ձեզանից», իսկ անձամբ ես ձեզանից եմ սովորել: Եվ ոչ միայն սուրճ խմելը:

- Է՞լ ինչ,- իր նողկալի սովորությամբ դարձյալ քմծիծաղ տվեց Զատիկյանը: - Ձեյթուն ուտել, վիստ խաղալ, «Հոս կա, հոս չկա»-յով խաբել, դիմացինին կասկածով նայել, հարգել աշխատանքը…Պարոնյանին հիշեցիր, վերջ տուր այդ կսմիթներին, Արմեն: Եկ լրջանանք: Ինչպես տեսնում ես՝ մեծ կռիվ ենք սկսել: Եկ օգնենք իրար ու գործով ապացուցենք, որ մենք իրավացի ենք:

- Ախր ո՞նց լրջանամ,- հանկարծ հառաչեց Զատիկյանը: - Ախր դու գիտե՞ս ինչ արեցիր: Ախր դա ճիշտ նույնն է, երբ գնդակահարության դատապարտված, բայց հիվանդ մարդուն նախ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

բուժում են ու հետո են գնդակահարում: Դու սպասում ես շնորհակալության, իսկ ես շնորհակալ չեմ քեզ: Արդեն հաշտվել էի իմ վիճակի հետ, չեմ թաքցնի, նույնիսկ ինքնասպան լինելու մասին էի մտածում, ինձ համոզել էի, որ փրկություն չունեմ, որ աշխարհին այսպես եկել է և այսպես էլ գնալու է, որ միջակությունները, ինչպես դարեր շարունակ, ուտելու են տաղանդներին, որ մարդիկ իրենց բարիք ցանկացողներին այրելու են խարույկների վրա, հանելու են տեսնող աչքերը ու աքսոր են ուղարկելու, որ այս երկրում ով գլուխը փորձի բարձրացնել՝ կտրելու են: Որովհետև միակ նպատակն այն է, որ բոլորը՝ խելոք լինի մարդը թե տխմար, աշխատասեր լինի թե անբան՝ հավասար լինեն իրար և հավասարաչափ աղքատ լինեն:

Զավենը սուրճի բաժակը հյուրի առջև դրեց ու ինքն էլ տեղավորվեց նրա դիմաց:

- Չէ, չէ,- հանկարծ կանգ առավ գյուտարարը: - Հավասարության հարցում սխալ եմ: Դա տեղացիներին է վերաբերում, մեզ հետ ոչ մի կապ չունի: Դուք նույնիսկ համաձայն չեք, որ մենք ձեզ հետ հավասար աղքատ լինենք: Ապացույցնե՞ր են պետք: Որքան ուզես: Եղբայր, բացել էք մեր հին տան դռները, հրավիրել եք, եկել ենք: Շատ շնորհակալություն: Բայց ինչո՞ւ մեզ անմիջապես «ախպար» կոչեցիք, անջրպետ ձգեցիք մեր ու ձեր միջև: Ինչո՞ւ մենք հանկարծ դարձանք երկրորդ կարգի քաղաքացիներ: Ինչո՞ւ մեզ զինվորական ծառայության չեն կանչում, ինչո՞ւ մեզ չեն ընդունում կուսակցության շարքերը, նույնիսկ նրանց, ովքեր իրենց երկրներում կոմունիստական կուսակցության ղեկավարներ են եղել: Ինչո՞ւ ղեկավար պաշտոններ չեն տալիս: Բացառություններ կան, իհարկե, հատուկենտ, բայց դրանք ավելի են հաստատում կանոնը: Ինչպես Թումանյանն է ասում՝ ես քեզ օրինակ: Գերազանց գնահատականներով պոլիտեխնիկական ինստիտուտ ընդունվեցի, ուզեցի կոմերիտական դառնամ՝ մերժեցին: Հենց երկրորդ կուրսում, գիտական ընկերության խորհրդում մի զեկուցում կարդացի՝ նվիրված մեխանիկայի զարգացման նորագույն խնդիրներին: Ծափահարեցին և վճռեցին ինձ և էլի մի տղայի Մոսկվա ուղարկել՝ համամիութենական ուսանողական գիտաժողովում ելույթ ունենալու համար: Գնացքի տոմսը գնել էի արդեն, երկաթուղային կայարանից ետ վերադարձրին, երբ մեր ամբողջ ազգը ճանապարհելու էր եկել ինձ: Իսկ այն տղան գնաց: Հետո իմացա՝ ճշմարտությունը, կադրերի բաժնում հանկարծ նկատել էին,որ ծննդավայրս Թավրիզն է: Էլի փաստ ասեմ. այդ նույն անիծյալ Թավրիզի պատճառով մերժեցին ինձ Ստալինյան թոշակ տալ: Մեր ֆակուլտետի բոլոր դասախոսները, դեկանի և ամբիոնի վարիչի ղեկավարությամբ ռեկտորի մոտ էին գնացել: Եվ ռեկտորը ասել էր՝ քաղաքական հոտառություն չունե՞ք, ինչ է, ախպարին Ստալինյան թոշա՞կ կտան: Եվ այդպես հետագայում, սիրելի ընկեր Շարաֆյան, և այդպես անվերջ: Ինձ ուզում էին ամբիոնում պահել, չթողեցին: Այստեղ, տրիկոտաժի ֆաբրիկայում գլխավոր մեխանիկի տեղը թափուր էր և ամբողջ ֆաբրիկայում բարձրագույն կրթությամբ ոչ մի մասնագետ չկար, բայց ինձ շարքային մեխանիկ նշանակեցին, բացեիբաց երեսիս նետելով, որ դա էլ շատ է ժողովրդի թշնամիների զավակի համար: Հա, մոռացա ասել, որ ծնողներս արդեն ժողովրդի թշնամիներ էին…

- Սուրճը սառեց,- կարեկցանքից խեղդվելով, ընդհատեց նրան խմբագիրը:

- Ինչը՞,- զարմացավ Արմենը: - Ախ, հա , սուրճը: Հիմար զուգահեռ է, բայց սուրճն ինչ է, ես սառեցի, ես: Սառեցի ու ցրտահարվեցի, Զավեն: Այնքան էի կորցրել ինձ, որ դիմեցի Արտաքին գործերի մինիստրությանը, թե խնդրում եմ ինձ նորից Թավրիզ ուղարկել: Ծիծաղեցին: Նրանք

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ծիծաղում էին, իսկ ես լաց էի լինում և ասում էի դե դուք ասեք, ի՞նչ անեմ այստեղ, չեք թողնում գնամ, այստեղ էլ չեք թողնում ապրեմ: - Արմեն Զատիկյանը հառաչեց: - Ձեր միակ ստեղծած հավասարությունը և «ախպարների» նկատմամբ միակ վստահությունը ես 1949 թվականին տեսա, երբ տեղացիների հետ հայրենադարձներին էլ աքսորեցին: Դա քո ականջների համար որպես սրբապղծություն կհնչի, բայց դու հո գիտես արդեն, որ ես լկտի եմ: Երբ տեղացիների հետ հայրենադարձներին էլ տարան, դա ինձ հույս ներշնչեց, որ դեռ ամեն ինչ կորած չէ:

- Արմեն ,- ասաց Զավենը,- չգիտեմ՝ լսել ես, թե չէ, բայց շատ մեծ փոփոխություններ են սպասվում: Հենց վերջերս ես երգիծաբան Կամսարյանին տեսա, վերադարձել է աքսորից և նրա նման շատերը: Հավատա, որ շուտով ձերոնք էլ կգան:

Արմեն Զատիկյանի աչքերը միանգամից արցունքակալվեցին:

- Տա աստված, տա աստված,- մրմնջաց նա:

- Հուսանք և անցնենք մեր այսօրվա հոգսին: Ինչի՞ց ես դժգոհ: Ինչ-որ բան այնպես չե՞մ գրել, ինչպես հարկն է: Չեմ թաքցնի, առանց այն էլ ծանր ապրումների մեջ եմ: Ես ամենևին չէի ցանկանա Գառնիկ Բադալյանի նման հզոր մեկին ինձ թշնամի դարձնել: Բայց արդեն քարը նետված է: *

- Գառնիկ Բադալյանն ի՞նչ կապ ունի:

- Ունի,- ասաց Զավենը: - Միթե նա ձեր խորհրդի նախագահը չէ:

- Այո, և միշտ պաշտպանել է ինձ, որքան կարողացել է: Բարոյապես շատ է օգնել: Վերջում նույնիսկ ինձ իր մոտ կանչեց ու մեծ ափսոսանք հայտնեց, որ մինիստրությունը և առանձնապես պրոֆեսոր Միտուշյանը նման անազնիվ դիրք են գրավել: Եվ նույնիսկ կոմբինատ հրավիրեց աշխատելու:

- Նա և պրոֆեսոր Միտուշյանը համակուրսեցիներ են և մտերիմ ընկերներ,- այլևս չկարողացավ թաքցնել խմբագիրը: - Ինձ ասացին, որ նրա շնորհիվ է Բադալյանը Քիմկոմբինատի դիրեկտոր դարձել:

Արմեն Զատիկյանը արագ-արագ թարթեց աչքերը:

- Դու այդ հաստա՞տ գիտես:

- Հաստատ,- ասաց Զավենը: - Եվ դա է, որ ինձ մտատանջում է:

- Եվ իմանալով այդ մասին, գրեցի՞ր ֆելիետոնը:

Խմբագիրը գլխով արեց:

- Ուրեմն պակաս գիժն էլ դու չես,- հանկարծ ձեռքերն իրար խփեց գյուտարարը: -- Ուրեմն միայն ես չեմ գիժը, դու էլ ես: Եվ ինչի՞ համար, տարօրինակ մարդ, ինձ նման մի ախպարի՞ համար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չգիտեմ,- ասաց Զավենը: - Երևի նաև ինձ համար:

Արմեն Զատիկյանը մի ումպով դատարկեց սուրճի գավաթը,վեր կացավ ու քայլեց գրեթե դատարկ սենյակում՝ մի պատից մյուսը: Քայլեց, քայլեց, հետո կանգ առավ ու կարմրած աչքերով նայեց խմբագրին:

- Հիմա առավել ևս շնորհակալ չեմ քեզանից,- ասաց նա: - Իբր թե քիչ էր, որ մտահոգվում էի իմ մասին, հիմա ստիպված քո մասին էլ եմ մտահոգվելու: Եթե Գառնիկ Բաղալյանը մեր դեմ է, ուրեմն կորած ենք: Մենք ինչ կարող ենք անել նրա դեմ, երբ այդ մարդը ինքը մի փոքրիկ Ստալին է: Տեղական Ստալինիկ; Եվ հիմա առավել ևս, ամբողջ իշխանությունը նրա ձեռքին է:

Զավեն Շարաֆյանը լուռ էր:

- Ինչո՞ւ արթնացրիր ինձ,- շարունակեց Արմեն Զատիկյանը: - Ես իմ հաշիվները փակել էի աշխարհի հետ և քնած էի: Քնած էի կամ մեռած, որ համարյա թե նույնն է, Ինչո՞ւ ինձ զուր տեղն արթնացրիր, Զավեն, որ նորից գլուխս ցավի տա՞կ դնեմ: Ես արդեն հաշտվել, խաղաղվել էի: Արդեն ներշնչել էի ինձ, որ ամեն ինչ կորած է, որ ես այլևս անելիք չունեմ, որ աշխարհում չկա մեկը,որին հետաքրքրի այնպիսի մի միջատի ճակատագիրը, ինչպիսին ես եմ: Իսկ դու, միայն դու հերքեցիր դա: Դու ինձ ստիպեցիր կասկածի տակ առնել իմ սարքած ողջ փիլիսոփայությունը: Ստիպեցիր հավատալ, որ աշխարհում դեռևս անշահախնդիր ու կարեկից մարդիկ կան:

Զավենը տխուր ժպտաց:

- Դու ինձ Դոն Քիշոտի տեղ չդնես: Ես լավ գիտեմ, թե ինչ եմ անում: Ըստ որում՝ ինչ արել եմ, քո հին բարեկամ Մկրտիչ Զուլոյանի հետ եմ արել: Եվ իմ արածը բոլորովին էլ մեծ բան չէ: Ոչ միայն դու, այլև քո գյուտն է ափսոս: Եվ քո հետագա գյուտերը, որ ճանապարհին են:

- Եվ քո կարծիքով այսքանից հետո մենք կարող ենք ինչ-որ բանի հասնե՞լ…

- Պիտի հասնենք: Եթե պետք լինի, ես «Պրավդա» էլ կմտնեմ: Իմ դասախոսներից մեկը հիմա այնտեղ բաժին է ղեկավարում: Բայց չգիտես ինչու, ենթադրում եմ, որ հարցն այդտեղ չի հասնի: Ժամանակները փոխվել են, Արմեն:

- Ժամանակները փոխվում են, բայց մարդիկ դժբախտաբար նույնն են մնում,- քմծիծաղ տվեց Զատիկյանը:

Զավեն Շարաֆյանը մտածեց, որ նա իրավացի է:

- Տեսնենք,- ասաց նա ձեռքի թափահարումով իրենից ասես հեռացնելով կասկածն ու երկյուղը: - Թերթում ես եմ աշխատում և զգում եմ, թե ինչպես է կուսակցությունը օրեցօր ավելացնում քննադատական ելույթների պահանջը: Ուշադրություն դարձրե՞լ ես, շաբաթ չկա, որ «Պրավդայում», «Իզվեստիայում» և նրանց օրինակով մեր թերթերում որևէ ֆելիետոն կամ քննադատական սուր հոդված չտպագրվի: Ուրեմն ժամանակներն ուրիշ են: Եվ որքան էլ հզոր լինեն Գառնիկ Բաղալյանն ու դոկտոր Միտուշյանը, «Սովետական Հայաստան» թերթի ֆելիետոնն անպատասխան թողնել չեն կարող:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Տա աստված,- մրմնջաց Արմեն Զատիկյանը, ձեռքը օձիքից ներս տանելով հանկարծ ոսկյա փոքրիկ մի խաչ դուրս հանեց ու համբուրեց այն:

- Եվ այդ խոսքով էլ ուզում էիր կուսակցության մե՞ջ ընդունվել, - հեգնեց խմբագիրը:

- Կոմերիտմիության,- ժպտաց Արմենը,- բայց որ մերժեցին, այլևս չհանեցի խաչս: Մարդ միշտ ինչ-որ բանի պիտի հավատա:

Նա լրջացավ միանգամից և մի պահ ասես հետաքրքրությամբ, ամենայն ուշադրությամբ նայեց խմբագրի մտահոգ դեմքին:

- Մի բան ասեմ՝ չզարմանաս: Գիտե՞ս ինչու եմ այսքան շատախոսում, ինչու եմ կատակով ու լուրջ քո առջև բացում հոգիս: Ոգի եմ առել, եղբայրս Ինչո՞ւ ձևացնեմ՝ քո ֆելիետոնը ոտքի կանգնեցրեց ինձ: Ուզում եմ շարժվել, ուզում եմ վազել, ուզում եմ գործ անել նորից: Ուզում եմ ապացուցել, որ ես ճիշտ եմ եղել և որ իմ հարցում դու չես սխալվել, Զավեն: Որ ես մեր երկրին պետքական մարդ եմ: Ես՝ արդեն հուսահատված մարդս, ասում եմ քեզ՝ դու ինձ փրկեցիր, Զավեն, եղբայր:

- Սրտանց ուրախ եմ,- ժպտաց խմբագիրը: Նա իսկապես իրեն բավարարված էր զգում: - Քո այդ նոր տրամադրությունը հիմա մեզ շատ է պետք:

- Միայն մի բանից եմ վախենում, -հանկարծ շտապով ասաց Արմենը ու մատով երեք անգամ թխկթխկացրեց սեղանին: - սատանի ականջը խուլ:

- Ինչի՞ց:

- Երբեմն պատահում է, որ մարդ աղետից, հրդեհից, խեղդվելուց փրկում է մի ուրիշի, բայց իրեն պահպանել չի կարողանում: Ուժերն այլևս հերիք չեն անում: Երբ թերթում կարդում եմ որևէ մեկի հետմահու պարգևատրելու մասին, երդվում եմ, մղկտում է սիրտս: Զգույշ մնա,պահիր, պահպանիր քեզ, հա՞ , Զավեն, խնդրում եմ:

- Համոզեցիր,- սրտաշարժված ծիծաղեց Զավենը:

* * *

Արեգակը դեռ չէր ծագել, բայց բնակելի թաղամասերից խումբ-խումբ դեպի Արևոտ լեռան առջև ընկած լայն տափարակն էին քայլում քաղաքի բնակիչները: Ուսերին քլունգներ ու բահեր դրած, նրանք գնում էին հիմնադրելու «Խաղաղության ծառուղի Ամբողջ ճանապարհին ուրախ խոսակցություններ էր ու ծիծաղ: Ետևից գնացողները որպես կանոն ծաղրում էին առջևից գնացողներին, նրանց վերաբերյալ զանազան զավեշտական պատմություններ հիշում կամ հորինում, ու մեկ էլ բռնկվում էր քրքիջը:

Ոգևորությունը շատ մեծ էր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավեն Շարաֆյանը, որ խմբագրության աշխատողների հետ կանգնած էր քաղաքից դուրս տանող ճանապարհի եզրին, փոքրիկ բարձրության վրա, ասես ստուգատես էր ընդունում: Անցնող խմբերի միջից կես լուրջ, կես կատակ զեկուցում էին նրան.

- Քիմկոմբինատ, երկու հարյուր հոգի:

- Մեզ չմոռանաք, ընկեր խմբագիր, յուղի-պանրի գործարան, տասնհինգ հոգի և տասնհինգ կիլո պանիր:

- Տրիկոտաժի ֆաբրիկա, վաթսուն հոգի:

- Կենցաղ սպասարկման կոմբինատ, տասը հոգի, բայց ինչ տղերք:

- Առողջարան, հինգ բուժքույր, շտապ օգնության համար:

Աղջիկները չէին կատակում: Նրանք հենց ճերմակ խալաթներով էլ եկել էին:

Թերթի մշակույթի և ինֆորմացիայի բաժնի վարիչ Մարո Մելիքյանը ծոցատետրում գրանցում էր թվերը, իսկ իլյուստրացիայի բաժնի վարիչ և միաժամանակ լուսանկարիչ Քաջիկ Սահառունին ապարատն էր չխկչխկացնում, ամեն անգամ հարկ համարելով արդարանալ խմբագրի առաջ.

- Սուտի-մուտի եմ նկարում, թող ոգևորվեն:

- Օհո ,- բացականչեց Միհրան Գալստյանը, - տեսեք ովքեր են գալիս, ընկեր Շարաֆյան, ձեր հերոսները՝ լրիվ կազմով: Բոլոր դեպքերում զգույշ մնացեր, զինված են:

Զավենը քիչ մնաց փոթկար; Իսկապես մի փոքրիկ խմբի մեջ բահերն ու քլունգները ուսերին, Բերսաբեի գլխավորությամբ անցնում էին Սիմոն Հալաբյանը, Կորյուն Մխեյանը, Սերոբը, Եփրեմ Ծատինյանը: Ըստ որում, ասես թե ոչինչ էլ չէր եղել, բարևեցին բարձրաձայն ու անհամերաշխ: Զավենն այնպես շփոթվեց, որ շրջեց գլուխն ու չպատասխանեց նրանց բարևին: Եվ հանկարծ լսվեց Սիմոն Հալաբյանի ձայնը:

- Բա եղա՞վ, ընկեր Շարաֆյան, համ մեր հերն անիծում ես, համ չե՞ս բարևում:

Բոլորը ծիծաղեցի և կարծես թե անչար էր նրանց ծիծաղը:

- Ուրեմն դրանք շուկայում էլի միասին են,- զարմացած հարցրեց Մարոն,- բա չե՞ն պատժվել:

- Հո չէին կախելու,- պատասխանեց Նիկողայոս Սևյանը: - Քի՞չ բան է, որ միլիցիայի կապիտանը հիմա շուկայի սովորական հսկիչ է:

- Ոնց որ մարդուն քաղկոմից խմբագրություն իջեցնեն, -չդիմացավ, Մարոյի ականջին փսփսաց Քաջիկը:

- Շուկայի ,- քմծիծաղ տվեց Միհրան Գալստյանը: - Նրանց որ սպանես՝ շուկայից դուրս չեն գա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Այդպես էլ եղավ,- ծիծաղեց խմբագիրը,- մի քանի ամիս պարապ մնացին, բայց էլի մեկիկ-մեկիկ վերադարձան շուկա: Պատկերացնո՞ւմ եք, խորտկարանի վարիչ Կորյուն Մխեյանը համաձայնվեց, որ իրեն տեղում բանվոր պահեն, քան թե փոխադրեն. այլ աշխատանքի:

Քաղաքից անընդհատ մարտական նոր խմբեր էին հայտնվում և բեռնատարներ, որոնց թափքերը բերնեբերան լիքն էին տնկիներով:

- Բոցավառ ողջույն մամուլի փառապանծ աշխատողներին, - հանկարծ լսվեց խմբերից մեկի միջից, և Զավենը քիչ մնաց չհավատար աչքերին ու ականջներին:

Լոզունգի հեղինակը Գյուղտեխնիկումի դիրեկտոր Կայծակ Չոփուրյանն էր:

- Ուռռա,- ձեռքը թափահարելով ուրախ ողջունեց նա:

Եվ տեխնիկումի սովորողները բազմաձայն աղաղակով արձագանքեցին նրան:

Իսկ քիչ անց հսկայական հարթության վրա ծայր առան աշխատանքները: Շաբաթօրյակի մասնակիցները հողը մաքրում էին քարերից ու մացառներից, պատգարակներով տանում ու լցնում ձորը և խստորեն, ըստ քաղաքի չգիտես ինչու գլխավոր կոչվող, բայց միակ դենդրոլոգ Վահրամ Մոկացյանի խփած փայտե նիշերի, փոսեր փորում ծառատունկի համար:

Մարոն աշխատում էր թղթին հանձնել առաջին տպավորությունը, նոր բառեր ու խոսքեր գտնել մարդկանց միասնական խանդավառ աշխատանքը նկարագրելու համար, բայց սովոր ձեռքը կրկին նույն նախադասություններն էր կազմում, «Իսկական սոցիալիստական մրցություն է ծավալվել Արևոտ լեռան լանջին: Ոգևորված քաղաքի հետագա զարգացման ու բարգավաճման հեռանկարային ծրագրով, ըստ քաղաքի գլխավոր հատակագծի, որի հեղինակը գլխավոր ճարտարապետ, բազմափորձ և բազմավաստակ շինարար և անխոնջ երախտավոր Խոսրով Նշանյանն է, քաղաքի աշխատավորներն այսօր աշնանային շաբաթօրյակի են դուրս եկել՝ ապագա հանգստի հեքիաթային գոտու հիմքը դնելու համար»:

Մինչ նա գրում էր, բազմափորձ և բազմավաստակ Խոսրով Նշանյանը, վանեցի Եփրեմի ուղեկցությամբ, տեսչական ուղևորություն էր կատարում շաբաթօրյակի տեղամասերում և ամենուրեք դիտողությունների հեղեղ տեղում:

- Սիրո՞ւն տղա,- ասում էր նա մեկին: - Այս քարերը, որ թափում ես այստեղ, հետո ստիպված ես լինելու վերցնել ու ձորը թափել: Միանգամից ձորը թափիր, էլի, հոգիս:

- Այս փոսի մեջ ծառ կբռնի՞, սիրուն տղա,- դառնում էր մյուսին: - Խոր փորիր, խոր…Արմատներին շնչելու տեղ տուր: Եփրեմ, բարեկամս, օրինակ ծառայիր, վերցրու բահը:

Վանեցի Եփրեմը, որ արդեն հազիվ էր ոտքերը քարշ տալիս, քրթմնջում էր քթի տակ:

- Եղբայր, ծառերի հետ մենք ի՞նչ գործ ունենք: Ծառեր մեր բնագավառ չեն: Շուն-շան որդի Մոկացյան ինչո՞վ կզբաղվի: Օրինակ թող նա ցույց տա:

Որին քաղաքի գլխավոր ճարտարապետը առարկում էր խստորեն.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Սրանք սովորական ծառեր չեն, Եփրեմ, սրանք կանաչ հուշարձաններ են, քաղաքի ճարտարապետական համույթի մասն են կազմելու: Երանի մեր թոռներին, որ քայլելու են այս ծառուղիով և խաղալու են այս այգում:

Բայց վանեցի Եփրեմը շարունակում էր փնթփնթալ, ձայնն իհարկե իջեցնելով,

- Ամեն խաղ խաղացինք, մնաց սարի սմբուլ…

Թե ինչ էր նշանակում այդ ասացվածքը՝ իր նախնական իմաստով, ինչո՞ւ հատկապես սարի սմբուլ, վանեցի Եփրեմը չգիտեր: Խոսքը նրան այդ ձևով էր հասել, և նա զգում էր, որ դա լիովին համապատասխանում է իր տրամադրությանը:

Կեսօրին մոտ իր «Պոբեդայով» շաբաթօրյակի վայրում հայտնվեց քաղխորհրդի գործկոմի նոր նախագահ Սահակ Միրզոյանը:

- Հանկարծ որևէ ծառ չտնկեք, առաջին ծառը ընկեր Բադալյանն է տնկելու,- զգուշացրեց նա: - Հիմա ուր որ է կգա:

Նրա ավտոմեքենան իսկույն շրջապատվեց:

- Ընկեր Միրզոյան, բա ի՞նչ ենք ուտելու:

- Տեսնո՞ւմ եք ինչ գործ ենք անում: Բա արժանի չե՞նք խորովածի:

Սահակ Միրզոյանը երջանիկ էր իր «Պոբեդայի» մեջ:

- Զարմանալի մարդիկ եք,- ասաց նա: - Ես ձեր փոքրիկ աշխատանքը տեսնում եմ, իսկ դուք իմ մեծ ծուխը չեք տեսնում: Թե կարծում եք մառախուղ է:

Նրա հայացքի ուղղությամբ շաբաթօրյակի մասնակիցները վեր նայեցին և տեսան, որ իրոք անտառի փեշին մի քանի տեղ ծուխ է բարձրանում:

- Քսանհինգ ոչխար մատաղ եմ արել ձեզ,- տիրոջ գոհունակությամբ ժպտաց նախագահը: - Խաշլաման կրակի վրա, իսկ խորովածն էլ կդնեն հենց որ տեղ հասնեք: Քաղաքի լավագույն խոհարարները ձեր տրամադրության տակ են, ընկերներ:

- Բա էն բանից- էն ոնց են ասում, է, առյուծի կաթից, -դիմացինի թիկունքում թաքնվելով ձայն տվեց մի պատանի:

- Էն բանից էլ կա: Ամեն ինչ կա: Դուք գործ արեք, գործ, - ծիծաղեց Միրզոյանը:

Բայց նրա կոչն ավելորդ էր: Իրոք որ խանդավառությամբ էին աշխատում շաբաթօրյակի մասնակիցները: Ոչ ոք չէր փորձում գլուխ պահել, ոչ ոք չէր խուսափում ծանր աշխատանքից: Հենց տեսնում էին, որ մի տեղ նեղն են ընկել մարդիկ, առանց հաշվի առնելու իրենցն է այդ տեղամասը, թե չէ, օգնության էին հասնում՝ իհարկե հետն էլ ծաղրելով ու ծիծաղելով:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավեն Շարաֆյանը հիշեց, թե ինչպես ուսանողներով մի քանի օրում մշակեցին ու ծառապատեցին Երևանի Ծիծեռնակաբերդ կոչվող բլուրը: Սոսկալի ամայի, անապատ վայր էր՝ փշերով ու տատասկներով պատված: Ուսանողների ոտքերի տակ վխտում էին թունավոր մորմերը, կարիճներն ու օձերը: Բայց ոչ մեկի պետքը չէր: Սատկացնում էին զեռուններին ու փխրեցնում հողը: Իսկ հետո դարավանդ առ դարավանդ ծառեր տնկեցին: Երբ խորհրդակցության էր գնացել Երևան, Զավենը Մկրտիչ Զուլոյանի հետ բարձրացավ Ծիծեռնակաբերդ: Զգվում, հասակ էր առնում անտառը: Մարդ քիչ էր մնում աչքերին չհավատար, թե դա իր իմացած նախկին Ծիծեռնակաբերդն է:

Եվ այնտեղ՝ Ծիծեռնակաբերդում և այստեղ Արևոտ լեռան լանջին, տեսնելով մարդկանց եռանդագին, քրտնաջան, խանդավառ աշխատանքը, Զավեն Շարաֆյանը նախապես մտածում էր, թե ինչն է գաղտնիքը, որ մարդիկ շաբաթօրյակ կոչվող հոգնեցուցիչ ու անվճար աշխատանքը շատ ավելի սիրով ու ոգևորությամբ են կատարում, քան նույնիսկ իրենց ամենօրյա վճարովի գործը: Եվ եկավ այն եզրակացության, որ պատճառները մի քանիսն են: Նախ՝ մարդիկ իրենց սրտի կամքով են աշխատում, նրանց ստիպող, հարկադրող չկա: Հետո այն, որ իրենց աշխատանքի արդյունքը տեսնում են հենց նույն օրը և գիտեն, որ իրենց քաղաքի,

իրենց տան, իրենց երեխաների համար են անում: Դա սոսկ աշխատանք չէ արդեն, այլ տոն է: Եվ ամենակարևորը՝ արյան հիշողությունը: Դեռ հնագույն ժամանակներից, երբ մարդիկ միասին, գեղովի են եղել, ավելի ապահով ու հզոր են զգացել իրենց և ավելի ինքնավստահ: Այդպես միասին էլ նրանք հեղափոխություն են արել և բահի, քլունգի փոխարեն զենք բռնած, պաշտպանել այդ հեղափոխությունը: Այդպես միասին էլ բանդիտներից պահպանել են իրենց առաջին ցանքերը, առաջին դեզերը, առաջին հացը, առաջին տրակտորը: Այդպես միասին էլ տոն օրերին հերթապահել են հիմնարկներում ու ձեռնարկություններում, որպեսզի հանկարծ թշնամին չպայթեցնի կամ չգրավի այդ շենքը: Եվ նույնիսկ աբսուրդի են հասել այդ հարցում: Այնքան են սովորել այդ տիպի հերթապահություններին, որ նաև այսօր, երբ ոչ մի վտանգ չկա և անգամ ծիծաղելի է անզեն մարդկանց հերթապահությունը, դարձյալ գիշերում են հիմնարկներում ու ձեռնարկություններում, չորս ժամը մեկ փոխարինելով իրար, մեռնելով ձանձրույթից: Այդպես էլ արյան մեջ մնացել է կոլեկտիվ աշխատանքի, կոլեկտիվ պաշտպանության, կոլեկտիվ զոհվելու գաղափարը: Մնացել իբրև բնազդ:

Քաղկոմի առաջին քարտուղարը հրաշալի գիտեր, թե երբ պետք է հայտնվի: Հսկա տարածության վրա հողային աշխատանքները հենց նոր էին ավարտվել, երբ երևաց նրա «Պոբեդան»: Ավտոմեքենան, ընթացքը դանդաղեցնելով, մի պտույտ գործեց տափարակում, իսկ երբ կանգ առավ՝ մանր ու մեծ կազմակերպությունների ղեկավարները միանգամից շրջապատեցին այն:

Գառնիկ Բադալյանը դուրս եկավ ավտոմեքենայից և մեկ առ մեկ սեղմեց առաջին շարքում գտնվողների ձեռքերը: Հետո դարձավ գործկոմի նախագահին.

- Սահակ Միրզոյիչ, ինչպե՞ս ես գնահատում տղաների աշխատանքը:

- Ես գոհ եմ,- մի պահ շփոթվեց Միրզոյանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դե որ դու գոհ ես, ես այլևս ասելու ոչինչ չունեմ,- ժպտաց քարտուղարը:

Այս ու այն կողմից առարկեցին.

- Չէ, չէ, Գառնիկ Վարդանիչ, մենք ձեր խոսքին ենք սպասում:

Գառնիկ Բադալյանը ձեռքը դրեց քաղաքի գլխավոր ճարտարապետի ուսին:

- Դո՞ւք ինչ կարծիքի եք, Խոսրով Պապիկիչ:

Ճարտարապետը կարմրեց երեխայի նման:

- Նախ՝ գործ, հետո՝ խոսք, Գառնիկ Վարդանիչ, - ասաց նա: - Մենք ձեզ էինք սպասում, որովհետև այս զբոսայգու գաղափարը ձերն է և դուք պետք է տնկեք «Խաղաղության ծառուղու» առաջին ծառը և որպես հեղինակ, և որպես մեր հրամանատար:

Բոլորը միահամուռ ծափահարեցին:

- Եփրեմ,- ձայն տվեց ճարտարապետը:

Գործողությունը հաստատ բեմադրված էր, որովհետև անմիջապես հայտնվեց Եփրեմը՝ ընկուզենու մի առողջ տունկ ձեռքին: Խոսրով Նշանյանը օգնականի ձեռքից վերցրեց ու ակնածանքով քարտուղարին մեկնեց տնկին՝ շրջվելով ու ցույց տալով այն փոսը, որտեղ ծառուղու առաջին ընկուզենին էր բարձրանալու: Գառնիկ Բադալյանը մոտեցավ փոսի պռնկին, կռացավ, նախ մի քանի բուռ հող նետեց փոսի մեջ, հետո զգուշորեն ցած իջեցրեց ընկուզենու արմատները:

- Հողը ես կլցնեմ, Գառնիկ Վարդանիչ,- բահը ձեռքին առաջ եկավ գլխավոր դենդրոլոգ Վահրամ Մոկացյանը:

Բայց քարտուղարը ներկաների սպասողական հայացքների տակ հրաժարվեց օգնությունից:

- Իմ ծառը ես պետք է տնկեմ:

Նա վերցրեց բահը և հենց այդ պահին էլ Զավեն Շարաֆյանը բացականչեց.

- Քաջիկ, լավ կադր է:

Գառնիկ Բադալյանը բարձրացրեց գլուխը, ժպտալով նայեց խմբագրին, և հենց այդ ակնթարթին էլ չխկաց Քաջիկ Սահառունու լուսանկարչական սարքը:

Եվ այդ վայրկյանին, և հաջորդ օրը արդեն լուսանկարում դիտելով Գառնիկ Բադալյանի բարյացակամ ժպտացող դեմքը, որ անկասկած խմբագրին էր ուղղված, Զավեն Շարաֆյանը կրկին ու կրկին հարցնում էր իրեն, թե նախքան այդ քարտուղարը կարդացե՞լ էր արդյոք «Սովետական Հայաստանում» տպագրված ֆելիետոնը: Եթե կարդացել էր, ապա ինչի՞ն վերագրել այդ ժպիտը: Ինչի՞ն վերագրել նաև այն, որ քիչ ավելի ուշ, խնջույքի ժամանակ, շնորհակալություն հայտնելով բոլոր նրանց, ովքեր շաբաթօրյակի նախաձեռնողներն են եղել,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

առաջին քարտուղարը չմոռացավ հատկապես նշել «Լուսաբացի» խմբագրության ակտիվ, նպատակասլաց ու բարեխիղճ աշխատանքը: Եվ ավելին, ամենազարմանալին.”Եկեք խոստովանենք,- ասաց նա,- որ Զավեն Շարաֆյանի խմբագիր դառնալուց հետո թերթը լենինյան փայլուն ձևակերպումով՝ դարձել է կոլեկտիվ ագիտատոր, կոլեկտիվ պրոպագանդիստ և կոլեկտիվ կազմակերպիչ: «Լուսաբացը» այսօր մեր քաղաքի դրոշն է, ընկերներ»:

Սահակ Միրզոյանը, նախագահ դառնալուց հետո անգամ, չէր կարողանում մոռանալ Մկրտիչ Զուլոյանին և նրա ֆելիետոնը այդ նույն «Լուսաբացում», երբ ինքը դեռ յուղի-պանրի գործարանի դիրեկտորն էր: Պատճառն այդ էր երևի, և գուցե նաև այն, որ շատ էր խմել, բայց չդիմացավ, թափ տվեց ձեռքն ու ընդհատեց քարտուղարին.

- Դե լավ, էլի, Գառնիկ Վարդանիչ, թերթս ո՞րն է: Ուր մենք չաշխատենք դրանք ի՞նչ պետք է գրեն: Խոսքս Զավենի մասին չէ,- ասաց նա, յուղոտ ձեռքը իբրև բարեկամության նշան խմբագրին մեկնելով,- Զավենը լավ տղա է, խոսքս ընդհանրապես թերթի մասին է, ընդհանրապես: Հենց թեկուզ, օրինակ, այս շաբաթօրյակը: Գործն ո՞վ արեց: Մենք: Առաջին ծառն ո՞վ տնկեց՝ դուք, մեր սիրելի ընկեր Բադալյան: Եվ ես կարծում եմ, որ թերթում ձեր լուսանկարը պետք է տպագրվի՝ ծառ տնկվելու ժամանակ:

Գառնիկ Բադալյանը ժպտաց ու իրարից հեռացան նրա փոքրիկ բեղիկները:

- Իսկ գուցե քո լուսանկարը տպագրենք: Դու ավելի մեծ արժանիքներ ունես, ընկեր Միրզոյան: Ի վերջո, որքան ինձ հայտնի է, բոլորն էլ տեղյակ են արդեն, որ հանգստի գոտու և այդ թվում «Խաղաղության ծառուղու» կառուցապատման միջոցները քաղաքը անձամբ քո միջոցով է ձեռք բերել գորգագործական կոմբինատի շինարարության հաշվին: Ճիշտ չէ՞:

- Իրար հետ, իրար հետ,- հարբած ծիծաղեց նախագահը,- մենք ինչ անում ենք, իրար հետ ենք անում,- ավելացրեց նա՝ իջեցնելով ձայնը, որից նրա խոսքը բավականին երկիմաստ դարձավ:

Զավեն Շարաֆյանին թվում էր, թե հիմա ուր որ է Գառնիկ Բադալյանը կզայրանա, գուցե թե նույնիսկ կկոպտի նախագահին, բայց նա ժպտաց միայն: Ժպտաց այնքան սրտանց, այնքան բարեկամաբար, այնքան ներողամիտ ,որ Զավեն Շարաֆյանը հասկացավ անմիջապես՝ չէ, այդ ժպիտը էժան չի նստելու Սահակ Միրզոյանի վրա:

* * *

Նա տուն եկավ բավականին ուշ, շաբաթօրյակի մթնոլորտից, գովասանքներից և խմիչքից քիչ արբած, հանեց անձրևանոցն ու լայնեզր գլխարկը, քանդեց փողկապը ու ձեռքը հեռախոսին տարավ: Հետո անմիջապես ետ քաշեց ձեռքը, բարձրացավ ու սկսեց քայլել սենյակում: Մոտեցավ լուսամուտին, նայեց մթությանը, հետո մյուս կողմի լուսամուտին մոտեցավ ու այս անգամ դիմացի շենքին նայեց: Բոլոր պատուհանները լուսավորված էին: Վարագույրներ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

գրեթե չկային: Եթե քիչ լարեր ուշադրությունը՝ կարող էր տեսնել, թե ինչ է կատարվում յուրաքանչյուր տան մեջ: Բայց նա ուրիշի պատուհաններից ներս նայել չէր սիրում: Եվ որովհետև չէր լարում ուշադրությունը, միայն ստվերներ էր տեսնում, որոնք շարժվում էին, մոտենում իրար, հեռանում էին և նորից մոտենում: Եվ ոչ ոք կարծես թե մենակ չէր:

Զավեն Շարաֆյանը հառաչեց, մոտ քաշեց հեռախոսի սարքը և արագ-արագ պտտեցրեց սկավառակը:

- Լսում եմ,- լսեց նա Ալվարդի ձայնը, և շունչը բռնվեց:

- Լսում եմ,--նորից կրկնեց Ալվարդը:

- Բարև, Ալվարդ,- կամացուկ ասաց տղան:

Հեռախոսի մյուս ծայրում լռություն տիրեց:

Ես եմ, Ալվարդ, Զավենը -Ո՞նց ես…

Ոչ մի պատասխան:

- Ես մենակ եմ, Ալվարդ,- հուսահատ շշնջաց Զավենը, - ես շատ-շատ մենակ եմ:

Նա սպասեց պատասխանի, բայց պատասխան չկար:

- Ես կարոտել եմ քեզ: Ինչու ձայն չես հանում: Ես քեզ ի՞նչ եմ արել, որ այդպես պատժում ես ինձ: Ալվարդ, Ալվարդ, խոսիր հա՞, գոնե որևէ բան ասա: Ինչ ուզում ես, միայն թե խոսիր… Լավ, լավ, մի խոսիր, միայն մի բառ ասա՝ գա՞մ…Գա՞մ…

Հետո նա էլի մի պահ կանգնած էր՝ լսափողը ականջին սեղմած, որի միջից անջատման ազդանշաններ էին լսվում:

Երբեք չես իմանա, թե որտեղից է գալիս օրհասը: Եվ դա է պատճառը, որ մարդիկ ավելի հաճախ պատժվում են չարածի, քան թե արածի համար: Որովհետև երբ որևէ մեղք ես գործում, գիտես, որ մեղք ես գործել և գիտակցաբար թե ակամա ամեն կերպ աշխատում ես ապահովել, ապահովագրել քեզ: Մանրամասն վերլուծում, հաշվում ես, թե որտեղից կարող է ծագել վտանգը, ինչ հարցեր կարող են առաջանալ, ինչ ենթադրյալ փաստեր կարող են ունենալ հակառակորդներդ, և մեկիկ-մեկիկ կանխում ես դրանք, նախապատրաստվում պաշտպանության, հակահարձակման կամ նահանջի: Մի խոսքով, քեզ անակնկալի բերել չեն կարող: Իսկ երբ քո կարծիքով անմեղ ու ազնիվ բան է արածդ, ուրիշի հրաման ես կատարել, այդ արարքը գործելիս ելել ես միայն և միայն պետության շահերից, մեծահոգությունից ու բարությունից և մտքովդ էլ չի անցնում, թե դա կարող են այլ կերպ ընկալել, ուրեմն զգուշացիր: Վտանգը հենց այդտեղ է: Դու մեղավոր չես, նախապատրաստված չես և հենց այդ պատճառով էլ բոլորովին դժվար չէ քեզ հանկարծակիի բերելը և մեղավոր համարելը:

Սա տարրական ճշմարտություն է: Բոլորն էլ գիտեն այդ: Բայց այնուամենայնիվ ոչ մեկն ապահովագրված չէ անակնկալ վտանգից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ապահովված չէր նաև Զավեն Շարաֆյանը:

Երբ նա քարտուղարուհու կանչով քաղկոմի առաջին քարտուղարի առանձնասենյակը մտավ և տեսավ, որ թեև բյուրոյի օր չէ, բայց բյուրոյի գրեթե բոլոր անդամներն էլ ներկա են- Ու տեսավ նաև, որ Գառնիկ Բադալյանի կողքին նստած է անկասկած վերևից եկած անծանոթ մի մարդ, անմիջապես մտածեց, թե խոսքը վերաբերում է «Սովետական Հայաստան» թերթի ֆելիետոնին: Տհաճ էր, իհարկե: Նման պահերը ժուռնալիստի համար միշտ էլ տհաճ են: Բայց Զավեն Շարաֆյանը գիտեր, որ լինելու է այդ, սպասում էր այդ հանդիպմանը և վստահ էր, որ կարող է պատասխանել ուզածդ հարցին: Նախապատրաստված էր:

- Նստիր,- ասաց նրան Գառնիկ Բադալյանը և դարձավ անծանոթին: - Ահա մեր խմբագիրը: - Նա կրկին սևեռուն, ասես զգուշացնող, դավադիր հայացքով նայեց խմբագրին ու շարունակեց: - Ընկերներ, մեզ մոտ է գտնվում Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտկոմի տրանսպորտի և կապի բաժնի վարիչ ընկեր Արիս Մուրադովը: Նա մեզ ասելիք ունի:

Կենտկոմի բաժնի վարիչը զարմանալիորեն կարողանում էր չնայել ոչ ոքի: Նրա ամբողջ ուշադրությունը սևեռված էր սեղանին դրված իր մատներին, ավելի ճիշտ՝ եղունգներին, որոնք խնամքով մշակված էին: Նա չափազանց ուշադիր նայեց իր եղունգներին և ասաց կամացուկ, ռուսերեն, թբիլիսահայի առոգանությամբ.

- Ընկերներ, ինձ ձեր քաղաքն է բերել մի արտակարգ պատահար: Մի աննախադեպ երևույթ… Բոլորին էլ հայտնի է, որ մամուլը մեծ ուժ է, որ մամուլը կուսակցության հատու զենքն է…

Բայց ի՞նչ կապ ունի տրանսպորտի բաժինը տեքստիլ արդյունաբերության և ակադեմիայի հետ, զարմացած մտածում էր Զավեն Շարաֆյանը: Եվ ինչո՞ւ է այս ընկեր Արիս Մուրադովը այստեղ հասել և ոչ թե մտել «Սովետական Հայաստանի» խմբագրություն:

- Բայց եկեք չմոռանանք, որ այնուամենայնիվ զենք է և որպես այդպիսին հարկավոր է զգույշ վարվել այդ զենքի հետ: Այդ զենքը պետք է վստահել միայն աչալուրջ և սթափ մարդկանց: Այդ է մեր կարծիքը: Այլապես բացառված չեն կամայականությունները, քննադատության քողի տակ անձնական հաշիվներ մաքրելու նկրտումները, հաշվեհարդար տեսնելը անցանկալի մարդկանց նկատմամբ, քաղաքական երկերեսանությունը: Ճիշտ այդպիսի արտառոց մի փաստ է ձեր քաղաքային թերթի ելույթը հանրապետության Կապի մինիստր ընկեր Պարսամյանցի դեմ- Ժուռնալիստական էթիկայի մասին ես չեմ խոսում՝ այն բացահայտ ոտնահարված է: Ես խոսում եմ իրավունքի մասին: Ո՞վ է ձեզ իրավունք տվել քննադատելու Կենտրոնական Կոմիտեի անդամին և Խորհրդային Միության Գերագույն Խորհրդի դեպուտատին: Ես չեմ սխալվի, եթե ասեմ, որ սա առաջին դեպքն է մեր երկրում: Առաջին և միակ դեպքը: Դուք երբևէ տեսե՞լ եք, որ նման նյութեր տպագրեն կենտրոնական օրգանները՝ «Կոմունիստը» և «Սովետական Հայաստանը»: Ուրեմն սա ի՞նչ սանձարձակություն է և ի՞նչ նպատակ ունի…

- Ոչ ոք քննադատությունից դուրս չէ,- իրեն կորցրած բացականչեց Զավեն Շարաֆյանը:

Կենտկոմի բաժնի վարիչը հայացքը դժկամությամբ կտրեց իր եղունգներից և խմբագրին նայեց զարմացած.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դե եթե դուրս չէ, դիմացեք, ընկեր, ես էլ հենց քննադատում եմ…

Առանձնասենյակում հավաքվածները միահամուռ քրքջացին՝ շողոքորթ աչքերը Մուրադովին հառած:

Այդ ամբողջ ընթացքում Զավեն Շարաֆյանը անընդհատ փորձում էր որսալ Գառնիկ Բադալյանի հայացքը: Բայց դա նրան չէր հաջողվում: Ինչո՞ւ է լռել, մի՞թե նախքան մարդկանց հավաքելը, չէր կարող Կենտկոմի բաժնի վարիչին ասել, որ ինքն է կարգադրել տպագրելու «Բաց նամակը», օգտվել առիթից և նրա առջև դնել մինիստրի խուսապրություններով լի թղթապանակը: Տարօրինակ մարդ է:

- Առավել ցավալի է, որ կամայական հարձակման թիրախ է դարձել մեր լավագույն մինիստրներից մեկը, պետական այն գործիչը, որի ղեկավարությամբ մինիստրությունը հինգ անգամ արժանացել է ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի փոխանցիկ կարմիր դրոշին,- շարունակում էր Արիս Մարադովը: - Մի մարդ, որի անվան հետ են առնչվում Հայաստանում կապի զարգացման վերջին տարիների աննախընթաց նվաճումները: Մի մինիստր, որ անցյալ երեք տարիների ընթացքում Սովետական Միության Գերագույն Խորհրդի կողմից արժանացել է աշխատանքային բարձրագույն պարգևների՝ Կարմիր դրոշի և Լենինի շքանշանների: Առնվազն տարօրինակ չէ՞, որ «Բաց նամակի» հեղինակի՝ գոյություն չունեցող թերություններ փնտրող աչքը չի նկատել այդ հրամանագրերը:

Զավեն Շարաֆյանին, սակայն, այնքան նրա խոսքերը չզարմացրին, որքան քաղխորհրդի նախագահ Սահակ Միրզոյանի ռեպլիկը:

- Հա, բայց փաստն այն է, որ յոթ տարի է, ինչ մեր կապի հանգույցի շինարարությունը չի սկսվում: Բա դա ի՞նչ է…

- Չի սկսվում մեր կարգադրությամբ, ընկեր,- ասաց Արիս Մուրադովը: - Կենտկոմը կարգադրել է մինիստրության կապիտալ շինարարության բոլոր միջոցները տրամադրել մայրաքաղաքի կապի նոր շենքի կառուցմանը…

- Հա, դե դա բոլորովին ուրիշ բան է,- իր համարձակությունից արդեն վախեցած, անմիջապես ետ կանգնեց Միրզոյանը և բավարարված թափահարեց գլուխը: - Ուրեմն այդքանը չե՞նք հասկանում:

- Որքան էլ զարմանալի լինի, ոմանք դեռ չեն հասկանում,- կրկին իր եղունգների ուսումնասիրությանն անցավ Կենտկոմի բաժնի վարիչը: - Այլապես չէր ծնվի մեր խորին համոզմամբ քաղաքական կարճատեսության և գավառական սնապարծության տիպիկ օրինակ հանդիսացող «Բաց նամակը», որը տպագրվել է ձեր թերթում: Վերջացնենք: Մենք գտնում ենք, որ թերթը հրապարակավ պարտավոր է ուղղել իր սխալը: Երկրորդ՝ պետք է խիստ պատիժ կրի թերթի խմբագիրը և այդ պասկվիլի հեղինակը, որը նույն անձնավորությունն է: Ես վեր չեմ բարձրանում, որովհետև համոզված եմ, որ քաղկոմը և քաղխորհրդի ղեկավարները տեղեկություն չեն ունեցել այդ մասին:

- Ես չեմ իմացել, ախպեր,- ձեռքերը վեր բարձրացրեց Սահակ Միրզոյանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավենն ակամա առաջ թեքվեց, որպեսզի Գառնիկ Բադալյանը. տեսնի նրան: Բայց քարտուղարը գլուխը խոնարհած ինչ-որ խազեր էր գծում թղթի վրա:

- Ուրիշ կարծիքներ կա՞ն,- հարցրեց Արիս Մուրադովը:

- Ես եմ ուզում խոսել,- գլուխը ծածանեց և վարսերը ուսերին փռեց Գրետա Սուրենյանը: - Ընկեր Մուրադով, դուք իրավացի եք, ոչ քաղխորհուրդը և ոչ էլ քաղկոմը տեղեկություն չեն ունեցել այդ հրապարակման մասին: Ես շատ զարմացա, տեսնելով «Բաց նամակը»: Մի պահ նույնիսկ ինձ թվաց, թե դա ՀՀԳ-ի նյութ է, որովհետև տպագրված էր անստորագիր: Եվ ես այստեղ հարց եմ ուզում տալ մեր երիտասարդ խմբագրին. նախ ո՞վ էր ձեզ թույլ տվել տպագրելու այդ հոդվածը և վարկաբեկելու մեր հանրապետության ամենախոշոր գործիչներից մեկին, որը ձեր տարիքի չափ կուսակցական և պետական աշխատանքի փորձ ու վաստակ ունի: Եվ ապա եթե այդքան քաջ էիք, ինչո՞ւ չեք դրել ձեր ստորագրությունը, այլ գերադասել եք թաքնվել խմբագրական հոդվածի տակ:

Կենտկոմի բաժնի վարիչը՝ իր եղունգներից գոհ, գլխով էր անում շարունակ, և Գրետա Սուրենյանը ավելի ոգևորվեց.

-Հետևելով մեր խմբագրի գործունեությանը, ես համոզված էի, որ նա մեզ մի օր կանգնեցնելու է տխուր փաստի առաջ: Մենք կոմունիստներ ենք և պարտավոր ենք իրերը կոչել իրենց անունով: Զավեն Շարաֆյանը երևի թե շնորհալի ժուռնալիստ է, բայց շատ մեծամիտ է, ընկերներ, նրա համար ոչ մի հեղինակություն գոյություն չունի: Այսքան ժամանակ աշխատում ենք միասին, բայց դեռ չի եղել մի դեպք, որ նա որևէ խորհրդով դիմի ինձ, ասի՝ Գրետա Հակոբովնա, իսկ դուք ի՞նչ կարծիքի եք:

Զավեն Շարաֆյանը, դժբախտաբար, միշտ չէր, որ տեղին էր օգտագործում իր հոր հարազատ որդին լինելու հանգամանքը: Նա հանկարծ ծիծաղեց,

- Հիմա դուք ձեր մասին ի՞նչ կարծիքի եք, Գրետա Հակոբովնա…

- Ընկեր Շարաֆյան,- սաստեց Գառնիկ Բադալյանը:

- Տեսաք,- ձեռքերը իրար խփեց քաղկոմի երկրորդ քարտուղարը: - Համոզվեցի՞ք, որ նա անզուսպ և մեծամիտ անձնավորություն է: Այսինքն բավական է միայն կարդալ «Բաց նամակը»: Այդ հրապարակումը պատահականություն չէ: Նա սենսացիաների սիրահար է և սուտ ժողովրդականություն վայելելու, ժողովրդի էժան հեղինակություն ձեռք բերելու համար պատրաստ է ամեն ինչի: Ուշադրություն դարձրե՞լ եք, նա ֆելիետոններ միայն ղեկավար մարդկանց դեմ է գրում: Նրա ձեռքերը քոր են գալիս պաշտոնատար մարդկանց վարկաբեկելու համար: Եվ տեսեք ուր հասավ. քաղաքի կադրերն այլևս չեն բավարարում նրան. իր տեղական փոքրիկ թերթում նա հանրապետության մինիստրին է մշակում- Ես կարծում եմ, որ Զավեն Շարաֆյանն արդեն իր ստորագրությամբ, թերթում պետք է ներողություն խնդրի ընկեր Պարսամյանցից և որպեսզի նման դեպքեր այլևս չկրկնվեն, առաջարկում եմ նրան հայտարարել կուսակցական խիստ նկատողություն, գրանցելով հաշվառման քարտում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Արիս Մուրադովը թեքեց գլուխը և կողքանց նայեց Գառնիկ Բադալյանին: Քարտուղարը բարձրացավ տեղից:

- Չեմ թաքցնի,- ասաց նա, - թերթի ելույթը անսպասելի էր նաև ինձ համար: - Նա խիստ հայացքով սաստեց խմբագրին, որը պատրաստվում էր ոտքի թռչել: - Նստիր, ընկեր Շարաֆյան: Ես կրկնում եմ՝ թերթի ելույթը չափազանց անսպասելի էր ինձ համար: Միանգամայն իրավացի է ընկեր Մուրադովը՝ տարրական էթիկայի հարց կա: Այդ ո՞ր օրվանից է տեղական մամուլը հանրապետական բնույթի հարցեր լուծում՝ շոշափելով Կենտկոմի անդամի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատի գործն ու արժանապատվությունը: Եվ այն էլ ի՞նչ ոճով, ի՞նչ հանդգնությամբ, ի՞նչ հոխորտանքով…

Զավեն Շարաֆյանը քարտուղարին էր նայում՝ կրկին ու կրկին զարմացած մտածելով, որ եթե հարյուր տարի էլ ապրի, մինչև վերջ այդպես էլ չի հասկանա, թե ով է Գառնիկ Բադալյանը: Որովհետև նա իսկապես որ դերասան է, բայց եթե դժվար չէ դերասանին հասկանալը, երբ գիտես, թե ինչ է խաղում, ապա ինչպե՞ս կարող ես կռահել, թե ինչ է մտածում Գառնիկ Բադալյանը և ինչ կանի հաջորդ վայրկյանին, երբ և հեղինակը, և կատարողը ինքն է:

- Իսկ դուք շտապել եք, ուրախացել եք, որ ձեզ համար հնարավորություն է ստեղծվել սուր ճոճելու նույնիսկ Կապի մինիստրի դեմ: Որովհետև ինչպես իրավացիորեն նշեց Գրետա Հակոբովնան, ձեր ձեռքերն իսկապես քոր են գալիս՝ պաշտոնատար անձանց դեմ ելույթ ունենալու համար: Դա ես էլ եմ նկատել: Եվ ես էլ եմ կարծում, որ դուք արժանի եք խիստ պատժի:

Զավեն Շարաֆյանը, որ անհամբեր նրա խոսքի ավարտին էր սպասում, որպեսզի մինչև վերջ ասի այն, ինչ այդ պահին մտածում էր Գառնիկ Բադալյանի մասին, ատելությամբ քարտուղարի դեմքին նայեց ու քիչ մնաց աղաղակի զարմանքից: Նա կարող էր երդվել, որ քարտուղարի աչքերի մեջ կայծերի չարաճճի խազ կա ու թաքնված ժպիտ, այն ժպիտը, որ Զավենը առաջին անգամ նկատեց, երբ Գառնիկ Բադալյանը նախատում էր նրան Իգիթյանին բթամիտ անվանելու համար: Սա՞ ինչ բան է: Ուրեմն նորից խաղում է:

- Իհարկե, մենք էլ ենք մեղավոր,- ասում էր Գառնիկ Բադալյանը: - Ոգևորվել ենք թերթի հաջողություններով, ուրախացել, որ մեր «Լուսաբացը» դարձել է կուսակցության մարտական օրգանը և ժողովրդի սիրելին, խրախուսել ենք թերթի հիանալի նախաձեռնությունները քաղաքի կանաչապատման, ծաղկազարդման գործում: Եվ ինչպե՞ս կարող էինք չուրախանալ, տեսնելով, թե դաստիարակչական ինչ փայլուն դեր խաղաց թերթը՝ քաղաքի երեխաների ամառային հանգիստը կազմակերպելու հարցում, կամ որքան հետևողականորեն անցկացրեց «Մեր գործարանի դրոշմի պատիվը» մրցանակաբաշխությունը: Կամ ինչպես չհիշատակել

«Խաղաղության ծառուղու» շաբաթօրյակի կազմակերպման գործում խմբագրության ակտիվ դերը: Բայց ինչպես պարզվեց այսօր,և ինչպես վկայում է թերթում տպագրված «Բաց նամակը», թերթի խմբագիր Զավեն Շարաֆյանը գլխապտույտ է ապրում հաջողություններից, մեծամտացել է և նրան թվում է, թե ինքն արդեն վեր է կանգնած քննադատությունից, թե արդեն գտնվում է անպատժելիության ոլորտում: Ոչ, ընկեր Շարաֆյան, սխալվում եք, կուսակցությունը գիտի և խրախուսել, երբ դրան արժանի եք, և պատժել անողոքաբար, երբ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

կրկին արժանի եք դրան: Ես առաջարկում եմ դատապարտել թերթի անսկզբունք հրապարակումը և խմբագիր Ջավեն Շարաֆյանին հայտարարել…

Նա կանգ առավ մի պահ, դաժան հայացքով նայեց խմբագրին և մի շնչով խստորեն ու վճռական նետեց.

- Զգուշացում:

Ներկաները, որ առնվազն խիստ նկատողության էին սպասում, շունչ քաշեցին աղմուկով ու հիասթափված, տարակուսանքով նայեցին իրար:

- Բանավո՞ր,- չդիմացավ, հարցրեց Գրետա Սուրենյանը:

- Այո,- զայրացած կտրեց առաջին քարտուղարը: - Զգուշացումը բանավոր է լինում, ընկեր Սուրենյան:

Նա նորից լռեց մի պահ ու երբ խոսեց՝ նրա խոսքերը այս անգամ Արիս Մուրադովին էին միայն ողողված:

- Ես լիովին համաձայն եմ ընկեր Մուրադովի հետ, որ թերթի միջոցով հեղինակի ներողություն խնդրելու հարկը չկա: Ավելորդ ուշադրություն կգրավենք և անցանկալի եզրակացությունների տեղիք կտանք: Բայց ինչպես իրավացիորեն նշեց Արիս Սամվելովիչը՝ սխալը պետք է ուղղվի: Մենք խմբագրին կպարտավորեցնենք առաջիկայում մի ուշագրավ հոդված տպագրել նվիրված հանրապետությունում կապի աշխատանքների զարգացման հարցերին և առանձնահատուկ կդառնա: Մանավանդ որ խոսելու հիանալի առիթ կա, չէ՞ որ, ինչպես ինձ ասացիք, մինիստրությունն այնուամենայնիվ որոշել է գումար հատկացնել մեր քաղաքին՝ կապի հանգույցի շինարարությունն անմիջապես սկսելու համար:

- Այո, այո,- եղունգներից վերջնականապես հրաժարվելով և հետաքրքրությամբ քարտուղարին սևեռելով կարճատես աչքերը՝ ռուսերեն ասաց Արիս Մուրադովը: - Այո, այո, այդպես է- դա Կենտկոմի ցուցումն է:

Նա հրաժարվեց գիշերել քաղաքում և նստելով իր ավտոմեքենան անմիջապես ճանապարհ ընկավ: Բյուրոյի անդամները, որ սրտանց թափահարում էին ձեռքերը, մինչև որ Կենտկոմի բաժնի վարիչի ավտոմեքենան անհետացավ ոլորանի ետևում, դարձան դեպի Գառնիկ Բադալյանը, սպասելով նրա հրահանգին:

Բայց Գառնիկ Բադալյանը, առանց որևէ բառ արտասանելու, շրջվեց և բազալտե աստիճաններով բարձրացավ դեպի քաղկոմ: Իսկ արդեն շքամուտքի մոտ ձեռքով արեց խմբագրին.

- Շարաֆյան, անցիր ինձ մոտ:

* * *

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բյուրոյի անդամների երկիմաստ հայացքների տակ Զավեն Շարաֆյանը դժկամ ու դանդաղ քայլեց դեպի քաղկոմի շենքը, ճանապարհին մտածելով, որ Գառնիկ Բադալյանը հիմա, հենց հիմա ինչպես է նայելու խմբագրի աչքերին: Չէ՞ որ անընդհատ ստում էր, հիմա ի՞նչ է ասելու, ինչպե՞ս է բացատրելու իր հերթական դերասանությունը: Եվ եկավ այն եզրակացության, որ նա պատկանում է այն մարդկանց թվին, ովքեր յուրովի երբեք չեն սխալվում և կարող են պատճառաբանել իրենց ցանկացած արարքը: Պատճառաբանել այնքան տրամաբանորեն, այնքան անկեղծ, որ դու ստիպված լինես տվյալ պահին ակամա համաձայնել նրա հետ: Հետո, երբ մենակ ես լինում, երբ չես տեսնում նրա դեմքը և չես լսում ձայնը, հանկարծ հասկանում ես, որ նա քեզ պարզապես խաբել է, խաբել է անամոթաբար, անխղճորեն: Եվ վճռում ես հանդիպելուն պես նրա երեսին նետել ողջ ճշմարտությունը: Թող հիմարի տեղ չդնի: Բայց երբ հանդիպում ես, նայում քո կասկածներից հուզված ու վիրավորված նրա դեմքին, լսում նրա անկեղծ, մտերմիկ ձայնը, կրկին համոզվում ես, որ նա իրավացի է եղել, և քո կասկածները՝ անհիմն:

Ճիշտ այդպիսի մեկն էլ նրանց կուրսում կար: Բաբկեն էր անունը: Միասին ավարտեցին դպրոցը և միասին էլ ընդունվեցին համալսարան: Երբ երկրորդ անգամ լսարան պետք է մտնեին, Բաբկենն ասաց.

- Զավեն, արի խելացի լինենք ու հեռատես: Գիտեմ, որ այսօր կուրսի կոմերիտական ժողովն է լինելու: Պետք է այնպես անենք, որ կուրսի կազմակերպիչը մեզանից մեկնումեկը լինի: Կամ դու, կամ ես:

Զավենը անփութորեն թափ տվեց ձեռքը:

- Վերջ տուր, Բաբկեն, մեր ինչի՞ն է պետք, ով ուզում է՝ թող լինի:

- Արա, դու հո երեխա չես: Գիտե՞ս ինչ դեմք է կոմերիտական կազմակերպիչը համալսարանում: Նախ՝ ճանապարհ է բացվում կոմերիտական ավելի ղեկավար պաշտոններ գրավելու համար: Հետո կազմակերպիչը հասարակական ակտիվ դեմք է, դասախոսները ճանաչում, հաշվի են առնում նրան: Նա բոլորի աչքի առաջ է : Եթե անհատական թոշակի հարց լինի, ո՞ւմ կառաջարկեն, իհարկե, կազմակերպչին: Հազար ու մի հարց կա: Հետո մեր ձեռքը պետք է զցենք կուրսի ավագությունը: Ավագը գիտե՞ս ով է: Կուրսի մատյանը նրա ձեռքին է, նա է ներկա-բացակա անում, նա է ամեն օր մտնում դեկանատ, զրույցներ ունենում դեկանի հետ, ինչպես ուզում է՝ այնպես էլ ներկայացնում է ուսանողներին: Մի խոսքով, ամբողջ կուրսը նրա բռի մեջ է:

Զավենը կրկին փորձեց թափահարել ձեռքը, բայց Բաբկենը ամուր բռնեց այն:

-Դու ինձ լսիր, լսիր- Մենք այդ պաշտոնները ձեռքից բաց չպետք է թողնենք: Արա, հանկարծ գեղացի մեկին ավագ ընտրեցին, գիտե՞ս ինչ կանի, կյանքներս կուտի: Իսկ եթե ես լինեմ, ինչքան ուզում ես փախիր դասախոսություններից, քեզ բացակա չեմ դնի, եթե դու լինես՝ ինձ:

Զավենը զգաց, որ ընկերոջ խոսքերը համոզիչ են հնչում և այնուամենայնիվ առարկեց.

- Հա, բայց ինչ պետք է անենք, հո չե՞նք գնալու ասենք, թե մենք ենք ուզում կոմերիտական կազմակերպիչ ու ավագ դառնալ: Ամոթ է, չէ՞:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բաբկենը ծիծաղեց.

- Դրանից էլ հեշտ բան: Կուրսում դեռ ոչ մեկը մյուսին չի ճանաչում և կանցնի նրա թեկնածությունը, ում անունը առաջինը կտան. Հենց այսօր ժողովում դու իմ ազգանունը կտաս՝ իբրև կազմակերպչի թեկնածուի: Իսկ ես վաղը քո անունը կտամ ու քեզ կընտրենք ավագ: Պայմանավորվեցինք:

Հետո դարձյալ նա երկար համոզում ու նորանոր փաստարկներ էր բերում և ի վերջո՝ պայմանավորվեցին:

Հենց որ ֆակուլտետի կոմերիտական բյուրոյի քարտուղարը, որը երրորդ կուրսեցի մի տղա էր, առաջարկեց թեկնածուներ առաջարկել կուրսի կոմերիտական կազմակերպչի համար, Բաբկենը ամուր սեղմեց Զավենի ոտքը: Եվ Զավենը ոտքի կանգնելով ու ամոթից կարմրելով կրկնեց նախորդ օրը լավ մշակած նախադասությունը:

- Ես առաջարկում եմ մեր կուրսեցի Բաբկեն Սիմոնյանի թեկնածությունը: Մենք նրա հետ նույն դպրոցն ենք ավարտել: Նա կոմերիտական աշխատանքի մեծ փորձ ունի և հասարակական ջիղ:

Հարկ չեղավ ստիպելու, որ թեկնածուն ոտքի կանգնի: Բաբկենն արդեն բարձրացել էր տեղից, և նայելով նրա ազնիվ ու միամիտ դեմքին, ուսանողները բարձրացրին ձեռքերը:

Իսկ հենց հաջորդ օրը ավագի ընտրությունն էր: Ներկա էր նաև ֆակուլտետի դեկանը՝ մի առյուծաբաշ, պատկառելի ծերունի: Հենց նա էլ բացեց ժողովը:

- Դե ասեք տեսնենք, թե ում եք նախընտրում, որ ձեր ավագը լինի:

Բաբկենը անմիջապես բարձրացավ տեղից և բավականին վայելչորեն խոնարհվեց դեկանի առաջ.

- Իբրև կոմերիտական կազմակերպիչ, ես առաջարկում եմ կուրսի ավագ ընտրել Մարկոս Գասպարյանին…

Զավենին թվաց, թե Բաբկենը պարզապես սխալվել է, շփոթեց ազգանունները և զարմացած նայեց ընկերոջը:

- Մենք դեռ պատանի ենք,- ասաց Բաբկենը,- իսկ Մարկոս Գասպարյանը տարիքով մեծ է մեզանից: Ես խոսել եմ նրա հետ: Նա կենսափորձ ունի, մի ժամանակ աշխատել է գյուղական շրջանային թերթի խմբագրությունում: Իմ խորին համոզմամբ, մեզանից ոչ ոք այնպես չի կարող կատարել ավագի պարտականությունները, ինչպես Մարկոս Գասպարյանը:

Ոչ ոք չէր ճանաչում հեռավոր շրջանից եկած այդ բազմափորձ տարեց մարդուն և բնականաբար առարկություններ չեղան: Եվ Մարկոս Գասպարյանը միաձայն ընտրվեց կուրսի ավագ: Ըստ որում շարունակելով զարմացած նայել ընկերոջը, ձեռք բարձրացրեց նաև Զավեն Շարաֆյանը: Նա այնքան ցնցված էր ընկերոջ դավաճանությունից և ստորությունից, որ նրան ոչինչ չասաց: Վախենում էր չկարողանա խոսել: Իսկ երբ խոսել չէր կարողանում՝

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ապտակում էր: Իսկ հետո զղջում դրա համար: Մանկուց այդպես էր դաստիարակված. հայրն ասում էր, թե միայն անասունին կարելի է ծեծել, այն էլ ոչ ամեն տեսակ անասունի:

Նա մտածում էր, թե Բաբկենը կամաչի ու ինքն էլ չի խոսի այդ թեմայով: Թե Բաբկենը այլևս երբեք չի մոտենա իրեն: Մոտենա՝ ի՞նչ ասի: Եվ գրեթե ցնցվեց, երբ բժշկական ինստիտուտի մոտ Բաբկենը բռնեց նրա ձեռքը:

- Լսիր, Զավեն, չլինի՞ թե նեղացար ինձանից,- հարցրեց նա հուզված, շրթունքը դողացնելով:

Զավենը խլեց ձեռքն ու չպատասխանեց:

- Երևի իմ արածը ազնիվ չէր, Զավեն ջան, բայց աշխատիր հասկանալ ինձ: Ես քո անունն էի ուզում տալ, բայց հանկարծ հասկացա, որ շատ կոպիտ խաղ է ստացվում: Ի՞նչ կմտածեն մարդիկ: Չէ՞ն ասի, թե ըհը, երեկ Զավենը Բաբկենի թեկնածությունը տվեց, այսօր էլ Բաբկենը Զավենի թեկնածությունն է տալիս:

Թեև շատ զայրացած էր, բայց Զավենը այնուամենայնիվ մտածեց,որ Բաբկենի ասածի մեջ ճշմարտություն կա: Մտածեց, բայց ոչինչ չասաց, շարունակեց ճանապարհը: Բաբկենը կրկին բռնեց նրա ձեռքը:

- Հետո դու չէիր էլ ուզում դառնալ, չէ՞: Չէի՞ր ասում, թե հոգս է, ստիպված պետք է լինես ամեն օր դասի գալ, դեկանատ մտնել, բացակա դնել, ուսանողներին գրգռել քո դեմ, չէ՞իր ասում: Ձեռքդ խղճիդ դիր ու ասա:

Եվ Զավենը ձեռքը խղճին դնելով համաձայնվեց, որ այդպես էլ եղել է…

- Մի նեղացիր, ախպեր ջան,- ասաց Բաբկենը,- դեռ իրար հետ ինչքան ենք ապրելու: Դու կտեսնես, թե ես ինչեր կանեմ քեզ համար, կյանքս էլ չեմ խնայի: Բա ես կմոռանա՞մ, որ ձեր տանը քանի-քանի անգամ հաց եմ կերել: Խեղճ մայրդ նույնիսկ քեզանից կտրում, ինձ էր տալիս, ասում էր՝ կեր, բալես, դու իմ Զավենի լավ ընկերն ես ու որբ ես նրա նման…

Բաբկենի աչքերը արցունքով լցվեցին, նա ուզեց էլի ինչ-որ բան ասել, բայց փղձկաց, բաց թողեց Զավենի ձեռքն ու գլուխը կախ քայլեց Կիրովի փողոցով՝ երեխայավարի սրբելով արցունքները:

Եվ Զավենը զարմանքով մտածեց, որ խղճահարություն է զգում ընկերոջ նկատմամբ: Որ երևի միտք չուներ խռովել նրանից և դրանով իսկ վիրավորել նրան: Ի՞նչ է պատահել վերջապես, քեզ պե՞տք է ավագությունը, դու չէի՞ր, որ հրաժարվում էիր համառորեն: Հրաժարվում էիր, էլի, Զավեն:

Իսկ տանը, գիշերն անկողնում պառկած, երկար ժամանակ անքուն վերլուծում էր անիծյալ ընտրությունների հետ կապված բոլոր մանրամասնությունները և եկավ այն հաստատ համոզման, որ Բաբկենը խաբել է իրեն, որ նրա արածը ստորություն էր: Բայց հաջորդ օրը համալսարանում Բաբկենը այնպիսի մի պայծառ ժպիտով դիմավորեց նրան, այնպես անկեղծ ու սրտանց բարևեց, որ ակամա ժպտաց նաև Զավենը: Ու ամեն ինչ անցավ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գառնիկ Բադալյանը խմբագրին դիմավորեց ճիշտ այն բաբկենական ժպիտով:

- Հետաքրքիր մարդ ես,- ասաց նա: - Չի կարելի այդքան անհամբեր ու անհավատ լինել, Զավեն: Հո տեսա՞ր, թե ինչ խաղ խաղացի նրանց գլխին: Արիս Մուրադովի բերանը նույնիսկ ավտոմեքենայի մեջ բաց էր մնացել: Զգացիր, որ ոչինչ չկարողացավ ասել: Ոչ մի բան: Այնինչ նա այստեղ էր եկել առնվազն գանգամաշկը տանելու համար: Նա պահանջում էր քեզ հեռացնել աշխատանքից: Իսկ ինչի՞ հասավ: Ընդամենը բանավոր զգուշացման: Իսկ դու արդեն կորցրել էիր քեզ և բավականին երկիմաստ վիճակի մեջ ընկար…

- Բայց ես բոլորովին հարձակման չէի սպասում և անակնկալի եկա,- ակամա շիկնելով, ուսերը թոթվեց խմբագիրը: - Մի՞թե դուք ինձ նախապես չէիք կարող զգուշացնել, Գառնիկ Վարդանիչ:

- Ես իմ նկատառումներն ունեի,- ասաց քարտուղարը: Մտածում էի, որ եթե նախապես զգուշացնեմ, դու քեզ ավելի կկորցնեիր և դրությունն ավելի կծանրանար: Կարծում էի, թե կհասկանաս ինձ: Եվ վերջապես անկախ ամեն ինչից, դու պարտավոր էիր սպասել ու հավատալ: Եթե ես քո նկատմամբ բարյացակամ չլինեի, հիմա այս խոսակցությունը տեղի չէր ունենա, ընկեր Շարաֆյան: Որովհետև ես իմ բարեկամներից պահանջում եմ անվերապահորեն հավատ ու վստահություն իմ քայլերի նկատմամբ: Անվերապահ: Ես չեմ սիրում ինչ-որ բաներ հիշեցնել մարդկանց: Երբ մարդը մոռացել է, այլևս անիմաստ է նրան հիշեցնելը: Բայց հո չես կարող առարկել, որ սկսած մեր քաղաքում քո հայտնվելու առաջին օրերից, դու արդեն իմ ուշադրության տակ ես եղել և որևէ անցանկալի բան չես տեսել ինձնից:

- Ընդհակառակը,- անկեղծ խոստովանեց Զավենը: - Դուք միշտ օգնել եք ինձ: Ես միշտ զգացել եմ ձեր հովանավորությունը, ընկեր Բադալյան:

- Այդպես էլ կշարունակվի: Միայն թե վերջ տուր կասկածամտությանդ, Զավեն: Ինձ թվում է, թե դու վերջերս կարծես թե ստուգարք ես վերցնում ինձանից, ուշադիր ծանր ու թեթև ես անում իմ որոշումները: Պետք չէ, տղաս: Դու պարտավոր ես հավատալ ինձ: Թող վերամբարձ չինչի, բայց եթե ուրիշների ներկայությամբ ես նույնիսկ ատրճանակ պարզեմ քո դեմ, համբերիր ու վստահ եղիր, որ կրակոց չի հետևելու:

- Ես ինձ կորցրեցի,- արդեն ամաչելով ասաց Զավենը: - Ինձ թվաց, թե դուք ինձ մենակ եք թողնում:

- Այդ էլ կարող է պատահել,- մատի ծայրով փոքրիկ բեղիկները քորելով ժպտաց Գառնիկ Բադալյանը: - Բայց մարդիկ հո մի օրվա համար չեն ապրում: Վաղն էլ կա: Եվ կա մի երկար ճանապարհ, որ մենք անցնելու ենք այստեղ և շատ հավանական է, որ նաև բոլորովին ուրիշ տեղ: Ուրեմն հավատա և վստահիր:

- Հավատում եմ,- ասաց Զավեն Շարաֆյանը:

- Բացառված չէ, որ եթե հարկ առաջանա՝ ստիպված լինեմ ուրիշների ներկայությամբ ձայնս բարձրացնել քեզ վրա: Բայց ինչո՞ւ, որպեսզի ուրիշներին թույլ չտամ գոռալու: Հասկանո՞ւմ ես: Ինչպես այսօր եղավ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Մոտավորապես նույնն էլ Բաբկեն Սիմոնյանն ասաց: Չորրորդ կուրսում Զավենն ստիպված էր բեռներ թափել երկաթուղային կայարանում: Սոսկալի ծանր աշխատանք էր, բայց հնարավորություն էր տալիս օգնել մորն ու քրոջը: Երբեմն այնքան էր հոգնում, որ դասախոսության ժամերին քնում էր գլուխը դիմացինի թիկունքում թաքցրած: Դասերը ժամը երեքին էին սկսվում, բայց հաճախ գործը այնքան շատ էր լինում կայարանում, որ Զավենը չէր հասցնում ժամանակին դասի գալ: Ինչ վերաբերում էր ցերեկները կուրսում կազմակերպվող զանազան միջոցառումներին, էքսկուրսիաներին և բացօթյա խնջույքներին, Զավենն ընդհանրապես չէր կարողանում ներկա լինել դրանց: Որովհետև հենց այդ ժամերին վագոններ էր բեռնաթափում: Եվ այդ մասին կուրսում միայն մի մարդ գիտեր՝ նրա ընկերը, Բաբկեն Սիմոնյանը: Զավենը չէր ուզում, որ մյուսներն իմանան, թե ինքը բեռնակիր է աշխատում: Ամաչում էր: Հատկապես աղջիկներից:

Մի օր էլ, երբ դարձյալ ուշացած համալսարանի շենք մտավ ու հենց դիմացի լայն սանդուղքով բարձրացավ վեր, տեսավ, որ կիսաբաց է Փոքրիկ դահլիճ կոչվող լսարանի դուռը, որտեղ նրանք դասախոսություններ էին լսում: Մտածելով, թե դաս չկա, նա մոտեցավ դռանը և անմիջապես էլ զարմանքով լսեց իր անունը: Ականջներին չհավատալով, նա ներս նայեց կիսաբաց դռնից ու տեսավ, որ ժողով է: Փոքրիկ բեմում նախագահության սեղանն էր, իսկ ամբիոնից ելույթ էր ունենում Բաբկեն Սիմոնյանը:

- Չեմ հասկանում, թե ինչ է կատարվում Զավեն Շարաֆյանի հետ,- ասում էր նա: - Կտրվել է կոլեկտիվից չի մասնակցում մեր միջոցառումներին, նույնիսկ Հաղթանակի զբոսայգի չեկավ՝ բացօթյա խնջույքի, երբ ես հատուկ զգուշացրել էի: Դա՞ ինչ արհամարհական վերաբերմունք է կուրսեցիների նկատմամբ: Մինչև ուր կարող է հասցնել նրան մեծամտությունը: Նա այդ ինչո՞վ է զբաղված, որ ժամանակ չի գտնում իր ընկերների և ընկերուհիների հետ լինելու և նույնիսկ դասախոսություններից է բացակայում: Ես նրա ընկերն եմ, դուք գիտեք, դպրոցում ևս մենք միասին ենք սովորել և հիմա մեծ ցավ եմ զգում, որ նա գտնվում է սխալ, մենք ի՞նչ գիտենք, գուցե և կործանարար ճանապարհի վրա: Խնդրում եմ թույլ տալ ինձ, որպես մտերիմ ընկերոջ և համալսարանի ԼԿԵՄ կոմիտեի անդամի, ձեր անունից մի վերջին անգամ զրույց ունենալ նրա հետ՝ նախքան նրա անձնական հարցը կոմերիտական ժողովում քննելը:

Զավենը, ինչպես ասում են, ոչ ողջ, ոչ մեռած մնացել էր կանգնած դռան ետևում: Ժողովն ավարտվել էր, և ուսանողները, նրա ընկերներն ու ընկերուհիները աշխույժ զրուցելով ու ծիծաղելով դուրս եկան լսարանից: Դուրս եկավ նաև Բաբկենը, տեսավ Զավենին, և Զավենին թվաց, թե հիմա նա ամոթից գետինը կմտնի: Բայց Բաբկենը ջերմ ժպտալով ընդառաջ եկավ նրան:

- Զավե՞ն, այստե՞ղ էիր, բա ինչո՞ւ ներս չմտար՝ կարգապահության հարցեր էինք քննում:

Զավենը բռնեց նրա արմունկը և գրեթե ստիպելով իջեցրեց սանդուղքից:

- Ուզում էիր զրո՞ւյց ունենալ ինձ հետ, տականք, գնանք մտնենք Ղուկասյանի այգի, զրուցենք:

- Սպասիր, ի՞նչ ես անում,- իրար խառնվեց Բաբկենը, փորձելով ազատել արմունկը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես կործանարար ճանապարհի վրա եմ, հա՞: Եվ դու չգիտես, թե որտեղ եմ լինում: Ռեստորաններում քարշ եմ գալիս: Բա դու ամոթ չունե՞ս, ստոր մարդ, կայարանում բեռներ կրելուց հետո ինձ վրա հա՞լ է մնում, որ պարեմ ձեր միջոցառումներին:

- Սպասիր, սպասիր խոսենք, Զավեն: Մենք ընկերներ ենք չէ՞,- խնդրեց Բաբկենը արդեն փողոցում, կարճլիկ ցայտաղբյուրի մոտ, ամեն կերպ խուսափելով մտնել դիմացի զբոսայգին:

- Եվ դու դեռ երես ունես ասելու, որ մենք ընկերնե՞ր ենք:

- Իհարկե, ընկերներ ենք, Զավեն ջան: Եվ դու դեռ շատ կզղջաս, որ կասկածում ես ինձ վրա և քաշքշում ես բոլորի աչքի առաջ:

Եվ Բաբկեն Սիմոնյանն ասաց մոտավորապես այն, ինչ այսօր Գառնիկ Բադալյանը:

- Դու գիտե՞ս, որ իմ ելույթով փրկեցի քեզ: Դու գիտե՞ս, որ ամբողջ կուրսն առաջարկեց տեղն ու տեղը որոշում ընդունել և ուղարկել դեկանատ՝ համալսարանից քեզ հեռացնելու համար: Լսեիր, թե ինչեր էին ասում, ասում էին՝ տասն անգամ ժողով ենք հրավիրել, չի եկել, չենք կարողանում բռնել, որպեսզի քննենք հարցը: Ահա թե ինչեր էին ասում: Եվ ես ստիպված եղա իմ ամբողջ հեղինակությունն ու ճարտասանությունն օգտագործել, որպեսզի քեզ կարողանամ դուրս բերել հարվածի տակից: Որպեսզի հարցի քննարկումը ձգձգվի, ես հանձն առա վերցնել քո շեֆությունը, ինքս խոսել քեզ հետ- Դրանից ավելի ի՞նչ կարող էի անել:

- Ի՞նչ կարող էիր անել- Թող ասեիր ճշմարտությունը,- փնչաց Զավենը:

- Բայց չէ որ դու ինձ արգելել էիր հայտնել որևէ մեկի, որ բեռնակիր ես աշխատում երկաթուղային կայարանում: Ես ինչպե՞ս կարող էի խախտել քեզ տված խոստումս, Զավեն: Դու ինձ այդ ժամանակ դավաճան չէի՞ր համարի: Ձեռքդ դիր խղճիդ վրա ու…

Զավեն Շարաֆյանը մի վայրկյանում հիշեց այդ ամբողջ միջադեպը և որպեսզի հետո չզղջա, ասաց.

- Գառնիկ Վարդանիչ, շնորհակալ եմ, որ օգնության հասաք ինձ: Բայց ինչո՞ւ այդ ձևով: Չէ՞ որ իրավացին մենք էինք, չէ՞ որ թերթում բերված բոլոր փաստերը համապատասխանում են իրականությանը: Ի վերջո, մեր հոդվածի ոչ մի տառը չհերքվեց: Մի՞թե մենք չէինք կարող այդ ամբողջ թղթապանակը, որի նյութերի մի մասն էինք միայն օգտագործել, դնել Արիս Մուրադովի առաջ ու ասել, խնդրեմ, ինչի՞ն եք առարկում, ո՞ր կետի դեմ: Նրա միակ պատճառաբանությունն այն էր, թե քաղաքային փոքրիկ թերթն իրավունք չուներ գրելու հանրապետության մինիստրի դեմ: Իսկ որտե՞ղ է գրված, թե իրավունք չունի: Ո՞ր կանոնադրության և օրենքի մեջ: Մի՞թե սա քննադատության կոպիտ ճնշում չէ: Եվ վերջապես, եթե մինիստրությունը միջոցներ չուներ, մի շաբաթում որտեղի՞ց գտավ այդ միջոցները, որ հիմա տրամադրելու է մեր քաղաքին:

Գառնիկ Բադալյանը վեր կացավ աթոռից, ձեռքերը թիկունքին դրած քայլեց առանձնասենյակում, մոտեցավ Լենինի բրոնզե կիսանդրուն, չգիտես ինչու շոյեց գլուխը ու հանկարծ գրեթե անկապ հարցրեց,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Լենին կարդացե՞լ ես:

- Որոշ գործեր,- զարմացած պատասխանեց խմբագիրը:

- Իսկ «Մի քայլ առա՞ջը…»

- Կարդացել եմ:

- Ուրեմն պետք է իմանաս, որ մի քայլ առաջ գնալու համար հաճախ ստիպված ես լինում երկու քայլ ետ գնալ: Եթե լավ չգիտես ճանապարհին ու թե ինչ է սպասում քեզ ճանապարհին, Զավեն Շարաֆյանը հազիվ զսպեց իրեն, որպեսզի չժպտա՝ լսելով լենինյան հայտնի տեսության դրույթների բաղալյանական մեկնաբանությունը: Իսկ ի՞նչ որ լսեց հետո, նրան ընդհանրապես շփոթեցրեց:

- Դժբախտաբար ես էլ աստված չեմ, Զավեն, և պատահում է, որ ես էլ եմ սխալներ թույլ տալիս: Չթաքցնեմ՝ հավաստի աղբյուրներից գիտեի, որ օրորվում է այդ ամբարտավան Գ. Ե. Պարսամյանցի գահը և մտածեցի, որ չէր խանգարի նաև հեռավոր քաղաքից տեղ հասած լրացուցիչ փոքրիկ հարվածը: Բայց ինչ իմանայի, որ երբ տպարանում շարում էիր քո իրոք հրաշալի գրած «Բաց նամակը», այդ Պարսամյանցը աղվեսի խորամանկությամբ նույն օրն իր որդուն ամուսնացնում էր Կենտկոմի քարտուղարի աղջկա հետ:

- Իսկապե՞ս, ընկեր Բադալյան:

- Իսկապես, տղաս, իսկապես: Միայն թագավորները չեն, որ իրենց շահերից և դիվանագիտական խաղերից ելնելով միմյանց հետ ամուսնացնում էին իրենց զավակներին: Եթե հետաքրքրվես, կպարզվի, որ մեր վերևներում էլ կապերն ամրապնդում են ճիշտ նույն ձևով: Կենտկոմի բաժնի վարիչի աղջիկը մինիստրի տղայի հետ է ամուսնանում, իսկ մինիստրի աղջիկը պետպլանի նախագահի կամ հանրապետության դատախազի տղայի հետ: Որպեսզի նրանց զավակների առջև սովորական դպրոցի փոխարեն բացվեն կուսդպրոցի դռները:

Գառնիկ Բադալյանը ծիծաղեց՝ գոհ իր սրամտությունից: Եվ Զավեն Շարաֆյանը վերջապես հնարավորություն ունեցավ տալու իրեն տանջող հարցը:

- Գառնիկ Վարդանիչ, ճիշտը որ ասեմ, երբ այսօր ինձ քաղկոմ կանչեցին, մտքովս չէր անցնում, թե «Բաց նամակն» է քննարկվելու: Կարծում էի, թե «Սովետական Հայաստան» թերթում տպագրած իմ ֆելիետոնն է հետաքրքրել ձեզ: Դեռ չե՞ք կարդացել:

Քաղկոմի առաջին քարտուղարը չպատասխանեց: Նա վերադարձավ իր գրասեղանի մոտ, նստեց, դիմացի դարակից մի թուղթ հանեց ու մեկնեց խմբագրին:

- Սա ի՞նչ է, Գառնիկ Վարդանիչ:

- Սա, ընկեր Շարաֆյան, այն հարցերն են, որ քննարկման են դրվելու քաղկոմի առաջիկա բյուրոյում: Եվ եթե ընթերցես, կտեսնես, որ առաջին կետը վերաբերում է քո ֆելիետոնին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավենը զգաց, որ սեղմվում է կոկորդը:

- Նորից բյուրո՞ ,- հարցրեց նա, չթաքցնելով հուսահատությունը:

- Իսկ դու, ինչ է, կարծում էիր, թե մենք կարող ենք լռությա՞մբ անցնել Կենտկոմի օրգանի ելույթի կողքով: Մենք դրա իրավունքը չունենք, ընկեր Շարաֆյան: Ես կարող եմ քեզ նույնիսկ ծանոթացնել ֆելիետոնի վերաբերյալ մեր ընդունելիք որոշման կետերին: Ուզո՞ւմ ես-- նա արտիստիկ շարժումով մի ուրիշ թուղթ հանեց դարակից ու կարդաց: - «Քաղաքային կոմիտեն գտնում է, որ «Հայտնագործությունը փակի տակ» ֆելիետոնում բերված փաստերը լիովին համապատասխանում են իրականությանը»:

Զավեն Շարաֆյանը զգաց, որ դեմքը հուզմունքից այրվում է: Մոռացած քիչ առաջ ապրած տառապանքն ու ցավը, հուսախաբությունն ու կասկածները, նա պատրաստ էր գրկել իր դիմաց նստած այդ զարմանալի մարդուն: Պատրաստ էր խոնարհվել նրա խելքի, շիտակության, սկզբունքայնության և ճշմարիտ կուսակցական դիրքորոշման առաջ: Իրոք այս մարդու մեջ ժողովրդի շահերից բացի այլ շահ չկա:

Նա եթե ոչ բացասական պատասխանի, ապա առնվազն բացասական վերաբերմունքի էր սպասում և մնաց ապշած, երբ քարտուղարը կարդաց, վերջացրեց որոշման կետերը: Քաղաքային կոմիտեի բյուրոն ոչ միայն հավանություն էր տալիս ֆելիետոնում արծարծված խնդիրներին, ոչ միայն հարց էր բարձրացնում Կենտկոմի համապատասխան բաժնի առաջ խիստ պատասխանատվության կանչել Տեքստիլ արդյունաբերության մինիստրության գիտական լաբորատորիայի պետ, տեխնիկական գիտությունների դոկտոր Միտուշյանին՝ Արմեն Զատիկյանի գյուտի առջև խոչընդոտներ հարուցելու, անձնական շահերը վեր դասելու և գյուտարարի հանդեպ հանցագործ վերաբերմունքի համար, այլև լիովին ընդունում էր նաև քաղաքային կոմիտեի մեղքը: Որոշման մեջ հատուկ ընդգծված էր, որ քաղաքային կոմիտեն և արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարները դատապարտելի անտարբերություն են հանդես բերել երիտասարդ գյուտարարների և ռացիոնալիզատորների նկատմամբ, չեն խրախուսել նրանց աշխատանքը, պայմաններ չեն ստեղծել նրանց ստեղծագործական աճի համար, հետևողական չեն եղել առավել արժեքավոր գյուտերը արտադրության մեջ ներդնելու գործում: Այլապես չէր ստեղծվի այն անառողջ մթնոլորտը, բոլոր այն խոչընդոտները, որ կանգնեցվել են տաղանդավոր երիտասարդ գյուտարար Արմեն Զատիկյանի և նրա հայտնագործության ճանապարհին: Բյուրոն տրիկոտաժի ֆաբրիկայի դիրեկցիային պարտավորեցրել է ամենայն օժանդակություն և նյութական օգնություն ցույց տալ գյուտարարին՝ նրա ստեղծագործական աշխատանքը խթանելու համար և ֆաբրիկայի նորակառույց բաժանմունքում հատուկ արհեստանոց առանձնացնել և զինել համապատասխան տեխնիկայով, որպեսզի Արմեն Զատիկյանը և ֆաբրիկայի մյուս գյուտարարները կարողանան հենց տեղում իրականացնել իրենց մտահղացումները:

Զավեն Շարաֆյանը պատկերացրեց Արմեն Զատիկյանի հրճվանքը: Վերջապես տարաբախտ այդ մարդը շունչ կքաշի թեթևացած, հնարավորություն կունենա ստեղծագործելու, աշխատելու ինչպես ինքն է ուզում և, ով գիտե, երևի արդեն այլ պատկերացում ունենա աշխարհի ու մարդկանց մասին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նա չկարողացավ զսպել իրեն համակած հուզումը, բարձրացավ տեղից, խոր գլուխ տվեց քարտուղարին և ասաց այլևս չմտածելով, որ անսխալ լինեն նախադասությունները, ասաց գրեթե կակազելով.

- Շնորհակալություն, Գառնիկ Վարդանիչ, շնորհակալություն իմ անունից, Արմեն Զատիկյանի անունից- Շատ տանջված մարդ է- Ուր նրա վիճակը տեսնում եմ- Շատ չարացած է կյանքից, հետը խոսել չի լինում:

- Ինչ ճիշտ է, ճիշտ,- ծիծաղեց քարտուղարը,- թեև մի քանի անգամ փորձեցի, բայց ինձ էլ չհաջողվեց խոսել նրա հետ:

- Երևի չգիտեք, նա հյուրանոցի պատին հայտարարություն էր փակցրել, թե փնտրում եմ կորցրած հավատս- Արդեն խելագարվել էր համարյա- Իսկ հիմա- իսկ բյուրոյի որոշումից հետո- Ես նրան կգտնեմ ու կասեմ՝ հը, ո՞նց ես, գտա՞ր կորցրած հավատդ- Տեսնո՞ւմ ես, որ աշխարհին այնքան սև չէ, ինչպես երբեմն թվում է մեզ- Տեսնո՞ւմ ես, որ աշխարհում Գառնիկ Բադալյանի նման մարդիկ կան…

- Դե այդ մեկը թող, - գլուխը թափահարեց քարտուղարը: - Եթե նա պարտական է որևէ մեկին, ապա քեզ է պարտական, որ կարողացար հրապարակ հանել այդ ամբողջ քստմնելի պատմությունը: Իսկ եթե հարցին ավելի ճշմարիտ աչքերով նայենք ապա, ապա մենք ենք պարտական նրան, մենք՝ բոլորս: Արմեն Զատիկյանը գյուտ է արել, որից ժողովրդական տնտեսությունը վիթխարի օգուտներ կունենա, իսկ մենք անտարբերությամբ թույլ ենք տվել, որպեսզի Միտուշյանի նման դատարկագլուխ գիտնականները հանուն սեփական գրպանի հոշոտեն տաղանդավոր մարդուն:

Գառնիկ Բադալյանը կրկին դարակի մեջ դրեց թղթերը ու բարձրացավ տեղից.

- Ի դեպ, դու գիտե՞ս, որ այդ Միտուշյան կոչվածը իմ ուսանողական ընկերն է եղել, ավարտելուց հետո միասին ուղարկեցին գործարան: Չկարողացավ աշխատել, փախավ գործարանից ու մեկ էլ տեսանք գիտնական է դարձել, դու գիտե՞ր այդ մասին, Զավեն- Գիտե՞ր, որ նա իմ ընկերն է եղել…

Նա հարցը կարծես թե ուրիշ տեսակ տվեց, այնպես, որ Զավեն Շարաֆյանի մարմինը փշաքաղվեց ակամա ու նա հասկացավ, որ անկեղծ պատասխանելը պարզապես վտանգավոր է: Շատ վտանգավոր…

- Չգիտեի, ընկեր Բադալյան,- ասաց նա շտապով: Նա, իհարկե, գիտեր այդ մասին, բայց չգիտեր ուրիշ բան: Զավեն Շարաֆյանը չգիտեր, որ Գառնիկ Բադալյանի աչքին Միտուշյանը հիմա որևէ արժեք չունի: Որովհետև հատկապես ֆելիետոնից հետո՝ վերջացած ու վարկաբեկված է որպես գիտնական և որովհետև նրա համար որևէ դեր նախատեսված չէ այն մեծ խաղի մեջ, որ մտադիր է առաջիկայում սկսել Գառնիկ Բադալյանը:

Եվ չգիտեր նաև ուրիշ մի բան:

Որ երկու օր առաջ քաղկոմի առաջին քարտուղարի առանձնասենյակն է մտել պետական անվտանգության լիազորը և նրա սեղանին դրել քաղաքի այն բնակիչների ցուցակը, որոնք

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հանիրավի դատապարտվել ու աքսորվել են 1949 թվականին, իսկ հիմա արդարացվել: Եվ Գառնիկ Բադալյանը տեսել է, որ արդարացվածների թվում են նաև Արմեն Զատիկյանի ծնողները… հետմահու:

Երբ դուրս եկավ քաղկոմի շենքից, արդեն ընկնում էր մութը: Աշնանային խաղաղ ու զով երեկո էր: Այն երեկոներից մեկը, երբ սիրտդ ուզում է մտերիմ մարդու հետ դանդաղ քայլել դեղնած տերևներով պատված արահետներով, գտնել որևէ անկյուն, մի թաս կարմիր գինի կամ մի բաժակ տաք թեյ խմել ու հանդարտ զրուցել ազնիվ ու գեղեցիկ բաների մասին, զրուցել անչար ու բարի: Զավեն Շարաֆյանի հոգին այնքան լիքն էր օրվա ապրումներով, որ նա որևէ մեկի հետ կիսվելու, սիրտը բացելու անասելի կարիք էր զգում: Այնքան, որ կանգ առավ քաղկոմի շենքի առջև ու ասաց ինքնիրեն,

- Հիմա ինձ ծանոթ ով էլ պատահի, կհրավիրեմ ռեստորան: Նա երկար սպասեց, կծկված իր փայլուն անձրևանոցի մեջ, բայց ոչ մի ծանոթ դեմք չտեսավ: Վերջին մի հայացքով նայեց խմբագրության շենքի պատուհաններին: Բայց դրանցից ոչ մեկը

լուսավորված չէր: Մտածեց զանգահարել Արմեն Զատիկյանին, կամ նրա տուն գնալ՝ Մայիսմեկյան փողոցի վրա, բայց հիշեց, որ Գառնիկ Բադալյանը զգուշացրեց վերջին պահին. «Ես քեզ գիտեմ, Զավեն, կուզենաս ժամ առաջ ուրախացնել Արմեն Զատիկյանին: Պետք չէ: Մինչև որ բյուրոն տեղի չունենա, ոչ մի խոսք: Ես նրան հրավիրելու եմ բյուրոյի նիստին և ուզում եմ, որ նա իր սովորական, հուսահատի տեսքով մտնի քաղկոմ»:

Խմբագրության շենքի կողքով անցնելիս՝ Գարեգին Չալյանին հիշեց: Տպարանի դիրեկտորը հո տեղում կլինի, նա էլ մի առանձնապես սեր չունի տուն գնալու հետ: Եթե իր խցիկում լինի, վճռեց Զավեն Շարաֆյանը, սուսուփուս դուրս կգամ, կմտնեմ խանութ, մի շիշ գինի կվերցնեմ ու հյուր կգնամ Գարեգինին: Կուրախանա՝ նա էլ յուրովի մենակ, դառնացած մարդ է:

Բայց Գարեգին Չալյանը տպարանում չէր: Եվ Զավեն Շարաֆյանը հուսախաբ քայլերն ուղղեց դեպի տուն: Նա ճանապարհին հանկարծ հիշեց, որ տանը նոր դետեկտիվ ունի, Մարոն տվեց նախորդ օրը, Շեյնինի «Քննիչի նոթերը»: Եվ որովհետև շատ էր սիրում արկածային գրականություն ու անգամ միլիցիայի տեղամասային տեսչի մասին գրված հիմարավուն գրքերն էր կարդում, նույնիսկ ուրախացավ, որ ոչ մի ծանոթ մարդ չպատահեց: Երևի լավն այդ էր, մտածեց նա՝ արագացնելով քայլերը, կմտնեմ տուն, մի բաժակ թեյ կխմեմ ու կկարդամ հանգիստ: Ահագին էլ հաստ գիրք է:

Երբ բացեց դուռն ու ներս մտավ, նրան մի պահ թվաց, թե սխալմամբ ուրիշի տուն է մտել և վախեցած ետ-ետ գնաց: Հետո միտքն հասկացավ, որ դա իր տունն է, բայց բոլորովին ուրիշ տեսակ: Նախ՝ ամեն ինչ փայլում էր մաքրությունից, մահճակալը, առավոտյան սովորականի պես չէր հասցրել հավաքել, կոկիկ սարքված էր և նույնիսկ ծածկված բրդյա հաստ ծածկոցով, որն ընկած էր պահարանի խորքում, ինչ-որ տեղ: Ըստ որում մահճակալն իր սովորական տեղում չէր, այլ փոխադրվել էր խուլ պատի տակ, իսկ փոխարենը, պատուհանի մոտ, մաքուր սփռոցով ծածկված կանգնած էր սեղանը: Իր տեղում չէր նաև գրասեղանը խնամքով դասավորված գրքերով ու բրոնզե թանաքամանով: Այսինքն՝ ոչ մի բան իր տեղում չէր և իրոք ուրիշի տան տպավորություն էր թողնում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավեն Շարաֆյանի սիրտը տրոփեց հուզմունքից: Մայրը, միայն մայրը կարող էր այս ավերածությունը գործել: Միայն նա է, որ հանգիստ չունի և գրեթե ամիսը մեկ, երեխաներին տանջելով, տան կահկարասին պտտեցնում է սենյակի մեջ, մի անկյունից մյուսը, փոխում տեղերը, փոխում նորից, որից տունը դառնում է անսովոր, անծանոթ ու կարծես թե ավելի հարմարավետ: Մինչև նոր տեղափոխություն:

- Մայրիկ,- ուրախացած գոռաց Զավենը, նայելով լողասենյակի կողմը,- եկե՞լ ես, մեր ջան…

- Եկել եմ, եկել,- հանկարծ լսեց բոլորովին ուրիշ մի ձայն և լողասենյակի դռանը հայտնվեց Էմման:

- Էմմա՞,- ապշեց Զավենը: - Դո՞ւ… դու այստեղ ի՞նչ ես անում:

Նրա հայտնվելն այնքան անսպասելի էր Զավենի համար, որ նա մնաց կարկամած կանգնած:

- Բայց հո փնթի՞ չես,- գլուխն օրորեց աղջիկը: - Իսկական փնթի Սմբատ: Այ տղա, դու հո վայրենի չե՞ս, բա կոշիկները կդնեն պահարանի վրա, իսկ ափսեները հատակի՞ն: Դու հո ճապոնացի չե՞ս, ուտելիս պարկետի վրա ես նստո՞ւմ:

- Քիչ է մնում հենց հիմա էլ հատակին նստեմ զարմանքից: Որտեղի՞ց հայտնվեցիր, Էմմա: Ինչպե՞ս գտար իմ տունը, ինչպե՞ս ես ներս մտել:

- Սպասիր, փոխվեմ, լվացվեմ ու նոր պատմեմ, այ տղա, հո քո էս խալաթով չեմ մնալու: Ի դեպ դու սա կարող ես մեծ գնով վաճառել հնագիտական թանգարանին: Իմ կարծիքով առաջին խալաթներից մեկն է, որ կարվել է Հայկական բարձրավանդակում:

Նա խոսելու հետ միաժամանակ ուսերը թափահարելով մտավ լողասենյակ, հանեց խալաթը, իսկ երբ դուրս եկավ հագին չափազանց գեղեցիկ ու մոդայիկ սրճագույն մի զգեստ էր, ոսկեկար գոտիով:

- Պահ,- իր հիացմունքը արտահայտեց Զավենը:

- Բա՞,- ծիծաղեց աղջիկը, մանեկենուհու քայլվածքով կաքավեց տղայի առջևով ու նստեց նրա դիմաց:

- Դե խոսիր, Էմմա:

- Ո՞նց ես,- հարցրեց աղջիկը:

- Ոչինչ,- ասաց տղան,- ոչինչ, ոչ մի բան, ոչնչություն:

- Դու գիտե՞ս, որ վաղը Կենտկոմից այստեղ են գալու՝ քո հարցը քննելու համար:

- Ոչ,- տհաճորեն զարմացավ Զավենը: - Ո՞վ է գալու:

- Իմ հարևանը: Ավելի ճիշտ՝ իմ ընկերուհու ամուսինը: Մենք շատ մտերիմ ենք, գիտե՞ս, ամեն երեկո միասին ենք լինում: Նա չգիտեր, որ մենք ընկերներ ենք և երեկ երեկոյան հանկարծ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

խոսքի մեջ ասաց, որ ամուսինը ձեր քաղաքն է գալու ինչ-որ խմբագրի աշխատանքից հեռացնելու համար: Ավելի ճիշտ այսօր մի ուրիշ քաղաքում է լինելու և վաղն է գալու այստեղ: Հենց որ ասաց, Զավեն, մտածեցի, որ դա «Սովետական Հայաստանում» քո տպագրած ֆելիետոնի առթիվ է: Շատ դաժան էիր գրել: Դու բարի ազնիվ տղա ես, որտեղի՞ց քո մեջ այդքան չարություն, Զավեն: Դե լավ, հենց որ ասաց՝ անմիջապես զանգահարեցի քեզ: Հեռախոսը Ալվարդը վերցրեց ու ասաց, որ դու բնակարան ես ստացել և ինքը չգիտի քո հեռախոսի համարը: Ձեր մեջ սև կատո՞ւ է անցել, Զավ, հա, հարցրեցի, ճի՞շտ է, որ քո վիճակն այնքան էլ լավ չէ, Ալվարդն ասաց, թե որքան իրեն հայտնի է՝ լավ չէ: Թե դու ընկճված ես մի տեսակ և ինձ խնդրեց, որ այցելեմ քեզ: Դու հիմա նրան շատ պետք ես, էմմա, ասաց, եթե կարող ես, եկ, և որքան հնարավոր է՝ շուտ:

- Ալվարդը՞:

- Ըհը- Իսկ դուք ինչո՞ւ չամուսնացաք, Զավեն:

- Մերժեց ինձ,- ասաց Զավենը:

- Խեղճ տղա,- գլուխն օրորեց աղջիկը,- ով հասնում է՝ մերժում է , այդպես որ գնա, դու երևի տանը մնաս:

- Ինչպես տեսնում ես,- ժպտաց Զավենը:

- Հա, որ այդպես ասաց, ես էլ մտածեցի, թե գուցե իրոք կարողանամ պետք գալ քեզ: Առավոտյան անմիջապես Մառայի մոտ գնացի…

- Մառա՞ն ով է:

-Իմ ընկերուհին, Կենտկոմի բաժնի վարիչի կինը: Հակառակի նման ամուսինը տնից դուրս էր եկել արդեն: Ես Մառային պատմեցի ամեն ինչ և նա անմիջապես խոստացավ ազդել ամուսնու վրա: Բայց ինչ արեց՝ չկարողացավ գտնել նրան: Կենտկոմ չէր գնացել: Իսկ երբ ես հայտնեցի, որ ուզում եմ քեզ մոտ գալ, հանգստացրեց, թե ամուսինը ձեր քաղաքում վաղն է լինելու: Հենց որ տեսնես նրան, անմիջապես ասա, թող ինձ զանգ տա, պատվիրեց նա, և դու էլ իմ ու քո կողմից միաժամանակ զգուշացրու, որ ծայրահեղ միջոցների չդիմի: Ասա, որ ես այդպես եմ ցանկանում: Հենց այդպես էլ ասաց, գիտե՞ս:

Զավենը ժպտաց:

- Ես էլ տաքսի նստեցի և ուղիղ առողջարան եկա: Իսկ առողջարանից Ալվարդն ինձ այստեղ բերեց և բանալին վերցնելով, տվեց ինձ: Նա այդ բանալին հաճա՞խ էր օգտագործում, Զավեն…

Զավենը ծիծաղում էր արդեն:

- Ալվարդն այս տանը երբեք չի եղել, ընկերուհի,- ասաց նա,- շատ եմ խնդրել, բայց չի եկել:

- Բա բանալու տեղը որտեղի՞ց գիտեր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Այստեղ բոլորն էլ իրենց բանալիները դռան առջև փռած փալասի տակ են պահում, ընկեր դատախազ: Կարող ես անձամբ ստուգել իմ հարևանների փալասները, երբ նրանք տանը չեն:

Էմման թափ տվեց ձեռքը:

- Դե լավ,- ասաց նա,- ջահել տղա ես, քեզ ամեն ինչ կարելի է: Անցնենք առաջ: Ուրեմն վաղն առավոտյան միասին քաղկոմ կգնանք ու հենց որ բաժնի վարիչը տեղ հասնի…

- Իսկ ով է այդ բաժնի վարիչը, Արիս Մուրադովն է,- հարցրեց Զավենը:

- Արիսն է,- աչքերը լայն բացեց Էմման,- դու նրան ճանաչո՞ւմ ես,

- Նա արդեն տեղ է հասել,- ժպտաց Զավենը:

- Որտե՞ղ է, ինչպե՞ս թե տեղ է հասել:

- Բյուրոյի արտահերթ նիստ հրավիրեց ու շտապ հեռացավ:

- Հետո՞, - վախեցած բացականչեց Էմման: - Եվ ի՞նչ որոշեցին:

- Բանավոր զգուշացում ստացա- չգիտեմ ինչի համար

Էմման թեթևացած շունչ քաշեց,

- Դա դատարկ բան է, չէ՞, Զավ…

- Ամենադատարկ բանը:

- Ուրեմն Մառան կարողացել է բռնել նրան,- ծիծաղեց աղջիկը,- շշմելու կին է, գիտե՞ս…

Զավենը չուզեց հուսախաբ անել նրան:

- Հավանաբար,- համաձայնվեց նա: - Ուրեմն Մառան այդպիսի մեծ իրավունքնե՞ր ունի ամուսնու նկատմամբ:

- Ինչո՞ւ միայն Մառան, Զավեն: Ուզում ես հավատա, ուզում ես, չէ, բայց կուսակցական ու պետական ապարատի կադրային հարցերը հիմնականում ղեկավարների կանայք են լուծում:

- Վերջ տուր, Էմմա,-- ժպտաց տղան:

- Հավատա, Զավեն: Ես մի քանի անգամ պատահաբար ներկա եմ եղել նրանց հավաքներին: Ու լսել եմ, թե նրանք ինչպես են խորհրդակցում և ինչ որոշումներ են ընդունում, ինչպես են քննարկում, թե ով է լավ մարդ, ով է վատ մարդ, թե ում կարելի է նշանակել, ասենք կաթի-մսի արդյունաբերության մինիստր, իսկ ում՝ «Սովետական Հայաստան» թերթի խմբագիր: Ծիծաղիր, ծիծաղիր, սկզբում ես էլ էի կարծում, թե կանայք են, էլի, խոսում են, իսկ երբ մի քանի օր հետո իմացա, թե ում են նշանակել մսի մինիստր և ում խմբագիր, քար կտրեցի: Նրանց ասած մարդկանց, Զավեն: Կուզես ավելի սարսափելի բան ասեմ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Գործ չունես,- չուզենալով հավատալ նրան, կատակեց Զավենը:

- Կասեմ: Մառային հյուր էր եկել Կենտկոմի քարտուղարի կինը, որը նրա մոտիկ ընկերուհին է, Մարգարիտա Պավլովնան: Խոսք բացվեց նրանց ընդհանուր ծանոթ մի տղայի մասին, որին ոչ մի կերպ չի հաջողվում շրջկոմի առաջին քարտուղար դարձնել: Մառան ասաց, թե նույնիսկ Մինիստրների Խորհրդի նախագահի կինը սկզբում խոստացել է, բայց հետո խոստովանել է, որ չի կարող: «Իրա՞ն,- արհամարհանքով հարցրեց Կենտկոմի քարտուղարի կինը: - նրան ո՞վ է բանի տեղ դնողը: Ուզո՞ւմ ես մի ամսում դարձնեմ»: Մառան ասաց դժվար է, որովհետև առաջին քարտուղարի ազատ տեղ չկա: Եվ հանկարծ Մարգարիտա Պավլովնան ծիծաղեց. «Ուզում ես գրազ գանք, որ նա ամենաշատը երեք ամիս հետո մի շրջանի առաջին քարտուղար կդառնա»: «Ախր ո՞նց,- զարմացավ Մառան,- ասում եմ՝ տեղ չկա»: «Իսկ եթե ես մի նոր շրջան ստեղծե՞մ»: «Նա կգա քո ձեռքերը համբուրելու, Մարգարիտա Պավլովնա, և ամեն մի սիրունիկ մատիդ մի ադամանդե մատանի կհագցնի»: «Աման,- ծիծաղեց Մարգարիտա Պավլովնան: - Իմ ձեռքերը համբուրող շատ կա: Ուրեմն ասում ես այդքան լավ տղա է»: Դե հիմա ինչքան ուզում ես ծիծաղիր, ընկեր Շարաֆյան, երեք ամիս էլ չանցած Հայաստանի շրջանների թիվը ավելացավ ևս մեկով և շրջանի կոմունիստները միահամուռ նոր շրջկոմի առաջին քարտուղար ընտրեցին այդ լավ տղային: Դե ծիծաղիր, ընկեր Շարաֆյան, ինչո՞ւ չես ծիծաղում:

Բայց Զավենի ծիծաղն իրոք չէր գալիս: Նա այլևս չէր կարող չհավատալ Էմմային, որովհետև այդ «լավ» տղային ինքն էլ գիտեր և ժամանակին ինքն էլ էր զարմացել, թե այդ ի՞նչ բարեմասնությունների համար կուսակցական աշխատանքի ոչ մի փորձ չունեցող, ընդամենը երկու տարի «Ինտուրիստում» բաժնի վարիչ աշխատած մարդուն հանկարծ շրջկոմի առաջին քարտուղար դարձրեցին:

Հավատաց ու սարսափեց:

- Խելագարվել կարելի է, - ասաց նա միանգամից ընկճված: - Դրանից հետո ինչպես այդ ղեկավար կոչվածներին:

Էմման ծիծաղեց ու մատը բարձրացրեց վեր:

- Իսկ ինչո՞ւ ես կարծում, թե միայն այնտեղ է այդպես: Նրանց օրինակով ամեն տեղ էլ նույնն է, ընկեր խմբագիր: Նրանք էլ երևի իրենց վերևներից են օրինակ վերցնում: Հեռու չգնամ, եթե մեզ մոտ, օպերայում ուզում ես կարգին դեր ստանալ՝ կամ պետք է գլխավոր ռեժիսորի սիրուհին դառնաս կամ նրա կնոջ մտերիմ

Ընկերուհին: Երրորդ ընտրություն չկա: Ինչ տաղանդ ուզում ես ունեցիր՝ գրոշի արժեք չունի: Որ թատրոնն ուզում ես գնա՝ առաջատար դերասանուհին կամ ինչպես մեզ մոտ պրիման՝ կամ գլխավորի սիրուհին է , կամ կինը: Եվ նրանք են որոշում, թե ով է արժանի խաղալու իրենց հետ, իրենց կողքին, իրենց ներկայացման մեջ: Նրանք են վճռում, թե ում պետք է բնակարան տալ և ում ուղարկել Մոսկվա՝ հյուրախաղերի: Նրանցից է կախված, թե ով է կոչում կստանա և ով՝ շքանշան…

- Հիմա դու ձեր գլխավորի ի՞նչն ես,- ներսում կուտակված թույնից ազատվելու ուրիշ ելք չգտավ Զավենը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Առայժմ կնոջ ընկերուհին,- ասաց Էմման: - Եվ մի հիմար շատախոս, անպետք աղջիկ,- հանկարծ ավելացրեց նա՝ շտապով վեր թռչելով տեղից:

- Ինչո՞ւ,- զարմացավ Զավենը:

- Որովհետև թերմոսներով ճաշ եմ բերել քեզ համար ու մոռացել, շատախոսությամբ եմ տարվել,- համարյա լացակումած ասաց նա: - Գետինը մտնեն աշխարհի բոլոր ղեկավարներն ու նրանց հրամանատար կանայք: Երևի սառել է ամեն ինչ:

- Թերմոսով ճա՞շ:

- Բա ի՞նչ անեի,- խոհանոցից բերած հաստափոր թերմոսները սեղանին դրեց Էմման: - Մտածեցի, թե գուցե դու տանը մթերքներ չունենաս:

- Դու Դելփյան գուշակների մեջ ամենաիմաստունն ես, Էմմա ջան,- ծիծաղեց Զավենը,- իսկ գնչու կանայք ոտքերիդ հողն էլ չարժեն: Բայց ո՞նց ես տեղ հասցրել, այ աղջիկ: Ես կխելագարվեմ՝ սա ի՞նչ է, բոզբաշ: Իսկ սա ամառային տոլմա՞ : Բռնեք ինձ, ընկնում եմ- Հայեր, հասեք…

Գովասանքից շառագունած ու ոգևորված Էմման արագ-արագ ափսեների մեջ տեղավորեց ճաշերը, սառը խորտիկները, հացամանի մեջ կտրտած լավաշ դրեց, թաց սրբիչի միջից հանեց, սեղանին կիտեց պանիրը, բողկն ու կանաչին և նրանք իրենց սովորությամբ ծիծաղելով ու ճչալով սկսեցին միմյանց ձեռքից փախցնել պատառները:

- Անխիղճը էս հրաշք ուտելիքները հավաքել, բերել, հասցրել է էստեղ ու նստել մի ժամ դատարկ-մատարկ բաներ է պատմում,- ուտելով ու հետն էլ խեղդվելով երջանկացած շատախոսում էր Զավենը:

Իսկ երբ ավարտեցին ընթրիքը, ավելի ճիշտ, երբ Էմման ըստ սովորության ստամոքսը շփելով, սարսափահար վեր թռավ տեղից ու լաց եղավ, թե բկլիկի նման անգիտակցաբար այնքան կերավ, որ հիմա Կարլոսն իրեն բարձրացնի թե չէ՝ կմեռնի, մի կուշտ սրամտեցին ու ծիծաղեցին: Իսկ երբ խմել-վերջացրել էին նաև սուրճը, միակ մթերքը, որ Զավենի տանը կար, Էմման ասաց.

- Իսկ հիմա, Շարաֆյան, զանգահարիր հյուրանոց և քո հեղինակությունը օգտագործելով մի լյուքս վերցրու ինձ համար, որովհետև ես սիրում եմ լավ ապրել, իմ սիրելի ընկեր:

Զավենը հարցական հայացքով նայեց նրան:

Հեռախոսին նայիր, - խորհուրդ տվեց Էմման:

- Ինչպես շուտ չէինք մտածել, - լրջորեն ասաց Զավենը: -Վախենում եմ տեղ չլինի, Էմմա: Թեթև ատլետների մրցումներ են մեր քաղաքում:

-Մի փոքրիկ պարուհո՞ւ համար էլ տեղ չի գտնվի, - մատը նրա վրա թափահարելով ժպտաց Էմման: - Զանգահարիր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բայց քիչ անց պարզվեց, որ հյուրանոցում իսկապես ոչ մի ազատ համար չկա:

Հյուրանոցի աղմինիստրատորը ներողություն խնդրելով հավատացրեց, որ նույնիսկ դիրեկտորի առանձնասենյակը հյուրերի են տրամադրել:

- Բա հիմա ի՞նչ անեմ,- շրթունքները ուռցրեց աղջիկը:

- Էմմա,- ասաց տղան: - Մենք ով ենք իրար համար, փաստորեն քույր ու եղբայր չենք: Եկ իրար հետ տեղավորվենք, հա…

- Քո մահճակալի՞ն,- գործնական հարցրեց Էմման:

Զավենը հազաց.

- Դու քնիր իմ մահճակալին, իսկ ես՝ հատակին, ճապոնացու նման իմ ափսեների կողքին կքնեմ: Եղա՞վ:

- Չեղավ,- ասաց Էմման: - Լսիր, դու միթե որևէ տեղ չունես գնալու: Միթե այս մեծ քաղաքում որևէ հարազատ չունես: Ասենք, ի՞նչ եմ ասում, Ալվարդը չասա՞ց, որ մենակ ես: Հա, ճիշտ որ իսկապես, գուցե Ալվարդի մոտ գիշերես, հա՞: Տեսնում ես ուրիշ ելք չկա, Զավեն: Հանուն ինձ…

- Կխեղդեմ,- բռունցքները բարձրացրած առաջ եկավ տղան:

-Լավ, լավ, բյուրոյի համար նոր հարց մի սարքիր, ընկեր խմբագիր: Գտա: -Նա հեռախոսի վրա համար հավաքեց: - Ալվարդ, քնած հո չէի՞ր, ես եմ: Հյուրանոցում տեղ չկա, Ալվարդ… Ինչ…շատ շնորհակալ եմ: Գալիս եմ: Չէ, չէ, միտք չունի: Զավենը

կուղեկցի ինձ:

Նա ցած դրեց լսափողը, դեպի տղան շրջվեց ու հարցրեց ծիծաղկոտ, պայծառ աչքերով,

-Լավ գտա, չէ. Հիմա ոչ դու կարող ես Ալվարդի մոտ գնալ, ոչ էլ Ալվարդը՝ քեզ մոտ…

- Էմմա ,- հուսահատ ծիծաղեց տղան,- եթե քո բերած բոզբաշն ու տոլման չլինեին, ազնիվ խոսք, կսպանեի քեզ: Ի վերջո դու ինչ ես ուզում ինձանից, ասա…

- Ոչ մի բան, -միանգամից տխրած ասաց Էմման, - ես ուղղակի խոտի դեզի վրա նստած մի հիմար շնիկ եմ:

* * *

Քնի մեջ նա հեռախոսի երկար, անսովոր զանգեր էր լսում, բայց նրան թվում էր, թե դա երազի մեջ է: Հետո վեր թռավ միանգամից, մեկնեց ձեռքն ու վերցրեց լսափողը:

- Ալո, ալո, պատասխանեք Երևանին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երևանի՞ն: Բայց ո՞վ կլինի այս ժամին: Զավենը պատուհանից դուրս նայեց և տեսավ, որ նոր-նոր է լուսանում: Նայեց ժամացույցին՝ ընդամենը ժամը յոթն էր: Սրտի զարկերն արագացան, այս ժամին հենց այնպես չեն զանգահարի:

- Ալո, Զավեն, դո՞ւ ես:

- Ես եմ, ո՞վ է,- իր հերթին չարացած հարցրեց Զավենը: .

- Գևորգն է, Զավեն…

- Գևորգը՞… Ո՞ր Գևորգը,- դեռ քնի մեջ, նա չէր կարողանում կողմնորոշվել:

- Սիրանի ամուսինը:

Թյու, ի՞նչ հիմար բան ստացվեց:

- Հա, Գևորգ ջան, լավ չի լսվում- Ի՞նչ կա, ի՞նչ չկա - հարցրեց նա իր կարծիքով անփութորեն, որպեսզի հանկարծ որևէ վատ լուր չլսի:

- Մայրիկը լավ չէ, Զավեն: Պետք է շտապ Երևան գաս:

- Մայրիկը՞,- գոռաց տղան,- ի՞նչ է պատահել, ի՞նչ է պատահել, Գևորգ…

- Շտապ արի, Զավեն- լսո՞ւմ ես…

- Լսում եմ, լսում,- փորձեց բղավել Զավենը, սարսափով զգալով, որ ձայնը խզվել է: - Ալո, ի՞նչ է պատահել, բան ասա, բան հասկանանք, Գևորգ ջան- Ալո, ալո, անջատվեց- Երևան, - խռպոտած ձայնով աղաղակեց Զավենը,- Երևան- անջատվեց… Երևան..,

Նա հագնվեց ասես տենդի մեջ, այս ու այն կողմ ընկնելով ու անընդհատ դիպչելով ինչ-որ իրի ու անընդհատ մտածելով, թե հիմա ի՞նչ անի: Ախր ոչինչ չհասկացավ: Նա նույնիսկ մտքի մեջ չէր ուզում ենթադրել, թե մոր հետ անդառնալի որևէ բան է կատարվել… և ամբողջ ուշադրությունը դիտմամբ կենտրոնացնում էր այն հարցին, թե հիմա ի՞նչ անի ինքը, ախր որոշակի ոչինչ է չհասկացավ: Անիծյալ հեռախոս- Ախր եթե տանը հեռախոս ունենար, կզանգահարեր, կճշտեր, գուցե որևէ դեղ է հարկավոր մայրիկին- Երևանում դե՞ղ կճարես- Իսկ այստեղ ծանոթ է դե-դեղագործը, չի մերժի… Գուցե ընկերներից մեկին զանգահարի, գնան տուն հետաքրքրվեն- Բայց Գևորգն ասաց շտապ արի, ասաց՝ պետք է շտապ Երևան գաս, Զավեն, մայրիկը լավ չէ- Բոլոր դեպքերում հիմար բան ստացվեց, որ չհասկացավ, թե ով է Գևորգը… ի՞նչ կմտածի- լավ, բայց հիմա ի՞նչ անի…

Նա նորից նայեց ձեռքի ժամացույցին՝ ժամը յոթն անց էր տասը րոպե: Գառնիկ Բադալյանն, իհարկե, քաղկոմում չի լինի: Բոլոր դեպքերում պարտավոր է տեղյակ պահել նրան, որ բացակայելու է քաղաքից: Կարգն է այդպես: Ոչ մի ղեկավար իրավունք չունի որևէ տեղ մեկնելու առանց քաղկոմի առաջին քարտուղարի թույլտվության: Գառնիկ Վարդանիչը շատ խիստ է այդ հարցում: Միլպետ Ռոբերտ Մասիսյանին նկատողություն հայտարարեց միայն

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

նրա համար, որ առանց թույլտվություն խնդրելու Երևան էր գնացել մինիստրության կոլեգիային մասնակցելու, երբ անձամբ մինիստրն էր նրան կանչել:

Բայց հիմա ի՞նչ անի: Գուցե տուն զանգահարի: Ճիշտ է,դա առաջին անգամ կլինի- բայց եթե ուրիշ ելք չկա- Այսինքն՝ ի՞նչ կա դրա մեջ: Գառնիկ Վարդանիչը հաստատ քնած չի լինի: Երևի նույնիսկ մարզանք է արել ու սառը լոգանք ընդունել: Նա շատ է հետևում իրեն, ասում են, թե նույնիսկ ընդմիջմանն իր առանձնասենյակում էլ մարզանք է անում՝ չինական ինչ-որ սիստեմով: Իսկ կիրակի օրերին, դա արդեն հարյուր անգամ տեսել է Զավենը, հրահանգիչների հետ վոլեյբոլ է խաղում քաղկոմի բակում, Եվ վերջապես ինչ ուզում է թող լինի- ի՞նչ ամաչել, երբ մայրիկը հիվանդ է…

Նա հեռախոսի գրքի մեջ գտավ համարը ու զանգահարեց: Հեռախոսը Բադալյանը վերցրեց, և նրա ձայնն իրոք առույգ ու թարմ էր:

- Ես ձեզ լսում եմ:

- Գառնիկ Վարդանիչ,- թոթովեց Զավենը,- կներեք, որ այսքան վաղ անհանգստացնում եմ ձեզ…

- Ի՞նչ վաղ, արդեն գործի գնալու ժամն է: Լսում եմ, Զավեն:

- Տնից զանգահարեցին- Ասացին, որ ծանր է մորս վիճակը- Ասացին, որ շտապ Երևան գնամ-- նա այլևս չկարողացավ շարունակել ու շունչ քաշեց:

- Պիտի գնաս, ի՞նչ խոսք,- ասաց քարտուղարը: - Հենց հիմա գնա, տղաս- Եթե ես պետք լինեմ որևէ հարցով, այնտեղից անմիջապես զանգահարիր ինձ: Լսո՞ւմ ես:

Զավենը զգաց, որ լացը գալիս է: Կոկորդը սեղմվեց, սեղմվեց ու ցավաց անասելի:

- Շատ շնորհակալություն,- հազիվ արտաբերեց նա: Ու ամաչեց, որ խոսել չի կարողանում:

- Իսկ ինչո՞վ ես գնում:

- Ժամը իննին ավտոբուս կա,- աշխատելով հաղթահարել իրեն, անփույթ ձայնով ասաց Զավենը:

Քարտուղարը լռեց և Զավենին նույնիսկ թվաց, թե արդեն անջատվել է հեռախոսը:

- Չեղավ,- լսեց նա նորից Բադալյանի ձայնը: - Ուրեմն այսպես կանենք: Դու կգնաս իմ «Պոբեդայով»…

- Պետք չէ, Գառնիկ Վարդանիչ,- նորից ալեկոծվեց տղան:

- Լսիր, ինչ որ ասում եմ,- բարկացավ քարտուղարը: - Ես նոր ավտոմեքենա եմ ստացել և այդ «Պոբեդան» փաստորեն քոնն է, երկու օր հետո խմբագրությանն էի տալու: Ուրեմն համարիր, որ քոնն է, լսո՞ւմ ես: Ես հիմա կզանգահարեմ վարորդին և կկարգադրեմ, որ շտապ գործուղում վերցնի: Եվ Երևանում կմնա քո տրամադրության տակ, որքան հարկ լինի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Գառնիկ Վարդանիչ…

- Եթե կհավանես, թող աշխատի քեզ հետ, իսկ եթե չէ, քեզ ուրիշ վարորդ կտան: Ժամը ութին մեքենան քո տան մոտ կլինի: Հարմա՞ր է…

- Գառնիկ Վարդանիչ, Գառնիկ Վարդանիչ,- խեղդվեց Զավենը,- ես ի՞նչ պետք է անեմ, որ արժանի լինեմ ձեզ- Ես

- Ավելորդ բաներ ես ասում, Զավեն,- մեղմ նախատեց նրան քարտուղարը: - Բարի ճանապարհ և- և առողջություն մայրիկին,

Լավ է, որ նա անջատեց հեռախոսը, որովհետև Զավենն այլևս չգիտեր ինչ ասել, ինչ անել: Անհնարին էր բառերով արտահայտել այն ամենն, ինչ փոթորկում էր տղայի հոգում: Նրա տրամադրությունը նույնիսկ բարձրացավ մի պահ, բայց դրան հետևած սրտի ծակոցը հիշեցրեց, որ նա առայժմ ուրախանալու իրավունք չունի: Բոլորովին:

Որովհետև դեռևս հայտնի չի, թե ինչ դրության մեջ է մայրը:

Նա ամենևին չէր ցանկանա, որ հեռախոսը հիմա Ալվարդը վերցնի և բարի նախանշան համարեց, երբ լսեց Էմմայի ձայնը:

- Բարի լույս, Էմմա:

- Ես էլ ուզում էի քեզ զանգահարել, բայց վախենում էի, թե դեռ քնած կլինես:

- Այնպես է ստացվում, որ ես շտապ Երևան պետք է մեկնեմ,- ասաց Զավենը: - Կարող ենք միասին գնալ, չէ՞:

- Ուռռա,- ճչաց Էմման,- հիանալի կլինի,- բայց անմիմիջապես լռեց ու հարցրեց անհանգստացած: - Բայց քո ձայնը- ի՞նչ է պատահել, Զավեն, հո դարձյալ այդ գործով չե՞ն կանչել:

- Չէ, չէ,- ասաց Զավենը: - Մայրս է հիվանդացել, Էմմա: Զանգահարեցին, թե եկ- Մի խոսքով, պատրաստ եղիր, ես ժամը ութին կմոտենամ մեքենայով:

- Լավ,- ասաց Էմման,- կտեսնես, ամեն ինչ լավ կվերջանա, քեզ մի կորցնի, Զավեն…

Քեզ մի կորցնի- Աստված հեռու պահի, եթե մայրիկին մի բան պատահի, կխելագարվեմ, մտածեց Զավենը: Բայց ի՞նչ կարող է կատարված լինել, մայրը առողջ է ու ջահել, վաթսուն տարեկան էլ չկա: Եվ հաճախ է հպարտանում, թե կյանքում ոչ մի օր անկողին չի ընկել: Ես հիվանդանալու ժամանակ չունեմ, ասում է, և հնարավորություններ էլ չունեմ: Բարեգութ աստված երևի տեսնում է, որ ես պայմաններ չունեմ, դրա համար էլ ինձանից հեռու է պահում ամեն տեսակի հիվանդությունները: Խեղճ, տանջված մայրիկ: Հիմա երևի այրվում է տաքության մեջ ու ցավոտ գլուխը ստեպ-ստեպ բարձրացնելով դռանն է նայում: Իմ անուշ, իմ արիասիրտ մայրիկ: Ենթադրում եմ, թե ինչքան ծանր է վիճակդ, որ համաձայնվել ես, որ զանգահարեն ու Երևան կանչեն ինձ: Նա նորից պատկերացրեց մորը՝ անկողնու մեջ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

պառկած, չգիտես ինչու՝ թաց թաշկինակը ճակատին, և իրեն՝ խոնարհված մոր վրա: Ու հանկարծ ամենայն հստակությամբ հիշեց ճիշտ նման մի պատկեր, բայց Կարմիրի շրջանի Օրջոնիկիձե գյուղում: Միայն թե այնտեղ հակառակն էր: Այնտեղ Զավենն էր պառկած ու այրվում էր տաքության մեջ, իսկ մայրը նրա վրա թեքված, քնքուշ խոսքեր էր ասում ու անընդհատ փոխում թաց թաշկինակները:

Ամառ էր, շոգ ամառ: Պատերազմի առաջին տարվա ամառը: Դե, բանվորի տուն էր, էլի, պարզվեց, որ նույնիսկ մի ամսվա հոգեպահուստ չկա: Մայրը չէր կարողանում կերակրել երեխաներին և բերել, Կարմիրի շրջանի այդ գյուղն էր հասցրել, ընտանիքի հին բարեկամ Եգոր Շուշանյանի տուն, որ գյուղ տեղ է, էլի, մի կերպ ապրեն, մինչև որ ավարտվի պատերազմը: Ասում էին երկու-երեք ամսվա պատմություն է, մեր հզոր Կարմիր Բանակն անմիջապես կոչնչացնի ֆաշիստներին ու խանութներում կրկին հաց կլինի: Եվ այս նեղ ու կրակ ժամանակ տասնամյա Զավենը հիվանդացավ: Մրսել էր, երևի նույնիսկ թոքերի բորբոքում էր սկսվել, բայց ո՞վ կիմանար, թե իրականում ինչ հիվանդություն է. ոչ բժիշկ կար, ոչ բուժման կետ: Գյուղի պառավներն ինչ անում էին՝ չէին կարողանում իջեցնել տղայի տաքությունը: Նույնիսկ ատամնավոր մի հին պեչենու կտոր ձեռքներին, աղոթքներ էին մրմնջում և գուցե թե իբրև նշխար փորձում ուտեցնել հիվանդին, բայց Զավենը միայն թույլ-թույլ տարուբերում էր գլուխը և զառանցում էր ջերմի մեջ: Հետո պառավները հոգնեցին ու հուսահատվեցին երևի, որովհետև հավաքվել էին օդայի մի անկյունում, երգով լաց էին լինում կամացուկ ու սպասում էին, որ տղան մեռնի: Ու միայն մայրը չէր հուսահատվել, մանկան վրա խոնարհված, անընդհատ փոխում էր թրջոցները ու քնքուշ-քնքուշ խոսքեր էր ասում նրան, աղերսելով ուշքի գալ, խոսել, որևէ բան ասել, որևէ բան ուզել…

- Ի՞նչ ես ուզում, ցավդ տանեմ: Ասա, արև ջան, ի՞նչ ես ուզում, որ եփեմ քեզ համար… Հավիկ ուզո՞ւմ ես, կյանքիդ մեռնեմ…

- Ձյուն,- մեկ էլ հանկարծ բացեց աչքերն ու ասաց տղան՝ պապակած շուրթերով:

- Ի՞նչ:

- Ձյուն եմ ուզում, մամ…

Որքան էլ տարօրինակ թվա, ամռան այդ տապին գյուղում ձյուն կար: Գետի վերևում, լեռնալանջին գարնանը ճաքճքում էր հողը, թափվում ցած ու իր տակ պահում ձմռանն իջած ձյունը: Երբ պետք էր լինում՝ գյուղացիները բահ ու դույլ վերցրած գետափ էին գնում ու քանդում, հանում էին ձյունը այդ բնական զարմանալի սառնարանից:

- Քեզ ձյուն չի կարելի, ցավդ տանեմ, - երջանկացած, որ տղան երկու օրվա անզգայությունից հետո ուշքի է եկել, բայց և միաժամանակ վշտացած, որ անհնարին է կատարել նրա ցանկությունը, լաց եղավ մայրը: - Դու մրսած ես, քեզ սառը բան չի կարելի: Ուրիշ ինչ ես ուզում, մատաղ…

- Ձյո՞ւն… վառվում եմ, մամ ջան… ձյո՞ւն, - մրմնջաց երեխան ու կրկին անզգայացավ, սկսեց զառանցել…

Մայրը վեր կացավ տեղից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ձյուն բերեք,- ասաց նա:

Նրա վրա միանգամից հարձակվեցին բոլորը: Ինչ ձյուն, ինչ բան, հո չի խելագարվել: Մրսածին ձյո՞ւն կտան: Միանգամից սպանի, էլի:

- Ձյուն բերեք,- վճռական կրկնեց մայրը: - Թող իմ երեխայի սիրտը հովանա: Դուք խիղճ չունե՞ք, ես չեմ կարողանում տեսնել, թե ոնց է վառվում, տապակվում իմ տղան…

Հորդորներն իզուր անցան: Ինչ արեցին՝ չկարողացան ետ կանգնեցնել վշտից գրեթե խելագարված կնոջը, որը վերցրել էր դույլն ու ինքն էր դուրս շտապում: Ինչ-որ մեկը նրանից խլեց դույլը, դռան տակից նաև բահը վերցրեց ու գնաց գետափ հուսահատ մոր կամքը կատարելու:

Իսկ երբ բերեցին դույլը, մայրը մի մեծ գդալ անարատ, սառը ձյուն վերցրեց ու գդալը մոտեցրեց որդու շրթունքներին:

- Դե կեր, թող ների ինձ աստված, կեր ու հանգստացիր, բալես…

Տղան ցնցվեց սառնությունից, բացեց աչքերը և մորը նայեց զարմանքով ու երախտագիտությամբ:

- Ձյո՞ւն…

- Ձյուն է, ձյուն, կեր, թող հովանա սիրտդ, մատաղ…

Պառավներն սկսեցին խաչակնքել ու լաչակով կապված անատամ ծնոտները շարժելով, փնթփնթալով անիծել մորը.

- Անխիղճ, անաստված, չորանա էդ ձեռքդ, բա մայրն էլ սպանի՞ իր որդուն:

Իսկ որդին ագահաբար կուլ տվեց ձյունն ու հառաչեց.

- Վախ, էլի կտա՞ս, մամ…

- Ինչքան ուզում ես կեր, ցավդ տանեմ:

- Մեծ ափսեով կտա՞ս:

- Կտամ, ցավդ տանեմ…

Մայրը մի մեծ ափսե ձյուն վերցրեց դույլից: Դրեց որդու կողքին, մահճակալի վրա: Հետո մի մեծ բարձ դրեց մեջքի տակ ու օգնեց նրան թիկնելու:

Բռով ուտեմ, էլի, մամ ջան…

- Բռով կեր,- ասաց մայրը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ տղան տենդորեն, շտապելով, բուռ-բուռ բերանը լցրեց ձյունը: Կուլ էր տալիս ու ցնցվում էր սառնությունից, կուլ էր տալիս ու ցնցվում էր: Այնպես էր հառաչում ու ցնցվում, որ պառավներն սկսեցին բարձրաձայն լաց լինել:

Թող ներեն մեզ բժիշկները, թող ներեն այնպես, ինչպես աստված ներեց Զավենի մորը: Ով էլ լինի, կասի դա հակամարդկային, անբնական, անմիտ, հանցագործ արարք է եղել երեխայի հանդեպ: Որ փաստորեն դա հանցագործություն է եղել և մանկասպանության փորձ: Բայց ինչպես ավետարանն է ասում՝ անքննելի է տիրոջ կամքը: Հավանաբար ճիշտ նույնքան էլ անքննելի ու անմեկնելի են մարդու մարմինն ու հոգին:

Որովհետև կատարվեց հրաշք: Իսկ որտեղ հրաշք կա, տրամաբանությունն ավելորդ է:

Ուրեմն կատարվեց հրաշք: Տղան հազաց սաստիկ, պոռթկալով ու ճչալով ներքին ցավից, և նրա քիթ ու բերանից միաժամանակ դուրս ցայտեց մուգ, գրեթե լերդացած սև արյունը:

Այնժամ նույնիսկ պառավները հավատացին ու երկյուղածությամբ խաչակնքելով ասացին՝ փրկվե՞ց երեխան.. Մենք քո ոտքի հողն ենք, տե՞ր…

Իսկ երբ առավոտյան տղան բացեց աչքերը, առաջինը որ նկատեց իր վրա խոնարհված մոր դեմքն էր: Զավենը նայեց մոր անքուն, տառապած դեմքին ու ժպտաց:

…Ահա թե որ պատկերը հիշեց Զավեն Շարաֆյանը իր փոքրիկ բնակարանի պատուհանի մոտ կանգնած անհամբերությամբ սպասելով ավտոմեքենային, որպեսզի ժամ առաջ, վայրկյան առաջ հասնի տուն, հասնի մորը, խոնարհվի նրա մահճակալին ու ասի.

- Ի՞նչ ես ուզում, մեր ջան,,. Մի բան ասա, ցավդ տանեմ… Ձյո՞ւն ուզում ես, մայրիկ… ձյուն,,.

Ու թող նորից հրաշք լինի: Թող մի անգամ էլ հրաշք կատարվի, ի՞նչ կլինի, տեր աստված… Բայց հրաշքները չեն կրկնվում: Այլապես կդադարեին հրաշք կոչվելուց:

Երբ Զավեն Շարաֆյանը տուն հասավ, դուռն այս անգամ ոչ միայն կողպեքով փակ չէր, այլև բաց էր կրնկի վրա…

* * *

Ինչպես պայմանավորվել էին մահվան յոթերորդ օրը տեղի ունեցա արարողության ժամանակ, Զավենը վաղ առավոտյան գնաց Սարի թաղ, այն տունը, որտեղ Մկրտիչ Զուլոյանն էր ապրում, որպեսզի նրա հետ միասին մեկնեն իրենց փոքրիկ քաղաքը: Գուցե Մկրտիչը չէր ուզում, որ տղան միայնակ վերադառնա, կամ գուցե իսկապես կարոտել էր հայրենի քաղաքին, գուցե և երկուսը միասին, բայց նա ասաց,

- Զավեն, թե քեզ չեմ խանգարի, ես էլ եմ ուզում քեզ հետ տուն գնալ: Կիրակի է, էլի, մի քիչ ման կգամ ու ետ կդառնամ ավտոբուսով:

Նա այդպես էլ ասաց՝ տուն գնալ, և Զավենը հուզվեց դրանից,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Իհարկե, ընկեր Զուլոյան-Միայն շնորհակալ կլինեմ… Ինչ լավ բան մտածեցիք:

«Պորեդայի» վարորդ Տիգրանը, որ մի ջահել ու աչքաբաց տղա էր, այնքան վարպետությամբ էր կողմնորոշվում Սարի թաղի ծուռտիկ-մուռտիկ փողոցներում, որ Զավենը հարցրեց հետաքրքրությամբ.

- Հո Սարի թաղում չե՞ս ծնվել, Տիգրան:

Վարորդը գոհ ժպտաց.

- Չէ, ընկեր Շարաֆյան, բայց Գառնիկ Վարդանիչն ինձ մի օր էլ չէր պահի, եթե հանկարծ միանգամից չգտնեի նրա ուզած տեղը: Ստիպված եմ եղել աչքերս լայն բացել ու հիմա Երևանը հինգ մատիս նման գիտեմ:

Զավեն Շարաֆյանը վարորդին միայն հասցեն էր ասել և, չնայած Տիգրանի հայտարարությանը, այնուամենայնիվ զարմացավ, երբ ավտոմեքենան կանգ առավ երկհարկանի, սև տուֆից կառուցված մի հնաոճ տան մոտ, որի դռնից դուրս եկել ու նրանց էր սպասում Մկրտիչ Զուլոյանը:

- Ներս չմտնե՞նք, Զավեն:

- Չէ, - ասաց տղան:

Զուլոյանը չպնդեց:

Դե լավ,- ասաց,- հիմա գալիս եմ:

Նա տուն մտավ ու քիչ անց հայտնվեց ձեռքի փոքրիկ ցանցազամբյուղով, նստեց Զավենի կողքին, ցանցազամբյուղը ծնկներին դրեց ու ասաց.

- Գերեզմանոց գնա, Տիգրան ջան:

Տիգրանը հարցական հայացքով Զավեն Շարաֆյանին նայեց:

- Արա այնպես, ինչպես ընկեր Զուլոյանն է առաջարկում, - ասաց Զավենը:

Մկրտիչ Զուլոյանը հազաց, վառեց սիգարետը, ծխեց ու համենայնդեպս հարկ համարեց բացատրել:

- Գնանք մնաս բարով ասենք ու նոր ճանապարհ ընկնենք: Հո չե՞ս շտապում, Զավեն…

- Ինչ եք ասում,- հուզվեց տղան: - Ես էլ էի ուզում, բայց…

- Միայն թե՝ դու-ով, և այսուհետև Մկրտիչ կասես ինձ:

- Չի ստացվի, ընկեր Զուլոյան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Կստացվի: Ոչ մի կարիք չկա մեր տարիների տարբերությունը ընդգծել, մանավանդ որ երկուսս էլ արդեն լրիվ որբեր ենք:

Տիգրանը մեքենան կանգնեցրեց քաղաքային գերեզմանատան մուտքի մոտ: Մկրտիչ Զուլոյանն առաջինը իջավ, մոմեր ու խունկ գնեց մուտքի մոտ առևտուր անող ծեր կնոջից ու դարձավ Տիգրանին:

- Մի ժամ հետո կգաս: Եղա՞վ:

- Եղավ, ընկեր Զուլոյան,- ասաց Տիգրանը:

Մկրտիչը թևանցուկ արեց Զավենին ու նրանք քայլեցին կենտրոնական ծառուղով: Հետո փոքրիկ հրապարակից ձախ թեքվեցին և առուն անցնելով՝ խորացան նեղլիկ արահետով: Դեռ թարմ գերեզմանաթմբին չհասած, Մկրտիչը բաց թողեց Զավենի ձեռքը, որպեսզի նա առաջ անցնի ու չամաչի, լաց լինի մեն- մենակ, իսկ ինքը կանգնեց հեռվում՝ իբր թե ինչ-որ հետաքրքիր մահարձան է ուսումնասիրում: Երբ մի քանի րոպե անց նա մոտեցավ գերեզմանաթմբին, Զավենը հանգստացել էր արդեն ու չորուկներ էր հավաքում՝ խունկը ծխելու համար: Նրանք լուռ վառեցին մոմերը, փոքրիկ օջախ արեցին թիթեղյա մի հին թասի մեջ ու խունկը լցրեցին կրակի վրա: Եկեղեցու հոտ եկավ ու կարծես շրջապատում ոգի առավ, սրբացավ ամեն ինչ: Հետո Մկրտիչը ցանցազամբյուղից մի շիշ օղի հանեց ու բաժակներ, բացեց փաթեթը՝ որի մեջ լավաշ կար, իսկ լավաշի մեջ խաշած մսի կտորներ և կարմիր պոմիդորներ, կտրտեց պոմիդորները, աղ ցանեց, բացեց շիշն ու լցրեց բաժակները: Նա մի բաժակը Զավենին տվեց, մյուսը ձեռքն առավ ու ասաց.

- Ողորմի քո հոգուն, մայրիկ, ու լույս կաթի գերեզմանիդ: Ու թող երկնային անդորրը իջնի քո սրտին, որովհետև քեզանից հետո աշխարհին ես թողել Սիրանի նման մի աղջիկ և Զավենի նման մի տղա: Ու թող մայրական քո օրհնանքը հետևի ամբողջ կյանքում քո զավակներին, պահի, պահպանի նրանց, որովհետև խրթին են ժամանակները: Ամեն:

Զավենն անասելի հուզված, բայց և միաժամանակ զարմացած նայեց Մկրտիչ Զուլոյանի ոգևորված ու ասես լուսավորված դեմքին:

- Ընկեր Զուլոյան…

- Ես, Մկրտիչս,- մեղմ ժպտաց Զուլոյանը,- մանուկ հասակում բուրվառ գցող եմ եղել քահանա հորեղբորս մոտ: Եվ մարդկային ինչ լավ բաներ սովորել եմ, նրանից եմ սովորել ու նրա տանը կարդացած գրքերից: Եվ հիմա ինչ-որ ասացի՝ այդ գրքերից են:

Նա մի քանի կաթիլ օղի հեղեց ծաղկաթմբին ու մինչև հատակը դատարկեց բաժակը:

- Ուշադրություն դարձրե՞լ ես,- ասաց նա՝ սիգարետը վառելով: - Նոր կարգերը հեղափոխություն մտցրեցին մեր ողջ կյանքի մեջ, աշխատանքի, կենցաղի, ուսման մեջ, ամեն ինչի մեջ, նույնիսկ հարսանեկան ծեսերի մեջ, բայց հուղարկավորության արարողությանը չկարողացան դիպչել: Կոմերիտական հարսանիք տեսել ես, իսկ տեսե՞լ ես կոմերիտական թաղում: Ինչ արեցին՝ բան դուրս չեկավ, որովհետև դեռևս չի ստեղծվել և դժվար թե ստեղծվի մի նոր լեզու, որով հնարավոր լինի ասել ոգեղեն այն խոսքերը, որ մարդկությունը դարերի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ընթացքում ընտրել, մարսել, հղկել ու տեղադրել է սրբազան գրքերի մեջ: Դու հո կասկած չունես, որ ես անհավատ եմ, դժբախտաբար նզովյալ անհավատ եմ և չեմ ընդունում աստծուն, բայց ընդունում եմ մարդու ստեղծած աստվածային գաղափարները և հավատում եմ մարդու ստեղծած սուրբ գրքերին, որոնք կարողանում կամ գոնե փորձում էին մխիթարել թշվառներին, հավատ ներշնչել ընկածներին, հուսադրել հալածվածներին, ոգի հաղորդել տառապյալներին և մարդկանց մեջ սերմանել բարին, առաքինին ու գեղեցիկը: Հիմա հասկացա՞ր, թե ինչու մայրիկի հոգու հետ ես հին գրքերի լեզվով խոսեցի:

- Հասկացա, Մկրտիչ ջան,- ասաց Զավենը՝ ավագ ընկերոջ օրինակով օղի լցնելով հողաթմբի վրա ու խմելով մնացածը: - Դու իրավացի էիր ընդհանրապես և այս դեպքում ևս՝ որովհետև մայրիկս հավատացյալ էր:

- Բոլոր մայրերն էլ հավատացյալ են,- գլխով արեց Մկրտիչ Զուլոյանը: - Ով երեխա է աշխարհ բերում, նա հավատացյալ է: Եվ եթե երեխան հիվանդ է, մոլորված է կամ վտանգի մեջ է, չի կարող լինել մի մայր, որ օգնության չկանչի աստծուն: Հակառակն անբնական է:

Զավեն Շարաֆյանը փոքրիկ փաթեթի միջից մի պտղունց խունկ վերցրեց ու դրեց կրակի վրա: Կարծես թե միանգամից ավելի հեշտ դարձավ շնչելը:

- Բայց դու գիտես, որ մենք այստեղ մենակ չենք, - խոպոտ շշնջաց Մկրտիչը: - Ինչ որ մեկը չգիտես ինչու հետևում է մեզ:

- Ո՞վ,- հարցրեց Զավենը՝ ընկերոջ հայացքի ուղղությամբ նայելով և ինքն էլ զարմացած նկատեց, որ քիչ հեռու գտնվող եղևնու փարթամ թփի ետևից գլուխը հանած նրանց է նայում մազածածկ մի դեմք:

Զգալով, որ նկատվել է, մարդը արագորեն թաքնվեց, բայց Մկրտիչը ձայնեց նրան,

- Մոտ եկ, եղբայր,- ասաց նա: - Մեզանից ինչո՞ւ ես թաքնվում:

Մազածածկ դեմքը նորից դուրս նայեց թփի ետևից:

- Չէ, չէ,- ասաց,- չեմ խանգարի, բարի մարդիկ:

- Խանգարելու ի՞նչ կա, - միջամտեց Զավենը: - Ողորմաթաս ենք խմում, եկ դու էլ խմի մեզ հետ:

- Չէ, չէ,- գլուխը թափահարեց մարդը: - Գիտեմ, որ մինչև վերջ չեք խմելու: Որ դուք գնաք, կգամ մնացածը կխմեմ ու ողորմի կտամ հանգուցյալին:

- Իսկ ի՞նչ գիտես, որ մինչև վերջ չենք խմի,- ակամա ժպտաց Մկրտիչը:

- Գիտեմ, էլի, դուք խմող չեք,- ժպտաց նաև մարդը: - Ես ամբողջ օրը այս կողմերում եմ լինում ու այնպիսի բաներ եմ տեսնում, որ ուրիշ մեկ հարյուր տարի էլ ապրի՝ չի տեսնի…

- Գրազ կգամ, որ սա Շեքսպիրյան գերեզմանափորի ժառանգներից է,- քմծիծաղ տվեց Մկրտիչը: - Ու կզարմանամ, եթե թևի տակ Յորիկի գանգը պահած չլինի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բայց անծանոթ մարդու թևի տակ ընդամենը նրա ճմրթված լայնեզր գլխարկն էր: Նա մոտեցավ զգուշորեն, ձախ ձեռքով ուղղելով հին, փայլող փողկապը, նույն ձեռքով գլխարկը հանեց թևի տակից, իսկ աջով վերցրեց Զավենի մեկնած բաժակը:

- Թող լինի ձեր նվիրական մոր հոգու հանգստության կենացը, որի անունը Նազիկ էր:

Զավենը ցնցվեց:

- Որտեղի՞ց իմացաք, որ իմ մայրն է, - հարցրեց նա խռովված, - և որտեղի՞ց իմացաք անունը,

Անծանոթը ժպտաց:

- Ես յոթին էլ այստեղ էի և այստեղ էի նաև թաղման օրը, երիտասարդ բարեկամ: Ես կասեմ ոչ թե ձեզ հաճելի լինելու համար, այլ քանզի դա փաստ է, որ մեծ հարգանք է ունեցել իր շրջապատում ձեր մայրը: Որովհետև նրան վերջին հանգրվան ուղարկող մարդիկ սգում ու լացում էին սրտանց: Ես դա տեսա…

Այդ մարդը հաստատ դուր էր եկել Մկրտիչ Զուլոյանին, որովհետև կրկին լցրեց նրա բաժակը ու հարցրեց.

- Ուրեմն կեղծ լաց լինողների՞ էլ ես հանդիպել…

- Շատ, - ասաց անծանոթը, - և կեղծ սգացողների, և ամենևին չսգացողների, և անտարբեր հուղարկավորների, որոնք թեև գերեզմանատուն են հասնում, բայց չեն էլ մոտենում հողաթմբին, պատսպարվում են որևէ ծառի տակ ու անհամբեր սպասում, թե երբ պիտի ավարտվի ծեսը, որպեսզի գնան հոգեհացի: Ես հարազատների եմ տեսել, որոնք ուշագնաց են եղել թաղման ժամանակ, բայց տարվա արարողությունը չեն կատարել: Եվ էլի հարազատների եմ տեսել, որոնք տասնյակ հազարներ են ծախսել և բրոնզաձույլ ու մարմարակերտ հուշարձան կանգնեցրել, բայց հետո ոչ մի անգամ չեն սրբել նույն այդ հուշարձանի փոշին: Ես ամեն ինչ տեսել եմ, բարի մարդիկ:

- Եվ այդ բոլորը եղևնու թփի հետևի՞ց, - անչար քրթմնջաց Մկրտիչ Զուլոյանը:

- Տարբեր թփերի ետևից, - բոլորովին չնեղացավ մարդը:

- Իսկ դուք մի՞թե չեք աշխատում, - հարցրեց Զավենը: - Ներեցեք, բայց ի՞նչ եք անում ամբողջ օրն այստեղ, որ ինչ տեսնում եք:

- Հարբեցող եմ, - ասաց տարօրինակ մարդը:

- Հարբեցո՞ղ:

- Խոստովանեք, որ ինչ էլ պատասխանեի, դուք ձեր մտքում այդ անունն էիք ինձ տալու,- կրկին ժպտաց անծանոթը: -Դրա համար էլ կանխեցի ձեզ: Ավելի հեշտ է միանգամից և միանշանակ ասել, որ հարբեցող եմ, քան թե մանրամասն բացատրություններ տալ, թե ինչը ինձ՝ դպրոցի գեղանկարչության դասատուին, ծաղկեպսակների ժապավենների վրա տեքստեր գրող դարձրեց և ի վերջո հասցրեց գերեզմանատուն: Դա մի երկար, սովորական ու

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

տխուր պատմություն է, որը ձեզ հազիվ թե ո հետաքրքրի, իսկ եթե հետաքրքրի անգամ, ես պատմելու նպատակ չունեմ: Մի բաժակ էլ խմեմ ու գնամ, հա…

Խմիր,- ասաց Մկրտիչը,- խմիր, եղբայր:

Մարդը բարձրացրեց բաժակը:

- Բայց նախքան խմելը,- ավելացրեց Մկրտիչ Զուլոյանը,- խնդրում եմ պատասխանես իմ մի հարցին:

- Եթե պատասխանն արդեն ձեզ հայտնի չէ: - Խիտ մազերի մեջ ժպտաց մարդը:

- Ես չեմ ուզում հարցնել, թե ինչը քեզ բերեց գերեզմանատուն,- ծխեց, հազաց ու նորից ծխեց Մկրտիչը: - Աշխարհում հազար ու մի բան կա, որ մարդուն այստեղ կարող է հասցնել: Ինձ ուրիշ բան է հետաքրքրում, թե միթե չկա որևէ բան, որևէ միակ բան, որը քեզ հանի գերեզմանատնից:

Մարդը թափահարեց գլուխը:

- Չկա,- ասաց նա: - Բայց դա դեռ իմ լրիվ պատասխանը չէ: Չեմ ուզում: Ճիշտը հենց դա է: Չեմ ուզում:

- Երևի միտք չունի հարցնելը, թե ինչու:

- Միևնույն է, իմ պատասխանը ձեզ չի համոզի,- բաժակ ցած դրեց մարդը: - Մտավորական մարդիկ եք երևում և համոզված եմ, որ կարդացել կամ լսել եք Փարիզի շրջմոլիկների մասին: Նրանցից շատերը և տուն ունեն և ընտանիք, և աշխատանք, բայց գնում, գիշերում են Սենայի ափին: Նրանց Սենայի սիրահարներ են անվանում: Նրանց վռնդում են ոստիկանները, բայց նրանք նորից վերադառնում են և գիշերում կամարների տակ, քարե մայթերին կծկված: Ինչո՞ւ նրանք տուն չեն գնում: Այ եթե դա իմանաք, կհասկանաք նաև ինձ: Գերեզմանատունն իմ Սենայի կամարն է: Ես այստեղ ինձ լավ եմ զգում և ուզում եք ծիծաղեք, ուզում եք ոչ՝ ինձ մարդ եմ զգում: Ոչ ոք չի կարգադրում ինձ, չի գոռում ինձ վրա, չի ստիպում կեղծիքների դիմել, ստել ու խոնարհվել ոչնչության առաջ, գողության չի մղում, որպեսզի հարևաններից լավ ապրենք, պաշտոն չի առաջարկում ընկերներիս վրա սուտ մատնություն գրելու գնով: Ես փաստորեն մուրացկա՞ն եմ: Բայց մի՞թե ավելի լավ չէ մուրացկան լինել, քան թե գող: Եթե ուրիշ ընտրություն չկա: Եթե հնարավոր չէ ազնիվ աշխատանքով ապրել: Ես պատերազմի հաշմանդամ եմ, բարի մարդիկ, կոնտուզիա ունեմ, իսկ դուք գիտե՞ք, թե որքան է պատերազմի հաշմանդամի թոշակը: Դա նույնիսկ չի բավականացնում, որ կարողանաս կաշառել բժիշկներին, որպեսզի նրանք մյուս տարի ևս հաստատեն քո հաշմանդամության կարգը: Այդ վիճակն ինձ գերեզման պիտի հասցներ, եթե մի ազնիվ մարդու խորհրդով միանգամից գերեզմանատուն չգայի: Այստեղ եկող մարդիկ այնպիսին չեն, ինչպես առօրյա կյանքում: Նրանք այստեղ տեսնում են նաև իրենց վերջը և ժամանակավորապես դառնում են առատաձեռն ու բարի: Այն, ինչը սովորաբար խնայում են տալ նույնիսկ իրենց դուռը թակող մուրացկանին, նրանք բերում են այստեղ, բազմազան ուտելիքներ ու խմիչքներ, և գրեթե ձեռք չեն տալիս, թողնում են գերեզմանաքարերի վրա ու նույնիսկ անկեղծ զգացված ասում են թող մնա, խեղճ մարդիկ կլինեն, կուտեն, կխմեն և օրհնանքի խոսքեր կասեն մեր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հանգուցյալներին: Ահա, այդ խեղճ մարդկանցից մեկը հենց ես եմ: Ուտում եմ, խմում եմ և օրհնում եմ գերեզմանները, որոնք առայժմ միակ տեղն են աշխարհում, որտեղ գոնե մի պահ խեղճ մարդկանց հիշում են:

Մկրտիչ Զուլոյանը, որն ասես հմայված՝ այդ արտասովոր մուրացկանին էր լսում, օրորեց գլուխը:

Շատ դառնացած ես, եղբայր:

- Բայց իրավացի եմ,- ասաց մարդը:

- Ուրեմն միայն գերեզմանոցներում են զգայուն ու բարի դառնում:

- Հիմնականում: Եվ ներեցեք ինձ, խնդրում եմ, եթե իմ կարծիքը հաստատող մի ճշմարտության էլ ասեմ: Եթե այս նույն մտքերը ես ոչ թե ձեզ համար նվիրական գերեզմանի մոտ, այլ ձեր հիմնարկություններում, ձեր առանձնասենյակներում հայտնեի, դուք ինձ չէիք լսի: Լավագույն դեպքում խելագար կհամարեիք, իսկ գուցե և պրովոկատոր ու հակասովետական տարր: Եվ կաշխատեիք վայրկյան առաջ որևէ ձևով ազատվել ինձանից: Իսկ այստեղ, չէ, այստեղ ուրիշ է, այստեղ մենք հասկանում ենք իրար: Այստեղ մարդ ենք, էլի, խոսում ենք…

Զավեն Շարաֆյանը հառաչեց զարմացած ու ակամա Արմեն Զատիկյանին հիշեց: Եվ հիշեց իր վախը, երբ նա խմբագրությունում իր սիրտն էր բացում ու իր ճշմարտություններն էր ասում:

- Ճիշտ է ասում, դուք լրիվ ճիշտ եք ասում, մեծ եղբայր, - ասաց նա: - Դժբախտաբար այդպես էլ կա:

- Ուրեմն հիմա թույլ կտա՞ք խմել իմ բաժակը:

- Խմիր, բարեկամ, խմիր,- հուզված խրախուսեց Մկրտիչ Զուլոյանը: - Եթե կարողանում ես թեկուզ այստեղ, թեկուզ այս ձևով խոսել մարդկանց հետ ու ազնիվ մտքեր հուշել նրանց, ուրեմն ամենևին ձրի չի կարելի համարել այն մի թաս գինին, որ խմում ես դու:

Մկրտիչ Զուլոյանի խոսքերն ակնբախորեն հաճելի եղան տարօրինակ քարոզչին, որովհետև նա բարձրացրեց գլուխն ու ժպտաց:

- Հիմա ուր որ է՝ գլխիս ցավը պիտի սկսի: Անիծյալ կոնտուզիայի հետևանքն է, բարի մարդիկ: Եվ ցավում է միշտ որոշակի ժամերի, ասես գրաֆիկով, այնպես որ հասցնում եմ այդ պահերին առանձնանալ: Որովհետև չեմ ուզում, որ ուրիշներն իմ տառապանքը տեսնեն, քանի որ, եթե ցանկանան էլ, օգնել չեն կարող…

- Ուրեմն պետք չէ խոսել, մեծ եղբայր,- կարեկցանքով լցված ընդհատեց նրան Զավենը: - Խմեք կամ մի խմեք ու շտապեք տուն գնալ: Կուզե՞ք մենք ձեզ ավտոմեքենայով տանենք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չէ,չէ,- առարկեց մարդը: - Ես ձեզ արդեն ասացի,որ իմ տունը գերեզմանատունն է: Եվ հետո ինձ համար հաճելի է ձեզ հետ խոսելը: Իսկ ով չգիտե, որ ամեն մի հաճույքի համար պարտավոր ես վճարել:

Նա բարձրացրեց բաժակը:

- Հիմա ես խմում եմ ապրողների կենացը: Ձեր կենացը: Եվ ձեզ մաղթում եմ առողջություն: Իսկ առողջության մաղթանքից անմիջապես հետո ցանկանում եմ, որ դուք միշտ ձեր ձեռքով կատարեք այն բարությունն ու լավությունը, որ մտադիր եք անել ձեզ շրջապատող մարդկանց և հանդիպող մարդկանց:

- Կարծես թե չհասկացա,- անկեղծ խոստովանեց Մկրտիչ Զուլոյանը:

Մարդը կնճռոտեց ճակատը, ասես մտածում էր: Թե՞ արդեն սկսել էր գլխի ցավը:

- Հիմա բացատրեմ,- ասաց նա: - Մի կողմ թողած ինձ նման ձախորդներին ու դժբախտներին, աչք ունեցողը կտեսնի, որ ժողովուրդը սկսել է ավելի լավ ապրել, քան ասենք պատերազմի տարիներին: Այդպե՞ս է:

- Այդպես է,- հաստատեց Զավենը:

- Մարդիկ, որ փող չունեին, հիմա ունեն և թվում էր, թե դրամը նրանց ավելի կարեկից ու առատաձեռն պիտի դարձնի: Որովհետև երբ չունեին, բայց այնուամենայնիվ օգնության էին հասնում իրար, ինչո՞ւ պիտի հիմա էլ ավելին չանեն, երբ ունեն դրա հնարավորությունը: Տրամաբանական է, չէ՞: Բայց կյանքն ու մարդկային փոխհարաբերությունները հավանաբար մեր տրամաբանության հետ կապ չունեն: Որովհետև տեղի է ունենում մի շատ տարօրինակ բան. դրամ ունեցողները սկսել են արհամարհել չունեցողներին և որքան շատ են կուտակում, այնքան այդ կուտակածի բարձունքից են նայում իրենց շրջապատին:

- Է, բարեկամս,- խոպոտ ծիծաղեց Մկրտիչը: - Այդպես եղել է,այդպես էլ կլինի…

- Համբերություն,- ներողամիտ ժպտաց քարոզիչը: - Ես ճանապարհին եմ- Դրամը դարձել է մի այնպիսի ֆենոմեն, որ դուրս է եկել իր սահմաններից և սկսել է այնպիսի դերեր կատարել, որ նախկինում նրան հատուկ չէին: Հասկանալի ու բնական է, որ դրամով կարելի է հաց առնել, տուն գնել, ճանապարհ գնալ, գեղեցիկ կին առնել վերջապես կամ պաշտոն ստանալ: Բայց դրամը կարո՞ղ է փոխարինել քնքշությանը, կարեկցանքին, հուսադրող խոսքին, քո անմիջական, ֆիզիկական օգնությանը: Գետում խեղդվող մարդուն կբավարարի՞, եթե դրամ ցույց տաս, կամ հայտարարես, որ հենց փրկվի, դրամ ես տալու նրան: Չէ՞ որ նրան այդ պահին ոչ թե քո դրամը, այլ պարզապես քո մեկնած ձեռքն է հարկավոր: Բայց դու չես ուզում թրջվել, չես ուզում մրսելու վտանգին ենթարկվել և ձեռքդ մեկնելու փոխարեն, ասում ես՝ համբերիր, հիմա մեկն ու մեկը կգա երևի, ես նրան փող կտամ, որպեսզի նա փրկի քեզ:

- Ահա ,- երեխայի նման ուրախացավ Մկրտիչ Զուլոյանը,- արդեն գլխի եմ ընկնում:

- Եվ շատ ու շատ բաներ, որ առաջ հոգու պարտք էր, խղճի պարտք, սրտի պարտք՝ հիմա հատուցվում է դրամով: Իհարկե դրա արմատները հին են ու միշտ էլ եղել են: Ասենք՝ ձմռան

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ցրտին փողոցի մայթին կուչ եկած հաշմանդամ մուրացիկին, կամ ձեռքն անցորդներին պարզած սովյալ մանկանը ո՞վ է մոտեցել ու հարցրել, թե ի՞նչ է պատահել քեզ, ինչո՞վ կարող եմ օգնել քեզ… Ո՞վ է ասել՝ թե դու էլ ինձ նման աստծո արարած ես, եկ գնանք տուն, տաքացիր վառարանի մոտ: Չէ, դա հոգս է, նեղություն է: Ավելի հեշտ չէ՞ մի հինգ կոպեկ նետել նրա շրջած գլխարկի մեջ ու հեռանալ գոհ, մտածելով, որ դու քո մարդկային խղճի պարտքը կատարել ես: Եվ արդեն իրավունք ունես տաք տան մեջ ապրելու կուշտ ճաշելու և նույնիսկ մեղք գործելու, որովհետև հատուցման պահին աստված հաշվի կառնի մուրացկանին նետած քո կոպեկները:

Այդ փարիսեցիությունը, այդ կեղծ բարեպաշտությունը միշտ էլ եղել է: Բայց իրականությունն այն է, որ հիմնականում եղել է օտարների նկատմամբ: Իսկ հիմա՞- Հիմա, երբ հարազատ հայրդ, ծանր հիվանդ պառկած է հիվանդանոցում, նրա կողքին մնալու, մխիթարելու, մի բաժակ ջուր տալու փոխարեն, գերադասում ես անմիջապես հանել քսակդ: Ուրիշին ես վարձում, որպեսզի նա փոխարինի քեզ: Հիմա երբ. մայրդ միայնակ է մնացել իր հեռավոր գյուղում, դու ժամանակ չես գտնում այցի գնալու նրան: Ավելի հեշտ չէ՞ դրամ ուղարկել փոստով, կամ թե վարորդիդ միջոցով մթերքներ ուղարկել նրան և նույնիսկ հպարտանալ հարբած ընկերներիդ մոտ, թե մորս ինչ կա, թագուհու նման ապրում է, ամեն ամիս մի ավտո ուտելիք եմ ուղարկում նրան: Այնինչ մորդ քո ուղարկած դրամն ու ուտելիքը պետք չեն: Նա ուզում է տեսնել, գրկել, համբուրել քեզ… նա կարոտել է քեզ: Ինչո՞ւ ես դու հղփացած մարդ, կարծում, թե կարոտը ևս ապրանք է, որոշակի գին ունի ու կարելի է առնել փողով: Եվ քեզ նմանները չեն պատճառը, որ աշխատած, վաստակած ծեր մարդիկ, իրենց սարքած տանը մեռնելու փոխարեն, ծերանոցներում են մեռնում: Երբ անտեր չեն, զավակներ ունեն, դժբախտաբար քեզ նման զավակներ: Որոնք ծնողներին պահելու փոխարեն՝ ծերանոցներ են պահում:

- Ես իմ աստված՝ հանճարեղ է,- խոպոտ բացականչեց Մկրտիչ Զուլոյանը:

Նա նույնիսկ չէր նկատում, որ մազակալած դեմքով մարդն ավելի է կնճռոտել ճակատը և խոսում է ասես տենդի մեջ, աչքերի կոպերն ամուր սեղմած:

- Ես հո տեսնում եմ, գիտեմ: Առաջ որպես հոգու պարտք, երբ մարդիկ այցի էին գալիս իրենց հարազատ ննջեցյալի գերեզմանին, տնից դույլ ու բահ էին բերում ու փոշու շոր: Իրենց ձեռքով մաքրում էին գերեզմանի հողը, ջրում ծաղիկները, էտում

ծառերի ծեր ճյուղերը, վերցնում քարերի փոշին- Իսկ հիմա՞…կամ բոլորովին չեն անում, կամ էլ այդ ամենն անում են փողով: Խելքից դուրս գումարներ են տալիս գերեզմանատան մոտ ապրող բնակիչներին, թե աչքի լույսի պես պահեք-պահպանեք մեր հարազատի գերեզմանը: Ու պարտքը կատարած մարդու գոհունակությամբ թեթևացած շունչ են քաշում: Սրանից էլ պրծանք: Իսկ այդ բնակիչները լավ գիտեն, թե ովքեր են դրամ տվողները ու գիտեն, թե մեկ էլ երբ են հայտնվելու՝ մեռելոցին կամ էլ տարուն: Եվ մի օր առաջ ջրում են ծաղիկները ու սրբում քարերի փոշին: Ու նրանք էլ են ասում՝ սրանից էլ պրծանք: Բայց ի վերջո կարևորը դա չէ: Ենթադրենք թե վարձկանները շատ բարեխղճորեն կատարում են իրենց աշխատանքը: Մի՞թե դա այն է, ինչ պետք է: Մի՞թե դա կարող է փոխարինել հարազատի հոգու պարտքին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Այսինքն՝ ի՞նչ եմ խոսում: Չէ որ հարսանիքներին անգամ, երբ նվերն ընտրելն ու տանելը շատ կարևոր հանգամանք է, երբ հարսն ու փեսան մինչև կյանքի վերջը պահում ու փայփայում են իրենց ջահելության հարսանեկան ընծաները, հիմա նվեր անգամ շատերը չեն տանում: Ուղղակի դրամ են խցկում հարսի կամ փեսայի, կամ նրանց ծնողների գրպաններն ու գոհ դեմքերով հացի նստում: Սրանից էլ պրծանք…

Նա ծանր էր շնչում, և Զավեն Շարաֆյանը շտապեց միջամտել.

- Բավական է, ինձ թվում է, թե հասկացանք ու շատ շնորհակալ ենք ձեր կենացի համար: Երանի թե կարողանանք ապրել այնպես, ինչպես դուք եք ասում: Իսկ հիմա նստեք, շունչ քաշեք մի քիչ, մեծ եղբայր…

-Չէ ,- ասաց մարդը՝ աչքերը բացելով և ճմռթված լայնեզր գլխարկը երկու ձեռքով ամուր սեղմելով խռիվ մազերին: - Ես գնամ, որ մի անկյունում հանգիստ շունչ առնեմ- կամ հակառակը:

Ու գնաց շտապելով, զարմանալի արագ քայլերով, ասես փախչում էր:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Արդեն մի շաբաթ կար, որ խմբագրությունը նոր շենք էր տեղափոխվել՝ հրապարակի մյուս կողմում, բայց Զավեն Շարաֆյանը մոռանում ու քայլերը սովորականի պես ուղղում էր դեպի հին շենքը: Երկու անգամ նույնիսկ ներս մտավ, սակայն սխալը նկատելով ձևացրեց, թե իբր տպարանում գործ ունի:

- Բարի լինի, վերջերս շուտ-շուտ ես տպարան մտնում, -անկասկած կռահելով՝ հեգնեց Գարեգին Չալյանը, երբ խմբագիրը երրորդ անգամ տպարան մտավ:

- Մինչև ես քո տպարանում կարգուկանոն չհաստատեմ, չեմ հանգստանա,- ելքը գտավ Զավեն Շարաֆյանը:

- Այ մարդ, բաժանվեցինք, էլի՞ չպրծանք,- կեղծ բողոքեց տպարանի դիրեկտորը: - Աղմուկ-աղաղակ էիք բարձրացնում, թե երբ տպարանն աշխատում է, ցնցվում է ամբողջ շենքն ու ձեր գրիչները ծուռտիկ-մուռտիկ են գրում: Այնքան լաց եղաք, մինչև որ ձեզ նոր շենք տվեցին: Հիմա նստեք ու հանգիստ գրեք, էլի: Տպարանից ինչ եք ուզում:

- Ասեմ՝ ինչ եմ ուզում, Գարեգին Սարիբեկովիչ, եթե անկեղծ ասեմ՝ մաղարիչ եմ ուզում: Ձեզ հանեցի ծակուռից, հիմա իմ առանձնասենյակում եք առոք-փառոք տեղավորվել: Բա այդ առանձնասենյակը «թրջել» չարժե՞…

Գարեգին Չալյանը ծիծաղեց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Առանց այդ էլ անձրևն ամեն օր թրջում է, Զավեն ջան: Կաթկթոցի տակ ո՞նց ես աշխատել, այ ախպեր: Ես էլ մտածում- տանջվում էի, թե ինչից է, որ վերջին ժամանակներս ձեր տպագրած նյութերը ոնց որ թե ջրալի են…

Նա նորից ծիծաղեց հասկացնելով, որ կատակում է: Ծիծաղեց նաև խմբագիրը, ու նրանք բաժանվեցին:

Իսկ հետո իր նոր առանձնասենյակում թերթելով «Լուսաբացի» վերջին համարները, Զավենը ստիպված էր խոստովանել, որ տպարանի դիրեկտորի կատակի մեջ ճշմարտության բաժինը մեծ է: Արտաքնապես ամեն ինչ կարծես բարվոք էր: Միհրան Գալստյանի ջանքերով խելացի ու ճաշակով ձևավորվում էր թերթը: Որպես նորություն՝ առաջին էջի վերին անկյունում ընդգծվում էին այն արժեքավոր նյութերը, որ տպագրվել էին համարում: Խմբագրությունը մի քանի նոր խորագիր էր բացել՝ «Քո քաղաքի պատիվը», «Վարպետ-դաստիարակը», «Մեր փարոսները», «Խոսքը քոնն է, պրոպագանդիստ», «Ծիծաղի անկյուն», աթեիստական բնույթի՝ «Ետ տար քո խաչը»: Գրեթե ամեն համարում ռեպորտաժներ ու ակնարկներ էին տպագրվում՝ նվիրված Գորգագործական կոմբինատի շինարարությանը և «Խաղաղության ծառուղու» կառուցապատմանը, որն ավարտին էր մոտենում և որտեղ արդեն գործում էր մանկական զվարճալի ատրակցիոնների մի մասը:

Չէ, կարծես թե կարգին էր ամեն ինչ: Բայց՝ կարծես թե- Թերթի էջերից հետզհետե, գրեթե աննկատելիորեն դուրս էր մղվել քննադատությունը, բթացել էր թերթի ատամը: Ֆելիետոններ ու քննադատական հոդվածներ դարձյալ տպագրվում էին, իհարկե: Բայց եթե նախկինում թերթն էր հարցեր բարձրացնում ու քաղկոմի բյուրոյին կամ քաղխորհրդի գործկոմին փաստորեն ստիպում քննության առնել դրանք և կոնկրետ միջոցների դիմել, ապա հիմա վերածվել էր հայելու, որի մեջ սոսկ անդրադառնում էին քաղկոմի բյուրոյում և քաղխորհրդի գործկոմում կատարված իրադարձությունները: Բոլոր ֆելիետոնները ավարտվում էին գրեթե նույնատիպ ձևակերպումով՝ «Եվ պատահական չէ, որ քաղկոմի բյուրոն օրերս քննության առավ այդ հարցը: Ձեռնարկված են անհրաժեշտ միջոցներ՝ դրությունը շտկելու համար: Մեղավորները ստացան իրենց արժանի պատիժը»:

Թերթը կամաց-կամաց ետ էր մնում կյանքից՝ կորցնելով իր առաջնային, մարտական բնույթը:

Զավեն Շարաֆյանն ինքն էլ զգում էր դա, երբ Մարո Մելիքյանը նրա սեղանին էր դնում խմբագրության հասցեով եկած փոստը: Նամակների թիվը գնալով պակասում էր: Ոչ նախկին հիացական արձագանքները կային՝ թերթի ելույթների առթիվ և ոչ էլ այն նոր, սուր հարցադրումները, որ թղթակիցները հասցեագրում էին խմբագրությանը, ոգևորված և ոգեշնչված նրա ֆելիետոններից, նույնիսկ որոշակիորեն պակասել էր «Մեր նյութերի հետքերով» բաժինը: Ո՞ւր գնաս այն նյութերի հետքերով, որոնք քաղկոմից ու քաղխորհրդի գործկոմից ես ստացել:

Խմբագրին վաղուց անհանգստացնում էր թերթի՝ «պոչից գնալու» կամ սոսկ հայելի ծառայելու դերը, և նա ամիսներ առաջ բավականին լուրջ ու տհաճ խոսակցություն ունեցավ քաղկոմի առաջին քարտուղարի հետ: Իհարկե, օրն այնքան էլ հարմար չէր ընտրված: Այդ օրը Գառնիկ Բադալյանը՝ հանրապետության պետական և կուսակցական մարմիններում կատարած մեծ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ծառայությունների համար և ծննդյան քառասնամյակի առթիվ պարգևատրվել էր Կարմիր դրոշի շքանշանով: Զավեն Շարաֆյանը հաճելիորեն զարմացավ, իմանալով, որ քարտուղարը ընդամենը քառասուն տարեկան է և գնաց քաղկոմ՝ շնորհավորելու հոբելյարին: Իհարկե, շնորհավորել ցանկացողների թիվն այնքան մեծ էր,որ խմբագիրը գրեթե երկու ժամ սպասեց ընդունարանում: Բայց նա լիուլի իրեն վարձատրված զգաց, երբ Գառնիկ Բադալյանը խմբագրի շնորհավորական խոսքերը լսելուց հետո ժպտաց ու ասաց.

- Լավ, Զավեն, շնորհակալ եմ: Իսկ հիմա նստիր, խոսենք մի քիչ:

- Դրսում սպասողներ շատ կան, Գառնիկ Վարդանիչ,- հարկ համարեց զգուշացնել տղան:

- Ոչինչ,- ձեռքը թափ տվեց քարտուղարը: - Նրանք վաղն էլ կգան, մյուս օրն էլ կգան, տուն էլ կգան: Դու նրանց մասին մի անհանգստանա:

Նա էլեկտրական զանգի կոճակը սեղմելով, ներս կանչեց քարտուղարուհուն, պատվիրեց սպասողներին հայտնել, որ հիմա շատ զբաղված է և ընդունել չի կարող ու դարձավ խմբագրին:

- Դե պատմիր տեսնեմ ինչ կա-չկա խմբագրությունում:

Զավեն Շարաֆյանը ակամա ժպտաց՝ լսելով Բադալյանի հարցը, որ նա տալիս էր միշտ նույն ձևով, յուրաքանչյուր հանդիպման ժամանակ:

- Հա,- առանց պատասխանի սպասելու շարունակեց քարտուղարը,- ձայն չես հանում՝ գո՞հ ես խմբագրության նոր շենքից:

- Ավելին անհնար էր պատկերացնել,- անկեղծ խոստովանեց խմբագիրը: - Շատ շնորհակալություն, ընկեր Բադալյան:

- Մերոնք մի քիչ փնթփնթացին, բայց դե ո՞վ է նրանց բանի տեղ դնողը: Ես միշտ էլ այն համոզման եմ եղել, որ խմբագրությունների լավ աշխատանքի համար պայմաններ պետք է ստեղծել: Ի վերջո հո առաջվա խղճուկ-մղճուկ խմբագրությունները չեն: Եթե ամենուրեք հայտարարում ենք, թե մամուլը կուսակցության հզոր զենքն է, ուրեմն այդ զենքը խուլ ու խոնավ տեղ չպետք է պահել, որ ժանգոտի: Սա՝ կատակով: Իսկ լուրջ՝ դարձյալ նույնը կասեմ: Կարծում ես պատահականությո՞ւն է, որ Երևանում խմբագրությունների համար նոր շենք կառուցեցին Կարմիր բանակի փողոցի վրա: Հիմա իրոք ուրիշ վերաբերմունք կա մամուլի նկատմամբ: Իսկ եթե այդպես է, մե՞նք ինչու պիտի ետ մնանք:

- Լիուլի բավարարված ենք, Գառնիկ Վարդանիչ,- ձեռքերը բարձրացրեց խմբագիրը: - Մեզ մնում է միայն սրտանց աշխատել ու կատարել այն ամենն, ինչ մեզանից այսօր պահանջվում է:

- Այսօր,- հանկարծ շեշտեց քարտուղարը: - Այսօր: Այո, շատ բան է պահանջվում: Բայց հո չե՞ս զարմանա, եթե ասեմ, որ այդ պահանջները առայժմ չեն կատարվում:

Զավեն Շարաֆյանը շփոթվեց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ինձ սխալ չհասկանաս, ես քո աշխատանքից գոհ եմ, բայց ինձ տարօրինակ է թվում, թե ինչու քեզ չի անհանգստացնում խմբագրության կադրերի ներկա վիճակը: Ինչո՞ւ փոփոխություններ չես կատարում, ինչու չես ուզում ազատվել իրենց լրիվ սպառած, ստեղծագործական առումով վաղուց լճացած և անօգտակար աշխատողներից:

- Ո՞նց կլինի, Գառնիկ Վարդանիչ, մարդիկ քանի տարի աշխատում են:

- Իսկ ես կասեի նստած աթոռ են մաշում խմբագրությունում: Ինչո՞վ է, օրինակ, զբաղված Ջիվան Ենգոյանը:

Թեև խմբագիրը հոգու խորքում համաձայն էր քարտուղարի հետ, բայց այնուամենայնիվ փորձեց պաշտպանել իր աշխատակցին:

- Նա իր գործը անգիր գիտի, ընկեր Բադալյան:

- Այո, այնքան անգիր, որ խմբագրությունից դուրս չի գալիս: Նրան ո՞վ է տեսնում գործարաններում, արտադրական խորհրդակցություններում: Վարպետ-դաստիարակների քաղաքային հավաքին դու եկել էիր, իսկ նա չկար…

- Երեխաները հիվանդ էին, Գառնիկ Վարդանիչ:

- Նա կարծես թե երեխաներ արտադրելուց բացի, ուրիշ որևէ արտադրանքով չի զբաղվում: Սիրելի ընկեր Շարաֆյան, քո այդ բարեգութ սրտով կարելի է միայն մանկատուն ղեկավարել, բայց ոչ խմբագրություն: Թխսկանի նման թևերիդ տակ ես առել ծույլ ու անբան մարդկանց և աշխատում ես բոլորի փոխարեն: Ինչի՞ համար: Մի՞թե քեզ հայտնի չէ, օրինակ, որ Նիկողայոս Սևյանը օրվա մեծ մասը ոչ թե խմբագրությունում է անցկացնում, այլ քաղկոմի շենքում, որտեղ հիմնականում քեզ բամբասելով է զբաղված: Ինչո՞ւ նրանից չես ազատվում:

- Նա մեր կուսկազմակերպության քարտուղարն է:

- Առավել ևս: Երբ կուսբջջի քարտուղարը հիմնարկի պետի հետ չէ, այլ նրա դեմ վարկաբեկիչ նյութեր է հավաքում, նրանից պետք է ազատվել առաջին հերթին:

Զավեն Շարաֆյանը փորձեց կատակով փոխել քարտուղարի տրամադրությունը…

- Կներեք, Գառնիկ Վարդանիչ, բայց մի ծիծաղելի դեպք հիշեցի: Մեր ճարտարապետ Խոսրով Նշանյանը շատ է բարկացած լինում վանեցի Եփրեմի վրա և ասում է եթե շարունակես չկատարել իմ կարգադրությունները, ես քեզ աշխատանքից կազատեմ: Եվ հանկարծ Եփրեմը խեղճ-խեղճ պատասխանում է, թե՝ ընկեր Նշանյան, ինձ ազատելը մի մեծ բան չէ, ինձ ազատելն ինչ է: Եթե ազատելու էդքան շնորհք ունես, մեր երկիրն ազատիր թուրքերից, թողնեմ, գնամ…

Գառնիկ Բադալյանը ժպտաց, բայց հետևողականորեն շարունակեց իր մտքերը:

- Քո այդ փափկասրտությունն ինձ անհանգստացնում է, Զավեն, և մտահոգում է: Ի՞նչ է պատահել քեզ հետ: Կարծես թե ընկճվել ես մի տեսակ, պակասել է մարտական ոգիդ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավեն Շարաֆյանը դեռ իր հոր որդին էր:

- Ճիշտ եք ասում, ընկեր Բադալյան, ես ընկճվել եմ ու պակասել է իմ մարտական ոգին, որովհետև պակասել է թերթի մարտական ոգին: Եվ դուք լավ գիտեք, թե ինչու:

Գառնիկ Բադալյանը հետաքրքրված նրան նայեց:

- Թեև քո կարծիքով լավ գիտեմ, բայց համարձակվում եմ հարցնել, ինչո՞ւ..,

- Որովհետև ձեր կամքով թերթին միայն արձանագրողի դեր է տրված: Հենց ուզում ենք որևէ սուր հարց բարձրացնել, և զեկուցում ենք ձեզ, մեկ էլ տեսնում ենք, որ հաջորդ բյուրոյում արդեն քննում եք այդ հարցը: Ինչո՞ւ թույլ չեք տալիս, որ նախահարձակը թերթը լինի: Չէ՞ որ համարձակ ելույթ ունենալու, հափշտակության կամ բյուրոկրատիզմի կոնկրետ փաստերը հասարակության դատին հանձնելու փոխարեն, մեզ մնում է բավարարվել «Քաղկոմի բյուրոյում» խղճուկ ինֆորմացիայով: Այս պայմաններում ի՞նչ խոսք կարող է լինել թերթի հեղինակության մասին:

- Օրինակներ…

- Խնդրեմ: Նույն Ջիվան Ենգոյանը մեկ ամիս շարունակ զբաղվում էր կենցաղ-սպասարկման կոմբինատով: Ի հայտ բերեց չարաշահումների և աչքակապության բազմաթիվ փաստեր: Պարզվեց, որ կոմբինատի աշխատողները ոչ թե սահմանված սակագներով են աշխատում, այլ բնակիչներից պահանջում են որքան սրտներն ուզի և ձևակերպելուց խուսափելու նպատակով անդորրագիր չեն տալիս մարդկանց: Ես ձեզ զեկուցեցի այդ մասին, և դուք առաջարկեցիք նախ նյութերն ուղարկել քաղկոմի արդյունաբերության բաժին: Եվ հենց հաջորդ բյուրոյում քննվեց այդ հարցը: Երկրորդ՝ իմ հանձնարարությամբ Մարո Մելիքյանը ուսումնասիրեց կինոթատրոնի աշխատանքը և բացահայտեց արտառոց թերություններ, ես կասեի նույնիսկ հանցագործություն: Կինոթատրոնի աշխատողները, դիրեկտորի ղեկավարությամբ, չարամտորեն խախտում են տոմսերի վաճառքի կարգը: Տոմսերի միայն մի մասն է վաճառվում, բայց գանձապահը հայտարարում է, թե այլևս տոմս չկա և հանդիսատեսներից շատերն ուղղակի դրամը հսկիչին են տալիս ու ներս մտնում: Բայց դա դեռ բոլորը չէ՝ դահլիճում կա չորս հարյուր աթոռ, իսկ քաղխորհուրդ ուղարկված հաշվետվության մեջ նշվում է, որ դահլիճն ընդամենը երեք հարյուր աթոռ ունի: Պարզ չէ՞, թե ուր են գնում մնացած հարյուր աթոռներից ստացված եկամուտները: Համոզված լինելով, որ գրելու ենք այդ մասին, կինոթատրոնի դիրեկտոր Լևոն Լալայանը անմիջապես քաղկոմ է վազում, և Գրետա Սուրենյանն էլ Մարոյից պահանջում է իրեն ծանոթացնել այդ նյութերին…

Գառնիկ Բադալյանը ընդհատեց նրան:

- Իսկ որտե՞ղ են հիմա կենցաղ-սպասարկման կոմբինատի դիրեկտոր Մելս Աթոյանը և կինոթատրոնի դիրեկտոր Լևոն Լալայանը:

- Հեռացված են աշխատանքից՝ ստանալով նաև կուսակցական նկատողություններ:

- Բա էլ ի՞նչ ես ուզում, ընկեր խմբագիր, մի՞թե մեր ընդհանուր նպատակն այն չէ, որ քաղաքը մաքրենք օրինազանցներից և հափշտակիչներից: Քաղկոմն, ի՞նչ է, հովանավորե՞լ է նրանց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չի հովանավորել, ընկեր Բադալյան, բայց մեր ձեռքից խլել է նախաձեռնությունը: Ինչո՞ւ պետք է մեր հայտնաբերած փաստերը նախ մենք չհրապարակենք և նոր միայն դրանք քննության առարկա դառնան:

- Մեր… ձեր- - հոնքերը կիտած, բառերը ձգեց, երկարացրեց քաղկոմի քարտուղարը: - Ի՞նչ մեր, ի՞նչ ձեր, Շարաֆյան: Քաղկոմի և խմբագրության արանքում ի՞նչ մեր ու ձեր: Չէ՞ որ թերթը քաղկոմի օրգանն է: Փաստորեն նրա բաժիններից մեկը: Եվ վիրավորված արժանապատվություն խաղալու հարկ չկա: Իսկ եթե, ինչպես դու ես ուզում, թերթն առաջինը հրապարակեր դրանք՝ ժողովուրդը չէ՞ր ասի, թե բա որտեղ է կուսակցության քաղաքային կոմիտեն, մի՞թե այնտեղ չեն տեսնում, թե ինչ է կատարվում քաղաքի կազմակերպություններում: Հիմա ինչ է, գցենք քաղկոմի հեղինակությունը, որպեսզի թերթի հեղինակությո՞ւնը բարձրանա: Ես քեզ խորհուրդ եմ տալիս վերջ տաս այդ նեղ-հիմնարկային փառասիրությանը և մտածել մեր ընդհանուր շահերի մասին: Մենք օգտագործել ենք ձեր հայտնաբերած փաստերը: Իսկ հակառակը չի՞ եղել: Միթե անձամբ ես քո ուշադրությունը չհրավիրեցի բնակարանների բաշխման գործում թույլ տրված կամայականությունների և չարաշահումների կոնկրետ փաստերի վրա: Մի՞թե ես չառաջարկեցի հանդես գալ ֆելիետոնով…

«Որովհետև խոշոր գիշատիչներից զգուշանալով, գերադասում էիր իմ ձեռքով լուծել Սահակ Միրզոյանի հարցը,- մտքում հեգնեց Զավեն Շարաֆյանը: - Ախր ինչո՞ւ ես համոզված, որ ես այդքանը չեմ հասկանում: Նույնիսկ վիրավորական է: Բայց ի՞նչ անեմ, որ ամեն ինչ ասել հնարավոր չէ: Որ, ինչպես հայրս էր ասում՝ քեզ հետ խոսողը թամբած-պատրաստ ձի պետք է ունենա իր տակ, որպեսզի անմիջապես փախչի: Իսկ ես ոչ ձի ունեմ, ոչ էլ փախչելու մի տեղ»:

- -Կամ մի՞թե ես չառաջարկեցի քեզ տրիկոտաժի ֆաբրիկայի դիրեկտոր Կամսար Մակարյանի դեմ ֆելիետոն գրել, որովհետև նա միտումնավոր կերպով ձախողում էր Արմեն Զատիկյանի և մյուս գյուտարարների համար արհեստանոց առանձնացնելու գործը: Եվ ընդհանրապես փակել էր բոլոր գյուտարարների ճանապարհը: Եվ դարձյալ ես չէի , որ քաղկոմի բյուրոյում ատամներով պաշտպանեցի թերթի ելույթը և հասա այն բանին, որ նա հեռացվեց աշխատանքից:

«Նույն, նույն նկատառումներով,- ասաց ինքն իրեն Զավեն Շարաֆյանը: - Որովհետև մեծ ցանկություն ունեիր նրա փոխարեն դիրեկտոր նշանակել քո ընկերոջը՝ Քիմկոմբինատի գլխավոր ինժեների տեղակալին, որին ժամանակին Երևանից էիր հրավիրել ..Եվ այդ փոփոխությունն այնպես կազմակերպել, որ քո անձնական շահագրգռվածությունը չերևա: Որ եթե անհրաժեշտ լինի, ասես. ես ի՞նչ կարող էի անել, ես չէի կարող լռության մատնել թերթի ֆելիետոնը»,

- …Եթե ինձ ինչ-որ բանում կարելի է մեղադրել, ապա միայն թե ոչ անսկզբունքայնության մեջ: Ես գիտեմ, որ իմ թշնամիները թիկունքիցս ինձ գայլադեմ Գառնիկ ջարդարար են անվանում: Բայց դա ինձ մազաչափ իսկ չի հուզում: Ես պարտավոր եմ նոր կարգուկանոն հաստատել այս քաղաքում, բոլոր ցուցանիշներով օրինակելի դարձնել մեր քաղաքը, իսկ դա հնարավոր չէ անել առանց ջարդելու, ոչնչացնելու ամեն տեսակի հինն ու փտածը: Ես անողոք եմ, այո, բայց ո՞ւմ դեմ՝ ովքեր աշխատավոր մարդկանց երակից արյուն են խմում ու ճարպակալել, հոփացել են, գողանում են ու գողացած փողերով աշխարհի տերերն են

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

համարում իրենց: Իսկ այդ պայքարում ի՞նչ իմ և քո, ի՞նչ մեր ու ձեր, ընկեր խմբագիր: Եվ ի՞նչ նրբանկատություն և փափկասրտություն բոլոր նրանց նկատմամբ, ովքեր այսօր չեն բավարարում մեր պահանջները: Այս ամբողջ պատմությունը ինչի՞ց սկսվեց: Նրանից, որ ես առաջին հերթին թերթի շահերից ելնելով, որպես խմբագրի քո շահերի համար, առաջարկեցի մաքրել խմբագրությունը բալաստից: Չե՞ս ուզում, քո գործն է, բայց այլևս տրտունջ չլսեմ, թե նվազել է թերթի մարտական ոգին: Թերթի ոգին բարձրացնողը խմբագրության աշխատողներն են: Իսկ դու մի կարգին գրող չունես:

- Չէ, դուք իհարկե, իրավացի եք, ընկեր Բադալյան,- համաձայնվեց խմբագիրը: - Դիմել եմ Կենտկոմ, պրոպագանդայի բաժին, խոստացել են այս տարվա շրջանավարտներից մեկին բաժնի վարիչ ուղարկել:

- Ճիշտ ես արել: Մեզ հինն այլևս բավարարել չի կարող: Պրոֆեսիոնալ ժուռնալիստներ են պետք: Թարմ ուղեղներ: Համարձակ, ձեռներեց մարդիկ: Իսկ քո հնոտիներից կամաց-կամաց հրաժարվիր: Եթե խիղճդ տանջում է, պատասխանատվությունը ես կարող եմ վերցնել: Պարզապես հարմար չեմ գտնում, որ խմբագրության կադրերի հարցը քաղկոմի բյուրոյում պաշտոնական քննարկման դրվի: Քո բարեկամներն էլ շատ չեն և, կարծեմ, մի քանի անգամ առիթ ես ունեցել համոզվելու, որ խիղճը նրանց առանձնապես չի տանջում, երբ հարցը վերաբերում է քեզ:

- Ճիշտ է,- ակամա հառաչեց Զավեն Շարաֆյանը: - Բայց նրանց համապատասխան աշխատանք պետք է առաջարկել: Ընտանիքներ ունեն, տուն են պահում:

- Ես կմտածեմ այդ մասին: Բայց քեզ նորից եմ զգուշացնում, այդքան քնքշասիրտ մի լինի, Զավեն; Երբ մեծ խնդիրներ ունես լուծելու և մեծ ճանապարհ ես ընկել՝ ոտքերիդ տակ քիչ նայիր: Շա՞տ մեծամիտ կլինեմ, եթե ասեմ՝ այդ հարցում նմանվիր ինձ, մի քաշվիր, սովորիր, օրինակ վերցրու, ընկեր խմբագիր: Չես տեսնում՝, թե ես ինչով եմ զբաղված:

* * *

Զավեն Շարաֆյանը տեսնում էր, իհարկե, թե ինչով է զբաղված քաղկոմի առաջին քարտուղարը: Բայց միշտ չէ, որ հասկանում էր նրան և առավել ևս հավանություն տալիս նրա կայացրած վճիռներին: Անշուշտ իրավացի էր Գառնիկ Բադալյանը, երբ հայտարարում էր, թե քաղաքի ղեկավար կադրերից շատերը հղփացել են, զբաղվում են հավելագրումներով և աչքակապությամբ, տարբերություն չեն դնում սեփական և պետական գրպանների միջև, չարաշահում են իրենց պաշտոնական դիրքը և զբաղվում կաշառակերությամբ: Նա իրավացի էր նաև, որ անզիջում և համառ պայքար էր մղում նմանների դեմ՝ վտարում կուսակցությունից և աշխատանքից: Բայց այդ ամենն այնքան անզուսպ ու հախուռն էր անում, որ օրենքի մասին խոսք լինել չէր կարող: Միլիցիան և դատախազությունը փաստորեն դիմազրկվել էին, և քաղկոմն իր վրա էր վերցրել և բռնողի, և քննողի, և դատողի ֆունկցիաները: Միլիցիային և դատախազությանը հանձնարարելու փոխարեն, որպեսզի նրանք օրինական քննություն կատարեն չարաշահումների այս կամ այն փաստի կապակցությամբ, քաղկոմի առաջին քարտուղարը, ահազանգի հիման վրա, անմիջապես բյուրո էր հրավիրում կասկածյալներին և տեղնուտեղը հեռացնում նրանց կուսակցությունից

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

և աշխատանքից: Եվ դրանից հետո էր միայն միլիցիային և դատախազությանը կարգադրում քննություն կատարել և քրեական գործ հարուցել վերոհիշյալ փաստերի առթիվ:

Ամբողջ քաղաքը դողերոցքի մեջ էր: Որովհետև ինչպես ժողովրդական առածն է ասում՝ չորի հետ վառվում էր նաև թացը: Եվ գուցե թե հենց այդ ժամանակ էլ Բադալյանի հակառակորդները տարածեցին արջի ու նապաստակի վերաբերյալ անեկդոտը: Նապաստակը սրտապատառ վազում է անտառով: Աղվեսը հարցնում է, թե ուր ես վազում, շլդիկ: Արջից եմ փախչում, պատասխանում է նապաստակը, և դու էլ փախիր, քույրիկ, որովհետև կենդանիներից ով երեք ականջ ունի, բռնում ու պոկում է նրանց ականջները: Բայց չէ՞ որ ես էլ, դու էլ երկուական ականջ ունենք, ինչի՞ց պետք է վախենանք, զարմանում է աղվեսը: Ախր հարցն այն է, որ արջն անգրագետ է, ասում է նապաստակը, նախ պոկում է, հետո՝ հաշվում:

Ասում էին, թե ճիշտ այդ արջի նման էր Գառնիկ Բադալյանը հաշվեհարդար տեսնում բոլոր նրանց հետ, ովքեր հայտնվում էին քաղկոմի բյուրոյում: Եղած մի քանի հիմնարկների ու արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարների մի մասին աշխատանքից հեռացնելուց ու կուսակցական տույժի ենթարկելուց հետո անգամ նա չհանգստացավ: Ու անմիջապես սկսեց զբաղվել մտավորականներով:

Զավեն Շարաֆյանը վաղուց էր նկատել, որ նա անբացատրելի մի ատելություն ունի մտավորականների և առանձնապես ոչ տեխնիկական մտավորականության հանդեպ: Եվ հաճախ էր հիշում, որ երբ նոր էր անցել աշխատանքի ու գրում էր իր առաջին ֆելիետոնները, այն ժամանակ Քիմկոմբինատի դիրեկտոր Գառնիկ Բադալյանը հեռախոսով թե հանդիպման ժամանակ անպայման ասում էր.

- Ապրես, սուր գրիչ ունես: Գրիր հատկապես ինտելիգենտների մասին: Խեղճ բանվորները կեղտի ու մրի մեջ տառապում, տանջվում են ու կոպեկներ են ստանում, իսկ դրանք ապրում են առոք-փառոք՝ սպիտակ ձեռնոցներով, սպիտակ անձեռոցիկներով, սպիտակ սավանների մեջ, մի սուտ գիրք են գրում, որ իրենցից բացի ոչ ոք չի կարդում ու հազարներ են գոփում: Ոչինչ չեն ստեղծում, ոչ մի նյութական բարիք, բայց բանվոր դասակարգի վզին նստած նրա հացն են ուտում և արհամարհանքով, վերևից նայում իրենց կերակրողին: Մի դատարկ-մատարկ բանաստեղծության համար գիտե՞ս ինչքան են ստանում, Զավեն, բանվորի

Մի ամսվա աշխատավարձը: Իսկ բժիշկները, բժիշկները…Եթե դրամ ցույց չտաս, չեն վիրահատի: Ինչ վիճակի մեջ էլ լինես: Այսօր մեր կյանքի տզրուկները ինտելիգենտներն են, իմացիր: Ես ու դու բանվորի զավակներ ենք, պիտի դա լավ հասկանանք:

Ասում են, թե նրա ատելությունը մտավորականների նկատմամբ իր խոր արմատներն ունի: Ծանր է եղել մանկությունը: Երբ հասակակիցները դպրոց են գնացել, նա ստիպված է եղել նաև աշխատել: Ջուր է վաճառել շուկաներում, փողոց է ավլել, մանրահատակ է փայլեցրել հիմնարկներում, փայտ է ջարդել մի քանի կոպեկի համար: Մի խոսքով «ներքևում» է ապրել և նույնիսկ հիմա, երբ քաղկոմի առաջին քարտուղար է ու «Ֆիլիպ-Մորիս» է ծխում, դա չի կարողանում ներել «վերին» հարկերի ապրողներին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նա աշխատանքից հեռացրեց ու կուսակցական տույժեր տվեց և առողջարանի գլխավոր բժշկին, և երեք դպրոցներից երկուսի դիրեկտորներին: Նույնիսկ գյուղտեխնիկումի դիրեկտոր Կայծակ Չոփուրյանին ստիպեց կենսաթոշակի անցնել, որով միանգամից շահեց ժողովրդի համակրանքը և հուսահատության դուռը հասցրեց անստորագիր նամակներ գրելու գծով նրա հետևողներին ու աշակերտներին: Իսկ երբ «Լուսաբացում» տպագրվեց Զավեն Շարաֆյանի ֆելիետոնը՝ բնակարանների բաշխման հարցում թույլ տրված ապօրինությունների մասին, քաղխորհրդի նախագահ Սահակ Միրզոյանը ոչ թե քաղկոմ, այլ քարտուղարի տուն գնաց ու ասաց.

- Գառնիկ, ես ձեռքերս բարձրացնում եմ: Ես հասկացա, որ դու ինչ ուզես՝ կանես: Մեծ մարդ եմ, ամաչում եմ: Կարիք չկա, որ իմ հարցը բյուրոյում քննվի և- մնացածը… Մեծահոգի եղիր ու թույլ տուր, գոնե հանուն նրա, որ Գորգազործական կոմբինատ բերեցի մեր քաղաք, որպեսզի համաձայն իմ դիմումի ազատվեմ աշխատանքից: Աչքիդ էլ չեմ երևա: Երևանում մի փոքրիկ հիմնարկ են տալիս ինձ, կգնամ, գլուխս կպահեմ:

Գառնիկ Բադալյանը կիտեց հոնքերն ու օրորեց գլուխը.

- Հին, փորձված, թրծված կադր ես, Սահակ, քեզանից չէի սպասում: Ինչ է պատահել, եղբայր: Թերթում նույնիսկ քո անունը չկա: Ժուռնալիստներ են, պիտի գրեն, էլի: Նրանց հացն էլ դա է: Ձևականորեն մի նկատողություն կհայտարարենք՝ թույլ հսկողության համար և վերջ: Իզուր ես խուճապի մատնվել, մնա, աշխատենք միասին:

Բայց Սահակ Միրզոյանը զուր չէ, որ հին ու փորձված-թրծված կադր էր:

- Չէ,- ասաց,- Գառնիկ Վարդանիչ, մեծահոգի եղիր ու թույլ տուր գնամ:

Եվ Գառնիկ Բադալյանը մեծահոգություն հանդես բերեց՝ մակագրեց նրա մեկնած դիմումի վրա: Դա իրոք մեծահոգություն էր նրա կողմից, որովհետև մի քանի օր առաջ կենտրոնական բոլոր թերթերը հայտարարություն էին տպագրել այն մասին, որ Սահակ Միրզոյանի մոսկովյան հովանավորը, երկրի փաստորեն երկրորդ ղեկավարը, վտարվել է իր զբաղեցրած պաշտոնից և հեռացվել կուսակցությունից՝ ժողովրդական տնտեսության բնագավառում թույլ տված կոպիտ սխալների, պաշտոնն ի չարը գործադրելու, զանազան մեքենայությունների, կաշառակերության և անձնական նպատակներով արտասահմանյան վալյուտային գործարքներով զբաղվելու համար:

Դրանից էլ հարմար պա՞հ: Կարելի էր ոչնչացնել, ջնջել աշխարհի երեսից Սահակ Միրզոյանին՝ հենց թեկուզ շաբաթօրյակի ժամանակ նրա ունեցած ամբարտավան նյութի համար: Բայց Գառնիկ Բադալյանը, ով գիտե ինչ մտածելով, Սահակ Միրզոյանին թույլ տվեց՝ արցունքն աչքերին շնորհակալություն հայտնելուց հետո, իր ողջ ընտանիքով հեռանալ հայրենի տնից:

Թեև դրանից հետո ևս խաղաղություն չհաստատվեց քաղաքում: Յուրաքանչյուր ուրբաթ (ոմանք քմծիծաղով «Արյունոտ ուրբաթ» էին անվանում այդ օրը) տեղի էր ունենում քաղկոմի բյուրոյի հերթական նիստը, որտեղ բյուրոյի անդամները նվիրվածությամբ նայելով առաջին քարտուղարին՝ մոլեգնաբար աշխատանքից հեռացնում կամ տույժի էին ենթարկում ով ձեռքերն ընկնում էր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավեն Շարաֆյանը ի պաշտոնե հաճախ էր մասնակցում բյուրոյի նիստերին և քաղկոմի շենքից սովորաբար հեռանում էր ահաբեկված: Այդ հախուռն կոտորածը նրա սրտով չէր, որովհետև երբեմն պատժվում էին նաև գրեթե անմեղ մարդիկ, պատժվում էին այնքան չնչին սխալների համար, որ տարակուսանք էին հարուցում: Պատահում էր նաև,որ հիմնական մեղավորը հիվանդանում կամ հիվանդ էր ձևանում և իր փոխարեն բյուրո էր ուղարկում այդ հարցում բոլորովին անմեղ տեղակալին: Եվ պատիժը ստանում էր տեղակալը: Որովհետև, միևնույն է, մեկն ու մեկը պետք է պատժվեր:

Անհնարին է, որ նման պայմաններում կոպիտ սխալներ թույլ չտրվեին կամ տեղի չունենային թյուրիմացություններ: Նման մի դեպքի ականատես եղավ նաև Զավեն Շարաֆյանը:

Բյուրոյում պետք է քննարկվեր թերթի հրատարակած մի հոդվածը՝ քաղաքային ԶԱԳՍ-ի շենքի անմխիթար վիճակի մասին: Այնպես որ ուզեին թե չուզեին, հոդվածի հեղինակ Միհրան Գալստյանն ու խմբագիր զավեն Շարաֆյանը պետք Է մասնակցեին նիստին: նիստի առաջին մասը նորմալ Էր ընթանում; Մանրամասն քննության էր առնվում հարցը, գրեթե բոլորը ելույթ էին ունենում, ուշադիր լսում էին առարկություններն ու բացատրությունները: Իսկ հետո…

Զավենը սկզբում առաջին քարտուղարի առանձնասենյակում էր նստած, բայց երեք-չորս ժամ անց զգաց, որ խելագարվում է: Հարցերը քննվում էին արդեն կոնվեյերի արագությամբ, ընդունարանից նորանոր մարդիկ էին ներս մտնում, ստանում իրենց պատիժը, բղավում վրդովված կամ լաց լինում և սրտերը բռնած՝ օրորվելով հեռանում առանձնասենյակից: Քանի որ առաջին քարտուղարը ծխում էր, միաժամանակ ծխում էին նաև բոլորը և այնպիսի մի մշուշ էր կանգնել սենյակում, որ մարդկանց դեմքերը հազիվ էին երևում ծխածածկույթի միջից: Բյուրոյի անդամներն արդեն անասելի քաղցած էին ու հոգնած և որպեսզի պահ առաջ տուն հասնեն, այլևս ոչ հարցեր էին տալիս, ոչ լսում, այլ անհամբեր սպասում էին, թե երբ պետք է վերջապես բարձրացնեն ձեռքերը ու հերթական զոհին իր արժանի կամ ոչ արժանի պատիժը տան: Նույնիսկ պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի նոր վարիչ Խաչիկ Լազարյանը հորանջելով հրահանգչին շշնջաց.

- Արա, տես հլա շատ մարդ կա՞- բերեք հեռացնենք պրծնենք, էլի…

Այդ ժամանակ արդեն Զավեն Շարաֆյանը ընդունարանում էր և Միհրան Գալստյանի հետ կաշեպատ բազմոցին նստած՝ սպասում էր, թե երբ պետք է վերջապես քննության առնվի հոդվածը: Ծխից փրկվելու համար ընդունարան դուրս բերող դուռը բաց էին թողել և պարզ երևում էր, թե ինչ է կատարվում առանձնասենյակում: Իսկ առանձնասենյակում քննության էր առնվում բետոնախառնիչ հանգույցի կազմակերպությունում կադրերի հոսունության հարցը:

Զեկուցողի՝ քաղկոմի արդյունաբերության բաժնի վարիչ Հրաչյա Բաբայանի բերած փաստերը զարհուրելի էին: Հանգույցը անցած ինն ամիսների պետական պլանը թերակատարել էր ութսուն տոկոսով: Հենց միայն այդ պատճառով ձախողվել էր մի քանի շինարարական օբյեկտների պլանային առաջադրանքների կատարումը: Պարապուրդների պատճառով պետությանը հասցրած վնասը կազմում էր մեկ միլիոն հինգ հարյուր հազար ռուբլի: Շինարարական բանկը հրաժարվում էր վճարել բանվորների ու ծառայողների աշխատավարձը: Անմխիթար վիճակում էր կադրերի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հետ տարվող աշխատանքը բետոնախառնիչ հանգույցում: Նույն ինն ամիսների ընթացքում աշխատանքի էին ընդունվել հիսունութ բանվոր, իսկ աշխատանքից հեռացել էին յոթանասուն հոգի, ներառյալ նոր ընդունվածների իննսուն տոկոսը: Գառնիկ Բադալյանը բռունցքը սեղանին խփեց.

- Իսկ որտե՞ղ է դիրեկտորը:

Արդյունաբերության բաժնի վարիչը թեքվեց նրա ականջին.

- Հեռացրել ենք, ընկեր Բադալյան:

- Իսկ գլխավոր ինժեներ՞ը:

- Նրան ավելի շուտ էինք հեռացրել:

Քաղկոմի առաջին քարտուղարը սպանիչ հայացքով զեկուցողին նայեց.

- Բա հիմա ո՞ւմ հարցն ենք քննում: Ո՞վ է ներկայացնում բետոնախառնիչ հանգույցը:

- Գործարկոմի նախագահը…- Հրաչյա Բաբայանը ձեռքի թղթին նայեց: - Ընկեր Նիկողոսյանը:

Ու մեկ էլ «մեղադրյալի» աթոռից բարձրացավ մի աժդահա՝ թավ հոնքերով ու բեղերով.

- Ի՞նչ կա,- որոտաց նա,- Նիկողոսյանը հենց ես եմ, որ կամ:

Գառնիկ Բադալյանը պայթեց.

- Ես եմ,- ձգեց նա արհամարհանքով: - Դեռ կարողանում եք հպարտ-հպարտ արտասանել՝ ես եմ- ինչո՞վ եք զբաղված, ընկեր գործարիկոմի նախագահ, որտե՞ղ է ձեր մարդկային, բանվորական արժանապատվությունը: Ինչպե՞ս եք հանդուրժում, որ ձեր կոլեկտիվը ձախողում է պետական առաջադրանքների կատարումը: Ձեր պատճառով, հենց ձեր, ձեր դատապարտելի անհոգության հետևանքով այսօր կանգ են առել մեր քաղաքի շինարարական հրապարակները…

Աժդահայի դեմքը կասկարմիր կտրեց.

- Յա, տո հլա սպասիր, ընկեր-- նա անօգնական չորս կողմը նայեց: -Ընկեր…

- Բադալյան, Բադալյան,- անմիջապես հուշեցին նրան: - Գառնիկ Վարդանիչ…

- Հլա սպասիր, ընկեր Բադալ- կամ թե չէ՝ ընկեր Վարդանյան- էս դու երկնքի՞ց ես ընկել- Մազալու մարդ ես…

Նրա վրա հարձակվեցին միանգամից, տարբեր տեղերից.

- Լսիր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Նստիր, նստիր, ասում եմ:

- Չափդ ճանաչիր:

- Գիտե՞ս ում հետ ես խոսում՝ …նստիր:

Քաղկոմի քարտուղարին հավանաբար ավելի շատ զայրացրեց այն փաստը, որ այդ մարդը քաղկոմ է եկել ու Գառնիկ Բադալյանին չի ճանաչում, նույնիսկ անուն -ազգանունը չգիտի:

- Ահա թե ում հետ ենք մենք աշխատում,- ձեռքերը տարածեց նա: - Ահա թե ում վրա է մեր հույսը: Ազդվելու, ամաչելու, ինքնաքննադատաբար իր մեղքն ընդունելու փոխարեն՝ նա դեռ հոխորտում է: Լսեք, գործարկոմի ընկեր նախագահ, դուք հանդուրժելի՞ երևույթ եք համարում այն, որ մարդիկ չեն կարողանում, չեն ցանկանում աշխատել ձեր ձեռնարկությունում: Որ անցած ինն ամիսների ընթացքում ավելի շատ բանվորներ են հեռացել հանգույցից, քան ընդունվել են: Խայտառակություն… Ասեք, ինչո՞ւ կարգին չեք աշխատում… Բա դուք ամոթ չունե՞ք…

Մարդկանց հետ խոսելիս Գառնիկ Բադալյանը գրեթե երբեք չէր սխալվում: Նա սովորաբար գիտեր, թե ում հետ է խոսում, ինչպես պիտի խոսի նրա հետ և տալիս էր այնպիսի հարցեր, որոնց պատասխանները նույնպես գիտեր: Նա երբեք չէր կոպտի մեկին, եթե համոզված լիներ, որ նույնատիպ պատասխան է ստանալու: Իսկ քաղկոմի առաջին քարտուղար աշխատելու ժամանակաշրջանում համոզվել էր, որ ինչ էլ ասի՝ հիմնարկի պետերը, կուսկազմակերպության քարտուղարները կգերադասեն լռել ու հնազանդվել: Բայց այդ օրը բետոնախառնիչ հանգույցի գործարկոմի նախագահի հետ խոսելիս սխալվեց: Սխալվեց միայն այն պատճառով, որ կարծում էր, թե Նիկողոսյանը պաշտոնյա է: Այնինչ այդ հսկան ընդամենը ցեմենտ տեղափոխող բանվոր էր և հասարակական կարգով էր գործարհկոմի նախագահ աշխատում:

Ահա թե ինչու լռելու և հնազանդվելու փոխարեն, Նիկողոսյանը հանկարծ թափով բարձրացավ տեղից և մի վայրկյանում հայտնվեց քաղկոմի առաջին քարտուղարի առջև.

- Ցա, տո հլա սպասիր,- որոտաց նա սոսկալի վրդովված, բահաչափ ձեռքը մեկնելով քարտուղարի դեմքին: - Արա, դու էդ ո՞ մ ես ամոթանք տալիս: Տո դու ո՞վ ես: Տո դու գիտե՞ս, թե մարդիկ ինչի են փախչում: Շան աշխատանք է, դրա համար են փախչում: Փողոցում անցնող-դարձողներին ենք բռնում ու աղաչում, որ աշխատեն: Երկու շաբաթ էլ չեն դիմանամ: Այ դու, դու,- նա նորից քարտուղարի դեմքին մոտեցրեց հսկայական բահաչափ ձեռքը,- էստեղ նստած ինչքա՞ն ես ստանում: Արի երկու անգամ ավել տամ, մենակ թե ցեմենտ թափի կամ խիճ լցրու բունկերը: Մեծ-մեծ խոսում ես, արի, էլի…

Անօրինակ ժխոր բարձրացավ: Գառնիկ Բադալյանը թիկունքով ետ-ետ գնաց, ասես հարվածից էր խուսափում ու հևաց կատաղորեն:

- Ես առաջարկում եմ նրան հեռացնել կուսակցությունից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հրահանգիչները կախվեցին բանվորի թևերից և սպառնում,խնդրում, համոզում էին ետ քաշվել: Նրանց միացավ նաև քաղաքի միլպետ Ռոբերտ Մասիսյանը և սկսեց ազդու հրահանգներ տալ.

- Կանգ առ: Ետ քաշվիր: Նստի ր: Խելոք: Ասում եմ՝ խելոք:

Բայց աժդահան չէր հանգստանում:

- Արա էդ ո՞ւմ ես պարտիայից հանում: Արա, հլա սպասի…

- Ես առաջարկում եմ հեռացնել նրան կուսակցությունից,- կավճի նման ճերմակած դեմքով կրկնեց Բադալյանը-- Քվեարկում եմ: Ովքե՞ր են համաձայն: Դե՞մ: Չկա: Ձեռնպա՞հ: Չկա: Դուք ազատ եք: Հաջորդը: Հաջորդը: Ո՞ւմ հարցն է:

Բանվոր Նիկողոսյանը, որ մի պահ լռել ու զարմանքով բարձրացված ձեռքերին էր նայում, նորից ձայնը գլուխը գցեց.

- Յա, տո հլա սպասի… Արա, սպասեք մի բան ասեմ… Արա, թողեք մի բան ասեմ, նոր…

Բայց նրան այլևս լսող չկար: Ընդհակառակը, հրահանգիչները թևերից ձգելով նրան դեպի դուռն էին տանում, արդեն խնդրելով ու հորդորելով:

- Անհարմար է, դուրս եկեք…

- Չի կարելի խանգարել բյուրոն:

- Ձեր հարցն ավարտված է… Գնացեք, գնացեք, հետո կգաք, ընկեր Նիկողոսյան: Հետո կգաք, հա՞…

Արդեն դռան արանքում նա այնուամենայնիվ թափ տվեց իրեն, ազատվեց հրահանգիչներից ու շրջվելով՝ ձեռքը կրկին Բադալյանին մեկնեց…

- Արա, ընկեր Բաղալ, թող մի բան ասեմ, հետո հանի, էլի…

Բայց հրահանգիչները մեծ ճարպկությամբ դուրս հրեցին նրան ու փակեցին դուռը:

Եվ գործարհկոմի նախագահ Նիկողոսյանը հայտնվեց ընդունարանում: Նա նորից թափ տվեց ուսերը- ասես բազմամարդ հերթից էր դուրս եկել ու գլուխը փակ դռան կողմը շրջելով, հսկա ցուցամատը վեր բարձրացրեց:

- Արա, - ասաց նա ապշած, - մազալու մարդ էր, չթողեց բերանս բացեմ, որ ասեմ՝ ես պարտիական չեմ… ինձ էդ ոնց է պարտիայից հանում…

* * *

Ուղիղ մի տարվա համատեղ աշխատանքի ընթացքում առաջին անգամ Զավեն Շարաֆյանը ծանր խոսակցություն ունեցավ խմբագրության վարորդ Տիգրանի հետ: Ընդհանրապես նա

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

գոհ էր տղայից: Տիգրանը ժրաջան էր, պարտաճանաչ, պատրաստակամ, սիրահարված իր ավտոմեքենային: Եթե հինգ րոպե անգամ կանգ առնեին մի տեղ, անմիջապես փալասը հանում էր ու սկսում մաքրել առանց այդ էլ միշտ մաքուր, փայլուն «Պոբեդան»: Ուրիշ վարորդների նման անընդհատ չէր տրտնջում բենզինի ու ավտոպահեստամասերի պակասից: Չգիտես ինչպես, չգիտես որտեղից միշտ ճարում էր ամեն ինչ, և երբ խմբագիրը ձայն էր տալիս նրան, Տիգրանը զինվորավարի ձգվում էր. «Կազմ ու պատրաստ եմ»: Այնպես էր պատահում, որ զանգահարում էին Կենտկոմի պրոպագանդայի ու ագիտացիայի բաժնից և կարգադրում շտապ Երևան մեկնել: Նման դեպքերում խմբագիրը ինչ-որ չափով անհարմար էր զգում, որ առանց նախապես զգուշացնելու, վարորդին կտրելու է քաղաքից ու տնից:

- Տիգրան…

- Երևա՞ն ենք գնում,- անմիջապես կռահում էր տղան: - Կազմ ու պատրաստ եմ:

- Գուցե տուն մտնեիր… Տեղյակ պահեիր- Հնարավոր է, որ այսօր չվերադառնանք…

- Փիս կսովորեն, գործ չունեք, ընկեր Շարաֆյան, գնացինք:

Այդ օրը նույնպես, ինչպես պայմանավորվել էին, առավոտյան ժամը յոթին նրա փայլփլուն ավտոմեքենան արդեն կանգնած էր Զավեն Շարաֆյանի տան առաջ: Տեսնելով, որ խմբագիրը զամբյուղով շշեր է բերում, Տիգրանը նետվեց ընդառաջ, Զավենի ձեռքից խլեց զամբյուղը ու ինքը տեղավորեց պահատեղում: Խմբագիրը հասցրեց նկատել, որ պահատեղում կարտոնե մի մեծ տուփ ևս կա:

- Դա՞ ինչ արկղ է, Տիգրան,- հարցրեց նա:

- Ինչ է, չգիտեի՞ք,- անկեղծ զարմացավ վարորդը: - Մթերքներ են ու խմիչք: Ձեր մայրիկի տարին նշելու համար են դրել:

Զավեն Շարաֆյանը հուզվեց ու ամաչեց, մտածելով, որ Գառնիկ Բադալյանն է կազմակերպել այդ ամենը Որովհետև նրանից բացի ոչ ոքի չէր ասել, թե Երևան է գնալու մոր մահվան տարին նշելու համար:

- Բա դու չասացի՞ր, որ ես երեկ ամեն ինչ ուղարկել եմ,- հարցրեց նա գրեթե սրտնեղած:

- Ասացի, ընկեր Շարաֆյան, բայց Բերսաբեն ասաց, որ դա էլ իրենց կողմից է…

- Ո՞վ ասաց…

- Բերսաբեն, ընկեր Շարաֆյան, մեր հարևանն է: Դեռ երեկ երեկոյան բերեց, թե ընկեր Շարաֆյանի մոր տարին է վաղը: Առանց այդ էլ շատ անհարմար բան ստացվեց, մահվան մասին չէինք իմացել, որ գնայինք Երևան: Վերցրու, տար, Տիգրան ջան: Ու քանի որ հրաժարվեցի առանց ձեր գիտության վերցնել, ասաց թե դուք գիտեք, պայմանավորվել եք:

Զավեն Շարաֆյանը գունատվեց: Դա այնքան նկատելի էր, որ Տիգրանը վախեցավ.

- Ի՞նչ պատահեց, Զավեն Աշոտիչ, դուք չգիտեի՞ք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Տիգրան,- ատամները սեղմած հարցրեց խմբագիրը,- մինչև հիմա դու ինձ չե՞ս ճանաչում, ինչ է: Ամբողջ օրն ինձ հետ ես: Երբևէ տեսե՞լ ես, որ ես մտերիմ լինեմ Բերսաբեի նման մարդկանց հետ: Որովհետև այդպիսի նվերներ միայն շատ մտերիմ մարդուց կարելի է ընդունել: Այն էլ, երբ վստահ ես, որ նույնն էլ դու ես անելու նրա նկատմամբ:

- Ուրեմն ինձ խաբել է, Զավեն Աշոտիչ,- ատամները կրճտացրեց տղան:

- Եթե մի անգամ էլ նման բան նկատեմ, այլևս աչքիս չերևաս:

- Ներողություն, ընկեր Շարաֆյան: Լավ, ես նրա հաշիվը հետո կմաքրեմ,

- Մաքրիր հենց հիմա: Գնացինք այդ Բերսաբեի մոտ:

- Նա արդեն շուկայում կլինի, Զավեն Աշոտիչ:

- Քշիր շուկա:

Քաղխորհրդի գործկոմի որոշումը նոր՝ ծածկած շուկայի շենքի կառուցման մասին, դեռևս նախագծման ընթացքում էր: Շուկան նույն շուկան էր՝ իր մանրիկ, փայտաշեն կրպակներով, աղքատիկ վաճառասեղաններով և կեղտի մեջ կորած նախաճաշարանով, որտեղից քյաբաբի հոտ էր տարածվում: Փոփոխությունները ներքին բնույթ ունեին՝ Կորյուն Մխեյանն այլևս խորտկարանի վարիչը չէր, այլ առաքիչը, իսկ բուֆետում ոչ թե Բերսաբեի ամուսին Սերոբն էր թագավորում, այլ Սերոբի քրոջ որդին: Չէ, արտաքին փոփոխություն ևս կար: Աղաբեկ և Վաղարշակ Տիտանյանների գլխարկի արհեստանոց-կրպակը գոյություն չուներ այլևս: Առևտրի վարչությունը և նրա պետ Ասքանազ Պեպանյանը դրանով ընդգծել էին, որ լրիվ ընդունում են թերթի քննադատությունը և ահա բառացիորեն մաքրել են շուկան՝ ջնջելով այդ պորտաբույծների և խուլիգանների հետքն անգամ:

- Ինչպես որ վերցրել ես, այնպես էլ տար հանձնիր,- ասաց Զավենը, երբ ավտոմեքենան կանգ առավ շուկայի մուտքի մոտ:

Տիգրանը դուրս թռավ ավտոմեքենայից և պահատեղից հանելով խոշոր տուփը՝ երկու ձեռքով կրծքին սեղմած մտավ շուկա: Իսկ երբ վերադարձավ կարմրատակած՝ նրա ետևից անմիջապես հայտնվեց Բերսաբեն:

- Ընկեր Շարաֆյան, Տիգրանը մեղավոր չի, ցավդ տանեմ: Ես խաբեցի, որ վերցնի: Բա ի՞նչ անեի, մարդ ենք, չէ՞, մենք էլ ենք ուզում վերաբերմունք ցույց տալ: Ողորմի ձեր մայրիկին, մենք էլ ենք մայր ունեցել, չէ՞ …

- Տիկին Բերսաբե,- առանց ավտոմեքենայից դուրս գալու, ասաց խմբագիրը որքան հնարավոր է խիստ, բայց կամացուկ, որպեսզի ուշադրություն չհրավիրի: - Այդ ինչի՞ց եք ենթադրել, թե ես ձեր օգնության կարիքն ունեմ…

- Վայ, քոռանամ ես,- գլուխն օրորեց Բերսաբեն,- ընկեր Շարաֆյան, որ մարդիկ մատաղ են բաժանում՝ մտածում են, թե մատաղ ուտողները քաղցա՞ծ կլինեն: Հոգու պարտք է, էլի, ցավդ տանեմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մազ մնաց, որ Զավենը ժպտար՝ նայելով տիկին Բերսաբեի անմեղ, միամիտ դեմքին:

- Մենք ձեր մատաղի կարիքը չունենք,- ասաց նա կիտելով հոնքերը: - Գնացինք, Տիգրան:

Բայց Բերսաբեն աջ ձեռքով բռնել էր ավտոմեքենայի կիսաբաց ապակին.

- Ախր ինչո՞ւ եք բարկանում, ընկեր Շարաֆյան: Մենք ձեզ ի՞նչ վատ բան ենք արել: Ինչ արել՝ դուք եք արել: Հրեն՝ Սերոբը բանվոր է աշխատում, իսկ ես էլ հավաքարարուհի եղել եմ, հավաքարարուհի էլ կամ: Հո դրանից ցածր գործ չկա: Մենք ձեզանից հո որևէ լավություն չենք ուզում: Ես հո այդ բոլորը չեմ տալիս ու տեղնուտեղը ասում, թե մի բան էլ դուք ինձ համար արեք: Հայ ենք,չէ՞, բա որ մենք իրար օգնության չհասնենք, թուրքե՞րը պիտի գան օգնեն մեր ժողովրդին: Ինչ որ ուզում էի անել, անմեղ, մաքուր սրտով եմ կամեցել: Գետինը մտնեմ, թե Տիգրանից բացի մեկնումեկը իմացել է այդ մասին..,

Զավեն Շարաֆյանը հեգնաբար ժպտաց.

- Վերջացնենք,- ասաց նա: - Նորից եմ կրկնում, որ ես ձեր օգնության կարիքն ամենևին չեմ զգում: Իսկ եթե իսկապես մտահոգվում եք հայ ժողովրդի մասին, քյաբաբի ու կարկանդակների մեջ մի քիչ էլ միս դրեք:

- Վա՞յ,- վախեցած բացականչեց տիկին Բերսաբեն՝ այլևս անկարող որևէ բան ասել:

- Գնացինք, Տիգրան,- կրկնեց խմբագիրը:

Տիգրանը խմբագրի կողքով մեկնեց ձեռքը ու ապակուց պոկեց կնոջ մատները:

- Է՞լ ինչ օյին ունեիր իմ գլխին բերելու,- կատաղած շշնջաց նա ու արագ թափով տեղից պոկեց ավտոմեքենան:

Ողջ ճանապարհին նրանք չխոսեցին: Եվ ողջ ճանապարհին Զավեն Շարաֆյանը մտածում էր, թե ինչ ապշելու արարած է այդ տիկին Բերսաբեն: Թե որտեղի՞ց է իմացել մայրիկի մահվան տարելիցի մասին և առանց ամաչելու, առանց քաշվելու կազմակերպել իր «ապառիկ» կաշառատվությունը: Ապառիկ: Որովհետև հիմա կոնկրետ վտանգ չկա, բայց դա ի՞նչ նշանակություն անի: Պետք է հեռատես լինել ու զգույշ: Բոլոր դեպքերում վտանգավոր մարդ է այդ Զավեն Շարաֆյանը, հո տեսաք, չէ՞, թե ինչպես իրար խառնեց շուկան: Եղբայրները հրեն պատժվել, տանջվում են՝ մեկը գաղութում, մյուսը հոգեբուժական հիվանդանոցում: Թերթի խմբագիր է, ով գիտե, մեկ էլ տեսար նորից շուկային կպավ կամ բռնեց, տպագրեց որևէ սոված բանվորի կամ ուսանողի նամակը, թե կոտլետի կամ կարկանդակի մեջ միս չկա: Ուրեմն հարկավոր է որևէ կերպ նախապես փակել նրա բերանը: Փող չի վերցնի, չէ, որ կարգին մարդ լիներ, վերցնող լիներ, այս ամբողջ պատմությունը տեղի չէր ունենա: Գուցե խմիչքն ու մթերքները վերցնի, առիթ է: Գրետա Սուրենյանը Ասքանազ Պեպանյանին ասել է, թե երկու օր հետո խմբագրի մոր տարին է: Դե տարին էլ ծախս է, ապրանք ճարել է- Գուցե թե վերցնի, հը՞: Ո՞ր խմբագիրն է կուշտ ապրում: Իսկ որ վերցնի- Վերջ: Էլ հո չի՞ կարող որևէ բան գրել կամ տպագրել Բերսաբեի մասին: Չի տպագրի,չէ, միամիտ չլինեք: Դրանք ազնիվ են համարում իրենց: Ամոթ ունեն…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հազար ու մի բանի մասին էր ճանապարհին մտածում Զավեն Շարաֆյանը՝ երբեմն-երբեմն գողունի հայացքներ նետելով Տիգրանի խռոված, կենտրոնացած դեմքին: Տանջվում է: Ոչինչ, թՈղ տանջվի, թող խրատ լինի նրան, որպեսզի այլևս երբեք նման հիմարություններ թույլ չտա:

Խմբագիրը մտածում էր նաև, թե ում է այդքան հիշեցնում տիկին Բերսաբեն: Դեմքը, կեցվածքը, խոսելաձևը շատ որոշակիորեն Զավենին հիշեցնում էին ինչ-որ մեկի, բայց թե ում՝ չէր կարողանում մտաբերել: Այն ո՞վ էր, էլի ասում էր ցավդ տանեմ, էլի ասում էր՝ հայ ենք, չէ՞,,.

Եվ հիշեց հենց նույն օրը երեկոյան, երբ տնից դուրս գալով, քայլերն ուղղեց դեպի տպարանի շենքը՝ մուտքի հեռախոսով Էմմային զանգահարելու համար:

Նրա դիմացից կոշիկների բարձր կրունկների պայտերը կտկտացնելով, բարձրահասակ ու վայելչատես մի կին էր գալիս:

- Բարև ձեզ, ընկեր Շարաֆյան,- հնչուն ձայնով ասաց կինը:

Զավենն իր մտքերի հետ, բարևեց, առանց ճանաչելու և թեքվեց, որ տպարան մտնի:

- Չճանաչեցի՞ր, ցավդ տանեմ,- կանգ առավ կինը: -Եպրաքսյան եմ: Հիշեցի՞ր…

Զավենը ճանաչեց ու ժպտաց և անմիջապես էլ հասկացավ, որ սա հենց այն կինն է, որին փնտրում էր մտքի մեջ, ճանապարհին: Որ սա հենց նա էր, որին հիշեցնում էր տիկին Բերսաբեն: Այ քեզ անակնկալ հանդիպում…

- Ո՞նց ես, ընկեր Շարաֆյան, լա՞վ ես,- հարցրեց Եպրաքսյան:

- Լավ եմ, Եպրաքսյա,- գլխով արեց Զավենը:

- Նորից թույլ են տվել, գիտե՞ս, պսակներ եմ սարքում: Հենց պետք լինի, ուրիշին որ ասել ես, կնեղանամ: Կգաս պսակներն ինձնից կվերցնես, ցավդ տանեմ:

Դա այն դեպքերից մեկն էր, երբ Զավեն Շարաֆյանը չէր կարողանում հասկանալ՝ դիմացինը ծաղրում է իրեն, թե ուղղակի պարզամիտ հիմար է: Եթե ծաղրում է, ուրեմն ահավոր լկտի է, որովհետև ինչպե՞ս կարելի է սգո ծաղկեպսակներ առաջարկել մեկին՝ այն համեմելով «ցավդ տանեմներով» և «ջանիդ մեռնեմներով»: Իսկ եթե անկեղծ է, շատ ավելի ահավոր բան է, ուրեմն մարդը հոգեկան խանգարում ունի: Բայց եթե հոգեկան խանգարում ունի, ինչպե՞ս է ապրում հասարակության մեջ, ինչպե՞ս է աշխատում, ինչպե՞ս է կարողանում դրամ վաստակել և միշտ այնպիսի մի գործ գտնել, որը ավելի եկամտաբեր լինի, քան նախորդը:

- Եղավ, եղավ, Եպրաքսյա,- ակամա ժպտաց խմբագիրը:

- Որովհետև եթե ես այսօր ապրում եմ, քո շնորհիվ եմ ապրում, ցավդ տանեմ: Եթե դու ինձ լավություն չանեիր, երեխաներս սովից կմեռնեին, ջանիդ մեռնեմ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նա խոսում էր, իսկ Զավեն Շարաֆյանը անընդհատ-անընդհատ միևնույն հարցն էր տալիս իրեն՝ հը՞, ծաղրո՞ւմ է, թե հիմար է…

Նման մեկին էլ մի քանի տարի առաջ հանդիպեց ընկերոջ տանը: Խնջույք էր, բարձր էր բոլորի տրամադրությունը: Խնջույքի սեղանապետն էր Քանաքեռի հոգեբուժական հիվանդանոցի գլխավոր բժիշկը: Նրա տրամադրությունը երևի բոլորից բարձր էր, որովհետև սեղանակիցներին հերթով ստիպում էր երգել կամ արտասանել և բուռն ոգևորությամբ գնահատում էր նրանց ելույթները՝ բարձրագոչ հրամայելով ոտքի կանգնել և «էքստրա» խմել արտասանողի կամ երգողի կենացը:

Հերթը Զավենին հասավ, բայց որովհետև նա ոչ կարգին երգել գիտեր, ոչ էլ արտասանել, ստիպված մի քանի անեկդոտ պատմեց, որոնցից մեկը համեմատաբար նորություն էր: Լոռեցի Ռուբենի կինը մեռնում է: Հարևանները հավաքվում են, լաց ու կոծ են բարձրացնում, իսկ Ռուբենի պետքն էլ չէ: Այ մարդ, ասում են, կինդ մեռել է, բա անհարմար չի՞, որ լաց չես լինում: Այտա, ընչի՞ լաց ըլնեմ, պատասխանում է Ռուբենը, ոչ հորս կողմից էր ինձ բարեկամ, ոչ մորս կողմից:

Սեղանապետը քրքջում էր, ձեռքերը խփում էր ծնկներին, «էքստրա» էր բղավում, իսկ վերջում արցունքները սրբելով, ասաց.

-Զավեն ջան, հրաշալի էր, ախպերս, ես քեզ շատ սիրեցի: Չգիտեմ, ասել են քեզ, թե չէ, ես հոգեբուժականի գլխավոր բժիշկն եմ: Իմացիր, որ ինչ էլ պատահի, ինչքան էլ ծանրաբեռնված լինենք, դու իմ հոգեբուժարանում քո առանձին սենյակն ունես:

Եվ այդ ամենն ասաց այնքան անկեղծ, այնքան սրտանց, որ Զավենն այդպես էլ մինչև վերջ չիմացավ՝ ծաղրո՞ւմ էր այդ մարդը, թե հիմար էր:

Ահա, հիմա էլ այս Եպրաքսյան…

- Իմացիր, ես քեզ մինչև կյանքիս վերջը պարտական եմ, ցավդ տանեմ, որ խայտառակ չարեցիր արտասահմանի իմ բարեկամների մոտ…

Գրողը տանի, ծաղրո՞ւմ է այս կինը, թե հիմար է, արդեն հարյուրերորդ անգամ հարցնում էր ինքն իրեն Զավեն Շարաֆյանը:

Երբ դեռ համալսարանի չորրորդ կուրսում էր, «Սովետական Հայաստան» թերթի խմբագրության նամակների բաժնի վարիչ Էդվարդ Լևոնյանը մի նամակ տվեց Զավենին՝ թե տար ստուգիր և եթե փաստերը ճիշտ են՝ մի փոքրիկ ֆելիետոն գրիր:

Նամակն այն մասին էր, որ Պուշկինի փողոցի վրայի ծաղկի խանութում, հակառակ խստիվ արգելքին, գաղտնաբար սգո ծաղկեպսակներ են սարքում ու վաճառում:

Զավենն անմիջապես գնաց նշված հասցեով, գտավ ծաղկի խանութն ու ներս մտավ: Բայց փոքրիկ խանութում ոչ ծաղիկներ կային, ոչ վաճառողներ: Մի քանի րոպե ապարդյուն սպասելուց հետո նա նկատեց, որ դեպի շենքի ներսը տանող մի դուռ կա ու զգուշորեն բացեց

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

այն: Եվ անմիջապես էլ տեսավ, որ ընդարձակ մի սենյակում չորս-հինգ ժրաջան կանայք վարպետորեն պսակներ են հյուսում ծաղիկներից, տերևներից և ուռենու ճյուղերից:

- Ինչ կա, եղբայր,- նրան ընդառաջ եկավ բարձրահասակ, վայելչակազմ մի կին:

- Ես Եպրաքսյա Կիրակոսյանին եմ խնդրում:

- Ես եմ Եպրաքսյան: Ո՞վ է քեզ ուղարկել: Քանի՞ պսակ է պետք- Պատրաստի չունեմ, վաղը պիտի գաս:

Ամեն ինչ պարզ էր արդեն, և Զավենը մտածեց, թե այլևս պետք չունի ներկայանալը: Նա ասաց, որ վաղը կգա և տուն գնալով գրեց ֆելիետոնը՝ ծաղկի դատարկ խանութի, թաքուն հարկաբաժնի և Եպրաքսյա Կիրակոսյանի մասին, որը խախտելով Երևանի քաղխորհրդի գործկոմի որոշումը՝ սգո ծաղկեպսակներ է սարքում ու վաճառում իր խանութում:

Ֆելիետոնը տպագրվեց թերթի շաբաթ օրվա համարում: Նույն երեկոյան Զավենն ու Սիրանը գնացին կինո «Մոսկվա»՝ հնդկական «Թափառաշրջիկը» երրորդ անգամ դիտելու, իսկ երբ տուն վերադարձան, Զավենը զարմանքով ու սարսափով տեսավ, որ մոր հետ սեղան նստած թեյ է խմում իր ֆելիետոնի հերոսուհին՝ ծաղկավաճառ Եպրաքսյա Կիրակոսյանը:

Տեսնելով Զավենին, Եպրաքսյան վեր թռավ տեղից, մոտեցավ նրան ու հանկարծ միանգամից ծնկի իջավ նրա առաջ:

- Ընկեր Շարաֆյան, ցավդ տանեմ, փրկիր ինձ…

- Վեր կացեք, ի՞նչ եք անում,- իրեն կորցրեց Զավենը: - Վեր կացեք անմիջապես:

- Մինչև որ խոսք չտաք, վեր չեմ կենա,- լաց էր լինում Եպրաքսյան:

Զավենին մի կերպ հաջողվեց ոտքի կանգնեցնել նրան:

- Ինչ՞ու եք այստեղ եկել, ի՞նչ եք ուզում,- հարցրեց նա քաշքշուկից հևալով:

- Ոնց որ իմ անունը գրեցիր թերթում, այնպես էլ ջնջի, արևիդ մեռնեմ, մուրազի վրա եմ, որ իմ անունը չջնջես, խայտառակ կլինեմ, նշանը հետ կուզի Աբոն,- մղկտում էր կինը:

- Աբո՞ն ով է:

- Իմ փեսացուն է, ցավդ տանեմ… Էս տարիքիս հազիվ մի մարդ եմ ճարել, իմ բախտի ճանապարհը մի փակի, արևիդ մեռնեմ:

Այ քեզ պատուհաս:

- Բայց ես ի՞նչ կարող եմ անել, Եպրաքսյա, թերթը տպագրել է արդեն,- ասաց նա հուսահատ:

- Որ ուզես՝ մի բան կանես, որ դու ուզես, մի բան կանես, ցավդ տանեմ- Արտասահմանում բարեկամներ ունենք, որ իմանան՝ ամոթից գետինը կմտնեմ, կկախվեմ, կթույնեմ ինձ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Այ քեզ կրակ ու պատիժ: Կարծես նա քիչ էր, մայրն էլ այն կողմից խոսեց կերկերուն ձայնով,

- Զավեն ջան, մեղք է, թե ձեռքիցդ որևէ բան կգա, արա, տղա ջան:

- Բայց ես ի՞նչ կարող եմ անել,- պոռթկաց Զավենը: - Դուք ասեք, ես ի՞նչ կարող եմ անել, երբ թերթը արդեն տպագրվել է:

- Իմ անունը միջից հանի,- երգելով լաց եղավ Եպրաքսյան: - Ոնց որ քո ձեռքով գրել ես, այնպես էլ ջնջիր, ոտքդ պաչեմ…

Զավենը ապշահար նայեց ծաղկավաճառ կնոջը՝ խելագա՞ր է , ինչ է: Եվ դրանում վերջնականապես համոզվելու համար, կամ գուցե ինքն էլ խելագարվեց մի պահ, բղավեց.

- Դե լավ, ինչ ուզում է թող լինի: Սիրան, թերթը բեր:

Եպրաքսյան, որ պատրաստվում էր նորից ծնկի իջնել, անմիջապես վեր թռավ տեղից.

- Իմ թերթից, իմ թերթից, - բացականչեց նա՝ դողացող ձեռքերով պայուսակի միջից հանելով «Սովետական Հայաստան» թերթը: - Իմ թերթից ջնջի, ցավդ տանեմ: Կյանքումս չեմ մոռանա:

Զավենը մի ակնթարթ նայեց Սիրանին: Նա մատներով ամուր սեղմել էր բերանը, որպեսզի չքրքջա:

- Սիրան, մատիտ բեր,- առույգ կարգադրեց Զավենը:

Սիրանը այնուամենայնիվ չդիմացավ, փռթկաց, շրջվեց անմիջապես, պահարանից մի հաստ կարմիր մատիտ հանեց ու մեկնեց եղբորը:

Զավենը Եպրաքսյայի տված թերթը փռեց սեղանին, բացեց երրորդ էջը ու մատիտը ձեռքն առավ.

- Ըհը,- ասաց նա, կարմիր մատիտը սահեցնելով տողերի վրայով,- Եպրաքսյա Կիրակոսյան, ջնջում եմ- Ահա ևս մի Եպրաքսյա Կիրակոսյան, ջնջեցինք- Սա՞ էր ձեր ուզածը…

- Մի հատ էլ վերջում կար, ցավդ տանեմ,- հիշեցրեց Եպրաքսյան…

- Վերջո՞ւմ: Ահա, Եպրաքսյա Կիրակոսյան, ջնջեցինք, պրծա՞նք…

- Շատ, շատ շնորհակալ եմ- Պարտական եմ հուր հավիտյան- Ի՞նչ անեմ՝ Աբոն նշանիս մատանին հետ կուզեր, արտասահմանում էլ բարեկամներ ունենք, խայտառակ կլինեինք,; Շնորհակալ եմ, արևիդ մեռնեմ- Հո Էսպես չի մնա, առաջին անգամը հո չի, հա փակում են, հետո փող են ուզում, տալիս ենք, բացում են նորից: Էլի կբացեն, խոսել ենք, արևիդ մեռնեմ, ու հենց որ բացեցին, կգաս, ինչքան պսակ պետք լինի՝ կտանես:

Զավենը նկատեց, որ մայրն արագ-արագ խաչակնքում է անկյունում, իսկ Սիրանը պատշգամբ է փախել սենյակից և հազիվ զսպեց ծիծաղը: Ու առաջին անգամ այստեղ էր, որ մտածեց, ծաղրո՞ւմ է այդ կինը, թե հիմար է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դե լավ, ջնջեցինք, վերջացրինք, գնացեք, Եպրաքսյա:

- Ինձ ճանապարհ գցիր, ցավդ տանեմ,- ասաց Եպրաքսյան՝ բռնելով Զավենի թևը, և երբ խավար միջանցք էին դուրս եկել, կամացուկ ավելացրեց: - Սա էլ մաղարիչը,.,

- Սա՞ ինչ բան է,- ցնցվեց Զավենը՝ գրպանում մի փոքրիկ փաթեթ հայտնաբերելով…

- Փող է, ցավդ տանեմ,- շշնջաց Եպրաքսյան,- վերցրու, քեզ հալալ լինի, արևիդ մեռնեմ- Ես փակբերան մարդ եմ- ըհը և ըհը - նա խավարի մեջ երկու անգամ ձեռքի ափով խփեց բերանին: - Ոչ մեկը չի իմանա: Այն օրն էլ ՕԲԽՍՍ-ի տղաներից Վարդանն ու Իլյիչն էին եկել, բռնեցին, չորս հազար ռուբլի փող տվեցի: Ո՞վ իմացավ:

Զավենը հրելով, նրան առմտուք դուրս բերեց, գրպանից հանեց ու դեմքին շպրտեց փաթեթը:

- Դե շուտ, հեռացեք անմիջապես, թե չէ նորից ձեր անուն-ազգանունը կվերականգնեմ թերթում,- կատաղորեն շշնջաց նա, թեև քրքջալ էր ուզում:

Կինը փաթեթն արագորեն տեղավորեց պայուսակի մեջ:

- Յա ,- ժպտաց նա՝ գլուխը թափահարելով,- թերթը սումկայիս մեջ է…

Ու շտապով իջավ սանդուղքով՝ կոշիկների պայտած բարձր ու սուր կրունկները կտկտացնելով բետոնե աստիճանների վրա:

Նա հեռացավ, իսկ Զավենը դեռ կանգնած մտածում էր, սա ինչ խաղ էր և խա՞ղ էր արդյոք: Ինչպե՞ս կարող է մեր օրերում ապրող մարդը չհասկանալ, որ թերթը տպագրվում է բազմահազար օրինակներով և մեկի միջից մատիտով քո անունը ջնջելով ոչինչ չի փոխվում: Ինչպե՞ս կարող է մարդ այդքան տգետ ու հետամնաց լինել: Բայց չէ՞ որ նա հարևաններ ու բարեկամներ ունի, որոնց հետ խոսում է, չէ՞ որ փեսացու ունի, որը նրան նշանի մատանի է տվել և մտադիր է ողջ կյանքը կապել նրա հետ: Չէ որ նա ի վերջո հիմնարկում է աշխատում, ժողովների է մասնակցում, ապրանք է ստանում ու բաց թողնում, հաշիվներ է անում՝ գումարում ու բազմապատկում է հատկապես իր ունեցվածքը: Մի՞թե նրա ուղեղը միայն մի ուղղությամբ է աշխատում և թքած ունի մնացած ամեն ինչի վրա: Պահ, պահ, պահ, դուք սովորում եք դպրոցում, գլուխ եք կոտրում համալսարանում,գրքեր եք կարդում ու նույնիսկ գիտեք, որ թերթը տասնյակ հազարներով է տպագրվում: Բայց դուք քաղցած եք, իսկ ես՝ կուշտ: Դուք հագնելու բան չունեք, իսկ իմ հանդերձապահարանը տրաքում է զգեստներից: Դուք ամեն ինչ գիտեք իբր թե, իսկ ինձնից եք պարտք անում, ինձնից եք կաշառք վերցնում: Դուք ամռանը չգիտեք որտեղ անցկացնեք ձեր արձակուրդը, իսկ էլ չգիտեմ, թե որն ընտրել՝ որ ծովափն ու որ առողջարանը: Որովհետև ես փող ունեմ, որի առաջ փակ դռներ չկան: Իսկ դուք կուչ եկեք տանը, սոված փորով գրքեր ու թերթեր կարդացեք և սիմֆոնիաներ լսեք: Ու եկեք տեսնենք, թե ի վերջո ով ում վրա ծիծաղելու իրավունք ունի:

Իսկ եթե դա խա՞ղ է: Եթե ինքնապաշտպանության բնազդով կամ գիտակցորեն է մարդն իրեն հիմարի տեղ դնում: Որ դու այդպես վերևից նայես նրան, ծիծաղես ու ծաղրես և քեզ մխիթարես, թե նրանից բարձր ես կանգնած: Իսկ նա ապրի ինչպես սիրտը կամենում է և ինքը թաքուն ծիծաղի քեզ վրա: Ո՞վ գիտե: Ո՞վ կարող է իմանալ ճշմարտությունը: Ինչո՞ւ չի կարելի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ենթադրել, թե Եպրաքսյա Կիրակոսյանը իր կենցաղային իմաստնությամբ եկել էր քո տուն, որպեսզի հետագայի համար զինաթափի քեզ ցուցադրելով իր իբր խեղճուկրակությունն ու հիմարությունը: Նա հրաշալի գիտի, որ հիմարին դատ չի հասնում: Եվ գիտի, որ երբ հանկարծ մի նոր նամակ ստանաս, կամ որևէ խոսք բացվի նրա մասին, դու կասես՝ դրա հետ գործ չունեք, այ մարդ, հիմարի մեկն է: Եկել էր, թե՝ անունս ջնջի թերթի միջից: Մի՞թե հենց այդպես էլ չեղավ, Զավեն Շարաֆյան: Դու նրա մասին պատմեցիր նամակների բաժնի վարիչ Էդվարդ Լևոնյանին, մի լավ հռհռացիք, իսկ երբ երկմտում էիք, թե ուր ուղարկել ֆելիետոնը՝ ընթացք տալու համար, միլիցիա յի՞ թե առևտրի վարչություն, Լևոնյանը ծիծաղեց.

- Դե լավ, եթե այդքան հիմար է, մեղք է, եկ ոչ մի տեղ էլ չուղարկենք: Ինչ անում են՝ թող անեն:

Եվ ինչպես երևում է՝ ոչինչ էլ չեն արել: Նույնիսկ թույլ են տվել, որ նորից սգո պսակներ սարքի ու վաճառի: Ու տեսքն էլ ամենևին խեղճի տեսք չէ: Հանկարծ չհամարձակվես համեմատել քո հագուստն ու նրա հագուստը: Միայն փետրավոր գլխարկը տան ողջ ունեցվածքը կարժենա: Ահա քեզ հիմար:

Ինչ ուզում ես ասա, բայց երջանիկ են այդ հիմարները: Բոլոր տեսանկյուններից: Բավական է հենց միայն այն, որ թերթ չեն կարդում: Թեթև ու անհոգ է հիմարի կյանքը:

- Ընկեր Շարաֆյան ջան, ե՞րբ ժամանակ կունենաս, մի հատ սեղան գցեմ, ցավդ տանեմ: Աբոս լավ կլարնետ է նվագում: Համ էլ կգաս կտեսնես մեր պատերի նկարները: Աբոս հիմա նկարներ է հավաքում, մենակ ծովեր ու կռվի տեսարաններ…

- Կներեք, բայց չեմ կարող խոստանալ, Եպրաքսյա,- տնքաց Զավեն Շարաֆյանը: - Ես հիմա հեռավոր մի փոքրիկ քաղաքում եմ ապրում:

- Որտե՞ղ,- զարմացավ Եպրաքսյան,- այստեղից հանեցի՞ն…

Զավենը գլխով արեց: Ինչ ուզում է թող մտածի, հո չի՞ կանգնելու բացատրություն տա:

Եպրաքսյայի աչքերի կրակը միանգամից մարեց:

- Հա՞: Դե երևացեք,- ասաց նա ու հեռացավ՝ պայտած կոշիկներով կտկտացնելով ասֆալտի վրա:

Իսկ Զավենը հառաչեց, մտավ տպարանի նախասրահը, մրոտ լսափողը ականջին դրեց, հավաքեց Էմմայի հեռախոսի համարը ու շունչ քաշեց թեթևացած՝ լսելով նրա ձայնը:

- Ողջույն, ընկերուհի:

- Զավեն, սիրելիս, որտեղի՞ց ես խոսում,- ուրախ հարցրեց Էմման:

- Տպարանից,- ասաց Զավենը: - Երևանում եմ, Էմմա ջան: Մայրիկիս մահվան տարին էր…

- Անպետքի մեկը,- բարկացավ աղջիկը: - Ինչո՞ւ ինձ զանգ չտվեցիր:

- Չեմ ուզում, որ դու տխրես, Էմմա…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Մեղքդ քավելու համար անմիջապես եկ մեր տուն:

Տո՞ւն…

- Արի:

- Իսկ գուցե դո՞ւ դուրս գաս, զբոսնենք մի քիչ:

- Սպասում եմ:

- Որքանո՞վ հարմար կլինի…

- Դերասան, - ծիծաղեց Էմման,- եթե հարմար չլիներ, չէի կանչի:

- Ախր վախենում եմ…

Ինչից, այ տղա…

Զավենը հրաշալի գիտեր, որ Էմման վաղուց ծնողների տանը չի ապրում:

- Վախենում եմ ծնողներդ պատշգամբից նայեն ու ծիծաղեն ինձ վրա: Ինչպես նախահեղափոխական ժամանակներում: Հիշո՞ւմ ես:

- Խմա՞ծ ես, Զավեն:

- Մի քիչ: Ավելի շատ ձևացնում եմ:

- Եկ, Զավեն: Դերասանների շենքը գիտե՞ս: Ծայրի մուտքի երրորդ հարկն է:

- Ուրեմն դու դերասանների շենքում ապրում ես ու ի՞նձ ես դերասան անվանում: Դռան վրայի ազգանունը հայերե՞ն է,

- Հայերեն է, հայերեն: Ալիքյան:

- Ինչ բերեմ հետս:

- Միայն ոչ ծաղիկներ: Ծաղիկներ ես բեմում եմ սիրում ստանալ:

- Ուրիշ ի՞նչ:

- Այս ժամին դու ուրիշ ոչինչ չես գտնի, ինձնից բացի,- նորից ծիծաղեց Էմման: - Թիթիզություն մի արա: Եկ:

Ու անջատեց հեռախոսը:

Զավենի բախտը բերեց: Փարոսի նման կանաչ լույսը վառած մի տաքսի էր անցնում Գնունի փողոցով: Զավենը բարձրացրեց ձեռքը, նստեց ու քիչ անց բարձրանամ էր դերասանների շենքի ծայրի մուտքի աստիճաններով: Դռան վրա իրոք հայերեն գրված էր՝ «Է. Ա. Ալիքյան»:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավենը սեղմեց զանգի կոճակը: Դուռն անմիջապես բացվեց: Շեմին մուգ կանաչ գույնի տնական մի շքեղ խալաթ հագած կանգնած էր Էմման:

- Զավեն ջան, հո չես նեղանա, որ խալաթով մնամ,- տղայի հայացքը որսալով ասաց աղջիկը: - Այնքան հոգնած եմ,:

- Չեմ նեղանա, եթե նույնիսկ այդ խալաթն էլ հանես,- ծիծաղեց Զավենը:

- Այ տղա, դու իսկապես հո խմած չե՞ս: Այդ ի՞նչ ես անում, Զավեն: Զավե՞ն…

Զավենը ընդարձակ սենյակի մի անկյունից մյուսն էր գնում ու գլուխը մեկ այս, մեկ այն կողմ էր թեքում:

- Հոտոտում եմ,- ասաց Զավենը: - Եվ ինչքան էլ տարօրինակ թվա, տղամարդու հոտ չեմ առնում:

Էմման քրքջաց,

- Այս տնից տղամարդու հոտը վաղուց կտրվել է, Զավեն ջան, իսկ եթե ճիշտն ասեմ՝ ընդհանրապես չի եղել: Նստիր, սուրճ դնեմ քեզ համար:

- Արդե՞ն,- դեպի դուռը գնաց Զավենը:

- Ինչ է, քաղցա՞ծ ես,- անհանգստացավ Էմման: - Հիմա մի բան կմտածեմ…

- Կատակում եմ, Էմմա ջան, այսօր այնքան եմ տխրել, որ կատակել եմ ուզում,- հառաչեց Զավենը: - Սուրճից լավ բան չկա: Օրհնվեն մեր հայրենադարձ եղբայրները: Բեր…

Էմման խոհանոց գնաց, իսկ Զավենը գահավորակի մեջ խրվելով, սկսեց ուսումնասիրել տունը: Պատերին զանազան աֆիշներ էին՝ ձոներով ու մակագրություններով լի, պատկերներ՝ ներկայացումներից, Էմման զանազան դերերում, Էմմայի յուղաներկ դիմանկարը, որտեղ աղջիկը նկարված էր ասես անձրևի քողի միջից, հեռավոր և հեքիաթային- Անկյուններում հսկայական գունազարդ սափորներ կային և գիպսե քանդակներ ցածրիկ պատվանդանների վրա: Մի խոսքով, իսկական արվեստի աշխատողի տուն էր խորհրդավոր, հարմարավետ ու գեղեցիկ:

Զավենն ուզեց ծխել, չորս կողմ նայեց, մոխրաման .չտեսավ ու երեխայի նման ուրախացավ դրանից, պարզամտորեն եզրակացնելով, թե ուրեմն իսկապես տղամարդ չի մտնում այդ տունը: Այդ եզրակացությունը նրա մոտ ավելի ամրապնդվեց, երբ սուրճը ցածրիկ սեղանին դնելով, Էմման անօգնական հայացքով շուրջը նայեց.

- Կներես, Զավեն ջան, բայց խմելու ոչինչ չունեմ…

- Հիանալի է,- բացականչեց Զավենը: - Նստիր:

Իսկ երբ փոքրիկ ումպերով խմում էին սուրճը, Զավենը տառապեց, տառապեց մտքում և ի վերջո չդիմացավ, ասաց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Էմմա, հայտնի բան է, որ կրակից մի անգամ վառվողը այլևս երբեք ձեռքը չի մեկնում օջախին:

- Որովհետև խելոք է և փորձ ունի,- գլխով արեց Էմման:

- Ես էլ եմ խելոքացել և նպատակ չունեմ որևէ առաջարկ անելու: Պարզապես ուզում եմ, որ միասին մտածենք: Ի վերջո, որքան հասկանում եմ, երկուսս էլ վառվել ենք մի-մի անգամ:

- Մտածենք,- համաձայնեց աղջիկը:

- Դու հիմա ազա՞տ ես, Էմմա:

- Որքան որ հնարավոր է այս երկրում,- ժպտաց պարուհին: -Այո…

- Եվ ի՞նչ մտադրություններ ունես- ի՞նչ հեռանկարներ-Ինչպե՞ս ես որոշել այսուհետև ապրել…

- Սա համարենք լրագրողի հարցազրո՞ւյց անվանի պարուհու հետ:

- Ոչ, Էմմա, ընկերոջ, բարեկամի մտահոգություն:

- Ես պետք է Լենինգրադ մեկնեմ, Զավեն:

- Հյուրախաղերի՞ :

- Ոչ, ընդմիշտ: Ես քեզ կարծեմ ասել եմ մի անգամ, Զավեն, որ մեր օպերայում իմ վիճակը առանձնապես նախանձելի չէ:

- Ինչո՞ւ,- հիշեց Զավենը: - Չէ՞ որ դու գլխավոր ռեժիսորի կնոջ ընկերուհին ես:

- Էհ,- գլուխը թախծոտ տարուբերեց աղջիկը: - Մի խոսքով, ես այստեղ այլևս հեռանկարներ չունեմ: Դու չես կարող պատկերացնել, թե ինչ է կատարվում, սիրելիս: Ինձ դեր են հանձնարարում, աշխատում-աշխատում, տանջվում, պատրաստվում եմ… Իսկ ես երևի չափից ավելի պարտաճանաչ ու նվիրված եմ իմ գործին- Ինձ զրկում եմ ամեն ինչից, ամեն օր կշռվում եմ և ամեն օր պարում եմ մինչև ուժասպառ լինելը… Իսկ հենց մոտենում են պրեմիերայի օրերը, գլխավոր ռեժիսորը մեկ էլ հանկարծ տեղեկացնում է ինձ, թե որոշել է փոխել իմ դերը: Պատկերացնո՞ւմ ես…

- Բայց դու վաստակավոր արտիստուհի ես, արդեն անվանի մարդ, մի՞թե չես կարող պաշտպանել քո իրավունքները:

- Իսկ նա շատ ավելի անվանի անձնավորություն է, սիրելիս, և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ է…

- Բայց ի՞նչ է ուզում քեզանից: Ինչպե՞ս է բացատրում իր կամայականությունը:

- Նա բացատրություններ տալու սովորություն չունի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ինչ նողկալի բան է: Ինչո՞ւ չես բողոքում, Էմմա:

- Ո՞ւմ,- հարցրեց աղջիկը:

- Ուզո՞ւմ ես խոսեմ «Սովետական Հայաստան» թերթի խմբագրության հետ: Թող օբյեկտիվորեն քննեն…

- Դեռևս ոչ մի թերթ չի կարողացել արտիստին պաշտպանել գլխավոր ռեժիսորից: Դա անհնարին է: Ասենք թե գտան, որ իրավացին ես եմ և նույնիսկ նկատողություն հայտարարեցին գլխավորին՝ երիտասարդ տաղանդներին տեղ չտալու համար: Ասենք թե: Բայց ի վերջո ո՞վ է ինձ դեր առաջարկողը… Սա բոլորովին ուրիշ աշխարհ է, Զավեն:

- Լավ, մի՞թե ոչ մի ելք չկա:

- Ելքը մեկնելն է: Պատկերացնո՞ւմ ես, նա ինձ չի հավանում այլևս: Իսկ Լենինգրադի Կիրովի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի գլխավոր բալետմեյստերը, որն այստեղ էր գտնվում, ընդամենը մի ներկայացման մեջ ինձ տեսնելուց հետո իմ հանդերձարանը մտավ և՝ տեղն ու տեղը նույն դերն առաջարկեց լենինգրադյան իր ներկայացման մեջ: Ըստ որում ընտրությունն ինձ թողեց: Կամ պայմանագիր՝ մեկ տարով, կամ մշտական աշխատանք:

Եվ դու…

- Ես խնդրեցի ժամանակ տալ մտածելու: Իսկ հիմա արդեն վճռել եմ:

- Մոխրամանի պես մի բան գտի, Էմմա, ես սոսկալի ծխել եմ ուզում:

Էմման մտածեց մի պահ,

- Չգիտեմ էլ, թե որտեղ եմ թաքցրել,- ասաց նա՝ աչքերը կկոցած: - Իսկ սուրճի ափսեն քեզ չի՞ բավարարի:

Զավենը բացեց «Կազբեկի» տուփը, վառեց գլանակն ու խոր ներս քաշեց ծուխը:

- Եվ դու ինձ ասելու ոչինչ չունե՞ս…

Էմման քմծիծաղ տվեց…

- Խորամանկ,- ասաց նա,- ճիշտ է, ես էլ եմ ըստ քեզ մի անգամ կրակից վառվել, բայց նոր փորձից չեմ վախենում: Կգա՞ս միասին Լենինգրադ գնանք, Զավեն:

- Ե՞ս,- այնպես զարմացավ տղան, որ գլանակը ցած ընկավ ձեռքից: - Գամ Լենինգրադ ի՞նչ անեմ:

- Իսկ ես ի՞նչ պետք է անեի քո փոքրիկ քաղաքում, ուր հրավիրում էիր, երբ դեռ ձեռքդ չէիր վառել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Սպասիր, դու ինձ ամուսնական ճամփորդությա՞ն ես հրավիրում:

- Ասենք թե…

- Չէ, ասա՝ հա, ասա՝ հա, թող մի անգամ էլ գոնե ես քեզ մերժեմ, որ սիրտս հովանա, - ասաց Զավենը: - Լենինգրա՞դ…

Էմման ծիծաղեց…

- Բա չե՞ս հիշում, որ մանկապարտեզում ասում էիր՝ կգամ քո ետևից թեկուզ աշխարհի ծայրը…

- Էհ, Էմմա ջան, այն ժամանակ աշխարհի ծայրը մինչև ձեր տունն էր,

- Իսկ հիմա՞…

- Հիմա էլ մեր տունն է,,.

Էմման մեկնեց ձեռքը ու խառնեց տղայի մազերը:

- Զավեն,- ասաց նա,- եթե ասեմ, որ սիրում եմ քեզ, դա շատ քիչ կլինի: Դա դեռևս այն չի լինի, ինչ մտածում ու զգում եմ ես: Դու ինձ համար ամենաթանկ, ամենամտերիմ մարդն ես, դու իմ հիշողությունն ես, դու իմ անամպ օրերն ես- դու իմ հենարանն ես- Դու ամեն օր ինձ հետ ես, միշտ ինձ հետ, բայց նույնիսկ հիմա, երբ իմ կողքին ես, դարձյալ կարոտում եմ քեզ, ուզում եմ տեսնել քեզ- Տեսա՞ր, առանց վախենալու ինչեր եմ ասում-Բայց դու ինձ ոչինչ մի ասա, հա՞ - Որովհետև այսպես թե այնպես ես վիրավոր եմ և հիմա իմ վերքերն եմ լիզում… Ինձ ժամանակ տուր- Մի տարի- Եվ ինձ հնարավորություն տուր, որ մի անգամ ևս ստուգեմ ինձ, իմանամ, թե ով եմ ես, ինչ եմ ես: Ես անպայման պետք է Լենինգրադ գնամ: Դա իմ վերջին հույսն ու վերջին շանսն է: Ես պետք է վրեժխնդիր լինեմ բոլոր նրանց, ովքեր այսօր խանգարում են ինձ: Ես իմ բարձունքին պետք է հասնեմ ինչ էլ որ լինի և Երևան պետք է գամ հաղթանակած: Իսկ հենց որ վերադառնամ, Զավեն, իմացիր, որ առաջինը քեզ մոտ եմ թռչելու: Որտեղ էլ լինես, անմիջապես գտնելու եմ քեզ ու ասեմ դու կարծեմ ինչ-որ բա՞ն էիր ուզում առաջարկել ինձ, սիրելիս…

Զավենը լուռ էր:

- Դու ինձ հավատո՞ւմ ես, Զավեն,- հարցրեց աղջիկը կրկին՝ քնքշորեն խառնելով տղայի մազերը:

- Իսկ ուրիշ ի՞նչ է մնում ինձ անելու,- հառաչեց տղան:

* * *

Ինչքան էլ մեծանան մարդիկ, հոգու մեջ երեխա են մնում:

Զավեն Շարաֆյանը երեխայի նման ուրախացավ այդ օրը, երբ պատուհանից դուրս նայելով տեսավ, որ ձյուն է գալիս: Բայց ոչ թե սոսկ նրա համար, որ ձյուն է գալիս, չէ, այլ որովհետև

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

վերջապես հնարավորություն է ստանում դեն նետելու փայլփլուն մոմլաթե անիծյալ անձրևանոցը և հագնելու իր նոր վերարկուն: Բոլորովին նոր՝ ուսերից հոսող թ, թեք գրպաններով և մորթե օձիքով: Այդ օձիքն իհարկե պատճառ դարձավ, որ Զավենը միաժամանակ մորթե գլխարկ ևս գնի, որն ավելի թանկ էր, քան վերարկուն: Բայց նա իրեն կարող էր թույլ տալ այդ շռայլությունը, որովհետև Սիրանը վճռականապես հրաժարվել էր եղբոր աշխատավարձի կեսը ստանալ, ինչպես դա արվում էր Նազիկ մայրիկի կենդանության օրոք: Նա ետ էր ուղարկել Զավենի փոխանցած գումարը, հետն էլ մի փոքրիկ, շատ հուզիչ նամակ: «Իմ սիրելի, իմ տառապած եղբայր, բավական է ինչքան օգնեցիր: Հիմա մենք դրա կարիքը չունենք, Զավեն ջան: Գևորգը պաշտպանել է արդեն ու բարձր աշխատավարձ է ստանում: Ես էլ ետ չեմ մնում նրանից: Մեր միակ սպառողը՝ փոքրիկ Աշոտիկը, առայժմ միայն կաթ է ուտում, բայց շատ բկլիկ է, գիտե՞ս, քեռուն է քաշել»:

Այնպես որ Զավեն Շարաֆյանը հանգիստ խղճով կարող էր հագնել իր մորթե օձիքով վերարկուն և դնել իր մորթե գլխարկը-երբ ձյուն գար: Բայց տարին հակառակի նման չորային էր և տաք՝ ի ուրախություն քաղաքի շինարարների և ի տխրություն Զավենի, որն ամեն առավոտ դուրս էր նայում պատուհանից ու հոգոց հանելով հագնում իր փայլփլուն անձրևանոցը:

Բայց հարցն այն էր, որ եթե ցուրտ լիներ նույնիսկ, միևնույն է, վերարկու հագնել չէր կարելի: Այդպես էր այն ժամանակ ընդունված այդ քաղաքում և ընդհանրապես ամենուրեք: Քաղաքի բնակիչները ձեռքերը թևերի տակ խցկած, կծկված ու ցրտից սրթսրթալով աշխատանքի էին գնում, բայց ամաչում էին վերարկու հագնել, քանի դեռ ձյուն չկար: Իսկ հիմա՝ խնդրեմ…

Կախիչի վրայից հանելով վերարկուն և մի անգամ ևս ստուգելով, թե որևէ տեղից պիտակ հո չի՞ կախված, Զավեն Շարաֆյանը մեծ բավականությամբ հագավ այն, գլխին դրեց մորթե գլխարկն ու դուրս եկավ տնից: Խմբագրության ճանապարհին հանկարծ հիշեց, որ շտապելուց մոռացել է ծխախոտ վերցնել և մտավ կողքի խանութը: Երեք ռուբլի տվեց և վերցրեց վաճառողի մեկնած «Կազբեկի» տուփը, հետո մի տասնհինգ կոպեկանոց մեկնեց և լուցկի ուզեց: Վաճառողը տվեց լուցկին և հետն էլ մի հինգ կոպեկանոց: Զարմացած Զավենը վաճառասեղանին թողեց հինգ կոպեկը և շրջվեց, որ դուրս գա, երբ լսեց վաճառողի ձայնը.

- Հինգ կոպեկը վերցրեք, ընկեր:

- Ինչու,- էլ ավելի զարմացավ Զավենը: - Ի՞նչ է պատահել:

- Ոչինչ էլ չի պատահել, այ ընկեր,- քրթմնջաց վաճառողը: - Ինչո՞ւ պիտի ավել վերցնեմ:

Երբ խմբագիրն իր առանձնասենյակը մտավ, նրա թիկունքից անմիջապես հայտնվեց Միհրան Գալստյանը՝ թերթի նոր մակետը ձեռքին, ինչ-որ եղանակ դնդնալով քթի տակ:

- Օ, շնորհավորում եմ, զավեն Աշոտիչ: Այ քեզ կերպարանափոխություն.. Քիչ էր մնում չճանաչեի:

- Միհրան,- ասաց խմբագիրը, անփութորեն հանելով գլխարկն ու վերարկուն և տեղավորելով պահարանի մեջ, - մեկն ու մեկին ուղարկիր մեր կողքի խանութը, թող մի նյութ գրի վաճառողի մասին՝ «Ազնիվ արարք» վերնագրով:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Վաճառողի մասին,- ուսերը բարձրացրեց Միհրանը, բայց հետն էլ դեռ երգում էր քթի տակ: - Իսկ ի՞նչ է արել, որ…

- Նա այսօր ինձ վերադարձրեց դրամի մանր: Հինգ կոպեկ:

Պատասխանատու քարտուղարը խմբագրի սեղանին դրեց մակետն ու քրքջաց:

- Ինչ չէինք տեսել, տեսանք: Բայց եթե գրենք նրա մասին, ստիպված ենք լինելու շատերի մասին գրել: Զավեն Աշոտիչ, դուք գիտե՞ք, որ քաղխորհրդի գործկոմում այլևս չեն կոպտում մարդկանց, ավտոբուսի մեջ ջահելները իրենց տեղերը զիջում են ծերերին, փոստատարները մայրաքաղաքից ուղարկվող թերթերը ոչ թե հաջորդ օրն են բաժանորդների տները հասցնում, այլ նույն օրը երեկոյան- Եվ ընդհանրապես- ընդհանրապես կարծես թե կարգուկանոն է հաստատվում մեր քաղաքում: Ով ինչ ուզում է ասի՝ կեցցե ընկեր Բադալյանը:

Ու դուրս եկավ՝ դնդնացնելով միայն իրեն հայտնի երգը:

Զավեն Շարաֆյանը չէր կարող համաձայն չլինել Միհրան Գալստյանի հետ: Իր խիստ քաղաքականությամբ, իր տեռորով ու անխնա հեռացումներով Գառնիկ Բադալյանը այնպես էր ահաբեկել հիմնարկների ու ձեռնարկությունների մանր ու մեծ ղեկավարներին, որ նրանք կաշվից դուրս էին գալիս իրենց աթոռներին մնալու համար: Եվ ոչ միայն այդ պատճառով: Իրենց տեղերում մնացած կամ նոր նշանակված դիրեկտորները ամեն կերպ աշխատում էին ցույց տալ իրենց նվիրվածությունը Գառնիկ Բադալյանին ու նրա գործին: Նրանց ապշեցնում էր այն հանգամանքը, որ քաղկոմի առաջին քարտուղարը կաշառք չի պահանջում նրանցից: Դա այնքան արտառոց երևույթ էր, որ շփոթեցնում էր նրանց և ստիպում անընդհատ ձգված մնալ: Իսկ ի՞նչ էր պահանջում՝ նախ անշեղորեն կատարել քաղկոմի որոշումները, անպայմանորեն կատարել պետական առաջադրանքները և ամենակարևորը, հիմնարկի պետի առաքինության առաջին չափանիշը դա էր՝ ի՞նչ ես արել քո քաղաքի համար:

Հենց դրա շնորհիվ էր, որ Քիմիական կոմբինատը միջոցներ առանձնացրեց՝ Հայրենական մեծ պատերազմում զոհված քաղաքի բնակիչների հիշատակը հավերժացնող հուշարձան կանգնեցնելու համար: Դեռևս կիսաբաց Գորգագործական կոմբինատի հաշվին, մշակույթի պալատի անվան տակ, բարձրացավ գավառագիտական թանգարանի շենքը: Մի շարք հիմնարկ- ձեռնարկությունների միացյալ միջոցներով ժամանակակից ոճով պանսիոնատներ կառուցվեցին քաղաքը շրջապատող անտառների փեշերին:

Ամեն տարվա վերջին հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարները քաղկոմ էին ներկայացնում զեկուցագրեր, թե իրենց նեղ-հիմնարկային շինարարությունից բացի, կենցաղային և մշակութային ինչ օբյեկտներ են պարտավոր կառուցել քաղաքի համար: Եվ վայ նրանց, ովքեր չկատարեին իրենց ստանձնած պարտավորությունը: Գառնիկ Բադալյանը չափազանց հետևողական էր այդ հարցում:

Եվ ոչ միայն այդ հարցում: Դրանում մի անդամ ևս համոզվեց Զավեն Շարաֆյանը, երբ նրա առանձնասենյակ մտավ կուսակցական կյանք բաժնի վարիչ Նիկողայոս Սևյանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Զավեն,- ասաց նա, դրանով իսկ զարմացնելով խմբագրին, որին միշտ ընկեր Շարաֆյան էր կոչում,- ես դժգոհ չեմ մեր համատեղ աշխատանքից, բայց այնպես է ստացվում, որ պետք է բաժանվենք:

- Ինչո՞ւ,- ժպիտը հազիվ թաքցրեց խմբագիրը՝ անմիջապես հասկանալով, որ Գառնիկ Բադալյանը սկսել է գործել:

- Ինձ ինքնուրույն աշխատանք են առաջարկում, սիրելի Զավեն: Գտնում են, որ իբրև կուսակցական հին կադր և քաղկոմի նախկին աշխատող պետք է այսուհետև գիտությամբ զբաղվեմ:

- Գիտությա՞մբ: Գիտության ո՞ր ճյուղով, ընկեր Սևյան: Սկսելու համար մի քիչ ուշ չէ՞,

- Բոլոր ճյուղերով: Ինձ նշանակում են քաղաքի «Գիտելիք» ընկերության պատասխանատու քարտուղար:

- Շնորհավորում եմ : - ժպտաց Զավենը: - Քանի որ առաջխաղացում է, ի՞նչ կարող եմ ասել:

- Եկա բարեկամաբար հրաժեշտ տալու,- ձեռքը մեկնեց Նիկողայոս Սևյանը: - Եթե կուսակցական աշխատանքի իմ փորձը, իմ հարուստ գիտելիքները անհրաժեշտ լինեն բաժնի նոր վարիչին, խնդրում եմ չքաշվել: Չեմ զլանա խորհուրդներ տալ… - Դժվար թե կարողանանք գլուխ հանել առանց ձեր խորհուրդների,- սեղմելով նրա ձեռքը, ասաց խմբագիրը: - Շնորհակալություն:

Իսկ նրա գնալուց հետո տարուբերեց գլուխը: Ահա ևս մի երջանիկ մարդ: Նրան երբեք կասկածները չեն տանջում: Նա իրոք, համոզված է, թե ինքը շատ կարևոր անձ է պրոպագանդայի բնագավառում և ընդհանրապես այնպիսի մեծ հարգանք ունի իր նկատմամբ, որ ինքն իրեն ձեռքերի վրա զգուշորեն բռնած է պահում: Եվ ինքը մեղավոր չէ, որ այդպիսին է, որովհետև ամենակարող բնությունը նրա ուղեղի դատարկ տեղերը ոչ թե համեստությամբ, այլ մեծամտությամբ է լցրել: Եվ դարձյալ մեղավորը ինքը չէ, որ երբ բացահայտ անմտություններ է ասում, ոչ ոք չի փորձում առարկել նրան: Բոլորն էլ գլխով են անում կամ ժպտում են հեգնաբար, իսկ քանի որ նա հեգնանքը չի հասկանում, տեսնում է միայն ժպիտը: Ահա, իբր թե ես էլ ծաղրեցի նրան, մտածում էր Զավենը: Կասկած չունեմ, որ նույն ձևով և առավել ընդգծված ծաղրել է նրան նաև Գառնիկ Բադալյանը՝ երբ խոսք է բացել նրա տեղափոխության մասին: Բայց արդյունքը, արդյունքը: Արդյունքն այն է, որ նա հիմա էլ իր նույն խելքով «Գիտելիք» ընկերությունն է ղեկավարելու: Հեգնանքը, ծաղրը ցնդեցին, անհետացան, իսկ պաշտոնը մնաց:

- Կարելի է, ընկեր Շարաֆյան:

Դռան առջև կանգնած էր Դուստրիկը, գրեթե վաթսունամյա մի կին՝ կարճ ու գեր մարմնով, օրորվելով հաստլիկ, հիվանդ ոտքերի վրա:

- Ընկեր Շարաֆյան,- մի անգամից լաց եղավ նա,- ինֆորմացիա եմ բերել դպրոցական համերգի մասին, Մարոն չի վերցնում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ինչո՞ւ չի վերցնում, Դուստրիկ:

- Ասում է լավ համերգ չէր:

- Իսկ քո կարծիքով լա՞վն էր:

- Ինչի՞ լավը չէր, ընկեր Շարաֆյան, երեխաներ են, երգում ու պարում էին, էլի: Ուրիշ ի՞նչ պետք է անեին:

- Չեղավ, Դուստրիկ,- ասաց Զավենը՝ ձեռքով կնոջը ապարդյուն առաջարկելով նստել: - Ամեն մի համերգի մասին հո չենք գրելու: Քանի՞ անգամ եմ ասել Մարոյին նախօրոք հարցրու, թե միտք ունի՞ գրել այս կամ այն միջոցառման մասին ու նոր գրի:

Արցունքները շարունակ հոսում էին տարեց կնոջ կարմրատակած, բորբոքված դեմքով:

- Բա երկու ժամ նստել եմ դահլիճում, մի քանի տող չգրեի՞: Բա ես իմ հարյուր հիսուն ռուբլի թոշակով ո՞նց ապրեմ, ընկեր Շարաֆյան: Սովի՞ց մեռնեմ: Որ մի քանի ռուբլի հոնորար ստանամ, Մարոյին ի՞նչ կլինի: Ինչի՞ չի թողնում աշխատեմ:

Հիվանդ, դժբախտ ու խեղճ էր այդ կինը: Ոչ մի հարազատ չուներ աշխարհում և վաղուց ոչ մի զբաղմունք չուներ: Երբեք որևէ տեղ չէր աշխատել և իր մտավոր ու ֆիզիկական տվյալներով ընդհանրապես աշխատել չէր կարող: Ամբողջ քաղաքը գիտեր նրան: Մեծ ու մանուկ, բոլորն էլ ծաղրում ու կարեկցում էին: Նա իհարկե չէր կարողանում ապրել իր ողորմելի կենսաթոշակով, բայց և երբեք ձեռքը չէր մեկնում մուրալու: Երբ այս կամ այն հիմնարկն էր մտնում ինֆորմացիա բերելու համար, խղճահարությունից դրդված, հիմնարկի պետերը կամ հաշվապահները ինչ-որ աշխատանք էին ձևակերպում, որպեսզի նրան մի քանի ռուբլի կարողանան դուրս գրել: Հրաժարվում էր հպարտությամբ, լաց էր լինում ու հրաժարվում էր.

- Ինչի՞ , հո ուզվո՞ր չեմ: Ես թղթակից եմ: Հիմա մի նյութ կգրեմ ու հոնորար կստանամ…

Թե որտեղից էր հայտնվել նա այս քաղաքում՝ ոչ ոք չգիտեր: Հայտնի չէր նաև, թե ով է նրան տվել թղթակից դառնալու գաղափարը: Բայց, ինչպես ասում են, անհիշելի ժամանակներից Դուստրիկը ինֆորմացիաներ էր տպագրում թերթերում: Ինչի մասին ասես: Որտեղ որևէ հավաք, ժողով, ներկայացում կամ համերգ լիներ, Դուստրիկն այնտեղ էր իր անբաժան թուղթ ու մատիտով, նստած առաջին շարքում: Նույնիսկ կուսակցական կոնֆերանսներին էր մասնակցում, նույնիսկ այնպիսի հանդիսավոր նիստերի, որտեղ ղեկավարներից ոմանք չէին կարողանում ընկնել: Եվ հաջորդ օրը խմբագրություն էր գալիս՝ գրոտած մի քանի թղթեր ձեռքին:

- Ինֆորմացիա եմ բերել:

Անհնարին էր նրա նյութը տպագրել, քանի որ բացարձակ անգրագետ էր այդ կինը: Բայց որովհետև սրտակեղեք լաց էր լինում շարունակ- որովհետև խղճում էին նրան, Մարոն երբեմն-երբեմն ձևացնում էր, թե մշակում է նրա փոքրիկ թղթակցությունները- Եվ նայելով նրա ջնջումներին ու բառերի տեղերը փոխելուն, Դուստրիկը քմծիծաղ էր տալիս ու ասում այն նախադասությունը, հավանաբար այն միակ գիտելիքը, որ նրան մնացել էր դպրոցից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Պահ, գումարելիների տեղերը փոխելով գումարը չի փոխվում:

Իսկ նրա հեռանալուց հետո Մարոն բոլորովին նոր ինֆորմացիա էր գրում, տակը դնում Դուստրիկի ստորագրությունը և հառաչում.

- Ի՞նչ անենք, խմբագրության որբն է:

Երբեմն զայրանում, հուսահատվում էր Մարոն, և ինչպես այսօր՝ մի կողմ էր նետում Դուստրիկի բերած թղթերը:

- Լավ, լավ, Դուստրիկ… Սա տպելու բան չէ- Ես մի ուրիշ նյութի տակ կգրեմ քո ստորագրությունը, քո հոնորարը կստանաս, ի՞նչ ես ուզում…

Դուստրիկը վիրավորվում էր մինչև հոգու խորքը ու լաց էր լինում անմխիթար:

- Ինչի՞, ես ուզվո՞ր եմ: Ես թղթակից եմ: Իմ ինֆորմացիան տպեք ու նոր տվեք փողս:

Իսկ այդ փողը կոպեկներ էին:

Ինչպես ամենուրեք՝ խենթերին տեսնելիս, այս քաղաքում էլ չար երեխաները շրջապատում, հալածում, հետապնդում էին նրան, այս ու այն կողմից բղավելով.

- Գիժ Դուստրիկ, գիժ Դուստրիկ…

Դուստրիկը կռանում, մի քար էր վերցնում և որովհետև երեխաները ցրվում էին իբր սրտապատառ, կրկին ցած էր նետում քարը ու ժպտում գոհունակ.

- Շան լակոտներ, որ մարդ գիժ էլ չլինի, ձեր մեջ կգժվի…

Նա իհարկե հոգեկան խանգարում ուներ, որ հայտնի չէր, թե երբ է սկիզբ առել նրա ուղեղում, բայց անկասկած մանուկ հասակում նրա հետ տեղի ունեցած ինչ-որ դժնդակ դեպքի արդյունք էր: Որովհետև երբեմն- երբեմն, սաստիկ հուզմունքի և ջղաձգության պահին, լաց էր լինում աղեկտուր, կարմրատակած, բորբոք դեմքը թրջելով առատ արցունքներով և դիմելով շրջապատի մարդկանց, ողբաձայն հայտարարում էր:

- Կարծում եք, թե ես միշտ այսպես այլանդակ ու տգեղ եմ եղել, հա - Այ, սխալվում եք… այ… Ես մի փոքրիկ, մի չքնաղ աղջիկ եմ եղել, մի պատկեր… Թուրքերը գողացել են ինձ, փոխել են ու իմ տեղը մի տգեղ աղջկա են դրել: Բա՞ …

Եվ հիմա այդ թշվառ կինը լաց էր լինում խմբագրի առաջ՝ երկու ձեռքով նրան մեկնած իր գրած թղթերը:

- Լավ, Դուստրիկ, վերջ տուր,- ասաց Զավեն Շարաֆյանը: - Եվ ինձ տուր քո ինֆորմացիան:

- Կտպե՞ս, ընկեր Շարաֆյան,- անմիջապես հրճվեց, պայծառացավ Դուստրիկը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Անպայման,- ժպտաց խմբագիրը: - Դու մեր հին ու անդավաճան թղթակիցն ես, Դուստրիկ, ինչպե՞ս կարող ենք չտպագրել քեզ:

Տարեց կինը Զավենին նայեց երախտագիտությամբ և ապրած զգացումների առատությունից կրկին վառ շառագունեց դեմքը:

- Իսկ Մարոն չի հասկանում, ընկեր Շարաֆյան, նա չգիտի, որ գումարելիների տեղերը փոխելով, գումարը չի փոխվում: Դու իրա հետ խոսի, հա՞: Ասա Դուստրիկին մի նեղացրու, Մարո: Ախր նա կարծում է, թե ես միշտ այսպես հիվանդ ու տգեղ եմ եղել, ընկեր Շարաֆյան: Նա չգիտի, որ ես փոքրիկ, գեղեցիկ աղջիկ եմ եղել, մի պատկեր, բայց թուրքերը…

- Գիտի, Դուստրիկ, գիտի ու ես էլ գիտեմ,- չուզենալով, որ կինը տառապի նորից, ընդհատեց նրան խմբագիրը,- գիտի, բայց մոռացել է երևի- Ես կհիշեցնեմ: Իսկ դու էլի նյութեր բեր, հա՞, ինֆորմացիայի պակաս շատ ենք զգում: Եվ եթե Մարոն չվերցնի, ուղղակի ինձ տուր: Պայմանավորվեցի՞նք:

- Է, հասկացող մարդն ուրիշ է, էլի: Դու հրեշտակ ես,- ուրախացավ Դուստրիկը: - Ես քեզ միշտ նոր ինֆորմացիա կբերեմ, ընկեր Շարաֆյան: Հատուկ քեզ համար- Հենց հիմա գնամ տեսնեմ ինչ կա քաղաքում…

- Շնորհակալություն, Դուստրիկ,- ասաց խմբագիրը: - Հաջողություն:

Նա ժպտաց, հոգոց քաշեց ու բացեց թերթի մակետը: Մի հայացքն էլ բավական էր նկատելու համար, որ Միհրան Գալստյանի հետ ինչ-որ տարօրինակ բան է կատարվում: Քիմկոմբինատի վերաբերյալ լուրերը մի բաժնում տեղավորելու և ընդգծելու փոխարեն, մեկը երկրորդ էջում էր նախատեսել, մյուսը՝ երրորդ: Բայց դա դեռ ոչինչ, «Շնորհակալություն, բժիշկ» նամակների տեսությունը, որ խմբագիրը մի կողմ էր նետել վերամշակելու համար, հիմա շատ խնամքով նույնությամբ տեղավորված էր առաջին էջի ներքնահարկում: Այն դեպքում, երբ տեսության մեջ երախտագիտության ջերմ խոսքեր կային ուղղված մի բժշկի հասցեին, որը մի քանի օր առաջ քաղկոմի բյուրոյում կուսակցական նկատողություն էր ստացել՝ հիվանդներին կոպտելու և դրամաշորթության փորձ կատարելու համար:

Զավեն Շարաֆյանը մի կողմ հրեց մակետն ու համարի նյութերը և վերցրեց հեռախոսը:

- Միհրա՞ն…

Միհրան Գալստյանն ինչ-որ երգ էր շարունակում մրմնջալ:

- Լսում եմ, Զավեն Աշոտիչ:

- Արի ինձ մոտ:

- Մակետին չե՞ք առարկում,- ներս մտնելով, անսկիզբ ու անվերջ երգի արանքում հարցրեց պատասխանատու քարտուղարը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Քեզ հետ ինչ է կատարվում, Միհրան,- հարցրեց խմբագիրը՝ մատիտով ցույց տալով մակետի սխալները և նամակների տեսության մեջ ընդգծված բժշկին վերաբերող տողերը:

Պատասխանատու քարտուղարը կարմրատակեց:

- Վայ,- ասաց նա միայն զարմացած՝ մոռանալով երգը:

- Այ տղա, հո Սեդան ամուսնանալու համաձայնություն չի՞ տվել,- քմծիծաղով հարցրեց խմբագիրը:

- Վայ,- երկրորդ անգամ զարմացավ Միհրանը,- որտեղի՞ց իմացաք, Զավեն Աշոտիչ:

Խմբագիրը ծիծաղեց.

- Միայն այդ դեպքում գլուխդ կկորցնեիր:

- Ուղիղ նշանակետին խփեցիք,- անմիջապես համաձայնվեց պատասխանատու քարտուղարը: - Գլուխս լրիվ կորցրել եմ, Զավեն Աշոտիչ: Աստվածային էակ է, գիտե՞ք ինչ քնքուշ հոգի ունի: Որ շատ էր չեմուչում անում ու տանջում ինձ, մտածում էի, թե երևի պատճառն այն է, որ չի ուզում մորս ու քույրերիս հետ մի տան մեջ ապրեր: Երեկ երբ վերջապես «հա » ասաց, ես էլ ուրախությունից գժված, ասացի՝ Սեդա ջան, ուզում ես տուն վարձենք, առանձին ապրենք: Զարմացած ինձ նայեց իր չքնաղ աչքերով- «Ինչո՞ւ,- ասաց,- ես մայր չունեմ, եթե քո մայրը ընդունի ինձ, ես երջանիկ կլինեմ նրա կողքին: Ես նրա համար աղջիկ կդառնամ»: Դե եկ ու մի խելագարվիր…

Զավենը ուրախ էր Միհրանի համար:

- Համենայն դեպս մի խելագարվիր,- ծիծաղեց նա մակետը ցույց տալով, - թե չէ քո պատճառով շատերը կխելագարվեն և ես էլ նրանց հետ: Իսկ ե՞րբ եք ամուսնանում:

- Երևի մի ամիս հետո լավ կազմակերպել է պետք, Զավեն Աշոտիչ, սիրտս գուշակում է, որ իմ առաջին ու վերջին ամուսնությունն է լինելու:

- Քիչ է մնում վիրավորվեմ,- գլուխը տարուբերեց խմբագիրը: - Եվ ամուսնանում ես, փաստորեն առանց իմ կարծիքը հարցնելու: Առանց հետաքրքրվելու, թե ես արդյոք հավանում եմ Սեդային: Այդ ինչո՞ւ Մկրտիչ Զուլոյանի կարծիքը քեզ համար հեղինակություն էր, իսկ իմը՝ ոչ:

- Այն ժամանակ քսաներկու տարեկան էի, իսկ հիմա քսանվեց: Մեծացել եմ, Զավեն Աշոտիչ,- չնեղացավ, քրքջաց Միհրանը: - Հետո դուք ինձ ասել եք, որ հավանում եք Սեդային:

- Ինչ ճիշտ է, ճիշտ է,- համաձայնվեց խմբագիրը: - Իսկ հիմա ի գործ, Միհրան, կարդալու շատ բան ունեմ:

Բայց նրան չթողեցին աշխատել: Պատասխանատու քարտուղարի ետևից նոր էր ծածկվել դուռը, երբ կրկին բացվեց զգուշորեն ու շեմին հայտնվեց աշնանային բարակ ու թեթև վերարկու, այսինքն իր իսկական անունով՝ մակինտոշ հագած ջահել մի տղա: Նրա ձեռքին

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

մի փոքրիկ ճամպրուկ կար: Նա ճամպրուկը դրեց անկյունում, ձեռքը ծոցագրպանը տարավ ու այնտեղից մի քառածալ թուղթ հանելով մեկնեց խմբագրին:

- Բարև ձեզ, ընկեր Շարաֆյան, ինձ Կենտկոմից են ուղարկել ձեզ մոտ աշխատելու:

Զավենն ակամա ժպտաց: Նրան մի պահ թվաց, թե այդ ինքն է ներս մտել Մկրտիչ Զուլոյանի առանձնասենյակը և փայլփլուն անձրևանոցի ծոցագրպանից քառածալ մի թուղթ հանելով, ասում է.

- Բարև ձեզ, ընկեր Զուլոյան, ինձ Կենտկոմից են ուղարկել ձեզ մոտ աշխատելու:

Այն ե՞րբ էր: Երևի մի հարյուր տարի առաջ:

- Հանվիր,- ասաց նա, բարձրանալով տեղից,- հանվիր ու նստիր, ընկեր Օթարյան: Անունդ Մուշեղ է, չէ՞:

- Ձեզ արդեն զանգահարե՞լ են,- ուրախացավ տղան՝ արագ հանելով վերարկուն ու նետելով աթոռին:

- Զանգահարել են,- գլխով արեց խմբագիրը,- ես քեզ վաղուց էի սպասում, Մուշեղ: - Նա նայեց տղայի մակինտոշին: - Բայց դու կմրսես դրանով: Վերարկու չունե՞ս:

- Ունեմ,- ժպտաց տղան,- բայց ինձ թվում էր, թե այստեղ տաք կլինի: - Ոչինչ, կզանգահարեմ, կուղարկեն:

- Երևանից ես, Մուշեղ:

- Այո, ընկեր Շարաֆյան: Ես ձեզ ճանաչում եմ ու լավ հիշում եմ համալսարանից: Երբ դուք հինգերորդ կուրսում էիք, մենք նոր-նոր առաջին կուրս էինք ընդունվել ու նախանձով էինք նայում ձեզ: Դուք լայնեզր գլխարկ էիք դնում և գեղեցիկ անձրևանոց ունեիք:

Զավեն Շարաֆյանն ուզեց ասել, որ այդ անձրևանոցը երեկ է հանել հագից, բայց ամաչեց:

- Հիշում եմ, որ միշտ Բաբկեն Սիմոնյանի հետ էիք քայլում:

- Նրա՞ն էլ ես ճանաչում,- հարցրեց Զավենը:

- Այս տարի նա մեզ «Հայ ժուռնալիստիկայի պատմություն» էր կարդում:

Նա կկարդա, չգիտես ինչու չարացավ Զավեն Շարաֆյանը: Կյանքում ոչ մի տող չի գրել, իսկ հիմա ժուռնալիստիկա է սովորեցնում ուսանողներին: Տեսնես ում է ասել, թե դու առաջարկիր, որ ես դասախոսություն կարդամ, ես էլ քեզ տեղկոմի նախագահ կդարձնեմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Մուշեղ,- դիմեց նրան խմբագիրը,- միանգամից երկու տեղ կարող եմ առաջարկել. «Կուսակցական կյանք» բաժինը և «Քաղաքային տնտեսության և կենցաղի» բաժինը: Ո՞րն է սրտիդ մոտ:

- Իհարկե՝ կենցաղի բաժինը,- առանց տատանվելու ասաց տղան: - Կուսակցական կյանքը իմ բանը չէ, չեմ սիրում լուրջ ու երկար նախադասություններ գրել:

- Դժբախտաբար հնարավորություն չունեմ նույն առատաձեռնությամբ բնակարան ևս առաջարկել,- ասաց խմբագիրը: - Բնակարանի հարցը դժվար է: Ստիպված կլինես առայժմ վարձով ապրել:

- Այդպես էլ կանեմ,- անհոգ պատասխանեց տղան:

- Ուրեմն սկսիր այնպես, ինչպես ես եմ սկսել: Հյուրանոցի պատին հայտարարությունների տախտակ կա: Գնա նշված հասցեներով և մի տուն գտիր քեզ համար: Միայն թե զգույշ եղիր, պատահական տուն չմտնես: Ժուռնալիստի շրջապատը մաքուր պետք է լինի, պա՞րզ է:

- Պարզ է, ընկեր Շարաֆյան, մայրս համապատասխան դասախոսություն կարդացել է այդ թեմայով,

Զավենը նայեց տղայի պարզ, պայծառ աչքերին ու սիրտը կծկվեց, մտածելով, որ նա էլ այսպես թե այնպես նույն դժվարին ճանապարհն է անցնելու օտար քաղաքում, անծանոթ մարդկանց հետ: Նա թղթի մի կտորի վրա գրեց իր հասցեն ու մեկնեց պատանուն:

- Եթե հանկարծ որևէ հարմար տեղ չգտնես, կգաս, կապրենք միասին, մինչև տեսնենք ինչ է լինում:

- Կգտնեմ,- վստահ ասաց տղան՝ բարձրանալով տեղից: - Ես բախտավոր աստղի տակ եմ ծնվել, ընկեր Շարաֆյան: Ինչ ուզում եմ կատարվում է:

- Եվ քո ուզածն այն էր, որ բաժնի վարի՞չ աշխատես այս հեռավոր քաղաքի փոքրիկ թերթում:

- Այո, ընկեր Շարաֆյան: Ես էլ եմ ուզում իմ հետաքրքիր կենսագրությունն ունենալ: Ես միանգամից հավատում եմ այն մարդուն, որի կենսագրության մեջ գրվում է, թե նա իր աշխատանքային ուղին սկսել է Հայաստանի հեռավոր շրջաններից մեկում՝ լինելով տեղամասային բժիշկ, գյուղատնտես կամ ուսուցիչ…

Մի՞թե ես այս լավ տղայի համար չեմ կարող անել ավելին, քան Մկրտիչ Զուլոյանն արեց այն ժամանակ ինձ համար, մտածում էր Զավեն Շարաֆյանը: Մի՞թե ժամանակը կանգ է առել և տարիները հենց այնպես են գլորվում: Ինչ ուզում ես ասա՝ բայց կյանքը լավացել է, չէ՞: Եվ պայմաններն ու հնարավորություններն էլ ուրիշ են: Նա մի բան էր ուզում առաջարկել Մուշեղ Օթարյանին, բայց մտածում էր, թե լավ կլինի նախ համաձայնեցնել քաղկոմի առաջին քարտուղարի հետ: Հետո բարկացավ իր վրա. իսկ դու ո՞վ ես, քո հիմնարկի պետը դու չե՞ս: Ամեն ինչի համար քաղկո՞մ պիտի վազես, ինչ է: Եվ ասաց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Մուշեղ, հարմար սենյակ վարձիր, որպեսզի կարողանաս աշխատել տանը: Վարձը խմբագրությունը կվճարի:

- Ախր ես ձեզ ասացի, չէ՞, որ բախտավոր աստղի տակ եմ ծնվել,- միանգամից պայծառացավ տղան: - Շատ-շատ շնորհակալություն, ընկեր Շարաֆյան: Առևտուր կանեմ, կսակարկեմ, չեմ թողնի, որ խմբագրությունը սնանկանա:

* * *

Դեռ սանդղահարթակից նա լսեց, թե ինչպես է իր բնակարանում զնգում հեռախոսը: Շեմի առջև ընկած փալասի տակից հանելով բանալին, նա արագորեն բացեց դուռը և վերցրեց լսափողը:

- Լսում եմ:

- Շատ էլ լավ ես անում,- հնչեց նրա ականջին Արմեն Զատիկյանի ձայնը: - Ողջույն, եղբայր, տնից հո դուրս չես գալիս:

- Հենց նոր ներս մտա,- շունչը տեղը բերեց Զավենը:

- Հրաշալի է,- ասաց Արմենը: - Հաց չուտես, հիմա գալիս եմ:

- Ի՞նչ է պատահել,- հարցրեց խմբագիրը՝ ոչ այնքան Արմենի խոսքից, որքան առույգ, ուրախ ձայնից զարմացած:

- Կաշառք եմ բերում:

- Ի՞նչ:

- Կաշառք, կաշառք, մի խոսքով՝ մաղարիչ: Հաց չուտես,- նորից բղավեց նա ու անջատեց հեռախոսը:

Տեսնես ինչ է պատահել, ժպտաց Զավեն Շարաֆյանը: Քիչ էր մնում չճանաչեի: Ախր ես երբեք չեմ լսել, որ նրա ձայնը ուրախ հնչի:

Նա հանեց մորթե օձիքով վերարկուն, հայելու մեջ մեկ անգամ ևս նայելով, հանեց նաև մորթե գլխարկը, խնամքով կախեց պահարանի մեջ ու մտածեց, թե տես ինչ է նշանակում թանկ և հատկապես նոր ապրանքը: Խեղճ անձրևանոցը ե՞րբ էր կախում զգեստապահարանի մեջ, գցում էր ուր պատահի: Հիմա էլ, ահա, ընկած է աթոռի տակ: Նա վերցրեց անձրևանոցը, տարավ միջանցք ու կախեց մեխից, հիմա էլ մտածելով, թե ինչ է նշանակում Արմեն Զատիկյանի զանգը:

Վերջին անգամ էլ ճիշտ այսպես զանգահարեց ու տուն ընկավ: Ի՞նչ էր կատարվում նրա հետ: Խելագար լիներ ասես: Աչքերը բորբոքված էին ու դուրս պրծած, մազերը խառնիխուռն, գզգզված, չգիտես ինչից սևացած, ցնցվող ձեռքով գրպանից մի թուղթ հանեց ու պարզեց խմբագրին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դե հիմա ասա ինձ, իմ փրկարար, իմ ընկեր, իմ իմաստուն խորհրդատու,- պոռթկաց նա ներքին ցավից տնքալով,- ասա, ինչ անեմ ես՝ ուրախանա՞մ, թե ողբամ: Խորհրդային իշխանությունը երկու հնարավորությունն էլ պարգևել է ինձ, միաժամանակ, իրար հետ, ո՞րն ընտրեմ՝ ուրախանա՞մ, թե ողբամ: Հո չեմ կարող երկուսն էլ միասին անել: Ես հո Յանուսը չեմ: Մարդ եմ, չէ՞:

Զավենը նրա ձեռքից վերցրեց թուղթը և սկսեց կարդալ: Իսկ այդ ընթացքում Արմեն Զատիկյանը շարունակում էր տնքալ ու խոսել ասես տենդի մեջ, վիրավոր գազանի նման իրեն սենյակի մի անկյունից մյուսը նետելով:

- Դե խոսիր, է, մարդ աստծո: Չէ՞ որ ես քեզ հավատում եմ: Դու միակն ես, որ ինձ համոզում ես, թե այս աշխարհում ազնվություն և բարություն էլ կա: Եվ ոչ թե միայն կեղտ, ոչ թե միայն ստորություն ու մատնություն, ոչ թե միայն դժոխք… Դու ինձ համոզում էիր, թե փոխվել են ժամանակները, խորտակվել են նզովյալ Ստալինի սարքած կարգերը, թե քանդվել է նրա ոճրագործ ձեռքով բարձրացված բանտը- Սուտ է, սուտ է, սուտ է- Ինչպե՞ս կարող է քանդվել այդքան անհեթեթ, այդքան անբնական մի բան: Քանդվել կարող է մարդու ստեղծածը, եղբայր: Եկեղեցին կարող է քանդվել, տունը կարող է քանդվել, բայց դա այնքան դժոխային, անկանոն, անխելք մի հորինվածք է, որ անհնարին է քանդելը: Ժայռը քանդելուց օգուտ կա՞- ամեն մի կտորը դարձյալ մի ժայռ է, չէ …

Հանրապետության Գերագույն դատարանի հատուկ հանձնաժողովը տեղյակ էր պահում Արմեն Զատիկյանին, որ ռեպրեսիայի տարիներին ժողովրդի թշնամի հռչակված նրա ծնողները հանցակազմի բացակայության պատճառով լիովին արդարացված են: Եվ վերջում, փակագծի մեջ ավելացված էր «հետմահու»:

- Դե ասա, ի՞նչ անեմ ես, ասա, բարի մարդ, ազնիվ մարդ, ի՞նչ անեմ՝ ծիծաղե՞մ, թե ողբամ: Ես որտե՞ղ գտնեմ նրանց շիրիմները, ի՞նչ ասեմ, ինչպե՞ս բացատրեմ, ինչպե՞ս մխիթարեմ, թե այսուհետև հանգիստ քնեք, ով իմ հարազատ ննջեցյալներ, որովհետև արդարությունը հաղթանակել է, և դուք լիովին անմեղ եք ճանաչվել: Ասում ես՝ քանդվել է… Գնացի Գերագույն դատարան: Խնդրում, աղաչում եմ ասացեք ինձ, թե որտեղ են թաղված իմ ծնողները: Ես ուզում եմ գտնել նրանց գերեզմանները և տեղափոխել նրանց աճյունները: Ես ուզում եմ, որ գոնե նրանց ոսկորները հանգիստ գտնեն իրենց երազի հայրենիքում, հայրենի հողի մեջ, որը նրանց չընդունեց ապրելու ժամանակ: Իսկ նրանք- մի-մի ժայռաբեկոր՝ քո ասած իբր թե քանդված ժայռից: Չգիտենք, չենք կարող ասել, հետաքրքիր մարդ ես, արդարացրել ենք՝ դարձյա՞լ գոհ չես… Իսկ ես նայում եմ նրանց, ուզում ես հավատա, ուզում ես՝ չէ, Զավեն, և ինձ թվում է, դրանք ճիշտ նույն մարդիկ են, որ տանջել են իմ խեղճ ծնողներին և բոլորին, բոլորին: Այն ժամանակ դատապարտել են, իսկ հիմա արդարացնում են: Վաղը, եթե նոր առիթ լինի՝ նորից կդատապարտեն: Քանի որ նրանք կամակատարներ են, սիրող դահիճներ են, Զավեն…Որովհետև վարձկան դահիճների նման գոնե չեն ամաչում իրենց մասնագիտությունից, կնգուղների տակ չեն թաքցնում դեմքերը…

Նա դեռ երկար խոսում էր՝ տենդագին ու վայրիվերո, ասես զառանցանքի մեջ, արդարացի ու անարդար սևացնելով իրեն բաժին ընկած աշխարհն ու կյանքը, և Զավեն Շարաֆյանից մեծ համբերություն և ջանքեր պահանջվեցին նրան հնարավորին չափ մխիթարելու, հանգստացնելու, խաղաղեցնելու համար:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Իսկ դրանից հետո անհետացավ միանգամից, ինչպես կարողանում էր անհետանալ:

Եվ երկար լռությունից հետո ահա առաջին զանգը: Եվ ամենաահաճելի անակնկալը: Արմեն Զատիկյանը ուրախ է: Նրա ձայնը առույգ է հնչում: Նա նույնիսկ կատակում է:

Իրոք որ աշխարհի ամենազարմանալի առեղծվածն է մարդը:

Դուռը թակեցին, բայց ոչ սովորականի պես, ասես ինչ-որ բութ գործիքով էին հարվածում:

- Երբ հյուրը ոտքով է խփում դռանը, նա ամենացանկալի հյուրն է,- ծիծաղեց Արմեն Զատիկյանը՝ հայտնվելով շեմինք երկու ձեռքով ինչ-որ փաթեթներ գրկած:

- Սրա՞նք ինչեր են,- զարմացավ Զավենը:

- Կաշառք, ամենաիսկական, ամենաբնական կաշառք, - խնդմնդում էր գյուտարարը՝ փաթեթները բացելով ու պարունակությունը տեղավորելով ափսեների մեջ: Սա հաց է, սա՝ հորած պանիր, սա գլուխ սոխ է, սա՝ ազնվագույն գինի, իսկ սա… - նա աճպարարի շարժումով ետ գցեց իրար կպած լավաշի շերտերը: Իսկ սա իմ ստեղծագործությունն է, իմ արդար վաստակը: Պեպոն ո՞նց էր ասում, հա, սպասիր երգով ասեմ՝ - Դամբը ձեռքիս ջուրն եմ մտնում, հալալ աշխատանքս եմ ուտում, վայ էն մարդուն, որ աշխարհում՝ խալխի դատած հացն է ուտում…

Լավաշի մեջ իրար կողքի հավասար պառկած էին խաշած կարմրախայտ ձկները:

- Ձո՞ւկը որտեղից, Արմեն,- ուրախացավ Զավենը:

- Երգից չհասկացա՞ր… Ամբողջ գիշեր չեմ քնել, դեռ մութ, ժամը չորսին գետն եմ իջել ու այ, այս իմ ձեռքերով քարերի տակից հանել խլդբլդան ձկները, խաշել եմ հենց գետափին, որովհետև իմաստուններն ասում են, թե ձուկը սիրում է, որ իր ջրով եփեն իրեն: Իհարկե այդ հարցում ոչ մեկը ձկան կարծիքը չի հարցրել, բայց ես համաձայն եմ նրանց հետ: - Ուրախ շատախոսում էր Արմենը: - Իսկ մնացածը ինչպես տեքստում, այսինքն՝ շուկայում:

- Բայց էլ ի՞նչ կաշառք, ընկեր Զատիկյան: Սա իրոք քո հալալ աշխատանքն է:

- Կաշառքը քեզ համար է, ընկեր Շարաֆյան, քեզ համար: Ինձ ո՞վ է կաշառք բերողը: Կաշառքը պաշտոնյաներին են տալիս, ղեկավարներին, այն էլ երկու կողմից՝ մի կողմից պետությունը, որպես պարգև-հավելում, առողջարանի անվճար ուղեգիր և դեպուտատական կենսաթոշակ, իսկ մյուս կողմից ենթակաները՝ որպեսզի մնան իրենց աթոռներին ու տաք պահեստներում: Իբր թե դու չգիտես, հա՞ , իբր թե մինչև հիմա կաշառք չե՞ս կերել:

- Եթե լուրջ ասեիր, կվիրավորվեի,Արմեն,- խոցվեց խմբագիրը,- բայց որովհետև քո կարծիքով իբր թե կատակում ես, պատասխանում եմ լրջորեն՝ երբեք, ոչ մի ձևով թույլ չեմ տվել դա…

- Պարծենալու բան գտար,- բռնած տոնից չէր կարողանում դուրս գալ գյուտարարը: - Ուրեմն ժամանակակից ղեկավար չես: Եվ զուր էլ տեղ ես զբաղեցնում: Բայց հո սրանից հետո չե՞ս

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

կարող ասել, թե չես կերել: Հենց հիմա, իմ աչքի առաջ երկու ձուկ կերար… Հը, հումորդ մի կորցնի, ընկեր ֆելիետոնիստ…

Ջավեն Շարաֆյանը իսկապես զգաց, որ անմտություն է իր զայրույթը: Մարդը ուրախ է, կատակում է յուրովի, ի՞նչ է պատահել:

- Եթե կաշառքը սա է,- ասաց նա բռնելով երրորդ ձկան գլխից ու պոչը բերանը տանելով,- համով բան է: Բայց դե ասա տեսնեմ, թե ինչով եմ արժանացել քո բարձր ուշադրությանը:

- Առանց բաժակի խոսել չեմ կարողանում,- հայտարարեց գյուտարարը, գինի լցնելով:

- Ուրեմն մինչև հիմա չէի՞ր խոսում,- հեգնեց խմբագիրը:

- Դա նախերգանքն էր, ընկեր Շարաֆյան: Իսկ հիմա երգը լսիր: Սա պատմական կենաց է: Այս բաժակով ես կյանքումս առաջին անգամ խմում եմ մամուլի կենացը, Կեցցե մեր մամուլը: Կեցցե «Սովետական Հայաստանը» չակերտների մեջ և առանց չակերտների…

- Վայ, խոսիր, Արմեն…

- Ըհը, քիչ առաջ փակում էիր բերանս, իսկ հիմա դու ես ստիպում, որ խոսեմ, հա՞… Կխոսեմ, ընկեր Շարաֆյան: «Հայտնագործությունը փակի տակ» ֆելիետոնի հիման վրա ստեղծված Մինիստրների խորհրդի հատուկ հանձնաժողովը մանրամասն ուսումնասիրել է և քննության առել թերթի ելույթը և գտել, որ ֆելիետոնում բերված փաստերը լիովին համապատասխանում են իրականությանը: Հանձնաժողովը հարց է բարձրացրել աշխատանքից հեռացնել տեխնիկական գիտությունների դոկտոր Մարգար Միտուշյանին՝ պետական միջոցները անմտորեն վատնելու, լաբորատորիան իր անձնական շահերին ծառայեցնելու, տաղանդավոր գյուտարար Արմեն Ջատիկյանի հայտնագործության ճանապարհը փակելու համար:

- Ուռռա,- բացականչեց Ջավեն Շարաֆյանը՝ բարձրացնելով բաժակը:

- Առաջարկված է երեք ամիս ժամկետում կառուցել պիտակներ տպող մեքենայի լաբորատոր օրինակը և ներդնել արտադրության մեջ՝ աշխատանքի ղեկավարումը համատեղության կարգով հանձնարարելով Արմեն Ջատիկյանին:

- Կեցցե Արմեն Ջատիկյանը Բայց դու որտեղից գիտես այդ բոլորը: Թերթում դեռ ոչինչ չկա:

- Վաղը կլինի, եղբայր, Մկրտիչ Ջուլոյանը իմ աչքի առաջ տպարան ուղարկեց Մինիստրների խորհրդի պատասխանը: Ես երեկ Երևանում էի:

- Կեցցե, Մկրտիչ Ջուլոյանը,- բղավեց Ջավենը՝ դատարկելով բաժակը:

- Կեցցե Ջավեն Շարաֆյանը,- անմիջապես նրա օրինակին հետևեց երջանկացած գյուտարարը:

Մի քանի կեցցեներից հետո գինին վերջացավ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Եղբայր,- դատարկ շիշը թափահարելով փնթփնթաց Արմենը,- այստեղ ոչ մի բան կարգին չէ, էլի: Բա սա շի՞շ է: Թավրիզում մի շիշ գինին ամբողջ օրը խմում էինք, իսկ այստեղ հոպ, մեկ էլ չկա:

- Էլի սկսեցիր չարախոսել,- հարձակվեց նրա վրա Զավենը:

- Չէ, չէ, չէ- անմիջապես նահանջեց գյուտարարը: - ներողություն, ղալաթ եմ արել:

- Դե ուրեմն գոչիր՝ կեցցե խորհրդային իշխանությունը:

- Առանց գինու չեմ կարող: Բաժակս լցրու, ինչ ուզում ես՝ ասեմ…

Զավենը տարածեց ձեռքերը:

- Հա,- հիշեց նա,- բա ասում էիր, թե գետում արդեն ձուկ չկա: Որտեղի՞ց ես բռնել… - Գետը թափվող առվակի միջից, ընկեր խմբագիր: Բայց ո՞վ է ասում, թե ձուկ չկա: Մինչև քիմկոմբինատը լիքն է, կոմբինատից այն կողմ չկա:

- Ուրեմն ճիշտ էր ասում դեղագործը, թե քիմկոմբինատից հոսող ջրերը թունավորում են գետը:

- Չգիտեմ, թե դեղագործն ինչ է ասել, բայց ես ձկնորս եմ, Զավեն ջան, և կարող եմ քեզ հավատացնել, որ այնտեղից սկսած, որտեղ կոմբինատի տեխնիկական ջրերը գետն են թափվում, ձուկ գոյություն չունի: Ըստ որում ձկները մարդկանցից հաստատ խելոք են, Զավեն, հենց որ հասնում են կոմբինատի խողովակներին, ետ են դառնում: Իսկ մեր երեխաները լողանում են այդ գետի մեջ և նրանց զգուշացնող, արգելող չկա:

- Բայց դա հո շատ վտանգավոր է,- վախեցավ խմբագիրը: - Կթունավորվեն երեխաները:

- Ասում են, թե նման դեպքեր արդեն եղել են: Ինձ այնպիսի մարդ ասաց, որին չհավատալ չեմ կարող: Հենց կոմբինատում է աշխատում, տեխնոլոգ է:

- Պարույր Պետրոսյա՞նը:

- Հա, դու նրան ճանաչո՞ւմ ես:

Զավենը հիշեց անձրևոտ օրը, Պարույրի հետ իր հանդիպումները, նրա հորը, Եսթերին ու երեխաներին, անցյալ տարվա վերջին խաշը:

- Ճանաչում եմ,- ժպտաց նա:

- Շատ խելոք գլուխ ունի,- ասաց գյուտարարը: - Ինձնից առավել տեղում հանգիստ չի մնում, անընդհատ ինչ-որ բաներ է հորինում, որ ձեռքը կրակն ընկնի ու տանջվի:

- Նա՞ էլ գյուտարար է: Ինձ ոչինչ չի պատմել,- զարմացավ խմբագիրը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Մեր միակ տարբերությունն այն է, որ նա չի խոսում,- ծիծաղեց Արմենը: - Բայց որ մի գործի կպավ, կպավ, էլ փրկություն չունես: Հիմա էլ բռնել է, բաց չի թողնում, թե եկ մի բան մտածենք քիմկոմբինատի ծուխը չեզոքացնելու համար:

Զավենը նորից դեղագործի թելով կապած ակնոցը հիշեց , կարճատես, թախծոտ աչքերն ու աղաչական ձայնը:

- Հետո՞, հետո՞, մտածո՞ւմ եք,- հարցրեց նա անհամբեր:

- Դեռ խոսում ենք դատարկ-մատարկ, մինչև որ գաղափարն ինքն իրեն հայտնվի:

- Արմեն,- ասաց Զավենը,- ես այդ գործից բացարձակապես ոչինչ չեմ հասկանում, դրա համար էլ թույլ տուր, որ մի դատարկ բան էլ ես ասեմ:

- Ինչքան ուզում ես,- ծիծաղեց գյուտարարը:

- Դու բյուրոյի նիստին մասնակցում էիր: Տեսա՞ր ինչ էր ծխում Գառնիկ Վարդանիչը:

- Ամերիկյան, կապիտալիստական «Ֆիլիպ-Մորիս»: Առանց մազաչափ իսկ անհարմար զգալու:

- Ըհը - նա ինձ ասաց, թե այդ սիգարետի մեջ երկու զտիչ կա՝ մեկը սովորական, իսկ մյուսը՝ ածխի: Եվ ինքը հենց դրա համար է «Ֆիլիպ-Մորիս» ծխում, որպեսզի թոքերը չսևանան:

- Նա միայն իր թոքերի մասին է մտածում: Իսկ որ նրա կառուցած կոմբինատի թունավոր ծուխը առանց զտիչի սևացնում է քաղաքի ողջ բնակչության թոքերը, նրա պետքն էլ չէ:

Զավեն Շարաֆյանը օրորեց գլուխը:

- Ապերախտ մարդ ես, Արմեն Զատիկյան: Գառնիկ Բադալյանը ինչեր արեց քեզ համար, պաշտպանեց, արհեստանոց նվիրեց քեզ, իսկ դու- Ի՞նչ ես ուզում նրանից:

Արմեն Զատիկյանը հեգնաբար ժպտաց.

- Թույլ տվեք առայժմ չպատասխանել այդ հարցին և անցնել առաջ: Ուրեմն ենթադրում ես, թե «Ֆիլիպ-Մորիսի» սկզբունքով կարելի է մոտավորապես նման տիպի զտի՞չ ավելացնել կոմբինատի ծխնելույզին:

- Այդ է որ կա,- բացականչեց խմբագիրը:

- Ուրեմն մենք պետք է հեծանիվը հնարենք նորից:

- Ինչո՞ւ:

- Որովհետև այդպիսի զտիչներ կամ մոտավորապես այդպիսի զտիչներ աշխարհում արդեն կան: Ի տարբերություն քեզ, ես անգլիական կոլեջ եմ ավարտել և տեխնիկական գրականություն շատ եմ կարդում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Բայց ասում են, թե դրանք շատ թանկ արժեն,- կրկին դեղագործին հիշեց Զավենը:

- Ավելի թանկ, քան մարդկանց առողջությո՞ւնը: Կներես, Զավեն ջան, ես գիտեմ, որ քո աչքում կռվարար, անհնազանդ ու անհաշտ մարդ եմ: Չեմ հրաժարվում: Հենց այդպիսին էլ կամ; Բայց դե ինչպե՞ս անհաշտ չլինեմ: Ասում ես թա՞նկ արժեն: Ուրեմն կոմբինատը, մեր քաղաքը, հանրապետությունը չե՞ն կարողանում վճարել: Չեն կարողանում: Հավատում եմ: Իսկ ինչո՞ւ ժողովրդին չեն դիմում: Այ, սա է, որ չեմ հասկանում, եղբայր: Գլուխ գովեմ՝ գերազանց եմ սովորել և պատմություն լավ գիտեմ: Ինչո՞ւ երբ պետք է եղել, օգնել իսպանական հակաֆաշիստներին՝ ձեր պետությունը ժողովրդական հանգանակություն է կազմակերպել և օգնել է: Ինչո՞ւ երբ կորեացիներն են մեր օգնությունը խնդրել, պետությունը դարձյալ հարկ է համարել դիմել ժողովրդին: Հիշո՞ւմ ես՝ կորեացի երեխաների լուսանկարներ էին վաճառում դպրոցներում և հավաքված գումարը ուղարկում Կորեա: Իսկ հետո նաև Չինաստան: Ինչպե՞ս էր ընդունում ժողովուրդը կառավարության այդ միջոցառումները՝ ըմբռնելով ու պատրաստակամ: Ոչ մի առարկություն, ոչ մի տրտունջ: Դե, ուրեմն, մարդ աստծո, եթե օտարների համար դու կարող ես օգնություն խնդրել քո ժողովրդից, ինչո՞ւ նույն ժողովրդից օգնություն չես խնդրում հենց իրեն օգնելու համար: Դա՞ ինչ ամոթխածություն է: Դիմիր ու պարզ, անկեղծ ասա՝ սիրելի ժողովուրդ, պետությունը դժբախտաբար միջոցներ չունի քեզ օգնելու համար, եթե ուզում ես, որ քիմիական կոմբինատի ծուխը չթունավորի քեզ ու քո երեխաներին, որ կոմբինատի թափոնները չապականեն քո գետերն ու ամայացնեն հողերը, խնդրում եմ ընդամենը մի օր ծոմ պահես: Մի օր: Դա առողջության համար օգտակար է նույնիսկ: Մի օր: Եվ հավաքված գումարով ոչ թե մի, այլ մի քանի զտիչ կարելի է ձեռք բերել:

Զավեն Շարաֆյանը փորձեց առարկել:

- Քո մեծամտությունը սահման չունի, Արմեն: Ինչո՞ւ ես կարծում, թե վերևներում ոչ մեկն այդ մասին չի մտածում: Երկիրը դժվարին ժամանակներ է ապրում: Փող չկա և ելք չկա:

- Չեղավ,- գլուխը թափահարեց գյուտարարը: - Ելք միշտ էլ կգտնվի, եթե շատ ես ուզում: Չե՞ս զարմանում, որ այդ ես եմ ասում քեզ: Ես՝ անհավատս: Բայց գիտեմ, որ ելք միշտ էլ գտնվում է: Ի՞նչ արեց ընկեր Խրուշչովը՝ նույն այս ծանր դրությունից երկիրը դուրս բերելու համար: Ժամանակավորապես դադարեցրեց փոխառության պարտատոմսերի վճարումը ժողովրդին: Իսկ դրա համար ընդամենը ի՞նչ էր հարկավոր, որ քեզ նման խանդավառ մի ժուռնալիստ երկու բանվորի խոսք կազմակերպեր իր թերթում, որտեղ նրանք թախանձագին խնդրեին այլևս չվճարել իրենց պարտատոմսերի արժեքը կամ շահումները: Մեզ փող պետք չէ, ասացին, խնդրում ենք այդ գումարները տրամադրել ժողովրդական տնտեսության էլ ավելի զարգացմանը: Ճի՞շտ է: Եվ ընկեր Խրուշչովը հարգեց նրանց խնդրանքը և միաժամանակ, առանց հարցնելու, հարգեց նաև ամբողջ ժողովրդի ենթադրյալ խնդրանքը ու դադարեցրեց փոխառության պարտատոմսերի վճարումը:

- Դա բոլորովին ուրիշ բան է,- սրտնեղեց խմբագիրը: Դա պետական քաղաքականություն է…

- Նույնն է, նույնը,- ծիծաղեց Արմեն Զատիկյանը: - Եթե դու խմբագիր չլինեիր, անմիջապես կհասկանայիր ինձ: Բայց դու պրոպագանդիստ ես և պաշտոնյա, օ՜ , ամենաազնիվը մեր քաղաքի բոլոր պրոպագանդիստների մեջ: Հիմա տես ինչ եմ առաջարկում : Մի՞թե դու ևս չես կարող երկու բանվոր գտնել քիմիական կոմբինատում, որոնք հանդես գան քո թերթում և

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

խնդրեն իրենց ու քաղաքի բոլոր աշխատավորների մեկ օրվա աշխատավարձը վերցնել ու այդ գումարով զտիչներ գնել քիմկոմբինատի թույնը չեզոքացնելու համար:

- Չեն թողնի,- հոգոց հանեց խմբագիրը:

- Ո՞վ:

Զավեն Շարաֆյանը չպատասխանեց: Եվ ի՞նչ կարող էր պատասխանել: Հարցն այն է, որ նա ամբողջովին համաձայն էր գյուտարարի հետ: Եվ ինքն էլ էր ճիշտ նույնը մտածում: Նա գիտեր միաժամանակ, որ նման հարցերը տեղում չեն լուծվում: Եվ ոչ միայն դա: Նա գիտեր, որ գլավլիտը հատուկ հրահանգ ունի, որով թերթերին արգելված է էկոլոգիական հարցեր բարձրացնելը, օդի և ջրի թունավորման դեպքերի մասին գրելը: Դրանք համարվում են պետական նշանակություն ունեցող գաղտնիքներ: Գլավլիտի լիազորը առանց նույնիսկ համաձայնեցնելու խմբագրի հետ, ջնջում է նման տողերը կամ պարզապես չի ստորագրում նյութի վրա: Եվ վերջ: Իսկ Արմեն Զատիկյանին ի՞նչ կա: Նա Գլավլիտ չունի և ինչ ասես կարող է ասել- Շատ հետաքրքիր է, թե ինչպես կխոսեր, եթե ինքը լիներ խմբագիր…

Զավեն Շարաֆյանը ծիծաղեց:

- Ի՞նչը այդքան ուրախացրեց քեզ,- հարցրեց Արմենը:

- Մկրտիչ Զուլոյանի պատմածը հիշեցի «Գրական թերթի» խմբագրի մասին: Նախքան խմբագիր դառնալը արդեն նշանավոր բանաստեղծ է լինում: Ով նրան կուշտ փորով քյաբաբ է ուտեցնում, սեղանին դնում մի շիշ օղի և հետն էլ խնդրում կարդալ իր բանաստեղծությունները, նա կարդում է և խմածի քանակին համապատասխան մակագրություններ անում էջի վրա՝ «Հիանալի է», «Տաղանդավոր է», «Հանճարեղ է»: Իսկ երբ խմբագիր է դառնում ու նույն բանաստեղծությունները ներկայացնում են նրան տպագրելու համար, մերժում է անմիջապես, թե հիմար բաներ են…

- Հասկացա,- հեգնորեն ժպտաց Արմեն Զատիկյանը, -հիմա էլ դու ես տատանվում քյաբաբ ուտող մարդու և խմբագրի միջև…

- Այդպես է,- հաստատեց Զավենը: - Ես իհարկե վաղուց եմ մտածում և դարձյալ կմտածեմ, թե ինչ կարող է անել թերթը, բայց դու էլ Պարույր Պետրոսյանի հետ այդ զտիչի մասին մտածիր: Գուցե ձեզ հաջողվի շատ ավելի էժան ճանապարհով հասնել արդյունքի: Ով իմանա: Ասում են, թե ամենախոշոր գյուտերը հուսահատությունից և անելանելի վիճակից են ծնվում:

- Եվ ծուլությունից,- ծիծաղեց Արմենը,- ինչեր ասես չեն հորինում մարդիկ, որպեսզի տեղից չշարժվեն ու խուսափեն ֆիզիկական աշխատանքից: Վկան՝ ավտոմեքենան և ամենավերջին հրաշքը՝ հեռուստացույցը: Ապշելու բան է, չէ , տանը նստած կինո ես նայում: Երանի երևանցիներին:

- Ես առայժմ ունեցողներին չեմ նախանձում: Ով հեռուստացույց ունի, նրա տունը ամեն երեկո հարևաններով լցված է: Դե ինչ, տաղանդավոր գյուտարար, հանձն առնո՞ւմ ես ծխնելուզային «Ֆիլիպ-Մորիս» ստեղծելու գործը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ծխելն անհամեմատ հեշտ է: Երանի Գառնիկ Բադալյանին,- սուտ հառաչեց Արմեն Զատիկյանը:

Նա դեռ իր խոսքը չէր ավարտել, երբ հեռախոսը զնգաց:

- Քնած հո չէի՞ր,- լսափողի մեջ հնչեց Գառնիկ Բադալյանի առույգ ձայնը:

- Այս ժամին ո՞վ է քնում, Գառնիկ Վարդանիչ,- Արմեն Զատիկյանին աչքով անելով պատասխանեց խմբագիրը:

- Վերջերս կարծես թե խեղճացել եք,- ասաց քարտուղարը: - Քիչ առաջ «Լուսաբացի» կոմպլեկտն էի թերթում: Մի գլուխ փառաբանություններ են: Հասկացանք, լավը շատացել է և ճիշտ եք անում, որ ընդգծում եք: Դրական օրինակները ևս անհրաժեշտ են ու դաստիարակչական նշանակություն ունեն: Բայց պրոպորցիայի խնդիր կա, չէ՞: Ձեր թերթը կարդացողը կմտածի, թե արդեն բոլոր հարցերը լուծված են: Այնինչ ով չէ, չէ, ես ու դու հո լավ գիտենք, որ անելիքներ շատ կան: Հատկապես առևտրի կազմակերպման գործում: Քաղաքի մատակարարումը խայտառակ վիճակում է, նոր, ժամանակակից խանութներ չեն կառուցվում, ծածկած շուկայի հենասյուներն են միայն տնկվել ու մնացել, ինչպես մի հոդվածում գրել էիր՝ իբրև ղեկավարների անտարբերության և անճարակության մի-մի հուշարձան: Ժողովուրդը տրտնջում է, Զավեն, ես ամաչում եմ իմ նախկին բանվորների աչքին երևալ: Խանութներում ամենուրեք խաբում են գնորդներին:

- Համաձայն չեմ, Գառնիկ Վարդանիչ,- ծիծաղեց ու համարձակվեց ընդհատել Զավենը: - Երեկ մեր կողքի խանութում ինձ դրամի մնացորդը վերադարձրեցին: Առաջին անգամ: Դա արդեն երևույթ է:

- Շնորհավորում եմ,- ասաց քարտուղարը: - Իհարկե, երևույթ է, որ թերթի խմբագրին արդեն չեն խաբում: Մնում է աշխատավորների հարցը: Իմ կարծիքով, չէր խանգարի, եթե մի թափով ռեյդ կազմակերպեիք: Միլիցիայի վրա հույս չդնես, շուտով ցաք ու ցրիվ եմ անելու դրանց՝ իրենց լպրծուն պետի հետ: Դատախազության հետ գործեք և անպայման խմբերի մեջ ընդգրկեք անվանի բանվորների: Նրանք վառված են և լավ կստուգեն: Այնպես արա, որ առևտրի վարչությունից ծուխ բարձրանա: Չափից ավելի է հղփացել Ասքանազ Պեպանյանը:

- Կանենք, ընկեր Բադալյան: Մանավանդ որ քաղաքային տնտեսության և կենցաղի բաժինը վերջապես վարիչ ունի: Հենց նրան էլ կհանձնարարեմ ղեկավարել ռեյդը:

- Հետո՞: Կարգի՞ն տղա է: Անունն ի՞նչ է:

- Համալսարանի նոր շրջանավարտներից է, ժուռնալիստ: Մուշեղ Օթարյան: Լավ տղա է երևում:

- Ուղարկիր ինձ մոտ ծանոթանամ,- հավատարիմ իր սկզբունքին առաջարկեց քարտուղարը:

- Անպայման, ընկեր Բադալյան:

- Դե, բարի գիշեր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Բարի գիշեր, Գառնիկ Վարդանիչ:

Զավեն Շարաֆյանը ցած դրեց լսափողը, շրջվեց նայեց Արմեն Զատիկյանին, բայց ոչ թե նրան, այլ ինքն իրեն բարձրաձայն ասաց.

- Օհո , քարտուղարը մարտական արշավ է սկսում Գրետա Սուրենյանի դեմ:

* * *

Երբ թռուցկաժողովը ավարտվեց, Միհրան Գալստյանը զգուշացրեց, որ հիմա հանդես է գալու հայտարարությամբ.

- Զավեն Աշոտիչ, բարեկամներ,- ասաց նա,- այս կիրակի մեր տանը տեղի է ունենալու ձեզ քաջ հայտնի Միհրանի ու Սեդայի ամուսնական հանդեսի ծիսակատարությունը, որին բնականաբար ներկա են լինելու կողմերի հայրերն ու մայրերը , քույրերն ու եղբայրները, հորեղբայրներն ու մորեղբայրները և բազմաթիվ այլ հայտնի ու անհայտ ազգականներ: Ոչ միայն տեղի սղության պատճառով, այլև ձեր իսկ ազատության իմաստով ձեր ներկայությունն այդ հանդեսին նպատակահարմար չէ: Նպատակահարմար չէ ձեզ հրավիրել նաև հաջորդ օրը, որովհետև դուք չարամտորեն կասեք, թե իբր կրճոններն են ձեզ բաժին ընկել: Այդ է պատճառը, որ կողմերը խոնարհաբար խնդրում են ձեզ, ամուր ձգել գոտիները, համբերել ևս մեկ շաբաթ և հաջորդ կիրակի ներկա լինել միայն և միայն ձեզ համար կազմակերպված հանդեսին, որը տեղի կունենա նորերս մեր քաղաքի իրավասությանը հանձնված Մոշուտ գյուղում, հորեղբորս տանը: Սեդա, Միհրան:

- Առանց թղթի այդքանը ո՞նց ասաց,- զարմացավ Քաջիկը: - Հանճար է, էլի:

- Միհրան,- միջամտեց Ջիվանը,- ամուսնությունը բարերար ազդեցություն է գործում քեզ վրա: Խելոքացել ես, գիտես:

- Երեք օր է հաց չեմ ուտում, անխիղճ, անազնիվ, դե հիմա արի ու մի շաբաթ էլ ծոմ պահիր,- տրտնջաց Մարոն:

- Այն, ինչ մտածում եք իմ մասին, կարող եք ուշացումով արտահայտել միայն հաջորդ կիրակի, Մոշուտ գյուղում,- ժպտաց Միհրանը: - Սեդան այլևս հիասթափվելու հնարավորություն չի ունենա: Իսկ ուրիշ ոչ մի հարազատ չի լինի:

Որոշված օրը, ցերեկվա ժամը երկուսին, խմբագրության աշխատողները բազմաչարչար «Պոբեդայի» մեջ ֆանտաստիկ ձևերով իրար վրա կիտված սլացան Մոշուտ: Զավենը Մարոյին առաջարկեց առջևում, Տիգրանի կողքին նստել, բայց նա հրաժարվեց աղմուկով և հայտնվեց Ջիվանի ծնկան վրա: Ու բոլորը բացեցին բերանները, սրամտության մրցույթ սկսեցին.

- Ստալինը և Մամլաքյաթը,- հայտնի լուսանկարը ակնարկելով՝ բղավեց Քաջիկը:

- Սասկիան՝ Ռեմբրանդտի ծնկին,- նոր ընկերներին միացավ Մուշեղը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Զգույշ մնա, Մարո ջան,- խորհուրդ տվեց Միհրանը: - Ջիվանից ամեն ինչ սպասելի է: Մեկ էլ տեսար անգիտակցաբար աղջիկ ունեցար:

Ջիվանը կրկին ձեռքն առավ իր սազը:

- Ավելի լավ է տասնութ հատ աղջիկ ունենամ, քան թե քեզ նման ոչ ու փուչ մի տղա, որը տանն էր մնացել ու Սեդային բաժին ընկավ էժանացրած ապրանքների խանութում:

- Տասով զրո,-- ճչաց Մարոն:

Իսկ Զավեն Շարաֆյանը առջևում հանգիստ նստած բոլորովին այլ մտքերի մեջ էր: Նա կրկին ու կրկին զարմանում էր այն լայն թափով, այն վիթխարի գործունեությամբ, որ ծավալել էր քաղկոմի առաջին քարտուղարը: Ինչպե՞ս կարողացավ իբրև օժանդակ տնտեսություններ այլ շրջաններից կտրել ու քաղաքին միացնել մերձակա կոլտնտեսությունները: Մինիստրների խորհրդի որոշման մեջ հենց այդպես էլ գրված էր՝ քաղաքը գյուղատնտեսական անհրաժեշտ մթերքներով անմիջականորեն ապահովելու համար… Իսկ դա նշանակում է, որ յուրաքանչյուր տնտեսություն: իր հիմնական արտադրությունից բացի, պետք է ունենա անասնապահական, խոզաբուծական նոր ֆերմաներ, թռչնաբուծական ֆաբրիկաներ, կաթի վերամշակման գործարաններ: Եվ այդ բոլորը պետք է սկսել այսօր, անմիջապես: Հիրավի, հոգնել չգիտի այդ մարդը:

Անզեն աչքով էլ կարելի էր տեսնել, որ արագացել է քաղաքի ռիթմը: Իր խոսքերով ասած հին, հոգնած ու սմքած ուղեղներով ղեկավարների փոխարեն Գառնիկ Բաղալյանը ամենուրեք աշխատանքի էր ընդունել իր մանկության ընկերներին, իր լավ ճանաչած մարդկանց, ձեռներեց, խելացի, փառատենչ անձնավորությունների, որոնց հատկապես հրավիրել էր Երևանից և Թբիլիսիից:

Նրանք աչքի էին ընկնում վառ երևակայությամբ և բարձր ճաշակով: Հենց միայն նրանց տեսքը բարերար ազդեցություն գործեց, փոխեց քաղաքի բնակիչների մի զգալի մասի տեսքը: Նրանք հագնվում էին անթերի, պարտադիր կարգով փողկապ էին կապում, խնամում էին մազերը, սափրվում էին ամեն առավոտ և կրում կաշվե բաճկոններ, որոնք և մոդայիկ էին, և գործնական: Ինչպես որ ընդունված է, անմիջապես իրենց պետերի օրինակին հետևեցին նաև տեղակալները, ինժեներները, տնտեսվարները, առաքիչներն ու պահեստապետերը: Քաղաքը մի տեսակ թարմացավ:

Նրանց եռանդուն գործունեության շնորհիվ մեկ տարվա ընթացքում կառուցապատվեց «Խաղաղության զբոսայգու» մի մասը, անտառալանջերին բարձրացան պանսիոնատների ինքնատիպ շենքեր, շքեղ կահավորված սրահներով, հանգստի անկյուններով ու խաղասենյակներով, մարմարապատ բուխարիներով, լողասենյակներով ու բացօթյա ջրավազաններով:

Ճիշտ է, բանվորներին դեռ հերթը չէր հասնում, բայց քաղաքի «ակտիվը» արդեն հավաքվելու և հանգստանալու տեղ ուներ, և այլևս բամբասելով պարապ-սարապ չէր թափառում Լենինի արձանի շուրջը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Իր առանձին պանսիոնատը ուներ նաև քաղաքային կոմիտեն, որը նախատեսված էր քաղաքից եկած հյուրերի համար: Բայց քանի որ շատ հազվադեպ էին այդ պանսիոնատին արժանի հյուրերը, այնտեղ երեկոները հիմնականում Գառնիկ Բադալյանն էր լինում, բիլիարդ էր խաղում իր եռանդուն օգնականների հետ, մտերմաբար քննարկում առաջիկա խնդիրները:

Բայց նրանցից ոմանք չափից դուրս էին եռանդուն, իհարկե: Զավեն Շարաֆյանը մենակ էր իր առանձնասենյակում, երբ ներս մտավ նիհար, բարձրահասակ, սև աչք-ունքով ու բարակ բեղերով մի մարդ:

- Բարև ձեզ,- ասաց,- ես Հովհաննես Չուբարյանն եմ: Բայց ավելի շատ ինձ ճանաչում են Օնիկ անունով: Դուք էլ Օնիկ ասեք:

Խմբագիրը անծանոթին աթոռ առաջարկեց:

- Ես թխվածքների մասնագետ եմ,- ասաց Օնիկը: - Գառնիկ Վարդանիչը հրավիրել է ինձ, որպեսզի ձեր քաղաքում թխվածքների արտադրություն բացեմ: Եվ շենքեր է տրամադրել:

- Գետափին,- գլխով արեց խմբագիրը,- ծիրանիների անտառի մոտ:

- Այո, - ասաց Օնիկը: - Վերջերս տեսե՞լ եք: Չեք ճանաչի: Դե փաստորեն հին գոմեր էին: Քանդեցի հիմնահատակ, նոր շենք սարքեցի, սրբատաշ տուֆով պատեցի երեսը, ջուր քաշեցի: Արտակարգ մեքենաներ տեղադրեցի: Արդեն հոսքային երեք գիծ կա: Մի խոսքով, որ տեսնեք, կզարմանաք և կուրախանաք:

- Ուրախ եմ,- ժպտաց խմբագիրը: - Շատ ուրախ եմ:

- Ամսի մեկին բացումն է: Տալու ենք առաջին արտադրանքը՝ հայկական գաթաներ: Հրավիրում եմ:

Զավեն Շարաֆյանը հասկացավ, թե Օնիկն ինչու է խմբագրություն եկել:

- Սիրով կգամ,- ասաց նա: - Եվ լուսանկարիչ ու թղթակից էլ կբերեմ ինձ հետ, որպեսզի թերթում ինֆորմացիա տպագրենք այդ մասին: Դա և հաճելի լուր կլինի և միաժամանակ ռեկլամ:

Հովհաննես Չուբարյանի դեմքը պայծառացավ:

- Շնորհակալ եմ: Ես Թբիլիսիում լավ գործի վրա էի, գիտե՞ք: Բայց որ Գառնիկ Վարդանիչն ասաց, թող ամեն ինչ ու արի, եկա: Եկա ու սարքավորումներն էլ հետս բերեցի: Բա ի՞նչ: Խղճի բան է, որ ձեր քաղաքում փուչ «պերաշկիներից» բացի ուրիշ ոչինչ չի արտադրվում: Հայերը դարավոր ավանդներ են ունեցել: Հիմա ի՞նչ է պատահել, մոռացե՞լ են իրենց անուշահամ թխվածքները, թե մեր քաղաքի աշխատավորությունը, բանվորությունը արժանի չէ լավ թխվածքների: Շատ ցավալի բան է: Մեղրն ունենք, կարագն ունենք, ընկույզն ունենք ու նույնիսկ նուշ ունենք, համեմունքների մասին էլ չեմ խոսում: Ուրեմն ինչո՞ւ մեր խանութները

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

չլցնենք ազգային գաթայով, յուղաբլիթով, փախլավայով, ինչո՞ւ չարտադրենք նաև տորթի ու կարկանդակի տասնյակ տեսակներ, վրացական խաչատուրի, արաբական լահմաջու…

Օրվա վերջն էր, խեղճ խմբագիրը քաղցած էր անասելի և Օնիկի ելույթը սադիստական թվաց նրան:

- Շատ կարևոր գործ եք սկսել,- զգալով, թե ինչպես է տրորում ստամոքսը, ասաց նա: - Միայն ողջունել կարելի է:

- Միայն ողջունելով բան չի դուրս գա,- ծիծաղեց Օնիկը, - ինձ ձեր օգնությունն է պետք:

- Ինչով կարող ենք,- ձեռքերը տարածեց խմբագիրը:

- Ես արտադրության մարդ եմ, ընկեր Շարաֆյան, և սիրում եմ պարզ խոսել: Աշխատանքի մեծ փորձ ունեմ և Թբիլիսիում, օրինակ, երբ նոր արտադրամաս ենք բացում, հարկ ենք համարում անմիջապես ներկայանալ քաղաքի ու շրջանի ղեկավարությանը, դատախազին, միլպետին ու խմբագիրներին, որպեսզի իմանան, թե ով ենք մենք և ինչ ենք անում: Եվ առաջին հերթին, իհարկե, որպեսզի չխանգարեն մեզ:

- Ինչո՞ւ պիտի խանգարեն,- անհանգստություն զգաց խմբագիրը:

- Գիտեք ինչ, նոր գործ սկսելը շատ դժվար բան է և շատ բարդությունների հետ է կապված: Պետությունը հաճախ մեզ ոչինչ չի տալիս, և մենք ստիպված ենք լինում մեր միջոցներով ճարել ու գնել սարքավորումներն ու անհրաժեշտ նյութերը: Հանուն գործի: Ու որպեսզի հանկարծ, ասենք, ՕԲԽՍՍ-ից մեկը չհայտնվի ու հարցնի, թե սրա՞ թուղթն ուր է, նրա թուղթն ուր է, առաջինը մենք ենք ներկայանում միլպետին:

- Իսկ ֆինանսական փաստաթղթեր չե՞ք ունենում, ինչ է:

- Ունենում ենք և դեռ մի բան էլ ավելին: Բայց դե երբ ստուգումների են գալիս՝ կտրում են աշխատանքից, զբաղեցնում են, ժամանակ են խլում: Իսկ դուք հո գիտեք, որ արտադրության մարդու համար ժամանակը թանկ է, ոսկի է: Բացի այդ, չթաքցնեմ ձեզանից, արտադրությունն այնպիսի բան է, որ երբեմն ստիպված ես լինում ակամա մանր խախտումներ կատարել: Հանուն գործի: Իսկ ստուգողի համար խախտումը խախտում է: Եվ սկսվում է քաշքշուկ, տհաճ խոսակցություններ, կրկնակի ստուգումներ- Հենց դրա համար էլ…

Զավեն Շարաֆյանը այնուամենայնիվ փորձեց կանխել նրան.

- Ես ձեզ հասկացա: Կարող եք չանհանգստանալ, մենք ձեզ չենք խանգարի: Մանավանդ որ Գառնիկ Վարդանիչն է հրավիրել ձեզ: Եվ մանավանդ որ իրոք շատ կարևոր գործ եք սկսում: Ես էլ ձեզանից չթաքցնեմ՝ սովորաբար մենք խուսափում ենք ստուգումներ կատարել: Իսկ եթե այնուամենայնիվ հարկադրված ստուգում ենք, միայն այն ժամանակ, երբ ահազանգ կամ բողոք ենք ստանում…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ուրեմն մեր հանդիպումը և ձեր լավ վերաբերմունքը բոլոր դեպքերում անհրաժեշտության է,- սիրալիր ժպտաց Հովհաննես Չուբարյանը: - Հանուն գործի: Ձեր աշխատողները մեզ մոտ չպետք է երևան:

Ջավեն Շարաֆյանը պարզ զգաց, որ գունատվում է:

- Բայց քիչ առաջ հենց դուք հրավիրեցիք:

- Միայն բացմանը,- ծիծաղեց հրուշակագործը: - Իսկ մնացածի մասին էլ չենք խոսում: Դուք մեզանից դժգոհ չեք մնա: Մինչև հիմա դեռ ոչ մի մարդ Օնիկից դժգոհ չի մնացել: - Նա ձեռքն անփութորեն կաշվե պիջակի ծոցագրպանը տարավ:

Ջավեն Շարաֆյանը բարձրացավ տեղից.

- Ես ձեզ նման բան խոստանալ չեմ կարող,- ասաց նա մի այնպիսի ձայնով, որ հրուշակագործը ձեռքն արագորեն դուրս բերեց ծոցագրպանից և կողքի գրպանը տարավ՝ իբր թաշկինակ է որոնում:

- Իզուր,- ասաց նա՝ նուրբ քառածալ թաշկինակով սրբելով ճակատի քրտինքը: - Ափսոս:

Խմբագիրը վճռեց չհարձակվել այլևս ինքն իրեն համոզելով, թե մարդն իսկապես գուցե թե թաշկինակն էր որոնում:

- Եթե դուք Գառնիկ Վարդանիչի բարեկամն եք,- ասաց նա: - Ուրեմն նաև իմ բարեկամն եք: Եվ եկեք այլևս այդ մասին չխոսենք:

Հովհաննես Չուբարյանը կնճռոտեց ճակատը և ժպտաց, սակայն խռոված երեխայի նման:

- Ընկեր Շարաֆյան, եկեք այդ մեծ մարդու անունը չշոշափենք: Ես չասացի, թե նա իմ բարեկամն է: Ես ասացի, թե նա ինձ կանչել է, ես էլ եկել եմ աշխատելու: Ես արհեստավոր մարդ եմ: Ես ո՞վ եմ: Գառնիկ Վարդանիչն իր մեծ գործն է անում, ես էլ իմ փոքրիկ գործը պիտի անեմ ու շատ եմ ուզում, որ ինձ խանգարող չլինի: Այդքան բան:

Ջավեն Շարաֆյանը ժամացույցին նայեց:

- Այդ դեպքում թույլ տվեք, որ ես էլ իմ գործն անեմ, - ասաց նա: - Ես էլ եմ սիրում, որ ինձ խանգարող չլինի: Այդքան բան:

* * *

Նա շատ վաղուց քաղաքից դուրս չէր եկել և զարմացավ տեսնելով այն խեղճությունն ու թշվառությունը, որ տիրում էր Մոշուտ կոչվող գյուղում: Կոլտնտեսության նախագահի երկհարկանի քարե տնից բացի, բոլոր տները միահարկ էին ու գորշ, պատերը թրիքով սվաղած: Միահարկ էր և գոմի տեսք ուներ նույնիսկ վարչության գրասենյակը, որի դիմացի ցեխոտ հրապարակից հանել էին Ստալինի արձանը և ցածրիկ պատվանդանն էր միայն մնացել: Ցեխոտ, գրեթե անանցանելի էին նաև ծուռումուռ փոքրիկ փողոցները: Մարդիկ չէին

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

երևում, բայց բավական էր մի հայացք նետել կմախքացած, կողերը ներս ընկած մոզիներին ու շներին, որպեսզի հստակ պատկերացում ունենայիր, թե ինչպես են ապրում սրանց տերերը:

Գյուղին գյուղ դարձնողը միայն այգիներն էին, որ բողբոջել էին արդեն և դրանով հույս էին տալիս, թե շուտով նոր կյանքով կլցվի աշխարհին էլ, գյուղն էլ:

Այդ հույսն ուներ նաև Միհրանի հորեղբայր Բագրատ Գալստյանը, որն ասես Թումանյանի «Հառաչանքից» իջած ծերունին լիներ: Նա ծալապատիկ նստել էր թախտին, մաշված ծաղկանկար գորգի վրա, տերողորմյա էր գցում՝ շատ վարպետորեն սարքված դեղձի մանրիկ կորիզներից ու թանձր հոնքերի տակից քննախույզ

դիտում խմբագրին:

Հենց սկզբից, երբ Միհրանը հորեղբոր հետ ծանոթացրեց բոլորին, ծերունին Զավենին ասաց.

- Մինչև ջահելները խորոված սարքեն դրսում, արի մի քիչ զրույց անենք, տղա ջան: Մարդակարոտ եմ:

Զավենին դուր եկավ, որ Բագրատ հորեղբայրը նրան զատեց ջահելներից, թեև այդ ջահելներից Ջիվանը նրանից տասնհինգ տարով մեծ էր, հետո մտածեց, որ նա որպես խմբագրի է իրեն առանձնացնում, որը պակաս հաճելի չէր, և սիրով նստեց ծերունու դիմաց, աթոռին:

Բագրատ հորեղբայրը թումանյանական ծերունու նման սկզբում չհարցրեց, թե ինչ կա-չկա քաղաքում, երևի այն պատճառով, որ պատից կախված սրաքիթ սև ռադիոն գիշեր-ցերեկ տզտզալով խոսում էր: Եվ միանգամից գործի անցավ:

- Տղա ջան,- ասաց,- ես մեծ մարդ եմ ու էնքան բան եմ լսել, որ ականջներս խլացել են արդեն ու էնքան բան տեսել, որ հոգնել են, էլ տեսնել չեն ուզում աչքերս: Ուղեղս էլ փափկել է երևի, որովհետև ահագին բան, որ առաջ ոնց որ թե հասկանում

էի, հիմա չեմ հասկանում:

- Ի՞նչը չեք հասկանում, հորեղբայր,- ժպտաց Զավենը՝վաղուց իմանալով, որ այսպես սկսում են միայն այն մարդիկ, որոնք շատ լավ հասկանում են ամեն ինչ և նույնիսկ գիտեն իրենց հարցերի պատասխանը:

- Օրինակ, չեմ հասկանում, թե մեր էս պետությունը, որից արդար պետություն աշխարհում ոչ եղել է, ոչ էլ կլինի, ինչի՞ է կտրում էն ծառը, որի վրա ինքը նստած է:

- Ի՞նչ ծառ, - հենց այնպես հարցրեց խմբագիրը՝ մտքում քմծիծաղ տալով, թե ահա, խնդրեմ, այս էլ քեզ Արմեն Ջատիկյանը՝ ծերացած հասակում:

- Գյուղացիներին,- ասաց Բագրատ Գալստյանը: - Բա լավ, դրանք մինչև հիմա չհասկացան, որ երկիրը պահողը գյուղացին է, որ հաց տվողը գյուղացին է: - Հրեդ,- նա մատով ցույց տվեց սև ռադիոն,- ամբողջ օրը բանվոր հա բանվոր: Այ, հոգուդ մեռնեմ, բանվորն էլ նույն հաց

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ուտողը չի՞: Բանվորը որ սոված մնաց՝ էդ ո՞նց է աշխատելու: Դու հողագործներին ձեն տուր, գյուղացիներին թև տուր, որ սեղանիդ վրա հաց ու կարագ լինի:

- Գյուղացիներին ևս միացրեցին իրար, էլի,- կրակը բորբոքեց Զավենը: - Բա կոլտնտեսությունն ինչ է:

- Կոլտնտեսությո՞ւնը,- փնչաց ծերունին,- կոլտնտեսությունը Մոշուտն է: Տեսա՞ր: Քսանյոթ տարի է, ինչ կոլխոզ ենք ու էդ քսանյոթ տարում հազիվհազ կարողացել ենք մեր նախագահի համար երկու հարկանի սեփական տուն սարքել: Մեր գյուղի սոցիալիզմի կառույցը մենակ նախագահի տունն է: Ուրիշ կառույց տեսա՞ր:

- Բագրատ հորեղբայր, մի նեղացեք, խնդրում եմ, բայց երբ գյուղը լավ չի ապրում, իմ կարծիքով կամ բնությունը, եղանակն է պատճառը, կամ մարդիկ, որոնք լավ չեն աշխատում: Այդպես չէ՞: Առածն ասում է, թե ինչ որ ցանես, այն էլ կհնձես:

- Իսկ ո՞վ պիտի ցանի: Ո՞նց պիտի ցանի: Մեր գյուղում ինչքան խելքը գլխին հողագործ կար, 1930-31 թվականներին քշեցին տարան: Աշխատող, աշխատասեր, հողից հասկացող մարդիկ էին: Ամեն մեկը երկու-երեք կով ուներ, երկու լուծ եզ, ասացին կուլակ եք ու քշեցին Սիբիր: Եվ ասողներն էլ ովքե՞ր էին՝ ծույլ, անբան, անշնորհք մարդիկ, որ մենակ խոսել գիտեին: Է, խոսելով երկի՞ր կպահվի: Մեկն էլ էս մեր նախագահն էր: Կոմսոմոլ էր էն ժամանակ: Հողե տներում ապրող մարդկանց վտարեց, թե ժողովրդի արյունը ծծող եք ու ինքը հիմա երկու հարկանի քարե շենք է սարքել: «Պոբեդան» էլ դռանը կանգնած է: Նա ժողովրդի բարեկամն է, իսկ աշխատող մարդիկ, գյուղին հաց տվող մարդիկ ժողովրդի թշնամիներ էին: Քիչ թե շատ շնորհքով մարդիկ էլ վախից փախան ու հիմա Ուզբեկստանն են ծաղկեցնում: Արևիդ մեռոնեմ, եթե թշնամիներ են, Ուզբեկստանո՞ւմ ինչ գործ ունեն, էլի նույն երկիրը չի՞: Իսկ եթե թշնամիներ չեն, ինչի՞ ես պոկում իրենց հողից, տնից,այգիներից: Ինչի՞ ես քանդում նրանց ու հետն էլ մեր տունը:

Զավեն Շարաֆյանը ստիպված էր վառել ծխախոտը:

- Ուրախանանք, որ այդ ամենն անցել է, հորեղբայր,- ասաց նա: - Տեսնում եք, էլի, հիմա հո չեն գնում, վերադառնում են:

- Ոչինչ էլ չի անցել,- համառեց ծերունին: - Տեսակն է փոխվել: Առաջ տանում էին, հիմա չեն տանում, ճիշտ է, բայց չեն էլ թողնում,որ քո տանն աշխատես: Տղա ջան, ե՞ս լավ կիմանամ, թե իմ հողում ինչ կարող եմ ցանել, որ լավ լինի, թե՞ դու:

- Դուք, իհարկե,- ասաց Զավենը:

- Բա ինչի՞ ես դու, քաղաքում նստած, քո գրքերով որոշում, թե ես ինչ պիտի ցանեմ: Լավ, ինձ կարող ես ստիպել, բայց հողին ո՞նց ես ստիպելու, որ նա քեզ բամբակ տա, երբ էդ հողը իր ծնված օրից բամբակի մասին տեղեկություն չունի: Գիտե՞ս թե մեր խեղճ հողերի գլխին ինչ օյիններ են բերել: Մի ժամանակ նույնիսկ ստիպեցին, որ բրինձ ցանենք: Բրինձ, որ գյուղացիները միայն Թիֆլիսի խանութներում էին տեսել ու կարգին չգիտեին էլ, թե ոնց են եփում ու ուտում: Վերջը հարցնելով իմացանք, որ դա ջրի մեջ է աճում: Հավար տվեցինք, թե

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ջուր չունենք: Մեր ի՞նչ գործն է, ասացին, պետությունը թիվ է իջեցրել, որ էսքան ու էսքան բրինձ պիտի տաք: Չեք աճեցնում, գնացեք խանութից առեք ու հանձնեք…

- Բայց այդպես ո՞նց կլինի,- այս անգամ իրոք սրտանց զարմացավ խմբագիրը:

- Լինում է, լինում,- տնքաց ծերունին: -Բա դու չգիտե՞ս, որ հենց վերևից մեզ վրա պարտադիր հարկ էր դրված, որ էսքան ու էսքան բուրդ պետք է հանձնենք պետությանը, էսքան ձու, էսքան միս ու էսքան էլ, ուզում ես հավատա, ուզում ես՝ չէ, բոժոժ:

- Բոժո՞ժ:

- Բոժոժ, բոժոժ: Ձուն դեռ ջհանդամը, հավեր կան, ածում են, որ չածեն էլ՝ շուկայից կարելի է առնել: Բայց ես քեզ ո՞նց բուրդ տամ, երբ ոչխար չունեմ, որտեղից միս տամ, երբ անասուն չունեմ և բոժո՞ժ որտեղից տամ, երբ թթենիներ չունեմ: Եվ չունենալու պատճառը ոչ թե էն է, որ ծույլ եմ, այլ դու չես թողել, որ անասուն պահեմ: Արգելել ես որ ոչխար պահեմ, բայց բուրդ ես ուզում:

- Անհավատալի բան է,- շվարեց Ջավենը: - Բա բոժոժի հարցը ինչպես լուծեցիք:

- Լաց եղանք: Լաց եղանք, ասում ենք՝ թթենիներ չունենք, ասում են՝ տնկեք: Ասում ենք՝ փող չունենք, որ շերամանոց սարքենք, ասում են, մենք փողը կտանք: Այ ձեր ցավը տանեմ, որ փող ունեք, ծախսեք ու կերեք, էլի: Ինչի՞ եք դնում մի գործի մեջ, որտեղ ձեր փողերը հարյուր տոկոսով կորչելու են: Որովհետև մեր գյուղացին շերամից ոչ մի բան չի հասկանում ու ճիճուներից էլ զզվում է:

Ջավենը չկարողացավ զսպել ծիծաղը:

- Հորեղբայր,- ասաց նա,- բայց հիմա արդեն լավ կլինի, չէ՞ , թույլ են տվել անասուններ պահել:

- Երջո՞ ,- հանկարծ կարծես թե անկապ ձայն տվեց ծերունին:

Ջավենը ետ նայեց: Նրա թիկունքում, բարակ մի շապիկ հագին, հետույքը բաց կանգնած էր երեք-չորս տարեկան մի տղա, պապի և հյուրի զրույցն էր լսում ու մատով փորում քիթը:

- Ի՞նչ ա, պապ,- մատը քթից չհանելով, հարցրեց տղան:

- Մի հատ ոտանավոր ասա, Երջանիկ ջան, մատդ քթիցդ հանի ու քո վերջին սովորած ոտանավորն ասա, ցավդ տանեմ:

Տղան, շարունակելով իր գործը, ինչ-որ բան թոթվեց արագ-արագ, որից ոչինչ չհասկացվեց:

- Մատդ հանիր ու կարգին ասա,- բարկացավ պապը:

Տղան մեծ ափսոսանքով ի վերջո մատը հեռացրեց քթից ու զիլ ձայնով, թլիկ լեզվով բղավեց.

- Տասը ոչխար, երկու կով, կեցցե ընկեր Մալենկով:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Վայ, լեզվիդ մեռնեմ,- հալվեց պապը:

- Տասը ոչխար, երկու կով, կեցցե ընկեր Մալենկով,- պապի գովասանքից ոգևորված կրկնեց թոռը:

- Ապրես, ապրես, դե հիմա գնա… գնա տես խորովածն ինչ եղավ, արևիդ մատաղ:

Փոքրիկը մատը նորից դեպի քիթը տարավ ու վազեց՝ բոբիկ ոտքերով թփթփացնելով հողե հատակին, իսկ երբ դռան մոտ էր հասել, ետ դարձավ ու վրա տվեց միանգամից, շուտասելուկի պես.

- Տասը ոչխար, երկու կով, կեցցե ընկեր Մալենկով:

Ու դուրս փախավ:

Զավեն Շարաֆյանը ծիծաղեց սրտանց:

- Տեսնո՞ւմ ես, հորեղբայր, ուրեմն այնուամենայնիվ լուծվում են հարցերը: Երկու կովն ու տասը ոչխարը քիչ բան չեն:

- Քիչ բան չեն, չէ, - ծիծաղեց նաև ծերունին,-- մեր նախագահի ընտանիքի ու նրա հյուրերի եռամսյակի կերակուրն է: Սա կատակի համար: Իսկ որ լուրջ ասեմ՝ մեջը բան չկա:

- Ինչպե՞ս թե չկա:

- Մեր գյուղում երկու հայրենադարձ ընտանիք կա, տղա ջան: Մի օր խոսքի մեջ նրանցից մեկին՝ համարյա իմ տարիքի մի մարդու հարցի, թե՝ Պողոս եղբայր, ինձ անկեղծ ասա՝ էնտեղ էր լավ, թե էստեղ: Խեղճ մարդը աչքերիս մեջ նայեց, մտածեց, մտածեց ու ասաց, «ճշմարիտը որ ըսեմ՝ հոս տեղ օրենքները լավ են, հոն տեղ՝ ապրուստը»:

Զավենն ինչպե՞ս պահեր ծիծաղը:

- Բայց ճիշտ է,է,- շարունակեց ծերունին,- մեր օրենքներն իսկապես լավն են, նմանը չկա: Հենց թեկուզ էս օրենքը կովերի ու ոչխարների մասին: Թույլ են տալիս, չէ, պահեք, համ դուք կուշտ ապրեք, համ էլ շենացրեք երկիրը: Բայց ովքե՞ր են կատարողները, տղա ջան, կատարողն էլի էս մեր նախագահը չի՞: Ասում է՝ պահեք, բայց կոլխոզի վրա հույս չդնեք, մի բուռ խոտ էլ չեմ տա, որովհետև խոտը կոլտնտեսության ունեցվածքն է: Բա մե՞նք ինչ ենք, ասում եմ, մենք կոլտնտեսության ունեցվա՞ծքը չենք: Բա խեղճ անասուններին ինչո՞վ պահենք, սարեր են, էլի, սարերի խոտը կոլխոզը ե՞րբ է քաղում: Որ մեր անասունը ուտի՝ ի՞նչ կլինի: Որիդ անասունը մեր արոտատեղում բռնեցի, կտուգանեմ, ասում է, խայտառակ կանեմ: Դե ասա, տղա ջան, խմբագիր ջան, մենք ոնց կատարենք պետության բարի որոշումը: Ի՞նչ անենք:

Խմբագիր բառը լսելով, Զավեն Շարաֆյանը նոր միայն հիշեց, որ ինքը խմբագիր է և Մոշուտ գյուղը հիմա քաղաքի տարածքի մեջ է մտնում: Եվ նոր միայն հասկացավ, որ ինքն առաջվա պես իրավունք չունի սոսկ կարեկից ունկնդիր լինելու: Որ հիմա ինքն ու խմբագրությունն էլ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

են պատասխանատու այն ամենի համար, ինչ կատարվում է քաղաքամերձ այս և մյուս կոլտնտեսություններում:

Նա զգուշորեն գրպանից հանեց ծոցատետրն ու ինքնահոս գրիչը և արագորեն նշումներ կատարեց: Չէ, պետք է զբաղվել նաև այս հարցերով: Անպայման: Թերթը պարտավոր է արդեն գյուղատնտեսության հարցերին նվիրված իր բաժինն ունենալ: Նա պատրաստվում էր նոր հարցեր տալ ու մի քիչ էլ խոսեցնել մարդակարոտ ծերունուն, երբ դուռը կրնկի վրա բացվեց, և շեմին հայտնվեցին Միհրանն ու Սեդան՝ հարսանեկան զգեստներով, ամաչելով նայելով իրար ու ծիծաղելով:

- Հորեղբայր, ընկեր Շարաֆյան, սեղանը պատրաստ է, - հայտարարեց Միհրան Գալստյանը,- խմբագրության ողջ ոհմակը անհամբերությամբ ձեզ է սպասում:

* * *

Ուշ գիշեր էր, բայց նա դեռ պառկած էր բաց աչքերով ու մտածում էր: Քունը չէր գալիս: Հիշում էր զրույցը աշխարհից խոռով հողագործ Բագրատ Գալստյանի հետ, աղմկոտ, ուրախ խնջույքը, երգերն ու պարերը, նորապսակների երջանիկ դեմքերը: Ու նախանձում էր նրանց: Գլորվում են տարիները, իսկ դու մենակ ես: Միայնակ: Մեկը չունես, որ նստես խոսես հետը, տագնապներդ կիսես նրա հետ, մի խորհուրդ հարցնես, մի կարծիք իմանաս, հոգաս նրա մասին ու դրանով իսկ լցնես կյանքդ, սիրես ու քնքուշ, մտերմիկ, տաք, միայն քեզ հասցեագրված խոսքեր լսես ականջիդ: Սա ինչ կյանք է: Արդեն որքան ժամանակ է Ալվարդը չկա և ասես չի էլ եղել: Ո՞նց են այդքան արագ մոռանում իրար մարդիկ: Մի անգամ հանդիպեցին պատահաբար, փոքրիկ մի հասարակության մեջ: Ալվարդն այնքան հանգիստ, նույնիսկ անտարբեր ընդունեց Զավենի հայտնվելը և այնքան սառն ու օտար էր պահում իրեն, որ տղան քիչ մնաց կորցներ հավասարակշռությունն ու գոռար բարձրաձայն, հայտարարեր բոլորին, թե՝ այ, այս կինը, այս Ալվարդը, որ հիմա իրեն չգիտես ինչ է երևակայում, գիշերներ շարունակ իմ գրկի մեջ է եղել, իմացեք, համբուրել է շրթունքներս, աչքերս ու կուրծքս ու լաց է եղել երջանկությունից: Սա, սա, այս կինը… Նա չկարողացավ տանել այդ վիճակն ու թողեց հեռացավ խնջույքից: Թող ինչ ուզում ես մտածեն:

Որքան ժամանակ է, ինչ չկա նաև Էմման: Մեկնեց Լենինգրադ և այլևս ոչ մի ձայն, ոչ մի հեռագիր, ոչ մի տեղեկություն: Գոնե հեռախոսի համարը չգիտի, որ զանգահարի նրան: Մի քանի անգամ վճռեց թատրոն զանգահարել, բայց ամաչեց: Ո՞ւմ զանգահարի, ի՞նչ ասի: Տեսնես հիմա, հենց այս րոպեին ի՞նչ է անում Էմման, Դե իհարկե քնած կլինի ելույթից հետո: Նրանց համար քնելը պարտադիր է, զուր չէ, որ բալետի պարողի ֆիզիկական ծանրաբեռնվածությունը համեմատում են դարբնի աշխատանքի հետ: Երևի մի բան էլ ավել կլինի, ցատկոտում ու վազում են շարունակ՝ մատների ծայրերին կանգնած: Էմման ասում էր, որ ամեն ելույթից հետո մոտ կես կիլոգրամ պակասում է քաշը: Դրա համար էլ նրանց առանձնահատուկ սնունդ են տալիս՝ քիչ, բայց ուժեղ: Վերջին բաժանման ժամանակ շատ էր հուզված Էմման: Զավենը երբեք նրան այդ տրամադրության մեջ չէր տեսել: Մեկ լաց էր լինում ու մեկ էլ ծիծաղում էր: Իսկ վերջում բարձրացավ թաթերի վրա, ձգվեց, գրկեց Զավենին ու կյանքում առաջին անգամ համբուրեց շրթունքները: Հետո ցած իջավ ու ասաց.

- Որ ինձ չմոռանաս:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ես քեզ չեմ մոռանում, Էմմա, մտքում ասաց տղան: Բայց դու ինձ երևի մոռացել ես:

Հեռախոսի անակնկալ զանգը այնպես ցնցեց նրան, որ մթության մեջ երկար ժամանակ չէր կարողանում գտնել կողքին դրված հեռախոսը:

- Ալո, ալո, Զավեն ջան, դո՞ւ ես:

- Ես եմ,- գոռաց Զավենը: - Ես եմ, Էմմա:

- Հո չարթնացրի՞ քնից: Ի՞նչ անեմ, պատվեր էի տվել ժամը տասի համար, իսկ նրանք միայն հիմա միացրեցին:

- Ես քնած չէի, ես հենց նոր քո մասին էի մտածում, ես քեզ հետ էի, Էմմա…

Աղջիկը կամացուկ ծիծաղեց:

- Ինչպե՞ս ես, սիրելիս…

- Որբ եմ, մենակ եմ, անտեր եմ,- գոռգոռաց տղան:

- Եթե ինձ հետ ես, ինչպե՞ս ես մենակ, - նորից ծիծաղեց աղջիկը,

- Էմմա,- ասաց Զավենը,- ուզո՞ւմ ես հենց հիմա թողնեմ ամեն ինչ ու քեզ մոտ գամ:

- Խենթուկ: Դու աշխարհի ամենամեծ խենթուկն ես:

- Գա՞մ:

- Չէ,- ասաց Էմման: - Իսկ մեր պայմանը հիշո՞ւմ ես:

- Ամեն ինչ հիշում եմ: Ամեն ինչ,- հառաչեց տղան: - Նույնիսկ այն, որ համբուրեցիր ինձ ու ասացիր՝ որպեսզի ինձ չմոռանաս:

- Ուրեմն համբերություն, սիրելիս:

- Իսկ քո՞ գործերն ինչպես են, Էմմա…

- Եթե ասեմ, որ հիանալի են, դա կուրախացնի՞ քեզ: Այդ առումով ես պարզապես երջանիկ եմ: Փայլուն դերեր ունեմ, համարվում եմ լավագույն պարուհիներից մեկը: Պարում եմ լեփ-լեցուն դահլիճի առաջ: Ներկայացման ընթացքում նույնիսկ ինձ ստիպում են կրկնել միևնույն մենապարը: Գո՞հ ես:

- Չէ,- ասաց Զավենը: - Գոհ կլինեի եթե սուլեին ու հեռացնեին քեզ, որպեսզի դու ինձ մոտ գայիր…

- Չար,- ծիծաղեց Էմման,- չար, նախանձ և վերջապես խմբագիր…

- Իսկ Կարլո՞սն ինչ է անում: Էլի զրկում, բարձրացնո՞ւմ է քեզ,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ի՞նչ Կարլոս,- զարմացավ աղջիկը ու կռահեց անմիջապես,- ախ, հա , Կարլոսը… Չէ, Զավեն ջան, Կարլոսն այս թատրոնում ի՞նչ գործ ունի: Իմ նոր պարընկերը գիտե՞ս ով է, ժողովրդական դերասան Եվգենի Նեստերովը: Հրաշք:

- Այդ հրաշքին ասա, թող քեզ ձեռք չտա, թե չէ կգամ, կսատկացնեմ:

- Խենթուկ,- քրքջաց աղջիկը: - Դե լավ, Զավեն ջան, հիմա կանջատեն ուր որ է: Գրիր իմ հեռախոսի համարը: Եթե պատահաբար դարձյալ մենակ լինես կամ մենակ զգաս քեզ՝ զանգահարիր: Միայն թե երեկոյան ուշ ժամերի:

- Սպասիր, վառեմ լույսը,- լսափողը մի կողմ դրեց Զավենը:

Նա վեր թռավ տեղից, վառեց լույսը և թուղթն ու մատիտը ձեռքն առավ:

- Ալո, ալո… անջատվե՞ց: Էմմա, դու ինձ լսո՞ւմ ես, Էմմա…

Եվ շատ ուրախացավ, երբ կրկին լսեց աղջկա ձայնը:

- Լսում եմ, լսում եմ, սիրելիս, գրիր:

Նա թելադրեց հեռախոսի համարը և դա ճիշտ ժամանակին էր, որովհետև անմիջապես հնչեց հեռախոսավարուհու մետաղյա ձայնը.

- Ձեր ժամանակը սպառված է: Անջատում եմ: Ձեր ժամանակն սպառված է:

Զավեն Շարաֆյանը ցած դրեց լսափողը, անջատեց լույսն ու կրկին անկողին մտավ: Բայց սիրտը չէր հանգստանում: Ի՞նչ ասաց այդ վհուկ հեռախոսավարուհին: Իր փոխարեն մի կարգին անիծող կին լիներ ու ասեր լեզուդ չորանա, արևդ մեռնի, բա դա խո՞սք էր, որ դու ասացիր: Ինչպե՞ս թե ձեր ժամանակը սպառված է:

Ինչպե՞ս թե սպառված է, երբ մեր ամբողջ հույսն այն է, թե նոր-նոր է սկսվելու մեր ժամանակը, անխիղճ:

* * *

Նա ընդունարան դուրս եկավ, քարտուղարուհուն խնդրեց ոչ ոքի ներս չթողնել, վերադարձավ, բայց նստեց ոչ թե իր աթոռին, այլ երկարուկ սեղանի մոտ, Մուշեղ Օթարյանի դիմաց:

- Ասա տեսնեմ, Մուշեղ:

Պատանին շփոթված տեսք ուներ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ձավեն Աշոտիչ, որ պատմեմ՝ չեք հավատա: Ես կարծում էի, թե միայն Երևանի առևտրի ցանցում են խախտումներ թույլ տրվում, բայց այն, ինչ կատարվում է այստեղ, սարսափելի է: Ուղղակի հանցագործություն է:

Խմբագիրը ժպտաց,

- Զգացմունքներդ մի կողմ դիր ու խոսիր կոնկրետ փաստերով:

- Խնդրեմ,- ասաց լրագրողը՝ ծոցատետրը թերթելով: - Սկսեմ առևտրի վարչության ղեկավարության հաստիքներից: Վարչությունն ունի քսան պատասխանատու աշխատող: Պետ, երկու տեղակալ, երեք բաժնի վարիչ՝ մթերային, արդյունաբերական ապրանքների և ճաշարան-խորտկարանների գծով, գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, պլանբաժնի վարիչ, պլանբաժնի վարիչի տեղակալ, չորս հաշվապահ ու պլանավիկ և վեց հսկիչ-վերահսկիչներ:

- Հետո՞:

- Այնինչ ըստ Մինիստրների խորհրդի իջեցրած հաստիքների պետք է ունենա ընդամենը տասնվեց պատասխանատու աշխատող: Չորս մարդ ավելորդ է: Ինքնագլուխ ուռճացրել են ապարատը:

- Բայց ի՞նչ միջոցներով, ինչի՞ հաշվին:

- Ապագա խանութների և ճաշարանների դիրեկտորների հաշվին:

- Ինչպե՞ս թե ապագա:

- Ձավեն Աշոտիչ, որոշում կա, որ հնգամյակի ընթացքում քաղաքում կառուցելու են արդյունաբերական և մթերային ապրանքների վեց խանութ և չորս ռեստորան-ճաշարան:

- Հետո՞:

- Որոշման հիման վրա դիրեկտորների հաստիքներ են պահանջել և ստացել են: Օրենք կա, որ կառուցվող օբյեկտների համար կարող են դիրեկտորներ պահել, որոնց պարտականությունն է հսկել շինարարության ընթացքին և նախապես զբաղվել սարքավորումների ու կահույքի ձեռքբերումով: Թող լինի: Բայց հնգամյակի ընթացքում սկսել են կառուցել ընդամենը չորս խանութ և երկու ճաշարան և չորս հաստիք ազատ է մնացել…

- Ուրեմն դիրեկտորները կան, իսկ օբյեկտները դեռ գոյություն չունե՞ն:

- Դիրեկտորները ևս չկան: Նրանց հաստիքներով պետերը տեղակալներ են պահում:

Հին ֆելիետոնիստի ձեռքերը քոր եկան:

- Դա փա՞ստ է, Մուշեղ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մուշեղ Օթարյանը բացեց թղթապանակը, թերթեց և երկու գրություն մեկնեց խմբագրին: Բայց խմբագիրը չնայեց էլ թղթերի վրա:

- Բայց սա հո ռումբ է, Մուշեղ:

- Ռումբի մի մասը,- գոհունակ ժպտաց լրագրողը,- անցնեմ առաջ, առևտրի ցանցում այսօր նյութական պատասխանատու աշխատանք կատարող մարդկանցից քսանչորսը իրավունք չունեն այդ աշխատանքը կատարելու, որովհետև նախկինում դատված են եղել հափշտակության և գողության համար և դատարանի որոշմամբ զրկվել են այսուհետև նյութական պատասխանատու պաշտոններ վարելու իրավունքից:

Նա թղթապանակից մի թուղթ ևս հանեց ու դրեց խմբագրի սեղանին:

Զավեն Շարաֆյանը նրան էր նայում հիացմունքով և զարմացած.

- Այ տղա, դու համալսարանն ավարտելուց առաջ հո միլիցիայո՞ւմ չես աշխատել:

Մուշեղ Օթարյանը շիկնեց երեխայի նման և ցանկացավ վարձահատույց լինել:

- Ընկեր Շարաֆյան, իսկ երբ ես ձեր ֆելիետոններն եմ կարդում, ինձ թվում է, թե ժուռնալիստ ու միլիցիայի քննիչ լինելուց բացի, դուք նաև ֆինանսական տեսուչ-վերահսկիչ եք:

Խմբագիրը թափ տվեց ձեռքը.

- Հետո՞, հետո՞…

- Պահեստներում խայտառակ վիճակ է,- շարունակեց տղան,- ապրանքների խիստ հաշվառում չկա: Եվ ձեռնտու էլ չէ, որովհետև քիչ թե շատ պահանջարկ ունեցող ապրանքները հենց պահեստներում են վաճառվում:

- Կոնկրետ փաստեր կա՞ն:

- Հենց մեր ստուգայցի օրը, առանց խանութ ուղարկելու, արդյունաբերական ապրանքների պահեստում վաճառում էին արտասահմանյան կոստյումներ, կոշիկներ, վերնաշապիկներ… և նույնիսկ մեզ էլ առաջարկեցին, կարծելով թե իրենց ծանոթների ուղարկած մարդիկ ենք:

- Հավելյալ վճարո՞վ:

- Չեմ կարող ասել: Բայց ով ինչքան ուզում էր՝ մաղարիչ էր թողնում պահեստապետին: Գուցե մեր անծանոթ դեմքերն ի վերջո կասկած հարուցեցին:

- Ուրի՞շ:

- Խանութներում գրեթե ոչինչ չկա, իսկ պահեստներում հսկայական չափերի արդյունաբերական և մթերային ապրանքներ են կուտակված: Երբ պահեստապետներին հարցրեցինք, թե ինչո՞ւ վաճառքի չեն հանում, ասացին՝ թե խանութները չեն ուզում: Դե դա ծիծաղելի պատճառաբանություն է, իհարկե: Բայց զարմանալիորեն նույն ծիծաղելի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

պատճառաբանությունը նաև այն խանութների վարիչներն էին բերում, ում պահեստներում կամ սառնարաններում հայտնաբերում էինք թաքցրած ապրանքներ: Սրանք էլ ասում էին, թե գնորդները չեն ուզում:

- Ամեն ինչ արձանագրվո՞ւմ էր:

- Անպայման: Եվ գնորդներն էլ ստորագրում էին արձանագրության տակ:

- Դատախազության քննիչը միշտ ձեզ հե՞տ էր լինում:

- Առանց նրա օգնության մենք դժվար թե գլուխ հանեինք գործից:

- Միլիցիայի միջամտություններ չեղա՞ն:

- Ջավեն Աշոտիչ, հենց այդ մասին էի ուզում ասել: Արդեն վերջում, ուր մտնում էինք, միլիցիայի աշխատողներ էին լինում, որոնք հայտարարում էին, թե իրենք ստուգումներ են կատարում և խնդրում էին չխանգարել իրենց: Համոզում էին, թե իրենց ստուգումների արդյունքները կամփոփեն և կդնեն մեր տրամադրության տակ:

- Հետո՞: Իսկ դո՞ւք…

- Ահա հենց այդտեղ էր, որ պետք էր գալիս դատախազության քննիչի ներկայությունը: Մենք մեր գործն անում էինք:

- Կեցցեք,- հավանություն տվեց խմբագիրը:

- Դե խանութների մասին էլ ի՞նչ ասեմ, ընկեր Շարաֆյան, ամեն տեսակի խախտումներ կային: Գները շատ տեղերում չեն ցուցադրված, ապրանքը թերակշռում ու թերաչափում էին, ոչ մի մթերային խանութում հակառակ նժարին թուղթ չի դրվում… Իբր թե դա քիչ է, հատավաճառ ապրանքներից և ոչ մեկի քաշը պիտակին չի համապատասխանում: Հացը պետք է մի կիլոգրամ լինի, այնինչ ութ հարյուր գրամից չի անցնում, գաթան երկու հարյուր գրամ պետք է լինի, բայց հարյուր հիսուն գրամ էլ չի կշռում և այդպես անվերջ:

- Գաթա՞ն: Հայկակա՞ն,- ի զարմանք Մուշեղի, ավելացրեց խմբագիրը:

- Հայկական,- ասաց լրագրողը,- նոր արտադրամասն է թողարկում: Հիշո՞ւմ եք, որ ինձ ուղարկեցիք բացմանը: Ես այնտեղ էլ մտա: Պետը տեղում չէր, արտադրության վարպետի հետ խոսեցի: Մտածում էի, թե գուցե պիտակի վրա է սխալ գրված և պետք է հենց հարյուր հիսուն գրամ լինի:

- Հետո :

- Չէ, պարզվեց, որ երկուհարյուր գրամ է նախատեսված: Վարպետն ասաց, որ դա պատահական թյուրիմացություն է եղել:

- Չփորձեց մի անկյուն տանել քեզ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մուշեղ Օթարյանի ճակատին քրտինքի մանրիկ կաթիլներ հայտնվեցին: Նա զարմացած նայեց խմբագրին,

- Դո՞ւք որտեղից գիտեք: Փորձեց, բայց ես ուսանողական «Մրրկահավ» ընկերության թեթև ատլետների չեմպիոնն եմ եղել:

- Փախա՞ր:

- Փախա, ընկեր Շարաֆյան,- ծիծաղեց Մուշեղը,- ափսոս որ արագությունս չափող չկար: Իմ կարծիքով, չգերազանցված ռեկորդ ծնվեց:

Զավենը ժպտաց: Նրան շատ էր դուր գալիս Մուշեղ Օթարյանը:

- Դե լավ,- ասաց նա, գրառումների նոթատետրը գրպանում թաքցնելով,- երկու օր ժամանակ եմ տալիս քեզ: Կարող ես աշխատանքի չգալ: Տանը հանգիստ նստիր ու գրիր:

- Զավեն Աշոտիչ,- խնդրեց տղան,- թույլ տվեք երեկոները խմբագրությունում աշխատել:

- Մնա թեկուզ մինչև առավոտ,- ծիծաղեց խմբագիրը: - Իսկ տանն, ինչ է, հարմարություններ չկա՞ն:

- Մի բան էլ ավել են,- ծիծաղեց նաև Մուշեղը և հարցրեց տատանվելով,- անկեղծ ասե՞մ, բայց կատակով…

- Ասա, Մուշեղ:

- Տանտերս, ընկեր Շարաֆյան, երկու հասուն աղջիկ ունի, որոնք սոցիալիստական մրցության մեջ են մտել ինձ կերակրելու և իմ բարձր ուշադրությունը գրավելու համար: Օր ու արև չեն տալիս: Ըստ որում շատ լավ աղջիկներ են, գիտե՞ք:

- Եվ նրանցից ով հաղթանակով դուրս գա, որպես պարգև հարսնացուի թա՞գ է ստանալու:

Մուշեղ Օթարյանը տարուբերեց գլուխը:

- Չէ,- ասաց նա,- դա անհնարին է: Ես սիրած աղջիկ ունեմ Երևանում: Բնակարան ստացա թե չէ, կկանչեմ:

- Կգա՞,- սրտում ծակոց զգաց խմբագիրը:

- Նրան որ մնա, հիմա էլ կգա,- ինքնագոհ ծիծաղեց տղան: - Մանկավարժ է, հնարավոր է, որ աշխատանք գտնվի այստեղ:

- Դա ես խոստանում եմ,- ասաց Զավենը: - Եվ եթե այդպիսի լուրջ հանգամանք կա, կաշխատեմ բնակարանի հարցը ևս արագացնել: Միայն թե, իմ կարծիքով, դու առանձնապես չես շտապում:

- Ինչո՞ւ,- զարմացավ տղան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Մնունդդ կպակասի, Մուշեղ- Եվ կտապալվի սոցիալիստական մրցությունը…

Մուշեղ Օթարյանը բարձրացավ տեղից:

- Ուրեմն գրո՞ւմ ենք, ընկեր Շարաֆյան:

- Գրում ենք,- ասաց խմբագիրը:

Տղայի հեռանալուց հետո Զավեն Շարաֆյանը դեռ երկար ժամանակ նստած էր նույն դիրքով, ձեռքերով գլուխը բռնած: Սա իհարկե ռումբ է, մտածում էր նա, բայց պետք է շատ զգույշ լինել, որ հենց մեր ձեռքերի մեջ չպայթի: Ասքանազ Պեպանյանի հարցը լուծված է: Դրա մասին խոսք լինել չի կարող: Եվ առաջին քարտուղարը շնորհակալ կլինի: Գրետա Սուրենյանը ստիպված կբացի խաղաթղթերը և հախուռն հարձակման կանցնի իր սիրեցյալին պաշտպանելու համար: Եվ հենց այդտեղ նրա հարցն էլ կլուծվի: Դա փաստ է: Բայց փա՞ստ է արդյոք: Իսկ եթե հակառակ քո տրամաբանության՝ դեպքերը բոլորովին այլ ընթացք ստանան: Եթե հանկարծ ինչ-որ նկատառումներից ելնելով, քարտուղարը շրջվի լրիվ հարյուր ութսուն աստիճանով- Ի՞նչ երաշխիք: Եվ ընդհանրապես կարելի՞ է վստահ լինել, թե նույնիսկ առևտրի ցանցում ստուգայց կատարելու նրա տված գաղափարը ևս խաղ չէ: Ո՞ւմ դեմ, ո՞ւմ օգտին, նախապես ինչ կարող ես իմանալ: Մեկ էլ տեսար նույն պատմությունը սարքեց, ինչ Կապի մինիստրին ուղղված «Բաց նամակից» հետո եղավ: Բայց այս անգամ ոչ բարեհաջող ավարտով: Ո՞վ կարող է գուշակել: Իսկ հրուշակագործ Հովհաննես Չուբարյանի խնդիրը- Գառնիկ Բադալյանը կհամաձայնվի զոհել իր ընկերոջը հանուն հաղթանակի երկրորդ քարտուղարի նկատմամբ: Մկրտիչ Զուլոյանն ասում էր, թե ով նրա հետ բարիկադի մի կողմում է, կարող է ապահով զգալ իրեն: Բայց մի՞թե տեխնիկական գիտությունների դոկտոր Մարգար Միտուշյանը նրա ընկերը չէր: Մի՞թե նա չէր օգնել, որ Գառնիկ Բադալյանը քիմկոմբինատի դիրեկտոր դառնա: Բա ինչպե՞ս զոհեց առանց աչքն իսկ թարթելու: Նույնիսկ որոշում կայացրեց նրա դեմ և ուղարկեց Կենտկոմ: Ինչ է, այդ ամենը հանուն սկզբունքայնությա՞ն արեց: Որովհետև բացարձակապես օբյեկտի՞վ էր: Չէ, չէ … Գուցե նա առաջ ուրիշ է եղել, սիրելի Մկրտիչ, բայց հիմա ես նրա ոչ մի արարքին վստահ լինել չեմ կարող: Ի՞նչ արեց, այն ինչ արեց, երբ մի քանի ամիս առաջ ֆելիետոն տպագրեցի շինարարական տրեստի կառավարչի մասին: Հիշելն անգամ ահավոր ու տհաճ է:

* * *

Զավեն Շարաֆյանը մի նամակ էր ստացել, թե քաղաքի շինարարական տրեստի կառավարիչ Վարազդատ Սիսոյանը զբաղվում է տների առ ու վաճառքով և նույնիսկ տնվորներ է պահում, անխղճորեն վարվելով նրանց հետ: Երբ նոր տնվոր է հայտնվում և համաձայնվում է փոքր ինչ ավել վճարել, Վարազդատ Սիսոյանը անմիջապես տնից դուրս է նետում հին կենվորին:

Խմբագիրը չհավատաց: Մանավանդ որ անստորագիր էր նամակը: Նա խղճի հանգստության համար միայն տրեստ զանգահարեց և կես կատակ-կես լուրջ, ամաչելով, կառավարչին ասաց, թե ինչ նամակ է ստացել: Վարազդատ Սիսոյանը ծիծաղեց.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ինչ չարհոգի մարդիկ կան, տեսնո՞ւմ եք, ընկեր Շարաֆյան: Մի՞թե ես ինձ թույլ կտամ, ես, որին կուսակցությունը վստահել է տրեստի կառավարչի պաշտոնը, իջնել մանրիկ վաշխառուի մակարդակի: Ճիշտ է, Երևանում ապրող մայրս, սեփական տանը մենակ չլինելու համար և կարեկցանքից դրդված առաջին հարկը մի հայրենակցի է իբր թե վարձով տվել, բայց նախ որքան գիտեմ՝ դրամ չի վերցնում նրանից: Իսկ եթե նույնիսկ վերցնում է՝ մի՞թե դա վերաբերում է ինձ:

Ջավեն Շարաֆյանը իրավունք չուներ չհավատալու տրեստի կառավարչին, որին ճանաչում էր դեռ քիմկոմբինատից, որտեղ Վարազդատ Սիսոյանը կուսկոմիտեներ էր ղեկավարում: Սիսոյանի հետ միասին նա նույնպես ծիծաղեց հերյուրանքի վրա, նույնպես համերաշխ տրտնջաց չար ու անհոգի մարդկանցից, որոնց միակ նպատակը ազնիվ մարդկանց կյանքը թունավորելն է և նամակի վրա մակագրեց. «Զրպարտություն է, ուղարկել արխիվ»:

Իսկ երկու շաբաթ անց մի նոր նամակ ստացավ, որն այս անգամ ստորագրված էր: Գրում էր քիմկոմբինատի բանվոր Գասպար Մարտիրոսյանը:

«Երկար մտածում էի անունս տակը դնել, թե չէ, բայց ամաչում էի և որոշեցի առաջին նամակը անստորագիր ուղարկել: Բայց հետո մտածեցի, թե ինչո՞ւ պիտի ես ամաչեմ: Ինչո՞ւ ընկեր Սիսոյանը չի ամաչում, որ ձյուն-ձմեռով մեզ հանեց դուրս շպրտեց իր տնից, որպեսզի ամիսը հիսուն ռուբլի ավել ստանա »:

Ու այնուհետև կոնկրետ փաստեր էր բերում, որոնք առնվազն արտառոց էին:

«Կարող եք մեկ-մեկ ստուգել՝ ինչ ասում եմ,- գրում էր նա: - Ես մեկ-մեկ ստուգել եմ: Վարազդատ Սիսոյանի հայրը՝ Բանդիտ Մնո մականունով, որը Երևանում երկհարկանի, ութ սենյակից բաղկացած սեփական շենք ուներ, հինգ հեկտար հողամաս է գնում Նորքի այգիներում իբրև ամառանոց և իր որդու՝ շինարարության աշխղեկ Վարազդատի հետ միասին սկսում կտոր-կտոր վաճառել հայրենադարձներին՝ ֆանտաստիկ գներով: Վարազդատը գողացած շինանյութով տուն է սարքում և հողակտորի հետ վաճառում: Էլի է սարքում ու վաճառում: Ընդհանուր թվով տասնվեց տուն և հողակտոր: Բայց նրա ագահությունը սահման չունի: Թե ինչ միջոցներով և ինչպես՝ չգիտեմ, բայց նա կարողանում է դիմում ներկայացնել շրջխորհուրդ, թե ինքն իր ընտանիքով բաժանված է հորից, սոսկալի գժտված է նրա հետ և երեքսենյականոց պետական բնակարան է ստանում, որը տեղն ու տեղը զանազան մեքենայություններով վաճառում է Ախալքալակից եկած մի ընտանիքի: Հետո, ինչպես գիտեք, տեղափոխվում է մեր քաղաքը և աշխատանքի անցնում քիմկոմբինատում՝ որպես շինարարության գծով դիրեկտորի տեղակալ և այնուհետև կուսկոմիտեի ազատված առաջին քարտուղար: Պետական բնակարան են առաջարկում, չի ուզում և խնդրում է թույլ տալ սեփական տուն կառուցել իր համար: Ու կառուցում է երկհարկանի, վեց սենյակ ունեցող մի շենք, որի վերին հարկի երկու սենյակում ինքն է ապրում, մենակ, ընտանիքը Երևանում է, իսկ ներքին հարկի չորս սենյակները սովորության համաձայն վարձով է տալիս: Նրա կենվորներից մեկն էլ ես էի: Ամեն ամիս իր ձեռքով էր հավաքում վարձը: Հենց պատահաբար ուշացնում էինք, նախատում, վիրավորում էր, սպառնում դուրս անել տնից: Եվ վերջիվերջո հենց այդպես էլ արեց: Պատճառ բռնեց, թե երկու ամսվա վարձը չենք տվել ու ինձ, կնոջս, մանկահասակ երեխաներին ձմռան բուքին վտարեց տնից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Չմոռանամ ասել, որ հիմա նրա հայրը չկա և Երևանի շենքի նրա երեք սենյակում Սիսոյանի ընտանիքն է ապրում, երկու սենյակը վարձով է տրված հացի խանութին, իսկ մնացած երեք սենյակներում ուսանողներ են բնակվում իրար գլխի կիտված: Ահա թե ով է, ընկեր խմբագիր, ձեր շինարարական տրեստի կառավարիչը և ձեր կուսքաղկոմի անդամը: Եթե նա կոմունիստ է, ես այդ կուսակցության հետ գործ չունեմ»:

Զավեն Շարաֆյանը անմիջապես քիմկոմբինատ գնաց, գտավ Գասպար Մարտիրոսյանին և երկար զրուցեց նրա հետ: Քիմիագործը պնդեց, որ իր բերած փաստերը «հարյուր տոկոսանոց» ճշմարտություն են:

- Ամեն մի փաստի համար գլխովս պատասխանատու եմ, - ասաց նա: - Ես գիտեմ, որ ուրիշ փաստեր էլ կան, բայց նշել եմ միայն նրանք, որ ինքս եմ ստուգել անձամբ: Ամբողջ արձակուրդս Երևանում անցկացրեցի: Մինչև որ նա չպատժվի, չեմ հանգստանա, Մինչև հիմա էլ որ հիշում եմ, թե ոնց իմ երեխաներին դուրս արեց տնից՝ նրանց հետևից խաղալիքները շպրտելով, ապրելս իզուր է թվում:

Զավեն Շարաֆյանը թերթի համար կլիշեներ էր պատվիրել Երևանի Պոլիգրաֆ կոմբինատում: Առիթն օգտագործելով, և դրա համար իհարկե Գառնիկ Բադալյանից թույլտվություն խնդրելով, նա մեկնեց Երևան և իր իսկապես տաղանդավոր փողոցագետ վարորդ Տիգրանի հետ կետ առ կետ շրջեց նշված բոլոր հասցեներով:

Փաստերը հաստատվեցին:

Եվ դրանից հետո միայն խմբագիրը նստեց ու մտածեց, թե ինչ է անելու հիմա: Նա ոչ այնքան գիտեր, որքան համոզված էր, որ Վարազդատ Սիսոյանը Գառնիկ Բադալյանի ընկերն է կամ եթե ոչ ընկերը՝ ապա առնվազն համախոհն ու բարեկամը: Սկզբում Երևանից հրավիրել ու իր տեղակալն է դարձրել շինարարության գծով: Հետո կուսկոմիտեն է վստահել նրան: Իսկ երբ առաջին քարտուղար է դարձել՝ անմիջապես նշանակել է ողջ քաղաքի շինարարական տրեստի կառավարիչ: Ուրիշ ի՞նչ ապացույց է պետք: Իսկ եթե այդպես է, անմտություն է նրան զեկուցելը: Իհարկե, անմիջապես կարգելի որևէ բան տպագրել: Եվ դեռ ակնարկներ կանի չափը ճանաչելու, ուշիմության և երախտամոռության թեմաներով: Եվ վերջապես ինչո՞ւ պետք է զեկուցի: Մի՞թե ինքը չէ պատասխանատու թերթի համար: Դա՞ ինչ վախկոտություն է: Էլ ինչու էր կարեկցում և նույնիսկ հեգնում Մկրտիչ Զուլոյանին, թե քաղկոմի գերին է դարձել: Դողում է, երբ հնչում է քաղկոմի առաջին քարտուղարի հետ ուղիղ կապի հեռախոսի զանգը: Կամ եթե չտպագրի, ի՞նչ է մտածելու ինքն իր մասին: Ինչպե՞ս է նայելու թունավոր արտադրամասում բանվոր աշխատող Գասպար Մարտիրոսյանի աչքերին: Ի՞նչ է ասելու: Թե փաստերը ճի՞շտ չեն: Անհնարին է: Թե միտք չունի՞: Բայց ո՞ւմ համար միտք չունի: Թե ինքը վախենում է, որ դրանից հետո կհեռացնե՞ն աշխատանքից: Իսկ դրանից առաջ ու այդպես շարունակ ապրելը քանի՞ կոպեկ արժե: Եվ ընդհանրապես՝ արժե՞:

Ուրեմն պետք է տպագրել ու այլևս չմտածել հետագայի մասին: Ինչ ուզում է՝ թող լինի: Կզայրանա՝ ի՞նչ անենք, դա առաջին դեպքը չի լինի: Ավելին ի՞նչ կարող է անել, երբ փաստերն անհերքելի են: Կասի՝ դու, թերթի խմբագիրըդ՝ ֆելիետոն ես գրում քաղկոմի անդամի դեմ, շինարարական տրեստի կառավարչի դեմ ու հարկ չես համարում այդ մասին տեղյա՞կ պահել ղեկավարությանը: Ղեկավարությանը… այսինքն՝ իրեն: Որովհետև

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ղեկավարությունը, քաղկոմը, բյուրոն միայն և միայն ինքն է՝ Գառնիկ Բադալյանը: Դրա՞ն ինչ կարելի է պատասխանել: Գոնե սուտ, գոնե կեղծ, գոնե ձևականորեն- Դժվար է, ախ, ինչքան դժվար: Տեսնես աշխարհում կա ավելի դառը վաստակ, քան ժուռնալիստի հացը: Անիծված լինի այս տեսակ հացը: Ուրեմն ի՞նչ կարելի է անել: Մտածիր, մտածիր, ընկեր Շարաֆյան, դու հո նորելուկ լրագրող չես: Խմբագիր ես արդեն, ահագին բան ես սովորել, կյանքդ բյուրոներում է անցել: Իսկ Գառնիկ Բադալյանն ինչ էր ասում. չէ՞ր ասում, թե բյուրոն կյանքի դպրոց է: Դպրոց է իհարկե, երևի դպրոց է, բայց շատ տարօրինակ դպրոց է, որովհետև այդ դպրոցը մտնող աշակերտների մեծ մասը չի ավարտում այն, ուղղակի հեռացնում են: Ու այնպիսի մակագրություն են թողնում «հասունության վկայականի» վրա, որ ամբողջ կյանքում չմոռանաս: Իսկ եթե փորձես մոռանալ նույնիսկ, միշտ գտնվում է ինչ որ մեկը, որ հիշեցնում է: Դա խարան է, որ անհնարին է ջնջել:

Բայց մի՞թե ուրիշ ելք չկա: Որ հնարավորություն տա խուսանավելու, չընկնելու ուղիղ հարվածի տակ: Կա, կա, գտար, ընկեր Շարաֆյան: Ֆելիետոնի հեղինակը դու չպետք է լինես: Ճիշտ է, շատ է ափսոս, բայց, միևնույն է, հեղինակը դու չպետք է լինես: Նյութի տակ պետք է լինի բանվոր Գասպարի ստորագրությունը: Եվ դա ոչ թե ֆելիետոն պետք է լինի, այլ լինի հենց նամակ, ինչպես որ կա: Իհարկե, կասկած չկա, որպես խմբագիր պատասխանատվությունից խուսափել չես կարող: Բայց մի քիչ հեռանալ կարող ես: Դու հեղինակ չես, այլ միայն խմբագիր, որը ոչ թե իրեն է պաշտպանում, այլ իր թղթակցին: Սա արդեն ուրիշ հարց է: Բայց կհամաձայնվի՞ արդյոք Գասպար Մարտիրոսյանը:

Բանվոր Գասպարը ոչ միայն չհրաժարվեց, այլև քիչ էր մնում լաց լիներ հուզմունքից:

- Սուտ չասեմ, ոչ մի հույս չունեի, թե կտպագրեք: Մտածում էի, թե ո՞վ է հասարակ բանվորի խաթեր կռիվ սկսելու տրեստի կառավարչի դեմ: Շնորհակալ եմ: Ուրեմն արդարություն կա: Կա: Եվ իմ սիրտն էլ կհանգստանա վերջապես- Որ հիշում եմ երեխաներիս լացակումած աչքերը…

Գասպարն ամաչեց ու շրջվեց: որպեսզի սեփական արցունքները չերևան:

- Ընկեր Մարտիրոսյան,- երկար մտատանջությունից հետո վճռեց ասել խմբագիրը,- միայն թե ստիպված ենք լինելու դիմել մի փոքրիկ կեղծիքի: Կներեք, իհարկե, բայց ձեր նամակը նույնությամբ տպագրել չի լինի: Դե, բնական է, սխալներ կան, ոչ ճիշտ

ձևակերպումներ- Բայց մի նկատառումով ես չեմ ուզում, իմ գրչի հետքը երևա ձեր նամակի վրա: Թույլ տվեք առանց փաստերից մազաչափ իսկ շեղվելու, պարզապես խմբագրել այն, տեղ-տեղ նոր նախադասություններ ավելացնել…

- Ինչ ուզում եք արեք, բա ուրեմն ես էդքանը չե՞մ հասկանում,- անմիջապես համաձայնվեց բանվորը:

- Բայց իմ ուղղումները դուք տուն պետք է տանեք և նամակը արտագրեք նորից, որպեսզի հետքերը չերևան: Այդպես է անհրաժեշտ: Եվ եթե հարկ լինի, մինչև վերջ պիտի պնդեք, թե նամակը հենց նույն ձևով էլ գրել եք:

- Անգիր կանեմ, ընկեր Շարաֆյան… Բա ուրեմն ես էդքանը չե՞մ հասկանում…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Թերթի հաջորդ համարում տպագրվեց քիմկոմբինատի բանվորի նամակը, իսկ երեկոյան Զավեն Շարաֆյանին տուն զանգահարեցին և հայտնեցին, որ Գառնիկ Բադալյանը նրան սպասում է քաղկոմի պանսիոնատում :

Զավեն Շարաֆյանը մեքենա չկանչեց, այլ ոտքով գնաց պանսիոնատ, որպեսզի ճանապարհին մեկ անգամ ևս մտմտա հնարավոր հարցերը և հնարավոր պատասխանները: Բակում, սատինե կապույտ խալաթը հագին իր ձեռքով ծաղիկներն էր ջրում քաղաքի գլխավոր դենդրոլոգ Վահրամ Մոկացյանը: Տեսնելով խմբագրին, նա ձեռքի ռետինե փողրակի բերանից հեռացրեց մատը, որպեսզի ջրի աղմուկը քիչ լինի ու ասաց.

- Շեֆը բիլիարդանոցում է, ընկեր Շարաֆյան:

- Իսկ բիլիարդանո՞ցը որտեղ է, ընկեր Մոկացյան,- ժպտաց խմբագիրը:

- Երկրորդ հարկում:

Սանդուղքի գեղեցիկ ուղեգորգի վրայով բարձրանալով երկրորդ հարկ, դեռևս սրահում նա լսեց բիլիարդի գնդակների չխկոցը և գնաց այդ ուղղությամբ: Բիլիարդանոցի դուռը կիսաբաց էր և չխկոցների արանքում Զավենը հանկարծ լսեց մի ձայն.

- Արա, ու դու թողնելու ես, որ մարսե՞ն դրանք: Էդ տղեն եթե մի օր էլ քեզ չհասնի, ամոթ ինձ:

Ծիծաղ լսվեց և ծիծաղողը Գառնիկ Բադալյանն էր: Նա ինչ-որ բան ասաց, բայց թե ինչ՝ չլսվեց, որովհետև դրան անմիջապես հաջորդեց մի նոր չխկոց:

- Կտեսնես, ախպերս, կտեսնես,- նորից հնչեց նույն ձայնը:

Զավենը չհասցրեց մտածել, թե ով կլինի ձայնի տերը, որ իրավունք ունի այդքան մտերմիկ, փողոցի լեզվով խոսել քաղկոմի առաջին քարտուղարի հետ: Գուցե Կենտկոմում կամ Մինիստրների խորհրդում աշխատող նրա մանկության ընկերներից է: Նա արդեն դռան մոտ էր և ներս մտավ: Ներս մտավ, սենյակի վառ լույսից կկոցեց աչքերը, բարևեց ու նոր միայն տեսավ, որ Գառնիկ Բադալյանի խաղընկերն ու ձայնի տերը քաղաքի շինարարական տրեստի կառավարիչ Վարազդատ Սիսոյանն է:

Խմբագիրը լավ գիտեր, որ քարտուղարի արտահերթ կանչը Վարազդատ Սիսոյանի հետ է կապված, բայց մտքովն անգամ անցկացնել չէր կարող, թե նա այստեղ կլինի և այն էլ բիլիարդի փայտաձողը ձեռքին: Դա մեծ անակնկալ էր նրա համար և վիրավորական թվաց, մանավանդ որ Վարազդատ Սիսոյանը հարկ չհամարեց պատասխանել նրա բարևին:

- Բարև, բարև,- փոխարենը կրկնակի բարևեց Բադալյանը: - Ճանաչո՞ւմ ես այս մարդուն:

- Ճանաչում եմ,- շրթունքները սեղմեց զավեն Շարաֆյանը:

- Բա որտեղի՞ց ես ճանաչում, երբ չես հանդիպել նրան, չես զրուցել հետը:

Խմբագիրը ուղիղ Գառնիկ Բադալյանի աչքերին նայեց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես պարտավո՞ր եմ պատասխանել նրա ներկայությամբ,- հարցրեց նա ավելի քան արժանապատվորեն: - Եվ բիլիարդանոցը ամենահարմա՞ր վայրն է նման խոսակցությունների համար:

- Դե լավ, լավ, պոզա մի ընդունիր,- ծիծաղեց Բադալյանը: - Կարևորը մա՞ղն է, թե նրա նստած տեղը: Ես ուր գնում եմ, իմ առանձնասենյակը հետս եմ տանում: Համարիր, որ իմ առանձնասենյակում ես: Թեև ես քեզ դիտմամբ այստեղ կանչեցի, որպեսզի մեր խոսակցությունն անկաշկանդ և բարեկամական լինի, ընկեր Շարաֆյան:

Վարազդատ Սիսոյանը շարունակում էր զննող ու խեթ հայացքով նայել նրան:

- Ես ժուռնալիստ չեմ, բայց գիտեմ, որ կարգ կա, երբ մեկի մասին նյութ են գրում կամ տպագրում, պարտավոր են հանդիպել ու խոսել նրա հետ՝ թյուրիմացություններից խուսափելու համար:

- Նախ՝ ես խոսել եմ ընկեր Սիսոյանի հետ և նա ինձ, մեղմ ասած, խաբել է,- հայտնեց խմբագիրը: - Եվ հետո այս գործում թյուրիմացություններ չկան:

Գառնիկ Բադալյանի դեմքը լարվեց.

- Իսկ, այ, ընկեր Սիսոյանը առարկում է…

- Այդ դեպքում ինչո՞ւ հեղինակին, բանվոր Գասպարին ևս այստեղ չեք կանչել, որպեսզի առարկություններին պատասխանի:

- Որովհետև ինձ համար թերթի պատասխանատուն դու ես և ոչ թե Գասպար Մարտիրոսյանը,- բարկացավ Գառնիկ Բադալյանը և նրա աչքերը մգացան: - Եվ վերջ տուր հոխորտալուդ, աքլորակռվի չեմ հրավիրել: Ի՞նչ է կատարվում քեզ հետ: Ես քեզ չեմ ճանաչում: Պատասխանիր ինչպես հարկն է:

- Ինչի՞ն է առարկում ընկեր Սիսոյանը:

Վարազդատ Սիսոյանը շրխկոցով սեղանին նետեց բիլիարդաձողը:

- Ենթադրենք թե իրոք իմ հայրը տներ է սարքել ու վաճառել, հարգելի ընկեր Շարաֆյան, ե՞ս ինչ կապ ունեմ նրա հետ: Ե՞ս ինչ մեղք ունեմ, երբ անհաշտ եմ եղել նրա հետ ու օրենքով բաժանված նրա ընտանիքից:

Քարտուղարը խմբագրին նայեց:

- Դա հետո է եղել, հարգելի ընկեր Սիսոյան, այն ժամանակ դուք ոչ միայն հաշտ եք եղել, այլև միասին եք կատարել առ ու վաճառքը: Մի մասը դուք, մի մասը՝ նա:

- Իսկ որտե՞ղ են ձեր ապացույցները,- հեգնեց տրեստի կառավարիչը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Իմ գրպանում,- ասաց Զավեն Շարաֆյանը, ձեռքը ծոցագրպանը տանելով և այնտեղից հանելով մի կապ թղթեր: - Ահա՝ ձեր ստորագրած պայմանագրերի պատճենները հաստատված պետական նոտարի կնիքով:

Քարտուղարն այս անգամ տրեստի կառավարչին նայեց:

- Մի մասը,- ակնհայտ շփոթված փնչաց Սիսոյանը: - Իսկ պատասխան պետք է տամ բոլորի համար:

- Եթե հրաժարվում եք ձեր հանգուցյալ հորից, ոչ,- հեգնեց խմբագիրը: - Բայց թերթում հենց այդպես էլ գրված է, որ դուք մի մասն եք վաճառել:

Վարազդատ Սիսոյանը կիտեց հոնքերը.

-Լավ, ասենք թե այդ զրպարտիչը գրել է, թե ես Երևանում իմ պետական տունը վաճառել եմ, բա դուք իրավունք ունեիք տպագրելու այդ հերյուրանքը: Գառնիկ Վարդանիչ, չե՞ք հիշում այդ պատմությունը: Երբ դուք ինձ կոմբինատ՝ աշխատանքի հրավիրեցիք, ես էլ Երևանի բնակարանս հանձնեցի շրջսովետի գործկոմին: Չե՞ք հիշում:

- Հիշում եմ,- ընդունեց քարտուղարը:

- Ախր մարդու սիրտ է ճաքում: Դրանից հետո ես ինչպե՞ս կարող էի վաճառել պետական տունը որևէ մեկի- Կամ ինձ վերաբերո՞ւմ է, թե հետո ում են տվել, ում չեն տվել… Դա հո բացարձակ զրպարտություն է: Բա ես իրավունք չունե՞մ հերքում պահանջելու…

Գառնիկ Բադալյանը այս անգամ կարծես թե ավելի խիստ նայեց խմբագրին: Բայց Զավեն Շարաֆյանը միայն ժպտաց: Ես քո ցավը տանեմ, ասաց նա մտքում ինքն իրեն, հազիվ խելքի ես եկել: Եթե այս թղթերը չհավաքեիր, ի՞նչ պիտի լիներ քո վիճակը:

Նա ձեռքը մյուս ծոցագրպանը տարավ և ամրակով իրար միացրած երկու թուղթ հանեց:

- Ընկեր Բադալյան,- ասաց նա՝ դիմելով միայն քարտուղարին: - Սա այն ներքին պայմանագիրն է, որով Վարազդատ Սիսոյանը տունը վաճառել է ախալքալաքցի Հրաչյա Սարուխանյանին: Ահա և նրանց ստորագրությունները:

Տրեստի կառավարիչը գունատվեց:

- Սուտ է,- բղավեց նա,- կեղծիք է: Ի՞նչ ներքին պայմանագիր, ի՞նչ բան- Ես չգիտեմ, թե ով է սարքել այդ ստորագրությունները…

- Իսկ ես գիտեմ,- ասաց Զավենը՝ ամրակից թղթերը հանելով և դրանցից մեկը պարզելով քարտուղարին: - Սա ներքին գործերի մինիստրության ձեռագրային փորձագետի եզրակացությունն է այն մասին, որ պայմանագրի տակ եղած ստորագրությունը պատկանում է Վարազդատ Սիսոյանին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Դա հավանաբար շատ դաժան հարված էր, որովհետև շինարարական տրեստի կառավարիչը կարկամեց: Նրա տեսքն այնքան ողորմելի էր, որ նույնիսկ Գառնիկ Բադալյանի հոգում գութ առաջացրեց,

- Սպասիր, սպասիր, Զավեն, դու քո բոլո՞ր ստացած նամակներն ես այդքան բարեխղճորեն ստուգում: - նյարդային ծիծաղով ասաց նա: - Դա՞ ինչ առանձնահատուկ շահագրգռվածություն է…

- Տո, պա՞րզ չի , որ ինքն է գրել,- ոգի առավ կառավարիչը: - Թե չէ կիսագրագետ Գասպարն էլ էդքան գրագետ ու սիրուն բառերով նամակ գրեց: Հենց ինքն է գրել, ինքը, ես նրա լեզուն չգիտե՞մ: Գրածները կարդում ենք, էլի: Ու դեռ կպարզեմ, թե էդ ինչ է պատահել, թե էդ ինչով են շահագրգռել ընկեր խմբագրին, որ ինքը գրում է, ինքը ստուգում է, ինքն էլ տպագրում:

Ես մեղավոր չեմ, մտքում ասաց Զավեն Շարաֆյանը, դուք ինձ այսպիսին դարձրիք:

Նա ձեռքը նույն ծոցագրպանը տարավ ու այս անգամ դուրս բերեց խմբագրության ստացած ծրարը:

- Սիրտս վկայում էր, որ ինձ նույնիսկ նման հարց կարող են տալ,- ասաց նա քմծիծաղով ու նողկալով իրենից: - Ահա Գասպար Մարտիրոսյանի գրած նամակը: Եթե կարդաք, ընկեր Բադալյան, կտեսնեք, որ նույնիսկ ստորակետ չեմ փոխել:

Գառնիկ Բադալյանը վերցրեց իրեն մեկնված ծրարը, շուռ ու մուռ տվեց, նայեց տրեստի կառավարչի միանգամից կնճռոտված, թորշոմած դեմքին ու հանկարծ ասաց մի տեսակ կերկերուն ձայնով.

- Դե տեսնո՞ւմ ես, ախպեր ջան, բոլոր փաստերը ճիշտ են: Ես հիմա ո՞նց պատժեմ էս մարդուն: Դե ասա…

Հիմա էլ կարկամելու հերթը Զավեն Շարաֆյանին հասավ: Ինչպե՞ս թե պատժել: Ո՞ւմ պատժել, ինչի՞ համար: Այս ո՞ւմ մոտ է կերկերուն ձայնով արդարանում քաղկոմի առաջին քարտուղարը: Նա դեռ ուշքի չէր եկել, երբ լսեց տրեստի կառավարչի զայրացած հևոցը.

- Դու իմ խոսքը կհիշես, կհիշես իմ խոսքը,- բղավեց նա և դուռն ամուր շրխկացնելով դուրս եկավ բիլիարդանոցից:

Զավեն Շարաֆյանը գտավ, որ սրանից ավելի հարմար պահ այլևս չի լինի և վճռեց ավարտին հասցնել իր հաղթանակը: Նա խոր զարմանքով և վիրավորված ինքնասիրությամբ քարտուղարին նայեց.

- Ուրեմն դուք ինձ այստեղ էիք կանչել պատժելո՞ւ համար: Ի՞նձ պատժելու համար, Գառնիկ Վարդանիչ: Իսկ ես ձեզ ճանաչելով, համոզված էի, թե դուք այդ ժամանակակից սեփականատիրոջը, հարկահավաքին ու գծուծ վաշխառուին պատժելու ցանկությամբ եք ինձ հարցեր տալիս, որպեսզի որևէ տարակույս չունենաք: Ուրեմն դուք նրա կուսակցական հարցը բյուրոյում չե՞ք քննելու: Անպատասխա՞ն պիտի թողնեք թերթի ելույթը, ընկեր Բադալյան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նա վստահ էր, թե հիանալի գիտի իր հռետորական հարցի պատասխանը: Եվ կասկած չուներ, որ այդքանից հետո պատասխանը միայն մեկը կարող է լինել: Միայն մեկը: Այն՝ ինչը հենց հարցն է թելադրում: Իսկ երբ քարտուղարը խոսեց և հետո, իրենց փակ ու բաց մենամարտի ընթացքում, որն ավելի ճիշտ մի դարպասի վրա ուղղված անվերջ հարձակումների շարանի էր նման, Զավեն Շարաֆյանը ստիպված էր խոստովանել, որ իր առջև իրոք բացառիկ տաղանդավոր, փայլուն տրամաբանության և գիտելիքների տեր և միաժամանակ աներևակայելի վտանգավոր մի մարդ է կանգնած:

Գառնիկ Բադալյանը, որ մի պահ հարվածից դեռ դողացող դռանն էր նայում, շրջվեց, հիմա էլ խմբագրին նայեց և նրա հարցին պատասխանելու փոխարեն, ինքը հարցրեց ծաղրաբար,

- Հիմա դու քեզանից շա՞տ գոհ ես, Զավեն:

Խմբագիրը չպատասխանեց:

- Դե երևի շատ գոհ պետք է լինես: Մոտավորապես Ալեքսանդր Մակեդոնացու նման: «Եկա, տեսա, հաղթեցի»: - Նա այդ բառերը հունարեն ասաց: - Եվ փաստերի ինչ հրավառություն սարքեցիր: Փայլուն: Ես հիացմունքս չէի կարողանում թաքցնել, երբ վիրտուոզ աճպարարի ճարպկությամբ մեկ այս, մեկ այն դատարկ թվացող գրպանից ժապավեն-փաստաթղթեր էիր հանում ու ծածանում օդի մեջ: Խոսք չունեմ տպավորիչ էր: Այնքան, որ թշվառական Վարազդատ Սիսոյանը, ինչպես բռնցքամարտում նոկաուտից հետո հայտնվեց հատակին:

Զավենը վճռեց, որ ժամանակն է ընդհատելու քարտուղարի ծաղրական հարձակումը:

- Հավանաբար ձեզանից եմ սովորել, Գառնիկ Վարդանիչ,- ասաց նա: -- Երբ մի գործ եմ ձեռնարկում, աշխատում եմ, որ հիմքերն ամուր լինեն: Դուք էլ գիտեք, որ առաջ ես այդպիսին չէի:

- Ես լավ գիտեմ, թե դու առաջ ինչպիսին էիր, ընկեր խմբագիր,- ընդգծեց քարտուղարը: - Ես լավ հիշողություն ունեմ: Բայց առայժմ հիշել չեմ ուզում: Ուրեմն դու իրո՞ք համոզված ես, որ քո այդ նամակի փաստերն անհերքելի են:

- Բացարձակապես,- վստահ ասաց Զավենը: - Յուրաքանչյուր տողի տակ ապացույց կա:

- Եվ ի՞նչ են ասում այդ ապացույցները,- հեգնական ժպիտով հարցրեց Բադալյանը:

Այդ ժպիտը խելագարեցնում էր Զավեն Շարաֆյանին:

- Այդ ապացույցներն ասում են, որ բնակարանների սպեկուլյացիայով զբաղվող մարդը…

- Իսկ դու ի՞նչն ես համարում սպեկուլյացիա:

- Ինչպե՞ս թե- Նորքի այգիներում միայն ինքը չորս տուն է վաճառել:

- Իսկ այդ ո՞ր օրվանից և ո՞ր օրենքով է վաճառքը համարվում սպեկուլյացիա: - Գառնիկ Բադալյանը ձեռքերը թիկունքին դրեց և սկսեց քայլել բիլիարդանոցում դասախոսի նման գլուխը տմբտմբացնելով: - Սպեկուլյացիան, տղաս, այն երևույթն է, երբ մեկն ապրանք է ձեռք

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

բերում էժան գնով և վաճառում թանկ գնով՝ շահադիտական նկատառումներով, հանուն շահի: Իսկ Վարազդատ Սիսոյանն այդ ի՞նչն է էժան գնել:

Նա հավանաբար դիտմամբ նետեց խայծը, որովհետև խմբագիրն անմիջապես կուլ տվեց այն:

- Հողը,- ոչ այնքան վստահ պատասխանեց Զավենը:

Գառնիկ Բադալյանը քմծիծաղ տվեց.

- Հողը մեր երկրում պետական է և առ ու վաճառքի ենթակա չէ: Նրա հայրը կամ ինքը միայն վարձակալի իրավունքով կարող էին հողամաս ձեռք բերել, եթե գնել են այդ հողամասում գտնվող տունը կամ տնակը, կամ գոմը վերջապես: Գնել կարելի է միայն շինությունը, սիրելի ընկեր խմբագիր:

- Թող այդպես լինի,- ետ չկանգնեց Զավենը,- ասենք թե նա տներ է կառուցել և վաճառել է…

- Օրենքը դա սպեկուլյացիա չի համարում,- ժպտաց քարտուղարը: - Մարդը տուն է կառուցել, հետո կարիքի մեջ է ընկել ու վաճառել իր տունը: Ո՞րն է նրա հանցանքը: Իմ կարծիքով, դուք ստիպված կլինեք գոնե այդ մասով ներողություն խնդրել Վարազդատ Սիսոյանից և ինքներդ հերքել այդ փաստը:

- Հերքե՞լ,- հարցրեց խմբագիրը, զգալով, թե արյունը ինչպես է ողողում դեմքը: - Գուցե ա՞յն էլ հերքենք, որ պետական բնակարանը վաճառել է:

- Ապացույց: Տվեք ինձ ձեր սիրած ապացույցը:

- Խնդրեմ՝ ներքին կարգով կնքված պայմանագիրը,- դողաց Զավենը:

- Ես այդ թղթի վրա կնիք չեմ տեսնում:

- Ես բառը սխալ ասացի, թող լինի՝ կազմված պայմանագիրը:

- Ներքին պայմանագրերն օրինական ուժ չունեն, Զավեն: Ոչ մի դատարան, ոչ մի դատախազություն այն որպես հիմք չի ընդունի: Մի՞թե համալսարանում ձեզ իրավաբանական գոնե տարրական գիտելիքներ չեն տալիս:

- Բայց հո կա այդ պայմանագիրը,- գունատվեց լրագրողը,- և ստորագրությունները հաստատված են:

- Իսկ եթե նա ասի՝ թե հենց այնպես, կատակի համար է ստորագրել…

- Եվ նույն կատակի՞ համար է սեփական տները վարձով տվել հացի խանութին, զանազան ընտանիքների և ուսանողների: Եվ կատակի՞ համար է գծուծ սեփականատիրոջ նման իր ձեռքով հավաքում տան վարձը և տներից ստորաբար վռնդում անցանկալի կենվորներին:

Գառնիկ Բադալյանը շարունակում էր հեգնորեն ժպտալ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Զգացմունքներդ ու հայհոյանքներդ մի կողմ դիր: Դա ուրիշ հարց է: Մի կողմ դիր ու տես, թե տակը ինչ մնաց: Որ նա իր սեփական տները վարձո՞վ է տալիս: Իսկ մի՞թե օրենքն արգելում է այդ: Մի՞թե մեր երկրում սեփականության ինստիտուտ գոյություն չունի: Եվ վերջապես Սիսոյանը միա՞կն է, որ վարձով է տալիս իր տունը: Դու կարծեմ որոշ ժամանակ մեր Աշոտի կնոջ, ինչպե՞ս էր անունը, հա , Ալվարդ Բարսեղյանի տնվորն էիր ու վարձ էիր վճարում նրան: Ինչո՞ւ ֆելիետոն չգրեցիր նրա մասին: Կամ այդ ի՞նչ հանցանք է, երբ տան տերը իր ձեռքով է հավաքում վարձը: Եթե մեկ ուրիշին հանձնարարեր, կփոխվե՞ր որևէ բան:

Զավեն Շարաֆյանը թուլացած ու անօգնական զգաց իրեն:

- Այնպես որ քո փաստարկներն ու փաստաթղթերը կոպեկի արժեք չունեն,- անողոք շարունակեց Բադալյանը: - Որովհետև իրական հիմք չունեն: Եվ ես ուղղակի չգիտեմ, թե ինչ կարելի է անել ստեղծված հիմար դրությունից դուրս գալու համար: Դու դարձյա՞լ պնդում ես, որ նամակը քննության առնվի քաղկոմի բյուրոյում,- հարցրեց նա շեշտակի:

Զավեն Շարաֆյանը լուռ էր:

- Գիտե՞ս ինչու եմ հարցնում,- մտահոգ ասաց քարտուղարը,- որովհետև համոզված եմ, որ այսօրվա քո դիպուկ հարվածներից մի կերպ ուշքի գալուց հետո Վարազդատ Սիսոյանը ժամանակ կունենա մտածելու այս հարցերի մասին: Եվ կգտնի նույն պատասխանները, ինչ ես մատուցեցի քեզ: Բացի այդ կասկած չունեմ, որ դատախազը և միլպետը, իրենց իրավաբանական գիտելիքները բյուրոյում ցուցադրելու նպատակով, ցաքուցրիվ կանեն քո փաստարկները: Դու պատկերացնո՞ւմ ես, թե ինչ վիճակ կստեղծվի քեզ համար:

Զավեն Շարաֆյանը ֆիզիկապես զգաց, թե հողն ինչպես է երերում ոտքերի տակ:

- Գառնիկ Վարդանիչ,- ասաց նա ակամա դողացող ձայնով: - Եվ դուք թույլ կտաք- Եվ ձեր կարծիքով կոմունիստը, քաղաքային կոմիտեի անդամը, տրեստի կառավարիչը բարոյական իրավունք ունի՞ իջնելու հարստահարիչ սեփականատիրոջ մակարդակի…

Իրոք զարմանալի մարդ էր Գառնիկ Բադալյանը: Նրա դեմքին հանկարծ ուրախություն հայտնվեց:

- Ահա միակ կռվանը,- բացականչեց նա: - Բարոյակա՞ն- Բարոյական սկզբունքները խախտելու համար դատ չի հասնում, բայց բյուրո հասնում է: Ես արդեն հիասթափվում էի քեզանից և գոհ եմ, որ ի վերջո միակ հուսալի եզրակացությանը հանգեցիր: Բարոյական-. Ուրեմն քո հույսը, քո ապավենը ոչ թե օրենքն է, այլ կուսակցությունը, այնպես չէ՞: Եթե այդ մարդը անկուսակցական լիներ, ո՞վ կարող էր քար նետել նրա վրա: Այդպես է…

Զավեն Շարաֆյանին ուրիշ ոչինչ չէր մնում անել:

- Այդպես է ստացվում,- ստիպված համաձայնվեց նա: - Բայց ես գիտեի, որ անպատիժ չի կարող մնալ այն կուսակցականը, որը…

- Դա արդեն բյուրոյում կասես,- բավականին կոպիտ ընդհատեց նրան քարտուղարը: - Եվ լսիր, թե ես ինչ եմ ասում: Այս անգամ ոչ թե հանուն քեզ, պա՞րզ եմ խոսում, ոչ թե հանուն քեզ,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

այլ հանուն մեր թերթի հեղինակության, հանուն այն բանի, որ հերքում չլինի «Լուսաբացում», ես կնախապատրաստեմ բյուրոյի անդամներին, որպեսզի կոմունիստի բարոյական նորմերը խախտելու համար Վարազդատ Սիսոյանը խիստ նկատողություն ստանա: Եվ կստանա, ոչ միայն չափանիշները խաղտելու, այլ նաև նրա համար, որ օգտվելով մանկության ընկերոջ իր իրավունքներից, նա քո ներկայությամբ անզուսպ պահեց իրեն իմ նկատմամբ: Ես այդպիսի բաները չեմ ներում: Իսկ քեզ, ընկեր Շարաֆյան,- նա սևեռուն հայացքով նայեց տղայի աչքերին,- իսկ քեզ հայտարարում եմ վերջին զգուշացումը:

- Նույն հարցի համար և նրան, և ինձ,- խճճվեց խմբագիրը:

- Նույն հարցի համար նրան բյուրոյում, քեզ այստեղ: Դու արդեն սկսել ես իմ շուրջը պտտվել, ընկեր Շարաֆյան, և դա ինձ ոչ միայն դուր չի գալիս, այլև անհանգստացնում է: Ես տանել չեմ կարողանում, երբ իմ թիկունքում շնչառություն եմ զգում:

- Բայց ես ի՞նչ եմ արել, ընկեր Բադալյան: - Իհարկե իմանալով, թե ինչ է արել, չքմեղացավ խմբագիրը:

- Դու արդեն իմ ընկերներին ես հետապնդում: Դու չգիտեիր հա՞, որ Վարազդատ Սիսոյանն իմ ընկերն է, որ ես եմ նրան հրավիրել Երևանից և ես եմ ի վերջո տրեստի կառավարիչ դարձրել:

- Նամակը հո ես չեմ գրել, Գառնիկ Վարդանիչ- Եվ հետո, և հետո, գուցե և սխալ եմ, բայց չեմ ուզում, որ ձեզ ընկեր համարողները իրենց արարքներով ստվեր նետեն ձեր անվան վրա:

- Եվ փորձում ես փոխարենը ինքդ նետել այդ ստվերը՝ հասարակությանը նրանց մատնացույց անելով, թե տեսեք, տեսեք, ինչ կադրերով է շրջապատում իրեն Գառնիկ Բադալյանը: Այդ մանկական խաղերը ես ինստիտուտում արդեն չէի խաղում, սիրելի ընկեր Զավեն: Եվ այսուհետև խնդրում եմ չմտահոգվել իմ հեղինակությամբ: Միայն ես կարող եմ գնահատել իմ ընկերների արարքները և ներել կամ պատժել նրանց: Այդ թվում նաև քեզ: Այնպես որ համարիր, որ մենք վերջին անգամ ենք այդ թեմայով խոսում: Եթե մի անգամ էլ առանց ինձ նախապես տեղյակ պահելու, փորձես ձեռք տալ այն մարդկանց, որոնց ես եմ աշխատանքի հրավիրել, իմացիր, որ ես քեզ հետ խոսելու այլևս ոչինչ չունեմ: Եվ ինքդ վճռիր քո անելիքը: Եղա՞վ:

* * *

Խմբագիրը նայեց ձեռքի ժամացույցին: Ժամը հինգն էր: Ամենահարմար պահը քաղկոմ գնալու համար: Նա գիտեր, որ այդ ժամին Գառնիկ Բադալյանը մենակ է լինում, «Ֆիլիպ-Մորիս» է ծխում, ծրագրեր է մտմտում կամ կարդում է: Ըստ որում պատահականություն էր, թե չէ, բայց մի քանի անգամ նկատեց, որ նա կարդում է «Նշանավոր մարդկանց կյանքը» մատենաշարով լույս տեսած գրքերը: Մի անգամ՝ «Ռոբեսպիեր», մի անգամ «Մարատ», մի ուրիշ անգամ՝ «Նապոլեոն»:

Թյուրիմացություններից և զանազան տհաճ խոսակցություններից խուսափելու համար, Զավենը որոշեց քաղկոմի առաջին քարտուղարին ծանոթացնել ստուգայցի արդյունքների հետ: Եթե Բադալյանը նույն կարծիքին է, որ պետք է իր տեղը դնել այդ «հղփացած»

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Պեպանյանին, ապա նրան անտարակույս կուրախացնեն Մուշեղ Օթարյանի ձեռք բերած փաստերը: Իսկ եթե փոխել է մտադրությունը- Չէ, բացառված է, այդ դեպքում նա անմիջապես կզանգահարեր ու այնպիսի մի նոր հանձնարարություն կտար, որ ստուգայցի համար ոչ ժամանակ կմնար: ոչ էլ տրամադրություն: Միակ կասկածելի հանգամանքը՝ հրուշակագործ Օնիկի արտադրամասի թողարկած գաթաների պատմությունն է: Որ հարմար չէ քարտուղարից թաքցնել այդ փաստը, Զավենը լավ էր հասկանում: Վերջապես քանի՞ անգամ կարելի է փորձության ենթարկել Գառնիկ Բադալյանի համբերությունը: Այն էլ Վարազդատ Սիսոյանի հետ կապված պատմությունից հետո, երբ վերջին ահեղ նախազգուշացումը ստացավ: Եվ հետո, հանձինս Զավեն Շարաֆյանի՝ այդ մարդը հո իսկապես «օձ չի տաքացրել իր ծոցի մեջ», ինչպես բյուրոյի նիստի ժամանակ թունոտ ժպիտով մռլտաց տրեստի կառավարիչը: Ի վերջո ես հո խմբագիր չե՞մ դարձել Գառնիկ Բադալյանի դեմ կռիվներ մղելու համար: Մանավանդ որ նրա ձեռնարկումների և մտահղացումների գերակշիռ մասի հետ համաձայն եմ:

Եվ վերջապես, եթե ձեռքս խղճիս դնեմ, լավությունից և մեծահոգությունից բացի, ուրիշ ի՞նչ եմ տեսել նրանից: Ուրեմն ի՞նչ է ստացվում: Շուրջդ որքան ուզես ղեկավար միջակություններ կան, անբան և բթամիտ, իրենց տաք որջերում կծկված մարդիկ, և առաջինը Գրետա Սուրենյանի պես անբարոյական և անմաքուր անձնավորություններ, իսկ դու նրանց թողած՝ սուր ես ճոճում հազվագյուտ տաղանդավոր աշխատողի, գործարար ու սրտացավ ղեկավարի դեմ: Ինչո՞ւ: Որովհետև նա գործ է անում, իսկ գործի հետ երևում են նաև վրիպումները, գործի մեջ երբեմն ընդգծվում են մեծամտությունը, կողմնակալ վերաբերմունքը, դաժանությունը: Բայց գործի մեջ: Գործի համար: Ուրեմն միտք ունի՞ ինչ-որ Օնիկի պատճառով ընդհարվել մի մարդու հետ, որը քաղաք է կառուցում չխնայելով ոչ իրեն, ոչ էլ ուրիշներին:

Չէ, ինքնաարդարացման տառապալից մտորումների մեջ եզրակացրեց Զավեն Շարաֆյանը: Ես իրավունք չունեմ նրանից թաքցնելու այդ փաստը: Ուղղակի իրավունք չունեմ: Իսկ մնացածը թող ինքը որոշի:

Եվ անմիջապես էլ մտածեց, թե ի՞նչ է ստացվում: Ուրեմն թերթը միայն այնպիսի նյութեր պետք է տպագրի, որ դո՞ւր գան քաղկոմի առաջին քարտուղարին: Թերթը նրա՞ համար է հրապարակվում: Եթե այդպես է, կարելի էր միայն մի օրինակ տպագրել և ամեն ուրբաթ օր դնել նրա գրասեղանին: Թող կարդա և ուրախանա: Բայց չէ՞ որ այդ թերթին հազարավոր մարդիկ են սպասում: Մարդիկ, որոնք երբ որևէ տեղ արդարություն չեն գտնում, ուզում են, որ այդ արդարությունը գոնե թերթում լինի: Մարդիկ, որոնք թեև առանձնապես վստահ չեն, թե թերթի քննադատական հոդվածից կամ ֆելիետոնից հետո ամեն ինչ կուղղվի, բայց գոնե հանգստանում, սփոփվում են՝ համոզվելով, որ իրենցից բացի այդ թերությունները տեսնող ուրիշներն էլ կան և որ ղեկավարները ևս տեղյակ կդառնան ու գուցե թե միջոցներ ձեռք առնեն:

Ուրեմն ինչ անել՝ խորտակե՞լ նրանց հավատը թերթի և ընդհանրապես արդարության նկատմամբ: Հիասթափեցնել մի ամբողջ ժողովրդի՝ հանուն մի մարդո՞ւ: Թեկուզ աստծո կամ քաղկոմի առաջին քարտուղարի՞ …

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Էհ, հառաչեց Զավեն Շարաֆյանը, դժբախտությունն այն է, սակայն, որ երբ այդ մի մարդը վճռում է հաշվեհարդար տեսնել քեզ հետ, մի ամբողջ ժողովուրդը ոչ իմանում է այդ մասին և ոչ էլ ի վիճակի է պաշտպանելու քեզ:

Եվ նա, իր կարծիքով, կոմպրոմիսային վճիռ կայացրեց: Ինքը ոչ մի ծպտուն չի հանի և այդ փաստը կթողնի ամենավերջում: Ամենավերջում, երբ ուրիշ ելք չի լինի-Գուցե անցնի՞ …

Երբ իջնում էր աստիճաններով, Զավենը տեսավ, որ սանդուղքի բազրիքը բռնած, գլխիկոր վեր է բարձրանում ծեր դեղագործը:

- Բարև, հորեղբայր,- ողջունեց նա: - Հո ինձ մոտ չէի՞ք գալիս:

- Ընկեր Շարաֆյա՞ն,- գլուխը բարձրացրեց դեղագործը և խմբագիրը նկատեց, որ նա նոր ակնոց է կրում: - Քեզ մոտ էի գալիս, տղա ջան: Բա դու ո՞ւր ես գնում:

Զավենը չէր ուզում ետ դառնալ:

- Պայմանավորվել եմ, քաղկոմ եմ գնում,- ասաց նա: Հնարավոր չէ՞ , որ խոսենք ճանապարհին:

- Ավելի լավ,- ուրախացավ դեղագործը: - Կքայլեմ մի քիչ: Ամբողջ օրը ղեղատան մեջ փակված եմ:

Նա գնում էր ծերունավարի մանրիկ ու զգույշ քայլերով, կողքանց նայելով խմբագրին:

- Լսում եմ, հոբեղբայր:

- Զավեն ջան,- խնդմնդալով հարցրեց դեղագործը,- ինչքան ժամանակ է դեղատուն չես գալիս: Գլուխդ էլ չի՞ ցավում:

Զավեն Շարաֆյանը ժպտաց ու նոր միայն հիշեց, որ գլուխն իսկապես վաղուց չի ցավում:

- Չի ցավում, հորեղբայր:

- Թերթից էլ է երևում,- հանկարծ ասաց ծերունին,- տեսնում եմ, որ այնպիսի բաներ չես տպում, որ գլուխդ ցավի:

Ահա, խնդրեմ, ևս մի ընթերցող, որը երբ թերթում քննադատություն չի տեսնում, կորցրած է համարում բաժանորդագրության համար վճարած ռուբլիները:

- Շուտով կցավի,- տխուր ծիծաղով ձեռքը կրծքին խփեց խմբագիրը,- գլխացավը գրպանիս մեջ է,- ավելացրեց նա նոթատետրը ակնարկելով:

- Հա՞,- ուրախացավ դեղագործը,- ինչի՞ մասին է, Զավեն ջան:

- Խմբագրական գաղտնիք է,- դավադիր շշնջաց խմբագիրը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Որ այդպես է, մի գաղտնիք էլ ես ասեմ, տղաս: - Քիմկոմբինատի ծխի և գետը թափվող կոյուղու մեջ կյանքի համար խիստ վտանգավոր տոքսիկական թունավոր նյութեր կան:

Զավենը կանգ առավ:

- Ինչի՞ց եք ենթադրում,հորեղբայր:

- Այդ առաջ էր, որ ենթադրում էի, Զավեն ջան, հիմա համոզված եմ: Համոզված եմ և սարսափում եմ: Դու գիտե՞ս, որ գետում լողացող երեխաներից մի քանիսը ծանր հիվանդացել են:

- Լսել եմ,- Արմեն Զատիկյանին հիշեց խմբագիրը,- և դուք էլ էիք ասել ամիսներ առաջ: Բայց երբ հետաքրքրվեցի, հիվանդանոցից ասացին, թե հին սննդի հետ կապված ստամոքսի սովորական խանգարումներ են եղել:

- Նոր բան եմ ասում, տղաս,- հոնքերը կիտեց դեղագործը- Թույն է և չափազանց վտանգավոր:

- Չե՞ք նեղանա, եթե հարցնեմ՝ որտեղից գիտեք:

- Կնեղանամ,- ասաց դեղագործը: - Դեղատոմսերն ինձ մոտ են գալիս, չէ: Բժիշկները խաբում են հիվանդների հարազատներին, թե ստամոքսի սովորական խանգարումներ են, բայց դեղատոմս են գրում հակաթույնի համար: Եկ ինձ մոտ, ես քեզ դեղատոմսերն էլ ցույց տամ և բժշկական հանրագիտարանն էլ բացեմ քո առաջ: Ինքդ կարդա…

- Լավ, բայց ի՞նչ է մտածում սանէպիդ կայանը: Անհնարին է, որ նրանք չիմանան այդ մասին:

Ծերունին մռայլվեց:

- Իհարկե գիտեն, բայց ձայն չեն հանում՝ ժողովրդին իբր խուճապի չմատնելու համար:

- Բայց դա հո հանցագործություն է,- բարկացավ Զավենը:

- Իմ կարծիքով, ամենամեծ հանցագործությունը, որ կարող է լինել խաղաղ օրերին,- ասաց դեղագործը: - Սա մարդասպանություն է: Եվ մարդասպանություն է նաև իմ ու քո անտարբերությունը, Զավեն ջան: Բա տեսնենք ու լռե՞նք: Հասկանանք ու լռե՞նք:

Զավենը իրավունք չուներ դեղագործին հայտնելու Գլավլիտի և նրա անտրամաբանական, անհեթեթ արգելքների մասին:

- Ախր թերթն էլ ինչի՞ համար է, տղաս, որ այս հարցերը չբարձրացնի: Մի անգամ ասել եմ քեզ, նորից եմ ասում, մինչև որ քաղաքի բնակչությունը ճշմարտությունը չիմանա այդ մասին, մինչև որ չսարսափի ու աղմուկ չհանի, ոչինչ դուրս չի գա: Ախր ումի՞ց ենք թաքցնում: Մենք մեզանի՞ց.. Տեսնում, հասկանում ենք, որ թունավորում են մեզ և ասում ենք սուս, թող ոչ ոք չիմանա: Սա՞ ինչ դժբախտություն է:

Զարմանալի առեղծված է մարդու միտքը: Այդ հարցը Զավենին մի ակնթարթում տասնյոթ տարի ետ տարավ ու հասցրեց Երևան: Ինքն ու մայրը տրամվայով տեղ էին գնում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մեկ էլ Զավենը տեսավ, որ մի տղա մատները մոր գրպանն է մտցրել և անմիջապես բռնեց գողի ձեռքը: Ու հանկարծ տղան անսպասելի շշնջաց, «Սուս, արա , կհանեմ՝ կկիսենք»:

Զավենը հետո ամեն անգամ ծիծաղում էր այդ դեպքը հիշելիս: Շան որդի, իմ ունեցա՞ծն ես կիսում ինձ հետ: Եվ հիմա էլ հիշեց, բայց ծիծաղը չեկավ: Ավելի շատ՝ հայհոյել էր ուզում: Բայց ի՞նչ կարելի է անել, ինչ…

- Հորեղբայր,- ասաց նա,- դուք դեղատոմսերի հետ կապված այս ամբողջ պատմությունը մանրամասն գրեք և ձեր մտահոգությունները, ես կգամ կվերցնեմ: Տեսնենք, թե ինչ կարելի է անել:

- Կգրեմ, տղա ջան,- անմիջապես համաձայնվեց ծերունին: - Ես հո իմ մասին չեմ մտածում, ես ի՞նչ, կյանքս անց եմ կացրել արդեն, բայց չեմ կարողանում նայել թոռներիս աչքերին: Սիրտս կտրատվում է:

Նա շրջվեց ու գնաց ծերունական մանրիկ քայլերով, ոտքերը զգուշորեն դնելով հողին, իսկ Զավեն Շարաֆյանը շարունակեց ճանապարհը և քիչ անց քաղկոմի առաջին քարտուղարի առանձնասենյակում էր:

- Մոտ արի, մոտ արի,- սիրալիր հրավիրեց Գառնիկ Բադալյանը, ձեռքի գիրքը մի կողմ դնելով: - Մոտ արի ու ասա տեսնեմ ինչ կա-չկա խմբագրությունում: Որ չես երևում, հասկանում եմ, որ ամեն ինչ կարգին է: - Ծիծաղեց նա: - Իսկ հենց որ հայտնվում ես՝ գիտեմ որ աղմուկ կա և եկել ես քեզ ապահովագրելու:

Քարտուղարի տրամադրությունը ակնհայտ բարձր էր և Զավենը թույլ տվեց իրեն կատակով պատասխանել,

- Գառնիկ Վարդանիչ, բա դժվար չէ՞ այդպես ապրելը, երբ ամեն ինչ գիտեք: Ինձ թվում է, թե հետաքրքիր չի լինի:

Պատասխանելու փոխարեն քարտուղարը մատը թափ տվեց խմբագրի վրա և շեղեց խոսակցությունը:

- Ե՞րբ է ձեր հաշվետվությունը ընթերցողների առջև, Զավեն:

- Հաջորդ կիրակի, մշակույթի տանը, Գառնիկ Վարդանիչ:

- Իսկ նախապատրաստվե՞լ եք: Դու ես զեկուցելու, չէ՞:

- Այո, ընկեր Բադալյան, բայց բաժնի վարիչները նույնպես հերթով ներկայացնելու են իրենց աշխատանքային ծրագրերը:

- Լավ է, լավ, Խաչիկից գո՞հ ես:

Խաչիկ Լազարյանը այն ջահել հրահանգիչն էր, որին քարտուղարի խորհրդով Զավենը պրոպագանդայի բաժնի վարիչ նշանակեց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Աշխատող տղա է:

-Ես էլ կգամ, կլսեմ ձեզ,- գլխով արեց քարտուղարը: - Դե իսկ հիմա հանիր ծոցատետրդ:

Զավեն Շարաֆյանը ժպտաց, գրպանից հանեց նոթատետրն ու քարտուղարին ծանոթացրեց ստուգայցի արդյունքների հետ: Գառնիկ Բադալյանը լսում էր ուշադիր, գլուխը կախ, ձախ ձեռքի ափը ականջին փող դարձրած, ժպտում էր, քմծիծաղ էր տալիս, կիտում էր հոնքերը և տարուբերում ծնոտը: Իսկ երբ խմբագիրն ավարտեց, բարձրացրեց գլուխը.

- Ուրի՞շ…

- Մնացածը մանր-մունը խախտումներ են և դեռ տատանվում եմ՝ միտք ունի՞ տպագրելը թե ոչ,- անփութորեն ասաց Զավենը: - Իմ կարծիքով, չարժե վինեգրետ սարքել: Ավելի լավ է շեշտը դնել խոշոր փաստերի վրա:

Գառնիկ Բադալյանը մտածում էր:

- Բայց քո այդ Մուշեղը մի բան արժե, գիտե՞ս,- վերջապես խոսեց նա: - Ո՞նց է բացել հաստիքների այդ պատմությունը: Կեցցե: Կեցցեն նաև մեր բանվորները: Տեսնո՞ւմ ես, թե ինչ կարող են անել: Ախր նրանց ցավոտ տեղն է: Աշխատում են թույնի ու կրակի մեջ և կոպեկներ ստանում, իսկ չարչիներն իրենց քսակներն են լցնում առանց քրտնելու և տեղից շարժվելու: Եվ մարդկության ողջ պատմության ընթացքը այդ է ապացուցում: Աշխարհահռչակ զորավարներն անգամ վաշխառուների, լումայափոխների և մատակարարների գերին են եղել: Ահա, «Հաննիբալ» էի կարդում: Նույն պատմությունն է: Շրջկոմի ազնիվ քարտուղարներից և գործարանների ղեկավարներից տասն անգամ լավ են ապրում՝ երբ իրենց անունը գրել չգիտեն: Այնպես որ ողջունում եմ, շնորհակալություն եմ հայտնում և տերն եմ: Ժողովուրդը և հատկապես մեր բանվորությունը ուրախությամբ կընդունի թերթի ելույթը և թեթևացած շունչ կքաշի: Իսկ այդ չարչիներին ու նրանց հովփացած պետերին ես հերթով այստեղ կբերեմ ու այստեղից էլ անարգանքի պիտակը կպցնելով կուղարկեմ արտադրություն աշխատանքի: Դա ես քեզ խոստանում եմ:

Զավեն Շարաֆյանը գլխով արեց:

- Ե՞րբ ես մտադիր տպագրել:

- Հենց այս համարում:

- Ճիշտ ես անում,- հավանություն տվեց քարտուղարը: - Նման նյութերը հարկավոր է շատ արագ տպագրել: Քանի դեռ միջնորդները չեն հայտնվել: Մերժելը միշտ չէ, որ հեշտ է լինում:

- Նույնիսկ զարմանալի է, ստուգայցի բրիգադն այս անդամ այնպես է աշխատել, որ մինչև հիմա դեռևս ոչ մեկը չի հասցրել խնդրել կամ սպառնալ մեզ,- իր տարակուսանքը հայտնեց խմբագիրը:

- Ինձ վրա հաճելի տպավորություն թողեց այդ տղան, - ասաց քարտուղարը,- միայն թե ձեռքդ անընդհատ գլխին պահիր, որ չմեծամտանա: Կարծես թե հակումներ ունի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ջահել է,- գրեթե նախանձով ասաց խմբագիրը:

- Ոչինչ,- քմծիծաղ տվեց քարտուղարը: - Ասում են, թե ջահելությունը մի թերություն է, որ տարիների հետ անցնում է: Նրանն էլ կանցնի:

- Այո- տխրեց խմբագիրը: Նա քիչ մնաց ավելացներ, թե՝ ձեր օգնությամբ- բայց ժամանակին կծեց լեզուն:

- Ուրեմն հաջորդ բյուրոյի նիստին կհրավիրես նաև նրան: Ու ստուգայցին մասնակցած բանվորներին:

- Դատախազության քննիչի՞ն ևս…

- Անպայման- Հարսանիք է, թող նվագն էլ լինի,- սրամտեց Գառնիկ Բադալյանը:

Կարծես թե ճիշտ ժամանակն է հեռանալու, մտածեց Ջավեն Շարաֆյանը, գուցե հիմա, հենց հիմա հարևանցիորեն խոսի Հովհաննես Չուբարյանի փաստի մասին: Հենց այնպես, թեթևակիորեն ասի ու հեռանա…

Ընկեր Բադալյան-- սկսեց նա:

Բադալյանին թվաց, թե նա հրաժեշտ է տալիս:

- Հա, քիչ էր մնում մոռանայի,- ասաց նա: - Քո այդ տղան հայկական թխվածքների արտադրամաս էլ է մտել: Ինչի՞ համար:

Խմբագրի սիրտը տրոփեց արագ-արագ ու տհաճ:

- Այ քեզ բան,- զարմացավ նա,- երբ ասացի ընկեր Բադալյան, հենց այդ մասին էի պատրաստվում տեղյակ պահել: Ստուգայցի բրիգադը հայտնաբերել է, որ խանութներում վաճառվող հայկական գաթաների կշիռը ստանդարտին չի համապատասխանում: Յուրաքանչյուրը պետք է լինի երկու հարյուր գրամ, բայց հարյուր հիսուն գրամ է: Ստուգել են տարբեր խանութներում, ամենուրեք նույնն է:

- Նոր գործ է, Ջավեն,- տեղից բարձրացավ քարտուղարը,- մեքենաները դեռ ինչպես հարկն է չեն կարգավորվել: Եվ հետո դա արդեն արտադրության բնագավառն է և միտք չունի հարցերն իրար խառնել; Այդ դեպքում ինչո՞ւ Երևանում ստուգումներ չեք անցկացնում, որպեսզի պարզեք, թե ինչու նրանց արտադրած շոկոլադի սալիկներն ու կոնյակները ևս հաճախ չեն համապատասխանում ստանդարտին:

Ջավենը վշտացած տարուբերեց գլուխը:

- Ես ձեզ հավատացնում եմ, որ այդ կապակցությամբ ոչ մի հանձնարարություն չեմ տվել Մուշեղ Օթարյանին կամ բրիգադի անդամներից որևէ մեկին: Դա ինձ համար անակնկալ էր: Երբ Մուշեղը զեկուցեց՝ ես նույնիսկ վատ զգացի: Ես ինձ թույլ չէի տա առանց ձեզ տեղյակ պահելու որևէ տող տպագրել նրա և նրա գործի մասին: Քանի որ Հովհաննես Չուբարյանը

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

նախքան այդ ինձ ասել էր, որ դուք եք նրան հրավիրել մեր քաղաք՝ թխվածքների արտադրամաս բացելու:

Գառնիկ Բադալյանը ծիծաղեց.

- Ինձ պատմեց, պատմեց թե ինչպես է ակամա վախեցրել քեզ՝ երբ ձեռքը գրպանն է տարել թաշկինակը հանելու…

- Ի՞նչ ասեմ, Գառնիկ Վարդանիչ,- չուզենալով լրիվ միամիտի տեղ անցնել, ամենայն լրջությամբ ասաց Զավենը: - Մենք թաշկինակը սովորաբար կողքի գրպանում ենք պահում և ոչ թե ծոցագրպանում:

- Դե դա արդեն սովորության հարց է,- շարունակեց քարտուղարը: - Կարծեմ, Թբիլիսիում նորաթուխ ջահելները թաշկինակները հիմա հենց ծոցագրպանում են պահում: Բայց էականը դա չէ: Անկեղծ կասեմ, ըստ նրա պատմածի բոլոր դեպքերում ինձ դուր եկան և քո պահվածքը և զգուշությունը: Տիտանյան եղբայրների սարքած կեղտոտ պրովոկացիայից հետո դու միանգամայն իրավունք ունես ավելի ուշադիր ու զգոն լինելու անծանոթ մարդկանց նկատմամբ: Բայց չափը, չափը, Զավեն: Եվ հումորի զգացումը: Մարդը քեզ ասում է, թե ես եմ խնդրել նրան, որ իր թբիլիսյան բարեկեցիկ կյանքը թողնի ու այս խուլ անկյունը գա աշխատելու, իսկ դու կասկածում ես, թե նա պատրաստվում է կաշառել քեզ: Տրամաբանություն չկա:

- Ինչ ասեմ,- Իրոք չիմանալով ինչ ասել՝ ձեռքերը տարածեց խմբագիրը:

- Ես, իհարկե, հավատում եմ քեզ, որ դա պատահականություն է,- ասաց Բադալյանը,- բայց դու այս ամենին հիմա էլ Օնիկի տեսադաշտից նայիր: Եկավ ինձ մոտ. թե՝ տեսնո՞ւմ եք ինչ է ստացվում, Գառնիկ Վարդանիչ: Ինչ է՝ ընկեր Շարաֆյանը բարկացավ ու կասկածեց ինձ վրա, հիմա անմիջապես մարդ է ուղարկել խանութները, որպեսզի մեր գաթաները կշռեն: Եթե թերթի խմբագիրը կռիվ է սկսել, ուրեմն ինչ էլ անեմ՝ հետապնդելու և խանգարելու է ինձ: Ես էլ ի՞նչ տրամադրությամբ նորանոր թխվածքներ ստեղծեմ: Ավելի լավ է գլուխս առնեմ կորչեմ այստեղից:

- Գառնիկ Վարդանիչ, նա իրավունք չուներ այդպես խոսելու, - չդիմացավ խմբագիրը: - Երևի նույնիսկ ճիշտ չէր իմ արածը, բայց ես նրան ասացի գնա ու աշխատիր հանգիստ, որովհետև Գառնիկ Բադալյանի բարեկամը նաև իմ բարեկամն է: Կներեք, խնդրում եմ…

Քարտուղարը ժպտաց.

- Բարեկամ համարելն իհարկե մի քիչ շատ է,- ասաց նա: - Բայց մտքի համար շնորհակալ եմ քեզ:

Նա խոսելու ընթացքում քայլում էր սենյակում և այդ պահին հաշվենկատորեն թե պատահաբար կրկին Լենինի բրոնզե կիսանդրու կողքին հայտնվեց: Սովոր շարժումով նա շոյեց արձանիկը, ասես փոշի էր վերցնում ու առանց Զավենին նայելու հարցրեց.

- Տղաս, հնարավո՞ր է, որ դու կասկածես իմ ազնվության վրա: Թեկուզ հենց այդ հրուշակագործի առիթով:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավենը ամեն ինչ սպասում էր, բայց ոչ այդ հարցին:

- Երբեք,- գոչեց նա սրտանց: - Ոչ մի վայրկյան:

- Իսկ երբևէ լսե՞լ ես, որ որևէ մեկը, թեկուզ նրանցից մեկը, որոնց ես պատժել ու նույնիսկ հեռացրել եմ աշխատանքից և կուսակցությունից՝ նման բան ասի: Միայն թե անկեղծ, խնդրում եմ…

- Ոչ մեկից ես նման հայտարարություն չեմ լսել, ընկեր Բադալյան: Եվ նույնիսկ ուրիշ որևէ մեկից չեմ լսել, թե նրան ինչ որ մարդ նման բան ասել է,- ակամա ձեռքը սրտին դրեց խմբագիրը: - Քանի որ ստիպում եք անկեղծ լինել, ուրեմն կասեմ, և մենք այդ մասին մի անգամ էլ ենք խոսել, որ ուրիշ մեղքեր վերագրում են, բայց ազնվու…

- Որ ես դաժան եմ, դիկտատոր եմ, ջարդարար եմ…

- Այո:

- Թող ասեն,- թվաց թե նույնիսկ ուրախացավ քարտուղարը: - Բայց ո՞ւմ նկատմամբ եմ դաժան՝ պորտաբույծների, անբանների դեմ, Զավեն: Տես, այսօր ես ո՞ւմ եմ պաշտպանության տակ առնում՝ Հովհաննես Չուբարյանին: Իսկ ո՞վ է նա: Ժողովրդի լեզվով ասած՝ «ցեխավիկ»: Դու կարծում ես ես չգիտե՞մ, որ նա խախտումներ է անում և օգուտներ ունի իր արտադրությունից: Միամիտ չլինես: Բայց նա այն մարդն է, որ փաստորեն առանց մեզ քիչ թե շատ նեղություն տալու, մի քանի ամսում շատ ավելի մեծ աշխատանք կատարեց, քան մեր տեղարդկոմբինատը՝ իր դիրեկտորով ու տեղակալներով, իր փքված ապարատով ու բանկային հաշիվներով միասին վերցրած: Նա գործ է անում, տղաս: Հացից բացի իր կենսագրության մեջ առաջին, անգամ մեր քաղաքը սեփական թխվածք է արտադրում: Երբ Օնիկը եկավ ինձ մոտ, հետը նոր արտադրանքի նմուշներ էր բերել՝ խաչապուրի և փախլավա: Ստիպեց, որ համը տեսնեմ: Սկզբում հրաժարվում էի, իսկ հետո փորձեցի ու չդիմացա, լրիվ կերա: Արտակարգ համեղ թխվածքներ են: Զգուշացրի, որ նախնական արտադրանքը անմիջապես քիմկոմբինատ ուղարկի, թող առաջինը մեր բանվորները վայելեն: Ահա թե ով է հրուշակագործ Օնիկը: Ես շատ կզարմանայի, եթե նա չգողանար: Գիտե՞ս թե պետականորեն սահմանված նրա աշխատավարձը որքան է, Զավեն, հինգ հարյուր իննսուն ռուբլի: Մի զույգ վատ կոշիկի գին: Երբեմն մտածում եմ, թե մեր վերին ֆինանսական և պլանավորող մարմիններում թշնամիներ են նստած և պրովոկատոր դրդիչներ, որոնց միակ նպատակն է դժգոհություն հարուցել մարդկանց մեջ և մղել գողության: Ուրիշ ինչպե՞ս բացատրես այն հանգամանքը, որ միլիոնների շրջանառություն ունեցող պահեստի պետի համար սահմանել են երեք հարյուր ռուբլի աշխատավարձ: Երեք հարյուր ռուբլի, որ նրան չի բավականացնի նույնիսկ «Ավրորա» ծխելու համար: Դու ինձ լավ լսիր, ես ամենևին չեմ արդարացնում նրանց արարքները և նույնիսկ չեմ ընդունում այն ասացվածքը, թե մեղր ծախողը մատը պիտի լիզի: Եթե մեղր ծախողն ապահովված լինի ամեն ինչով, մատը հանգիստ կթողնի: Բայց ես ստիպված եմ երբեմն աչք փակել, ձևացնել, թե որոշ բաներ չեմ նկատում, եթե այդ մարդը տաղանդավոր է, գործարար է և ձեռներեց: Եթե նա մեր քաղաքին, ասենք, հարյուր հազար ռուբլու օգուտ է բերում, թող հազարը հանգիստ իր գրպանը դնի: Եթե միլիոնի օգուտ է բերում, թող տասը հազարը գրպանի: Նա ավելի սարսափելի չէ, քան այն, երբ մեկը ուրիշի վաստակի փշրանքներով է ապրում և ոչ իր ընտանիքն է պահում, ոչ էլ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

պետությանը: Ազնիվ համարվող այդպիսի մարդիկ չարիք են հասարակության համար: Որովհետև ոչինչ չեն ստեղծում, այլ միայն սպառում են: Քաղկոմի առաջին քարտուղարը ժպտաց,

- Երևի զարմանում ես, չէ՞, որ կուսակցության ղեկավար աշխատողից նման խոսքեր ես լսում: Դժբախտաբար, ես այս մտքերը առայժմ միայն քեզ մոտ կարող եմ արտահայտել և երկու-երեք այլ ընկերների մոտ: Բայց հիշիր, կգա մի օր, երբ այդ մասին մենք բարձրաձայն կխոսենք: Եվ կհրապարակենք թերթում,ռադիոյով և հեռուստատեսությամբ, թե՝ լսեցեք, ով շնորհք ունի, եռանդ ու խելք ունի և կարող է մեծ օգուտներ բերել տնտեսությանը, թող նախապես այդ օգուտի երեք տոկոսն իր տուն տանի: Թող հինգ տոկոսը տանի: Որովհետև չի կարելի փակել պապակ հողին կյանք բերող, հողը ծաղկեցնող հորդառատ աղբյուրի ակը, այն մտավախությամբ, թե ջրվորը մի կում կանի աղբյուրից: Այդ կեղծ, վնասակար մտավախությունը չէ՞ պատճառը, որ ողջ երկրով մեկ կյանքը կանգ է առել կարծես: Նոր ղեկավարությանը, հատկապես Խրուշչովը, հիանալի հասկացել են այդ և փորձում են զանազան որոշումներով ոգևորել, խթանել, ստեղծագործ աշխատանքի մղել ժողովրդին: Բայց, ցավոք սրտի, գրեթե ոչինչ չի ստացվում: Մարդկանց մեջ այնպես են խեղդել ու սպանել նախաձեռնությունը, գործարարությունը, ձեռներեցությունը, որ այլևս նորի նկատմամբ վստահություն չկա և երկար ժամանակ դեռ չի լինի, մինչև որ հրապարակ չգա նոր սերունդը: Մարդկանց հոգուց չի վերանում ահը, որովհետև տարբեր ու իրար հակասող բազմաթիվ որոշումներ են ընդունվել, միևնույն արարքի համար մեկ խրախուսել ու պարգևատրել են, մեկ էլ դատապարտել: Եվ երբեք պարզ չի եղել, թե ինչ կլինի հետո: Դրա համար էլ մարդիկ գերադասել են կծկվել, փակվել իրենց պատյանի մեջ, ոչինչ չանել, ոչինչ չստեղծել: Որովհետև միակ ապրելու անվտանգ ձևը դա է: Հասկացա՞ր, թե միտքս ուր եմ տանում, Զավեն Շարաֆյան: Հիմա հայտնվել են Օնիկը և նրա նման մարդիկ: Դա նոր սերունդն է, որն իր նախորդների կասկածներն ու մտավախությունը չունի: Նրանք զարմանում են, թե ինչո՞ւ չի կարելի օգուտ ստանալ այնտեղ, որտեղ դրա հնարավորությունները կան: Մի քանի օր առաջ ինձ մոտ եկավ անծանոթ մի մարդ: Հիմա արդեն գիտեմ՝ Պարգև է անունը, Սուփրիկյան: Այդ անունը դու էլ հիշիր: Եկավ ու հարցրեց, թե ի՞նչ կարծիք ունեք, եթե ես տարեկան ութ հարյուր հազար ռուբլի մուծեմ ձեր բանկը: Փոխարենը ի՞նչ եք ուզում, հարցրեցի: Ոչինչ, ասաց նա: Միայն խնդրում եմ կարգադրել, որ ձեր սպանդանոցը ոսկորները ոչ թե այրի աղբավայրում, այլ ինձ տա: Այդքան բա՞ն: Այդքան բան: Իսկ փոխարենն, ասում է, ես այդ դեն շպրտվող ոսկորից հուշանվերներ կպատրաստեմ, սանրեր, վարսակալներ, մոխրամաններ, կոճակներ, զանազան զարդեր, որոնց պակասը ձեր քաղաքի բնակիչները զգում են:

- Շատ հետաքրքիր է,- գլուխն օրորեց խմբագիրը: - Զարմանալի է, թե ինչպես մինչև հիմա ոչ մեկի մտքով չի անցել այդ բանը: Իսկապես, ոսկորները թափում են, Գառնիկ Վարդանիչ, և սպանդանոցի համար դա էլ լուրջ պրոբլեմ է:

- Դրա համար էլ անմիջապես զանգահարեցի տեղարդկոմբինատի դիրեկտորին և կարգադրեցի բոլոր պայմաններն ստեղծել՝ Պարգև Սուփրիկյանի համար: Հիմա, ինչ է, ես չգիտե՞մ, որ այդ տղան շահ է ստանալու իր արտադրությունից: Թող ստանա: Բայց չէ՞ որ հազարապատիկ մեծ շահ մենք ենք ստանալու՝ ժողովուրդը հնարավորություն կունենա գեղեցիկ զարդեր ու հուշանվերներ ձեռք բերելու, իսկ քաղաքի եկամուտը կավելանա: Էլ չեմ խոսում բացված աշխատանքային նոր տեղերի, ժողովրդական արհեստների զարգացման հնարավորությունների և մնացած ոչ պակաս կարևոր այլևայլ և հանգամանքների մասին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գառնիկ Բադալյանը շրջեց, շրջեց առանձնասենյակում և ինչպես իր բոլոր զրույցներն էր սիրում ավարտել, եկավ ու կանգ առավ խմբագրի առաջ:

- Հիմա ի՞նչ ես կարծում, սիրելի ընկեր Շարաֆյան, ես, անձամբ ես՝ Գառնիկ Բադալյանս, այդ Պարգև Սուփրիկյանից, Օնիկ Չուբարյանից և նրանց նման ուրիշներից որևէ օգուտ ունե՞մ: Որևէ անձնական շահ:

- Ոչ թե կարծում, այլ համոզված եմ, որ չէ,- ժպտաց խմբագիրը:

- Դե ուրեմն այդ փաստը կհանես ստուգայցի նյութից:

Նա նկատեց, որ իր առաջարկը առանձնապես մեծ ոգևորություն չպատճառեց խմբագրին:

- Քեզ որևէ հա՞րց է մտահոգում, Զավեն:

- Այսօր անկեղծության օր է, Գառնիկ Վարդանիչ, թույլ տվեք անկեղծ ասել, որ մի քիչ քաշվում եմ այդ տղայից: Մուշեղ Օթարյանից: Դե, գիտեք, նոր մարդ է, նա էլ ժուռնալիստների նոր սերունդն է: Որբ չի մեզ նման: Մայր էլ ունի, հայր էլ: Ըստ որում հայրը պաշտոնյա է ֆինանսների մինիստրությունում: Չգիտի ինչ բան է կարիքը, քաղցը: Ուրիշ տեսակ է մտածում: Դուք էլ եք նկատել, որ մի քիչ ինքնասածի է և չափից ավելի մեծ կարծիք ունի իր ժուռնալիստական առաքելության մասին: Ժուռնալիստի պատվախնդրության և վարվելակերպի մասին: Ես չգիտեմ, թե ինչպես կընդունի իմ առաջարկը- Մի խոսքով, չգիտեմ թե ինչ պետք է ասեմ…

- Իսկ դու խոսիր նրա հետ այնպես, ինչպես ես խոսեցի քեզ հետ: Անկեղծ ու բաց: Նա ոչ մի իրավունք չունի չհավատալու, չվստահելու քեզ: Իսկ եթե չհասկանա և փորձի եղջյուրներ ցույց տալ, թող ականջին օղ անի, որ խմբագիրը միշտ էլ իրավունք ունի փոփոխություններ կատարել և խմբագրել նյութը, որովհետև թերթի տերն ու պատասխանատուն խմբագիրն է: Էլ չեմ խոսում կուսակցության քաղկոմի մասին, որի օրգանն է այդ թերթը: Եղա՞վ:

- Եղավ, ընկեր Բադալյան, կաշխատեմ հասկացնել,- գլխով արեց խմբագիրը,- չէի ցանկանա ուժի դիրքերից…

- Մեկ-մեկ դա էլ պետք է,- ծիծաղեց քարտուղարը: - Նույնիսկ պետությունները, իրենց ողջ դիվանագիտությամբ, երբ իրարից որևէ բան են խնդրում, հենց նույն այդ ուժի դիրքերից են խնդրում:

- Կանեմ, Գառնիկ Վարդանիչ, մանավանդ որ իմ թվարկած մանր-մունր փաստերից մեկն էլ ես եմ ուզում հանել: Իհարկե ձեր գիտությամբ:

- Հանիր և կարող ես չասել, թե ինչ փաստ է դա,- ասաց Բադալյանը:

- Չէ, ուզում եմ ասել,- համառեց Զավենը: - Ստուգայցի ժամանակ Մուշեղ Օթարյանը իր խմբով նաև քաղխորհրդի բուֆետն է մտել և արձանագրություն կազմել բուֆետապան կնոջ վրա…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Մաքրուհո՞ւ…

- Անունը չգիտեմ: Միայն ազգանունն էր գրված: Միշտ թաց աչքերով, նիհար, տարեց կին է:

- Մաքրուհին է, Մաքրուհին, ես վաղուց եմ ճանաչում: Հետո՞…

- Արձանագրության մեջ նշված է, որ մթերքներ բաց թողնելիս քառասուն ռուբլու մեջ ութսուն կոպեկ ավել է հաշվել:

- Հիմա այնպիսի մարդ է միջնորդել, որ մերժել չե՞ս կարողանում:

- Չէ, Գառնիկ Վարդանիչ, ոչ ոք էլ չի միջնորդել: Բայց հենց առաջին օրը, երբ այս քաղաքն էի եկել, շատ քաղցած էի ու բուֆետ մտա, այդ կինը ինձ հաց տվեց և երեք հատ խաշած կարտոֆիլ, որ տնից էր բերել իր համար- ու չվերցրեց փողը:

Գառնիկ Բադալյանը թափահարեց գլուխը ու մի տեսակ չար, օտարոտի հայացքով նայեց խմբագրին:

- Դա՞ ինչ հարցնելու բան է: Եթե որևէ հարցում մարդ մնալու թեկուզ փոքր ինչ հնարավորություն կա, պետք է մարդ մնալ: Հանիր:

* * *

Զավեն Շարաֆյանը այդ օրը վերջնականապես համոզվեց, որ ամենավտանգավորն այն է, երբ մարդն ինքն իրեն է աչքով տալիս: Անմիջապես կատարվում է: Գառնիկ Բադալյանին ասաց, թե տարօրինակ բան է, որ միջնորդներ չեն գալիս: Եվ սկսվեց: Դեռ առավոտյան, երբ աշխատանքի եկավ, տեսավ, որ ընդունարանը լեփ-լեցուն է: Ստուգայցի զոհերն էին: Նրանց մի կերպ ճանապարհեց, թե չէ, հայտնվեցին միջնորդները: Այնպիսի մարդիկ, որ նրա մտքով անգամ չէին անցնում: Նշան Իգիթյանը եկավ, խոսեց պետական նոտարի դժվար ու պատասխանատու աշխատանքի մասին և վերջում խնդրեց ներողամիտ լինել իր հարևանի նկատմամբ, որն աշխարհի ամենա ազնիվ պահեստապետն է և այդ օրը լրիվ թյուրիմացաբար է արտասահմանյան ապրանքներ վաճառել պահեստից: Հետո Նիկողայոս Սևյանը եկավ, ներկայացրեց այն թեզերը, որոնց հիման վրա ուզում է նյութ գրել «Լուսաբացի» համար՝ «Գիտելիք» ընկերության գործերն ու հոգսերը» վերնագրով և հարևանցիորեն առաջարկեց ստուգայցի նյութերից եթե հնարավոր է հանել գարեջրի կրպակին վերաբերող մասը: «Քրոջս տղան է գարեջրավաճառը, ասում է, բա դու այնքան հեղինակություն չունե՞ս քո նախկին հիմնարկում, որ քո խաթեր ինձ ձեռք չտան»:

Շատ անսպասելի էր Հեղինե Բլբուլյանի այցը: Նա թավշե սև զգեստի մեջ կիսով չափ տեղավորված շքեղ կուրծքը դրեց գրասեղանին, ներկված, տամուկ աչքերը խմբագրին հառեց ու շշնջաց.

- Ինձ չօգնեցիր, ցավդ տանեմ: Մի ֆելիետոն չգրեցիր իմ թշնամիների դեմ, որպեսզի ինձ նորից դիրեկտոր նշանակեն: Չգրեցիր, չէ, ցավդ տանեմ: Երկու տարի է պատասխանատու

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

գործ չեն տալիս: Դե հո փողոցները չէի ընկնելու: Բա ես ինձ թո՞ւյլ կտամ: Իմ անունը, իմ պատիվը… Երեխաներիս մի կերպ պահելու համար, ամոթից խեղդված, բանջարեղենի խանութն եմ յոլա տանում, այն էլ ձեր տղաները եկել, բռնել են: Մեզ մոտ կաղամբն ու բազուկը ե՞րբ են կշռել, ցավդ տանեմ, միշտ էլ աչքաչափով են տվել, էլի: Աչքաչափով առնում ենք, աչքաչափով տալիս ենք…

- Սպասիր, սպասիր,- ընդհատեց նրան խմբագիրը՝ ինչ-որ ցուցակ թերթելով: - Բայց բանջարեղենի խանութում ուրիշ մարդ է աշխատում՝ Մանյա Գրիգորյան:

- Մանյայի հետ կոլխոզ ենք, ցավդ տանեմ:

- Ի՞նչ եք…

- Կոլխոզ ենք, կոլխոզ, կոլխոզ ենք աշխատում: Վնասն էլ, օգուտն էլ կիսում ենք:

- Բայց դուք հաստիքով ձևակերպված չեք:

- Ի՞նչ նշանակություն ունի, ցավդ տանեմ, ես ապրանքը բերում եմ, նա էլ վաճառում է: Ի՞նչ անեմ, ամոթից խեղդված: Որ դու մի լավ ֆելիետոն գրեիր, հո այս օրը չէի ընկնի: Ուրեմն ես չկամ, չկամ, մի փչացած Գրետա Սուրենյանի չափ էլ չկամ, որ իր սիրածի հետ քաղաքի տերն է դարձել: Ես որ ուզենայի, տասը սիրած կունենայի, բայց հիմա գազար եմ ծախում ամոթից խեղդված: Հիշո՞ւմ ես ինչքան խնդրեցի, վերջը ֆելիետոն չգրեցիք՛ չէ՞:

- Չգրեցի,- գլուխը բռնեց խմբագիրը:

- Հիմա էլ մի գրի, ի՞նչ կլինի, ցավդ տանեմ: Ախր Մանյայի հետ կոլխոզ ենք…

Զավեն Շարաֆյանը մի քանի անգամ փորձ կատարեց փախչելու խմբագրությունից: Բայց դա նրան չհաջողվեց: Հենց դռների մեջ բռնում ու հետ էին բերում: Իսկ երբ վերջապես պատրաստվում էր դուրս գալ առանձնասենյակից, Մուշեղ Օթարյանը հայտնվեց ինչ-որ թղթեր ձեռքին:

- Զավեն Աշոտիչ, վերջացրեցի,- ասաց նա ինքնագոհ ժպիտով:

Զավեն Շարաֆյանը ակամա սրտնեղություն զգաց:

- Վաղը, հա՞: Ես շատ հոգնած եմ, Մուշեղ:

- Թող լինի վաղը,- անմիջապես համաձայնվեց տղան: - Որովհետև խոստացել էի այսօր հանձնել, ուզեցի ճշտապահ լինել:

Նա շրջվեց, որ հեռանա:

- Սպասիր,- ձայնեց Զավենը: - Տուր տեսնեմ:

Ինչ ուզում է, թող լինի, հանկարծ մտածեց նա: Օրը խելագար սկսվել է, թող խելագար էլ վերջանա: Ես հենց հիմա նրան կասեմ, որ նյութից պետք է հանեմ այդ փաստերը: Ի՞նչ կարող

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

է անել: Կնեղանա՞, կվիրավորվի՞, կխոսի ժուռնալիստի պատասխանատվության, ազնվության, արժանապատվության մասին: Կսպառնա բողոքել վերադա՞ս մարմիններին: Թող անի: Թող նեղանա, վիրավորվի, խոսի, սպառնա: Մի՞թե ես այդ բոլորը չեմ արել, երբ Մկրտիչ Զուլոյանը, իհարկե ոչ միշտ, բայց երբեմն-երբեմն խմբագրել, խուզել, կրճատել է իմ հոդվածները: Կամ մի՞թե չեմ վիրավորվել ու բորբոքվել, երբ Գառնիկ Բադալյանը զանազան պատճառաբանություններով ինձ ստիպել է ոչ միայն կրճատումներ կատարել, այլև ընդհանրապես հանել նյութը, այլև ընդհանրապես չգրել: Ինչի՞ եմ հասել ես: Բան չունեմ, Մուշեղ Օթարյանը լավ տղա է, բայց ինձնից ինչո՞վ է լավ, որ ես ստիպված եմ եղել նահանջել ու զիջումների գնալ: Իսկ ի՞նքն ով է, երկնքի՞ց է իջել: Հիմա ես կասեմ ու կտեսնենք, թե ինչով կվերջանա մեր կռիվը: Անպայման Գառնիկ Վարդանյա՞նը պետք է հիշեցնի, որ ի վերջո ես եմ խմբագիրը և ես եմ պատասխանատու թերթի համար: Այսպես է նպատակահարմար և վերջ:

- Մուշեղ,- ասաց նա ու ինքն էլ զարմացավ, որ իր ներքին կռիվներից ու սրտապնդումներից հետո անգամ ձայնը վճռական չի հնչում: - Դու բոլո՞ր փաստերն ես ընդգրկել հոդվածի մեջ:

- Բոլոր փաստերը,- հաստատեց լրագրողը:

- Ոչ մի փաստ, թեկուզ մանրուք, դուրս չե՞ս թողել:

- Ոչ մի,- ասաց Մուշեղ Օթարյանը: - Ուղղակի խոշոր փաստերն առանձնացրել եմ, իսկ մանրիկները թվարկել եմ պարզապես:

Ինչ ուզում է՝ թող լինի:

- Մուշեղ,- ասաց խմբագիրը: - Քո հոդվածի մեջ երկու փաստ կա, որ ես ուզում եմ հանել: - Այդպես է պետք:

Մուշեղ Օթարյանը խմբագրին նայեց խիստ զարմացած: Ահա , հիմա կսկսի…

- Հանեք, ընկեր Շարաֆյան,- ուսերը թոթվեց տղան:

Զարմանալու հերթը խմբագրին հասավ:

- Չես էլ հետաքրքրվում, թե ի՞նչ փաստեր են:

- Կհանեք, կտեսնեմ, էլի, Զավեն Աշոտիչ: Եթե ասում եք այդպես է պետք, ուրեմն այդպես է պետք:

Զավենը չգիտեր ինչ անել: Օթարյանի պատասխանը այնքան անակնկալ էր նրա համար, որ շփոթվեց:

- Իսկ ինձ թվում էր, թե կվիրավորվես, կառարկես,- խոստովանեց նա:

- Ե՞ս,- զարմացավ Մուշեղը: - Խմբագիրը դուք եք, ընկեր Շարաֆյան, և ինձնից շատ լավ գիտեք, թե ինչն է կարևոր և ինչը անկարևոր, ինչը պետք է հանեք և ինչը թողնեք: Ինչու պիտի վիրավորվեմ: Ես ձեր հանձնարարությունը կատարել եմ: Մնացածը ձեր գործն է, ինչ ուզում եք՝ արեք, Զավեն Աշոտիչ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Տիգրանը չկար, Զավեն Շարաֆյանը նրան տպարան էր ուղարկել՝ Գարեգին Չալյանի խնդրանքով, ինչ-որ տեղ ուներ գնալու:

Եվ Զավեն Շարաֆյանը քայլերն ուղղեց տուն: Քայլում էր, հիշում իր ապրումները և անցած օրերի և քիչ առաջ, երբ Մուշեղ Օթարյանը ներս մտավ, հետո նրա անխռով պատասխաններն էր հիշում, կանգ էր առնում, օրորում գլուխը ու փոթկում էր: Հետո նորից էր քայլում, նորից էր հիշում, կանգ էր առնում, օրորում էր գլուխն ու փոթկում էր ակամա՝ առանց ուշադրություն դարձնելու անցորդների տարակուսած հայացքներին:

Այ քեզ Մուշեղ Օթարյան: Այ քեզ ժուռնալիստների նոր սերունդ:

Ինչքան հեշտ է նրանց համար ապրելը, զարմացած ու նաև նախանձով մտածում էր Զավեն Շարաֆյանը:

* * *

Երևի պարտադիր չէ, որ անպայման նոր տարվա գիշերը մրմնջաս քո ամենամեծ ցանկությունը, որպեսզի այն կատարվի: Գուցե աստղերն են երկնքում դասավորվում հատուկ, գուցե և զանազան կենսահոսանքներ են ազդում հեռու տարածությունների վրա, կամ գուցե եթե իսկապես շատ ես ցանկանում որևէ բան ի վերջո իրականանում է: Զավեն Շարաֆյանը պատրաստ էր հավատալ բոլոր ենթադրություններին, որովհետև նրա մեծ ցանկությունը կատարվեց: Եվ կատարվեց այնքան անսպասելի, որ նրան մի պահ թվաց, թե խաղում են հոգու հետ:

Նոր էր աշխատանքի եկել, երբ հեռախոսը երկար ու անընդհատ զնգաց: Հեռախոսավարուհին ասաց, թե պատասխանեք Երևանին: Իսկ Երևանն էլ այնպիսի մի հարց տվեց, որ Զավենին թվաց, թե ինչ-որ մեկը կատակում է:

- Ընկեր Շարաֆյան, կգնա՞ս Լենինգրադ:

- Ո՞ւր,- ականջներին չհավատաց խմբագիրը, որովհետև վերջին օրերին քուն թե արթուն՝ ուղեղի մեջ Լենինգրադն էր:

- Լենինգրադ:

- Ո՞վ է խոսում,-- գլուխը կորցրեց Զավենը:

- Կենտկոմի պրոպագանդայի բաժնից Դավթյանն է: Ձայնս չճանաչեցի՞ր, Զավեն:

- Ներողություն, լավ չէր լսվում,- արդարացավ խմբագիրը: - Ասում եք՝ Լենինգրա՞դ…

- Հա, քաղաքային թերթերի խմբագիրների խորհրդակցություն է: Որոշեցինք քեզ ուղարկել:

Զավեն Շարաֆյանը քիչ էր մնում շնչահեղձ լինի հուզմունքից:

- Շատ, շատ շնորհակալություն, ընկեր Դավթյան: Ե՞րբ է խորհրդակցությունը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Վաղը չէ մյուս օրը պետք է այնտեղ լինես: Հենց խմբագրությունից էլ գործուղում վերցրու ու գնա: Եթե պետք է՝ խոսենք քարտուղարի հետ:

- Միտք չունի,- ասաց Զավենը, մտածելով, թե ով գիտի ինչ կասի նրան քարտուղարը: - Ես տեղյակ կպահեմ:

- Դե տես: Հնարավոր է, որ ելույթ տան քեզ: Բոլոր դեպքերում պատրաստ եղիր:

Զավենն առաջին հերթին Երևան պատվիրեց:

- Մեծ եղբայր,- ասաց նա Մկրտիչ Զուլոյանին,- ինքնաթիռի մի տոմս է պետք վաղը չէ մյուս օրը Լենինգրադ թռչելու համար:

- Իսկ օպերայի տոմս պետք չէ՞,- խռպոտ ծիծաղեց Մկրտիչը:

- Պետք է, ախպեր ջան, բայց դա քո ուժերից վեր է,- ծիծաղեց նաև Զավենը:

- Ինքնաթիռի տոմսը կլինի միայն մի պայմանով,- ասաց Մկրտիչը: - Եթե հետդ բանջար բերես:

Նա այնպես արտասանեց «բանջար» բառը, կարծես հառաչում էր:

- Մայրաքաղաքի ազդեցությունը պարզ զգացվում է,- կատակեց Զավենը: - Առանց կաշառքի ոչինչ չեք անում…

- Է, Զավեն ջան, մեզանից բան դուրս չի գա,- հեռախոսալարի մյուս ծայրում փնչաց Մկրտիչը: - Հո զուր չեն ասել, թե անճարն է կերել բանջարը…

- Իսկ երեկոյան նա իրոք Երևանում էր: Նստել էր Մկրտիչ Զուլոյանի երեք սենյականոց նոր բնակարանի հյուրասենյակում, տապակած երշիկ ու կարտոֆիլ էր ուտում և ծիծաղելով դիտում, թե ինչպես է Մկրտիչը մատաղի նման կնոջն ու երեխաներին բաժանում եղինջն ու փիփերթը, որ իր ձեռքով էլ եփել էր:

- Քեզ այսքանը հերիք է, քեզ էլ, սա կշտանալու բան չէ: Բանջարն այնպես պիտի ուտես, որ համը բերանումդ մնա: Այդ համը որ մոռացար՝ կորած ես: Կջնջվես, կվերանաս, կդառնաս քաղաքացի:

Երեխաները, խնդմնդալով քթի տակ, կերան ճաշը և իրենց սենյակը քաշվեցին: Մկրտիչի կինը բաժակակալներով մուգ թեյ բերեց, դրեց սեղանին ու ինքն էլ անհետացավ:

- Էմման գիտի, որ գնում ես,- հարցրեց Մկրտիչը:

Զավենը օրորեց գլուխը:

- Չէ, ուզում եմ անակնկալ լինի:

Մկրտիչը խրթացնելով կծեց շաքարի կողքից ու թեյ խմեց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Քո գործն է, իհարկե,- ասաց նա: - Բայց այնպես արա, որ չնեղանա, չմտածի, թե թաքուն ստուգում ես:

Զավենը ժպտաց.

- Չէ, Մկրտիչ ջան, չի մտածի: Մենք իրար լավ ենք ճանաչում:

Եվ որպեսզի շեղի խոսակցության ընթացքը, հարցրեց.

- Դո՞ւ ոնց ես, մեծ եղբայր:

- Եթե ապրուստի մասին ես հարցնում, լավ եմ,- ծխեց ու հազաց Զուլոյանը: - Հիանալի բնակարան տվեցին, աշխատավարձս բարձր է, ամիսն էլ մեկ-երկու առաջնորդող եմ գրում, հոնորար կա- Բայց օրեր են լինում, Զավեն, որ երանի եմ տալիս այն ժամանակներին, երբ քահանա հորեղբորս հետ շրջում էինք տնից-տուն, ես բուրվառ էի գցում, մարդկանց հիշեցնում էինք աստծուն և վաստակում մեր օրվա հացը:

- Իսկ հիմա ինչ է պատահել հանկարծ, Մկրտիչ ջան:

- Ամաչում եմ,- ասաց Զուլոյանը: - Դու գիտես, որ մի քանի օր առաջ հավաքեցի բոլոր գրածներս, յոթ մեծ թղթապանակ: Ու նորից կարդացի հերթով: Տանը մարդ չկար: Յոթ թղթապանակի միջից հանեցի մի քանի ֆելիետոն, մի երկու հոդված, մի բուռ երգիծանք, տեղավորեցի մի փոքրիկ թղթապանակի մեջ, իսկ մնացած վեց ուռած-փքված թղթապանակները մեկ-մեկ այրեցի պատի վառարանում: Ու սիրտս այ այսքան չէր ցավում վառվող նյութերի համար, իմ սուտ անցկացրած կյանքի վրա էր ցավում: Ինչո՞վ եմ զբաղված եղել, ի՞նչ եմ արել: Ո՞ւմ համար եմ գրել այդքան սուտը: Իսկական աստծուն ուրացել եմ և ի՞նչ աստծու եմ հավատացել: Բայց ախր դժբախտությունն այն է, որ սուտ չեմ գրել, սրտանց եմ գրել, հավատով ու նվիրվածությամբ եմ գրել: Բայց դա ի՞նչ է եղել՝ կույր ֆանատիզմ, տգիտություն թե մոլորվածություն: Թե՞ բոլորը միասին: Ինչ անիծյալ մասնագիտություն է մեր գործը, Զավեն: Կներես, բայց իր մարմինը ծախող կինը շատ ավելի մաքուր ու ազնիվ է, քան թե մենք: Որովհետև մենք մեր հոգին ենք ծախում: Ախր չենք էլ ծախում, նվիրում ենք: Որովհետև մեզ երեսուն արծաթ էլ չեն տալիս: Սա ի՞նչ դժբախտություն է: Ինչ նոր որոշում ընդունվում է, պետք է հորթի հրճվանքով արձագանքենք, հավանություն տանք, հիանանք, համարենք անկրկնելի և իմաստուն: Քիչ հետո հակառակ որոշում է ընդունվում, հիմա էլ այդ որոշումն ենք պարտավոր համարել անկրկնելի ու իմաստուն: Ամբողջ կյանքում սազն առած Ստալին եմ գովերգել, հիմա նույն սազով նզովում եմ նրան: Որ ի՞նչ: Մի «փակ» նամակ կարդացին մեզ մոտ, ձեզ հասած չի լինի: Ազնվագույն մարդկանց, իսկական լենինյանների, գնդակահարության են տարել, իսկ նրանք վերջին պահին գոչել են «Կեցցե Ստալինը, կեցցե կոմունիզմը»: Իսկ մի քանիսն էլ խնդրել, աղաչել են տեղեկացնել ընկեր Ստալինին, որ իրենց գնդակահարության են դատապարտել անմեղ տեղը: Նրանք համոզված են եղել, որ եթե ընկեր Ստալինն իմանա՝ շատ կզարմանա և կկարգադրի անմիջապես ազատ արձակել նրանց: Եվ ոչ մի երկվություն չեն ունեցել, որ Ստալինն անձամբ իր ձեռքով է ստորագրել նրանց՝ իր ընկերների մահվան դատավճիռը: Դու որևէ բան հասկանո՞ւմ ես, Զավեն: Եվ դրանք հատուկենտ մարդիկ չեն եղել, տասնյակ հազարներ, հարյուր հազարներ, միլիոններ… մի ամբողջ ժողովուրդ: Լավ: Ինչպե՞ս կարող էր ժողովուրդը ժողովրդի թշնամի դառնալ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավեն Շարաֆյանը ևս մի գլանակ վառեց:

- Մի անգամ տեսա, որ Գառնիկ Բադալյանը «Ռոբեսպիեր» է կարդում,- ասաց նա: - Գնացի գրադարանից վերցրեցի ու ես էլ կարդացի: Քո բոլոր հարցերի պատասխաններն այնտեղ կան:

- Նա ֆրանսիական հեղափոխության առաջնորդներից մեկը չէ՞ր,- առաջ թեքվեց Մկրտիչը:

- Այո, բայց ուզում էր միակը լինել: Եվ գլխատեց, վերացրեց իր ընկերներին, մյուս առաջնորդներին, որպեսզի մենակ մնա, միահեծան լինի, աստված դառնա: Իսկ ո՞ւմ են պաշտում մարդիկ, ո՞ւմ են աստված համարում, ով նրանց համար առեղծված է, անշոշափելի է, անիմանալի է, ահավոր է: Թե չէ ի՞նչ աստված, երբ գիտես, որ նա կայծակից վախենում է, խռմփում է քնած ժամանակ, ուտելուց առաջ ձեռքերը չի լվանում, սև կատու տեսնելիս ետ է դառնում ճանապարհից- Այդ է պատճառը, որ աստված դառնալ ցանկացողը ոչնչացնում է բոլոր նրանց, ովքեր նրան իբրև սովորական մարդ գիտեին: Այդպես են եղել բոլոր փառատենչ տիրակալները՝ Ներոնից սկսած մինչև Ռիչարդ: Էլ չեմ խոսում մեր տիրակալների մասին, որոնք ոչ թե իրենց ծնողներից են ժառանգություն ստացել, այլ ոչնչությունից են բարձրացել ու հայտնվել գահին: Նրանք ինչպե՞ս կարող են հանդուրժել իրենց նմաններին, որոնք նրանց տրեխներով են հիշում և հոտաղի ճիպոտը ձեռքին…

- Եվ բարձրանալու համար պարտադիր է, որ դիակների՞ վրայով քայլեն,- ավելի շուտ հաստատեց, քան հարցրեց Մկրտիչը:

- Գառնիկ Բադալյանը մի օր ինձ ասաց, «Եթե ուզում ես հեռու ճանապարհ գնալ, ոտքերիդ տակ մի նայիր»:

- Որովհետև նա էլ իրեն մեր քաղաքի Ստալինն է համարում:

- Ու տեղեկություն չունի՞, որ Ստալինն այլևս չկա:

- Ինչո՞ւ չունի, բայց հաստատ համոզված է, որ ստալինիզմը մնացել է: Զավեն ջան, Ստալինը հո մենակ չի եղել: Իր շրջապատը, իր մտերիմներն է ունեցել, չէ՞: Իր ընդօրինակողներն է ունեցել: Իսկ որտե՞ղ են նրանք: Իրենց տեղերում, տղա ջան: Կամ մի տեղից մյուսն են տեղափոխվել: Կհավատա՞ս, Խրուշչովը մեկ-մեկ մեղքս գալիս է: Ոնց որ մենակ է մնացել: Ոնց որ օգնական չունի: Երբեմն ինձ թվում է, թե այդ մարդը արդեն չգիտի ինչ անել: Կորցնում է իրեն:

- Քի՞չ արեց, ինչ է: Հենց թեկուզ միայն, որ իրեն հատուկ բացառիկ խենթ համարձակությամբ տապալեց, մերկացրեց ժողովուրդների հանճարեղ առաջնորդի պաշտամունքը, ցույց տվեց նրա հոգու աղբը, նենգ, ստոր գազանային էությունը, հենց միայն դա բավական է, որ այսօր նրան արձան կանգնեցնեն:

- Ես հենց դրանից եմ վախենում,- հանկարծ ասաց Մկրտիչ Զուլոյանը: - Այդ արձաններից: Եթե հիմա էլ նրա արձանները կանգնեցնեն՝ ամեն ինչ կսկսվի նորից:

- Խիղճ ունեցիր, ընկեր Զուլոյան…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Հաստա՞տ: Ով կարող է հանգիստ կանգնել ու դիտել իր արձանը, արդեն կործանված մարդ է և նախապես կործանված են նաև նրան արձան կանգնեցնողները: Կուսակցական ու պետական ինչ գործիչ էլ լինի, եթե նա իրեն թույլ է տալիս սովորեցնել կենսաբաններին, բժիշկներին, լեզվաբաններին, նկարիչներին,մյուսներին, թե ինչպես պետք է աշխատեն նրանք, նա արդեն իր անձի պաշտամունքը ստեղծելով է զբաղված: Ով համարձակվի չհամաձայնել նրա հետ և իր սեփական կարծիքը հայտնի, նա արդեն դատապարտված է: Եթե չկալանավորեն անգամ, միևնույն է, նա առնվազն քաղցած է մնալու:

- Քո ասածները Ստալինին են վերաբերում, Մկրտիչ:

- Ուր է, թե միայն նրան վերաբերեր, տղաս,- հառաչեց Մկրտիչը: - Բա ինչո՞ւ եմ քեզ ասում, թե արդեն զզվել եմ իմ, այսինքն՝ մեր մասնագիտությունից: Որովհետև մենք գրչակներ ենք դարձել, Զավեն: Ավելի ճիշտ՝ ոչ թե դարձել, այլ եղել ու մնացել ենք: Հիշո՞ւմ ես, չէ, լեզվաբանության, տնտեսագիտության մասին Ստալինի ուսմունքները: Որևէ առարկող եղա՞վ: Այդ էր պակաս, ո՞վ էր կյանքից ձեռք քաշել: Դրա համար էլ իր տասնյակ բարձրագույն կոչումներին ավելացրեցինք ևս մեկը և ընկեր Ստալինին անվանեցինք գիտության կորիֆեյ: Եվ ինքն էլ համեստությամբ ընդունեց: Մինչ այդ Ժդանովը մեծ ճաշակով ընտրեց ու ջարդուփշուր արեց գրականության և արվեստի մեջ ստեղծված հազվագյուտ լավ գործեր: Մե՞նք ինչ արեցինք: Գտանք, որ ընկեր Ժդանովը բացարձակ ճիշտ է, իսկ Զոշչենկոն, Ախմատովան սխալ են, մեր պայծառ կյանքը սևացնողները և փաստորեն նույն ժողովրդի թշնամիներն են: Իսկ ես ինչ արեցի, ես՝ «Լուսաբաց» թերթի խմբագիր Մկրտիչ Զուլոյանս: Ես մեր թերթում ծաղրեցի, նզովեցի, անարգանքի սյունին գամեցի գրականության այդ թափթփուկներ, միջազգային իմպերիալիզմի գիրկը գլորվող պնակալեզներ Զոշչենկոյին, Ախմատովային և մյուսներին, մինչ այդ որոնց անունն անգամ չէի լսել, ուր մնաց թե կարդացած լինեի նրանցից որևէ մեկի գործը: Բա ես մա՞րդ եմ… Բա սա մասնագիտությո՞ւն է…

- Հին բաներ ես հիշում, Մկրտիչ ջան,- փորձեց մխիթարել նրան Զավենը:

- Նորն ասեմ: Կարդացիր, չէ՞, ընկեր Խրուշչովի զեկուցումը քաղաքաշինության և ճարտարապետական շռայլությունների մասին:

- Կարդացի, իհարկե:

- Ինչքան գիտեմ նա մասնագիտությամբ հանքագործ է եղել: Ասա խնդրեմ, ընկեր Շարաֆյան, ի՞նչ գործ ունի Խրուշչովը ճարտարապետության հետ:

- Չեղավ, Մկրտիչ եղբայր,- ծիծաղեց Զավենը: - նա պետության ղեկավար է և շատ բնական է, որ անհանգստանում է տեսնելով, թե ինչպես են հսկայական գումարներ ծախսվում զիզի-պիզի բաների վրա, երբ ժողովուրդը ապրելու սովորական տուն չունի:

- Իսկ նրա շրջապատում ճարտարապետ կամ տնտեսագետ չկա՞: Ինչո՞ւ նրանք չեն խոսում:

- Ինչ տարբերություն,- զարմացավ Զավենը, - երևի նրանք գաղափարն ու հաշվարկները տալիս են, նա էլ խոսում է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Այ հենց դա է վատը,- տեղից բարձրացավ Մկրտիչը: - Նրան հուշում են: Որոշ անշնորհք մասնագետներ նրա բերանով անձնական վրեժ են լուծում իրոք տաղանդավոր ու հանճարեղ իրենց գործընկերներից, վարկաբեկում ու մեկուսացնում են նրանց: Որովհետև իրենք չեն համարձակվում խոսել նրանց դեմ և վստահ են, որ նրանք էլ անկարող են պաշտպանել իրենց կուսակցության ու պետության ղեկավարից: Հիմա հասկացա՞ր, թե ինչպես է ծնվում անարդարությունը: Հեռու չգնանք, զեկուցումը նախապատրաստելու ժամանակ Խրուշչովը նյութեր ու փաստեր է պահանջել իր օգնականներից, ճարտարապետական շռայլության օրինակներ: Եվ նրան տես ինչ օրինակներ են տվել՝ Թբիլիսիի սպորտի պալատը և երևանամերձ ճայի հուշարձանը: Սպորտի պալատի վրա ծախսվել է մոտ հինգ հարյուր միլիոն ռուբլի, իսկ ճայի վրա քսան ավտոմեքենա բետոն և մի տասը տոննա մետաղալար: Ոչ ավելի: Եվ ով Թբիլիսի է գնում՝ այդ ճայի բետոնյա թևի տակով, նայում ու ծիծաղում է՝ ա յ քեզ ճարտարապետական շռայլություն: Այ քեզ համեմատություն- Այ քեզ Նիկիտա Սերգեևիչ…

Զավեն Շարաֆյանը քմծիծաղ տվեց.

- Ախր իսկապես համեմատելու բան չէ:

- Ապրի արևդ,- գլխով արեց Մկրտիչը: - Իսկ ո վ է այդ փաստը Մոսկվա հասցրել: Իհարկե մեզանից մեկը: Աչքի ընկնելու և ցույց տալու համար, թե մեր ուշքը գնում է ինքնաքննադատության համար: Թե չէ ինչպե՞ս կարելի է, որ բոլոր հանրապետությունները ճարտարապետական շռայլության օրինակներ ունենան, իսկ մենք չունենանք: Եվ բանը գիտե՞ս որտեղ է հասել, Զավեն, որ մերոնք ինքնակամ ճարտարապետական շռայլություն են համարում Թամանյանի գործերը՝ օպերայի շենքը և Լենինի հրապարակի համալիրը: Եվ ընդհանրապես այն բոլոր շենքերը, որոնք կամարներ, խոյակներ, սյունաշարեր… այսինքն հայկական ազգային ճարտարապետական դեմք ունեն:

- Բայց ո՞վ… մերոնք:

- Հիմա կասես՝ չի սիրում, դրա համար էլ միշտ նրա անունն է տալիս: Օրինակ՝ մեր խմբագրի տեղակալ Կարայանը: Մի քանի օր առաջ կանչել էր մեր ջահել տղաներից մեկին, թե գնա ու անմիջապես ֆելիետոն բեր Երևանի ճարտարապետական շռայլությունների մասին: Սա էլ լաց էր լինում, թե ես ճարտարապետությունից բան չեմ հասկանում, ի՞նչ գրեմ: Չհասկանալու ի՞նչ կա, այ տղա, ասում էր Կարայանը, որտեղ գեղեցիկ պատշգամբ կտեսնես, սյուն ու կամար կտեսնես, գրի, որ եթե այս շռայլությունները չլինեին, քանի բանվոր կարող էր բնակարան ստանալ: Համարձակ ու անզիջում գրի, ասում էր, հաշվետվություն պետք է ուղարկենք Մոսկվա: Կենտկոմը պահանջում է:

-Եվ գրե՞ց:

- Գրեց, իհարկե, խայտառակ եղանք: Գրել էր, թե երկու շենք լոջա բերանները բացած… Լոջան գիտես չէ՞ որն է, էն չքնաղ, կամարավոր պատշգամբները…

- Շնորհակալություն,- լուրջ ասաց Զավենը,- որտեղի՞ց պետք է իմանամ, գյուղից եկած մարդ եմ…

Մկրտիչը ծիծաղեց խռխռալով ու հազալով.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Այ տղա, միշտ մոռանում եմ, որ դու երևանցի ես: Հա, ուրեմն, գրել էր, թե շենքերը լոջա-բերանները բացած վիճում են իրար հետ և երկուսն էլ քաղվածքներ էին բերում ընկեր Խրուշչովի զեկուցումից: Բա՞, ախպեր ջան, հիմա ամբողջ քաղաքը լոջա բերանը բացած ծիծաղում է մեզ վրա:

- Իրավունք ունեն,- ասաց Զավենը: - Թեև ամեն օր երգում ենք, բայց շատ հաճախ մոռանում ենք, որ «Լայնարձակ է հայրենի երկիրն իմ» և չի կարելի նույն որոշումն անխտիր տարածել այդ լայնարձակ երկրի բոլոր անկյուններում: Իլֆի ու Պետրովի մի պատմվածքը կարդացի՝ Սիբիրում էլ են պահանջել մայիսի մեկին մայկա-տրուսիկով շքերթի դուրս գալ:

- Ապրի արևդ,- ոգևորվեց Մկրտիչ Զուլոյանը: - Այ հենց դրա համար եմ ասում, որ սիրտս վախ է ընկել և իմ մասնագիտությունն էլ ընկել է աչքիցս: Ախր ընդամենը մի տարի առաջ փա-ռաբանում էինք մեր ազգային ինքնատիպ կառույցները: Գրում էինք, որ ազգային ճարտարապետության զարգացման միակ ճիշտ ճանապարհը դա է: Իսկ հիմա քննադատում ենք, առաջարկում ոչնչացնել դրանք և փոխարենը հանրակացարաններ սարքել: Եվ բոլորի հետ դա ես էլ եմ անում: Ես, որ դեմ եմ: Բայց ի՞նչ կարող եմ անել, Զավեն, ո՞ւր գնամ.,. Օր ծերության ո՞նց փոխեմ մասնագիտությունս: Ի՞նչ անեմ: Յուրաքանչյուր նոր ղեկավար բոլորովին նոր, նախորդին լրիվ հակառակ բան է ասում: Չի էլ ասում՝ կարգադրում է: Եվ դու պիտի կատարես: Բայց հո այսպես չի մնալու, ախպեր ջան, վաղը մի նորը գալու է և ասելու է նախկին բոլոր որոշումները սխալ են եղել, հիմա էլ հակառակը գրեք: Եվ մենք գրելու ենք: Որ ի՞նչ: Բայց մի օր էլ ահեղ դատաստանի նման հայտնվելու է մեկը և հարցնի ո՞վ եք դուք, որտե՞ղ եք եղել, երբ կատարվել են այս անարդարությունները- ի՞նչ ենք պատասխանելու…

Զավենը հիշեց գյուտարարին.

- Մի օր Արմեն Զատիկյանը նույն բանն ասաց, ասաց՝ թե այսօր ղեկավար աշխատել չի կարելի, որովհետև բոլոր ղեկավարները մի օր պատասխան են տալու երկրում կատարվող մեծ հանցագործությունների համար: Ասաց ամեն մարդ պիտի ալիբի ունենա, արդարանա, թե ես հանցագործների հետ չեմ եղել- Ես ծաղիկներ էի աճեցնում ու ծախում- Եվ ինձ համոզում էր թողնել խմբագրությունն ու ծաղիկ ծախել…

Մկրտիչ Զուլոյանը կանգ առավ միանգամից.

- Բայց նա ճիշտ է ասել, գիտե՞ս: Հո պատահական չէ, որ մեծ մտքերը խենթերի գլուխներում են ծնվում: Ծաղիկնե՞ր… Չգիտեմ, կզբաղվեմ ծաղիկներով թե չէ, բայց ալիբիի մասին կմտածեմ: Անպայման:

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

Նա նստած էր Լենինգրադի դրամատիկական թատրոնի դահլիճում ու ննջում էր: Ամբողջ գիշեր չէր քնել: Սպիտակ գիշերներ էին Լենինգրադում, և նա ոչ միայն չէր կարողանում, այլև անխղճություն էր համարում քնելը: Պատուհանի մոտ կարդաց-կարդաց, հետո դուրս եկավ հյուրանոցից ու սկսեց թափառել Նևայի ափին: Նրան զարմացրեց և ուրախացրեց, որ իր նման անքուն մարդիկ էլի կային: Դանդաղ զբոսնում էին քարակոփ բազրիքի կողքով, կանգ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

առնում, նայում գետին, նորից քայլում՝ հմայված դիտելով ճարտարապետական մեծ ու փոքր հրաշքները՝ շենքերը, արձաններն ու արձանախմբերը:

Նա հյուրանոց վերադարձավ աշխատողների հետ և քնեց մինչև կեսօր: Վեր կացավ, երկար ժամանակ կանգնեց ցնցուղի տակ՝ անընդհատ զարմանալով, որ տաք ջուր է գալիս, հետո սափրվեց ու զանգահարեց օպերայի տոմսարկղ:

- Ներեցեք, այսօր ձեզ մոտ ի՞նչ ներկայացում է:

- Ժիզել,- պատասխանեցին նրան:

- Գլխավոր դերում ո՞վ է: Մի պահ լռություն տիրեց.

- Ցավոք սրտի, Բունինան չի պարում, հիվանդ է: Պարելու է Էմմա Ալիքյանը:

- Այո՞,- վերահարցրեց Զավենը և ավելացրեց ուրախ,- շատ, շատ շնորհակալություն:

Ուրեմն պարում է Էմմա Ալիքյանը: Սա արդեն հաջողություն է և բարի նշան: Կարող էր, չէ՞, այնպես դասավորվել, որ այդ օրերին նա չխաղար: Իսկ հիմա՝ պարում է Էմմա Ալիքյանը:

Որքան կզարմանա, երբ Զավենը մտնի նրա հարդարասենյակը: Ինչքան էլ երկրպագուներ լինեն նրա դռանը սպասող, Զավենը, միևնույն է, առաջնության իրավունք ունի: Իսկի որ չլիներ, հայերեն կկանչի «Էմմա», և Էմման կհայտնվի նրա գրկում: Հետո մտածեց, թե «Էմմա» կանչելու հայերենն ու ռուսերենը որն է ու ծիծաղեց մտքում Եվ երկրպագուների նախանձոտ հայացքների ներքո, Էմման կհայտնվի նրա զրկում: Դժվարը միայն ծաղիկների հարցն է: Ինչպե՞ս ներս տանի, ինչպե՞ս պահի ներկայացման ընթացքում: Դե հո բեմ չի բարձրանալու: Ինչպե՞ս կուլիսները հասնի: Ինչպե՞ս հանձնի: Եվ Զավենն իր կարծիքով գտավ ամենափայլուն ելքը: Ուղղակի ծաղիկներ չի գնի ու վերջ: Ծաղիկներ առանց այն էլ շատ կլինեն: Էմման հեռախոսով ասաց, չէ, թե տունն ամեն օր ծաղիկներով լիքն է: Ուղղակի կմտնի

զուգասենյակ, Էմմային կվերցնի, կգնան հյուրանոց ու ռեստորանում, կամ հենց համարում կընթրեն: Իսկ հետո կուղեկցի նրան տուն՝ հետը վերցնելով ուռենու ճյուղերից հյուսած հսկայական զամբյուղը, որը բերնեբերան լցված է զանազան կանաչիներով, սալորով, խակ ծիրանով, տնական լավաշով ու պանրով: Եվ այդ բոլորի վրա, թերթի տակ դրված է երեք փունջ մանուշակ: Ճիշտ է, տեսքն այլևս այն չի լինի, տրորված, ճմրթված կլինի հաստատ, բայց հոտը հո կգա: Էմման խոր կշնչի հոտը ու կասի.

- Սիրելիս, սրանք ամենաթանկ ծաղիկներն են, որ երբևէ մատուցվել են ինձ:

Երկրորդ հռետորը բավականին բարձր էր խոսում և Զավենին խանգարում էր մտածել Էմմայի մասին: Ակամա սկսեց լսել նրան: «Վեչերնայա Մոսկվա» թերթի խմբագիրն էր:

- Ես լիովին համաձայն եմ առաջին զեկուցողի՝ ընկեր Գրիբաչովի հետ: Ո՞ւմ են պետք քաղաքային և շրջանային մանր-մունր թերթերը…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Դահլիճն ալեկոծվեց, և Զավեն Շարաֆյանը սթափվեց միանգամից:

- Դրանք պատի թերթի մակարդակից չեն բարձրանում և ասելիք ու անելիք չունեն: Խոսքս վերաբերում է հատկապես ազգային հանրապետությունների փոքրիկ քաղաքներում ու շրջկենտրոններում լույս տեսնող «թաշկինակներին»: Պատկերացնո՞ւմ եք, թերթեր կան, որոնց տպաքանակը երկու-երեք հազար է: Խմբագրություններ են աշխատում, տպարաններ են դղրդում, ծանրաբեռնվում է փոստը, թե ինչ է, ինչ, մի քանի հոգի պետք է իրենց մայրենի լեզվով իմանան այն, ինչ հանգիստ ու շատ ավելի մանրամասնորեն կարող են կարդալ միութենական թերթերում: Կարո՞ղ եք այսօր մեր լայնածավալ երկրում օրինակ բերել թեկուզ մի մարդու, որ ռուսերեն չիմանա: Իսկ եթե պատահաբար նույնիսկ գտնվի այդպիսի մեկը, վստահեցնում եմ ձեզ, որ նա իր մայրենի լեզվով ևս կարդալ չի կարողանա:

Այս ու այն կողմից ծիծաղ լսվեց, որը կարծես ավելի ոգևորեց հոետորին:

- Կարծում եմ, որ առաջին քայլը պետք է լինի նմանօրինակ թերթերը միավորելը՝ տպաքանակը բարձրացնելու հեռանկարով: Որքան ինձ հայտնի է, Անդրկովկասի ժողովուրդները, օրինակ գրեթե նույն լեզվով են խոսում:

Զավեն Շարաֆյանը չհավատաց ականջներին: Ապո՞ւշ է այդ մարդը, թե ինչ է…

- Ինչ չէինք լսել, լսեցինք,- գոռաց նա տեղից:

Բայց մոսկովյան խմբագիրը ուշադրություն չդարձրեց նրա վրա:

- Ես ասում եմ գրեթե, որովհետև նրանք հասկանում են իրար: Ես դրան ականատես եմ եղել: Իսկ եթե հասկանում են, ուրեմն էլ ի՞նչ միտք ունի տարբեր թերթեր հրատարակել, տարբեր թարգմանություններ կատարել, տարբեր գրքեր տպագրել, հսկայական ծախսեր կատարել: Երբ նրանք կարող են ընդհանուր համաձայնության գալ և գտնել միջին մի լեզու, որով և թարգմանեն ռուսերեն գրքերն ու հոդվածները: Ես կարծում եմ, որ նման միջին լեզուներ կարելի է ստեղծել նաև Միջին Ասիայում, Մերձբալթիկայում…

Պարզվեց, որ խորհրդակցության նախագահի մի կողմում Ուկրաինայի ներկայացուցիչն է նստած:

- Ընկեր Կորոբով,- բարձրաձայն հարցրեց նա: - Ես վրդովված եմ, ինչո՞ւ Ուկրաինայից չեք սկսում: Մեր լեզուներն ավելի մոտ են իրար: Թե՞ ձեզ խանգարում է այն, որ մենք ավելի մեծաքանակ ենք, քան ասենք վրացիները կամ հայերը:

Հենց առաջին շարքից հնչեց խիստ վրացական առոգանությամբ մի ձայն:

- Ինչո՞ւ, ընկեր Պավլիչկո, չինացիները մի քանի անգամ ավելի մեծաքանակ են- Եվ երևի հենց հիմա հավաքվել են ու նրանց տեղական ընկեր Կորոբովը մտածում է, թե ոնց վերացնի ռուսերենը, որպեսզի այդ լեզվով թարգմանություններ չկատարեն- և խնայեն գումարները:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ողջ դահլիճը սկսեց հռհռալ: Նախագահողը ոտքի կանգնեց ու երկար ժամանակ թափահարում էր զանգակը: Իսկ երբ ի վերջո նրան հաջողվեց խաղաղեցնել դահլիճը, շրջվեց դեպի զեկուցողն ու ասաց,

- Դուք ձեր զեկուցումով, ընկեր Կորոբով, դժբախտաբար փորձում եք համոզել մեզ, որ նախկին, ոչ արժանահիշատակ ժամանակներում ղեկավարները ճիշտ են վարվել, երբ նախապես պահանջել են իրենց ցույց տալ զեկուցումները: Մեր խորհրդակցությունը նվիրված է քաղաքային թերթերի աշխատանքի բարելավման և զարգացման հարցերին: Եվ ուրիշ ոչինչ: Մի կողմ դրեք ձեր այդ չափազանց կասկածելի լեզվատրամաբանական խնդիրները և խոսեք թերթերի մասին: Եթե ասելիք ունեք:

Քիչ թե շատ արժանապատվություն ունեցող մարդը իհարկե անմիջապես կիջներ բեմից: Բայց այդ Կորոբովը ուրիշ կառուցվածք ուներ: Նա երկու ձեռքով կառչեց ամբիոնից, գլուխ տվեց մարզկոմի քարտուղարին ու ասաց.

- Շատ լավ: Կխոսեմ թերթերի մասին: Եվ կխոսեմ ամենայն անկեղծությամբ և անաչառությամբ: Ես սովոր եմ իրերն իրենց անուններով կոչել: Կասկած չկա, որ վերջին մի քանի տարում անհամեմատ բարձրացել է սովետական մամուլի քաղաքական-գաղափարական մակարդակը: Թերթերն իսկապես մոտեցել են ժողովրդին, դարձել նրանց խոհերի ու ձգտումների արտահայտիչը: Բայց չեմ կարող չասել նաև, որ նրանց ընդհանուր բարձր ֆոնի վրա կարծես թե ավելի ցայտուն են ընդգծվում մեր քաղաքային և շրջանային որոշ թերթերի ժուռնալիստական ցածր մակարդակը, ես կասեի նույնիսկ՝ գաղափարական ցածր մակարդակը: Տեսեք ի՞նչ է ստացվում, ընկերներ, պարզապես վրդովեցուցիչ է, որ հակառակ ստալինյան տարիների, երբ ամեն ինչ վարդագույն էր պատկերվում մեր մամուլում, հիմա էլ առանձին թերթեր կարծես թե չեն ուզում տեսնել այն նորն ու հեղափոխականը, որ կատարվում է մեր երկրում:

Դահլիճը նորից աղմկեց զայրացած:

- Մեր քաղաքային որոշ թերթեր ընթերցելիս, ես այն տպավորությունն եմ ստանում, թե դրանք լույս են տեսնում կապիտալիստական արտասահմանում և թղթակիցներն էլ մեր գաղափարական հակառակորդներն են: Ի՞նչ է պատահել: Ինչո՞ւ եք ամեն ինչ սևացնում, ընկերներ, ինչո՞ւ եք կորցնում չափի զգացումը…

- Ախր չափը չգիտենք, չափը տվեք, որ իմանանք, թե քանի տոկոսով կարելի է քննադատել և քանի տոկոսով գովել,- հանկարծ ձայնեց մեկը:

Դահլիճով ծիծաղ անցավ, մի քանիսը ծափահարեցին:

- Դուք դեմագոգիայով եք զբաղված, ընկեր Մուխին,- ձայնն ավելի բարձրացրեց հռետորը: - Ով չէ, չէ, բայց դուք հին ժուռնալիստ եք և պետք է լավ իմանաք, թե ինչ եմ ասում ես և ինչ բան է չափը:

Բայց այդ Մուխինը ընկրկողներից չէր, ընդհակառակը, բարձրացավ տեղից ու գոչեց դահլիճով մեկ.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Եթե ես ձեզ նման ժամանակին չափ ու ձև անեի և ձեր չափերով ղեկավարվեի, տասնյոթ տարի Սիբիրում ծառեր չէի կտրի, ընկեր Կորոբով, այլ ինչպես դուք՝ հանգիստ կնստեի Մոսկվայում, անկախ վերևներում կատարվող արմատական փոփոխություններից:

Այս անգամ այնպիսի աղմուկ բարձրացավ, որ դահլիճը երկար ժամանակ չէր հանդարտվում: Նախագահողը, Լենինգրադի մարզկոմի քարտուղարը ստիպված եղավ գործի դնել սեղանի զանգը:

- Ընկեր Մուխին,- ասաց նա խիստ ձայնով,- դուք խանգարում եք խորհրդակցությունը: Եթե ուզում եք ելույթ ունենալ՝ ցուցակագրվեք:

Բայց ինչպես երևաց, իրոք շատ բան էր փոխվել կյանքում:

- Կորոբովը խելքը գլխին բան չի ասում, թող Մուխինը խոսի,- ետևի շարքերից բղավեց մեկը:

Դահլիճը միացավ նրան:

Մուխին, Մուխին,- սկսեցին վանկարկել լրագրողները:

«Վեչերնայա Մոսկվայի» խմբագիրը մի քանի անգամ փորձեց շարունակել ելույթը, բայց նրան այլևս լսող չկար:

- Ոչինչ չեմ հասկանում: Սա՞ ինչ անարխիա է,- կարմրատակած, վերջին անգամ գոչեց ձախորդ հռետորը ու ցած իջավ բեմից:

Եվ դահլիճի ծափերի ու վանկարկումների ներքո ամբիոնին մոտեցավ Մուխինը: Նա խիստ ռուսական դեմքով, կճատ, սուր ցցված քթով, կարմրադեմ ու կարմրահեր մի մարդ էր և արտաքինով Խրուշչովին էր հիշեցնում:

- Սա անարխիա չէ, ընկեր Կորոբով, այլ դեմոկրատիա, որի մասին դուք ինչպես երևում է գաղափար չունեք: Դուք սիրում եք միայն խոսել, լսելու սովոր չեք: Իսկ հիմա, փառք աստծո, բոլորովին ուրիշ ժամանակներ են: Եվ ես երջանիկ եմ, որ տեսա այս օրը: Մենք շատ-շատ երկար ենք սպասել այս օրվան, և շատ ենք տառապել ու երազել այս օրը, որպեսզի անմռունչ նստենք ու ձեզ թույլ տանք արտահայտել այնպիսի մտքեր, որ դուք հաստատ շփոթել ու ձեր հին զեկուցումներից եք հանել մեջտեղ: Այսօր, երբ

նույնիսկ խավարի մեջ խարխափող Աֆրիկան է արթնացել և շատ ժողովուրդներ նոր-նոր միայն իրենց առաջին այբուբենն են ստեղծում և մեր խորհրդային երկիրը ոգևորում է նրանց ազգային զարթոնքը, դուք ուզում եք դեմագոգիկ հայտարարությունների տակ ոչնչացնել մեր երկրում ապրող հնագույն քաղաքակրթություն ունեցող ժողովուրդների մայրենի լեզուն: Դա նույնիսկ ծիծաղելի է: Դա շատ-շատ վտանգավոր երևույթ է, ընկեր Կորոբով:

Նա սպասեց, մինչև որ լռեցին ծափահարությունները և շարունակեց.

- Անցնենք առաջ: Կամ ավելի ճիշտ՝ ետ դառնանք: Ինչո՞ւ դուք և Կենտկոմի մամուլի սեկտորի հրահանգիչ ընկեր Գրիբաչովը այդքան ջանասիրությամբ հանդես գալիս

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

քաղաքային և շրջանային փոքրիկ թերթերի դեմ: Եվ մի՞թե մեզ գործից կտրել, երկրի ծայրերից այստեղ եք հավաքել, որպեսզի ձեր ժխտական վերաբերմունքը հայտնեք մեր գործունեության վերաբերյալ: Միտք ունե՞ր դրա համար այսքան ծախս անել, գործուղումներ ձևակերպել, թանկուկրակ հյուրանոցներ զբաղեցնել, դահլիճներ գնել- Երբ ձեր միտքը կարող էիք ձրիաբար հենց ձեր թերթում տպագրել: Եվ ուրախանալ դրանով:

Ծիծաղի ալիք անցավ սրահով:

- Եվ ինչո՞ւ եք այդքան վրդովվում, երբ մարդիկ իրենց մայրենի լեզվով ուզում են թերթ կարդալ: Թեկուզ հազար հոգի: Թեկուզ հարյուր հոգի: Հո կարագ ու միս չեն պահանջում ձեզանից, հո շոր ու կոշիկ չեն ուզում, որ անկարող եք տալ: Թերթ են ուզում: Կարդալ են ուզում: Ուզում են իմանալ, թե ինչ է կատարվում երկրում, ուզում են մասնակից դառնալ մեծ վերափոխումներին: Դա պետք է ուրախացնի մեր ղեկավարությանը և ոչ թե տխրություն պատճառի: Մանավանդ որ բոլորս էլ գրեթե հասարակական կարգով ենք աշխատում, ոչ կարգին աշխատավարձ ունենք և ոչ էլ ձեզ նման մի կարգին հոնորար: Ծախսերի մասին եք անհանգստանում, հա՞: Այսպիսի մի խորհրդակցության ծախսերով կարելի էր երեք-չորս թերթ ևս բացել, մեր հարգելի ընկեր Գրիբաչով և հարգելի ընկեր Կորոբով:

- Ճիշտ է,- լսվեցին այս ու այն կողմից:

- Իսկ ինչ վերաբերում է քննադատության ձեր առաջարկած Պրոկրուստոսյան մահճին, ապա, իմ կարծիքով, ամբողջ դժբախտությունը բխում է նրանից, որ «Վեչերնայա Մոսկվա» թերթը ընդհանրապես քննադատություն չունի: Դուք կամ մահազդներ եք տպագրում, կամ տեղեկանքներ ու հայտարարություններ: Այդ է պատճառը, որ քննադատությունը իբրև երևույթ ընդհանրապես տարօրինակ է երևում ձեր աչքին…

- Տուր դրան, Մուխին, ուղիղ աչքին,- ծիծաղեց, ձայնեց մեկը: Բայց Մուխինը նույնիսկ չժպտաց.

- Դուք, ձեր նմանները սարսափում եք օտարերկրացիների կարծիքից: Հանկարծ կտեսնեն, հանկարծ կնկատեն, հանկարծ կկարդան ու կիմանան- Իսկ սեփական ժողովրդից ոչ միայն չեք սարսափում, չեք էլ ամաչում: Ինչո՞ւ պետք է մեր ժողովուրդը այնպես ապրի, որ նրա կյանքի ու ապրելակերպի մասին մեր գրածները ամոթ լինի ցույց տալ օտարերկրացիներին: Եկեք այդ մասին մտածենք: Եկեք մտածենք ինչ անել, որ կյանքը լավանա և ոչ թե մեր գրվածքները այդ կյանքի մասին: Եվ վերջ տվեք չափ ու կշեռքներին, վերջ տվեք քննադատության տոկոսներին ու աստիճաններին: Կուսակցությունն այսօր մեզ օրինակ է տալիս, թույլ է տալիս համարձակորեն մատնանշել, վեր հանել թերությունները: Մի կանգնեք կուսակցության և մեր արանքում: Արջի ծառայություն մի մատուցեք և մի փորձեք ձեզ ցուցադրել ավելի կաթոլիկ, քան պապը: Սվերդլովսկի քաղաքային թերթի խմբագրության կոլեկտիվի և ընթերցողների անունից՝ Մուխին:

Ծափահարությունները չէին լռում այնքան ժամանակ, մինչև որ Մուխինը վերադարձավ ու նստեց իր տեղը: Այնժամ Կորոբովը ձեռք բարձրացրեց.

- Ես պետք է պատասխանեմ Մուխինին…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Լենինգրադի մարզկոմի առաջին քարտուղարը թափահարեց ձեռքը.

- Իմ կարծիքով, դուք և ընկեր Գրիբաչովը պետք է պատասխան տաք, բայց ոչ թե ընկեր Մուխինի, այլ շատ ավելի մեծ հաշվով՝ ԽՄԿԿ Կենտկոմի առաջ՝ խորհրդակցությունը անբավարար նախապատրաստելու, գաղափարապես ոչ հասուն, քննություն չբռնող զեկուցումների համար, որոնցով փաստորեն ձախողեցիք խորհրդակցության աշխատանքները: Հարգելի ընկերներ, ես կարծում եմ, որ միտք չունի խորհրդակցությունը շարունակել, քանի որ բոլորիս էլ պարզ է, թե այսուհետև ուր են տանելու ելույթները: Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ Սվերդլովսկի քաղաքային թերթի խմբագիր ընկեր Մուխինը ելույթ ունեցավ բոլորիս փոխարեն:

- Ճիշտ է,- ծիծաղեց, աղմկեց, հավանություն տվեց դահլիճը:

- Ուրեմն ոչ իր մեղքը քավելու նպատակով, մարզկոմը խորհրդակցությունը համարում է փակված և մասնակիցների առջև մինչև կիրակի օրը ներառյալ բացում է Լենինգրադի բոլոր թանգարանների, ցուցահանդեսների դռները, բոլոր համերգասրահների և թատրոնների օթյակները…Շրջեք, ուսումնասիրեք, զվարճացեք և հանգստացեք: Դրանից շատ ավելի մեծ օգուտ կստանաք ձեր հետագա աշխատանքի համար, քան թե բոլոր նույնիսկ լավ խորհրդակցություններից: Հաջողություն ձեզ:

* * *

Թեև Լենինգրադի մարզկոմից հնչած հեռախոսային զանգը Զավեն Շարաֆյանի համար տոմս էր ապահովել օպերային թատրոնում, սակայն նա համենայն դեպս մի ժամ շուտ մոտեցավ թատրոնի շենքին: Մոտեցավ և զարմացավ տեսնելով, որ հերթ է ադմինիստրատորի պատուհանիկի առջև:

- Ես բրոնյա ունեմ,-- ներողություն խնդրելով, մի կողմից պատուհանին մոտեցավ նաև նա:

Եվ տհաճորեն զարմացավ, լսելով պատուհանիկը իր խոշոր գլխով գրեթե փակած մարդու և ադմինիստրատորի խոսակցությունը.

- Ես եկել եմ Բունինային տեսնելու, ծրագրում գրված է Բունինա: Իսկ հիմա ինձ ասում են Բունինան չի պարելու:

- Նա հիվանդ է, ընկեր,- հոգնած ձայնով ասաց ադմինիստրատորը:

- Այդ դեպքում նախօրոք հայտարարեիք, որ չի պարելու:

- Նա նախօրոք չգիտեր, որ հիվանդանալու է,- զայրացավ ադմինիստրատորը: - Եվ մենք էլ չգիտեինք: Եվ վերջապես ես ձեզ հավատացնում եմ, որ Ալիքյանը ևս հիանալի դերասանուհի է…

- Իմ կինը ևս հրաշալի դերասանուհի է, բայց ես նրան տեսնել չեմ ուզում: Ճիշտ այնպես՝ ինչպես ձեր Ալիքյանին…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավեն Շարաֆյանին թվաց, թե վիրավորանք հասցրին ողջ հայ ժողովրդին:

- Լսեք, ընկեր,- ասաց նա՝ ծալած ցուցամատով թխկթխկացնելով խոշոր գլխին, - դուք շատ դաժան եք: Ես, օրինակ, հաճույքով կուզենայի տեսնել ձեր կնոջը: Հասցեն ինձ կտա՞ք…

Հետագայում Զավեն Շարաֆյանը հաճախ էր հիշում այդ միջադեպը և մտածում, թե ինչ կպատահեր, եթե խոշոր գլուխ ունեցող մարդը պատասխաներ հանկարծ: Պարզ է, որ անխուսափելի կդառնային վեճն ու կռիվը և առնվազն ողջ ներկայացման ընթացքում Զավենը ոչ թե դահլիճում, այլ միլիցիայի բաժնի հենակետում կլիներ՝ ինչպես իրավաբաններն են սիրում ասել՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Բայց մեծ գլուխ ունեցող մարդը չպատասխանեց, որով ապացուցեց Զավենին, որ ոչ միայն մեծ գլուխ, այլև մեծ զգուշություն, համբերություն և հեռատեսություն ունի: Ասես ոչինչ էլ չէր պատահել, չէր վիճել ադմինիստրատորի հետ և չէին թխկթխկացրել գլխին, նա շտապով պոկվեց պատուհանից և առանց Զավենի ու հերթի կողմը նայելու, առույգ ինչ-որ մեղեդի շվշվացնելով քթի տակ, քայլեց դեպի մուտքը:

- Շարաֆյան,- դեռ հուզված ու այնուամենայնիվ իր խուլիգանական արարքից ամաչելով, ներկայացավ Զավենը:

- Այդպես էլ կոահեցի,- ժպտաց ադմինիստրատորը՝ Զավենին հրավիրատոմս մեկնելով:

Եվ Զավեն Շարաֆյանը հայտնվեց Լենինգրադի Կիրովի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքում: Նրան թվում էր, ոչ թե թատրոնում, այլ թանգարանում է: Եվ մարդիկ էլ էին մի տեսակ թանգարանային ցուցանմուշների նման՝ կանայք շքեղ հագուստներով, տղամարդիկ՝ խստաբարո, անթերի կարված սև կոստյումներով: Զավենը, որ իր մոխրագույն կոստյումով հպարտ-հպարտ էր շրշում նույնիսկ Երևանում, այստեղ միանգամից խեղճացավ, մի կողմ քաշվեց, իսկ հետո շտապեց բուֆետ՝ արիանալու համար: Նա մի բաժակ հայկական կոնյակ խնդրեց, սև ձկնկիթի ակռատ և տեղավորվեց անկյունի սեղանի մոտ: Շրջապատից առանձնապես չզանազանվելու համար նա կում-կում խմում, գրեթե համտես էր անում կոնյակը և մտածում Էմմայի հետ իր առաջիկա հանդիպման մասին: Բայց անմիջապես էլ համոզվեց, որ միայն ինքը չէ այդ վայրկյանին մտածում Էմմայի մասին: Նրանից թույլտվություն խնդրելով, սեղանի մոտ նստեցին նաև երկու ծերունի՝ մեկը ճերմակ մորուքով, իսկ մյուսն՝ անմորուք, բայց սև, լայն այտամորուսներով: Ինչպես երևաց՝ նրանք թատրոնի մշտական հաճախորդներից էին, կամ հենց թատրոնում էին աշխատում, որովհետև ընդամենը մեկ բաժակ սուրճ խմելու ընթացքում Զավեն Շարաֆյանին ակամա զեկուցեցին այն ամենի մասին, ինչ կատարվում էր օպերայում: Եվ Զավենին անմիջապես պարզ դարձավ, որ Էմմայի վիճակն այնքան էլ վարդագույն չէ, որքան նա փորձում էր համոզել հեռախոսով:

- Դահլիճը չի լցվի,- շշնջաց այտամորուսներով մարդը: - Դու նկատեցի՞ր, թե քանիսը վերադարձրին տոմսերը: Այնինչ մեծ մասը դեռ չգիտի, որ Բունինան չի պարում…

- Որովհետև ոմանք թատրոն են գալիս ոչ թե հանուն արվեստի, այլ տիտղոսների: Նրանց համար անունն է կարևոր,- բարկացած փնթփնթաց մորուքավոր ծերունին: - Այսօր Էմմա

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ալիքյանն ավելի լավ է պարում, քան Բունինան, հավատա իմ խոսքին, բայց ինչ օգուտ, երբ այդ անունին դեռ սովոր չեն մեր ականջները:

- Նրա բախտը հենց սկզբից չբերեց:

- Ահա ամբողջ հարցը,- անմիջապես համաձայնվեց մորուքավոր ծերունին: - Եթե գլխավոր բալետմեյստեր Տալիզինը հանկարծամահ չլիներ, Ալիքյանի աստղը հիմա ամենից վառ կփայլեր մեր բալետի երկնակամարում: Ես երբեմն նույնիսկ

զարմանում եմ, որ նա չի թքում ամեն ինչի վրա և վերադառնում տուն:

- Շատ հպարտ ու ինքնասեր աղջիկ է,- գլուխը տմբտմբացրեց այտամորուսներովը, - մտքներովդ չանցկացնեք, թե կփախչի: Եթե Բունինան պատի նման կանգնած չլիներ նրա դիմաց- գիտեք, Վադիմ Պետրովիչ, ես մարդկայնորեն կարեկցում եմ այդ աղջկան: Բայց մենք ի՞նչ կարող ենք անել:

- Կարող ենք գնալ ու ծափահարել նրան,- ժպտաց Վադիմ Պետրովիչը:

- Օգտվելով առիթից, որ Բունինան այդ չի տեսնում,- մանրիկ ծիծաղեց

այտամորուսներով մարդը:

Զավենին այնքան հուզեց անծանոթ այդ մարդկանց կարեկից, սրտացավ խոսքը Էմմայի մասին, որ նա առաջին պահ ցանկություն զգաց կոնյակ հյուրասիրել նրանց: Բայց անմիջապես էլ ամաչեց իր մտադրությունից: Եթե մերժեն՝ շատ անհարմար բան կստացվի: Նրանք անմիջապես կհասկանան, թե ինչու թխադեմ երիտասարդը հանկարծ վճռեց հյուրասիրել: Ուրեմն ականջ է դրել իրենց կամացուկ արտասանած զրույցին՝ իր առնվազն հայրենակցուհու մասին: Չէ, ամոթ է:

Նա գիտեր, թե ուր է եկել և ինչ է տեսնելու, բայց սիրտն այնքան ուժգնորեն էր տրոփում, որ Զավեն Շարաֆյանին թվում էր, թե կողքի աթոռներին նստածները կլսեն այդ տրոփյունը: Իսկ երբ հոգեզմայլ, ասես եթերային երաժշտության մեջ, հեքիաթային փերու նման հայտնվեց Էմման- Զավենն առաջին անգամ ողջ էությամբ հասկացավ, թե որքան է սիրում նրան: Սիրում և կարեկցում: Սիրում և ցանկություն զգում պահպանել, պաշտպանել նրան:

Էմման աղավնի լիներ ասես, որն անհոգ ու թեթև ճախրում է օդի մեջ և եթե մի պահ ցած է իջնում, ապա միայն և միայն ավելի բարձր նետվելու համար: Նրա ցատկերն անբասիր ու անթերի էին և պտույտներն այնքան նուրբ ու նազանի, որ թվում էր, թե արտիստուհին որևէ ուժ չի գործադրում իր մարմնի վրա և եթե ցանկանա՝ վեր կսլանա միանգամից և կսավառնի անհունի մեջ- առանց ճիգ ու ջանքի, իրոք ամենահիսկական թևատարած աղավնու նման:

Զավեն Շարաֆյանը չէր սեթևեթում, երբ տարիներ առաջ հայտարարում էր, թե բալետից ոչինչ չի հասկանում: Բայց որքան էլ չհասկանար, հո տեսնում էր, թե որքան գեղեցիկ է պարում աղջիկը, հո տեսնում էր, թե ինչպես են պարտերի իր հարևանները շունչները պահած ակնդետ հետևում Էմմայի ելույթին, հո տեսնում էր, թե ինչ անսքող ոգևորություն է տիրում բեմում և ինչպես է շրջապատում շնչավորվում ամեն ինչ, երբ մենապարում է Ժիզելը: Իսկ երբ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Էմման իր մենապարն ավարտելուց հետո կաքավելով թեթևասահ հեռացավ բեմից, Զավենը ամաչեց ու հազիվ զսպեց ծափահարելու բուռն ցանկությունը, զսպեց իրեն ու միաժամանակ զարմանքով մտածեց, թե մի՞թե դահլիճում նստած բոլոր հանդիսատեսներն էլ ամաչում են ծափահարել: Դա այնքան անբնական ու տարօրինակ էր, որ տղան անհանգստացած ու սրտդողած շուրջը նայեց: Եվ նոր միայն տեսավ, որ դահլիճը գրեթե թափուր է: Լավ, դատարկ է, թող դատարկ լինի, բայց ինչու են լռել, ինչո՞ւ չեն ծափահարում ներկաները: Մի՞թե ճիշտ էին այն ծերունիները, մի՞թե սրանց մեջ չկա մեկը, որ թատրոն եկած լինի առանց նախապաշարմունքի, պարզապես գեղեցիկով հիանալու համար: Եվ կարծես ի պատասխան՝ նա գլխավերևից ծափեր լսեց, սկզբում զգույշ, հատուկենտ, հետո ավելի համարձակ: Ինչ-որ մեկը բացականչեց «բրավո», և երախտագիտությամբ լի հայացքը ձայնի կողմը շրջելով, Զավենը տեսավ, որ ծափահարում է «յարուսը»: Ջահել տղաներ ու աղջիկներ էին կախվել վերին էժանագին օթյակի բազրիքներից ու ծափահարում էին: Անկասկած, բալետի ուսումնարանի սաներ էին: Իսկ պարտերը լուռ էր: Լուռ էր նաև նվագախումբը: Հավանաբար սպասում էր, որ պարուհին կրկին բեմ դուրս գա և, եթե շատ ծափահարի և շատ պահանջի հանդիսատեսը, կրկնի իր մենապարը: Բայց Էմման բեմ դուրս չեկավ, հետզհետե դադարեցին ծափերը, և դիրիժորը, ասես թոթվելով ուսերը, շարունակեց ներկայացումը:

Բեմում հայտնվեց Կոմսը՝ գեղջուկ տղայի պարզ հագուստի մեջ ծպտված: Նա իր հերթական զոհին էր փնտրում դեռատի աղջիկների մեջ՝ նպատակ ունենալով գայթակղել ու սիրո կեղծ խոստումներով գերել նրան: Եվ տեսավ Ժիզելին: Նա ամենաչքնաղն ու հմայիչն էր գեղջուկ աղջիկների մեջ: Եվ կոմսը սկսեց սիրահետել նրան, օգտագործելով սրտեր որսալու իր ողջ հմտությունն ու փորձը, ցուցադրելով իր ճարպկությունը, ուժն ու առնականությունը և բոցավառ սերը անմեղ, միամիտ աղջկա նկատմամբ: Եվ Ժիզելը հավատաց նրան ու գերվեց նրանով: Ջուր էին երաժշտության մեջ հայտնվում տագնապալի հնչյունները, զուր էին Ժիզելի բախտակիցների՝ խարդավանքի զոհ դարձած վաղամեռիկ աղջիկ-ոգիների՝ Վիլիսների զգուշացումները: Ժիզելը սիրահարված էր, հավատում էր տղային և երջանիկ էր: Նա չէր թաքցնում իր երջանկությունը ու ողջ էությամբ, մարմնի ու ձեռքերի զարմանալի նրբին շարժումներով բացականչում, հայտարարում էր աշխարհին, որ ինքը սիրում է, որ ինքը ոչնչից չի երկյուղում, որովհետև սիրում է: Եվ սրընթաց իրար հաջորդող պատկերներում՝ թե մենապարում և թե կոմսի հետ կատարած զուգապարում Ժիզելը անսքող հպարտությամբ ի ցույց էր դնում իր հափշտակությունը, իր սերը, իր հավատը և ընդգծում, շեշտում հանուն սիրո ապրելու և հանուն սիրո թեկուզ կործանվելու իր կամքն ու վճռականությունը:

Ամեն ինչ լավ էր, ամեն ինչ բնականոն ու հիանալի էր ասես, բայց Զավենը հետզհետե աճող տագնապով զգում էր, որ Էմմայի շարժումների մեջ նախկին թեթևությունն ու եթերայինը կարծես թե այլևս չկան: Նրա խաղն իսկապես ընդգծված էր, բայց կատարողական վարպետության հետ միասին ընդգծված էին նաև ներքին տենդն ու լարվածությունը: Եվ Զավենը հասկացավ, թե ինչ է կատարվում: Ժիզելը ոչ այնքան Կոմսի համար էր խաղում, ոչ այնքան նրան էր պարզում իր հոգին, իր սիրտը, որքան հանդիսատեսին: Նրա յուրաքանչյուր շարժումը կարծես թե անմիջապես դահլիճին էր ուղղված և բողոքում էր, հանդիմանում էր, նախատում էր, մի՞թե դու չես տեսնում, թե որքան գեղեցիկ եմ ես, մի՞թե չես տեսնում, թե ինչ արվեստով եմ պարում, մի՞թե չես զգում, որ ամեն ինչ անում եմ քեզ վայելք պատճառելու համար, որ սրտանց սիրում եմ քեզ, ինչո՞ւ չես պատասխանում ինչո՞ւ ես այդպես անտարբեր ու անհաղորդ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նա ընդմիջմանը կրկին բուֆետ իջավ, մի փոքրիկ գավաթ կոնյակ խնդրեց, նստեց անկյունում, նախկին սեղանի մոտ ու մտքերի մեջ ընկավ: Գուցե թողնի հեռանա՞: Ինչ ուզում ես՝ ասա բայց Էմման անկասկած վատ կզգա, եթե իմանա, որ Զավենը դահլիճում է եղել: Որովհետև գրեթե կապ չկար նրա նկարագրածի և այսօրվա իրականության միջև: Հեռախոսով ինչ խանդավառությամբ էր խոսում իր ելույթների մասին: Մի՞թե կեղծում էր: Ասենք, չէ, քիչ առաջ ծերունիներն էլ էին նույնը ասում: Ուղղակի գլխավոր բալետմեյստերի մահից հետո հավանաբար խառնվել է ամեն ինչ, և Էմման ասպարեզից դուրս է մնացել: Երևանի օպերայի իր ղեկավարներից հիասթափված, նա ինչպիսի հույսեր էր կապում Լենինգրադի հետ: Այնինչ պարզվում է, որ նույնն է, միևնույնն է, քո արվեստը կոպեկի նշանակություն չունի, բոլորովին ուրիշ հատկանիշներ են պետք աչքի ընկնելու, հաջողություն ունենալու համար:

Զարմանալի մի բան՝ որպեսզի ինքնուրույնության հասնես, դու պետք է հրաժարվես դու լինելուց, լինես ոչ թե այնպիսին, ինչպիսին կաս, այլ ինչպիսին քո ղեկավարն է ուզում: Ինչպես նրան է հաճելի: Ուրեմն պիտի կորցնես քո ինքնուրույնությունը, ձեռքդ թափ տաս քո հպարտության, արժանապատվության, առաքինության ու պատվի վրա, որպեսզի ճանաչում ու պատիվ ձեռք բերես: Ձեռք բերես, որովհետև դա այլևս քո պատիվը չի լինելու, վերցնովի է լինելու, լինելու է ուրիշի ողորմությունը: Դու քանդելու ես քո տունը, որպեսզի նրա ավերակների վրա ապրես ուրիշի կառուցած տան մեջ: Սա՞ ինչ բան է: Եվ մի՞թե միայն արվեստում է այդպես: Իսկ քո՞ վիճակն ինչ է, Զավեն Շարաֆյան, նույնը չէ՞: Դու քո սեփական մտքերն ու դատողություններն էիր հանձնում թղթին՝ մինչև որ խմբագիր դարձրեցին քեզ: Իսկ հիմա, ահա Գառնիկ Բադալյանի մտքերն ու դատողություններն ես տպագրում. ամեն տողի վրա նրա դեմքը պատկերացնելով ու տառապելով, թե այդ տողի ու բառի մասին ինչ կարծիք կհայտնի առաջին քարտուղարը: Քեզ թվում էր, թե խմբագիր դառնալուց հետո ավելի անկախ ու ինքնուրույն կդառնաս, կանես այն, ինչ քո սիրտն ու միտքն են թելադրում: Այնինչ կատարվեց հակառակը: Ուրեմն մի՞թե մարդիկ որքան բարձրանում են պաշտոնում, այնքան կորցնում են ինքնուրույնությունը: Դե իհարկե, չէ որ ամեն ինչի համար վճարել է պետք: Ի վերջո ուրիշներից նաև փող են վերցնում առաջ քաշելու համար, իսկ քեզանից միայն անկախությունդ են գնել- Ուրեմն, հաշվիր, որ համեմատաբար էժան ես պրծել դու:

Նա հիշեց մի խորհրդակցություն, որ տեղի ունեցավ տարիներ առաջ, երիտասարդական թերթում, երբ ինքը ուսումնական փորձաշրջանի մեջ էր: ՀԼԿԵՄ Կենտկոմի քարտուղարն էր եկել և հաշվեհարդար էր տեսնում խմբագրության ղեկավարության հետ: Թերթը համարձակվել էր քննադատական նյութ տպագրել քաղուսուցման խմբակների անբավարար աշխատանքի մասին, առանձնապես ընդգծել էր, որ առանձին տեղերում բարձր մա-կարդակով չի ուսումնասիրվում ընկեր Ստալինի կենսագրությունը և նշել, որ այդ կապակցությամբ որոշ մեղքեր ունի նաև Կենտկոմի դասախոսական խումբը:

Կենտկոմի քարտուղարը զայրացած ջարդուփշուր արեց այդ հոդվածը՝ համարելով գաղափարապես խիստ վտանգավոր և պրովոկացիոն, իսկ վերջում սոսկալի վիրավորված ասաց.

- Եվ վերջապես ո՞վ է ձեզ իրավունք տվել քննադատել Կենտկոմին: Մոռանո՞ւմ եք, որ աշխատավարձ մեզանից եք ստանում: Դա ի՞նչ լկտիություն է՝ մենք ձեզ փող ենք տալիս, որ գրեք մե՞ր դեմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հենց այդպես էլ ասաց: Համարձակ, առանց ամաչելու:

Իսկ հիմա՞ ինչ է կատարվում: Ստալինը չկա, հա, բայց մի՞թե նույնը չէ: Խորհրդային յուրաքանչյուր քաղաքացի պետությունից, ավելի ստույգ՝ իր ղեկավարից է ստանում իր աշխատավարձը, իր ապրուստի միջոցը: Մի՞թե նա համարձակություն և իրավունք կունենա ընդդիմանալու նրան, որի տրամադրությունից ոչ միայն իր հացն է կախված, այլև իր կյանքը, իր ապագան: Իհարկե, ոչ բոլորն են կարող ընդդիմանալ ու չենթարկվել: Հերոսները քիչ են լինում և հենց դրանով էլ հերոս են: Իսկ Էմման կարողանում է: Էմման, ուրեմն, չի հանձնվում, դրա համար էլ փոխարինող է, դրա համար էլ անուն չունի, դրա համար էլ պարտերը չի ծափահարում նրան:

- Երրորդ զանգն արդեն հնչել է, չլսեցի՞ք:

Զավենը ցնցվեց ու սթափվեց: Սրահը գրեթե դատարկ էր: Եվ բուֆետապան կինը սեղաններից հավաքում էր բաժակները:

- Երրորդ զանգն արդեն տվել են. հիմա կփակվեն դռները, - ասաց նա:

Զավեն Շարաֆյանը ժպտաց ու մեղավոր զգաց իրեն:

- Կներեք,- ասաց նա: - Ես բալետից առանձնապես բան չեմ հասկանում: Ավելի շուտ եկել էի շենքը տեսնելու:

- Եվ ի՞նչ, դո՞ւր եկավ:

- Փառահեղ շենք է,- ասաց Զավենը: - Իսկ ներսը պարզապես տաճարի տպավորություն է թողնում: Աղոթելու ցանկություն ես զգում: Ափսոս, որ անհավատ ենք,- ժպտալով ավելացրեց նա:

- Շատ ափսոս,- հանկարծ բոլորովին մի ուրիշ տեսակ, զգացմունքով ասաց կինը:

Նա բաժակները դրեց լվացարանի մեջ, լվաց ու սրբիչով չորացրեց ձեռքերը:

- Ուրեմն հյո՞ւր եք: Իսկ քաղա՞քն ինչ տպավորություն թողեց ձեզ վրա:

Զավենը հասկացավ, որ կինը խոսել է ուզում: Հետաքրքիր դեմք ուներ, շատ սպիտակ էին այտերն ու ճակատը, խիստ շպարված, իսկ հոնքերը միայն մատիտով էին գծված: Առաջին հայացքից ջահել էր երևում, սակայն ուշադիր նայելուց հետո տարիքը մատնում էին պարանոցի թորշոմած ծալքերը և ձեռքերի ընդգծված, թուլացած երակները:

- Ճիշտն ասած՝ չեմ հասցրել տեսնել ինչպես հարկն է,- անկեղծ խոստովանեց տղան: - Փաստորեն միայն առափնյա փողոցում եմ եղել և Նևսկի պողոտայում: Բայց ինչ որ հասցրել եմ նկատել, ցնցող ու անկրկնելի է գոնե ինձ համար: Ճիշտ են գրում, որ Լենինգրադը թանգարանային քաղաք է…

- Այո ,- անսպասելիորեն հանկարծ նյարդայնացավ կինը: - Լենինգրադը կա, բայց ասացեք ինձ՝ ո՞ւր են լենինգրադցիները…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավենը զարմացած նրան նայեց.

- Ի՞նչ իմաստով,- ու նրան թվաց, թե կռահեց անմիջապես: -- Այո, իհարկե, բլոկադան: Որոշ բաներ կարդացել ենք ու տեսել կինոնկարներում: Սոսկալի է եղել- Զարհուրելի…

Բուֆետպանուհի կինը չգիտես ինչու ջղային շարժումներով կրկին ծորակի տակ լվաց ձեռքերը, չորացրեց նորից ու եկավ նստեց տղայի առաջ:

- Իսկ ինչո՞ւ միայն բլոկադան- Կարծես թե հենց սկզբից, նախքան նույնիսկ անունը փոխելը, ամեն ինչ արել են, որպեսզի այս քաղաքի բնակիչներին փոխեն: Այո: Ես այստեղ եմ ծնվել, Պետերբուրգում,- ընդգծեց նա: - Օրիորդաց գիմնազիան եմ ավարտել և քսանհինգ տարի երգել եմ այս թատրոնի երգչախմբում: Ես հո տեսել եմ, գիտեմ, թե ովքեր էին այս քաղաքի բնակիչները և հպարտությամբ կասեմ, որ ես էլ նրանցից մեկն էի- Հանդարտ, արժանապատվությամբ լի, ազնիվ, ազնվական, մտավորական մարդիկ էին, Ռուսաստանի ծաղիկը: Իսկ հիմա չկան: Նրանց վռնդեցին իրենց ապարանքներից ու նետեցին աշխարհի ծայրերը: Բայց չբավարարվեցին դրանով: Ովքեր փրկվել էին և ում ողորմածաբար թույլ էին տվել հնոցապան կամ դռնապան աշխատել նույն իրենց ապարանքներում, գնդակահարեցին կամ աքսորեցին…

Զավենը վշտացած օրորեց գլուխը:

- Դուք բլոկադայի մասին միայն կարդացել եք, կինոնկարներում եք տեսել- Իսկ ես իմ աչքերով, այ այս աչքերով եմ տեսել, թե ինչպես էր իմ հարևան կոմպոզիտորը այրում իր նոտաները, որպեսզի թոռան սառած ոտքերը մի քիչ տաքանան: Ես տեսել եմ, թե ինչպես էր աշխարհահռչակ վիրաբույժը սովորական վայրենու նման կատու որսում և ուտում կատվի միսը, որպեսզի իր օրապահիկով հիվանդ մորը կերակրի: Ես տեսել եմ, թե մեր քնքուշ պարուհիները, մեր բարձրակիրթ, նրբաճաշակ երգիչներն ու երաժիշտները ինչպես էին քլունգներով ու բահերով փորում սառցակալած հողը, որպեսզի խրամատներ սարքեն, իսկ երեկոյան ուժասպառ և քաղցած, բայց շքեղ հագուստների մեջ ներկայացումներ տալիս վիրավոր ռազմիկների համար: Եվ ի՞նչ, ի՞նչ պատահեց հետո, երբ թվում էր, թե պիտի խոնարհվեին լենինգրադցիների հերոսության և տոկունության առաջ, հուշարձան պիտի կանգնեցնեին յուրաքանչյուր լենինգրադցու համար- նրանցից լավագույններին, ամենաարժանավորներին կրկին հեռավոր աքսորավայրեր ուղարկեցին, որպես ժողովրդի թշնամիների: Դուք որևէ բան հասկանո՞ւմ եք: Ես ոչինչ, ոչինչ չեմ հասկանում: Ասում եք՝ թատրոն- մի՞թե սա թատրոն է: Ովքե՞ր են հիմա մեր հանդիսատեսները, մեծ մասամբ նրանք, ովքեր գալիս են, որպեսզի հաջորդ օրը իրենց հիմնարկներում հայտարարեն թե երեկ օպերա էին գնացել: Իսկ առաջ, սիրելի բարեկամ, գալիս էին մտավորականները, թատրոնի սիրահարներն ու բարձրաճաշակ գիտակները: Եվ ինչպես էին հագնվում- Փոխանակ նրանք մեզ նայեն, մենք էինք վարագույրի ետևից դիտում նրանց զգեստները, նրանց սանրվածքն ու զարդերը- Իսկ հիմա… հիմա բանվորական արտահագուստներով են գալիս ու ցեխոտ կոշիկներով- Այնպես որ իրականացավ «Արվեստը մասսաներին» լոզունգը- Ինչպես ինձ իջեցրին բեմից և հասցրին բուֆետ, այնպես էլ արվեստն է իջել ու մասսաներին հասել: Եվ հիմա ոչ թե լենինգրադցիներն են ապրում այս քաղաքում, այլ մասսաներ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Դառնացած կին է, զարմանալով, թե ինչու հանկարծ ինքը խոստովանահոր դեր ստացավ, մտածեց Զավեն Շարաֆյանը, գուցե թե տանը զրուցակից չունի և այստեղ նույնպես չգիտե ինչով լցնել աղմկոտ ընդմիջմանը հաջորդող լռությունը: Բայց ինչո՞ւ հատկապես ինձ ընտրեց: Հրեն մյուս անկյունում արդեն երկրորդ շիշն են բաժանում երեք մազակալած դեմքերով ու իրոք ցեխոտ կոշիկներով այցելուներ: Կինը ասես հասկացավ, թե ինչ է մտածում հաճախորդը, որովհետև լռեց միանգամից, շփոթվեց, բարձրացավ տեղից, հետո կրկին սեղանին թիկնեց ու ասաց,

- Ներեցեք, խնդրում եմ, գիտե՞ք ինչու հանկարծ ակամա բացեցի սիրտս: Որովհետև դուք անկեղծ ու անմիջական մարդ եք:

- Ինչի՞ց ենթադրեցիք,- ժպտաց Զավենը:

- Դուք ասացիք, որ բալետից ոչինչ չեք հասկանում: Շատ քչերը կարող են այդ խոստովանությունն անել: Եվ հետո- և հետո դուք թեև քիչ, բայց կոնյակ եք խմում… և հասկանալով ու գնահատելով եք խմում: Իսկ այստեղ,- նա գլխով արհամարհաբար ցույց տվեց անկյունի սեղանը,- Իսկ այստեղ հիմնականում գերադասում են պորտվեյնը: էժան է և շուտ է ազդում:

Բուֆետի կիսաբաց դռան ետևում լռեցին, մարեցին երաժշտության վերջին հնչյունները, և Զավենը լարվեց, քարացավ այնուամենայնիվ սպասելով ծափերի: Բայց որովհետև անհամերաշխ, ասես հավուր պատշաճի էին ծափերը, չդիմացավ, արագորեն բարձրացավ տեղից ու միջանցք դուրս եկավ:

Դահլիճի դռները բաց էին կրնկի վրա և հանդիսատեսները փութով շտապում էին դուրս՝ դեպի հանդերձարան:

Շտապեց նաև Զավենը: Հարկավոր է շուտ վերցնել թիկնոցը, գնալ ու կանգնել ծառայողական մուտքի մոտ և Էմմային ասել կներես, խնդրում եմ, ուշացա, չկարողացա հասնել ներկայացմանը և դրա համար էլ որոշեցի դրսում սպասել քեզ:

Հանդերձարանից վերցնելով անձրևանոցն ու լայնեզր գլխարկը, նա փողոց դուրս եկավ: Մանրիկ անձրև էր գալիս, որ սկսվել էր դեռևս կեսօրին և ինչպես երևում է այլևս վերջ չուներ: Բարձրացնելով օձիքը, Զավենը շրջանցեց շենքը և կանգ առավ ծառայողական մուտքի դիմաց, փոքրիկ պուրակի հենց եզրի սաղարթախիտ ծառի տակ: Երբ դուրս էր գալիս շքամուտքից, ակամա ուշադրություն դարձրեց, որ հանդիսատեսներին սպասող ընդամենը երկու-երեք մեքենա կար միայն: Իսկ ծառայողական մուտքի դիմացով անցնող ծառուղին ավտոմեքենաներով լի էր: Դրանցից շատերը սեփական էին և տերերը, անձրևից մեքենաների մեջ պատսպարված, ստեպ-ստեպ ծառայողական մուտքին էին նայում, սպասելով իրենց հարազատներին կամ ծանոթներին:

Գուցե նրանցից մեկն էլ Էմմային է սպասում, հանկարծահաս խանդով մտածեց Զավենը:

Ծառայողական մուտքը աշխուժացավ: Սկզբում հատուկենտ, իսկ հետո խումբ-խումբ դուրս եկան ներկայացման մասնակիցները որպես կանոն նախ դեպի երկինք նայելով և ապա շտապով ծածկելով անձրևանոցների կնգուղները: Ոմանք անմիջապես դեպի իրենց սպասող

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ավտոմեքենաները նետվեցին, ոմանք էլ արագ-արագ քայլեցին ծառուղով՝ շենքը շրջանցելու և պողոտա դուրս գալու համար:

Զավենը այնքան լայն էր բացել աչքերը և այնպես լարված էր սպասում Էմմային, որ ցավում, այրվում էին կոպերը:

Իսկ եթե հանկարծ որևէ մեկի հետ դուրս գա ու թևանցուկ արած անցնի մոտով, ի՞նչ պետք է անի ինքը: Զա՞յն տա: Հետո: Հետո, հետո՞ ինչ…

Կամ եթե նույնիսկ միայնակ դուրս գա, ինչպե՞ս է բացատրելու իր անակնկալ հայտնվելը, ի՞նչ է ասելու, ինչպե՞ս է արդարանալու, որ նախօրոք զանգ չի տվել և չի հայտնել իր գալու մասին: Էմման չի՞ մտածի, թե տղան նենգաբար վճռել է թաքուն հետամուտ լինել, նախնական ստուգում անցկացնել, ստուգել, թե Լենինգրադում ինչ է անում, ինչով է շնչում, ինչպես է պահում իրեն իր ընկերուհին:

Նրան նողկալի թվաց իր վիճակը և ապուշություն՝ անակնկալ մատուցելու իր նախնական մտադրությունը:

Բայց ինչ անի, թողնի հեռանա՞… երբ այնքան ուզում է տեսնել աղջկան, երբ ուզում է նրա կողքին լինել, հանգստացնել, մխիթարել, սփոփել նրան: Դարձյալ հիմարություն, չէ՞ որ Էմման ամեն կերպ թաքցնում է իր վիճակը, հայտարարում է, թե ինքը երջանիկ է ու հաջողությունների մեջ է, էլ ինչպե՞ս սփոփես նրան, ի՞նչ ասես:

Ոչինչ էլ չեմ ասի, վճռեց Զավենը, կբռնեմ արմունկից ու հյուրանոց կտանեմ: Եթե խաղալ է, ես էլ կխաղամ: Կվերցնեմ զամբյուղը ու կգնանք նրա տուն, որովհետև ռեստորանը անկասկած փակ կլինի արդեն: Կնստենք, կզրուցենք, նա կպատմի իր հաջողությունների մասին, ես էլ կհավատամ նրան և դա ամենաանմեղ խաբեությունը կլինի իմ կյանքում: Իսկ հետո ես նրան ամենայն լրջությամբ ու վճռականությամբ կառաջարկեմ…

Թե ամենայն լրջությամբ և վճռականությամբ ինչ պետք է առաջարկեր, Զավենը չհասցրեց մտածել, որովհետև միանգամից տեսավ աղջկան: Նա մենակ էր: Գրեթե թափանցիկ ու սև անձրևանոց կար հագին, որ նորություն էր երկրում, և մազերին էլ անձրևանոցի նույն նյութից գլխաշոր կար: Էմմային ոչ մի ավտոմեքենա չէր սպասում, որովհետև աղջիկը չնայեց անգամ ավտոմեքենաների կողմը, բայց ոչ թե ծառուղով դեպի ձախ թեքվեց՝ պողոտա դուրս գալու համար, այլ ուղիղ քայլեց դեպի Զավենը: Դա այնքան անհավանական ու անսպասելի էր, որ Զավենը կորցրեց իրեն և որևէ փորձ չկատարեց շարժվելու տեղից: Հետո անմիջապես էլ մտածեց, որ երևի Էմման հեռվից տեսել է իրեն: Դե, իհարկե, տեսել է, ուղիղ դեպի իրեն է գալիս և կարծես թե հենց Զավենին է նայում: Տղան ժպտաց ուրախ, նույնիսկ տարածեց ձեռքերը, բայց հենց նույն դիրքում էլ մնաց շփոթահար, որովհետև հասկացավ, որ աղջիկը նրան չի տեսնում: Ծառից կախված աղոտ լապտերը մի պահ լուսավորեց Էմմայի դեմքը և նրա լայն բացված աչքերում Զավենը մի այնպիսի հուսահատություն և տխրություն նկատեց, որ սիրտը կծկվեց ցավից ու ձայնը մարեց կոկորդում: Իսկ Էմման եկավ ու անցավ նրա կողքով, նեղլիկ արահետով, ու քիչ անց նրա փոքրիկ կերպարանքը անհետացավ անձրևի մշուշի վարագույրի ետևում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Երևի ահագին ժամանակ անցավ, մինչև որ տղան ուշքի եկավ և հազիվ քարշ տալով թուլացած, ծանրացած ոտքերը, առաջ անցավ արահետով, որը քիչ անց նրան մի փոքրիկ փողոց դուրս բերեց: Նա նույնիսկ հասցրեց նկատել, թե ինչպես արագացնելով քայլերը ու վազքի անցնելով, Էմման կտրեց-անցավ փողոցն ու ավտոբուս նստեց: Նույնիսկ համարը նկատեց՝ 128: Ու կանգ առավ: Կարող էր իհարկե որևէ ավտոմեքենա նստել ու հետևել աղջկան: Նա նույնիսկ բարձրացրեց ձեռքը, բայց ասես հրաշքով հայտնված տաքսու վարորդին խնդրեց ոչ թե հետևել ավտոբուսին, այլ տանել հյուրանոց: Միայն խաբված ամուսին թվալու ամոթը չէր, որ կաշկանդեց նրան: Այլևս տրամադրություն չկար և ուժ չկար; Հայացքի առջև անընդհատ Էմմայի աչքերն էին՝ հուսահատությամբ և տխրությամբ լի:

Երբ բացում էր հյուրանոցի իր համարի դուռը, նա լսեց, որ ներսում զնգում է հեռախոսը ու շատ զարմացավ: Ո՞վ կարող է լինել այս ժամին: Մի պահ նույնիսկ անցավ ուղեղով, թե Էմման է, բայց դա այնքան անհեթեթ միտք էր, որ անմիջապես մի կողմ նետեց այն և վերցրեց լսափողը:

- Բարի երեկո, ընկեր Շարաֆյան,- հնչեց լսափողի մեջ և նա անմիջապես ճանաչեց «Վեչերնայա Լենինգրադ» թերթի խմբագրի ձայնը: - Կներեք, որ ուշ ժամի եմ զանգահարում: Երեկոյան մի քանի անգամ փորձեցի, ձեր հեռախոսը չէր պատասխանում:

- Օպերա էի գնացել,- ասաց Զավենը՝ միանգամից հիշելով բուֆետապան կնոջն ու ամաչելով:

- Օպերա՞: Ի՞նչ կար:

- «Ժիզել» բալետն էր:

- Երանի ձեզ,- ասաց խմբագիրը,- չծիծաղեք, բայց ես դեռ չեմ տեսել:

Նա ինքը ծիծաղեց իր խոստովանության վրա ու ասաց,

- Ձեր ինքնաթիռի տոմսը ինձ մոտ է: Վաղը ժամը երկուսին եք թռչելու:

Զավենը սրտանց զարմացավ.

- Իսկ խորհրդակցությո՞ւնը..

- Համարվեց անվավեր,- կրկին ծիծաղեց խմբագիրը: - Գտան, որ դուք դեռ զարգացած չեք ձեր ազգային լեզուները մոռանալու համար:

- Այդպիսի հիմարություն,- փնչաց տղան,- այդպիսի անմտություն ես կյանքումս չէի լսել:

- Կրկին երանի ձեզ,- հեռախոսի այն ծայրում բարձրաձայն հառաչեց խմբագիրը: - Իսկ մենք շատ ենք լսել ու լսում ենք: Երբ ղեկավարությունը չի կարողանում զբաղեցնել մարդկանց բերանը, ականջներն է զբաղեցնում: Մինչև որ տեսնի, թե ինչ է դուրս գալիս այս ամենից:

Զավենը վախեցած ակամա հեռախոսի սարքին նայեց: Նրան հազար ու մի տեղ զգուշացրել էին, որ հյուրանոցների հեռախոսները հսկողության տակ են: Այդ մարդուն ոչ ոք չի՞ ասել: Սրանք վա՞խ չունեն, ինչ է: Բոլորովին ուրիշ տեսակ են խոսում, ազատ ու անփույթ, Արմեն

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զատիկյանի նման, հիշեց Զավենը: Քիչ առաջ այն բուֆետապան կինը, հիմա թերթի խմբագիրը- Եվ անմիջապես ընդհատեց նրան,

- Սվյատոսլավ Պավլովիչ,- ասաց նա: - Առավոտյան ժամանակ չե՞ք ունենա ինձ հետ նախաճաշելու: Հայկական կոնյակ կա, բաստուրմա, պանիր, կանաչիներ…

Խմբագիրը ուրախ ծիծաղեց.

- Նման բաները այս ժամին ասելը առնվազն դաժանություն է, գիշերը չեմ կարողանա քնել:

- Ուրեմն, սպասում եմ:

Նա լվացվեց, միջանցք դուրս եկավ ու մոտեցավ հարկի հերթապահին, որը սիրունատես, ջահել աղջիկ էր:

- Ես ձեզ մի բան պետք է խնդրեմ,- ասաց նա:

Աղջիկը ժպտաց կոկետաբար ու բարձրացրեց սիրունիկ դնչիկը:

- Լսում եմ, ընկեր հարավցի: Ի՞նչ եք ուզում խնդրել,- հարցրեց հատ-հատ արտասանելով բառերը, որովհետև անգիր գիտեր, թե ինչի համար է խոսեցնում իրեն այս սևահեր, գեղեցիկ երիտասարդը և գիտեր նաև, թե ինքը ինչ է պատասխանելու:

- Ես հեռախոսի մի համար կհավաքեմ, իսկ երբ լսափողը վերցնեն, դուք ասացեք՝ պատասխանեք Երևանին: Ընդամենը: Խնդրում եմ, միայն այդքանը, պատասխանեք Երևանին:

Աղջիկն ակնհայտ հիասթափված էր, բայց դեմքից չհեռացրեց ժպիտը:

- Իսկ ինչո՞ւ եք ուզում խաբել մեր աղջիկներին:

- Ես ձեր աղջիկներին չեմ խաբում,- ասաց Զավենը: - Ես իմ աղջկան եմ ուզում խաբել: Որպեսզի նա չտխրի:

Հարկի հերթապահ աղջիկը առաջին տարին չէր, որ հյուրանոցում էր աշխատում, շատ բան էր տեսել ու սովորել էր առանձնապես չզարմանալ:

Նա Զավենի համարը մտավ, սպասեց մինչև տղան հավաքեց թվերը, ականջ դրեց մի պահ ու ասաց իսկական հեռախոսավարուհու անտարբեր, մետաղային ձայնով,

- Պատասխանեք Երևանին:

Հետո տղային մեկնեց լսափողը և ինքն իրենից գոհ, խնդմնդալով դուրս եկավ սենյակից:

- Ալո,- ձայն տվեց Զավենը, աշխատելով, որ ձայնը խուլ ու խռպոտ հնչի,- ալո, լավ չեմ լսում, Էմմա, ալո, դո՞ւ ես…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես եմ,- ուրախ ճչաց աղջիկը,- որտեղի՞ց ես խոսում, Զավ…

- Երևանից, ո՞րտեղից: Խորհրդակցության եմ եկել:

- Բայց զանգերը կարճ էին հնչում,- կասկածեց Էմման:

- Նայած ում համար,- բղավեց Զավենը: - Ինձ համար անտանելի երկար էին հնչում- նույնիսկ վախեցա, թե տանը չես:

- Բա այս ժամին որտե՞ղ պետք է լինեի, գիժ,- ծիծաղեց աղջիկը:

- Ո՞վ իմանա,- ասաց տղան: - Ո՞նց ես, Էմմա- շատ եմ կարոտել քեզ:

- Լավ եմ, սիրելիս, լավ եմ: Եթե պարում եմ, ուրեմն լավ եմ, հենց քիչ առաջ վերադարձա թատրոնից:

- Իսկ գործե՞րդ ոնց են,- հարցրեց ու անմիջապես ամաչեց տղան:

- Ինչպես միշտ,- ասաց աղջիկը: - Ամեն ինչ հիանալի է: Միայն թե շատ եմ հոգնում: Կյանքումս առաջին անգամ զգում եմ, որ հոգնում եմ, Զավեն:

- Դե ուրեմն թող ամեն ինչ ու եկ, դու գիտես, որ ամեն օր, ամեն ժամ սպասում եմ քեզ:

Լռություն տիրեց:

- Դու ինձ լսո՞ւմ ես, Էմմա:

- Լսում եմ,- ասաց աղջիկը: - Եվ երևի շուտով հենց այդպես էլ կանեմ- Գիտես, երևի իսկապես զարմանալի ժողովուրդ ենք մենք: Առանց մեր տան, մեր երկրի չենք կարողանում ապրել- Դու գիտես, չէ՞, որ այդպիսի հիվանդություն կա՝ հայրենաբաղձություն…

- Իսկ այդ հայրենաբաղձության մեջ զավենաբաղձություն չկա՞, ինչ է,- իբր խռոված հարցրեց տղան:

- Կա, կա,- ծիծաղեց Էմման,- ինչ որ մի անկյունում, մի փոքրիկ քաղաքում կարծես թե կա:

- Դրանով էլ գոհ ենք, մինչև որ ձեռքս ընկնես… Մինչև որ ձեռքս ընկնես,Էմմա աղջիկ: Այն ժամանակ դու անկասկած ուրիշ տեսակ կխոսես,.,

- Երանի այդ օրը,- հանկարծ ծիծաղեց աղջիկը:

Չէ, սա բոլորովին ուրիշ Էմմա է:

- Լսիր,- ասաց Զավենը,- ընկերներիցս մեկը գիշերը Լենինգրադ է թռչում: Նրա միջոցով ես մի զամբյուղ եմ ուղարկում քեզ: Կթողնի ձեր պահակի մոտ…

- Ի՞նչ միտք ունի, սիրելիս, երդվում եմ, ամեն ինչ ունեմ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Եղա՞վ- հայրենաբաղձության մասին ելույթներ էիր ունենում- Հայրենիքի հոտեր են:

- Շնորհակալություն, սիրելիս, շնորհակալություն, Զավեն ջան…

Զավեն ջան…

- Բայց հույս չունենաս, թե էլի կուղարկեմ- վատ կսովորես, կբավարարվես դրանով ու այլևս չես գա: Եվ ընդհանրապես, ընդհանրապես, ինչպես մեր դասախոսն էր ասում՝ ականջիդ օղ արա և գնա միայն այնտեղ, որտեղ քեզ սպասում են: Ես քեզ սպասում եմ, Էմմա:

- Գիտեմ, Զավեն ջան,- հանկարծ շատ կամացուկ, գրեթե շշնջաց աղջիկը: - Գիտեմ ու դա է, որ ինձ պահում է…

* * *

Երկրի կյանքը Կենտկոմի պլենումներով է չափվում, մեր խմբագրության կյանքը՝ բյուրոներով, մտածում էր Զավեն Շարաֆյանը, անցնելով ուրբաթ օրվա համար իր սովորական երթուղին, Միհրան Գալստյանի և Մուշեղ Օթարյանի հետ քայլելով դեպի քաղաքային կոմիտեի շենքը, որտեղ հերթական բյուրոյի նիստը պետք է տեղի ունենար:

Զարմանալի բան էր կատարվում: Երբ Խրուշչովը որպես Կենտկոմի գլխավոր քարտուղար իր գործունեությունը նոր էի սկսել և վիթխարի թափ ու ծավալի, պարզապես հեղափոխական, հեղաշրջող գործունեություն էր ծավալել, քիչ էր խոսում: Իսկ երբ երկրի վերակառուցման ճանապարհին հազարումի տեսակ խոչընդոտների հանդիպելով, բացահայտ ու գաղտնի ընդդիմադրողների հետ կռիվ մղելով շփոթվեց, մոլորվեց ու թուլացրեց աշխատանքը, սկսեց շատ խոսել: Խոսում էր յուրաքանչյուր առիթով և ամենուրեք, որտեղ պատահի: Խոսում էր ամեն ինչի մասին՝ խնդրո առարկան եգիպտացորենը լիներ, քաղաքաշինությունը, ճարտարապետությունը թե գրականությունը: Եվ երբ խոսում էր, թերթերը ստիպված լույս էին տեսնում հաջորդ, իսկ հանրապետություններում, որպեսզի թարգմանվեն նույնիսկ երրորդ օրը և այն էլ տասնվեց էջով: Որովհետև նրա մտքերը սովորական չորս էջում չէին տեղավորվում:

Գրեթե ամիս չկար, որ պլենում չկայանար և այն էլ պատմական պլենում: Հենց ամսվա անունով էլ կոչվում էին՝ պատմական հունվարյան պլենում, փետրվար-մարտյան պլենում, ապրիլյան պլենում և այլն: Պլենումներն իրար չխառնելու համար հատուկ ընդգծում էին տարեթիվը կամ նշում, որ խոսքը վերաբերում է ոչ թե այս տարվա պատմական հունվարյան պլենումին, այլ անցյալ կամ նախանցյալ տարվա պատմական հունվարյան պլենումին: Եվ այդ պլենումներում ընդունվում էին այնպիսի երկարաշունչ որոշումներ, որ երբ մարդիկ ընթերցում, վերջացնում, ըմբռնում էին, արդեն սկսվում էր հաջորդ պլենումը իր նոր որոշումներով և բառացիորեն ժամանակ չէր մնում այդ որոշումները կենսագործելու համար:

Թե Գլխավոր քարտուղարի մարդկային դեմոկրատական բնավորությունը, թե երկրում տարածված խառը իրավիճակը թույլ էին տվել, որ աննախընթաց զարգացում ապրի անեկդոտը: Ասում էին, թե Խրուշչովն ինքը անեկդոտներ շատ է սիրում, նույնիսկ հետաքրքրվում է, թե ինչ անեկդոտներ են պատմում իր մասին և հետևություններ է անում դրանցից իր հետագա աշխատանքի համար: Եթե իրոք դա այդպես էր, ապա նրա ականջին

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հասած անեկդոտների մեծ մասը պետք է որ եգիպտացորենի և պլենումների մասին լիներ: Որովհետև նույնիսկ այդ փոքրիկ քաղաքում երբ մեկն ուզում էր մյուսին հյուր կանչել, ասում էր.

- Ոգևորված պատմական ապրիլյան պլենումի պատմական որոշումներով՝ որոշել եմ պատմական խաշ դնել, կիրակի օրը եկեք մեր տուն:

Իսկ Միհրան Գալստյանը մակետ կազմելիս սուլում-սուլում էր ու մեկ էլ հանրապետական ռադիոյի հանրաճանաչ հաղորդավարի ձայնով ազդարարում.

- Պլենումների առատ բերք ստացան Համզաչիման գյուղի աշխատավորները…

- Բայց հիմա Միհրան Գալստյանը զարմանալիորեն տխուր ու մտազբաղ էր, և Զավեն Շարաֆյանը կատակեց.

- Միհրան, քե՞զ ինչ է պատահել, սգավորի տեսք ունես, այս անգամ հո մեր հարցը չեն քննում, մենք ենք քննում ուրիշների հարցը:

Միհրանը թափ տվեց ձեռքը ու չպատասխանեց: Նրա փոխարեն խոսեց Մուշեղ Օթարյանը.

- Սա պատմական օր է ինձ համար, Զավեն Աշոտիչ, կյանքումս առաջին անգամ բյուրոյի եմ մասնակցելու:

- Երանի քեզ,- հառաչեց պատասխանատու քարտուղարը:

- Երանի ինձ, որ մասնակցելո՞ւ եմ, թե որ առաջին անգամ եմ մասնակցելու: Չհասկացա:

- Կհասկանաս,- քմծիծաղ տվեց Միհրանը:

Երբ նրանք ընդունարան մտան, տեսան որ Գառնիկ Բադալյանի առանձնասենյակը արդեն լեփլեցուն է: Բյուրոյի օրերին հատուկ աշխուժություն և աղմուկ էր: Հրահանգիչները՝ ձեռքներին ինչ-որ ցուցակներ, այս ու այն կողմ էին գնում շտապով, ստեպ-ստեպ հայտնվելով ընդունարանում և տեղեկանալով, թե բոլո՞րն են հավաքվել արդյոք: Տեսնելով խմբագրության աշխատողներին, պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի նոր վարիչ Հրանտ Օլթեցյանը գոհունակ ժպտաց,

- Զավեն Աշոտիչ, ներս մտեք, սկսում ենք:

Քաղաքի դատախազ Գագիկ Միսակյանը հեռվից ձեռքով կանչեց նրան: Նա երկար սեղանի շուրջը իր կողքին տեղ էր պահել խմբագրի համար և երբ Զավենը նստեց, շշնջաց նրա ականջին.

- Հո կոտորած չի լինելու…

- Ձեց համար գործ է բացվում,- ի պատասխան նրա ականջին շշնջաց Զավենը: - Ում հանեն կուսակցությունից, ձեզ ստիպելու են քրեական գործ հարուցել: Իմ կարծիքով, այսպես որ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

գնա, մի օր Գառնիկ Վարդանիչը քաղաքում կոմունիստ չի գտնելու, որպեսզի հեռացնի կուսակցությունից:

Գագիկ Միսակյանը ծիծաղեց,

- Ձեր օգնությամբ, ձեր օգնությամբ… Բայց այն էլ ասեմ, որ այդ հարցերը հիմա ինձ մազաչափ իսկ չեն հուզում, ընկեր Շարաֆյան:

- Ինչո՞ւ:

- Ես գնում եմ, ախպերս, կանչել են մայրաքաղաք: Այնպես որ այս քաղաքի վրա հիմա գիտե՞ս որտեղից եմ նայում: Հանրապետական դատախազությունից: Որ նույնն է, թե ինքնաթիռից նայես:

- Որ այդպես է, բարձր ղեկավարների օրինակով մեր քաղաքի վրայից թռչելիս ողջույնի հեռագիր ուղարկիր Գառնիկ Վարդանիչին,- կատակեց Զավենը, թեև զգաց, որ սիրտը կծկվում է նախանձից:

- Ո, Գառնիկ Վարդանիչը…

Քաղաքի դատախազը կարծես թե ինչ-որ բան էր ուզում ասել, բայց անմիջապես ընդհատեց խոսքը, որովհետև կողքի փոքրիկ սենյակից հայտնվեց քաղկոմի առաջին քարտուղարը, գրավեց իր տեղը և արագ մի հայացք նետելով բյուրոյի անդամներին բարևեց ընդհանուր կարգով:

Զավեն Շարաֆյանն էլ իր հերթին նայեց նրա հայացքի ուղղությամբ և հանկարծ մտածեց, որ բյուրոյի նախկին անդամներից միայն Գրետա Սուրենյանն ու դատախազն են մնացել: Քաղսովետի նախագահ Սահակ Միրզոյանի տեղում, Բադալյանի կողքին նստած էր կոճղի նման հաստ ու կարճ, բայց չափազանց դյուրաշարժ Կարեն Սուքիասյանը: Բոլորին հայտնի էր, որ նա Գառնիկ Բադալյանի հետ թեև տարբեր կուրսերում, բայց միաժամանակ էր սովորել Պոլիտեխնիկական ինստիտուտում և երկուսն էլ ԼԿԵՄ կոմիտեի կազմի մեջ են եղել: Սակայն չար լեզուներն ասում էին, թե Գառնիկ Վարդանիչը նրան իր մոտ է բերել ոչ թե ընկերական զգացմունքներից դրդված, այլ որովհետև բիլիարդի վարպետ էր Կարեն Սուքիասյանը: Բյուրոյի կազմում նոր

դեմքեր էին նաև Քիմիական կոմբինատի դիրեկտոր Լենդրոշ Ջանյանը, դարձյալ Կարեն անունով, բայց Բաբայան ազգանունով բանկի կառավարիչը, քաղկոմի կազմակերպական բաժնի վարիչ Լյուդվիգ Մելոյանը և կառուցվող գորգագործական ֆաբրիկայի դիրեկտոր Գալուստ Գևորգյանը: Նրանք բոլորն էլ գրեթե միատեսակ էին հագնված՝ կաշվե սև բաճկոններ ունեին և կարմիր փողկապներ և ինչպես նույն չար լեզուներն էին տարածել՝ Իտալիայում ժամանակին ֆաշիստական հեղաշրջում կատարած և իշխանության գլուխ անցած սև բլուզավորներին էին հիշեցնում:

Հոգու խորքում Զավենը չէր կարող չխոստովանել, որ նրանք և ընդհանրապես Գառնիկ Բադալյանի առաջ քաշած բոլոր կադրերը եռանդուն, ձեռներեց, իրենց համար գործ ստեղծող, գիշեր-ցերեկ աշխատող տաղանդավոր մարդիկ են: Եվ եթե քաղկոմի առաջին քարտուղարը

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

արդարացնում էր այն մարդկանց, որոնք պետությանը հարյուր հազար ռուբլի օգուտ բերելուց հետո մեկ-երկու հազարը իրենց գրպանն են դնում, ուրեմն նրանք՝ այդ կաղրերը անթերի էին: Որովհետև նրանց միակ աչքի ընկնող մեղքը պերճասիրությունն էր, որ դրսևորվում էր գրեթե ամեն ինչում՝ հագուստի, սանրվածքի, կենցաղի մեջ: Ծառայողական ավտոմեքենաներից բացի, նրանք բոլորն էլ շքեղ «ԶԻՄ» ավտոմեքենաներ ունեին և ծխում էին ամերիկյան սիգարետներ: Բայց ինչպես նկատել էր Զավենը, նրանցից ոչ մեկը «Ֆիլիպ-Մորիս» չէր օգտագործում, այդ մենաշնորհը թողնելով միայն Գառնիկ Բադալյանին: Ըստ որում շատ զարմանալի էր, որ հարուստ կյանք վարելու հետ մեկտեղ, այդ սև բլուզավորներից ոչ մեկը ռեստորան չէր գնում: Բայց եթե ռեստորան չէին հաճախում, ուրեմն որտե՞ղ էին խմում նրանք: Զավենը ախր երբեմն նկատում էր, որ նախորդ օրը կարծես թե հարբած են եղել: Եվ գաղտնիքը բացեց նույն ամենագետ Գագիկ Միսակյանը:

- Գառնիկ Վարդանիչը կատեգորիկ արգելել է նրանց քաղաքի ռեստորաններում երևալ: Նրանք էլ հարևան ադրբեջանական շրջան են գնում: Համ լավ հաց են տալիս, համ էլ անցանկալի ականատես չկա:

- Բայց լսել եմ, որ շատ թանկ է,- ասաց Զավենը: - Ինչ գին ուզում ասում են…

Գագիկ Միսակյանը ծիծաղեց:

- Վերջ տուր, վերջ տուր, նրանց համար ի՞նչ թանկ:

Զավեն Շարաֆյանը կրկին նրանց կուշտ ու գոհ դեմքերին նայեց և երբ հայացքը տեղափոխելով տեսավ պատի տակ նստած Ասքանազ Պեպանյանին, կարծես թե նոր հասկացավ, թե քանի և ինչպիսի տարիներ են անցել՝ այս քաղաքում իր հայտնվելուց հետո: Այն ժամանակ քաղաքի առևտրի վարչության պետը քաղաքի թերևս ամենաաչքի ընկնող տղամարդն էր: Ոչ միայն տեսքով: Հո զուր չէր, որ քաղկոմի երկրորդ քարտուղար Գրետա Սուրենյանը բացահայտ նրա սիրուհին էր դարձել: Նա հիմա էլ առնականորեն գեղեցիկ էր՝ խոշոր, մի տեսակ թաց սև աչքերով, ճերմակած քունքերով ու ջլապինդ, մարմնամարզիկի կազմվածքով: Այլև ազդեցիկությամբ, որ նրա սիրուհուց, պաշտոնից և հարստությունից էր բխում: Բայց հիմա «սև բլուզավորների» համեմատությամբ նա նկատելիորեն զիջում էր և հնացած ու դատապարտված տեսք ուներ: Նրանք քաղաքացիներ էին, նա գավառացի էր: Ու թեև Զավեն Շարաֆյանը հենց սկզբից, շուկայական և այլ հին պատմությունների մեջ նրա գործունեությանը ծանոթանալուց հետո, խիստ հակակրանք էր տածում այդ հղփացած մարդու նկատմամբ, բայց հիմա հանկարծ զգաց, որ սրտի խորքում ինչ-որ տեղ նույնիսկ խղճում է: Տեսնես ի՞նչ է մտածում այդ մարդը, ի՞նչ ապրումների մեջ է և ինչ հույսեր ունի: Եվ ամենակարևորը տեսնես թե բյուրոյում ինչպես կպահի իրեն Գրետա Սուրենյանը, երբ բոլորին հայտնի է, որ խելագարի նման սիրում է այդ մարդուն: Եթե որոշեն հեռացնել նրան աշխատանքից ու կուսակցությունից, Գրետան անկասկած հրաժարական կտա, մտածեց Զավենը: Եվ դա էլ հենց Գառնիկ Բադալյանի նպատակն է:

- Զեկուցիր, Օլթեցյան,- գլխով արեց Բադալյանը.

Պրոպագանդայի բաժնի երիտասարդ վարիչը ոտքի ելավ փութով.

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ընկերներ,- սկսեց նա,- քաղաքային կոմիտեի հանձնաժողովը մանրամասն ստուգել է «Լուսաբաց» թերթում տպագրված աշխատավորական ռեյդային հոդվածը և եկել այն համոզման, որ հոդվածում բերված փաստերը հիմնականում համապատասխանում են իրականությանը:

- Իսկ, ի՞նչ է, որոշ փաստեր չե՞ն ճշտվել,- հարցրեց Բադալյանը:

- Ոչ, Գառնիկ Վարդանիչ, բոլոր փաստերը հաստատվել են,- շփոթվեց զեկուցողը:

- Ուրեմն ինչո՞ւ՝ հիմնականում:

Հրանտ Օլթեցյանը կորցրեց իրեն.

- Ինչո՞ւ- այդպես է ընդունված ասել, Գառնիկ Վարդանիչ: Ամեն տեղ այդպես են գրում:

Գառնիկ Բադալյանը մեղմ ժպտաց:

- Ընդունված է ճշմարտությունն ասել, պարզ է: Այդպես էլ փոխիր ձևակերպումը ու առաջ անցիր:

Եվ պրոպագանդայի բաժնի վարիչը առաջ անցավ: Նա գրեթե նորից ընթերցեց հոդվածը մեկ-մեկ նշելով այն չարաշահումների, խախտումների, օրինազանցությունների փաստերը, որ տեղ են զտել քաղաքի առևտրի վարչությունում և առևտրական կազմակերպություններում: Այդ ընթացքում Ասքանազ Պեպանյանը մի, քանի անգամ վեր ցատկեց տեղից՝ փորձելով միջամտել ու բացատրություն տալ, բայց Գառնիկ Բադալյանի տիրական ձեռքը նրան իր աթոռին գամեց:

- Վերջում, Պեպանյան, վերջում- Սկզբից լսիր, բոլորին լավ լսիր, որովհետև վերջում, միևնույն է, պատասխան ես տալու:

Առաջինը ելույթ ունեցավ քաղխորհրդի գործկոմի նախագահ Կարեն Սուքիասյանը:

- Ես շնորհակալություն եմ հայտնում խմբագրությանը՝ բանվորական ստուգայցը կազմակերպելու և տպագրած հոդվածի համար: Ճիշտ է, ես նոր մարդ եմ այս քաղաքում, բայց դա մազաչափ իսկ չի արդարացնում ինձ: Ես պարտավոր էի տեսնել այն ամենը, ինչ տեսել ու նկարագրել է թերթը: Սա՞ ինչ խայտառակություն է: Ի՞նչ վիճակ է տիրում առևտրի վարչությունում: Սովետական իսկական առևտուր կազմակերպելու, բնակչությանը բարձրորակ ապրանքներով ու մթերքներով ապահովելու փոխարեն կոմունիստ Ասքանազ Պեպանյանը ապահովել է միայն իրեն՝ փոքրիկ մի թագավորություն ստեղծելով իր համար և իրեն շրջապատելով անհաստիք նազիր-վեզիրներով: Բանից դուրս է գալիս, որ առևտրի վարչությունում այսօր ավելի շատ ղեկավարներ կան, քան վաճառողներ՝ խանութներում և մատուցողներ՝ ռեստորաններում: Ըստ որում առևտրի կետերը հանցագործների որջերի են վերածվել, որտեղ անգթաբար կողոպտում են մեր աշխատավորներին: Եվ հենց այստեղ օրինական հարց է ծագում, իսկ որտե՞ղ է միլիցիան: Ես ձեզ եմ ուղղում իմ հարցը, ընկեր Մասիսյան, որտե՞ղ են ձեր աշխատողները: Ինչո՞ւ այս զարհուրելի փաստերը թերթը պետք է բացահայտեր և ոչ թե ձեր աշխատակիցները, որոնց պարտականությունն է դա: Թե՞

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ասքանազ Պեպանյանի հետ ձեր քավոր-սանահերական հարաբերություններն այնքան են կուրացրել ձեզ, որ դուք ոչ մի թերություն չեք տեսել առևտրի ցանցում…

Ռոբերտ Մասիսյանը կարմրատակեց, նայեց Գրետա Սուրենյանին, ասես նրանից թույլտվություն խնդրելով ու շշնջաց.

- Ձեզ թյուրիմացության մեջ են գցել, Կարեն Վարդգեսիչ, հենց այդ օրերին մեր ԲԽՍՍ-ի աշխատողները խանութներում ստուգումներ են կատարել:

Ու հանկարծ բոլորի համար անսպասելի անկյունից մի ձայն լսվեց.

- Ճիշտ է, ուր մտնում էինք, միլիցիայի աշխատողներ կային…

- Այդ ո՞վ էր,- գլուխը բարձրացրեց Բադալյանը:

Մուշեղ Օթարյանը ոտքի կանգնեց.

- Ես եմ, Գառնիկ Վարդանիչ, և հաստատում եմ, որ պահեստ կամ խանութ մտնում էինք, մեզանից առաջ արդեն միլիցիայի աշխատողներ էին լինում, որոնք ամեն ինչ անում էին մեզ խանգարելու համար: Եթե դատախազի օգնական Լալազարյանը մեզ հետ չլիներ, ոչ մի արդյունքի չէինք հասնի:

- Դավիթ,- դարձավ Բադալյանը պատի տակ նստած մի հաղթանդամ մարդու,- հռչակավոր քիմիագործ ես, ոչ միայն քիմիագործ-բրիգադիր, այլև ստուգայցային հանձնաժողովի նախագահը, ու քե՞զ էլ չէին թողնում:

- Չէին թողնում, Գառնիկ Վարդանիչ,- ոտքի կանգնեց հսկան,- Բայց մտնում էինք: Եվ միլիցիայի աշխատողների ապօրինությունների դեմ էլ արձանագրություն էինք կազմում:

Քաղկոմի քարտուղարը սպանիչ հայացք նետեց միլպետին.

- Ահա թե քո հանձնարարությամբ ինչի համար էին խանութները մտել ձեր ԲԽՍՍ-ի աշխատողները, ընկեր Մասիսյան: Շարունակեք, ընկեր Սուքիասյան:

- Ես վերջացնում եմ, Գառնիկ Վարդանիչ,- ասաց քաղխորհրդի նախագահը: - Եվ գտնում եմ, որ այս վիճակը հանդուրժել չի կարելի: Մենք կոչված ու պարտավոր ենք քաղաքը մաքրել ամեն տեսակի հանցագործներից ու խաբեբաներից և առաջին հերթին նրանցից, ովքեր հովանավորում են առևտրի ցանցում արմատակալած այդ խուլիգաններին ու հանցագործներին: Իբրև բյուրոյի անդամ առաջարկում եմ կուսակցությունից և աշխատանքից հեռացնել Ասքանազ Պեպանյանին, կուսակցությունից հեռացնել նաև քաղաքի միլպետ Ռոբերտ Մասիսյանին և հարց հարուցել ներքին գործերի մինիստրության առջև նրան աշխատանքից ազատելու մասին: Եվ մեղավորներին բոլորին պատժել խոտորեն՝ ըստ նրանց մեղքի չափի: Ահա իմ կարծիքը:

Քաղխորհրդի նախագահը փնչացրեց՝ ուսերի մեջ առնելով խոշոր գլուխը, և նստեց իր պարտքը ազնվորեն կատարած մարդու արժանապատվությամբ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավեն Շարաֆյանը ակամա Գրետա Սուրենյանին նայեց, սպասելով, թե ուր որ է նա իր անզուսպ բնավորության համաձայն վեր կցատկի տեղից և կփորձի պաշտպանության տակ առնել իր սիրեցյալին ու նրա ընկերոջ որդուն: Պեպանյա՞ն և Մասիսյա՞ն… Ախր նրանք Գրետա Սուրենյանի թևերն են: Մի՞թե նա թույլ կտա, որ պոկեն, դեն նետեն իր թևերը: Երբեք:

Բայց քաղկոմի երկրորդ քարտուղարը չշարժվեց տեղից: Միայն գունատվեց ու մնաց արձանացած՝ հայացքը հառած դիմացի պատին:

Ուրեմն դեռ ժամանակը չէ, մտածեց Զավեն Շարաֆյանը, համբերում, սպասում է, թե ինչ կլինի հետո:

Իսկ հետո ելույթ ունեցան նաև բյուրոյի մյուս բոլոր անդամները՝ Գագիկ Միսակյանը, Լենդրոշ Ջանյանը, Լյուդվիգ Մելոյանը, Կարեն Բաբայանը, Գալուստ Գևորգյանը, և պարզ դարձավ, որ Ասքանազ Պեպանյանը և Ռոբերտ Մասիսյանը դատապարտված են: Ոչ ոք չպաշտպանեց նրանց, ընդհակառակը, ամեն մեկն աշխատում էր նոր քար նետել այն փոսը, որի մեջ հայտնվել էին առևտրի վարչության պետն ու միլպետը: Քիմկոմբինատի դիրեկտոր Լենդրոշ Ջանյանը որպես Ասքանազ Պեպանյանի հանցավոր գործելակերպի լրացուցիչ փաստ նշեց, որ արտասահմանյան աթոռներ էին դուրս գրել կոմբինատի ակումբի դահլիճը կահավորելու համար, իսկ Ասքանազ Պեպանյանն ու նրա, ինչպես ընկեր Սուքիասյանը շատ դիպուկ բնորոշեց, նազիր-վեզիրները անամոթաբար այդ աթոռներն իրենց տներն են տարել:

Գառնիկ Բադալյանը զայրացած ուռցրեց շրթունքը, որից Հիտլերի փոքրիկ բեղիկները հիշեցնող նրա բեղերը հարցական կազմեցին:

- Դա ճի՞շտ է,- զայրացած նետեց նա: - Եվ ես հիմա՞ եմ լսում այդ մասին:

- Գառնիկ Վարդանիչ, մենք անընդհատ սպասում էինք, թե պիտի ստանանք, ինչ իմանայինք, որ ստացել մեջ-մեջ են արել:

- Պեպանյա՞ն,- չարագուշակ որոտաց քարտուղարը:

- Գառնիկ Վարդանիչ,- կմկմաց առևտրի վարչության պետը: - Լավ աթոռներ չէին, չուզեցինք կոմբինատին տալ և…

- Եվ ձեր տուն տարաք,- ծաղրաբար գլխով արեց Բադալյանը:

- Ճիշտ է, բայց դրամը կանխիկ մուծել ենք, ընկեր Բադալյան, ուզում եք ստուգեք:

- Միլպետի ԲԽՍՍ-ը երևի ստուգած կլինի, - իր հերթին խայթեց բանկի կառավարիչը, որն անկասկած իր հաշիվներն ուներ միլիցիայի հետ:

Բոլորը ծիծաղեցին:

- Նրանք ժամանակ չունեն, ԲԽՍՍ-ի ստուգողներին մենք ենք ստուգում,- ձայնեց քաղաքի դատախազը: - Երկուսին ձերբակալել ենք կաշառակերության համար:

- Բայց ե՞ս ինչ կապ ունեմ,- բղավեց Ռոբերտ Մասիսյանը: - Արձակուրդի մեջ եմ եղել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Կապերի մասին առայժմ հայտնի չէ,- ժպտաց դատախազը,- քննություն է գնում, կպարզենք:

Ինչպես լինում է սովորաբար, բոլորն էլ համոզված էին արդեն, որ անխուսափելի է Պեպանյանի և Մասիսյանի խորտակումը ու նորանոր ճեղքեր էին բացում նրանց առանց այդ էլ խախուտ մակույկի մեջ:

Գորգագործական ֆաբրիկայի դիրեկտոր Գալուստ Գևորգյանն, օրինակ, հանկարծ հիշեց, որ ֆաբրիկայի շինարարներին ազատ վաճառքի կարգով հատկացված երկու «Մոսկվիչ ավտոմեքենաներից միայն մեկն է տեղ հասել: Իսկ հետո շինարարներն իրենք պարզել են, որ առևտրի վարչության պետն այդ մեքենան վաճառել է իր ընկերոջը՝ միլպետ Ռոբերտ Մասիսյանի հորը: Քաղկոմի կազմբաժնի վարիչ Լյուդվիգ Մելոյանն էլ իր հերթին հարկ համարեց տեղեկացնել բյուրոյին, որ ինքն անձամբ Ասքանազ Պեպանյանին զգուշացրել է ապօրինի ուռճացրած նրա ապարատի մասին, բայց առևտրի վարչության պետը հեգնաբար ասել էր, թե դա քո գործը չէ, ես ինչ անում եմ քաղկոմի քարտուղարների գիտությամբ եմ անում:

- Քաղկոմի քարտուղարների՞ ,- իբր զարմացած հարցրեց Բադալյանը: - Խոսքը նաև ի՞նձ է վերաբերում:

Գրետա Սուրենյանը լռելու այլևս ոչ մի հնարավորություն չուներ:

- Ոչ, Գառնիկ Վարդանիչ խոսքը ձեզ չի վերաբերում և նաև ինձ չի վերաբերում: Որովհետև համոզված եմ, որ այդպիսի խոսք ընդհանրապես չի եղել:

- Իհարկե, չի եղել,- Գրետայի պաշտպանությունից ոգի առած, բացականչեց Ասքանազ Պեպանյանը: - Եզը որ ընկնում է դանակավորը շատանում է…

Գառնիկ Բադալյանը ձեռքը սեղանին խփեց:

- Կենդանական աշխարհը հանգիստ թող, Պեպանյան: Հանգիստ թող և պատասխանիր մեզ, թե ճի՞շտ է այդ ավտոմեքենայի պատմությունը: Իրո՞ք շինարարներին հատկացված ավտոմեքենան Գեղամ Մասիսյանին ես վաճառել:

Ասքանազ Պեպանյանը արագ մի հայացք նետեց միլպետին ու կմկմաց.

- Տարվա վերջին շինարարներին մի հատ էլ «Մոսկվիչ» տվեցինք…

- Լրացուցիչ ֆոնդերի հաշվին,- չհանգստացավ ֆաբրիկայի դիրեկտորը,- և դարձյալ երկուսի փոխարեն մեկը:

Գառնիկ Բադալյանը հայացքը միլպետի վրա փոխադրեց.

- Ընկեր Մասիսյան, ճի՞շտ է, որ քո հայրը ավտոմեքենա է գնել…

Միլպետը կրկին վեր ցատկեց տեղից,

- Ճիշտ է, Բայց ե՞ս ինչ կապ ունեմ, Գառնիկ Վարդանիչ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Հետաքրքիր մարդ ես,- ուսերը թոթվեց քաղկոմի քարտուղարը: - Քո կաշառակեր աշխատակիցների հետ կապ չունես, հորդ հետ կապ չունես, առևտրի բնագավառում տիրող այս խայտառակ վիճակի հետ կապ չունես: Բա դու ո՞ւմ հետ և ինչի՞ հետ կապ ունես, ընկեր միլպետ:

- Իր քարտուղարուհու հետ,- ափի մեջ փոթկացրեց բանկի կառավարիչը, և նրա կողքին նստածները ծիծաղեցին:

Գառնիկ Բադալյանը ձեռքը կրկին սեղանին խփեց,

- Վերջ տվեք,- ասաց նա,- և դեռ կարողանում եք ծիծաղել: - Եվ շրջվեց դեպի գորգագործական ֆաբրիկայի դիրեկտորը: - Ես ձեր առաջարկությունը չլսեցի, ընկեր Գևորգյան:

Գորգագործական ֆաբրիկայի դիրեկտորը հոգոց հանելով բարձրացավ տեղից, ուղղեց կարմիր փողկապը:

- Ինձ համար շատ ցավալի է, բայց ես ստիպված եմ համաձանվել քաղխորհրդի նախագահի առաջարկությանը: Կուսակցության մեծ վստահությունը չարդարացնելու և ավելին՝ ի չարը գործադրելու համար, ընկեր Պեպանյանին և ընկեր Մասիսյանին պետք է հեռացնել կուսակցությունից:

Գրեթե կռացած, աթոռների ետևից անցնելով Զավեն Շարաֆյանին մոտեցավ քաղկոմի ջահել հրահանգիչներից մեկը ու Բադալյանի կողմը վախեցած նայելով՝ շշնջաց,

- Ընկեր Շարաֆյան, ձեզ շտապ կանչում են խմբագրությունից:

- Ո՞վ է,- զարմացավ խմբագիրը:

- Մարոն է:

- Մարո՞ն,- իր հերթին շշնջաց Զավենը,- ի՞նչ է պատահել:

- Չգիտեմ, շատ խնդրեց, որ դուրս կանչեմ ձեզ:

Նրանց գաղտագողի խոսակցությունը, սակայն, չվրիպեց Բադալյանի ուշադրությունից.

- Ի՞նչ կա, Շարաֆյան, ուզում ես ելո՞ւյթ ունենալ,- կասկածամտորեն հարցրեց նա:

Զավենը խնդրանքով բարձրացրեց մատը.

- Մի րոպեով դուրս գամ, հա՞, Գառնիկ Վարդանիչ, զանգել են Կենտկոմից:

Գառնիկ Բադալյանը գլխով արեց ցրված, և Զավենը հայտնվեց միջանցքում:

- Մարո՞ …

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մարոն խուճապահար, մատները հուզմունքից կոտրատելով արագ-արագ ետ ու առաջ էր քայլում:

- Ի՞նչ է պատահել, Մարո,- արդեն անհանգստացավ Զավենը:

- Զավեն Աշոտիչ, կներեք, որ ստիպեցի դուրս գալ, բայց իմ կարծիքով… Ես ենթադրում եմ, որ…

- Հանգիստ, Մարո, հանգստացիր ու ասա տեսնեմ ի՞նչ է եղել:

- Ձեր դեմ դավադրություն է կազմակերպվել, Զավեն Աշոտիչ, խնդրում եմ զգույշ մնաք…

Զավենը ոչ մի անկյունից վտանգ չէր սպասում, դրա համար էլ ժպտաց,

- Դե հանգստացիր վերջապես, Մարո ջան, տեսնո՞ւմ ես ես ինչ հանգիստ եմ: Ո՞վ է դավադրություն կազմակերպել, ինչո՞ւ…

- Չգիտեմ, բայց Միհրան Գալստյանը երեկ քաղկոմում է եղել և ասել է, որ դուք այդ ռեյդային հոդվածից ինչ-որ փաստեր եք հանել:

Ահա՜ թե ինչ:

- Ո՞ւմ է ասել, չգիտե՞ս:

- Բադալյանին է ասել, բայց Գրետա Սուրենյանն էլ է այնտեղ եղել:

Սա արդեն ճշմարտանման է, մտածեց Զավեն Շարաֆյանը, ճշմարտանման է, բայց անհանգստանալու որևէ հիմք չի տալիս: որովհետև նույն Գառնիկ Բադալյանը հիանալի գիտի, թե ինչ փաստեր են դուրս մնացել հոդվածից: Ըստ որում՝ մեկը փաստորեն ինքը առաջարկեց, մյուսի համար էլ ասաց, հա, ասաց՝ եթե որևէ հարցում մարդ մնալու հնարավորություն կա, ուրեմն մարդ մնա,,. Կամ նման մի բան:

- Իսկ քեզ ո՞վ ասաց, Մարո,- հարցրեց նա արդեն լրիվ հանգստացած, բայց հոգում այնուամենայնիվ դառնություն:

- Բադալյանի վարորդը: Իմ հարևանն է: Խոսակցության ժամանակ քարտուղարի առանձնասենյակում է եղել:

- Բա ինչո՞ւ երեկ չասացիր ինձ կամ այսօր առավոտյան:

- Ինձ քիչ առաջ ասաց- Չնեղանաք, խնդրում եմ, բայց ես գիտեի, որ բյուրոյի նիստ է, դրա համար էլ մի քիչ ուշ եկա աշխատանքի: Հենց ինքը ինձ խմբագրություն բերեց ու ճանապարհին էլ պատմեց ամեն ինչ: Հետո երբ ես շատ վատ զգացի, ասաց ես չգիտեի, որ դու այդքան մոտ ես խմբագրի հետ, թե չէ դեռ երեկ կասեի:

Զավենը բռնեց աղջկա դողացող ձեռքը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դատարկ բան է,- ասաց նա անփույթ,- անհանգստանալու ոչինչ չկա, Մարո, բայց բոլոր դեպքերում շատ-շատ շնորհակալություն քեզ: Միշտ հաճելի ու ապահով է, որ դու արդեն գիտես այն, ինչ կարող էիր հետո իմանալ ու անակնկալի գալ:

Երբ նա կրկին բյուրոյի սենյակը մտավ, զգաց, որ մթնոլորտն ավելի է շիկացել, ու մտածեց, որ արդեն ելույթ է ունեցել Գրետա Սուրենյանը: Ախ, Մարո, Մարո, ճիշտ է, քո քայլը շատ ազնիվ էր, բայց ախր ես կորցրեցի այս բյուրոյի ամենահետաքրքիր մասը, ախր ինձ չափազանց հետաքրքիր էր, թե ինչ դիրք է գրավելու Գրետա Հակոբովնան: Այսինքն դիրքը պարզից պարզ է, բայց ինչպես է դրսևորելու իրեն, ինչ է ասելու, ինչ միջոցներ է գտնելու Ասքանազ Պեպանյանին և Ռոբերտ Մասիսյանին փրկելու կամ գոնե նրանց պատիժը թեթևացնելու համար:

Զավենը արդեն թեքվել էր, որպեսզի գոնե Գագիկ Միսակյանից իմանա, թե ինչ է տեղի ունեցել իր բացակայության ժամանակ, երբ լսեց Գառնիկ Բադալյանի ձայնը.

- Ընկեր Սուրենյան, չե՞ք ուզում խոսել:

Այ քեզ զարմանալի բան- ուրեմն դեռ չի խոսել, մտածեց Զավենը: Բայց նրա համար զարմանալին դեռևս առջևում էր:

- Ոչ,- ասաց երկրորդ քարտուղարը՝ մազերը սովորականի պես չծածանելով,- չեմ ուզում խոսել:

Նրա դեմքը խիստ գունատ էր, բայց խոսում էր հանգիստ ու ինքնավստահ:

Քար լռություն տիրեց: Բոլորն սպասում էին, որ նա այնուամենայնիվ կշարունակի իր խոսքը: Եվ նա շարունակեց.

- Ընկեր Բադալյան, թե միլիցիայի և թե առևտրի վարչության աշխատանքները ես եմ վերահսկում: Եվ բացահայտված թերությունների մեջ մեղքի իմ մասն ունեմ: Ուրեմն լավ չեմ հսկել: Այլևս ի՞նչ կարող եմ ասել:

Զավենը չէր կարող համոզված ասել, իրեն թվա՞ց, թե իսկապես լսեց Ասքանազ Պեպանյանի ապշած, խեղդված հևոցը: Երևի թվաց, որովհետև երբ առևտրի վարչության պետին նայեց, նա նստած էր կարծես թե իր ճակատագրին համակերպված ու հեզ մատաղացու ոչխարի նման:

Բայց Գառնիկ Բադալյանը ոչ թե Պեպանյանին, այլ Գրետային էր նայում Զավենի համար անբացատրելի համակրանքով.

- Լավ, ինչպես կամենամ եք,- ասաց նա: - Իսկ ի՞նչ առաջարկություններ ունեք…

- Բյուրոն ինչ էլ որոշի, ես մեծամասնության հետ կլինեմ,- ասաց այդ տարօրինակ կինը:

Զավենը ականջներին չհավատալով մեկ Բադալյանին էր նայում, մեկ Սուրենյանին, մեկ հայացքը տեղափոխում էր Ասքանազ Պեպանյանի և Ռոբերտ Մասիսյանի դեմքերին և ոչինչ չէր հասկանում: Սա ի՞նչ խաղ է և խա՞ղ է արդյոք: Եվ վերջապես սա ղեկավարների

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հավաքո՞ւյթ է, թե սպանդանոց: Ճիշտ է, թե Պեպանյանը, թե Մասիսյանը մի բարի պտուղ չեն և արժանի են պատժի, բայց մի՞թե դատավոր դարձածներից ոչ մեկի սրտում կարեկցանքի նշույլ անգամ չկա այդ արդեն խորտակված, ողորմելի մարդկանց նկատմամբ, իրենց գործընկերների նկատմամբ: Եվ Զավեն Շարաֆյանը կարծես թե հասկացավ, թե ինչու չկա, հենց այն պատճառով, որ հոգով աղքատ ու ողորմելի են թե դատողները, թե դատվողները և թե ինքը նրանց հետ միասին: Մենք բոլորս նույն կառուցվածքն ունենք և անողորմ ու անգութ ենք իրար նկատմամբ՝ մեր ողորմելիությունից դրդված, որովհետև շատ ենք վախենում, թե նրանց վիճակի մեջ մենք կհայտնվենք: Եվ որպեսզի ստեղծված ճահճից դուրս պրծնենք կամ մակերևույթին պահպանենք հավասարակշռությունը, գերադասում ենք քայլել միմյանց գլուխների վրայով՝ խորտակելով իրար: Եվ դա մեր բառապաշարում դաժանություն ու ստորություն չի համարվում, այլ շատ հարմար անուն ունի՝ արդի քաղաքականություն: Ուրեմն մենք, նրանք, բոլորը կարիերիստներ ու բախտախնդիրներ չենք, այլ քաղաքական գործիչներ, որ կարողանում են ճիշտ ըմբռնել ու գնահատել ժամանակն ու իրադրությունը:

Բայց ի՞նչն է պատճառը, ո՞վ է մեղավոր, որ մարդիկ այս վիճակին են հասել: Եթե ճիշտ է, որ կեցությունն է որոշում գիտակցությունը, ուրեմն գլուխ կոտրելու, հեռու գնալու հարկ չկա: Մեղավորը ստեղծված կյանքն է: Դա հարցի ամենահեշտ պատասխանն է: Ես, նա, մենք բոլորս ի՞նչ մեղավոր ենք, երբ կյանքն է այսպիսին: Մեղավորն, ուրեմն, կյանքն է: Բայց եթե հարցնող լինի, թե ով է ստեղծել այս կյանքը, կպարզվի, որ դարձյալ ես, դու, նա, մենք բոլորս: Ուրեմն ինչու են մանրացել մարդիկ, ինչու են հոշոտում իրար, ի՞նչ են ուզում: Մի՞թե այդ ամենը մի ավել պատառ հացի համար է: Կամ գուցե միշտ էլ այդպես է եղել, և մարդիկ ներկայից դժգոհ հետին թվով պարզապես գունազարդե՞լ են անցյալը, թե իբր կյանքն էլ ուրիշ էր, մարդիկ էլ ուրիշ էին…

Սա, իհարկե, շատ պարզունակ է հնչում, բայց որքան էլ գեղեցիկ բառեր գտնես և խորիմաստ նախադասություններ կազմես, էությունը չի փոխվի: Ինչպես չի փոխվել կամ գրեթե չի փոխվել մարդը իր պատմության ողջ զարգացման ընթացքում, որքան էլ փոխել է հանդերձանքը:

Ահա, պատի երկարությամբ շարված աթոռներից մեկին նստած է Միհրան Գալստյանը, թերթի պատասխանատու քարտուղարը: Կոմունիստ: Ժուռնալիստ: Լավությունից բացի ուրիշ ի՞նչ եմ արել նրան: Նույնիսկ Սևյանից հետո կուսկազմակերպության քարտուղար առաջադրեցի: Ըստ որում՝ բան չունեմ ասելու, բարեխիղճ է գործի նկատմամբ, պատրաստակամ, ջանասեր, խոր հարգանք է ցուցադրում իմ հանդեպ, մեծարում և նույնիսկ շողոքորթում է, շատ է ուզում, որ ուտեմ իր մայրիկի եփած տոլման, երջանկանամ է, երբ նկատում ու բարձրաձայն գնահատում եմ իր աշխատանքը- Իսկ հետո, իսկ այդ բոլորի արանքում անընդհատ, անդադրում դավեր է նյութում իմ դեմ: Ինչի՞ համար: Որ ի՞նքը խմբագիր դառնա: Բայց չէ՞ որ նա էլ իր պատասխանատու քարտուղարն է ունենալու, որը նույնպես և նույն միջոցներով փորձելու է խմբագիր դառնալ: Ինչո՞ւ է մեզ թվում, թե ինչ կատարվում է, ուրիշների հետ է կատարվում և մեզ հետ որևէ կապ չունի: Ինչո՞ւ է այսօրվա բյուրոյի անդամներին թվում, թե նույնը իրենց հետ տեղի ունենալ չի կարող: Թե մի օր էլ իրենք չեն հայտնվելու իրենց ձեռքով կառուցած կուսակցական կառափնարանի վրա:

- Ամփոփենք,- տեղից բարձրացավ Գառնիկ Բադալյանը: - Պարզվեց, որ մենք քաղաքի բարեկարգման և շինարարական վիթխարի աշխատանքով տարված, աչքաթող ենք արել մի շատ կարևոր բնագավառ՝ առևտուրը, հասարակական սնունդը: Եվ այսօր, թերթի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ահազանգից հետո, քաղում ենք մեր անփութության դառը պտուղները: Չկա ավելի մեծ հանցագործություն , քան ժողովրդի շահերը ոտնահարելը և չկա մի այլ բնագավառ, որտեղ այնքան ցցուն ու բաց երևան խաբեությունն ու կեղծիքը, որքան առևտուրը: Աշխատավոր մարդը, երբ խանութ է մտնում կամ ճաշարան և համոզվում, որ խաբված է, դառնությամբ է լցվում ոչ միայն կոնկրետ վաճառողի կամ մատուցողի, այլև իշխանության նկատմամբ, երկրի նկատմամբ, կարգերի նկատմամբ: Եվ այդ դառնությունը կուտակվում է ամեն օր, ամեն ժամ, որովհետև եթե քաղաքացին կինո է գնում շաբաթը մեկ, միջքաղաքային ավտոբուսից օգտվում է երբեմն-երբեմն և քաղխորհրդի զանազան բաժիններն է այցելում տարվա մեջ մեկ-երկու անգամ, ապա խանութ է մտնում ամեն օր և ամեն օր տեսնում, որ իրեն խաբում են՝ աթոռները պահեստից են վաճառում, խախտում գնացուցակները, մթերքը պակաս են կշռում, չեն վերադարձնում մանրը, կոպտում ու ստորացնում են հաճախորդին: Մարդիկ տեսնում են, իսկ առևտրի ղեկավարները չեն տեսնում կամ ավելի ճիշտ՝ չեն ուզում տեսնել, որովհետև նրանց ձեռնտու է նման գործելակերպը, որովհետև այդ խախտումներից և ապօրինություններից է ստեղծվում նրանց բարեկեցիկ կյանքը:

Կուսակցությունն այդ վիճակը հանդուրժել չի կարող: Կուսակցությունը չի կարող և չպետք է հանդուրժի, որ միլիցիան, որը պարտավոր է վերահսկել առևտրի բնագավառը և ջրի երես հանել հանցագործներին և խաբեբաներին, ինքն է բռնել հանցագործության ուղին: Մեր միլիցիայի երկու աշխատողներ ձերբակալված են կաշառակերության համար: Եվ կոմունիստ Ռոբերտ Մասիսյանը գտնում է, որ ինքը մեղավոր չէ, որովհետև, գիտեք ինչ, արձակուրդի մեջ է եղել; Իսկ նա արձակուրդի՞ մեջ էր, երբ կապիտան Սիմոն Հալաբյանը շուկայում բուն դրած հանցագործների հանգիստն էր ապահովում: Արձակուրդի՞ մեջ էր, երբ իր տեղակալը, կոմունիստ Գինոսյանը ռեստորանում հարբած կրակում էր ջահերի վրա: Մենք այն ժամանակ հաշվի առանք միլպետի երիտասարդ լինելը և բավարարվեցինք միայն նկատողություն հայտարարելով: Եվ հիմա, երբ նրա կուսակցական նկատողության ժամկետը դեռ չի լրացել, մեր ընկեր միլպետը հապշտապ խմբեր է ուղարկում խանութները, որպեսզի խանգարի ստուգայցի բրիգադի անդամներին և պաշտպանի ո՞ւմ՝ խարդախներին ու խաբեբաներին, որոնց դեմ ինքն է կոչված պայքարելու:

Սա հանդուրժելո՞ւ բան է, ընկերներ: Ես միանգամայն համաձայն եմ բյուրոյի անդամների հետ, որոնք պահանջում են ամենախիստ պատիժը տալ առևտրի վարչության պետին և միլպետին : Վտարել նրանց կուսակցությունից և աշխատանքից:

Այո՜ , հենց այդպես էլ պետք է: Այդ է պահանջում կուսակցությունը:

Մեռելային լռություն էր տիրում: Այնպիսի մի լարված, ահավոր լռություն էր, որ երբ սենյակի անկյունում կանգնած փայտե պատյանով մեծ ժամացույցի գանգերը հնչեցին երկու անգամ, Զավենին թվաց, թե հիմա այդ գանգերը լսում են քաղաքի բոլոր բնակիչները:

- Բայց...- շարունակեց Գառնիկ Բադալյանը ու կանգ առավ մի պահ՝ հայացքը սահեցնելով բյուրոյի անդամների վրայով, որոնք հանկարծակիի եկած, զարմացած նրան էին նայում, ասես ցանկանալով հարցնել, թե էլ ի՞նչ բայց, երբ ամեն մեկիս հետ խոսել ես առանձին-առանձին, և մենք էլ բարեխղճորեն կատարել ենք քո կամքը: - Բայց,- ասաց Բադալյանը,- կուսակցությունը որքան անողոք, նույնքան և մեծահոգի ու վեհանձն է նրանց նկատմամբ, ովքեր զղջում են, ընդունում են իրենց մեղքը և ուղղվելու անկեղծ մտադրություն ունեն: Ես

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

տեսնում եմ, որ ընկերները հենց այդպես էլ մտածում են և գտնում եմ, որ նրանց հետագա կյանքի առաջ չպետք է

փակել բոլոր ճանապարհները: Առաջարկում եմ բավարարվել կոմունիստներ Պեպանյանին և Մասիսյանին կուսակցական խիստ նկատողություն հայտարարելով՝ գրանցելով անձնական քարտում և ազատել աշխատանքից:

Քաղկոմի քարտուղարը մի պահ վայելում էր իր ելույթի թողած տպավորությունը մեղմիկ ժպտալով բեղի տակ, հետո միանգամից բարձրացրեց երկու ձեռքը:

- Իհարկե, դա իմ անձնական կարծիքն է,- ասաց նա: - Եթե ընկերները պնդում են ես պարտավոր եմ առաջինը նրանց առաջարկը քննարկել: Ուրեմն այսպես, ովքե՞ր են համաձայն, որ…

- Գառնիկ Վարդանիչ,- խոնարհաբար գլուխը ուսին թեքեց քաղխորհրդի նախագահը,- անձամբ ես հրաժարվում եմ իմ առաջարկից և համաձայն եմ ձեզ հետ:

- Ես էլ,- ձայնեց Գագիկ Միսակյանը:

- Բոլորս, բոլորս,- ընդհանրացրեց Լենդրոշ Ջանյանը:

- Դո՞ւք էլ նույն կարծիքին եք, ընկեր Սուրենյան,- Գրետայի կողմը դարձավ Բադալյանը:

Երկրորդ քարտուղարը միշտ նույն գունատ դեմքով ու սեղմած շրթունքներով հատ-հատ արտասանեց.

- Ես կրկնում եմ, որ մեծամասնության կարծիքին եմ:

- Ուրեմն քվեարկում եմ,- ասաց Գառնիկ Բադալյանը: - Ովքեր համաձայն են..,

Նա դեռ չէր ավարտել խոսքը, երբ բյուրոյի բոլոր անդամները միահամուռ բարձրացրեցին ձեռքերը:

- Անցավ միաձայն,- հայտարարեց քարտուղարը:

Առեղծվածային մարդ է, հազարերորդ անգամ զարմանամ էր Ջավենը: Որտեղի՞ց նրա մեջ այդքան ինքնավստահություն: Կուսակցության անունից այնպես է խոսում, ասես կուսակցությունը հենց ինքն է: Ինքը դեմ է, առում է կուսակցությունը դեմ է: Կողմ է՝ ուրեմն կողմ է կուսակցությունը: Եվ ինչ դերասան է: Կասկած չկա, որ մի օր, երբ վրա հասնի մահը, Գառնիկ Բադալյանը ևս գոնե մտքում Ներոնի նման վշտացած կբացականչի՝ ափսոս, ինչ մեծ դերասան է կորչում: Եվ իրավունք կունենա: Այդ ինչպե՞ս անցկացրեց բյուրոն, ի՞նչ էր արել, ինչպես էր նախապատրաստել, որ Գրետան հնազանդորեն լռության դատապարտեց ինքն իրեն և թույլ տվեց, որ իր աչքի առաջ, ինչպես շան լակոտների՝ վզակոթերից բռնած փողոց նետեն իր սիրած մարդուն և նրա սանիկին: Եվ նրանք, առևտրի վարչության պետն ու միլպետը, քաղաքի թերևս ամենանշանավոր ու ամենաազդեցիկ մարդիկ, փողոց նետվելու պահին շնորհակալություն հայտնեն իրենց բարերարին՝ Գառնիկ Բադալյանին,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

շնորհակալություն նրա համար, որ չհեռացրեց կուսակցությունից, երբ այդ էին պահանջում բյուրոյի անդամները: Այնինչ ո՞վ չգիտե, որ բյուրոյի անդամներից ոչ մեկը չէր համարձակվի որևէ առաջարկությամբ հանդես գալ, առանց Բադալյանի հետ նախապես հարցը համաձայնեցնելու: Բոլորը գիտեին: Անկասկած գիտեին նաև Պեպանյանն ու Մասիսյանը, բայց միևնույն է, Բադալյանը այնպես էր կազմակերպել բեմադրությունը, որ նրանք անմռունչ փողոց նետվեցին՝ հետն էլ համբուրելով իրենց փողոց նետողի ձեռքը:

Ահա թե ով է քաղկոմի առաջին քարտուղարը:

Զավենը լսեց, թե ինչպես կամացուկ զնգաց Բադալյանի առջև, սեղանին դրված հեռախոսը: Բյուրոյի ընթացքում այդ խուլ զանգը, գրեթե դողդոջը լսվեց մի քանի անգամ: Քարտուղարը վերցնում էր լսափողը ու ասում կամացուկ, շտապով,

- Բյուրոյի նիստ է:

Եվ անմիջապես ցած էր դնում ընկալուչը:

Բայց այս անգամ ցած չդրեց: Ճիշտ է, շշնջաց՝ «Բյուրոյի նիստ է», սակայն ցած չդրեց, լսեց ևս մի պահ ձախ ձեռքը բարձրացնելով և լռություն պահանջելով հավաքվածներից, ապա ասաց.

- Շատ լավ, դուրս եմ գալիս:

Հետո ասաց բարձրաձայն,

- Ընկերներ, ինձ շտապ Կենտկոմ են կանչում: - Եվ շրջվեց դեպի Գրետան: - Ընկեր Սուրենյան, ղեկավարեք և շարունակեք բյուրոն:

Սուրենյանը լուռ գլխով արեց, սպասեց այնքան, մինչև որ Բադալյանը դուրս եկավ առանձնասենյակից ու կամացուկ ասաց.

- Բյուրոն շարունակվում է, ընկերներ:

Զավեն Շարաֆյանը մտածեց, որ իր և հատկապես Միհրան Գալստյանի և Մուշեղ Օթարյանի մնալը թերևս արդեն պարտադիր չէ և ներողություն խնդրելով, որ ընդհատում է, հարցրեց.

- Գրետա Հակոբովնա, գուցե մենք խմբագրություն գնանք: Գործ շատ կա…

- Ոչ,- ասաց Սուրենյանը,- գործ այստեղ էլ կա: Մենք հենց ձեր հարցն ենք քննում:

Զավենը նույնիսկ չհասցրեց զարմանալ: Ի՞նչ գործ: Ինչի՞ մասին է խոսքը: Որովհետև քաղկոմի երկրորդ քարտուղարը արդեն սկսել էր իր ելույթը:

- Ընկերներ,- ասաց նա,- կարծում եմ, համաձայն կլինեք, եթե ասեմ, որ այսօրվա բյուրոն սկզբունքային քննադատության մի իսկական դպրոց էր: Իհարկե, բոլորիս համար էլ ինչ-որ տեղ ցավ է, որ մեր ընկերները, կոմունիստներ, որոնց հետ մենք կուսակցական աշխատանքի որոշակի ճանապարհ ենք անցել, չկարողացան մինչև վերջ համընթաց քայլել մեզ հետ և այսօր փաստորեն դուրս մնացին կոմունիզմի կառուցման համար մղվող մեր ընդհանուր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

պայքարից: Կոմունիզմ, որի լուսապայծառ գագաթներն արդեն պարզ երևում են: Դա ցավ է, այո , բայց և միևնույն ժամանակ զգուշացում, որպեսզի նման խորթ երևույթներ այլևս տեղ չունենան մեր կազմակերպություններում: Այս ի՞նչ ճառ է սկսել, մտածում էր Զավեն Շարաֆյանը, նրան թվում է, թե քաղխմբակի հերթական պարապմո՞ւնք է ղեկավարում: Եվ ի՞նչ կապ ունի այդ ամենը իմ և խմբագրության աշխատանքի հետ: Մեր աշխատանքը, փառք աստծո, բոլորի աչքի առաջ է և հենց նոր ժամեր շարունակ քննության առարկա էր: Ուրեմն ի՞նչ է սա, մի՞թե հենց այն դավադրությունը, որից զգուշացնում էր Մարոն: Մի՞թե Սուրենյանը հիմա մեջտեղ է բերելու հոդվածից հանած փաստերը: Անհնարին է: Անհնարին է, որ Բադալյանը ասած չլինի նրան, թե ամեն ինչ կատարվել է իր գիտությամբ: Ուրեմն էլ ի՞նչ հարց, ի՞նչ քննարկում:

- Այդ տեսակետից,- շարունակում էր խոսել քարտուղարը,- անպայման պետք է նշել «Լուսաբացի» խմբագրության և հատկապես նրա նոր բաժնի վարիչ Մուշեղ Օթարյանի անձնվեր աշխատանքը: Այդ աշխատանքի արդյունքն այսօր խաղաց իր կարևոր դերը մեր կյանքին ու առաջընթացին խորթ երևույթները արմատախիլ անելու հարցում, բացահայտելով առևտրի ցանցում տիրող քաոսը, որոշ ղեկավարների անբարեխղճությունն ու անազնվությունը:

Գրետա Սուրենյանը ակնհայտ, ինչպես ժողովուրդն է ասում՝ դուրս էր եկել սգից, իր դերի մեջ էր, որովհետև գլխի նազելի շարժումով ծածանեց և ուսեցին սփռեց փարթամ վարսերը:

- Բայց եթե մենք ազնվություն ենք պահանջում ուրիշներից, նախ և առաջ ինքներս պետք է ազնիվ լինենք: Մի բան, որ չեմ կարող ասել թերթի խմբագիր, կոմունիստ Զավեն Շարաֆյանի որոշ, մեղմ ասած՝ արարքների մասին:

Խմբագիրը բռնկվեց,

- Այդ ինչեր եք ասում: Ինչի՞ հիման վրա եք- Ձեզ ո՞վ է թույլ տվել…

- Կուսակցությունը,- բադալյանական ոճով կտրեց Սուրենյանը: - Նստեք և սովորեք վերջապես ձեզ պահել բյուրոյում: Անմիջապես անցնում եմ հիմքերին: Ես ուզում եմ, որ ազնվության ջատագով խմբագիրը պատասխան տա քաղկոմի բյուրոյին, թե ինչո՞ւ է պաշտպանության տակ առել հանցագործին:

- Ի՞նչ հանցագործ,- կրկին պոռթկաց Զավենը: - Որևէ փա՞ստ ունեք, թե հենց այնպես եք խոսում:

- Ունեմ- խմբագրությունը ահազանգող նամակ է ստանում, որ քիմիական կոմբինատի տեխնոլոգ Պարույր Պողոսի Պետրոսյանը գողացված շինանյութերով սեփական տուն է կառուցում իր համար: Այդ ժամանակ թերթի քաղաքային տնտեսության և կենցաղի բաժնի վարիչ Զավեն Շարաֆյանը գնում է ստուգելու այդ փաստը և համոզվում է, որ նամակում բերված մեղադրանքները համապատասխանում են իրականությանը:

- Ներեցեք,- քարտուղարին ընդհատեց քաղաքի դատախազը,- ուրեմն այդքան հին փաստ է, հա : Բա ինչպե՞ս է, որ այսքան ուշացումով է մեջտեղ բերվում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գրետա Սուրենյանի դեմքը այդ օրվա ընթացքում առաջին անգամ կարմրեց.

- Կոմունիստի արարքը բնութագրող հին և նոր փաստեր չկան, ընկեր դատախազ: Եվ դուք այդ ինձնից լավ պետք է իմանաք: Նույնիսկ Ստալինին երբ հիմա մեղադրում են, վերջին տարիների գործունեության համար չեն մեղադրում կարծեմ: Ես շարունակում եմ: Զավեն Շարաֆյանը ստուգում է փաստերը, և համոզվում, որ Պարույր Պետրոսյանը որևէ փաստաթուղթ չունի ձեռք բերած շինանյութերի օրինական լինելը հաստատելու համար: Ուրեմն կամ ինքն է գողացել, կամ գողացած ապրանք է գնել: Եվ այդ այն դեպքում, երբ քիմկոմբինատը չի կարողանում ավարտել բնակելի իր երկու շենքերի շինարարությունը՝ շինանյութի պակասի պատճառով:

- Ինչ ճիշտ է, ճիշտ է,- վշտացած գլուխն օրորեց քիմկոմբինատի դիրեկտոր Լենդրոշ Ջանյանը:
- Շինանյութ չկա:

- Որտեղի՞ց լինի, երբ Պարույր Պետրոսյանի նման մարդիկ գողանում են այդ նույն շինանյութը և հսկայական տներ կառուցում իրենց համար:

- Զավեն, ինչ որ ասում է, ճի՞շտ է,- կամացուկ հարցրեց Գագիկ Միսակյանը:

- Ճիշտ է,- ասաց խմբագիրը:

Իսկ Գրետա Սուրենյանը շարունակում էր.

- Մեր ֆելիետոնիստը խիստ զայրանում է և վերադառնալով խմբագրություն՝ հայտարարում, թե չի կարող հանդուրժել նման ապօրինություն և մի խիստ ֆելիետոն է գրելու: Հետո թե ինչ է տեղի ունենում, ինչո՞ւ չի գրում այդ ֆելիետոնը, ստույգ հայտնի չէ, հայտնի է միայն, որ մեր հեղինակը, որն այդ ժամանակ արդեն թերթի խմբագիրն էր, հանգիստ սրտով խաշ է ուտում գողացված շինանյութերով կառուցված այդ տանը:

Քաղխորհրդի նախագահ Կարեն Սուքիասյանը ընդոստ բարձրացրեց ուսերին գրեթե կպած իր խոշոր գլուխը.

- Իսկապե՞ս այդպես է եղել, ընկեր Շարաֆյան:

- Հենց այդպես էլ եղել է,- խոստովանեց Զավենը, որը չգիտես ինչու միայն այն մասին էր մտածում, թե ո՞վ պետք է իմանար խաշի պատմության մասին: Եվ անմիջապես էլ հիշեց, որ երբ Պարույրի տուն էր մտնում, նրան թվաց, թե հեռվում Կայծակ Չոփուրյանին տեսավ:

- Սա իսկապես հետաքրքիր է դառնում,- գլուխն օրորեց գորգագործական ֆաբրիկայի դիրեկտոր Գալուստ Գևորգյանը,- ինչո՞ւ չգրեցիք, ընկեր Շարաֆյան:

- Ընկեր Սուրենյան,- առանց Գևորգյանին պատասխանելու, քաղկոմի քարտուղարին դարձավ խմբագիրը: - Եթե ամեն ինչ այդքան ստույգ հայտնի է ձեզ և հայտնի է նույնիսկ, որ երկու տարի առաջ հանգիստ սրտով եմ կերել այդ խաշը, ինչո՞ւ ձեզ հայտնի չէ, թե ինչն է եղել պատճառը, որ ֆելիետոն չի գրվել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ահա հենց այդ պատասխանն էլ սպասում ենք լսել ձեզանից… ամենայն ուշադրությամբ,- քմծիծաղ տվեց Սուրենյանը:

Ջավենը բարձրացավ տեղից և հանկարծ զգաց, որ զարմանալի հանգիստ է:

- Ես իրոք պատրաստվում էի գրել այդ ֆելիետոնը, բայց երբ խմբագրություն եկան Պարույր Պետրոսյանի հայրն ու կինը և պատմեցին, թե ինչ պայմանների մեջ են ապրում, հրաժարվեցի այդ մտքից:

- Շատ հետաքրքիր է, -հեգնեց երկրորդ քարտուղարը, - և ի՞նչ պայմաններ էին դրանք:

- Կինը հղի էր և ուրեմն՝ կինն այդ վիճակով և էլի երկու երեխաներով ամուսնու հետ ապրում էին մի սենյակում, որտեղ բնակվում էին նաև Պարույր Պետրոսյանի հայրը և մայրը:

- Եվ դա, ձեր կարծիքով, Պետրոսյանին իրավո՞ւնք էր տալիս գողացված շինանյութերով կառուցել իր տունը,- շարունակեց իր հարձակումը Գրետա Սուրենյանը: - Պատասխանեք բյուրոյին, ընկեր Շարաֆյան, թե ինչո՞ւ չգրեցիք ֆելիետոնը մի մարդու մասին, որն ապօրինի տուն էր կառուցում:

Խմբագիրը խոր շունչ քաշեց.

- Խղճացի նրան և նրա ընտանիքին:

Գրետա Սուրենյանը ծիծաղեց և բյուրոյի անդամներին նայեց հերթով, ասես նրանց ևս հրավիրելով ծիծաղել իր հետ:

- Դո՞ւք, խղճացի՞ք:

- Այո, իսկ ինչո՞ւ է դա ձեզ տարօրինակ թվում:

- Իսկ ինչպե՞ս տարօրինակ չթվա, երբ դուք այդ Պարույր Պետրոսյանից և նրա խոհարար հորից բացի երբեք ուրիշ ոչ մեկի չեք խղճացել: Ձեր ֆելիետոնների և հոդվածների հիման վրա հենց այս նույն սենյակում տասնյակ մարդիկ են հեռացվել կուսակցությունից և աշխատանքից, տույժեր ստացել և իջեցվել պաշտոնում, ինչո՞ւ նրանցից ոչ մեկին չէիք խղճում: Ինչո՞ւ չէիք խղճում մեծանուն գիտնականին, որին խայտառակեցիք «Սովետական Հայաստան» թերթում, կամ կապի մինիստրին, որի մասին գրելիս, ինչպես ընկեր Բադալյանը նկատեց՝ ուրախությունից ձեր ձեռքերը դողդում էին: Ջինկոմիսարիատում, սոցապ բաժնում, առևտրի ցանցում աշխատող բազմաթիվ մարդկանցից ոչ մեկը կարեկցանքի արժանի՞ չէր: Ես չեմ հավատում, թե դուք հենց այնպես կարող եք խղճալ որևէ մեկին:

- Չնեղանաք, ընկեր Շարաֆյան,- գլուխն օրորեց գորգագործական ֆաբրիկայի դիրեկտոր Գալուստ Գևորգյանը,- բայց իմ հավատն էլ չի գալիս: Այն ի՞նչ օրը գցեցիք մեր ավտոպարկի դիրեկտորին, մինչև հիմա աշխատանքի տեղ չի գտնում:

- Ախր իսկապես շատ սուր ես գրում, Ջավեն,- ասաց կազմբաժնի վարիչ Լյուդվիգ Մելոյանը: - Երդվում եմ, աչքովս եմ տեսել: Իմ հարևանը քիչ էր մնում ինքնասպանություն գործի: Այնպես

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

որ, եկ անկեղծ ասա, որ ինչ-որ ազդեցիկ մի անձնավորություն խնդրել է քեզ չգրել այդ ֆելիետոնը Պետրոսյանի մասին կամ արգելել է- Մենք հո երեխանե՞ր չենք, կանգնել խղճի մասին ես խոսում:

Զավենը ապշած էր: Ուրեմն այս մարդկանցից ոչ մեկը չի հավատում, որ կարելի է խղճից դրդված որևէ քայլ անել: Հանգիստ կարող են հավատալ, որ կաշառք ես վերցրել ու նույնիսկ հասկանան քեզ ու ներողամիտ լինեն քո նկատմամբ: Կարող են հավատալ, որ ինչ-որ մեկը ուժի դիրքերից արգելել է քեզ: Բայց որ դու հենց այնպես, ընդամենը կարեկցել ու խնայել ես որևէ մեկի, դա նրանց անհնարին է թվում: Անպայման այն պատճառով, որ իրենք հենց այնպես՝ մատը-մատի չէին խփի:

- Ընկեր Մելոյան,- չդիմացավ, խայթեց խմբագիրը,- եթե ես ազդեցիկ մարդկանց կարծիքը հաշվի առնեի, չէի գրի նաև ձեր հարևանի մասին: Չէ՞ որ դուք խնդրեցիք ինձ:

Եվ անմիջապես էլ մտածեց, որ ինքը հիմա Խնկո-ապոր «Գայլն ու կատուն» առակի գայլին է նմանվում: Քիչ մնաց ծիծաղեր նույնիսկ: Հիմա իրեն դատողներն այս բյուրոյի անդամներն են, որոնցից ամեն մեկը մի հիմնարկի պետ է կամ քաղկոմի ղեկավար աշխատող, իսկ ինքը նրանց կամ գառն է կերել կամ մաքին: Կերել է ու հիմա ընկել նրանց ձեռքը: Նրանք, որ չեն հավատում, թե ընդամենը խղճից դրդված կարելի է հենց այնպես խնայել մարդուն, հիմա հենց այնպես կխնայեն իրեն:

Եվ շատ ափսոսաց, մինչև հոգու խորքը ցավ զգաց, որ Գառնիկ Բադալյանը անակնկալ հեռացավ բյուրոյից: Հրաշալի իմանալով առաջին քարտուղարի բարյացակամ վերաբերմունքը խմբագրի նկատմամբ, այս մարդիկ նրա ներկայությամբ բոլորովին ուրիշ տեսակ կխոսեին ու կպահեին իրենց: Բայց ի՞նչ կարող ես անել: Գառնիկ Բադալյանը չկա:

- Ուրեմն ես քեզ համար այնքան էլ ազդեցիկ մարդ չեմ եղել, որ կարողացել ես մերժել իմ խնդրանքը,- բավականին թունոտ պատասխանեց Լյուդվիգ Մելոյանը: - Կամ էլ երևի…

- Եկեք ենթադրություններով չզբաղվենք,- կոպիտ ընդհատեց նրան Զավենը,- ընկեր Սուրենյան, ձեր հարցին պատասխանում եմ, որ ֆելիետոնը չեմ գրել խղճիս թելադրանքով: Ավելացնելու ոչինչ չունեմ:

- Ես, օրինակ, այս պատմության մեջ տարօրինակ ոչինչ չեմ տեսնում, ընկեր Սուրենյան,- ասաց դատախազը- Եթե մենք չենք կարող ապացուցել, որ մարդը անազնիվ նպատակներով է գործել այս կամ այն արարքը, ուրեմն պետք է հավատանք նրա խոսքին:

Գրետա Սուրենյանը բարկացած ցնցեց ուսերը:

- Մենք այդպես էլ իրար չհասկացանք, ընկեր Միսակյան, դուք ամեն ինչին նայում եք իրավաբանի աչքերով: Իսկ սա կուսակցության քաղաքային կոմիտե է: Մենք հանցագործներ չենք բռնում, դա ձեր բնագավառն է: Մենք գործ ունենք կոմունիստների հետ և եթե նրանցից որևէ մեկը թույլ է տալիս այնպիսի մի արարք, որը հակասում է կոմունիստի վարքագծին և կասկածներ է հարուցում, մենք նրան պատժում ենք:

- Իսկ Շարաֆյանի վարքագծի մեջ այդ ի՞նչն է կասկած հարուցում: Որ նա խղճացե՞լ է մեկին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ոչ թե մեկին, այլ հենց ձեր ասած հանցագործին, որը գողացված ապրանքներով տուն է կառուցել:

- Ընկեր Սուրենյան,- ասաց դատախազը,- քիչ առաջ դուք էիք անկեղծության կոչում: Եկեք անկեղծ խոսենք: Այստեղ օտար մարդիկ չկան և բոլորն էլ կոմունիստներ ենք: Իսկ երբևէ մտածե՞լ եք այն մասին, որ եթե մարդ ուզում է տուն կառուցել և իրավունք է ստացել կառուցելու՝ որտեղի՞ց կարող է շինանյութ գնել: Ձեր ղեկավարած քաղաքի ո՞ր խանութում է այսօր վաճառվում քար, ցեմենտ, ավազ, արմատուրա, փայտանյութ, ապակի…

- Խնդրեմ,- դառնությամբ պատասխանեց քարտուղարը,- տեսեք թե ինչ է ասում օրենքի պահապանը, քաղաքի դատախազը: Ուրեմն եթե չկա, կարելի է գողանա՞լ: Կարելի է զարտուղի ճանապարհներով շինանյո՞ւթ ձեռք բերել:

- Ոչ,- ասաց դատախազը,- Բայց գոնե կարելի է հասկանալ այն մարդկանց, որոնց մենք պարտավոր ենք տուն տալ և չենք տալիս, պարտավոր ենք գոնե շինանյութ վաճառել, բայց չենք կարողանում կազմակերպել այդ վաճառքը: Եթե մենք ենք աշխատավորությանը հանցագործության մղում, պարտավոր ենք գոնե մարդկայնորեն խղճալ ու կարեկցել նրանց: Ինչպես, իմ կարծիքով, վարվել է մեր լրագրողը:

Թվում էր, թե ուր որ է Գրետա Սուրենյանը կաթված կստանա:

- Իսկ մեր լրագրող ընկերը մի քիչ շատ չէ՞ կասկածելի բարեգործությամբ զբաղվում: - Հնաց նա: - Ինձ չափազանց հետաքրքրում է, օրինակ, թե ինչո՞ւ է նա այսօր մեր քաղաքային առևտուրը սկզբունքորեն հիմքից ցնցող հոդվածից հանել շատ կարևոր որոշ փաստեր և դրանով իսկ հովանավորել նոր հանցագործների:

- Ես այդ մասին տեղեկություն չունեմ,- ասաց դատախազը:

- Իսկ ես ունեմ,- թունոտ ժպտաց Գրետա Սուրենյանը: -- Հոդվածում խոսվել է նաև քաղսովետի բուֆետապանուհու կատարած խարդախության և թերակշռումների մասին, ինչպես նաև այն մասին, որ մեր քաղաքի նորաբաց հրուշակեղենի ֆաբրիկայում խոշոր չափի հափշտակություններ են կատարվում և խախտելով ստանդարտը՝ «Հայկական գաթա» կոչվող թխվածքը վաճառքի են հանում ոչ թե երկու հարյուր գրամ կշռով, ինչպես նշված է պիտակի վրա, այլ հարյուր հիսուն գրամով: Իսկ մեր հանկարծ բարիացած խմբագիրը անհրաժեշտ է գտնում հոդվածից հանել այդ փաստերը: Ինչո՞ւ, հարցնում եմ ես՝ ի՞նչ կարեկցանքից դրդված:

Եվ հանկարծ Ջավենի համար շատ անսպասելի տեղից բարձրացավ Մուշեղ Օթարյանը:

- Այդ հոդվածի հեղինակը ես եմ, ընկեր Սուրենյան, և ես եմ այնտեղից հանել ձեր նշած փաստերը: Ըստ որում կարող եմ ասել, թե ինչի համար:

- Ինչի՞ համար, երիտասարդ,- ծաղրաբար հարցրեց քարտուղարը:

- Դա հեղինակի իրավունքն է,- ասաց տղան,- համալսարանում գոնե մեզ այդպես են սովորեցրել: Նյութն այնքան ծանրաբեռնված էր փաստերով, ասես եղբայրական գերեզման լիներ: Ես էլ վճռեցի թեթևացնել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դո՞ւ ինչ կասես, ընկեր կուսկազմակերպության քարտուղար,- Միհրանին դիմեց Սուրենյանը:

Ի պատիվ իրեն՝ Միհրան Գալստյանը կարմրեց.

- Ի՞նչ ասեմ, ընկեր Սուրենյան, իմ կարծիքով ընկեր Օթարյանը ճիշտ չի ասում:

- Ի՞նչը ճիշտ չեմ ասում,- բռնկվեց Մուշեղ Օթարյանը:

- Ներիր ինձ, Մուշեղ,- կմկմաց պատասխանատու քարտուղարը,- և դուք էլ ներեցեք ինձ, ընկեր Շարաֆյան, բայց ես ընդունակ չեմ ստելու և իբրև կոմունիստ պարտավոր եմ ճշմարտությունն ասել: Երբ ես ի պաշտոնե կարդացի նյութը, այդ փաստերը կային, իսկ երբ խմբագիրը իր հերթին կարդալուց հետո ինձ տվեց՝ էջում տեղավորելու. համար, այդ փաստերն արդեն ջնջված էին:

Գրետա Սուրենյանը հաղթական հայացք նետեց ներկաներին:

- Հարցեր կա՞ն: Ամեն ինչ պա՞րզ է,- ժպտաց նա:

- Ի՞նչն է պարզ, հենց ինքս էլ ջնջել եմ,- չէր հանձնվում Մուշեղը:

Միհրան Գալստյանը տարածեց ձեռքերը՝ ասես ներողություն հայցելով, հետո վերցրեց ծնկներին դրած թղթապանակը, միջից թերթերի մի կապ հանելով, դրեց սեղանին և սկսեց թերթել:

- Դա ի՞նչ է,- անգետ ձևացավ քարտուղարը:

- Հոդվածն է, ընկեր Սուրենյան, չգիտեմ ինչու, ենթադրեցի, որ պետք կգա: Տեսեք, ջնջումները սրանք են: Ընկեր Շարաֆյանի ձեռագիրն է: Ճիշտ չէ՞, Զավեն Աշոտիչ…

Խմբագիրը պատասխանատու քարտուղարին էր նայում ոչ թե ատելությամբ, այլ զարմանքով ու վշտացած,

- Միհրան, ուրեմն իսկապե՞ս դու ես քաղկոմին տեղեկացրել այդ կրճատումների մասին:

- Ոչ, ոչ, Զավեն Աշոտիչ, երբ Գրետա Հակոբովնան հարցրեց, չկարողացա հրաժարվել: Ես կոմունիստ եմ և կուսկազմակերպության քարտուղարը, ինչպե՞ս կարող էի ինձ թույլ տալ սուտ ասել, խաբել քաղկոմի քարտուղարին:

Ու մեկ էլ Մուշեղ Օթարյանը ճիշտ երևանցի տղայի նման պոռթկաց հանկարծ.

- Վա յ, արա, դու հեչ մարդ չե՞ս…

Զավեն Շարաֆյանը հայացքով սաստեց նրան:

- Պետք չէ, Մուշեղ, շնորհակալություն, բայց ես քո պաշտպանության հարկը չեմ զգում: Փաստերն ինքս եմ հանել և ինքս էլ պատասխան կտամ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ոչինչ չեմ հասկանում,- զայրացավ քաղխորհրդի նախագահը,- այս ի՞նչ է ստացվում: Ուրեմն խմբագիրը ինչ ուզենա, կանի :

- Տեսնո՞ւմ ես, որ հենց այդպես էլ կա,- անմիջապես նրան միացավ քիմկոմբինատի դիրեկտորը: - Երանելի վիճակի է, էլի: Ում կուզես լավություն արա, ում կուզես հերն անիծի:

- Ընկեր Շարաֆյան, իսկապե՞ս դուք իրավունք ունեք այդքան ազատորեն վարվելու փաստերի հետ,- հոնքերը կիտեց կազմբաժնի վարիչը: - Չէ՞ որ յուրաքանչյուր փաստի տակ մի խարդախ, խաբեբա, հանցագործ մարդ կա:

- Չէ, գլուխը նախատինքով տարուբերեց գորգագործական ֆաբրիկայի դիրեկտորը,- այստեղ ի՞նչ խոսք խղճալու պատճառաբանությունը չի օգնի: Խղճալ ժողովրդին գռփողների՞ն, նրան, ով երկու հարյուրի փոխարեն հարյուր հիսուն գրամանոց գաթա է արտադրում: Սա հո կլասիկ հանցագործ է:

- Հանցագործը հո պոզով-պոչով չի լինում,- ծիծաղեց բանկի կառավարիչը: - Կասկած չունեմ, եթե այդ փաստը հրապարակվեր, մեր հարգելի դատախազը անպայման ստիպված կլիներ քրեական գործ հարուցել այդ առթիվ: Չե՞մ սխալվում, ընկեր Միսակյան:

- Հավանաբար,- մռայլված ասաց դատախազը:

Զավենը չգիտեր ինչ անել: Նա համոզված էր, որ բավական է մի բառ ասել, միայն մի բառ, հայտնել, որ Գառնիկ Բադալյանը տեղյակ է հոդվածում կատարված կրճատումներին, որ այդ ամենը նրա գիտությամբ և կարգադրությամբ է արվել: Եվ ամեն ինչ կփոխվեր միանգամից: Եվ այս նույն մարդիկ բոլորովին ուրիշ երգ կերգեին: Բայց հարցն այն է, որ նա չէր պատկերացնում, թե այդ հայտարարությունն ինչպես կընդունի Գառնիկ Բադալյանը: Ի՞նչ կանի: Չի՞ ասի. հազարից մի անգամ մի բան եմ խնդրել քեզ, միտք ունե՞ր այդ մասին ազդարարել բյուրոյով մեկ: Տեղյակ պահել բյուրոյին, որ ես և հրուշակադործ Օնիկը ընկերներ ենք, և ես քաղկոմի առաջին քարտուղարս, նրան իմ հովանու տակ եմ առել: Ո՞վ գիտե, ի՞նչ իմանաս, թե ինչ կմտածի և ինչ կասի Գառնիկ Բադալյանը:

- Ընկեր Սուրենյան,- աշխատելով հանգիստ ու արժանապատվությամբ խոսել՝ ասաց խմբագիրը,- ես խնդրում եմ հարցը հանել օրակարգից և քննարկել հաջորդ բյուրոյում:

- Իսկ ի՞նչ կտա դա,- ուսերը թոթվեց Սուրենյանը:

Ախ, եթե միայն կարողանայի ասել, թե ինչ կտա դա, մտածեց Զավեն Շարաֆյանը, բայց փոխարենը աշխատեց պատճառաբանել:

- Նախ ես հանկարծակիի եմ եկել, հասկանալիորեն նախապատրաստված չեմ պատասխանելու ձեր հարցերին և արդարացնելու ինձ: Իսկ ես անմեղ եմ: Բոլոր դեպքերում իմ արարքների մեջ հանցանշան չկա: Եվ երկրորդ՝ շատ կուզեի, որ բյուրոյին ներկա լիներ Գառնիկ Վարդանիչը: Մեծամտություն չհամարեք, բայց դուք թերթի խմբագրի հարցն եք քննում և, իմ կարծիքով, բոլորովին հարմար չէ, որ այդ հարցը քննում եք առանց առաջին քարտուղարի գիտության և ներկայության:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ի՞նչ կասեք, ընկերներ,- հարցրեց Գրետա Սուրենյանը՝ կրկին թոթվելով ուսերը և վարսերը ծածանելով:

Բայց ընկերներն արդեն ծարավի էին արյան և հասկանում էին, թե ինչ պատասխանի է սպասում քաղկոմի քարտուղարը: որն առանց այդ էլ մինչև հոգու խորքը վիրավորված է իր սիրելիներին հաշվեհարդարի ենթարկելու համար: Որեմն միտք ունի՞ կրկին գազազեցնել նրան, երբ չգիտես, թե վաղը քեզ ինչ է սպասում:

- Իմ կարծիքով, ոչ մի միտք չունի հետաձգելը,- ասաց քաղխորհրդի նախագահը: - Ամեն ինչ պարզ է:

- Պարզել էր պարզ,- ավելացրեց քիմկոմբինատի դիրեկտորը:

- Մի շաբաթում ի՞նչը պետք է փոխվի, չեմ հասկանում,- գլխով արեց բանկի կառավարիչը:

- Մանավանդ որ փաստերը բացահայտ են և դու էլ չես հրաժարվում, որ մի դեպքում խուսափել ես ֆելիետոն գրել, իսկ մյուս դեպքում տպագրվող նյութից հանել ես քեզ համար անցանկալի հատվածները,- ասաց քաղկոմի կազմբաժնի վարիչը:

- Ճիշտ է, ճիշտ, մեկ էլ ո՞վ է նույն հարցը քննարկում,- իր կարծիքով հայտնեց գորգագործական ֆաբրիկայի դիրեկտորը:

Գրետա Սուրենյանը բոլորին հերթով ժպտաց խրախուսաբար:

- Ուրեմն անցնում ենք մտքերի փոխանակության: Սկսենք, ընկեր Սուքիասյան:

Քաղխորհրդի նախագահը դժվարությամբ բարձրացավ տեղից ու կարճ, հաստ ձեռքերով սեղանին հենվեց: Նա ասաց, որ ինքը սաստիկ զարմացած ու վշտացած է, որովհետև բոլորովին ուրիշ կարծիք ուներ Զավեն Շարաֆյանի մասին: Եվ անմիջապես էլ սկսեց տաքացած դատապարտել «Լուսաբաց» թերթի խմբագրի կամայական վերաբերմունքը և շատ կասկածելի բարեհոգությունը վերոհիշյալ դեպքերի առթիվ:

Նա խոսում էր, իսկ Զավենը գրեթե չէր լսում նրան, այլ մտածում էր տենդորեն նույն, դարձյալ նույն հարցի մասին: Ի՞նչ անի, վեր կենա ու հայտնի՞ բոլորին, որ նյութերը հանվել են Գառնիկ Բադալյանի գիտությամբ: Գիտի, հասկանում է, որ դա առանձնապես վայելուչ քայլ չէ, բայց ի՞նչ անի: Ախր նրանք հիմա կարող են հեռացնել իրեն աշխատանքից և կուսակցությունից: Նրանց համար ի՞նչ կա: Գրետան բացահայտ վրեժ է լուծում՝ Պեպանյանի և նրա ցանցի մասին տպագրված հոդվածի համար, իսկ սրանք էլ հաճոյանում են նրան: Ինչ զարհուրելի կին է: Մի՞թե նա Գառնիկ Բադալյանից նույնիսկ չի վախենում; Չէ՞ որ առաջին քարտուղարը նրան չի ների, որ առանց իր գիտության և թույլտվության խմբագրի հարցն են քննել: Իսկ նա հո սարերի ետևում չէ, վաղն ուր որ է կհայտնվի: Վաղը, բայց չէ՞ որ արդեն ուշ կլինի- նա իրավունք ունի՞ փոխելու բյուրոյի որոշումը- Դժվար թե:

Զավեն Շարաֆյանը տառապեց, տառապեց և երբ արդեն Լյուդվիգ Մելոյանն էր ելույթ ունենամ, թեքվեց դատախազի ականջին. - Գագիկ ջան, ախր չգիտեմ ինչ անել,- շշնջաց նա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Պատկերացրու՝ ես էլ չգիտեմ ինչ անես,- սրտնեղած շշնջաց դատախազը,- ինչ միամիտ բաներ ես արել, այ մարդ:

- Բայց այդ բոլորի մասին Գառնիկ Բադալյանը գիտի,- հևաց Զավենը: - Հենց ինքն է պահանջել, որ հանեմ հրուշակարանի վերաբերյալ փաստը:

Գագիկ Միսակյանը զարմացած էր:

- Ճի՞շտ ես ասում: Այ քեզ պատմություն:

Դատախազը մի պահ մտածում էր: Նա կարծես թե շատ անհանգստացած էր ու տարակուսած: Հետո ձեռքը դրեց Զավենի ծնկին.

- Լսիր,- շշնջաց նա: - Որքան հասկացա, սա փաստորեն պրովոկացիա է և ուղղված է առաջին հերթին ոչ թե քո, այլ Բադալյանի դեմ: Հա, հա: Նա երևի գիտի, որ Բադալյանն է կարգադրել հանելու Օնիկի փաստը բայց ուզում է վախեցնել, որ դու հայտարարես բյուրոյում ու հաստատես դա: Ջուր չէր, որ կազմբաժնի վարիչը հարցրեց. գուցե մի շատ ազդեցիկ մա՞րդ է կարգադրել քեզ… Ուրեմն կազմակերպված բան է, և Գրետան տեղնուտեղը վրեժ է ուզում լուծել: Ես էլ ասեմ ինչու էր օձի գլուխը այսօր կրիայի պատյանի մեջ թաքցրել: Գործ չունես, Զավեն, ոչ մի ձայն:

Զավենը գլուխը բարձրացրեց՝ ձևացնելով, թե Լյուդվիգ Մելոյանի ցասկոտ ելույթն է լսում ու հարցրեց հուսահատ:

- Բայց ի՞նչ անեմ, Գագիկ, տեսնո՞ւմ ես ինչեր են ասում…

- Ինչ ուզում են ասեն,- Զավենի ծունկը սեղմեց դատախազը: - Բադալյանը չի՞ գալու: Վաղը կտեսնես, թե ինչ օյին կխաղա սրանց գլխին: Հանգիստ մնա, ասում եմ…

Եվ Զավեն Շարաֆյանը խաղաղվեց միանգամից: Նա ներկան մոռացած վաղվա օրն էր վայելում, պատկերացնելով այս նույն մարդկանց խղճուկ դեմքերը, երբ կկանգնեն Գառնիկ Բադալյանի ահեղ դատաստանի առաջ: Բա իհարկե, Գառնիկ Բադալյանի

նման ինքնասեր մարդը կհանդուրժի՞,որ իր թիկունքում դավադրություն կազմակերպեն…

Նա հանգիստ էր նույնիսկ այն ժամանակ, երբ Գրետա Սուրենյանը առաջարկեց ժուռնալիստական էթիկայի նորմերը խախտելու, կոմունիստին անվայել վարքագծի համար, «Լուսաբաց» թերթի խմբագիր Զավեն Շարաֆյանին հայտարարել կուսակցական խիստ նկատողություն և զգուշացնել, որ կրկնվելու դեպքում կհեռացվի թե կուսակցությունից, թե աշխատանքից:

Նա անվրդով և արհամարհանքով դիտում էր, թե բյուրոյի անդամները ինչպես են մեկը մյուսի ետևից բարձրացնում ձեռքերը:

- Ովքե՞ր են դեմ,- հարցրեց Սուրենյանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ես,- ասաց Գագիկ Միսակյանը,- ես դեմ եմ: Ես ճանաչում եմ մեր խմբագրին և համոզված եմ, որ ինչ արել է, միայն ազնիվ մղումներով է արել:

Ջավեն Շարաֆյանը հանկարծ զգաց, որ ոչ միայն հանգիստ է, այլև այդ մարդկանց ծաղրելու տրամադրություն ունի և բարձրաձայն ասաց այն, ինչ ասել էր մտքում :

- Ես էլ եմ դեմ,- տեղից բարձրացավ նա:

- Դուք բյուրոյի անդամ չեք,- սեղմած շրթունքների արանքից նետեց քարտուղարը:

- Եվ այնուամենայնիվ դեմ եմ: Ըստ որում ես ձեզ չեմ մեղադրում ինձ չհավատալու համար և նույնիսկ հասկանում եմ: Դուք միանգամայն անկեղծ եք և դա ձեր էությունից է բխում: Որովհետև դուք երբևէ առանց շահագրգռվածության, առանց հաշիվների կամ ինչպես դուք եք ձևակերպում հենց այնպես լավություն չէիք անի որևէ մարդու: Դրա համար էլ ձեզ շատ զարմանալի և կասկածելի է թվում իմ զուտ մարդկային վերաբերմունքը այլ մարդկանց նկատմամբ: Ահա ամբողջ գաղտնիքը:

- Ուխ,- ձեռքերն իրար շփեց Մուշեղ Օթարյանը: - Ինչպես վայել է իսկական ժուռնալիստին…

Ջավեն Շարաֆյանը տղային նայեց ու ժպտաց: Եվ զգաց, որ. ակամա տխուր ստացվեց ժպիտը:

* * *

Նա այնքան վստահ էր, թե առանձնասենյակ մտնելուն պես հնչելու է հեռախոսի զանգը, որ կանգ առավ ու զարմացած նայեց քաղկոմի քարտուղարի հետ ուղիղ կապի հեռախոսի սարքին: Սարքը լուռ էր:

Գուցե թե դեռ չի վերադարձել Երևանից, մտածեց Ջավեն Շարաֆյանը: Կամ գուցե գիշերն է եկել ու դեռ քնած է: Նա կարող էր անմիջապես ճշտել ամեն ինչ՝ բարձրացնելով այդ հեռախոսի լսափողը: Բայց գիտեր, որ քարտուղարի գրասեղանի կողքի փոքրիկ պահարանին դրված ավտոմատը տեղնուտեղը արձանագրում է, թե որ համարից են զանգահարում: Եվ Գառնիկ Բադալյանը անմիջապես կհասկանա, որ զանգողը խմբագիրն է: Իսկ նա չէր ուզում առաջինն ինքը զանգահարել: Համոզված էր, որ եթե Գառնիկ Բադալյանը իմանա, թե ինչ է կատարվել երեկ, անպայման ինքը կզանգահարի: Եթե չի զանգահարում, ուրեմն կամ չի վերադարձել, կամ էլ առայժմ նրան ոչինչ հայտնի չէ:

Առանձնասենյակի դուռը բացվեց ու ներս մտավ Մարոն:

- Բարի լույս, Ջավեն Աշոտիչ,- ողջունեց նա մրսած, խզված ձայնով և Շարաֆյանը նկատեց, որ աղջկա աչքերը կարմրած են:

- Բարի լույս,- հնարավորին չափ առույգ պատասխանեց Ջավենը: - Ի՞նչ է պատահել, հիվա՞նդ ես:

- Հիվանդ եմ,- գլխով արեց մշակույթի բաժնի վարիչը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նա ձեռքին բռնած նյութը դրեց խմբագրի սեղանին:

- Մեր քաղաքի երիտասարդ գրողների էջն է: Ինչքան թարմ խորագիր մտածեցի՝ ոչինչ չստացվեց: Ստիպված նորից «Երիտասարդ ձայներ» վերնագիրն եմ դրել:

- Ուրեմն մի նոր բան չգտա՞ր,- հարցրեց Զավենը, մեքենայաբար թերթելով էջերը:

- Զավեն Աշոտիչ,- ասաց Մարոն,- ինչ մտածում եմ, միևնույն է, նոր չէ, արդեն այնքան ենք օգտագործել, որ հոգնել ենք «Դալար ծիլեր», «Ջնծաղիկներ», «Մանուշակներ»..,

- Առաջի՞ն անգամ են տպագրվելու մեր թերթում:

- Առաջին անգամ:

- Դե ուրեմն դարձրու «Նոր անուններ»: Մի շատ փայլուն վերնագիր չէ, բայց պարզ է ու համապատասխան: Ի՞նչ կասես:

Մարոն ժպտաց.

- Լավ կլինի:

Նա հոդվածի վրա իր ձեռքով փոխում էր վերնագիրը, երբ ներս ընկավ Մուշեղ Օթարյանը:

Վա՞յ, կարծեցի մենակ եք, ես չխանգարեցի , Զավեն Աշոտիչ: «Բաց նամակն» եմ բերել,- ասաց նա շտապ նյութը դնելով սեղանին:

- Ընդհակառակը,- ասաց Զավենը: - Մի բան էի ուզում պատմել Մարոյին, լավ կլինի, որ դու էլ լսես:

- Մեծագույն հաճույքով,- անմիջապես բազմոցին տեղավորվեց տղան:

- Վերնագրի մասին էինք խոսում, Մուշեղ: Եվ ես հիշեցի, որ մեր դասախոսներից մեկը, որ նաև թերթի խմբագիր էր, չափազանց մեծ նշանակություն էր տալիս դիպուկ վերնագրին և խմբագրությունում նույնիսկ լավագույն վերնագրի մրցանակաբաշխություն էր հայտարարել: Ահագին հոնորար էր տալիս միայն լավ վերնագրի համար:

- Զանյա՞նը,- ծիծաղեց Մուշեղ Օթարյանը:

- Անուններ չենք տալիս,- ծիծաղեց նաև Զավենը: - Ուրեմն լսարան էր մտնում, թե չէ, ըստ իր սովորության անցնում էր նստարանների շարքերի արանքով, բռնում մեկն ու մեկի վիզը, ցնցում ու պահանջում, թե մի լավ վերնագիր ասա: «Ակումբը գյուղում» վիզը ձգելով շշնջում էր շփոթված ուսանողը: Լավ է, ասում էր դասախոսը, բայց հին է, ակումբը նորություն չի մեր գյուղում: Դո՞ւ ինչ կասես, բռնում էր նա երկրորդի վիզը: «Գյուղատնտեսական գիտությունների թեկնածուն կոլտնտեսության վարչության նախագահ» հնչում էր պատասխանը: Լավ է, գլխով էր անում դասախոսը, լավ է, բայց երկար է: Վերնագիրը պետք է կարճ լինի, թե չէ սյունակի մեջ չի տեղավորվի, այ աղջիկ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մի օր էլ հերթը իմ վզին հասավ: Իսկ ես այդ ամիսներին մեր ընտանիքին մի քիչ օգնելու նպատակով բեռներ էի տեղափոխում երկաթուղային կայարանում և այնքան էի հոգնում, որ կամ ընդհանրապես չէի գալիս համալսարան կամ էլ չէի դիմանում ու փախչում էի վերջին դասերից: Հակառակի նման մեր այս դասախոսի ժամերը վերջում էին լինում, և ամբողջ կիսամյակի ընթացքում մեկ կամ երկու անգամ էր ինձ հաջողվել լսել նրան:

Եվ, ուրեմն, մի օր հերթը ինձ հասավ: Դասախոսը բռնեց իմ վիզը, թափահարեց, ուզեց հարց տալ, բայց երևի շատ անծանոթ թվաց նրան իմ վիզը, որովհետև նայեց դեմքիս ու հարցրեց՝ դո՞ւ ով ես, տղա ջան: Ուսանող եմ, ասացի ես: Ուրեմն էքստերն կարգով ես սովորում, հա՞: Ոչ, ասացի, ստացիոնար ուսանող եմ: Նա զարմացած բաց թողեց վիզս: Բա ինչպե՞ս է, որ ես մինչև հիմա քեզ չեմ տեսել: Ելք չունեի, անցա կատակի: Համեստ ուսանող եմ, ասացի, միշտ վերջում, մի անկյունում եմ նստում, դրա համար էլ աչքի չեմ ընկնում: Համեստ… փնչաց դասախոսը, սրա համեստ բեղերին նայեք: Շուտով քննության կգաս ու ես կտեսնեմ, թե ինչքան համեստ ես դու:

Մարոն քրքջում էր, իսկ Մուշեղը փոթկացնում էր ու ասում արանքներում.

- Ջանյանն է, էլի, Ջավեն Աշոտիչ, մեզ էլ էր կարդում: Ջանյան ասեք ու պրծեք:

- Դե լավ,- հանձնվեց Շարաֆյանը: - Երբ սպառնաց, նոր հասկացա, որ կորած եմ: Իրոք որ տասնհինգ օրից հետո քննություն էինք տալու: Իսկի չլինի «չորս» կդնի ու կզրկվեմ գերազանցիկի թոշակից: Այնինչ ինձ համար շատ մեծ նշանակություն ուներ այդ թոշակը: Մտածում էի ինչ անեմ, ի՞նչ չանեմ, որ կարողանամ փսխել նրա վերաբերմունքը իմ նկատմամբ: Ախր շատ քիչ ժամանակ էր մնացել: Ու հանկարծ մտածեցի, որ նրա բարյացակամությունը կարող եմ շահել միայն ու միայն…

- Լավ վերնագրով,- ճչաց Մարոն:

- Կռահեցիր,- ասաց Ջավենը: - Գիշեր-ցերեկ մտածում էի, թե քննության ժամանակ նրան ինչ վերնագիր ասեմ, որ ոչ միայն ների ինձ, այլև «հինգ» նշանակի: Ու գտա- Ուշի-ուշով կարդացի նրա խմբագրած թերթի համարները: Շատ հետաքրքիր վերնագրեր տեսա ու հանկարծ հասկացա, որ գտել եմ նրա ամենասիրած վերնագիրը: Այդ վերնագիրը նա օգտագործում էր ոչ հաճախ, բայց ամենահանդիսավոր իրադարձությունների ժամանակ: Թերթի միջին էջերի վերևում, անկյունից անկյուն սև, թանձր տառերով շարում էր. «Քեզ համար, հարազատ պարտիա»…

- Վայ, մեռա,- բազմոցին գալարվում էր Մուշեղը:

- Հորինում եք, չէ՞, Ջավեն Աշոտիչ, հորինում եք, չէ՞,- նվվում էր Մարոն:

- Երդվում եմ դատավորի վառարանով,- բռնած ոճից անկարող դուրս գալու, ծիծաղեց Ջավենը: - Ի՞նչ մեղքս թաքցնեմ, այնքան էի նրանից վախենում, որ այնուամենայնիվ բեղերս սափրեցի և ամենավերջին քննասենյակ մտա: Բեղերս չփրկեցին: Ինձ տեսավ, թե չէ՝ քմծիծաղ տվեց: Ա, այն համեստ ուսանողն ես, հա՞, մոտ եկ, մոտ եկ, բեղերդ որտե՞ղ են, այ տղա, տոմս վերցրու: - Տոմս վերցրեցի ու մի անկյուն քաշվելով, բացեցի հարցաթերթիկը: Երկու հարցը գիտեի, բայց երրորդի մասին առաջին անգամ էի լսում: Ուրեմն կորած եմ, մտածեցի ես,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

առաջին երկու հարցերում տեղ փնտրելով, որպեսզի կարողանամ ասել «Քեզ համար, հարազատ պարտիա»: Բայց հակառակի նման ոչ մի հնարավորություն չկար: Ոչ մի այնպիսի առիթ չկար, որ ես արտասանեի այն կախարդական բառերը, որոնք ինձ գերազանցիկի թոշակ պիտի ապահովեին: Տխուր-տխուր մոտեցա քննասեղանին: Սկսիր, համեստ տղա, հեգնանքով ասաց Ջանյանը, և ես սկսեցի: Առաջին պատասխանս դուր եկավ նրան, որովհետև գլխով արեց ու ընդհատեց՝ անցիր երկրորդ հարցին: Անցա ու սարսափով սպասում էի, որ նա կընդհատի ու կասի անցիր երրորդ հարցին: Իսկ ես, ինչպես ասացի, երրորդ հարցը բոլորովին չգիտեի: Ջանյանը բարձրացրեց ձեռքը և թափահարելով ընդհատեց ինձ: Շունչս պահեցի: Եթե ասի՝ անցիր երրորդ հարցին, ես էլ կասեմ՝ չգիտեմ: Եվ մնաս բարով գերազանցիկի թոշակ: Բայց նա, առանց ձեռքն իջեցնելու, բարձրացրեց նաև գլուխը ու երազկոտ, կկոցած աչքերը առաստաղին հառած ասաց, - Համեստ տղա, իսկ հիմա երրորդ հարցին պատասխանելու փոխարեն, կարո՞ղ ես մի այնպիսի վերնագիր ասել, որն այսպես… բարձր զգացմունք արտահայտի պարտիայի հանդեպ…

Չհավատալով իմ ականջներին ու երջանկությանը, այլևս չսպասեցի, որ նա նախադասությունն ավարտի և ոգևորված, հուզմունքով, արցունքն աչքերիս, մեծ հանդիսավորությամբ արտասանեցի՝ «Քեզ համար, հարազատ պարտիա»…

Նա մնաց նույն դիրքով, ասես արձանացած, ձեռքը պարզած վեր և աչքերը՝ առաստաղին… Եվ առանց ինձ նայելու, առանց որևէ բառ արտասանելու, վեր մեկնած ձեռքի մատների շարժումով հասկացրեց, որ հեռանամ: Որ ինքը ուզում է մենակ մնալ…

Պարզ է, որ միջանցքում ինձ կամ ավելի ճիշտ՝ իմ տապալմանն էին սպասում մեր կուրսի որոշ լուրջ տղաները և որոշ անլուրջ աղջիկներ: Երբ զգուշությամբ դուրս եկա քննասենյակից, աղջիկները վրա տվեցին.

- Հը՞…

- Կամ «երկու» կամ «հինգ»,- ասացի ես:

Քիչ հետո դեռ վայելքն աչքերին դուրս եկավ նաև Ջանյանը, նայեց մեր լուրջ տղաներին և անլուրջ աղջիկներին ու բարձրաձայն ասաց,

- Եթե ձեր մեջ կա մեկը, որին հենց վաղն էլ կարող եմ խմբագրություն հրավիրել՝ դա Զավեն Շարաֆյանն է: Ու ստուգարքային գրքույկը ինձ մեկնելով սեղմեց ձեռքս:

Երբ մի կուշտ ծիծաղել, վերջացրել էին, Զավենը կրկին մի հայացք նետեց Մարոյի ներկայացրած նյութին ու զարմացավ:

- Այստեղ Միհրանի ստորագրությունը չկա, Մարո: Ինչո՞ւ սկզբից քարտուղարություն չես հանձնում:

Մարոյի դեմքից ջնջվեց ծիծաղը:

- Ես այդ տականքին այլևս նյութ չեմ տա, Զավեն Աշոտիչ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ինչպե՞ս թե, դու հո երեխա չես, Մարո: Չգիտե՞ս որ կարգն է այդպես:

- Չգիտեմ: Նա մատնիչ է և լրտես: Ես նրա երեսին հենց նույնն էլ շպրտեցի և ասացի, որ այլևս նյութ չեմ հանձնելու նրան:

- Եղա՞վ, Մարո:

- Որպեսզի կրկնակի չզարմանաք, Զավեն Աշոտիչ, զեկուցում եմ, որ մոտավորապես նույնն էլ ես եմ ասել և իմ նյութն էլ ստորագրված չէ,- հոնքերը խոժոռած ավելացրեց Մուշեղ Օթարյանը:

Զավենը չգիտեր ծիծաղի թե հանդիմանի նրանց: Ինչ խոսք, նրան հաճելի էր, որ Մարոն ու Մուշեղը դատապարտում են ստորությունը, բայց գիտեր, որ ինքը իրավունք չունի խրախուսելու նրանց: Եվ նրանք էլ իրենց հերթին իրավունք չունեն խախտելու կարգը: Նա պատրաստվում էր արտահայտել իր միտքը, երբ իրար ետևից առանձնասենյակ մտան Ջիվան Ենգոյանը և Քաջիկ Սահառունին:

Մի պահ խմբագրին թվաց, թե Ջիվանը հարբած է: Մի՞թե նոր աղջիկ է ունեցել, ցավով մտածեց նա: Բայց արդյունաբերության բաժնի վարիչը հարբած չէր, այլ բարկացած էր սոսկալի և երբ խոսեց՝ կակազում էր…

- Ուրեմն ճ-ճիշտ է, հա՞- Կ-կեղտոտ սրիկան ք-քաղկոմ է վազե՞լ…

- Նա կուսկազմակերպության քարտուղարն է, Ջիվան, ինչո՞ւ ես զարմանամ, որ քաղկոմ է վազել- նրա ճանապարհը դա է,- կողքից խայթեց Մարոն:

- Ես նրա ոտքերը կկոտրեմ, որ էլ չվազի,- բռունցքը թափահարեց Քաջիկ Սահառունին: - Զզվում եմ դրանցից, մեկն էլ մեր տանը չէ՞… Նրա վրա ուժս չի պատում, բայց սրա հերը հո կարող եմ անիծել…

- Մենք նրան բոյկոտ ենք հայտարարում: Ով նրա հետ խոսի մարդ չի,- չէր հանգստանում Ջիվանը: - Բա ես ճիշտ չէի ասում, թե մարդ ավելի լավ է տասնութ աղջիկ ունենա, քան թե քեզ նման մի սրիկա տղա…

- Վերջ, սրանից հետո նյութերը ձեզ ենք հանձնում, ընկեր Շարաֆյան, ուզում եք նեղացեք, ուզում եք՝ չէ,- ասաց Քաջիկը:

Մարոն դեռ եփ էր գալիս:

- Չէ, բայց ենթադրենք, թե այդ ողորմելին ասում է, քաղկոմում ո՞նց են լսում նրան, հաշվի առնում ու թերթի խմբագրին խիստ նկատողություն հայտարարում առանց փաստերը ստուգելու և նույնիսկ առանց Գառնիկ Բադալյանի գիտության:

Զավենը ակամա հեռախոսին նայեց: Գուցե փչացե՞լ է: Մի պահ ցանկացավ բարձրացնել լսափողն ու ականջին դնել, տեսնել աշխատո՞ւմ է արդյոք, բայց անմիջապես էլ հիշեց, որ եթե

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

բարձրացնի՝ Բադալյանը կնկատի, թե որտեղից է զանգը: Չէ, վճռել եմ և վերջ: Նա պետք է զանգահարի:

- Սիրելի ընկերներ,- ասաց նա: - Շնորհակալ եմ ձեր համերաշխության և իմ նկատմամբ ցուցաբերած սրտացավության համար: Բայց ձեզ խնդրում եմ հանգստանալ և գործի անցնել: Ձեր բոյկոտ կոչվածով ինձ կդնեք երկիմաստ վիճակի մեջ: Ինչ էլ անեք, ենթադրելու են, թե ես եմ կազմակերպել այս ամենը: Պետք չէ:

- Ձեզ պետք չէ, մեզ է պետք, մի նեղացեք,- պոռթկաց Մուշեղ Օթարյանը ու դուրս եկավ սենյակից:

- Նույն կարծիքին եմ,- նետեց Մարոն՝ հետևելով տղային:

- Ամեն մեկս հազար ու մի թերություն ունենք, Ջավեն Աշոտիչ,- ասաց Քաջիկ Սահառունին: - Բայց նա պետք է իմանա, որ մատնությունն ամենաաններելի բանն է:

- Ջիվան,- ձայնեց խմբագիրը՝ նկատելով, որ արդյունաբերության բաժնի վարիչն էլ է շտապում հեռանալ: - Դու տարիքով և լուրջ մարդ ես, եղբայր: Խոսիր նրանց հետ՝ թող հանգստանան: Դա միայն կվնասի գործին, ուրիշ ոչինչ:

Ջիվան Ենգոյանը թափահարեք գլուխը:

- Դե եթե լուրջ մարդու տեղ եք դնում, կասեմ ամենայն լրջությամբ: Գործին ամենամեծ վնասը կարող է հասցնել այն, որ Միհրան Գալստյանը մտածի, թե իր արածը մի առանձնապես մեծ ստորություն չէ և շարունակի լրտեսել ու մատնել մեզ: Նա պետք է պատժվի, Ջավեն:

Մենակ մնալով, Ջավեն Շարաֆյանը նորից հեռախոսին նայեց, բայց քանի որ այն շարունակում էր լռել, չհամբերեց այլևս ու մյուս հեռախոսով զանգահարեց քարտուղարուհուն:

- Բարև, Աիդա, Գառնիկ Վարդանիչը տեղո՞ւմ է:

- Տեղում է, ընկեր Շարաֆյան, միացնե՞մ:

- Չէ,- ասաց Ջավենը: - Մոտն ո՞վ կա:

- Մերոնք են, ընկեր Շարաֆյան, Գրետա Հակոբովնան և Լյուդվիգ Մելոյանը: Բայց եթե ուզում եք միացնեմ:

- Չէ,- հրաժարվեց Ջավենը,- քիչ հետո ինքս կգամ:

Ուրեմն հավաքվել են և այդ մասին են խոսում, մտածեց խմբագիրը: Պատկերացնում եմ, թե ինչքան գազազած կլինի Բադալյանը: Ու շատ հետաքրքիր է, թե ինչ վճիռ կընդունի: Այդպես էլ մեկը չկա, որ հարցնեմ, իմանամ, թե նա իրավունք ունի՞ չեղյալ հայտարարելու առանց իր գիտության ընդունած որոշումը: Ասենք ի՞նչ միտք ունի սրան-նրան հարցնելը, երբ Բադալյանը, միևնույն է, ուր որ է զանգ կտա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նա մի կողմ հրեց սեղանին կուտակված նյութերը՝ վճռելով դրանք հանձնել Միհրան Գալստյանին:

Հետո աչքը վերևում դրված «Բաց նամակին» ընկավ, որի հեղինակը Մուշեղ Օթարյանն էր, մոտ բերեց ու սկսեց կարդալ:

«Բաց նամակն» ուղղված էր Խաղաղության ծառուղու համալիրի դիրեկտոր Մեսրոպ Օհանյանին: Հեղինակը սկզբում խոսում էր այն մասին, թե քաղաքի աշխատավորները, բոլորն առանց բացառության, ինչպիսի սիրով ու նվիրվածությամբ են ձեռնամուխ եղել Խաղաղության ծառուղու կառուցապատմանը և ինչպիսի հույսեր են կապել համալիրի հետ: Վերջապես քաղաքը կունենա իրեն արժանի հանգստի գոտի: Կիրակի օրերին ստվերաշատ ծառերի տակ, գեղեցիկ ու թեթև տաղավարներում իրենց հանգիստը կանցկացնեն մարդիկ: Ովքեր ուզում են սպորտով զբաղվել՝ կմտնեն հատուկ կահավորված, ծածկված սրահները, բացօթյա հրապարակներն ու ջրավազանները: Ովքեր արվեստի սիրահար են կայցելեն ցուցասրահները և կծանոթանան իրենց հայրենակից նկարիչների ու քանդակագործների վերջին աշխատանքներին: Ում ազգային արհեստներն են հետաքրքրում, կհավաքվեն «Հին քաղաքում» և սեփական աչքերով կտեսնեն, թե ինչպես է կավը կուլա ու կուժ դառնում, ինչպես են թխում լավաշը և կոփում պողպատը, ինչպես են գործում գորգը և դաբաղում կաշին:

Ավաղ, այդ բոլորը դեռևս երազանքներ են: Իսկ ո՞րն է իրականն ու իրականացածը: Այն, որ համալիրի ղեկավարները գերազանց շտապողականությամբ առայժմ գործի են դրել միայն ատրակցիոն խաղերը: Ամբողջ օրը չխկչխկում են ճոճանակները, պտտվում կարուսելներն ու տեսահորիզոնային անիվները, միակ ջրային տարածության վրա շուրջավազանային ճանապարհորդություն են կատարում փոքրիկ նավակները: Երեխաների հրճվանքին չափ ու սահման չկա: Բայց անսահման է հատկապես, ասես հենց նոր գործարանային դազգահը լքած, ատլետիկ կազմվածքով ու կաշվե բաճկոններով երիտասարդների ուրախությունը, որոնցից ամեն մեկը մի խաղի մոտ կանգնած առանց տոմս վաճառելու, դրամ է հավաքում երեխաներից և անմիջապես դնում սեփական գրպանը:

Զավեն Շարաֆյանը ավարտեց նամակի ընթերցումն ու գոհունակ օրորեց գլուխը: Շատ սրամիտ ու համարձակ է գրում այդ տղան, մտածեց նա ու դառնությամբ ավարտեց մտքում՝ ինչպես ես մի ժամանակ… Նրան հատկապես դուր էր եկել նամակի ավարտը.

«Մեծարգո ընկեր Օհանյան, մեր այս մեղմ ու համեստ քննադատությունից հետո, հանկարծ, քավ լիցի, չմտածեք խաղերը փակելու մասին, ընդհակառակը, մենք ձեզ առաջարկում ենք երբեմն-երբեմն նույնիսկ անձամբ օգտվել ատրակցիոններից և հատկապես տեսահորիզոնային անիվից: Նստեք զամբյուղներից մեկի մեջ ու վեր բարձրացեք: Իսկ երբ հասնեք ամենավերջին կետին, կարգադրեք անջատել հոսանքը ու անիվի բարձունքից երկար, մանրամասն դիտեք ձեր համալիրի շրջապատը: Այնժամ կտեսնեք, թե դեռևս ինչքան գործեր կան անելու, որ չեք անում և որոնք չեն երևում ձեր շքեղ առանձնասենյակի լուսամուտից»:

Նամակն ընթերցելու ընթացքում Զավեն Շարաֆյանի ականջը միշտ գանգին էր: Բայց զանգ չկար ու չկար: Այսքան ի՞նչ են խոսում: Նա զայրացած ձեռքը լսափողին տարավ, բայց

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

անմիջապես էլ ետ քաշվեց, տեսնելով, թե ինչպես է երկչոտաբար, կողքի վրա ներս մտնում թերթի պատասխանատու քարտուղար Միհրան Գալստյանը:

- Ջավեն Աշոտիչ,- մրմնջաց նա,- հիմա ես ինչ անեմ՝ թողնեմ հեռանա՞մ:

- Ինչո՞ւ,- հարցրեց խմբագիրը,- քեզ ո՞վ է ասում, որ թողնես հեռանաս:

- Նյութ չեն տալիս կարդալու, բա ի՞նչ անեմ: Ոչ ոք չի խոսում ինձ հետ, իսկ երբ խոսում՝ վիրավորում են: Տիգրանին ասել էիք, որ ինձ Մոշուտ տանի, չէ՞, որ գրեմ կոլտնտեսության վիճակի մասին: Չի տանում:

- Խոսքը վաղվա մասին չէ՞ր: Ինչո՞ւ է հրաժարվում:

- Ասում է՝ բենզին չունեմ:

Խմբագիրը նրան մեկնեց հոդվածները:

- Վերցրու և տար կարդա: Իսկ Տիգրանի հետ ես կխոսեմ: Գնա, Միհրան:

Բայց Միհրան Գալստյանը շարունակում էր կանգնած մնալ:

- Ջավեն Աշոտիչ, իսկ դո՞ւք ինչու չեք ուզում խոսել ինձ հետ:

Խմբագիրը զարմացած նայեց նրան: Հիմա՞ր է այս մարդը, թե պարզապես լկտի:

- Ի՞նչ խոսեմ, Միհրան: Մի՞թե մինչև հիմա չէի խոսում:

- Հարցրեք, թե ինչ է պատահել, բարկացեք, վիրավորեք, ծաղրեք մյուսների նման, բայց այդքան անտարբեր մի եղեք: Ձեզ համար ես կարծես այլևս գոյություն չունեմ, չկամ: Ես այսպես աշխատել չեմ կարող, Ջավեն Աշոտիչ: Ասես անօդ տարածության մեջ լինեմ: Շունչս կտրվում է…

Ջավենը մի պահ նորից անիծյալ հեռախոսին նայեց, ապա ձեռքը մեկնելով ցույց տվեց աթոռը:

- Նստիր, Միհրան Գալստյան,- ասաց նա: - Ուրեմն շատ ես ուզում, որ խոսենք: Խոսենք: Իսկ ո՞վ կ ստեղծել այդ անօդ տարածությունը, եթե ոչ դու: Ինչո՞ւ ես այնպես ապրում, որ մարդիկ չեն ուզում խոսել քեզ հետ, նույնիսկ չեն ուզում որպես պատասխանատու քարտուղարի քեզ հանձնել թերթի հաջորդ համարի նյութերը, երբ պարտավոր են: Երբ կարգն այդպիսին է:

Միհրանը բարձրացրեց գլուխը:

- Ու դուք էլ հավատում եք նրանց, հա՞: Եթե ձեզ ոչ թե նկատողություն անեին, այլ հեռացնեին աշխատանքից, նրանցից ոչ մեկը ձեզ չէր մոտենա: Ես նրանց նո՞ր եմ ճանաչում, ինչ է:

- Ժողովուրդը մի իմաստուն խոսք ունի, Միհրան, ասում է, քո արշինով ուրիշներին մի չափիր: Դա հենց քո բնավորությունն է,- տխուր ժպտաց Ջավենը: - Դու այն ժամանակ, երբ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

քաղկոմում քննում էին իմ հարցը, դու ինձ մերկացնող ելույթ ունեցար և չսպասեցիր անգամ, որ միասին խմբագրություն գնանք: Երբ քեզ ձայն տվեցի: Հիշո՞ւմ ես:

- Մի՞թե այդպիսի բան է եղել, չեմ հիշում…

- Հիշում ես,- անողոք շարունակեց Զավենը,- հիշում ես և դրա ահը ստիպեց քեզ հրաժարականի փորձ ցուցադրել, երբ ես խմբագիր դարձա: Իսկ ահը շատ վտանգավոր ու հիմար բան է, Միհրան: Մտածելակերպդ է փոխում: Երբ քիչ առաջ սկզբունքային հակառակորդ էիր, մեկ էլ տեսար՝ շողոքորթ ու քծնող ես դառնում: Ինչպես դու, երբ ինձ հաճոյանալու համար չէիր տպագրում Քաջիկ Սահառունու խաչբառները, միայն այն պատճառով, որ խեղճ տղան իմ դեմ կազմակերպված դավադրության մասնակից Կայծակ Չոփուրյանի փեսան է: Խոսե՞լ էիր ուզում: Խոսենք: Կյանքը ցույց է տվել, որ ահից ծնված շողոքորթությունն ու քծնանքը դրանց կրողին սարսափելի վտանգավոր են դարձնում հասարակության համար: Որովհետև երբ առիթ է ստեղծվում կամ փոխվում են հանգամանքները, շողոքորթն ու քծնողը աշխատում են վրեժխնդիր լինել այն բանի համար, որ ստիպված են եղել շողոքորթել ու քծնել: Եվ ո՞ւմից են վրեժխնդիր լինում: Նրանից, ում շողոքորթում ու քծնում էին: Միայն այդ կերպ կարող եմ բացատրել քո այցը քաղկոմ…

Միհրան Գալստյանը գունատվեց: Սեղանին դրած աջ ձեռքը դողում էր:

- Ես ձեզ չեմ շողոքորթել ու առավել ևս՝ չեմ քծնել: Ես իսկապես շատ բարձր եմ գնահատում ձեզ և ձեր գրիչը: Դա գուցե շողոքորթություն է թվացել այն պատճառով, որ ես չեմ թաքցրել ու ընդգծել եմ: Մեր թերթի հնարավորությունները փոքր են, Զավեն Աշոտիչ, և դա է ձեզ խանգարում: Դուք մեծ թռիչքի համար եք ծնված: Ես դա ասել եմ ամեն տեղ ու դարձյալ կասեմ…

- Մի շարունակիր, դա ինձ վրա էժան չի նստի,- հեգնեց խմբագիրը:

- Ինչ վերաբերում է քաղկոմ գնալուն, ապա ճշմարտությունն այն է, որ ոչ թե ես եմ գնացել, այլ ինձ են կանչել: Եվ հարցեր են տվել, որոնց չպատասխանել չէի կարող: Երդվում եմ, որ ես ձեզ երբեք չեմ խաբել: Գուցե հիմար եմ, բայց ընդհանրապես խաբելու, ստելու սովորություն չունեմ: Եվ երբ ինձ ուղղակի հարց տվեցին, ստիպված ասացի ճշմարտությունը: Ասացի, որ դուք ձեր ձեռքով եք հոդվածից հանել փաստերը: Ուրիշ ի՞նչ կարող էի ասել, Զավեն Աշոտիչ:

- Իսկ այդ հարցնողները գիտեի՞ն, թե դրանք ինչ փաստեր են:

- Գիտեին: Եվ հարցնում էին մեկ առ մեկ:

- Բադալյանը և Սուրենյա՞նը:

- Սուրենյանը: Բադալյանը միայն լսում էր; Գրետա Հակոբովնան ամեն ինչ գիտեր: Հարցրեց. իսկ ո՞վ է հանել քաղխորհրդի բուֆետապանի և հրուշակի ֆաբրիկայի վերաբերյալ հատվածները: Այնպես որ հիմնական մեղավորին՝ այսօր իրենց նվիրվածությունը ձեր նկատմամբ ցուցադրող և ինձ տեռորի ենթարկած մարդկանց մեջ փնտրեք, Զավեն Աշոտիչ: Կամ ուրիշների մեջ, չգիտեմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Պետք չէ հոգիս թույնով լցնել: Առանց այդ էլ ես թունավորված եմ, Միհրան:

- Ես էլ նույնը կասեի, եթե համոզված չլինեի, որ իմ խոսքերն իմ դեմ են օգտագործվելու: Ես վաղուց եմ թունավորված, որովհետև հենց սկզբից դուք ինձ չեք վստահել: Ինչո՞ւ, ի՞նչ առիթ եմ տվել: Ես թերթի պատասխանատու քարտուղարն եմ, ես եմ ձևավորում թերթը և առանց իմ կարդալու ու գիտության նույնիսկ փոքրիկ մի լուր չպետք է տպագրվի: Իսկ դուք Մկրտիչ Զուլոյանի հետ ինձ լակոտի նման մի կողմ հրելով, գաղտագողի մի հսկայական ֆելիետոն տպագրեցիք թերթում: Եվ մինչև հիմա սրտնեղած եք, որ քաղկոմի բյուրոյում հայտարարեցի, թե ես տեղյակ չեմ ֆելիետոնից: Ինչ ասեի, ասեի տեղյա՞կ եմ: Ազնվության մասին եք խոսում, Զավեն Աշոտիչ, ազնի՞վ բան էր, որ թեկուզ այդ կրճատումների մասին ինձ ոչ մի բառ չէիք ասել: Թեկուզ միայն նրա համար, որ ստիպված չլինեի ասել, թե տեղյակ չեմ: Ինչո՞ւ ինձ չեք վստահում: Ես համոզված եմ, որ դուք ազնիվ մարդ եք և այդ կրճատումները, ինչպես դատախազն ասաց, կատարել եք ազնիվ մղումներից դրդված: Հա, բայց ինչ կլիներ, եթե ինձ էլ ասեիք: Ի՞նչ կլիներ, եթե ինձ էլ ձեր համախոհը համարեիք: Ի վերջո ահագին փորձ էլ ես ունեմ, գուցե մի խելոք բան էլ ես առաջարկեի: Թեկուզ իմ զգուշությունից ելնելով՝ նորից մեքենագրեի հոդվածը, որպեսզի ջնջումները չերևային:

Խմբագիրը պատասխանատու քարտուղարին էր նայում զարմացած, հոգու խորքում դժվարությամբ և դժկամությամբ խոստովանելով, որ Միհրան Գալստյանը իր տեսանկյունից ինչ-որ տեղ իրավացի է: Գուցե ամեն ինչ չէ այնպես, ինչպես նա է ասում, գուցե խոսքերն այնքան էլ կապ չունեն իրական ճշմարտության հետ: Ի վերջո բոլորն էլ դիմացինի համար որևէ կասկածելի ու ստոր արարք որոճալիս, անպայման որոճում, կշռադատում, նախապատրաստում են նաև, թե ի՞նչ են անելու, երբ մի օր ստիպված լինեն պատասխան տալ իրենց գործածի համար, ինչպե՞ս են արդարանալու: Եվ փնտրում, գտնում են համոզիչ պատճառաբանություններ: Գուցե դա հենց այդ դեպքն է: Բայց գուցե, գուցե, գուցե… Իսկ եթե այդ գուցեն կա, այլևս չես կարող լիովին վստահ լինել քո ճշմարտությանը, եթե քեզ արդարամիտ մարդ ես համարում:

- Միհրան,- ասաց նա,- սա ոչ առաջին դեպքն է, ոչ էլ վերջինն է լինելու: Գուցե թե էլի եմ ասել: Մարդիկ պատժվում են ոչ թե իրենց գործած, այլ չգործած մեղքի համար: Որովհետև երբ անմեղ են, չեն մտածում հետքերը ոչնչացնելու, թիկունքն ապահովելու մասին: Դա, իմ կարծիքով, այդպես է և այս դեպքում վերաբերում է և քեզ և ինձ: Եթե ես անմաքուր մտադրություններ ունենայի, մի՞թե չէի կռահի, որ անհրաժեշտ է երկրորդ անգամ մեքենագրել նյութը: Գոնե այդքանը:

- Ճիշտ է,- համաձայնվեց Միհրանը: - Բայց եթե ես էլ խմբագրության ցուցարարների ենթադրության չափ ստոր լինեի, այդ մասին ոչ նրանք կիմանային, ոչ էլ դուք: Մեր օրերում դժվա՞ր է անստորագիր նամակ գրելը, երբ անստորագիր նամակի նկատմամբ ավելի մեծ հարգանք կա, քան ստորագրված:

- Ի՞նչ ասեմ, Միհրան,- հառաչեց խմբագիրը,- ինձ համոզելը այնքան էլ դժվար չէ, որովհետև ես միշտ պատրաստ եմ համոզվելու:

Իսկ մտքում ավելացրեց… Եվ դա էլ երևի իմ դժբախտությունն է: Ես այլևս չեմ կարողանում ֆելիետոն գրել: Խոսքս ամենևին չի վերաբերում հղփացած թալանչիներին,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

մարդասպաններին և խուլիգաններին, կուստոմսն իրենց վահան դարձրած գող ու բյուրոկրատ ղեկավար ընկերներին, որոնց դեմ գրել եմ ու պիտի գրեմ: Ոչ: Հարցն այն է, որ մնացած դեպքերում, կենցաղային հարցերում, երբ խորանում եմ փաստերի մեջ, երբ լսում եմ մարդկանց, թե ինչից ստիպված են կատարել այս կամ այն զանցանքը, ձեռքս թուլանում է: Դատապարտելու փոխարեն կարեկցանք եմ զգում այն հացթուխի նկատմամբ, որը հինգ երեխա ունի և քանի որ չի կարողանում իր չնչին աշխատավարձով պահել նրանց, ամեն օր մի կտոր հաց է գողանում գործարանից: Չեմ կարողանում հափշտակության մեջ մեղադրել, սիրտս ցավում է այն հիվանդ կնոջ համար, որը գուլպայի արտադրամասում է աշխատում, իսկ երեխաները գուլպա չունեն: Եվ ինչ էլ ասեն, ձեռքս չի բարձրանա ֆելիետոն գրելու ձմեռվա բուքին ցուրտ տրամվայում շալի մեջ կծկված տոմսավաճառի մասին, որը երբեմն վերցնում է կոպեկը, բայց տոմս չի կտրում: Առաջ գրում էի անխտիր ում մասին էլ լինի, հպարտ, անհոգ ու թեթև: Հիմա չեմ կարողանում: Որովհետև հասկացել եմ, միշտ չէ, որ մարդիկ են մեղավոր օրենքները խախտելու համար: Մեղավորը այն օրենքներն են, որ չեն ապահովում աշխատավոր մարդու հանապազօրյա հացը և հանցագործ են դարձնում նրան:

Այդ բոլորը նա ասաց մտքում, որովհետև անկախ պատասխանատու քարտուղարի հետ ունեցած բաց խոսակցությանը, վստահ չէր, որ եթե հարկ առաջանա՝ նա չի օգտագործի այդ դատողությունները և որևէ տեղ չի հայտարարի, թե խմբագիրը խոստովանում է, որ խղճում ու կարեկցում է մանր գողերին ու հանցագործներին: Եվ այսօրվա նման կարղարանա, թե բա ի՞նչ անեի, ուղղակի հարցրեցին, ես էլ պատասխանեցի ազնվորեն, որովհետև ստելու ընդունակություն չունեմ: Չէ, բավական է…

- Միհրան,- ասաց Զավենը,- վերցրու նյութերը, տար կարդա ու աշխատիր: Եթե հարմար ես գտնում՝ խոսիր ընկերներիդ հետ, ասա այն ամենն, ինչ ինձ ասացիր և ավելացրու նաև, որ մենք բացատրվել ենք: Եղա՞վ…

- Տեսնենք ինչ կստացվի,- նյութերը վերցնելով գլուխն օրորեց Միհրանը: - Տեսնենք…

Երբ նա դուրս եկավ, Զավենը առանց այլևս երկմտելու վերցրեց ուղիղ կապի հեռախոսի լսափողը և ապշեց՝ պատասխան չլսելով: Մի քանի անգամ թխկթխկացրեց լծակին: Ոչ մի ձայն: Սա՞ ինչ բան է: Մի՞թե դուրս է եկել:

- Աիդա,- ասաց նա հավաքելով մյուս հեռախոսի համարը,- Գառնիկ Վարդանիչին միացրու:

- Գառնիկ Վարդանիչը գնացել է, ընկեր Շարաֆյան:

- Ե՞րբ:

- Արդեն մի ժամ կլինի:

- Չգիտե՞ս ուր գնաց, Աիդա:

- Կարծում եմ պանսիոնատ, ընկեր Շարաֆյան:

Սա արդեն շատ հետաքրքիր է դառնում, մտածեց խմբագիրը: Ի՞նչ է պատահել: Ինչո՞ւ չզանգահարեց: Անկարելի է, որ նրան պատմած չլինեն, թե ինչ է կատարվել բյուրոյում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ուրեմն ինչպե՞ս բացատրել այս լռությունը: Աշխատանքից հետո հանգիստ դուրս է եկել ու գնացել պանսիոնատ՝ բիլիարդ խաղալու: Դե ի՞նչ, մենք էլ պանսիոնատ կգնանք: Տեղը գիտենք:

Նա գրասեղանից հավաքեց թղթերը, տեղավորեց գզրոցների մեջ, բարձրացավ տեղից և ակամա տհաճություն զգաց, տեսնելով, որ դռան առաջ կանգնած է դեղագործը:

- Բարև, Զավեն ջան,- ողջունեց ծերունին:

- Բարև ձեզ,- իրեն ստիպելով՝ ժպտաց Զավենը ու հանկարծ ամաչելով մտածեց, որ մինչև հիմա չգիտի դեղատան վարիչի անուն-ազգանունը: - Համեցեք:

- Դուրս էիր գալիս, հա՞ - Կներես, տղա ջան:

- Ոչինչ, ոչինչ,- մեղմացավ խմբագիրը,- լսում եմ ձեզ:

- Շատ չեմ զբաղեցնի: Հոդվածն եմ բերել,- ասաց ծերունին ծոցագրպանից թղթեր հանելով: - Ինչպես պայմանավորվել էինք:

- Իսկ գլխացավի՞ դեղն ուր է,- նախորդ զրույցը հիշելով, կատակեց խմբագիրը:

- Է, Զավեն ջան, սրա բերած գլխացավն այնքան է լինելու, որ ոչ մի դեղ չի օգնի: Բայց ինչպես երեխայի ցաված տեղն են համբուրում, որ ցավն անցնի, այնպես էլ, եթե տպագրես, ժողովուրդը քո ճակատը կհամբուրի:

Զավենը ժպտալով ծերունու ձեռքից վերցրեց հոդվածը, թերթեց ու անմիջապես ստորագրությանը նայեց՝ դեղագործի անունն ի վերջո իմանալու համար: Նայեց ու չհավատաց աչքերին: Ստորագրված էր՝ «Գասպար Տոնյան: Բժշկական գիտությունների դոկտոր»:

- Այ քեզ բան,- չթաքցրեց նա զարմանքը: - Դուք գիտությունների դոկտո՞ր եք:

Գասպար Տոնյանը շփոթված ծիծաղեց:

- Գիտե՞ս ինչ է ասել Թորոս Թորոմանյանը, երբ Զվարթնոցի պեղումների ժամանակ նրան հյուր եկած օտարերկրացի գիտնականները հողագործ բանվորի տեղ են դրել ակադեմիկոսին:

- Ի՞նչ է ասել:

- Ասել է՝ շորերս ալրոտ տեսաք, կարծեցիք ջրաղացպա՞ն եմ:

- Ես իրոք զարմացած եմ,- ծիծաղեց Զավենը: - Մտքովս էլ չէր անցնի, թե համեստ դեղագործը, որի հետ ես սիրով ու տնավարի զրուցում եմ՝ բժշկական գիտությունների դոկտոր է: Շատ-շատ ներողություն, ընկեր Տոնյան, բայց մինչև չհարցնեմ, չեմ հանգստանա: Ուրեմն ի՞նչն է պատճառը, որ ձեզ նման գիտնականը մոռացվել, մնացել է այս փոքրիկ քաղաքում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Է, Զավեն ջան,- տխուր ժպտաց ծերունին: - Ո՞ւր էր թե մոռանային: Հարցն այն է, որ ինձ այս փոքրիկ քաղաքն էլ շատ համարեցին: Եվ մի անգամ էլ այստեղից տարան: Սա մի երկար ու դառը պատմություն է, որն ինձ Երևանի բժշկական ինստիտուտից մինչև Սիբիրի խորքերն է հասցրել ու ետ հասցրել տասներկու տարի հետո: Եվ դոկտորի կոչումն էլ վերադարձրել են այն ժամանակ, երբ ինձ այլևս պետք չէր: Ես երբեք չեմ օգտագործել այդ կոչումը և դարձյալ չէի օգտագործի, բայց հանկարծ մտածեցի, որ թերթին հարկավոր կլինի:

- Այն էլ ինչպես,- ուրախությունը չթաքցրեց Զավենը: - Երկու օր ժամանակ տվեք, կարդամ, հետո կհանդիպենք, ընկեր Տոնյան…

- Ընկեր Տոնյան-- փնչալով տեղից բարձրացավ ծերունին: - Ես ի՞նչ ընկեր եմ- Այնքան հաճելի էր, որ առաջ ասում էիր՝ հայրիկ…

Զավենը անասելի հուզվեց:

- Ուրեմն պայմանավորվեցինք՝ երկու օր:

- Մնաս բարով, տղաս,- հրաժեշտ տվեց ծերունին:

- Գնաք բարով, հայրիկ,- ասաց խմբագիրը:

* * *

Վարորդը շորի կտորը ձեռքին ավտոմեքենայի ապակիներն էր փայլեցնում:

- Տիգրա՞ն,- հարցրեց Զավենը,- պատրա՞ստ ես:

- Միշտ պատրաստ:

- Կարո՞ղ ենք Երևան գնալ:

- Հենց այս վայրկյանին:

- Բենզին ունե՞ս:

- Դա՞ ինչ խոսք է, Զավեն Աշոտիչ, այդ ե՞րբ չեմ ունեցել:

- Բա ինչո՞ւ բենզին չես գտնում ընկեր Գալստյանին Մոշուտ տանելու համար:

Տիգրանը տարուբերեց գլուխը ու ոչինչ չպատասխանելով, գործի գցեց մեքենան:

- Երևա՞ն:

- Պանսիոնատ:

- Մե՞ր,- հուսախաբված հարցրեց վարորդը:

- Եթե քաղկոմինը մերն ես համարում, ուրեմն մեր,- ժպտաց խմբագիրը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Իսկ Միհրանին վաղն անպայման Մոշուտ կտանես:

Վարորդը լուռ էր և ուշադիր ճանապարհին էր նայում:

- Լռությունը համարենք համաձայնության նշա՞ն:

- Եթե ստիպում եք, ուրեմն՝ ճար չունենալու նշան: Բայց հո ամեն ինչ կարգադրությունով չէ, Զավեն Աշոտիչ, այնպես կտանեմ-կբերեմ, որ նա կյանքում մեկ էլ ավտոմեքենայի անուն չտա: Իսկ հենց որ լսի՝ պտտվի գլուխը:

Խմբագիրը նույնիսկ չհասցրեց պատասխանել, որովհետև մեքենան կանգ առավ պանսիոնատի դարպասի մոտ:

- Դու ինձ մի սպասիր, չգիտեմ, թե երբ կավարտվի մեր խոսակցությունը:

- Ինչքան պետք է, կսպասեմ, բանուգո՞ծս ինչ է,- ասաց Տիգրանը:

- Չէ,- հրաժարվեց Զավենը: - Այստեղից ես ոտքով կվերադառնամ:

Նա փառահեղ խնամված պարտեզի միջով դեպի շենքը գնաց, բարձրացավ երկրորդ հարկ, մի պահ ականջ դրեց իրար դիպչող գնդակների չոր չխկոցին ու բիլիարդանոց մտավ: Մտավ ու կանգ առավ շփոթված: Գառնիկ Բադալյանը մենակ էր: Քարտուղարը մազաչափ իսկ չզարմացավ՝ տեսնելով խմբագրին ընդունեց այնպես, կարծես վաղուց սպասում էր նրան:

- Զավե՞ն,- ձայնեց նա,- խաղա՞նք:

- Ես խաղալ չգիտեմ,- ասաց Զավենը:

- Մինչև հիմա չսովորեցի՞ր:

- Չեմ ուզում սովորել, Գառնիկ Վարդանիչ: Գիտեմ, որ ով սկսում է, էլ չի կարողանում թողնել: Խաղում է ամբողջ կյանքում:

Բադալյանը քմծիծաղ տվեց:

- Փոխարենը սովորել ես առակներով կամ ինչպես ձերոնք են ասում փոխաբերական իմաստով խոսել:

Զավենը թափ տվեց ձեռքը:

- Է, Գառնիկ Վարդանիչ, ոչ միայն փոխաբերական իմաստով, այլև ընդհանրապես խոսելու տրամադրություն չունեմ: Եվ քանի որ շատ եմ հարգում ձեզ, ինձ թույլ եմ տալիս ուղղակի հարցնել, թե սա ի՞նչ պատմություն էր: Կամ եթե փոխաբերական իմաստով՝ ի՞նչ խաղ էր սա:

- Ինչը՞, Զավեն:

- Ձեզ չե՞ն ասել, թե ինչ կատարվեց բյուրոյում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ասել են:

- Եվ դուք հանգիստ ընդունե՞լ եք:

- Իսկ քեզ ո՞վ ասաց, թե հանգիստ եմ ընդունել,- հոնքերը կիտեց Բադալյանը:

- Մի՞թե ձեզ համար վիրավորական չէր, որ առանց ձեր գիտության նոր կետ են մտցնում օրակարգի մեջ և քննում խմբագրի անձնական հարցը:

- Ես նույն հարցը կարող եմ քեզ ուղղել,- ծնոտը հենելով ձողափայտը բռնած ձեռքին, հարցրեց քարտուղարը: - Քեզ համար վիրավորական չէ՞ր:

- Չափազանց վիրավորական էր: Այն էլ իմ աշխատողների ներկայությամբ: Բայց ես ի՞նչ կարող էի անել:

- Կարող էիր թողնել և հեռանալ բյուրոյից՝ նույն պատճառաբանությունները մեջտեղ բերելով կամ պարզապես առանց պատճառաբանության: Իսկ դու հանգիստ նստել ես ու համաձայնվել բոլոր մեղադրանքների հետ:

Զավենը շվարեց:

- Մտքովս էլ չէր անցնի, թե ես նման իրավունք ունեմ:

- Իհարկե, ունեիր,- գլխով արեց քարտուղարը,- ամեն մարդու իրավունքը իր ձեռքին է:

- Եվ հետո,- ավելի ու ավելի շփոթվելով կմկմաց Զավենը, - ինչպե՞ս կարող էի չհամաձայնվել այդ մեղադրանքների հետ, երբ դրանք ճիշտ էին: Գոնե ձևականորեն:

- Դու տեսնո՞ւմ ես: Ուրեմն ի՞նչն է այդքան վրդովել քեզ:

- Որ պատժվեցի, երբ այդ բոլոր հարցերում անմեղ եմ:

- Ապացուցեիր:

- Ինչպե՞ս, Գառնիկ Վարդանիչ, երբ նրանք չեն հավատում, թե հենց այնպես, մարդկայնորեն կարելի է կարեկցել որևէ մեկի: Եվ վերջապես երեք մեղադրանքից երկուսին դուք տեղյակ էիք, կրճատումները կատարել եմ ձեր գիտությամբ: Երբ Միհրան Գալստյանը զեկուցում էր այդ մասին, ինչո՞ւ ինձ պաշտպանության տակ չառաք: Ինչո՞ւ չասացիք, որ տեղյակ եք: Ինչո՞ւ չասացիք, որ երբ մարդ մնալու որևէ հնարավորություն կա, պետք է մարդ մնալ:

Գառնիկ Բադալյանը խոցվեց: Նրա պողպատագույն աչքերը փոքրացան, մգացան ու փայլեցին չարությամբ.

- Շարաֆյան,- նետեց նա ատամների արանքից: - Ես քեզ մի անգամ էլ եմ ասել, որ սովորություն չունեմ բացատրություններ տալու: Բայց հիմա խախտում եմ այդ սովորությունը: Ես այն ժամանակ չխոսեցի, որովհետև մտքովս չէր անցնի, թե Կենտկոմի առաջին քարտուղարը ինձ շտապ Երևան կկանչի: Դա մեկ: Մտքովս էլ չէր անցնի, թե քո

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հարցը բյուրոյի քննարկման առարկա կդառնար: Երկու: Չէի ենթադրի, թե դու խելոք- խելոք կհամաձայնվես Գրետայի առաջ քաշած փաստերի հետ և չես կարողանա պաշտպանել քեզ: Շարունակե՞մ…

- Ոչ,- բարկացավ խմբագիրը: - Մի շարունակեք: Արդեն երկրորդ անգամ դուք ինձ մեղադրում եք, թե ես չեմ կարողացել պաշտպանել ինձ: Եվ ստիպում եք ասել այնպիսի բաներ, որ իմ բնավորությանը հատուկ չեն: Ինչպե՞ս պաշտպանեի ինձ, Գառնիկ Վարդանիչ, հայտարարեի, թե դու՞ք եք կարգադրել հանել Օնիկի վերաբերյալ փաստը և ինձ թույլ տվել մեկ ուրիշ կրճատում ևս կատարելու: Ա՞յդ եք ուզում ասել:

Գառնիկ Բադալյանը ընդոստ բարձրացրեց գլուխը, պտտաձողը սեղանին նետեց ու սկսեց քայլել սենյակում: Հետո կանգ առավ բավականին հեռու, նայեց խմբագրին տարօրինակ տխուր աչքերով ու ասաց.

- Ինչքան մանրացանք:

Քայլեց, կանգ առավ նորից ու շարունակեց,

- Որքան ինձ հայտնի է, դու պատրաստվել ես ասել այդ մասին բյուրոյում, բայց Գագիկ Միսակյանը չի թողել:

Զավենը զգաց, որ մանրիկ ասեղներ են շարժվում ողջ մարմնում: Քունքերը տրոփեցին: Այ Գագիկ, համարձակ, պայծառ մարդ ես, ի՞նչ միտք ուներ մեր անձնական մտերմիկ զրույցի մասին զեկուցել քարտուղարին: Ինչի՞ համար: Մանավանդ որ գնում ես, հեռանում ես, ազատվում ես…

- Զավեն Շարաֆյան, հազար անգամ խոսքով դու քո նվիրվածությունն ու հավատարմությունն ես արտահայտել իմ գործի և անձի նկատմամբ: Իսկ ես այս տարիների ընթացքում քեզ ընդամենը միայն մի բան եմ խնդրել, որով դու կարող էիր հաստատել քո նվիրվածությունն ու հավատարմությունը- Գործով: Եվ ի՞նչ ստացվեց: Այս կարճ ժամանակամիջոցում դու երկու անգամ հիշեցրիր ինձ, որ կոպիտ ասած՝ լավություն ես արել և զարմանում ես, որ ես հանդես չեմ եկել հայտարարությամբ, չեմ խոստովանել աշխարհով մեկ, թե մեղավորը ես եմ: Եթե ես խոստովանեի՝ այլևս որտե՞ղ կմնար, ի՞նչ արժեք կունենար քո լավությունը, Զավեն Շարաֆյան: Դու երեսովս ես տալիս, թե ես քեզ հարվածի տակ եմ դրել և չեմ մտածել հարվածը քեզնից հեռացնելու, ինձ վրա վերցնելու մասին: Ինչո՞ւ ես ինձ ստիպում հաշվել հարվածները: Ես քեզ հասցեագրված հարվածները ինձ վրա եմ ընդունել սկսած դեռևս այն ժամանակներից, երբ դու ընդամենը բաժնի վարիչ էիր, իսկ ես ընդամենը բյուրոյի անդամ: Երբ քեզ հոշոտում էին բոլորը, պահանջում հարբեցողության և բանդիտների հետ ունեցած կասկածելի կապերի համար քեզ հեռացնել կուսակցությունից և աշխատանքից, մի՞թե ես չկանգնեցի քո կողքին: Եվ մի՞թե ես չհիմարացրեցի նրանց, ստիպելով իրենց համար անցանկալի ու ծիծաղելի որոշում ընդունել:

- Ես դա չեմ մոռացել ու չեմ մոռանա ամբողջ կյանքում,- չդիմացավ, հաստատեց Զավենը:

- Մեղավորը ես չեմ, դու ինձ ստիպեցիր հիշեցնել,- գլուխը վշտացած թափահարեց Բադալյանը: - Եվ մի՞թե ես չէի, որ հակառակ ողջ շրջապատի կարծիքի, բաժնի վարիչին

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

խմբագիր դարձրի: Նման որևէ ուրիշ փաստ կարո՞ղ ես մատնացույց անել: Եվ քանի որ իջանք, մանրացանք, իջնենք ամենահատակը: Այն դեպքում, երբ երկրորդ քարտուղարը ավտոմեքենա չուներ, երբ ավտոմեքենա չունեին կոմերիտմիության քաղկոմի քարտուղարը, քաղխորհրդի նախագահի տեղակալը և այլ պաշտոնատար անձինք, մի՞թե ես չէի, որ քեզ հատկացրեցի իմ ավտոմեքենան: Կարծում ես, քի՞չ խոսակցություններ եղան, ուղղակի և անուղղակի քի՞չ հարվածներ տեղացին ինձ վրա: Ինձ ասում՝ էին նրա ինչի՞ն է պետք ավտոմեքենան, երբ տպարանը նույն շենքում է, երբ խմբագրությունը քաղաքից դուրս որևէ գործ չունի: Իսկ ես հո գիտեի, որ ստեղծված պայմաններում, մայրիկի մահվան կապակցությամբ քեզ պետք կլինի հաճախ Երևան մեկնել…

Զավենը երկու ձեռքով բռնեց գլուխը: Ցավից տրաքվում էր: Ուղեղը շիկացած լիներ ասես մտքերի խառը վազքից: Ախր զարհուրելին այն է, որ ինչ ասում է Բաղալյանը՝ ճիշտ է ասում: Որ ինքը հիմա ճղճիմ, փոքրիկ մարդուկի տեսք ունի: Որ ինքն ընդհանրապես իրավունք չունի վիճելու, որովհետև յուրաքանչյուր վեճից պարտությամբ է դուրս գալիս: Սա՞ ինչ դժբախտություն է: Ահա Բաղալյանը խոսում է հիմա և ինքն ամբողջովին նրա տրամադրությանն է ենթարկվել, այնինչ բան ուներ ասելու, մի շատ կարևոր բան, բայց մոռացել է, թե ինչ:

- Գառնիկ Վարդանիչ,- հանկարծ միանգամից հիշեց նա և ընդհատեց քարտուղարին,- ես գիտեմ, որ իմ նկատմամբ ձեր կատարած բարի գործերի շարքը շատ երկար է: Հասկանում եմ: Բավական է: Բայց դուք էլ ինձ հասկացեք, քսանհինգ տարեկանում կուսակցական խիստ նկատողություն է գրանցվում իմ անձնական քարտում, որն ինձ հալածելու է մինչև կյանքիս վերջը:

- Ինչո՞ւ,- ուսերը թոթվեց Բաղալյանը,- վեց ամսից հետո կհանենք, եթե,իհարկե, մի նոր պատմության մեջ չխրվես:

- Այ դա է, որ ինձ հանում է հունից,- պոռթկաց Զավենը: - Եվ դուք սա համարում եք պատմություն, որի մեջ ե՞ս եմ խրվել: Իմ կամքո՞վ:

Քարտուղարը կրկին ձեռքն առավ բիլիարդի ձողը.

- Դե լավ, այդ մասը հանեցինք, ընկեր Շարաֆյան: Ասենք թե դա վերցրեցի ինձ վրա: Ի՞նչ ես կարծում, միայն այն փաստը, որ դու ահազանգն անտեսելով հրաժարվել ես ֆելիետոն գրել գողացած շինանյութով ապօրինի տուն կառուցող Պարույր Պետրոսյանի մասին և դրանով իսկ պաշտպանության տակ առնել հանցագործին, հենց թեկուզ միայն այդ փաստը բավական չէ՞ր, որպեսզի քաղկոմն իրավունք ունենար քեզ հեռացնելու թե կուսակցությունից, թե աշխատանքից:

- Ես բյուրոյում ասացի, թե ինչն է եղել պատճառը…

- Քո պատճառաբանությունները չեն հարգվել:

- Ես այդ մասին տեղյակ էի պահել թերթի խմբագիր Մկրտիչ Զուլոյանին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Իսկ ո՞վ է Մկրտիչ Զուլոյանը: Եթե այն ժամանակ հայտնի դառնար քո արարքը և այդ հարցը քննության դրվեր, խստորեն կպատժվեր նաև թերթի խմբագիրը: Ինչպես դու ես հիմա պատժվում:

Զավեն Շարաֆյանը տնքաց:

- Գառնիկ Վարդանիչ, բայց դուք հո գիտեք, համոզված եք, որ ես ընդունակ չեմ անազնվության: Որ ինչ արել եմ, միայն խղճի թելադրանքով եմ արել: Այ, հենց դա է, որ խելագարեցնում է ինձ: Որ ինչ-որ հաշիվներից ելնելով, Գրետա Սուրենյանը և նրա մանկլավիկները ստորաբար կուսակցական խիստ նկատողություն են հայտարարել ինձ: Իսկ դուք լսել և ընդունել եք հանգիստ:

Գառնիկ Բադալյանը գրեթե առանց նշան բռնելու ձողով խփեց գնդակներից մեկին, որն առանց ուրիշ գնդակի դիպչելու ուղիղ անցքի մեջ գլորվեց:

- Երբ առաջին անգամ հարցրեցիր, թե ինչպես է, որ հանգիստ եմ ընդունել այդ լուրը, ես քեզ ի պատասխան հարցրեցի, թե՝ իսկ ո՞վ է ասել, որ հանգիստ եմ ընդունել: Ճիշտ է:

- Ճիշտ է, բայց…

- Դե ուրեմն առանց որևէ բան հաստատ իմանալու մի խոսիր, Զավեն Շարաֆյան: Որովհետև թեև ես քեզ հաշվետու չեմ, բայց եղել է և անհանգստություն, և վեճ, և նոր բյուրո, որը բավարարվել է քեզ ընդամենը նկատողություն հայտարարելով:

Զավենն ապշած էր:

- Գառնիկ Վարդանիչ…

- Իսկ ավելին հնարավոր չէր անել, որովհետև դրանից առաջ ես աշխատանքից հեռացնելու և կուսակցական խիստ պատիժ տալու որոշում էի կայացրել Ասքանազ Պեպանյանի և Ռոբերտ Մասիսյանի նկատմամբ: Իսկ թե ովքեր են նրանք Գրետա Սուրենյանի համար, հուսով եմ, որ գոնե այդքանը հայտնի է քեզ: Հուսահատ կատաղության մեջ, օգտվելով իմ բացակայությունից, նա որոշել է վրեժ լուծել ինձնից, հարվածն ուղղելով քեզ: Ահա նրա պարզունակ գործողության ողջ իմաստը: Գրետա Սուրենյանը իր պատիժը կստանա, հիշիր այս օրը, բայց դրա համար դարձյալ մի փոքր ժամանակ է ինձ պետք: Ինչ վերաբերում է քո նկատողությանը, ապա իրոք վեց ամիս հետո կհանենք այն: Այսքան բան, Զավեն Շարաֆյան: Այսքան մի, բան…

Դրսից ավտոմեքենայի արգելակների սուր ճռինչ լսվեց: Գառնիկ Բադալյանը շրջվեց, բակ նայեց լուսամուտից, հետո խմբագրին դարձավ հիասթափված ու տխուր, հոգնած մի շարժումով ձողափայտը կրկին սեղանին նետեց և ժամանակ չտալով, որ Զավենը խոսի, ասաց.

- Իսկ հիմա գնա: Ոչ մի խոսք: Ես խոսքերից կուշտ եմ: Ու շատ եմ հոգնած: Գնա և մտածիր, Զավեն, գնա- Ես չեմ ուզում, որ իմ որոշ ընկերներ լսեն, թե ես ինչ երկար և ինչ համբերատարությամբ եմ խոսում քեզ հետ: Դա նրանց շատ տարօրինակ կթվա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Թիկունքում ոտնաձայներ լսելով, Զավենը ետ նայեց ու ընդհանուր բարևելով ներս մտնող մարդկանց, որոնցից ոմանք տեղացիներ և հայեր չթվացին նրան, մարմարե աստիճաններով ցած իջավ շտապ, ասես փախչելով ու քիչ հետո հայտնվեց բակում: Կանգ առավ, խոր շունչ քաշեց, ապա շրջվեց ու մի հայացք նետեց «Տիզբոնի ֆիլհալին», որի բիլիարդանոցը վառ լուսավորված էր և դանդաղ-դանդաղ քայլեց իրիկնային մթնշաղի մեջ գույները կորցրած ծաղկանոցի միջով:

Մկրտիչ Զուլոյանը քաղկոմի շենքը Տիզբոն էր անվանում և երբ քաղկոմ էին կանչում, ասում էր գնում եմ Տիզբոն: Նրանից այս սրամտությունը ժառանգություն ստանալով, Զավենն էլ իր հերթին քաղկոմի պանսիոնատը կնքեց «Տիզբոնի ֆիլհալ» անունով:

Տիզբոն չէ, ինչ է, դառնացած մտածում էր Զավենը: Կանչում են միայն պատմելու կամ հնազանդեցնելու համար, երբ քո որևէ քայլը հանկարծ դուր չի գալիս նրանց: Երբեմն էլ, ինչպես այսօր, գնում ես կռվելու, քո շահերն ու իրավունքները պաշտպանելու համար, բայց հենց ներս ես մտնում, հողը փախչում է ոտքիդ տակից, ու վճռականությունդ լքում է քեզ: Ինչ տարօրինակ բան է, և Մկրտիչ Զուլոյանը ինչպես է զգացել ու հասկացել դա, որ որտեղից որտեղ զուգահեռ է անցկացրել տարաբախտ Արշակ թագավորի և իր ու իր նմանների միջև:

Գառնիկ Բադալյանն ասաց գնա ու մտածիր: Եվ Զավեն Շարաֆյանը մտածում էր: Հիմա, արդեն դրսում, իր հարազատ հողի վրա, նա բոլորովին այլ կերպ էր վերլուծում իր զրույցը քաղկոմի առաջին քարտուղարի հետ և ընկալում ու հասկանում նրա պատասխանները: Չէ, այստեղ ինչ-որ գաղտնիք կա: Ինչ-որ բան է կատարվել, որից ինքը տեղեկություն չունի: Գառնիկ Բադալյանն ասաց՝ ավելին անել հնարավոր չէր, որովհետև դրանից առաջ ես աշխատանքից հեռացրել էի Ասքանազ Պեպանյանին և

Ռոբերտ Մասիսյանին: Ի՞նչ կապ ունի իր հարցը նրանց հետ: Ինչպե՞ս թե Գրետա Սուրենյանը քաղկոմի առաջին քարտուղարից վրեժ է լուծել ինձ պատմելով: Ի՞նչ է, մենք քարե՞ր ենք, իսկ նրանք մեզ այստեղ ու այնտեղ հրելով շախմա՞տ են խաղում: Եվ այդ խաղի մեջ, եթե ուզենան, երբ իրենց պետք լինի, հանգիստ կարող են զոհե՞լ մեզ: Չէ , հաստատ այս պատմության մեջ գաղտնիք կա: Երբ Միհրան Գալստյանը զեկուցում էր խմբագրի մեղքերի մասին, Գառնիկ Բադալյանի համար ավելի հեշտ չէ՞ր տեղնուտեղը հայտարարել, թե ինքը տեղյակ է այդ կրճատումներին, քան թե սպասել, որ ինձ խիստ նկատողություն հայտարարեն և նոր միայն այդ խիստ նկատողությունը դարձներ նկատողություն: Ահա, ահա, կարծես թե ինչ-որ տեղ լույս է բացվում: Չէ՞ որ նույն ձևով վարվեց նաև Պեպանյանի և Մասիսյանի հետ: Սպասեց, մինչև որ առաջարկեցին նրանց հանել կուսակցությունից և աշխատանքից ու նոր միայն ինքը հանդես եկավ իբրև բարերար՝ մեծահոգությամբ առաջարկելով բավարարվել խիստ նկատողությամբ: Ուրեմն դա մեթոդ է, նրա ընդհանուր քաղաքականությունը: Էժանագին ֆարս, հրում, գետն է նետում մարդկանց, իսկ հետո գլխի մազերից բռնած, քաշքշելով դուրս է բերում ջրից: Թե գնա ապրի ու հիշի ինձ: Եվ երախտագիտությամբ համբուրի ձեռքս, ինչպես Պեպանյանն ու Մասիսյանը արեցին և ինչպես քիչ էր մնում ինքը՝ Զավեն Շարաֆյանն աներ, եթե հանկարծ չհայտնվեին այն մարդիկ, որոնք հաստատ տեղացի չէին և կարծես հայ էլ չէին:

Զավեն Շարաֆյանը հառաչեց ու քայլեց մթնած փողոցով դեպի տուն, ակամա կատարելով Գառնիկ Բադալյանի հրահանգը՝ շարունակելով մտածել, որից գլուխը տրաքում էր ու խառնում էր սիրտը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

* * *

Տարօրինակ կառուցվածք ունի մարդը: Մի ամբողջ շաբաթ անքնությունից դժգոհ փնթփնթում ու երազում է, թե երբ պետք է գա կիրակին, որպեսզի մի կուշտ քնի: Իսկ կիրակի օրը առանց զարթուցիչի վեր է թռչում սովորականից էլ շուտ ու չի իմանում պարապությունից ինչ անել:

Շատ շուտ արթնացավ նաև Զավենը, նայեց ժամացույցին, ընդամենը ժամը յոթն էր, շրջվեց մյուս կողքի, որպեսզի շարունակի քունը, բայց անմիջապես էլ զգաց, որ դա իրեն չի հաջողվի, վեր կացավ, սափրվեց դանդաղ, նույն դանդաղությամբ էլ սուրճ պատրաստեց, խմեց մանրիկ կումերով, հետն էլ աչքի անցկացնելով նախորդ օրվա թերթերը, նայեց ժամացույցին՝ ժամը ութն էր: Բարկացավ նորից ու մտավ լողասենյակ, ցրտից կափկափելով կանգնեց սառը ջրի ցնցուղի տակ, բայց ոչ թե մարմինը կոփելու մտադրությամբ, այլ որովհետև տաք ջուր դեռ չկար և նախատեսված էլ չէր առաջիկա հնգամյակում: Ամուր շփելով կոշտ սրբիչով կարմրացրեց, չորացրեց մարմինը,

հագնվեց, նայեց ժամացույցին՝ ութն անց էր քսանհինգ րոպե: Հայհոյելով կրիայի նման դանդաղ շարժվող ժամանակը, նա նստեց գրասեղանի մոտ, թուղթ ու գրիչ վերցրեց և պատրաստվեց նամակ գրել Մկրտիչ Զուլոյանին: Սկզբում որոշեց նրան պատմել այն ամենի մասին, ինչ կատարվում է քաղաքում և հատկապես իր գլխին եկած փորձանքների մասին, բայց անմիջապես էլ պատռեց գրածը ու ետ կանգնեց այդ մտադրությունից: Ի՞նչ կարիք կա լաց լինելու, Մկրտիչը հեռու-հեռվից արցունքները չի սրբելու: Միայն տխրել կարող է: Իսկ նա՞ ինչու տխրի: Ինչպես վերջին նամակից երևում է, այն հանրաճանաչ ու բթամիտ Կարայանի խմբագիր դառնալուց հետո, Մկրտիչի կյանքն էլ մի կյանք չի,

Ճիշտ է, երբ ասում են, թե գրողները ուրախ բաները տխուր ժամանակ են գրում, իսկ տխուր բաներ՝ ուրախ: Հակառակ իր տրամադրությանը, Զավենը թեթև ու պայծառ նամակ գրեց, անհոգ հումորով նկարագրելով քաղաքի կյանքը, կատարված փոփոխությունները ղեկավարության մեջ, կաշվե սև բաճկոնների և կարմիր փողկապների մայիսմեկյան շքերթը բանվորական շորեր հագած Լենինի արձանի մոտ, «Գիտելիք» ընկերության պատասխանատու քարտուղար Նիկողայոս Սևյանի հետ կատարված զավեշտական դեպքը: Երբ հերթական զեկուցումն է կարդացել տրիկոտաժի ֆաբրիկայում «Սերը և ընտանիքը» թեմայով, բանվորուհիներից մեկը բարձրաձայն հարցրել է, թե ընկեր Սևյան, երբ պրոպագանդայի բաժնի վարիչ աշխատած ժամանակ քաղկոմից կուսակցական նկատողություն եք ստացել և ձեզ հանել են աշխատանքից՝ սե՞րն է եղել պատճառը, թե ընտանիքը: Նաև Կայծակ Չոփուրյանի մասին պատմեց, որը խելագարված անգործությունից, շատ խորամանկորեն հիմա էլ

սկսել է ինքն իր մասին անստորագիր նամակներ գրել՝ զարհուրելի հանցանքների մեջ մեղադրելով ոմն Կայծակ Չոփուրյանի, որը տեխնիկումի դիրեկտոր աշխատած ժամանակ առասպելական գումարներ է յուրացրել, ինտիմ կապերով կապված է եղել ուսմասվար Դշխոյանի հետ, դանակահարել է իր հարևան, պետապի լիազոր Լիլոյանին և անցյալ տարվա օգոստոսին հրդեհել է քաղաքի ոսկերչական միակ խանութը: Բնականաբար, հանձնաժողովներ են ստեղծում, մանրամասնորեն ուսումնասիրում անստորագիր նամակներում առաջ քաշված մեղադրանքները,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հարցաքննում Կայծակ Չոփուրյանին, իսկ վերջում ստիպված արձանագրում, որ բերված փաստերը չեն համապատասխանում իրականությանը: Եվ Կայծակ Չոփուրյանը արձանագրության պատճենը ձեռքին քաղկոմ ու քաղսովետ է գնում ու հոխորտում, թե տեսեք ինչ ազնիվ ու անբասիր մարդ եմ ես, ահա փաստաթուղթը, ինչ ասում են իմ մասին՝ զրպարտություն է: Իսկ քանի որ զրպարտություն է և ես մաքուր մարդ եմ, ինձ մի կարգին ղեկավար աշխատանք տվեք: Բայց երբ ճակատագիրը մի անգամ փակում է դուռդ, այլևս փրկություն չունես Կայծակ Չոփուրյանը որտեղի՞ց իմանար, որ քաղաքում գտնվող բոլոր գրամեքենաները միլիցիայում հաշվառման մեջ են: Ահա հենց դրա շնորհիվ էլ ի վերջո դատախազությունը պարզում է, որ Կայծակ Չոփուրյանի մասին այդ անստորագիր նամակները մեքենագրված են նույն իր՝ Կայծակ Չոփուրյանի գրամեքենայի վրա- Եվ ձախորդ ինքնախարազանողը ղեկավար պաշտոնի փոխարեն արժանանում է կուսակցական խիստ նկատողության և ֆելիետոնի:

Զավեն Շարաֆյանը նայեց ժամացույցին՝ տասներկուսն էր: Նա թեթևացած շունչ քաշեց, ծրարի մեջ դրեց նամակը, տնից դուրս գալով ծրարը նետեց շենքի պատին փակցված փոստարկղի անցքից ու քայլեց ուղիղ դեպի Խաղաղության ծառուղին:

Երթուղին, իհարկե, պատահականորեն չէր ընտրված: Դեռ երեկ Մուշեղ Օթարյանից ստանալով Խաղաղության ծառուղու համալիրի դիրեկտոր Մեսրոպ Օհանյանին ուղղված «Բաց նամակը», Զավենը վճռեց մի անգամ էլ ստուգել հոդվածում նկարագրված փաստերը: Իհարկե, նա ոչ մի հիմք չուներ Մուշեղին չհավատալու, բայց ուզում էր իր աչքով տեսնել ամեն ինչ: Երբ տեսնում ես՝ հանգիստ է լինում սիրտդ:

Դեռ բավականին հեռվից երևում էր տեսահորիզոնային անիվը՝ կախված ու ճոճվող զամբյուղներով: Իսկ երբ քիչ մոտեցավ, նրա ականջին հասան կարուսելների վրա ձիեր, առյուծներ ու փղեր հեծած երեխաների ցնծագին ճիչ-աղաղակները, ջրային նավակների ճռինչը, ճոճանակների չխկչխկոցը- ճիշտ էր գրել Մուշեղը՝ այդ սարքերի մոտ երեխաներից փող հավաքելով զբաղված երիտասարդները պետք է, որ առնվազն սպորտի վարպետներ լինեին: Նրանք հաղթահասակ էին, բացօթյա աշխատանքից արևառ դեմքերով ու ասես հենց նոր էին իջել ամերիկյան կովբոյական կինոնկարներից: Ովքե՞ր են սրանք, մինչ այդ որտե՞ղ էին աշխատում, ո՞վ է նրանց այստեղ հավաքել ու նշանակել մի այնպիսի գործի, որը տարեց կինն էլ կարող է անել:

Նա մոտեցավ տեսահորիզոնային անիվին, որպեսզի համոզվի, թե իր ո՞ք տոմս չեն վաճառում, երբ ինչ-որ տեղից իր անունը լսեց: Նայեց շուրջը, ծանոթ դեմք չկար, ու նա հասկացավ, որ ձայնը վերևից է գալիս: Նա բարձրացրեց գլուխը և անմիջապես էլ նկատեց, որ ցած իջնող զամբյուղներից մեկում նստած են Պարույրը, Աշոտը, Հասմիկը և Եսթերը՝ փոքրիկին գրկած:

- Մի հատ էլ պիտի պտտվենք,- հուսահատ ձայնեց Պարույրը,երբ զամբյուղը գրեթե գետնին էր հասել: - Հեռու մի գնա, հա՞, ասելու բան ունեմ:

Զավենը մոտեցավ անիվի մոտ հերթը հսկող երիտասարդին:

- Տոմս որտեղի՞ց վերցնեմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Տոմսն ի՞նչ ես անում, փողը տուր, նստիր:

- Ինչո՞ւ, առանց տոմսի՞ է, ինչ է,- բարկացավ խմբագիրը:

Երիտասարդը վտանգ զգաց:

- Ինչի՞ է առանց տոմսի, ըհը,- ասաց նա՝ ծոցագրպանից շտապ տոմսի մի մեծ ու կլոր փաթեթ հանելով: - Բայց ոչ մեկը տոմս չի ուզում, ի՞նչ անեմ, ցավդ տանեմ:

- Ինչո՞ւ չեն ուզում:

- Ես ի՞նչ իմանամ: Ես էլ ստիպված օրվա վերջում էս ամբողջ կապը վառում եմ:

- Եվ բոլորն էլ քեզ նման վառո՞ւմ են,- հեգնեց խմբագիրը:

- Բա ի՞նչ են անում, ցավդ տանեմ: Տոմսերը մեր ինչի՞ն են պետք, եթե ուզող չկա: Պահենք, որ մե՞նք վառվենք,- իր բառախաղից գոհ, շողոքորթ ժպտաց տղան:

- Զավե՞ն,- նրանց մոտեցավ Պարույրը: - Ի՞նչ է պատահել:

- Ոչինչ, զրուցում ենք,- ժպտաց խմբագիրը: - Երեխաներն ի՞նչ եղան:

- Չկարողացա անիվից պոկել, մի անգամ էլ են պտտվում,- ծիծաղեց Պարույրն ու թևանցուկ անելով, Զավենին մի կողմ տարավ: - Կհավատա՞ս, այնքան անհարմար եմ զգում, որ իմ պատճառով նկատողություն են հայտարարել քեզ- Քանի անգամ ուզեցի զանգահարել, երեսս չբռնեց: Դրանք ո՞նց չեն ամաչում, որ երկու տարի հետո…

- Իսկ քեզ ո՞վ է հասցրել,- զարմացավ խմբագիրը:

- Մեր կոմբինատի դիրեկտոր Լենդրոշ Ջանյանը,- արհամարհանքով փնթփնթաց Պարույր Պետրոսյանը: - Սիրտս շատ ցավաց քեզ համար, ախպեր ջան: Բայց ի՞նչ կարող եմ անել: Ասա, ես ի՞նչ կարող եմ անել քեզ համար:

Զավենը թափ տվեց ձեռքը:

- Հա, Զավեն ջան, ախր ես քեզ ասելու բան ունեմ,- ընկերոջ թեը բռնեց Պարույրը: - Բայց հիմա գլուխդ այնքան խառն է, որ չգիտեմ՝ միտք ունի ասելը:

- Միտք ունի, և ես էլ լսում եմ խառը գլխով,- ժպտաց խմբագիրը:

- Հասկանո՞ւմ ես, քո հանձնարարությամբ ես և Արմեն Ջատիկյանը բավականին խորացանք քիմկոմբինատի ստեղծման պատմության մեջ:

- Պատմությո՞ւնն ինչու էիք ուսումնասիրում, Պարույր,- զարմացավ լրագրողը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Եղա՞վ,- իր հերթին զարմացավ քիմիագործը: - Բա եթե ուզում ենք պայքարել կոմբինատից դուրս եկող թունավոր նյութերի դեմ, չպե՞տք է իմանանք, թե ինչ թունավոր նյութեր են դրանք և ինչի հետևանքով են առաջանում:

Զավեն Շարաֆյանը շփոթվեց:

- Դե ես դրանցից ի՞նչ եմ հասկանում, եղբայր:

- Պիտի հասկանաս,- ամենայն լրջությամբ պնդեց քիմիագործը: - Պարտավոր ես հասկանալ, թե չէ կորած ենք:

- Իսկ ի՞նչ պարտադիր է, որ ես հասկանամ:

- Պարտադիր է,- մռայլվեց Պարույրը,- որովհետև մինչև չիմանաս՝ չես սարսափի: Իսկ մինչև չսարսափես, չես համարձակվի անել այն, ինչ պետք է անես:

Զավենը ծիծաղեց.

- Ինչպես իմ բարեկամ Գառնիկ Բաղալյանն ինձ մեղադրեց, սկսել ես այլաբանորեն և ռեբուսներով խոսել, Պարույր: Ավելի պարզ ասել հնարավոր չէ՞:

Պարույր Պետրոսյանը կնճռոտեց ճակատը:

- Հիմա ի՞նչ ես անում, Զավեն: Որպեսզի նույն բանը երկու անգամ չլսես, եթե ազատ ես, գնանք Արմենի արհեստանոց: Նա ինձ է սպասում:

- Ես ազատ եմ: Իսկ դու, դու- երեխաներին ի՞նչ ես անելու:

Պարույրը ծիծաղեց երջանիկ.

- Եսթերի ապագան մանկապարտեզի դաստիարակչուհի լինելն է: Ես միայն խանգարում եմ նրան:

Նա կնոջը հասավ հենց այն պահին, երբ Եսթերը երեխաներին կարուսել էր նստեցնում, օգնեց, որպեսզի հարմար տեղավորվեն փոքրիկները և վազքով հետ դարձավ:

- Գնացինք, ապրի արևդ և կեցցե ազատությունը:

- Խեղճ աղջիկը մենակ գլուխ կհանի՞,- անհանգստացավ Զավենը:

- Եսթերը՞,- գրեթե վիրավորված հարցրեց Պարույրը, և նրանք ծիծաղելով դեպի զբոսայգու ելքը քայլեցին:

- Բայց մինչև Արմենի մոտ գնալը խմբագրություն պետք է մտնենք,- ասաց Զավենը:

- Խմբագրությո՞ւն, կիրակի օրով ի՞նչ կա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դեղատան վարիչը մի հոդված է գրել հենց ձեր քիմկոմբինատի թափոնների բերած վնասների մասին: Դեռ չեմ կարդացել: Գնանք վերցնենք ու միասին կարդանք: Ճիշտ չի՞ լինի:

- Երևի թե շատ օգտակար լինի:

- Իսկ դու գիտեի՞ր, որ նա բժշկական գիտությունների դոկտոր է:

- Ով,- զարմացավ քիմիագործը:

- Դեղատան ծերունին՝ այսինքն ընկեր Գասպար Տոնյանը: Թեև, ինչպես երևում է, ժամանակին այնքան են քննել հարցը, որ ընկեր բառը լսելիս ցնցվում է: Ասաց, որ շատ ծանր կենսագրություն ունի:

- Անհավատալի բան ես ասում, Զավեն,- կանգ առավ Պարույրը: - Այդ հասարակ ծերուկը՝ դոկտո՞ր…

Զավենը քմծիծաղ տվեց.

- Մի անգամ էլ համոզվիր, որ անհավատալին միշտ այն է, ինչը մենք դեռ չգիտենք,- ասաց նա:

* * *

Արմեն Զատիկյանը փնթփնթալու իրավունք չուներ: Գառնիկ Բաղալյանը հոյակապ արհեստանոց էր ապահովել նրա համար: Այստեղ ու այնտեղ ծակող, տաշող, հղկող զանազան մեքենաներ էին կանգնած: Առաստաղին փոքրիկ մի կամրջակ կար մետաղյա սալերն ու ձողերը տեղափոխելու համար:

Անկյունում, խառատային հսկա դազգահի վրա բազմապիսի մամլիչներ, խարտոցներ, անկյունաչափեր, բարակաշուրթ ու տափակաշուրթ աքցաններ կային խնամքով դասավորված: Ամեն ինչ մաքուր էր ու հաճելի այդ արհեստանոցում, աշխատանքի տրամադրող:

Արմեն Զատիկյանը ինչ-որ մետաղամաս էր խարտում փոքրիկ մամլիչի վրա: Ընկերներին տեսնելով, նա ուրախ ճիչ արձակեց:

- Պարույր, այս ո՞ւմ ես բերել: Իր կամքո՞վ եկավ, թե բերման ենթարկեցիր: Թե՞ Մուհամեդի սկզբունքով եք եկել, ընկեր Շարաֆյան, եթե սարը չի գնում Մուհամեդի մոտ, Մուհամեդն է գնում սարի մոտ:

- Սարն էլ դու ես, հա՞,- ժպտաց Զավենը: - Դու ավելի շատ ամպ ես հիշեցնում, որն ինձ մոտ է գալիս, երբ անձրևելու կարիք ունի: Հենց որ չես երևում՝ ես հանգիստ եմ, գիտեմ, որ ամեն ինչ լավ է…

Արմենը չնեղացավ:

- Աղբարի ճակատագիր է,- ծիծաղեց նա: - Բայց խոստովանիր, որ ամպի հեղինակն էլ դուք եք: Ծեծում եք ու բարկանում, որ լաց ենք լինում: Հա , աղբար ասացի ու հիշեցի. մի փառահեղ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

անեկդոտ եմ լսել: Ուրեմն՝ Կարապետ աղբարը ՕՎԻՐ է գնում ու ասում, «Երթալ կուզեմ: Կխնդրվեմ, որ ինձ Ֆրանսիա ուղարկեք»: ՕՎԻՐ-ի պետը բացատրում է. «Ընկեր Կարապետ,- ասում է,- մենք ձեզ ինչպե՞ս Ֆրանսիա ուղարկենք, դուք այնտեղ հարազատներ չունեք»: «Է, Սիբիրյո մեջ ունեի , որ ղրկեցիք», զարմանում է Կարապետը: Ո՞նց էր, չէ, ասեք, ո՞նց էր…

Զավենը չկարողացավ զսպել իրեն.

- Լավ էր,- քրքջաց նա:

Իսկ Պարույրը միայն քմծիծաղ տվեց:

- Կախվածի տանը պարանի մասին խոսելը առնվազն աննրբանկատություն է, ընկեր Զատիկյան,- ասաց նա: - Որովհետև այն հարցը, որով մենք ենք զբաղվում երկու վախճան ունի և երկուսն էլ ավարտվելու են Սիբիրով: Կամ մենք պետք է նրանց ուղարկենք, կամ էլ մեզ են ուղարկելու, ինչպես դու ես ասում՝ երկիր Սիբիրյո, առանց հարազատների մասին տեղեկանք հարցնելու:

- Մի՞թե այդքան լուրջ է վիճակը,- անհանգստացավ Զավենը:

Արմեն Զատիկյանը լայն դարակից ինչ-որ գալարաձև փաթեթներ հանեց, բացեց ու փռեց սեղանին, անկյուններում երկաթի կտորներ դնելով:

- Գծագրերի լեզուն հասկանո՞ւմ եք, ընկեր խմբագիր:

- Բացարձակապես ոչինչ,- խոստովանեց Զավենը,- մարդկային լեզվով որ բացատրեք, կաշխատեմ հասկանալ:

Արմեն Զատիկյանը ձեռքերը թիկունքին դրեց ու սկսեց դազգահի կողքով ետ ու առաջ քայլել:

- Սկսիր, եղբայր:

- Դու սկսիր,- խնդրեց քիմիագործը:

Արմեն Զատիկյանը թափահարեց գլուխը:

- Փորձանքի մեջ զցեցիր մեզ, եղբայր,- ասաց նա խմբագրին: - Ուրեմն տես ինչ է կատարվել: Երբ կառուցվել է գործարանը, նախագծի մեջ պարզ նշվել է, որ առաջին հերթին տեխնոլոգիական գծեր են պետք՝ արտադրության ընթացքի մեջ մտնող քիմիական նյութերը տարրալուծելու համար: Ի՞նչ նպատակով: Որպեսզի հնարավոր լինի անջատել խիստ թունավոր միացությունները և կամ չեզոքացնել դրանք, կամ էլ օգտագործել այնպիսի նյութերի արտադրության մեջ, որտեղ թունավոր այդ միացությունները իրենց սպառելու են մինչև վերջ, անմնացորդ: Պա՞րզ եմ բացատրում…

- Պարզ է,- մտախոհ մրմնջաց խմբագիրը,- կարծես թե հասկանում եմ:

- Իսկ հիմա կոմբինատում տեխնոլոգիական այդ գծերը չկան: Չեն կառուցվել,- ասաց Պարույրը: - Ես այդ ժամանակ գործարանում չեմ աշխատել ու չգիտեմ ինչն է պատճառը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բայց ինժեներների, տարեց բանվորների հետ խոսելիս հասկացա, որ կոմբինատը անհրաժեշտ միջոցներ չի ունեցել: Կոմբինատից պահանջել են շտապ արտադրանք տալ և նույնիսկ նախօրոք պլանավորել են այդ արտադրանքը: Ոչ միայն դա: Դեռ չեղած արտադրանքի հիման վրա պլանավորել են նաև այլ հարակից

գործարանների արտադրանքը: Հասկանո՞ւմ ես: Ու կոմբինատը կանգնեցրել փաստի առաջ:

- Ո՞վ,- հարցրեց Զավենը:

- Պարզ չէ՞, թե ով,- կանգ առավ Արմենը: - նախ՝ կոմբինատի ղեկավարությունը, որը ցանկացել է ժամ առաջ զեկուցել իր աշխատանքային հաջողությունների մասին և ապա Քիմիական արդյունաբերության մինիստրությունը ճիշտ նույն նկատառումներով, վերադասների մոտ աչքի ընկնելու և նույն աչքին թոզ փչելու համար:

- Իսկ ի՞նչ կարելի էր անել:

- Ասել ճշմարտությունը,- բղավեց Պարույրը: - Ասել, որ նախ պետք է կառուցել տարրալուծող տեխնոլոգիական գծերը և հետո միայն մտածել արտադրանքը պլանավորելու մասին:

- Բայց եթե միջոցներ չեն եղել…

- Թող պահանջեին, թող հարայ-հրոց գցեին- Վերջապես ո՞նց կարող էին նախագծել այդ արտադրամասը և միջոցներ չհատկացնեին: Ուրեմն, ինչպես ժողովուրդն է ասում, խակ-խակ են կերել դրան հատկացված գումարները կամ էլ ժամկետներից խեղդված ծախսել են, որպեսզի առավել շատ արտադրանք տան հանուն փառքի, շքանշանների և պարգևատրությունների:

- Իսկ շքանշաններ իսկապե՞ս եղել են:

- Նույնիսկ պահակներն են մեդալներ ստացել, իսկ Գառնիկ Բադալյանը երեսուն տարեկան հասակում արժանացել է Լենինի շքանշանի:

- Մի՞թե այն ժամանակ դիրեկտորը նա էր:

- Նա է կառուցել թույն արտադրող այս գործարանը,- հեգնախառն ժպտաց Պարույրը: - Նա, մեր քաղաքի բարերար Գառնիկ Բադալյանը:

Զավենը վատ զգաց.

- Դե, հո դիտավորյալ չի արել, մարդը հո ժողովրդի թշնամին չէ: Ի վերջո ինքն էլ, իր ընտանիքն էլ նույն այս քաղաքում են ապրում:

- Երևի մտածել է, թե ոչինչ, տանք այդ չարաբաստիկ արտադրանքը, ազատենք մեր հոգին, իսկ հետո կկառուցենք տարրալուծող կայանքը: - Հաշտվողաբար, Զավենի վիճակի մեջ մտնելով ասաց Արմեն Զատիկյանը: - Եվ ինչպես մեզ մոտ սովորաբար լինում է՝ այլևս ոչ ժամանակ, ոչ միջոցներ չի ունեցել այդ հարցին վերադառնալու համար: Երբ մի տեղ պլան կա և հասնողն աչքի ընկնելու համար, աշխատում է պլանից դուրս, ժամկետից շուտ, այս ու այն

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

պլենումին ընդառաջ, ոգևորված այս ու այն կոչով, չգիտես որտեղից և ինչ միջոցներով ավելի ու ավելի շատ արտադրանք տալ, այլևս ո՞վ է անցյալ պարտքերի մասին մտածողը: Հուպ տուր, շուտ տուր, շատ տուր՝ սա չէ՞ մեր նշանաբանը: Իսկ թե ինչ ես տալիս՝ դա կարևոր չէ- Իսկ որ կոյուղու գծերից և ծխնելույզներից թույն է հոսում և ապականում այս դրախտը, ոչ ոքի չի հետաքրքրում- Խմբագիրը հառաչեց.

- Չգիտեմ, ձեր խոսքերից թե սովից գլուխս պտտվում է: Ուտելու բան չունե՞ս, Արմեն:

- Հաց ու պանիր,- ամաչելով ծիծաղեց Արմենը ու հետն էլ փնթփնթաց,- կոմունիզմ ենք կառուցում…

Նա հենց այն դարակից, որտեղից գծագրերը հանեց, դուրս բերեց մի փաթեթ, բացեց ու դրեց գծագրի վրա:

- Խնդրեմ…

Թերթի մեջ իսկապես լավաշ էր միայն ու պանիր:

Մեքենայիդ հոնորարը ստացար ու էլի հաց ու պանի՞ր ես ուտում,- քրթմնջաց Զավենը:

Արմեն Զատիկյանը փոթկաց.

- Տո եղբայր, թողեցի՞ն, որ ստանամ, հենց պարգևատրությունների ցուցակը ստորագրելու ժամանակ գլխներիս կանգնեցին, թե որոշել ենք քո և մնացած բոլորի հոնորարները հատկացնել կոմունիզմի կառուցման մեծ գործին: Մեկ այծերս բռնեցին, ուզեցի հրաժարվել: Բայց մեկ էլ մտածեցի, թե՝ գործ չունես, Արմեն Զատիկյան, աղբար մարդ ես, տուր, պրծիր, սրանք կոմունիզմը մեկ է չեն կառուցելու ու եթե չտվեցիր՝ շառը գցելու են քեզ վրա:

Զավենն ու Պարույրը հռհռացին:

- Այնպես որ գոհ եղեք, որ գոնե հաց ու պանիր կա ու սուսուփուս կերեք,- ասաց Արմենը: - Ճիշտը որ ասեմ՝ դուք դրանից ավելիին արժանի չեք: Բայց ես մեծահոգի եմ: Հիմա սուրճ էլ կտամ:

Նա էլեկտրական փոքրիկ զոդիչի ծայրը սրճեփի մեջ մտցրեց ու, երկու րոպե էլ չանցած՝ լցրեց սուրճի բաժակները:

- Եվ, քո կարծիքով, այդ երկաթով եփված սուրճը կխմվի՞, - կասկածեց խմբագիրը:

Արմեն Զատիկյանը տարածեց ձեռքերը.

- Աշխարհի բանին նայեք, թունավորված ջուրը խմում է, թունավորված օդը շնչում է և կասկածում է շիկացած պողպատի մաքրության վրա:

- Պարույր,- հարցրեց Զավենը՝ մեծ ախորժակով շարունակելով վայելել լավաշն ու պանիրը: - Իսկ ձեր այդ զտիչսարքից բան դուրս չի՞ գա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- «Ֆիլիպ-Մորիսի՞ց»,- ժպտաց Պարույր Պետրոսյանը, - կգա, բայց գիտե՞ս ինչի նման կլինի. ոնց որ ռետուշ, ոնց որ քանդված տունը սիրուն ներկես:

- Չեղավ,- միջամտեց Արմենը: - Համեմատությունդ կապ չուներ: Ավելի ճիշտ, դա նույնն է, թե գետի ակունքը փակելու փոխարեն փորձես հեղեղի դիմացն առնել: Այստեղ հիմնավոր գործ է պետք, Զավեն ջան, արմատական: Մինչև որ ըստ նախագծի չկառուցվի տարրալուծման կայանքը, ոչինչ դուրս չի գա: Եթե նույնիսկ մեզ հաջողվի զտիչ սարք ստեղծել, դա էլ հարցի լուծում չէ, որովհետև այն թույնը, որը մենք մեկուսացնելու ենք, միևնույն է, ինչ-որ տեղ պիտի թափել: Այնինչ դա հարստություն է…

- Թո՞ւյնը:

- Իհարկե, թույնը: Դու գիտե՞ս, որ ես արտասահմանյան գրքերից ու տեխնիկական ամսագրերից օգտվում եմ: Ահա,, ուրեմն, իմացիր, որ այդ թույնի հիման վրա Ամերիկայում և Անգլիայում վաղուց այնպիսի հումք են ստանում ռետինի և պլաստմասսայի արտադրության համար, որ շատ ավելի թանկ արժե, քան հիմնական արտադրանքը:

- Ուրե՞մն…

- Ուրեմն մեր կոմբինատը պետք է կանգնեցնել գոնե մեկ տարով և հիմնավորապես վերանորոգել:

- Կոմբինատը մեկ տարի արտադրանք չտա՞ …

- Ես նվազագույնն եմ ասում: Գուցե և երկու տարի տևի… Բայց փոխարենը կոմբինատը ոչ միայն տասնապատիկ կհարստանա, այլև նրա արտավիժած ջրերով կարելի է ոռոգել դաշտերը- իսկ ծուխը բացարձակ չեզոքացնելու համար օգտագործել քո առաջարկած այն «Ֆիլիպ-Մորիս»-ը, որն առայժմ առաջին քարտուղարի թոքերն է միայն անվտանգ պահում:

Զավեն Շարաֆյանը թերահավատորեն տարուբերեց գլուխը:

- Երկու տարի՞- Պարույրն ի՞նչ էր ասում՝ հարակից գործարանների և պետական ծանրաբեռնվածության մասին, նման պայմաններում ո՞վ թույլ կտա երկու տարի կանգնեցնել կոմբինատը: Կամ ենթադրենք կանգնեցրին, երկու տարի շարունակ ի՞նչ պետք է անեն կոմբինատի հազարավոր աշխատողները: Նստեն նարդի խաղա՞ն:

- Ինչո՞ւ,- դառնությամբ պատասխանեց Պարույրը,- թող աշխատեն ու տեսնեն, թե իրենց աշխատանքի շնորհիվ մի տասը-քսան տարի հետո ինչի է վերածվելու քաղաքի շրջակայքը: Ես՝ որ այսօրվա պես տեսնում եմ: Կչորանան անտառները, կվերանան ծաղիկները, գետերը ձուկ չեն տա, նույնիսկ գորտի կռկռոց չի լսվի, թռչունները կամ կսատկեն կամ կթռչեն այլ վայրեր իրենց գլուխն ազատելու, իսկ թե ինչ կլինի մարդկանց հետ, չեմ էլ ուզում խոսել այդ մասին: Սարսափում եմ: Այն ժամանակ ի՞նչ պատասխան ենք տալու մեր երեխաներին: Չգիտեմ:

Զավեն Շարաֆյանը ծեր դեղագործի նամակը հիշեց ու հանեց գրպանից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չգիտեմ թե ինչ կլինի տասը-քսան տարուց հետո, բայց այս նամակի հեղինակը գիտի, թե ինչ է կատարվում հիմա,- ասաց նա: - Կարդա՞նք:

- Ո՞վ է գրել,- հարցրեց Արմենը:

- Շշմելու մի մարդ,- ասաց Պարույր Պետրոսյանը: - Հրապարակի դեղատան ծերուկին ճանաչո՞ւմ ես, հենց նա: Բանից պարզվում է, որ բժշկական գիտությունների դոկտոր է:

Արմեն Զատիկյանը սուլեց.

- Չե՞ս կատակում: Ակնոցը թելով էր կապում ականջներից: Ասենք, ե՞ս ինչու եմ զարմանում: Այնքան փայտահատ ակադեմիկոսներ, գրողներ ու կոմպոզիտորներ եմ տեսել: Բոլոր դեպքերում հպարտանալու բան է, որ մեր փոքրիկ քաղաքի փոքրիկ ղեղատան վարիչը գիտությունների դոկտոր է: Տեսեք ուր ենք հասել- Այ քեզ զարգացում..,

- Հիմա ի՞նչ ես ասում, կարդամ թե չէ, շատախոս…

- Կարդա, Զավեն ջան, ներիր, շատ ոգևորվեցի:

Ու Զավեն Շարաֆյանը կարդաց.

«Նամակ խմբագրությանը: «Մինչև ե՞րբ լռենք»: Հարգելի խմբագրություն. ակնհայտ են այն վիթխարի նվաճումները, որ կուսակցության և կառավարության իմաստուն ղեկավարությամբ ձեռք է բերել խորհրդային ժողովուրդը առանձնապես վերջին տարիներին: Ոգևորված…»

- Զավեն ջան, ցավդ տանեմ, քանի դեռ ոգևորված ես, այդ մասի վրայով թռիր, անցիր,- ընդհատեց նրան Արմեն Զատիկյանը:

- Ինչո՞ւ, նյութի ապահովության համար սա էլ է պետք:

- Քեզ պետք է, մեզ պետք չի, ախպեր ջան, թռիր: Մեր տունը այդ տեսակ նվաճումներն են քանդել:

- Է, ինչ անի խեղճը, աչքը վախեցած մարդ է,- հոգոց հանեց Պարույրը:

- Ով՝ Զավե՞նը, թե դեղագործը:

- Հիմա թողնելո՞ւ եք կարդամ,- բարկացավ խմբագիրը:

Արմեն Զատիկյանը ձեռքի ափով փակեց բերանը:

- Ըհը…

- Դե լավ, սկսում եմ բուն նյութից,- աչքերը տողերի վրայով սահեցրեց խմբագիրը: - «Շատ է խոսվել ու գրվել մեր քաղաքի վերակառուցման և զարգացման գործում Քիմիական կոմբինատի խաղացած դերի մասին: Այդ դերը հսկայական է: Քաղաքի լավագույն շենքերը բնակելի թե վարչական, հիվանդանոցային թե մարզական՝ կառուցվել են Քիմիական

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

կոմբինատի առանձնացրած միջոցների հաշվին: Այո , արժանիորեն շատ է խոսվում քաղաքին՝ կոմբինատի տված օգուտների մասին: Բայց չի խոսվել, կամ գրեթե չի խոսվել այն վնասների մասին, որ կոմբինատը հասցրել է մեր քաղաքին ու նրա շրջապատին և շարունակում է հասցնել: Հանուն ճշմարտության ես կաշխատեմ լրացնել այդ բացը: Ես հին բժիշկ եմ, սանիտարիայի գծով, թեև մի քանի տարի է, ինչ դեղատանն եմ աշխատում: Այդ երկու մասնագիտությունը, զուգակցվելով, ինձ իրավունք են տալիս հայտարարելու, որ մեր շրջակա բնությունը վտանգի տակ է: Դամոկլեսյան սրի նման ահավոր աղետ է կախված մեր բուսական, կենդանական աշխարհի, այդ թվում և մարդկանց վրա: Որպեսզի խոսքերս մերկապարանոց չհնչեն, դիմում եմ փաստերի, որ ուսումնասիրել և կուտակել եմ տարիների ընթացքում: Մենք սովոր ենք ամեն ինչ հնգամյակներով չափել: Ես էլ եմ դիմում հնգամյա ժամկետների օգնությանը: Ահա, ուրեմն, անցյալ հնգամյակի համեմատությամբ այս հնգամյակում քաղաքի բնակչության շրջանում աղեստամոքսային հիվանդությունների թիվն աճել է 45 տոկոսով, դեղատներից օգտվող հիվանդների քանակը կրկնապատկվել է, ըստ որում այդ հիվանդությունների մեջ զգալի կշիռ են կազմում սովորական դաշտային բանջարեղենի և գետի ձկների օգտագործման հետևանքով թունավորվածները: Ահազանգ են հնչեցնում նաև անտառապահները: Վերացել կամ վերացման վտանգի են ենթակա անտառային մի քանի տեսակ կենդանիներ և թռչուններ, անբացատրելիորեն կանգ է առել որոշ ծառատեսակների աճը…

- Ասում էի, չէ,- գլուխը վշտացած օրորեց Պարույրը:

- - Եվ այս բոլոր աղետների հետքերը դեպի քիմիական կոմբինատ են տանում: Այդ նպատակառումով չափազանց խոսուն է կոմբինատի կողքով անցնող և ապա քաղաքի միջով հոսող գետի մաքրության վիճակը: Այնտեղից սկսած, որտեղ գետի մեջ են թափվում կոմբինատի կոյուղու ջրերը, կենդանական աշխարհն իսպառ վերացել է, ինչ չի կարելի ասել մինչև կոմբինատը հոսող հատվածի մասին:

- Հիմա հասկացա՞ր, թե ձուկն ինչքան հեռվից էի բռնել,- բացականչեց Արմենը:

- - Ըստ որում գետը պատիժ է դարձել քաղաքի բնակչության համար: Չարիքին անգետ երեխաները անարգել լողում են գետում և վտանգում իրենց կյանքը: Հենց այսօր նրանցից մի քանիսը մահճակալային հիվանդներ են, բայց հիվանդանոցի բժիշկները, սանէպիդ ծառայության մասնագետները ծնողներից թաքցնում են իրականությունը և հիվանդությունը վերագրում սննդային թունավորվածության: Բայց մինչև ե՞րբ կարելի է թաքցնել ճշմարտությունը, մինչև ե՞րբ կարելի է վտանգի ենթարկել մարդկանց կյանքը: Մի՞թե դա հանցագործություն չէ, մի՞թե ծանր և աններելի մեղք չէ, որ կոմբինատում աշխատող կանանց նորածին երեխաների մահացության տոկոսը զգալիորեն, որոշակիորեն բարձր է սովորական միջինից: Աչք ունեցողը կտեսնի նաև, որ կոմբինատում աշխատող տղամարդկանց և կանանց մազերը ժամանակից շուտ են թափվում: Եվ դա բոլորովին զարմանալի չէ: Բավական է մի հայացք նետել կոմբինատում և նրա շրջակայքում գիշերները բացօթյա վիճակում հանգրվանած մարդատար ավտոմեքենաներին: Այդ մեքենաների թափքերի հաստ թիթեղը ծխնելույզներից իջնող մրից քայքայվում ու ծածկվում է: Ուրեմն կարելի է պատկերացնել, թե ինչ ազդեցություն է գործում նույն այդ մուրը մարդկանց շնչափողն ընկնելիս և թոքերում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ոմանց կարող է թվալ, թե չափազանցնում եմ: Այդպես չէ: Ես ուղղակի ասում եմ ճշմարտությունը: Որովհետև որպես բժիշկ և քաղաքացի ահաբեկված եմ: Որովհետև սիրտս ցավում է. ամառանոցային մեր քաղաքի համար, որից, եթե այսպես

շարունակվի, որոշ ժամանակ անց փախչելու են մարդիկ և ամայանալու է այս չքնաղ բնությունը: Սիրտս ցավում է, և ես ամաչում եմ մեր երեխաներից ու թոռներից: Մեզանից ի՞նչ են ժառանգելու նրանք: Ի՞նչ օդ ենք նրանց բաժին թողնելու, որ շնչեն և ի՞նչ հող, որ կերակրելու է նրանց: Ուրեմն մենք մեր ձեռքով ոչնչացնո՞ւմ ենք մեր շարունակությունը, մեր կյանքը: Նման հեռանկարն աչքի առաջ ունենալուց հետո այլևս որևէ արժեք, որևէ նշանակություն ունի՞, որ շենքեր ենք կառուցում՝ նրանց համար, մանկապարտեզներ, դպրոցներ ու զբոսայգիներ: Երբ կառուցում ենք ու հետն էլ գդալ-գդալ թույն ենք մատուցում նրանց: Ո՞վ պիտի ապրի այդ հիանալի շենքերում, ո՞վ պետք է օգտվի այդ դպրոցներից ու մարզահրապարակներից, եթե մեր անտարբեր հայացքի առաջ կոմբինատը շարունակի թունավորել օդն ու ջուրը:

- Խելագարվել կարելի է,- տնքաց Պարույր Պետրոսյանը: - Աչքիս առաջ երեխաներս եկան…

- - Ես ահազանգ եմ հնչեցնում: Քանի դեռ ուշ չէ, սթափվեք, մարդիկ, և ոտքի ելեք այս հողակտորի վրա կյանքը պահպանելու համար: Առաջարկում եմ ժողովրդական հանձնաժողով ստեղծել իմ բերած փաստերը և ընդհանրապես իրական վիճակը մանրակրկիտ ստուգելու համար: Առաջարկում եմ առանց դեմքին և դիրքին նայելու մատնացույց անել և հրապարակել անունները այն մարդկանց, որոնց մեղքով, որոնց անփութության և անտարբերության հետևանքով կոմբինատն այսօր կեղտաջրերից և ծխնելույզներից հոսող, մեր գողտրիկ աշխարհին ապականող թունավոր նյութերը չեզոքացնող մաքրիչ և զտիչ համակարգ չունի, ինչպիսիք ունեն և պարտավոր են ունենալ նմանատիպ գործարաններն ու կոմբինատները:

Եվ թող ոչ ոք չասի, թե նման սարքավորումները թանկ են: Որովհետև մարդու կյանքից թանկ աշխարհում ոչինչ չկա»:

- Այ քեզ ծերուկ,- հիացած բացականչեց Արմեն Զատիկյանը: - Ոնց որ սրտի արյունով գրած լինի:

Պարույր Պետրոսյանը բռնել էր գլուխը:

- Նա դեռ չգիտի, թե կոմբինատը ինչ թերություններով է կառուցվել, թե ինչպես է նախագծից դուրս մնացել տարրալուծող կայանքը: Եթե իմանար…

- Դա էլ հո մենք գիտենք, եղբայր,- ասաց Արմենը: - Մենք էլ հենց այդ մասին կգրենք: Եվ պրոբլեմը կամբողջանա ու կհաստատվի…

- Կգրենք,- ձգեց Պարույրը,- ասենք թե գրեցինք, տպագրողն ո՞վ է:

Արմեն Զատիկյանը հարցական հայացքով նայեց խմբագրին:

- Զավենը, էլ ո՞վ: Ճիշտ չէ՞, Զավեն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բայց Զավենը չէր պատրաստվում պատասխանել և միայն անորոշ թոթվեց ուսերը:

- Չհասկացա,- զարմացավ, հարձակվեց Արմենը: - Դու դեղագործի նամակը չե՞ս տպագրելու, բա էլ ինչո՞ւ ես վերցրել, ինչո՞ւ ես կարդում:

Պարույրը կանգնեց նրա ու խմբագրի միջև:

- Լսիր, անկուսակցական անարխիստ, գաղափար ունե՞ս, թե ինչ վիճակի մեջ է Զավենը:

- Չէ,- անկեղծ խոստովանեց Արմենը,- իսկ ի՞նչ վիճակի մեջ է:

- Նրան կուսակցական նկատողություն են հայտարարել, ըստ որում նաև ինձ համար:

- Հա, բայց դա ի՞նչ նշանակություն ունի: Աշխատանքից էլ հո չեն հեռացրել:

Պարույր Պետրոսյանը թափ տվեց ձեռքը:

- Լսիր, դու իսկապե՞ս երջանիկ անգիտության մեջ ես, թե չես ուզում հասկանալ: Պատկերացնո՞ւմ ես, թե ինչ աղմուկ կհանի դեղագործի և մեր ելույթը: Ամբողջ քաղաքն իրար կխառնվի: Խուճապ կսկսվի…

- Է, թող սկսի… Մի՞թե մեր նպատակը դա չէ: Ինչ ուզում են թող անեն…

- Հա, ինձ ու քեզ ինչ կա, հատկապես քեզ- Իսկ խմբագրին անմիջապես պատասխանատվության կկանչեն: Երթ նա առանց այդ էլ նկատողություն ունի:

- Բայց նրա տպագրածը ո՞վ կարող է հերքել:

- Դա ոչ մի կապ չունի: Նրան կարող են մեղադրել կուսակցական զգոնությունը կորցնելու մեջ: Նրան կարող են դատապարտել հենց թեկուզ նրա համար, որ առանց քաղկոմի գիտության հրապարակել է այդ տվյալները և ժողովրդին փաստորեն գրգռել ու տրամադրել կոմբինատի ղեկավարության, քաղաքային իշխանությունների, պետության դեմ: Ճիշտ չէ՞, Զավեն…

- Ճիշտ է,- մոլորված համաձայնվեց խմբագիրը:

- Ասենք թե,- բղավեց Արմենը,- բայց չէ՞ որ ինքն արդար է և ժողովրդի մասին է մտածում: Ի վերջո ի՞նչ կարող են անել նրան:

Պարույր Պետրոսյանը գոռաց ի պատասխան.

- Ինչ կարող են անել- Եթե ուզենան՝ կհեռացնեն աշխատանքից: Ահա թե ինչ…

Եվ հանկարծ Արմեն Զատիկյանը անսպասելիորեն ծիծաղեց:

- Եվ դու այդպիսի առիթը ուզում ես բա՞ց թողնել ձեռքիցդ, Զավեն:

Ընկերները զարմացած նրան նայեցին: Նորի՞ց բռնեց խենթությունը, ինչ է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Զավեն ջան, այ ցավդ տանեմ, ինչքան լսում եմ՝ մեր ղեկավարներին կամ կաշառակերության համար են աշխատանքից հանում, կամ հարբեցողության ու դրամախաղի, կամ պետական ունեցվածքի հափշտակության, կամ անբարոյականության համար: Կարոտ մնացինք, որ մեկն ու մեկին մի ազնիվ ու մաքուր գործի համար հանեին. ժողովրդի շահերի համար կռիվ տալու, մեր պատմական հողերը պահանջելու, ազգային արժանապատվությունը, լեզուն, գրականությունը, պատմությունը, հուշարձանները զանազան ոտնձգություններից պաշտպանելու համար հանեին- Այնպես որ առիթն ինքն իրեն է եկել քո դուռը: Տպագրիր ու հերոսացիր, եղբայր: Հերն էլ անիծած, թե կհեռացնեն: Միևնույն է, մի օր հեռացնելու են կամ անպատիվ պիտակ կպցնելով, կամ էլ չես իմանալու թե ինչի համար: Իսկ հիմա- Հավատա, այս քաղաքի բնակիչները քեզ հուշարձան կկանգնեցնեն:

- Հետմահու,- ծիծաղեց Զավենը:

- Թեկուզ,- համաձայնվեց Արմեն Զատիկյանը ու հանկարծ արտասանեց՝ «Ամենայն տեղ մահը մի է, մարդ մի անգամ պիտ մեռնի, բայց երանի ով իր ազգի ազատության կզոհվի»:

Պարույր Պետրոսյանը ծափահարեց.

- Էհ, Արմեն, Արմեն, շատ ես նմանվում այն զորավարներին, որ «Օն, ի զեն» գոչելով ու հայրենասիրական ճառեր արտասանելով, զինվորներին մահվան դաշտ են ուղարկում, իսկ իրենք թաքնվում ամրոցում:

- Ե՞ս,- նեղացավ Արմենը,- ես թաքնվո՞ղ եմ…

- Դե լավ, լավ,- միջամտեց Զավենը: - Վերջ տվեք, տղերք: Ամբողջ հարցն այն է, որ ինչպես Պարույրն է ասում՝ իմ վիճակը մի կարգին վիճակ չէ: Շատ բարդ են իմ հարաբերությունները քաղկոմի և քաղկոմի առաջին քարտուղարի հետ: Իսկ հիմա ինքներդ էլ գիտեք, որ հենց Գառնիկ Բադալյանին է ուղղվելու մեր թերթի հարվածը: Եթե դեղագործի նամակն ու ձեր մեկնաբանությունը տպագրվեն: Նա է եղել կառուցվող կոմբինատի դիրեկտորը, նա է ապօրինություններ գործել և այսօր էլ որպես քաղկոմի առաջին քարտուղար, նա է պատասխանատու քաղաքում ու շրջակայքում տիրող էկոլոգիական խայտառակ վիճակի համար: Բայց ես ձեզ հետ հիմա խոսում եմ ոչ թե իբրև խմբագիր, այլ ընկեր ու մարդ: Ի՞նչ անեմ: Գառնիկ Բադալյանը քաղաքի ղեկավարներից միակն է, որ հենց սկզբից ինձ համար ամենադժվարին պահերին՝ իմ կողքին է կանգնել, պաշտպանել ու օգնել է ինձ: Չեռքս խղճիս վրա դրած պարտավոր եմ ասել, որ նա հազարումի հարցում, չեմ ամաչում ասել նույնիսկ երբ մահացավ մայրս ու ես կորցրել էի ինձ, այնքան լավություններ է արել, որ ես դրանց տակից ամբողջ կյանքում դուրս գալ չեմ կարող: Եթե փորձեմ անգամ:

- Իսկ դու քի՞չ բան ես արել նրա հեղինակության համար: Դու և քո թերթը հավատարմորեն, անձնվիրաբար, ազնվորեն չե՞ք ծառայել նրան,- հեգնեց Արմեն Զատիկյանը: - Եվ վերջապես ինչո՞ւ ես զուգահեռ անցկացնում ձեր անձնական հարաբերությունների և խմբագրի քո կոչման ու պարտականությունների միջև: Ժողովուրդն ի՞նչ մեղք ունի, հարգելի ընկեր Շարաֆյան, որ դու և Բադալյանը փոխադարձ պարտքեր ունեք իրար վճարելու:

Պարույր Պետրոսյանը բարկացավ սրտանց,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Զզվեցրիր, էլի, Արմեն: Մարդն ասաց, որ ես ձեզ հետ իբրև ընկեր եմ խոսում: Բոլորը ցինիկ ու երախտամոռ չեն…

- Ինձ նմա՞ն,- ծիծաղելով հարցրեց Արմենը:

- Ես այդ չասացի: Ես ընդհանրապես եմ ասում: Զավենին էլ պետք է հասկանալ: Հենց երկու օր առաջ քաղկոմի բյուրոյի անդամները՝ Գրետա Սուրենյանի գլխավորությամբ, օգտվելով Բաղալյանի բացակայությունից, կուսակցական խիստ նկատողություն են հայտարարում նրան: Իսկ երեկ՝ իմանալով այդ մասին, Գառնիկ Վարդանիչը, նույնիսկ խախտելով կարգը, նորից հավաքում է բյուրոն և ստիպում բավարարվել նկատողությամբ: Դա քի՞չ բան է- Մարդն ինչպե՞ս կարող է հաշվի չառնել դրանք:

- Երկու օր առա՞ջ: Ուրբա՞թ օրը,- հետաքրքրված հարցրեց Արմենը,- իսկ ինքն ինչո՞ւ բյուրոյին չէր մասնակցում:

- Այդպես ստացվեց,- պատասխանեց Զավենը: - Հանկարծ զանգահարեցին ու Կենտկոմ կանչեցին: Իսկ նա հեռացավ թե չէ Գրետա Սուրենյանը մեջտեղ բերեց իմ հարցը:

Բայց Արմեն Զատիկյանը չէր հանգստանում:

- Կենտկոմ… Իսկ դո՞ւ ինչ իմացար, որ նրան Կենտկոմ կանչեցին:

- Ինքն ասաց, անհավատ,- բարկացավ Զավենը:

Արմեն Զատիկյանը մի պահ դեռ ինչ-որ բան էր մտածում՝ հոնքերը խոժոռած:

- Հիմա հասկացա,- վերջապես ասաց նա: - Բայց Զավեն ջան, Պարույր ջան, ինչքան էլ բարկանաք, ինչքան էլ ծաղրեք ու վիրավորեք ինձ, ես իմ կարծիքին եմ մնում: Այս հարցը պետք է բարձրացվի: Եթե ոչ մեր թերթում, ապա ուրիշ թերթում, Երևանում, թեկուզ Մոսկվայում: Սա պիտի տպագրվի, որպեսզի ինչպես ծերուկ դեղագործն է ասել, գոնե երես ունենանք մեր երեխաների աչքերին նայելու, մեզանից հետո եկողների անեծքին չարժանանալու համար: Ճի՞շտ չեմ, Պարույր ջան, դու ասա:

Պարույրը չպատասխանեց: Նա Զավենին չէր նայում, պատուհանից դուրս երևի ինչ-որ բան էր հետաքրքրել նրան:

- Չգիտեմ,- ասաց խմբագիրը,- չգիտեմ, չգիտեմ, չգիտեմ…

* * *

Նույնիսկ ամառանոցային այդ քաղաքում շոգ էր: Արևն այրում էր անխնա, հատկապես կեսօրին: Դատարկվում էին փողոցներն ու հրապարակները, մարդիկ հիմնարկներում ու տներում միաժամանակ բացում էին պատուհաններն ու դռները, որ մի քիչ հոսանք առաջանա, որ կարողանան շնչել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Իր առանձնասենյակում դուռն ու լուսամուտը բացել էր նաև «Լուսաբաց» թերթի խմբագիր Զավեն Շարաֆյանը: Նա հեռախոսով տուն էր պատվիրել (կեցցե Մկրտիչը, որ կարողացավ ի վերջո հեռախոս հաջողացնել) ու մտածում էր, թե եթե այստեղ անտանելի շոգ է, ուրեմն ինչ է կատարվում Երևանում:

Բաց լուսամուտից ոչ թե զովություն, այլ շիկացած օդ էր ներս թափանցում և Զավենին՝ թվաց, թե նավթի հոտ է առնում: Բայց նա գիտեր, որ մոտակայքում նավթ չկա, որովհետև վաղուց գիտեր, որ շոգի զգացումն ու նավթի հոտը միաժամանակ են հայտնվում նրա մոտ՝ դեռ շատ վաղուցվանից, սկսած այն օրից, երբ մոր հետ Կոլխոզ շուկա գնացին: Պատերազմի առաջին ամառն էր: Մայրը Սիրանին Արզական էր ուղարկել պիոներական ճամբար, և որովհետև Զավենը մենակ էր մնացել տանը, ուր գնում՝ նրան էլ հետն էր տանում: Եվ այդ օրն էլ Կոլխոզ շուկա տարավ: Տարավ, բայց շուկա չմտցրեց, որովհետև բաց դարպասից էլ երևում էր, որ շուկայում շարժվելու, ասեղ գցելու տեղ չկա: Դարպասից քիչ հեռու, աջ կողմում նավթի մի ցիստերն էր կանգնած՝ փուքսը թողած անիվների վրա: Բայց ինչպես երևում էր, ոչ նավթավաճառը կար և ոչ էլ նավթ՝ ցիստերնի մեջ: Մայրը Զավենին ցիստերնի մոտ տարավ ու ասաց.

- Տղա ջան, շուկայում ոտքի տակ կընկնես: Մնա այստեղ: Ես քիչ հետո կգամ: Ոչ մի տեղ չհեռանաս…

Ու Զավենը մնաց ցիստերնի մոտ: Արևը կանգնել էր երկնքի կենտրոնում ու կրակ էր թափում: Ոչ մի ստվեր չկար, որ հնարավոր լիներ թաքնվել, պատսպարվել նրա բոցերից: Կանգնեց, կանգնեց Զավենը, բայց որովհետև շիկանում էր գլուխը, կծկվեց ցիստերնի տակ, հենց ծորակի կողքին ու գլուխն էլ հենեց փուքսը թողած անիվին: Մի կողմից արևը, մյուս կողմից նավթի սուր, թանձր հոտը, թմրեցրին նրան, ու նա նվաղեց թե քնեց՝ գլուխը հենած անիվին: Ինչքան ժամանակ էր անցել, չիմացավ, բայց երբ ոտքի ելավ, զգաց, որ գլուխը պտտվում է: Բայց ոչ թե այնպես, ինչպես սովորաբար էր լինում, ասենք սովից կամ թուլությունից: Չէ, գլուխը ֆիզիկապես էր պտտվում, պարանոցի վրա հանգիստ չէր մնում, այլ անկանգ, անդիմադրելի թեքվում էր դեպի աջ, ավելի ու ավելի աջ, այնքան, որ տղան պտտվում էր ոտքերի վրա, որպեսզի ուղղի մարմինը: Եվ ամեն ինչ սկսվում էր նորից:

Հենց այդ վիճակում էլ նրան գտավ մայրը:

- Ի՞նչ ես անում, տղա ջան:

Ու տղան հեծկլտաց վախից, կարեկցանքի ու խղճահարության զգացումից իր նկատմամբ, որը ստիպում է լաց լինել:

- Պտտվում եմ, մայրիկ, գլուխս տեղում չի մնում, պտտվում է…

- Այ տղա, հո հանաք չե՞ս անում…

Իսկ տղայի գլուխը անկանգ դեպի աջ էր թեքվում, և նա պտտվում էր ոտքերի վրա, որպեսզի ամեն ինչ սկսվի նորից:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մայրը լաց չեղավ ու չխփեց ծնկներին, նրան ո՞վ էր իրավունք տվել թուլանալու: Նա ձախ ձեռքով զամբյուղը բռնած, աջով ամուր գրկեց որդուն ու առաջ տարավ.

- Արևն է խփել, մեռնեմ քեզ, մի վախենա, հիմա ջուր կգտնեմ, կթրջեմ գլուխդ ու ամեն ինչ կանցնի:

Մինչև ջրի ծորակին հասնելը, Զավենն այլևս անկարող դիմանալ, երկու-երեք անգամ բաց թողեց մոր ձեռքը, որպեսզի կարողանա ուղղել գլուխը ու առաջ անցնել: Իսկ երբ չուգունե աղբյուրին հասան, մայրը կռացրեց որդու գլուխը, ծորակի տակ դրեց և ամբողջ մարմնով, ինչպես սովոր էին ասել «կրանդի» վրա ընկնելով, երկու ձեռքով սեղմեց զսպանակը, որի ծայրը ներքևում ինչ-որ տեղ ջրի ճանապարհն էր բացում: Ջուրն ուժեղ շիթով թափվեց Զավենի գլխին, ու նա արագ-արագ սկսեց շփել մազերը, որովհետև հակառակ շոգին, ջուրը սառցային ցրտություն ուներ: Հետո տուն գնացին, հանդիպած յուրաքանչյուր թուջե աղբյուրի մոտ կատարելով նույն արարողությունը: Իսկ երբ տուն հասան, և մայրը շտապով անկողին դրեց որդուն, Զավենը հասկացավ, որ ամեն ինչ անցել է: Եվ իսկապես՝ ամեն ինչ անցավ: Ամեն ինչ, բացի նավթի սուր, թանձր հոտից, որ նա զգում էր միշտ, երբ այրող արև էր ու սարսափելի շոգ:

- Պատասխանեք Երևանին, ընկեր Շարաֆյան:

- Ալո,- բղավեց Զավենը: - Սիրան, դո՞ւ ես…

- Ես եմ, ախպեր ջան, ինչո՞ւ ես ձայնդ գլուխդ գցել:

- Կարծեցի չես լսում,- ծիծաղեց Զավենը: - Ո՞նց եք, ինչ կա, չկա:

- Լավ ենք, ցավդ տանեմ,- մոր ձայնով ասաց Սիրանը: - Աշոտիկն արդեն երգում ու արտասանում է: Ասում է՝ քեռին եկավ մեր բակը ու անմիջապես էլ հարցնում մամ, բա՝ քեռի Զավենը ինչո՞ւ չի գալիս մեր բակը…

- Իսկ Նազի՞կը ոնց է,- զգալով, որ կոկորդը քոր է գալիս, հազաց Զավենը:

- Նազիկի՞ն ինչ կա: Ամբողջ օրը ծծակը բերանին մշմշում է: Հո չի քնում, Զավեն, հո չի քնում: Իսկը դու: Ուտում է ու քնում: Ուտում է ու քնում:

- Հա, դու էլ ինձ թողնում էիր, որ քնեմ,- փնթփնթաց Զավենը,- անընդհատ քացի-քացի էիր անում…

- Ամոթ է, այ տղա, խմբագիր մարդ ես, մեկնումեկը կլսի,- քրքջաց Սիրանը, և Զավենը մտածեց, որ քույրը երջանիկ է: - Զավ, լսո՞ւմ ես, Աշոտիկն է, շան նման հասկացավ, որ քեզ հետ եմ խոսում. ասում է՝ քելին երբ է գալու մեր կաբը, լսո՞ւմ ես…

Զավենը չէր լսում, բայց գլխով արեց.

- Լսում եմ, լսում, երևի շուտով…

- Հա՞: Միայն թե խնդրում եմ մի շաբաթից ոչ շուտ, Զավեն ջան…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ինչո՞ւ, այ անհյուրընկալ աղջիկ:

- Դե դու հո էս ղալմաղալի մեջ չես կարողանա ապրել, քնելու տեղ էլ չկա: Իսկ մի շաբաթ հետո ամբողջ տունը քեզ: Մեր բնակարանի վերանորոգումը վերջացնում ենք:

- Ձեր ձեռքը կրակն եմ ընկել,- քրթմնջաց Զավենը: - Փեսա Գևորգին բարևներ…

- Մի քիչ հարգանքով խոսիր, այ տղա, արդեն դոցենտ է,- ծիծաղեց Սիրանը:

- Շնորհավորանքներս- - Զավենը տեսավ, թե ինչպես առանձնասենյակ մտավ Մուշեղ Օթարյանը և շտապեց ավարտել խոսակցությունը: - Դե լավ մնաք…

Մուշեղ Օթարյանը մոտեցավ ու նստեց խմբագրի առաջ, նրան մեկնեց ձեռքին բռնած թղթերն ու ասաց.

- Ցնդելու նյութեր են, Զավեն Աշոտիչ: Սա արդեն ոչ թե սովորական, այլ ատոմային ռումբ է:

Խմբագիրը գլխով արեց:

-Ստորագրեցի՞ր:

- Մեծ ուրախությամբ,- ասաց Մուշեղը: - Ո՞վ կհրաժարվի ստորագրել այդ նյութի վրա: Թեկուզ միայն դրա համար արժեր Երևանից այստեղ աշխատանքի գալ: Կեցցեն բոլորը՝ թե դոկտորը, թե Պետրոսյանն ու Զատիկյանը, որ այդքան հիմնավոր և այդքան համարձակ գործ են կատարել: Եվ կեցքեք դուք, որ տպագրելու եք այդ նյութերը:

Զավենի դեմքը մտահոգ էր:

- Իսկ դու գիտե՞ս, որ քո ստորագրության համար մեզ հետ միասին կարող են քեզ էլ պատասխանատվության կանչել: Չե՞ս վախենում, Մուշեղ…

- Ե՞ս,- ժպտաց Մուշեղը: - Ես մինչև. կյանքիս վերջ հպարտանալու եմ, որ իմ մատը, որ իմ ստորագրությունն էլ կա այն հոդվածների վրա, որոնց շնորհիվ ժողովուրդը մաքուր օդ է շնչելու և կասկածով ու վախով չի նայելու հացին: Եվ հետո, ես հո կոմունիստ չեմ, որ վախենամ, Զավեն Աշոտիչ, ինձ ո՞րտեղից են հանելու: Մեզ հիմա խնդրելով, աղաչելով են շրջան ուղարկում: Ո՞վ կհանի: Այս քաղաքից հանեն, մի ուրիշ քաղաք կուղարկեն և գուցե նույնիսկ բարձրացնեն պաշտոնս:

Զավենը չկարողացավ թաքցնել ժպիտը: Չէ, սա ուրիշ սերունդ է: Սրանք իսկապես երկյուղ չունեն: Մի՞թե մի քանի տարին այդքան վճռական կարող են լինել մարդու հոգեբանության ձևավորման հարցում: Տես թե ինչ է նշանակում խրուշչովյան մի քիչ, մի մատ թարմ օդը…

- Հետո եթե սարսափեի անգամ, Զավեն Աշոտիչ, միևնույն է, այն երեխաների տխուր աչքերը տեսնելուց հետո ես ոչ միայն այդ հոդվածների վրա, հոդվածների տակ անգամ կստորագրեի, թռուցիկներ կգրեի ու պատերին կփակցնեի: Գուցե զարմանաք ու նույնիսկ ծիծաղեք, բայց երբ ծեր դեղագործը փոքրիկների նման ձեր և իմ ձեռքերից բռնած մեզ հիվանդանոց տարավ ու ցույց տվեց այն երեխաներին, որոնք թունավորվել էին, քիչ մնաց խելագարվեի: Այնտեղ, այդ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հիվանդանոցում ես կյանքումս առաջին անգամ հավատացի, որ մարդ կարող է զոհել իրեն՝ ուրիշների կյանքը փրկելու համար, կրծքով փակել հրակնատը կամ վառվող ինքնաթիռից ոչ թե ցատկել, այլ այդ ինքնաթիռով հարվածել թշնամու գնացքին ու փաստորեն ինքնասպան լինել: Դուք գիտե՞ք, որ երեք օր է բոլորովին չեմ քնել- Կոպերս փակում եմ, թե չէ՝ այդ երեխաների ալքերն են- որ ամեն հիվանդասենյակ մտնողից՝ կյանք են խնդրում…

Խմբագիրը գլխով արեց ու սեղմեց զանգի կոճակը:

- Ես գնամ, Զավեն Աշոտիչ:

- Չէ,- ասաց Զավենը,- մի քիչ էլ մնա:

Ներս մտավ Միհրան Գալստյանը: Խմբագիրը սեղանին դրված նյութերը նրան մեկնեց:

- Վերցրու կարդա և տեղավորի այս համարում: Ամենաաչքի ընկնող տեղում: Թեկուզ հենց առաջին էջում:

Միհրան Գալստյանը խմբագրին նայեց զարմանքով:

- Ինչի՞ մասին է, ընկեր Շարաֆյան:

- Բնության պահպանության մասին, Միհրան:

- Բնության պահպանությա՞ն- Բայց մենք առաջին էջում առաջնորդող ունենք և պրոպագանդիստական հոդված:

- Սա նույնպես պրոպագանդիստական հոդված է, Միհրան: Ու շատ կարևոր հոդված է:

Միհրան Գալստյանը վտանգ և անհանգստություն զգաց:

- Իսկ բաժինը կարդացե՞լ է:

- Մուշեղը ստորագրել է արդեն:

- Իսկ դո՞ւք:

- Իսկ ես, ինչպես կարգն է, կստորագրեմ քո ստորագրելուց հետո: Եղա՞վ…

Միհրան Գալստյանը կասկածամտությամբ նայեց ձեռքին բռնած թղթերին, ուզեց ինչ-որ հարց ևս տալ, բայց չհամարձակվեց ու հեռացավ:

Մուշեղ Օթարյանը ծիծաղեց:

- Մի բան ասեմ, հո չեք նեղանա, Զավեն Աշոտիչ:

- Եթե նեղացնելու համար չես ասում, չեմ նեղանա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ընդհակառակը. Զավեն Աշոտիչ, ուզում եմ ասել, որ երբ աշխատանքի ընդունվեցի, առաջին օրերին ինձ թվաց, թե դուք շատ զգույշ, շատ…

- Վախկոտ-- քմծիծաղ տալով ավելացրեց խմբագիրը:

- Չէ, վախկոտ չէի ասի: Ուղղակի չափից ավելի զգույշ մարդ եք:

- Ինչի՞ց էր երևում:

- Կասեմ: Ես ի դժբախտություն ինձ՝ սիրում եմ ասել, ինչ մտածում եմ: Եվ դրա պատճառով շատ ծեծ եմ կերել: Ու հիմա էլ եմ պատրաստ: Կասեմ: Թերթում շատ քիչ էին սուր, պրոբլեմատիկ հարցեր բարձրացնող նյութերը: Արդեն ասել եք, որ չեք նեղանա: Երբեմն ինձ թվում էր, թե թերթը վերածվել է աշխատանքային նվաճումները փառաբանող ցուցատախտակի: Ահա դիմանկարները, ահա կատարողական տոկոսները, ահա ստացված եկամտի չափը: Կարծես թե այդ դիմանկարների տերերը ոչ հոգս ունեին, ոչ ցավ, ոչ մրսում էին, ոչ սոված էին մնում ու ամբողջ օրը ժպտում էին: Երջանիկ, լայն, պլակատային ժպիտով: Ու կարծես թե բոլորն ասում էին՝ «Բոլորս դեպի ընտրություններ»: Հետո ինձ թվում էր, թե հաճախ եք գնում քաղկոմ՝ ցուցումներ ստանալու և տպագրվող նյութերը համաձայնեցնելու համար:

Զավենը տխուր ժպտաց.

- Ինչ ճիշտ է, ճիշտ է, Մուշեղ: Այդպիսի մի շրջան եղավ: Չեմ ուզում արդարանալ, չէ: Գուցե չափազանց անհամոզիչ թվա, բայց մորս մահից հետո թևաթափ եղա մի տեսակ ու շատ ընկճվեցի: Հետո այնպիսի դրությունների մեջ խրվեցի, այնպիսի վիճակ ստեղծվեց, որ ասես թե անհարմար էի զգում, ասես թե իրավունք չէի վերապահում ինձ քննադատական նյութեր տպագրել այն- Մի խոսքով ես, քեզ հետ համաձայն եմ: Եվ իսկապես չեմ նեղանում: Միայն ամաչում եմ:

- Բայց ամբողջ հարցն այն է, որ ծայրից-ծայր կարդացել էի թերթում տպագրած ձեր համարձակ, ատամով, տեղ- տեղ նույնիսկ անողոք ֆելիետոններն ու հոդվածները: Ու դրա համար էի զարմանամ, թե ինչ է կատարվել այդ փայլուն ժուռնալիստի հետ: Մի՞թե… Արդեն ասել եք, որ չեք նեղանա… Մի՞թե, մտածում էի, ընկեր Շարաֆյանը սպանել է իր տաղանդը, իր մարտնչող ոգին… ընդամենը խմբագիր դառնալու համար: Դա շատ անխիղճ, շատ անարդար բան կլիներ: Որովհետև խմբագիր ով ասես կարող է դառնալ, նույնիսկ ես կամ Միհրան Գալստյանը: Բայց ձեզ նման ֆելիետոնիստ…

Զավենը շարունակում էր ժպտալ տխրությամբ, բայց մինչև հոգու խորքը ցնցված էր: Ոչ թե այն պատճառով, որ ճշմարիտ խոսքեր էր լսում, չէ, այլ որովհետև նրան զարմանալիորեն թվում էր, թե իր դիմաց ոչ թե Մուշեղ Օթարյանն է նստած, այլ հենց ինքը՝ Զավեն Շարաֆյանը: Դա նրա մտքերն էին, նրա մենախոսությունը, որ հազար անգամ կրկնել էր մտքում՝ ինքն իր հասցեին: Միայն թե ավելի խիստ բառերով և շատ ավելի դաժանությամբ: Եվ հետո մի ուրիշ պատկեր էր հայտնվում նրա աչքին: Ճիշտ նույն պատկերը, միայն թե դերակատարներն էին ուրիշ: Ինքը նստած էր Մուշեղի տեղում, իսկ իր դիմաց, գրասեղանի ետևում նստած էր “Լուսաբաց» թերթի խմբագիր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մկրտիչ Զուլոյանը: Ինքը գրեթե արհամարհանքով ու կարեկցանքով նայում էր հոգսերի տակ կծկված Մկրտիչ Զուլոյանին ու ասում՝ «Եվ դուք չգրեցի՞ք ֆելիետոն այդ խուլիգաններ Աղոյի ու Վաղոյի մասին»: Իսկ Մկրտիչ Զուլոյանը ծխում, հազում ու արդարանում էր- ճիշտ այսպես… ճիշտ այսպես- Միայն թե հիմա Մուշեղն է նստել իր դիմաց ու մտքում գրեթե արհամարհելով ու կարեկցելով դառը ճշմարտություններ է ասում: Իսկ ինքը ստիպված է լսել և արդարանալ:

Մի՞թե ամեն ինչ աշխարհում կրկնվում է:

Իսկ Մուշեղ Օթարյանը շարունակում էր…

- Բայց հետո, երբ սկսեցիք իրար հետևից ֆելիետոններ ու ռեյդային հոդվածներ տպագրել, հասկացա, որ ինչպես դուք եք ասում՝ դա մի շրջան է եղել: Եվ մի քանի օր առաջ, երբ քաղկոմի բյուրոյում ձեր ելույթը լսեցի…

Խմբագիրը թափ տվեց ձեռքը- Հիմա մի սկսիր մխիթարել, պետք չէ, չեմ ուզում, սիրելի Մուշեղ: Ես գիտեմ, շատ բան եմ կորցրել, որ հետ բերելն արդեն անհնարին է:

- Իսկ այս հոդվածների տպագրությունը ձեր հաղթանակը կլինի,- ոգևորված ասաց Մուշեղը: - Կներեք, որ Միհրանի նման վերամբարձ եմ խոսում: Բայց իմացեք, որ ժողովրդի պաշտամունքին կարժանանաք: - Ու քիչ լռելուց հետո կամացուկ հարցրեց: - Բայց վախենում եք, չէ՞, Զավեն Աշոտիչ:

- Վախենում եմ, Մուշեղ,- խոստովանեց խմբագիրը:

- Ես էլ եմ վախենում,- հոգոց հանեց տղան: - Բայց ձեզ համար:

- Իսկ ես միայն նրա համար, որ հանկարծ չխանգարեն տպագրությանը,- ժպտաց Զավենը, իրոք հավատալով իր խոսքերին: - Միայն դրա համար, եղբայր:

Միհրան Գալստյանը ոչ թե ներս մտավ, այլ ներս ընկավ, բայց տեսնելով Մուշեղին, կանգ առավ դռան առջև:

- Լսում եմ, Միհրան, քե՞զ ինչ պատահեց, մոտ եկ,- ասաց խմբագիրը:

- Ընկեր Շարաֆյան, կներես, Մուշեղ, բայց ես ուզում եմ. ընկեր Շարաֆյանի հետ առանձին խոսել,- տեղում տրորվեց պատասխանատու քարտուղարը:

Մուշեղ Օթարյանը թոթվեց ուսերը, մի հայացք նետեց խմբագրին՝ ասես այնուամենայնիվ նրանից թույլտվություն խնդրելով, ու դուրս եկավ:

- Այս ի՞նչ եք անում, ընկեր Շարաֆյան,- գրասեղանին մոտեցավ Միհրանը: - Դուք… դուք պատկերացնո՞ւմ եք, թե ինչ եք անում:

- Նստիր, Միհրան,- ժպտաց խմբագիրը: - Նստիր ու ասա տեսնեմ, թե ինչն է այդքան հուզել քեզ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Միհրան Գալստյանը նստեց, շարունակելով ձեռքին պահել թղթերը, որոնք նկատելիորեն դողում էին: Իսկ երբ խոսեց՝ դողացին նաև շրթունքները:

- Ջավեն Աշոտիչ, իսկ… իսկ այս նյո՞ւթերը համաձայնեցված են քաղկոմի հետ- Գառնիկ Վարդանիչը տեղյա՞կ է սրանց մասին:

- Ոչ, Միհրան, տեղյակ չէ,- ասաց Շարաֆյանը:

Միհրան Գալստյանը խմբագրին նայեց մի այնպիսի հայացքով, ինչպես խելագարին կնայեին:

- Իսկ դուք գիտե՞ք, որ կոմբինատը Գառնիկ Վարդանիչն է կառուցել,- կակազեց նա:

- Իհարկե, գիտեմ,- գլխով արեց խմբագիրը:

- Եվ այնուհանդերձ որոշել եք տպագրել… նրա դե՞մ…

- Այնուհանդերձ որոշել եմ:

Միհրան Գալստյանը խմբագրին նայեց ապշած:

- Ես այս նյութը չեմ ստորագրի,- մրմնջաց նա՝ հոդվածները զգուշությամբ սեղանին դնելով:

- Ինչո՞ւ, կասկածո՞ւմ ես փաստերի ճշտությանը: Առարկություննե՞ր ունես.

- Հարցն այդ չէ:

- Ուրեմն ի՞նչ է պատահել,- նողկանք զգաց, զայրացավ Շարաֆյանը: - Մի՞թե դու չէիր դժգոհում, մեղադրում ինձ, աղաղակում ամեն տեղ և նաև բյուրոյում, թե ես քեզ չեմ վստահում, թե թաքցնում եմ քեզանից, գաղտնի եմ տպագրում կարևոր նյութերը: Ահա, խնդրեմ, ամենակարևոր նյութը, որ երբևէ բռնել եմ իմ ձեռքին: Քեզանից չեմ թաքցնում, Միհրան Գալստյան, ուզում եմ, որ նախ կատարես քո աշխատանքային սովորական պարտքը որպես պատասխանատու քարտուղար, և ապա ինձ հետ կիսես այդ հոդվածները տպագրելու պատիվն ու պատասխանատվությունը:

Միհրան Գալստյանը բարձրացավ աթոռից ու խոնարհվեց:

- Մեծապես շնորհակալ եմ, ընկեր Շարաֆյան, բայց ես հրաժարվում եմ և պատվից և պատասխանատվությունից:

- Ինչո՞ւ, վախենո՞ւմ ես:

- Վախենում եմ,- նույնիսկ մի տեսակ մարտահրավերով՝ համաձայնվեց քարտուղարը: - Ես վախենում եմ: Ի վերջո ձեզ համար ի՞նչ կա: Դուք տուն ունեք մեկ ուրիշ տեղ, կարող եք թողնել ու հեռանալ: Իսկ ես ո՞ւր գնամ: Իմ տունն էլ, ընտանիքն էլ այստեղ են: Եվ իմ երեխան շուտով այստեղ է ծնվելու…

Ջավենը զգաց, որ գունատվում է, ակամա սեղմվեցին բռունցքները:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Դու իրավացի ես, Միհրան: Իսկապես, ի վերջո ինձ ի՞նչ կա: Ես տուն ունեմ Երևանում և ամեն րոպե կարող եմ թողնել ու գնալ: Իսկ քո տունն այստեղ է, և քո երեխան այստեղ է ծնվելու…

- Ես նույնը չե՞մ ասում,- զարմացավ քարտուղարը:

- Իսկ այդ նույնը ասելիս չե՞ս մտածում, որ եթե չտպագրենք այս նյութերը, ահազանգ չհնչեցնենք, ժողովրդին ոտքի չհանենք, չհասնենք այն բանին, որ փակեն կոմբինատն ու զտիչներ տեղադրեն, ապա վաղը քո նորածին երեխան և ծնված ու նոր աշխարհ եկող բոլոր երեխաները թույն են շնչելու: Ես հանուն ի՞մ շահի, հանուն ի՞մ երեխայի եմ տպագրում այս հոդվածները: Մուշեղ Օթարյա՞նը հանուն ինչի է ստորագրում այդ նյութերը, վտանգի ենթարկում իրեն: Նա չի վախենում, իսկ դու վախենո՞ւմ ես: Մարդ ես, չէ՞, Միհրան Գալստյան: Գնա քաղաքային հիվանդանոց, մտիր հենց նույն քիմիական կոմբինատի շքեղ, նորաբաց հիվանդանոցը ու տես, թե ովքեր են պառկած, ովքեր են մեռնում այդ հիվանդանոցներում: Երեխաներ- Հիվանդությունները կանխելու, գոնե մեր ուժերի ներածին չափով թունավոր ջրերի ու ծխի ակունքները փակելու փոխարեն շքեղ հիվանդանոցներ ենք կառուցում- հա, հա , նաև քո ապագա երեխայի համար…

Միհրան Գալստյանը կանգնած էր գլխիկոր, ասես աշխարհից կտրված:

- Հա, բայց Գառնիկ Բադալյանը, - հազիվ արտասանեց նա: - Իսկ ի՞նչ կասի Գառնիկ Բադալյանը:

- Հիմա քեզ միայն դա՞ է հուզում,- կրկին զայրացավ խմբագիրը,- մնացած հարցերը չե՞ն հուզում:

- Ուրեմն վճռել եք տպագրել,- ասես իրոք անջատված՝ ավելի շուտ հաստատեց, քան հարցրեց քարտուղարը:

- Անպայման,- պոռթկաց Զավենը: - Ինչ գնով էլ լինի:

Եվ Միհրան Գալստյանը հանկարծ աղաչանքով պարզեց ձեռքերը.

- Զավեն Աշոտիչ, շատ եմ խնդրում, խնայեք ինձ: Ես հո չեմ ձևացնում: Իսկապես վախենում եմ: Ի՞նչ անեմ՝ դուք հերոս եք, ես հերոս չեմ: Աշխարհը հո միայն հերոսներից չի բաղկացած: Խնայեք ինձ: Մինչև հիմա շատ նյութեր ինձ ցույց չեք տվել: Այնպես համարեք, որ սա էլ ցույց չեք տվել:

- Դարձյա՞լ «ալիբի» ես սարքում քեզ համար,- չարախնդաց խմբագիրը,- որ ասես, թե դու տեղյա՞կ չես, թե քեզանից թաքցրե՞լ են…

- Չէ, երդվում եմ,- կերկերուն ձայնով ասաց Միհրանը: - Ոչ ոքի ոչինչ չեմ հայտնի: Կասեմ ես հիվանդ եմ եղել, աշխատանքի չեմ գնացել, բյուլետեն կվերցնեմ, Զավեն Աշոտիչ: Ես իսկապես հիվանդ եմ, չե՞ք տեսնում, որ հիվանդ եմ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նա իրոք հիվանդի էր նման՝ մարմինը դողում էր խղճալի, իսկ աչքերը դեղնած ու բորբոքված էին:

- Գնա, Միհրան,- հոգնած ասաց Զավենը: - Գնա ու այլևս չերևաս աչքիս:

- Ընդհանրապե՞ս, - գլուխը թեքեց պատասխանատու քարտուղարը:

- Ընդհանրապեսը չգիտեմ- Ես ընդհանրապես չգիտեմ, թե ինչ է լինելու, բայց մինչև թերթը լույս չտեսնի, աչքիս չերևաս, Միհրան:

- Դե իմ ուզածն էլ հենց դա է,- խղճալի ժպտաց Միհրանը,- դեպի դուռը ետ-ետ գնալով: - Շատ, շատ շնորհակալություն: Մինչև կյանքիս վերջ չեմ մոռանա, ընկեր Շարաֆյան:

- Երանի թե ես կարողանայի մոռանալ,- նայելով նրա թիկունքին, ինքն իրեն ասաց խմբագիրը: - Ուր էր, թե ես կարողանայի մոռանալ:

Նա մոտ բերեց հոդվածները, գլուխը ձեռքերի մեջ առավ, կարդաց նորից, սև խոշոր տառերով ստորագրեց շապիկները վրա և իր մոտ կանչեց Մուշեղ Օթարյանին:

- Մուշեղ,- ասաց նա,- քո ձեռով տանում ես տպարան և չես հեռանում, մինչև որ վարպետ Վահանը չշարի: Ոչ ոք այս նյութը չպետք է տեսնի: Ոչ ոք չպետք է կարդա: Պա՞րզ է: Դրանից հետո մի նոր հանձնարարություն էլ ունեմ քեզ:

- Համարեք կատարված,- ուրախ ժպտաց տղան: - Իսկ Միհրա՞նը …

Զավենը խոժոռեց հոնքերը:

- Նա տեղեկություն չունի: Նա բյուլետենի մեջ է, նա հիվանդ է, նա մեռած է վերջապես: Եվ իսկապես մեռած է, Մուշեղ, որովհետև այդպես ապրելը կյանք չէ,- ասաց նա:

Բայց Մուշեղը շատ հեռու էր խմբագրի մռայլ տրամադրությունից:

Նա ջահել էր, անփորձ ու անվիշտ և սիրտը հումորով լի էր.

- Է, Զավեն Աշոտիչ, որպես կանոն այդ մեռածները բոլորից երկար են ապրում,- ծիծաղեց նա:

* * *

«Լուսաբաց» թերթի խմբագիր Զավեն Շարաֆյանին թվում էր, թե օրվա տանջալից, մղձավանջային ապրումներից հետո քնել չի կարողանա: Նա գիտեր, որ պառկելու է բաց աչքերով, մտքի մեջ ետ ու առաջ ընկնելով մեկ-մեկ հիշելու է տագնապով, անհանգստությամբ լի րոպեները, սկսած այն պահից, երբ վարպետ Վահանը, քթի տակ հին-հին երգեր դնդնալով, բիզը ձեռքին կապում էր էջը, մինչև այն վայրկյանը, երբ Մուշեղ Օթարյանը հարբած խնդմնդալով և օրորվելով երկար ոտքերի վրա, նրա առջև սեղանին փռեց ներկի սուր հոտ արձակող «Լուսաբացի» թարմ համարը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զավենն այդ ժամանակ ձեռքն առավ թերթը և վերջին անգամ անհանգստությամբ դռան կողմը նայելով՝ հարյուրերորդ անգամ կարդաց դեղագործի նամակի վերնագիրը «Մինչև ե՞րբ լռենք», հետո մյուս վերնագիրը կարդաց, որի տակ ստորագրել էին Արմեն Զատիկյանը և Պարույր Պետրոսյանը՝ «Եկեք արմատը փնտրենք»: Թերթի նախապատրաստության և տպագրության այդ ընթացքում նրա հայացքը չէր կտրվում տպարանի փայտե, մրոտ դռնից: Անընդհատ սպասում էր, թե հիմա ուր որ է կբացվի դուռը և ամռան այս տապին սև կոստյումով և փողկապ կապած մի հրահանգիչ կասի. «Ընկեր Շարաֆյան, ընկեր Բադալյանը թերթի էջերն է ուզում»: Այդ սպասումն այնքան տառապալից էր, որ կծկվում, ցավում էր սիրտը: Բայց փառք ամենակալին՝ մրոտ դուռը չբացվեց:

Ահա թե ինչու Զավեն Շարաֆյանը համոզված էր, որ քնել չի կարողանա: Այդ պատճառով էլ առանց հանվելու պառկեց անկողնու վրա ու… քնեց խոր, աներազ քնով մինչև առավոտ:

Իսկ առավոտյան առույգ ու թարմացած, թեև բնականաբար սիրտը անհանգստությամբ լի, առանց Տիգրանին սպասելու շտապեց խմբագրություն:

Որպես կանոն, թերթի լույս ընծայման օրը խմբագրության աշխատողները ուշ էին գալիս աշխատանքի: Այնպես որ Զավենն ամենևին չզարմացավ, տեսնելով, որ խմբագրությունում ոչ ոք չկա: Նա իր առանձնասենյակը մտավ բաց թողնելով դուռը, գնաց բացեց նաև լուսամուտը, նստեց իր աթոռին, սեղանին դրեց «Լուսաբացի» համարը և հենց առաջին էջում, վերևում կարդաց՝ «Մինչև ե՞րբ լռենք»: Տառերը սև ու խոշոր էին: Խոշոր էր նաև հարցականը:

Հիմա ուր որ է կհնչի հեռախոսի զանգը: Սա այն դեպքը չէ, որ Գառնիկ Բադալյանը լռի կամ ձևացնի, թե դա առանձնապես իրեն չի հետաքրքրում: Այդ խոշոր ու սև հարցականը չափազանց ուղղակի է տրված: Հարցը բժշկական գիտությունների դոկտոր Գասպար Տոնյանի անունով տվել է խմբագրությունը, իսկ քիմիական կոմբինատի ղեկավարությունը, կուսակցության քաղաքային կոմիտեն և անձամբ ընկեր Բադալյանը պատասխանը պետք է ժողովրդին տան: Ոչ թե, կամ ոչ միայն խմբագրությանը, այլև քաղաքի ողջ բնակչությանը, բոլորին՝ մեծից փոքր: Որովհետև նժարի վրա է դրված մարդկանց կյանքը:

Իհարկե, կզարմանա ու կվրդովվի ընկեր Բադալյանը: Իհարկե, իրար կխառնվեն Լենդրոշ Ջանյանը և նրա բարձրագույն ղեկավարները ՍՍՀՄ քիմիական արդյունաբերության մինիստրությունում: Իհարկե, հանրապետության առողջապահության մինիստրությունը՝ սանիտարական իր ողջ անձնակազմով, զայրույթի ճիչ կարձակի: Իհարկե պետպլանում, Մինիստրների խորհրդի, Կենտկոմի արդյունաբերության բաժիններում խուճապ կառաջանա, թե ոնց պիտի այս հարցի տակից դուրս գան:

Բայց քարը չէ՞ որ հենց դրա համար էլ նետված է…

Թող մտածեն, թող իրար խառնվեն, թող ելք փնտրեն… Եվ թող ընդհանրապես նախքան հանուն անձնական փառասիրության, շքանշանների, կոչումների կամ մեկօրյա կանխիկ օգուտի՝ գործարաններ ու էլեկտրակայաններ կառուցելը, նախքան Սևանի ջրի մակարդակն իջեցնելու հրեշավոր որոշումը կայացնելը, նախքան միլիոնավոր տարիներ բնության գծած քարտեզն ու գետերի հունը փսխելը, թող կանգ առնեն, շունչ քաշեն, ինչպես ժողովուրդն է ասում՝ խելքներին զոռ տան, թե ինչպիսին է լինելու արդյունքը, թե կախարդական սափորից

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

արձակված գիտատեխնիկական հեղափոխություն կոչվող ջինը բարի՞ է լինելու, թե կործանարար մարդկության և աշխարհի համար:

Հեռախոսի զանգն ասես ամպրոպի որոտ լիներ: Սկսվեց, սրտի տրոփյունը զգալով, լսափողը վերցրեց խմբագիրը: Հերն էլ անիծած: Ինչ ուզում է թող լինի:

- Լսում եմ:

- Լսիր,տո բա դու ամոթ չունե՞ս,- նրա ականջին հնչեց տպարանի դիրեկտոր Գարեգին Չալյանի ձայնը: - Ես էլ ասեմ, թե էս ինչ է պատահել, որ տեր խմբագիրը աշխատում է, իսկ իր բաժնի վարիչին թույլ է տվել, որպեսզի իմ կաբինետում ինձ հետ խմի: Երևի շիշն էլ դու էիր թևի տակ դրել, հա՞: Էդ լակոտն էլ մի էնպիսի դերասանություն էր անում, էնպիսի խոսքեր էր ասում թե, ընկեր Չալյան, երբեք, ոչ մեկի հետ ինձ այնքան հետաքրքիր չի եղել զրուցելը, որքան ձեզ հետ: Ես դրա ականջները կպոկեմ: Ինքն էլ հարբեց, բայց ինձ էլ հարբեցրեց շան որդին…

Զավենը չկարողացավ զսպել ծիծաղը:

- Կծիծաղես, բա ի՞նչ: Քիչ առաջ որ թերթը տեսա, նոր հասկացա, թե ինչն էր ձեր խմբագրության չլսված-չեղած առատաձեռնության պատճառը: Ուրեմն ինձ զբաղեցնում էիք, որ թերթը չկարդամ, հա՞: Վախենում էիք, որ խանգարեմ, հա՞: Տո, եթե իմանայի, որ դու էսպիսի բան ես տպում, դուռը կփակեի ու դռանն էլ պահակ կկանգնեի անձամբ: Ես քո ցավը տանեմ, Զավեն…

Զավենը հուզվեց և ամաչեց.

- Ի՞նչ անեմ, Գարեգին Սարիբեկովիչ, վանեցիները բավականին խելոք խոսքեր ունեն զգուշության մասին:

- Չեմ նեղանում, լավ ես արել: Էդպիսի գործի համար ամեն ինչ կարելի էր անել:

- Դե որ չես նեղանում, մի հարց տամ, Գարեգին Սարիբեկովիչ,- անցած մի զրույցը հիշելով ասաց խմբագիրը: - Հո շատ ջրիկ չէ՞ր: Տպարանի առաստաղից չէ՞ր կաթկթում: Քվի՞թ…

Գարեգին Չալյանը ծիծաղեց անչար ու կախեց լսափողը:

Լսափողը ցած դրեց նաև Զավեն Շարաֆյանը և անմիջապես վերցրեց նորից:

- Լսում եմ:

- Բարի լույս, շնորհավորում եմ, եղբայր,- նրա ականջին ասես շշնջաց Արմեն Զատիկյանը: - Փառահեղ նյութ է ստացվել: Լսիր, մեքենագրածն ու ձեռագիրը հեչ: Որ թերթում տպած ես տեսնում, շատ ավելի ազդեցիկ է երևում: Ոնց որ որոշում լինի:

- Ճիշտ է,- ասաց խմբագիրը,- ես էլ եմ նկատել, Արմեն:

- Դեռ ձայն-ձուն չկա՞:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Չէ, սպասում եմ:

- Հո որոշ չափով անհարմար չես զգում, որ հանդես ես եկել Մկրտիչ Զուլոյանի և մեր քաղաքի ամենա-ամենա բարերարի դեմ:

- Մեծ հաշվով՝ չէ: Բայց մի քիչ կա, անկյունում:

- Հանիր:

- Ինչը՞ հանեմ, Արմեն,- տարակուսեց խմբագիրը, հետն էլ մտածելով, թե գյուտարարը հարբած հո չէ:

- Անհարմարության զգացումդ հանիր- անկյունից: Նա արժանի չէ:

- Ինչո՞ւ: Ի՞նչ իմաստով:

- Այն օրը որ խոսում էինք- Որ դու ասացիր, թե բյուրոյի ժամանակ նրան շտապ Կենտկոմ են կանչել… Չե՞ս հիշում. ես հարցրեցի, թե ե՞րբ է եղել բյուրոն: Դու էլ ասացիր ուրբաթ օրը: Հիշո՞ւմ ես…

- Հիշում եմ, իհարկե, բյուրոն միշտ ուրբաթ օրերին է լինում:

- Դե ուրեմն իմացիր, որ նրա համար այդ օրը ոչ մի Կենտկոմ ու Երևան գոյություն չեն ունեցել, իմ սիրելի ընկեր:

- Ինչպե՞ս թե-- ապշեց Զավենը:

- Այդ օրը նա մեր հարևան աղրբեջանական շրջանի «Չայխանա» կոչվող ռեստորանում քեֆ էր անում տեղի շրջկոմի առաջին քարտուղարի և իր բարեկամների հետ: Ըստ որում նշանավոր մի աշուղ էին հրավիրել, որը սազը ձեռքին հատուկ երգում էր նրա համար: Մեր քաղկոմի առաջին քարտուղարը փաշայի նման թիկնել էր փափուկ բարձերին, իսկ աշուղը փափախով ու ազգային խայտաբղետ շորերով կանգնել էր նրա առաջ, հանպատրաստից խոսքերով նրա գովքն էր երգում ու փառաբանում նրա խելքը, իմաստությունը, ուժը, բարձր պաշտոնը և կուսակցական սկզբունքայնությունը- Դու գիտես, չէ, որ ես թուրքերեն լավ եմ հասկանում:

- Լսիր, հո հարբած չես, Արմեն: Ճի՞շտ ես ասում: Հո չե՞ս խաբում: Քո՞ աչքով ես տեսել:

- Իմ սեփական աչքերով, բարեկամս, որովհետև ես էլ կողքի սրահում էի քեֆ անում, իհարկե՝ առանց աշուղի և պաշտոնական փառաբանության: Մենք էլ իրար էինք գովում:

- Արմեն…

- Գիտե՞ս ինչու այն օրը ասացի քեզ: Որ չպղտորեմ հոգիդ: Որ դու հանկարծ ինչ-որ տեղ, ինչ-որ չափով չդատապարտես քեզ, թե նաև անձնական վրիժառությունն է քեզ ստիպել տպագրելու այդ նյութերը: Իսկ հիմա, թերթի լույս տեսնելուց հետո՝ նվիրում եմ, խնդրեմ: Որ քեզ զուր տեղը շատ չտանջես: Խելոք եմ, չէ՞, խոստովանիր, որ խելոք եմ և բացառիկ նրբանկատ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Աշուղական գովքեր դու էլ ես սովորել,- իրեն ստիպելով՝ ծիծաղեց Զավենը:

Բայց մինչև հոգու խորքը դառնացած էր:

Այդ ի՞նչ ես անում, Գառնիկ Վարդանիչ: Առանց այդ էլ կասկածում էի, իսկ հիմա ինչպե՞ս չհավատամ, որ այդ օրը ամեն ինչ սարքովի է եղել: Ծայրից ծայր: Որ Գրետան զիջել է քեզ իր սիրեցյալներին, իսկ դու էլ Գրետային՝ ինձ, որ վրիժառությունը մասամբ բավարարի և պրոֆիլակտիկայի համար տրորի քիթս: Հա, բայց ինչի՞ համար: Ինչի՞ համար- Ի վերջո, շատ հավանական է, որ այս բոլորը իմ հիվանդ երևակայության արդյունքն է: Որ պատահական զուգադիպություններ են եղել: Որ դու ամենասովորական մարդու պես խաբել ես, թե մի տեղ ես գնում, բայց գնացել բոլորովին ուրիշ մի տեղ, առանց ստոր դրդապատճառների: Բայց ես ի՞նչ իմանամ, ի՞նչ անեմ, որ կասկածում եմ, որ ինձ խաբված եմ զգում, որ թունավորված եմ:

Նա ակամա ցնցվեց՝ լսելով հեռախոսի զանգը:

- Խմբագրությունն է:

ՉԷ, դարձյալ Բադալյանը չէ: Հիմա էլ Պարույր Պետրոսյանն է զանգում:

- Զավեն ջան, շնորհավորում եմ քեզ էլ, մեզ էլ: Արմեն Զատիկյանի արհեստանոցից եմ խոսում: Ամաչել է քեզ մի բան ասել:

- Արմենը- ամաչե՞լ է-Ինչ ասես կլսենք:

- Ամաչել է, Զավեն ջան: Մեկ է, այս օրը մենք հենց այնպես անցկացնել չենք կարող: Այս օրը պետք է նշվի: Հիմա տես ինչ եմ ասում: Մենք մի փոքրիկ գործ էինք արել գարեջրի արտադրամասի համար, նրանք էլ իբրև երախտագիտության նշան, հատուկ պատրաստված քսան լիտրանոց մի բալոն գարեջուր են նվիրում մեզ: Որպեսզի սառը-սառը տեղ հասցնենք, Տիգրանին պետք է ասես, որ ժամը հինգին գարեջրի արտադրամասի մոտ լինի: Ժամը հինգը հաՐմար է, չէ՞, ձեր տանը հավաքվելու համար:

- Մեր տա՞նը,- գարեջրի սառնությունը քիմքին զգալով, հարցրեց խմբագիրը: - Մեր տանն ուտելու բան չկա:

- Ամեն ինչ կլինի: Բանալին էլի դռան տակ է, չէ՞:

- Բա ի՞նչ է:

- Ուրեմն որտեղ էլ լինես, ժամը հինգին տանը եղիր: Եղա՞վ:

Զավեն Շարաֆյանը օրորեց գլուխը: Ապշելու բան է, սրանք բոլորովին չեն պատկերացնում, թե ինչեր կարող են լինել: Կյանքում առաջին անգամ թերթում կարդում են իրենց ստորագրությունները, այն էլ այդպիսի նյութի, այն ո՞վ ասաց, հա, Մուշեղն էր, ատոմային ռումբի տակ ու արդեն երջանիկ են:

Ուղիղ կապի հեռախոսը զնգաց: Կարծես թե բոլորովին ուրիշ տեսակ: Ահա…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Ընկեր Շարաֆյան, կարո՞ղ ես հիմա ինձ մոտ գալ:

- Կարող եմ, Գառնիկ Վարդանիչ:

- Դե ուրեմն՝ եկ:

Ու ցած դրեց լսափողը:

Խմբագիրը բարձրացավ աթոռից, թիկնակից վերցրեց բարակ, մոխրագույն պիջակը՝ հագավ ու դուրս եկավ շենքից: Նա չէր ուզում արագ քայլել, բայց չգիտես ինչու քայլերն ակամա արագանում էին, և նա տհաճություն էր զգում դրանից: Կանգ առավ, իբր հանգիստ, անփութորեն շուրջը նայեց և- տեսավ Մկրտիչ Զուլոյանին, որ ձեռքերը պարզած նրան էր մոտենում:

- Մկրտի՞չ, էս որտեղից, ախպեր ջան:

- Արձակուրդ եմ եկել,- գրկեց, ընկերոջ մեջքին թփթփացրեց Մկրտիչը: - Այս ո՞ւր ես գնում, ես քեզ մոտ էի գալիս:

- Կարդացի՞ր, - հարցրեց Զավենը:

- Ինչը՞:

- Այս օրվա մեր համարը:

- ՉԷ, իսկ ի՞նչ կա:

- Բադալյանը կանչեց ինձ: Մկրտիչ ջան, մտիր իմ սենյակը, թերթը սեղանին դրած է, կարդա, մինչև ես գամ: Իմ կարծիքով, երկար չի տևի:

- Կսպասեմ ինչքան էլ տևի- Շատ էի կարոտել քեզ, տղաս,- խոպոտ քնքշությամբ ասաց նախկին խմբագիրը:

* * *

Երբ անցնում էր քաղաքային կոմիտեի շենքի միջանցքով, Զավեն Շարաֆյանին թվում էր, թե ինքը կախարդված աշխարհի մեջ է քայլում: Ով տեսնում էր՝ զարմացած, ակնապիշ նրան էր նայում, կանգ էր առնում ու արձանանում էր: Հենց այդպես: Նկատում էին, կանգ էին առնում ու արձանանում նույն դիրքով: Բայց նա ժամանակ չուներ վայելելու ասես բեմադրված երգիծական այդ պատկերները, և քաղկոմի առաջին քարտուղարի առանձնասենյակը մտավ:

Գառնիկ Բադալյանը պատուհանից դուրս էր նայում ձեռքը Լենինի բրոնզե կիսանդրու ուսին դրած: Նա գլուխը խմբագրին դարձրեց ու ասաց

- Նստիր:

Ու ինքը դանդաղ քայլերով գրավեց իր տեղը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մի պահ լռություն տիրեց: Եվ բավականին երկարեց այդ պահը:

- Եվ ի՞նչ ես մտադիր անել սրանից հետո,- կամացուկ հարցրեց Բադալյանը: - Ինչպե՞ս ես պատկերացնում մեր համատեղ աշխատանքը: Քո կարծիքով, ինչպիսի՞ն կարող են լինել մեր հետագա փոխհարաբերությունները: Կարո՞ղ ես պատասխանել այս հարցերին:

- Կարող եմ,- ասաց Զավենը՝ ուրախանալով իր հանգստությունից:

Նա պիջակի ծոցագրպանից քառածալ մի թուղթ հանեց, բացեց և դրեց գրասեղանին, քարտուղարի առաջ:

Գառնիկ Բադալյանը դրեց ակնոցը և կարդաց: Իսկ հետո հեգնորեն սեղմեց շրթունքները, և նրա բեղիկները ավելի նմանվեցին Հիտլերի բեղերին:

- Փախչո՞ւմ ես:

- Շրջանում աշխատելու իմ ժամկետը վաղուց լրացել է, Գառնիկ Վարդանիչ:

- Եվ քո կարծիքով մենք թույլ կտանք, որ այդ դեմագոգիկ, խուճապարար, դավադիր կազմակերպված պասկվիլից հետո դու հանգիստ հեռանա՞ս քաղաքից, առանց արժանի պատիժ կրելու:

Զավենը ժպտաց.

- Դուք խելոք մարդ եք, Գառնիկ Վարդանիչ, և համոզված եմ, որ նման կոպիտ սխալ չեք կատարի:

- Ինչո՞ւ… Ինչը՞ կխանգարի ինձ:

- Դիվանագիտությունը: Դուք չեք հանդուրժի, որ թեկուզ քաղաքի մասշտաբով ես ազգային հերոս հռչակվեմ:

Բադալյանը տարօրինակ մի հայացքով, ասես հարգանքով նայեց թերթի խմբագրին:

- Հերոս- Իսկ մի՞թե հերոսները փախչում են: Դրանից հետո ո՞վ կհարգի քեզ:

- Կհարգեն, եթե իմանան, որ ես փախչում եմ ձեռքերս ազատելու համար,- ասաց խմբագիրը: - Ես իսկապես ձեռքերս ազատելու համար եմ հեռանում, ընկեր Բադալյան: - Ճշմարտությունը դա է:

- Դրանով ի՞նչ ես ուզում ասել, ընկեր Շարաֆյան:

- Ուզում եմ ասել, ընկեր Բադալյան, որ դուք ձեր բացառիկ խելքով, փորձով ու գիտությամբ, որոնք ես բարձր եմ գնահատում, հրապարակային մեր հարցադրումից հետո, ստեղծված իրադրության մեջ, ինձ հիմա չեք կարող պատժել և չեք պատժի: Որովհետև ձեր դեմ կհանեք ամբողջ քաղաքը: Որովհետև ձեզ սիրող ու հարգող աշխատավորները հիասթափված կասեն նա ի՞նչ ղեկավար է, եթե թույլ է տալիս, որ կոմբինատը թունավորի մեզ ու մեր երեխաներին և

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

պատժում է նրանց, ովքեր ահազանգ են հնչեցնում: Այնպես որ ձեր սպառնալիքը ինձ բոլորովին չի անհանգստացնում, Գառնիկ Վարդանիչ: Ինձ անհանգստացնում է ուրիշ բան: Ախր ես էլ եմ ձեր կողքին սովորել, խելոքացել, փորձ ձեռք բերել: Դուք ինձ հիմա այս առիթով ձեռք չեք տա, իսկ վաղը, մյուս օրը՝ հարմար-հարմար պատրվակներով, որոնց հնարավորությունը թերթը միշտ տալիս է, կվարկաբեկեք ինձ: Նկատողություն արդեն տվել եք, կտաք նաև խիստը, հետո՝ վերջինը: Եվ ես այստեղից կհեռանամ ոչ թե իմ դիմումի, այլ ձեր որոշման համաձայն: Հրամանով:

Գառնիկ Բադալյանը քմծիծաղ տվեց:

- Եվ խոհեմաբար վճռեցիր փախչել համաձայն քո դիմումի:

- Ոչ, կարևորը դա չէ- Կամ ավելի ճիշտ՝ դա չէ ամենակարևորը,- ասաց խմբագիրը: - Ամենակարևորն այն է, Գառնիկ Վարդանիչ, որ մենք իմացանք, թե էկոլոգիական մաքրության տեսակետից ինչպիսին է իրական վիճակը քիմիական կոմբինատում և թե ինչ սարսափելի վտանգ է սպառնում մարդկանց: Ու զարմանալով այդ հարցում հանդես բերած ձեր անբացատրելի անտարբերության և անհոգության վրա, որոշեցինք խառնել ամեն ինչ, SOS կանչել, կոչնակ հնչեցնել, քանի դեռ ուշ չէ: Եվ վճռել ենք, ինչ գնով էլ լինի՝ հասարակական լայն կարծիք ստեղծել, աղմուկ բարձրացնել, հասնել այն բանին, որ կանգնեցվի քիմիական կոմբինատը և ուղղվի այն սարսափելի սխալը, որ թույլ եք ավել դուք՝ աչքաթող անելով տարրալուծող կայանքի կառուցումը և բոլորովին չմտածելով հետագայում կոմբինատի թափոններն ու ծուխը գոնե մասամբ մաքրելու, զտելու մասին:

- Իսկ դու գիտե՞ս, թե ինչ արժեն այդ սարքավորումները:

- Իմ կարծիքով, մինչև հիմա կոմբինատի տված օգուտը մի հատիկ երեխայի կյանք չարժե:

- Դատարկ սենտիմենտալություն է,- շրթունքները սեղմեց քարտուղարը: - Տեխնիկան միշտ էլ իր հետ զոհեր է բերում: Ինչպիսին էլ լինի այդ տեխնիկան: Ավտոմեքենայի տված վնասները քի՞չ են:

- Համոզված չեմ թե նույնը կասեիք, եթե մեռնողը ձեր երեխան լիներ:

- Իսկ իմ երեխաները Ավստրալիայո՞ւմ են ապրում, ինչ է:

- Ավելի վատ ձեզ համար, Գառնիկ Վարդանիչ: Ուրեմն դուք ձեր երեխաներին էլ չեք խղճում:

Առաջին քարտուղարը ընդոստ բարձրացավ տեղից, աթոռը ոտքով ետ հրելով.

- Բավական է,- ասաց նա: - Վերջ տուր այն սովորությանը, երբ խոսում ես առանց իմանալու: Թե կոմբինատում, թե այստեղ ես զբաղվել եմ քիմիական կոմբինատի տարրալուծող կայանքի և զտիչների հարցով: Բայց հենց լսում են կոմբինատը կանգնեցնելու մասին, սկսվում են հազարումի տեսակ տնտեսական ու քաղաքական սանկցիաները: Քիչ է մնում սաբոտաժի մեջ մեղադրեն: Եվ ես նրանց հասկանում եմ: Կառավարությունը փող չունի, նոր է ոտքի կանգնում պատերազմից, արդյունաբերության բոլոր ճյուղերը ընդհուպ մինչև ռազմականը, մի շղթայով կապված են իրար: Պոկիր մի օղակը և ողջ շղթան ցրիվ կգա: Ուրեմն համբերել է

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

պետք: Այս վիճակի մեջ ինչպե՞ս կանգնեցնես քիմիական կոմբինատը- Խոսելը հեշտ է- Քո դժբախտությունն այն է, որ պետականորեն չես մտածում, չես մտածում պետության շահերի մասին…

Զավեն Շարաֆյանը հեգնանքով ժպտաց.

- Մի՞թե կարող է այնպիսի պետություն լինել, որ հանուն իր հարստության դժբախտացնի իր ժողովրդին: Ես չեմ հավատում: Ուրեմն մեր վերևներում ամեն ինչ չէ, որ գիտեն…

- Եվ դու պատրաստվում ես տեղյա՞կ պահել նրանց:

- Ինչպես տեսնում եք, սկսել եմ, Գառնիկ Վարդանիչ: Բայց քանի որ համոզված եմ, թե չեք թողնելու շարունակել այդ գործը, դրա համար էլ ուզում եմ դուրս գալ աշխատանքից: Եվ ուրեմն ոչ թե փախչում, այլ ձեռքերս եմ ազատում: Հավատացնում եմ ձեզ, որ հիվանդանոցներում ձեր կոմբինատի թույնից մեռնող երեխաներին տեսնելուց հետո ես որևէ այլ նպատակ չունեմ, քան հասնել քիմկոմբինատի փակմանը: Ինչ էլ լինի: Թող վերամբարձ հնչի, բայց դա ես համարում եմ իմ պատվի ու կյանքի գործը: Իսկ դրան ամենից արագ Երևանում կարելի է հասնել, կամ Մոսկվայում: Այստեղից հեռու: Կներեք, իհարկե- Բայց գոնե ես ուրիշ ճանապարհ չեմ տեսնում:

- Եվ դու կարծում ես, թե Երևանում դա քեզ կհաջողվի՞ …

- Կփորձեմ: Կանեմ ինչ կարող եմ, Գառնիկ Վարդանիչ:

Գառնիկ Բադալյանը սովորության համաձայն ձեռքերը թիկունքին դրած սկսեց քայլել ընդարձակ առանձնասենյակում, հետո կանգ առավ հեռվում, պատուհանի մոտ ու վշտացած օրորեց գլուխը:

- Զավեն Շարաֆյան… Զավեն Շարաֆյան- Իսկ ես ինչ հույսեր էի կապում քեզ հետ: Եթե ներել է, դու էլ ինձ ներիր, բայց ինչեր միայն չարեցի, որպեսզի հարթեմ քո ճանապարհը, այդ ճանապարհից հեռացնեմ քո հակառակորդներին և անհամակրողներին, պայմաններ ստեղծեմ, որ դու մարդավարի ապրես, վեր կանգնես կենցաղային մանրիկ, նսեմացնող հոգսերից և զբաղվես միայն քո ժուռնալիստական տաղանդի զարգացմամբ- Բայց ի՞նչ իմանայի, որ առաջին իսկ հնարավորության դեպքում այդ տաղանդը դու իմ դեմ ես օգտագործելու: Ո՞ւմ մտքով կանցներ, Զավեն:

Զավեն Շարաֆյանը հանկարծ շատ վախեցավ, որ նորից Բադալյանի տրամադրությանն է ենթարկվելու և շտապով ասաց.

- Դուք ինձ սենտիմենտալ անվանեցիք, չեմ հրաժարվում: Եվ հենց նույն սենտիմենտալությամբ էլ ազնվորեն ասում եմ ձեզ, որ միշտ գնահատել եմ ձեզ և այն ամեն բարին, որ կատարել եք իմ անձի նկատմամբ: Ու թեև աշխատել եմ իմ ուժերի ու խղճի ներածի չափով պատասխանել ձեզ, բայց հիմա ավելին կասեմ: Հավատացեք, որ հիմա էլ, անկախ այս պատմությունից, եթե հարկ լինի, ամեն ինչ կանեմ ձեր ընտանիքի ու ձեզ համար: Բայց այդ նյութերը չտպագրել չէի կարող: Դա իմ ուժերից վեր էր: Դրանից հետո ապրել չարժեր: Երդվել

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

եմ՝ մինչև քիմիական կոմբինատը փակված չտեսնեմ… սիրտս չի հանգստանա, Գառնիկ Վարդանիչ:

- Խոսքեր, խոսքեր, խոսքեր… ասել է Շեքսպիրը:

Զավենը տարածեց ձեռքերը:

- Ինչ կարող ենք անել: Ժուռնալիստի ունեցածն էլ դա է, Գառնիկ Վարդանիչ: Բայց դուք կհամոզվեք, որ այս պատմությունը միայն խոսքերով չի սահմանափակվի: Չէ՞ որ ես անընդհատ զբաղվելու եմ կոմբինատի հարցով: Իսկ եթե այդպես է, ուրեմն մենք չենք կարող երբևէ նորից չհանդիպել:

Գառնիկ Բադալյանը մոտեցավ գրասեղանին, դարչնագույն տուփից կրկնակի զտիչով մի նոր սիգարետ վառեց, ներս քաշեց ծուխը ու կանգնեց լրագրողի դեմ-դիմաց:

- Շատ ավելի շուտ, քան դու պատկերացնում, ես, ընկեր Շարաֆյան,- ասաց նա, և նրա պողպատագույն աչքերը մգացան: - Շատ ավելի շուտ: Որովհետև, ճիշտ է, ոչ համաձայն իմ դիմումի, բայց ինձ Երևան են տեղափոխում և ուզես թե չուզես դու իմ տեսադաշտում ես մնալու:

Հարվածն, իհարկե, չափազանց անսպասելի էր, բայց խմբագիրը արդեն սովորել էր թաքցնել իր վիճակը և անվրդով ասաց,

- Դե ինչ, ուրեմն կհանդիպենք:

Բայց որովհետև այնուամենայնիվ իր Աշոտ հոր որդին էր մնում, չդիմացավ, շրջվեց դռան մոտ ու հարցրեց,

- Այդ նշանակման մասին բյուրոյի օ՞րն իմացաք, «Չայխանայում», Գառնիկ Վարդանիչ:

- Ինչ չայխանա,- անմիջապես չկռահեց Բադալյանը:

- Օ, ներեցեք,- ժպտաց Զավեն Շարաֆյանը: - Ուզում էի ասել՝ Կենտկոմո՞ւմ…

Ու նոր միայն դուրս եկավ:

* * *

- Հը,- տեղից անհամբեր բարձրացավ Մկրտիչ Զուլոյանը, երբ Զավենը առանձնասենյակ մտավ:

Զավենը մանրամասն, գրեթե բառ առ բառ ներկայացրեց իր զրույցը քաղկոմի առաջին քարտուղարի հետ:

Մկրտիչ Զուլոյանը հառաչեց ու անսպասելիորեն խոր գլուխ տվեց խմբագրին:

- Ի՞նչ ես անում, Մկրտիչ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Խոնարհվում եմ քո առաջ, - խոխոռաց Մկրտիչ Զուլոյանը: - Խոնարհվում եմ Գասպար Տոնյանի առաջ, Պարույրի առաջ ու մեր խենթ Արմեն Զատիկյանի առաջ: Ես դեռ չգիտեմ, թե սրանից ինչ դուրս կգա, բայց կարևորն այն է, որ ժողովրդի աչքերը բացեցիք: Հավատա ինձ, մնացածը ինչ էլ պատահի ձեզ հետ՝ դատարկ բան է: Ափսոս միայն, որ ես շատ ուշ հասկացա: Բայց դե երևի ամեն մարդ հատուկ միայն իրեն վերապահված դերն ունի կատարելու և իր կարողությունների առաստաղը:

- Չեղավ,- ծիծաղեց Զավենը,- փախչել չկա, Մկրտիչ եղբայր: Դու ի՞նչ գիտես, թե որն է քո կարողությունների առաստաղը: Եվ ո՞վ գիտե: Մենք դեռ ի՞նչ ենք արել: Ընդամենը զանգ ենք խփել: Գործը նոր է սկսվելու: Եթե մենք չշարժվենք տեղից, մեր հոդվածը նույնիսկ վերևներին չի հասնի: Ո՞վ է ինչ-որ փոքրիկ քաղաքի թերթն ընթերցողը: Մինչև որ չդնենք նրա սեղանին ու չստիպենք կարդալ: Մինչև որ այդ մասին չխոսենք հանրապետական ու միութենական թերթերի էջերում և չաղաղակենք ռադիոյով ու հեռուստատեսությամբ:

- Դժվար է,- ծխի մեջ կորավ Զուլոյանը: - Ո՞վ կթողնի…

- Նախ՝ Մկրտիչ ջան, ժամանակներն իրոք որ շատ են փոխվել: Հենց միայն այն փաստը, որ մեր նյութերը Գլավլիտով անցան, դրա ապացույցը չէ՞: Գործ պիտի անել, գործ: Մեզ ո՞վ թողեց: Եթե թույլտվություն չխնդրես, թույլտվություն տալու հարց չի առաջանա: Դու հո ինձանից լավ գիտես դա: Երբևէ եղե՞լ է, որ վերադասին հարցնես, թե ինչ եք կարծում, կարելի է տպագրել այսինչ նյութը, նա էլ ասի՝ կարելի է: Երբեք: Հենց հարցնում ես, նա անմիջապես մտածում է, թե տակը մի կասկածելի բան կա, եթե հարցնում են և մերժում է տեղնուտեղը: Այդպես ապահով է:

- Ճիշտ է,- գլխով արեց Զուլոյանը: - Ինչ ճիշտ է, ճիշտ է- Հազար անգամ փորձել եմ:

- Մկրտիչ,- ասաց Զավենը,- մի բան եմ մտածել և միայն դու կարող ես օգնել ինձ:

- Ասա:

- Ուզում եմ, որ Երևանում և Միության մեջ ապրող անվանի ու նշանավոր մարդկանց ցուցակը կազմես, ովքեր մեր այս քաղաքում են ծնվել: Եվ առաջին հերթին գրես քո անունը:

- Հասկացա,- ծիծաղեց Մկրտիչը:

- Ի վերջո նրանց ծնողները, քույր-եղբայրները, հարազատները այստեղ են ապրում և կարծում եմ, որ գոնե հույս ունեն, թե իրենց ծերությունը ևս այստեղ են անցկացնելու: Երբ նրանք իմանան, թե ինչ սոսկալի վտանգի մեջ է իրենց ծննդավայրը, անհնարին է, որ չանեն ձեռքերից եկած ամեն ինչ քիմիական կոմբինատը վնասազերծելու համար: Իսկ դու գիտես, թե դա ինչ ուժ կլինի,,.

- Դու հանճարեղ մարդ ես, եղբայր,- գոռգոռաց Մկրտիչը: - Համոզված եղիր, որ ամեն ինչ կանեմ… Եվ բոլորը կանեն-- Նա հավանաբար մտքի մեջ հիշեց այդ նշանավոր մարդկանցից մի քանիսին, որովհետև ավելացրեց ոչ նախկին վստահությամբ: - Այսինքն՝ մեծ մասը կանի…

Հետո լռեց, մտքերի մեջ ընկավ, ծխեց ու հարցրեց,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Իսկ դո՞ւ ինչ ես մտադիր անել…

- Անկախ նրանից՝ ձեր թերթում կամ «Կոմունիստում», կկարողանամ հոդված անցկացնել, թե չէ, ուզում եմ գնալ Մոսկվա: Ես քեզ ասել եմ, չէ՞, որ իմ դասախոսներից մեկը «Պրավդայում» բաժնի վարիչ է: Այ, նա իսկապես հանճարեղ մարդ է, և ինձ թվում է, թե մի բան կանի- Գուցե տեսություն տպագրեն, գուցե մեր էջը՝ «Կոլեկտիվ թղթակից» ստորագրությամբ: Տեսնենք:

Մկրտիչ Զուլոյանը թերահավատ ժպտաց.

- Ես գիտեմ, որ մինչև չվառես կամ չվառվես, այլևս չես հանգստանա: Հիմա ուրիշ բան եմ հարցնում, ի՞նչ պետք է անես աշխատանքի իմաստով:

- Չգիտեմ,- ասաց Զավենը: - Ես էլ քեզ նման արձակուրդ կվերցնեմ ու մի բան կմտածեմ:

- Դու իհարկե հարյուր տոկոսով իրավացի ես՝ այս պատմության համար Բադալյանը չի համարձակվի ձեռք տալ քեզ: Իսկ եթե ինքը տեղափոխվում է, գուցե թե դու մնա՞ս, Զավեն…

- Չէ,- ասաց Զավենը,- ինչ կարողացա, արեցի: Այստեղ ես այլևս անելիք չունեմ:

Մկրտիչ Զուլոյանը ծխեց ու հազաց.

- Ի՞նչ ասեմ- Գուցե դարձյալ դու ես իրավացի, տղաս- Բաց դռնից երևաց, որ նրանց է մոտենում Մուշեղ Օթարյանը:

- Շատ ներողություն, Զավեն Աշոտիչ, Միհրանը չկա, նյութերն ի՞նչ անենք:

- Հանձնիր Մարոյին,- ասաց խմբագիրը ու անմիջապես ձայն տվեց հեռացող տղային.

- Մուշեղ, մոտ եկ ու ծանոթացիր ընկեր Զուլոյանի հետ:

Մուշեղ Օթարյանը լայն ժպտաց.

- Շատ ուրախ եմ, Զավեն Աշոտիչը այնքան լավ բաներ է պատմել ձեր մասին և ոչ միայն պատմել՝ ստիպել է կարդալ ձեր բոլոր ֆելիետոններն ու քննադատական հոդվածները և վերլուծել: Փաստորեն ես ձեր առարկայից քննություն եմ հանձնել ընկեր Շարաֆյանին:

Մկրտիչ Զուլոյանը հազաց ու տարիքին անհամապատասխան կարմրեց միանգամից:

- Ախ, Զավեն, Զավեն- Ուրեմն Մուշեղը քո նախկին տեղո՞ւմ է աշխատում:

- Ինձ թվում է, թե նա շուտով կաշխատի հենց իմ նոր տեղում,- ծիծաղեց Շարաֆյանը: - Կրնկակոխ հետապնդում է:

- Ուրեմն պատմությունը կրկնվո՞ւմ է:

- Դժվար թե,- ասաց Մուշեղը,- ես կուսակցական չեմ: Իսկ որքան ինձ հայտնի է, անկուսակցականին խմբագիր չեն նշանակում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Կդարձնեն,- հավաստիացրեց Զավենը,- թե չէ էլ ինչպե՞ս կարող են անկուսակցականին նկատողություն հայտարարել կամ հեռացնել կուսակցությունից: Թեև-- ավելացրեց նա,- Բադալյանը այդ փորձն էլ ունի:

Մուշեղը ծիծաղելով ու թափահարելով գլուխը՝ հեռացավ:

- Փայլուն տղա է երևում,- մտախոհ ասաց Մկրտիչը,- տեսնես նրա՞ կյանքն ինչպես կդասավորվի- Որ ներս մտավ, ինձ թվաց, թե դու ես ներս մտնում, իսկ ես էլ քո տեղում նստած եմ:

Զավենը բարձրացավ աթոռից:

- Կյանքը շարունակվում է,- հանկարծ առույգ բացականչեց նա: - Իսկ քանի որ շարունակվում է, արի մեր տուն գնանք, Մկրտիչ եղբայր: Օրվա հերոսներն ու զոհերը հիմա մեզ են սպասում:

- Արմենն ու Պարո՞ւյրը,- ուրախացավ Զուլոյանը:

- Ոչ միայն նրանք, այլև կարմրացրած գառնուկն ու սառը գարեջուրը: Ի՞նչ պակաս զոհեր են:

Նրանք ցած իջան ծիծաղելով, և Տիգրանը շտապով բացեց ավտոմեքենայի դռները:

- Ամեն ինչ պատրա՞ստ է, Տիգրան,- հարցրեց Զավենը:

Հավանաբար զոհերի հարցը նախօրոք էր քննարկվել, որովհետև Տիգրանը տխրությամբ օրորեց գլուխն ու քրթմնջաց.

- Զավեն Աշոտիչ, անխիղճ բան եք անում: Զոհերից մեկը սառչում է, մեկը տաքանում, մնացածներն էլ լաց են լինում:

- Գնացինք,- բացականչեց խմբագիրը: - Գնացինք, Տիգրան, Բադալյանի հերն էլ անիծած:

* * *

Հավանաբար ամեն մեկին առանձին-առանձին թվում էր, որ եթե թեկուզ արհեստական, բայց շատ լինի աղմուկն ու ծիծաղը, անհանգստությունը, որ բուն էր դրել նրանց հոգում, կխլանա, կչքվի: Նրանք բարձրաձայն ու երկար կենացներ էին առաջարկում, ուտում և խմում էին մեծ ոգևորությամբ ու չափից ավելի ընդգծված աշխույժով, անկապ-անկապ անեկդոտներ ու հիշողություններ էին պատմում հարևանների ու գործընկերների մասին ու քրքջում էին արցունքոտվելու չափ, առանց իրար նայելու:

- Մեր հարևան Վորոշը…

- Ինչ որո՞շ, Տիգրան:

- Վորոշիլովն, էլի, մենք Վորոշ ենք ասում- երեկ հանդիպեցինք: Տրամադրությունը հո բարձր չէր… Տիգրան, ասում է, ինձնից օրինակ վերցրու, տասնհինգ տարի է ամուսնացած եմ և սիրում եմ նույն կնոջը: 0, Վորոշ քեռի, ուրեմն բախտավոր կին է Ծաղիկ մորաքույրն, էլի,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ասացի ես: Սուս, ձեռքով բերանը փակեց Վորոշիլովը: Սուս, ի՞նչ ես ասում, իմ կին Ծաղիկը չգիտի այդ մասին:

Ծիծաղեցին, իսկ հենց որ պետք է վերջացնեին, դադարից սարսափած Արմեն Զատիկյանը մեջ ընկավ.

- Հարևան ասացիր, Տիգրան, ես էլ մեր հարևանին հիշեցի: Ատամնատեխնիկ է…

- Գիտեմ, գիտեմ, տեսել եմ,- ձայն տվեց Զավենը: - Կիրովաբադցի է…

- Հա, Գանձակից է: Մի օր նրանց տանն էի, ինչ-որ գիրք էր կարդում, մեկ էլ բացականչեց զարմացած՝ «Պույ, Մագդա, ականջ արա, պյանից տյուս ա կյալիս, որ Մարքսը էկոնոմիստ ա ըլալ: «Մեր Սերոժի նմա՞ն»- հարցրեց նրա կին Մագդան: «Չէ, ջանմ,- արհամարհանքով ասաց ատամնատեխնիկը,- մեր Սերոժը ստարշի էկոնոմիստ ա»:

Քրքջացին, ոտքի կանգնեցին ու խմեցին հիմա էլ երգիծանքի, հումորի, երգիծաբանների, ֆելիետոնիստների կենացը հանձինս Մկրտիչ Զուլոյանի և Զավեն Շարաֆյանի: Ցանկացան նրանց բարձր հումոր և բարձր աշխատավարձ:

Եվ հանկարծ անլրջացավ նաև Մկրտիչ Զուլոյանը.

- Սուտ բան է, եղբայր,- ծնոտը շփելով, խռպոտ ձայնով ասաց նա: - Աշխատավարձն ի՞նչ է: Մի բան, որ ամիսը մի անգամ ստանաս, դրանով տո՞ւն կպահվի: Աշխատավարձը մարդու երեսի մազերի պես պետք է լինի: Ամեն առավոտ իրեն-իրեն գա, դու էլ սափրվես ու ծախսես: Սափրվես ու ծախսես:

Որտեղից որտեղ խոսքը գնաց՝ շողոքորթներին ու կեղծավորներին հասավ:

- Առաջին մրցանակը մեր կոմբինատի դիրեկտոր Լենդրոշ Զանյանինն է,- հայտարարեց Պարույր Պետրոսյանը: - Ուրեմն, երբ որ ինքը գլխավոր ինժեներ էր, իսկ դիրեկտորական աթոռին Գառնիկ Բադալյանն էր նստած, այնպես ստացվեց, որ Բադալյանի կույրաղիքի ցավը բռնեց և նրան հիվանդանոց տեղափոխեցին: Վիրաբույժը ձեռքերն էր լվանում, որ գործողությունը սկսի, մեկ էլ Լենդրոշ Զանյանը կանգնեց նրա ու Բադալյանի արանքում: Ու ոնց է խնդրում, ոնց է լաց լինում. «Առաջ՝ ինձ- առաջ իմ կույրաղիքը հանեք, առաջինը ես եմ ուզում զգալ այդ ցավը,ես եմ ուզում Գառնիկ Վարդանիչի ցավը տանել»:

- Ես հաճույքով այդպիսի մարդու բոլոր աղիքներն էլ կհանեի, կույրն էլ, տեսնողն էլ,- ատամները կրճտացրեց Տիգրանը:

Որոշ ժամանակ էլ այդ թեմայով գոռգոռացին՝ նողկանքով ու զայրույթով, ու լռեցին ի վերջո: Եվ հանկարծ հավանաբար ամեն մեկը առանձին-առանձին մտածեց, որ այլևս ուժ չունի հենց այնպես խոսելու և կեղծելու: Վերջին հույսը խմիչքն էր, որն ինքնըստինքյան պարտավոր էր բարձրացնել նրանց տրամադրությունը: Բայց խմիչքն էլ չէր օգնում: Որքան խմում, այնքան լրջանում ու դառնությամբ էին լցվում:

- Զավեն,- երևի իրենից անկախ հարցրեց Պարույրը,- որ չգնաս, ի՞նչ կլինի- Մի գնա, էլի…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Արմեն Զատիկյանը փրկարար աղմուկը պահպանելու հավանաբար վերջին փորձն արեց,

- Իրր ի՞նչ ես ասում,- գոռաց նա: - Հազիվ հնարավորություն է ստեղծվել: Ուրախացիր, որ այլևս ղեկավար չես, Զավեն ջան: Ես քեզ ե՞րբ եմ ասել: Հիմա էլ նույնն եմ կրկնում: Ոչինչ չի փոխվել, կամ ավելի ճիշտ՝ այնքան չի փոխվել, որ ես էլ իմ կարծիքը փոխեմ: Խառնակ ժամանակներ են և տեսնում եք, էլի, թե ինչ է կատարվում: Հենց միայն քիմկոմբինատի թույնի փաստը բավական չէ՞:

- Բա Սևա՞նը: Իջնում է, իջնում: Ամեն անգամ կողքով անցնելիս որ տեսնում եմ լացս գալիս է,- այս անգամ անկեղծ բռնկվեց Տիգրանը:

Արմեն Զատիկյանը ձեռքը դրեց նրա ուսին.

- Հիմա հենց դրանց նման և շատ ավելի խոշոր համամարդկային հանցագործություններ են կատարվում: Ի վերջո ովքե՞ր են հենց այսօր երկրի ղեկի մոտ: Նույն մարդիկ, որոնք Ստալինի բռնատիրության օրոք էլ նրա կողքին են եղել ու ծափահարել են մեծ և իմաստուն նավապետին, պարզ տեսնելով, որ այդ նավ կոչվածը նույնիսկ նավ չէ, այլ ընդամենը կոտրած տաշտակ և այն էլ անհուսորեն խրված ծանծաղուտի մեջ:

- Ղու-ղու-ղու-ղու, - գլուխը թափահարելով ձայնը հետզհետե բարձրացրեց Պարույրը:

- Պարո՞ւյր,- զարմացավ Զավենը:

- Խանգարում եմ,- ծիծաղեց քիմիագործը: - Խառնում եմ ռադիոալիքները:

- Խառնել եք, որ այս օրին եք ընկել,- չարախնդաց Արմեն Զատիկյանը: - Ճիշտ նույն ձևով էլ Խրուշչովի ալիքներն են խառնում: Ինչ լավ սկսեց, չէ - Բայց այնքան խառնեցին, այնքան խանգարեցին, այնքան թույն սրսկեցին փառաբանելով, որ արդեն ինքն էլ պատրաստ է Ստալին դառնալու:

- Բավական է, Արմեն,- ջղայնացավ Զավենը:

- Ես ձեզ բան եմ ասում,- չնահանջեց գյուտարարը: - Ուզենա թե չուզենա՝ դարձնելու են: Որովհետև նրանց, Ստալինի կամակատարներին մի նոր Ստալին է պետք: Նրանք առանց Ստալինի, ստալինիզմի ապրել չեն կարող: Ավելի ճիշտ չեն կարող ապրել այնպես, ինչպես ապրում են: Նրանցից կտրեք ձեր հույսը: Ստալինը չկա, բայց ամբողջ երկիրը Ստալինիկներով լցված է: Հեռու չգնանք, դրանցից մեկն էլ մեր մեծարգո ընկեր Բադալյանը չէ՞:

Եվ Զավեն Շարաֆյանը, որ մտքում հաճախ էր Գառնիկ Բադալյանի դեմ խոսում, փորձեց բարձրաձայն պաշտպանել նրան:

- Չեղավ, Արմեն, չեղավ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

- Վերջ տուր,- միջամտեց նաև Պարույրը: - Ինչ ուզում եք ասեք, բայց հո չե՞ք կարող կորցնել ձեր խիղճը ու հայտարարել, թե նա անազնիվ է, թե կաշառակեր է, թե աշխատող չէ: Ի վերջո մեր աչքի առաջ նա քաղաք դարձրեց այս գյուղը…

Ի զարմանք Զավենի, առաջինը Մկրտիչ Զուլոյանը քմծիծաղ տվեց.

- Միամիտներ,- ասաց նա: - Ուրեմն նա իրեն թույլ կտար փոքրանա՞լ մեր փոքրիկ քաղաքում, զբաղվել մանր-մունր գործարքներով ու կաշառակերությամբ: Ու այն էլ այնպես, որ դո՞ւք նկատեք: Չհավատաք, մեր քաղաքը սոսկ հարմար ոստնակ է նրա համար, և նա մեծ թռիչքի է պատրաստվում- Իսկ այնտեղ արդեն կանի այն ամենն, ինչ ուզում է: Ինչ այնտեղ հասած բոլորն են անում:

Արմեն Զատիկյանը ծափահարեց եռանդով:

- Կեցցեք, ընկեր Զուլոյան: Ուրեմն հույսներս կտրենք նրանից և նրանցից: Թե դահիճներից ու նրանց կամակատարներից, թե զոհերից: Դահիճներից՝ հասկանալի է, թե ինչու: Իսկ զոհերից այն պատճառով, որ նրանք այնքան վախեցած են, այնպես են կոտրված ու ընկճված, որ այլևս ի վիճակի չեն ուղիղ կանգնելու, ի վիճակի չեն ընդունելու որևէ նոր բան և ամբողջ կյանքում ցնցվելու են, երբ դռան թակոց լսեն: Ավելին ասեմ, ողբերգա-ծիծաղելին ասեմ, հույսներս պետք է կտրենք նույնիսկ նրանցից, ովքեր այսօր մանկապարտեզ են հաճախում ու երգում՝ «Լայնարձակ է հայրենի երկիրն իմ- Ես ուրիշ այլ երկիր տեսած չեմ, որտեղ մարդ շնչի այսպես ազատ»: Նրանց վրա էլ խաչ քաշեք: Նրանք ևս արդեն թունավորված են: Մեր հույսը այսօր դեռ չծնվածները պետք է լինեն: Որոնք գալու են մաքուր հոգիներով և մաքուր ձեռքերով: Հայտնվելու են ահեղ դատաստանի նման ու հարցնեն մեզ՝ իրենց հայրերին ու պապերին- Այս ի՞նչ եք արել, այս ի՞նչ աշխարհ եք թողել մեզ: Մենք այս թունավո՞ր հացն ենք ուտելու, թունավո՞ր ջուրն ենք խմելու, թունավո՞ր օդն ենք շնչելու: Հո այսպես չի մնալու: Համոզված եղեք: Ահեղ դատաստանի նման գալու է այդ օրը և հանցագործությունների հեղինակները, բոլոր ղեկավարներն ու պաշտոնյաները կանգնելու են այդ անբիծ մանուկների մարդկության դատարանի առաջ: Եվ բոլորին մեկ-մեկ հարցնելու են, թե դո՞ւ որտեղ ես եղել, ի՞նչ ես արել այդ ժամանակ, ընկեր:

- Ուրեմն ծաղի՞կ ծախենք,- ծխի քուլաների մեջ կորավ Մկրտիչ Զուլոյանը:

- Թեկուզ: Զավենն ասե՞լ է ձեզ, ընկեր Զուլոյան: Թեկուզ: Ես եմ առաջարկել և հիմա նույնպես առաջարկում եմ: Այսօր շատ ավելի ազնիվ ու պատվավոր գործ է ծաղիկ աճեցնելն ու վաճառելը, քան թե ղեկավար լինելը և Գառնիկ Բադալյանի նման ղեկավար ունենալը, որին ժողովրդին գիտակցաբար, կանխամտածված թունավորելու համար կախելու փոխարեն առաջ են քաշում և նոր պաշտոններ առաջարկում, որ ավելի մեծ հանցագործություններ կատարի: Իսկ ահեղ դատաստանի ժամանակ մենք ալիբի կունենանք: Երբ հարցնեն, թե դո՞ւք որտեղ էիք, երբ կատարում էին այդ ոճրագործությունները, կասենք, որ մենք այնտեղ չենք եղել, ղեկավար չենք եղել և նույնիսկ կույր կատարող չենք եղել: Կասենք՝ մենք մի կողմ քաշված մեզ համար ծաղիկ էինք աճեցնում- Հը, ի՞նչ կասես, Զավեն…

Զավեն Շարաֆյանը ժպտաց, բայց դեմքը գունատ էր:

- Դո՞ւ ինչ կասես, Մկրտիչ- մեծ եղբայր…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մկրտիչ Զուլոյանը երկար ու տանջալից հազում էր, հետո ասաց խռպոտած ձայնով.

- Երբ մեր տանր Արմեն Զատիկյանի առաջարկած դեղատոմսն ինձ էիր առաջարկում, ես քեզ ի՞նչ ասացի, տղաս: Ասացի ծաղիկներ կաճեցնեմ թե չէ, չգիտեմ, բայց ալիբիի մասին անպայման կմտածեմ: Ճի՞շտ է:

- Ճիշտ է,- ասաց Զավենը:

- Դե ուրեմն իմացիր, որ շատ եմ մտածել: Չեմ թաքցնի: Շատ եմ մտածել, Զավեն: Եվ եկել եմ մի եզրակացության, որն այսօր հաստատեցիր դու, Արմենը, Պարույրը: Հատկապես դու:

- Մե՞նք ինչ ենք արել որ,- ուսերը բարձրացրեց Պարույրը:

- Դու ինձ մի անգամ էլ համոզեցիր, որ մեզ ալիբի պետք չէ: Հա, հա, վեր-վեր մի թռիր, առաջինը դու, Արմեն: Մեզ պետք չէ այլուրեքություն: Մենք իրավունք չունենք հանգիստ անկյուն փնտրելու և ծաղիկներ աճեցնելու: Որպեսզի երբ քո ասած ահեղ դատաստանի օրը գա և մեզ հարցնեն, թե դո՞ւք որտեղ եք եղել, ասենք՝ այստեղ ենք եղել, տեղում ենք եղել: Դեպքի վայրում: Եվ մեր ձեռքից եկածի չափով, մեր ուժերի ու հնարավորությունների չափով ամեն ինչ արել ենք, որպեսզի պակասի հանցագործությունների թիվը, պակասի չարը: Եթե ոչ անձամբ, ապա մատնացույց անելով, մերկացնելով ու տագնապ հնչեցնելով: Ինչպես դուք եք այսօր արել: Որպեսզի չարիք գործողները հանգիստ ու ապահով չզգան իրենց և նրանց չօրորի անպատժելիության գաղափարը: Ու խնդրում եմ, շատ եմ խնդրում, որ այ, այսքան չմտածեք, թե հարբած եմ: Ճառ ստացվեց, ճիշտ է, բայց հարբած չեմ: Սրտինս եմ ասում:

Արմեն Զատիկյանը թափ տվեց ձեռքը:

- Է, ընկեր Զուլոյան- Եվ ձեր կարծիքով բան դուրս կգա՞…

- Ես հավատացած եմ,- հանկարծ բղավեց Մկրտիչ Զուլոյանը: - Ոչ ոք չի կարող ինձ հակառակը համոզել: Քանի դեռ ձեզ նման մարդիկ կան: Քանի դեռ կռվողներ կան: Հա …

Լռություն տիրեց: Բայց նրանք կարծես թե այլևս չէին վախենում լռությունից:

- Եթե հույսը կա և նպատակը կա՝ ապրելու իրավունք կունենանք, տղերք,- ասաց Զավենը: - Գոնե ապրելու իրավունք…

* * *

Հաստատ համոզված, որ անհնարին է, թե Էմման տանը լինի, Զավեն Շարաֆյանը այնուամենայնիվ հենց Երևան էր ընկնում, մեկ այս, մեկ այն ավտոմատից հավաքում էր աղջկա հեռախոսի համարը: Ի՞նչ իմանաս, հանկարծ ու մի կարճ ժամանակով եկած լինի: Ի՞նչ իմանաս:

Ավտոբուսից իջնելով Պլանի գլխի մոտ, տուն գնալու փոխարեն Զավենը հեռախոսի երկաթյա խցիկը մտավ ու հենց այնպես, սովորականի պես հավաքեց Էմմայի հեռախոսի համարը: Ու

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

քիչ մնաց լսափողը ցած գցի ձեռքից, երբ անսպասելիորեն լսեց նրա թույլ, անտրամադիր ձայնը.

- Ալո…

- Էմմա, դո՞ւ ես,- ուրախ զարմանքով աղաղակեց տղան:

- Ջավե՞ն-քեզ ո՞վ ասաց, ի՞նչ իմացար, որ եկել եմ: Քիչ առաջ տուն մտա, սիրելիս…

- Էմմա…

- Դու Երևանո՞ւմ ես: Կգա՞ս ինձ մոտ, Ջավեն- Ե՞րբ կգաս- Հենց հիմա կգա՞ս…

Ջավենը կոկորդում ցավ զգաց:

- Իսկ դու կարո՞ղ ես ընդունել մի Ջավենի, որը ոչ տուն ունի, ոչ աշխատանք ունի և ոչ էլ որևէ հեռանկար…

Աղջիկը ծիծաղեց հանկարծ.

- Իսկ դու կարո՞ղ ես գալ մի Էմմայի մոտ, որը տնից բացի այլևս ոչինչ չունի- նույնիսկ ծաղիկներ…

- Ծաղիկների հարցը կլուծենք, Էմմա: Թեև գիտես, չէ՞, թե հիմա ինչքան թանկ արժեն…

- Ի՞նչ իմաստով,- զարմացավ աղջիկը:

- Ուզում եմ ասել, որ եթե այդքան չնախատեսված մեծ ծախսեր անեմ և ծաղիկներ գնեմ քեզ համար, փոխարենը դու ինձ կասե՞ս այն խոսքերը, որ Երևանից մեկնելիս խոստացար: Ինձ կտա՞ս այն հարցը:

Էմման ծիծաղեց բարձր, սրտանց, երջանիկ: Ու շշնջաց.

- Դու կարծեմ ինչ-որ բա՞ն էիր ուզում առաջարկել ինձ, սիրելիս…

- Հա, Էմմա,- բացականչեց Ջավենը: - Հանկարծ չփախչես, չկորչես, գալիս եմ, Էմմա…

ՎԵՐՋ

03. 89 թ. Արզնի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org